

Գիրքը յուսադատճեճահանվել է
A-PDF DjVu TO PDF DEMO: Purchase from www.A-PDF.com to remove the watermark

"Նամահայկական էլ. Գրադարան"

կայքի՝ www.freebooks.do.am

կողմից եւ ներկայացվում է իր

այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրքը կարող է

օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: www.freebooks.do.am

Library

ՄԱՅՑՈՒՄ ԿԱՐՆԱԿԱՆ ԵՐ ԶԵՐ ԼՈՂԱԿՈՒՄՆԵՐ ԱՐԿԵՐԱԸ ԼՅՅԱՅԱՈՒ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՏԵՐՆԵՏ
ԼՈՂԱԿՈՍՏՆԵՐԱՆՆԵՐԻ ԳՐԵՐԸ:

ՔՐՈՑՆԵ ԳՐԵՐԻ ՄՏԵՐՈՄԱՆ ՄԱՆՈՒՄԱՆՆԵՐԸ ԿԱՐՆԱԿԱՆ
ԻՄՈՒՄԱՆ "ՏԱՐԱԾՅԱԿԱՆԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԿՈՐՄԱՆ" ԿՈՑՔԻՑ

www.freebooks.am

ԵՆԴՐՈՒՄԱՆ ԵՎՐ, ՈՐ ԺՐՏԱԿՈՒՄ ԵՐ ՄՏԵՐ ԿՈՑՔԻՑ
ՑԱՆԿԱԿՈՒՄ ԵՎՐ ԶՈՒՆԻ ԸՆԹԵՐՏՈՒՆԻՑՈՒՄ:



ԳՐԵՐ ԱՐԿՐ՝ freebooks@rambler.ru

XXԴ. ԱՐՏԱՍԱՀՍԱԼՅԱՆ
ԴՐԱՍԱՏՈՒՐԳԻԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿՈՄԻՏԵ



ЗАРУБЕЖНАЯ
ДРАМАТУРГИЯ
XX ВЕКА

1
ТОМ

XX ԴԱՐԻ
ԱՐՏԱՍԱՀԱՄԱՆՅԱՆ
ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻԱ

I
ՀԱՏՈՐ

Կազմեց և ծանոթագրեց՝ Ս. Ե. ՓԱՆՈՍՅԱՆ

Գր ա խ ո ս՝ ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության
ինստիտուտի գրական կապերի բաժին

«Ուսանողի գրադարան» մատենաշարի
խմբագրական հանձնաժողով

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Ս. Ա. (նախագահ), ԱՂԱՅԱՆ Է. Բ.,
ԱՆԱՆՅԱՆ Գ. Գ., ԹԱՄՐԱԶՅԱՆ ՀՐ. Ս., ՂԱԶԱՐՅԱՆ Հ. Մ.,
ՄԿՐՏՉՅԱՆ Լ. Մ.

Ք911 XX դարի արտասահմանյան դրամատուրգիա: (Ժողովածու) /Երևանի պետ. համալս., Կազմ. և ծանոթագր.՝ Ս. Ե. Փանոսյան.— Եր., Երևանի համալս. հրատ., 1983. Հ. 1. 1983.—552 էջ.

Ժողովածուն ընդգրկում է նմուշներ XX դարի արտասահմանյան դրամատուրգիայից: Մեկական ստեղծագործություններ ներկայացված է Յ. Օ՝ Նիլի, Ու. Սարոյանի, Թ. Ուիլյամսի, Ժ. Կոկտոյի, Ա. Ադամովի, Ժ.-Պ. Սարտրի և Կ. Աբեի դրամատուրգիական ժառանգությունը:

Նախատեսված է ուսանողության և ընթերցող լայն շրջանների համար:

Ք $\frac{4603020000-17}{704(02)-83}$ ՄԻ 19—83

ԳՄԴ 84.7ԱՄՆ+84.4Ֆր+84.5Ճ
С63

ԿԱԶՄՈՂԻ ԿՈՂՄԻՑ

Մեր դարի արտասահմանյան դրամատուրգիան բնութագրվում է գաղափարական և ոճական ուղղությունների ու հոսանքների բազմազանությամբ: Իրողությունն ինքնին բացառում է գաղափարագեղագիտական տարբեր կողմնորոշումների համակարգված ու ամբողջական ներկայացման հնարավորությունը, մնում է բավարարվել առանձին նմուշների ծաղկաբաղով, որոնք, սակայն, բավականաչափ պատկերացում են տալիս հոսանքի կամ ուղղության հիմնական առանձնահատկությունների մասին:

Այդպիսի մի ծաղկաբաղ է «XX դարի արտասահմանյան դրամատուրգիայի» առաջին հատորը, ուր տեղ են գտել Յուջին Օ' Նիլի «Սերը ծիծեռների տակ», Ուիլյամ Սարոյանի «Կոտորածն մանկանց», Թեննեսի Ուիլյամսի «Կատուն շիկացած տանիքին», Ժան Կոկտոպի «Զայն մարդկային», Արթուր Ադամսի «Պրոֆեսոր Տարանը», Ժան-Պոլ Սար-

տրրի «Սատանան և տեր աստվածը» և Կորո Արևի «Ամբողջը» պիեսները:

Ստեղծագործությունների ընտրությունը պատահական չէ. դրանք կամ հիշյալ հեղինակների պոխագործույններն են, կամ նրանց գրական դավանանքի, դրամատուրգիական կոնցեպցիայի ամենախոստան արտահայտությունն: Այդ ատումով, թերևս, բացառություն է միայն Ռ. Մարոյանի «Կոտորածն մանկանց» պիեսը, որը թեև չի կարող համեմատվել «Խմ սիրտը լեռներում է» և «Ձեր կյանքի ժամանակը» ստեղծագործությունների հետ, բայց նշանակալից երևույթ է ոչ միայն Մարոյանի, այլև ժամանակի ամերիկյան դրամատուրգիայի մեջ:

Հեղինակների մեծ մասը նախկինում չի ներկայացվել հայ ընթերցողին: Ժողովածուում ընդգրկված ստեղծագործությունները առաջին անգամ են թարգմանվում հայերեն: Բացառություն է կազմում Փ. Կոկտոշի, «Ձայն մարդկայինը», որի ռուսերենից կատարված մեկ այլ թարգմանություն նախկինում տպագրվել է մամուլում: Բացի Կորո Արևի «Ամբողջը» պիեսից, բոլոր թարգմանությունները կատարվել են բնագրերից:

ՅՈՒՋԻՆ ՕՆԻԼ

ՍԵՐԸ ԾՓԻՆԵՐԻ ՏԱԿ

(դրամա երեք գործողությամբ, տասներկու պատկերով)

Գ Ո Ր Ծ Ո Ղ Ա Ն Ձ Ի Ն Ք

ԷՅՐԱԻՄ ՔԵՐԸԹ

ԷՐԻՆ

ՍԻՄԵՈՆ

ՓԻԹԵՐ

ԱՐԲԻ ՓԵՔՆԸՄ

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՂՋԻԿ, ԵՐԿՈՒ ԱԳԱՐԱԿԱՏԵՐ, ԶՈՒԹԱԿԱՀԱՐ, ՇԵՐԻՖ՝ և ուրիշներ
ճարեհան ազարակներից:

Գրամայի բոլոր գործողությունները տեղի են ունենում 'Նյու-Ինգլանդում'², 1850 թվականին, Քեբլթի ազարակատան ներսում և քակում:

Տան դիմաց քարե երկար պարիսպ է ձգվում, որի մեջ-տեղում փայտե մեծ դուռն է: Այնտեղից կարելի է գյուղի ճանապարհ դուրս գալ: Ազարակատունը բարվոք վիճակում է, միայն փոքր-ինչ սպիտակեցնելու կարիք է զգացվում: Պատերին՝ մռայլ գորշություն, իսկ փակոցափեղկերն արդեն ներկաթափվել են: Տան երկու կողմերում վիթխարի ծիփներ կան, որոնց ճյուղերը խոնարհվել են տանիքին: Ծառերն, ասես, պատսպարել են ազարակատունը, բայց ընկճված տեսք ունեն: Չարագուշակ մայրություն ու նախանձոտ մտահոգություն կա ծիփների կերպարանքում: Նրանք թաքցնում են իրենց մտերմությունը զարհուրելի տանտիրոջ հետ: Ծղփիները ինքնամոռաց ու հոգնաբեկ կանանց պես ծիփուն ստիներները, մազերն ու ձեռքերը փարել են տանիքին: Երբ անձրևում է, նրանց արցունքները միալար կաթկթում են տանիքին, հետո, հոսելով ներքև, չորանում գլաքարերի մեջ: Պարսպի փայտե դռան մոտից նեղլիկ մի ճանապարհ է վազում ազարակատան աջ կողմը՝ դեպի առմուտք: Մեր դիմացի պատին՝ երկու պատուհան: Ներքևի հարկում՝ երկու ավելի մեծ պատուհան: Վերին հարկինը Քեբլթի ննջասենյակի պատուհաններն են, իսկ ներքևինը՝ եղբայրներինը: Առաջին հարկի ձախ կողմում խոհանոցն է: Աջում՝ հյուրասենյակը, որի պատուհանների վարագույրները միշտ իջեցված են:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ

ՊԱՏԿԵՐ ԱՌԱՋԻՆ

Ազարակատան քակը: 1850 թ. նոր սկսվող ամռան մայրամուտը: Քամի չկա, բոլորովին խաղաղ է շուրջը: Երկինքը մթնում է, բայց ծիփների կանաչ կատարները փայլվում են

նսկեշող մայրամուտից: Ազարակատունը ստվերի մեջ է:

Դուռը բացվում է, և Էբին Քեբըթը իջնում է աստիճաններով, քայլում է պարսպի մոտով, նայում է աջակողմյան ճանապարհին: Նրա ձեռքին մեծ զանգ կա, որը տարուբերվելով, խուլ դողանջում է: Էբինը ձեռքերը դնելով գոտկատեղին՝ աչքերը հառում է երկնքին: Մտահոգ հառաչում է ու զգուշավոր գնահատանքով կամացուկ բացականչում:

ԷԲԻՆ.— Տեղ Աստվա՛ծ... ինչ մաքուր է ու սիրուն... (Գլուխը խոնարհում է, խոժոռադեմ նայում շուրջը: Էբինը քսանհինգ տարեկան է, բարձրահասակ ու ջլուտ: Դեմքը գեղեցիկ է, սակայն ռխակալ ու զգուշավոր արտահայտությամբ: Սև աչքերը գեթեվարված, կատաղի գազանի աչքերի են նման: Ամեն օր նա իրեն զգում է, ասես, վանդակում և ուզում է դուրս ճողոպրել: Էբինի արտաքինում վայրագ, զսպված կենսունակություն կա: Սև, գանգուր մազեր, նուրբ ուրվագծված մորուք: Հագին՝ քաթանե շորեր:

Զգվանքով թքում է գետնին, հետո շրջվում ու նորից տուն է մտնում:

Սիմեոնն ու Փիթերը բակ են մտնում: Դաշտից են գալիս: Նրանք բարձրահասակ տղամարդիկ են ու Էբինից ավելի տարիքով: Սիմեոնը երեսունինը, իսկ Փիթերը երեսունչորս տարեկան է, ավելի մարմնեղ, դեմքի բուրբ ու պարզամիտ արտահայտությամբ, բայց գործնականում՝ համեմատաբար խորամանկ: Նրանց ուտերը փոքր-ինչ կուչ են եկել ազարակում երկար տարիների տաժանակիր աշխատանքից: Ծանրորեն քայլում են հաստ ներբաններ ունեցող ցեխակոլոլ կոշիկներով: Եղբայրների շորերին, դեմքերին, ձեռքերին, մերկ արմունկներին ու կոկորդներին՝ ցեխի հետքեր: Նրանցից հողաբույր է տարածվում: Երկու եղբայրները մի պահ կանգնում են տան դիմաց և, ասես, իրար հետ պայմանավորված կրոթնելով իրենց բահերին՝ աչքերը լուռ հառում են երկնքին: Հուսահատ ու ընկճված են: Երբ նայում են երկնքին, հալացքներն ավելի արտահայտիչ են դառնում:

ՍԻՄԵՈՆ (դժկամորեն).— Մաքուր է:

ՓԻԹԵՐ.— Ըհը:

ՍԻՄԵՈՆ (անսպասելիորեն).— Տասնութ տարի առաջ:

ՓԻԹԵՐ. Ե՛նչ...

ՍԻՄԵՈՆ. Տե՛ղնք: Կին: Մեռա՛ս:

ՓԻԹԵՐ. Ախ՛րս որ... մոտայե՛կ էի:

ՍԻՄԵՈՆ. Ես... մեկ մեկ հիշում եմ... Ու մի տեսակ ինձ մե՛նակ եմ լսում Էրկար, ձիւս պոչի պես մազեր ունէր... Ոսկու պէս դեղին:

ՓԻԹԵՐ. Դե՛ լավ... նա մեռած է: **(Սա անտարբեր է արտասանում: Կարճատև դադարից հետո):** Սա՛մ, տե՛ս, արևմուտքում ոսկի կա:

ՍԻՄԵՈՆ **(տակավին մաշքամուտի ազդեցության տակ: Տարտամորեն).**— Երկինքը շողում է ոսկու պէս...

ՓԻԹԵՐ.— Հա, ինչպէս ասում են, դա ոսկու նշանն է: **(Սաստկացող հուզմունքով):** Եթէ երկնքում ոսկի կա, արևմուտքում... արևմուտքում էլ ոսկի կա... Ոսկէ դարպասնե՛ր... Կալիֆոնիա՛... Գետնին շաղ տված ոսկիներ... Ոսկէ դաշտեր...

ՍԻՄԵՈՆ **(իր հերթին հուզվելով).**— Այնտեղ դաշտերում քարերի փոխարեն ոսկի է շաղ տված: Մնում է միայն հավաքե՛ս ու հավաքե՛ս... Ոսկի... Սողմոն Իմաստունի՞՞ զանձերի պէս:

Մի պահ եղբայրները շարունակում են նայել երկնքին, ապա գլուխները կախում են:

ՓԻԹԵՐ **(հեզկող դժկամությամբ).**— Ա՛հ... իսկ այստեղ, մեր դաշտերում քարերից բացի ուրիշ բան չկա: Քարեր ու միայն քարեր: Իսկ մենք, քարերը հավաքելով, տարիներ շարունակ պատ ենք շարում: Նա, դու, ես, Էրինը, քարը քարին դնելով, պարիսպ ենք շինում, որ մեր հայրը մեզ փակի դրա մեջ: Աշխատել ենք ուժասպառ լինելով: Մեր տարիները քամուն ենք տվել: **(Ըմբոստացած ոտքը գետնին է խփում):** Փտել ենք, որ պարարտանյութ դառնանք նրա ցորենի համար: **(Կարճատև դադար):** Հա՛... որ նա լավ հարստանա...

ՓԻԹԵՐ.— Եթէ Կալիֆոնիայում այդքան վարուցանք անեինք, ակունների մեջ ոսկու կոշտեր կգտնեինք:

ՍԻՄԵՈՆ.— Կալիֆոնիան համարյա թէ աշխարհի մյուս ծայրին է, լավ իմացիր: Մենք դա պետք է հաշվի առնենք:

ՓԻԹԵՐ **(դադարից հետո).**— Ինձ համար դժվար է թողնել այս բոլորը: Ախր քրտինք ենք թափել: **(Դադար: Էրինը խոհանոցից հանում է գլուխը և ուշադիր լսում):**

ՍԻՄԵՈՆ.— Հա՛... **(Դադար)**: Ո՞վ գիտի, երևի նա շուտով մեռնի:
Փիթեր (երկմտանքով).— Ի՞նչ իմանաս:

ՍԻՄԵՈՆ.— Բայց ի՞նչ գիտես, որ հիմա մեռած չի:

Փիթեր.— Ի՞նչ իմանաս:

ՍԻՄԵՈՆ.— Երկու ամիս կլիցի գնացել է, ոչ մի լուր չկա:

Փիթեր.— Այսօրվա պես մի իրիկուն կառքը լծեց ու Արևմուտք
քշեց: Չարմանալու բան է: Երեսուն տարի նա այս ագարա-
կից դուրս չէր եկել: Միայն մի անգամ, երբ գնաց գյուղ ու
Էբինի մոր հետ ամուսնացավ: **(Դադար: Խորամանկորեն)**:
Ասում եմ, արի նրա մասին լուր տարածենք, թե խելքը թոցը-
րել է: Դատարանը կապացուցի:

ՍԻՄԵՈՆ.— Չեմ հավատա: Նա իսկույն դատավորների հետ իր
գործը կտեսնի: **(Դադար)**: Ստիպված պիտի սպասենք, մին-
չև... գրողի ծոցը գնա:

ԷԲԻՆ (չարությունք ծիծաղելով).— Լսիր, քո հորը... **(Սիմեոնն ու
Փիթերը վախից ցնցվում ու սկեռվում են Էբինին: Վերջինս
ժպտում, բայց իսկույն էլ խոժոռվում է)**: Ես աղոթում եմ, որ
նա մեռնի: **(Սիմեոնն ու Փիթերը դեռ աչքերը չեն կտրել նը-
րանից: Էբինը շարունակում է չարությամբ)**: Ճաշը պատրաստ
է:

ՍԻՄԵՈՆ ԵՎ ՓԻԹԵՐ (միասին).— Ըհը...

ԷԲԻՆ (նայելով երկնքին).— Արևը մայր է մտնում: Ինչքան սի-
րուն է...

ՍԻՄԵՈՆ ԵՎ ՓԻԹԵՐ (միասին).— Ըհը...

ԷԲԻՆ (նայելով երկնքին).— Արևը մայր է մտնում: Ինչքան սի-
րուն է...

ՍԻՄԵՈՆ ԵՎ ՓԻԹԵՐ (միասին).— Հա... Այնտեղ՝ արևմուտքում
ոսկի կա...

ԷԲԻՆ.— Հա՛... **(Մատնացույց անելով)**: Այնտե՛ղ... Բլրալանջի
արոտավայրո՞ւմ:

ՍԻՄԵՈՆ ԵՎ ՓԻԹԵՐ (միասին).— Չէ, Կալիֆոռնիայում:

ԷԲԻՆ.— Որտե՛ղ... **(Անտարբեր նայում է նրանց, հետո ծոր տա-
լիս)**.— Դե լա՛վ, նաշը պաղավ: **(Վերադառնում է խոհա-
նոց)**:

ՍԻՄԵՈՆ (լիզում է շրթունքները).— Ես լավ սոված եմ...

Փիթեր (հոտոտելով).— Խոզապուխտի հոտ եմ առնում:

ՍԻՄԵՈՆ (քաղցածի գնահատությամբ).— Խոզապո՛ւխտ է, խոզապո՛ւխտ...

ՓԻԹԵՐ (նույն տոնով).— Խոզապո՛ւխտ է, խոզապո՛ւխտ...

Թեքն իրար ուսով գցած, եղբայրները քաչում են երկու մըտերիմ եզների պես՝ իրենց իրիկվա արտուն անելու: Ապա անհետանում են ագարակատան աջ կողմում: Բացվող ու փակվող դռան ձայն:

ՊԱՏԿԵՐ ԵՐԿՐՈՐԴ

Երկինքը մթնում է: Աղջամուղջը աստիճանաբար թանձրանում է: Քերքթի ագարակատան խոհանոցն է երևում: Կենտրոնում՝ մայրի փայտից սեղան, աջ անկյունում՝ վառարան, չորս կոպիտ աթոռներ, իսկ սեղանին՝ երկարավուն մոմ: Խորքի պատին մեծ տախտակ, որի վրա նկարված է նավ՝ բոլոր առագաստները բաց: Թավ տառերով գրված է «ԿԱԼԻՖՈՐՆԻԱ»: Խոհանոցի սպասքը կախված է պատին ամրացված մեխերից: Ամեն ինչ մաքուր է ու կանոնավոր, բայց մթնոլորտն ավելի շատ զորանցային խոհանոց է հիշեցնում:

Սեղան է գցված երեք հոգու համար: Սեղանին՝ հացի նկանակ ու ջրով լի կուժ: Էբինը վառարանի վրայի կաթսայից խաշած կարտոֆիլ ու խոզապո՛ւխտ է հանում: Փիթերն ու Սիմեոնը, թեքն իրար ուսով գցած, թրմփում են աթոռին: Ավագ եղբայրները, ինչպես միշտ, խժռում են վայրի գազանների պես: Էբինը, առանց ախորժակի հացը ծամելով, ներողամիտ անբարյացակամությամբ նայում է նրանց:

ՍԻՄԵՈՆ (անսպասելիորեն դիմելով Էբինին).— Լսիր... բայց դու այդ բանը պիտի չասեսիր:

ՓԻԹԵՐ.— Բացի այդ, ճիշտ չես ասում:

ԷԲԻՆ.— Ի՞նչը:

ՍԻՄԵՈՆ.— Թե... իբր աղոթում ես, որ նա մեռնի:

ԷԲԻՆ.— Հա՛... Ի՞նչ է, իսկ դուք չե՞ք աղոթում:

ՓԻԹԵՐ.— Ախր նա մեր հայրն է:

ԷԲԻՆ (դժկամությամբ).— Բայց ոչ իմը:

ՍԻՄԵՈՆ.— Եթե մորդ մասին այդպես խոսեն, կթողնե՛ս: Հա՛-հա՛-հա՛... (Հեզմանքով քրքջում է: Փիթերը ժպտում է):

- ԷԲԻՆ (գույնը զգած).— Ես ուզում էի ստել... որ... ես... նրանից չեմ: Նա իմ հայրը չի... Ես նրա տղան չեմ...
- ՓԻԹԵՐ (չորությունը).— Սպասիր... կհասնես նրա տարիքին, նոր կերևա:
- ԷԲԻՆ (չափազանց հուզված).— Ես մորս եմ քաշել... յուրաքանչյուր կաթիլ արշուճով... (Դադար: Նրանք անտարբեր նայում են Էբինին):
- ՓԻԹԵՐ (ինչ-որ բան հիշելով).— Հա՛... Մայրդ բարի էր իմ ու Սամի նկատմամբ... Ծատ բարի մերացու էր:
- ՍԻՄԵՈՆ.— Նա բոլորի նկատմամբ էր բարի:
- ԷԲԻՆ (չափազանց հուզված ոտքի է կանգնում, կաշկանդված գրկելով է անում: Կմկմալով).— Ես... ը... շնորհակալ եմ... Ես նրանն եմ... մորս ժառանգը... (Եփոթված նստում է):
- ՓԻԹԵՐ (դադարից հետո: Դժկամորեն).— Մայրդ նույնիսկ նրա նկատմամբ էր բարի:
- ԷԲԻՆ (տաքանալով).— Դրա համա՞ր սպանեց...
- ՍԻՄԵՈՆ.— Ոչ մեկը մարդ չի սպանում: Ինչ-որ պատճառ կա, որ մարդուն սպանում է: Հասկացա՞ր ով է սպանում:
- ԷԲԻՆ.— Չէ՛ որ նա մայրիկին ստրուկի պես աշխատացնելով մեռցրեց...
- ՓԻԹԵՐ.— Մեր հայրը իրեն էլ է մեռցնում, ինձ էլ, Սամին էլ, քեզ էլ... Պարզապես մեզանից ոչ մեկը չի մեռել... դեռ...
- ՍԻՄԵՈՆ.— Ինչ-որ բան կա, որից նա տանջվում է ու մեզ էլ իր հետ է տանջում:
- ԷԲԻՆ (վրեժխնդրությամբ).— Լաա՛վ... ես մի օր նրան ցույց կըտամ... (Հետո հեզմանքով): Դու ասացիր մի բան կա՞... Ի՞նչ կա...
- ՍԻՄԵՈՆ.— Ի՞նչ իմանաս:
- ԷԲԻՆ (հեզմանքով).— Երևի նույնը, ինչը ձեզ Կալիֆոռնիա է քաշում: (Եղբայրները զարմացած նայում են Էբինին): Հա, լսել եմ դուք... (Կարճատև դադարից հետո): Բայց ոչ մի անգամ էլ Կալիֆոռնիայի ոսկե դաշտերը չեք գնա...
- ՓԻԹԵՐ.— Ի՞նչ իմանաս:
- ԷԲԻՆ.— Իսկ որտեղի՞ց փող կճարեք:
- ՓԻԹԵՐ.— Ուտքով... ոտքով կգնանք: Մինչև Կալիֆոռնիա անտանելի ճանապարհներ են, բայց որ հաշվես, թե ինչքան ենք

այս ագարակում քայլել... Որ այդ քայլերը հաշվես, լուսին էլ կհասնենք...

ԷԲԻՆ.— Հա: Բայց դեռ երկու մղոն էլ չանցած, հնդիկները ձեր կաշվից տիկ կհանեն:

ՍԻՄԵՈՆ (մռայլված).— Վախեցիր մե՛նք նրանց կաշվից տիկ չհանենք:

ԷԲԻՆ (որոշակիորեն).— Դե՛, հարցը ճանապարհածախսը չի: Դուք պետք է սպասեք, մինչև ագարակից ձեր բաժինն ստանար... եթե ասոված տա, որ ձեր հայրը շուտ մեռնի:

ՍԻՄԵՈՆ (դադարից հետո).— Իսկ մենք մեր բաժինն ունենք:

ՓԻԹԵՐ.— Երկու երրորդը մերն է:

ԷԲԻՆ (բարկացած ընկրկելով).— Դուք ագարակից ոչ մի մաս էլ չունեք: Ագարակը մորս էր, ձեր հայրը գողացավ: Հիմա մայրիկը մեռած է, ուրեմն, ագարակն էլ իմն է:

ՍԻՄԵՈՆ (ծաղրանքով).— Դրանք հայրիկին ասա, հենց որ գա: Մեկ դուլարի վրա գրազ եմ գալիս, նա կծիծաղի... կյանքում սուաշին անգամ կծիծաղի... Հա՛-հա՛-հա՛... (Ծիծաղում է, բայց ոչ լիաթոք):

ՓԻԹԵՐ (եղբոր պես ծիծաղելով).— Հա՛-հա՛-հա՛...

ՍԻՄԵՈՆ (դադարից հետո).— Բայց... Էբի՛ն, ինչո՞ւ ես այդպես խոսում: Կարծես, մենք քո աչքի փուշը լինենք:

ՓԻԹԵՐ.— Ըհը...

ԷԲԻՆ.— Հա՛... (Անսպասելիորեն բռնկվելով): Իսկ ինչո՞ւ ոչ մի անգամ չէիք պաշտպանում մորս, երբ ձեր հայրը, նրան տանջամահ անելով, գերեզման ուղարկեց... գոնե հոգու վարձք կլիներ ձեզ համար այդ բարության դիմաց: (Երկարատև լռություն: Եղբայրները զարմացած նայում են Էբինին):

ՍԻՄԵՈՆ.— Մենք վար էինք անում:

ՓԻԹԵՐ.— Գոմաղբ էինք փոում:

ՍԻՄԵՈՆ.— Ծառ էինք էտում:

ՓԻԹԵՐ.— Մոլախոտ էինք մաքրում:

ՍԻՄԵՈՆ.— Հունձ էինք անում:

ՓԻԹԵՐ.— Կով էինք կթում:

ԷԲԻՆ (խստորեն ընդհատելով).— Ու քարը քարին դնելով... պատ էիք շարում... այնքան, մինչև ձեր սրտերն էլ քարացան:

ՍԻՄԵՈՆ (չոր).— Մենք ժամանակ չենք ունեցել մորդ օգնելու:

ՓԻԹԵՐ (Էբինին).— Երբ մայրդ մեռավ, դու տասնհինգ տարե-

կան էիր ու տարիքիդ համեմատ բավականին հաղթանդամ:
Ինչո՞ւ ինքդ չէիր պաշտպանում հարազատ մորդ:

ԷԲԻՆ (խստորեն).— Ես հիմա եմ զգում մորս տառապանքը: **(Գաղարից հետո՝ ցածր ձայնով):** Հիմա, երբ նա չկա... Երբ նրա փոխարեն ճաշ եմ եփում կամ մյուս գործերն անում, նոր եմ հասկանում նրա տանջանքը: Մայրիկը երբեմն գալիս է, որ ինձ օգնի... Կարտոֆիլն է խաշում, խոզապուխտը տապակում... Գալիս է, կարկանդակն է թխում... Հոգևած, շատ հոգևած է նա... Հետո կրակն է խստնում, մոխիրն է տանում թափում... Ծխից նրա աչքերը արցունքոտ են, և նա արտասւսւում է արյունոտ արցունքներով... Մայրիկը երեկոները գալիս, կանգնում է վառարանի մոտ... Նա չի կարողանում քնել ու հանգստանալ: Չի կարողանում հանգիստ մնալ... չի կարողանում ազատ մնալ նույնիսկ իր գերեզմանում:

ՍԻՄԵՈՆ.— Նա ոչ մեկին չէր գանգատվում:

ԷԲԻՆ.— Մայրիկը այնքան հոգևած էր լինում... Նա միշտ հոգևած էր ու շատ զբաղված և ժամանակ չունեի գանգատվելու: Հիմա իմացա՞ք, ինչ է արել ձեր հայրը... **(Կրքոտ վրիժառուությամբ):** Բայց վաղ թե ուշ ես վրեժս կլուծեմ նրանից... Հիմա կարող եմ բաներ սսել, որ այն ժամանակ չէի համարձակվում. Թորքերիս մեջ ինչքան շունչ կա, կգոռամ, մարդկանց կպատմեմ ձեր հոր արածների մասին... Ու... մայրիկը... մայրիկը մի քիչ կքնի, կհանգստանա իր գերեզմանում: **(Նորից նստում է մտասուզված: Եղբայրները տարօրինակ հետաքրքրությամբ նայում են նրան):**

ՓԻԹԵՐ (լռությունից հետո).— Բայց... Սա՛մ, ինչ ես կարծում, մեր հայրը ո՞ր գրողի ծոցը գնաց:

ՍԻՄԵՈՆ.— Ինչ իմանաս: Հագած-կապած նստեց կառքն ու քըշեց-գնաց: Երկարապոչ մատակը փայլվում էր արևի տակ: Նա մտրակում էր ու գոռում: Լավ հիշում եմ: Նոր էի արտը ակոսել, վերջացրել... Գարուն էր, մայիս ամիսը: Արևը մայր էր մտնում, արևմուտքը ոսկեգույն էր, և հայրիկը կառքը քըշեց այնտեղ... Գոռացի՛ «Ո՛ր ես գնում, պա՛»: Մի վայրկյան կանգնեց դարպասի մոտ: Նրա ծեր, օձի աչքերը փայլում էին արևից: Ո՞նց որ մի կուժ վիսկի խմած լինեի: Իսկ նա, ջորու պես ժպտալով, ասում է. «Չփախչեք, մինչև ետ գամ...»:

ՓԻՓԵՐ.— Այ թե կգժվի հա... եթե իմանա, որ կալիֆոռնիա ենք ուզում գնալ:

ՍԻՄԵՈՆ.— Հա'... Իսկ ես ոչինչ չասացի: Ծեր անառակը հանկարծ սկսեց լեզուն շաղ տալ, թե՛ «Այսօր ամբողջ օրը լսեցի հավերի կշկշոցը, արլորների ծռռրուղուն, կովերի ու ցուլերի քառաչը, նրանց տրորվելը պնքան... մինչև չդիմացա... Գարուն է, ու ինձ շան պես վատ են զգում... Գրո'ղը տանի, ոնց որ չորացած ընկուզենի լինեն... Տկլոր, չորացած ընկուզենի, որ դատապարտված է վառվելու...»:

Հետո ես մի քիչ հուսահատվեցի, երբ ծեր անառակը ուրախացած ասաց. «Բայց եթե ուշանամ, մտքներովդ չանցնի, թե մեռել եմ: Երդվել եմ հարյուր տարի ապրել, որպեսզի դուք նախանձից մեռնեք: Ականջներիդ օղ արեք, ես հարյուր տարի ապրելու եմ... Իսկ հիմա գնում եմ մարգարեների պես Աստծո խորհուրդն իմանալու... գարնանը: Իսկ դո'ւ... դո'ւ...» — ասում է ինձ, — գնա՛ քո վարուցանքին»: Ու կառքը քշելով, երգելով գնաց: Կարծեցի խմած է, թե չէ... չէի թողնի, որ գնար:

ԷԲԻՆ (արհամարհանքով).— Չէիր կարող: Դու վախենում ես նրանից: Չեր հայրը ավելի ուժեղ է, քան դուք երկուսդ միասին:

ՓԻՓԵՐ (հեզնում է).— Իսկ դու... երևի Սամսոնն⁴ ես հա'...

ԷԲԻՆ.— Ես կուժեղանամ: Չգում եմ, որ մեջս մի քան զորանում է... Աճում է, աճում ու մի օր կպայթի: (Տեղից ելնելով՝ հագնում է բանկոնն ու դնում գլխարկը: Եղբայրները լուռ հետևում են նրան: Ժպտում են բարյացակամորեն: Էբինը ամաչելով խուսափում է նրանց հայացքներից): Գնամ մի քիչ հանգրստանամ:

ՍԻՄԵՈՆ.— Գյո'ղ ես գնում:

ՓԻՓԵՐ.— Հա'...

ՍԻՄԵՈՆ.— Մի՛նի մո'տ:

ԷԲԻՆ (վճռական).— Հա':

ՓԻՓԵՐ (ծաղրելով).— Բարբելոնի պոռնիկի'ն ես ուզում տեսնել:

ՍԻՄԵՈՆ.— Տեսնո'ւմ ես, քո մեջ ցանկությունն է աճում, ոչ թե ուժը:

ԷԲԻՆ.— Նա սիրուն է ու մաքուր:

ՓԻՓԵՐ.— Սիրուն էր ու մաքուր քսան տարի առաջ:

ՄԻՄԵՈՆ.— Որ եզն էլ քսվի ու նոր շորեր հագնի, գեղեցկուհի կդառնա:

ԷԲԻՆ.— Նա քառասուն տարեկան չկա:

ՓԻԹԵՐ (հուսահատ).— Եթե չկա, ուրեմն մոտ է քառասունին...

ԷԲԻՆ (հուզված).— Ի՞նչ գիտես:

ՓԻԹԵՐ.— Ախր գյուղում բոլորը... Սամը եղել է նրա հետ... հետո ես...

ՄԻՄԵՈՆ.— Հայրիկն էլ: Նա առաջինն էր...

ԷԲԻՆ.— Հայրի՞կը...

ՄԻՄԵՈՆ (ժպտալով).— Ըհը: Մենք մազեմազ նրան ենք քաշել:

ԷԲԻՆ (բարկացած).— Դա արդեն շատ եղավ: Ինչ որ բան է աճում մեջս ու շուտով կպայթի... (Կոպտորեն): Ես Միհիի քիթումուրթը կջարդեմ:

ՄԻՄԵՈՆ (Փիթերին աչքով անելով ու ծոր տալով).— Բա ի՞նչ... Բայց գիշերը տաք է... սիրուն... Հավատա, հեկն որ տեսնես Միհիին, խփելու փոխարեն կհամբուրես:

ՓԻԹԵՐ.— Հա, բա ո՞նց... (Նրանք խռպոտ հռհռում են: Էբինը դուրս է գնում՝ ետևից շրխկացնելով դուռը: Հետո լսվում է մուտքի դռան շրխկոցը: Էբինը դուրս է գալիս ազարակատան բակ, կանգնում է, աչքերը հառելով երկնքին):

ՄԻՄԵՈՆ (նայելով Էբինի ետևից).— Ոնց որ հոր քթից թռած լինի:

ՓԻԹԵՐ.— Հա:

ՄԻՄԵՈՆ.— Կտեսնես, շան պես իրար միս են ուտելու:

ՓԻԹԵՐ.— Ըհը: (Լռությամբ: Երկուսն էլ հորանջում են): Մի տարի հետո երևի Կալիֆոռնիայում լինենք:

ՄԻՄԵՈՆ.— Ըհը: (Դադար: Նորից հորանջում են): Գնանք քնելու: (Փչում, հանգցնում է մոմը: Դուրս են գնում խորքի դռներից: Բակում Էբինը ձեռքերը կարկառում է երկինք):

ԷԲԻՆ.— Աստղերը ելան... Ահա իմ աստղը, Սամինը, Փիթերինը... նրա՛նը... Ա՛յ այնտեղ՝ գյուղի վերևում, Միհիինն է... Բոլորը նույն երկնակամարում... Իսկ ի՞նչ կլինի, եթե համբուրեմ Միհիին: Նա այս գիշերվա պես քնքուշ է ու սիրուն: Աչքերը շողշողում են այս աստղերի պես, շուրթերը տաք են, թևերը վառվում են, և մարմինը նոր վարած հողի պես բուրում է: Նա մաքուր է ու սիրուն... Ամենակարո՞ղ Աստված, նա մաքուր է ու սիրուն և ինձ չի հետաքրքրում, քանի ան-

գամ և մեղանշել... նախքան ինձ հանդիպելը, կամ ում հետ է եղել: Տե՛ր Աստված, չէ՞ որ ես էլ եմ մեղավոր, չէ՞ որ բոլորս ներ մեղավոր Քս առջև... Տե՛ր Ամենակարող, չէ՞ որ դա քաղցր մեղանշում է...

(Մեծ քայլերով գնում է ձախակողմյան ճանապարհով):

ՊԱՏԿԵՐ ԵՐՐՈՐԴ

Մթամած առավոտ: Արևը դեռ չի ծագել: Զախ կողմից երեվում է Էբինը, խարխափելով ու հաչհոչելով մտնում է ագարակատուն:

ԷԲԻՆ.— Գրողի տարած ծեր անառակ... (Լսվում է առմուտքի դռան ձայնը: Երբ բարձրանում է աստիճաններով, բեմում լռություն է, հետո՝ եղբայրների ննջարանի դռան աղմկոտ թակոց): Վեր կացե՛ք...

ՍԻՄԵՈՆ (ցնցվելով).— Ո՞վ է...

ԷԲԻՆ (աղմուկով բացում է դուռը ու ներս մտնում: Զեռքին վառվող մոմ է: Ննջասենյակը լուսավորվում է: Ցածր տանիքով ձեղնահարկ է այդ ննջասենյակը, ուր կարելի է ուղիղ կանգնել միայն խորքի պատի մոտ: Սիմեոնն ու Փիթերը երկտեղանոց մահճակալի վրա են: Էբինի մահճակալը մյուս կողմում է: Էբինը խորամանկ ու չարակամ ժպտում է).— Ես եմ...

ՓԻԹԵՐ.— Դժոխքի կրակի՞ց պրծար, ի՞նչ է:

ԷԲԻՆ.— Նոր բան եմ լսել: (Հեզնանքով քրքջում է):

ՍԻՄԵՈՆ.— Չդիմացա՞ր միևնչև արթնանաչիք:

ԷԲԻՆ.— Դե, արդեն լուսը բացվել է: (Բարկացած): Նա գնացել է, նորից ամուսնացել:

ՍԻՄԵՈՆ ԵՎ ՓԻԹԵՐ (զարմացած ու բարկացած).— Հայրի՞կը...

ԷԲԻՆ.— Նոր կին է ճարել... երեսունհինգի մոտ... Հետո, ասում են, սիրուն է:

ՍԻՄԵՈՆ (բարկացած).— Սուտ է:

ՓԻԹԵՐ.— Ումի՞ց ես իմացել:

ՍԻՄԵՈՆ.— Քեզ հաստատ ձեռ են ասել:

ԷԲԻՆ.— Ինձ հիմարի տե՞ղ եք դնում... Ախր ամբողջ գյուղն է այդ մասին խոսում: Նյու Դոուլրի քարոզիչը... Նա է մեր տերտերին ասել: Մեր նոր մայրիկն, ուրեմն, Նյու Դոուլրում

է ապրում: Տես է, ուր է հասել ծեր անտաակը:
ՓԻԹԵՐ (իջնում է մահճակալից: **Զարմացած**).— Հը՛մ...

ՍԻՄԵՈՆ.— Վա՛...

ԷԲԻՆ (նստելով մահճակալին՝ խոժոռված ու ատելությամբ).—

Բա նա դժոխքից պրծած սատանա չի՞... Նա թքել է մեր բոլորի վրա ու դիտմամբ է այդ բանն արել: Գրո՛ղի տարած պատալ ջորի...

ՓԻԹԵՐ (**դադարից հետո**).— Հիմա արդեն ագարակը այդ կնոջը բաժին կհասնի:

ՍԻՄԵՈՆ.— Ըհը: (**Դադար: Տխուր ձայնով**): Հա: Եթե ամուսնացել են...

ՓԻԹԵՐ.— Մեր ջգրու է ամուսնացել: (**Դադար: Հետո համոզիչ ձայնով**): Սա՛մ, չէ՞ որ Կալիֆոռնիայում ոսկու դաշտեր կան... Տեսնո՞ւմ ես, այստեղ մնալուց այլևս օգուտ չկա:

ՍԻՄԵՈՆ.— Ես էլ եմ այդպես մտածում: (**Հետո վճռականորեն**): Ուրեմն, վերջ: Հենց լույսը բացվի, գնում ենք:

ՓԻԹԵՐ.— Համաձայն եմ:

ԷԲԻՆ.— Երևում է՝ ոտքով եք ուզում գնալ, հա՞:

ՍԻՄԵՈՆ (**հեզվելով**).— Եթե մեզ թևեր բուսնեին, թռչելով կգրնայինք:

ԷԲԻՆ.— Իսկ չէի՞ք ուզի նավով... նավով գնալ: (**Քրքրում է զրպանները, տրորված մի թուղթ է հանում**): Ահա: Եթե այս թուղթը ստորագրեք, նավով կգնաք: Վաղուց գրել, պահում էի մոտս: Սպասում էի, հենց որ գնալու լինեք՝ ցույց տամ: Այստեղ գրված է, որ ամեն մեկդ երեք հարյուր դոլլար կստանաք, եթե համաձայնեք ագարակի ձեր բաժինը ինձ վաճառել: (**Եղբայրները կասկածանքով նայում են թղթին: Դադար**):

ՍԻՄԵՈՆ (**զարմացած**).— Քանի որ մեր հայրն ամուսնացել է, ուրեմն ագարակը... այդ կնոջն է...

ՓԻԹԵՐ.— Խոսքը մեր մեջ, որտեղի՞ց քեզ այդքան փող:

ԷԲԻՆ (**խորամանկորեն**).— Գիտեի որտեղ է պահված... Մայրիկն էր տեղն ասել: Նա քանի տարի գիտեր տեղը, բայց սպասում էր... Դրանք մայրիկի փողերն են: Ձեր հայրը դիզել է նրա ագարակից: Փողերը դիզել է մորս աշխատանքով: Իսկ հիմա... Օրենքով բոլոր փողերն իմն են:

ՓԻԹԵՐ.— Իսկ որտե՞ղ է պահված:

ԷԲԻՆ.— Այնպիսի մի տեղ, որ առանց ինձ չեք կարող գտնել:

Մայրիկը միշտ հետևել է ձեր հորը, իսկ հիմարը գլխի չի
րկնել: (**Ռադար: Նրանք կասկածանքով նայում են Էբինին,
վերջինս էլ նրանց**): Հիմա ի՞նչ եք ասում: Համաձայն եք...

ՄԻՄԵՈՆ.— Չգիտեմ:

ՓԻԹԵՐ.— Չգիտեմ:

ՄԻՄԵՈՆ (նայելով պատուհանին).— Լույսը բացվեց:

ՓԻԹԵՐ.— Էբի՛ն, ավելի լավ է վառարանը վառես:

ՄԻՄԵՈՆ.— Ու մի բան եփես ուտելու:

ԷԲԻՆ.— Ըհը: (**Հետո ջանում է բարյացակամ լինել**): Հիմա: Բա
ոնց... Այս մինչև Կալիֆոռնիա սոված ո՞նց կգնաք: (**Շրջ-
վում է, գնում դեպի դուռը՝ միտումնավոր ավելացնելով**): Բայց
կթե ուզեք, նավով կգնաք: Եթե ստորագրեք... (**Ռոան մոտ
կանգնելով, լռում է: Սիմեոնն ու Փիթերը կասկածանքով նա-
յում են նրան**):

ՄԻՄԵՈՆ (կասկածանքով).— Ո՞ր էիր ամբողջ գիշեր:

ԷԲԻՆ (հակադրվելով).— Գնացել էի Մինիի մոտ: (**Չայնն իջեց-
նելով**): Ճանապարհին մկ էլ զգացի, ուզում եմ համբուրել
նրան: Հետո հիշեցի, թե ինչ ասացիք ձեր հոր ու Մինիի մա-
սին, կատաղեցի... հենց հասնեմ մոտը, քիթումնույթը կջար-
դեմ... Բայց երբ գյուղ հասա, այդ լուրը լսեցի, ոնց որ գծվե-
ցի: Սկսեցի վազել, վազել... Երբ տեսա Մինիին, չխփեցի, ոչ
էլ համբուրեցի: Հորթի պես սկսեցի բռնալ ու հայհույել: Այն-
պես էի կատաղել ու հախոչում, որ նա վախեցավ... Իսկ ես
միանգամից գրկեցի ու հետը պանկեցի... (**Հպարտորեն**): Այո,
պարոններ... ես պանկեցի նրա հետ... Երևի նա ձեր հոր
կամ ձեր հետ է եղել... բայց հիմա իմն է, ի՛մը...

ՄԻՄԵՈՆ (չոր).— Երևի սիրահարված ես, հա՛:

ԷԲԻՆ (արհամարհանքով).— Սիրահարվա՛ծ... Չէ՛ մի...

ՓԻԹԵՐ (աչքով անելով Սիմեոնին).— Երևում է, Էբինն էլ է ու-
զում ամուսնանալ:

ՄԻՄԵՈՆ.— Մինին խելոք, տնական կին կդառնա բոլորիս հա-
մար: (**Սիմեոնն ու Փիթերը հռհռում են**):

ԷԲԻՆ.— Ինձ պետք չի: Կարևորն այն է, որ ես եղա նրա հետ ու
հիմա Մինին ոչ թե ձեր հորն է, այլ իմը: Իսկ ինձ Մինին այն-
քանով է հետաքրքրում, որ նա տաք է ու թմփլիկ: (**Մոտե-
նում է դռանը: Հետո բարկացած շրջվում է**): Բայց... Մինին
այնքան էլ ընկած կին չի: Ծիշտ եմ ասում, նրանից ընկածն

Էլ կա: Սպասեք՝ կտեսնեք պառավ ցուլը ինչ կով է ճարել իր համար: Նա Միհիից էլ ընկած է լինելու: (**Ուզում է դուրս գալ**):

ՄԻՄԵՆՆ (անսպասելիորեն).— Երևի փորձես նրա հե՛տ էլ պառկել:

ՓԻԹԵՐ.— Հա՛-հա՛... (**Հեզմանքով ծիծաղում է, եղբոր միտքը հառառատելով**):

ԷԲԻՆ (զզվանքով թքում է).— Նրա հետ... այստեղ... նրա, որ քնելու է ձեր հոր հետ՝ մորիցս գողացված ագարակում: Ես ավելի հաճույքով կհամբուրեմ օձին կամ ժանտակուզին⁵ կշոյեմ: (**Դուրս է գնում: Եղբայրները տարակուսանքով նայում են նրա ետևից: Գաղար: Լսվում են Էբինի հեռացող ոտնաձայները**):

ՓԻԹԵՐ.— Գնաց կրակը վառի:

ՄԻՄԵՆՆ.— Երանի հիմա ծլկած լինեինք Կալիֆոռնիա: Բայց...

ՓԻԹԵՐ.— Երևի Միհին նրա գլուխն ինչ-որ բան է մտցրել:

ՄԻՄԵՆՆ.— Հա... Ու հայրիկի ամուսնությունն էլ երևի հնարել են: Ավելի լավ է սպասենք, տեսնենք, մեր հայրը ինչ երինջ է բերելու:

ՓԻԹԵՐ.— Եվ մեր անելիքը բոլորից թաքուն պահենք...

ՄԻՄԵՆՆ.— Էբինի փողին ձեռք չենք տա, մինչև հաստատ չիմանանք՝ հայրիկն ամուսնացել է, թե չէ: (**Ժպտալով**): Իսկ եթե, իրոք, ամուսնացել է, Էբինին կծախենք մի բան, որը մերը չի:

ՓԻԹԵՐ.— Արի սպասենք, տեսնենք ինչ է լինելու վերջը: Ու մինչև նրանց գալը մնանք պառկած: Թող Էբինն աշխատի, մենք ուտենք, վիսկի խմենք, քնենք: Իսկ այդ անհիճյալ ագարակը թող կրակի բաժին դառնա:

ՄԻՄԵՆՆ (հուզված).— Աստված վկա, արի մի անգամ գոնե հետաքրքրության համար մեզ հարուստի տեղ դնենք: Ախր մեզ հանգստանալ է պետք: Ես անկողնուց դուրս չեմ գա, մինչև նախաճաշը պատրաստ չլինի:

ՓԻԹԵՐ.— Ու սեղանին դրված չլինի:

ՄԻՄԵՆՆ (լռությունից հետո՝ մտախոհ).— Ի՞նչ ես կարծում, մեր նոր մայրիկն ո՞ւմ նման կլինի: Տեսնես Էբինը ճի՞շտ էր ասում նրա մասին:

ՓԻԹԵՐ.— Հաա՛... երևի...

ՄԻՄԵՆՆ (խանդոտ ու դիակալ).— Երանի այդ կինը էգ սատա-
նա լինի ու մեր հորը այն օրը գցի, որ նա երանի տա մեռնե-
լու ու դժոխքի մեջ հանգիստ ապրելու համար:

ՓԻԹԵՐ (ջերմեռանդորեն).— Ամեն...

ՄԻՄԵՆՆ (հորը նմանակելով).— «Գնամ Աստծո նախախնամու-
թյունը հասկանալու, մարգարեների պես...»: Գրագ եմ գալիս,
նա լավ գիտեր, որ գնում է անստակություն անելու: Կեղծա-
վոր ու պառավ «բարեպաշտ...»:

ՊԱՏԿԵՐ ՉՈՐՐՈՐԴ

Նույնը՝ ինչպես երկրորդ պատկերում: Երևում է խոհանոցը:
Սեդանին մոմ է վառվում: Լույսը նոր է բացվել: Միմեռնն ու Փի-
թերը վերջացնում են նախաճաշը: Էբինը նստել է մտախոհ ու խո-
ժոռված: Հացին ձեռք չի տվել:

ՓԻԹԵՐ (նայելով Էբինին, որն ավելի է նեղսրտում).— Բանը բա-
նից անցել է: Տխրելուց օգուտ չկա:

ՄԻՄԵՆՆ (ծաղրանքով).— Դե, նա մարմնի ցանկությունից է նեղ-
սրտել:

ՓԻԹԵՐ (ժպտալով).— Միևին առաջին կի՞նն է, որի հետ...

ԷԲԻՆ (բարկացած).— Ձեր գործը չի: (**Դադար**): Ես մեր հոր մա-
սին եմ մտածում: Ինձ թվում է, նա մոտենում է: Ես նրան
ջերմախառի սարսուռի պես եմ զգում:

ՓԻԹԵՐ.— Նա այսքան շուտ չի գա:

ՄԻՄԵՆՆ.— Ձե՛, շուտ չի: Նրան էլ մի պատճառ է պետք, որ մեզ
բնած բռնացնի ու գողգոռա:

**ՓԻԹԵՐ (ինքնաբերաբար ոտքի կանգնելով: Միմեռնը հետևում է
նրան).**— Դե լա՛վ, արի վեր կենանք: (**Երկուսն էլ կռացած
բալյում են դեպի դուռը, հետո, ինչ-որ բան հիշելով, մի պահ
կանգնում են**):

ՄԻՄԵՆՆ (ժպտալով).— Փիթ, դու հիմարի մեկն ես, իսկ ես...
գլխի չընկա: Թող հաչրիկը գա տեսնի, որ չենք արթնացել...

ՓԻԹԵՐ (երկուսով նորից սեղանին են մոտենում).— Թող տես-
նի, որ աշխատելու փոխարեն խմում ենք: (**Նորից նստում են:
Էբինը զարմացած նայում է եղբայրներին**):

ՄԻՄԵՆՆ (ժպտում է Էբինին).— Թքա՛ծ ազարակի վրա...

- ՓԻԹԵՐ.— Ո՞ւմ համար ենք օրնիբուն աշխատում...
- ՍԻՄԵՈՆ.— Ագարակի տերը դու եղար, էլ ի՞նչ ես ուզում... Եթե տերը դու ես, ինքդ էլ աշխատիր:
- ՓԻԹԵՐ.— Կովերը բառաչում են, շո՛ւտ վազիր կթելու...
- ԷԲԻՆ (հուզումնալի հրճվանքով).— Ուզում եք ասել... համաձա՛յն եք մորիակն ստորագրել:
- ՍԻՄԵՈՆ (չոր).— Ասենք թե ստորագրեցինք, հետո՞:
- ՓԻԹԵՐ.— Հետո՞:
- ՍԻՄԵՈՆ.— Մենք պետք է մտածենք: (Վճռական): Ավելի լավ է գործիդ գնաս:
- ԷԲԻՆ (չափազանց հուզված).— Ագարակը նորից մայրիկինն է... Ագարակը ի՞մն է... Կովերն էլ են իմը: Ես նրանց կկթեմ իմ մատներով... (Ծանրաբալ դուրս է գնում խորքի դռնից: Եղբայրներն անտարբեր նայում են նրա ետևից):
- ՍԻՄԵՈՆ.— Ոնց որ հայրը՝ տեղը դրած:
- ՓԻԹԵՐ.— Կարծես, նրա քթից թռած լինի:
- ՍԻՄԵՈՆ.— Կտեսնես, շան պես իրար գզելու են:
- Էբինը ագարակատան առմուտքով դուրս է գալիս բակ: Երկինքը սկսում է շողշողալ արևածագից: Էբինը կանգնում է ցանկապատի մոտ և ընդգրկում, փայլուն աչքերով նայում է շուրջը: Տենչանքով լի նրա աչքերը կլանում են ողջ ագարակը:
- ԷԲԻՆ.— Ինչ սիրուն է... Այս բոլորն ի՞մն է... (Հանկարծ, գլուխը ետ գցելով, աչքերը շլացած, բայց համարձակ նայում է երկրնքին): Ի՞մն է... լսո՞ւմ ես... Ի՞մն է... (Երջվում ու արագ քայլում է ձախ, գոմի ետևը: Երկու եղբայրները վառում են ծխամորճերը):
- ՍԻՄԵՈՆ (ցեխոտ ոտքերը դնում է սեղանին: Հենվելով արոռի թիկնակին ու ծուխն անհոգ փչելով).— Լավ էր... գոնե մի անգամ մարդավարի հանգստացանք...
- ՓԻԹԵՐ.— Հաս՛... (Նա նույնպես ոտքերը դնում է սեղանին: Դադար: Երկուսն էլ հոգոց են հանում):
- ՍԻՄԵՈՆ.— Տե՛ս, է, իսկ Էբինը առաջ հրաժարվում էր կով կթելուց:
- ՓԻԹԵՐ (արհամարհանքով).— Դե՛, նրա ձեռքերը ոնց որ սրմբակներ լինեն: (Դադար):
- ՍԻՄԵՈՆ.— Կուժը տուր այստեղ... մի բաժակ խմենք: Սիրտս մի տեսակ կծկվում է:

ՓԻԹԵՐ.— Լալ աւացիր: (Երկու բաժակ է վերցնում ու վիսկի լցնում): Կալիֆոռնիայի ոսկու կենացը:

ՄԻՄԵՆՆ.— Աստված տա՛ հաջողությամբ գտնենք: (Խմում են ու ձեռքի աիով բերանները սրբում: Հետո հառաչելով ոտքերը սեղանից իջեցնում են):

ՓԻԹԵՐ.— Բայց... ոնց որ... վիսկին թույլ էր, հը՞... մի տեսակ չազդեց: (Լռություն: Նրանք ավելի են անհանգստանում):

ՓԻԹԵՐ.— Ի՞նչ ենք խցկվել, մնացել այս շոգ խոհանոցում:

ՄԻՄԵՆՆ (փութկոտ հոգածությամբ).— Արի դուրս գանք՝ մի քիչ մաքուր օդ շնչենք: (Հապշտապ վեր են կենում ու դուրս գրնում խորքի դռնից: Քիչ անց երևում են ագարակատան բակում ու կանգնում ցանկապատի դռան մոտ: Նայում են երկրնքին):

ՓԻԹԵՐ.— Ի՞նչ սիրուն է...

ՄԻՄԵՆՆ.— Ըհը... Արևմուտքը ոսկեգույն է:

ՓԻԹԵՐ.— Արևն էլ մեզ հետ Ռսկե Արևմուտք է գնում:

ՄԻՄԵՆՆ (նայում է ագարակի շուրջ բոլորը: Դեմքը ցավատանջ արտահայտություն է ստանում).— Երևի վերջին օրն ենք մընում այստեղ:

ՓԻԹԵՐ.— Ըհը:

ՄԻՄԵՆՆ (ոտքը գետնին խփելով՝ կատաղորեն).— Ես երեսուն տարի թաղվել եմ քո մեջ... գոմաղբի պես պարարտացրել քեզ, ամեն մի մատնաչափ հողի վրա արյուն-քրտինք եմ թափել, փխրեցրել ու փայփայել...

ՓԻԹԵՐ.— Ըհը: Ես էլ...

ՄԻՄԵՆՆ.— Հա, Փիթե՛ր, դու էլ ես շատ աշխատել: (Հառաչում է ու թքում): Դե լա՛վ... թափված կաթի համար պետք չի լաց լինել:

ՓԻԹԵՐ.— Արևմուտքում ոսկի կա և գուցե՛ ազատություն: Իսկ մենք այստեղ ստրուկներ ենք եղել, քարե պարիսպների մեջ փակված:

ՄԻՄԵՆՆ (համարձակ).— Այսօրվանից այլևս ստրուկներ չենք: Հա, թափված կաթ աւացինք, հիշեցի... Հետաքրքիր է, Էբի-նը կարողանո՞ւմ է կթել:

ՓԻԹԵՐ.— Կկթի:

ՄԻՄԵՆՆ.— Արի օգնենք... մի անգամ կարելի է օգնել:

ՓԻԹԵՐ.— Ծիշտ է: Կովերը մեզ սովոր են:

ՍԻՄԵՈՆ.— Համ էլ սիրում են մեզ: Էբինից կխորտենն:

ՓԻԹԵՐ.— Ձիերը, խոզերը, վառեկները... նրանք էլ Էբինին սու-
վոր չեն:

ՍԻՄԵՈՆ.— Իսկ մեզ հետ ոնց որ եղբայրներ լինեն... ու սիրում
են մեզ: (Հպարտ): Ախր նրանց մենք ենք պահել, մեծաց-
րել...

ՓԻԹԵՐ.— Հիմա այլևս ոչինչ չունենք:

ՍԻՄԵՈՆ (մռայլված).— Մոռացել էի: (Հետո հրաժարվելով նախ-
կին մտքից): Դե՛ լավ, գնանք Էբինին օգնենք, հետո կծլկենք
այստեղից:

ՓԻԹԵՐ.— Գնանք: (Նրանք ձախակողմյան ճանապարհով գնում
են դեպի գոմ: Երևում է Էբինը, որը արագ քայլերով և հուզ-
ված գնում է նրանց կողմը):

ԷԲԻՆ (հեռապառ).— Ահա... եկան... պառավ ջորին ու նրա
հարսնացուն: Գոմի լուսամուտից տեսա: Ոլորանին էին հա-
սել:

ՓԻԹԵՐ.— Իսկ ինչպե՞ս կարողացար մինչև այնտեղ տեսնել:

ԷԲԻՆ.— Ինչ է, կարծում եք ես էլ ձեր հոր պես կարճատե՞ս եմ:
Կամ չե՞մ ճանաչում մեր զամբիկին ու կառքը: Իսկ ովքե՞ր
պիտի լինեին դրա մեջ, բացի նրանցից: (Փախարվում է՝ կար-
ծես քոր զգալով):

ՓԻԹԵՐ (բարկացած).— Ձիերը ես չեմ արձակի կառքից: Թող
ինքը...

ՍԻՄԵՈՆ (նույնպես բարկացած).— Արի շուտ գնանք տուն, մեր
եղած-չեղածը հավաքենք ու մինչև նրա գալը հեռանանք:
Նրա գալուց հետո այլևս չեմ ուզում տուն մտնել: (Երկու եղ-
բայր քայլում են դեպի ագարակատուն: Էբինը հետևում է
նրանց):

ԷԲԻՆ (անհամբեր հասնելով նրանց մոտ).— Ձե՛ք ուզում ստո-
րագրել, նախքան Կալիֆոռնիա գնալը:

ՓԻԹԵՐ.— Տեսնենք...

Նրանք գնում են դեպի ագարակատան ձախակողմյան առ-
մուտքը, հետո ցատկելով բարձրանում են աստիճաններով՝ իրենց
իրերը վերցնելու: Խոհանոցում երևում է Էբինը: Նա արագորեն
մոտենում է պատուհանին, գլուխը զգուշորեն դուրս է հանում, հե-
տո ետ է գալիս վառարանի մոտ: Ծնկում է, հատակից փոքրիկ
շերտ է հանում: Մեղքից բարձանե տոպրակ է դուրս բերում ու

դնում սեղանին: Տախտակի կտորը նորից հարմարեցնում է իր տեղը: Քիչ անց եղբայրները ներս են մտնում, ձեռքներին հին մաղախներ:

ԷԲԻՆ (ձեռքը դնում է տոպրակին).— Հը՛, ստորագրեցի՞ք:

ՍԻՄԵՈՆ (ցույց տալով ձեռքի թուղթը).— Ըհը: (Հետո՛ ազահորեն): Դա փո՛ղն է...

ԷԲԻՆ (բացում է տոպրակն ու հաշվում ոսկիները).— Ահա: Քրտան դողարանց երեսուն ոսկի:

Փիթերը հինգ մասի է բաժանում ոսկին, հետո ատամով փորձում է դրանցից մեկը:

Փիթեր.— Վեց հարյուր: (Նա ոսկիները լցնում է տոպրակը, հետո զգուշորեն թաքցնում ծոցում):

ՍԻՄԵՈՆ (մուրհակը էբինին մեկնելով).— Ահա:

ԷԲԻՆ (նայելուց հետո խնամքով ծալում ու պահում է ծոցում: Երախտագիտությամբ).— Ընորհակալություն:

Փիթեր.— Քեզանից էլ ենք շնորհակալ:

ՍԻՄԵՈՆ.— Ծննդյան տոներին⁶ Կալիֆոռնիայից քեզ ոսկու մի կոշտ կողարկենք: (Լռություն: Էբինը աչքերը հառում է նրանց, վերջիններս էլ՝ էբինին):

Փիթեր (երկշտ).— Դե լավ, գնացինք...

ՍԻՄԵՈՆ.— Դուրս չե՛ս գա մեզ ճանապարհելու:

ԷԲԻՆ.— Չէ, ես նրանց այստեղ եմ ուզում դիմավորել: (Կարճ դադար: Եղբայրները զգուշորեն մոտենում են խորքի դռանը: Հետո շրջվում են):

ՍԻՄԵՈՆ.— Դե լավ, մնա՛ս բարով:

Փիթեր.— Մնաս բարով:

ԷԲԻՆ.— Գնաք բարով: (Նրանք դուրս են գնում: Էբինը նստում է սեղանի մոտ՝ վառարանի դիմաց: Ծոցից հանում է թուղթը, հետո հայացքը դարձնում է վառարանի կողմը: Նրա դեմքը, որ լուսավորված է պատուհանից ներթափանցած արևի շողերից, գոհունակ արտահայտություն է ստանում: Նա ինչ-որ բան է շնջում: Երկու եղբայրները կանգնում են ցանկապատի դռան մոտ):

Փիթեր (նայելով գոմի կողմը).— Կառքը այնտեղ է կանգնեցնելու:

ՍԻՄԵՈՆ (ծիծաղելով).— Գրազ կգամ, նա ինչպես միշտ, կատաղած է:

ՓԻԹԵՐ.— Երիւնջը նույնպէս:

ՍԻՄԵՈՆ.— Արի սպասենք, տեսնենք մեր նոր մայրն ինչի նման է:

ՓԻԹԵՐ (ժպտալով).— Ու համբուրենք՝ մնաս բարով ասելով:

ՍԻՄԵՈՆ (ժպտալով).— Կարծես, ուզում եմ ծիծաղել... Գլուխս ու ոտքերս այնպէս թեթև են...

ՓԻԹԵՐ.— Իմն էլ: Այնքան եմ ուզում ծիծաղել, այնքան... մինչև պայթեմ:

ՍԻՄԵՈՆ.— Երևի վիսկուց էր, հը՞:

ՓԻԹԵՐ.— Չէ: Ոտքերս են քոր գալիս: Ուզում եմ քայլել, քայլել... բարձր ցատկել:

ՍԻՄԵՈՆ.— Պարե՛նք: (Լռութիւն):

ՓԻԹԵՐ (շփոթված).— Հետաքրքիր բան ես ասում:

ՍԻՄԵՈՆ (դէմքը պայծառանում է).— Կարծես արձակուրդում լինենք: Դասերը վերջացել են: Արձակուրդ է: Մեր կյանքում առաջին անգամ ազատ ենք...

ՓԻԹԵՐ (զարմացած).— Ազա՛տ ենք: Հավատալս չի գալիս:

ՍԻՄԵՈՆ.— Սանձերը կտրված են... Քարե պարիսպները քարուքանդ են եղել: Հիմա կարող ենք գլուխկոնձի տալով քե՛ֆ քաշել:

ՓԻԹԵՐ (խորը շունչ առնելով: Հռետորական ձայնով).— Պարոն-նե՛ր... ում որ պետք է, թող տիրանա այս գրողի տարած ազարակի քարակույտերին: Դրանք այլևս մերը չեն, պարոն-նե՛ր...

ՍԻՄԵՈՆ (ծղխնուց հանում է ցանկապատի դռնակն ու դնում թևի տակ).— Այսօրվանից ոչ փակ, ոչ էլ բաց ցանկապատ չի լինելու: Մենք ոչնչացնում ենք բոլոր ցանկապատերը:

ՓԻԹԵՐ.— Դա կտանենք մեզ հետ ու կնետենք գետը... Թող ազատ լողա:

ՍԻՄԵՈՆ (երբ ազարակատան ձախ կողմից ձայներ են լսվում).— Գալիս են... (Երկու եղբայրները արձանանում են: Էֆրաիմ Քերրթն ու Աբբի Փերնընը մտնում են բակ: Քերրթը յոթանասունհինգ տարեկան, բարձրահասակ, նիհար, ջլուտ կազմըվածքով ծերունի է, ծանր աշխատանքից փոքր-ինչ կռացած: Դէմքն այնպէս խիստ է, կարծես գլաքարից քանդակված լինի: Բայց նրա տեսքում փոքր-ինչ անվատահոյություն կա իր նվազող ուժի նկատմամբ: Աչքերը մանր են ու պսպղուն: Քերրթը կարճատես է և աչքերը շարունակ կկոցում է, որ-

պեսզի կարողանա իրերը զանազանել: Հագին կիրակնօրյա տոնական սև կոստյումն է:

Աբբին երեսունհինգ տարեկան է, առույգ ու կենսախիճնդ: Զվաճն դեմքը գեղեցիկ է՝ հեշտասիրությամբ լեցուն: Ծնոտին՝ համառություն և ուժ, իսկ աչքերում՝ ինքնավստահություն և կամք: Բայց իր ողջ անհատականությամբ Էբինի պես զգայուն է ու անվճռական):

ՔԵԲԸԹ (ներս մտնելիս ջանում է իր խիստ, ահարկու ձայնին փոքր ինչ մեղմություն հաղորդել).— Դե՛, հասանք մեր տուն, Աբբի ...

ԱԲԲԻ (տենչանքով նայում է ագարակատանը, բողբոջին չնկատելով ցանկապատի մոտ արձանացած երկու եղբայրներին).— Գեղեցիկ է... Ծառ գեղեցիկ է... Այս ամենն ի՞նչն է: Աչքերիս չեմ հավատում:

ՔԵԲԸԹ (խիստ ձայնով).— Քո՞նք... Չէ՛, իմն է: (Նա խորաթափանց հայացքով նայում է կնոջը: Աբբին հայացքը չի փախցրնում ու նույն համառությամբ նայում է **Քեբըթին**: **Վերջինս**, փոքր-ինչ մեղմանալով, ավելացնում է): Իհարկե... մերն է, Աբբի՛: Այս տունը վաղուց կնոջ կարիք էր զգում: Գարնանը ինձ ծերացած զգացի... տղամարդը պիտի կին ունենա...

ԱԲԲԻ (կրքոտ ձայնով).— Կինն էլ՝ տղամարդ ու տուն...

ՔԵԲԸԹ (զգուշորեն գլխով անելով).— Ըհը: (Հետո դյուրագրգիռ): Ո՛ր եմ կորեկ: Հե՛յ, ո՞վ կա այդտեղ... Ի՞նչ է, չե՞ն աշխատում...

ԱԲԲԻ (նկատելով եղբայրներին: Ծրջվում է: Եղբայրները զննելով ու քամահրանքով նայում են նրան).— Այստեղ՝ ցանկապատի մոտ, երկու որձ խոզեր կան:

ՔԵԲԸԹ (աչքերը տեղով).— Տեսնեմ, ո՞ր եմ:

ՍԻՄԵՈՆ.— Ես Սիմեոնն եմ:

ՓԻԹԵՐ.— Ես էլ՝ Փիթերը:

ՔԵԲԸԹ (պոռթկալով).— Իսկ ինչի՞ չեք աշխատում, հը՞...

ՍԻՄԵՈՆ (չոր).— Սպասում էինք, որ քեզ ու նոր կնոջդ դիմավորեմք:

ՔԵԲԸԹ (շփոթված).— Հը՞... հա՛, լա՛վ... Ուրեմն, սա ձեր նոր մարն է: (Աբբին նայում է տղաներին, վերջիններս էլ նրան):

ՍԻՄԵՈՆ (շրջվում, արհամարհանքով թքում է).— Տեսնում եմ...

ՓԻԹԵՐ (նույնպես թքում է).— Ես էլ...

ԱԲԲԻ (առավելություն ունենալու միտումնավորությամբ).— Չեմ
 դիմանում, գնամ տունս տեսնեմ: (Դանդաղ քայլում է բակով):
 ՍԻՄԵՈՆ (արհամարհանքով).— Իմ տո՛ւնը...
 ՓԻԹԵՐ (Աբբիի ետևից բղավելով).— Էբի՞նը ներսում է: Ավելի
 լավ է, նրա մոտ չասես, որ դա քո տունն է:
 ԱԲԲԻ (կարծես մարտահրավեր անելով).— Էբի՞ն... (Հետո մեղմ
 ձայնով): Նրան էլ կասես:
 ՔԵԲԸԹ (արհամարհանքով).— Բանի տեղ չդնես նրան... Էբի՞նը
 հիմար լակոտ է: Մայրն է՛ տեղը դրած:
 ՍԻՄԵՈՆ (հեզմանքով ծիծաղելով).— Հա՛-հա՛-հա՛... Էբի՞նը ճիշտ
 ու ճիշտ քո կտորն է: Ոնց որ քթիցդ թռած լինի: Մազեմազ
 քեզ է քաշել. չորացած ու դառը ընկուզենի: Բայց նա դեռ քո
 կոկորդը կկրծի... սպասիր, ծերո՛ւկ...
 ՔԵԲԸԹ (հրամայելով).— Գնացեք աշխատեք:
 ՍԻՄԵՈՆ (երբ Աբբին տուն է մտնում, Սիմեոնը աչքով է անում
 Փիթերին).— Սա էլ մեր նոր մայրն էր, հա՛ ծերո՛ւկ... Ո՞ր
 գրողի ծոցից ես գտել: (Սիմեոնն ու Փիթերը ծիծաղում են):
 ՓԻԹԵՐ.— Հա՛-հա՛-հա՛... Լավ կլիներ նոր կնոջդ տանեիր խոզե-
 րի մեջ գցեիր: Մի խոզ ավելի կունենայինք: (Եղբայրները
 խփում են իրենց ծնկներին ու բարձրաձայն հռհռում):
 ՔԵԲԸԹ (աչնպես է ապշել նրանց անամոթությունից ու համար-
 ձակությունից, որ խոսում է ակամա).— Սիմեո՛ն, Փիթեր...
 Ի՞նչ է պատահել... Խմած հո չե՞ք:
 ՍԻՄԵՈՆ.— Չէ, ազատ ենք, դրա համար ենք այսպես ուրախ...
 Վերջապես ազատվեցինք քեզանից ու քո անհիծյալ ագարա-
 կից... (Նրանք հետզհետե ավելի են զվարթանում):
 ՓԻԹԵՐ.— Մենք գնում ենք Կալիֆոռնիայի ոսկու դաշտերը...
 ՍԻՄԵՈՆ — Քեզ մնա այս գրողի տարած ագարակը... Հիմա դու
 կարող ես հետդ այն աշխարհը տանել:
 ՓԻԹԵՐ.— Դու էլ, քո ագարակն էլ կարող եք գրողի ծոցը գնալ:
 ՍԻՄԵՈՆ.— Մենք հիմա ազատ ենք, ծերո՛ւկ... (Ցատկում է):
 ՓԻԹԵՐ.— Ազատ ենք... (Ցատկելով օդի մեջ աբացի է տալիս):
 ՍԻՄԵՈՆ (մոլեգնած).— Հոպլա՛...
 ՓԻԹԵՐ.— Հոպլա՛... (Նրանք անհերթեք շարժումներով հնդկացի-
 ների ռազմապար են պարում ծերունու շուրջը, որը, ցասումից
 բարացած, կարծում է, թե նրանք խենթացել են):

ՄԻՄԵՆՆ.— Մենք ազատ ենք հնդկացիների պես... բախտդ բերում է, որ քեզ չենք մորթում ու մաշկազերծում:

ՓԻԹԵՐ.— Շտեմարանդ վառում ու անասունների կոտորում:

ՄԻՄԵՆՆ.— Ու նոր կնոջդ բռնաբարում... Հոպլա՛... **(Սիմեոնն ու Փիթերը դադարում են պարել: Ջեռքերը դնում են գոտկատեղին: Անզուսպ հռհռում են):**

ՔԵԲԸԹ (կողմ քաշվելով).— Հա՛, ոսկու քաղցր... Կալիֆոռնիայի խարդախ, հեշտ ճարվող ոսկին... դա է ձեզ խեղճացրել:

ՄԻՄԵՆՆ (հեզմելով).— Չէի՛ր ուզի այդ մեղսալի ոսկուց մի կոշտ Կալիֆոռնիայից ուղարկեի՞նք քեզ, ծե՛ր անասակ...

ՓԻԹԵՐ.— Այստեղ էլ նույն, Կալիֆոռնիայի մեղսալի ոսկուց կա, ծե՛ր անասակ: **(Հեռանալով ծերունու տեսադաշտից, փողի քսակը վեր է գետնում ու հռհռում):**

ՄԻՄԵՆՆ.— Կալիֆոռնիայի պես հեշտ գտնված ոսկի է... Ուզո՞ւմ ես, հր՛:

ՓԻԹԵՐ.— Մենք եսվով կտորանք Կալիֆոռնիա... Հոպլա՛... **(Ցատկոտում է):**

ՄԻՄԵՆՆ.— Դեպի ազատություն... Հոպլա՛... **(Նա էլ է ցատկում):**

ՔԵԲԸԹ (անսպասելիորեն պոռթկալով).— Անե՛ծք ձեզ...

ՄԻՄԵՆՆ.— Քո անեծքը մեզ չի բռնի... Հոպլա՛...

ՔԵԲԸԹ.— Ես ձեզ շղթայակապ գծանոց կողարկեմ:

ՓԻԹԵՐ.— Մնա՛ւ բարով, ծե՛ր աչքածակ...

ՄԻՄԵՆՆ.— Մնա՛ւ բարով, կծծի՛ տզրուկ:

ՔԵԲԸԹ.— Կորե՛ք, թե չէ...

ՓԻԹԵՐ.— Հոո՛ւ... **(Քար է վերցնում: Սիմեոնն էլ նույնն է անում):**

ՄԻՄԵՆՆ.— Մայրիկը հիմա հյուրասենյակում է:

ՓԻԹԵՐ.— Ըհր՛... մե՛կ, երկո՛ւ...

ՔԵԲԸԹ (վախեցած).— Ի՞նչ եք ասում, խելքի եկե՛ք:

ՓԻԹԵՐ.— Երե՛ք... **(Երկուսով քարով խփում են հյուրասենյակի պատուհանին, որը փշրվում է, իսկ վարագույրը՝ պատռվում):**

ՄԻՄԵՆՆ.— Հոո՛ւ...

ՓԻԹԵՐ.— Հոո՛ւ...

ՔԵԲԸԹ (կատաղած հարձակվում է նրանց վրա).— Որ բռնել եմ է՛... ոսկորդների կիշրեմ... **(Բայց նրանք ցատկոտելով ու պարելով հեռանում են: Սիմեոնը ցանկապատի դռնակը դնում է թևի տակ: Քեքքթը ետ է գալիս՝ հայհույելով և հուսահատ ու**

անկարող աղաղակելով: Եղբայրները հեռանալով երգում են
ուսկի որոնողների հին երգը «Օ, Սյուզիի» եղանակով:

«Լաչգեր» նավով սլանալով,
Ծովն եմ անցնում փոթորկալի,
Բաց ամեն ժամ տունըս հիշելով,
Այնտեղ ծնվելս եմ ափսոսում:
Օ՛, Կալիֆոռնիա...
Դու ես իմ օթևանը...
Ես սլանում եմ Կալիֆոռնիա,
Լվացքի տաշտակը ծնկներիս:

Նույն պահին ննջասենյակի աջակողմյան պատուհանը բաց-
վում է, և Աբբին դուրս է հանում գլուխը: Գոհունակ նայում է
Քեբբթին):

Ա.Բ.Բ.— Հե՛յ... դրանք վերջապես գնացին, հա՛: (Քեբբթը չի պա-
տասխանում: Աբբին տանտիրուհու հոգածությամբ շարունա-
կում է): Էֆրահի՛մ, այստեղ հրաշալի ննջասենյակ կա... ան-
կողիս... Դա իմ սենյա՞կն է, Էֆրահի՛մ:

Ք.Բ.Բ.Թ (խոժոռվելով: Առանց գլուխը բարձրացնելու).— Մե՛րն
է... (Աբբին չի կարողանում թաքցնել դժգոհությունը: Գլուխը
դանդաղորեն ետ է տանում, փակում է պատուհանը: Հան-
կարծ Քեբբթի գլուխը ինչ-որ սուկալի միտք է սողոսկում):
Գուցե նրանք մի վատություն արել են... Գուցե անասուններին
են թունավորել, կամ... (Վազելով գնում է դեպի գոմը):

Քիչ անց կամացուկ բացվում է խոհանոցի դուռը, և Աբբին
ներս է մտնում: Նա մի պահ կանգնում, նայում է Էբինին: Վեր-
ջինս Աբբին չի նկատում: Աբբին զննող հայացքով նայում է նը-
րան: Էբինի բարետեսությունն ու երիտասարդությունը նրա մեջ
թաքուն տենչանք են առաջացնում: Հանկարծ Էբինը, նկատելով
կնոջը, գլուխը բարձրացնում է: Նայում են միմյանց: Էբինը կար-
կամած ու շառագունած տեղից վեր է թռչում:

Ա.Բ.Բ.Ի (իրեն բնորոշ կրքոտ ձայնով, ինչպես խոսում է ամբողջ
գործողության ընթացքում).— Դու Էբինն ես, հա՛: Իմ անու-
նը Աբբի է: (Ժպտալով): Ես քո նոր մայրն եմ:

Ի.Բ.Ի.Ն (կատաղած).— Ո՛չ... գրո՛ղը քեզ տանի...

Ա.Բ.Բ.Ի (ձևացնելով, իբր, չի լսում: Դյուրթող ժպիտով).— Հայրդ
քո մասին շատ է պատմել, Էբի՛ն:

ԷՔԻՆ.— Հա'...

ԱԲԲԻ.— Չարժե նրան հակառակել... Ծեր մարդ է... (**Երկարա-տև դադար: Նրանք նայում են միմյանց**): Բայց ես չեմ ուզում այստեղ ինձ մայր ձևացնել: (**Զմայլանքով**): Ախր դու այնքան մեծ տղա ես և ուժեղ... Ես միայն քո բարեկամը կլինեմ: Եթե ինձ հետ ընկերություն անես, կտեսնես, թե ինչքան թեթև կանցնի քո կյանքը: Գուցե քեզ նրա հետ հաշտեցնեն: (**Սեփական ուժը գիտակցելով ու արհամարհանքով**): Հայրդ ինձ համար ամեն ինչ կանի...

ԷՔԻՆ (**դառը արհամարհանքով**).— Հա'... (**Նորից են նայում իրար: Էբինը չափազանց բարկացած է ու գրգռված: Ծիզով զսպում է իրեն**): Կորի'ր գրողի ծոցը...

ԱԲԲԻ (**հանդարտ ձայնով**).— Եթե ինձ հայհոյելով դու քեզ լավ ես զգում, հայհոյիր ինչքան կամենաս: Մինչև այստեղ գալս, գիտեի, որ դո՛ւ, և ոչ թե մեկ ուրիշն է ինձ հայհոյելու: Ինչ ասես, քո փոխարեն ես էլ նույնը կանեի... Եթե օտար մի կին գրավեր մորս տեղը: (**Ուշադիր զննում է նրան: Էբինը բարկությունից ու կրքից դողում է**): Երևում է դու մորդ շատ ես սիրել, հը'... Իմ մայրն էլ շատ վաղուց է մահացել: Ես այն ժամանակ շատ փոքր եմ եղել ու ոչինչ չեմ հիշում: (**Դադար**): Բայց, Էբի'ն, դու երկար չես ստի ինձ: Այս աշխարհում ամենավատը ես չեմ: Ծակատագրով ես ու դու շատ ենք նման եղել իրար: Հենց որ քեզ տեսա, իսկույն զգացի այդ: Ես նույնպես շատ եմ տանջվել... չափից ավելի, իսկ իմ տառապանքի դիմաց ոչ մի լավ օր չեմ տեսել: Ծնված օրից որք եմ մեծացել և ստիպված, սրա-նրա տներում քոծությունն եմ արել: Հետո ամուսնացա: Բայց ամուսինս հարբեցող դարձավ, և ես նորից ստիպված էի ուրիշների տներում աշխատել: Ծուտով երեխասս մեռավ: Ամուսինս էլ հիվանդացավ ու այն աշխարհը զնաց: Այդ ժամանակ ուրախացա՝ գոնե մի անգամ կյանքում ազատ մնացի... Բայց դե իմ ազատությունը ուրիշի տներում քոծություն անելն էր այնքան, մինչև մի օր հույսս կկտրեի, թե ես նույնպես իմ սեփական տունուտեղը կունենամ: Հենց այդ ժամանակ էլ հայրդ եկավ:

Երևում է Քեբըթը, գոմից է վերադառնում: Նա մոտենում է ցանկապատին, հայացքն ուղղում է այն ճանապարհին, որտեղով հեռացել էին եղբայրները: Հեռվից հազիվ լսվում են նրանց երգի՝

«Օ՛ր, Կալիֆոռնիայի» հնչյունները: Քեբըթը ցասկոտ դեմքով ու բռունցքները սեղմած կանգնում է:

Լ.ԲԻՆ (ճիգով զսպելով աճող տենչանքն ու համակրանքը: Խըռպոտ ձայնով).— Հայրս եկավ... քեզ պոռնիկի պես գնեց ու քարշ տվեց այստեղ... (Աբբին շառագունում է բարկությունից: Նա սկսում է դողալ: Էբինը կատաղած ավելացնում է): Իսկ ինչքան վճարեց... Նա քեզ այս ագարակո՞վ խաբեց, այս ագարակով, որ մորիցս էր գողացել, բայց հիմա իմն է... Դե՛, կորի՛ր գրողի ծոցը...

Ա.ԲԲԻ (սառն ու ինքնավստահ քրքիջով).— Քո՞նն է... Հա՛-հա՛-հա՛... Դեռ կտեսնենք... (Հետո քարացած): Ի՞նչ է, տղամարդու կարո՞տ էի մնացել... Էլ ինչո՞ւ քո սմբած հոր հետ ամուսնացա...

Է.ԲԻՆ (չարամտորեն).— Կասե՛մ նրան... Ինչ որ հիմա ասում ես, մանրամասն կպատմեմ նրան:

Ա.ԲԲԻ (ժպտալով).— Իսկ ես էլ նրան կհամոզեմ, որ քեզ մտրակելով վռնդի այս ագարակից:

Է.ԲԻՆ.— Սատանա՛...

Ա.ԲԲԻ (գրգռելով նրան).— Սա իմ ագարակն է: Իմ տունը, խոհանոցը...

Է.ԲԻՆ (կատաղորեն, կարծես, պատրաստվում է հարձակվել նրա վրա).— Չայնդ կտրի՛ր, լի՛րբ սատանա:

Ա.ԲԲԻ (մոտենում է նրան: Դեմքին ու մարմնին անսովոր գռեհիկ արտահայտություն: Կրքոտ ու զգուշավոր ձայնով).— Իսկ վերնահարկում անջասեկյակս է ու... անկողինս... (Էբինը չափազանց շփոթված ու հուսահատված նայում է նրա աչքերի մեջ: Աբբին մեղմորեն ավելացնում է): Ես ոչ մեկին վատություն չեմ արել... բացի թշնամիներիցս: Ես միշտ կկռվեմ բոլոր նրանց դեմ, ովքեր կխանգարեն ինձ ապրել: (Բռնում է նրա ձեռքը: Դյութանքով): Էբի՛ն, արի ես ու դու բարեկամներ լինենք:

Է.ԲԻՆ (հիպնոսված).— Ըհը՛... (Հետո վախեցած ձեռքը հեռացնում է նրանից): Չէ՛, պատա՛վ վիուկ: Ես ատում եմ քեզ... (Դռնից դուրս է փախչում):

Ա.ԲԲԻ (ժպտալով, գոհունակ ու հռետորավարի ինքն իր հետ խոսելով).— Ինչ լավ է: (Հպարտորեն նայում է սեղանին): Հիմա իմ ամանները կլվանամ:

Էբինը, մուտքի դուռը շրխկացնելով, դուրս է գալիս: Երևում է ագարակատան առմուտքի մոտ: Հորը տեսնելով՝ կանգնում ու ատելությամբ նայում է նրան:

ՔԵԲԸԹ (կատաղությամբ ձեռքերը երկինք է կարկառում).— Տե՛ր Ամենակարող... Անիծիր ու մեռցրու իմ անհնազանդ որդիներին:

ԷԲԻՆ (կոպտորեն ընդհատելով նրան).— Դու էլ, քո Աստվածն էլ... Որ միշտ անհծում ու թշվառացնում եք մարդկանց:

ՔԵԲԸԹ (չնկատելով Էբինին).— Աստվա՛ծ, տեր կանգնիր միայնակներին ու ծերերին...

ԷԲԻՆ (հեզնելով).— Եվ մեղքի մեջ գցիր հոտիդ ոչխարին: Գրողի ծոցը գնա՛ քո Աստծո հետ: (**Քեբըթը շրջվում է: Նրանք չարացած նայում են միմյանց**):

ՔԵԲԸԹ (խստորեն).— Հա՛, դո՛ւ ես: (**Մատով սպառնալով**): Անաստվա՛ծ ապուշ... (**Հետո հապշտապ**): Ինչո՞ւ չես աշխատում:

ԷԲԻՆ.— Իսկ դո՞ւ ինչու չես աշխատում: Սիմեոնն ու Փիթերը գընացել են, իսկ մենակ՝ չեմ կարող...

ՔԵԲԸԹ (**արհամարհանքով**).— Ես գիտեի, որ դու թուլամորթ ապուշ ես: Ես այս տարիքում էլ տասն անգամ քեզանից ուժեղ եմ: Տո՛, դու ինչ տղամարդ ես... (**Հետո խստորեն**): Դե՛ լավ, գնացի՛նք աշխատելու: (**Գնում են: Հեռվից հագիվ լսվում են «Կալիֆոռնիա» երգի հնչյունները: Խոհանոցում լվանում են ամանները**):

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ

ՊԱՏԿԵՐ ԱՌԱՋԻՆ

Երկու ամիս անց: Ագարակատան բակը՝ ինչպես առաջին գործողության ժամանակ: Կիրակնօրյա շոգ կեսօր: Աբբին իր ամենալավ զգեստով նստել է ճոճաթոռին: Տոթից թմրած ու լուռ ճոճվում է՝ կիսախուսի աչքերով ձանձրացած նայելով դիմացը:

Էբինը, անջասենյակի պատուհանից գլուխը հանելով, զգուշորեն նայում է շուրջը, փորձելով տեսնել ով կա բակում: Բայց հակառակ նրա զգուշությանը, Աբբին զգում է Էբինի ներկայությունը: Աբբին դադարում է ճոճվել: Անհամբեր է: Հուզված սպասում է: Էբինը զգում է նրա ներկայությունը, ճիգով մտքից վանում է կրկնոջ մասին մտածումները, դժկամությամբ թքում է ու գլուխը ետ քաշում: Աբբին շարունակում է շունչը պահած սպասել՝ կրքով ու կաթոգին փորձելով որսալ սենյակից լսվող յուրաքանչյուր շշուկ:

Էբինը դուրս է գալիս բակ: Նրանք նայում են միմյանց աչքերի մեջ: Նա վարանում է ու շփոթվում: Աբբին բարձր քրքջում է՝ միաժամանակ ոխակալվելով ու գրգռվելով: Էբինը խոժոռված, լայն քայլերով դուրս է գալիս նեղիկ ճանապարհ: Աբբիի կողքից անցնելիս՝ ճիգերի գերագույն լարումով փորձում է չտեսնելու տալ նրան: Էբինը կիրակնօրյա կոստյումով է: Լվացվելուց ու սափրվելուց հետո նրա դեմքը փայլում է: Աբբին նստում է ճոճաթռռի եզրին: Հայացքը քինախնդիր է ու մոլի կրքով լի: Երբ Էբինը անցնում է նրա կողքից, կշտամբանքով քրքջում է:

ԻՆԻՆ (պոռթկալով շրջվում է նրա կողմը).— Ո՞ւմ վրա ես ծիծաղում...

ԱՅԲԻ (ցնծությամբ).— Քո՛...

ԷԲԻՆ — Ինչո՞ւ: Ծիծաղելու ի՞նչ կա...

ԱՅԲԻ.— Դու ալնպես ես փայլում, կարծես ցուցահանդեսի ցուլ լինես:

ԻՆԻՆ (արհամարհանքով).— Իսկ դու կարծում ես գեղեցիկ ես, հա՞: (Նրանք նայում են միմյանց աչքերի մեջ: Աբբին որսում է նրա հայացքը, հակառակ Էբինի ակներև ճիգերի: Կնոջ աչքերը կրքից շողում են: Տոթի մեջ նրանց մարմնական տենչանքը դառնում է գրեթե շոշափելի):

ԱՅԲԻ (մեղմորեն).— Բայց... Էբի՛ն, մտքումդ ուրիշ բան կա, որը չես ուզում ասել: Ուզում ես զսպել... չես կարող, որովհետև բնությանը հակառակ բան է: Այն օրվանից, ինչ եկել եմ այստեղ, դու ամեն օր կուվում ես մարմնիդ հետ, փորձելով ինքդ քեզ համոզել, որ ես գեղեցիկ չեմ, որ ես քո դուրը չեմ գալիս: (Խոնավ ու փայլուն շուրթերով քրքջում է՝ աչքը Էբինից չկտրելով: Դադար: Աբբիի մարմինը կրքից գալարվում է: Հետո նվաղկոտ շնչում է): Չէ՞ որ արևը նույնպես զորավոր է ու այրող: Արևը տաքացնում է հողը, բնությունը, անեցնելով

ծառերը, մեծացնելով ու մեծացնելով... Արևը վառում է ցաւ քեզ, ջերմացնելով հոգիդ, որից ցանկություն է առաջանում, ցանկություն՝ միանալու, լցվելու մեկ ուրիշի մեջ: Հետո այդ ուրիշն է ջերմանում... արևից... աճում է, մեծանում, ահա այդ ծփիների պէս և ուզում տիրանալ քեզ... (**Նորից մեղկորեն ծիծաղում է՝ տղայի հայացքը որսալով: Էբինը քայլ է անում դեպի կինը, մաքառելով սեփական կամքի դեմ**): Էբի՛ն բնությունը կհաղթի քեզ: Լավ կլինի տիրանաւ արան քանի շուտ է... լիովին տիրանաւ...

ԷԲԻՆ (փորձելով հաղթահարել նրա հրապուրանքը: Ծփոթված).— Եթէ հայրիկն իմանա ինչ էս ուզում անել... (**Քինախնդիր**): Դե՛, ասենք, դու նրան արդեն հիմարացրել էս: (**Աբբին ծիծաղում է**):

ԱԲԲԻ.— Իսկ դու քեզ ավելի հանգիստ չե՞ս զգում, որ նա մի քիչ հիմարացել է ու փափկել:

ԷԲԻՆ (վճռականորեն).— Չէ՛... էս միշտ կուվել էմ նրա հետ ու պիտի կուվեմ... Նան՝ քեզ հետ, մորս իրավունքների համար, նրա ազարակատան համար: (**Էբինը բարկանալով թորափվում է Աբբիի քիչ առաջվա հրապուրանքից: Աչքերը ոլորում է կնոջ վրա**): Քեզ չի հաջողվի ինձ մոլորեցնել: Ուզում էս ամեն ինչ կուլ տալ... Դե՛, դու դեռ կտեսնես, որ էս ոսկրոտ պատառ կլինեմ քո կոկորդում: Չես կարող ինձ ծամել:

ԱԲԲԻ (փորձում է վերագանել իր հրապուրյի ուժը: Հրամայում է).— Էբի՛ն...

ԷԲԻՆ.— Դե... ձե՛ն քաշիր ինձանից: (**Փորձում է հեռանալ**):

ԱԲԲԻ (ավելի հրամայաբար).— Էբի՛ն:

ԷԲԻՆ (բարկացած կանգ է առնում).— Ի՞նչ էս ուզում:

ԱԲԲԻ (փորձելով զսպել աճող հուզմունքը).— Ո՛ր էս գնում:

ԷԲԻՆ (արհամարհանքով).— Գնամ՝ մի քիչ գբուսնեմ:

ԱԲԲԻ.— Գլո՞ղ էս գնում:

ԷԲԻՆ (գրգռված).— Ասենք թե:

ԱԲԲԻ (գրգռված).— Մի՛նիին տեսնելո՞ւ:

ԷԲԻՆ.— Ասենք թե:

ԱԲԲԻ (մեղկորեն).— Ուզում էս հետը պանկե՞լ:

ԷԲԻՆ (հիշաչար ժպտով).— Չասացի՞ր բնությանը հաղթել չի լինի: (**Քրքջալով ուզում է հեռանալ**):

ԱԲԲԻ (պոռթկալով).— Նա պառավ տատեխ է...

ԼԲԻՆ (արհամարհանքի ճիգով).— Համեմայն դեպս, նա քեզանից գեղեցիկ է:

ԱԲԻԻ.— Իհարկե... որովհետև գյուղի բոլոր հարբեցողները նըրան...

ԼԲԻՆ (կշտամբանքով).— Ինչ անենք: Բայց նա քեզանից գեղեցիկ է:

ԱԲԻԻ (մոլեգնած).— Չա՛յնդ... չհամարձակվես ինձ համեմատել նրա հետ:

ԼԲԻՆ.— Մինին գոնե խորամանկորեն չի գողանում իմ ունեցած-չունեցածը:

ԱԲԻԻ (անխնա բռնելով նրա թույլ կողմը).— Քո ունեցած-չունեցածը: Դու նկատի ունես ի՞նչ ազարակը:

ԼԲԻՆ.— Հա, այդ ազարակը, որին տիրանալու համար քեզ վաճառեցիր... պատաված պոռնիկի պես... Հա՛, այդ ազարակը...

ԱԲԻԻ (զայրույթով).— Կյանքումդ չես տեսնի, որ այդ ազարակից թեկուզ մի փտած մոլախոտ քեզ հասնի: **(Ճչալով):** Կորի՛ր այստեղից: Վազի՛ր քո փնթի բոզի մոտ, որ խայտառակես հորդ ու... ինձ: Եթե ուզեմ, կարող եմ նրան ասել, որ քեզ մտրակելով դուրս քշի այս ազարակից: Դու այստեղ ապրում ես միայն սպի սրտնատով, որ ե՛ս եմ թույլատրում: Կորի՛ր սրտեղից, ես գգվում եմ քո տեսքից... **(Նա դադարում է խոսել, հեկալով ու շողացող աչքերով նայելով էբինին):**

ԼԲԻՆ (նույն կերպ աչքերը հառելով).— Ես էլ քեզանից եմ զրգվում: **(Շրջվում ու լայն քայլերով գնում է: Աբբին ասելու-թյամբ նայում է նրան):**

Գոմի կողմից երևում է Քեբըթը: Նրա դեմքից չքացել է նախկին խոժոռ արտահայտությունը: Չափազանց մեղմ ու զվարթ տրամադրության մեջ է: Աչքերում՝ տարօրինակ երազկոտություն: Մարմնական թուլության հետքն իսկ չկա: Ավելին, կորովի ու երիտասարդ է երևում: Աբբին, նկատելով նրան, խորշանքով գլուխը թևրում է: Քեբըթը զգուշորեն մոտենում է նրան:

ՐԼԲԸԹ (մեղմորեն).— Նորի՛ց էիք վիճում իրար հետ:

ԱԲԻԻ (կտրուկ).— Չէ՛:

ՐԵԲԸԹ.— Բայց դուք շատ բարձր էիք խոսում: **(Նստում է առմուտքի աստիճաններից):**

ԱԲԻԻ (կշտամբանքով).— Եթե լսել ես, էլ ինչո՞ւ ես հարցեր տալիս:

ՔԵԲԸԹ.— Լսեցի, բայց չհասկացա ինչի մասին էիք խոսում:

ԱԲԲԻ (հանգստացնելով).— Դե լավ... ինչ կա, որ ինչի մասին վիճենք:

ՔԵԲԸԹ (դադարից հետո).— Էբինը խելառ լակոտ է:

ԱԲԲԻ (դժգոհ).— Ոնց որ քթիցդ թուած լինի:

ՔԵԲԸԹ (ակներև հետաքրքրասիրությամբ).— Աբբի՛, դու այդպե՛ս ես կարծում: **(Դադարից հետո: Ոխակալությամբ):** Ես ու Էբինը միշտ կովում ենք: Ոչ մի կերպ չեմ կարողանում նրան տանել: Այնքան հիմար է: Ծիշտ մայրն է, տեղը դրած:

ԱԲԲԻ (արհամարհանքով).— Ըհը՛... համարյա քեզ պես:

ՔԵԲԸԹ (կարծես չլսելով).— Գուցե շատ խիստ եմ եղել հետը:

ԱԲԲԻ (ծաղրելով).— Քիչ առաջ հենց դրա մասին էինք խոսում: Էբինն ասում էր, քանի գնում, դու հիմարանում ու ջրիկանում ես... աղբի պես...

ՔԵԲԸԹ (դեմքը վայրկենաբար խոժոռվում է).— Էբի՛նը: Տե՛ս հա... ասա խելքը գլուխը հավաքի ու ինձ հետ գործ չունենա, թե չէ... **(Դադար: Աբբին դեռ դեմքը շրջել է նրանից: Քեբը-թը աստիճանաբար մեղմանում է: Նայում է երկնքին):** Սիրուն է, չէ՞:

ԱԲԲԻ (հակառակվելով).— Երկինք է էլի...

ՔԵԲԸԹ.— Երկինքը... կարծես նոր հերկած արտ լինի: Տաք, փրխրուն արտ:

ԱԲԲԻ (հեզմանքով).— Չէի՛ր ուզի այդ արտին էլ տիրանալ: **(Քթի տակ արհամարհանքով ժպտում է):**

ՔԵԲԸԹ (ակներև աշխույժով).— Հա՛, ուզում եմ: Ես ուզում եմ երկնքում լինել: **(Դադար):** Աբբի՛, ախր ծերացել եմ: Ծյուղից կախված լիկած խնձոր եմ դարձել: **(Դադար: Աբբին շփոթված նայում է նրան: Քեբը շարունակում է):** Չե՛ս զգում, մի տեսակ ցուրտ է: Չնայած կրակ է թափվում երկնքից: Չե՛ս զգում, ցուրտ է:

ԱԲԲԻ.— Չէ՛:

ՔԵԲԸԹ.— Իսկ գոմում տաք է, և կովերից հրաշալի հոտ է գալիս: **(Դադար):** Կովերն էլ տարօրինակ են:

ԱԲԲԻ.— Քեզ պե՛ս:

ՔԵԲԸԹ.— Չէ՛, Էբինի: **(Դադար):** Չգում եմ, կամաց-կամաց հաշտվում եմ նրա հետ, ինչպես մի ժամանակ... նրա մոր հետ էի հաշտվում: Նոր եմ հասկանում, որ Էբինը իր ապու-

շությունը մորից է ժառանգել: Ես նրան դեռ կարող եմ ազարակից մի բան տալ, եթե հիմարություններ չանի: (**Ռադար**): Աբբի', ծերությունը արդեն սողոսկում է ոսկորներին մեջ:

ԱԲԲԻ (անտարբերությամբ).— Դե լավ, դեռ չես մեռել:

ՔԵԲԸԹ (տեղից ելնելով).— Հա', դու ճիշտ ես ասում: Սատանի աչքից հեռու, դեռ առողջ եմ ու կաղնու պես դիմացկուն: (**Հետո մռայլվելով**): Բայց երբ ծերանում ես, Աստված զգուշացնում է, որ պատրաստվես: (**Լռություն**): Դրա համար եմ ամեն անգամ Էբինին հիշում: Մանավանդ հիմա, երբ նրա անհիծյալ եղբայրները դժոխքի ճամփան բռնեցին... երբ այլևս ոչ ոք չկա, որ ազարակիս տեր կանգնի: Մնացել է միայն Էբինը:

ԱԲԲԻ (քինախնդիր).— Բայց ես կամ, չե՞... (**Հուզված**): Իսկ ինչո՞ւ Էբինը այդպես միանգամից սիրտդ մտավ, հը՞... իսկ ես քո օրինավոր կինը չե՞մ:

ՔԵԲԸԹ (ակամա).— Ըհը: Կինս ես: (**Ռադար: Քեբըթը թերահավատորեն նայում է Աբբիին, որի աչքերը դառնում են խուսափող: Հետո անսպասելիորեն բռնում է կնոջ ձեռքերը, սեղմում ու հավատացյալներով շրջապատված քահանայի պես մեղմ շնչում**): «Դու, Սարոնի իմ ծաղիկ... Աչքերդ աղավնիների աչքեր են, շուրթերդ նման են որդան կարմրի թելերին, ստինքներիդ նման են երկու ուլերի, պորտդ խմիչքով լի կլոր մի գավաթ է, իսկ փորդ ցորչանի շեղջ՝ կարմիր շուշանների տակ...»⁷: (**Քեբըթը համբույրներով է ծածկում նրա ձեռքը: Կինը ձևացնում է, իբր, չի նկատում. ուղիղ նայում է առաջ՝ խիստ ու բարկացկոտ աչքերով**):

ԱԲԲԻ (բարկացած հեռացնելով ձեռքերը).— Ուրեմն, մտադիր ես ազարակը Էբինին թողնել, հա՞... Կարծեմ, ես քեզ ճիշտ հասկացա:

ՔԵԲԸԹ (չռված աչքերով).— Ում թողնե՞մ: (**Հետո քինախնդիր համառությամբ**): Ես ոչ մեկին էլ չեմ թողնելու ազարակս:

ԱԲԲԻ (անհանգստացած).— Բայց հո չե՞ս կարող հետդ մյուս աշխարհ տանել...

ՔԵԲԸԹ (մի պահ մտածելով, հետո ակամա).— Հա', իհարկե չեմ կարող: (**Պահ անց՝ արտասովոր կրքոտությամբ**): Բայց եթե հնարավոր լիներ, հավերժությունը վկա, հետո այն աշխարհ կտանեի: Կամ եթե իմանայի, թե երբ եմ մեռնելու... Կհրդենեի

ազարակս, ցորենի բոլոր խրձերը, ծառի վերջին ճյուղը: Հետո հանգիստ ինձ համար կհասնի, լավ հասկանալով, որ ինձ նկատ մտնում է ամեն ինչ ու ոչ մեկը չի կարող տիրանալ իմ ունեցվածքին, որ ստեղծել եմ ոչնչից... արյուն-քրտինքով... (Գաղար: Հետո անսովոր սիրալիրությամբ): Միայն կովերիս չեմ վառի: Նրանց ես ազատ կարձակեմ:

ԱՅՅԻ (բարկացած).— Ուրեմն ի՞նչ էլ կայրես:

ՔԵԲԸԹ (մեղմ ժպտալով).— Քեզ էլ կովերի հետ ազատ կարձակեմ:

ԱՅՅԻ (կատաղությամբ).— Ուրեմն դա՞ է իմ վարձքը: Դու այդպե՞ս ես հատուցում իմ այն լավության դիմաց... Ախր ես ուզում էի քեզ ու Էբինին, որ սաստիկ ստում է քեզ, հաշտեցնել: Իսկ դու... դու... ուզում ես ինձ վռնդել...

ՔԵԲԸԹ (հապշտապ).— Աբբի՛, հասկացիր...

ԱՅՅԻ (վրիժառությամբ).— Դե՛, ասա՛, որտե՞ղ է հիմա Էբինը: Նա գնաց այդ պռոնիկ Մինիի մոտ: Ես փորձեցի թույլ չտալ: Ախր նա խալտառակում է քեզ ու ինձ... այն էլ՝ սուրբ Ծաբաթ օրը...

ՔԵԲԸԹ (կատաղած).— Նա ծնված օրից անստակ է: Նրա սիրտը ցանկությունից է մաշվում:

ԱՅՅԻ (բարկացած ու հաստատակամ).— Նա ինձ է ուզում... Այդ ցանկությունը ինձ համար է: Կարելի՞ է այդ բանը նրան ներել:

ՔԵԲԸԹ (աչքերը սկեռելով կնոջ վրա: Մեռչալ լռություն).— Քե՞զ է ուզում...

ԱՅՅԻ (լրբացած).— Ուզում էր հետո պառկել:

ՔԵԲԸԹ (շարունակում է չոփած աչքերով նայել: Հետո դեմքին սուկալի կատաղություն է իջնում: Ետ է ցատկում ու ամբողջ մարմնով դողում).— Ամենակարող Աստվա՛ծ... Ախր ես շանտատակ կանեմ նրան...

ԱՅՅԻ (վախենալով Էբինի համար).— Ո՛չ, ո՛չ...

ՔԵԲԸԹ (վայրենացած).— Ես հրացանով նրա ապուշ ողեղը կցրեմ այդ ծիփների կատարին:

ԱՅՅԻ (գրկելով նրան).— Ո՛չ... Էֆրաի՛մ...

ՔԵԲԸԹ (կոպտորեն հրում է նրան).— Հա՛... Աստված վկա, որ ասացի՛ կանեմ:

ԱՅՅԻ (հանդարտեցնելով).— Լսիր, Էֆրաի՛մ, դա ողղակի տղա-

յական հիմարությունն էր: Լուրջ բան չկար: Պարզապես կատակում էր ու հիմարություններ դուրս տալիս:

ԲԵԲԸԹ.— Իսկ ինչո՞ւ ասացիր... ցանկություն...

ԱԲԲԻ.— Գուցե ճիշտ չկարողացա բացատրել միտքս: Բացի այդ, բարկությունից քիչ մնաց խելագարվեի, երբ ասացիր, թե ագարակը նրան ես թողնելու:

ԲԵԲԸԹ (հանդարտ, բայց դեռ խոժոռված ու բիրտ).— Դե լավ... եթե ուզում ես, նրան մտրակելով դուրս կվռնդես:

ԱԲԲԻ (մոտենում, բռնում է նրա ձեռքը).— Ո՛չ: Իմ մասին մի՛ մտածիր: Պետք չի նրան դուրս քշել: Խելացի բան չի լինի: Իսկ քեզ ո՞վ կօգնի: Ախր ոչ մեկը չկա, որ աշխատի:

ՔԵԲԸԹ (մտածելով նրա ասածների շուրջը: Հետո հավանությամբ գլխով է անում).— Ծիշտ ես ասում: **(Դյուրագրգիռ):** Դե՛ լավ... թո՛ղ մնա: **(Նստում է առմուտքի աստիճաններից: Արքին նստում է նրա կողքին: Քերքը արգահատանքով մրմռնջում է):** Պետք չէր այդ հիմար հորթի պատճառով բարկանալ: **(Դադար):** Բայց մի հարց կա, որ... Իսկ իմ ո՞ր զավակը տե՛ր կկանգնի ագարակիս, եթե Տերը ինձ իր մոտ կանչի: Ախր Սիմեոնն ու Փիթերը դժոխքի ծոցը գնացին: Իսկ Էբինն էլ ուզում է նրանց պես...

ԱԲԲԻ.— Ագարակին ես տե՛ր կկանգնեմ:

ԲԵԲԸԹ.— Է՛, դու կին ես:

ԱԲԲԻ.— Բայց քո՛ կինը:

ԲԵԲԸԹ.— Կինը իմը չէ: Որդին է իմը: Իմ արչունը... Իսկ իմ ունեցվածքին իմ միս ու արչունը պետք է տե՛ր կանգնի: Այդ ժամանակ, եթե վեց ոտնաչափ հողի տակ էլ լինեմ, միևնույն է, ագարակը իմը կլինի: Հասկացա՞ր:

ԱԲԲԻ (թշնամանքով նայելով նրան).— Հասկացա:

Դառնում է չափազանց մտախոհ: Դեմքը խորամանկ արտահայտություն է ստանում: Աչքերը զննում են Քերքին:

ԲԵԲԸԹ.— Իսկ ես ծերացել եմ, ճյուղից կախված լիկած խնձոր դարձել: **(Հետո անսպասելիորեն ուժ գտնելով իր մեջ):** Բայց չէ... դեռ չեմ կոտրվի... ես դեռ շատ տարիներ կդիմանամ: Հավերժությունը վկա, կարող եմ հազար ջանելի խեղճացնել սմե՛ն տեսակ աշխատանքով...

ԱԲԲԻ (անսպասելիորեն ընդհատելով նրան).— Աստված գուցե մեզ մի որդի բաշխի:

ՔԵԲԸԹ (թեքվում, կաթոգին նայում է նրան).— Դու ուզում ես
ասել... Տղա՞ ծնվի ինձանից ու... քեզանից:

ԱԲԲԻ.— Ըհը... (**Քծնող ժպտով**): Ինձ տղա է պետք: Իսկ ի՞նչ
զարմանալու բան կա: Չէ որ դու ուժեղ տղամարդ ես, չէ՞:
Ինչո՞ւ ես այդպես նայում: Ոչ մի անգամ մտքովդ չէ՞ր ան-
ցել: Իսկ ես միշտ երազում էի ու աղոթում, որ այդ բանը շուտ
կատարվի:

ՔԵԲԸԹ (**ջերմեռանդ հուզավառությամբ**).— Դու աղոթո՞ւմ էիր,
Աբբի՛, որ մեզ... որդի՞ ծնվի:

ԱԲԲԻ.— Ըհը: (**Մտախոհ որոշմամբ**): Հիմա ինձ տղա է պետք:

ՔԵԲԸԹ (**հուզված ճանկում է նրա ձեռքերը**).— Աբբի՛, դա Աստ-
ծո ողորմությունը կլինի... Ամենակարող Աստծո ողորմությու-
նը իմ ծերության օրերին... մեռակության մեջ... Աբբի՛, հրա-
մայիր ինչ որ մտքովդ անցնում է, և ես կանեմ:

ԱԲԲԻ (**ընդհատելով**).— Այդ ժամանակ ազարակը իմը կլինի ու...
այդ տղայի՞նը:

ՔԵԲԸԹ (**վճռական**).— Ասացի ամեն ինչ կանեմ: Երդվում եմ...
եթե չկատարեմ, թող հավերժ անիծյալ լինեմ դժոխքում:
(**Ծնկի է գալիս: Աբբիին քաշում է ներքև, իր կողքին: Դողում
է հույսերի տենդից**): Նորից աղոթիր Տիրոջը, Աբբի՛: Այսօր
շաբաթ է: Ես էլ քեզ հետ կաղոթեմ: Երկու հոգու աղոթքը
ավելի շուտ կհասնի Աստծուն: «Եվ Աստված ունկնդրեց Ռա-
բելին, և նա հղիացավ ու մի տղա ծնեց...»⁸: Եվ Աստված
լսեց Աբբիին... Աղոթիր, Աբբի՛ աղոթիր, որ Աստված ուն-
կընդրի քեզ: (**Մրմնջալով՝ գլուխը խոնարհում է: Աբբին ձե-
վացնում է, իբր, աղոթում է, բայց աչքի տակով արհամար-
հական ու հաղթական հայացք է ձգում նրա վրա**):

ՀԵՂ

ՊԱՏԿԵՐ ԵՐԿՐՈՐԳ

Երեկոյան մոտավորապես ժամը ութը: Երևում են վերնահար-
կի երկու անջասենյակները: Էբինը ձախակողմյան սենյակում է,
մահճակալի եզրին նստած: Հուզմունքից ու շոգից հանվել ու մնա-
ցել է միայն շապիկով: Մտահոգ է: Կզակը հենել է բռունցքներից
ու նայում է ուղիղ առաջ:

Մյուս անջասենյակում Քեբըթն ու Աբբին են կողք-կողքի նրս-

տել՝ հնաոճ փետրե անկողնով մահճակալին: Քերթը շապիկով է, կինը՝ գիշերազգեստով: Քերթը տակավին հուզված է. որդի ունենալու միտքը հանգիստ չի տալիս նրան: Երկու ննջասենյակներն էլ աղոտ լուսավորված են երկարավուն, մարմրող մոմերով: ՔԵԲԸԹ.— Ագարակին տղա է պետք:

ԱԲԲԻ.— Ինձ նույնպես տղա է պետք:

ՔԵԲԸԹ.— Երբեմն ինձ թվում է՝ իմ ագարակն ու դու նույնն եք: Դրա համար իմ մենակության պահին կառչում եմ քեզանից: (Դադար: Բռունցքով խփում է ծնկին): Ինձանից ու իմ ագարակից արու զավակ պետք է ծնվի:

ԱԲԲԻ.— Ավելի լավ է քնես, թե չէ... արդեն ամեն ինչ խառնում ես:

ՔԵԲԸԹ (անհանգստացած).— Չէ՛, չեմ քնի: Գլուխս շատ լավ էլ աշխատում է: Պարզապես դու ինձ չես հասկանում, դրա համար ես այդպես խոսում: (Հուսահատ նայում է հատակին):

ԱԲԲԻ (անտարբեր).— Գուցե:

Մյուս սենյակում էրինը տեղից ելնում է ու ինքնամոռացման մեջ սկսում զնալ-զալ սենյակում: Արբին ուշադիր լսում է մյուս սենյակից եկող յուրաքանչյուր ոտնաձայն: Աչքերը հառել է միջնապատին, այնպես, կարծես, նրանց երկուսի տաք հայացքները թափանցում են պատի միջով: Էրինը ինքնամոռացման մեջ մեկնում է երկու ձեռքերը, որպեսզի գրկի նրան, իսկ Արբին փոքր-ինչ բարձրանում է տեղից: Հետո, խելքի գալով, քրթմնջալով հայհոյում է ինքն իրեն ու նետվում մահճակալին՝ գլուխը թաղելով բարձի մեջ, իսկ ձեռքերը միակցում ծոծրակին: Արբին նվաղկոտ հոգոց է հանում, միչդեռ աչքերը հառված են միջնապատին: Ողջ էությանը համակ ուշադրություն դարձած, փորձում է որսալ կողքի սենյակից լսվող յուրաքանչյուր աննշան ձայն:

ՔԵԲԸԹ (հանկարծ գլուխը բարձրացնելով՝ նայում է կնոջը: Արհամարհանքով).— Իսկ դու... երբևէ կարո՞ղ ես հասկանալ ինձ: Ընդհանրապես, կարո՞ղ է որևէ մեկը հասկանալ ինձ: (Գլուխը թափահարելով): Ո՛չ... Կարծում եմ այդպիսի բան չի լինի: (Գլուխը թեքում է: Արբին շարունակում է նայել պատին: Հետո, Քերթը ակներևաբար չդիմանալով խռովահույզ մտքերից առաջացած լռությանը, հանկարծ ճանկում է կնոջ ծունկը: Արբին արհամարհանքով պոկվում է նրանից: Տեսնելով, որ ամուսինը չի հետևում իրեն, աչքերը նորից սևե-

ռում է պատիւն, ուշադրություն չդարձնելով ամուսնու ասած-
 ներին): Լսիր, Աբբի՛, երբ հիսուն տարի առաջ այստեղ եկա,
 հազիվ քսան տարեկան լինեի: Ես այնքան ուժեղ էի ու ան-
 բախտ, որ չես էլ պատկերացնի: Տասը անգամ ավելի ու-
 ժեղ, հիսուն անգամ ավելի թիկնեղ, քան թե այդ... Էբինը:
 Այս ազարակում, բացի քարերից, ուրիշ ոչինչ չկար: Ծառերը
 ձևու Լին աննում ինձ, որ այս հողերը վերցրի: Դե՛, նրանք
 չԼին հասկանում այն ամենը, ինչ ես էի հասկանում: Երբ մարդ
 քարերի մեջ ցորենի հասկ է անեցնում, ուրեմն նրա մեջ Աստ-
 ված է ապրում: Ուրիշներն ինձ պես ուժեղ չէին, որ վարու-
 ցանք անեին: Նրանք չգիտեին, որ Աստված դաժան է: Կար-
 ծում էին Աստված իրենց պես թուլամորթ է: Ծիծաղում էին
 վրաս: Բայց շուտով չծիծաղեցին: Նրանցից շատերը հենց
 այստեղ էլ մեռան: Իսկ մի քանիսն Արևմուտք գնացին ու հո-
 գիներն այնտեղ ավանդեցին: Հիմա նրանք բոլորը գետնի
 տակն են անցել, այդպես էլ չհասկանալով, որ Աստված նը-
 բանց պես թուլամորթ չէ: Նրանք հիմարաբար կարծում էին,
 թե Աստված իրենց հեշտ ու հանգիստ կյանք կպարգևի:
 Բայց ոչ... Աստված դաժան է: **(Գլուխը տարուբերում է):**
 Ծանր կյանքից ես նույնպես դաժանացա: Մարդիկ ինձ մե-
 դադրում էին, թե դաժան եմ, իբր, դաժանությունը մեղք է:
 Իսկ ես նրանց ասացի. «Որոտը վկա, ես դաժան մարդ կլի-
 նեմ: Թող դա մեղք լինի. ես դաժան կլինեմ և դուք ինչ ուզում
 եք խոսեք իմ մասին»: **(Անսպասելիորեն):** Բայց մի անգամ
 թուլամորթություն արեցի: Երկու տարի կլինեք, ինչ այստեղ
 էի: Հուսահատվել էի: Այնքան շատ քար կար հավաքելու...
 Մի խումբ կար, որ ուզում էր Արևմուտք գնալ: Ես էլ միացա
 նրանց: Գնացինք, հա գնացինք, հասանք մի հարթ, լայնար-
 ձակ դաշտ, որտեղ հողը չափազանց սև էր, բերրի: Ոչ մի
 քար չկար: Ամեն ինչ հեշտ էր: Միայն վարիր, ցանիր, հետո
 նստիր, ծխամորճի կպցրու և սպասիր բերքին: Կարող էի
 հարստանալ... բայց հոգուս խորքում մի բան անընդհատ տան-
 ջում էր ինձ: Աստծո ձայնն էր իմ մեջ խոսում: «Ծո՛ւտ տուն
 վերադարձիր: Դու հակառակվում ես ինձ...»: Վախեցա այդ
 ձայնից, արտա թողեցի անտեր ու հեռացա: Այո, ես թողեցի
 այն ամենը, ինչ օրենքով ինձ էր հասնում: Աստված դաժան
 է: Աստված թուլամորթ չէ: Աստված քարերի մեջ է: «Կառու-

ցիր եկեղեցիս աստուածներից և ես միշտ այնտեղ կլինեմ»։ Ահա թե ինչ պատվիրեց Աստված Պետրոսին։ **(Խոր հառաչում է։ Դադար)**։ Եվ ես հավաքեցի բոլոր քարերը ու պատեր շարեցի։ Իմ ամբողջ կյանքի պատմությունը այդ պատերի վրա կարելի է կարդալ։ Ամեն օր մի մեծ քար գլորելով՝ քարե պարիսպներ էի շինում այն արտերի շուրջ, որոնք իմն էին, որտեղ ես ոչնչից, քարերի միջից բերք էի աճեցնում, Տիրոջ կամքով... որպես նրա ծառան... Իսկ դա թուլամորթ մարդու բան չէր։ Դրա համար ուժասպառ աշխատանքից Աստված ինձ այսպես դաժան դարձրեց։ **(Դադար)**։ Միշտ մենակ էի։ Հետո կին առա։ Նա Սիմեոնին ու Փիթերին ծնեց։ Լավ կին էր։ Անգործ չէր մնում, միշտ աշխատում էր։ Ծիշտ է, ինձ օգնում էր, բայց չէր հասկանում ինձ, չէր հասկանում ինչի համար է աշխատում... Դրա համար ես միշտ մենակ էի։ Հետո կինս մեռավ։ Բայց ես ինձ այդքան մենակ չէի զգում։ Ծուտով կորցրի կյանքիս տարիների հաշիվը։ Դե՛, ժամանակ չկար պարսպ-սարսպ նստելու և տարիները հաշվելու։ Սամն ու Փիթերը մեծացան, սկսեցին օգնել։ Ազարակս մեծացավ։ Այստեղ ամեն ինչ իմն էր։ Երբ մտածում ես, որ ամեն ինչ քոնն է, մոռանում ես մենակությունը։ **(Դադար)**։ Բայց հո չե՞ս կարող միտքդ մի բան գցել ու գիշեր-ցերեկ դրանով ապրել։ Ուրիշ կին առա... Էբիհի մորը։ Նրա բարեկամները ինձ դատի տվեցին, իբր, ազարակը նրանն է և ոչ թե իմը... Դրա համար է հիմա Էբիհը հիմարություններ դուրս տալիս... իբր ազարակը նրա մորն է։ Սիրուն կին էր։ Բայց թույլ էր։ Փորձում էր դաժան լինել։ Չկարողացավ։ Նա էլ ո՛չ ինձ հասկացավ, ո՛չ էլ մի ուրիշ բան... Նրա հետ ինձ ավելի մենակ էի զգում։ Էբիհը տասնվեց տարեկան էր, երբ նա մեռավ։ **(Դադար)**։ Ապրում էի տղերքիս հետ։ Նրանք առում էին ինձ, որովհետև ես խիստ հայր էի։ Իսկ ես էլ նրանց չէի կարողանում տանել, որովհետև շատ էին թուլամորթ։ Սամն ու Փիթերը ազարակից իրենց բաժինն էին պահանջում՝ չիմանալով էլ, թե դա ինչ բան է։ Իսկ ես նրանց բողոքների պատճառով ծերանում էի, հոգիս դառնանում էր։ Նրանք մի բան էին պահանջում, որը իմն էր, միայն իմը... Հետո, այս գարնանը նորից ձայն լսեցի վերից... Աստծո ձայնն էր, որ արձագանքվեց հոգուս ամայության մեջ։ «Գնա՛, փնտրի՛ր ու

կգտնես...», — պատվիրեց ինձ Աստված... **(Անսովոր հուզմունքով թեքվում է կնոջ կողմը)**: Իսկ ես քեզ տեսա ու գտա... Դու իմ Սարոնի վարդ... Աչքերդ նման են... **(Աբբին ռխակալ նայում է նրան: Քերբթը մի պահ նայում է նրան, հետո՝ խրատորեն)**: Իսկ դու որևէ բան հասկացա՞ր իմ այսքան խռչելուց...

ԱԲԲԻ (շփոթված). — Իհարկե:

ՔԵԲԸԹ (կողմ է հրում նրան: Բարկացած). — Դու ոչինչ էլ չես հասկանում... Ոչ էլ կհասկանաս... Եթե մի տղա չծնես... որ քեզ փրկի... **(Մա առում է սուր սպառնալիքով)**:

ԱԲԲԻ (քինախնդիր). — Բայց ես աղոթեցի, չէ՞...

ՔԵԲԸԹ (դառնացած). — Նորից աղոթիր, որ հասկանաս...

ԱԲԲԻ (շղարշված սպառնալիքով). — Խոստանում եմ, որ դու ինձանից տղա կունենաս:

ՔԵԲԸԹ. — Ախր դու... ինչպե՞ս կարող ես նման բան խոստանալ:

ԱԲԲԻ. — Դե, գուցե երկրորդ տեսողություն ունեմ և կարողանում եմ կանխատեսել: **(Մեղմ ժպիտ է խաղացնում դեմքին)**:

ՔԵԲԸԹ. — Հավատում եմ... Դու երբեմն վախեցնում ես ինձ: **(Դողում է)**: Ինչ ցուրտ է այստեղ... Ես ինձ մենակ եմ զգում... Սենյակի անկյուններում կարծես ուրվականներ են թռչկոտում... **(Արագ հագնում է վարտիքը, շապիկն ու կոշիկները)**:

ԱԲԲԻ (զարմանալով). — Ո՞ր ես գնում:

ՔԵԲԸԹ (անսովոր ձայնով). — Ներքև: Գոմ: Այնտեղ հանգիստ է ու տաք... **(Դառնորեն)**: Կիսուեմ կովերի հետ: Նրանք հասկանում են ինձ: Կովերը հասկանում են ինձ, ճանաչում են իմ ազարակը: Կովերի հետ գրուցելով, ես կհանգստանամ... **(Շրջվում է, որ դուրս գա)**:

ԱԲԲԻ (փոքր ինչ վախեցած). — Էֆրաիմ... գիշերը վա՞տ զգացիր քեզ:

ՔԵԲԸԹ. — Լիկել եմ, լիկել: Ծյուղից կախված խնձորի պես... **(Դուրս է գնում: Աստիճաններից լսվում են նրա ոտնաձայնները: Էբինը անհանգստացած տեղից ելնում, ուշադիր ականջ է դնում: Աբբին զգում է նրա այդ շարժումը ու աչքերը սևեռում է միջնապատին: Քերբթը տանից դուրս է գալիս, կանգնում է ցանկապատի դռան մոտ: Աչքերը կիսաբաց նայում է երկնքին: Տառապալից կարկառում է ձեռքերը)**: Ամենակարող Աստված... պատասխան տուր ինձ խավարի միջից: **(Ա-**

կանջ է դնում՝ կարծես պատասխանի սպասելով: Հետո ձեռքերը թուլացած կախվում են: Գլուխը թափահարում է ու ծանրը քայլերով գնում գոմի կողմը):

Էբինն ու Աբբին պատի միջով, ասես, տեսնում են իրար: Էբինը կրքից շնչակտուր է լինում: Աբբին արձագանքում է նրա այդ ծանր հոգոցին: Երկուսն էլ դառնում են սուկալի նյարդային ու անհանգիստ: Վերջապես Աբբին տեղից ելնում է ու ականջը պատին դնելով, ուշադիր լսում է: Էբինն այնպես է պահում իրեն, ասես, տեսնում է Աբբիի յուրաքանչյուր շարժումը: Նա դառնում է աներկյուղ: Աբբին ակներև համարձակությամբ դուրս է գալիս խորքի դռնից: Էբինը հետևում է նրան: Հետո, երբ նրա դուռը կամացուկ բացվում է, նա իսկույն մի կողմ է թեքվում: Աբբին, նվաղկոտ ճիշ արձակելով, վազում է նրա մոտ: Գրկում է Էբինին, քաշում է դեպի իրեն ու նրա բերանը ծածկում համբույրներով: Էբինը սկզբում լուռ հանձնվում է, ապա գրկելով, պատասխանում է Աբբիի համբույրներին: Հետո իսկույն հիշելով իր ատելությունը նրա նրկատմամբ, հրում է կնոջը ու ետ քաշվում: Աբբին ու... Էբինը երկու անասունների պես հնալով ու դողալով նայում են իրար: ԱԲԲԻ (ցավատանջ ձայնով).— Էբի՛ն... Էբի՛ն... Իզուր ես այդպիսի բան անում... Ինձ հետ դու քեզ երջանիկ կզգաս...

ԷԲԻՆ (գրգռված).— Ես չեմ ուզում քեզ հետ երջանիկ լինել:

ԱԲԲԻ (հուսահատ).— Ուզում ես, Էբի՛ն, ուզում ես... Ինչո՞ւ ես ստում...

ԷԲԻՆ (չարակամ).— Ասացի՛ չեմ ուզում: Ես զգվում եմ քեզանից:

ԱԲԲԻ (գրգռված ու անվստահ).— Դե լա՛վ... ես համբուրեցի քեզ:

Դու էլ՝ ինձ... Իսկ քո շուրթերը վառվում էին: Մի՛ ստիր: Եթե ինձանից զգվում ես, ինչո՞ւ համբուրեցիր... իսկ շուրթերդ... ինչո՞ւ էին վառվում...

ԷԲԻՆ (բերանը մաքրելով).— Քո շուրթերը ոնց որ թույն լինեին: (Հետո կշտամբանքով): Կարծեցի ուրիշի էի համբուրում, դրա համար...

ԱԲԲԻ (կատաղորեն).— Մի՛նիհ՛ն...

ԷԲԻՆ.— Գուցե:

ԱԲԲԻ (ցավատանջ).— Գնացի՞ր նրա մոտ... Այո՞... զնացի՞ր... իսկ ես կարծում էի չես գնա: Դրա համա՞ր քիչ առաջ ինձ դեմ հրեցիր:

ԷՔԻՆ (արհամարհանքով).— Բա էլ ինչի՞ համար:

ԱԲԲԻ (լրբանալով).— Ուրեմն դու շուն ես, Էքի՛ն Քեքըթ...

ԷՔԻՆ.— Չհամարձակվես ինձ հետ այդպես խոսել:

ԱԲԲԻ (զրնգուն ծիծաղելով).— Ե՛ս... ես չե՛մ կարող ծիծաղել: Դու
ևլ կարծեցիր սիրահարվեցի՞ քեզ պես թուլամորթ լակոտին...
Մտքովդ չափցնի... Ես պարզապես քեզ ուզեցի՝ իմ նպատակ-
ները իրականացնելու համար: Ու ես կհասնեմ դրան, որով-
հետև քեզնից ուժեղ եմ...

ԷՔԻՆ (ոխակալությամբ).— Գիտեի... ինձ հետ պանկելով ու ա-
մեն ինչ կուլ տալով, դու կհասնեիր քո նպատակների մի մա-
սին...

ԱԲԲԻ (կշտամբանքով).— Այո, ինչ կա որ:

ԷՔԻՆ (կատաղած).— Դո՛ւրս կորիր սենյակիցս...

ԱԲԲԻ.— Սա իմ սենյակն է: Իսկ դու այս ագարակում պարզապես
մշակ ես:

ԷՔԻՆ.— Դո՛ւրս կորիր, քանի դեռ չեմ սպանել:

ԱԲԲԻ (հանդարտ, համոզող ձայնով).— Ես քեզանից չեմ վախե-
նում: Ախր դու ուզում ես ինձ, չէ՞: Այո՞... ուզում ես... Դու
հորդ հարազատ որդին ես: Իսկ Քեքըթի տղան չի սպանի այն,
ինչ ուզում է... Մի աչքերիդ նայիր... տես ոնց են շողում ու
ինձ ուզում... Իսկ շուրթերդ... վառվում են ու դողում ինձ համ-
բուրելու տենչանքից... ատամներդ... ատամներդ ուզում են
կծել...

**(Էքինը ահավոր տենչանքով զննում է նրան: Աբբին խելա-
ցնոր ու հաղթական ծիծաղում է):** Ես... ու... այս ամբողջ ագա-
րակատունը... իմը կդարձնեմ: Միայն մի սենյակ է մնացել...
որ իմը չէ... բայց այդ սենյակն էլ իմը կլինի... այս երեկո...
Հիմա կգնամ ու կվառեմ այդ սենյակի լույսերը... **(Ծաղրելով
գլուխ է տալիս):** Միտք Քեքըթ, չէի՞ր ուզի ինձ... փաղաքշել
այդ գեղեցիկ հյուրասենյակում...

ԷՔԻՆ (ապշած նայում է նրան).— Չհամարձակվես... Մորս մեռ-
նելուց հետո այդ սենյակի դուռը դեռ ոչ մեկը չի բացել: Դու
չհամարձակվես... **(Բայց կնոջ աչքերը այնպիսի փայլով են
սևեռվում նրա վրա, ասես, Էքինի կամքը սպանվում է նրա
նոսրերի առաջ: Էքինը հարբածի պես անօգնական երերում է
կանգնած տեղում):**

ԱԲԲԻ (բռնում է նրա հալացքը ու ողջ կամքը դնում բառի մեջ:

Սենյակից դուրս գալով).— Ես քեզ սպասում եմ այդ սենյակում, Էբի՛ն:

ԼԲԻՆ (մի պահ նայում է նրա ետևից ու ակամա քայլում է մինչև դուռը: Քիչ անց հյուրասենյակի պատուհանը լուսավորվում է: Շշնջում է).— Հյուրասենյակո՛ւմ: (Սա ինչ-որ վերհուշ է արթնացնում նրա մեջ: Նա ետ է գալիս, հագնում է սպիտակ վերնաշապիկը, բաճկոնը, ակամա կիսակապում է փողկապը, վերցնում է գլխարկը: Բոբիկ կանգնած, մոլոր նայում է շուրջը ու զարմացած քրթմնջում): Մա՛մ... մա՛մ... որտե՞ղ ես... (Հետո դանդաղ մոտենում է խորքի դռանը):

ՊԱՏԿԵՐ ԵՐՐՈՐԴ

Մի քանի րոպե անց: Երևում է հյուրասենյակի ներսը: Մռայլ, գերեզմանի պես լուռ սենյակը, որտեղ կարծես ժամանակին ողջ ողջ թաղվել է սենյակի տիրուհին: Աբբին նստել է ձիու մազից գործած բազմոցին: Նա վառել է բոլոր մոմերը և սենյակի բոլոր նրեշավոր անկյունները երևում են: Աբբին հիմա ուրիշ տրամադրությամբ է համակված: Դարձել է երկյուղած ու զգույշ, պատրաստ իսկույն փախչելու:

Դուռը բացվում է, և Էբինը ներս է մտնում: Նրա դեմքին ոգևորունչ հուզմունք է նկատվում: Կանգնած նայում է Աբբիին: Էբինը բոբիկ է, ձեռքերը թուլացած կախվել են կողքից: Ձեռքին գլխարկ կա:

ԼԲԻՆ (լռությունից հետո, ջղալին քաղաքավարությամբ).— Չէի՛ր բարեհաճի նստել:

ԷԲԻՆ (ինքնամոռացության մեջ).— Ըհը: (Մեքենաբար գլխարկը զգուշորեն դնում է հատակին՝ դռան մոտ ու նստում նրա կողքին՝ բազմոցի եզրին: Դադար: Երկուսն էլ տազնապած նայում են ուղիղ առաջ):

ԱԲԲԻ.— Երբ մտա այստեղ, մթան մեջ ինչ-որ բան երևաց:

ԷԲԻՆ (ակամա).— Մայրիկն է:

ԱԲԲԻ.— Ու կարծես, հիմա էլ... դեռ ինչ-որ մեկը...

ԷԲԻՆ.— Մայրիկն է:

ԱԲԲԻ.— Սկզբում վախեցա: Ուզեցի գոռալ ու փախչել: Իսկ հի-

մա, երբ եկար, ասես, հանգստացա: Այս տան պատերը հիմա մտերիմի պես են... **(Մեղմորեն):** Շնորհակալություն:

ԷԲԻՆ.— Մայրիկը միշտ էլ սիրում էր ինձ:

ԱԲԲԻ.— Նա գիտի, որ ես նույնպես սիրում եմ քեզ: Գուցե դրա համար է բարի իմ նկատմամբ:

ԷԲԻՆ (անկեղծորեն).— Չգիտեմ: Ինձ թվում է, նա քեզ ատում է:

ԱԲԲԻ (վճռականորեն).— Ո՛չ: Ես զգում եմ, որ նա ինձ չի ատում:

ԷԲԻՆ.— Ատում է, որովհետև տիրացար նրա ազարակին... տանը... հյուրասենյակին, որտեղ մայրիկը մահացավ... **(Հանկարծ կանգնում և ցրված նայում է ուղիղ առաջ):**

ԱԲԲԻ.— Քեզ ի՞նչ եղավ, Էբի՛ն:

ԷԲԻՆ (շքնջալով).— Կարծես... մայրիկը չի ուզում, որ քեզ հիշեցնեն...

ԱԲԲԻ (հուզված).— Էբի՛ն, մայրդ ճանաչեց ինձ: Նա բարի է իմ նկատմամբ: Հիմա այլևս ինձ չի տանջում այն միտքը, որ մենք անձանոթ ենք եղել:

ԷԲԻՆ.— Մայրիկն ատում է հորս:

ԱԲԲԻ.— Այո... մենք բոլորս ենք նրան ատում:

ԷԲԻՆ.— Ըհր: **(Հուզված):** Աստված վկա, ես էլ եմ ատում:

ԱԲԲԻ (Էբի՛նի ձեռքը շոյելով).— Դե լավ, նրա պատճառով մի բարկացիր: Մտածիր մորդ մասին, որը բարի է մեր նկատմամբ: Էբի՛ն, որևէ բան պատմիր նրա մասին:

ԷԲԻՆ.— Ինչ ասեմ: Նա բարի էր: Մայրիկը լավն էր:

ԱԲԲԻ (զրկում է նրա պարանոցը: Չի թվում, թե Էբի՛նը հուզվում է նրա այդ գգվանքից).— Ես նույնպես բարի ու ազնիվ կլինեմ քեզ հետ, Էբի՛ն:

ԷԲԻՆ.— Մայրիկը երբեմն երգում էր ինձ համար:

ԱԲԲԻ.— Ես էլ կերգեմ...

ԷԲԻՆ.— Սա նրա սենյակն էր... նրա ազարակը...

ԱԲԲԻ.— Սա իմ սենյակն է, իմ ազարակը...

ԷԲԻՆ.— Նա ամուսնացավ մորս հետ, որպեսզի տիրանար այս բոլորին: Մայրիկը թույլ էր ու բարի: Նա չկարողացավ մայրիկին հասկանալ:

ԱԲԲԻ.— Ինձ էլ չի կարողանում հասկանալ:

ԷԲԻՆ.— Իր դաժանությամբ նա սպանեց մորս:

ԱԲԲԻ.— Ինձ նույնպես ուզում է դաժանությամբ սպանել:

ԼԲԻՆ.— Մայրս մեռավ: (Դադար): Երբեմն մայրիկը երգում էր ինձ համար: (Փղձկալով հեկեկում է):

ԱԲԲԻ (մոլեգին կրքով գրկում է նրան).— Ես էլ կերգեմ... ես էլ կմեռնեմ քեզ համար... (Հակառակ էբիճի՝ Աբբիի նկատմամբ ունեցած զայված ցանկության, այդ կնոջ վարմունքի ու ձայնի մեջ մայրական անկեղծ սեր կա՝ մայրական գգվանքի ու կրքի չափազանց անկեղծ խառնուրդ): Լաց մի՛ լինիր, էբի՛ն... Ես կփոխարինեմ մորդ... ես կլինեմ այն, ինչ նա է եղել... Թող համբուրեմ քեզ, էբի՛ն... (Գլուխը թեքում է իր կողմը, որպեսզի համբուրի: Էբինը շինծու շփոթմունքով դիմադրում է: Աբբին՝ քնքշանքով): Մի վախեցիր... Ես մոր պես մաքուր կհամբուրեմ քեզ, իսկ դու կարող ես որդուս նման համբուրել ու բարի գիշեր մաղթել... մայրիկին... Համբուրիր ինձ, զավակըս... (Նրանք զայված կրքով են համբուրվում: Հետո հանկարծահաս կիրքը պարուրում է կնոջը: Աբբին տենչանքով համբուրում ու համբուրում է նրան, իսկ էբինը կնոջը սեղմում է իրեն ու նույն կերպ պատասխանում: Հանկարծ, ինչպես նախորդ պատկերի ժամանակ ննջասենյակում, էբինը հրում է նրան ու ետ ընկրկում: Նա ամբողջ մարմնով դողում է: Աբբին կաթոգին սիրով ձեռքերը մեկնում է նրան): Էբի՛ն... մի գնա... Չե՛ս զգում, որ մոր պես սիրելը բավական չէ: Չե՛ս հասկանում, որ իմ սերը հազար անգամ ավելին է, քան մայրական սերը: Այնքան շատ, որ մենք կարող ենք երջանիկ լինել:

ԷԲԻՆ (սենյակում ինչ-որ մեկի ներկայությունն զգալով).— Մա՛մ ... մա՛մ... Ի՞նչ ես ուզում... Ի՞նչ ես ասում...

ԱԲԲԻ.— Մայրդ ասում է, սիրիր նրան: Էբի՛ն, մայրդ գիտի, որ ես սիրում եմ քեզ ու բարի կլինեմ քո նկատմամբ: Չե՛ս հասկանում, նա քեզ ասում է՝ սիրիր նրան...

ԷԲԻՆ.— Ըհր: Չգում եմ: Գուցե այդպես է ասում, բայց... չեմ հասկանում, ինչպես կարող է նա այդ բանը ցանկանալ, երբ նրա տեղը գրավեցիր այստեղ, նրա տանը... նրա հյուրասենյակում, որտեղ մայրիկն էր ապրում:

ԱԲԲԻ (կատաղած).— Նա գիտի, որ ես սիրում եմ քեզ:

ԷԲԻՆ (դեմքը հանկարծ պայծառանում է՝ հաղթական ժպիտով).— Հասկացա... Հասկացա, ինչու է մայրիկը քեզ սիրում: Մայրի-

կը վրեժ է լուծում նրանից: Հիմա մայրիկը կարող է հանգիստ քնել իր գերեզմանում...

ԱԲԲԻ (լրբացած).— Աստծո վրիժառույթունը բոլորիս վրա է: Մենք բոլորս վրեժ ենք լուծում իրարից: Ինչո՞ւ մեղադրել ուրիշին: Էբի՛ն, ես սիրում եմ քեզ: Աստված է տեսնում, որ սիրում եմ: (**Ձեռքերը պարզում է՝ Էբինին գրկելու**):

ԷԲԻՆ (բազմոցի կողքին իսկույն ծնկի գալով, մոլեգիճ կրքով սեղմում է նրան իր բազուկների մեջ՝ դրսևորելով իր ամբողջ զսպված կիրքը).— Աբբի՛... ես էլ քեզ եմ սիրում... Հիմա արդեն կարող եմ այդ բանը ասել... Ես մեռնում եմ քո սիրուց: Ես սիրել եմ քեզ հենց այն օրվանից, երբ առաջին անգամ մեր տուն եկար... Ես սիրում եմ քեզ... (**Կրքից վառվող շուրթերով ամուր համբուրվում են**):

ՊԱՏԿԵՐ ՉՈՐՐՈՐԴ

Ագարակատան բակը: Լույսը նոր է բացվել: Էբինը դուրս է գալիս ագարակատան առմուտք, քայլում է դեպի ցանկապատը: Հագին ագարակագործի քաթանե շորերն են: Դարձել է վճռական: Դեմքին գոհունակություն է երևում: Երբ մոտենում է ցանկապատի դռանը, լսվում է հյուրասենյակի բացվող պատուհանների աղմուկը: Վարագույրները կողմ են քաշվում, և Աբբին գլուխը դուրս է հանում: Նրա մազերը թափված են կիսամերկ ուսերին, դեմքը պաշտառ է, հրճվալի: Աբբին Էբինին նայում է գորովալից, նվաղուն աչքերով: Կրքոտ ձայնով կանչում է նրան:

ԱԲԲԻ.— Էբի՛ն... (**Երբ Էբինը շրջվում է՝ խանդադատանքով**): Մի համբույր էլ՝ գնալուցդ առաջ: Ախր ամբողջ օրը ես մեռակ եմ մնալու... առանց քեզ... Ես կտխրեմ:

ԷԲԻՆ.— Ծիշտն ասած, ես էլ ինձ մեռակ ու տխուր կզգամ: (**Մոտենում է Աբբիին: Վերջինս գլուխը պատուհանից կախում է, և Էբինը համբուրում է նրան**): Դե լավ, հերիք է: Համբույրներդ խնայիր, թե չէ ոչ մի հատ չես ունենա մյուս անգամվա համար:

ԱԲԲԻ.— Քեզ համար միլիոն հատ էլ ունեմ: (**Փոքր-ինչ տազնապաճ**): Դու, իսկապես, սիրո՞ւմ ես ինձ, Էբի՛ն:

- ԼԲԻՆ (վերամբարձ տոնով).— Ավետարանը վկա, իմ տեսած աղջիկներից բոլորից շատ դու ես ինձ դուր գալիս:
- ԱԲԲԻ.— Դուր գալը դեռ սիրել չի:
- ԷԲԻՆ.— Դե լավ, ես սիրում եմ քեզ: Հիմա գո՞հ ես:
- ԱԲԲԻ.— Ըհը: (**Գորովանքով ժպտում է**):
- ԼԲԻՆ.— Գնամ գոմ: Ծեր ապուշը հանկարծ կկասկածի, կգա այստեղ:
- ԱԲԲԻ (**հնքնավատան ծիծաղելով**).— Թող գա: Ես երբ ուզեմ, կարող եմ նրա քիթը բռնած ման տալ: Էբի՛ն, կարելի՞ է այս սենյակի վարագույրները բացել: Թող օդ ու արև լցվի: Սա կարծես գերեզմանոց լինի: Հիմա արդեն իմ սենյակն է, չէ՞, Էբի՛ն:
- ԼԲԻՆ (**խոժոռվելով**).— Ըհը:
- ԱԲԲԻ.— Այսինքն՝ մեր սենյակը:
- ԷԲԻՆ.— Ըհը:
- ԱԲԲԻ.— Երեկ գիշեր մերը դարձրինք: Մենք սիրով լցրինք գերեզմանի պես լուռ այս սենյակը: (**Լռությամբ**):
- ԷԲԻՆ (**տարօրինակ ձայնով**).— Մայրիկը վերադարձավ իր գերեզմանը: Հիմա իր համար հանգիստ կքնի:
- ԱԲԲԻ.— Թող Աստված ողորմի նրա հոգուն: (**Քնքուշ կշտամբանքով**): Այս առավոտ դու տխուր բաներ չպիտի խոսես, Էբի՛ն:
- ԷԲԻՆ.— Ես էլ չեմ հասկանում, ինչպես են այդ տխուր մտքերը գլուխս մտնում:
- ԱԲԲԻ.— Իսկ դու թույլ մի տուր, որ այդ մտքերը պաշարեն քեզ: (**Էբինը չի պատասխանում: Աբբին հորանջում է**): Ես գնամ մի քիչ քնեմ: Ծերուկին կասեմ, որ լավ չեմ զգում: Թող մեռակ նախաճաշի:
- ԼԲԻՆ.— Ահա... Գոմից է գալիս: Լավ կլինի քեզ մի քիչ կարգի բերես ու վերև բարձրանաս:
- ԱԲԲԻ.— Լավ: Ցտեսություն: Ինձ չմոռանաս: (**Հրաժեշտի համբույր է տալիս Էբինին: Էբինը ժպտում է ու հպարտորեն ուսերն ուղղելով, համարձակորեն սպասում է հորը: Չախից երևում է Քեբըթը՝ դանդաղ քայլելով ու կլանված նայելով երկրնքին**):
- ԼԲԻՆ (**զվարթորեն**).— Բարի լույս, պա՛... Ա՛ստղ ես փնտրում արշալույսի մեջ:

ՔԵԲԸԹ.— Սիրուն է, չէ՞...

ԷԲԻՆ (շուրջը նայելով).— Շատ սիրուն ազարակ է:

ՔԵԲԸԹ.— Ասում եմ, երկինքը... սիրուն է, չէ՞:

ԷԲԻՆ (ժպտալով).— Ի՞նչ իմանաս: Բա դու ի՞նչ գիտես՝ սիրո՞ւն է, թե՞ սիրուն չի: Չէ՞ որ դու կարճատես ես: **(Այս խոսքերը բարձրացնում են նրա տրամադրությունը: Էբինը ուժեղ խղ- փում է ազդերից ու ծիծաղում):** Հա՛-հա՛-հա՛...

ՔԵԲԸԹ (խոժոռվելով).— Դու ոնց որ քեզ լավ ես զգում. հա՞...
Որտեղից ես լիկյոր թոցրել:

ԷԲԻՆ (բարյացակամ).— Իմ ուրախությունը լիկյորից չի, կյանքից է: **(Թախծոտ):** Արի հաշտվենք: Մենք քվիտ ենք:

ՔԵԲԸԹ (կասկածանքով).— Բայց... ի՞նչ է պատահել...

ԷԲԻՆ.— Դե լավ, պետք չի: Երևի այսպես ավելի լավ է: **(Կար- անուկ դադար):** Ինչ է պատահե՞լ... **(Տարօրինակ ձայնով):**
Չտեսա՞ր: Նա այստեղ էր ու վերադարձավ իր գերեզմանը:

ՔԵԲԸԹ (ցրված).— Ո՞վ...

ԷԲԻՆ.— Մայրիկը: Հիմա նա կարող է հանգստի ու ապահով քը- ցել: Մայրիկը քվիտ եղավ քեզ հետ:

ՔԵԲԸԹ (շփոթված).— Իսկ ես հանգստացա: Լավ քնեցի կովերի հետ: Նրանք գիտեն ոնց պետք է քնել: Ինձ էլ սովորեցրին:

ԷԲԻՆ (նորից զվարթորեն).— Ապրեն կովերը... Դե լավ, իսկ հի- մա գնա աշխատիր, ուշ է...

ՔԵԲԸԹ (խիստ).— Տո հո՛րթ, դու ո՞նց ես ինձ հրամայում...

ԷԲԻՆ (քրքջալով).— Այո, ես հրամայում եմ քեզ: Հա՛-հա՛-հա՛... Տեսնո՞ւմ ես, ոնց ես զազազում, երբ քեզ են հրամայում: Հա՛- հա՛-հա՛... Ես այս հավաքնի առաջին աքլորն եմ: Հա՛-հա՛- հա՛... **(Ծիծաղելով գնում է գոմ):**

ՔԵԲԸԹ (նայում է Էբինի ետևից: Արհամարհելի խղճահարու- թյամբ).— Խելքը թոցրել է ապուշը: Մոր նման ապուշի մեկն է: Ոնց որ նրա քթից թռած լինի: Սրա վրա հույս դնե՞լ կլի- նի... **(Թքում է զզվանքով):** Ուրփից-գլուխ ապուշ է: **(Հետո չոր ու սառը ձայնով):** Գնամ հաց ուտեմ: Սոված եմ: **(Մոտե- նում է մուտքի դռանը):**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՐՐՈՐԴ

ՊԱՏԿԵՐ ԱՌԱՋԻՆ

Մի տարի անց: Գարնանային երեկո: Երևում են ագարակատան խոհանոցն ու վերնահարկի երկու ննջասենյակները: Ննջասենյակներում երկար մոմեր են վառված: Էբինը նստել է իր սենյակում՝ մահճակալին: Կզակը հենել է բռունցքներից, դեմքը տանջահար է: Ծիզեր է գործադրում՝ հասկանալու իր մեջ խառնակվող զգացումները: Ներքևում՝ խոհանոցից, ծիծաղի, երաժշտության, հարբած մարդկանց քրքիջ է լսվում: Այդ աղմուկն ավելի է սաստկացնում նրա ձանձրույթն ու տազնապը: Էբինը խոժոռված նայում է հատակին:

Մյուս ննջասենյակում՝ երկու մահճակալների կողքին, մանկան օրորոցն է:

Խոհանոցում ամեն ինչ տոնական տեսք ունի: Վառարանը տեղափոխել են, որպեսզի պարելու համար ազատ տեղ լինի: Երկար աթոռները շարել են պատի տակ: Սրանց վրա, իրար սեղմրված, նստել են ագարակատերերը, նրանց կանաչ, ջահել տղաներն ու աղջիկները հարևան ագարակներից: Նրանք աղմկում են ու բարձր քրքջում: Ակներև է նրանց միտումնավոր կատակը: Անվերջ հրմշտում են իրար, աչքով-ունքով անում Քեբրթի կողմը, որը, բաժակ բաժակի ետևից պարպելով, ավելի զվարթ ու կատակասեր է դարձել: Նա կանգնել է խորքի դռան մոտ և բոլորին հորդորում է խնել վիսկու փոքրիկ տակառիկից: Դիմացի ձախ անկյունում՝ ամուսնու աչքից հեռու, Աբբին է նստել ճոճաթոռին: Ուսերին շալ է զցել: Դեմքը գունատ է ու տառապալի: Աչքերը տենդով սևեռել է խորքի բաց դռանը: Անհամբերությամբ ինչ-որ մեկին է սպասում:

Երաժիշտը լարում է ջութակը: Նա նստել է սենյակի հեռավոր աջ անկյունում: Նհիար, բարձրահասակ տղա է՝ ձիանման, բութ դեմքով: Ծարունակ աչքով է անում, ժպտում է չարանճի ու խորամանկ:

ԱԲԲԻ (կտրուկ թեքվելով դեպի աջ կողմում նստած ջահել աղջիկը).— Իսկ ո՞ր է Էբինը:

ԱՂՋԻԿԸ.— Չգիտեմ, միսի՛ս Քեբըթ: Էբիճին վաղուց չեմ տեսել:
(Միտումնավոր): Այն օրվանից, ինչ դուք եկել եք, Էբիճը ոնց
որ թե միշտ տանն է լինում:

ԱԲԲԻ (մտախոհ).— Ես նրա խորթ մայրն եմ:

ԱՂՋԻԿԸ.— Հա՛, լսել եմ: (Թեքվում է կողքին նստած մոր կողմը
ու ինչ-որ բան է շնչում նրա ականջին: Աբբին դիմում է մի-
ջին տարիքի մի գեր տղամարդու, որի կարմրած դեմքն ու
նպնպացող աչքերը մատնում են, որ նա ահագին լիկյոր է
հաջողացրել):

ԱԲԲԻ.— Դո՛ւք էլ չեք տեսել Էբիճին:

ՏՂԱՄԱՐԴ.— Չէ՛: (Հետո աչքով է անում, ավելացնելով): Եթե
դուք չեք իմանում նրա տեղը, էլ ո՛վ կարող է իմանալ, միսի՛ս
Քեբըթ:

ԱԲԲԻ.— Չէ՛ որ նա գյուղի ամենալավ պարողն է: Ինչո՞ւ չի գա-
լիս պարի:

ՏՂԱՄԱՐԴ (աչքով անելով).— Երևի երեխային է քնեցնում: Տղա
է, չէ՞: Քանի՞ տարեկան է:

ԱԲԲԻ (անտարբեր գլխով է անում).— Ըհը: Երկու շաբաթական
կլինի: Ծատ սիրուն երեխա է: Որ տեսնես... ոնց որ պատկեր
լինի:

ՏՂԱՄԱՐԴ.— Բոլոր երեխեքն էլ իրենց մայրերի համար սիրուն
են: (Հետո արմունկով հրում է նրան՝ շնջալով և աչքով անե-
լով): Լսիր, Աբբի՛, հե՛նց որ Էբիճից ձանձրանաս, ինձ հիշիր:
Չմոռանաս, հա՛... (Նորից բութ դեմքով նայում է ու զգվելիո-
րեն խնչում): Դե լավ, մի բաժակ էլ զցեմ: (Մոտենում է Քե-
բըթին: Վերջինս բարձրաձայն կովի գին է սակարկում մի ծեր-
ագարակապանի հետ: Մյուսները խմում են):

ԱԲԲԻ (այս անգամ, ասես. ինքն իրեն հարց տալով).— Հետա-
քըրքիր է, ո՞ւր է Էբիճը: (Չնայած նա խոսում է շուկով, մի-
քանիսը լսում են ու կրկնում ուրախ քրքիջով: Նրանք հրմըշ-
տում են իրար ու կրկնում այնքան, մինչև այդ ակնարկը հաս-
նում է ջութակահարին: Նա կկոցած աչքերով նայում է Աբ-
բիին):

ՋՈՒԹԱԿԱՀԱՐ (բարձրաձայն).— Աբբի՛, մաղարիչ արա ասեմ,
թե ինչ է անում Էբիճը: Հիմա նա եկեղեցում գոհ-գոհ աղո-
թում է Աստծուն: (Բոլորը քրքջում են):

ՄԻ ՏՂԱՄԱՐԻ.— Ինչի՞ համար, է՛... Կարգին խոսի՛ր, մարդ բան հասկանա:

ՋՈՒԹԱԿԱՀԱՐ.— Նրա համար, որ ըր՛... Էբիճին... ըր՛... եղբայր է ծնվել... (Հոհոց: Հյուրերը մերթ Աբբիին են նայում, մերթ՝ Քերթթին: Աբբին ցրված նայում է դռանը: Քերթթը թեև չի լսում հյուրերի ակնարկը, բայց կասկածելով ու բարկանալով այդ անզուսպ քրքիջից, բայլ է անում առաջ՝ աչքերը ոլորելով շուրջը: Իսկույն լռություն է տիրում):

ՔԵՐԹԹ.— Ի՞նչ եք այծերի պես մկմկում: Ինչո՞ւ չեք պարում, գրողը ձեզ տանի... Ես ձեզ կանչել եմ, որ ուտեք, խմեք, պարեք, ուրախանաք... Իսկ դուք կշկշում եք թրջված հավերի պես: Ախր ինչքան լիկյոր ունեի լակեցիք ու խոզերի պես մշմշալով կերաք: Դե հիմա պարեք... գրողը ձեզ տանի: (Չարական քրթմնջոց է տարածվում, բայց ոչ մեկը նրա երկյուղից չի կարողանում որևէ բան ասել):

ՋՈՒԹԱԿԱՀԱՐ (խորամանկորեն).— Ախր մենք Էբիճին ենք սպասում: (Չսպված քրքիջ):

ՔԵՐԹԹ (կատաղորեն).— Թող գրողի ծոցը գնա Էբիճը: Էլ Էբիճ չկա... Ինձ ուրիշ որդի է ծնվել: Ինձ որդի է ծնվել, որդի՛... (Թախծոտ): Բայց ոչ մեկդ չհամարձակվի Էբիճին ձեռ առնել: Չնայած նա ապուշի մեկն է, բայց դե... իմ միս-արյունից է: Էբիճն էլ ինձ պես առավուտից իրիկուն կաշի է տալիս այս ազարակի համար: Նա կարող է բոլորիդ էլ գրողի ծոցը ուղարկել, եթե ուզենա:

ՋՈՒԹԱԿԱՀԱՐ.— Էբիճը գիշերն էլ լավ է աշխատում... (Քրքիջներ):

ՔԵՐԹԹ.— Ծիծաղեք, ծիծաղեք, հիմա՛ր ապուշներ: Ջութակահա՛ր, դու ճիշտ ես ասում: Այո, նա էլ ինձ պես կարող է գիշերցերեկ աշխատել՝ եթե պետք ինճի:

ԹԵՐ ԱԳԱՐԱԿԱՏԵՐ (տակառիկի ետևում հարբած օրորվելով: Շինծու միամտությամբ).— Դե, Էֆրաի՛մ, դու մի նեղացիր... Տոթանասունվեց տարեկանում... տղա ունենալը կատակ բան չի: Այ թե պինդ տղամարդ ես, հա՛... Ես վաթսունութ տարեկան եմ, բայց չեմ... կարող... (Քրքջոց: Այդ ժխորին միանում է նաև Քերթթը):

ՔԵՐԹԹ (թփթփացնելով ազարակառիոջ մեջքին).— Բայց ես չլի սպասում, որ քեզ պես տղան այդպես կթուլանար:

ԾԵՐ ԱԳԱՐԱԿԱՏԵՐ.— Իսկ ես չէի կարծում, որ դու այդքան ուժեղ կլինեիր: **(Նորից պոռթկացող ծիծաղ):**

ՔԵԲԸԹ (հանկարծ խոժոռվում է).— Ես շատ ուժեղ եմ... շա՛տ... Միայն թե մարդիկ չեն կարողանում դա հասկանալ: **(Թեքվելով ջութակահարի կողմը):** Գրո՛ղը քեզ տանի, ջութակդ ձեռքըդ առ: Ի՛նչ ես արձանի պես տնկվել... Չե՞ որ այսօր տոն է, տոն... Մի բան նվագիր՝ պարենք: Դե՛, արմուկդ, յուղի՛ր ու սկսի՛ր...

ՋՈՒԹԱԿԱՀԱՐ (ազարակատիրոջ ձեռքից վերցնելով գավաթը կոնձում է).— Դե լա՛վ, գնացի՛նք... (Նա սկսում է նվագել «Լճափի Լեդին»): Չորս ջանել տղաներ ու աղջիկներ, երկու շարք կազմած, սկսում են պարել: Նվագելիս, ջութակահարը ռիթմի տակ զիլ ձայնով խոսք է գցում պարողներին: Առանձնապես ուրախ է Քեբըթը: Միայն Աբբին, մյուսներից առանձնացած, շարունակում է նայել դռանը: Կարծես մեծակ լինի բոլորովին լուռ սենյակում):

ՋՈՒԹԱԿԱՀԱՐ.— Այդպես, Ջի՛մ... աղջկադ աջ կողմը պտտացրու: Լավ սեղմիր քեզ, Ջի՛մ, նրա մայրը չի նկատում... **(Ուրախ քրքիջ):** Ջուլգերը փոխեք... Այդպես հարմար է, չե՞, Իզի՛: Հիմա արդեն Ռուբին քո սոջևում է: Հապա Իզիին նայե՛ք... ո՛նց է կարմրել... Դե լավ, ինչպես խելոք մարդիկ են ասում, կյանքը կարճ է՝ սիրո պես: **(Քրքիջ):**

ՔԵԲԸԹ (խանդավառ ցատկելով).— Պարե՛ք, տղե՛րք... դե՛, ձեզ տեսնեմ, աղջիկներ...

ՋՈՒԹԱԿԱՀԱՐ (աչքով անելով մյուսներին).— Էֆրահի՛մ... կյանքումս չէի տեսել, որ մարդ յոթանասունվեց տարեկանում այդպես ճարպիկ լինի: Եթե մի քիչ տեսողությունդ էլ լավ լիներ... **(Ջսպված քրքիջ: Նա չի թողնում, որ Քեբըթը պատասխանի: Ջիլ ձայնով):** Դե գույգերը փոխեք... Սառա՛, դու այնպես ես նայում, կարծես, լքված հարս լինես: Հե՛յ... լսել եմ, ասում են քանի դեռ կյանք կա՝ այնքան էլ հույս... Ամենակարո՛ղ Տեր... տեսեք այդ Ջոնի Քուկն ինչքան բարձր է ցատկում: Ախր նրա մեջ ուժ չի մնա, որ վաղը արտ հնձի: **(Քրքիջ):**

ՔԵԲԸԹ.— Նվագի՛ր, նվագի՛ր, ջութակահա՛ր... **(Հանկարծ անկարող լինելով իրեն զսպել, ոստնում է պարողների մեջ, խառնում է նրանց շարքերը ու կատաղորեն թափահարում բազուկները):** Դուք ի՛նչ պարողներ եք... դուք թրջված հավեր եք...

Մի կողմ քաշվեք... Հիմա նայեք, թե ոնց են պարում: (Նա կատաղորեն հրում է բոլորին: Պարողները խմբվում են սենյակի անկյունում ու խեթ-խեթ նայում նրան):

ԶՈՒԹԱԿԱՀԱՐ (ծաղրելով).— Դե՛, Էֆրահի՛մ, սկսեցինք... Հո՛ւյ... (Նա սկսում է «Տերտերը Վալզ գնաց» երգը՝ աստիճանաբար արագացնելով ռիթմը, իսկ վերջում՝ խենթացնող աշխուժությամբ):

ՔԵԲԸԹ (նախ պարում է մեծ վարպետությամբ ու զարհուրելի թափով, ապա սկսում է հանպատրաստից շարժումներ անել՝ ցատկելով ու կրունկները իրար զարկելով: Վերջապես հընդկացիների պարի շարժումներ է անում, հնարավորին չափ բարձր ցատկելով: Նա լարի վրա պարող կապիկի է նմանվում: Պարի ընթացքում աղաղակում ու ծաղրում է բոլորին).— Հո՛ւյ... տեսեք թե ոնց են պարում: Հո՛ւյ... տեսեք... Ոչ ավել, ոչ պակաս՝ յոթանասունվեց տարեկան մարդ եմ, բայց դեռ երկաթի պես պինդ եմ: Կշարդեմ բոլոր ջահելներիդ... Նայե՛ք է՛... Ես ձեզ հրավիրելու եմ, որ պարեք իմ հարչուրամյակին... Բայց դե... այն ժամանակ ո՛նց կգաք... չէ՞ որ բոլորդ մեռած կլինեք... Հա՛-հա՛-հա՛... Դուք հիվանդոտ սերունդ եք: Սրտներդ գազարագույն է, արյուն չկա, իսկ երակներիդ մեջ ցեխաջուր է հոսում... Ես այս զավառի առաջին տղամարդն եմ... Նայե՛ք... հո՛ւյ... Ես հնդկացի եմ... Դուք դեռ ձեր հոր ողնաշարի մեջ էիք, երբ ես Արևմուտքում հնդկացի էի սպանում ու կաշին տիկ հանում... Նրանք նետով վիրավորեցին մեջքս: Ահա, կարող եմ ցույց տալ... Ամբողջ ցեղն էր ետևիցս ընկել, բայց չկարողացան ինձ բռնել: Միայն թե նետը մեջքիս կպավ: Բայց ես վրեժս առա: Այն ընդ սկան, ատամն ընդ ատաման... Դա էր իմ ուխտը: Հո՛ւյ... Տեսեք ոնց են պարում... Ուզո՞ւմ եք, գլուխս առաստաղին հասցնեմ: Հո՛ւյ...

ԶՈՒԹԱԿԱՀԱՐ (այլևս չի նվազում: Հոգնած).— Ամենակարող Տե՛ր... Հոգնեցի: Դու սատանի ուժ ունես, Էֆրահի՛մ:

ՔԵԲԸԹ (ծաղրելով).— Էհե՛՛յ... քեզ է՛լ հաղթեցի: Դե լավ, առ մի բաժակ խմիր: Դու լավ նվագե՞սիր: (Վիսկի է լցնում իր ու ջութակահարի համար: Խմում են: Մյուսները լուռ, սառը թըշնամանքով նայում են Քեբըթին: Մեռյալ լռություն: Զութակահարը հանգստանում է: Քեբըթը կռթնում է տակառիկին, հևալով ու աչքերը ոլորելով շուրջը):

Վերևի սենյակում էրհինը ելնում է մահճակալից ու զգուշորեն գնում դեպի խորքի դուռը, իսկ քիչ անց երևում մյուս ննջասենյակում: Կամացուկ, նույնիսկ վախեցած, մոտենում է օրորոցին, կանգնում ու նայում է երեխային: Նրա դեմքը մերթ խոժոռվում, մերթ խանդաղատանքով է լցվում: Այն պահին, երբ նա մոտենում է օրորոցին, ներքևում Աբբին, կարծես, ինչ-որ բան նախազգալով, անհանգստացած ու հոգնաբեկ տեղից ելնում է ու մոտենում Քեբրթին:

ԱԲԲԻ.— Գնամ վերև՝ երեխայի մոտ:

ՔԵԲԸԹ (ակներև հոգաճությամբ).— Կարո՞ղ ես աստիճանները բարձրանալ, Աբբի՛: Օգնե՛մ քեզ...

ԱԲԲԻ.— Ոչ: Կբարձրանամ: Քիչ հետո կիջնեմ:

ՔԵԲԸԹ.— Քեզ շատ մի հոգնեցրու: Մեր տղա՛ն քո կարիքն ունի: (Սիրալիիր ժպտալով թփթփացնում է կնոջ մեջքին: Աբբին սարսուռ է Քեբրթի ձեռքի հպումից):

ԱԲԲԻ (անտարբեր).— Ինձ... ձեռք չտաս... Գնում եմ երեխայի մոտ... (Գնում է: Քեբրթը նայում է նրա ետևից: Սենյակում շշուկներ են տարածվում: Քեբրթը շրջվում է: Հյուրերը լուռ են: Քեբրթը սրբում է ճակատից ծորացող քրտինքը: Հնում է):

ՔԵԲԸԹ.— Գնամ մի քիչ մաքուր օդ շնչեմ: Գլուխս մի տեսակ... պտտվում է: Ջութակահա՛ր, նվագի՛ր... Պարե՛ք բոլորդ: Ահա, ինչքան ուզեք խմիչք կա: Ձեզ համար հանգիստ քեֆ արեք: Մի քիչ հետո կգամ: (Դուրս է գնում, դուռը ետևից շրխկացնելով):

ՋՈՒԹԱԿԱՀԱՐ (ձեռ առնելով).— Ձե, հանկարծ մեր պատճառով շուտ չգաս: (Չսպված ծիծաղ: Ջութակահարը՝ նմանակելով Աբբիին): Իսկ ո՞րտ է էրհինը: (Նորից են քրքշում):

ՄԻ ՏՂԱՄԱՐԴ.— Սը՛ս... նա երևի դռան ետևում ականջ է դրնում: Քեբրթը սովորություն ունի: (Հյուրերի ձայները դառնում են եռանդուն շշուկներ: Ասես չոր տերևները խշրտալով թափվում են քամուց: Բամբասանքը լարում է հյուրերի ուշադրությունը: Քեբրթը դուրս է գալիս առմուտքից, կանգնում է ցանկապատի դռան մոտ, կռթնում է դռանը, աչքերը ճպճապացնելով նայում է երկնքին: Աբբին զգուշորեն սենյակ է մտնում: Էրհինը նրան չի նկատում այնքան, մինչև կինը ընդհուպ մոտենում է):

ԷԲԻՆ (ցնցվելով).— Աբբի՛...

ԱԲԲԻ.— Սը՛ս... (Գրկում է Էբինին: Նրանք համբուրվում են, հետո միասին խոնարհվում են օրորոցին): Սիրուն է, չէ՛... Ոնց որ դու լինես՝ տեղը դրած...

ԷԲԻՆ (գորովանքով).— Նա՛... Ի՞նչ իմանաս...

ԱԲԲԻ.— Չէ՛, իրոք որ նման է:

ԷԲԻՆ (խոժոռվելով).— Ես չեմ սիրում, որ իմ ունեցածը ուրիշին է լինում: Ամբողջ կյանքում չեմ սիրել այդ բանը: Պետք է այս բոլորին վերջ տալ:

ԱԲԲԻ (մատը շուրթերին դնելով).— Մենք արեցինք այն ամենը, ինչ կարող էինք: Պիտի համբերենք: Գուցե մի բան լինի: (Գրկում է Էբինին): Իջնեմ ներքև: Ուշ է:

ԷԲԻՆ.— Ես էլ եմ դուրս գնում: Ջզվում եմ այդ ջութակի ձայնից ու նրանց հոհոռոցից:

ԱԲԲԻ.— Ծատ մի տանջվիր: Ես քեզ սիրում եմ, Էբի՛ն: Համբուրիր ինձ: (Էբինը համբուրում է: Նրանք մնում են իրար գրկած):

ՔԵԲԸԹ (բակում, խոժոռված).— Ինչ-որ բան հանգիստ չի տալիս ինձ: Նույնիսկ ջութակի ձայնը չի կարողանում նրա ձայնը խլացնել: Այն հետևում է ինձ ամենուրեք: Թաքնվում է տան անկյուններում, աղմկում ծփիների մեջ, թակում է տանիքը: Ամեն վայրկյան հետևում է ինձ: Ոչ տանը հանգիստ կա, ոչ մարդկանց մեջ: (Հոռոց է հանում): Գնամ կովերի հետ գրուցեմ... նրանց հետ ես ինձ ավելի լավ եմ զգում: (Հոգնաբեկ քայլում է գոմի կողմը):

ՋՈՒԹԱԿԱՀԱՐ (նվազելով).— Եկեք մի կարգին ուրախանանք: Ծեր սրիկաչին հիմարացրել են: Այ հիմա կարող ենք լավ զվարճանալ: (Սկսում է նվազել «Հնդկահավը ծղոտների մեջ»: Մի իսկական խրախճանք է սկսվում: Երիտասարդ տղաներն ու աղջիկները պարում են ինքնամոռաց):

ՊԱՏԿԵՐ ԵՐԿՐՈՐԴ

Կես ժամ հետո: Երևում է ազարակատան բակը: Էբինը ցանկապատի մոտ մելամաղձոտ ու մոլոր նայում է երկնքին: Երևում է Քեբըթը. գոմից է վերադառնում: Քայլում է հոգնաբեկ ու գրլխահակ: Նրա տրամադրությունը իսկույն փոխվում է, երբ նկատ

տում է Էբինին: Դառնում է անհանգիստ, կոպիտ, շուրթերին հաղթական ժպիտ է խաղում: Մոտենում, խփում է Էբինի մեջքին: Խոհանոցից՝ ջութակի երաժշտության, ուտքերի դոփշունի ու հարբած մարդկանց ձայներ:

ՔԵԲԸԹ.— Դու այստեղ ես, հա՞...

ԷԲԻՆ (փոքր-ինչ ցնցվելով: Ատելությունը նայում է նրան).— Հա:

ՔԵԲԸԹ (ծաղրելով՝ գնում է նրան).— Իսկ ինչո՞ւ չէիր եկել պարելու: Բոլորը քեզ էին հարցնում:

ԷԲԻՆ.— Հարցնում են, թող հարցնեն:

ՔԵԲԸԹ.— Այնքան սիրուն աղջիկներ կային ո՞ր...

ԷԲԻՆ.— Թո՛ղ կորչեն գրողի ծոցը:

ՔԵԲԸԹ.— Դու պետք է դրանցից մեկի հետ ամուսնանաս շուտով:

ԷԲԻՆ.— Ես ոչ մեկի հետ էլ չեմ ուզում ամուսնանալ:

ՔԵԲԸԹ.— Եթե ամուսնանաս գուցե մի բան ստանաս... ագարակից:

ԷԲԻՆ (արհամարհանքով).— Քեզ պես հա՞... Ես քո նմանը չեմ...

ՔԵԲԸԹ (պոռթկալով).— Սուտ ես ասում... Այդ մո՛րդ ազգականներն էին ուզում ագարակս ձեռքիցս խլել...

ԷԲԻՆ.— Իսկ մարդիկ ուրիշ բան են խոսում: (Լռությունից հետո՝ կռվարար տոնով): Ատելք... դա ինչ նշանակություն ունի, երբ ես ագարակ ունեմ:

ՔԵԲԸԹ (ծաղրելով).— Իսկ որտե՞ղ է... հը՞... որտե՞ղ...

ԷԲԻՆ (ուտքերը խփելով գետնին).— Այստեղ:

ՔԵԲԸԹ (գլուխը ետ գցելով՝ խռպոտ ծիծաղում է).— Հո՛ւ-հո՛ւ-հո՛ւ... Դո՛ւ... դո՛ւ... Դե լավ է, լավ...

ԷԲԻՆ.— Կտեսնե՛ս...

ՔԵԲԸԹ (կասկածանքով աչքերը սևեռում է նրա վրա՝ փորձելով հասկանալ տղային: Դադար: Հետո արհամարհական ինքնավստահությամբ).— Ըհը, կտեսնեմ, կտեսնեմ: Դու էլ կտեսնես: Այդ դու ես կույրը... կույր, ինչպես խլուրդը հողի տակ: (Էբինը հանկարծ քրքջում է: Լռություն: Քեբըթը երկմտանքով նայում է նրան): Լավ հնարեցիր: (Էբինը, առանց պատասխանելու, շրջվում է: Քեբըթի բարկությունն աստիճանաբար աճում է): Ամենակարող Տերը վկա, դու հիմար քուռակ ես: Քո հաստ գանգո դմբդմբում է դատարկ տակաոփիկի պես: (Թվում է, Էբինը չի լսում նրան: Քեբըթն ավելի է կատաղում): Ամենակարող Տերը վկա, եթե դու էլ ծնված չլինեիր,

գլխի կընկնեիր, որ այս ագարակից քեզ ոչ մի փուշ չի հասնում, մանավանդ հիմա, երբ ինձ տղա է ծնվել, տղա՛... Իմ մեռնելուց հետո ագարակը նրանն է լինելու: Հասկացիր՝ նրանը... եթե, իհարկե, մեռնեմ... Բայց ես դեռ հարչուր տարի տարելու եմ... ձեր բոլորի ջիգրու: Իսկ իմ որդին... որդիս այն ժամանակ քո տարիքին կլինի: **(Էբինը նորից է հեզոնրեն քրքջում, որը Քեբրթին ցասումի մեջ է գցում):** Չի հավատում: Կարծում ես խորամանկությամբ մի բան կթոցնես, հա՛... Որ այդպես է, լավ իմացիր... ագարակը նաև նրանն է... Աբբիինը: Իսկ դու չես կարող նրան խաբել: Նա լավ գիտի քո խորամանկությունները: Արդեն ասել է, որ օձի պես պրտըսվել ես շուրջը, փորձել ես պառկել հետը... որ քո կողմը գրավես... դո՛ւ... դո՛ւ... բուռակի՛ մեկը... **(Քեբրթը բարձրացնում է բռունցքները՝ սպառնալով):**

Լ.ԲԻՆ (կատաղությունից դողալով).— Սուտ ես ասում, ծե՛ր խաբեբա... Աբբին այդպիսի բան չի կարող ասել...

ՔԵԲԸԹ (հաղթականորեն, նկատելով թե ինչպես է Էբինը բարկությունից դողում).— Ասաց: Իսկ ես էլ Աբբիին հասկացրի, որ քո ուղեղը ցրիվ կտամ ծփիների թփերին... Բայց Աբբին խորհուրդ չտվեց: Ասաց՝ «Իսկ Էբինի փոխարեն քեզ ո՞վ կօգնի ագարակի գործերում»: Հետո էլ թե՛ ես ու դու կարող եմք որդի ունենալ: «Դու կարող ես այդ բանն անել»,— ասաց նա: Ես էլ խոսք տվեցի, եթե տղա ունենամ, Աբբին կստանա այն ամենը, ինչ որ ուզում է: Նա ինձ ասաց՝ «Ուզում եմ Էբինը կորչի այստեղից, որ քո մեռնելուց հետո ագարակը իմը լինի»: Բա՛... Հիմա հասկացա՞ր ագարակն ումն է: Իսկ քեզ ճամփի փոշին կհասնի: Հա՛-հա՛-հա՛... Դե հիմա ծիծաղիր...

Լ.ԲԻՆ (վշտացած ու բարկացած լսում է, հետո բեկբեկուն ծիծաղելով).— Հա՛-հա՛-հա՛... Հիմա հասկացա, հասկացա... Աբբին ուզում էր խորամանկ խաղ խաղալ գլխիս... Ես սկզբից էլ կասկածում էի: Նա ուզում էր ամեն ինչ կուլ տալ՝ ինձ էլ հետը... Ուրեմն ամեն ինչ սուտ էր... Ես կապանեմ նրան... **(Էբինը վազում է ագարակատան կողմը, բայց Քեբրթը հասցրնում է նրա ճանապարհը փակել):**

ՔԵԲԸԹ.— Չես կարող...

Լ.ԲԻՆ.— Հեռու գնա՛... **(Փորձում է կողմ հրել Քեբրթին: Նրանք փաթաթվում ու սկսում են քաշքշել իրար: Կատաղի կոիվ է**

սկսվում հոր ու որդու միջև: Ծերունին շատ ավելի ուժեղ է որդուց: Նա մի ձեռքով բռնում է էբինի կոկորդը ու սեղմում պատին: Այդ պահին առմուտքին երևում է Աբբին: Խռայուն ճիշով վազում է նրանց կողմը):

ԱԲԲԻ.— Էբի՛ն... Էֆրաի՛մ... (Ճիգով փորձում է էբինի կոկորդն ազատել Քեբբթի ձեռքից): Թո՛ղ նրան, Էֆրաի՛մ... Ախր խելդեցիր...

ՔԵԲԸԹ (Էբինին զցում է գետին: Հևալով ու խզխզալով: Աբբին ճշալով ծնկի է գալիս էբինի կողքին, փորձելով նրա գլուխը իր գոգին դնել, բայց էբինը նրան կողմ է հրում: Քեբբթը կանգնում է ու հաղթականորեն նայում նրանց).— Մի վախեցիր, Աբբի՛: Հո չէի՞ սպանելու: Դե նրա պատճառով չարժի կախվել: (Ավելի ու ավելի հաղթականորեն): Ես յոթանասունվեց տարեկան եմ, իսկ նա... երեսուն էլ չկա... Կարծում է իր հայրը թուլացել է, կարող է հախից գալ... Դրա համար էլ հատուցեց: Ախր Աստված է տեսնում, որ ինձանից դժվար է գլուխ հանել: Նա էլ... իմ որդին, էբինին կջարդի, որ հիմա հանգիստ քնած է օրորոցում: Իմ որդին ինձ նման է լինելու... Ես ինքս նրան կդաստիարակեմ: Իսկ հիմա գնամ պարեմ, երգեմ, ուրախանամ... Ինձ համար այսօր տոն է: (Մոտենում է առմուտքին, հետո շրջվում է ու ժպտալով ասում): Բայց... տես, Աբբի՛, հանկարծ այդ հիմարը չափը անցնի, ինձ կանչիր: Հավերժությունը վկա, նրան կդնեմ ծնկներիս տակ ու կխելդեմ: Հա՛-հա՛-հա՛... (Ծիծաղելով մտնում է ներս: Քիչ անց լսվում է նրա բարձրաձայն «Հոպ»-ը):

ԱԲԲԻ (քնքշանքով).— Էբի՛ն, հո չե՞ս վիրավորվել: (Փորձում է համբուրել, բայց էբինը կոպտորեն հրում է նրան ու ճիգով փորձում է նստել):

ԷԲԻՆ (հևալով).— Կորի՛ր գրողի ծոցը:

ԱԲԲԻ (լսածներից չհավատալով).— Էբի՛ն, այդ ի՞նձ ես ասում: Ախր ես Աբբին եմ, չե՞ս ճանաչում:

ԷԲԻՆ (ատելությամբ շտապումնելով).— Հիմա արդեն ճանաչում եմ: (Հանկարծ փռվում է գետնին ու հուսակտուր հեկեկում):

ԱԲԲԻ (վախեցած).— Էբի՛ն, ի՞նչ եղավ քեզ... Ինչո՞ւ ես այդպես զզվանքով նայում ինձ:

ԷԲԻՆ (հևալով ու հեկեկալով).— Ես ասում եմ քեզ... Դու պոռնիկ ես... Անիծված ու խաբեբա պոռնիկ...

ԱԲԲԻ (գարհուրանքով ետ է քաշվում).— Էբի՛ն, դու չես հասկա-
նում ինչ ես խոսում...

ԷԲԻՆ (ուռքի է կանգնում).— Դու պարզապէս կեղտոտ ստախոս
ես: Քո ամեն մի բառը սուտ է եղել... գիշեր-ցերեկ դու ինձ
խաբէլ ես այն օրից, երբ առաջին անգամ միասին եղանք:
Դու միշտ ասում էիր, թե սիրում ես ինձ:

ԱԲԲԻ (լրբացած).— Այո՛, սիրում եմ: Սիրում եմ, Էբի՛ն... (Բըռ-
նում է նրա ձեռքը, բայց Էբինը հրում է նրան):

ԷԲԻՆ (պոռթկալով).— Դու ինձ հիմարացրիր, դարձրիր ապուշի
մէկը: Դու միշտ խորամանկություն էիր խաղում գողանալու
համար... Համոզեցիր, որ պառկեմ հետդ, որ տղա ունենաս...
Իսկ այդ հիմար ծերուկը կարծի, թե երեխան իրենից է ու քեզ
ազարակ խոստանա, իսկ ինձ... ճամփի փոշին կերցնի... Եթե
նրա համար մի արու զավակ ծնես... (Նայում է Աբբիին անձ-
կալի և շփոթված աչքերով): Քո մեջ սատանա կա նստած...
Ախր մարդը այդքան չար չի լինի...

ԱԲԲԻ (պոռթկալով).— Այդ ծեր ապո՛ւշն ասաց քեզ...

ԷԲԻՆ.— Գուցէ սուտ է ասել, հա՞... Գոնէ հիմա մի՛ խորաման-
կիր:

ԱԲԲԻ (պաշտպանվելով).— Լսիր, Էբի՛ն... դու պետք է լսես ինձ...
Դա վաղուցվա բան էր... երբ մեր միջև ոչինչ չէր եղել... Հի-
շո՛ւմ ես, դու արհամարհեցիր ինձ, գնացիր Մինիի մոտ: Ախր
ես սիրում էի քեզ... Ես այդ բոլորը հնարեցի, որ վրեժս լուծեի
քեզանից:

ԷԲԻՆ (պոռթկալով ու տանջահար).— Երանի մեռած լինեիր: Ե-
րանի ես էլ քո հետ մեռած լինեի, որ այս վիճակի մեջ չընկ-
նեիր: (Կատաղած): Բայց ես էլ իմ վրեժը կառնեմ... Ես
կաղոթեմ, որ մայրիկը ետ գա ու ինձ օգնի... որ անիծի քեզ
ու նրան...

ԱԲԲԻ (դողալով).— Ո՛չ, Էբի՛ն, ո՛չ... այդպիսի բան չանե՛ս...
Այդպիսի բան չանե՛ս: (Ծնկի գալով: Արտասովելով): Ես չէի
ուզում վատ բան անել: Ներիր ինձ, հա՞...

ԷԲԻՆ (չի երևում, թե լսում է նրան: Մոլեգնած).— Ես ցույց կտամ
այդ ծեր սրիկային: Քեզ նույնպէս... Ամեն ինչ կպատմեմ նը-
րան... մեր տղայի մասին էլ, որով այնքան հպարտանում է,
թե իրենից է... Հետո քեզ կթողնեմ այստեղ, որ իրար թունա-
վորեք... իսկ մայրիկը գիշերները դուրս կգա գերեզմանից ու

կանիծի ձեզ... Ես կգնամ Կալիֆոռնիայի դաշտերը՝ Սամի ոչ Փիլոերի մոտ...

ԱԲԲԻ (ահաբեկված).— Դու ուզում ես ինձ լքե՞լ: Չե՛ս կարող...

ԷԲԻՆ (տաքացած վճռելով).— Ասում եմ... ըր՛... կգնամ... Ես կհարստանամ, հետո կվերադառնամ, գողացած ագարակի համար կկոպեմ նրա հետ... Հետո երկուսիդ ետևին քացով կխախեմ, կգցեմ փողոց, որ քնեք անտառներում, ճանապարհներից հաց մորաք... Իսկ դու, երեխադ գրկիդ, սովից կմեռնես...

ԱԲԲԻ (դողալով).— Բայց նա նաև քո որդին է, Էբի՛ն:

ԷԲԻՆ (տանջահար).— Երանի ծնված չլինեք: Երանի նա հեկնց հիմա մեռնեք: Երանի ոչ մի անգամ տեսած չլինեի նրան... Դու դիտմամբ երեխա ունեցար, որ ագարակին տեր կանգնես... Եթե նա չլինեք...

ԱԲԲԻ (մեղմորեն).— Իսկ դու հավատո՞ւմ էիր, որ սիրում էի քեզ... նախքան մեր տղայի ծնվելը...

ԷԲԻՆ.— Ըհը... Հիմար հորթի պես:

ԱԲԲԻ.— Իսկ հիմա չե՞ս հավատում:

ԷԲԻՆ.— Հավատա՞մ... ստախոս գողի՞ն հավատամ... հա՛-հա՛-հա՛...

ԱԲԲԻ (դողալով ու երկչոտ).— Իսկ դու ճի՞շտ ես ասում, որ նախքան մեր տղայի ծնվելը սիրում էիր ինձ...

ԷԲԻՆ (դողալով).— Ըհը... Իսկ դու խաբում էիր ինձ...

ԱԲԲԻ.— Իսկ հիմա չե՞ս սիրում:

ԷԲԻՆ (կոպտորեն).— Ասացի՛ զգվում եմ քեզանից:

ԱԲԲԻ.— Ծի՞շտ ես ասում: Ուզում ես գնալ Արևմո՞ւտք: Ուզում ես հեռանա՞լ ինձանից... մեր երեխայի պատճառով...

ԷԲԻՆ.— Ես հեկնց առավոտ շուտ պիտի գնամ, թե չէ, Աստված ինձ դժոխք կուղարկի...

ԱԲԲԻ (լռությունից հետո, ահավոր սառնությամբ ու շշուկով).— Քանի որ մեր երեխայի պատճառով քո սերը մեռավ... քանի որ դու... դու... որ իմ միակ որսախությունն ես, ինչպես երկինքը... գեղեցիկ երկինքը... ուրեմն ես էլ եմ ատում մեր տղային՝ թեկուզ նրա մայրն եմ...

ԷԲԻՆ (տաքացած).— Ստում ես: Դու չես ատում նրան: Այդ լակոտը գողացավ ագարակը քեզ համար... (**Ջղագրգիռ**): Բայց ... հասկացիր, հարցն ագարակը չի... Դու խաբել ես ինձ: Երդ-

- վում էիր, իբր, սիրում ես ինձ և ագարակը ձեռքդ գցեցիր:
ԱԲԲԻ (լրբացած).— Մեր որդին չի գողացել ագարակը... Ես կըս-
 պանեմ նրան... Ես սիրում եմ քեզ: Ես կապացուցեմ, որ...
ԷԲԻՆ (կարուկ).— Հերիք է ստես... Ինձ համար արդեն ամեն ինչ
 պարզ է: Մնաս բարով: Էլ չենք տեսնի իրար:
ԱԲԲԻ (գունատված).— Դու նույնիսկ չես ուզում ինձ համբուրել...
 Այսքան սիրելուց...
ԷԲԻՆ (սառը ձայնով).— Չե՛մ ուզում... Ու կփորձեմ մոռանալ, որ
 երբևէ տեսել եմ քեզ...
ԱԲԲԻ.— Էբի՛ն... սպասիր... Դու չպետք է այդպես հեռանաս...
 Ես ուզում եմ քեզ...
ԷԲԻՆ.— Ես ըր՛... գնում եմ մի քիչ խմեմ... պարեմ...
ԱԲԲԻ (փարվում է նրա ձեռքին: Կրքոտ թախանձանքով).— Իսկ
 եթե... նա երբեք չխանգարի մեզ... եթե կարողանամ ապա-
 ցուցել, որ մտադիր չեմ քեզանից ագարակը գողանալ... այդ
 ժամանակ ամեն ինչ նույնը կմնա, նորից կսիրենք իրար,
 կհամբուրվենք առաջվա պես, կհամբուրվենք ու երջանիկ կլի-
 նենք առաջվա պես... եթե ես կարողանամ այդ բանն անել...
 եթե կարողանամ ապացուցել... նորի՛ց ինձ կսիրես, հա՛...
 Դարի՛ց կհամբուրես... Դու էլ երբևք չե՛ս լքի ինձ... Հա՛...
ԷԲԻՆ (բացում է). Ինչ խմանա: (**Հետո ձեռքն ազատում է ու
 դառնորեն ժպտում**): Բայց դու Աստված չես, չե՛...
ԱԲԲԻ (ցնծությամբ).— Հիշիր, դու խոստացար, որ սիրելու ես
 ինձ... (**Հետո արտաստվոր կրքով**): Գուցե իմ մեջ էլ ինչ-որ
 գորություն կա. Աստծո պես...
ԷԲԻՆ (նայելով նրան).— Արդեն խելագարվո՞ւմ ես, հա՛... (**Հե-
 տո մոտենալով մուտքի դռանը**): Ես... գնում եմ պարելու...
ԱԲԲԻ (բարձրաձայն գոչելով նրա ետևից).— Ես կապացուցեմ...
 Ես կապացուցեմ, որ քեզ նրանից շատ եմ սիրում... (**Էբինը
 ներս է մտնում: Չի թվում, թե լսում է: Արբին վերջացնում է՝
 հուսահատորեն**): Աշխարհում ամենից շատ...

ՊԱՏԿԵՐ ԵՐՐՈՐԴ

Լույսը նոր է բացվել: Երևում են խոհանոցն ու Քեբրթի անջա-
 անցակը: Էբինը խոհանոցում է՝ երկարավուն մոմերի լույսի մեջ:

Նա նստել է՝ կզակը բռնցքներին հեռած: Դեմքը գունատ է ու անտարբեր: Կողքին մախաղն է դրված: Ննջասենյակում ձեթի փոքրիկ ճրագ է վառվում: Քեբըթը քնած է: Սենյակում աղոտ լույս է սփռվել: Աբբին խոնարհվել է մանկան օրորոցին: Դեմքը լարված է և ուշադիր: Նա տագնապած լսում է, հետո սքողված հաղթականություն է երևում դեմքին: Հանկարծ ցնցվում է ու քիչ է մնում փլվի օրորոցի կողքին: Ծերունին անհանգիստ շուռումուռ է գալիս անկողնում ու խռնփացնում: Աբբին կենտրոնանալով զարհուրանքով ետ է քաշվում օրորոցից, ետ-ետ գնալով դեպի խորքի դուռը, դուրս է ելնում: Քիչ հետո նա երևում է խոհանոցում և վազելով մոտենում է Էբինին, գրկում ու սկսում է կրթով համբուրել: Էբինը խոժոռված է, անտարբեր ու քարացած նայում է առաջ:

ԱԲԲԻ (շփոթված).— Էբի՛ն, Էբի՛ն... ես այդ բանն արեցի... Ասացի չէ՞, կանեմ... Հիմա ևս ապացուցեցի, որ սիրում եմ քեզ՝ ամեն բանից ավելի: Էլ չես կարող ինձ կասկածել:

ԷԲԻՆ (անտարբեր).— Արդեն ուշ է: Ինչ էլ արած լինես, ոչանակություն չունի:

ԱԲԲԻ (լրբանալով).— Այդպես մի՛ խոսիր: Համբուրիր ինձ: Ձե՛ս ուզում համբուրել: Դու ինձ պետք է համբուրես: Այդ բանն անելուց հետո հիմա դու ինձ պետք է համբուրես ու ասես՝ ես քեզ սիրում եմ, Աբբի:

ԷԲԻՆ (անտարբեր համբուրում է նրա պարանոցը).— Սա մնաս բարովի համար էր: Իսկ հիմա... գնամ:

ԱԲԲԻ.— Ո՛չ, ո՛չ, դու չպետք է գնաս: Հիմա... արդեն դու չպետք է գնաս:

ԷԲԻՆ (շարունակելով՝ մտքերի մեջ խորասուզված).— Ես շատ մտածեցի... Հարիկին ոչինչ չպետք է ասել: Կթողնեմ, որ մայրս վրեժը լուծի քեզանից: Եթե այդ ծեր անառակին ասեի, նա այնքան ստորն է, որ կարող էր երեխայից վրեժն առնել: **(Նրա ձայնը, հակառակ բոլոր ճիգերի, դառնում է կերկերուն):** Իսկ ես չեմ ուզում, որ երեխային վատ բան պատահի: Քո պատճառով նա չպետք է տուժի: **(Ավելացնում է ակներև հրպարտությամբ):** Հետո, մեր տղան ինձ նման է... Աստված վկա, նա իմն է: Մի օր... ես կվերադառնամ ու...

ԱԲԲԻ (մտքերի մեջ խորասուզված, լավ չի հասկանում նրա ասածները).— Հիմա էլ գնալն օգուտ չունի: Ամեն ինչ նույնն է ... առաջվա պես... հիմա ոչ ոք չի խանգարում մեզ...

ԷՔԻՆ (Աբբի ձայնի մեջ ինչ-որ բան վախեցնում է նրան: Փոքր-ինչ տազնապած, աչքերը հառում է նրա վրա).— Դու խելքդ թոցրել ես, Աբբի': Ի՞նչ ես արել... դեմքիդ գույն չկա...

ԱՔՔԻ.— Ես... ես սպանեցի նրան, Էքի'ն:

ԷՔԻՆ (ապշած).— Դու... սպանեցի՞ր նրան...

ԱՔՔԻ (անտարբեր).— Ըհը:

ԷՔԻՆ (շփոթմունքից սթափվելով, կարծես նոր է հասկանում).—

Լավ պատիժ է... բայց մի բան պետք է անենք, որ ապացուցենք, թե ծեր անտաակը հարբած վիճակում ինքնաապանություն է գործել: Մենք կարող ենք դա ապացուցել: Բոլորն էլ երեկ տեսան, թե ինչքան շատ էր խմել:

ԱՔՔԻ (կատաղած).— Չէ', չէ', նրան չեմ սպանել... (Ջղաճրճի ծիծաղում է): Ուրեմն հո՞րդ պիտի սպանեի: Տե՛ր Աստված, ես նրան պիտի սպանեի: Իսկ ինչո՞ւ ինձ անխօրոք շասացիր: Նրա փոխարեն...

ԷՔԻՆ (զարհուրած).— Նրա փոխարեն... Ի՞նչ ես ուզում դրանով ասել:

ԱՔՔԻ.— Ես հորդ չեմ սպանել:

ԷՔԻՆ (անհարկված).— Չէ', չէ'... երեխային չես սպանել:

ԱՔՔԻ (ցրված).— Հա .. նրան սպանեցի...

ԷՔԻՆ (աղաղակեղով րնկնում է ձնկներին՝ կարծես ետևից հարված ստանալով).— Աննևակարո՞ղ Աստված... Ամենակարո՞ղ Աստված... Մա՛մ... որտե՞ղ էիր... Ինչո՞ւ թույլ տվիր, որ նա սպանի իմ...

ԱՔՔԻ (պարզամտորեն).— Մաչրդ գնաց իր գերեզմանը... մեր առաջին գիշերը: Չե՞ս հիշում: Այն օրվանից ես նրա ներկայությունը չեմ զգացել: (Դադար: Էքինը ափերով ծածկում է դեմքը: Դողում է ամբողջ մարմնով, կարծես՝ ջերմախտից: Աբբին շարունակում է միապաղաղ ձայնով): Ես բարձր դրեցի նրա պատիկ դեմքին: Հետո խեղդվեց: (Սկսում է մեղմ արտասվել):

ԷՔԻՆ (նրա կատաղությունը խառնվում է վշտին).— Նա ինձ նրման էր: Գրո՞ղը քեզ տանի, նա իմն էր:

ԱՔՔԻ (կամացուկ ու կերկեր ձայնով).— Ես չեի ուզում սպանել: Այդ բանն անելիս ինձանից զզվում էի: Ես սիրում էի նրան: Այնքան գեղեցիկ էր: Բայց քեզ մեր տղայից ավելի շատ էի սիրում... իսկ դու... հեռանում էիր... հեռու մի տեղ, ուր էլ չեի կարող քեզ տեսնել... համբուրել... չեի զգա գրկախառնումդ:

Բացի դա, ասացիր թե ստում ես ինձ... մեր երեխայի պատ-
ճառով... ուզում ես, որ նա մեռնի: Եթե նա ծնված չլիներ,
մենք առաջվա պես կսիրեինք իրար:

**ԷԲԻՆ (անկարող լինելով դիմանալ, հարձակվում է նրա վրա՝
մատները մագիլներ արած, կարծես, ուր որ է պիտի խեղդի
Աբբիին).**— Ստում ես, ես ոչ մի անգամ չեմ ասել, թե ուզում
եմ նա մեռնի: Ես ավելի շուտ գլուխս կկտրեի, քան թե կթող-
նեի, որ նրա ճկույթին մի բան դիպչի:

ԱԲԲԻ (խղճահարությամբ ծնկի է իջնում).— Էբի՛ն, այդպես ա-
տելությամբ մի նայիր ինձ: Ես այդ արեցի, որպեսզի նորից
կարողանանք միասին երջանիկ լինել:

ԷԲԻՆ (կատաղած).— Բերանդ փակի՛ր, թե չէ քեզ կսպանեն: Հի-
մա արդեն հասկանում եմ քո խաղը: Նորից նույն հին խորա-
մանկությունն ես բանեցնում: Դու ուզում ես քո սպանությունը
ինձ վրա բարդել:

ԱԲԲԻ (հեծկտալով ու ականջները փակելով).— Ո՛չ, ո՛չ, Էբի՛ն...
(Բռնում է նրա ծնկները):

**ԷԲԻՆ (հանկարծ զարհուրանքով է լցվում: Հեռանում է նրա-
նից).**— Ինձ ձեռք չտա՛ս: Դու անիծված ես: Ինչպե՞ս խիղճդ
տարավ սպանել այդ մաքուր, փոքրիկ արարածին... Դու, ի-
հարկե, հոգիդ ծախել ես դժոխքին: (Հանկարծակի: Կատա-
ղությամբ): Հա՛, գիտեմ ինչու սպանեցիր: Դու նորից ստում
ես: Նորից ուզում ես տիրանալ... տիրանալ իմ բաժին ագա-
րակին, որ երեխային պիտի հասներ: Դու տեսար, որ նա ինձ
նման է: Գիտեիր, որ իմ միսն ու արյունն է ու չկարողացար
դիմանալ... Ես լավ եմ ճանաչում քեզ: Դու սպանեցիր նրան
միայն այն պատճառով, որովհետև նա իմ միսն ու արյունն
է: (Այս տեսարանում Էբինը գրեթե խելագարվում է: Նա հար-
ձակվելու փորձ է անում, հետո շրջվում է ու բռունցքներով
կատաղորեն սպառնում): Բայց ես հիմա վրեժս կառնեմ քե-
զանից: Կզնամ շերիֆի մոտ ու ամեն ինչ կպատմեմ: Հետո
կերգեմ «Ես սլանում եմ Կալիֆոռնիա» և կզնամ ոսկե դաշ-
տերը... Արևմուտքում ոսկե դաշտեր, Ոսկե Դարպաս կա...
(Այս վերջին բառերը կիսադաղակելով ու մրմնջալով է ար-
տասանում, անկապ-անկապ, հանկարծակի կրքից դողալով):
Ես ըը՛... կզնամ, կկանչեմ շերիֆին, որ քեզ բռնի: Ես ուզում
եմ, որ քեզ բանտարկեն, որ հեռու մնաս ինձանից: Ես զզվում

եմ քեզանից: Մարդասպան ու գող լինելուց բացի, դու դեռ մոլորեցնում ես ինձ: Ես քեզ շերիֆի ձեռքը կտամ: (Նա շքրջվում է ու վազում ագարակատան բակ, հեկեկալով ու հնալով մտնում է ոլորվող ճանապարհ):

ԱԲԲԻ (ճիգով վեր է կենում ու վազում դեպի դուռը՝ նրա ետևից կանչելով).— Ես սիրում եմ քեզ, Էբի՛ն: Սիրում եմ... (Նա կանգնում է դռան մոտ՝ թուլացած երերալով: Կարծես, ուր որ է պիտի ընկնի): Ինձ չի հետաքրքրում ինչ ես անում հիմա... միայն թե նորից ինձ սիրես... (Նվաղելով՝ փլվում է հատակին):

ՊԱՏԿԵՐ ԶՈՐՐՈՐԴ

Մոտավորապես մեկ ժամ հետո: Ամեն ինչ նույնն է, ինչպես նրբորդ պատկերում: Երևում են խոհանոցն ու Քեքրթի ննջասենյակը: Արդեն լույսը բացվել է: Երկինքը շողշողում է արևածագից:

Աբբին խոհանոցում է՝ սեղանի մոտ: Գլուխն առել է ասիերի մեջ: Վերևում Քեքրթը դեռ քնած է, բայց շուտով արթնանում է՝ ցնցվելով: Նույնը է պատուհանին, հետո բարկացած ու զարմացած ինչ որ բան է շքնում: Վերմակը մի կողմ է նետում ու սկսում արագ հաղկվել: Առանց ետ նայելու, խոսում է Աբբիի հետ, կարծելով թե նա այնտեղ կլինի:

ՔԵՔՐԹ. Աբբի՛... շատ ուշ է արդեն: Երևի հիսուն տարի կլինեք, այսպես չէի քնել: Արևն արդեն վառում է: Երեկ շատ խմեցի ու պարեցի: Լավ հոգնել էի, դրա համար այսքան շատ քնեցի: Կամ էլ ծերացել եմ... Էբինն, իհարկե, հիմա աշխատում է: Դու ինձ պիտի շուտ արթնացնեիր: (Շրջվում է, տեսնում, որ ոչ ոք չկա, զարմանում է): Վա՛հ... Աբբին ո՞ր կորավ: Երևի նախանաշ է պատրաստում: (Ոտքի թաթերի վրա մոտենում է մանկան օրորոցին ու խոնարհվում: Հպարտորեն): Բարի լույս, զավա՛կս: Իսկական պատկեր է, պատկեր... Իր համար հանգիստ քնել է: Ուրիշների պես գիշերները լաց չի լինում: (Զգույշ քայլերով դուրս է գալիս դռնից: Մի պահ անց երևում է խոհանոցում: Գոհունակությամբ նայում է Աբբիին): Հա, այստե՛ղ ես: Մի բան եփե՛լ ես ուտելու:

ԱԲԲԻ (բոլորովին քարացած).— Չէ՛:

ՔԵԲԸԹ (մոտենում է կնոջը՝ գրեթե քնքշանքով).— Հիվա՛նդ ես, ինչ է:

ԱԲԲԻ.— Չէ՛:

ՔԵԲԸԹ (ձեռքը դնում է նրա ուսին: Արբի՛ն սարսռում է).— Ավելի լավ է մի քիչ պառկես, հանգստանա: **(Փոքր-ինչ զվարթ):** Հիմա երեխան կարթնանա ու քեզ կուզի: Որ այդպես խորն է քնել... հիմա գայլի ախորժակ կունենա:

ԱԲԲԻ (դողում է, հետո մեռյալ ձայնով).— Նա էլ չի արթնանա:

ՔԵԲԸԹ (կատակելով).— Չէ, նա ինձ է քաշել, քնկոտ չի:

ԱԲԲԻ.— Նա մեռած է:

ՔԵԲԸԹ.— Ի՞նչ... **(Աչքերը հառում է կնոջը: Զարհուրած).**— Դու հարբած ես... խելագարվե՛լ ես, թե՛...

ԱԲԲԻ (հանկարծ գլուխը բարձացնում է ու կատաղած նայում).— Ասացի՛ սպանել եմ... Խեղդեցի: Գնա՛ վերև, տե՛ս, եթե չես հավատում: **(Քեքքոք մի պահ նորից է աչքերը հառում նրա վրա, հետո խորքի դռնից վազում է դուրս: Աստիճաններից լսվում է նրա ոտքերի շառաչը, հետո ծերունին ննջասենյակ է ներխուժում ու մոտենում օրորոցին: Արբին, առաջվա պես քարացած, մնում է իր տեղում: Քեքքոք ձեռքը դնում է երեխայի մարմնին: Նրա դեմքը գունաավում ու ահաբեկվում է):**

ՔԵԲԸԹ (ետ քաշվելով ու դողդողալով).— Ամենակարո՞ղ Աստված... Ամենակարո՞ղ Աստված... **(Դուրս է վազում ու քիչ անց նորից է իջնում խոհանոց: Մոտենում է Արբիին: Դեմքին նույն զարհուրանքն է: Խռպոտ ձայնով):** Ինչո՞ւ արեցիր... Ինչո՞ւ... **(Երբ Արբին չի պատասխանում, կոպտորեն բռնում է նրա ուսերից ու թափահարում):** Ես հարցնում եմ, ինչո՞ւ սպանեցիր... Ասա՛, թե չէ հիմա...

ԱԲԲԻ (կատաղությանմբ հրում է նրան: Քեքքոքը օրորվելով ետ-ետ է գնում: Արբին անզուսպ կատաղությանմբ ետ է քնկրկում).— Չհամարձակվե՛ս ինձ դիպչել: Դու ի՞նչ իրավունք ունես նրա մասին հարցնել: Ախր երեխան քեզանից չի... Դու էլ կհավատայիր, հա՛, որ ես քեզանից երեխա կունենամ: Ես ավելի շուտ կմեռնեի, բայց այդ բանը չէի անի: Ես զգվում եմ քեզանից... միշտ էլ զգվել եմ... Եթե խելք ունենայի, քեզ պիտի սպանեի: Ես ատում եմ քեզ: Էբի՛նի եմ սիրել: Հենց սկզբից էլ նրան եմ սիրել: Երեխան Էբի՛նից է: Ինձանից ու Էբի՛նից: Երեխայի հետ դու ոչ մի կապ չունես:

ՔԵԲԸԹ (ապշած նայում է: Դադար: Ճիգով է բառ գտնում: Միապադաղ ձայնով).— Դրա համար... Ահա թե ինչն էր ծանրացել հոգուս. թաքնվելով տան անկյուններում, աղմկելով ծրփիների մեջ... Իսկ դու հեռու էիր պահում քեզ ինձանից, խաբում էիր, իբր հղի ես... (**Քեքքթն ընկնում է անսովոր հուսահատության մեջ, հեռո՛ւ արտասովոր հուզմունքով**): Հա, երեխան իսկապես մեռած է: Ես ձեռքս դրեցի նրա սրտին: Խե՛ղճ երեխա... դո՛ւ ինչ էիր արել... (**Արտասովում է: Թեզանիքով մաքրում է քիթը**):

ԱՆԲԻ (լրբացած).— Ո՛չ... չհամարձակվես լաց լինել... (**Հեկեկում է ջղագրգիռ**):

ՔԵԲԸԹ (կենտրոնանալով, որից նրա մարմինը պրկվում է: Դեմքը դառնում է քարե դիմակ: Խոսում է ատամների արանքից).— Մարդ պետք է քար լինի, որ չխելագարվի: Եթե երեխան Երիցից է, ես ուրախ եմ, որ նա մեռավ: Ես այն ժամանակ էլ զգում էի, տանը մի բան է կատարվում: Այստեղ այնքան ասորն էր և ևս ինձ այնպես մեռակ էի զգում... Իսկ գոմում տաք էր, դրա համար կովերի մոտ էի գնում՝ նրանց հետ գրուցելու: Կովերն ինձ ձգում էին... Ես դեռ այն ժամանակ կասկածում էի, սպեպես որ շատ մի ուրախացեք, թե դուք ինձ մինչև վերջ հիմարացրե՛լ եք. Ես կասկածում էի: Ախր Աստված է տեսնում, ինձ սպեբան էլ հեշտ չի խաբել: (**Նայում է նրան: Ժղպտալով**): Ուրեմն, ատում ես, եթե խելք ունենայիր ինձ կապանիք, հա՛... Ես դեռ երկար պիտի ապրեմ... Հարյուր տարի. ձեր բոլորի ջիգրու: Իսկ քեզ կկախեն: Դու կարծանանաս Լևտո՞ժ և մարդկանց դատաստանին: Իսկ ես կգամ նայելու, թե քեզ ինչպես են կախելու: Գնամ շերիֆին կանչեմ: (**Գնում է դեպի դուռը**):

ԱՆԲԻ (սառն ու անտարբեր).— Նեղություն մի՛ քաշիր: Էբիհն արդեն գնացել է:

ՔԵԲԸԹ (ապշած).— Էբիհը... գնացել է շերիֆին հայտնելո՛ւ...

ԱՆԲԻ.— Ըհր:

ՔԵԲԸԹ.— Գնացել է՝ քեզ դատի տա՛...

ԱՆԲԻ.— Ըհր:

ՔԵԲԸԹ (մտածում է Աբբիի ասածի վրա: Դադար: Հեռո՛ւ չոր ձայնով).— Ես շատ շնորհակալ եմ Էբիցից, որ ինձ ազատեց այդ գլխացավանքից: Գնամ աշխատեմ: (**Մոտենում է դռանը, հե-**

տո շրջվում է, արտասովոր հուզմունքով): Աբբի՛, երեխան պիտի իմը լիներ: Դու ինձ պիտի սիրեիր: Ես իսկական տղամարդ եմ: Ես քեզ չէի մատնի, ինչ էլ արած լինեիր... Թեկուզ ինձ բռնեին, ողջ-ողջ այրեին...

ԱԲԲԻ (Էբինին պաշտպանելով).— Ուրիշ պատճառներ էլ կան, որ դու չգիտես... դրա համար Էբինը գնաց շերիֆի մոտ:

ՔԵԲԸԹ (չորությամբ).— Իհարկե, հանուն քեզ... (Դուրս է գնում, մոտենում է ցանկապատին, նայում է երկնքին: Մերունու ինքնատիրապետունք թուլացել է: Մի պահ նա հոգնած ու ծերացած է երևում: Ծշնջում է հուսահատորեն): Ամենակարո՛ղ Տեր... Ես ոչ մի անգամ ինձ այսպես մեռակ չեմ զգացել... (Հանկարծ ձախակողմյան ճանապարհից ոտնաձայներ է լքսում, հետո իսկույն կենտրոնանում է: Էբինը վազելով բակ է մտնում՝ հևալով, պլշած աչքերով ու խելագարի հայացքով: Ներս է խուժում ցանկապատի դռնից: Քեբըթը բռնում է Էբինի ուտերից: Վերջինս բթացած նայում է նրան): Դու... հայտնեցի՞ր շերիֆին...

ԷԲԻՆ (անտարբեր գլխով է անում).— Ըհր:

ՔԵԲԸԹ (հրում է նրան: Էբինը վայր է ընկնում: Մերունին արհամարհանքով ծիծաղում է).— Ապրես... դու ոնց որ մորդ քթից թոսած լինես... Նրա պես թուլամորթ ես ու ապուշ... (Ծիծաղելով գնում է գոմ: Էբինը ոտքի է կանգնում: Հանկարծ Քեբըթը շրջվում է ու խոժոռված սպառնում): Երբ շերիֆը գա նրան տանի, դուրս կկորչես ագարակից, թե չէ... Աստված վկա, նա ստիպված նորից կգա ու ինձ էլ բանտ կտանի... մարդասպանության համար: (Հեռանում է: Չի երևում, թե Էբինը լսում է նրան: Նա վազում է առմուտք, հետո երևում է խոհանոցում: Աբբին գլուխը բարձրացնում է ուրախ շփոթմունքով: Էբինը մոլոր քայլերով մոտենում է և ծնրադրում է նրա կողքին: Ցնցվելով սկսում է հեկեկալ):

ԷԲԻՆ.— Ներիր ինձ...

ԱԲԲԻ (սքանչացած).— Էբի՛ն... (Համբուրում է նրա գլուխն ու սեղմում կրծքին):

ԷԲԻՆ.— Ես սիրում եմ քեզ... ներիր ինձ...

ԱԲԲԻ (հափշտակված).— Այդ խոսքերիդ համար դժոխքի բոլոր մեղքերն էլ կարող եմ ներել... (Համբուրում է նրա գլուխը ու կրքով սեղմում իրեն):

ԷՔԻՆ (Կերկերուն ձայնով).— Բայց... ես հայտնեցի շերիֆին: Հիմա նա կգա, որ քեզ ձերբակալի...

ԱՔՔԻ.— Հիմա ինձ այլևս ոչինչ չի հետաքրքրում:

ԷՔԻՆ.— Ծերիֆը դեռ քնած էր: Արթնացրի և ամեն ինչ պատմեցի: Նա սասց՝ սպասիր հազմվեմ: Սպասեցի: Սկսեցի քո մասին մտածել: Հիշեցի, թե ինչպես էինք իրար սիրում: Հանկարծ զգացի՝ ինչ-որ բան ճմլեց սիրտս: Հետո լաց եղա: Զգացի, որ սիրում եմ քեզ... ու միշտ պիտի սիրեմ...

ԱՔՔԻ (շոյելով նրա մազերը: Քնքշորեն).— Դու իմ տղան ես, չէ՞...

ԷՔԻՆ.— Հետո վազելով տուն եկա: Դաշտերի ու անտառների միջով եկա: Ծանապարհին անընդհատ մտածում էի՝ Աքքին դեռ ժամանակ կունենա փախչելու... ինձ հետ...

ԱՔՔԻ (գլուխը օրորելով).— Ո՛չ, ես իմ պատիժը պիտի կրեմ... հատուցեմ մեղքերիս համար:

ԷՔԻՆ.— Այդ դեպքում, ես ուզում եմ քեզ հետ կիսել այդ պատիժը:

ԱՔՔԻ.— Բայց դու մարդ չես սպանել:

ԷՔԻՆ.— Ես այդ միտքը քո գլուխը մտցրի: Ես ուզում էի, որ նա մեռեր. ես ստիպեցի, որ դու սպանես:

ԱՔՔԻ.— Ո՛չ, ո՛չ, միայն ես եմ մեղավոր:

ԷՔԻՆ.— Այս երեխան մեր մեղքի ծնունդն է: Ես էլ քեզ պես հանցավոր եմ:

ԱՔՔԻ (նայելով երկնքին՝ կարծես Աստծուն կոչ անելով).— Ես չեմ ապաշխարում այդ մեղքը... Ես Աստծուց թողություն չեմ խնդրում...

ԷՔԻՆ.— Ես նույնպես: Բայց դրանից մեկ ուրիշ մեղք ծնվեց՝ մարդասպանություն... Դու մարդ ես սպանել... ես նույնպես... Ամեն ինչ կպատմեմ շերիֆին: Իսկ եթե դու ժխտես, կասեմ, որ միասին ենք որոշել երեխային սպանել: Եվ բոլորը կհավատան ինձ, որովհետև մեր ամեն մի քայլին կասկածում են, բացի այդ, դա նրանց ճշմարիտ կթվա, որովհետև, ինչ որ ճիշտն է՝ ճիշտ, ես քեզ օգնել եմ:

ԱՔՔԻ (գլուխը մոտեցնելով նրա գլխին: Հեկեկալով).— Ո՛չ... ո՛չ... ես չեմ ուզում, որ դու էլ տանջվես...

ԷՔԻՆ.— Բայց ես կհատուցեմ մեղքի իմ բաժինը: Ես ավելի շատ կտառապեմ, երբ հեռանամ քեզանից: Գիշեր-ցերեկ Արևմուտ-

քում կմտածեմ քո մասին, երբ դու բանտում լինես: **(Շնչալով):** Կամ՝ կտանջվեմ ապրելով, երբ դու մեռած լինես: **(Դադար):** Աբբի՛, ես ուզում եմ քեզ հետ բաժանել այդ մեղքը... բանտը, մահը, դժոխքը... միևնույնն է, ինչ ուզում է լինի: **(Նայում է Աբբիի աչքերի մեջ):** Եթե միասին հատուցենք մեր մեղքը, ես ոչ մի անգամ ինձ մեղակ չեմ զգա:

ԱԲԲԻ (ճիգ անելով ժպտալ: Քնքուշ ձայնով).— Էբի՛ն... թույլ չեմ տա: Չեմ կարող թույլ տալ:

ԷԲԻՆ (քնքշորեն համբուրելով).— Ախր դու չես կարող մեղակ մնալ: Այս անգամ ես հաղթեցի քեզ:

ԱԲԲԻ (ճիգով ու գորովանքով ժպտալով).— Մի՛թե... Իսկ ես չեի ուզի քո հետ կովել... հիմա, երբ արդեն գտել եմ քեզ...

ԷԲԻՆ (դրսից ոտնաձայներ է լսում).— Սո՛ւս... Լսիր, գալիս եմ մեզ բռնելու:

ԱԲԲԻ.— Չէ՛, հայրդ է: Էբի՛ն, առիթ մի՛ տուր, որ նա քեզ հետ կովի: Ուշադրություն մի դարձրու նրա ասածներին: **(Քեքրթը գոմից է գալիս: Չափազանց հուզված է: Արագ քայլերով մըտնում է տուն, հետո՝ խոհանոց: Էբինը ծնրադրել է: Աբբին քարացած գրկել է նրան):**

ՔԵԲԸԹ (նայում է նրանց: Դեմքը խիստ է: Երկարատև լռություն: Խոսում է վրիժառությանբ).— Դուք մի գույգ հրաշալի մարդասպաններ եք, աղունիկներս: Չեր երկուսին պիտի նույն կախաղանից կախեն ու թողնեն, որ օդի մեջ ճոճվեք ու փրտեք... որ ինձ պես ծեր ապուշները զգուշանան ու իրենց մեղակությունը միայնակ քարշ տան... իսկ ջահելները զսպեն իրենց ցանկությունները: **(Դադար: Նրա դեմքը թրթռում է հուզմունքից: Փոքր-ինչ խենթացած):** Այսօր չկարողացա աշխատել: Սիրտ չունեմ: Թող դժոխքի բաժին դառնա ագարակս: Ես հեռանում եմ: Արձակել եմ կովերին ու քշել անտառները... այնտեղ ավելի ազատ կզգան իրենց: Կովերին ազատելով, ինքս էլ ազատվեցի: Այսօր ես ազատ եմ... Կայրեմ տունն ու շտեմարանը ու կնայեմ, թե ինչպես է վառվում: Իսկ մորդ կթողնեմ, որ թափառի մոխիրների մեջ: Արտերս կվերադարձրեն Աստծուն, որ ոչ մի մարդ չկարողանա ձեռք տալ: Իսկ ես... կզնամ Կալիֆոռնիա, կմիանամ Սիմեոնին ու Փիթերին... իմ հարազատ որդիներին: Քեքրթները միասին կգտնեն Սոդոմոնի գանձը: **(Հանկարծ սկսում է խենթի պես ցատկոտել):**

Հո՛ւ... ինչ էին երգո՞ւմ, Սիսեոնն ու Փիթերը: Հա... «Օ՛, Կալիֆոռնիա, դու ես իմ հայրենիքը»: **(Երգում է: Հետո ծնկում է խոհանոցի հատակին, այնտեղ ուր փողն է պահված):** Ու ամենալավ նախով կգնամ... Ես փող ունեմ... լավ էր տեղը չգիտեիք, թե չէ դա էլ կգողանայիք: **(Հանում է հատակի տախտակը: Նայում է: Հետո սկսում է շոշափել: Նորից է նայում: Մեռյալ լռություն: Քեբբթը դանդաղ շրջվում է ու նստած տեղում փլվում: Նրա աչքերը նման են սատկած ձիու աչքերին: Դեմքը կանաչ երանգով է պարուրվում, ինչպես պատահում է սրտախառնոթի ժամանակ: Մի քանի անգամ թուրք կոլ է տալիս: Վերջապես ճիգով ու ցավատանջ ժպտում է):** Հաա՛... ուրեմն արդեն գողացել եք...

ՎԵՔԵՆ (անտարբեր).— Ես փողերը տվեցի Սիսեոնին ու Փիթերին՝ նրանց բաժին ագարակի դիմաց... որպեսզի Կալիֆոռնիա գնային:

ՔԵԲԹ (հեզոտրեմ).— Հա՛-հա՛-հա՛... **(Սկսում է ծածկել հատակի խոռոչը: Դանդաղ բարձրանում է տեղից: Տարօրինակ ձայնով).**— Իմ կարծիքով Աստված է նրանց այդ փողերը տվել և ոչ թե դու: Աստված դաժան է, թուլամորթ չէ: Արևմուտքում սակին ձեռք է հարկում: Բայց դա Աստծունը չէ: Նաև իմը չէ: Հիմա նորից եմ լսում երկնային Տիրոջ ձայնը: Պատվիրում է ամուր մնալ ու տեր կանգնել ագարակին: Տեսնում եմ, թե ինչպես է Էբինի ձեռքը գողության վարժեցնում, իսկ ինձ՝ հեռու պահում գայթակղությունից: Հիմա, ասես, Աստծո ձեռքերի մեջ լինեմ, իսկ նրա մատները պաշտպանում են ինձ: **(Դադար: Հետո թախծոտ մրմնջում է):** Ես ոչ մի անգամ ինձ այսքան մեռակ չեմ զգացել: Տե՛ր Աստված, ծերացել եմ: **(Հետո շակվելով):** Դե լավ... էլ ի՞նչ ես ուզում: Մի՞թե Աստված նույնպես մեռակ չի... Աստված նույնպես դաժան է ու մեռակ: **(Լռություն: Զախակողմյան ճանապարհին երևում են շերիֆն ու նրա երկու օգնականները: Դռան մոտ լսվում են նրանց ոտնաձայները: Շերիֆը ասորճանակի կոթով թակում է դուռը):**

ՇԵՐԻՖ.— Հանուն օրենքի, բացե՛ք դուռը: **(Արբին ու Էբինը վախից ցնցվում են):**

ՔԵԲԹ.— Նրանք ձեր երկուսի համար են եկել: **(Գնում է դեպի խորքի դուռը):** Ներս արի, Զի՛մ... **(Երեքն էլ ներս են մտնում):**

նում: Քերըթը միջանցքում հանդիպում է նրանց): Ջի'մ, նրանք այստեղ են... բոլորովին ողջ և առողջ: (Շերիֆը գլխով է անում և ընկերների հետ սպասում է շեմին):

ԷԲԻՆ (հանկարծ բացականչում է).— Ջի'մ, այս առավոտ ես քեզ խաբեցի: Աբբիին ես եմ ստիպել, որ երեխային սպանի: Ինձ էլ պիտի ձերբակալեք...

ԱԲԲԻ (նշալով).— Ո՛չ...

ՔԵԲԸԹ.— Երկուսին էլ ձերբակալեք: (Մոտենում է Էբինին: Նայում է ցնծությամբ): Ապրե՛ս: Այ հիմա, տղամարդկություն արեցիր: Դե լավ, ես գնամ՝ անասուններին գոմն անեմ: Մնաք բարով:

ԷԲԻՆ.— Գնա՛ս բարով:

ԱԲԲԻ.— Գնա՛ս բարով:

Քերըթը լայն քայլերով անցնում է նրանց կողքով: Դուրս է գալիս բակ: Ուտերը կուչ են եկել, դեմքը՝ քարացել: Տխուր դեպի գոմն է գնում: Նույն պահին շերիֆն ու օգնականները ներս են մտնում:

ՇԵՐԻՖ (խոժոռվելով).— Դե լավ, գնացինք:

ԱԲԲԻ.— Սպասիր: (Նայում է Էբինին): Ես քեզ սիրում եմ, Էբի՛ն:

ԷԲԻՆ.— Ես էլ քեզ եմ սիրում, Աբբի՛: (Նրանք համբուրվում են: Շերիֆի օգնականները ժպտում ու հրմշտում են իրար: Էբինը բռնում է Աբբիի ձեռքը: Նրանք ձեռք-ձեռքի տված դուրս են գնում խորքի դռնից, քայլում մինչև ցանկապատը: Էբինը կանգնում է ու մատնացույց անում արևով ողողված երկինքը): Արևը... բարձրացել է: Գեղեցիկ է, չէ՞:

ԱԲԲԻ.— Ըհը: (Երկուսն էլ մի պահ կանգնում ու նայում են երկրնքին՝ ջերմորեն ու հափշտակությամբ):

ՇԵՐԻՖ (նախանձով նայում է շուրջը: Ընկերներին).— Հրաշալի ազարակ է: Երանի իմը լինեք:

ՈՒՒԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆ

ԿՈՏՈՐԱԾՆ ՄԱՆԿԱՆՑ

(պիես երկու գործողությամբ, հինգ պատկերով)

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

17 տղամարդ, 6 կին, 1 տղա

ԱՐՁԻ
ՌՈՈՒԶ
ԵՐԿՈՒ ՊԱՀՆՈՐԳՆԵՐ
ՊԱՇՏՈՆՅԱ
ՄԵՂԱԳՐՅԱԼ
ԱՏԵՆԱԿԱԼ
ԴԱՏԱՊԱՇՏՊԱՆ
ՎԵՐԱԿԱՑՈՒ
ԴԱՏԱՎՈՐ
ԾԵՐՈՒՆԻ ՄԵՂԱԳՐՅԱԼ
ՄԵՅ ՖՈԼԵՅ

ԿԻՆ
ՋԵՖՐԻ ՋՈՆՍՈՆ
ԱՂՋԻԿ
ԱԲՐԵՆԹԻ
ԷԼԻՆՈՐ
ՏՂԱ
ՍՏԻՎԵՆ ԼՈԿԶԻԳ
ԷՆԹԵԻ ԲԻՔԸՆ
ԳՈՐԳՈՆ ՓԵՉՀԸՄ
ԳՈՐԱ ԼԻՎԻՆԳՍԹՈՆ
ՍԱՄՈՒԻԼ ՔՐՈՖԻԹ
ԼԻՆԴՐ ԼՈՈՒՖՈՐԴ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ

ՊԱՏԿԵՐ ԱՌԱՋԻՆ

Գործողության վայրը Քրուկշանկի փոքրիկ ռեստորանն է: Դրա կողքին ավտոմեքենաների հավաքատեղին է, որը պարսպված է աղյուսե բարձր պատերով: Արչի Քրուկշանկը վաթսուն տարեկան մարդ է: Լոնդոնից քսան տարի առաջ է եկել այստեղ: Նա ինչ-որ թղթեր է աչքի անցկացնում, հետո աթոռը ինքնաբերաբար հրում է սեղանի մոտ: Ներս է մտնում մի աղջիկ:

ԱՐՉԻ.— Դու էիր պակաս, եկար: Ի՞նչ ես ուզում:

ԱՂՋԻԿ.— Ինչ եմ ուզո՞ւմ, Արչի: Լավ հարցեր ես տալիս ինձ հրման հաճախորդին: Ես խմել եմ ուզում, խմել... հասկացա՞ր ինչ եմ ուզում:

ԱՐՉԻ.— Ուզում ես խմել, հա՞: Հապա կարդա ինչ է գրված, հետո խոսիր: **(Մատնացույց է անում):**

ԱՂՋԻԿ **(կարդում է)**.— «ԴԱՏԱՐԱՆ»: Սա ի՞նչ է նշանակում:

ԱՐՉԻ.— Ի՞նչ է նշանակում: Նշանակում է, որ դու չես կարող խըմել:

ԱՂՋԻԿ.— Արչի, հիմարություն մի՛ արա: Հենց հիմա գնում ես վաճառատեղանի ետև ու մի կում վիսկի ես լցնում: Ինչպես անում էիր առաջ, համարյա մի տարի:

ԱՐՉԻ.— Վաճառատեղանի ետև կանցնեմ, բայց այնտեղից կասեմ, որ չքվես այստեղից: Հասկացա՞ր:

ԱՂՋԻԿ **(հուզված)**.— Դե լավ, Արչի, եթե դու էլ ես դաժանացել, եթե դու էլ ես մյուսների նման դարձել... Դու, որ քանի տարվա ընկերս էիր, իսկ քո ռեստորանը ընկերոջս տունն էի համարել, եթե դո՛ւ էլ ես մյուսների պես դարձել, այդ դեպքում կգնամ ու մտքումս կասեմ՝ ընկերս էլ մյուսների պես դաժան մարդ դարձավ:

ԱՐՉԻ.— Խնդրում եմ, բլբլոցիդ վե՛րջ տուր: Չտեսա՞ր, դուան վրա ցուցանակ կար կախված: Այստեղ գալու ժամանակ գտար: Իմ ռեստորանը հիմա «ԴԱՏԱՐԱՆ» է:

ԱՂՋԻԿ.— Տեսա, Արչի, տեսա: Դե՛, կարծեցի մեկնումեկը որոշել է վրադ ծիծաղել, դրա համար է այդ ցուցանակը կախել: Դա այնքան էլ մեծ ցուցանակ չէ: Քո ռեստորանինն ավելի՞

մեծ է. «ՔՐՈՒԿԾԱՆԿԻ ՄՈՏ ԿԱՐԵԼԻ Է ԾԱԾԵԼ ԵՎ ԶՐՈՒՑԵԼ»:

ԱՐՁԻ.— Միևնույն է, սա հիմա դատարան է: Գործ չունես, գնա՛:

ԱՂՋԻԿ.— Երբվանի՞ց է դատարան դարձել:

ԱՐՁԻ.— Գիշերվա ժամը երեքին եկան, անկողնուցս հանեցին ու հենց աստիճաններից հայտնեցին լուրը: Նրանք ինձ այս տղայագիր հանձնարարականները տվեցին, հետո բանավոր հասկացրին, իսկ վերջում ակնարկներով... մի խոսքով, շատ բան հասկացրին:

ԱՂՋԻԿ.— Ո՞վ է այդ բանն արել, Արչի՛:

ԱՐՁԻ.— Ո՞վ: (**Մատնացույց է անում ցուցանակը**): Գնա կարդա, իմացիր: Երևի հենց հիմա էլ գան: Այն պահին, երբ հանձնարարականները տվեցին, զարթուցիչի սլաքը ուղղեցի: Դատական նիստը սկսվելու է ժամը տասին: Դեռ տասնհինգ րոպե կա: Լավ կլինի հեռանաս այստեղից:

ԱՂՋԻԿ.— Թույլ տուր մնամ, Արչի՛: Ես ոչ մի անգամ դատավարություն չեմ տեսել: Ասում են՝ այդ փաստաբանները փաստաբաններ չեն, դատավորները դատավորներ չեն, և ոչ մեկը իր գործից ոչինչ չի հասկանում, բայց ձևացնում է, իբր, ամեն ինչ գիտի: Եվ դատում են: Թող Աստված օգնական լինի նրան, ով դժբախտություն կունենա նրանց ճանկն ընկնելու:

ԱՐՁԻ.— Հենց հիմա ամենադժբախտը դու կլինես, եթե նրանց ճանկն ընկնես:

ԱՂՋԻԿ.— Ինձ ի՞նչ պետք է անեն... հանրապետության թշնամի եմ, ինչ եմ:

ԱՐՁԻ.— Այդպե՛ս... Ապա կարդա այս անունները, որոնց հանրապետության թշնամիներ են համարում: Ահա... (**Նա մատնի շեղցնում է էջն ի վար, հանկարծ կանգ է առնում**): Խնդրեմ, ինքդ կարդա:

ԱՂՋԻԿ.— Ինձ դուր չի գալիս նրանց արտահայտվելու ձևը: Կարծում եմ, կարելի է մի քիչ քաղաքավարի լինել դատավարության ժամանակ: Կտեսնես, նրանք ոչինչ չեն կարող ապացուցել: Թույլ տուր մնամ՝ այդ դատավարությունը նայեմ:

ԱՐՁԻ.— Սա քո համար թատրոն չի:

ԱՂՋԻԿ.— Բայց, Արչի՛, մենք հին ընկերներ ենք, չէ՞: Եթե խմելու բան չես տալիս, գոնե թույլ տուր դատավարությունը տեսնեմ: Աստված վկա, ես բոլորովին միայնակ եմ: Գնալու տեղ

չունենա: Պարզապէս որոշել էի գալ այստեղ ու մի քիչ հանգրտանալ:

ԱՐՁԻ.— Իմ ռեստորանը առաջվանը չէ: Հեռացիր, թե չէ որ նրանց ճանկն ընկար...

ԱՂՋԻԿ.— Իհարկէ: Հոգուդ խորքում դեռ սեր մնացել է: Ես դա գգում եմ: Եթե իմ մասին չմտածեիր, կասեիր՝ մնա: Ես շատ երախտապարտ եմ, Արչի՛, որ դեռ մտածում ես իմ մասին:

ԱՐՁԻ.— Եթե երախտապարտ ես, գնա:

ԱՂՋԻԿ.— Հա՛, Արչի՛: (Շրջվում է, որ գնա): Դե՛, մնաս բարով... Բայց քո ռեստորանի համար շատ եմ տխրում:

ԱՐՁԻ.— Ինչո՞ւ: (Նա աչքի է անցկացնում սեղանի վրայի հանձնարարականները): Դե... իմ ռեստորանը միայն մի օրով է դատարան լինելու: Չգիտեմ, այստեղ գրվա՞ծ է, որ դատական նիստը մեկ օրից ավել տևի:

ԱՂՋԻԿ.— Իսկ գրվա՞ծ է, որ դատական նիստը միայն մեկ օրով է լինելու:

ԱՐՁԻ.— Ոչ:

ԱՂՋԻԿ.— Դե ուրեմն, նրանք ինչքան ուզեն, կարող են մնալ քո ռեստորանում: Գուցէ նաև ընդմիջտ:

ԱՐՁԻ.— Իրավունք չունեն: Ես մշտական հաճախորդներ ունեմ: Ես փոքր, բայց լավ բիզնես եմ սկսել: Դե իհարկէ՛, դատական նիստը մեկ օր է տևելու:

ԱՂՋԻԿ.— Լավ, արի հուսանք, որ այդպէս լինի:

ԱՐՁԻ.— Իսկ հիմա գնա: Ի՞նչ ես առավոտ շուտ եկել հոգիս պղտորում:

ԱՂՋԻԿ.— Ե՛ս, Արչի՛... Ե՛ս եմ հոգիդ պղտորում: Գոնե դու այդ բանը չասեիր... Բայց ճշմարտությունը չպետք է թաքցնել. դու ընկել ես նրանց ճանկը:

ԱՐՁԻ.— Գրողի ծոցը, թե չեմ ընկել:

ԱՂՋԻԿ.— Բայց տեսնես ինչո՞ւ են հենց քո ռեստորանն ընտրել: Ինչ է, դատարանի համար ավելի հարմար տեղ չէի՞ն կարող գտնել:

ԱՐՁԻ.— Որովհետև իմ ռեստորանի կողքին ավտոմեքենաների հավաքատեղին է՝ աղյուսե բարձր պատերով շրջապատված: Հասկացա՞ր: Նրանք այդպէս ասացին: Հիմա հասկացա՞ր:

ԱՂՋԻԿ.— Իսկ աղյուսե բարձր պատերն ու ավտոմեքենաների հավաքատեղին նրանց օգնելո՞ւ են, ինչ է:

ԱՐՉԻ.— Նրանք գիշերով եկան այստեղ՝ կարմիր լուսարձակներով: Տեղանքը նայեցին: Դատավորը ա՛յ այստեղ՝ իմ կանգնած տեղում է կանգնելու, ասե՛նակալն ու դատապաշտպանը նստելու են այն սեղանների մոտ, կամ ետ ու առաջ են քայլելու վաճառասեղանի առջև:

ԱՂՋԻԿ.— Իսկ մեքենաների հավաքատեղին ի՞նչ են անելու:

ԱՐՉԻ.— Ո՞վ գիտե: Երևի մեղադրյալներին այնտեղ են պահելու: Դա քո ի՞նչ գործն է: Գնա այստեղից, քանի դեռ ուշ չէ:

ԱՂՋԻԿ.— Վախե՛նում եմ, Արչի՛: Հիմա այնքան շատ մարդիկ են ինքնասպանություն գործում... Կրակում են, թույն են խմում, պատուհանից են իրենց զցում, մեքենաներն են քշում իրար վրա, կամ լեռան գլխից են ցած նետվում: Ծատերը իրենց հետ նաև երեխաներին, ամուսիններին, կանանց, հայրերին ու մայրերին են սպանում: Առավոտյան հենց թերթը բացում ես՝ ամենաքիչը հինգ-վեց հոգի... Ծիշտ է, անծանոթ են, բայց նրանք կին են, հայր, մայր, երեխա... Ես այնպես եմ վախե՛նում, Արչի՛:

ԱՐՉԻ.— Հանգստացի՛ր, հանգստացիր:

ԱՂՋԻԿ.— Իսկ փողոցներում ինձ շատ մե՛նակ ու տխուր եմ զգում: Մտածում եմ զնազ մի տեղ, նստել մի քիչ հանգստանալ, բայց ուս մի տեղ քո սեւտորակի նման չէ: Միայն այստեղ չեմ վախե՛նում: Սեղանիս պարզապես ինքնասպանություն գործելու տեղ է: Որ մե՛նակ եմ լինում, Աստված վկա, Արչի՛, ուզում եմ ես էլ... Ուրիշ ի՞նչ կարող ես անել: Բայց հիմա ուշ է: Հետո կարիք էլ չկա: Եվ այդ րոպեներին քո ռեստորանն եմ հիշում ու ինքս ինձ ասում. դե, Արչին մի հինգ ժամից հետո կբացի, կգնամ այնտեղ, մի բան կխմեմ: Մի քիչ էլ համբերիր, ստում եմ ինքս ինձ: Վաղը երևի բարեհաջող օր լինի: Դեռ ինչ-որ բան կարող է փոխվել: Ինչ-որ մեկը կարող է հանդիպել քեզ... Արչի՛, այնպես եմ զզվել այս բոլորից: Դեռ առավոտ շուտ, ոտքս ռեստորանից ներս չդրած, սկսեցիր վրաս գոռոռալ: Դու ոչ մի անգամ հետս այդպես չէիր վարվել:

ԱՐՉԻ.— Իսկ իմ ռեստորանն էլ ոչ մի անգամ դատարան չէր դարձել: Լավ կլինի հեռանաս այստեղից:

ԱՂՋԻԿ.— Ասացի վախե՛նում եմ: Չե՛ս հասկանում, ինչ է: Վախե՛նում եմ՝ հենց զնամ, այլևս ինձ չես տեսնի: Հավիտյան չես տեսնի: Ծիշտն ասած, քո ռեստորանից ավելի լավ տեղեր

կան: Կարելի է եկեղեցի գնալ, բայց դա իմ ինչ գնալու տեղն է: Ծուկա՞ գնամ, կամ զբոսայգի՞, որտեղ գեղեցիկ թռչնակներ կան, ուրախ ծլվացող գեղեցիկ թռչնակներ... բայց դա իմ տեղը չի, Արշի՛: Գրադարան գնամ, նստեմ մի բան կարդամ... բայց ի՞նչ անեմ, որ կյանքումս ոչ մի անգամ սրտամոտ գիրք չեմ գտել: Ես միայն այստեղ եմ հանգստանում: Ծիշտ է, քո ռեստորանը տուն չի, բայց մի տեսակ տան նրման է: Ես այստեղ, հանգիստ նստած, վիսկի եմ խմում, ինչ-որ բան հուսալով: Եվ վիսկի խմելով ինքս ինձ համոզում եմ, որ դեռ կարելի է ինչ-որ բանի սպասել՝ ինչ-որ թանկ բանի: Ես ուրիշ տեղերում էլ եմ վիսկի խմել, բայց քո ռեստորանինն ուրիշ է: **(Հուսահատված):** Արշի՛...

ԱՐՁԻ.— Քեզ ի՞նչ եղավ, աղջի՛կ:

ԱՂՋԻԿ.— Մեր բռնորի հետ ինչ-որ բան է կատարվում: Ահավոր մի բան... մահվան պես ահավոր... Աստվա՛ծ, երանի այսքան թույլ ու տկար շլիների, երանի մի գործ կարողանալի անել... թեկուզ մատուցողուհի դառնալի, կամ նման մի բան: Բայց հոգնած եմ: Մեջքս, ոտքերս, ձեռքերս ջարդվում են, գլուխս պայթում է: Չգիտեմ ինչն է պատճառը: Հենց որ մի գործ եմ սկսում, կես ժամից հետո հոգնում եմ: Գուցե թույլ եմ: Թույլ ու վախեցած: Ես չեմ ուզում գնալ: Ես նաև գնալուց եմ վախենում:

ԱՐՁԻ.— Վախենալու կարիք չկա: Իմ ռեստորանը միայն մեկ օրով է դատարան լինելու: Վաղը դու շատ հանգիստ կարող ես այստեղ վիսկի խմել: Լավ կլինի: Ամեն ինչ լավ կլինի:

ԱՂՋԻԿ.— Նրանք կմնան, Արշի՛: Կտեսնես, կմնան, չեն գնա: Եթե նրանք արդեն զբաղեցրել են բոլոր դպրոցները, եկեղեցիները, թանգարանները և հիմա հերթը հասել է ռեստորանին, որ դատարան դարձնեն, անպայման կմնան, չեն գնա:

ԱՐՁԻ.— Լավ կլինի կամաց խոսես: Կլսե՛ն:

ԱՂՋԻԿ.— Ես չգիտեմ ինչ եմ ասում, Արշի՛: Հիմա, երբ քեզ հետ եմ խոսում, ասում եմ, որ նրանք կմնան, չեն գնա: Այս բանը ուրիշ ոչ մեկի չէի ասի:

ԱՐՁԻ.— Աստճո սիրուն, գնա այստեղից: Գուցե դուան ետևում ինչ-որ մեկը կա...

ԱՂՋԻԿ.— Մնաս բարով, Արշի՛: Հաջողությու՛ն:

(Ներս են մտնում երկու պահնորդներ՝ սվինավոր հրացան-

ներով: Նրանց ետևից՝ բարձրահասակ, վաթսուն տարեկանին մոտ մի մարդ, որ նույն համազգեստն է կրում, միայն թե կրծքին ավելի շատ շքանշաններ կան: Կառավարության պաշտոնյա է: Նա նրկատում է աղջկան):

ՊԱՇՏՈՆՅԱ.— Մի՛ստր Քրուկշանկ, կարծում եմ ձեր աղջիկն է, այնպես չէ՞: Դե՛, իհարկե, նրա համար էլ այստեղ աշխատանք կճարվի:

ԱՐՁԻ.— Մի վայրկյան, գեներալ:

ՊԱՇՏՈՆՅԱ.— Ներեցեք, մի՛ստր Քրուկշանկ, մենք կարիք կունենանք նաև ձեր դստեր ծառայությանը: Ձեր անո՛ւնը, օրիո՛րդ:

ԱՂՋԻԿ.— Ռոուզ:

ՊԱՇՏՈՆՅԱ.— Ռոուզ Քրուկշանկ: Որտե՞ղ եք աշխատում, ինչո՞վ եք զբաղվում, ի՞նչ մասնագիտություն ունեք:

ԻՌՈՒԶ.— Ես... ես հորս եմ օգնում:

ՊԱՇՏՈՆՅԱ.— Ժատ բարի: Իսկ հիմա, մի՛սա Քրուկշանկ, խընդրում եմ կանգնեք այստեղ՝ որպես վկա ժողովրդի անունից: Սովորաբար մենք խուսափում ենք դատական նիստի ժամանակ իզուր ժամանակ վատնել, բայց երբ հնարավոր կամ հարմար է լինում, այնուամենայնիվ, վկա ենք կանչում՝ ժողովրդի անունից: Խնդրում եմ բարձրացրեք ձեր աջ ձեռքը: (**Աղջիկը բարձրացնում է ձեռքը**): Կրկնեք ինչ որ ասում եմ: Ես՝ Ռոուզ Քրուկշանկս, երդվում եմ, որ կյանքս պատկանում է ոչ միայն ինձ, այլև ամբողջ ժողովրդին:

ԻՌՈՒԶ (**արագ-արագ քրթմնջալով**).— Ես՝ Ռոուզ Քրուկշանկս, երդվում եմ, որ կյանքս պատկանում է ոչ միայն ինձ, այլև ամբողջ ժողովրդին:

ՊԱՇՏՈՆՅԱ.— Հրաշալի է: (**Արշիին**): Մի՛ստր Քրուկշանկ, ինչպես երևում է, ամեն ինչ կարգին է:

ԱՐՁԻ.— Ես... ուզում էի հարցնել...

ՊԱՇՏՈՆՅԱ.— Դե՞, լսում եմ:

ԱՐՁԻ.— Ուզում եմ հարցնել, երկա՞ր ժամանակով շնորհ կանեիք...

ՊԱՇՏՈՆՅԱ.— Դե... մինչև դատական նիստը կավարտվի:

ԱՐՁԻ (**հանկարծակիի եկած**).— Լավ, սը՛ր:

ՊԱՇՏՈՆՅԱ.— Պահնորդներ, դատարանը ներս հրավիրեք: Նրանց հետ թող ներս գա նաև առաջին մեղադրյալը: (**Պահնորդները դուրս են գնում: Պաշտոնյան քայլում է վաճառա-**

սեղանի մոտ: Դատական ատյանը ներս է մտնում: Նրանց հետ նաև մի երիտասարդ, որ մեղադրյալն է: Դիմելով երիտասարդին): Կանգնե՛ք այստեղ:

ՄԵՂԱԴՐՅԱԼ.— Լսում եմ, սը՛ր: (Նա անցնում է վաճառասեղանի ետև):

ՊԱՇՏՈՆՅԱ.— Դատավարությունը կընթանա սովորականի պես: Մյուս մեղադրյալները սպասում են դրսում, այնպես չէ՞:

ՄԵՂԱԴՐՅԱԼ.— Այո, սը՛ր:

ՊԱՇՏՈՆՅԱ (դիմելով ներս եկածներից մեկին).— Սա ժողովրդական ատենակալի սեղանն է: (Մյուսին): Իսկ սա դատապաշտպանինն է: (Նրանք զնում են իրենց սեղանների մոտ): Այստեղ պետք է վերակացուն նստի: Ատենակալը պետք է դատարանին ծանուցի հանցագործության էությունը: Դատապաշտպանը հանդես կգա՝ ելնելով մեղադրյալի շահերից: Վերակացուն կապառի դատավճիռը հայտարարելուն, կկնքի մեղադրյալի փաստաթղթերը: Դատապարտյալին այն դռնով կտանեն աղյուսե պատերի տակ... պահակազորն այնտեղ է, այնպես չէ՞:

ՎԵՐԱԿԱՑՈՒ.— Այո, սը՛ր:

ՊԱՇՏՈՆՅԱ.— Հարկ եղած դեպքում նրանք ի կատար կածեն դատավճիռը: Հիմա... մեղադրյալ՛ը, կանգնեք այնտեղ: (Պաշտոնյան սա ասում է այն մարդուն, որ մյուսներից ավելի հանցավոր արտաքին ունի):

ԴԱՏԱՎՈՐ (մատնացույց անելով վաճառասեղանի ետևում կանգնած մարդուն).— Մեղադրյալը հա է, սը՛ր:

ՊԱՇՏՈՆՅԱ.— Իսկ դո՛ւք ով եք:

ԴԱՏԱՎՈՐ.— Ես դատավորն եմ, սը՛ր:

ՊԱՇՏՈՆՅԱ.— Ծատ բարի: (Դիմելով մեղադրյալին): Խնդրում եմ կանգնեք այնտեղ: (Դատավորին): Իսկ դուք կանգնեք վաճառասեղանի ետևում: (Դիմելով բոլորին): Միստր Քրուկշանկն ու նրա աղջիկը կմնան դատարանում. հայրը ծառայություն մատուցելու, աղջիկը՝ որպես վկա ժողովրդի անունից: Կարծում եմ ամեն ինչ հասկանալի է: (Դատավորին): Դե՛, սկսե՛ք:

ԴԱՏԱՎՈՐ.— Խնդրում եմ սկսել առաջին մեղադրյալի գործը:

ԱՏԵՆԱԿԱԼ (թղթերի կույտից մի քանի թերթ վերցնելով).— Էդ վարթ էլիճաթոն: Այդպե՛ս է ձեր անունը, այո՞:

ՄԵՂԱԴՐՅԱԼ.— Այո, սը՛ր:

ԱՏԵՆԱԿԱԼ.— Մեղադրյալը քսանյոթ տարեկան է: Ամուսին: Երեխաներ չունի: Մահափորձ է կատարել աշխատանքի ծառայության քլերկի՝ վրա: (Հապշտապ վերջացնում է):

ԴԱՏԱՎՈՐ.— Ծարունակեք խնդրում եմ:

ԱՏԵՆԱԿԱԼ.— Այսքանն է, սը՛ր:

ԴԱՏԱՎՈՐ.— Ի՞նչ զեներով կամ զեներքերով է հարձակվել մեղադրյալը:

ԱՏԵՆԱԿԱԼ.— Ջենքի մասին ոչինչ չի հիշատակված, սը՛ր:

ԴԱՏԱՎՈՐ.— Դատապաշտպա՛ն, խնդրեմ:

ԴԱՏԱՊԱԾՏՊԱՆ.— Լսում եմ, սը՛ր:

ԴԱՏԱՎՈՐ.— Սկսեք:

ԴԱՏԱՊԱԾՏՊԱՆ (դիմելով մեղադրյալին).— Ինքների պատմեք դատարանին, թե ինչպես է հանցագործությունը կատարվել:

ՄԵՂԱԴՐՅԱԼ.— Դե, ինչ ասեմ: Մի գործ էի ճարել, ինձ համար աշխատում էի: Հետո աշխատանքի ծառայության գրասենյակից ինչ-որ մեկը եկավ ու ինձ ազատեց աշխատանքից: Ասաց՝ այդ գործը, որ հիմա անում ես, օրենքով չի, որովհետև իրենց գրասենյակը չի տվել: Աշխատանքի ծառայության գրասենյակից պետք է այդ գործն ստանայի: Բայց ես երեք ամիս շարունակ առավոտյան ժամը վեցից մինչև իրիկվա յոթը գրում, կանգնում էի նրանց գրասենյակի դռանը, իսկ քլերկն ինձ աշխատանք չէր տալիս: Մի օր էլ չհամբերեցի, հարցրի՝ ե՞րբ պետք է ինձ աշխատանք տաք: Նա էլ թե՛ հույս չունեցա: Հարցրեցի՝ բայց ինչո՞ւ: Նա պատասխանեց՝ «Դու ինքնագլուխ երեք անգամ աշխատանք ես գտել: Իսկ մեզ հանձնարարված է աշխատանքի տեղավորել նրանց, ովքեր օրինական ճանապարհով են այն փնտրում»: Հարցնում եմ՝ բա ինչպե՞ս պետք է ասրեմ: Նա էլ միանգամից, թե՛ դու չպետք է ասրես: Իմ տեղն ո՞վ լիներ չէր կատարի: Դե ես ինձ զրույում էի, որ օրենքի դեմ չգնայի, բայց կատարեցի ու ասացի. «Որ այդպես է, դուք էլ չպետք է ասրեք»: Հետո ուսից բռնեցի, քաշեցի դուրս իր գրասենյակից:

ԴԱՏԱՎՈՐ.— Ծարունակեք:

ՄԵՂԱԴՐՅԱԼ.— Նա գոռոռում էր, հետո քացով խփեց: Երկուսով սայթաքեցինք, ընկանք: Այդ պահին ոստիկաններ եկան: Նրանցից մեկը իր գավազանով խփեց քլերկի գլխին, հետո

գետնից բարձրացրին, մտան թևերն ու տարան: Ես գնացիտուն: Մի երկու կտոր ցամաք հաց կար: Կերա, քնեցի: Իսկ գիշերվա կեսին՝ այս գիշերվա, ուտիկանները եկան ու ինձ տարան:

ԴԱՏԱՎՈՐ.— Ատենակա՛լ, դուք ընդունո՞ւմ եք, որ մեղադրյալը միանգամայն հանցավոր է:

ԱՏԵՆԱԿԱԼ.— Այո՛: Միանգամայն:

ԴԱՏԱՎՈՐ.— Դատապաշտպա՛ն, իսկ դո՞ւք:

ԴԱՏԱՊԱՇՏՊԱՆ.— Դատարանի հրամանքով... բայց չէ՞ որ մեղադրյալը չի խփել քլերկի գլխին:

ԱՏԵՆԱԿԱԼ.— Բայց նա հենց նոր խոստովանեց, որ քաշել է նրա ուսից: Այդպես չէ՞:

ԴԱՏԱՊԱՇՏՊԱՆ.— Նա շատ բարկացած է եղել: Ես հարցնում եմ՝ արդյոք մեղադրյալը մտադի՞ր է եղել սպանելու քլերկին:

ԴԱՏԱՎՈՐ.— Դատապաշտպա՛ն, խնդրում եմ դատավարության հետագա ընթացքը թողնել Աստանին:

ԴԱՏԱՊԱՇՏՊԱՆ.— Լսում եմ, սը՛ր:

ԴԱՏԱՎՈՐ (մեղադրյալին).— Էլ ուրիշ ոչինչ չունե՞ք ասելու:

ՄԵՂԱԴՐՅԱԼ.— Ես ոչ միանգամ չեմ փորձել օրենքի դեմ գնալ: Պարզապես ուզում էի օրինական աշխատանք գտնել, որ հետո ինձ գործից չազատեին: Ես ուզում եմ ամուսնանալ և ընտանիք կազմել:

ԴԱՏԱՎՈՐ.— Ուրի՞շ... ի՞նչ կկամենայիք ասել:

ՄԵՂԱԴՐՅԱԼ.— Մտքովս երբեք վատ բան չի անցել:

ԴԱՏԱՎՈՐ.— Ուրեմն քլերկը քեզ ասաց՝ «Դու չպետք է ապրես», իսկ դու պատասխանեցիր՝ «Դու էլ չպետք է ապրես» և հարձակվեցիր նրա վրա: **(Լռություն):** Պատասխանեք դատարանին, խնդրում եմ: Այդ ասելուց հետո հարձակվեցիք նրա վրա: Ծի՞շտ է:

ՄԵՂԱԴՐՅԱԼ.— Ես պարզապես նրա ուսից քաշեցի և հանեցի գրասենյակից:

ԴԱՏԱՎՈՐ.— Մեղավոր է: **(Կարճատև լռություն):** Պահնորդներ: Բարձրացրե՛ք:

ՊԱՇՏՈՆՅԱ.— Մի բոպե, խնդրում եմ: Բոլոր մեղադրյալներին իրավունք է վերապահվում վերջին հայցով դիմելու դատարանին: **(Մեղադրյալին):** Նման դեպքերում սովորաբար սիգարետք են խնդրում: Ելնելով ներկա հանգամանքից, որ դա-

տարանը գտնվում է ռեստորանում, մեղադրյալը կարող է նաև խմիչք խնդրել:

ՄԵՂԱԴՐՅԱԼ.— Մի բան լինեք կուտեի:

ՊԱՇՏՈՆՅԱ.— Դա երկար ժամանակ կլիի: Վիսկի՞, թե՞ սիգարեթ:

ՄԵՂԱԴՐՅԱԼ.— Դե լավ, նախ կխմեմ, հետո կարելի է ծխել:

ՊԱՇՏՈՆՅԱ.— Կարծում եմ կարելի է: Միտոք Քրուկշանկը հիմա կգբադվի այդ հարցով:

ԱՐՁԻ (մտտեցում է մեղադրյալին).— Ի՞նչ ես ուզում, տղա՛ս:

ՄԵՂԱԴՐՅԱԼ.— Կոնյակ:

ՊԱՇՏՈՆՅԱ.— Մի՛ստք Քրուկշանկ, խնդրում եմ պահել խմիչքների հաշիվը և լրացնել ՅՅՅ ձևը, որպեսզի հետո պետության գանձարկղից ստանաք այդ գումարը:

ԱՐՁԻ (կոնյակը լցնում է բաժակը, տալիս է մեղադրյալին, որը իսկույն կոնծում է).— Էլ ուրիշ ոչինչ չէի՞ք ուզում, տղա՛ս:

ՊԱՇՏՈՆՅԱ.— Մի՛ստք Քրուկշանկ, կառավարությունը յուրաքանչյուր մեղադրյալի համար միայն մեկ բաժակի արժեքն է վճարելու: Բայց եթե կամեցում եք, կարող եք նաև երկրորդ բաժակը հյուրասիրել... ձեր հաշվին:

ԱՐՁԻ (երկրորդ բաժակն է լցնում, տալիս է մեղադրյալին, որը նորից է կոնծում).— Ի՞նչ ես ծխում:

ՄԵՂԱԴՐՅԱԼ.— Հիմա ինչ էլ լինի, կծխեմ: Ծնորհակալություն, մի՛ստք Քրուկշանկ: **(Տուփից մի սիգարեթ է վերցնում, վառում է այն):**

ՊԱՇՏՈՆՅԱ.— Ծատ բարի: Պահնորդներ: **(Պահնորդները մեղադրյալին տանում են դուրս):** Մեղադրյալի գործի քննությունը կկատարվի ընդունված կանոնադրության համաձայն: Հաջորդ մեղադրյալի հարցաքննությունը կսկսվի միայն պատիժը ի կատար ածելուց հետո: Պա՞րզ է:

ԲՈՂՈՐԸ.— Այո, սը՛ր:

ԲԱՐՁՐ ՋԱՅՆ (դրսից).— Հանրապետության պահնորդներ, հանուն ժողովրդի...

ԽՄԲԱՋԱՅՆ (դրսից).— Հանուն ժողովրդի...

(Լավում է հրացանների համազարկ):

ՊԱՇՏՈՆՅԱ.— Ծարունակե՞ք մեր աշխատանքը:

ԴԱՏԱՎՈՐ.— Խնդրում եմ կանչել մյուս մեղադրյալին: **(Պահնորդները ներս են բերում հալից ընկած մի ծերունու):**

ՊԱՇՏՈՆՅԱ.— Ուրեմն, ժամը մեկից մինչև մեկն անց երեսունը
րոպե ընդմիջում: Միսոր Քրուկշանկը հոգ կտանի, որ բոլորը
նախաճաշեն և կվարձատրվի կառավարության կողմից: Դա-
տականն նիստը կավարտվի ժամը հինգին: Հիմա, բանի որ
ամեն ինչ կարգին է, մեր աշխատանքը շատ արագ կընթա-
նա: Դուք ստիպված կլինեք շատ արագ աշխատելու: Հիմա
արտակարգ լարված վիճակ է: Դատաբանությունը շատ ա-
րագ պետք է կատարվի: Մեղադրյալներին շտապ պետք է
ներս բերել ու դուրս տանել: Ծարունակեք, խնդրում եմ:

ԱՐՁԻ.— Ներեցեք, սը՛ր, ես ուզում էի առևտուրս շարունակելու
թույլտվություն ստանալ, երբ դատարանը գնա ընդմիջման:

ՊԱՇՏՈՆՅԱ.— Սա ռեստորան է, այնպես չէ՞:

ԱՐՁԻ.— Այո, սը՛ր:

ՊԱՇՏՈՆՅԱ.— Իսկ կարելի՞ է այստեղ գիշերել:

ԱՐՁԻ.— Ոչ, սը՛ր:

ՊԱՇՏՈՆՅԱ.— Ուրեմն վերևի սենյակում միայն ձեր աղջկա հե՞տք
եք ապրում:

ԱՐՁԻ (կամացուկ).— Այո, սը՛ր:

ՊԱՇՏՈՆՅԱ.— Դատականն նիստը սկսվում է տասին, իսկ հինգին
փակվելու է: Հինգից մինչև մեկը, նկատի ունեմ գիշերվա մե-
կը, ձեր ռեստորանում կարելի է ութ ժամ նորմալ առևտուր ա-
նել: Բայց դուք, մի՛սոր Քրուկշանկ, պարտավոր եք հնարա-
վոր ամեն բան անել, որպեսզի առավոտյան ժամը տասին
դատականն նիստը կանոնավոր շարունակի իր աշխատանքը:
Մենք ոչ մի վարկյան չպետք է կորցնենք:

ԱՐՁԻ.— Լավ, սը՛ր:

ՊԱՇՏՈՆՅԱ.— Դե ուրեմն շարունակեք:

ԾԵՐ ՄԵՂԱԴՐՅԱԼ.— Իսկ ե՞ս... ի՞նչ եք ուզում ինձանից: Ես
ի՞նչ եմ արել: Ես յոթանասուներեց տարեկան եմ: Ի՞նչ վա-
տություն եմ արել:

ՊԱՏԿԵՐ ԵՐԿՐՈՐԴ

Ժամը հինգին երկու րոպե է պակաս: Դատավորը, ատենա-
կալը, վերակացուն՝ իր կնիքով, դատական պահնորդները, բոլորը,
իրենց տեղերում են:

ՄԻ ԶԱՅՆ (դրսից).— Հանրապետության պահնորդներ, հանուն ժողովրդի...

ԽՄԲԱԶԱՅՆ (դրսից).— Հանուն ժողովրդի...

(Հրացանների համազարկ):

ԴԱՏԱՎՈՐ.— Խնդրում եմ կանչել մյուս մեղադրյալին:

ԱՐՁԻ.— Բայց չեք հասցնի: Հինգից երկու թույլ է պակաս:

ԴԱՏԱՎՈՐ.— Պահնորդներ, խնդրում եմ կանչել մյուս մեղադրյալին: **(Պահնորդներն արագ դուրս են գալիս):** Մի'սոր Բըրուկշանկ, երկու թույլում ահագին գործ կարելի է անել: Հիմա կտեսնես: Այդ երկու թույլի արժեքը պետության համար...

(Պահնորդները ներս են գալիս՝ իրենց հետ բերելով բարկացած մի երիտասարդի, որ ատելությամբ նայում է դատական կազմին): Խնդրում եմ, շտապեք:

ԱՏԵՆԱԿԱԼ.— Ջոզեֆ Մուր: Երեսունմեկ տարեկան: Հասարակությանն նկատմամբ ունեցած անպատասխանատվության երկար պատմություն: Ամուրի: Երեխաներ չունի: Ինքնասպանության փորձ է կատարել:

ԴԱՏԱՎՈՐ.— Խնդրում եմ, շտապեք: Ինքնասպանություն'ն. ի՞նչ ձևով է փորձել..

ԱՏԵՆԱԿԱԼ.— Չափից դուրս խմելով:

ԴԱՏԱՎՈՐ.— Դատապաշտպա՛ն, խնդրեմ:

ԴԱՏԱՊԱԾՏՊԱՆ.— Գիտականորեն չի հիմնավորված, ինչքան պետք է հարբել, որ...

ԴԱՏԱՎՈՐ.— Խնդրում եմ պահպանել դատավարության կարգը: Մենք ժամանակ չունենք:

ԴԱՏԱՊԱԾՏՊԱՆ.— Բավական է մի հայացք գցել մեղադրյալի վրա և պարզ կդառնա, որ նա...

ԴԱՏԱՎՈՐ.— Մեղավոր է: **(Մեղադրյալին):** Չէի՞ք կամենա վերջին հայցով դիմել դատարանին:

ՄԵՂԱԴՐՅԱԼ.— Ուզում եմ: **(Կարճատև լռություն):**

ԴԱՏԱՎՈՐ.— Դե խոսեք: Ո՞ւմ եք սպասում:

ՄԵՂԱԴՐՅԱԼ.— Երջանիկ ծննդյան օր:

ԴԱՏԱՎՈՐ.— Երջանիկ ծննդյան օ՞ր: Մենք հանելուկներ լուծելու ժամանակ չունենք: Կատավարությունը մեծահոգաբար մի քանի վայրկյան է շնորհում ձեզ, որպեսզի վերջին անգամ առանց հանելուկների խոսեք: Դե, ի՞նչ եք ուզում ասել:

ՄԵՂԱԴՐՅԱԼ.— Երջանիկ ծննդյան օր: Ուզում եմ ծնվել...

ԴԱՏԱՎՈՐ.— Դուք կարող եք ծխել և խմել:

ՄԵՂԱԴՐՅԱԼ.— Ուզում եմ ծնվել, քանի դեռ ուշ չէ:

ԴԱՏԱՎՈՐ.— Պահնորդներ՛ր, անցեք գործի: (Պահնորդները զընում են դուրս, իրենց հետ տանելով երիտասարդին, որ դռան մոտ կանգ է առնում, շրջվում է ու բացականչում):

ՄԵՂԱԴՐՅԱԼ.— Բոլորիդ, բոլորիդ խնդրում եմ չմոռանալ:

ԴԱՏԱՎՈՐ.— Պահնորդներ՛ր, շտապե՛ք... (Պահնորդները երիտասարդին դուրս են տանում):

ՄԻ ԶԱՅՆ (դրսից).— Հանրապետության պահնորդներ՛ր, հանուն ժողովրդի...

ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ԶԱՅՆԸ (դրսից).— Երջանիկ ծննդյան օր...

ԽՄԲԱԶԱՅՆ (դրսից).— Հանուն ժողովրդի...

(Հրացանների համազարկ):

ԴԱՏԱՎՈՐ.— Դատարանը հայտարարում է ընդմիջում մինչև առավոտյան ժամը տասը: (Դուրս գալով վաճառատեղանի ետևից): Տեսա՛ք, մի՛սոր Բրուկշանկ, երկու րոպեում էլ կարելի է ահագին գործ կատարել: Ուրեմն, մինչև առավոտյան ժամը տասը: (Դուրս է գալիս, մյուսները հետևում են նրան: Ռոուզը վազում է դեպի ավտոմեքենաների հավաքատեղին տանող դուռը, մինչդեռ Արչին շփոթված կանգնում է ռեստորանի կենտրոնում):

ՌՈՈՒԶ.— Հիմա ի՞նչ ենք անելու, Արչի՛:

ԱՐԶԻ.— Ինչ ենք անելո՞ւ: Էլ ի՞նչ պիտի անենք: Հիմա ես մինչև երեկոյան ժամը մեկը իրավունք ունեմ ռեստորանս բացելու: Եթե իհարկե մեկնումեկը համարձակվի այստեղ գալ:

ՌՈՈՒԶ.— Ինչո՞ւ չեն համարձակվի, Արչի՛:

ԱՐԶԻ.— Հիմա բոլորը մահու չափ վախեցած են, բացի մի երկուսից, որ չգիտեն Էլ, թե ինչ է կատարվել կամ գիտեն, բայց անտարբեր են:

ՌՈՈՒԶ.— Նրանք մի-երկու հոգի կուղարկեն լրտեսելու: Արչի՛, դու նրանց ճանկն ես ընկել. ես էլ քո հետ: Բայց ես ոչ մի անգամ ինձ այսպես հպարտ չեի զգացել: Կարծում էի կվախենայիր, կասեիր որ քո աղջիկը չեմ:

ԱՐԶԻ.— Ես չեի կարող չասել: Ո՞վ գիտե, քեզ հետ ինչպես կվարվեին: Այդ գեներալը երևի քեզ էլ մյուսների պես սուլուսե պատերի տակ...

ՌՈՈՒԶ.— Նրանցից ոչ մեկը մեղավոր չի, Արչի: Եթե այդ խեղճ

մարդկանց գնդակահարում են, Աստված վկա, հերթը ինձ էլ կհասնի: Բայց քանի դեռ սպասում եմ, ինձ միշտ հպարտ կզգամ, որ դու քո աղջկա տեղը դրեցիր ինձ և միշտ կամա- չեմ ապրելուս համար, երբ մեր աչքի առաջ գնդակահարում են անմեղներին:

ԱՐՁԻ.— Լավ կլինի վիսկիդ խմես:

ՌՈՌԻՉ.— Հա՛, շնորհակալություն: Հիմա ինձ խմել է պետք: **(Ար- չին երկու բաժակ վիսկի է լցնում: Ռոուզն առաջանում է՝ իր բաժակը Արչիի բաժակին խփելու):** Չգիտեմ ինչ կենաց ասեմ: «Աստված, ողորմա մեզ», թե՞ «Աստված, օգնիր մեզ»: Կամ՝ «Ներիր մեզ, Աստված»: Արչի... ես դողում եմ և ուզում եմ լաց լինել: Կարո՞ղ եմ լաց լինել: Կարո՞ղ եմ խմել ու քո ռես- տորանում լաց լինել: Ես վախենում եմ գնալ սենյակս ու աչն- տեղ լաց լինել: Իսկ ուրիշ տեղ... չեմ ուզում...

ԱՐՁԻ.— Վիսկիդ խմի՛ր: Խմի՛ր, մի բաժակ էլ լցնեմ: **(Նա կուլ է տալիս իր վիսկին: Աղջիկը խմում է իր բաժակը: Արչին ան- րից է լցնում):** Որտեղ ուզում ես լաց եղիր: **(Նա հապշտապ իր համար մի ուրիշ բաժակ է լցնում ու արագ կոնծում: Ռոու- զը մոտենում է սեղանին, նստում է):** Խելքը գլխին ոչ մի մարդ այլևս չի գալ այստեղ: Ավելի լավ է հեռանամ ու ամեն ինչ ընդմիջտ թողնեմ նրանց:

ՌՈՌԻՉ.— Հեռանա՛ս: Փախչելն իզուր է, որովհետև ուր էլ որ գը- նաս նույնն է:

ԱՐՁԻ.— Բայց գնալու մի տեղ կարելի է գտնել:

ՌՈՌԻՉ.— Ուր էլ գնաս՝ նույնն է: Քո տեղը միայն սա է: Բացի այդ, չես կարող փախչել: Դու կարող ես միայն մի բան անել. պետք է ռեստորանդ ժամը հինգից մինչև գիշերվա մեկը բաց պահես:

ԱՐՁԻ.— Իզուր է: Չէ՞ որ այստեղ այլևս ոչ մի լավ բան չեմ կա- րող անել:

ՌՈՌԻՉ.— Ոչ էլ կարող ես վատություն անել: Ուրիշ տեղ նույն- պես լավություն չես կարող անել:

ԱՐՁԻ — Վե՛րջ տուր: Աչնայես ես խոսում, կարծես իմ հարազատ աղջիկն ես:

ՌՈՌԻՉ.— Լավ: Այդ դեպքում վրաս չգոռաս: **(Գնում է դեպի խո- հանոցի դուռը):**

ԱՐՁԻ.— Մի րուպե նստիր: Արի մի քիչ լուրջ խոսե՛նք:

ՌՈՌԻԶ.— Էլ ի՞նչ խոսենք: Ավելի լավ է գնամ: Խոհանոցում այն-
քան գործ կա որ... Լավ կանես 333 ձևը լրացնես:

ԱՐՁԻ.— Ինձ պետք չէ նրանց փողը:

ՌՈՌԻԶ.— Արչի՛, դա նրանց կբարկացնի: Հետո, լավ կլինի նաև
նաշերի համար լրացնես: Դու պետք է շարունակես քո գործը՝
ձևացնելով իբր ոչինչ չի պատահել, թե չէ քեզ նույնպես ժո-
ղովրդի թշնամի կհամարեն:

ԱՐՁԻ.— Առանց դրա էլ նրանք գիտեն, որ ես թշնամի եմ: Նը-
րանք բոլորին են թշնամու տեղ դնում:

ՌՈՌԻԶ.— Այդ դեպքում նրանք գուցե ձևացնեն, որ դու իրենց
թշնամին չես, իսկ քեզ ավելի նպատակահարմար է, լրաց-
նել այդ ձևը ու ռեստորանը առաջվա պես պահել: Գնամ խո-
հանոցը մաքրեմ: Լավ կլինի այդ 333 ձևը լրացնես, որովհե-
տև քեզ փող է պետք խոհանոցում մթերքներ, իսկ ցուցա-
փեղկում խմիչքներ ունենալու համար: **(Մտնում է խոհանոց):**

ԱՐՁԻ (աչքի անցկացնելով հաշվեթղթերը).— Ցանկանում եմ եր-
ջանիկ ծննդյան օր... Ուզում եմ ծնվե՛լ.. **(Գոչում է):** Ռոո՛ւզ...

ՌՈՌԻԶ (կանգնում է խոհանոցի դռան շեմին).— Ի՞նչ է, Արչի՛:

ԱՐՁԻ.— Դու որևէ բան հասկացա՞ր, Ռոո՛ւզ: «Ուզում եմ ծնվել»:

ՌՈՌԻԶ.— Հիմա այդ տղան մեռած է, Արչի՛, և մենք երբեք չենք
իմանա ինչ էր ուզում ասել: Խոհանոցում ամեն ինչ խառնված
է... Միայն կեղտոտ ափսեների կույտին նայելուց հոգնում ես:
Բայց կյանքումս առաջին անգամ պետք է մի գործ անես: **(Լը-
ռույթում):** Արչի՛...

ԱՐՁԻ.— Լսում եմ, Ռոո՛ւզ:

ՌՈՌԻԶ.— Դու չես ափսոսում, չէ՞, որ ինձ քո աղջիկը համարե-
ցիր:

ԱՐՁԻ.— Ես ստիպված այդ բանն ասացի, Ռոո՛ւզ:

ՌՈՌԻԶ.— Բայց դու չես ափսոսում, չէ՞:

ԱՐՁԻ.— Ասացի, ոչ... հետո ինչո՞ւ պիտի ափսոսեմ:

ՌՈՌԻԶ.— Ուզում եմ ասել... հո վատ չե՞ս զգում:

ԱՐՁԻ.— Այսօր այնքան շատ բան տեսա, որ հոգիս տակնուվրա
է եղել: Հիմա ես ամաչում եմ իմ՝ հիմար ձևով ապրած կյան-
քիս համար: Եթե այս խեղճ մարդիկ հանցավոր են, եթե նը-
րանցից թեկուզ մեկնումեկը հանցավոր է, Աստված վկա, ու-
րեմն ես նրանցից ավելի հանցավոր եմ: Ո՛չ, չեմ ափսոսում:
Ինչպե՞ս կարող եմ վատ զգալ մեկի պատճառով, որը չի ու-

- զում վնասել իր նմանին: Ո՛չ, Ռոո՛ւզ, ես չեմ ափսոսում, որ այդ գեներալին ասացի, թե դու իմ հարազատ աղջիկն ես:
- ՌՌՌԻԶ.— Ծնորհակալություն, Արշի՛: Դե դու գիտես, որ ես երբևէ հայր չեմ տեսել: Նա լքել է մեզ դեռ այն ժամանակ, երբ ես շատ փոքր էի ու չէի կարող նրան ճանաչել:
- ՍՐԶԻ.— Ես էլ մի կարգին հայր չեմ եղել: Աշխարհում, ինչ-որ տեղ ես էլ երեխաներ ունեմ: Բայց նրանց մորը ասելու պատճառով հեռացա նրանցից... քսան տարի առաջ:
- ՌՌՌԻԶ.— Ես չգիտեի, Արշի՛: Կներես:
- ՍՐԶԻ.— Հիմա Աստված գիտե, թե ինչ է պատահել այդ խեղճ կնոջը, տղաչիս ու երկու աղջիկներիս:
- ՌՌՌԻԶ.— Ա՛հ, կներես, Արշի՛: Ես այնքան եմ խղճում քո երեխաներին... Հայր չտեսած քո երեխաներին...
- ՍՐԶԻ — Տղաս վեցի մեջ էր, աղջիկս չորս տարեկան էր, իսկ նրա փոքրիկ քույրը՝ երկու... Ա՛խ, եթե այս դատը չլիներ, նրանց չէի հիշի: Ոչ, ես հայր չեմ եղել:
- ՌՌՌԻԶ.— Մի՛ վշտացիր, Արշի՛: Ես լավ աղջիկ կլինեմ: Ես կհրաժարվեմ իմ առաջվա կյանքից: **(Մտնում է խոհանոց):**
- ՍՐԶԻ.— Եթե մարդիկ տուն ունենային, եթե ծնողներ ունենային, նրանց կյանքն այսպես չէր դասավորվի, նրանց զուր տեղը այսպես չէին գնդակահարի:
- ՌՌՌԻԶ **(դռան մոտ)**.— Ի՞նչ ես ասում, Արշի՛... խոհանոցում այնքան շատ գործ կա... Բայց ոչինչ չեմ կարողանում անել, երբ դու խոսում ես այդտեղ, իսկ ես չեմ լսում: Ես ուզում եմ լսել քեզ: Ի՞նչ էիր ասում...
- ՍՐԶԻ.— Ասում եմ, եթե այս խեղճ մարդիկ ծնողներ ունենային... իսկական ծնողներ, եթե ծնված օրից որբ չլիներին, նրանց այդպես հեշտ ու հանգիստ չէին գնդակահարի:
- ՌՌՌԻԶ.— Բայց դա անմտություն է: Հապա մի րոպե մտածիր, թե ինչ ես ասում: Ուզում ես ասել, սպեյի լավ է մարդասպան, բան թե գնդակահարված լինել: Ինքդ էլ լավ գիտես, որ դա ճիշտ չէ: Ասեն մեկի հետ էլ դժբախտություն պատահում է, և տարաքանչյուրն իրեն կարող է որբ համարել: Եթե հարցը սխալն որբ լինելու մեջ է, ուրեմն բոլորս ենք դժբախտ և ոչ միսով նրանք, որոնց ասեն օր գնդակահարում են: Բոլոր մարդիկ նույն հայրերն ու մայրերն ունեն, գուցե մեկի ծնողներն սովորի հաջողակ են, քան թե մյուսինը. ասենք հասարակու-

թյան մեջ բարձր դիրք են գրավում, հարուստ են կամ ուրիշ կողմով են աչքի ընկնում: Այդ պատճառով այն ամենը, ինչ կատարվում է այստեղ, բոլորիս է վերաբերում և ոչ թե առանձին մարդկանց: Քո կարծիքով ո՞վ էր այն մարդը, որին այսօր ասացիր, թե ես քո աղջիկն եմ: Մի՞թե նա չհիմնեց այս դատարանն ու սկսեց մարդասպանությունը: Իսկ ո՞վ է նա, Արչի': Հը՞...

ԱՐՉԻ.— Ով է՞: Ասե՛մ, ով է... Նա... պոռնիկի տղա է... Հիմա հասկացա՞ր, թե ով է:

ՌՈՌԻՉ.— Բայց այդ մարդն ինչո՞վ է տարբերվում մյուսներից: Գուցե նա այնքան էլ չար չի, չնայած գիտե, որ իր հիմնած դատարանը անպայման պետք է բոլորին մեղավոր ճանաչի:

ԱՐՉԻ.— Աղջի՛կ, ինչո՞ւ ես հոգիս պղտորում:

ՌՈՌԻՉ.— Ա՛հ, Արչի՛, ես նույնպես ատում եմ նրան: Բայց այդ մարդն ի՞նչ անի, որ պոռնիկի տղայից փոխվի, ավելի լավ մարդ դառնա:

ԱՐՉԻ.— Ինչ կարող է անե՞լ... Եթե ցանկանա կարող է...

ՌՈՌԻՉ.— Բայց չէ՞ որ նա ուրիշի հրամաններն է կատարում:

ԱՐՉԻ.— Իսկ ես չեմ ուզում, որ դու պաշտպանես այդ մարդասպաններին, չնայած նրանք բոլորն էլ անօգնական են և իրենց վատ են զգում գնդակահարելիս...

ՌՈՌԻՉ.— Դա իրո՞ք այդպես է, Արչի՛: Մի՞թե դա ճիշտ է: Մի՞թե նրանք բոլորն իրենց վատ են զգում սպանելիս...

ԱՐՉԻ.— Բայց ինչ-որ մեկը պետք է պատասխանատվություն կրի այդ գնդակահարությունների համար: Չէ՞ որ դատական այս աստիճանի ներկայացուցիչները պարզապես չեն կարող ասել՝ «մենք անճար ենք», «մենք խղճում ենք» ու... շարունակ գրկողակահարեն: Նրանցից մեկնումեկը պետք է համարձակություն ունենա հրաժարվելու հրամանները կատարելուց:

ՌՈՌԻՉ.— Արչի՛...

ԱՐՉԻ.— Էլ չբարկացնես ինձ, Ռոո՛ւզ: Ծիշտն ասած, համբերությունս հատավ: (Հենց շփոթ մի կոմ վիսկի է խմում): Ի՞նչ:

ՌՈՌԻՉ.— Կներես, Արչի՛, ես չեմ ուզում քեզ բարկացնել, բայց չէ՞ որ դու նույնպես հրամաններ ես կատարում: Ծիշտ չե՞մ ասում:

ԱՐՉԻ.— Ես պարզապես մի փոքրիկ ռեստորանի տեր եմ: Քաղաքականությամբ չեմ զբաղվում: Պետության հետ առնչու-

թյուն չունեմ: Այդ նրանք պետք է հրաժարվեն հրամաններ կատարելուց:

ՌՌՌԻՉ.— Այդ դեպքում նրանց պարզապես կգնդակահարեն: Ճիշտ չե՞մ ասում, Արչի՛:

ԱՐՉԻ.— Եթե ուզեն, այդ սրիկաները կատարարության անունից խեղճ՞ր ասես չեն կարող անել:

ՌՌՌԻՉ.— Դու այդպե՞ս ես կարծում, Արչի՛: Կարծում ես հեշտ ու հանգիստ բա՞ն է:

ԱՐՉԻ.— Ո՞վ այդպիսի բան ասաց: Հեշտությամբ ոչինչ չի կատարվում:

ՌՌՌԻՉ.— Որովհետև բոլորն են ուզում առանց դժվարության որևէ բան անել:

ԱՐՉԻ.— Բայց նրանցից մեկնումեկը իր մեջ համարձակություն պետք է գտնի, մերժելու այդ անիծյալ հրամանները, թեկուզ իր կյանքի գնով:

ՌՌՌԻՉ — Իսկ ինչո՞ւ այդ բանը հենց նրանք պետք է անեն և ոչ թե մենք: Հը՞, Արչի՛:

ԱՐՉԻ — Նորից սկսեցիր հոգիս պղտորել: Դու ստիպում ես ինձ մեղավոր զգալ այստեղ կատարվող յուրաքանչյուր սպանության մասին: Բայց կթե թեկուզ մի ծպտուն հանեմ, մի՞թե ինձ էլ նրանց պետ չեն գնդակահարի:

ՌՌՌԻՉ — Աս, Արչի՛, ճիշտ է: Քեզ նույնպես կգնդակահարեն:

ԱՐՉԻ — Ուրեմն մի՛ բարկացրու ինձ: Ծարունակ մի կշտամբիր ինձ սյն պատճառով, որ հենց առաջին օրը չեմ գնդակահարվել, երբ այդ մարդիկ ռեստորանս անմեղ մարդկանց սպանությանց դարձրին: Նաև մի համոզիր, որ խղճամ և՛ մարդասպաններին, և՛ գնդակահարվածներին, և՛ քեզ, և՛ ինձ: Կյանքրն իմաստից կզրկվի, երբ սկսես բոլորին խղճալ: Ի՞նչ օգուտ կթե նստես ու բոլորին խղճաս: Ոմանց պետք է սիրել, ոմանց... ասել:

ՌՌՌԻՉ — Արչի՛, սիրելն ու ասելը շատ հեշտ է: Ծնչելու նման հեշտ: Բայց ո՞րն է դրա իմաստը: Ես սիրում եմ քեզ, դու սիրում ես ինձ, մենք սիրում ենք գնդակահարվածներին, ատում նրանց դահիճներին... Ի՞նչ է նշանակում այս բոլորը, Արչի՛: Իսկ սող ո՞վ է գնդակահարում: Ատենակա՞լը, վերակացո՞ւն իր կնիքով, պահնորդնե՞րը, կամ նրանց հրամանատարը, որ սողուն, պատերի տակ գոռում է՝ «Հանրապետության պահ»

նորդնե՛ր, հանուն ժողովրդի», պահնորդնե՛րը, ոորնք կրկնում են «Հանուն ժողովրդի» ու գնդակահարում այդ ժողովրդից մեկնումեկին: Այդ ի՞նչ ժողովուրդ է, որի անունից գոռում են: Գուցե երկու ժողովուրդ կա, հը՞... Չէ՞ որ մենք մի ժողովուրդ ենք: Արչի՛, սիրելն ու ատելը շատ հեշտ բան է: Իսկ հիմա ամեն ինչից ձանձրացած եմ ու զզված:

ԱՐՁԻ.— Ինչ ասեմ: Ես քեզ իմ տանը ապաստան տվեցի, այդ մարդասպանին հավատացրի, որ դու իմ աղջիկն ես... Իսկ դու շարունակ պղտորում ես հոգիս՝ իմ անհուսալի վիճակն հիշեցնելով:

ՌՌՌԻԶ.— Արչի՛, միայն քո վիճակը չէ անհուսալի: Ես էլ նույն վիճակումն եմ: Բոլորը, առանց բացառության, մեզ նման են: Եթե հույս չկա, ուրեմն բոլորս ենք անհույս: Բայց իրո՞ք ոչ մի էլք չկա: Մի՞թե ոչ մի պատասխան չենք կարող գտնել:

ԱՐՁԻ.— Պատասխանել նրա՛նց: Բայց մեզ կգնդակահարեն:

ՌՌՌԻԶ.— Մի՞թե մեզ համար էլ չենք կարող պատասխան գտնել: Այդ պատասխանը ինքներս նրանց չուղղե՞նք, Արչի՛:

ԱՐՁԻ.— Մի խոսքով, առավոտ, լույսը չբացված գնամ, նրանց ասեմ՝ «Ինձ գնդակահարեք»: Դու առաջարկում ես, որ պաշտպանեմ մեղադրյալներին, դատապարտեմ նրանց մեղադրողներին, հրաժարվեմ իմ պարտականություններից ու գնդակահարվե՞մ: Դա՞ է ասածդ, այո՞:

ՌՌՌԻԶ.— Չգիտեմ, Արչի՛: Ես քեզ նկատի չունեմ: Ես իմ մասին եմ մտածում: Ինքս էլ չգիտեմ, թե ինչ եմ ասում քեզ կամ ինձ:

ԱՐՁԻ.— Տեսնո՞ւմ ես, նույնիսկ այդ բաները չես կարողանում հասկանալ, բայց, ա՛յ, ինձ բարկացնել կարողանում ես: Ես վաթսուներկու տարեկան եմ, իսկ դա կարգին տարիք է այդ բոլորը հասկանալու համար: Իսկ հիմա... խնդրում եմ, օգնիր ինձ: Օգնիր հասկանամ՝ ինչ պետք է անեմ, և ես, Աստծով եմ երդվում, կկատարեմ: Գուցե դատավորի՞ն պետք է սպանեմ, որ կանգնել էր հենց այստեղ՝ իմ տեղում:

ՌՌՌԻԶ.— Ո՛չ, պետք չէ:

ԱՐՁԻ.— Ուրեմն՝ աղերսեմ նրանց, որ ինձ գնդակահարեն որևէ մեղադրյալի... ասենք այն ջահել տղայի... որին այսօր գնդակահարեցին: Ուրիշ ի՞նչ կարող եմ անել, Ռոո՛ւզ, դե ասա՛, հը՞...

ՌՌՌԻԳ. — Բայց չէ՞ որ քեզ գնդակահարելուց հետո նրան նույն-
պես կսպանեն:

ՌՌՉԻ. — Չգիտեմ, Ռոո՛ւզ: Քեզ եմ հարցնում:

ՌՌՌԻԳ. — Եթե խնդրես որ քեզ դատապարտեն որևէ մեկի փո-
խարեն, նրանք այդ բանը քեզ չեն ների: Դու կհամարվես
հուգրապետության թշնամի և կգնդակահարվես աղյուսե պա-
տերի տակ:

ՌՌՉԻ. — Ուրեմն նրանց ճաշի մեջ թո՛ւյն գցեմ: Դատավորի, Վե-
րակացուի, Ատենակալի, պահնորդների, գնդակահարող զին-
վորների, բոլորի, այո՞:

ՌՌՌԻԳ. — Ա՛հ, Արչի՛, ճիշտ է, նրանք կմեռնեն, բայց դրանով ար-
դարությունը չի վերականգնվի: Մենք պարզապես կսկսենք
ավելի շատ դատել ու գնդակահարել:

ՌՌՉԻ. — Դու նկատի ունես նրա՞նց, այո՞, երբ ասում ես ավելի
շատ կդատեն ու կգնդակահարեն: Այո՞, Ռոո՛ւզ...

ՌՌՌԻԳ. — Ո՛չ: Ես ուզում եմ ասել, նրանց հետ նաև մենք ենք
մեղադրում և սպանում:

ՌՌՉԻ. — Տե՛ր Աստված... Աղջի՛կ, քեզանից ի՞նչ մեղադրող, ի՞նչ
զեղակամարող... Դու ո՞ւմ կարող ես սպանել, խե՛ղճ աղջիկ:

ՌՌՌԻԳ. — Դճարավոր է, Արչի՛: Ի՞նչ իմանաս, մեկ էլ տեսար...

ՌՌՉԻ. — Ո՛չ, դու չես կորսող սող բանն անել: Մեղադրողներն էլ
ես երբեք, սպանողներն էլ: Իսկ մենք պարզապես սպասում
ենք՝ նուստրոլ որ մեզ դեռ չեն դատելու, որ կծերանանք ու
եղբ կմեռնենք: Բայց հիմա մեր բոլորի վերջը եկել է:

ՌՌՌԻԳ. — Ես հավատացած եմ, որ այդպես է լինելու:

ՌՌՉԻ. — Այդ ինչպե՞ս եղավ այս բոլորը: Ի՞նչ պիտի անենք: Հո
միշտ արպես չենք սպասելու... բերաններս փակ: Գուցե եր-
գեմք... Կամ որևէ ուրիշ բան...

ՌՌՉԻ. — Երգե՞նք: Դրանից ի՞նչ օգուտ:

ՌՌՌԻԳ. — Գուցե այդ ժամանակ կսկսենք հասկանալ, որ մենք
չսխառք է սպանենք ինքներս մեզ:

ՌՌՉԻ. — Ես մի բան գիտեմ միայն. իմ հաճախորդներից ոչ մեկը
սպես չի գա այստեղ: Հիմա ես պարզապես խմիչք եմ մա-
տուցելու մահվան դատապարտվածներին և կերակրելու եմ
նրանց գնդակահարողներին: Հաճախորդներս հիմա հանգուց-
տյուն են, իսկ ամբողջ առևտուրս ապատիկ եմ կատարելու:

ՌՌՌԻԳ. (բացվող դռնից նայելով դեպի մեքենաների հավաքատե-

դին)։— Ահա, խեղճ մարդը պատկած է մեռած՝ բոլորովին լքված... Վաղը նրան կտանեն այստեղից։ Մարդասպանները ժամանակ չունեն իրենց կեղտոտ գործից մի պահ կտրվելու։ Սպանելով՝ իրենք էլ են մեռնում։ Մարդասպանները նույնպես զգվում են և ձանձրանում։ **(Հանկարծակի ահաբեկված)**։ Հիստ'ու Քրիստոս... Արշի'...

ԱՐՁԻ **(դռների մոտ)**։— Քեզ ի՞նչ եղավ...

ՌՈՌԻԶ։— Աստծու սիրույն, Արշի'... արի ինքդ տես։ Նա իրոք բարձրանո՞ւմ է տեղից, թե՞ աչքիս է երևում։ Նաչի՛ր, նաչի՛ր, Արշի'...

ԱՐՁԻ։— Ամենակարո՞ղ Աստված, խղճա մեզ։ Նա բարձրանում է ծնկներից... ձեռքերին։ **(Գոռում է)**։ Չկանգնե՛ս... Պառկի՛ր։

ՌՈՌԻԶ։— Թույլ տուր օգնեմ նրան...

ԱՐՁԻ **(ճանկում է աղջկան)**։— Խեղճացա՞ր, ի՞նչ է։

ՌՈՌԻԶ։— Թող գնամ, Արշի'... Չէ՞ որ նա դեռ մեռած չէ... Ես պետք է օգնեմ նրան...

ԱՐՁԻ։— Մենք չենք կարող նրան օգնել։ Ներս արի՛, շո՛ւտ... Թող դուրը փակեմ։ Հիմա նա նորից կընկնի։

ՌՈՌԻԶ։— Թող էլի՛, Արշի'... Թող գնամ... **(Աղջիկը ճիգով ազատվում է նրանից, բայց Արշին նորից է բռնում)**։

ԱՐՁԻ։— Բայց դու հասկանո՞ւմ ես, թե ինչ ես անում։

ՌՈՌԻԶ։— Ես պետք է օգնեմ նրան... Թեկուզ նա մի րոպե էլ ապրի, միևնույն է, ես պետք է օգնեմ նրան։

ԱՐՁԻ **(իրեն մեղավոր զգալով ու ամաչելով)**։— Լավ, լավ, աղջիկ'ս։ Ինքս կօգնեմ նրան։ Դու կանգնիր դռան մոտ, տես ի՞նչ մարդ չկա՞։ Դե՛, շտապի՛ր, շտապի՛ր։ Հիմա կբերեմ նրան։ **(Ռոուզը վազում է փողոցի վրա բացվող դռան մոտ։ Արշին դուրս է գալիս դեպի աղյուսե պատերը տանող դռնով։ Ներս է մտնում Մեյ Ֆուլերը։ Ռոուզը փորձում է ներս չթողնել նրան)**։

ՌՈՌԻԶ։— Դուք իրավունք չունեք մտնել այստեղ։ Ռեստորանը փակ է։ Չի կարելի։

ՄԵՅ։— Աղջիկ'ս, ես Մեյ Ֆուլեյն եմ։ Ես և Արշին վաղուցվա բարեկամներ ենք։ Քաղաքում չէի։ Հենց նոր եմ եկել։ **(Արշին նորից է ներս մտնում՝ քարշ տալով երիտասարդի արյունաշաղախ, թուլացած մարմինը)**։

ԱՐՁԻ.— Ռոտ'իգ... Աստված սիրես, նրան մի քիչ կոնչակ տուր թող խմի:

ԸՈՒՄԻՉ (վազելով: Նրա ետևից՝ Մեյ Ֆոլեյը, որ հիսուն տարեկանին մոտ կին է և հագնվել է ամենավերջին նորաձևությամբ).— Խեղճ տղա... Խեղճ տղա...

ԼԼԵՅ (օգնելով Արչիին).— Նրան այստեղ բեր: Բեր այստեղ... (Նա երկու սեղան է միացնում): Պատկեցնենք այստեղ... (Նըրանք երիտասարդին պառկեցնում են սեղանների): Հիմա կօգնեմ... Խեղճ տղա... (Նա Ռոուզի ձեռքից վերցնում է կոնչակի բաժակը: Արչին բարձրացնում է երիտասարդի գլուխը, մինչդեռ Մեյը մի քիչ կոնչակ է լցնում նրա բերանը: Հետո բաժակը բոլորովին դատարկում է): Ո՛վ է նրան վիրավորել...

ԱՐՁԻ— Մե՛ն, դե մի բուպե սպասիր, էլի... Դուռը փակի՛ր, Ռոտ'իգ... (Վիրավորին): Լսի՛ր, դու բարեկամներիդ մոտ ես: Դու ինձ լսո՞ւմ ես... Մե՛ն, ինչո՞վ կարող ես նրան օգնել:

ԼԼԵՅ.— Նրան մի քիչ էլ կոնչակ տվեք: Իսկ ո՞վ է այս խեղճ տղան, Արչի՛:

ԱՐՁԻ— Նրան կես ժամ սուսց ևն զնդակահարել: (Մեյը նորից է սպասիմ կոնչակ խմեցնում):

ԵՐԻՖԱՆՈՒԼԻ (կամայրակ, նվաղած ձայնով).— Երջանիկ ծննդյան օր...

ԱՐՁԻ— Մա՛րդ Աստծո, մի կարգին բան ասա հասկանալով: Դա ի՞նչ է նշանակում... (Երիտասարդի մարմինը հանկարծ բարձրանում, սուկայիտրեն ցնցվում ու նորից ընկնում է անշնչագամ): Ա՛՛ն, Քրիստո՞ս...

ԼԼԵՅ (ձևերերը խաչելով կրծքին).— Ինչ մեղք բան է այսպիսի երիտասարդ սպանելը: Ո՛վ է նրա վրա կրակել, Արչի՛:

ԱՐՁԻ— Քանի դեռ ոչ մեկը չի եկել, նրան նորից պետք է բակ տանե՛մ՝ աղյուսե պատի տակ: (Երիտասարդին նորից է շալակում):

ԼԼԵՅ— Թող օգնեմ... Դու սրա պես երիտասարդ չես... Չնայած նա մեռած է, իսկ դու դեռ կենդանի ես: (Նրանք միասին դուրս են տանում երիտասարդին): Դրանով ի՞նչ էր ուզում նստկազնել՝ երջանիկ ծննդյան օր:

ԱՐՁԻ— Ի՞նչ իմանաս: Նա այդ բանը և՛ դատավորին, և՛ իր վրա կրակող զինվորներին ասաց: Ու կարողացավ այնքան կեն-

դանի մնալ, որ նույն բանը նաև մեզ կրկնեց:

(Երկուսով դուրս են գալիս: Ռոբուզը մուտքի դռնից ետ է գալիս, վազում է նրանց ետևից):

ՊԱՏԿԵՐ ԵՐՐՈՐԴ

(Նույն գիշերը: Ժամը մեկից տաս է պակաս: Արշին վաճառատեղանի ետևում է, Մեյ Ֆուլեյը փոքր-ինչ հեռու է նրանից):

ԱՐՁԻ.— Տեսա՞ր: Ութը ժամվա մեջ ոչ մի հաճախորդ չեկավ, բացի գերեզմանից ելած այն խեղճ տղայից: Ոչ մի հոգի՝ կենդանի աշխարհից...

ՄԵՅ.— Լավ ես ասում... Քո կարծիքով ես ո՞ր աշխարհից եմ:

ԱՐՁԻ.— Խոսքը քո մասին չէ: (Լռում է, նայում կնոջը): Բայց դու, կարծես, այսօրվա այն կինը լինես, որին գնդակահարեցին:

ՄԵՅ.— Չի կարող պատահել: Աշխարհում ինձ նման կին չկա: Ես շատ տեղերում եմ եղել, բայց ինձ նման ճաշակով հագնվող կին չեմ տեսել: Հետո, հապա նայիր, շատ էլ էժան հագուստներ են: Եթե փողերս հագնվելու վրա ծախսեմ, սրտիս ուզածին պես չեմ կարող խմել: Դու լավ գիտես, Արշի՛, ես ամեն ինչ չէ, որ խմում եմ: Ամենալավ կոնյակը չլինի, չեմ խմի: Հետո, կարո՞ղ էի այդքան ճանապարհորդել: Ես մեքենա եմ գնել, և ամբողջ երկրով մեկ շրջել եմ: Տղաներիս հանդիպեցի: Ա՛խ, նրանք մի քիչ օտարացել էին և կարծես շփոթվում էին իմ ներկայությամբ: Գրկեցի գավակներիս, բայց ոչ մեկը դեմքը չշրջեց ինձանից. գիտե՞ս ինչու, Արշի՛: Որովհետև մայրը միշտ մնում է մայր... թեկուզ ինձ նման... մայրը: Իհարկե, նրանք հուզվեցին: Ամուսինս տղաներիս տարել էր, երբ ամենամեծը ճիճգ տարեկան էր, իսկ ես քսանմեկ-քսաներկու կլիների: Բայց դե միշտ հետևում էի երեխաներիս: Լավ տղաներ են դարձել... Ամուսնացել են, երեխաներ ունեն: Բայց, չնայած այդ բոլորին... տե՛ր Աստված, նրանք դժբախտ են: Հասկանո՞ւմ ես, թե ինչ եմ ուզում ասել, Արշի՛. իրենց բոլոր հաջողություններով ու երջանկությամբ տղաներս դժբախտ են: Հենց նրանց աչքերից էր երևում: Խե՛ղճ փոքրիկներս... Դե՛, շատ խոսեցի:

ԱՐՁԻ.— Դու շարունակ քո ճամփորդություններից ես պատմում:

Կարծես գնացել, սուրբ գավաթ² ես գտել-բերել, կամ դրանից սակի մի լավ բան: Հետո, կարծես այս բոլորը քեզ չի վերաբերում: Մարդիկ ռեստորանս սպանդանոց են դարձրել: Այդ երևույթները գնդակահարվածների մեջ մի կին կար, որ շատ էր նման քեզ: Երբ նրան հնարավորություն տվեցին վերջին հույսով դիմելու դատարանին, նա ասաց. «Ես ինչ-որ տեղ տղա ունեմ: Ի՞նչ է լինելու նրա հետ»: «— Իսկ քանի՞ տարեկան է...», — հարցրեց դատավորը, և կինը պատասխանեց. « Դե՛, հիմա երեսուն կլինի: Ի՞նչ է լինելու նրա հետ»: Դատավորը, ատենակալը նորից մի քանի հարցեր տվեցին և պարզվեց, որ այդ կնոջը երեսուն տարի առաջ մի տղա է ունեցել, որը մահացել է՝ երեք տարին չբոլորած: «Ուզում եմ ասել, — հասկար՞ծ հիշեց կինը, — ուզում եմ ասել, որ նա մահացել է...»: Հետո սկսեց լաց լինել, որովհետև տղան չկար: «Կարծրամարկելուց առաջ թույլատրվում է կամ ծխել, կամ մի բիշ խմել. կինը հարբեցող էր երևում: Ես նրան երկու բաժակ կրեմով լցրի, որովհետև դեռ լաց էր լինում: Հետո, նախքան կրեմներ, ասաց. «Դե՛ լավ, դուք ողջ լինեք...»: Ես զարմացա, սրտիեմբռե խմելուց ասաց կինը մի պահ մոռացավ, որ իրեն գեղարվեստագետու էին: Մի խոսքով, կյանքի վերջին րոպեներին սոց կիտը մեկ ինչ որ բան հիշում էր, մեկ էլ՝ մոռանում: (Լուսրջ սե) Կարող է գիշերել սեղյակով, բայց ոչ մի հաճախորդ... Մի քանի ասում, երեսը մեղավոր չեն, վախենում են:

III Գ — Ի՞նչ էր արել սոց կինը, Արչի՛:

III ԶԻ — Ը վ:

III Ե — Դու, որի մասին քիչ առաջ պատմեցիր: Ի՞նչ հանցանք էր կատարել սոց կինը:

III ԶԲ — Ահ, շատը տանի, մոռացել եմ... Ախր այդ խեղճ գնդակահարվածներից ոչ մեկը ոչ մի հանցանք չէր կատարել: Ռոնալդ . Ի՞նչ հանցանք էր գործել այդ կինը... դե՛, նա էլի, որ իր սոցալից էր հարցնում, բայց պարզվեց, որ նա երեսուն տարի առաջ էր մահացել: Ի՞նչ հանցանք էր կատարել այդ կինը: Այն մեկը, որին ընթրիքից հետո դատեցին և մի քիչ էր Մեդիս էր նմանվում:

III ԶԳ — Դրա անունը Մարգրեթ Քեթբըրթ էր: Հիսունհինգ տարեկան Թանութներից ժամանակին մանր-մունր բաներ էր թըր-գրել: Ժապավենով լայնեզր գլխարկ էր դրել: Չեռքին երկար

ձեռնոցներ կային: Այդ կինը այս անգամ մտել է ինչ-որ մեկի մանկասենյակը, օրորոցից հանել է փոքրիկ տղային և երբ հասել է մուտքի դռանը, փոքրիկն արթնացել ու սկսել է լաց լինել:

ԱՐՁԻ.— Հա, հիշեցի: Այնքան շատ մեղադրյալներ կային... ո՞ր մեկի հանցանքն հիշես: Լավ, երկուսդ էլ գնացեք: Արդեն ժամը մեկն է: **(Ռոուզը հետաքրքրությամբ նայում է Արչին: Արչին էլ՝ նրան):**

ՄԵՅ.— Ռոու՛զ, ես այս կողմերում եմ ապրում: Բայց մինչև տուն կուղեկցեմ քեզ:

ՌՈՈՒԶ (ահաբեկված).— Դու շատ ազնիվ ես, Մե՛յ:

ԱՐՁԻ.— Հա, ինչ էի ասում, Մե՛յ: Լավ կլինի վաղը մինչև հինգը այս կողմերում չերևաս:

ՄԵՅ.— Ինչո՞ւ: Բա ի՞նչ պիտի անեմ մինչև հինգը: Չէ, Արչի՛, իհարկե, կգամ:

ԱՐՁԻ.— Ասում եմ չի կարելի... Իմ ռեստորանում հիմա միայն դատական նիստ է տեղի ունենում՝ առավոտյան տասից մինչև հինգը: Ասում եմ՝ ժամը հինգից շուտ չգաս:

ՄԵՅ.— Դե լավ, Արչի՛, որ ասում ես՝ ասում:

ԱՐՁԻ.— Վատ չէր լինի, եթե մի բաժակ... գնալուց առաջ... Սա քեզ, Մե՛յ: Սա էլ՝ Ռոուզին:

ՄԵՅ (բարձրացնելով բաժակը).— Լավ, դո՛ւք ողջ մնաք:

ԱՐՁԻ.— Աստված քեզ օգնական:

ՌՈՈՒԶ.— Երջանկությունն եմ ցանկանում: **(Բոլորը խմում են: Մեյն ու Ռոուզը դուրս են գալիս՝ բարի գիշեր մաղթելով: Արչին փակում է դուռը, շրջվում լույսի կողմը, կանգնում է ռեստորանի կենտրոնում, գլխահակ մտածում է: Աղչուսե պատի տակ բացվող դուռը կամացուկ թակում են: Նա այլաչված շրջվում է դռան կողմը: Բռնակը պտտվում է: Արչին վախեցած ետ-ետ է գալիս: Խանութներից մանր-մունր բաներ թոցընող այն կինը, որի մասին քիչ առաջ խոսում էին և որը, իսկապես, փոքր ինչ նման էր Մեյ Ֆոլեյին, ներս է մտնում):**

ԿԻՆ.— Ի՞նչ է լինելու տղայիս հետ:

ԱՐՁԻ.— Չեր տղան մեռած է:

ԿԻՆ.— Նա չի մահացել: Ես տեսա նրան: Գրկեցի: Երբ ոստիկանները բարձ տալով ինձ բերեցին, նա լաց էր լինում ետևիցըս: Հիմա ի՞նչ է լինելու նրան:

ԱՐՉԻ.— Տղադ լավ կլինի, լավ:

ԿԻՆ.— Ես չեմ ուզում, որ որդուս հետ վատ բան կատարվի:

ԱՐՉԻ.— Ամեն ինչ լավ կլինի: Նա բարի մարդկանց հետ է:

ԿԻՆ.— Ես շատ եմ անհանգստանում որդուս համար, հետո... խըմել եմ ուզում: Ինձ մի թունդ բան տվեք խմեմ, որ քնել կարողանամ: Ես բոլորովին քնել չեմ կարողանում: **(Արչին մի բաժակ կնոջն է լցնում, մյուսը՝ իրեն: Նրա ձեռքերը դողում են: Կինը վերցնում է իր բաժակն ու խմում: Արչին էլ իր բաժակն է վերցնում):** Չգիտեմ ինչ է կատարվում ինձ հետ: Ես չստիպազանց ջղաչին եմ: Նույնիսկ վախենում եմ մեռնել ամենաչնչին բաներից: **(Կինը նայում է ձեռքի բաժակին, հետո՝ Արչիին):** Դե լավ, ո՛ղջ մնանք: **(Խմում են):**

ԱՐՉԻ.— Որդիդ լավ կլինի: Դուք կարող եք հանգստանալ և նույնիսկ քնել:

ԿԻՆ.— Համոզված եք: Վստահ եք, որ որդիս լավ կլինի: Հավիտյանն-հավիտենի՞ց:

ԱՐՉԻ.— Այո, վստահ եմ:

ԿԻՆ.— Հիմա ինձ արդեն լավ եմ զգում:

(Կինը նսրից է դուրս գալիս՝ ետևից փակելով դուռը: Արչին մի բաժակ էլ է լցնում, արագ կոնծում է, մոտենում է դռանը: Փորձում է՝ արդյոք դուռը փակ է, թե ոչ: Այն փակ է: Մոտենում է փողոցի վրա բացվող դռանը, հուզված կանգնում է սկստեղ: Մի պահ անց՝ կամացուկ թակոց):

ԱՐՉԻ — Ո՛վ է:

ԹԹԹԹԹԹԹԹ ԶԱՅՆԸ.— Ես եմ, Արչի՛... **(Արչին չրխկացնում է փականը, բացում է դուռը և Ռոուզը ներս է մտնում՝ ձեռքին փոքրիկ, ծղոտե ճամպրուկ: Արչին մի պահ պլշած նայում է նրան):**

ԹԹԹԹԹԹԹԹ.— Ես ստիպված եկա: Ներիր ինձ, բայց ես չկարողացա մնալ: Պարզապես հնարավոր չէր: Դու չես բարկանում, չէ՞, որ եկա: Չէի կարծում, որ այսպես կստացվեր: Ես... ես հոգնում էի: Կարծես ինձ ծեծած լինեն: Բայց հիմա հոգնածություն չեմ զգում: Ես ամեն ինչ կանեմ, որ քո տանը կարգուկարգուն լինի: Արչի, դու այլևս չես ամաչում, չէ՞: Երբ ասացիր Մեփի հետ գնա, ամաչեցիր, ճի՞շտ է: Իսկ հիմա չես ամաչում:

ԱՐՉԻ.— Ո՛չ, Ռոո՛ւզ, ո՛չ: Վաղը ես ամեն ինչ կպատմեմ Մեյին: Կուսեմ:

ՌՈՌԻԶ.— Ի՞նչ պիտի ասես, Արչի՛:

ԱՐԶԻ.— Կասեմ, որ դու իմ աղջիկն ես: Բոլորին կասեմ:

ՌՈՌԻԶ.— Կարիք չկա... Բոլորն էլ ինձ լավ են ճանաչում: Դու իրավունք չունես այդ բանը անելու: Ես թույլ չեմ տա:

ԱՐԶԻ.— Այսօր չհասցրի Մեյին ասել: (Լռություն): Վաղը կասեմ, որովհետև դա ճշմարտություն է: Մի տեսակ անսովոր ձևով դա ճշմարիտ եղավ: (Աղջիկը դանդաղորեն, երկչոտ մոտենում է նրան: Արչին գրկում է Ռոուզին՝ հարազատ դասեր պես: Երկուսով շփոթվում են, արտասովում): Ամբողջ աշխարհը լի է անօթևան մեռելներով: Ամբողջ աշխարհը լի է կենդանի մարդկանցով, որոնք նույնպես անօթևան են: Ռոո՛ւզ, իսկ հիմա ես էլ եմ վախենում:

ՌՈՌԻԶ.— Մի՛ վախեցի՛ր, Արչի՛: Ես ամեն ինչ կանեմ, որ քո տանը կարգուկանոն լինի: (Նա վերցնում է ճամպրուկը, աստիճաններով բարձրանում է վերևի սենյակ: Մինչդեռ վաճառասեղանի մոտ կանգնած Արչին նայում է նրան):

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ

ՊԱՏԿԵՐ ԱՌԱՋԻՆ

Հաջորդ առավոտ: Ժամը տասից տասնհինգ կամ քսան լույս է պակաս: Արչի Քրուկչանկը իջնում է աստիճաններով, մոտենում է մուտքի դռանը, բացում է, վեր ու վար նայում է փողոցով, վերադառնում է վաճառասեղանի ետևը, զննում է սպասքապահարանի դարակները: Ռոուզը դուրս է գալիս խոհանոցից: Նա նոր զգեստ է հագել, առանց գրիմի է, և մազերն ուրիշ ձևով է սանրել: Տեսքը բոլորովին փոխվել է. լուրջ է, «տուն-տուն» խաղացող աղջնակի պես: Զեռքի մատուցարանին երկու գավաթ սուրճ կա:

ԱՐԶԻ.— Մի քիչ քնեիր: Լույսը դեռ չբացված արթնացել էս:

ՌՈՌԻԶ.— Ուզում էի խոհանոցը կարգի բերել: (Սուրճի բաժակը

դնում է Արչիի առջև): Լորով շիլա եմ եփել: Երևի նրանց դուր գա, հը՞:

ԱՐՉԻ.— Ո՞ւմ... այդ խեղճերին, որոնց գուցե բախտ վիճակվի մինչև նախաճաշ կենդանի՞ մնալ:

ԻՌՈՒԶ.— Այո, Արչի՛:

ԱՐՉԻ.— Ծիշտ է, նրանց դուր կգա:

ԻՌՈՒԶ.— Խոհանոցում ինչ որ գտա, ւցրեցի շիլայի մեջ: Այնտեղ համարյա ոչինչ չէր մնացել:

ԱՐՉԻ.— Ինչ ճաշ էլ եփած լինես, նրանք հաճույքով կուտեն, որովհետև դա վերջին ընթրիքն է:

ԻՌՈՒԶ.— Բայց նրանք այդ մասին չգիտեն:

ԱՐՉԻ.— Գիտեն, բայց չեն հավատում: Ձևացնում են, իբր, ստիպված են այդ աղքատիկ կերակուրն ուտում, մինչև իրենց գործերը կլավանան: Չէ՞ որ բոլորը հույս ունեն, թե մի օր հրաշալի կընթրեն, որ դա սուրբ ընթրիք է լինելու. այսպես ասած՝ սուսպին ընթրիքը:

ԻՌՈՒԶ.— Առաջի՞նք: Իսկ դու երբեք մի կարգին ընթրե՞լ ես:

ԱՐՉԻ.— Ես վատ չեմ ընթրել: Բայց առաջինն ուրիշ է...

ԻՌՈՒԶ.— Իսկ ինչպե՞ս է այն լինում, Արչի՛:

ԱՐՉԻ.— Այդ ընթրիքից սուսպ մարդ պետք է նախապատրաստվի: Ասեմ ինչ տեղը տեղին պետք է լինի: Ոչինչ չպետք է սրբոտի երես եղին: Մարդուն լավ տուն և առողջ ընտանիք է տեղի ունենում: Ասեմք՝ հրաշալի, արևոտ մի օր կնոջդ ու երեխաներիդ նկատ հեռու մի տեղ գրոսնելու ես գնացել և միասին գիշերելու ես տուն վերադառնում: Մինչ կինդ ընթրիք է սպասարաստում, հավաքում ես թափված տերևներն ու վառում: Երեխաներիցդ մեկը քեզ հետ է և դու զգում ես վառվող տերևների հոտը: Երեխաներդ հրաշալի տեսք ունեն, իսկ կինդ օրեցօր գեղեցկանում է: Նա շատ երեխաներ է ունեցել, ոչ թե մեկ, երկու կամ երեք, նա յոթ, ութ երեխա է ծնել, բայց օրեցօր գեղեցկանում է ու թարմանում: Երեխաները սիրում են իրենց մորը, մայրն էլ նրանց, բայց բոլոր երեխաները ուսրբեր պահանջներ ունեն: Նրանք շատ են չարաճճի: Կինդ բարկանում է, իսկ դու հաշտեցնում ես... զվարճանալով... Դե՛, իսկ մեծ աղջիկները ներսում են: Մորն են օգնում՝ զրուցելով սիրո, ամուսնության, երիտասարդ տղաների մասին, իսկ մեծ տղաներդ քեզ հետ են՝ այգում, խոսում են թե նախքան ա-

մուսնանալն ինչ են ուզում անել. ասենք գիտական արշավանք դեպի Բրազիլիա, շուրջերկրյա ճանապարհորդություն և նման բաներ... Կինդ դուրս է գալիս տնից, մտաենում է կրակին: Նրա ձեռքին սառը գինով լցված բաժակներ են: Դուք զրնգացնում եք բաժակները, նայում եք միմյանց ու ժպտում, որովհետև կապված եք իրար և դա դուր է գալիս ձեզ իր բոլոր տազնապներով, իսկ երեխաները աչքի պոչով նայում են ձեզ ու ժպտում, որովհետև նրանք էլ իրար են կապված: Չնայած իրենց մանկական բոլոր հոգսերին, երեխաները հրճվանքի մեջ են: Սառը գինին խախուրց հետո բոլորդ ներս եք գնում, նստում եք սեղանի շուրջը: Իհարկե, ճաշն էլ կարևոր նշանակություն ունի, բայց այս առաջին ընթրիքի ժամանակ ամենակարևորը դա չի... կա ավելի թանկ բան: Իմ կարծիքով այդ ընթրիքի ժամանակ անպայման կնոջդ թխած հացը պետք է լինի: Հետո՝ թարմ կարագ: Խորոված միս, խորոված կարտոֆիլ: Պանիր: Թեյ, սուրճ, կաթ: Բայց եթե լոբով շիլա լինի... լոբով շիլան էլ վատ չէ: Ահա թե ինչպիսի ընթրիքի մասին է խոսքս: Իսկ այս խեղճ դատապարտյալները, որ ճաշի ժամանակ քո եփած լոբով շիլան պիտի ուտեն, ձևացնելու են, իբր, ստիպված են այդ աղքատիկ կերակուրն ուտում, իբր, ամեն ինչ բարեհաջող կլինի և մինչև իրենց մահը միայն ճոխ սեղանների պիտի նստեն: Բայց նրանցից ոչ մեկը այդպիսի ընթրիք չի անելու: Ես նույնպես, Ռոո'իզ: Գուցե և բոլորը...

ՌՈՈՒԶ.— Արչի', չէ՞ որ կարելի է հեշտությամբ այդպիսի ընթրիք անել:

ԱՐՉԻ.— Դե իհարկե... գուցե... Բայց դա երբեք չի լինի: Ինչ լավ սուրճ էիր եփել, Ռոո'իզ: **(Ռոուզը սուրճի բաժակները ձեռքին մտնում է խոհանոց: Արչին ուղղում է աթոռը: Ներս է մտնում Մեյ Ֆոլեյը):**

ՄԵՅ (զվարթ).— Արչի', էլ վրաս չգոռաս ու դուրս չանես: Ես քեզ ասելու բան ունեմ:

ԱՐՉԻ.— Դու հենց հիմա պետք է հեռանաս:

ՄԵՅ.— Մինչև չասեմ, չեմ գնա:

ԱՐՉԻ.— Հիմա ուր որ է նրանք կգան: Ինչ-որ ասելու ես, ժամը հինգից հետո կգաս, կասես:

ՄԵՅ.— Ես ստիպված եմ եկել, Արչի': Գիշերվա կեսին ինչ-որ մեկը դուռն թակեց և ինձ արթնացրեց: Կյանքումս այդպես չէի

վախեցել: Ծպտուն չհանեցի, մտածելով որ նա կհեռանա: Իսկ
նա կանգնել էր դռան ետևն ու չէր գնում: Հետո դուռը բաց-
վեց ու մի երիտասարդ կանգնեց շեմին:

ԱՐՁԻ.— Անայայման երազումդ ես տեսել այդ բոլորը:

ՄԵՅ.— Աստված վկա, երազ չէր, Արչի': Որ երազ լիներ, կգո-
նայի: Բայց հենց որ այդ տղային տեսա, վախա իսկույն ան-
ցավ: Նա պարզապես մոլորված ու միայնակ տղա էր: Մոտե-
ցավ մահճակալիս, ծնկի եկավ և արտասվեց: Կարծես իմ տը-
ղան լիներ: «Դե', դե',— ասացի ես:— Հանգիստ, հանգիստ:
Ամեն ինչ լավ կլինի, ամեն ինչ լավ կլինի»:

ԱՐՁԻ.— Բայց ո՞վ էր նա:

ՄԵՅ.— Չգիտեմ, Արչի': Ես էլ ուզում էի քեզ հարցնել: Արչի', որ
տեսնեիր ինչքան նման էր այն խեղճ տղային, որ երեկ մե-
ռավ այստեղ: Բայց չէ՞ որ նա արդեն չկա:

ԱՐՁԻ.— Նա ոչինչ չասա՞ց:

ՄԵՅ.— Ո՛չ: Հենց դա է ինձ զարմացնում: Միայն ծնկի եկած լաց
էր լինում: Հետո տեղից ելավ, դուրս եկավ և ետևից ծածկեց
դուռը: **(Լռություն):** Դե, իսկ հետո մի բան եղավ, որ մինչև
հիմա չեմ կարողանում հասկանալ: Երբ տղան դուրս եկավ,
մոտեցա դռանը, սր փակեմ, բայց այն արդեն փակ էր: Երդ-
վամ եմ, Արչի', դուրս բանալիով փակ էր: Աստվա՛ծ իմ, այդ
տեսակ բաները նեղից ինձ հե՛տ պիտի կատարվեն: Ծիշտ է,
սկզբում շատ փախեցա, բայց տղային տեսնելուց հետո անս
անցավ և ինձ հպարտ զգացի, որովհետև այդ տղան ինձ մոտ
էր եկել... ինձ նման հնամաշ պարկի մոտ: Կարծես նրա հա-
րազատ մայրը լինեի: Դու հավատո՞ւմ ես, Արչի', հավատո՞ւմ
ես ինձ:

ԱՐՁԻ.— Դե լավ, լավ, հավատում եմ, հավատում: Իսկ հիմա հե-
տացի՛ր, քանի դեռ ուշ չէ:

ՄԵՅ.— Գնում եմ: **(Նա շրջվում է, որ դուրս գնա այն պահին, երբ
դատավորն ու դատական ատյանի մյուս անդամները ներս են
մտնում):**

ԿԱՏԱՎՈՐ.— Օ՛, բարի՛ լույս, միսի՛ս Քրուկշանկ: Մի՛սոր Քրուկ-
շանկ, անշուշտ, սա ձեռ կիցն է, այնպես չէ՞:

ԱՐՁԻ **(ճիգ անելով կասկածի տեղիք չտալ)**.— Այո՛: Այո՛, իհար-
կե:

ԿԱՏԱՎՈՐ.— Դե ուրեմն հրաշալի է: Երեկ մենք չկարողացանք

ձեզ տեսնել, միսի'ս Քրուկշանկ: Ծիշտն ասած, մենք ձեր կարիքը շատ զգացինք, մանավանդ ճաշի ժամանակ: Դուք կարող եք մեզ օգնել... դրա համար կառավարությունն, ինստիտուտն, կվարձատրի ձեզ: Լավ, ինչպես տեսնում եմ, ամեն ինչ կարգին է: Ջենթլմեննե՛ր, անցեք ձեր տեղերը: (Ռոուզը դուրս է գալիս խոհանոցից): Մի'սիս Քրուկշանկ... (Ռոուզը թեթեվակի գլխով է անում):

ՌՈՈՒԶ (կամացով).— Բարի՛ լույս:

ԴԱՏԱՎՈՐ.— Անցեք ձեր տեղը, խնդրում եմ: (Դիմելով Մեյին): Միսի'ս Քրուկշանկ, կարող եք կանգնել ձեր ամուսնու կողքին: (Ռոուզը կասկածանքով նայում է նրանց):

ՄԵՅ.— Լավ, սը՛ր:

ԴԱՏԱՎՈՐ (նստելով իր տեղը).— Դուք լա՛վ կերակուրներ եք եփում:

ՄԵՅ.— Դե՛... Ի՞նչ ասեմ... Այո՛, սը՛ր:

ՌՈՈՒԶ.— Լոբով շիլա:

ՄԵՅ.— Այո՛, լոբով շիլա:

ՌՈՈՒԶ.— Մենք ունենք այն մթերքների ցուցակը, որ ուզում եմք գնել:

ԴԱՏԱՎՈՐ.— Ծատ լավ: Միսիս Քրուկշանկը կարող է գնալ այդ գնումները կատարելու:

ՌՈՈՒԶ.— Ահա ցուցակը: (Նա Մեյին է մեկնում ցուցակը):

ԱՐԶԻ.— Վախենում եմ դրամարկղում այլևս փող մնացած չլինի: Երեկվանից ոչ մի հաճախորդ չի եկել:

ԴԱՏԱՎՈՐ.— Դուք լրացրե՛լ եք ՅՅՅ ձևը, մի'ստր Քրուկշանկ:

ԱՐԶԻ.— Այո: Ահա: (Նա թուղթը մեկնում է դատավորին: Վերջինս արագորեն մոտենում է, որ վերցնի):

ԴԱՏԱՎՈՐ.— Վերակացո՛ւ, կարծում եմ ամեն ինչ կարգին է: Կարող եք վճարել: (Վերակացուն վերցնում է ՅՅՅ ձևը, հաշվում փողը, տալիս Արչիին, իսկ վերջինս էլ՝ դրա մասը Մեյին է տալիս): Միսի'ս Քրուկշանկ, դուք ազատ եք այնքան ժամանակ, քանի դեռ գնումները չեք վերջացրել:

ՄԵՅ.— Լսում եմ, սը՛ր: (Նա գնում է):

ԴԱՏԱՎՈՐ.— Ինչպես տեսնում եմ, դեռ մի բոսյե էլ ունենք: Մի'ստր Քրուկշանկ, ես շատ եմ ցավում, որ երեկվանից ոչ մի հաճախորդ չի եկել ձեր ռեստորանը: Իսկապես ոչ մի հաճախորդ չի՞ եկել, մի'ստր Քրուկշանկ:

ԱՐՁԻ.— Ո՛չ, սը՛ր:

ԴԱՏԱՎՈՐ.— Դա լավ նշան է, մի՛սար Բրուկշանկ. չափից դուրս խմելը հանցագործություն է ժողովրդի հանդեպ:

ԱՐՁԻ.— Բայց այստեղ կարելի է նաև ընթրել: Հետո, իմ հաճախորդներն իրենց խմելու չափը գիտեն:

ԴԱՏԱՎՈՐ.— Դատական նիստն սկսված է: Խնդրում եմ ներս բերել առաջին մեղադրյալին: (Պահնորդները դուրս են գնում և իսկույն վերադառնում՝ իրենց հետ բերելով չափազանց այլալված, վաթսունհինգ տարեկանի մոտ մի ջենթլմենի, որը սպիտակ տռփից սիգարեթ է հանում և ծխում): Ատենակա՛լ, սկսե՛ք:

ԱՏԵՆԱԿԱԼ.— Ջեֆրի Ջոնսոն: Վաթսուկոթ տարեկան: Թույլ տղվեր սակ, ձերդ ազնվություն. մասնագիտությունը՝ թատրոն:

ՉԵՖՐԻ.— Թատերական քննադատ: Չնայած իմ իսկական մասնագիտությունը դա չէ:

ԱՏԵՆԱԿԱԼ.— Բայց ձեր ապրուստը թատերական քննադատությամբ չեք վաստակում, այնպես չէ՞:

ՋԵՖՐԻ.— Իմարկե, ոչ: Թատրոնի մասին քննադատականները հանույրի համար եմ գրում: Ես տասնմեկ տարեկանից ժամագրությունս ստացած փողերի տոկոսներով եմ ապրում:

ԱՏԵՆԱԿԱԼ.— Եթե ձեր մասնագիտությունը թատերական քննադատությամբ չէ, սոցա ինչո՞վ եք զբաղվում:

ՉԵՖՐԻ.— Ուսումնասիրում եմ մարդ արարածի էությունը:

ԴԱՏԱՎՈՐ (ատենակալին).— Խնդրեմ, շարունակեք:

ԱՏԵՆԱԿԱԼ.— Ամբաստանյալը ամբողջ կյանքում եղել է գոեհիկ, անտարբեր ու անպատասխանատու:

ՉԵՖՐԻ.— Օրվա մեջ երկու անգամ լոգանք եմ ընդունել, մեկը՝ ստավոտյան, մյուսը՝ երեկոյան: Թերևս, ավելացնենք նաև, որ ճուտ բոլորովին չեմ սիրում:

ԱՏԵՆԱԿԱԼ.— Բայց ձեզ ոչ մեկը չի հարցնում ճուտ սիրում եք, թե՛ ոչ:

ՉԵՖՐԻ.— Միևնույնն է, ես ճուտ չեմ սիրում: Չեմ սիրում նաև նրանց, ովքեր ճուտ սիրում են:

ԱՏԵՆԱԿԱԼ.— Ձեզ դատում են որպես ժողովրդի թշնամու:

ՉԵՖՐԻ.— Միևնույնն է, ես ճուտ չեմ սիրում:

ՎԵՐԱԿԱՅՈՒ.— Մի րոպե, խնդրում եմ: Կարգը մի՛ խանգարեք:

ՉԵՖՐԻ.— Ես ոչ մի անգամ էլ կարգը չեմ խանգարել...

ՎԵՐԱԿԱՑՈՒ.— Հենց հիմա դուք խանգարում եք:

ՋԵՖՐԻ.— Հիմար չլինես:

ԴԱՏԱՎՈՐ.— Հանգի՛ստ: Հանգի՛ստ: Խնդրում եմ, մի՛ կորցրեք դատավարության թափը: Մենք ժամանակ չունենք: Ատենակա՛յ, խնդրում եմ շարունակեք:

ԱՏԵՆԱԿԱԼ.— Մեղադրյալը դրական հողված է գրել մի գեղեցիկ դերասանուհու մասին, որը, սակայն, վատ է կատարել իր դերը:

ՋԵՖՐԻ.— Հիմարություն: Դա հրաշալի դերակատարում էր:

ԱՏԵՆԱԿԱԼ.— Դեռ ավելին, աղջիկը նրա սիրուհին է եղել:

ՋԵՖՐԻ.— Այո, ճիշտ է: (Մի աղջիկ ներս է խուժում բեմ):

ԱՂՋԻԿ.— Ջեֆրի՛... (Գրկում է նրան):

ՋԵՖՐԻ.— Նա հիմա էլ է իմ սիրուհին:

ԱՂՋԻԿ.— Քեզ հո վատ բան չե՞ն արել, Ջեֆրի՛:

ՋԵՖՐԻ.— Իսկ ո՞ր է Բիամարկը... Ինչո՞ւ Բիամարկին հետո չես բերել: Իմ շունը կկծեր սրանցից մեկնումեկին, և ես հաճույք կստանայի:

ԱՂՋԻԿ.— Նա փախավ:

ՋԵՖՐԻ.— Փախա՛վ... Տե՛ր Աստված... Բայց ինչո՞ւ չգնացիր նրան փնտրելու:

ԱՂՋԻԿ.— Ես ուզում էի քեզ գտնել: Ի՞նչ իմանայի, ինչ է պատահել քեզ: Ծառ էի անհանգստացած: Դե... ես չէի կարող Բիամարկին փնտրել, երբ դու էիր կորել:

ՋԵՖՐԻ.— Անուամենայնիվ կարող էիր փնտրել: Վերջին անգամ որտե՞ղ ես տեսել Բիամարկին:

ԱՂՋԻԿ.— Հյուրանոցի բակում, Ջեֆրի՛:

ՋԵՖՐԻ (դիմելով դատավորին).— Ձեի՛ք բարեհաճի մի տաքսի գտնել: Ծոսալ: Ծունս՝ Բիամարկը, կորել է:

ՎԵՐԱԿԱՑՈՒ.— Բայց... մի րոպե: Դուք իրավունք չունեք ոչ մի տեղ գնալու:

ՋԵՖՐԻ.— Ես ձեզ հետ հարկ կհամարեմ խոսել միայն այն ժամանակ, երբ որևէ զվարճալի բան ունենամ ասելու: Իհարկե, ինձ զվարճացնող որևէ բան: Մինչ այդ, շատ կուզեմայի, որ ձեր միտքը զբաղեցնեիք... դե՛... մի բանով զբաղվեք...

ՎԵՐԱԿԱՑՈՒ.— Ձե՛րդ ազնվություն, երևում է մեղադրյալը չի հասկանում իր հանցանքի էությունը...

ԴԱՏԱՎՈՐ.— Մի բոպե, վերակացո՛ւ: Պահնո՛րդ, խնդրում եմ տաքսի կանչել:

ԶԵՖՐԻ.— Ծնորհակալություն: (Նա հանում է դրամապանակը, մի քիչ մանր փող է տալիս դատավորին): Արի՛, սիրելիս: Ծիշտ է, դու հուզվել ես, բայց կարիք չկա: Հիմա մենք կգտնենք Բիսմարկին: Ես համոզված եմ, հիմա նա դրսում, դռան մոտ նստած, մեզ է սպասում:

ԴԱՏԱՎՈՐ.— Պարո՛ն դատական վերակացու, դատարանը լիովին ի վիճակի է հանուն ժողովրդի հետաքրքրության հետաձգել մեղադրյալի պատիժը: Դուք կհետևեք մեղադրյալին և նրա հանցակից ընկերուհու վարքին: Հետո, պարո՛ն վերակացու, խնդրում եմ ուշադրություն դարձնել ժողովրդի իմաստուն գործկակերպին՝ իր իսկ թշնամիներին մերկացնելու գործում: (Նա թղթադրամները նետում է վերակացուին): Բարի եղեք սա նստկացնել ժողովրդական ֆոնդին: Մյուս մեղադրյալին, խնդրում եմ: (Սա թատերական քննադատի տարիքին է):

ԴԱՏԱՎՈՐ.— Պարո՛ն ատենակալ, լսում ենք:

ԱՏԵՆԱԿԱԼ.— Էնդրյու Արբենթի: Վաթսունմեկ տարեկան: Չի ափսոսում: Ոչնչով չի գրավում:

ԱՄՐՆՆԵԹԻ.— Միշտ չէ՛ ես վաղ եմ շինում: Արդեն երեսուն տարի է վաղ եմ շինում:

ԱՏԵՆԱԿԱԼ (անտարբեր երև առածներին).— Դրամանեկություն:

ԴԱՏԱՎՈՐ.— Կարելի՛ է մի քանիսը զննել: (Արբենթին տարածի ու բանկոնի գրպաններից հանում է բոլորովին նոր օտված թղթե դրամների հաստ կապուկը): Ձե՛րդ ազնվության, այս կապուկի մեջ հազար դոլլարանոցներն են: Իսկ սա՛՛նի՛ն՛ց նազարանոցներ, սրանք՝ քսան հազարանոցներ:

ԱՄՐՆՆԵԹԻ.— Ինչե՛ր է խոսում: Այդ թիվը երեք հարյուր միլիոնի է հասնում:

ԴԱՏԱՎՈՐ.— Հանգիստ, խնդրում եմ: Եկեք չկորցնենք երեկվա ձեր դատավարության թափը: Ծարունակեք, խնդրում եմ:

ԱՄՐՆՆԵԹԻ.— Կարո՞ղ եմ մի քան էլ ես ասել:

ԴԱՏԱՎՈՐ.— Ո՛չ: Պետք է սպասեք, մինչև խոսելու ձեր հերթը հասնի: Հիմա խոսքը ձեր դատապաշտությանն է:

ԱՄՐՆՆԵԹԻ.— Ես ուզում եմ նրա հետ խորհրդակցել:

ՎԵՐԱԿԱՑՈՒ.— Դրա անհրաժեշտության կարիքը չի զգացվում:

Առանց դրա էլ, նա լիովին ի վիճակի է պաշտպանելու ձեզ:

ԴԱՏԱՊԱՇՏՊԱՆ.— Դատարանի ուշադրությունն հրավիրում եմ այն փաստին, որ մեղադրյալին չի կարելի իսկական դրամանենց համարել: Ահա մի թղթադրամ նրա երեք հարյուր միլիոն դոլլարից: Թուղթն ու տպագրությունը հրաշալի են: Բայց, ջեներմենեն'ր, այս մի կողմին տպագրված է ինչ-որ նկար՝ որի տակ մակագրված է՝ «Իմ հայրը»: Իսկ մյուս երեսին տուն է նկարված և մակագրված է՝ «Հորս տունը»: Այս մեկը նույն թղթադրամն է, միայն թե կնոջ նկարով՝ «Իմ մայրը», իսկ հակառակ երեսին՝ տղամարդ, «Իմ մորեղբայրը» վերտառությանմբ:

ԱԲՐՆԵԹԻ.— Նա մեռավ, երբ քսանյոթ տարեկան էր: Մորս համար դա շատ ծանր հարված էր:

ՎԵՐԱԿԱՑՈՒ.— Դուք պարտավոր եք սպասել, մինչև խոսելու ձեր հերթը հասնի: Դատարանը կհայտնի, երբ կարելի է խոսել, երբ՝ ոչ:

ԴԱՏԱՊԱՇՏՊԱՆ.— Ձե՛րդ ազնվություն, վերջում կկամենայի մի հարց տալ մեղադրյալին: Ձեր կեղծած դրամներից ինչքա՞ն էք ծախսել:

ԱԲՐՆԵԹԻ.— Մոտ վեց միլիոն դոլար: Բայց ես շատ պարտքեր ունեի:

ԱՏԵՆԱԿԱԼ.— Վախենում եմ փոքր-ինչ ժամանակ ենք կորցնում, բայց հանուն հետաքրքրության... ես ուզում էի իմանալ, ինչո՞ւ եք պարտքերի մեջ ընկել:

ԱԲՐՆԵԹԻ.— Խաղամոլության պատճառով:

ԴԱՏԱՊԱՇՏՊԱՆ.— Ներեցեք, ձերդ ազնվություն, ես պետք է իմանամ, թե ում է այդքան փող տարվել ամբաստանյալը:

ԱԲՐՆԵԹԻ.— Մայրիկիս: Գիտեի, նա բլեֆ³ էր անում, բայց մայրս այնքան երջանիկ էր իրեն զգում թուղթ խաղալուց, որ ես միշտ տարվում էի:

ԴԱՏԱՊԱՇՏՊԱՆ.— Մայրդ ի՞նչ էր անում այդ փողը:

ԱԲՐՆԵԹԻ.— Մեծ մասը սրան-նրան էր բաժանում: Նա շատ անփույթ էր փողի հարցում:

ԴԱՏԱՊԱՇՏՊԱՆ.— Ո՞ւմ էր տալիս այդ փողերը:

ԱԲՐՆԵԹԻ.— Մեր ազգականներին:

ԴԱՏԱՊԱՇՏՊԱՆ.— Իսկ նրանք ի՞նչ էին անում...

- ԱՅՐՆԵԹԻ.— Խնայողները պահում էին, անփույթները՝ իրենց քեֆին ծախսում:
- ԳԱՏԱՊԱՇՏՊԱՆ.— Այդ փողերով խանութ գնացե՛լ եք, ասե՛նք՝ որևէ բան գնելու:
- ԱՅՐՆԵԹԻ.— Ո՛չ: Մենք, ինչ որ պետք էր, ունեինք:
- ԳԱՏԱՊԱՇՏՊԱՆ.— Ի՞նչ նպատակով եք փող կեղծել:
- ԱՅՐՆԵԹԻ.— Դեռ դպրոցական տարիներից որոշել էի աշխարհի ամենահարուստ մարդը դառնալ:
- ԳԱՏԱՊԱՇՏՊԱՆ.— Այդ վերջինը չպետք է ասեիք: (**Դատավորին**): Ես վերջացրի:
- ԳԱՏԱՎՈՐ.— Ուրիշ ոչինչ չէի՞ք կարող ավելացնել:
- ԱՅՐՆԵԹԻ.— Ծիշտն ասած, չհասկացա:
- ԳԱՏԱՊԱՇՏՊԱՆ (**ծուլորեն նայելով թղթադրամին**).— Այս մարդը թղթադրամին մակագրել է. «Սոնյայի մայրը»: Իսկ ո՞վ է Սոնյան:
- ԱՅՐՆԵԹԻ.— Սոնյան ու նրա մայրը մի քանի տարի մեր հարեվաններն են եղել:
- ԳԱՏԱՎՈՐ.— Մենք կորցնում ենք դատավարության թափը: Մեղավոր է...
- ԱՅՐՆԵԹԻ.— Ինչո՞ւ: Եթե Սոնյայի պատճառով եք ինձ դատում... Նա քրոջ պես է եղել ինձ հետ:
- ԳԱՏԱՎՈՐ.— Գուցե խմել կամ սիգարե՞թ եք ուզում: Ի՞նչ կկամենաք:
- ԱՅՐՆԵԹԻ.— Մի բաժակ ջուր: (**Արչին մի բաժակ լիքը ջուր է լցնում: Աբրնեթին ազահորեն խմում է**):
- ԳԱՏԱՎՈՐ.— Պահնորդներ: (**Սրանք մոտենում են Աբրնեթին**):
- ԱՅՐՆԵԹԻ.— Ես կխնդրեի, որ փողերս ետ վերադարձնեք:
- ԳԱՏԱՊԱՇՏՊԱՆ.— Իսկ այս մեկին գրված է. «Մայքի մայրը»: Ո՞վ է Մայքը:
- ԱՅՐՆԵԹԻ (**բարկացած, գրեթե ինքն իրեն չտիրապետելով**).— Չե՛ր ի՞նչ գործն է: Ինքների պարզեք: Իսկույն երևում է, որ ձեզանից ոչ մեկը փողից ոչինչ չի հասկանում: Ես խնդրում եմ, որ բոլոր փողերս ետ վերադարձնեք:
- ԳԱՏԱՊԱՇՏՊԱՆ.— Ես շատ կուզեի, որ այս մի կապուկը՝ «Սյուզիի հայրը», մնար ինձ մոտ՝ որպես հիշատակ:
- ԱՅՐՆԵԹԻ.— Չէ մի... Ինձ չեք կարող համոզել:
- ԳԱՏԱՎՈՐ.— Վերակացո՛ւ, փողերը ետ վերադարձրեք ամբաս-

տանյալին: (Սա փողը հավաքում է ու տալիս Արքեպիսկոսոսին, որին պահնորդները հրմշտելով, առաջները գցած տանում են դուրս): Ջենթլմեններ՛ր, մենք կորցրեցինք դատավարության թափը, և ես ամեն ինչ կանեմ, որ այն վերականգնվի: Դատապաշտպան՛ն, հարկ եմ համարում նշել, որ մեղադրյալի նրկատմամբ անձնական հետաքրքրասիրության գոհացումը խստիվ արգելվում է: Արագ կատարեք դատապաշտպանությունը՝ ըստ սահմանված կարգի, և նստեք:

ԴԱՏԱՊԱՇՏՊԱՆ.— Լսում եմ, Ջե՛րդ ազնվություն:

ՄԻ ԶԱՅՆ (դրսից).— Հանրապետության՛ն պահնորդներ, հանուն ժողովրդի...

ԽՄԲԱԶԱՅՆ (դրսից).— Հանուն ժողովրդի...

(Հրացանների համազարկ):

ԴԱՏԱՎՈՐ.— Խնդրում եմ կանչել մյուս մեղադրյալին: (Սա ձեռք կին է՝ փոքրիկ, ժպտացող աղջնակի պես):

ԾԵՐ ԿԻՆ.— Մեղավոր եմ: Կարո՞ղ եմ գնալ:

ՎԵՐԱԿԱՑՈՒ.— Խնդրում եմ սպասեք, մինչև խոսելու ձեռ հերթը կհասնի:

ԱՏԵՆԱԿԱԼ.— Էլի՛նոր Մորիլրթի: Յոթանասուններկու տարեկան: Գործազուրկ: Մուրացկան: Վերջ:

ԴԱՏԱՎՈՐ.— Ա՛յ, այդպես արագ պետք է գործել: (Դատապաշտպանին): Դուք ի՞նչ կասեք:

ԴԱՏԱՊԱՇՏՊԱՆ.— Վե՛րջ:

ԴԱՏԱՎՈՐ.— Հրաշալի է: (Էլի՛նորին): Դուք չեի՞ք կամենա վերջին հայցով դիմել դատարանին:

ԷԼԻՆՈՐ.— Թույլ կտա՞ք գնամ:

ԴԱՏԱՎՈՐ.— Մեղավոր է... Պահնորդներ... (Պահնորդները պատրաստվում են դուրս տանել կնոջը):

ԱՐՁԻ.— Բայց նա չխմեց, սը՛ր:

ԴԱՏԱՎՈՐ.— Դուք միանգամայն իրավացի եք, մի՛ստր Քրուկշանկ: Նա իրավունք ունի խոսելու կատավարության հաշվին:

ԱՐՁԻ.— Ի՞նչ կխմեք:

ԷԼԻՆՈՐ (երեխայի նման).— Օ՛, ի՞նչ եք ասում:

ԱՐՁԻ.— Մի քիչ կոնյակ, հը՞...

ԷԼԻՆՈՐ.— Օ՛... (Արջին լցնում է բաժակը: Կինը խմում է: Պահնորդները դուրս են տանում կնոջը: Նույն ձևով ի կատար է ածվում պատիժը):

ԴԱՏԱՎՈՐ.— Կանչե՛ք մյուս մեղադրյալին և հիշե՛ք, պետք է պահպանել դատավարության թափը: **(Այս անգամ մեղադրյալը մի երիտասարդ է):**

ԱՏԵՆԱԿԱԼ.— Էդուարդ Հոուկինս: Քսաներեք տարեկան: Գործազուրկ: Բանաստեղծություններ է գրում: Երբեք չի աշխատել: Նպարեղեն է գողանում: Վե՛րջ:

ԳԱՏԱՊԱԾՏՊԱՆ.— Վե՛րջ:

ԴԱՏԱՎՈՐ.— Կկամենա՞յի՞ք որևէ բան ավելացնել:

ԷԴՈՒԱՐԴ.— Ես ամեն ջանք գործադրում եմ, որպեսզի թոշակ ստանամ: Դա հնարավորություն կտա ավարտել իմ հերոսական պոեմ-եռերգությունը: Այն մի պատում է մարդու՝ ճշմարտության և կյանքի իմաստը գտնելու հարատև ճիգերի մասին: Եռերգության առաջին մասն արդեն սկսել եմ: Այնտեղ նկարագրված են մարդու՝ խաղաղություն և անդորր գրտնելու հարատև ճիգերը: Երկրորդ մասի սյուժեն ընդհանուր առմամբ պարզ է. այն կպատկերի մարդու հավերժական ճիգերը սեփական տուն և օջախ գտնելու համար: Թեև վերջին՝ երրորդ մասը, վերջերս է հղացվել, բայց մտադիր եմ նկարագրել հանապազօրյա հաց գտնելու համար մարդու հավերժական ճիգերը:

ԱՐՉԻ.— Ի՞նչ եք ուզում ուտել:

ԷԴՈՒԱՐԴ.— Կարծով սուրճ և կարկանդակ:

ԱՐՉԻ.— Լավ կլինի մի բաժակ կոնյակ խմես ու ծխես: **(Լցնում է բաժակը: Բանաստեղծը խմում է: Արչին սիգարեթ է հրամցրնում, վառում է այն):**

ԷԴՈՒԱՐԴ.— Եթե ես թոշակ ստանամ, համոզված եմ, որ հիշարժան մի բան կթողնեմ մարդկությանը:

ԱՏԱՎՈՐ.— Պահնորդներ: **(Պահնորդները կանգնում են բանաստեղծի երկու կողմում):**

ԷԴՈՒԱՐԴ.— Ես շատ երախտապարտ կլինեմ, եթե թոշակ ստանամ: Ինձ համար այն մեծ օգնություն կլինի: Չէ՞ որ ես մորս եմ խնամում: Ծիշտ է, «Պոեզիա»⁴ ամսագրում տպագրվել են իմ երկու բանաստեղծությունները, բայց դե, բոլորդ էլ լավ գիտեք, որ դրանով հնարավոր չէ մայր պահել: **(Պահնորդները դուրս են տանում նրան և մեղադրյալի պատիժը ի կատար է ածվում սովորական ձևով):**

ԴԱՏԱՎՈՐ.— Խնդրում եմ կանչել մյուս մեղադրյալին: (**Մեղադրյալը փոքրիկ տղա է**):

ԱՏԵՆԱԿԱԼ (փաստաթղթերը գննելով).— Ջոն Դելամեր: Երեք տարեկան ինն ամսական: Ոչնչով չի զբաղվում: Մասնագիտություն չունի: Հայրը ծառայում է Հանրապետության պահանորդական խմբում: Մայրը՝ Հայրենիքի պաշտպանության կանանց զորամասում: (**Փոքրիկ ընդմիջում**): Մեղադրյալը բացեիքաց արտահայտել է իր ատելությունը Հանրապետությանը զինվորագրված իր ծնողների նկատմամբ: (**Բարկացած նայում է անմեղ, միայնակ ու փոքրիկ տղային, հետո վերջացնում է նվաղած ձայնով**): Վե՛րջ:

ԴԱՏԱՊԱՇՏՊԱՆ.— Վե՛րջ:

ԱՐՁԻ.— Է՛յ, լսե՛ք, գիտե՛ք ինչ... Դուք իմ տունը անմեղ մարդկանց սպանդանոց եք դարձրել, բայց ես մինչև հիմա վախից ծպտուն չեմ հանել, որ մի կտոր հաց կարողանամ ուտել և գիշերը հիմարավարի քնեմ: Բայց եթե սկսեք թույլ, խեղճ, հիվանդ, անտուն և դժբախտ մարդկանց հետ նաև երեխաներ մորթել, ուրեմն ձեր այդ կեղտոտ հողվածք նաև ինձ վրա դրեք, որովհետև ես չեմ ուզում ձեզ հետ միևնույն աշխարհում ապրել: (**Նա կանգնում է փոքրիկ տղայի կողքին՝ մեղադրյալի տեղում**):

ՎԵՐԱԿԱՑՈՒ.— Դուք խանգարում եք կարգը... Կանգնե՛ք ձեր տեղը:

ԱՐՁԻ.— Ե՛ս եմ կարգը խանգարողը... մարդ կնքող ապո՛ւշ:

ՌՈՈՒՋ.— Արչի՛, Աստծու սիրուն, քանի դեռ ուշ չէ, գնա տեղդ:

ԴԱՏԱՎՈՐ.— Մի՛սս Քրուկշանկ, խնդրում եմ մի բռայե լռել: (**Նա կարեկցանքով նայում է Արչիին**): Մի՛ստր Քրուկշանկ...

ԱՐՁԻ.— Դուք էլ ձեզ համարում եք Արդարադատության ատլանի դատավոր: Եվ համոզված եք, որ կարո՞ղ եք ապրել ձեր հիմնած այս աշխարհում, որտեղ անն ու սարսափն են տիրում: Մի աշխարհ, որտեղ նույնիսկ այս փոքրիկ տղայից եք դողում, որ կարող է ձեր դատարանից հանգիստ դուրս գալ և գնդակահարվել՝ նույնիսկ չհասկանալով թե ինչ տարօրինակ բան է կատարվում իր հետ, ինչպես չհասկացան փոքրիկ տղայի պես իրենց կյանքի տառիները մաքուր ապրած այն մարդիկ, որոնց տարաք աղյուսե պատի տակ ու գնդակահարեցիք: Չեզանից ոչ մեկը այս մանկան չափ խելք չունի:

Կարծում եք այս ամենից հետո կարող եք հանգիստ ապրել ձեր ստեղծած հիվանդոտ ու փտած աշխարհում: Չէ՞ որ բուրի նման դուք էլ հայրեր ու մայրեր ունեք: Գուցե նաև՝ երեխաներ: Ինչպե՞ս եք ապրելու ձեր ստեղծած աշխարհում:

ԴԱՏԱՎՈՐ (զսպված համբերությամբ).— Մի՛ստր Քրուկշանկ... ԱՐՁԻ.— Ես ձեզանից խելացի չեմ, բայց մի՞թե կարելի է տգիտությունը իշխանությամբ քողարկել: Իշխանությունը պետք է ներդաշնակվի բարության և բանականության հետ: Մի՞թե չգիտեք, թե որքան տգետ եք... այդ տգիտությամբ ինչպե՞ս եք համարձակվում օգտվել իշխանությունից:

ՌՈՌԻԶ.— Արչի՛, Աստծու սիրուն, վե՛րջ տուր...

ԱՐՁԻ.— Եթե ձեզ վիճակված է տգետ լինել, գոնե փորձեք ձեր տգիտությունը քողարկելու համար փոքր ինչ բարյացակամ լինել:

ԴԱՏԱՎՈՐ.— Է՛լ, պահնո՛րդ, դրա ձայնը կտրեք... (Պահնորդներից մեկը բարձրացնում է հրացանը և նշան բռնում Արչիի վրա):

ԱՐՁԻ.— Երիտասա՛րդ, ես երբեք չեմ մոռանա, թե ինչպես հրացան բարձրացրիք վրաս: Դուք նույնպես չեք մոռանա:

ԴԱՏԱՎՈՐ (հետզհետե ավելի է բարկանում).— Դրա ձայնը կըտրի՛ր, պահնո՛րդ:

ՌՈՌԻԶ (կանգնելով հրացանի փողի ու Արչիի միջև).— Ո՛չ... նա չի հասկանում, թե ինչ է ասում... Չէ՞ որ նա նույնպես հայր է: Նա կորցրել է գիտակցությունը:

ԱՐՁԻ.— Հեռո՛ւ կաց, աղջի՛կ...

ԴԱՏԱՎՈՐ.— Վերակացո՛ւ. նրան հեռու տարեք... (Վերակացուն փորձում է Ռոուզին մի կողմ հրել, բայց նա չի ուզում շարժվել):

ՌՈՌԻԶ.— Ո՛չ... Դուք իրավունք չունեք... Նա իմ հայրն է... Նա բարի մարդ է... Չհամարձակվեք նրան սպանել... (Մեկ Ֆուլերը ներս է մտնում նպարեղենով լի երկու ցանցազամբյուղները բռնած):

ՄԵՅ.— Գրողը տանի... Այս ի՞նչ է կատարվում այստեղ: Ծաշի համար ինչ համեղ բան ասես գնել եմ: Բայց ինչո՞ւ եք բոլորդ այդպես հուզված: (Նկատում է տղային): Ա՛խ, դուք նույնիսկ այս տղայի՞ն եք դատում: Բայց չէ՞ որ նա մի օր մեծ մարդ է դառնալու: Ա՛խ, թանկագի՛նս: Դու բոլորովին էլ միայնակ

չես այս աշխարհում, որովհետև ամեն մի կին, որ դեռ կհսոյճ չափ կին է մնացել, քո հարազատ մայրիկը կդառնա: Դու ամեն ինչին այդպես մոայլ ու թախծոտ մի նայիր: Քեզ համար ես կարկանդակներ կթխեմ, սիրելի՛ս: Ես կսովորեմ թխել: Եթե քո սրտիկը կարկանդակ ուզի, ես խոհարարական գրքեր կըկարդամ, կսովորեմ...

ՏՂԱ.— Ինձ ոչինչ էլ պետք չէ:

ՄԵՅ.— Ո՛վ է վշտացրել այս տղային: Դրա պատճառով նա ամեն ինչին այդպես դառնությամբ է նայում: Ես կապտակեմ նրան, ով այս գառնուկի մեջ սերը ատելություն է դարձրել: **(Ներս է մտնում պետության պաշտոնցան):**

ԴԱՏԱՎՈՐ (բարկությունը զսպելով).— Միսի՛ս Քրուկշանկ, խընդրում եմ մեղադրյալին թողնել իր նախկին տեղում:

ՄԵՅ.— Մեղադրյալի՞ն... Այս գառնո՛ւկն է մեղադրյալը: Ա՛խ, ես ինձ վատ էմ զգում: Ասում եք նրան նախկին տեղո՞ւմ թողնեմ... Բայց նրա տեղը, ա՛յ, կրծքիս վրա է: Գուցե նա ուզում է խաղալ մարգարտյա ուլունքներիս հետ և զգալ բուրմունքը այն կնոջ, որ դեռ կարողացել է կին մնալ: Չէ որ այնքան էլ երկար ժամանակ չի անցել այն օրից, երբ ես էլ երեք հրաշք տղաներ ծնեցի. իհարկե, նրանք այս գառնուկի պես չէին: Եթե այս մանկիկը ատում է որևէ մեկին, ինքներդ էլ եք հասկանում, որ նա պատճառ ունի այդ բանն անելու: Իհարկե, նա նրան իր նախկին տեղում կթողնեմ, իհարկե: Ես նրա մայրը կլինեմ, իսկ Արչին՝ հայրը: Իմ գառնուկին վերև կտանեմ: Նա տուն կունենա, որտեղ նրան կսիրեն ու կփայփայեն: Իսկ դուք, ով էլ որ լինեք, ինչ էլ անելու լինեք... վերջացրե՛ք... **(Շըրջվում է, արժանապատվորեն քայլում, բայց վերակացուն ճանկում է նրա ձեռքը):** Ասացին վե՛րջ տվեք... **(Կինը ազատվում է ու ապտակում վերակացուին):**

ՏՂԱ (հրճվանքով).— Նորից խփի՛ր...

ՄԵՅ.— Հապա նորից թող համարձակվի ինձ ձեռք տալ, կտեսնես ինչպես կապտակեմ: **(Վեհորեն բարձրանում է աստիճաններով, դեպի վերևի սենյակը, ետևից շրխկացնելով դուռը: Բուլորն ապշած են: Նրանց թվում՝ նաև Արչին: Պաշտոնցան, զարմանքից քար կտրած, մարդկանց միջով մոտենում է վաճառասեղանին: Բողորի նայվածքներն ուղղվում են նրան: Պաշտոնցան իր համար վիսկի է լցնում ու կոնծում):**

ՊԱՇՏՈՆՅԱ.— Ես նոր հրահանգ եմ ստացել: Բարի եղեք բոլորդ փակելու ձեր բերանները և անցեք տեղների: Մայրական այս ցասումը չպետք է զարմացնի ձեզ: (Նա գրպանից մի փաստաթուղթ է հանում, բացում է ու մի պահ ուշադիր ուսումնասիրում: Նկատում է պահնորդին, որ դեռ հրացանը ուղղել է Արշիի վրա): Իմ սիրելի՛ բարեկամ, ձեր այդ հրացանը հենացրեք կամ ձգանը թողեք: (Պահնորդը հրացանը իջեցնում է՝ թեթևացած շունչ քաշելով):

ԴԱՏԱՎՈՐ.— Մենք ստիպված կարգադրեցինք պահնորդին, որ պետզի նա կարգի հրավիրեր միսոր Քրուկշանկին: Միսոր Քրուկշանկը ըմբոստանալու կոչ էր անում, բայց պահնորդը չհնազանդվեց մեր հրամանին:

ՊԱՀՆՈՐԴ.— Այդ տղան... իմ որդին է: Ես վախենում էի պաշտպանել նրան: Հետո, ինչպե՞ս կարող էի կրակել մի մարդու վրա, որ չվախեցավ պաշտպանել որդուս: Ծիշտ է, տղաս ատում է ինձ, նա իր մորն էլ է ատում, բայց շատ վաղուց չէ, որ զզվել է մեզանից: Միայն այս... վերջին ինն ամիսներին...

ԴԱՏԱՎՈՐ.— Դուք նկատի ունեք Հանրապետության ինն ամիսները: Հասկանո՞ւմ եք, թե ինչ եք ատում:

ՊԱՀՆՈՐԴ.— Այո, Հանրապետության գոյության ինը ամիսները: Հետո, այո, ես հասկանում եմ թե ինչ եմ խոսում:

ԴԱՏԱՎՈՐ (դիմելով պաշտոնյային, որ մի բաժակ էլ է վիսկի լցնում, մոտեցնում շորթերին).— Այսօրվա դատավարության ընթացքի ամբողջ պատասխանատվությունն ընկնում է միսոր Քրուկշանկի վրա:

ՊԱՀՆՈՐԴ.— Ոչ թե միսոր Քրուկշանկի, այլ որդուս վրա:

ՊԱՇՏՈՆՅԱ (կոնձելով).— Մի՛սոր Քրուկշանկ, սա էլ եղավ երկու... Լրացրեք, խնդրում եմ ՅՅՅ ձևը: (Նայում է դատավորին): Ես խնդրում եմ բոլոր հավաքվածներիդ, որ փակեք ձեր բերանները, երբ ես եմ խոսում: Կարդում եմ նոր հրահանգը: «Հանրապետության հավատարիմ ծառաներին: Սույն հրահանգը ծանուցվելուց անմիջապես հետո, իսկույն դնել գործողության մեջ՝ կետ առ կետ: Հանրապետության բոլոր դատարաններում յուրաքանչյուր աճուրձ՝ ներառյալ դատավորը, վերականգուն, ատենակալը, դատապաշտպանը ու դատական պահնորդները, պետք է իրենց պաշտոնները փոխեն վեց մեղադրյալների հետ: Առաջին մեղադրյալը դատավորի, երկ-

րորդը՝ վերակացուի, երրորդը, չորրորդը, հինգերորդը, վեցերորդը՝ ատենակալի, դատապաշտպանի և պահնորդների հետ համապատասխանաբար: Եվ նույն հերթով կատարվի դատարանի նախկին անդամների դատավարությունը»: Վերջ:
ՊԱՀՆՈՐԴ-ՀԱՅՐ.— Օ՛քեյ: Նախքան գնդակահարվելս, ես նորից կուզեի գրկել որդու: Ինձ այդքանն էլ բավական է:

ԴԱՏԱՎՈՐ.— Չեմ հասկանում:

ՊԱՇՏՈՆՅԱ.— Իսկ հասկանալը պարտադիր չէ: Ինքս էլ պարզ չեմ ըմբռնում կատարվածը և գուցե ինձ ավելի խիստ պատժեն: (Նա մի բաժակ էլ է վիսկի կոնծում): Սա եղավ երեք, մի՛ստր Քրուկշանկ: Բայց լավ իմացեք, ես հրահանգն եմ կատարում:

ԴԱՏԱՎՈՐ.— Թույլ կտա՞ք հարցնել՝ ո՞վ է պատասխանատու այդ հրահանգի համար:

ՊԱՇՏՈՆՅԱ.— Դուք իրավունք ունեք հարցնելու, իսկ ես՝ պատասխանելու: Այդ հրահանգը Հանրապետության ինը ամսվա մյուս օրենքների նման նույն ակունքից է բխում:

ԴԱՏԱՎՈՐ.— Բայց ես հավատարմորեն ծառայել եմ Հանրապետությանը, մշտապես բարձր պահելով ժողովրդի նվիրական ձգտումները:

ՊԱՇՏՈՆՅԱ.— Իհարկե: Ես հավատում եմ ձեզ: Նույն բանն էլ ես եմ կատարել, բայց երանի հիմա գիներվաճառ լինեի: Ես և դուք հիմա էլ կշարունակենք բարձր պահել ժողովրդի նվիրական ձգտումները: Անցե՛ք մեղադրյալի տեղը: (**Դատավորը գնում է Արչիի և փոքրիկ տղայի կանգնած տեղը**): Վերակացո՛ւ, խնդրում եմ, կարդացեք վեց մեղադրյալների անունները՝ ըստ նոր ստացված հրահանգի:

ՎԵՐԱԿԱՅՈՒ (աչքի անցկացնելով թղթերը).— Ստիվեն Լոկհիդ:

ՊԱՇՏՈՆՅԱ.— Ստիվեն՝ Լոկհիդ, խնդրեմ: (**Ստիվեն Լոկհիդը մոտ հիսուն տարեկան մարդ է՝ ընկճված տեսքով**):

ՍՏԻՎԵՆ.— Եթե համաձայն եք, եկեք շրջանցենք այս հիմար հարցաքննությունները և ժամանակ չկորցնենք. ինձ ձրի խմիչք և սիգարետ տվեք, հետո ուր ուզում եք տարեք և մյուսների պես գնդակահարեք:

ՊԱՇՏՈՆՅԱ.— Խնդրում եմ կանգնեք ա՛յ այնտեղ՝ վաճառատնի դահլի ետևում: Հաջորդ վեց մեղադրյալների դատավարության ժամանակ դուք պետք է հանդես գաք որպես դատավոր:

ՍՏԻՎԵՆ.— Իսկ ձրի խմիչքի հարցը ո՞վ պետք է լուծի, հը՞...

ՊԱՇՏՈՆՅԱ.— Հրահանգում այդ մասին հիշատակված չէ, բայց, ահա՛, խմի՛ր... (Նա լցնում է բաժակը և Ստիվենը կոնձում է վիսկի):

ՍՏԻՎԵՆ.— Մի հատ էլ չգցեի, հը՞... Արդեն քսանչորս ժամ կլինի ոչ մի կաթիլ չեմ խմել, և մարմինս դող է ընկել:

ՊԱՇՏՈՆՅԱ.— Ծատ լավ: Խնդրում եմ հաշիվը պահեք, մի՛ստր Ջրուկշանկ: (Նա մի բաժակ էլ է լցնում, և Ստիվենը դա էլ է կոնձում):

ՍՏԻՎԵՆ.— Ասում եք՝ կանգնեմ այստե՞ղ, հա՞...

ՊԱՇՏՈՆՅԱ.— Այո, միայն թե՛ մի քիչ աջ: Վերակացո՛ւ, կանչե՛ք երկրորդ մեղադրյալին:

ՎԵՐԱԿԱՑՈՒ.— Էնթնի Բիքն: (Պահնորդը ներս է բերում տասընյոթ-տասնութ տարեկան մի տղայի, որը, թերևս, խենթի մեկն է):

ՊԱՇՏՈՆՅԱ.— Էնթնի Բի՛քն:

ԷՆԹՆԻ.— Ի՞նչ:

ՊԱՇՏՈՆՅԱ.— Դուք Էնթնի Բի՛քնն եք:

ԷՆԹՆԻ.— Ո՞վ:

ՊԱՇՏՈՆՅԱ.— Խնդրում եմ կանգնել այդ մարդու կողքին՝ սեղանի մոտ:

ԷՆԹՆԻ.— Ի՞նչ:

ՊԱՇՏՈՆՅԱ (զգուշորեն բռնում է նրա ձեռքը, տանում, կանգնեցնում է վերակացուի կողքին).— Միգուցե խո՞ւլ է: (Գլխով է անում տղային):

ԷՆԹՆԻ (հապշտապ).— Ի՞նչ եք ուզում ինձանից: Ի՞նչ եք ուզում ինձանից: Ես ի՞նչ եմ արել...

ՊԱՇՏՈՆՅԱ.— Վերակացո՛ւ, կանչե՛ք երրորդ մեղադրյալին:

ՎԵՐԱԿԱՑՈՒ.— Գորդոն Փիչհըմ: (Պահնորդը ներս է բերում մի կքած մտավորականի, որը շարունակ ժպտում է: Նա խոսում է մեղմորեն):

ՊԱՇՏՈՆՅԱ.— Ահա այստեղ, սը՛ր: Դուք հանդես կգաք որպես ատենակալ:

ԳՈՐԴՈՆ.— Ներեցեք, ի՞նչ...

ՊԱՇՏՈՆՅԱ.— Մենք նոր հրահանգ ենք ստացել: Հետո ամեն ինչ կբացատրեմ:

ԳՈՐԴՈՆ.— Մի հարց կարելի՞ է: Վերջապես ճաշելու հույս կա՞...

ՊԱՇՏՈՆՅԱ.— Իհարկէ: Վերակացո՛ւ, խնդրում եմ կանչել չորրորդ մեղադրյալին:

ՎԵՐԱԿԱՑՈՒ.— Դորա Լիվինգսթոն: **(Պահնորդները ներս են բերում քսանհինգ տարեկան մի կնոջ: Սա խոսում է բարձր, խռպոտ ձայնով):**

ԴՈՐԱ.— Օ՛քե՛յ: Ինձ գնդակահարեք... Ես պարզապէս սովորական թափառաշրջիկ եմ, որի բոլոր հույսերը խորտակվել են... Իսկ ձեզ, բոլորիդ, կեղտո՛տ սրիկաներ, ատում եմ հավիտյան:

ՊԱՇՏՈՆՅԱ.— Միսս Լիվինգսթոնը կլինի դատապաշտպանը: Ձե՛ք բարեհաճի կանգնել այստեղ, մի՛սս Լիվինգսթոն:

ԴՈՐԱ.— Դե՛, գիտե՛ք ինչ... ինձ հետ արդեն այնքան եմ կատակել... Ինձանից ձեռ քաշեք... Մարդ եմ գտել, ձեռ եմ առնում...

ՊԱՇՏՈՆՅԱ.— Մի՛սս Քրուկշանկ, խնդրում եմ բացատրել միսս Լիվինգսթոնին, որ նրա հետ ոչ մեկը չի կատակում:

ՌՈՌԻՋ.— Ձե՛ որ նոր հրահանգ է եկել: Դուք պարտավոր եք պաշտպանելու մեղադրյալներին:

ԴՈՐԱ.— Գրողի ծոցը թե հրահանգ չի եկել... Մտքովս էլ չի անցնում որևէ մեկին պաշտպանել: Կյանքումս առաջին անգամն եմ այս ռեստորանում լինում: Ձեզանից ո՛վ է ճանաչում ընկերոջս՝ Ջո Թըրներին. նա այստեղ երկար տարիներ պանդոկապան էր: Եթե ճանաչեիք, անպայման մի բաժակ կոնյակ կտաիք խմեի... պարտքով:

ՊԱՇՏՈՆՅԱ.— Իհարկէ: **(Լցնում է բաժակը, տալիս է կնոջը, և նա, գլուխը ետ զցելով, Իմում է):** ՁԼի՛ք կանգնի այստեղ, մի՛սս Լիվինգսթոն: **(Կինը կանգնում է նրա ասած տեղում):** Վերակացո՛ւ, խնդրում եմ, կանչել հինգերորդ մեղադրյալին:

ՎԵՐԱԿԱՑՈՒ.— Սամուիլ Քրոֆիթ: **(Պահնորդը ներս է բերում մոտ քսաներկու տարեկան բարձրահասակ մի տղայի):**

ՊԱՇՏՈՆՅԱ.— Սամուիլ Քրոֆիթ:

ՍԱՄՈՒԻԼ.— Այո: Ես եմ: Այո: Ես եմ Սամուիլ Քրոֆիթը... Աստված տար չլինեի, չերևաի...

ՊԱՇՏՈՆՅԱ.— Դուք կկատարեք պահնորդի պարտականությունները: Պահնո՛րդ, հրացանդ տուր նրան: **(Պահնորդ-հաչը այդպէս էլ անում է):** Մի՛ստր Քրոֆիթ, կանգնեք այստեղ: Պահնո՛րդ, իսկ դուք այստեղ: **(Սա զնում, կանգնում է դատավորի կողքին):** Վերակացո՛ւ, կանչեք վեցերորդ մեղադրյալին:

ՎԵՐԱԿԱՅՈՒ.— Լինդր Լուֆորդ: (Պահնորդը ներս է բերում գիրուկ, կարճահասակ մի մարդու, որը խիստ վախեցած է):

ՊԵՏՏՈՆՅԱ.— Լի՛նդր Լուֆորդ:

ԻՆՆՐ.— Լսում եմ, սը՛ր:

ՊԵՏՏՈՆՅԱ.— Դուք կլինեք երկրորդ պահնորդը: Պահնո՛րդ, հրացանդ տո՛ւր միատր Լուֆորդին: (Պահնորդը կատարում է հրամանը և գնում, կանգնում է մյուս պահնորդի կողքին: Կազմալուծված դատարանի մյուս անդամները կանգնում են պահնորդների կողքին):

ՆՈՐ ԴԱՏԱՎՈՐ.— Հիմա ես եմ դատավորը, այնպես չէ՞:

ՊԵՏՏՈՆՅԱ.— Այո, դուք եք:

ՆՈՐ ՎԵՐԱԿԱՅՈՒ.— Իսկ ես ո՞վ եմ: Ես ո՞վ եմ: Ի՛նչ եք ուզում ինձանից:

ՊԵՏՏՈՆՅԱ.— Դուք նոր վերակացուն եք:

ՆՈՐ ՎԵՐԱԿԱՅՈՒ.— Ի՞նչ:

ՊԵՏՏՈՆՅԱ.— Ծարունակում եմ կարդալ նոր հրահանգը: Խընդրում եմ ուշադիր լսել: (Կարդում է): «Նոր դատարանը կազմակերպվելուց հետո, երբ նախկին մեղադրյալները կդառնան մեղադրողներ, պետք է դատավարություն սկսվի առաջին մեղադրողի նկատմամբ, որը նախկինում դատավոր է եղել: Նրա՛ ինչպես փոխկրթի մեղադրողի նկատմամբ, պետք է հարազակ փոխ փոխարկի թշնամի ինկու մեղադրանքը»: (Գիմկով նոր առևեակալին): Չլիք բարեհաճի կարդալ մեղադրանքը:

ՆՈՐ ԱՏԵՆԱԿԱ.— Ստիվեն Լոկհիդ: Հիսուն տարեկան: Ամուստարածված: Ունի երեք երեխա: Մասնագիտությունը՝ դերասան: Մեղադրվում է հարբեցողության և հասարակությանը նկատմամբ ունեցած անբարյացակամության համար: Բացեիրաց հայհոյել է Հանրապետությանը, ծաղրել է նրա առաջնորդացն ու հաջողությունները, թքել է ժողովրդի ամենաբարձրալ սպասավորներից մեկի աչքի մեջ:

ՆԱԽԿԻՆ ԴԱՏԱՎՈՐ.— Այդ մեղադրանքներն ի՛նձ են հարուցվելու:

ՊԵՏՏՈՆՅԱ.— Այո: Ատենակա՛լ, խնդրում եմ շարունակել: Կարծում եմ, հասկանում եք ձեր պարտականությունը. դատարանին պետք է մանրամասն պարզաբանեք մեղադրյալի հանցանքի էությունը:

ՆՈՐ ԱՏԵՆԱԿԱԼ.— Հասկանում եմ: Հանրապետության առջև իմ ունեցած պարտականությունները, իհարկե, կկատարվեն և իմ կողմից հիմարություն կլինի դրանք անտեսելը: Բայց առաջին հերթին ես իմ հանդեպ ունեցած պարտականությունները պիտի կատարեմ: Կասկածից վեր է, որ այս մեղադրյալն էլ ինձ պես, այնքան էլ լավ մարդ չէ. իրոք, լավ մարդ չի երևում: Նույնիսկ այդ դեպքում ես չեմ կարծում, որ Հանրապետությանը իրավունք է վերապահվում այդ ձևով պատժելու որևէ անհատի: Հանրապետությունը կարող է մարդուն զրկել կյանքից, բայց համոզված չեմ, արդյոք դա կծառայի՞ ժողովրդի կամ հեևց Հանրապետության բարվոքմանը: Եվ նախքան այս մարդու՝ որպես մեղադրյալի հարցաքննությունն սկսելը, որ անմիջականորեն նրան չի վերաբերում, ես ուզում եմ մեղադրական այս գործը հանձնել հեևց իրեն՝ մեղադրյալին: Նա բոլորից լավ է ճանաչում ինքն իրեն և ինձանից լավ է հասկանում այս գործը: Նա կկատարի ամենաանհրաժեշտը և՛ ինձ և՛ ժողովրդի համար:

ՆԱԽԿԻՆ ԴԱՏԱՎՈՐ.— Ես բարյացակամությամբ համակված չեի ոչ մի մեղադրյալի հանդեպ: Համառորեն ստիպում էի արագ կատարել դատավարությունը և իսկույն ի կատար ածել պատիժները: Եթե նույնիսկ թույլ տայի, որ դատարանը մանրամասն թափանցել հանցանքի էության մեջ և գտներ այն դրոշապատճառը, որ մեղադրյալին հանցագործության է մղել, միևնույնն է, նա պետք է գնդակահարվեր: Այդ պատճառով ես իրավունք չունեմ վկայակոչելու որևէ շարժառիթ կամ անձ, որոնց պատճառով նստեցի մեղադրյալի աթոռին: Հիմա ես մեղադրյալի աթոռին եմ: Սրանից պետք է հետևություն անել և ինձ գնդակահարել: Իմ ներկա դրությամբ ես ոչ միայն պիտանի չեմ ժողովրդին, այլև ավելին՝ վտանգավոր եմ նրա համար: Ուստի ինձ պետք է գնդակահարել:

ՆՈՐ ԴԱՏԱՎՈՐ.— Նա գործել է Հանրապետության և ժողովրդի անունից: Քանի որ Հանրապետությունը մեղադրյալի աթոռին չէ, ժողովուրդը մեղադրյալի աթոռին չէ, նրանց փոխարեն այս մարդուն պետք է դատենք: Դե, նա էլ իր պարտքն է կատարել:

ԴՈՐԱ.— Թող գրողի ծոցը գնա իր պարտականություններով...

Ասում եմ գնդակահարեք այդ պոռնիկի տղային: Նա չէ՞ր, որ բոլորին գնդակահարեց աղյուսե պատերի տակ:

ՆՈՐ ԴԱՏԱՎՈՐ.— Ծառ լավ: Ուրեմն վերջնական դատավճիռ կայացնելու պարտականությունն ինձ վրա է ընկնում: Այդ պատճառով ես ստիպված եմ մի քանի հարց տալ: Առաջին՝ դուք ուզո՞ւմ եք ապրել:

ՆԱԽԿԻՆ ԴԱՏԱՎՈՐ.— Իհարկե, դա մեռնելուց լավ է:

ՆՈՐ ԴԱՏԱՎՈՐ.— Ինչո՞ւ եք ուզում ապրել:

ՆԱԽԿԻՆ ԴԱՏԱՎՈՐ.— Ես մի տղա ունեմ, որ արդեն ութ ամիս ծառայում է ռազմածովային նավատորմում: Ես դեռ ուզում էի նրան տեսնել: Ես աղջիկ եմ ամուսնացրել, որ մի քանի ամիս հետո մայր պիտի դառնա: Կուզեի առաջին թոռնիկիս տեսնել: Հետո, մի եղբայր ունեմ, որն արևմուտքում ազարակապան է. քսան տարի կլինի իրար չենք տեսել: Այս գարնանը պիտի հյուր գար ինձ: Հույս ունեի նորից տեսնել... Ուրիշ շատ պատճառներ էլ կան, բայց դե ինչ անես...

ՆՈՐ ԴԱՏԱՎՈՐ.— Դուք ծառայել եք Հանրապետությանը նրա գոյության առաջին իսկ օրից, այնպես չէ՞...

ՆԱԽԿԻՆ ԴԱՏԱՎՈՐ.— Ես երկար տարիներ մասնակցում էի ընդհատակյա շարժմանը, որ հանգեցրեց Հանրապետության հիմնադրմանը:

ՆՈՐ ԴԱՏԱՎՈՐ.— Ինչո՞ւ էիք ընդհատակ անցել:

ՆԱԽԿԻՆ ԴԱՏԱՎՈՐ.— Երկար պատմություն է: Կարճ ասեմ. հախկին կառավարության օրերին ես ցածր վարձատրվող քրեյերկ էի: Իսկ Հանրապետության օրոք ոչ ավել, ոչ պակաս, գերագույն դատարանի դատավոր: Ես մեղավոր եմ: Զուր տեղը պետք չէ ժամանակ կորցնել:

ՆՈՐ ԴԱՏԱՎՈՐ.— Ենթադրե՞նք ձեզ ազատեն, ինչպե՞ս կապրեիք ձեր մնացած կյանքը:

ՆԱԽԿԻՆ ԴԱՏԱՎՈՐ.— Առաջվա պես:

ՆՈՐ ԴԱՏԱՎՈՐ.— Դուք նորից դատավոր կդառնայիք:

ՆԱԽԿԻՆ ԴԱՏԱՎՈՐ.— Անպայման կփորձեի:

ՆՈՐ ԴԱՏԱՎՈՐ.— Ինչո՞ւ:

ՆԱԽԿԻՆ ԴԱՏԱՎՈՐ.— Զգիտեմ:

ՆՈՐ ԴԱՏԱՎՈՐ.— Իսկ հիմա եթե դուք դատեիք ինձ, ի՞նչ վճիռ կկայացնեիք:

ՆԱԽԿԻՆ ԴԱՏԱՎՈՐ.— Դուք արդեն վաղուց գնդակահարված կլինեիք: Դե՛, շտապե՛ք... կարդացե՛ք իմ դատավճիռը: Չէ՞ որ մեզ ոչ մի ընտրություն չի մնացել: Դուք պարտավոր եք մահապատժի ենթարկել ինձ: Եվ դա պետք է կատարեք առանց խղճի խայթ զգալու:

ՆՈՐ ԴԱՏԱՎՈՐ.— Հայտնում եմ դատավճիռը: **(Փոքրիկ դադար):** Իմ կարծիքով, ամբաստանյալը մեղավոր է...

ԴՈՐԱ.— Թո՛ւմ, գրողը տանի... այն էլ ինչպես է մեղավոր:

ՆՈՐ ԴԱՏԱՎՈՐ.— ... այն պատճառով, որ ապրում է: Բայց այդ հարցում մեղավոր են աշխարհի բոլոր ողջ մնացած մարդիկ: Իսկ քանի որ դա այնպիսի մեղք է, որ չի կարելի քավել ոչ աշխատանքով, ոչ էլ պատժով, հետևաբար դատարանի կայացրած վճիռը վերաբերում է նաև մյուս վեց մեղադրյալներին: Ես նրանց բոլորին դատապարտում եմ... ապրելու: **(Պաշտոնյային):** Հետո, ի՞նչ պիտի անեն:

ՊԱԾՏՈՆՅԱ.— Դուք կարճո՞ւմ եք բոլոր վեց մեղադրյալների գործը:

ՆՈՐ ԴԱՏԱՎՈՐ.— Այո: Նրանք ազատ են: Կարող են գնալ, ազատ ապրել, որտեղ որ ուզում են: Իսկ ես ու մյուսները ի՞նչ պիտի անենք:

ՊԱԾՏՈՆՅԱ.— Ուշադրություն դարձրեք հրահանգի հետևյալ պարագրաֆին: Խնդրում եմ ուշադիր լսել: **(Վարդում է):** «Անմիջապես, երբ դատարանի մեղադրող վեց անդամները ավարտեն դատաքննությունը, պետք է երկու ժամ ընդմիջում հայտարարվի, որից հետո դատարանը նորից պետք է վերակազմվի իր նախկին հիմունքներով: Եթե դատարանի նախկին անդամներից ոչ մեկը դեռ չի գնդակահարվել, կարող է անցնել իր նախկին պաշտոնին, հակառակ դեպքում նրա տեղը կզբաղեցնի նախկին դատավորի տեղակալը...»: **(Բողոքին):** Հասկացա՞ք:

ԴՈՐԱ.— Ա՛հ, կեղտոտ պոռնիկի՛ տղա... նրանց ազատեցիր, իսկ հիմա նրանց հանցանքը մեզ վրա կբարդեն ու բոլորիս կզրնդակահարեն:

ՊԱԾՏՈՆՅԱ.— Միանգամայն ճիշտ է: Ծարունակում եմ ծանուցել հրահանգը: «Ընդմիջումից անմիջապես հետո այն վեց մեղադրյալների նկատմամբ, ովքեր ընդմիջումից առաջ մտել են դատական կազմի մեջ, բացառությամբ գնդակահարվածների

տեղը գրավածների, քրեական գործ կհարուցվի նախկին դատարանի հիմունքներով»:

ՆՈՐ ԴԱՏԱՎՈՐ.— Դե՛, ես իմ վերջը տվեցի... Ձերն էլ, մի՛սս Դորա: Կներեք: Քանի որ հիմա ընդմիջում է, թերևս, լավ կլիներ մի բան խմեինք:

ՊԱՏԿԵՐ ԵՐԿՐՈՐԴ

Ժամը հինգին հինգ է պակաս: Լինդր Լոուֆորդը՝ մի գերտղամարդ, կանգնած է մեղադրյալի համար նախատեսված տեղում:

ԴԱՏԱՎՈՐ.— Ձեզ հնարավորություն է տրվում վերջին հայցով դիմելու դատարանին:

ԼԻՆԴՐ.— Ես չեմ ուզում գնդակահարվել:

ԴԱՏԱՎՈՐ.— Դա միանգամայն հասկանալի է:

ԼԻՆԴՐ.— Իմ մեղքն այն է, որ ինձ հասանելիքից ավելի ուտելիք եմ գնել. բայց չէ որ ես էլ մյուսներից ավելի շատ եմ ուտում, չէ՞... Դրա համար մա՞րդ եմ գնդակահարում...

ԴԱՏԱՎՈՐ.— Դատարանին արդեն հայտնի է ձեր՝ ժողովրդի հանդեպ կատարած հանցագործության էությունը:

ԼԻՆԴՐ.— Երբ մենք էինք դատում ձեզ, բոլոր վեցիդ էլ ազատեցինք: Իսկ դուք արդեն գնդակահարել եք հինգ հոգու: Մի՞թե չեք կարող գոնե ինձ ազատել:

ԴԱՏԱՎՈՐ.— Այն արդյունքները, որ ես կանվանեի փորձարարական, մի անգամ ևս ապացուցում են ժողովրդի այն մեծ իմաստնությունը, որի խորաթափանց ուժի շնորհիվ, թույլ տրվեք դա անպայման գշել, ես վերականգնվեցի իմ նախկին դիրքում: Եթե փորձարարական հետաքննության արդյունքներն այլ լինեին, միգուցե խախտվեր հավատը ժողովրդի իմաստնության նկատմամբ և շատ հնարավոր էր, որ ժողովրդական իշխանությանը փոխարիներ ուղղակի նախապաշարական: Պահևորդներ: (Սրանք այդ գեր մարդուն, առաջ գրած, տանում են):

ԼԻՆԴՐ.— Դա անարդարություն է... Դուք անիմաստ բաներ եք ասում: Դուք մարդկային արարածի պես չեք խոսում. դուք

մեքենայի պես եք խոսում... Դա անարդարությունն է... անարդարություն՝ն...

ԴԱՏԱՎՈՐ.— Դատական անարդարությունը ավարտելուց առաջ անհրաժեշտ է երկու հարց լուծել: Առաջին՝ միտքը Բրուկզանկի գործը, որ ըմբռստություն էր հրահրում և երկրորդ՝ այն մեղադրյալի գործը, որ միտքը Բրուկզանկին դրդեց հանցագործության:

ԶԱՅՆ (դրսից).— Հանրապետության՝ պահնորդներ, հանուն ժողովրդի...

ԽՄԲԱԶԱՅՆ (դրսից).— Հանուն ժողովրդի...

(Հրացանների համագարկ: Դատարանի պահնորդները վերադառնում են իրենց տեղերը):

ԴԱՏԱՎՈՐ.— Վերակացո՛ւ, նախապատրաստեք միտքը Բրուկզանկի քրեական գործի հաշվետվությունը և այս երեկո հանձնեք Ներքին Անվտանգության Վարչության շեֆին՝ անմիջապես գործնական միջոցներ ձեռք առնելու համար: Մենք միայն այսքան բան կարող ենք անել առաջին գործի վերաբերյալ: Հետո կշարունակենք այն մեղադրյալի դատավարությունը, որն ընդհատվեց միտքը Բրուկզանկի պատճառով: Ինչպե՞ս էր նրա անունը:

ՎԵՐԱԿԱՑՈՒ.— Ջոն Դելամեր:

ԴԱՏԱՎՈՐ.— Որտե՞ղ է մեղադրյալը հենց հիմա, այս րոպեին:

ՎԵՐԱԿԱՑՈՒ.— Վերևի սենյակում:

ԴԱՏԱՎՈՐ.— Վերակացո՛ւ, դատարանի պահնորդներին հրամայեք թող մեղադրյալին այստեղ բերեն:

ՎԵՐԱԿԱՑՈՒ.— Պահնորդներ՛ր, հրամայում եմ՝ բարձրացե՛ք վերև և այստեղ բերեք մեղադրյալ Ջոն Դելամերին:

ՊԱՀՆՈՐԴ-ՀԱՅՐ.— Ջոն Դելամերն իմ որդին է: Ծիշտ է, ես վատ հայր եմ եղել, բայց դատարան չեմ բերի նրան: Այսօր կյանքս արդեն մի անգամ փրկվել է: (Նա ու կողքի կանգնածը հրացանները պատրաստ պահում են): Կողքիս կանգնածը եղբայրս է: Ես ու նա կզնդակահարենք բոլորին, ովքեր կհամարձակվեն վնասել որդուս: Ծիշտ է, մեր արարքը հանցագործությունն է, բայց պատրաստ ենք կյանքով հատուցել... իմ որդին պետք է ապրի:

ԴԱՏԱՎՈՐ.— Հրացանները իջեցրե՛ք... անմիջապես՛ս...

ՊԱՀՆՈՐԴԻ ԵՂԲԱՅՐԸ.— Իմ եղբայրը հայր է, դրա համար նա ավելի համբերատար է, քան ես: Նրա որդուն՝ Ջոն Դելամե-

րին, անմեղ հայտարարեք և թող վերակացուն կարգի բերի նրա փաստաթղթերը: Ջոն Դելամերը պետք է ապրի... ինչ-որ տեղ՝ այս աշխարհում:

ՊԱՏԱՎՈՐ.— Վերակացո՛ւ, ես ձեզ հրամայում եմ բարձրանալ աստիճաններով և մեղադրյալին դատաքննության կանչել: **(Վերակացուն տեղից չի շարժվում, ոչ էլ պատասխանում է):**

ՊԱՀՆՈՐԴԻ ԵՂԲԱՅՐԸ.— Հենց հիմա հայտարարե՛ք, որ Ջոն Դելամերը անմեղ է... հենց հիմա, թե չէ՝ Աստված վկա...

ՊԱՏԱՎՈՐ (աղաղակելով).— Մեղադրյալը նույն ձևով պետք է պատժվի... մյուսների պես... **(Պլշած նայում է պահնորդներին: Արչին անցնում է նրանց ետևը, ջրասափորով հարվածում է դատավորին, վերջինս փլվում է գետին: Արչին նրան քարշ է տալիս վաճառասեղանի ետև՝ տեսադաշտից դուրս):**

ԱՐՉԻ.— Լսե՛ք բոլորդ... Դատավորը հիմա ուշագնաց է և որոշ ժամանակ այդպես էլ կմնա: Մենք բոլորս նույն վիճակում ենք: Երբ չափահաս տղամարդկանց ու կանանց էին գնդակահարում, նրանք նույնքան հանցավոր էին, ինչպես այստեղ հավաքվածներիցս յուրաքանչյուրը... մենք համբերեցինք: Մենք բոլորս մասնակից էինք այդ գնդակահարություններին, որովհետև չբողոքեցինք ոչ խուսրով, ոչ էլ գործով: Այդ պատճառով... բոլորս... մարդասպաններ ենք: Բայց երբ սկսեցին երկխոս դատել, չդիմացանք: Մենք բողոքում ենք և անիծում աշխարհի բոլոր դատավորներին, ովքեր երեխաներ են դատում: **(Դիմելով պաշտոնյային, որ կոնյակի բաժակը պահել է շուրթերի մոտ):** Ծի՛շտ է:

ՊԱՇՏՈՆՅԱ.— Միանգամայն: Լիովին արդարացի է, մի՛ստր Քլրուկշանկ: **(Կոնծում է կոնյակը):** Եթե չեմ սխալվում, սա եղավ իններորդը, այնպես չէ՞:

ԱՐՉԻ.— Ծուտով բոլորիս մահվան կդատապարտեն:

ՊԱՇՏՈՆՅԱ.— Միանգամայն ճիշտ է: Այստեղ ոչ մեկը՝ նույնիսկ ես ու... գիտակցությունը կորցրած դատավորը, չենք կարող խուսափել գնդակահարությունից: Մեզ կդատապարտեն այն պատճառով, որ դատարանում նման դեպք կատարվեց:

ԱՐՉԻ.— Մեր մասին մտածելն անիմաստ է: Կարևորը երեխան է: Ինչպե՞ս փրկենք երեխային:

ՊԱՀՆՈՐԴ-ՀԱՅՐ (ուսից իջեցնելով հրացանը).— Նա պետք է ազատվի:

ՊԱՇՏՈՆՅԱ.— Իմ սիրելի՛ բարեկամ, բայց ո՞ր փախչես: Ամբողջ երկիրն է այդպիսին, որտեղ ապրում ենք, որտեղ գտնվում է քո տունը, ռեստորանը, դատարանը: Հիմա ես պարտավոր եմ զանգահարել Ներքին Անվտանգության Վարչության շեֆին և մանրամասն հայտնել տեղի ունեցածը: Բայց հավատացնում եմ, որ այդ բանը երբեք չեմ անի: Ասեմ՝ ինչու: Հիմա զանգահարելն էլ չի փրկի: Այստեղ գտնվողներից յուրաքանչյուրը, ով ուզում է, կարող է զանգահարել, եթե կարծում է, թե դրանով կարող է փրկվելու հույս ունենալ... կամ պարզապես քաղաքացիական պարտքը կատարած լինելու համար: **(Պատասխանին սպասելիս նա լցնում է բաժակը ու կոնծում):** Դե՛, հարցը սրանով լուծվեց: **(Նա մոտենում է ավտոմեքենաների հավաքատեղի վրա բացվող դռանը ու ձայն է տալիս պահակազորին):** Դատական նիստն ընդհատված է: Բոլորը գորամաս գնացեք... **(Նա վերադառնում է վաճառատեղանի ծայրին գտնվող իր տեղը, ժպտալով զննում է կոնյակի շիշը):** Հիմա մեր կյանքի մնացած մասը միստր Քրուկշանկի աշխարհում ենք ապրելու: Ներկա հանգամանքներում կյանքիս վերջին ժամերն անցկացնելու համար ես ավելի հարմար տեղ չգիտեմ:

ՎԵՐԱԿԱՑՈՒ.— Ինչքա՞ն ժամանակ է մնացել:

ՊԱՇՏՈՆՅԱ.— Ամբողջ գիշերն ու վաղը՝ մի քանի ժամ:

ԱՏԵՆԱԿԱԼ.— Մի՛ստր Քրուկշանկ, ես նախընտրում եմ այդ ընթացքում խմել. անա իմ փողը՝ կանխիկ: Ունեցածս այսքան է:

ԱՐՁԻ.— Խմիչքն իմ հաշվին է: Ընթրիքը՝ նույնպես: Կարող եմ նաև սենյակ տրամադրել, եթե որևէ մեկը ուզում է մնալ: Այսքանը կարող եմ անել:

ԴԱՏԱՊԱՇՏՊԱՆ.— Բոլորս էլ պետք է մնանք:

ԱՐՁԻ.— Դա պարտադիր չէ: Իմ տունը բանտ չէ:

ԴԱՏԱՊԱՇՏՊԱՆ.— Մեզանից յուրաքանչյուրը, ով դուրս գա այստեղից, միգուցե մեզ մատնի Ներքին Անվտանգության Վարչության շեֆին, և մեզ դաժանորեն կպատժեն: Դրանով մենք կկորցնենք մեր կյանքի վերջին ժամերն ապրելու հնարավորությունը:

ԱՐՁԻ.— Ծիշտ է: Բայց այս ռեստորանի տերը ես եմ: Ով ուզում է դուրս գալ այստեղից... թեկուզ մեզ մատնի Վարչությանը,

ազատ է, հենց հիմա էլ կարող է գնալ: Որ ժամին ուզում է կարող է գնալ և մեզ մատնել Վարչությանը:

ԴԱՏԱՊԱՇՏՊԱՆ.— Բայց ինչո՞ւ, մի՛ստր Քրուկշանկ:

ԱՐՁԻ.— Որովհետև ուզում եմ, որ աղջիկս հեռանա այստեղից:

ՌՈՈՒԶ.— Ես չեմ ուզում գնալ, Արչի՛:

ԱՐՁԻ.— Սա մեր վերջին գիշերն է: Պետք չէ, որ քեզ համար էլ վերջինը լինի: Ո՞վ գիտե, վաղը գլխներիս ինչ փորձանք կգա:

ՌՈՈՒԶ.— Ես ուզում եմ մնալ: Ես գնալու տեղ չունեմ: Վախենում եմ: Ես ուզում եմ նստել այս սեղաններից մեկի մոտ ու խմել: Ուրիշ բան չեմ ուզում, Արչի՛:

ԱՐՁԻ.— Մենք կփորձենք այս վերջին ժամերը լավագույն ձևով անցկացնել: Բայց նախքան այդ, եթե մեկնումեկի մտքով անցնում է հեռանալ այստեղից, կարող է այդ բանն անել, սուսանց բացատրության կամ հրաժեշտի: Իմ ռեստորանում սովորաբար այդպես է եղել և այսօր էլ թող նման ձևով շարունակվի: **(Մեկ Ֆուկեր իջնում է աստիճաններով՝ Ջոն Դեյաֆերի ձեռքից բռնած):**

ՄԵՅ.— Իսկ ո՞վ է ասում, որ այս գառնուկը ասում է իր հորն ու մորը: **(Պահնորդ-հայրը ծնկի է գալիս, գրկաբաց ընդունում է որդուն: Տղան վազում, իրեն զգում է հոր գիրկը: Հայր ու տղա ժպտալով դեմքերը սեղմում են իրար):**

ՀԱՅՐ (Մեյին).— Ծատ շնորհակալ եմ, միսի՛ս Գրուկշանկ:

ՄԵՅ.— Ա՛հ, նա հրաշալի, չափազանց խելոք ու բարի տղա է: Նույնիսկ ահավոր բան է, երբ սրտիդ խորքում մտածում ես, թե նա ինչքան բարի է ու... թե ինչպես պետք է փոխալի, դառնա մեզ նման: Բոլորիս նման:

ՀԱՅՐ (տղային, որ շքնում է նրա ականջին).— Ի՞նչ: Նորից ա-սա: **(Տղան նորից է շքնում: Հայրը շրջվում է Մեյի և Արչիի կողմը):** Նա ուզում է տուն գնալ: Նա ուզում է իր մորը տեսնել:

ՄԵՅ.— Ի՞նչ կա որ: Ինչո՞ւ է դա ձեզ զարմացնում: Իհարկե, նա տուն պիտի գնա: Նա իր մորը պիտի տեսնի:

ՀԱՅՐ.— Բայց ես չեմ կարող տուն գնալ: Այս անգամ չեմ կարող տուն գնալ:

ՄԵՅ.— Ի՞նչ է ասում, Արչի՛: Չեմ հասկանում:

ԱՐՁԻ.— Մենք դժբախտության մեջ ենք ընկել: Մենք բոլորս դժբախտության մեջ ենք, Մե՛յ:

- ՄԵՅ.— Այդ դեպքում տղային իր մոր մոտ տար, մա՛րդ Աստծո: Երբ այս մարդը դժբախտության մեջ է, նրա կինն ու տղան էլ պետք է բաժանեն այդ...
- ՀԱՅՐ.— Ես ինքս կուզեի նրան տուն տանել: Ծիշտն ասած, չգիտեմ ինչ կարող եմ անել նրա կամ մյուսների համար...
- ԱՐՁԻ.— Նրան տուն տար, մա՛րդ Աստծո... Մտածելու ժամանակ գտար: Դրանից բացի ուրիշ ոչինչ չես կարող անել:
- ՀԱՅՐ.— Բոլո՛րդ եք համաձայն, որ ես որդուս տուն տանեմ:
- ՄԵՅ.— Տուն գնա և կնոջդ ու որդուդ հետ հրաշալի ընթրիք արա:
- ՀԱՅՐ.— Մի՛ստր Քրուկշանկ, եթե իմանալիք թե որքան երախտապարտ եմ: Եթե պատկերացնեք, թե սա ինչ է նշանակում նրա մոր համար... Դե լավ, մնաք բարով: (Նա շրջվում է ու գնում: Կանգնում է դռան մոտ):
- ՏՂԱ.— Մնա՛ս բարով, Մե՛յ...
- ՄԵՅ.— Մնա՛ս բարով, Ջո՛ն Դելամեր... (Տղան վազում է կնոջ մոտ, հետո նորից վազելով վերադառնում է դեպի հայրը: Վերջինս թափահարում է ձեռքերը, մյուսները՝ նույնպես): Հրաշալի տղա է ու այնքա՛ն բարի, որ ահալոր ու վտանգավոր է նրա համար: Տե՛ր Աստված, փրկիր և օգնիր նրան: Դե լավ, թանկագիններս, մի բաժակ կոնյակ լցրեք խմեմ:

Վ ա ր ա գ ո յ ը

ԹԵՆՆԵՍԻ ՈՒԻԼՅԱՄՍ

ԿԱՏՈՒՆ ՇԻԿԱՑԱԾ ՏԱՆԻՔԻՆ

(այիես երես գործողությամբ)

*Եվ դո՛ւ, իմ հա՛յր, այնտե՛ղ, տխուր բարձունքում,
Աղաչում եմ, անիծի՛ր ինձ, հետո՝ օրհնի՛ր քո տաք
արցունքներով,
Մի՛ գնա խաղաղ դեպի գիշերն այդ բարի,
Փոթորկի՛ր, փոթորկի՛ր, մահվան դեմ լույսի:
Դիլըն Թոմաս*

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՄԱՐԳՐԵԹ

ԲՐԻԿ

ՄԵՅԻ, որին երբեմն անվանում են «ֆույրիկ» Մեյի

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ

ԴԻՔՍԻ, փոփրիկ աղջիկ

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ

ՊԱՏՎԵԼԻ ԹՈՒԿՐ

ԳՈՒՓՐ, որին երբեմն անվանում են «եղբայր» Գուփր

ԴՈԿՏՈՐ ԲՈ, որին անվանում են «Բո»

ԼԵՅՍԻ

ՍՈՒԿԻ

Մեկ ուրիշ փոփրիկ աղջիկ և երկու փոփրիկ տղաներ:

Բեմին ազարակի անջարան-հյուրասենյակն է Միսսիսիպիի 'Իելտայում'¹: Տան ամբողջ երկայնքով պատշգամբն է: Երկու շատ լայն դռներ, որոնք տանում են պատշգամբ: Դռներից երևում է ճեմնակ ճաղաշարը՝ ամառային պարզ երկընթի տակ, որը պիեսի գործողության ընթացքում աստիճանաբար խավարում է ու մթնում: Պիեսի իրադարձությունները զբաղեցնում են ճիշտ այնքան ժամանակ, ինչքան ներկայացումն է տևում, չհաշված, իհարկե, տասնհինգ րոպեանոց ընդմիջումը:

Սենյակի ոճն ու կահավորանքը, հավանաբար անսովոր է Դելտայի ամենամեծ ազարակատան համար: Այն կառուցված է վիկտորիական ոճով², Հեռավոր Արևելքի ճարտարապետության որոշ ազդեցությամբ: Սենյակը մնացել է այնպես, ինչպես եղել է երկու ամսիների՝ Ջեյ Սթրոուի և Փիթր Օչելլոյի օրոք, որոնք այդ սենյակում ապրել են իրենց ամբողջ կյանքի ընթացքում: Մի խոսքով, սենյակը ինչ-որ տրամադրություն կամ ոգիներ պետք է արթնացնի, որովհետև տղամարդկանց սենյակներին ոչ հատուկ քնքշություն, նվաղկոտություն է նկատվում մահճակալին, վառվող աղոտ լույսերի, ընդհանրապես, ողջ կահավորանքի մեջ: Գուցե կարիք չկա այս հանգամանքը նշելու, բայց երբ մտածում էի բեմի կահավորանքի մասին, հիշողությանս մեջ հառնում էր և իմ տեսած երբեմնի լուսանկարը, ուր պատկերված էր Ռոբերտ Լուիս Սթիվենսոնի³ Սամուայի կղզիներում⁴ գտնվող այն տան պատշգամբը, որտեղ նա անց էր կացրել իր կյանքի վերջին տարիները: Եղեգնից և ուռենու շիվերից պատրաստված, արևադարձային արևից և հորդ անձրևներից մուգ գույն ստացած ամառանոցային կահույքի վրա ընկած մեղմ ու հանդարտ լույսը խոհեր էր ծնում այն մասին, թե ինչքան հոգեպարար ու հաճելի է ամռան մայրամուտի քնքուշ լույսը, ինչպես է այն սիրոփում ու խաղաղեցնում հոգին, մեղմացնելով ամեն ինչ, նույնիսկ մահվան սարսուռը: Բեմի կահավորանքը, որի ֆոնին ծավալվելու են տիպերի հոգեկան ծայրահեղ քնեռված գործողությունները, թերևս, կարիք ունի նման մեղմացնող ջերմության:

Կողքի պատերից մեկին լողասենյակի դուռն է, որտեղից երևում են բաց կապույտ հախճաասպիկներն ու սրբիչների արծաթափայլ կախիչները: Սրահ տանող դուռը դիմացի պատին է: Ամբողջ կահավորանքի մեջ երկու առարկա են աչքի զարնում՝ մեծ երկտեղանոց մահճակալը, որը պիեսի գործողության ժամանակ հնարավորին չափ պետք է շատ օգտագործվի՝ իբրև կահավորանքի էական մանրամասն: Մահճակալը փոքր-ինչ թեքված է դեպի դահլիճի կողմը, այնպես, որ հանդիսականին ավելի տեսանելի լինեն նրա վրա պառկած դերասանները: Բեմի խորքի պատի մոտ՝ հսկայական կրկնափեղկ դռների արանքում դրված է ժամանակակից հոշակերտ վիթխարի հրեշը՝ ռադիոընդունիչը, երեք բարձրախոսով, ստերեոնվագարկիչի, հեռուստացույցի և բազմաթիվ գավաթներով ու շշերով լցված խմիչքների բարի զուգակցումով, որոնց գույնը միախառնվելով մեղմ, արծաթավուն փայլին, հաշվապակու շողշողուն նրբերանգներին, մի տեսակ գուններիզ է դառնում ներքին հարդարանքի ոսկեցոլ դարչնագույնի, պատշգամբի և երկնքի սառը (սպիտակ և կապույտ) երանգների միջև: Սույն կահավորանքը, այս հուշակերտությունը, իրականում այն բոլոր հարմարավետության ավարտուն ու համապարփակ մարմնացումն է, որոնց ետեվում մենք ջանում ենք խույս տալ այն ամենից, ինչին որ հանդիպում են այս պիեսի հերոսները...

Բեմի կահավորանքը պետք է լինի հնարավորին չափ սակավ ռեալիստական, մի հանգամանք, որ չի կարելի ենթադրել վերոհիշյալ իմ նկարագրությունից: Իմ կարծիքով, պատերը առաստաղի տակ պետք է տարրալուծվեն օդի մեջ՝ խորհրդավորության պատրանք ծնելով, իսկ որպես առաստաղ պետք է ծառայի երկինքը: Երկնքին թող ցոլան կաթնասպիտակավուն, հագիվ նշմարվող աստղեր ու լուսին, ինչպես տեսնում ենք լույսը չկենտրոնացնող հեռադիտակի օբյեկտիվով:

Հա՛, իսկ ի՞նչ մոռացանք... Այս այո, բոլոր դռների վերևում՝ հովհարաձև լուսամուտներ, կապույտ և սաթի գույնի ապակիներով, հետո ամենակարևորը՝ անհրաժեշտ է դերասաններին հնարավորին չափ լայն տարածություն տրամադրել՝ բեմում ազատորեն շարժվելու համար, այնպես, ինչ-

պես բալետային ներկայացման ժամանակ, որպեսզի դերասանները կարողանան արտահայտել իրենց հոգեկան անհանգստությունները, այդ պայմաններից դուրս գալու իրենց կրթոտ ձգտումը:

Ամռան երեկո: Ներկայացումն ընթանում է երկու ընդմիջումով:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ

Վարագույրը բարձրանալիս լողասենյակից ջրի աղմուկ է լքսվում. ինչ-որ մեկը լոգանք է ընդունում: Լողասենյակի դուռը կիսաբաց է: Բավականին երիտասարդ մի կին, դեմքը այլաչված, մտնում է ննջասենյակ ու մոտենում լողասենյակի դռանը:

ՄԱՐԳՐԵԹ (այնպես է բղավում, որ ձայնը ջրի ճողփյունից բարձր հնչի).— Լսի՛ր, քո եղբոր այլանդակ լակոտներից մեկը տորթով խփեց... Եկա շորս փոխեմ...

Մարգրեթի ձայնը հևասպառ է ու միապաղաղ: Ինչպես պատարագի երկար մենախոսության պահին քահանան՝ սա ևս ծոք տալով է արտասանում բառերը, որի պատճառով շունչը երբեմն չի բավականացնում և նա ստիպված նորից է շունչ առնում: Երբեմն նրա խոսքը մի պահ դառնում է երգ՝ առանց բառերի, ասենք, երբ ասելիս լինեն «դա-դա-դասա՛...»:

Լողասենյակում ջրի աղմուկը կտրվում է, և Բրիկը ձայն է տալիս կնոջը: Նա չի երևում: Բրիկի առոգանությանը հատուկ է քաղաքավարի ու կեղծ հետաքրքրասիրությունը, որ քողարկված է անտարբերությամբ, իսկ **Մարգրեթի** հետ խոսելիս ակներև է նրա չարականությունը:

ԲՐԻԿ.— Ի՞նչ ասացիր, Մեգգի՛... Ջրի ձայնը չթողեց լսելի...

ՄԱՐԳՐԵԹ.— Ասում եմ... Այդ անվիզ ճիվաղներից մեկը իմ ամենասիրուն շորը տորթով... տորթը քսեց վրաս, եկա փոխեմ: (Նա բացում է զգեստապահարանի դուռը, հետո ոտքով հրքում է ու փակում):

ԲՐԻԿ.— Ինչո՞ւ ես Գուփրի երեխաներին անվիզ ճիվաղներ անվանում:

ՄԱՐԳՐԵԹ.— Դե, որովհետև վիզ չունեն... Որ մարդ վիզ չունի, ի՞նչ ասես:

ԲՐԻՎ. — Բոլորովի՞ն վիզ չունեն:

ՄԱՐԳՐԵԹ. — Նրանց փոքրիկ գլուխներն այնպես կիպ են դրված չաղ մարմիններին, որ արանքում... վզի տեղ չկա: Ոչինչ չի երևում:

ԲՐԻՎ. — Հա՛... Ծատ վատ է, շատ վատ:

ՄԱՐԳՐԵԹ. — Իհարկե, շատ վատ է, որովհետև հնարավոր չի նրանց վիզը ոլորել, չնայած շատ էի ուզում... Դե, ինչպե՞ս ոլորես, երբ այդ լակոտները բոլորովին վիզ չունեն: Ծիշտ չե՞մ ասում, սիրելի՛ս: **(Հանում է շրջազգեստը, մնում է փղ-դոսկրագույն ներքնազգեստով)**: Հա՛, նրանք անվիզ լակոտներ են, ճիվաղներ... Բոլոր վիզ չունեցող մարդիկ ճիվաղներ են:

(Երեխաներն աղմկում են ներքևում):

Լոտ՛ւմ ես: Հա՞: Լոտ՛ւմ ես ինչպես են ճղճղում: Բայց ես չեմ հասկանում, թե որտեղ են նրանց ձայնալարերը պահված: Ախր այդ ճիվաղները բոլորովին կոկորդ չունեն, է՛... Սեղանի մոտ ոնց ջղայնացա, ոնց ջղայնացա, չես պատկերացնի: Վախճնում էի շղիմանամ: Ասացի, գլուխս ետ գցեմ ու մի լավ գոտամ, այնպես գոտամ, որ ձայնս հասնի մինչև Լուիզիանայի ու Արկանզասի՝ կողմերը: Հարսիդ՝ Մեչիին ասում եմ. «Սիրելիս, հնարավոր չէ՛, որ քո սիրասուն, փոքրիկ սրարածներին կողքի մոմլարի սփռոցով սեղանին նստեցնես»: Ախր սող գլխաղները տորթն այնպես ցփնեցին վրաս... իսկ երեկուան գգեստս... այնքան էի սիրում որ... Հարսդ աննորմալ աչքերը ոլորեց վրաս ու... «ասասասան ոռոռոռո՛չ... Ի՞նչ ես ասում, այն էլ Մեծ Հայրիկի ծննդյան օ՞րը: Ախր նա ինձ երբեք չի ների...»: Բրի՛վ, բայց խոսքը մեր մեջ, Հայրիկը երկու րոպե էլ չղիմացավ եղբորդ ճիվաղների խրթխրթոցներին ու ճայնպոցներին: Նա պատառաքաղը գցեց սեղանին ու գոռաց. «Աստված կսիրես, Գո՛ւփր... հնարավոր չէ՞ որ այդ խոճկորներից խոհանոցում՝ տաշտակների առաջ կերակրեիք»: Բրի՛վ, Աստված վկա, քիչ մնաց ամոթից մեռնեի: Պատկերացնո՞ւմ ես, եղբայրդ հինգ ճիվաղ լակոտ ունի ու վեցերորդն էլ ուր որ է պիտի ծնվի: Մեչիին ու Գուփրը այդ խոճկորներին կարծես գլուղական դիմակահանդեսի բերած լիճեին: Նրանք իրենց երեխաներին ստիպում էին անընդհատ ինչ-որ բան ներկա-

յացնել: «Պատիկ, Մեծ Հայրիկին նորից ցույց տուր ինչպես ես դա անում: Հապա, թուփուշիկս, արտասանիր քո փոքրիկ բանաստեղծությունը: Իսկ դու, քաղցրս, ծնոտիդ փոսիկը ցույց տուր, թող Մեծ Հայրիկը տեսնի... Դե, ճատլիկ, քեզ տեսնեմ, գլուխկոնձի տուր...»: Ու այսպես շարունակ, թաքուն ակնարկելով, որ ինձանից ու քեզանից էրեխա չի ծնվում, որ մենք բոլորովին անպտղաբեր ենք: Դե, ճիշտն ասած, դրա վրա կարելի է ծիծաղել, որովհետև նրանց մտադրությունն արդեն պարզ է:

ԲՐԻԿ (անտարբեր).— Իսկ ի՞նչ են մտադիր անել, Մեզգի՛:

ՄԱՐԳՐԵԹ.— Չգիտե՞ս...

ԲՐԻԿ (լողասենյակից դուրս գալով).— Չէ, չգիտեմ:

Կանգնում է լողասենյակի շեմին՝ սրբիչով չորացնելով մազերը և միաժամանակ հեկվելով սրբիչների կախարանին, որովհետև ծունկը դուրս ընկած է ու վիրակապով փաթաթված: Նա դեռ ջլապինդ է ու հրապուրիչ: Ալկոհոլը դեռ չի սկսել հալումաշ անել նրան: Բրիկը հրապուրիչ է նաև նրանով, որ անտարբեր է, մի տեսակ մեկուսացած, այն մարդկանց նման, ովքեր դադարել են պայքարել: Բայց երբեմն՝ անհանգստության պահերին, այդ սառնության ետևում ինչ-որ բան է շողարձակում, ինչպես երկնքում, ցույց տալով նրա ներքին էությունը, որը հեռու է հանդարտ լինելուց: Թերևս, պայծառ լույսի տակ նա մի քիչ գոռոզ արտաքին կարող է ունենալ, բայց պատշգամբից թափանցող արևի տաք, խամրող շողերի մեջ նա մեղմ է ու հանդարտ:

ՄԱՐԳՐԵԹ.— Հիմա կասեմ, թե ինչ են մտադիր անելու, զավա՛կըս... Նրանք ուզում են քեզ զրկել հորդ ժառանգությունից... (Նախքան հաջորդ ակնարկը Մարգրեթի ձայնը նվաղում է կարծես ինչ-որ կարևոր անձնական գաղտնիք հայտնելիս լինի): Հիմա, երբ գիտենք, որ Մեծ Հայրիկը մեռնելու է... քաղցկեղից...

Ներքևում՝ մարգագետնում, երեխաները աղմկում են. հեռվից կանչեր են լսվում: Մարգրեթը բարձրացնում է իր գեղեցիկ, մերկ բազուկներն ու թեթևակի հոգոց հանելով պուդրայում է անուրջները:

Ուղղում է խոշորացնող հայելին, արտևանումքները շտկելու համար, հետո ահաբեկված տեղից բարձրանում է:

Բայց ինչ շա՛տ է լույսը այս սենյակում...

ԲՐԻԿ.— Որտեղի՞ց գիտենք:

ՄԱՐԳՐԵԹ.— Ի՞նչը որտեղից գիտենք:

ԲՐԻԿ.— Որ Մեծ Հայրիկը մեռնելու է քաղցկեղից:

ՄԱՐԳՐԵԹ.— Այսօր լուրն իմացանք:

ԲՐԻԿ.— Ա՛հ:

ՄԱՐԳՐԵԹ (իջեցնելով բամբուկե վարագույրները, որոնց արանքից ոսկեգույն շողեր են ընկնում սենյակ).— Այո, քիչ առաջ ենք լուրն իմացել: Բայց դա ինձ չզարմացրեց, փոքրի՛կս...

Նրա ձայնը բեկբեկուն է, մեղեդայնորեն ծորուն. երբեմն այն դառնում է ցածրահունչ և այդ պահին Մարգրեթը իր խաղալիքի հետ խոսող փոքրիկ տղայի է նմանվում:

Ես Մեծ Հայրիկի հիվանդության ախտանշաններն իմացա դեռ անցյալ գարնանը, երբ եկանք այստեղ: Համոզված եղիր, որ Գուփրն ու նրա կինն էլ վաղուց գիտեին այդ մասին, դրա համար էլ այս ամառ նրանք չգնացին «Գրեյթ Սմոքի»⁶ հանգրստանալու ու շունչները փորները գցած, իրենց ճղճղան հորդայով վազեցին այստեղ, որ Մեծ Հայրիկի ժառանգությանը տեր կանգնեն: Դրա համար են վերջերս անընդհատ «Ռեյնրոու Հիլի»⁷ մասին ակնարկում: Իսկ գիտե՞ս ինչ բան է «Ռեյնրոու Հիլը»: Հարբեցողների ու հաշիշամուլների բուժման հրոշակախոր տեղ է: Այնտեղ բուժում են հարբեցող ու հաշիշամուլ կինոաստղերին:

ԲՐԻԿ.— Բայց ես կինոաստղ չեմ:

ՄԱՐԳՐԵԹ.— Այո, ոչ էլ հաշիշամուլ ես: Բայց Մեյիի ու Գուփրի կարծիքով դու պետք է անպայման բուժվես «Ռեյնրոու Հիլում», որովհետև դու էլ ես հարբեցող... Հիմա հասկացա՞ր, փոքրի՛կս: Գլխի ընկնո՞ւմ ես, թե՞ քեզ ուր են ուզում քշել... Բայց նրանք միայն իմ դիակի վրայով քեզ այնտեղ կուղարկեն: Այո: Նրանց չի հաջողվի: Հրաշալի՞ է: Դու կբուժվես «Ռեյնրոու Հիլում», իսկ եղբայրդ՝ Գուփրը, կդառնա ընտանեկան ժառանգության լիիրավ տերը և մեզ փշրանքներ կտա, ըստի որ մեր անդորրագրերը միայն ինքը պետք է ստորագրի. երբ ուզի, կարող է մեզ փող տալ, կամ չտալ: Ծա՛ն որդի... Սրան ի՞նչ կասես, քա՛ղցրս: Հը՞... Բայց դու քո անխելությունամբ ամեն ինչ անում ես, որպեսզի Գուփրն ու Մեյին իրենց նպատակներն իրագործեն: Նախ՝ աշխատանքի թողեցիր, հետո ոտքով-գլխով նվիրվեցիր վիսկու շշին: Իսկ երեկ

գիշեր՝ ժամը երկուսին, թե երեքին, դպրոցական մարզադաշտում անհատական արգելավագք ես կատարել ու թերթերն էլ հողված են տպագրում այդ մասին: «Քլարքսդեյլ Ռեշիսթըրը»⁸ մի հրաշալի հողված է տպագրել նախկին հանրաճանաչ մարզիկի մասին: Մարդկային հետաքրքիր պատմություն՝... Նախկին հանրաճանաչ մարզիկը տեղի միջնակարգ դպրոցի մարզադաշտի վագրուղակում ցուցադրական վագք է կատարել, բայց ավաղ... նա փոքր-ինչ... անհավասարակշիռ վիճակում է եղել ու չի կարողացել... առաջին արգելքն անցնել: Եթե եղբորդ՝ Գուփրին հավատանք, ասում է, ինչ ծանոթ ասես մեջ է գցել, որ այդ լուրը չհասնի «Աստղիչդետ պրեսին»⁹, «Յունայթեդ պրեսին»¹⁰, ու սատանան գիտե, թե էլ ինչ «պրես» ու քեզ խայտառակեն: Բայց, ինչ որ է, Բրի՛կ, դու դեռ մեծ առավելություն ունես...

Բառերի այս արագ հոսքի պահին Բրիկը ծուլորեն ընկողմանել է ձյան պես ճերմակ մահճակալի ներքնակին ու զգուշորեն, որ ոտքը չցավի, մեկ կողքի, մեկ փորին է շրջվում:

ԲՐԻԿ (չորությամբ).— Ինչ որ բա՛ն էիր ուզում ասել, Մեգգի՛: **ՄԱՐԳՐԵԹ.—** Սիրելի՛ս, Մեծ Հայրիկը քեզ բոլորից շատ է սիրում: Բացի այդ, տանել չի կարողանում եղբորդ՝ Գուփրին ու նրա ճիվաղներ ծնող Մեյիին: Ասես նաև, որ Մեյին ուղղակի զգվանք է պատճառում Մեծ Հայրիկին: Գիտե՛ս, թե դա ինչպես եմ զգացել: Երբ Մեյին սկսում է իր ճոռոմ, նախապատրաստված պատմությունն այն մասին, թե... ինչպես է հիվանդանոցում երկվորյակներին ծննդաբերելիս հրաժարվել ցավազրկող դեղերից, որպեսզի լիովին ընթռնի մայրության խորհուրդը... Բրի՛կ, միայն թե տեսնեիր, ինչպես էր Մեծ Հայրիկը զգվանքից դեմքը ծամածոռում, երբ Մեյին բացատրում էր, թե իբր մայրությունը մի փորձություն է, որ յուրաքանչյուր կին պարտավոր է լիովին զգալ, ամբողջովին վայելել դրա գեղեցկությունն ու խորհուրդը... Հա՛հ... (Այս բարձրաձայն «Հահ»-ը նա արտասանում է կոպտորեն՝ զգեստապահարանի դուռը շրխկացնելով): Բրի՛կ, պատկերացնո՛ւմ ես, հարսդ ամուսնուն կանգնեցրել է մահճակալի մոտ, որպեսզի նա էլ լիովին վայելի «գեղեցկության ու սալշանքի պահը» անվիզ ճիվաղներ ծնելիս...

(Մարգրեթի փոխարեն եթե մեկ ուրիշը նման խոսակցություն

սկսեք, անպայման զգվանք կպատճառեք, բայց նա այս բոլորը կատարում է անսովոր զվարճանքով ու քամահրանքով: Նրա աչքերը շարունակ առկայծում են, ձայնը դողում է: Այդ ծիծաղի տակ բարեհոգություն կա թաքնված):

Դե՛, Մեծ Հայրիկն ընդունում է իմ վերաբերմունքը այդ երկուսի նկատմամբ: Իսկ երբ մեկ-մեկ ձեռն եմ առնում նրանց, Մեծ Հայրիկը չի բարկանում, հասկանում է ինձ ու քիչ է մընում հետս ծիծաղի: Ծիշտն ասած, ինձ թվում է... Մեծ Հայրիկը աչք ունի վրաս... անկախ իրենից, մի տեսակ, ցանկություն է նայում:

ԲՐԻԿ.— Մեզոգի՛, ի՞նչ գիտես, որ Մեծ Հայրիկը... աչք ունի վրա: ՄԱՐԳՐԵԹ.— Դե, մի տեսնես, ոնց է պլշած նայում ստիներքերիս,

կոնքերիս ու լիզում պատաված շուրթերը: Հա՛, հա՛, հա՛, հա՛...

ԲՐԻԿ.— Զգվելի ես խոսում:

ՄԱՐԳՐԵԹ.— Բրի՛կ, քեզ ոչ մի անգամ չե՞ն ասել, որ դու հիմար պորիտան¹¹ ես, որ կանայք քեզ բոլորովին չեն հետաքրքրում: Հը՞, չե՞ն ասել: Իմ կարծիքով, շատ հաճելի է, որ մահվան շեմին կանգնած այդ ծերուկը դեռ հետաքրքրվում է իմ մարմնով... որը, ճիշտն ասած, արժանի է ուշադրության:

Ուզո՞ւմ ես Լի մի բան ասես: Մեծ Հայրիկը մինչև հիմա չգիտեր, թե քանի փոքրիկ մելիներ ու գուփրներ են լույս աշխարհի եկել: «Իսկ քանի՞ երեխա ունեք»,— հարցրեց նա՝ կարծես Մելիի ու Գուփրի հետ հենց նոր էր ծանոթացել: Մեծ Մայրիկն ասաց, իբր, Հայրիկը կատակում է, բայց Աստված վկա, նա շատ լուրջ էլ հարցրեց՝ «Քանի՞ երեխա ունեք»: Իսկ երբ հորդ հայտնեցին, թե արդեն հինգն ունեն ու... շուտով վեցերորդն է ծնվելու, ծերուկը զարմացավ, այդ լուրը լսելիս:

(Ներքևում երեխաների աղմուկ է լսվում):

Գոռացե՛ք, ճիվաղնե՛ր, գոռացե՛ք... Տեսնո՞ւմ ես, ինչպես են գոռո՞ւմ... (Հանկարծ շրջվում է դեպի Բրիկը՝ զվարթ ու հրապուրիչ ժպիտով, բայց այդ ժպիտն իսկույն մարում է, երբ նկատում է, որ Բրիկը ոչ թե իրեն, այլ աղոտացող միջօրեին է նայում):

Դա Բրիկի այն սովորական անտարբերությունն է, որի պատճառով նրա կինը դառնում է նախանձոտ ու ծաղրող):

Այո, փոքրի՛կ, գիտե՞ս թե ինչ ես կորցրել... Պետք է նաշասեղանի մոտ լինելիր, որպեսզի ամեն ինչ տեսնեիր:

(Ամեն անգամ «փոքրիկ» արտասանելիս, Մարգրեթի ձայնը դառնում է քնքուշ ու անկեղծ):

Հասկանում ես, Մեծ Հայրիկը... թող Աստված ողորմի նրա ծեր հոգուն, ես շատ եմ սիրում նրան, ճաշի ժամանակ այնպես վրա պրծավ իր ասիսեին, կարծես, բացի դրանից աչքին ոչ մի բան չէր երևում: Իսկ Մեյին ու Գուփրը, ուղիղ Մեծ Հայրիկի դիմաց նստած, երկու բազեի պես աչքերը մեխել էին խեղճ ծերուկի դեմքին ու մի գլուխ իրենց ճիվաղների խելքն ու ազնվությունն էին գովում:

(Նա հեզնանքով ծիծաղում է, հետո ձեռքը սահեցնում է կոկորդն ու կուրծքն ի վար: Քայլում է բեմում, ձեռքի շարժումներով, դեմքի արտահայտությամբ և ձայնի ելևէջներով փորձում է հանդիսականին ցույց տալ այդ բոլորը): Իսկ այդ անվիզ ճիվաղները, սեղանի մոտ իրար գլխի լցված, նստել էին բարձր աթոռներից կամ «Գիտելիքի գրքերի»¹² հատորներից: Թղթե գույնզգույն փոքրիկ գլխարկներ էին դրել՝ ի պատիվ Մեծ Հայրիկի ծննդյան օրվա: Ասեմ նաև, որ Գուփրն ու նրա կողակիցը ոչ մի վայրկյան հանգիստ չկարողացան նրստել: Անընդհատ աչքով էին անում, ոտքով, արմուկով հրրմըշտում էին իրար ու կամօում... Կարծես հիմարին կողոպտող խարդախ խաղամուղներ լինեին: Նույնիսկ Մեծ Մայրիկը, Աստված ողորմի նրա պատավ ու ազնիվ հոգուն, նույնիսկ նա, որ աշխարհի ամենաշժամ ու դանդաղաշարժ կինն է, այդ բանը նկատեց ու զգուշացրեց Գուփրին: «Գուփր, ի՞նչ եք անընդհատ Մեյիի հետ աչքով-ունքով անում, հը՞»: Աստված վկա, Բրի՛կ, այդ պահին հավի միսը կանգնեց կոկորդումս ու քիչ մնաց խեղդվեի...

(Մարգրեթը մոտենում է զարդասեղանին՝ մեջքով Բրիկի կողմը: Բրիկը նայում է նրան մի հայացքով, որ բոլորովին անհասկանալի է. նրա դեմքին և՛ շփոթմունք կա, և՛ ձանձրույթ և՛ արհամարհանք):

Հասկանո՞ւմ ես, եղբայրդ՝ Գուփրը, դեռ հավատում է, որ ինքը հասարակական սանդուղքով մի մեծ քայլ վեր է բարձրացել՝ ամուսնանալով միսս Մեյի Ֆլինի՝ մեմֆիսցի «արիստոկրատներ» Ֆլինների դստեր հետ:

(Թոսելիս Մարգրեթը մերթ քայլում է սենյակում, մերթ կանգնում հայելու դիմաց, հետո նորից է շրջում սենյակում):

Բայց ես մի քանի տհաճ նորություններ ունեմ Գուփրի համար: Ֆլիհները երբեք էլ արիստոկրատներ չեն եղել, միայն չափից դուրս շատ փող են ունեցել, իսկ երբ դա էլ կորցրին, դարձան հասարակական սանդուղքով հաջողակ մագրւցողներ: Ծիշտ է, Մեյի Ֆլիհը Մեմֆիսում¹³ ճանաչվել էր դեռ ութ տարի առաջ, երբ ես փախքոտ լակոտ էի: Նեշվիլում¹³ իմ ունեցած դերյուտը ութ տարի առաջ եղավ, բայց ես մեմֆիսից ընկերներ ունեի Ուորդթելմոնթի¹³ քոլեջում, որոնք հաճախ էին հյուր գալիս ինձ, իսկ ես Ծճնդյան տոների¹⁴ ու գարնանային արձակուրդներին էի գնում նրանց մոտ... Ընկերուհիներս պատմում էին, թե ով է հաջողակ կամ անհաջողակ Մեմֆիսի հասարակության մեջ: Ուրեմն, ծերուկ Ֆլիհը պարզապես պատահաբար է խուսափել կալանքից՝ արժեթղթերի բիրժայում մութ գործարքներ կատարած լինելու համար: Այդ գործարքները նա կատարել էր, երբ նրա բազմաթիվ խանութներն արդեն սնանկացել էին: Իսկ ինչ վերաբերում է Մեյիին, նա բամբակի տոնին նվիրված ֆեստիվայում մի անգամ թագուհի է եղել¹⁵ ու մինչև հիմա գլուխ են տանում՝ անընդհատ հիշեցնելով... չլինի հանկարծ մոռանանք... Դե, ես բոլորովին էլ չեմ նախանձում նրան... Դրա մեջ ի՞նչ կա որ: Ալյումինե թագը գլխիդ նստում ես թաց, կաշուն ներկով ծածկված հեռահարթակին ու քեզ տանում են Գլխավոր Փողոցով, իսկ դու, ժպտալով, ու օդային համբույրներով ողջունում ես բոլոր փողոցայիններին...

(Նա վերցնում է հողաթափերն ու թանկարժեք զարդեղենը և արագ մոտենում զարդասեղանին): Մի տարի առաջ, երբ Սյուզան Մաք-Փիթերը այդ պատվին արժանացավ, գիտե՞ս ինչ եկավ նրա գլխին: Գիտե՞ս ինչ պատահեց խեղճ, փոքրիկ Սյուզին:

ԸՐԻԿ (ցրված).— Ձէ: Իսկ ի՞նչ պատահեց փոքրիկ Սյուզի Մաք-Փիթերին:

ՄԱՐԳՐԵԹ.— Ինչ-որ մեկը ծամած ծխախոտ էր թքել նրա երեսին:

ԸՐԻԿ (ցրված).— Ինչ-որ մեկը ծամած ծխախոտ էր թքել նրա երեսին...

ՄԱՐԳՐԵԹ.— Հա: Մի հարբած ծերուկ գլուխը հանել է «Գեյոզո» հյուրանոցի պատուհանից, գոռացել «Հե՛յ, թագուհի՛, հե՛յ,

հե՛յ, թագուհի՛»։ Խեղճ Սյուզինն նայել է վեր, ուրախ ժպտացել, իսկ հարբած ծերուկը ծամած ծխախոտը թքել է աղջկա երեսին։

ԲՐԻԿ.— Ի՞նչ գիտես։

ՄԱՐԳՐԵԹ (աշխույժ).— Ինչ գիտե՛մ... Բայց ես այնտեղ էի։ Աչքովս տեսա։

ԲՐԻԿ (ցրված).— Այ քեզ զվարճալի պատմություն...

ՄԱՐԳՐԵԹ.— Իսկ Սյուզին... այդպես չի կարծում։ Խեղճը շատ էր բարկացել։ Գոռում էր բայդուշի պես։ Ստիպված եղան շքերթը դադարեցնել։ Խեղճ Սյուզիի գլխից թագը հանեցին ու տոնակատարությունը շարունակեցին առանց...

(Նա հայելու մեջ նկատում է Բրիկի հայացքը, թեթևակի հանաչում է, շրջվում է, որ տեսնի նրան։ Տաս վայրկյանի չափ դադար)։

Ինչո՞ւ ես ինձ այդպես նայում։

ԲՐԻԿ (կամացույց սուլելով).— Իսկ ինչպե՛ս եմ նայում, Մեգգի՛։

ՄԱՐԳՐԵԹ (ահաբեկված).— Ինչպես հիմա, երբ հայացքդ որսացի հայելու մեջ, իսկ դու սկսեցիր սուլել... Չգիտեմ, թե այդ հայացքն ինչ է նշանակում, բայց արյունս սառչում է, երբ այդպես նայում ես ինձ... Վերջերս շատ ես այդ հայացքով նայում։ Ինչի՞ մասին ես մտածում այդ պահին։

ԲՐԻԿ.— Մեգգի՛, ճիշտն ասած... ես քե՛զ էի նայում... Չգիտեի։

ՄԱՐԳՐԵԹ.— Իսկ ես գիտե՛մ... գիտե՛մ... Դե, ասա, ի՞նչ ես մըտածում։

ԲՐԻԿ.— Չեմ հիշում... այդ թուպեին, ընդհանրապես, մտածո՛ւմ էի, թե՛ ոչ։

ՄԱՐԳՐԵԹ.— Քեզ չի՞ թվում, որ հասկանում եմ...

ԲՐԻԿ (սառնորեն).— Ի՞նչ ես հասկանում։

ՄԱՐԳՐԵԹ (դժվարությամբ բառեր գտնելով).— ... որ ինձ հետ սուկալի... փոփոխություն է կատարվել... որ ես փոխվել եմ, դարձել կոպիտ... Կատաղած...

(Հետո ավելացնում է, գրեթե քնքշորեն)։

Դաժա՛ն...

Ահա թե վերջերս ինչ ես նկատել իմ մեջ։ Բայց ի՞նչ օգուտ, որ բացի նկատելուց, ուրիշ ոչինչ չես անում։ Այո, ես, իրոք, փոխվել եմ։ Այլևս առաջվա թուլամորթը չեմ։ Ես ինձ թույլ չեմ տա թուլամորթ լինել։

(Վերագտնելով իր ուժը):

Բայց, Բրի՛կ, Բրի՛կ... Բրի՛կ...

ԲՐԻԿ.— Դու որևէ բա՛ն ես ուզում ասել...

ՄԱՐԳՐԵԹ.— Այո՛, ուզում եմ... ուզում եմ ասել, որ շատ մեծակ
եմ: Ծա՛տ:

ԲՐԻԿ.— Դե, բոլոր մարդիկ էլ մեծակ են:

ՄԱՐԳՐԵԹ.— Բայց երբ ապրում ես մեկի հետ, որին սիրում ես...
իսկ նա քեզ չի... այդ ժամանակ մեծակությունն ավելի սու-
կալի է դառնում: **(Դադար: Բրիկը, անթացուպին հենված, մո-
տենում է կնոջը ու հարցնում՝ նրա դեմքին չնայելով):**

ԲՐԻԿ.— Մեզոգի՛, դու կուզեի՞ր առանձին ապրել:

(Նորից դադար. հետո Մեզոգին շնչակտուր պատասխանում է):

ՄԱՐԳՐԵԹ.— Ո՛չ... Աստված վկա, ո՛չ: Ես չեմ ուզում մեծակ մը-
նալ: **(Նորից է խոր հառաչում, հագիվ զսպում է ճիչը: Զար-
հուրելի տվայտանքների մեջ տիրապետում է իրեն և վերա-
գտնում այն վիճակը, երբ մարդ արդեն կարող է խոսել սովո-
րական բաներից):**

Լա՛վ լոգանք ընդունեցիր:

ԲՐԻԿ.— Ըհը:

ՄԱՐԳՐԵԹ.— Ջուրը սա՛ռն էր:

ԲՐԻԿ.— Ո՛չ:

ՄԱՐԳՐԵԹ.— Բայց դու թարմացար, չէ՞:

ԲՐԻԿ.— Մի քիչ...

ՄԱՐԳՐԵԹ.— Ես մի բան գիտեմ, որը լոգանքից ավելի լավ է
թարմացնում:

ԲՐԻԿ.— Ո՞րն է դա:

ՄԱՐԳՐԵԹ.— Սպիրտով կամ օժանելիքով շփումը:

ԲՐԻԿ.— Դա մարզումներից հետո է օգտակար, Մեզոգի՛: Իսկ դու
գիտես, որ ես վաղուց չեմ մարզվում:

ՄԱՐԳՐԵԹ.— Բրի՛կ, դու տեսքդ չես կորցնում:

ԲՐԻԿ **(անտարբեր)**.— Դու այդպե՛ս ես կարծում:

ՄԱՐԳՐԵԹ.— Ինձ միշտ թվացել է, որ խմող մարդիկ շուտ են
հալից ընկնում: Բայց, ինչպես երևում է, սխալվել եմ:

ԲՐԻԿ **(դժկամորեն)**.— Ծնորհակալություն, Մեզոգի՛:

ՄԱՐԳՐԵԹ.— Հետո, առաջին անգամ եմ տեսնում, որ խմող մար-
դը չգիրանա:

ԲՐԻԿ.— Բայց գնալով թուլանում եմ:

ՄԱՐԳՐԵԹ.— Վաղ թե ուշ, այդպես էլ պետք է լիներ: Սքիփրն¹⁶
էլ նախ թուլացավ, հետո...

(Կարճատև դադար):

Կներես: Ես չէի ուզում հին վերքերդ փորփրել: Երանի հիմա տեսքդ կորցրած լինեիր: Այդ ժամանակ սուրբ Մեգգիի մարտիրոսությունը քիչ ավելի տանելի կլիներ ու ես այսպիսի անհիծյալ բախտի չէի արժանանա: Բայց այդ հարցում էլ դրժբախտ եմ: Բրի'կ, խոսքը մեր մեջ, դու ավելի հրապուրիչ ես դարձել այն օրից, ինչ սկսեցիր խմել: Քո մարմինը հրաշալի է: Քեզ անծանոթ մեկը կկարծի, որ դու երբեք ամուր ջղեր ու մկաններ չես ունեցել:

(Մարգագետնից, որտեղ կրիկետ¹⁷ են խաղում, լսվում է գընդակի ու մականների բախման աղմուկը, որը մերթ մոտենում է, մերթ հեռանում):

Իհարկե, նախկինում, խաղի ժամանակ դու միշտ ունեիր այն առանձնահատկությունը, այն հազվագյուտ անտարբերությունը. կարծես քեզ բոլորովին չէր մտահոգում կպարտվելիք, թե կհաղթեիր: Բայց հիմա, երբ պարտվել ես... իհարկե, դու դեռ չես պարտվել, ուղղակի... խաղից դուրս ես եկել, բայց դեռևս ունես այն հազվագյուտ հրապուրյրը, որ սովորաբար շատ ծեր, կամ հիվանդ մարդիկ են ունենում... պարտվածի հրապուրյրը: Դու այնքան անտարբեր ես, այնքան ասուր... դու նախանձելի անտարբերություն ունես:

(Երաժշտություն է լսվում):

Լսո՞ւմ ես, կրիկետ են խաղում: Լուսինը ելավ: Սպիտակ շողերն սկսում են կամաց-կամաց ոսկեգույն դառնալ... Դու հրաշալի սիրեկան էիր... Քո պես տղամարդու հետ անկողին մտնելը հրաշք էր: Երևի պատճառն այն էր, որ շատ էիր անտարբեր այդ հարցում: Ծիշտ չե՞մ ասում: Ոչ մի անգամ չէիր հուզվում: Այդ բանն անում էիր հանգիստ, բնականորեն, զգույշ, բացարձակ ինքնավստահությամբ ու կատարյալ անտարբերությամբ, որն ավելի շատ նման էր լեդիի համար դուռը բացելուն ու նրան սեղանի մոտ հրավիրելուն, քան թե նրան կրթով տիրելուն: Այդ անտարբերությամբ դու սքանչելի էիր անկողնում: Երևի տարօրինակ բաներ եմ ասում, այո՞... Գուցե տարօրինակ է, բայց ես ճիշտ եմ ասում: **(Դադար):** Հասկանում ես, եթե իմանամ, որ դու երբեք, երբեք, այլևս

կրթեք չես պատկելու ինձ հետ, կիջնես խոհանոց, կվերցնես ամենատեղար, ամենասուր դանակն ու սիրտս կխրես: Երդվում եմ, Բրի՛կ, այդպես էլ կանե՛մ...

Բայց ես չունեմ պարտվածի հրապույրը, ես դեռ չեմ հրաժարվել իմ պայքարից, ես որոշել եմ հաղթել...

(Մականների ու կրիկետի գնդակի բախման աղմուկ է լսվում):

Երանի իմանալի, թե երբ է շիկացած տանիքին նստած կատուն հաղթանակ տանում...

Թերևս, ինչքան շատ դիմանա...

(Նորից նույն աղմուկը):

Բրի՛կ, այս գիշեր, երբ դու լավ հարբած լինես, անկողնում քեզ կասես, որ սիրում եմ... դու երևի լավ խմած կլինես ու կհավատաս... Այո, երեխաները կրիկետ են խաղում...

Մեծ Հայրիկը մեռնում է քաղցկեղից...

Դու ի՞նչ էիր մտածում այն պահին, երբ հայացքդ որսացի հայելու մեջ:

Սքիփրի՞ն էիր հիշում, այո՞...

(Բրիկը վերցնում է հենակը, բարձրանում է տեղից):

Ա՛խ ներիք ինձ, բայց ինչ արած, լուռության օրենքները չեն գործում...

Այո՛, լուռության օրենքները չեն գործում...

(Բրիկը մոտենում է խմիչքների պահարանին, մի կում վիսկի է խմում, հետո գլուխը շփում է սրբիչով):

Այո՛, լուռության օրենքները չեն գործում...

Երբ մի բան թարախոտում է մարդու հիշողության կամ երեվակայության մեջ, լուռության օրենքներն անգործանում են: Ինչպե՞ս կարելի է հրդեհված տան դռները կողպելով, փորձել մոռանալ վառվող տան մասին, կամ՝ կրակին չնայելով, այն մարել...

Լուռությունից պարզապես աճում է թարախապալարը: Հասունանալով այն դառնում է չարորակ...

Բրի՛կ, հագնվիր գնանք...

(Հենակն ընկնում է Բրիկի ձեռքից):

ԲՐԻԿ.— Հենակս ընկավ:

(Նա դադարում է սրբիչով մազերը շփել, բայց դեռ կանգնած է սրբիչների կախիչին հենված):

ՄԱՐԳՐԵԹ.— Հենվիր ինձ:

ԲՐԻԿ.— Չէ: Հենակա տո'ր:

ՄԱՐԳՐԵԹ.— Հենվի'ր ուսիս:

ԲՐԻԿ.— Չեմ ուզում հենվել ուսիդ: Ասացի հենակա տո'ր:

(Բրիկը դա ասում է հանկարծակի բռնկվելով):

Դու հենակա կտա'ս, թե՞ ծնկի գամ հատակին՝ նոր...

ՄԱՐԳՐԵԹ.— Դե լավ, վերցրու, վերցրու...

(Հենակը մեկնում է նրան):

ԲՐԻԿ (կաղալով քայլում է).— Ծնորհակալություն'ն...

ՄԱՐԳՐԵԹ.— Պետք չէ իրար վրա գոռոռալ: Այս տան պատերն էլ ականջներ ունեն:

(Բրիկը կաղալով մոտենում է խմիչքների պահարանին, վիսկի է լցնում):

Բայց ճիշտն ասած, առաջին անգամ ձայնդ բարձրացրիր: Ի՞նչ եղավ, հավասարակշռությունդ կորցրի'ր, անտարբերության պատը երերա՞ց... Կարծում եմ, դա լավ նշան է:

Պաշտպանությունում խաղացող ֆուտբոլիստի նյարդերը տեղի են տալիս...

(Բրիկը շրջվում, սառնորեն ժպտում է նրան նոր լցրած բաժակի ետևից):

ԲՐԻԿ.— Մեզոհ', պարզապես դեռ չի սկսվել:

ՄԱՐԳՐԵԹ.— Ի՞նչը:

ԲՐԻԿ.— Այն կաթկթոցը, որ լսում եմ գլխիս մեջ: Այն կաթկթոցը, որ հանգստացնում է ինձ: Դու մի լավություն չէի'ր անի, Մեզոհի':

ՄԱՐԳՐԵԹ.— Հաճույքով: Ի՞նչ լավություն:

ԲՐԻԿ.— Խնդրում եմ մի քիչ կամաց խոսես...

ՄԱՐԳՐԵԹ (խռպոտ շշուկով).— Այո... ես շշուկով կխոսեմ, կխոսեմ, բոլորովին լռելով... Բայց դու էլ ինձ պետք է մի լավություն անես: Գոնե մինչև Մեծ Հայրիկի ծննդյան երեկույթը այդքան մի' խմիր:

ԲՐԻԿ.— Ի՞նչ երեկույթ:

ՄԱՐԳՐԵԹ.— Այսօր Մեծ Հայրիկի ծննդյան օրն է:

ԲՐԻԿ.— Ի՞նչ ես ասում: Այսօր Մեծ Հայրիկի ծննդյան օրն է:

ՄԱՐԳՐԵԹ.— Իսկ դու չգիտեի'ր, որ այսօր Մեծ Հայրիկի ծննդյան օրն է:

ԲՐԻԿ.— Չէ: Մոռացել էի:

ՄԱՐԳՐԵԹ.— Իսկ ես հիշում եմ: Քեզ համար:

(Բրիկն ու Մեգգին խոսում են հենց նոր կոված երեխաների պես՝ հևասպառ: Նրանք խոր շունչ են քաշում ու երազկոտ աչքերով նայում միմյանց. հևում են ու գոչում, կարծես նոր են բաժանել, որպեսզի չկովեն):

ԲՐԻԿ.— Այո՛, այո, Մեգգի՛...

ՄԱՐԳՐԵԹ.— Մի քանի տող խզբզիր այս բացիկին:

ԲՐԻԿ.— Ինքդ խզբզիր:

ՄԱՐԳՐԵԹ.— Բայց քո ձեռագրով պետք է լինի, որովհետև նվիրողը դու ես: Իսկ ես... արդեն տվել եմ իմ նվերը: Իսկ այս նվերին անպայման քո ձեռագիրը պետք է լինի, Բրի՛կ:

(Լարվածությունը նրանց միջև նորից ուժեղանում է: Խոսում են աղաղակելով):

ԲՐԻԿ.— Իսկ ես նրա համար նվեր չեմ գնել:

ՄԱՐԳՐԵԹ.— Ես գնել եմ... քո նվերը...

ԲՐԻԿ.— Ուրեմն, ինքդ էլ գրիր բացիկին:

ՄԱՐԳՐԵԹ.— Ուզո՞ւմ ես հայրդ գլխի ընկնի, որ նրա ծննդյան օրը չե՞ս հիշում: Որ ե՞ս եմ քեզ հիշեցրել...

ԲՐԻԿ.— Մեգգի՛, ես իրոք չեի հիշում:

ՄԱՐԳՐԵԹ.— Այո, բայց պետք չէ, որ այդ մասին բոլորն իմանան:

ԲՐԻԿ.— Ես ձևականություններ չեմ սիրում:

ՄԱՐԳՐԵԹ.— Լսիր, դու բնդամենը երկու բառ պետք է գրես՝ «Սիրով՝ Բրիկ...»:

ԲՐԻԿ.— Չե՛մ գրի:

ՄԱՐԳՐԵԹ.— Պետք է գրե՛ս...

ԲՐԻԿ.— Երբ մի բան սրտովս չէ, ինքս ինձ ստիպելով չեմ անում: Հետո, երևում է մոռացել ես այն պայմանները, որոնցով համաձայնել եմ հետդ ապրել:

ՄԱՐԳՐԵԹ (նախքան գլխի կընկնի, թե Բրիկն ինչ է ուզում ասել, խոսում է ակամա).— Ես քեզ հետ չեմ ապրում: Մենք պարզապես միևնույն վանդակն ենք զբաղեցնում:

ԲՐԻԿ.— Դու պարտավոր ես հիշել այդ պայմանները, որոնցով համաձայնեցի...

ՄԱՐԳՐԵԹ.— Բայց դրանք անտանելի են...

ԲՐԻԿ.— Ուրեմն ինչո՞ւ չես հեռա...

ՄԱՐԳՐԵԹ.— Սը՛ս... Դուան մոտ մարդ կա կանգնած: Ո՞վ է...

(Միջանցքում ոտնաձայներ):

ՄԵՅԻ (դրսից).— Կարելի՞ է ներս գալ:

ՄԱՐԳՐԵԹ.— Ախ աչդ դո՞ւ ես... Իհարկե, ներս արի, Մէյի՛:

(Մէյին ներս է մտնում՝ կանացի նետաղեղը ձգած):

ՄԵՅԻ.— Սա քո՞նն է, Բրի՛կ:

ՄԱՐԳՐԵԹ.— Ի՞նչ ես ասում, քույրիկ Մէյի... դա իմ մրցանակն է՝ «Դիանայի նազմավարը»¹⁸: Որպես հաղթող, ստացել եմ հին ու բարի ավանդույթներ ունեցող Միսսիսիպիի համալսարանի¹⁹ մրցումներում:

ՄԵՅԻ.— Չե՞ք կարծում, որ շատ վտանգավոր է, երբ զենքը այսպես անփութորեն մի կողմ են գցում... մանավանդ, երբ տունը լի է նորմալ, աշխույժ երեխաներով, որոնց ուշքը գնում է նման զենքեր տեսնելիս:

ՄԱՐԳՐԵԹ.— Նետաղեղի համար ուշագնաց լինող նորմալ և աշխույժ երեխաները պարտավոր են իմանալ, որ չի կարելի ձեռք տալ իրենց չպատկանող իրերին:

ՄԵՅԻ.— Մեզո՞ղի, թանկագին՝նս, եթե դու էլ երեխաներ ունենայիր, կհասկանայիր, թե նրանք որքան դժվար են նման բաները սովորում: Խնդրում եմ սա մի տեղ դիր, փակիր ու բանալին գրպանումդ պահիր, որ չգտնեն:

ՄԱՐԳՐԵԹ.— Քույրի՛կ Մէյի, ոչ ոք մտադրություն չունի ձեր երեխաներին վնասելու: Ես ու Բրիկը դեռ պահում ենք նետով որս անելու մեր արտոնագրերը: Հենց որ որսի սեզոնն սկսվի, գնալու ենք Մուն լիճը²⁰ եղջերուներ որսալու: Ծատ եմ սիրում շների հետ վազել կանաչ անտառներով, վազել, ցատկել... վազել, վազել, ցատկել... արգելքների վրայով...

(Մոտենում է պատի մեծ պահարանին՝ ձեռքին նետաղեղը):

ՄԵՅԻ.— Բրի՛կ, ինչպե՞ս է կոտրված ծունկդ:

ԲՐԻԿ.— Չի ցավում: Ուղղակի... մի քիչ քորվում է:

ՄԵՅԻ.— Ա՛խ, Բրի՛կ, Բրի՛կ, եթե իմանայիք, թե ինչ կորցրեցիք, որ ճաշից հետո ներքև չիջաք: Երեխաները մեզ ինչպե՞ս ուրախացրին... Փոյին դաշնամուր էր նվագում, Բասթրն ու Սոնին թմբուկ էին խփում: Հետո լույսերն հանգցրին, և Դիքսին ու Թրիքսին շղարշե զգեստներ հագած սկսեցին պարել՝ ձեռքներին բեկզալական կրակներ: Մեծ Հայրիկը ուրախությունից իրեն կորցրել էր: Նրա դեմքը հրճվանքից ուղղակի փայլում էր...

ՄԱՐԳՐԵԹ (պահարանի մոտից՝ շղային ծիծաղով).— Իհարկե՞:

Ես շատ եմ ափսոսում, որ զրկվեցինք այդ հաճույքից:

(Նորից ներս է գալիս):

Մեյի՛, իսկ ինչո՞ւ ես բոլոր երեխաներիդ շան անուններ դրել:
ՄԼՅԻ.— Ծան անուններ:

(Մարգրեթը սա ասում է, երբ մոտենում է պատուհանի բամբուկե վարագույրները բարձրացնելու. արևն աստիճանաբար մայր է մտնում: Պատուհանին մոտենալիս, աչքով է անում Բրիկին):

ՄԱՐԳՐԵԹ **(մեղմորեն)**.— Դիքսի, Թրիքսի, Բասթըր, Սոննի, Փոլլի... Կարծես թուրթալը կրկեսում շան անուններ կրկնելիս լինի...

ՄԼՅԻ.— Մեզգի՛: **(Մարգրեթը ժպտալով շրջվում է):** Ինչո՞ւ ես կատվի պես ճանկոում, հը՞...

ՄԱՐԳՐԵԹ.— Որովհետև ես կատու եմ... Իսկ դու, կատակիս չդիմացար, հա՞...

ՄԼՅԻ.— Ինձ ոչ մի բան այնքան հաճույք չի պատճառում, որքան սրամիտ կատակը... եթե այն անկեղծ է: Մեզգի՛, չէ՞ որ դու գիտես մեր երեխաների իսկական անունները: Բասթրինը Բոսկերս է: Սոսիինը՝ Սոնդորս, Թրիքսիինը՝ Մերլին, իսկ Դիքսիինը ..

(Ինչ որ մեկը ներքեից կանչում է. «Է՛յ, Մեյի՛...»): Նա արագ քայլերով մոտենում է դռանը): Ընդմիջումն ավարտվեց...

ՄԱՐԳՐԵԹ **(Լրբ Մեյին ծածկում է դուռը)**.— Հետաքրքիր է, իսկ Դիքսիի իսկական անունն ինչ է:

ԲՐԻԿ.— Մեզգի՛, կատվի պես ճանկոելուց ոչ մի օգուտ չկա...

ՄԱՐԳՐԵԹ.— Գիտե՛մ... Ես ճանկոում եմ, որովհետև ինձ ուտում եմ մսխանձից, իսկ ցանկությունը կատաղեցնում է: Բրի՛կ, ես հավել եմ Հռոմից բերած գեղեցիկ, մետաքսե դարձածալով կոստյումդ, մետաքսե վերնաշապիկներիցդ ամենալավը: Քեզ այնպես կհագցնեմ, որ... Վերնաշապիկդ թևերին սաթե ճարմանդները կամրացնեմ, որ այնքան հազվադեպ ես կրում...

ԲՐԻԿ.— Բայց ես չեմ կարող շալվար հագնել... գիպսե այս ոտքին:

ՄԱՐԳՐԵԹ.— Կարող ես: Ես կօգնեմ:

ԲՐԻԿ.— Ես չեմ ուզում հագնվել, Մեզգի՛:

ՄԱՐԳՐԵԹ.— Բայց գոնև սպիտակ անջազգեստդ վրադ գցիր...

ԲՐԻԿ.— Դե կարելի է:

ՄԱՐԳՐԵԹ.— Ընորհակալություն: Ես այնքան շնորհակալ եմ...

ԲՐԻԿ.— Չարժե:

ՄԱՐԳՐԵԹ.— Ա՛խ, Բրի՛կ, Բրի՛կ... Դեռ ինչքա՛ն պետք է շարունակվի այս պատիժը: Մի՛թե այն չեմ հատուցել: Մի՛թե չեմ կարող ներում խնդրել:

ԲՐԻԿ.— Մեզոհ՛, դու չես թողնում, որ մի կարգին խմեմ: Վերջերս քո ձայնն այնպես է հնչում, կարծես աստիճաններով վերև ես վազում՝ զգուշացնելու, որ տանը հրդեհ է ընկել:

ՄԱՐԳՐԵԹ.— Չարմանալու ոչինչ չկա: Իսկ գիտե՞ս, թե ես ինձ ինչպես եմ զգում, Բրի՛կ...

(Ներքևում երեխաների ձայները միախառնվում են «Իմ վայրի իռլանդական վարդ» երգի հնչյունների):

Դե, դու էլ ես դա զգում: Ես ինձ միշտ շիկացած տանիքին նստած կատվի պես եմ զգո՞ւմ...

ԲՐԻԿ.— Ուրեմն, իսկույն թո՛ի՛ր... իսկույն թո՛ի՛ր այդ տանիքից: Չէ՞ որ կատուները միշտ թաթերի վրա են ընկնում՝ սոսանց վիրավորվելու...

ՄԱՐԳՐԵԹ.— Իհարկե՞...

ԲՐԻԿ.— Էլ ինչո՞ւ ես սպասում: Դե, թո՛իր, Աստծո սիրույն, դե՛, շո՛ւտ...

ՄԱՐԳՐԵԹ.— Իսկ ի՞նչ անեմ:

ԲՐԻԿ.— Մի սիրեկան գտի՛ր:

ՄԱՐԳՐԵԹ.— Բայց... քեզանից բացի ես ոչ մի տղամարդու չեմ ուզում: Նույնիսկ երբ անքերս փակ են, միայն քեզ եմ տեսնում: Բրի՛կ, ինչո՞ւ չես տգեղանում, ինչո՞ւ չես գիրանում ու տեսքդ կորցնում, որ կարողանամ այդ քայլին դիմել...

(Արագ մոտենում է միջանցքի դռանը, բացում է, ականջ դրնում):

Համերգը դեռ շարունակվում է... Բրավո՛, անվի՛զ ճիվաղներ...

(Ադմուկով ծածկում է դուռը, բանալիով փակում):

ԲՐԻԿ.— Ինչո՞ւ դուռը փակեցիր:

ՄԱՐԳՐԵԹ.— Որ մի քիչ... միասին լինենք...

ԲՐԻԿ.— Խելքդ գլուխդ հավաքիր:

ՄԱՐԳՐԵԹ.— Չե՛մ ուզում խելքս գլուխս հավաքել:

(Վազում է դեպի պատշգամբի դուռը, իջեցնում է մետաքսե վարդագույն վարագույրները):

ԲՐԻՎ.— Քեզ հիմար դրության մեջ մի՛ դիր:

ՄԱՐԳՐԵԹ.— Ես ինձ վատ չեմ զգա, եթե քո ներկայությանը հիմար դրության մեջ ընկնեմ:

ԲՐԻՎ.— Իսկ ես ինձ վատ կզգամ: Ես ամաչում եմ... քո փոխարևն...

ՄԱՐԳՐԵԹ.— Ամաչո՞ւմ ես... Ուրեմն այլևս ինձ մի տանջիր: Ես չեմ դիմանո՞ւմ...

ԲՐԻՎ.— Բայց ինքդ համաձայնեցիր, չէ՞...

ՄԱՐԳՐԵԹ.— Գիտեմ, բայց...

ԲՐԻՎ.— ... ապրել այսպիսի պայմաններում...

ՄԱՐԳՐԵԹ.— Ես չե՛մ կարող... չե՛մ կարող... չեմ կարո՞ղ...

(Գրկում է Բրիկի ուտերը):

ԲՐԻՎ.— Դե թո՞ղ...

(Նա հեռանում է կնոջից, վերցնում է փոքրիկ աթոռը, պառում է իր առաջ՝ կրկեսում վայրի գազաններ վարժեցնողի պես: Անցնում է հինգ վայրկյան: Կինը կիսաբաց բռունցքը բերանին, աչքերը հառում է նրան, հետո քրքշում է՝ գրեթե հիստերիկ քրքրիցով: Մի պահ Բրիկի տեսքը ահարկու է, հետո ժպտալով աթոռը ցած է դնում: Մեծ Մայրիկը ձայն է տալիս փակ դռան ետևից):

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Որդի՛... որդի՛... Բրի՛կ...

ԲՐԻՎ.— Ե՛կ է, Մե՛ծ Մայրիկ:

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ **(դրսից)**.— Ա՛խ, գալիս կա... Հենց նոր Մեծ Հայրիկի նիվանդության մասին շատ կարևոր լուր ստացանք: Վազեցի վերև, որ ասեմ...

(Նա չրխկացնում է դռան բռնակը):

Գառն ինչի՞ եք փակել... Կարծում եք մեր տանը գողեր կան, նր՞...

ՄԱՐԳՐԵԹ.— Մե՛ծ Մայրիկ, Բրիկը դեռ չի հագնվել, դրա համար եմ դուռը փակել:

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Դե, ի՞նչ անենք... Բրիկին առաջին անգամ եմ աղբակ տեսնում... Եկեք դուռը բացեք:

(Մարգրեթը քամահրանքով գնում է դուռը բացելու, մինչդեռ Բրիկը հապշտապ, կաղալով լողասենյակ է գնում, ետևից ծածկում է դուռը: Մեծ Մայրիկը չի երևում միջանցքում):

ՄԱՐԳՐԵԹ.— Մեծ Մայրի՞կ...

(Մեծ Մայրիկը երևում է հակառակ կողմից՝ պատշգամբի դռներից, Մարգրեթի ետևում, պառավ ցլաշան նման փնչալով,

հնալով: Նա կարճահասակ, փաթթամ կին է: Այդ կինը 170 ֆունտ²¹ քաշ ունենալու և վաթսուն տարեկան լինելու պատճառով միշտ հնում է: Նա բռնցքամարտիկի, ավելի ճիշտ ձյուդոիստի պես անընդհատ շարժման մեջ է: Ի տարբերություն Մեծ Հայրիկի, Մեծ Մայրիկը փոքր-իճկ բարձր խավի ընտանիքից է: Հագել է սև, արծաթափայլ զգեստ: Վրան առնվազն կես միլիոնի գոհարեղեն կա: Շատ շիտակ ու անկեղծ կին է):

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ (բարձրաձայն: Վախեցնելով Մարգրեթին).— Ես... Գուփրի ու Մեյիի սենյակով պատշգամբ մտա: Իսկ Բրի՛կն ուր է: Բրի՛կ... Շուտ դուրս արի, տղա՛ս... Ես ընդամենը տաս վայրկյանով եմ եկել: Ուզում եմ Մեծ Հայրիկի մասին ճորություն ասել... Ձեմ սիրում, երբ դռները փակում են մի տան մեջ... որտեղ...

ՄԱՐԳՐԵԹ (բարեհոգությամբ).— Ես դա նկատել եմ, Մե՛ծ Մայրիկ... Բայց մարդիկ գոնե մի քանի վայրկյան պետք է առանձնանան: Ծիշտ չե՛մ ասում:

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Ոչ, հարսի՛կս, միայն թե ոչ իմ տանը: (**Առանց դադարի**): Իսկ ինչո՞ւ ես շորդ փոխել: Մյուս, ժանեկավոր զգեստդ ավելի լավ էր քեզ սազում, սիրելի՛ս:

ՄԱՐԳՐԵԹ.— Այո, ես էլ էի այդպես կարծում, բայց իմ փոքրիկ, չափազանց լավ դաստիարակված սեղանակիցներից մեկը այն որպես անձեռոցիկ օգտագործեց: Դրա համար էլ փոխեցի:

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ (հատակից վերցնելով գուլպաները).— Ի՞նչ...

ՄԱՐԳՐԵԹ.— Հասկանո՞ւմ եք... Մեյին ու Գուփրը այնքան շատ են երես տվել իրենց երեխաներին, որ... Շնորհակալություն, Մեծ Մայրիկ... (**Մեծ Մայրիկը փնչացնելով գուլպաները տալիս է Մարգրեթին**)... որ չես համարձակվում նույնիսկ ասել՝ ախր նրանց ուրիշ սենյակ կարող եք տանել, որ իրենց շրճորհքը ցույց տան և մեզ չխանգարեն:

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Բրի՛կ, դե, շո՛ւտ դուրս արի... Իսկ դու, Մեգգի՛... պարզապես երեխաներ չես սիրում, դրա համար էլ այդպես նախանձով ես խոսում:

ՄԱՐԳՐԵԹ.— Ես այնքան շատ եմ երեխաներ սիրում, այնքա՛ն շատ... Ես պաշտում եմ համեստ ու լավ դաստիարակված երեխաներին:

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ (քնքուշ ու սիրալիր).— Մեգգի՛, Մեյիին ու Գուփ-

րիւն անընդհատ բամբաստելու փոխարեն ավելի լավ չի՞ լինի մի երեխա էլ դու ունենաս ու դաստիարակես:

ՊԱՍՏՈՒՄ (բարձրաձայն).— Մեծ Մայրի՛կ, Մեծ Մայրի՛կ... Բեսթիւն և Հյուն ուզում են գնալ, սպասում են որ գաս, հրաժեշտ տան:

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Ասա թող մի բոպե սպասեն... Հիմա իջնում եմ:

(Շրջվում է դեպի լողասենյակի դուռն ու կանչում):

Բրի՛կ... զավա՛կս, դու ինձ լսո՞ւմ ես:

(Հազիվ լսելի պատասխան):

Մենք հենց նոր «Օչըսնըր» կլինիկայից բոլորովին ուրիշ բժշկական եզրակացություն ստացանք. ամեն ինչ սխալ է եղել, ամեն ինչ... Հայրդ ոչ մի հիվանդություն չունի, միայն մեծ աղիքն է մի քիչ... Մեծ աղիքի փայտացում են անվանում այդ հիվանդությունը... Դու ինձ լսո՞ւմ ես, որդի՛...

ՍԱՐԳՐԵԹ.— Նա ձեզ լսում է, Մեծ Մայրիկ:

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Իսկ ինչո՞ւ չի պատասխանում: Ամենակարող Աստվա՛ծ... ախր նա հիմա ուրախությունից պետք է գոռար: Ես որ այդ լուրը լսեցի, ձայնս գլուխս գցեցի, գոռացի... լաց եղա ու ընկա ծնկներիս...

Տե՛ս...

(Բարձրացնում է շրջագգեստի փեշը):

Տես ինչպես է քերծվել: Երկու բժիշկներ շնչակտուր եղան, մինչև ինձ ոտքի կանգնեցրին: **(Քրքջում է: Խոսելիս միշտ քրքջում է):** Մեծ Հայրիկը կատաղել էր: Բայց ի՞նչ անեմ, չդիմացա... ո՞վ կդիմանար, այդ լուրը լսելով:

(Նորից նայելով լողասենյակի կողմը):

Աղքան տանջվելուց, այդքան հուզվելուց հետո այդպիսի լուր լսե՞ս հենց Մեծ Հայրիկի ծննդյան օրը... Մեծ Հայրիկը չէր ուզում ցույց տալ իր ուրախությունը, բայց հազիվ էր իրեն գապում, որ չնստի ու մի լավ լաց լինի:

(Ներքևից հրաժեշտի բառեր են լսվում: Մեծ Մայրիկը վազում է դեպի դուռը):

Դրանց չթողնեք գնան... Իսկ դու հագնվիր, որդի՛: Քանի որ ծովիկը ցավում է, մենք կգանք այստեղ տոնելու Մեծ Հայրիկի ծննդյան օրը: Դե, դու չես կարող իջնել ներքև... Մեզոգի՛, ինչպե՞ս է նրա ծունկը:

ՍԱՐԳՐԵԹ.— Դե ինչպես պետք է լինի, կոտրել է...

(Միջանցքից հեռախոսազանգ է լսվում, հետո սևամորթ սպասավորը խոսում է իր առողջանությանը. «Այո, միստուր Փոլիտի ազարակատունն է):

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Գիտեմ կոտրվել է: Ուզում եմ ասել՝ շա՞տ է ցավում:

ՄԱՐԳՐԵԹ.— Ծիշտն ասած, չգիտեմ, Մե՛ծ Մայրիկ: Ավելի լավ է Բրիկին հարցնեք:

ՍՈՒԿԻ (միջանցքից).— Միսի՛ս Փոլի, Մեմֆիսից են զանգում: Միսս Սոլին է:

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Լավ, Սուկի՛:

(Մեծ Մայրիկը հապշտապ մտնում է միջանցք: Բարձրաձայն խոսում է հեռախոսով):

Հալլո՞, մի՛սս Սոլի: Ինչպե՞ս ես, մի՛սս Սոլի: Այո, լավ է: Ես էլ հե՛նց նոր ուզում էի քեզ զանգահարել և սպո լուրը... Ի՞նչ... Չի՞ լսվում...

(Նա այնքան է բարձրացնում ձայնը, որ այն ծղրտոցի է նմանվում): Միսս Սոլի՞: Մյուս անգամ ինձ չզանգահարես «Գայոզո» հյուրանոցի նախասրահից: Ինչքան շատ են սղմըկում այդտեղ: Հետաքրքիր է, դու կարողանո՞ւմ ես ինձ լրսել: Այո: Լսիր... ուրեմն, Մեծ Հայրիկի մոտ ոչ մի լուրջ հիվանդություն չկա: Հե՛նց նոր բժշկական եզրակացությունը ըստացանք: Նա բոլորովին առողջ է: Այո: Միայն... մեծ աղիքի... բժիշկները սպազմ են անվանում...

(Մեծ Մայրիկը երևում է միջանցքի դռան մոտ, ձայն է տալիս Մարգրեթին):

Արի դու խոսիր, Մեգգի՛: Ծունչս կտրվեց... Այդ հիմարը բոլորովին չի լսում:

ՄԱՐԳՐԵԹ (դուրս է գնում: Լսվում է նրա ձայնը).— Միսս Սոլի՞: Բրիկի կինն է խոսում: Այո, Մեգգին է: Չեր ձայնն այնպես լավ է լսվում: Իսկ դուք ինձ լսո՞ւմ եք: Այո՞: Փառք Աստծո: Մեծ Մայրիկը հե՛նց նոր ուզում էր ձեզ հայտնել, որ «Օչըսներ» կլինիկայից լուր ենք ստացել... Այո: Մեծ Հայրիկը պարզապես մեծ աղիքի փայտացում ունի: Այո, մեծ աղիքի փայտացում, մի՛սս Սոլի: Այո, մեծ աղիքի փայտացում: Ցտեսություն, մի՛սս Սոլի, հուսով եմ շատ շուտով կհանդիպե՛նք...

(Փոքր-ինչ շուտ է կախում լսափողը՝ նախքան միսս Սոլին կապարտի խոսակցությունը և վերադառնում է միջանցքի դռնով):

Նա ինձ շատ լավ էր լսում: Ես նկատել էմ, որ խոսքերի հետ չպետք է բղավելով խոսել: Ուղղակի պետք է բառերը պարզորոշ արտասանել: Իմ հարուստ, պատավ մորաքույր Կորնելիան խոսվ էր դիակի պես, բայց ես այնպես էի խոսում, որ նա հասկանում էր ինձ: Յուրաքանչյուր բառ հանգիստ ու պարզորոշ արտասանում էի նրա ականջին: Ամեն երեկո մորաքրոջս համար «Քոմերիքլ Ափելն»²² էի կարդում: Նույնիսկ սոսկորական ազդերից ոչ մի բառ բաց չէր թողնում, լրիվ հասկանում էր: Եվ այդպես ամեն օր: Բայց վերջում նա շատ ստոր արարած դուրս եկավ... Գիտե՞ք թե մեռնելուց հետո ինչ ժառանգություն թողեց ինձ: Մինչև տարեկերջ հինգ ամսագրերի բաժանորդագրության փաստաթղթերը, հետո մի փոքրիկ գրադարան՝ բոլորովին հիմար գրքերով լցված... Մընացած ամեն ինչ բաժին հասավ նրա շադու քրոջը... Կյանքումս նման ստոր պատավի չէի հանդիպել...

(Այս խոսակցության պահին Մեծ Մայրիկը սենյակի իրերն է դասավորում):

ՄԼՆՄ ՄԱՅՐԻԿ (ծածկելով զգեստապահարանի դուռը, որտեղից հագուստները դուրս էին թափվել).— Միսս Սոլին կարծում է, որ դա հազվադեպ հիվանդություն է: Մեծ Հայրիկն ասում է, Սոլին միշտ մարսցիականություն է անում: Ինչ որ ճիշտ է ճիշտ՝ խեղճ պատավր անկրեւի պես շարունակ մտրում է Մեծ Հայրիկից, իսկ Մեծ Հայրիկն էլ նրան արժանին չի մատուցում...

Ներքևից ինչ-որ մեկը կանչում է: Մեծ Մայրիկը պատասխանում է՝ «Պալի՛ս եմ...»:

Նա դուրս է գնում: Միջանցքի դռանը կանգնում է, շրջվում, Ուտո ցուցամատը պարզում է նախ լողասենյակի, ապա խմիչքների բարի կողմը, որ նշանակում է. «Բրիկը խմո՞ւմ էր»: Մարգրեթը ձեացնում է, իբր, ոչինչ չի հասկանում: Ուտերը թոթվում է, Ուտերը կիտում, իբր, շվարել-մնացել է Մեծ Մայրիկի այդ մնջախոսից: **Մեծ Մայրիկը հապշտապ մոտենում է Մարգրեթին:**

Պե՛, վե՛րջ տուր... Հերիք է խոսվ ձևանաս: Ուզում եմ ասել՝ նա նո շատ չի՞ խմել:

ՄԼՆՄ ՄԱՅՐԻԿ (թեթևակի ժպտալով).— Խմե՛լ... Նա ճաշից հետո մի գավաթ վիսկի գցեց:

ՄԼՆՄ ՄԱՅՐԻԿ.— Դե, տղայիս չծաղրես հա՛... Տղամարդիկ կան,

ամուսնանալուց հետո խմելը թողնում են, իսկ շատերը դրանից հետո են սկսում: Բրիկը ոչ մի կաթիլ բերանը չէր առնում, նախքան ամուս...

ՄԱՐԳՐԵԹ (գոռալով).— Դա ճիշտ չէ...

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Ծիշտ է, թե ճիշտ չի, ինձ չի հետաքրքրում: Համենայն դեպս, ես մի հարց եմ ուզում տալ, ընդամենը մի հարց. դու կարողանո՞ւմ ես Բրիկին անկողնում երջանկացնել:

ՄԱՐԳՐԵԹ.— Իսկ ինչո՞ւ չեք հարցնում՝ նա կարողանո՞ւմ է ինձ երջանկացնել անկողնում...

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Որովհետև ինձ հայտնի է, որ...

ՄԱՐԳՐԵԹ.— Դա երկկողմանի է լինում...

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Ես միայն գիտեմ... որ ինչ-որ բան կարգին չէ: Դու երեխա չես ունենում, իսկ տղաս հարբո՞ւմ է... **(Ինչ-որ մեկը ներքևից ձայն է տալիս և նա հապշտապ դեպի դուռն է գնում: Այնտեղ շրջվում է, մատնացույց անելով մահճակալը):** Երբ ամուսնությունն անհաջող է լինում, դրա պատճառն այնտե՛ղ, այնտե՛ղ պետք է փնտրել...

ՄԱՐԳՐԵԹ.— Դա... **(Մեծ Մայրիկը դուրս է վազում սենյակից՝ ետևից շրխկացնելով դուռը):** Ծիշտ... չէ՛...

Մարգրեթը հիմա միայնակ է, բոլորովին միայնակ, և նա հուզմունքով է զգում այդ մեռակությունը: Նա հառաչում է, ուները կրճկում: Բռունցքները սեղմած՝ աչքերն ամուր փակում է այն երեխայի պես, որին ուր որ է պիտի սրսկեն: Երբ աչքերը նորից բացում է, առաջինը ձվաձև հայելին է տեսնում: Արագ մոտենում է հայելուն, աչքերը հառում է ինքն իր վրա, քամահրանքով ժրպտում է ու ասում. «Ո՞վ ես դու»: Հետո փոքր-ինչ կռանում է՝ ցատկելու պատրաստ կատվի պես և պատասխանում է իր հարցին բոլորովին ուրիշ ձայնով, որ բարձր է ու հեզնոտ. «Ես Մեգգի կատուն եմ»: Իսկույն ուղղվում է, երբ լողասենյակի դուռը փոքր-ինչ բացվում է և Բրիկը ձայն է տալիս:

ԲՐԻԿ.— Մեծ Մայրիկը գնա՞ց:

ՄԱՐԳՐԵԹ.— Այո, գնացել է:

Բրիկը բացում է լողասենյակի դուռը, կաղալով դուրս է գալիս, արդեն դատարկ բաժակը ձեռքին ուղիղ գնում է խմիչքների քարը: Նա կամացուկ սուլում է: Մարգրեթը գլուխը շրջում է ամուսնուն տեսնելու համար: Նա ձեռքը տարակուսանքով հասցը-

**Նում է կոկորդին՝ կարծես ինչ-որ բան դժվարությամբ է կույ գը-
Նում խոսելուց առաջ:**

Հասկանում ես, մեր սեռական կյանքը բնականորեն չի ընդ-
հատվել: Այն շատ կարճ տևեց: Ու նորից սկսվելու է նույն
հանկարծակիությամբ, ինչպես որ ընդհատվել է: Ես դրանում
համոզված եմ, Բրի՛կ. այդ պատճառով, միայն այդ պատճա-
ռով եմ ուզում հրապուրիչ երևալ: Ու երբ այդ բանն սկսվի,
դու էլ մյուս տղամարդկանց պես կրթոտ հայացքով կնայես
ինձ: Այո, մյուս տղամարդկանց պես, որովհետև նրանք դեռ
կրթոտ աչքերով են նայում ինձ: Նրանց դուր է գալիս իմ
մարմինը: Իսկ մի քանիսը շատ կուզեին... Տե՛ս, Բրի՛կ...

**(Կանգնում է երկարավուն, ձվաձև հայելու առաջ, երկու ձեռ-
քերով շոշափում է ստինքները, կոնքերը):**

Տե՛ս ինչքան ձիգ մարմին ունեմ: Տե՛ս, ոչ մի կախ ընկած տեղ
չկա... ո՛չ մի տեղ...

Նրա ձայնը մեղմ է՝ կրքից դողացող, աղերսող երեխայի ձայ-
նի պես: Այն պահին, երբ Բրիկը շրջվում է կնոջը նայելու, վեր-
ջինս համակ ուշադրություն պետք է դառնա: Ոչ մի հանդիսական
չպետք է անտարբեր մնա նրա մարմնի նկատմամբ՝ մինչև ընդ-
միջում:

Բրի՛կ, մյուս տղամարդիկ դեռ ցանկանում են ինձ: Ծիշտ է,
մեկ-մեկ ջղայնություններից դեմքս խստանում է ու անհրապույր
դառնում, բայց մարմինս լավ է պահպանված... Քո մարմնի
պես իմն էլ լավ է մնացել: Տղամարդիկ վառված աչքերով են
նայում: Փողոցում շատերն են նայում ետևիցս: Անցյալ շաբաթ
Մեմֆիսում... ուր գնալի, տղամարդիկ աչքերը չէին կտրում
զգեստիս բացվածքներից: Ակումբներում, ռեստորաններում,
խանութներում մարդ չկար, որ աչքերով ինձ չուտեր: Իսկ Ալի-
սի ծննդյան օրը նրա նյույորքցի բարեկամներից մեկը, որ երե-
կույթի ամենագեղեցիկ տղամարդն էր, ետևիցս ընկավ, հա-
սավ մինչև կանանց զուգարանի դուռը, փորձեց ուժով ներս
մտնել..

ԸՐԻԿ.— Իսկ ինչո՞ւ չթողեցիր, Մեգգի՛:

ՄԱՐԳՐԵԹ.— Որովհետև ես հասարակ պոռնիկ չեմ: Իսկ ուզո՞ւմ
եմ իմանալ այդ տղան ով էր: Նա հոշակավոր Մաքսվելն էր.
նաև աչքեցի՞ր...

ԲՐԻԿ.— Իհարկե ճանաչեցի: Նա լավ հարձակվող էր: Բայց մեջքը մի փոքր վնասեց ու շուտ շարքից դուրս եկավ:

ՄԱՐԳՐԵԹ.— Իսկ հիմա մեջքը շատ լավ է, հետո՛ կին չունի և աչք ունի ինձ վրա:

ԲՐԻԿ.— Մեզոգի՛, ուրեմն էլ ինչո՞ւ նրան գուգարան չթողեցիր:

ՄԱՐԳՐԵԹ.— Որ ինչ-որ մեկը նրա հետ բռնացներ ինձ, այո՞: Ես հիմար չեմ: Բրի՛կ, գուցե երբևէ քեզ դավաճանեմ, եթե այդքան շատ ես ուզում: Բայց լավ իմացիր, եթե այդ քայլին դիմեմ, այնպես կանեմ, որ բացի ինձանից ու այդ տղամարդուց ոչ ոք չի իմանա: Որովհետև չեմ ուզում, որ ինձանից բաժանվես ու հետո արդարանաս՝ «Կինս ինձ դավաճանում էր, այդ պատճառով...»:

ԲՐԻԿ.— Մեզոգի՛, ես դրա համար քեզանից չեի բաժանվի: Ի՞նչ է, դու չե՞ս հասկանում: Գրո՛ղր տանի... ընդհակառակը, ես ինձ շատ սիրոված կզգայի, եթե օրերից մի օր իմանայի, որ սիրեկան ես ճարել:

ՄԱՐԳՐԵԹ.— Տեսնո՞ւմ ես, այդ հնարավորությունից չեմ օգտվում: Ձե: Ավելի լավ է մնալ այս շիկացած թիթեղյա տանիքին:

ԲՐԻԿ.— Բայց շիկացած տանիքին մնալը... անհարմար է:

(Սկսում է կամացուկ սուլել):

ՄԱՐԳՐԵԹ (նրա սուլելու պահին).— Այո՛, բայց ես կարող եմ նստել այնտեղ ու դիմանալ, ինչքան որ պետք է:

ԲՐԻԿ.— Մեզոգի՛, դու պետք է լքես ինձ:

(Շարունակում է սուլել: Մարգրեթը դեմքը դարձնում է ու անթարթ նայում):

ՄԱՐԳՐԵԹ.— Ձե՛մ ուզում... հետո, եթե հեռանամ, գրպանումդ ոչ մի սենյո չունես ինձ վճարելու, բացի այն փողերից, որ Մեծ Հայրիկի ժառանգությունից պիտի ստանաս... Իսկ նա մեռնում է քաղցկեղից...

(Կարծես Մեծ Հայրիկի դառը ճակատագիրը առաջին անգամ է սողոսկում Բրիկի ուղեղը, և նա նայում է Մարգրեթին):

ԲՐԻԿ.— Բայց Մեծ Մայրիկը հենց նոր չասա՞ց, որ նրա հիվանդությունը քաղցկեղ չի, որ կլինիկայից շատ ուրախալի լուրեր են ստացել:

ՄԱՐԳՐԵԹ.— Դե, Մեծ Մայրիկին էլ հորդ պես նույնն են հավատացրել: Ու երկուսով էլ հալած յուղի պես ընդունել են: Խե՛ղճ

ծերունիներ... Բայց այսօր Մեծ Մայրիկին ասելու են ճշմարտությունը: Հենց որ հայրդ անկողին մտնի, մորդ ասելու են, որ նրա ամուսինը մեռնելու է քաղցկեղից:

(Մարգրեթը աղմուկով հրում է զգեստապահարանի դարակը): Դա չարորակ, շատ արագ տարածվող քաղցկեղ է:

ԲՐԻԿ.— Իսկ Մեծ Հայրիկը գիտի՞...

ՄԱՐԳՐԵԹ.— Գրողը տանի, այդ որ հիվանդն է իմանում: Չէ՞ որ ոչ ոք հիվանդին չի ասում. «Դու մեռնելու ես»: Ստիպված նրանց պետք է խաբեն:

ԲՐԻԿ.— Ինչո՞ւ:

ՄԱՐԳՐԵԹ.— Ինչու: Որովհետև բոլոր մարդիկ ձգտում են հավերժ ապրել, ահա՛ թե ինչու... Բայց նրանց մեծ մասն ուզում է հավերժ ապրել ոչ թե երկնքում, այլ երկրի վրա: **(Բրիկը քրքջում է կնոջ հումորի վրա: Մարգրեթը վրձնով ներկում է կոպերը):** Այո... միայն այդ պատճառով: Այո՞... **(Նայում է շուրջը):** Սիգարետս ո՞ր դրի... Հանկարծ հրդեհ չընկնի՞: Գոնե Մեյին, Գուփրն ու նրանց հինգ ճիվաղներն այստեղ չլինեն... **(Գտնում է սիգարետը, հաճույքով ներս է քաշում ծուխը, հետո արտաշնչում է ու շարունակում):** Մի խոսքով, սա հայրիկի ծննդյան վերջին տարեդարձն է: Իսկ ինչ վերաբերում է Մեյիին ու Գուփրին, նրանք գիտեն այդ մասին: Լա՛վ գիտեն, որովհետև առաջինը մարդ ու կին այդ լուրն ստացան «Օչըսներ» կլինիկայից: Իմացան այդ լուրն ու իրենց անվիզ լակոտների հետ գլխապատառ վազեցին այստեղ: Հասկանո՞ւմ ես, Մեծ Հայրիկը ոչ մի կտակ չի արել: Մեծ Հայրիկը իր կյանքում ոչ մի կտակ չի արել: Դրա համար են Մեյին ու Գուփրը Մեծ Հայրիկին անընդհատ հիշեցնում, որ դու հարկեցող ես, իսկ ես՝ չբեր...

Բրիկը մի պահ շվարած նայում է նրան, հետո քթի տակ ինչոր խիստ, բայց անհասկանալի բան է քրթմնջում ու արագ, կաղալով դուրս է գալիս պատշգամբ, որը ողողվել է մաշք մտնող արևի սկև շողերով:

ՄԱՐԳՐԵԹ (շարունակելով իր սովորական, երգեցիկ ձայնով).—

Հասկանո՞ւմ ես, ես պաշտում եմ Մեծ Հայրիկին: Ծիշտ եմ ուսում՝ ուղղակի պաշտում եմ այդ ծերուկին: Հասկանո՞ւմ ես...

ԲՐԻԿ (անտարբեր, հանգիստ).— Այո, հասկանում եմ, որ դու...

ՄԱՐԳՐԵԹ Ես մի տեսակ համակրանքով եմ վերաբերվել նր-

րան: Չնայած նա կոպիտ ու անքաղաքավարի արտահայտու-
թյուններ է անում: Դե, երևի դրա պատճառն այն է, որ մար-
դը չի ձևանում, այն է՝ ինչ որ կա: Նա, այնուամենայնիվ, չկա-
րողացավ ջեմթլմեն ագարակատեր դառնալ. արևից վառված
նույն կարմրավիզ միասիսիացի ֆերմերն է մնացել, ինչպես
այն ժամանակ, երբ վերակացու էր Ջեյ Սթրոուի և Փիթր Օ-
չելլոյի ագարակատանը: Բայց ծերուկը մեծ ջանքերից հետո
դարձավ ամենահարուստ պլանտացիայի տերը Դելտայում:
Ինձ միշտ էլ շատ է դուր եկել Մեծ Հայրիկը: **(Առաջանում է
բեմեզր):**

Այո, այնուամենայնիվ, սա Մեծ Հայրիկի ծննդյան վերջին
տարեդարձն է: Կներես, բայց ես ճիշտ եմ ասում, Բրի՛կ: Հար-
բեցողի հոգսը տանելու համար շատ փող է հարկավոր: Վեր-
ջերս այդ կարևոր պարտականությունը ինձ են հանձնարարել:
Ես քո խնամակալն եմ դարձել, Բրի՛կ...

ԲՐԻԿ.— Դու պարտավոր չես ինձ համար մտահոգվելու...

ՄԱՐԳՐԵԹ.— Ոչ, ես պետք է խնամեմ քեզ: Երբ երկու հոգի նույն
վիճակում են, պարտավոր են հոգ տանել միմյանց մասին: Չէ՞
որ քեզ գոնե այնքան փող է պետք, որ խմիչքներիդ պահա-
րանը լիքը պահես: Թե՞ դու արդեն հագեցնում ես տաս սեն-
թանոց գարեջրով: Մեյին ու Գուփրը պատրաստվում են մեզ
գրկել Մեծ Հայրիկի ժառանգությունից, փորձելով բոլորին
համոզել, որ դու հարբեցող ես, իսկ ես՝ չբեր:

Բայց մենք կարող ենք ձախողել նրանց մտադրությունը:
Մենք պետք է ձախողենք նրանց մտադրությունը... Բրիկ, դու
գիտե՛ս, որ ամբողջ կյանքում ես չափազանց աղքատ եմ ե-
ղել... Ես ճիշտ եմ ասում, սիրելի՛ս...

ԲՐԻԿ.— Իսկ ո՞վ ասաց, որ ճիշտ չես ասում:

ՄԱՐԳՐԵԹ.— Ահավոր բան էր. միշտ ստիպված եմ եղել քծնել
փող ունեցող մարդկանց, որովհետև ամբողջ կյանքում Հոբի²³
պես աղքատ ու դժբախտ եմ եղել: Դա անտանելի էր... Ինչ-
պես քեզ բացատրեմ... Ասենք, դու հազար մղոն հեռու ես
խմիչքների պահարանից ու ստիպված պետք է այնտեղ հաս-
նես քո այդ կոտրված ծնկով... առանց հեճակների... Այո,
հենց դրա համար էլ մարդ իրեն Հոբի պես դժբախտ է զգում:
Ես միշտ քծնել եմ, ստիպված քծնել եմ իմ հարուստ ազգա-
կաններին, որոնց ասում էի: Դե՛, ի՞նչ անեի, չէ՞ որ նրանք

փող ունեին, իսկ իմ ունեցած-չունեցածը ընդամենը մի կապ քրջոտ շորեր էին ու մի քանի հին, երեք տոկոսանոց բորբոսնած պետական փոխառություններ: Հայրս... Աս էլ քո պես խմիչքի գերի դարձալ: Իսկ մայրս ստիպված պետք է ձևացներ, իբր ոչինչ չի պատահել և մենք առաջվա պես մեր դիրքն ունենք հասարակության մեջ, այն դեպքում երբ մեր ամսական եկամուտը կազմում էր հարյուր հիսուն դոլլար, որը այդ հին, բորբոսնած պետական փոխառությունների տոկոսն էր: Այն տարին, երբ առաջին անգամ հասարակության մեջ երևացի, ընդամենը երկու երեկոյան զգեստ ունեի... Դրանցից մեկը մայրս կարել էր նորաձևության ամսագրից ընդօրինակելով, իսկ մյուսը իմ հարուստ ազգականուհիներից մեկի հագած զգեստն էր: Այդ աղջկան բոլորից շատ էի ստում...

Բրի'կ, մեր հարսանիքին տատիկիս հարսանեկան զգեստն էի հագել.. Հիմա հասկանո՞ւմ ես, թե ինչու եմ ինձ շիկացած տանիքին նստած կատվի պես զգում...

(Բրիկը դեռ պատշգամբում է: Ինչ-որ մեկը ներքևից ձայն է տալիս, թավ, սևամորթի առողանությամբ. «Է՛յ, միստո՛ր Բրի'կ, ոտքդ ո՞նց է...»): Ի պատասխան, Բրիկը բարձրացնում է բաժակը):

Եթե մադոլ չամիկ է, կարող է հարմարվել և առանց փողի: Ըստք երբ պատավ ես... ու փող չամիկ... ահավոր է: Մարդ պետք է կամ փող ունենա կամ ջանկություն:

Ես ճիշտ եմ ստում, Բրի'կ... **(Բրիկը սուլում է մեղմորեն ու անտարբեր):** Դե, ես հագնվեցի: Էլ ուրիշ բան չունեմ անելու: **(Իրեն բոլորովին լքված ու ահաբեկված զգալով):**

Ես հագնվեցի, հագնվեցի վերջացրի... ուրիշ ոչինչ չկա անելու... **(Դեսուդեն է քայլում սենյակում՝ անհանգիստ, աննպատակ և խոսում է, կարծես, ինքն իր հետ):** Ես գիտեմ, թե երբ սխալ գործեցի: Հո բան չե՞մ մոռացել... Հա, ապարանջաններս...

(Խոսելիս սկսում է ապարանջաններն հագցնել դաստակների՝ յորաքանչյուրին մոտավորապես վեց հատ):

Այդ մասին շատ եմ մտածել ու հիմա հասկանում եմ, թե ինչ սխալ եմ գործել: Դա եղավ այն ժամանակ, երբ քեզ պատմեցի ճշմարտությունը Սքիփրի մասին: Ես չպետք է խոստովանեի: Դա իմ կողմից ճակատագրական սխալ էր, երբ պատմեցի նրա հետ կապված այդ դեպքի մասին:

ԲՐԻԿ.— Սքիփրի մասին չխոսե՛ս, Մեգգի՛: Դու իրավունք չունես նրա մասին խոսելու: Ես զգվում եմ քեզանից, երբ...

ՄԱՐԳՐԵԹ.— Բայց հասկացիր, Սքիփրն ու ես...

ԲՐԻԿ.— Լսիր, Մեգգի՛, գուցե իմ ասածները լուրջ չե՛ս քննունում: Գուցե խաբվում ես այն բանից, որ քեզ հետ հանգի՛ստ եմ խոսում: Բայց հասկացիր, քո արածը շատ վտանգավոր բան է: Դու չափն անցնում ես... որը շատ է վտանգավոր ու չի կարելի ո՛չ մեկին:

ՄԱՐԳՐԵԹ.— Այս անգամ պետք է մինչև վերջ ասեմ, վերջացնեմ: Ես ու Սքիփրը պատկել ենք իրար հետ, եթե, իհարկե, դա կարելի է պատկել համարել, որովհետև մենք դրանով ուղղակի զգացինք, որ ավելի ենք մոտեցել քեզ: Երկուսո՛վ... Հասկանո՞ւմ ես, շանորդի՛, քեզանով այնքան շատ մարդիկ էին հետաքրքրվում, դու այնքան շատ էիր պահանջում Սքիփրից ու ինձանից, այն բոլոր դժբախտ շանորդիներից, ում վիճակվել էր սիրել քեզ, իսկ այդ խեղճերը հսկայական բազմություն էին: Այո, բացի ինձանից ու Սքիփրից, քեզանով հետաքրքրվում ու քեզ պաշտում էր մարդկանց մի ամբողջ բազմություն... քեզ... սքանչելի՛ արարած... աստվածայի՛ն էակ... Եվ այդ պատճառով ես ու Սքիփրը սիրում էինք իրար՝ երազելով, որ քեզ ենք սիրում՝ երկուսով, քե՛զ... Այո՛, այո՛, այո՛... Ծիշտ է, ճիշտ... Իսկ զգվելի ի՞նչ կա դրա մեջ: Ինձ դուր է գալիս դա, և իմ կարծիքով ճշմարտությունն այն է... Ա՛խ, ես չպետք է քեզ այդ բանն ասեի...

ԲՐԻԿ (գլուխը փոքր-ինչ խոնարհած փորձում է իրեն հանգիստ պահել).— Բայց այդ մասին առաջինը ոչ թե դու, այլ Սքիփրն է ինձ պատմել:

ՄԱՐԳՐԵԹ.— Ո՛չ, ես եմ պատմել:

ԲՐԻԿ.— Դե՛, իհարկե, Սքիփրի ասելուց հետո:

ՄԱՐԳՐԵԹ.— Բայց ի՞նչ նշանակություն ունի, թե ով է ասել:

(Բրիկը հանկարծ շրջվում ու պատշգամբի ճաղերին կռթնելով ձայն է տալիս):

ԲՐԻԿ.— Է՛յ, աղջի՛կս... փոքրի՛կս...

ՓՈՔՐԻԿ ԱՂՋԻԿ (հեռվից).— Լսում եմ, հորեղբա՛յր Բրիկ:

ԲՐԻԿ.— Դրանց ասա թող վերև բարձրանան: Բոլորին ասա թող վերև բարձրանան:

ՄԱՐԳՐԵԹ.— Բայց ես չեմ կարող համբերել: Թող բարձրանան,

այդ բանը պետք է բոլորի ներկայությամբ ասեմ... որովհետև
ես...

ԲՐԻԿ.— Աղջի՛կ, գնա կանչիր, լա՛վ... Գնա նրանց կանչի՛ր:

ՄԱՐԳՐԵԹ.— Ես այդ բանը վաղուց պետք է ասեի, բայց դու...
դու... ոչ մի անգամ չէիր թողնում:

(Հեկեկում է, հետո սթափվում է, շարունակում հանդարտ):

Ձեր ընկերությունը գեղեցիկ, իդեալական է եղել, որի մասին
խոսվում է միայն հունական լեգենդներում... Այլ կերպ չէր էլ
կարող լինել. որովհետև դու հարազատ մնացիր քո էությանը,
այդ պատճառով ամեն ինչ այդպես տխուր ու ահավոր դար-
ձավ... Ախր դա այնպիսի սեր էր, որ երբեք չէր կարող իրա-
կանություն դառնալ ոչ մի տեսակ հաճույքով... Աույնիսկ այդ
մասին անկեղծ խոստովանությունը անթույլատրելի՛ է... Բը-
րի՛կ, ասո՛ւմ եմ, դու պետք է ինձ հավատաս: Ես համոզված
եմ, որ դա ազնիվ բան է եղել: Ես հասկանում եմ այդ բոլո-
րը... Ձե՛ս տեսնում, թե որքան հարգանքով եմ խոսում քո և
Սքիփրի ընկերության մասին: Իմ միակ նպատակն այն է,
որ ապացուցեմ... պետք է թույլ տալ կյանքը շարունակվի...
պետք է ապրել նույնիսկ այն ժամանակ, երբ երազանքը բո-
լորովին վերջացած է...

**(Բրիկն հիմա առանց հեճակի է: Հենվելով կահկարասիին,
կաղալով մոտենում է, որպեսզի հեճակը վերցնի, մինչդեռ Մարգ-
րեթը, կարծես, իրենից դուրս գտնվող ինչ-որ անհիմանալի ուժի
ազդեցությամբ, շարունակում է խոսել):**

Հիշում եմ, քոլեջում զույգեր էինք կազմել: Գլեյդիզ Ֆից-
ջերալդն ու ես և՛ Սքիփրն ու դու: Ծիշտն ասած, Սքիփրն ու
դու էիք մտերիմ զույգը: Ես ու Գլեյդիզը պարզապես քարշ
էինք գալիս ձեր կողքից, որպեսզի հասարակությունը վատ
կարծիք չունենար... ձեր ընկերության մասին:

ԲՐԻԿ (շրջվում է կնոջ կողմը՝ բարձրացնելով հեճակը).— Մեզ-
դի՛, ուզում ես սրանով մի հատ հասցնե՛մ: Ձե՛ս հավատում,
ես կարող եմ նաև քեզ սպանել... ա՛յ այս հեճակով: Ձե՛ս հա-
վատում:

ՄԱՐԳՐԵԹ.— Տեր Աստվա՛ծ... Բրիկ... սպանիր, եթե ուզում ես...
դա կարո՞ղ է որևէ նշանակություն ունենալ ինձ համար:

ԲՐԻԿ.— Մարդը իր կյանքում միայն մեկ մեծ ու բարի ընկերու-
թյուն է ունենում: Մաքուր ու ճշմարիտ ընկերություն: Իմ ու

Աքիփրի ընկերությունն այդպիսին էր: Իսկ դուք... այն կեղտոտ բան եք համարում...

ՄԱՐԳՐԵԹ.— Ես դա կեղտոտ բան չեմ համարում... Ախր ձեր ընկերությունն ամենաճշմարիտն էր ու մաքուրը:

ԲՐԻԿ.— Մեզոգի՛, ոչ թե քո նկատմամբ ունեցած սերս, այլ Աքիփրի հետ իմ ընկերությունն էր միակ ճշմարիտն ու մաքուրը: Իսկ դու այն կեղտոտ բան ես համարում:

ՄԱՐԳՐԵԹ.— Ուրեմն դու ինձ չէիր լսում կամ չէիր հասկանում, թե ինչ եմ ասում: Ես ձեր երկուսի ընկերությունն այնքան մաքուր էի համարում... Այդ պատճառով խեղճ Աքիփրը մեռավ: Ձեր միջև մի հազվագյուտ մաքրություն կար, որ պետք է սառցի մեջ պահվեր, որպեսզի չփչանար: Իսկ միակ սառնարանը մահն էր, որտեղ կարելի էր այն պահել:

ԲՐԻԿ.— Բայց չէ՞ որ ես ամուսնացա քեզ հետ, Մեզոգի՛: Ինչպե՞ս եղավ, որ ամուսնացա, եթե ես...

ՄԱՐԳՐԵԹ.— Բրի՛կ, թույլ տուր վերջացնեմ՝ նոր գլուխս ջարդիր: Ախր ես գիտեմ, որ միայն Աքիփրն էր ուզում... անկախ իրենից էր ուզում, որ ձեր միջև ինչ-որ բան առաջանա... ինչ-որ բացարձակ մաքուր բան...

Դե թույլ տուր պարզ խոսել: Դու ինձ հետ ամուսնացար հենց այն ամուսն սկզբներին, երբ ավարտեցինք մեր հին, Միսսիսիպիի քոլեջը: Մենք երջանիկ էինք, մենք մենք չէինք, յոթերորդ երկնքում էինք: Բայց աշնան վերջերին դու և Աքիփրը մերժեցիք ձեզ առաջարկված մի հրաշալի աշխատանք, որոշելով դառնալ ֆուտբոլի աստիղեր: Դուք հենց այդ տարվա աշնանը կազմակերպեցիք «Դիքսի սթարզ»²⁴ ֆուտբոլային թիմը, որպեսզի նորից միասին լինեիք: Բայց ինչ-որ բան տեղի ունեցավ ձեր երկուսի միջև... Ինձ հետ նույնպես ինչ-որ բան կարգին չէր: Աքիփրն սկսեց կուլ գնալ խմիչքին... դու մեջքից վնասվածք ստացար... չկարողացար մասնակցել «Գոհության օրվան»²⁵ նվիրված խաղին Չիկագոյում: Այդ խաղը նայեցիր հիվանդանոցում՝ հեռուստացույցով: Ես Աքիփրի հետ գնացի Չիկագո: «Դիքսի սթարզը» պարտվեց, որովհետև խեղճ Աքիփրը հարբած էր: Հետո մենք միասին խմեցինք այդ երեկո «Բլաքսթոուն» հյուրանոցի բարում: Հետո, երբ հարբած էինք արդեն, իսկ Միչիգան լճին²⁶ սառը արշալույս իջավ, ընկերոջդ հետ գնացինք այդ տեսարանով հիանալու... մեր

շաղված աչքերով: Հենց այդ ժամանակ ասացի. «Սքի'փր, կամ իմ ամուսնուն մի' սիրիր այլևս, կամ նրան խնդրիր, որպեսզի քո սերն ընդունի»: Երկուսից մեկը... Իսկ նա բռունցքով ուժեղ խփեց բերանիս... Հետո շրջվեց ու վազեց... Երևի ամբողջ ճանապարհը այդպես վազելով գնաց՝ ոչ մի վայրկյան չկանգնելով... մինչև հյուրանոց...

Երբ այդ գիշեր, վախեցած մկան պես կանգնեցի դռան շեմին, նա պառկեց ինձ հետ, ապացուցելու համար, որ նրա մասին իմ ասածները ճիշտ չէին... Դա պառկել չէր, դա խեղճուկրակ փորձ էր, ապացուցելու համար, որ ինքը...

(Բրիկը հեռակով խփում է նրան: Վրիպում է, և ջարդուփշուր է լինում թանկարժեք քարի պես փայլփլուն սեղանի լապտերը):

Ես կործանեցի նրան, ասելով ճշմարտությունը, այն ճշմարտությունը, որով ինքն էր ներշնչվել, այն աշխարհի ճշմարտությունը, որտեղ նա ծնվել ու մեծացել էր: Քո և նրա՝ աշխարհի մասին եղած ճշմարտությունը ես ասացի, Բրի'կ, որ կրթեք չէր կարելի ասել...

Այդ օրվանից Սքիփրի աչքին, բացի խմիչքից ու հաշիշից, ոչինչ չէր կրկում...

Մի խփեց կարմրաբույս սարուտիճ... Ե՛ս իմ... **(Գլուխը ետ է գցում՝ աչքերը ամուր փակած)**... ողորմած նետով...

(Բրիկը նսրից է հեռակով խփում: Մարգրեթը խուսափում է առ ևն ուղվածից): Չկարար... Անխա՛ս... Ես չեմ ուզում անմեղ ձևա՛տ, Բրիստոփր վկա, չէ... Բրի'կ, ես անմեղ չեմ: Չեմ հասկանում, ինչու է եմ մարդիկ փորձում անմեղ ձևանալ, չէ՞ որ ուս մեկը հրեշտակ չէ: Հարուստ կամ հաջողակ մարդը կարող է բարոականության տիպար ձևանալ, բայց ես չեմ կարող, չե՛մ կարող այն գնել, որովհետև ազնիվ եմ: Այո՛, ես ազնիվ եմ, Բրի'կ: Միայն թե ինձ հնարավորություն տուր, լա՛վ, խնդրում եմ... Չէ՞ որ ծնվել եմ աղքատ, մեծացել եմ աղքատ, միասն թե պարզ չե, աղքատ էլ մեռնելու եմ, թե ոչ, որովհետև հաստատ որոշել եմ մի բան կորզել Մեծ Հայրիկի ժառանգություններից: Ախր նա մեռնում է քաղցկեղից: Հետո, Բրի'կ... Սքիփրը մեռած է... Իսկ ես ողջ եմ... Մեզոգի կատուն...

(Բրիկը կաղալով առաջ է գնում ու հեռակով հարվածում նրան):

Կենդանի է... Ես ողջ եմ... Ես...

(Բրիկը, մի ոտքին կաղալով, հեճակը շարտում է նրա կողմը: Մարգրեթը թաքնվում է մահճակալի ետևում, հետո հպվում է հատակին, երբ ավարտում է խոսքը): ... Ո՞րչ էս...

Դիքսի անունով փոքրիկ աղջիկը սենյակ է խուժում՝ հնդկացու ռազմի գլխարկով և կրակացայտեր նետող ատրճանակը պահելով Մարգրեթի վրա, գոչում է. «Բա՛նգ, բա՛նգ, բա՛նգ...»:

Ներքևից քրքոց է լսվում, միջանցքի բաց դռնից՝ մարդկային խռիվ բազմության աղմուկ: Մարգրեթը վախենում է ու կռանում, երբ երեխան հանկարծակի ներս է մտնում: Հիմա բարձրանում ու ասում է սառը կատաղությամբ:

Աղջի՛կ... քո մայրը կամ... չգիտեմ ով... ժամանակին պետք է քեզ սովորեցրած լինե՛ր... (Շունչ է առնում) ... որ ներս մըտնելուց առաջ դուռը թակել է պետք: Թե չէ շատերը կկարծեն, որ դու... դաստիարակության կարիք ունես:

ԴԻՔՍԻ.— Քը՛խկ, քը՛խկ, քը՛խկ... իսկ ի՞նչ է անում հորեղբայր Բրիկը հատակին:

ԲՐԻԿ.— Ես ուզում էի հորեղբորդ կնոջը՝ Մեգգիին սպանել, բայց չհաջողվեց... դրա համար ընկա: Աղջի՛կս, հեճակը չէի՞ր տա...

ՄԱՐԳՐԵԹ.— Ծիշտ է ասում: Հեճակը տուր, որովհետև հորեղբայրդ հաշմանդամ է, սիրելի՛ս: Երեկ երեկոյան հորեղբայրդ ծունկը կտորել է դպրոցի մարզադաշտի վազքուղյակում արգելքը հաղթահարելիս:

ԴԻՔՍԻ.— Իսկ ինչո՞ւ էիք ցատկում, հորեղբա՛յր Բրիկ:

ԲՐԻԿ.— Դե՛, սովորություն է: Առաջ շատ էի արգելքներ հաղթահարում: Իսկ մարդիկ դժվարությամբ են որևէ սովորություն թողնում՝ թեկուզ ի վիճակի չլինեն...

ՄԱՐԳՐԵԹ.— Հասկացա՞ր, աղջի՛կ: Իսկ հիմա հեռացի՛ր այստեղից... (Դիքսին երեք անգամ խաղալիք ատրճանակով կրակում է Մարգրեթի վրա): Ասացի՛ վե՛րջ տուր, ճիվա՛ղ լակոտ: Քեզ հետ չե՛ն, անվի՛զ լակոտ... (Խլում է ատրճանակը ու շարտում պատշգամբի բաց դռնից):

ԴԻՔՍԻ (ծանր վիրավորանք հասցնելու ականա մղումով).— Դուք նախանձ եք... Դուք ուղղակի նախանձ եք, որովհետև չեք կարողանում երեխա բերել...

(Նա լեզու է հանում Մարգրեթին ու դժկամությամբ դուրս գալիս պատշգամբի դռնից: Մարգրեթը աղմուկով փակում է դռներն

ու հնալով թիկն տալիս: Բրիկն ավելացնում է կիսատ բաժակն ու նստում լայն մահճակալին):

ՄԱՐԳՐԵԹ.— Տեսա՞ր... Մեյին ու Գուփրը մեր երեխա չունենալու համար ուրախանում են ու բամբասում նույնիսկ իրենց հինգ անվիզ ճիվաղների մոտ...

(Դադար: Ներքևում՝ աստիճաններից ոտնաձայներ և մարդկանց խոսակցություն): Բրի՛կ... Մեմֆիսում ես եղա կանացի բժշկի մոտ... Նա ինձ լավ քննեց: Չբերության ոչ մի պատճառ չկա: Մենք, երբ ուզենք, կարող ենք երեխա ունենալ: Հիմա, ամսով, իմ հղիանալու ժամանակն է: Դու լսո՞ւմ ես ինձ: Հա՛: Դուք լսո՞ւմ եք ինձ: Դուք լսո՞ւմ եք ի՛նձ...

ԲՐԻԿ.— Այո, Մեգգի՛ լսում եմ: (Ուշադիր նայում է կնոջ շատագունած դեմքին): Բայց ի՞նչ աստանա է քեզ ստիպում պատկերացնել... որ պետք է երեխա ունենաս մեկից... մի մարդուց, որը տանել չի կարողանում քեզ...

ՄԱՐԳՐԵԹ.— Ես էլ հենց դրա մասին եմ ամեն օր մտածում: (Նա շրջվում է նայելու միջանցքի դռանը): Ահա, գալիս են... (Լույսերն աղոտանում են):

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ

Փամանակը նույնն է: Մարգրեթն ու Բրիկը նույն դիրքով են, ինչպես առաջին գործողության վերջում:

ՄԱՐԳՐԵԹ (դռան մոտ).— Նրանք գալիս են...

(Նախ երևում է Մեծ Հայրիկը: Սա բարձրահասակ է՝ բարկացկոտ, տազնապալի հայացքով: Ծարժմունքը զգույշ է: Աշխատում է նույնիսկ ինքն իրեն չմատնել սեփական հիվանդությունն ու թուլությունը):

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Հա՛, Բրի՛կ...

ԲՐԻԿ.— Ողջո՞ւյն, Մե՛ծ Հայրիկ: Ծնորհավորում եմ ծննդյանդ օրվա առթիվ...

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Դե լա՛վ, հիմարություն՛ւն է...

(Մի քանիսը միջանցքից են ներս մտնում, մյուսները՝ պատրճամբից: Երկու կողմից խոսակցության ձայներ: Գուփրն ու Պատվելի Թուկրը մտնում են պատճամբի դռնից, հետո նրանց

**ձայները ավելի պարզորոշ են լսվում: Կանգ են առնում, երբ Գուփ-
ը վառում է սիգարը):**

ՊԱՏՎԵԼԻ ԹՈՒԿՐ (փութեռանդորեն).— Այո, իսկ Գրեմադայի²⁷
սուրբ Պողոս եկեղեցուն երեք ապակեակար են նվիրել: Դրան-
ցից մեկը գունավոր հախճապակուց է, որն արժե երկու հա-
զար հինգ հարյուր դոլլար: Վրան Բարի Հովիվ Քրիստոսն է
նկարված՝ գառը գրկին:

ԳՈՒՓՐ.— Իսկ ո՞վ է նվիրել այդ նկարը, հա՛յր սուրբ:

ՊԱՏՎԵԼԻ ԹՈՒԿՐ.— Քլայդ Ֆլեթչերի այրին: Նա սուրբ Պողոս
եկեղեցուն նաև խաչելությամբ մի մկրտարան է նվիրել:

ԳՈՒՓՐ.— Հա՛յր սուրբ, գիտե՞ք, թե ձեր եկեղեցուն ինչ պետք է
նվիրեն՝ զովացման մի սարք:

ՊԱՏՎԵԼԻ ԹՈՒԿՐ.— Այո, սըր Բոբը նվիրելու է... Իսկ գիտե՞ք
ինչ նվիրատվություն է արել Գաս Հեմմի ընտանիքը «Թու
Ռիվըրզի»²⁸ եկեղեցուն: Քարե երկու բուրդովին նոր թեմական
շենք, որոնց առաջին հարկերում բասկետբոլի խաղադաշտ կա
ու մի...

**ՄԵԾ ՀԱՅՐԻԿ (բարձր, սուր քրքիջով, որ այնքան էլ զվարթ
չէ).—** Է՛յ, տերտե՛ր... Ի՞նչ ես անընդհատ հանգուցյալների
հիշատակին արված զոհաբերություններից խոսում... Դրանով
ի՞նչ ես ուզում հասկացնել, հը՞... Երևի կարծում ես այնքան
հիմար եմ, որ ես էլ մի նվեր կտամ, հա՞... Նման հիմարներին
ուրիշ տեղ փնտրիր:

**Եփոթվելով այս հանկարծակի միջամտությունից, Պատվելի
Թուկը որոշում է ծիծաղել՝ հնարավորին չափ բարձր: Թե նա
ինչպես է պատասխանում Մեծ Հայրիկի հարցին, հնարավոր չէ
լսել, որովհետև Պատվելի Թուկրի շփոթմունքը ցրում է Գուփրի
կինը՝ Մեչին, որը միջանցքի դռանը երևում է ընտանիքի բժշկի՝
«դոկ»²⁹ Բոի հետ:**

ՄԵՅԻ (գրեթե բարեպաշտորեն).— Մեր երեխաները սրսկվել են
տիֆի դեմ, սրսկվել են կարմրախտի դեմ, սրսկվել են դիֆ-
թերիայի, դեղնախտի դեմ... Նաև պատվաստում են կատա-
րում: Ամեն ամիս՝ մայիսից մինչև սեպտեմբեր սրսկվում են
ու... Գո՛ւփր, Գո՛ւփր... Մեր երեխաներին ինչի՞ դեմ էին պատ-
վաստում...

ՄԱՐԳՐԵԹ (չսպասելով Գուփրի պատասխանին).— Բրի՛կ, ձայ-

նարկիչը միացրու: Եկեք նախ երաժշտություն լսենք: Չէ՞ որ այսօր Մեծ Հայրիկի ծննդյան օրն է:

Խոսակցությունն այնքան բարձրաձայն է դառնում, որ սենյակը թռչնանոցի տպավորություն է թողնում: Միայն Բրիկն է այդ ամենին անհաղորդ. սառը ժպտով թիկն է տվել խմիչքների պահարանին և երբեմն թղթե սառեցրած անձեռոցիկով սրբում է նակատը: Նա չի կատարում Մարգրեթի պատվերը: Մարգրեթը փոսկոտ առաջ է գալիս, մոտենում է ձայնարկիչին, խոնարհվում է վահանակին՝ կանոնավորելու այն:

ՎԱԿՈՎՐ.— Այդ ձայնարկիչը մենք ենք նվիրել. նրանց ամուսնության կրողդ տարեդարձին: Երեք բարձրախոս ունի: (Սենյակը լցվում է Վագների որևէ օպերայի կամ Բեթհովենի սիմֆոնիայի հնչյուններով):

ՄԵԾ ՎԱՅՐԻԿ.— Դրա ձայնը կտրե՛ք...

(Վայրկենական լռության պահին ներս է մտնում Մեծ Վայրիկը բռնված ռեզեղջյուրի պես իրեն թափ տալով):

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Իսկ իմ տղան ո՞ր է: Ո՞ր է իմ տղան: Ո՞ր է իմ Բրիկը, իմ սիրելի փոքրիկ տղան...

ՄԵԾ ՎԱՅՐԻԿ.— Կեզերք . Ձայնարկիչը նորից միացրեք:

Թղթը բարձր քրքյում են: Մեծ Հայրիկը գիտե սուր ծաղրել կոչը. նեղան պանկերին ոչ որ Մեծ Վայրիկից ավելի բարձր չի քրքյում. երև Մեծ Հայրիկի կատակները շատ են կոպիտ, Մեծ Վայրիկն ինչ որ բանով և գրավվում՝ մոռացնելու համար այն վիճավորանքը, որ իր քրքջոցը չի ծածկում:

Վիպվածը պարճանալու առիթ է, որովհետև նա սրտանց ուրախ է Մեծ Հայրիկի հիվանդության մասին իրեն հասած կեղծ տեղեկության համար: Նա չափից ավելի երկար է քրքջում, հեզարեն նայելով Մեծ Հայրիկի կողմը, հետո շտապ մոտենում է Բրիկին:

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Ահա թե որտեղ է իմ սիրուն տղան... Իսկ ձեռքի եղ ինչ է: Դե, բաժակդ ինձ տուր: Քո ձեռքն ստեղծված է սովելի լավ բան վերցնելու համար:

ՎԱԿՈՎՐ.— Բրի՛կ, տեսնենք ինչպես ես բաժակդ մայրիկին տալիս .

(Բրիկը հնազանդվում է, մինչև վերջ խմում է ու բաժակը մեկնում մորը: Նորից են բոլորը բարձր քրքջում):

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Ա՛խ դու, իմ վիրավոր որդի... իմ փոքրի՛կ, չա՛-

րաճճի՛ տղա... Դե՛, համբուրիք Մեծ Մայրիկին, անպե՛տք տղա... Տեսք ինչպես է խրտնում: Բրիկը չի սիրում, երբ իրեն համբուրում են... Տեսք ոնց է շփոթվում: Երևի շատ են համբուրել, երես է ստել: Դե՛, դա անջատիր, որդի՛:

(Բրիկը քիչ առաջ միացրել էր հեռուստացույցը: Անջատում է): Հեռուստացույց տանել չեմ կարողանում: Ռադիոն էլ մի բան չէ, բայց հեռուստացույցը դրան անցավ: **(Աղմուկով ու հևալով իրեն գցում է աթոռին):** Ուզում եմ ասել՝ նույն անպետքությունն է: Հա՛-հա՛-հա՛: Դե, ի՞նչ եմ այստեղ նստում: Գնամ սիրածիս կողքին: Ես ուզում եմ նրան գրկել, սիրել...

Մեծ Մայրիկը սև ու սպիտակ շերտերով, արծաթափայլ նույն զգեստն է հագել: Իր գիրգ մարմնով և շերտավոր զգեստով բծավոր կենդանու է նմանվում: Նրա: երևալու պահից սենյակում իշխում են աղանմանե մեծ ականջողերի, գոհարեղենի փայլն ու արծաթե ակնոցի շողանքը, ճղճղան ձայնը և հնչուն ծիծաղը: **Մեծ Հայրիկը անընդհատ դեմքը ծամածոում է ու միշտ բարկացած է: Մեծ ՄԱՅՐԻԿ (նորից բարձրաձայն).**— Տերտեր, այ տերտեր... Զեռքդ տուր՝ աթոռից ելնեմ:

ՊԱՏՎԵԼԻ ԹՈՒԿՐ.— Բայց... Միայն թե, սուսնց կատակների, **Մե՛ծ Մայրիկ:**

Մեծ ՄԱՅՐԻԿ.— Ի՞նչ կատակ, ի՞նչ բան, ա՛յ տերտեր... Զեռքդ տուր, բարձրանամ:

(Պատվելի Թուկրը մեկնում է ձեռքը: Մեծ Մայրիկը ճանկում է այն, նրան քաշում, գցում է իր գոգը, բարձրաձայն քրքջալով): Է՛յ, ժողովո՛ւրդ, ո՞վ է տեսել տերտեր՝ չաղ կնոջ գոգին: Հե՛յ, հե՛յ, ժողովո՛ւրդ... Դուք տերտեր տեսե՛լ եք չաղ կնոջ գոգին...

Մեծ Մայրիկը Դելտայում հռչակված է աշղպիսի կոպիտ, գռեհիկ կատակներով: Մարգրեթը դրան նայում է ներողամտորեն՝ կում-կում խմելով գինին, մի տեսակ անհարմար զգալով և միաժամանակ հետևելով Բրիկին: Մեյին ու Գուփրը հուզված ու դրժգոհ նայում են միմյանց: Մեյի կարծիքով, Մեծ Մայրիկի այս գռեհիկ կատակներն են պատճառը, որ ինքն ու Գուփրը, հակառակ իրենց թափած ջանքերի, չեն կարողանում մտնել Մեմֆիսի ընտիր երիտասարդության մեջ: Սևամորթներից մեկը՝ Լեյսին կամ Սուկին, քրքջալով ծիկրակում են դռնից: Նրանք պատրաստ սպասում են, որ շամպայն ու ծննդյան օրվա տորթը բերելու նշան տան: Բայց

Մեծ Հայրիկն անտարբեր է այդ ընդհանուր ոգևորությանը: Նրան անհասկանալի է, թե ինչու հակառակ հոգեկան այն սփոփանքի, որ ստացել էր բժիշկների հայտնած լուրից, այնուամենայնիվ, ադիքները ցավում են. կարծես, պառաված աղվեսը ատամները խրրել է դրանց մեջ: «Իհարկե՛, մեծ աղիքի փայտացում է», ասում է նա մտքում, բայց բարձրաձայն գոռում է Մեծ Մայրիկի վրա:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Լսիր, Մե՛ծ Մայրիկ, վե՛րջ տուր այդ ճղճղոցիդ... Դու շատ ես պառավ ու չաղ նման երեխայական կատակների համար. հետո՛ արյան ճնշում ունեցող քեզ պես կիր... Գարնանը նրա արյան ճնշումը երկու հարյուր էր... Չե՛ս վախճնում, որ եթե այդպես շարունակես, մի գիծ էլ կավելանա:

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Ահա Մեծ Հայրիկի ծննդյան օրն սկսվեց: Եկեք նշենք այն...

Սպիտակ բանկոնով սևամորթ սպասավորները ներս են մտնում, բերելով տորթը, որի շուրջ մոմեր են վառվում, և մետաքսե ժապավեններով շամպայնի շշեր:

Մեկին ու Գուպրը մի երգ են սկսում: Բոլորը՝ նաև սևամորթներն ու երեխաները, միանում են նրանց: Միայն Բրիկն է մնում անտարբեր այս ընդհանուր ուրախությանը:

ԵՐՏԱՆԻԿ ԾՆՆՈՒՄԸ.— Երտանիկ ծննդյան օր:

Երտանիկ ծննդյան օր

Երտանիկ ծննդյան օր, Մեծ Հայրիկ:

(Թոռները երգում են «Ծնորհավորում ենք Մեծ Հայրիկին»: Ոմանք երգում են «Թանկագին Մեծ Հայրիկը»):

Երտանիկ ծննդյան օր:

(Ոմանք երգում են «Քանի՛ տարեկան եք»):

Մեկին կանգնում է սենյակի կենտրոնում, երեխաներին շարում երգչախմբի պես, չափ տալիս. «Մեկ, երկու, երեք», և երեխաները սկսում են նոր տնից):

ՄԻՆՆՈՒՄԸ.— Սկինամարիակա, դիակա-դիակա,

Սկինամարիակա, լա, լա, լա,

Մեներ սկրսն շատ ենք սիրում քեզ:

Սկինամարիակա, դիակա-դիակա,

Սկինամարիակա, լա, լա, լա:

(Բոլորը միասին շրջվում են Մեծ Հայրիկի կողմը):

Մե՛ծ Հայրիկ, մենք սիրում ենք քեզ...

(Նրանք նորից են ետ շրջվում երաժշտական կոմեդիայի երգ-
չախմբի պես):

Մենք քեզ սիրում ենք սուսվոտյան,

Մենք քեզ սիրում ենք երեկոյան:

Մենք քեզ սիրում ենք, երբ քեզ հետ ենք,

Մենք քեզ սիրում ենք, երբ քեզ հետ չենք:

Սկինամարինկա, դինկա-դինկա,

Սկինամարինկա, լա, լա, լա:

(Մեյին շրջվում է Մեծ Մայրիկի կողմը):

Մեծ Մայրիկին նույնպես...

(Մեծ Մայրիկը հեկեկում է: Սևամորթները դուրս են գնում):

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Դե՛, գրողը տանի... Քեզ ի՞նչ եղավ, Իդա՛:

ՄԵՅԻ.— Նա պարզապես իրեն շատ երջանիկ է զգում...

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Մե՛ծ Հայրիկ, ես շատ երջանիկ եմ, դրա հա-
մար պետք է լաց լինեմ կամ...

(Լռության մեջ հանկարծակի ու բարձրաձայն):

Բրի՛կ, դու իմացա՞ր, թե դոկտոր Բոն ի՞նչ հրաշալի լուր է
բերել կլինիկայից: Բանից դուրս է գալիս, որ Մեծ Հայրիկը
պարզապես հաստ աղիքի փայտացում ունի: Նա հարչուր տո-
կոսով առողջ է:

ՄԱՐԳՐԵԹ.— Ինչ լավ է...

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Բրի՛կ, հորդ լավ քննել են ու բացի հաստ աղի-
քի փայտացումից, ուրիշ ոչ մի հիվանդություն չեն գտել: Նա
տղամարդու պես է տարել բժշկական բոլոր քննությունները:
Դա հարչուր տոկոսանոց ճիշտ ախտորոշում է: Իսկ հիմա...
քանի որ մի քիչ հանգիստ եմ, ձեզ մի բան ասեմ: Ծիշտն ա-
սած, գլուխս կորցրել էի... Շատ էի վախենում: Ամեն օր ինքս
ինձ ասում էի՝ չլինի՞ հանկարծ Մեծ Հայրիկը... այդ հիվան-
դությունն ունի... ասում էի երևի...

(Մարգրեթը ընդհատում է նրան, տեղից վեր է թռչում ու գո-
չում):

ՄԱՐԳՐԵԹ.— Բրի՛կ... սիրելի՛ս, չէ՞ որ դու Մեծ Հայրիկին նվեր
պետք է տայիր...

(Ամուսնու մոտով անցնելիս, Մարգրեթը ճանկում է նրա վիս-
կիի բաժակը: Հետո բացում է գույնզգույն փաթեթը):

Իսկ սա Բրիկի կողմից, Մե՛ծ Հայրիկ:

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Սա Մեծ Հայրիկի ամենանշանավոր, հիշարժան

ծննդյան տոնն է: Հարյուրավոր նվերներ, երեսունվեց տողա-
նոց հեռագրեր...

ՄԵՅԻ (միաժամանակ).— Իսկ այդ ի՞նչ նվեր է, Բրի՛կ:

ԳՈՒՓՐ.— Ես 500-ը 50-ի դեմ գրազ կգամ, որ Բրիկը չգիտի, թե
դա ինչ նվեր է:

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Նվերի հաճույքն էլ դրա մեջ է, որ չիմանաս...
մի՞նչն բացելը չիմանաս, թե ինչ է: Մե՛ծ Հայրիկ, փաթեթը
բաց արա, տես ինչ նվեր է:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Ինքդ տես, թե ինչ նվեր է: Ես Բրիկին մի
բան եմ ուզում հարցնել... Մոտ արի, Բրի՛կ:

ՄԱՐԳՐԵԹ.— Մեծ Հայրիկը քեզ իր մոտ է կանչում, Բրի՛կ:

(Բացում է փաթեթը):

ՐԻԿ.— Մեծ Հայրիկին ասա, ոտքս ցավում է, չեմ կարող գնալ:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Տեսնում եմ, որ ցավում է: Դրա համար էլ ու-
զում եմ իմանալ, ինչ է պատահել: Ինչո՞ւ ես ոտքդ ջարդել:

**ՄԱՐԳՐԵԹ (խորամանկորեն փորձում է ընդհատել այդ խոսակ-
ցությունը).**— Մի տեսեք, տեսեք... Բրիկը քիշմիրից³⁰ խալաթ
է նվիրում Մեծ Հայրիկին...

(Նա բարձր սյահում է խալաթը, որպեսզի բոլորը տեսնեն):

ՄԵՆԻ — Հր՛մ Ծառ միացած չե՞ս խոսում, Մեզգի՛:

ՄԱՐԳՐԵԹ (թեթևկամ նրա կողմը դժգոհ ժպտով).— Զարմա-
տարա ոչինչ չիս. Մեր բնասեփում նոր հագուստ տեսնում
էի՞րդ այն մոմսեանկ, կրք... ուրիշի... մի որևէ բարեկամի
զգեստն էի՞նք հագնում: Դրա համար զարմացա, երբ տեսա...

ՄԵՅԻ — Այ թե նետաքրքիր է, հա՛...

ՄԵՐ ՀԱՅՐԻԿ (խոժոռված ու դժկամ).— Դե՛, վերջացրե՛ք...

ՄԵՅԻ (ուշադրություն չդարձնելով Մեծ Հայրիկին՝ կատաղորեն).—
Չեմ հասկանում, ինչպես կարող էր այդ խալաթը քեզ զար-
մացնել, երբ ինքդ ես գնել... Մեմֆիսում. անցյալ շաբաթ: Իսկ
զիտե՞ս ով է ինձ ասել:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Ասացի՛ վե՛րջ տվեք...

ՄԵՅԻ.— Խանութի վաճառողուհին սպասարկելիս ինձ ասաց. «Մի-
սի՛ս Փոլիթ, ձեր տագոր կինը հենց նոր այստեղ էր և քիշ-
միրից խալաթ գնեց ձեր սկեսրոջ համար»:

ՄԱՐԳՐԵԹ.— Ծիշտ որ, քույրի՛կ Մեյի, իզուր եք ձեր տաղանդը
վատնում տանտիրուհի կամ մայր լինելու վրա... Դու մեծ հա-

ջողութունների կհասնեիր հետաքննությունների ֆեդերալ բյուրոյում³¹ կամ...

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Վերջացրե՛ք...

(Քանի որ Պատվելի Թուկրը մյուսներից ավելի ուշ է ըմբռնում իրադրությունը, շարունակում է նույնիսկ Մեծ Հայրիկի սաստուճից հետո):

ՊԱՏՎԵԼԻ ԹՈՒԿՐ (դիմելով դոկտոր Բոին).— «Սթորկն» ու «Ռիփլորը»³², հավասար են գնում...

(Նա սկսում է բարձր ծիծաղել, հետո, նկատելով Մեծ Հայրիկի խոժոռ հաչացքն ու ընդհանուր լռությունը, լրջանում է):

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Տե՛ր հայր, հույս ունեմ, չխանգարեցի եկեղեցիներին նվիրված գունավոր ապակիների պատուհանների մասին զրույցը, չէ՞... (Պատվելի Թուկրը կեղծամիտ ծիծաղում է, հետո չոր հագում է ընդհանուր լռության մեջ): Գիտե՛ք ինչ կա, Տե՛ր հայր...

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Գե՛, դե՛... Մե՛ծ Հայրիկ, տերտերին բուն չաւես:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ (ձայնը բարձրացնելով).— Բայց լսե՛լ եք, այսպիսի մի արտահայտություն կա. անընդհատ հազում ես, բայց կոկորդում թուք չկա... Հիմա, քո այդ չոր հազն ինձ ստիպեց հիշել այդ արտահայտությունը: «Անընդհատ հազում ես, բայց կոկորդում թուք չկա...»:

(Լռությունը խախտում է Մարգրեթի ուրախ քրքիչը: Նա միակըն է, որ լսում ու հասկանում է Մեծ Հայրիկի ակնարկը):

ՄԵՅԻ (ձեռքերը բարձրացնելով և ապարանջանները զրնգացնելով).— Հետաքրքիր է, այս երեկո շա՛տ մոծակներ կան դրոսում:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Փոքրի՛կ Մայրիկ, դու ինչ-որ բա՛ն սասացիր:

ՄԵՅԻ.— Ասում եմ մոծակները հանկարծ մեզ ողջ-ողջ չուտե՛ն...

Եթե մի քանի րոպեով պատշգամբ դուրս գանք:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Դա շատ լավ կլինի: Եթե մոծակները ձեզ ուտեն, ձեր ոսկորները կաղամ, պարարտանյութ կշինեմ պլանտացիաներիս համար:

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ (հապշտապ).— Անցյալ շաբաթ... անցյալ շաբաթ ինքնաթիռով պարարտանյութ շաղ տվեցինք... մի քիչ օգնեց: Ես ոչ մի անգամ դեռ...

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ (ընդհատելով նրան).— Բրի՛կ, սրանք ճի՛շտ են

ստում, որ երեկ Լրեկոյան դպրոցի մարգարայտի վագրուդում
ընկել ես ու ոտքդ կոտրել:

ՄԼԾ ՄԱՅՐԻԿ.— Բրի՛կ, որդի՛, Մեծ Հայրիկն է հետոյ խոսում:

ԲԲԻԿ (անտարբեր ծպտալով).— Ի՞նչ ասացիր, Մե՛ծ Հայրիկ:

ՄԼԾ ՀԱՅՐԻԿ.— Ասում են՝ երեկ դու ինչ-որ ցատկ ես կատարել,
ի՞նչ ես արել...

ԲԲԻԿ.— Այո, ինձ էլ են ասում:

ՄԼԾ ՀԱՅՐԻԿ.— Իսկ ի՞նչ էիր անում այնտեղ՝ ցատկո՞ւմ էիր,
րե՞հ հետույքդ էիր թափ տալիս... Հը՞... Իսկ ճի՞շտ է, որ ինչ-
որ կնոջ ես պատկեցրել խճապատ վագրուդյակին: Հը՞... Ծի՞շտ
են ասում:

ՄԼԾ ՄԱՅՐԻԿ.— Մե՛ծ Հայրիկ, հիմա դու արդեն հիվանդների
ցուցակից դուրս ես գրվել, և ես չեմ ների քեզ նման կատակ-
ների...

ՄԼԾ ՀԱՅՐԻԿ.— Վերջացրո՛ւ...

ՄԼԾ ՄԱՅՐԻԿ.— ... այդպիսի գոեհիկ արտահայտություն, այն էլ
նորին սրբության ներկայությամբ...

ՄԼԾ ՀԱՅՐԻԿ.— Վերջացրեք... Բրի՛կ, քեզ հետ եմ... Ասում եմ,
երեկ գիշեր գվարճանում էիր այդ խճապատ վագրուդյակին:
Երեկ ինչ որ բանի Խանկոյ ես վագրել ու սայթաքել, վայր ըն-
կել, մա՞ր

Պատեր ծիծաղում է բարձր, կեղծամիտ, մյուսները ջղային
բրբիջով միանում են նրան: Մեծ Մայրիկը ոտքը ուժեղ խփում է
Մատակին և շրթանները սեղմելով, մոտենում է Մեչիին, ինչ-որ
բան է շշկոյում նրան, մինչդեռ Բրիկի անտարբեր, հազիվ նշմա-
րելի ժպիտը, որը բոլոր իրադրություններում բնորոշ է նրան, հան-
դիպում է հոր դաժան, ուշադիր, ծաղրող հայացքին:

ԲԲԻԿ — Ի՛նչ, սր՛ր, չեմ կարծում, որ այդպես է եղել:

ՄԼԾ (միաժամանակ, շինծու քնքշությամբ).— Պատվելի՛ Թուկր,
մի քիչ չգրոսնե՞նք մաքուր օդում:

(Մեչին ու Թուկրը դուրս են գալիս պատշգամբ այն պահին,
երբ Մեծ Հայրիկը շարունակում է):

ՄԼԾ ՀԱՅՐԻԿ.— Գրո՞ղը տանի, իսկ ի՞նչ էիք անում գիշերվա
ժամը երեքին:

ԲԲԻԿ — Վագում էինք ու ցատկում արգելքների վրայով, Մե՛ծ
Հայրիկ, բայց այդ արգելքները շատ էին բարձր ինձ համար,
այդ պատճառով ոտքս խփեցի, ընկա:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Ընկա՛ր... որովհետև խմա՛ծ էիր:

ԲՐԻԿ (նրա անտարբեր ժպիտը փոքր-ինչ խամրում է).— Լուրջ ժամանակ նույնիսկ փորձ չէի անի ցածր արգելքների վրայից ցատկել:

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ (հապշտապ).— Մե՛ծ Հայրիկ, փշիր քո ծննդյան օրվա մոմերը:

ՄԱՐԳՐԵԹ (միաժամանակ).— Ես ուզում եմ խմել Մեծ Հայրիկ Փոլիթի՝ բամբակի ամենանշանավոր ագարակատիրոջ կենացը...

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ (մոլեգնած ու դժկամությամբ գոչելով).— Ես ձեզ ասացի վե՛րջ տվեք... հե՛նց հիմա վե՛րջ տվեք...

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ (տորթը ձեռքին կանգնում է Մեծ Հայրիկի դիմաց).— Մե՛ծ Հայրիկ, ես քեզ թույլ չեմ տա այդ ձևով խոսել... նույնիսկ քո ծննդյան օրը...

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Լսիր, Իդա՛: Ես ինչպես ուզեմ, այնպես էլ կարող եմ խոսել... Անկախ այն բանից՝ իմ ծննդյան օ՛րն է, թե՞ ոչ: Իսկ եթե որևէ մեկին դուր չի գալիս... թող կորչի գրողի ծոցը:

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Բայց մտքումդ ուրիշ բան կա:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Իսկ ինչի՞ց իմացար, որ մտքումս ուրիշ բան կա: **(Այդ պահին նրանք մի բանի ուրիշ վիրավորանքներ էլ են փոխանակում: Գուփրը նույնպես դուրս է գալիս պատշգամբ):**

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Ես համոզված եմ, որ մտքումդ ուրիշ բան կա:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Դու ոչինչ էլ չգիտես: Ու ոչ մի բան... ընդհանրապես ոչինչ չես հասկացել քո ամբողջ կյանքում...

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Այնուամենայնիվ, դու չես կարող այդպես մըտածել:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Ո՛չ, ինչ որ մտածում, այն էլ խոսում եմ: Համոզված եղիր: Այս բոլոր կեղտոտները հավաքվել են շուրջս, որովհետև կարծում եմ մեռնելու եմ, հա՛: Դու էլ էիր այդպես կարծում, չե՞... դրա համար ես պտտվում շուրջս: Բայց լավ կլինի այլևս ինձ հրամաններ չտաս ու գնաս գրողի ծոցը, որովհետև դեռ ոտքերս փռելու միտք չունեմ: Հա՛, ես չեմ մեռնելու: Բժիշկները ինձ լավ քննել են, այդ գրողի տարած ախտորոշման վիրահատությունն արել ու ոչ մի հիվանդություն չեն գտել... բացի հաստ աղիքի փայտացումից: Բոլորդ էլ ապանջներիդ օղ արեք, ես չեմ մեռնելու քաղցկեղից: Դուք բո-

լորդ էլ կարծում էիք, որ ես այդ հիվանդությունից եմ մեռնելու, չէ՞... Լսիր, Իդա՛, մի՞թե դուք հավատացած չէիք, որ ես մեռնելու եմ քաղցկեղից... Հը՞...

(Հիմա գրեթե բոլորը պատշգամբում են, բացի երկու ծեր ամուսիններից, որոնք միմյանց են նայում վառվող մոմերի վրայից: Մեծ Մայրիկի կուրծքը ելևէջում է: Նա, ահաբեկված, գիրուկ բռնունցքը դնում է բերանին: Մեծ Հայրիկը շարունակում է խոստովանվել):

Ճիշտ չե՞մ ասում: Հը՞: Դուք սպասում եք, որ ես մեռնեմ... քաղցկեղից մեռնեմ, իսկ դուք տերուտնօրեն լինեք իմ պլանտացիային: Չէ՞... Քո ճղճղան ձայնը, չաղ, պատավ մարմինը որ դետուդեն ես թափահարում... ինձ այդ են հուշում:

ՄԵՕ ՄԱՅՐԻԿ.— Լռի՛ր... տերտերը...

ՄԵՆ ՀԱՅՐԻԿ.— Թքա՛ծ...

(Մեծ Մայրիկը բարձրաձայն հառաչում է ու նստում բազմոցին, որտեղ հագիվ է տեղավորվում): Լսեցի՞ր ինչ ասացի... Ասում եմ թրած... **(Ինչ-որ մեկը դրսից ծածկում է պատշգամբի դուռը այն պահին, երբ երեխաներն այնտեղ կրակում են ու ազմկում):**

ՄԵՆ ՄԱՅՐԻԿ.— Դու ոչ մի տեղում թեզ աղդպես չէիր պահել: Ձեռնակառնում, ինչ է պատասխել թեզ...

ՄԵՕ ՄԱՅՐԻԿ.— Ես գեազի բոլիչիների մաս, լավ քննվեցի... վիտամինապեղի միացն այն բանի համար, որպեսզի համոզվեմ՝ որո՞ւ ես, թե՛ ես եմ այս տան տերը: Ու պարզվեց՝ ոչ թե՛ դու, այլ ես եմ... Ահա իմ ծննդյան օրվա նվերը... տորթն ու շամպուսկոն... Ախր արդեն երեք տարի շարունակ դու կամաց-կամաց տան տեր էիր դառնում... Հրամայում էիր... Լեզուդ էիր դետուդեն շաղ տալիս: Քո չաղ հետույքը թափահարելով, շրթունքներդ այն ազարակում, որ իմ քրտինքով... Այս տունուտեղը ես եմ դրել: Ես եմ եղել «Սթրոու և Օչելլո» պլանտացիայի առաջին վերակացուն: Տաս տարեկանից թողել եմ դպրոցն ու գնացել դաշտերը սևամորթի պես աշխատելու: Ինչ որ է, ես հասա «Սթրոու և Օչելլո» ազարակի կառավարչի պաշտոնին: Ծերուկ Սթրոուն մեռավ, և ես դարձա Օչելլոյի գործընկերը... Ազարակը մեծացավ, բարգավաճեց... մեծագույն, բարգավաճեց... իմ քրտինքով... Այս ձեռքերով եմ ամեն ինչ արել... Իսկ դու ոչ մի օգնություն ցույց չսովեցիր: Հիմա

կարող ես համոզված լինել: Դու այստեղ կարգադրություն-
ներ չես կարող անել. ես թույլ չեմ տա: Իսկ հիմա հավաքվել
եք շուրջս, ուզում եք տան տեր դառնալ... Որովհետև կարծում
եք մեռնելու եմ քաղցկեղից: Հա՛-հա՛-հա՛... Չհավատաք...
Հիմա հաստատ ասում եմ, որ ինձանից ոչ մի շյուղ չեք ստա-
նալու: Պա՛րզ է, Իդա՛: Հիմա քեզ ամեն ինչ պա՛րզ է: Հաս-
կանալի՞ է: Հիվանդանոցում ինձ մանրամասն քննեցին ու ո-
չինչ չգտան, բացի այդ... մեծ աղիքի փայտացումից: Դե դա
էլ նյարդերիցս է... որովհետև զգվում եմ ձեզանից... Իմ մեծ
աղիքը փայտացել է, կեղտով լցվել, որովհետև ես զգվում եմ,
ես չեմ դիմանում ձեր կեղծավորությանն ու բամբասանքնե-
րին, որոնց ստիպված պիտի համակերպվեմ: Իդա՛, դու ար-
դեն քառասուն տարի ոչ մի ճիշտ բան չես ասել... Մեր միաս-
նական կյանքի քառասուն տարիներին... Հայդե՛, Իդա՛...
Հանգցրու իմ ծննդյան օրվա մոմերը... Երթունքների ունեց-
րու, խոր շունչ քաշիր ու փչիր այդ անհիծյալ մոմերը...

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Ա՛խ, Մե՛ծ Հայրիկ, ա՛խ, ա՛խ, Մե՛ծ Հայրիկ...
ինչպե՛ս ես այդպիսի...

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Ի՞նչ եղավ քեզ, Իդա՛:

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Ուրեմն այսքան տարի չե՛ս հավատացել, որ
սիրում եմ քեզ:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Հա՛, չեմ հավատացել:

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Իսկ ես քեզ այնքան էի սիրում... այնքա՛ն...
Նույնիսկ քո ասելությունն ու կոպտությունն էի սիրում...

(Նա հեկեկում է ու շփոթված դուրս գալիս պատշգամբ):

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ (ինքն իրեն).— Այ թե ծիծաղելի կլինեք, եթե դա
ճիշտ դուրս գար...

(Կանգնում է տորթի մոտ: Մի քանի վայրկյան անց Բրիկը

**կաղալով ու բաժակը ձեռքին ներս է մտնում: Մարգրեթը ուրախ
ժպիտով հետևում է նրան):**

Ես քեզ չկանչեցի, Մեզգի՛: Ես Բրիկին կանչեցի:

ՄԱՐԳՐԵԹ.— Ես պարզապես օգնեցի, որ նա գա:

**(Նա համբուրում է Բրիկի շուրթերը: Բրիկն իսկույն մաքրում
է ձեռքի ափի հակառակ կողմով: Մարգրեթը աղջնակի աշխույժով
դուրս է գալիս: Բրիկն ու հայրը միասին են):**

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Ինչո՞ւ արեցիր դա:

ԲՐԻԿ.— Ի՞նչը, Մե՛ծ Հայրիկ:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Ինչո՞ւ շուրթերդ սրբեցիր: Այն ձևով մաքրեցիր, կարծես, Մարգրեթը թքեց վրադ:

ԲՐԻԿ.— Ծիշտն ասած չնկատեցի, թե ինչ արեցի:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Քո կինն ավելի գեղեցիկ է, քան թե Գուսրիհնը: Բայց չգիտես ինչու, երկուսն էլ նույն արտաքինն ունեն:

ԲՐԻԿ.— Ինչպես թե նույն արտաքինը...

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Ծիշտն ասած, չգիտեմ ինչպես բացատրեմ... դե՛, նրանք նույն տեսքն ունեն...

ԲՐԻԿ.— Ուզում ես ասել՝ Մեչին էլ, Մարգրեթն էլ մի տեսակ... շատ են անհանգիստ, այո՞: Դա՞ ես ուզում ասել:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Այո, գրո՛ղը տանի, դա եմ ուզում ասել:

ԲՐԻԿ.— Նրանք ջղային են... կատուների պե՛ս...

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Այո, այո... Իմ հարսները ջղային են, կատուների պես:

ԲՐԻԿ.— Ջղային են, ինչպես երկու կատուներ... շիկացած տանիքին նստա՞ծ...

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Ծիշտ է, որդի՛, նրանք նման են շիկացած տանիքին նստած կատուների: Չարմանալի է, դու և եղբայրդ՝ Դավիթը, բոլորովին նման չեք իրար... բայց ձեր կանայք... որտեղի՞ց եք ճարել այդքան նման կանայք:

ԲՐԻԿ.— Մենք երկուսս էլ եկեղեցով ենք ամուսնացել:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Հիմարություն՝ դուրս մի՛ տուր... Ես քեզ հարցրելում եմ, ինչո՞ւ են իմ հարսները նույն... նույն արտաքինն ունեն:

ԲՐԻԿ.— Որովհետև նրանք նստած են մի մեծ հողակտորի կենտրոնում: Իսկ քսանութ հազար ակր ագարակահողը, Մե՛ծ Հայրիկ, բախակալիկն մեծ հարստությունն է... դրա համար էլ հարսներդ իրենց ճանկերը կատուների պես սրած սպասում են, որպեսզի իրար բզկտեն... ավելի մեծ հողակտոր ձեռք բերելու համար. հենց որ թույլ տաս այդ հարստությունը ձեռքիցդ...

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Ես զարմանում եմ դրանց վրա: Ո՞վ ասաց, որ ևս թույլ եմ տալու: Եթե նրանք դրան են սպասում, ասեմ, որ դեռ երկար ժամանակ հողերս անտեր չեն մնալու: Թող հույս չունենա՞ն...

ԲՐԻԿ.— Ծիշտ է, Մե՛ժ Հայրիկ: Դու տեղդ պի՛նդ կաց, թող նրանք
ճանկերով իրար... աչք հանեն:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Չկասկածե՛ս... Ես տեղս պի՛նդ նստած եմ: Թող
այդ պոռնիկի լակոտներն իրար միս ուտեն: Հա՛-հա՛-հա՛...
Բայց մի բան ասեմ, Բրի՛կ. ինչպես է լինում, որ Գուփրի
կինը շուտ-շուտ է երեխա բերում: Ի՞նչ կարող ես անել, մար-
դու կինը շատ է պտղաբեր: Գրողը տանի, այսօր բոլորին հա-
վաքել-բերել էր: Ստիպված սեղանը բացեցինք, որպեսզի կա-
րողանանք տեղավորել այդ ոմնակին... Հիմա Մեչին հինգ
երեխա ունի, իսկ վեցերորդն էլ...

ԲՐԻԿ.— Այո, վեցերորդն էլ ծնվելու է:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Աստված վկա, Բրի՛կ, մի բան կա, որ ինչ ա-
նում եմ, չեմ կարողանում հասկանալ... ինչպե՛ս է դա ստաց-
վում...

ԲՐԻԿ.— Ի՞նչը, Մե՛ժ Հայրիկ:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Դե՛, ինչպես ասեմ... բոլոր օրենքներով... բո-
լոր ապօրինություններով հող ես ձեռք բերում... քո՛ սեփա-
կան հողը... տունուտեղ ես դնում... այն մեծանում է, շենա-
նո՛ւմ... բայց... մարդ չի հասցնում մի կարգին շունչ քաշել
այդքան արյուն-քրտինք թափելուց հետո, մեկ էլ՝ այդ բոլորը
ձեռքիցդ սահում է ու չքանո՛ւմ... Ուղղակի չքանո՛ւմ...

ԲՐԻԿ.— Ի՞նչ կարող ես անել, Մե՛ժ Հայրիկ: Կյանքն այդպիսին
է: Ասում են՝ բնությունը դատարկություն չի սիրում:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Ասելն ասում են, բայց, իմ կարծիքով դատար-
կությունը շատ ավելի լավ է այն բոլոր անպետքություններից,
որոնց մեջ բնություն կա... Բայց մեզ ականջ են դնում...

ԲՐԻԿ.— Այո:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ (ձայնն իջեցնելով).— Ո՛վ է:

ԲՐԻԿ.— Ինչ-որ մեկն ուզում է իմանալ, թե ինչի մասին ենք խո-
սում:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Գո՛ւփր... Գուփր...

(Միտումնավոր լռությունից հետո Մեչին երևում է պատշգամ-
բի դռանը):

ՄԵՅԻ.— Մե՛ժ Հայրիկ, դուք Գուփրի՞ն էիք կանչում:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Ա՛խ, դու էիր, հա՛:

ՄԵՅԻ.— Մե՛ժ Հայրիկ, դուք Գուփրի՞ն էիք ուզում:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Ո՛չ: Քե՛զ էլ չեմ ուզում: Ես ուզում եմ առանձին

լինել, երբ գաղտնի խոսակցություն եմ ունենում իմ որդի Բրիկի հետ: Հիմա շատ շոգ է դռները փակ խոսելու համար: Բայց եթե իմ որդի Բրիկի հետ խոսելիս պետք է... ստիպված դռները փակեմ, նախօրոք ասեք... Որովհետև զգվում եմ թաքուն ականջ դնողներից ու լրտեսներից: Ուրեմն, ինձ նախօրոք ասեք, որ փակեմ դռները:

ՄԵՅԻ.— Բայց... Մե՛ժ Հայրիկ...

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Որովհետև դու դեռ չես ուզում հասկանալ, որ քո սուվերն էր սենյակ ընկել...

ՄԵՅԻ.— Ես պարզապես...

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Դու պարզապես լրտեսում էիր ու թաքուն ականջ դնում: Դու դա լավ ես հասկանում...

ՄԵՅԻ (քիթը վեր քաշելով սկսում է հեկեկալ).— Ա՛խ, Մե՛ժ Հայրիկ, չեմ հասկանում ինչու եք այդքան կոպիտ վարվում հենց նրանց հետ, ուվքեր, իրոք, սիրում եմ ձեզ...

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Դե վերջացրո՛ւ... Ասում եմ՝ վե՛րջ տուր: Ես շուտով քեզ ու Գուփրին այս կողքի սենյակից վճռեցիք եմ: Այսպես ձեր ի՞նչ գործն է, թե Բրիկն ու Մարգրեթը գիշերը իրար հետ ինչ են խոսում: Երկուսով նրանց խոսակցությունը լսում եմ վարձու լրտեսների պես ու ամեն ինչ հալտնում Մեծ Մայրիկին: Իսկ նա էլ գալիս է ու հիմար-հիմար դուրս տալիս... Բրիկն այս ասաց, Մարգրեթն այս ասաց... Կովեցին... Հիտուս Բրիստոսը վկա, ես զգվում եմ նման բաներից: Շուտով քեզ ու Գուփրին այդ սենյակից վճռեցիք եմ, որովհետև զրգվում եմ լրտեսներից ու խորամանկներից: Գրո՛ղը տանի, ես ինձ դրանից վատ եմ զգում... հիվանդանո՛ւմ եմ...

(Մեյին գլուխը ետ է զցում, այլշած նայում վեր, ձեռքերը երկինք կարկառում այնպես, կարծես, ամենագոր Աստծո գուրն է հայցում անարդար մարտիրոսության համար: Այնուհետև, թաշկինակը քթին դնելով, արագորեն դուրս է գալիս սենյակից՝ խրչ-խրչացնելով շրջագգեստի փեշերը):

ՐՐԻԿ (խմիչքների պահարանի մոտ).— Ուրեմն նրանք մեզ ականջ են դնում, այո՞:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Այո, որդի՛: Նրանք լսում են ու ամեն ինչ հալտնում Մեծ Մայրիկին: Նրանք բամբասում են, որ դու և...

(Լռում է, կարծես շփոթվելով):

... դու ... չես ուզում Մեզգիի հետ պատկել... որ դու բազմո-

ցին եւ քնում: Ես ուզում եմ իմանալ, դա ճիշտ է, թե՞ ոչ: Եթե Մեզգին քեզ դուր չի գալիս, բաժանվիր... Այդ ի՞նչ ես անում:

ԲՐԻԿ.— Ասում եմ, մի բաժակ էլ վիսկի խմեմ:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Բայց... որդի՛, դու խմիչքի գերի ես դառնում:

ԲՐԻԿ.— Այո, գիտեմ, սը՛ր: Լավ գիտեմ:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Ուրեմն, խմելու պատճառո՞վ թողեցիր սպորտային մեկնաքանի քո գործը:

ԲՐԻԿ.— Այո, սը՛ր, կարծում եմ դրա պատճառով:

(Ժպտում է անորոշ ու մտերիմ, նոր լցրած բաժակը ձեռքին):

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Որդի՛, դա շատ լուրջ հարց է, իսկ դու կատակում ես:

ԲՐԻԿ (անտարբեր).— Այո, սը՛ր, դա շատ լուրջ հարց է:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Ուրեմն՝ լսի՛ր... այդ անիծյալ ջահին մի նայիր:

(Դադար: Մեծ Հայրիկի ձայնը խռպոտ է):

Մեկը ուրիշ բան էլ եմք գնել Եվրոպայում:

(Նորից դադար): Այն խանութից, որտեղ հրդեհից փրկված ապրանքներ են վաճառում: Կարևորը կյանքն է: Բացի կյանքից, մարդ ուրիշ ոչ մի բանից չպետք է կառչի: Իսկ խմող մարդը փչացնում է իր կյանքը: Մի՛ խմիր, որդի՛, կյանքիդ մասին մտածիր: Քո կյանքից կառչիր: Ուրիշ ոչ մի բանի մասին մարդ չպետք է... Մոտ նստիր, ստիպված չլինենք բարձր խոսել: Որովհետև այս տան պատերն էլ ականջ ունեն:

ԲՐԻԿ (կաղալով մոտենում է, որ նստի հոր կողքին).— Լավ, հայրի՛կ:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Իսկ ինչո՞ւ թողեցիր մարզական մեկնաքանի գործը: Ի՞նչ եղավ, հուսախաբվեցի՛ր:

ԲՐԻԿ.— Չգիտեմ: Իսկ դու այդպե՞ս ես կարծում:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Գրո՛ղը տանի, ես ի՞նչ իմանամ... Քե՛զ եմ հարցրնում... Ես ի՞նչ իմանամ, երբ ինքդ էլ չգիտես...

ԲՐԻԿ.— Դե՛, ի՞նչ ասեմ... Երբ խցիկում նստած հաղորդում էի, կարծես, բերանս բամբակ խցկած լինեի: Միշտ չէի հասցրնում մեկնաքանել այն բոլորը, ինչ տեղի էր ունենում դաշտում...

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Ասում ես դրա համա՛ր թողեցիր:

ԲՐԻԿ (բարեհոգաբար)— Այո՛, դրա համար...

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ (ծխում է սիգարը: Հետո հանկարծ առաջ է մեկնը-

վում, եռանդուն արտաշնչում է ծուխը ու ձեռքը ճակատին դնում)։— Ըհը, ըհը, ըհը... Ծուխը շատ խորը ներս քաշեցի... Գլուխս պտտվեց։

(Հնչում են կրակարանի վրայի ժամացույցի զանգերը)։

Ինչո՞ւ են մարդիկ այդպես դժվարությամբ իրար հետ զրուցում։

ԲՐԻԿ.— Այո՞ր...

(Ժամացույցի զանգերը հնչում են տաս անգամ)։

Ծատ գեղեցիկ ժամացույց է... Մեղմ դողանջով... Սիրում եմ ամբողջ գիշեր լսել դրա ձայնը...

(Բրիկը հարմարավետ ընկողմանում է բազմոցին։ Մեծ Հայրիկը անբացատրելի շփոթմունքով ուղիղ նստում է նրա դիմաց։ Խոսում է բռնազբոսիկ ու կտրուկ։ Այդ լարված խոսակցության պահին ծանր է շնչում, երբեմն փութկոտ, վախվորած հաչացքով նայելով որդուն)։

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Այդ ժամացույցը գնել ենք այն ամառ, երբ մորդ հետ Եվրոպա ուղևորության էինք գնացել։ Գրողը տանի, այդ ճամփորդական ընկերությունն ինչ փորձանք ասես մարդու գլխի կրերի։ Կյանքումս նման ահավոր բաներ չէի տեսել, որ սպնտեղ տեսա։ Ամեն տեղ մարդու խաբում էին։ Տեսնեիր ինչպես էին այդ մեծ հյուրանոցներում խոհարարները մարդկանց հիմարացնում։ Իսկ Մեծ Մայրիկը այնքան շատ բան էր գնել, որ երկու բեռնավագոն հագիվ կարող էին տեղափոխել։ Դե՛, նրա գնած ապրանքների կեսը անցյալ գարնանից կապված մնում է նկուղում, որտեղ այս գարնանը ահագին ջուր լըցվեց...

(Ծիծաղում է)։

Այդ Եվրոպա ասածդ համատարած չարչիների տեղ է։ Իսկ դրանց տեսարժան վայրերը հին, խարխլված խանութներ են՝ հնոտիներով լցված... որոնց համար Մեծ Մայրիկի խելքը գրնում էր։ Այդ պառսավին նուսիսի ջորու սանձերով հնարավոր չէր զսպել։ Փող էր, որ մսխում էր... Անընդհատ, անընդհատ գնում էր, ինչ որ խելքին փչեր... Բախտս բերել է՝ հարուստ մարդ եմ, թե չէ կորած էի... Իսկ նրա գնած ապրանքների կեսը փտում է նկուղում։ Ատ, սը՛ր, բախտս բերել է՝ հարուստ մարդ եմ, թե չէ... Բրի՛կ, ես, իրոք, հարուստ մարդ եմ... ես շատ հարուստ եմ։ **(Մի պահ նրա աչքերը փայլա-**

տակում են): Գիտե՛ս թե ինչքան արժեմ... Բրի՛կ... կարո՞ղ ես ասել, թե ինչքան արժեմ... Հը՞... Դե՛, հապա մտածիր...

(Բրիկը անտարբեր ժպտում է իր բաժակի ետևից):

Ուղիղ տաս միլիոն մաքուր փող: Պատկերացնո՞ւմ ես... Չհաշված հովտից այս կողմ ընկած ամենաբարեբեր հողերը...

(Գիշերային երկնքում տրաքոցներ: Կանաչավուն շողարձակումներ: Երեխաներն աղաղակում են պատշգամբում):

Բայց արի տես, որ այդքան փողով մարդ չի կարող կյանք գնել, նա չի կարող ետ գնել իր անցկացրած կյանքը: Բրի՛կ, իսկ դա միակ բանն էր, որ չէին առաջարկում Եվրոպայի խանութներում, Ամերիկայի կամ այլ երկրի շուկաներում: Այդ փողերով հնարավոր չէ կյանք գնել, մարդը չի կարող ետ գնել իր կյանքը, երբ այն ավարտված է...

Որդի՛, դա շատ ծանր մտածմունք էր, որ ինձ հետ է միջնա այսօր... Այդ փորձությունը ինձ ավելի խելացի ու դժբախտ է դարձրել: Բայց մի դեպք էլ է ինձ հետ պատահել, որ չեմ կարողանում մոռանալ:

ԲՐԻԿ.— Ի՞նչ դեպք է, Մե՛ծ Հայրիկ:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Իսպանիայում, Բարսելոնայի³³ շուրջ տարածվող չոր բլուրներից մերկ երեխաներ էին վազվզում՝ սոված շների պես հաց մուրալով, կաղկանձելով ու ոռնալով... քայց տեսնեիր, թե ինչքան պարարտ էին Բարսելոնայի փողոցներում գրոսնող տերտերները... Այնքան չաղ էին ու երջանիկ... Հա՛, հա՛, հա՛, հա... Հասկանո՞ւմ ես, ես կարող եմ կերակրել այդ սոված երկիրը: Ես այնքան փող ունեմ, որ լիույի բավական է՝ կերակրելու այդ սոված ու գրողի տարած երկիրը: Բայց չէ... մարդս եսասեր գազան է: Համոզված եմ, որ իմ՝ ողորմություն տված փողերը... Բարսելոնայի բլուրներից վազվզող տկլոր լակոտներից ողորմություն տված իմ փողերով հագիվ կարելի է այս սենյակի աթոռներից որևէ մեկի ծածկոցը զրնել... Գրո՞ղը տանի, ես փողը շաղ տվեցի նրանց առջև այնպես, հնչպես գարի շաղ կտաս՝ հավի ճտերին կերակրելու համար: Ես փողը շարտեցի նրանց միայն նրա համար, որ ազատվեմ սովից ոռնացող այդ շան լակոտներից, ինձ մեքենա գցեմ ու... փախչեմ...

Չեմ կարողանում մոռանալ նաև Մարտկոչում ինձ հետ կատարված մի դեպք: Բանից պարզվում է, արաբների մոտ

պոռնկությունն սկսվում է չորս, հինգ տարեկանից: Ես չեմ չափազանցում: Հիշում եմ, մի օր Մարակեշում³⁴ այդ հին, պարսպով շրջափակված արաբական քաղաքում, նստեցի փլված պատին, որ մի սիգար ծխեմ: Անտանելի շոգ էր: Մի արարուհի կանգնեց ճանապարհի եզրին ու նայեց ինձ այնքան, մինչև շփոթվեցի: Փոշոտ, շիկացած ճանապարհին կանգնած այդ կինն աչքերը չէր կտրում ինձանից: Ես ամաչեցի... Բայց լսիր... Կնոջ գրկին մի փոքրիկ, մերկ աղջնակ կար, որը, երևի, հազիվ կարողանում էր քայլել: Քիչ անց կինը երեխային ցած դրեց, ականջին ինչ-որ բան շնչաց ու հրեց առաջ: Երեխան... հազիվ քայլելով... մերկ աղջնակը հազիվ քայլելով, դողդողալով եկավ ու... Հիսուս Քրիստո՛ւ... Մարդ սարսրում է, երբ հիշում է... Այդ աղջնակը բարալիկ ձեռքը երկարեց ու փորձեց... շալվարիս կոճակներն արձակե՛լ... Տե՛ր Աստված, չե՞ որ երեխան դեռ հինգ տարեկան չկար... Չե՛ս հավատում: Երևի մտածում ես, հորինո՛ւմ եմ: Հետո հյուրանոց գնացի ու մորդ ասի՝ իրերդ հավաքիր... Մենք պետք է փախչենք այդ գրողի տարած երկրից...

ԲՐԻԿ.— Մե՛ծ Հայրիկ, դու խոսելուց հարթել ես...

ԼԼԵԾ ՀԱՅՐԻԿ (անտարբեր մնալով այս ակնարկին).— Այո, սը՛ր, ստույգն է կյանքիս օրենքը... ահա թե ինչու է մարդ արարածը գազան... Դրա համար մեռնելիս ոչ մեկին չի խղճում... ու ոչ մեկը նրան չի խղճում... Այո, սը՛ր, դա...

Դու ինչ-որ բան ասացիր, Բրի՛կ...

ԲՐԻԿ.— Այո:

ԼԼԵԾ ՀԱՅՐԻԿ.— Ի՞նչ ես ասում:

ԲՐԻԿ.— Հե՛նակս տուր, որպեսզի կարողանամ ոտքի կանգնել:

ԼԼԵԾ ՀԱՅՐԻԿ.— Իսկ ո՞ր ես գնում:

ԲՐԻԿ.— Ուզում եմ մի փոքր ուղևորություն կատարել դեպի խըմիչքների պահարանը:

ԼԼԵԾ ՀԱՅՐԻԿ.— Ո՞ր...

ԲՐԻԿ.— Խմիչքների պահարանը:

ԼԼԵԾ ՀԱՅՐԻԿ.— Ահա, վերցրու: (Բրիկին է մեկնում հե՛նակը):

Մարդ արարածը մեռնող գազան է: Մարդը անընդհատ գրնումներ է կատարում միայն այն պատճառով... Երբ մարդ հարուստ է ու գիտի, որ մեռնելու է, շարունակ գնումներ է կատարում՝ թաքուն փայփայելով այն հիմար միտքը, թե իր

գնածների մեջ գուցե... հավերժական կյանքը լինի: Մի բան, որ բոլորովին անհնար է... Մարդ արարածը այնպիսի գազան է, որ...

ՔՐԻԿ (խմիչքների պահարանի մոտ).— Մե՛ծ Հայրիկ, ճիշտն ասած, դու այսօր լավ շատախոսում ես:

(Առություն: Դրսից ձայներ են լսվում):

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Այո: Վերջերս ոչ մի բան չէի ասել: Ամեն օր լուռ նստում էի և պատուհանից նայում դուրս՝ իմ բամբակի դաշտերին: Ինչ-որ ծանր բան ճնշում էր հոգիս: Ու եթե այսբան շատ եմ խոսում, պատճառն այն է, որ հոգիս ազատվել է այդ քեռից:

Բրի՛կ, ես ինձ յոթերորդ երկնքում եմ զգում:

ԲՐԻԿ.— Գիտե՞ս, թե ամենից շատ ինչ եմ ուզում հիմա:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Ոչ:

ՔՐԻԿ.— Կատարյալ լռություն: Կատարյալ ու մեռյալ լռություն:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Ինչո՞ւ:

ԲՐԻԿ.— Որովհետև այդպես ավելի հանգիստ եմ ինձ զգում:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Մարդ Աստծո, դու այդ լռությունից դեռ այնբան շատ կուներես... գերեզմանում...

(Նա մտերմաբար ծիծաղում է):

ԲՐԻԿ.— Հիմա վերջացրի՞ր ասելիքդ:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Իսկ ինչո՞ւ ես ուզում, որ չխոսեմ:

ԲՐԻԿ.— Որովհետև, սը՛ր, դու միշտ ասում ես ինձ. «Բրի՛կ, ես ուզում եմ քեզ հետ խոսել»: Բայց երբ խոսում եմք, մի կարգին բան չես ասում: Նստում ես բազկաթոռին ու սկսում այս ու այն տեղից բաներ պատմել, իսկ ես էլ... ձևացնում եմ, իբր, լսում եմ: Փորձում եմ ցույց տալ, թե լսում եմ, բայց ոչ մի բան էլ չեմ լսում: Չափազանց դժվար բան է մարդկանց շփումը... մանավանդ իմ ու քո միջև... Այն պարզապես չի...

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Դու երբևէ վախեցե՞լ ես: Ուզում եմ ասել, դու որևէ բանից իսկապես վախեցե՞լ ես...

(Տեղից ելնում է):

Մի բույե: Դռները փակեմ...

(Նա այնպիսի զգուշությամբ է ծածկում պատշգամբի դռները, կարծես ինչ-որ կարևոր գաղտնիք է ուզում հայտնել): Բրի՛կ:

ԲՐԻԿ.— Ի՞նչ:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Բրի՛կ:

ԲՐԻՎ.— Հը:

ՄԵՏ ՀԱՅՐԻՎ.— Որդի՛, իսկ ես վախենում էի, չլինի հանկարծ այդ...

ԲՐԻՎ.— Ի՞նչ... Ինչի՞ց էիր վախենում...

ՄԵՏ ՀԱՅՐԻՎ.— Վախենում էի... Ասում էի, չլինի՞... քաղցկեղ եմ...

ԲՐԻՎ.— Ա՛խ... հա՛...

ՄԵՏ ՀԱՅՐԻՎ.— Ինձ թվում էր, մի կմախք... մի ծեր մարդու կրմախք իր սառը, չոր ձեռքը դրել էր ուսիս:

ԲՐԻՎ.— Մե՛ծ Հայրիկ, բայց դու առաջին անգամ ես... այդ հիվանդության... առաջին անգամ ես մահվան մասին խոսում:

ՄԵՏ ՀԱՅՐԻՎ.— Այո: Խոզը գոնե խոնչում է: Մարդն ստիպված իր բերանը փակ է պահում, չնայած չունի խոզի առավելությունը:

ԲՐԻՎ. — Ի՞նչ առավելություն:

ՄԵՏ ՀԱՅՐԻՎ.— Ապուշությունը... Մահվան հանդեպ ունեցած տգիտությունը, որն այնքան հանգիստ է պահում խոզին: Իսկ մարդը գրկված է սող սիռուխներից: Նա միակ արարածն է, որ մտածում է մահվան մտքին, հասկանում է, թե դա ինչ է: Թողր արարածները ունեցնում են մահվան հանապարհով, այդպես էլ միևնույն վերջ չիմունալով, թե ուր են գնում: Իսկ մարդը ... թայց խազը գոնե խոնչում է, իսկ մարդը ստիպված է լռել: Երբեմն նա .

(Մերումնու մեջ խոր, վառվող զորություն է նկատվում):

Կարողանում է լռել...

Չետարբեր է, դու ի՞նչ ես կարծում:

ԲՐԻՎ. — Ինչի՞ մասին, Մե՛ծ Հայրիկ:

ՄԵՏ ՀԱՅՐԻՎ.— Եթե վիսկի խմեմ, հաստ աղիքս չի՞ ցավի:

ԲՐԻՎ. — Ընդհանրապես, սր՛ր, դա օգտակար է:

ՄԵՏ ՀԱՅՐԻՎ (ժպտում է՝ զայլի պես ատամները ցույց տալով).—

Չե՛տաս Քրիստո՛ւ... Երկինքը նորից պարզվում է... Ես ոչինչ եմ հասկանում: Որդի՛, երկինքը մաքրվում է... Ես կարծես նորից ծնվեցի... Ես ապրո՞ւմ եմ... Ես ապրելո՞ւ եմ...

ԲՐԻՎ (նայելով նրա բաժակին).— Հիմա քեզ լա՞վ ես զգում, Մե՛ծ Հայրիկ:

ՄԵՏ ՀԱՅՐԻՎ. — Լա՞վ... Գրողը տանի... Ես արդեն կարողանում

եմ շնչել: Ամբողջ կյանքում ես սեղմված բռունցքի նման եմ եղել:

(Վիսկի է լցնում բաժակը):

Խփող ջարդող բռունցքի նման եմ եղել: Հիմա պետք է բացեմ այս սեղմված մատներն ու շոշափեմ...

(Նա բացում է մատները՝ կարծես օդը շոշափելու): Գիտե՞ս հիմա ինչ է անցնում մտքովս:

ԲՐԻԿ (անտարբեր).— Ոչ, սը՛ր, չգիտեմ:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Հա՛-հա՛-հա՛... Ուզում եմ կյանք անել... կանանց հետ պանկել...

(Բրիկի ժպիտը փոքր-ինչ խամրում է):

Այո, որդի՛... Եփվում եմ այդ ցանկությունից... Ես դեռ կին եմ ուզում, Բրի՛կ: Երևի չես հավատում, այո՞... Իմ վաթսունհինգամյակի օրը ես կին եմ ուզում, ոչ թե տորթ... Հա՛-հա՛-հա՛...

ԲՐԻԿ.— Այ թե ուժեղ ես եղել, հա... Իմ կարծիքով դա շատ տարօրինակ է:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Տարօրինա՞կ:

ԲՐԻԿ.— Ինչպես բացատրեմ... Ե՛վ տարօրինակ է և՛ հրաշալի:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Դա ուրիշ բան: Որդի՛, ես հիմա եմ հասկանում, որ շատ քիչ եմ կյանք արել կանանց հետ: Ծառ հնարավորություններ եմ ձեռքիցս բաց թողել, որովհետև... զգուշացել եմ, զգուշացել եմ հասարակական կարծիքից: Թո՛ւհ... հիմարություն: Ես հիմար եմ եղել, հիմար... Մահվան բարձրացող վարագույրն էր, որ ինձ առիպեց այդ բանը հասկանալ: Ու հիմա, երբ այդ վարագույրը բարձրացել է, ես... կին եմ ուզում...

ԲՐԻԿ.— Ուրեմն ուզում ես կյանք անել, հա՞:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Հա՛, գրողը տանի... Չէ՞ որ մորդ հետ քնել եմ... Թող հիշեմ... Հա, հինգ տարի առաջ, երբ ես վաթսուն, իսկ նա հիսունութ տարեկան էր: Մայրդ ոչ մի անգամ էլ իմ դուրը չի եկել: Ոչ մի անգամ...

(Նրանց խոսակցության պահին միջանցքում հեռախոսազանգ է լսվում: Մեծ Մայրիկը դեմքին չարաճճի արտահայտություն, ներս է մտնում, բացականչելով):

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Դուք խո՞ւլ եք... Ես պատշգամբի ծայրից լսում եմ հեռախոսի զանգը, իսկ դուք...

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Իդե՛ս, պատշգամբի դիմաց, բացի այս սենյա-

կից, հինգ ուրիշ սենյակներ ունենք: Ինչո՞ւ դու հենց այս սենյակով ես միջանցք գնում:

(Մեծ Մայրիկը, դեմքին չարածնի արտահայտություն, դուրս է գալիս):

Ա՛յ քո... Հասկանում ես, որդի՛, երբ մայրդ սենյակից դուրս է գալիս, չեմ կարողանում հիշել, թե նա ինչի նման է... Բայց երբ նա վերադառնում է ու տեսնում եմ, թե ինչի է նման, ինչպես ինձ ասում եմ... Երանի նայած շլիներ՛ի... **(Նա ծիծաղում է իր կատակի վրա աչքքան, միմյև աղիքները ցավում են և դեմքը ծամածռելով լրջանում է:**

Մեղուների խոսակցության պահին Բրիկը տեղից բարձրացել է ու կաղաչով պատշգամբ է դուրս գալիս):

Եսիր, այդ ո՞չ:

ԲԲԲԿ. — Գետոմ եմ՝ մի քիչ մաքուր օդ շնչեմ:

ՄԼԵՐ ՀԱՅՐԻԿ. — Դեռ կա՛ց, երիտասա՛րդ: Մի՛նչև վերջ լսիր, ինչ են ասում:

ԲԲԲԿ. — Իսկ ես կարծե՛յի վերջացրիր:

ՄԼԵՐ ՀԱՅՐԻԿ. — Ոչ, երիտասարդ, մեր զրույցը դեռ չի էլ սկսվել:

ԲԲԲԿ. — Կեղերեք էս սխաղիկե՛յի, սրբ. Պապյուսյան ուզում էի մի բի՛նասր օդ շնչեք: Պապիզ սասր գեգորտ է փչում:

ՄԼԵՐ ՀԱՅՐԻԿ. — Դո՛վ սորի ո սխաղտու ու նորից տեղդ նստի՛ր:

(Սխաղ սրբի ծուլից Մեծ Մառիկի ձայնն է լսվում):

ՄԼԵՐ ՀԱՅՐԻԿ. — Մի՛տա Սուլի... Ինչ՛ր ասես կրերեք մեր գրլիկե՛... Էստ լեչու է ինձ չե՛ք զանգահարում: Ախր ես ամեն ինչ կրատողմե՛ի.

ՄԼԵՐ ՀԱՅՐԻԿ. — Հխտա Քրիստո՞ս... նա նորից խոսում է իմ սրտամիտ զրույց քոջ հետ:

ՄԼԵՐ ՀԱՅՐԻԿ. — Յտեություն, մի՛սա Սուլի: Այո, սպասում եմք, սաս սորի: Մեծ Հայրիկը մեռնում է... քեզ տեսնելու ցանկությունե՛լից... Ազ: Յտեություն՛ն, մի՛սա Սուլի...

(Մեծ Մայրիկը ցած է դնում ընկալուչը ու գվարթ ճիչ արձակում: Մեծ Հայրիկը աղաղակում է ու փակում սկանջները, երբ լսում է սնոց ոտնաձայները:

Մեծ Մայրիկը խուժում է ներս):

Մեծ Հայրիկ, նորից միսա Սուլին էր զանգահարում... Մեծ լի ից: Գիտե՛ս, թե խեղճն ինչ է արել... Իր անձնական բը-

ժըշկին կանչել է Մեմֆիս, որպեսզի նա բացատրի, թե ինչ բան է մեծ աղիքի փայտացումը... Ու հիմա գանգահարեց, որ հայտնի, թե սիրտն ինչքան հանգիստ է այդ լուրն ստանալուց հետո... Դե... թողեք ներս գամ...

(Այդ պահին Մեծ Հայրիկը կնոջ վրա է սեղմել կիսաբաց դուռը):

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Չէ՛, չեմ թողնի: Ես քեզ սասցի, չէ՛, մյուս անգամ մեր սենյակով չանցնես: Դե հիմա ետ գնա մյուս սենյակներից մեկով:

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Մեծ Հայրի՛կ... Մե՛ծ Հայրիկ... Ա՛խ, Մե՛ծ Հայրիկ... Քիչ առաջ դու կատակով էիր չէ՛ այդ բաներն ասում: Դու ինչպե՛ս կարող ես նման բաները լուրջ ասել... սրտանց...

(Երեխաչի պես ձայնը նվազում է հեկեկոցից: Հետո նրա ունաձայները հեռանում են միջանցքով: Բրիկը, որ նորից հեճակով փորձում էր պատշգամբ գնալ. այժմ նստում է):

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Ես մորիցդ միայն մի բան եմ խնդրում. որ հանգիստ թողնի ինձ... Բայց չի հասկանում: Չի հասկանում, որ զզվեցնում է ինձ: Դե՛, նա ինձանից պոկ չի գալիս, որովհետև անկողնում երկար ժամանակ լավ եմ եղել հետը... Ծիշտն ասած, շուտ պետք է վերջ տալի դրան, բայց պատավր կարող կմնար: Անկողնում ես շատ լավ էի, որդի՛: Ափսոս, որ ինձ շատ եմ ծախսել նրա վրա... Ասում են, տղամարդը կարող է որոշակի չափով... այսքան անգամ ու վերջ: Ինչ որ է, ուժս դևո տեղն է, Բրի՛կ: Ես պետք է մեկին գտնեմ, որ մնացածը նրա վրա ծախսեմ: Որդի՛, ինձ ընտիր մի կին է պետք: Նշանակություն չունի, թե նա ինչ արժե: Ես նրան... թանկարժեք մորթիների մեջ կթաղեմ... Հա՛-հա՛-հա՛... Կմերկացնեմ ու թանկարժեք մորթիների, անգին քարերի մեջ կխեղդեմ... Հա՛-հա՛-հա՛... Ես նրան կմերկացնեմ ու մինչև կոկորդը թանկարժեք մորթիներով, գոհարներով կզուգեմ... Հետո... հետո... կպատկեմ հետը... կյանք կանեմ խենթանալու աստիճան... Հա՛-հա՛-հա՛...

ՄԵՅԻ (աշխույժով: Դռան ետևից).— Այդ ո՛վ է ծիծաղում:

ԳՈՒՓՐ.— Մեծ Հայրի՛կն է ծիծաղում:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Կեղտե՛ր... Այդ երկուսը կեղծավոր լրտեսներ են... **(Մոտենում է, ձեռքը դնում Բրիկի ուսին):** Բրի՛կ, տը-

զուտ եւ կրցանիկ եմ... Չալա՛կս, եւ երջանիկ եմ, շա՛տ եր-
ասելիկ... (Նրա շունչն հանկարծ կտրվում է: Կծում է վարի
չորանքը, գլուխը երկչոտորեն սեղմում է տղաչի գլխին, հե-
տո շփոթված ու երկմտանքով մոտենում է այն սեղանին, որ-
տեղ բաժակն էր դրել: Խմում է ու այնպես ծամածոռում դեմ-
քը, կարծես աղիքները կտոր-կտոր են լինում: Բրիկը հան-
կարծ հառաչում է ու ճիգով բարձրանում տեղից):

Ինչ ի՞նչ եղավ: Այնպես անհանգիստ ես, ասես, շալվարիդ
մեջ ոչիկ կա: Ինչ-որ բան քեզ անհանգստացնո՞ւմ է:

ԲԲԲԳ — Աս, սր՛բ:

ՄԵՆՈՒՆՅՈՒԲԳ — Հը՞...

ԲԲԲԳ — Ես մի բանի եմ սպասում, բայց այն ուշանում է:

ՄԵՆՈՒՆՅՈՒԲԳ. — Վա՛հ: Ի՞նչն է ուշանում...

ԲԲԲԳ (տխուր). — Կաթկթոցը չի լավում:

ՄԵՆՈՒՆՅՈՒԲԳ. — Ասացիր՝ կաթկթոց՞...

ԲԲԲԳ — Այո:

ՄԵՆՈՒՆՅՈՒԲԳ. — Ի՞նչ կաթկթոց...

ԲԲԲԳ — Ես մի՛նչն գլխիս մեջ կաթկթոց չլսեմ, չեմ հանգստանում:

ՄԵՆՈՒՆՅՈՒԲԳ. — Բահ չհասկացա: Բայց դու ինձ վախեցնում ես:

ԲԲԲԳ — Պե՛, դու անկախ ինձանից է լինում:

ՄԵՆՈՒՆՅՈՒԲԳ — Ի՞նչը:

ԲԲԲԳ — Կաթկթոցը, որ լսում եմ գլխիս մեջ ու հանգստանում:

ՄԵՆՈՒՆՅՈՒԲԳ (ստիպված շատ եմ խմում, որպեսզի հանգստա-
նամ)։ Պեմ տավանում, թե՛ դա ինչպես է կատարվում: Ուղղա-
կից ես կանխեմ ինձանից... Դա նման է... Դա նման է...

ՄԵՆՈՒՆՅՈՒԲԳ — Նման է...

ԲԲԲԳ — Ինչ սրագ կաթկթոցը, որ սկսվում է գլխիս մեջ, շոգ ցե-
րկը դարձնում է զով գիշեր, հետո...

(Նստում է վեր՝ տխուր ծայտալոյ)։ ... այս բոլորին հաջոր-
դում է... բուրբակը...

ՄԵՆՈՒՆՅՈՒԲԳ (գարմանալիտրեն կրկար սույում է: Հետո գնում,
կա՛մ գնում է աղածի քիլանքում, բռնում է նրա ուտերը):

Չի տես Բրիտանո՞ւս... Բրի՛կ, ես մի տրստում, որ դու այդ օրը
կը կեկիր Տրու՛ն, դու — հարբեցող ես...

ԲԲԲԳ — Իրավագի ես, ՄԵՆՈՒՆՅՈՒԲԳ: Ես հարբեցող եմ:

ՄԵՆՈՒՆՅՈՒԲԳ — Չոս — երևում է՝ ես... բոլորովին աչքաթող եմ
արեկ քեզ:

ԲՐԻԿ.— Մինչև գլխիս մեջ չեմ լսում այդ մեղմ կաթկթոցը, չեմ հանգստանում: Սովորաբար ես այն ավելի շուտ էի լսում: Երբեմն պատահում էր՝ կեսօրից էլ շուտ... Բայց... այսօր այն ուշանում է: Երևի զարկերակներիս ավերհողը դեռ բավարար չէ: **(Վերջին ակնարկն անում է աշխույժով՝ բաժակը լցնելիս):**

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Ա՛խ... ա՛խ... Մահը կախվել էր գլխիս ու աշքիս ոչինչ չէր երևում: Ո՞ւմ մտքով կանցնե՞ր, որ իմ հարազատ որդին քթիս տակ հարբեցող կդառնար:

ԲՐԻԿ (բարեհամբույր).— Հիմա քեզ համար ամեն ինչ պարզ է: - Չէ՞ որ քո հիվանդությունը... Չէ՞ որ քո հիվանդության մասին ճիշտ լուրեր են ստացվել:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Այո, այո: Ծիշտ է: Հիմա աչքերս բացվեցին... Իմ հիվանդությունը... պարզվեց...

ԲՐԻԿ.— Դրա համար եմ առում, եթե ինձ թույլ տաս...

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Ո՛չ, թույլ չեմ տա:

ԲՐԻԿ.— ... Ես մեռակ կնստեմ ավերակ, մինչև գլխիս մեջ լսեմ այդ կաթկթոցը: Ծիշտ է, դա ինքնաբերաբար է լինում, բայց մինչև մեռակ չլինեմ... Ես պետք է մեռակ լինեմ կամ ոչ մեռակի հետ չխոսեմ:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Որդի՛, դու շատ ժամանակ ես ունեցել լուռ ու մեռակ լինելու: Բայց հիմա ինձ հետ ես խոսում: Ի վերջո, ե՛ս եմ քեզ հետ խոսում: Նստի՛ր տեղդ ու լսի՛ր այնքան, քանի դեռ չեմ զգուշացրել, որ մեր զրույցն ավարտված է...

ԲՐԻԿ.— Բայց սա էլ մեր նախորդ զրույցների պես է: Իզուր է, իզուր... Դա... դա... տանջալի է, Մե՛ծ Հայրիկ:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Ոչինչ, թող տանջալի լինի: Բայց դու տեղիցդ չշարժվես: Իսկ հենակդ...

(Հենակը շարժում է սենյակի մյուս ծայրը):

ԲՐԻԿ.— Բայց ես կարող եմ ոտքով... Ի մի եթե ընկնեմ՝ սողալով...

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Եթե չես ուզում ինձ լսել, կարող ես սողալով հեռանալ այս ագարակից: Այն ժամանակ, Հիսուսը վկա, դու ստիպված կլինես խմիչքդ մտրալ Սքիդ Ռոուում³⁵՝ հարբեցողների այդ կեղտոտ թաղամասում:

ԲՐԻԿ.— Մի վախեցիր, դրան էլ կհասնեմ:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Չէ՛... Այդ բանը չի լինի: Չե՛մ թողնի... Դու իմ հարազատ զավակն ես... Ես քեզ մարդ կդարձնեմ: Հիմա,

քանի որ ինձ մոտ ամեն ինչ կարգին է, քե՛զ էլ պետք է կարգի բերեմ...

ԲԻԻՎ.— Այո՞...

ՄԵՆՐ ՀԱՅՐԻԿ.— Այո: Որովհետև այսօր «Ծչըսնըր» կլինիկայից գիտե՞ս ինչ լուր ենք ստացել... իմ հիվանդության մասին:

(Նրա դեմքը ցնծությունից շառագունում է): Այդ մեծ հիվանդանոցում, գիտության բոլոր նվաճումների շնորհիվ նրանք բնորոշ ենք պարզել են... որ մեծ աղիքս մի փոքր փայտացած է... Իսկ ես վախից մեռել էի... Ամբողջ նյարդերս բլրկաբախտ եմ... Ասում էի՝ հանկարծ չլինի՞ այդ... կեղտոտ հիվանդություննից...

(Փոքրիկ մի աղջնակ սենյակ է վազում՝ երկու ձեռքի՞ն բեկ-գապահակ կրակներ: Նա ցատկոտում է և խենթացած կապկի պես վերից սենյակից դուրս է փախչում, երբ Մեծ Հայրիկը ապտակում է նրան):

Կուռայուն: Հայր ու որդի նաչում են միմյանց: Մի կին դրսում ուրախ քրքսում է):

Բայց երբ իմացա, որ... երբ կլինիկայից այդ լուրն իմացա, որախապած տրեպա շունչ քաշեցի, որ... Ուսերիցս մի սար գլորվեց Լեիրսերգի"՝ փոթալիկն ի՞նչ էր...

ԲԻԻՎ.— Դու գեա՛ ես ա ռամ գեալ ուղտուկից:

ՄԵՆՐ ՀԱՅՐԻԿ.— Ի՞նչ գեամ Հիստորիայան դուրս մի՛ տուր: Ո՞ր գեամ էրք ուղտուկից գեամ ես, երկար ժամանակով ես գրեամ, որդի՛ — Դեպի դատարկություն: Մարդ-մեքենան ոչնչով ի սարսերվում ձ սկ, թոչուն, օձ կամ միջատ մեքենաներից: Պարզապես շատ սովելի բարդ կառուցվածք ունի: Հա: Ասում էի՝ չիեի՛ աղ նիխանությունն է... Երկիրն օրորվում էր ոտքեզիս տակ: Երկինքն իջնում էր գլխիս կաթասյի սև կափարի խ պես և չի կարողանում շնչել: Իսկ այսօր... այդ կափարիչը բարձրագույն ու ես առաջին անգամ ազատ շունչ քաշեցի... Բա՛նի՛ տարի կլինեք, որ ազատ շունչ չէի քաշել... Տեղ Լեառվա՛ն... Արդեն երեք տարի...

(Դրսում հրավառության տրաքոցներ, ոտնաձայներ: Բրիկը երկար ու մտախոն նաչում է հորը, հետո մի տեսակ վախեցած, ձայն է արձակում քթանցքերով, ցատկոտում է մի ոտքին ու, կահ-կարասիին հեճվելով, կաղալով անցնում է սենյակով, որպեսզի վերջինի հեճակը:

Վերցնում է հեճակը ու տազնապահար դուրս է գալիս պատըշ-
գամբ: Հայրը բռնում է տղայի սպիտակ, մետաքսե ննջազգեստի
թևքից): Հակո՛տ... Քանի դեռ բաց չեմ թողել, կմնաս այստեղ...

ԲՐԻԿ.— Ո՛չ, չեմ կարող մնալ:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Գրո՛ղը տանի... կմնա՛ս... Կմնաս... ախպե՛րս...

ԲՐԻԿ.— Ո՛չ, չե՛մ կարող: Մենք արդեն խոսեցինք... Դու ահա-
գին խոսեցիր, բայց ոչնչի չհասանք, ոչնչի՛... Անընդհատ
նույնը կրկնվում է: Դու ասում ես՝ ուզում եմ հետդ խոսել...

Բայց ամեն անգամ՝ նույնը... ոչ մի կարգին բան չես ասում:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Ուրեմն իմ ասածներս ոչ մի նշանակություն
չունե՞ն... Երբ ասում եմ, թե... ապրելու եմ... Երբ... մինչև
հիմա վախենում էի, թե սող հիվանդությունն է... ու հաշիվ-
ներս մաքրել էի կյանքի հետ...

ԲՐԻԿ.— Ա՛խ, դա՛ ես ուզում ասել... Այդ մասի՞ն ես ուզում խո-
սել...

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Հակո՛տ... Ուրեմն դա ոչ մի նշանակություն
չունի՞ քեզ համար...

ԲՐԻԿ.— Բայց... Դու ասացիր, որ ամեն ինչ պարզ է, դրա հա-
մար ես...

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Իսկ հիմա նստի՛ր տեղդ:

ԲՐԻԿ.— Դու բոլորովին քեզ կորցրել ես... Ինքդ էլ չես հասկա-
նում, թե ինչ ես խոսում:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Ես ինձ բոլորովին չեմ կորցրել և գիտեմ ինչ եմ
խոսում...

ԲՐԻԿ.— Ես ճի՛շտ եմ ասում:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Դո՛ւ... դո՛ւ ես ինձ... խրատում, հարբեցո՛ղ
լակոտ... Դո՛ւ ես ինձ... Նստի՛ր տեղդ, թե չէ թեղ կպոկեմ:

ԲՐԻԿ.— Բայց... Մե՛ծ Հայրիկ...

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Ինչ որ ասում եմ, լսի՛ր: Այս տան տերը դեռ
ես եմ: Դու պետք է գլուխդ մտցնես, որ այս տան տերուտնօ-
րենը ես եմ... և միայն ես կարող եմ կարգադրություններ ա-
նել...

**(Մեծ Մայրիկը ներս է խուժում, իր մեծ, փարթամ ստիճքները
ցնցելով, հետո ձեռքերը սեղմում է կրծքին):**

Իդա՛... Ի՞նչ գրողի ցավ ես կորցրել այստեղ: Դե՛... դո՛ւրս
կորիր:

ՄԵՆՑ ՄԱՅՐԻԿ.— Ա՛խ, Մե՛ժ Հայրիկ... Ինչո՞ւ ես այդպէս գո-
ռում: Ես այլևս չեմ կարող դիմանա՛լ...

ՄԵՐ ՀԱՅՐԻԿ (ձեռնափի հակառակ կողմը ճակատին դնելով).—
Կորիք գրողի ծոցը: (Մեժ Մայրիկը հեկեկալով նորից դուրս
և վազում սենյակից):

ԲՐԻԿ (հանդարտ, տխուր).— Հիսուս Քրիստո՛ս...

ՄԵՆՑ ՀԱՅՐԻԿ (մոլեգնած).— Հա՛... ճիշտ որ... Հիսուս Քրիս-
տո՛ս...

(Բրիկը թևն ազատում է նրանից ու կաղալով դեպի պատըշ-
գամը գնում: Մեժ Հայրիկը Բրիկի թևի տակից քաշում է հեճակը,
և նա րնկնում է կոտրած ծնկի վրա: Ցավագին ճչում է, հետո
նամկում է աթոռը և ընկնում հատակին):

Մտադու խոզի՛ լակոտ...

ԲՐԻԿ — Մե՛ժ Հայրիկ... հեճակս տուր:

(Մեժ Հայրիկը հեճակը նետում է հեռու, որպեսզի Բրիկը չկա-
ռայանա ձեռքը հասցնել): Մե՛ժ Հայրիկ, հեճակս տուր:

ՄԵՆՑ ՀԱՅՐԻԿ. — Եղջո՛ւ ես խմում, խոզի՛ լակոտ:

ԲՐԻԿ — Չդիտեմ: Հեճակս տուր:

ՄԵՆՑ ՀԱՅՐԻԿ — Գե՛, Սիմոն տո՛մ, խոնկը թողնելո՞ւ ես, թե՛ ոչ:

ԲՐԻԿ — Բայց խեղճում եմ, հեճակս տուր, տեղիցս բարձրա-
նան:

ՄԵՆՑ ՀԱՅՐԻԿ — Կասի՛ս խոբոյիս պատասխանվոր: Ինչո՞ւ ես խը-
մում եմ ու ես կանկոյ դեմ շոյրտում... փողոցից գտած ինչ-
որ գրգռիկի բաճի պես...

ԲՐԻԿ (կռնկնելով ծեկնեքին).— Մե՛ժ Հայրիկ, ես հեճկ կոտրած
նոսրիս վրա լնկու. Ախր շատ է ցալում:

ՄԵՐ ՀԱՅՐԻԿ. — Հրաշտի է՛... Ես շատ ուրախ եմ, որ ալկոհո-
լից պես շատ չեմ բթացել ու... Ինչ-որ ցալ դեռ զգում ես...

ԲՐԻԿ — Բայց դու... Թասիկցիք բաժակս...

ՄԵՆՑ ՀԱՅՐԻԿ — Ես քեզ հետ պայման եմ կապում: Մինչև չա-
մեա, խեցու ես խմում, բաժակդ չեմ լցնի: Եթե ասես, ես իմ
ձեռքով բաժակը կլցնեմ ու կտամ քեզ:

ԲՐԻԿ — Ինչու եմ խմում...

ՄԵՐ ՀԱՅՐԻԿ.— Այո: Ինչո՞ւ:

ԲՐԻԿ — Տոք խմեմ, կասեմ:

ՄԵՆՑ ՀԱՅՐԻԿ.— Եսխա՛սաս, հետո:

ԲՐԻԿ. — Ես մի բառով կասեմ:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Ի՞նչ բառով:

ԲՐԻԿ.— Ձգվանքից:

(Ժամացույցը հաճելի դողանջում է: Մեծ Հայրիկը անտարբեր հայացք է գցում ժամացույցին):

Դե, մի բաժակ չե՞ս տալիս խմեմ:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Իսկ ինչի՞ց ես զգվում: Դու պետք է մի բանից զգվես, թե չէ հենց այնպես զգվելը... հիմարությունն է:

ԲՐԻԿ.— Հե՛նակս տուր:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Չլսեցի՞ր ինչ ասացի: Նախ հարցիս պատասխանիր:

ԲՐԻԿ.— Դե ասեցի... Խմում եմ, որ չզգվեմ:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Բայց, ինչի՞ց ես զգվում...

ԲՐԻԿ.— Դրա պատասխանը չեմ խոստացել:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Ասա, ինչից ես զգվում, բաժակդ իմ ձեռքով կլցնեմ:

ԲՐԻԿ.— Դե՛, ես կարող եմ մի ոտքով... ցատկելով պատշգամբ գնալ: Իսկ եթե ընկնեմ, կարող եմ սողալ:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Ուրեմն, այդքան շա՛տ ես ուզում խմել:

ԲՐԻԿ (հեճկելով մահճակալին ու բարձրանալով).— Չափից դուրս...

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Բրի՛կ, եթե թույլ տամ խմես, կասե՛ս ինչից ես զգվում:

ԲՐԻԿ.— Իհարկե, սը՛ր, կփորձենք:

(Ծերունին խմիչք է լցնում ու հանդիսավոր մեկնում բաժակը: Բրիկի խմելու պահին լռություն է տիրում):

Դու երբեք լսե՛լ ես կեղծել բառը:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Իհարկե: Դա հինգ դոլլարանոց այն բառերից է, որ էժանագին դիվանագետներն իրար երեսի են շարտում:

ԲՐԻԿ.— Գիտե՛ս, թե դրա իմաստն ինչ է:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Մի՞թե դա չի ճշանակում ստել, միշտ խաբել... ամեն հարցում խաբել...

ԲՐԻԿ.— Ծիշտ եք, սը՛ր:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Իսկ որևէ մեկը խաբե՛լ է քեզ:

ԵՐԵՒԱՆԵՐ (խմբով, բեմից դուրս).— Մե՛նք Մեծ Հայրիկին ենք ուզում տեսնե՛լ... Մեծ Հայրիկին ենք ուզում տեսնե՛լ...

(Պատշգամբի դռանը երևում է Գուփրը):

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ (մոլեգնած).— Դուրս կորի՛ր, Գո՛ւփր:

ԳՈՒՓՐ.— Ներեցեք: (Մեծ Հայրիկը Գուփրի ետևից աղմուկով ծածկում է դռները):

ՄԵՆՆ ԸԱՅՐԻԿ.— Ո՞վ է քեզ խաբել: Գուցե Մարգրե՞թը: Դե՞...
Նա ինչ-որ հարցում խաբե՞լ է քեզ, որդի՛:

ԲՐԻԿ.— Ո՛չ: Նա՛ ոչ: Ես դա կարող էի տեսնել:

ՄԵՆՆ ԸԱՅՐԻԿ.— Իսկ ո՞վ է խաբում, ի՞նչ հարցում:

ԲՐԻԿ.— Եթե մեկը ստեր...

ՄԵՆՆ ԸԱՅՐԻԿ.— Ուրեմն ինչո՞ւմն է բանը: Դե՞... Աստծո սիրույն,
սասա՛, ի՛նչն է պատճառը, որ այդքան խմում ես:

ԲՐԻԿ.— Անբույժ... ամբողջ հարցը...

ՄԵՆՆ ԸԱՅՐԻԿ.— Ինչո՞ւ ես ճակատդ շփում: Գլուխդ հո չի՞ ցա-
վում

ԲՐԻԿ.— Չ! փարձում եմ...

ՄԵՆՆ ԸԱՅՐԻԿ.— Փորձում ես կենտրոնանալ... Ախր դու... դու ի՞
վե՞տակի չես, որովհետև ուղեդդ բոլորովին լիկել է ալկոհո-
լից. Ախր ուղեդդ լիկել է սպիրտից...

(Երկվի ձեռքից խում է բաժակը): Դու ի՞նչ ես հասկանում
տակրույ ու կեղծկույ Գրո՞նք սասկի, իսկ ես կարող եմ նույ-
նիսկ գիրք գրել այդ մասին: Չե՛ս համարում: Ես կարող եմ
այդ մասին գիրք գրել, բայց այդ գրքով նույնիսկ ստի ծայրը
չեմ կարող թափել: Պատկերասպաս սկի բոլոր կեղծիքները,
դասկա ամբարձր եմ եղել պիմանալ սարսան տարի: Տուցամո-
տորս ես: Մի բե՛ դա նույնպես կեղծիք չի: Պատկերացրու
Մե՛ս Մարգրիկե՛: Նա ամենի օր գոցամոտություն է անում: Ախր

Ախր ես նույնիսկ չեմ կարողացել տանել այդ կնոջ տես-
քը, ձայնը, կոտր . . . Նույնիսկ սչն ժամանակ, երբ խաբել եմ
դասե՛ Բրիկե, ես խաբե՛լ եմ կանոնավոր կերպով... մեքենայի
միտակ սե՛ս: Դե՛ ստի ձեռագրու, բաներ սասա, որ երբեք մըտ-
րակի չեմ անել, չես էլ պատկերացրել... Դե՛ արի ցույց տուր,
որ սկսում ես այդ շան լակոտ Գուփրիկն ու նրա կնոջը՝ Մեյի-
լեն, ցունդիկների թորակների պես ճղճղան նրանց հինգ կա-
պիկներին: . Հիսուս Քրիստո՞ս... Ես զգվում եմ նույնիսկ նը-
րանց տեսիլից: Եկեղեցին... Տե՛ս, չհայած մահու շափ ձանձ-
րատում եմ, բայց գնում եմ... Գնում եմ ու ձևացնում, իբր լը-
սում եմ այդ նիմար տերտերին:

Իսկ այդ բոլոր սկսամբները... Թո՛ւն... Մասուններ³⁷... Թե-
մեր... բոլորը նիմարություն է ու կեղծիք...

(Յավը ստիպում է նրան փորը սեղմել: Մեծ Հայրիկը փլվում է աթոռին: Նրա ձայնը ավելի խոստո ու նվաղկոտ է դառնում): Իսկ դու, չգիտեմ ինչու, բայց իմ դուրը գալիս ես: Մի տեսակ... անկեղծ զգացում եմ ունեցել քո հանդեպ: Այո: Սիրո, հարգանքի... Միշտ... Իմ ամբողջ կյանքում ես մի անկեղծ ուխտ եմ արել... Երազել եմ հաջողակ ազարակատեր լինել: Դա ճշմարտություն է... Չգիտեմ ինչու, բայց այդպես է եղել. ես միշտ ապրել եմ այդ կեղծիքի հետ: Ինչո՞ւ դու էլ չպետք է ապրես: Գրո՞ղը տանի, դու ստիպված պետք է ապրես կեղծիքի ու ստի հետ: Դրանից բացի, էլ ուրիշ ինչի՞ հետ ապրես, երբ շուրջդ միայն կեղծիք է...

ԲՐԻԿ.— Այո, սը՛ր: Բայց... մի բան էլ կա, որի հետ կարելի է ապրել:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Այո՞: Ինչի՞ հետ:

ԲՐԻԿ (բարձրացնելով բաժակը).— Սրա հետ...

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Բայց դա ապրել չէ: Դա նշանակում է ճողոպրել կյանքից:

ԲՐԻԿ.— Իսկ ես ուզում եմ ճողոպրել կյանքից:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Մարդ Աստծո... Ուրեմն ինչո՞ւ ինքնասպանություն չես գործում:

ԲՐԻԿ.— Որովհետև շատ եմ սիրում խմել:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Տեր Աստվա՛ծ... Բրի՛կ, քեզ հետ խոսել չի լինում:

ԲՐԻԿ.— Ներիր ինձ, Մե՛ծ Հայրիկ: Ծատ ափսոս:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Ես քեզ մի բան եմ ուզում ասել, որդի՛... Մի քանի ժամ առաջ, երբ կլինիկայից իմ հիվանդության մասին լուր չէինք ստացել, երբ մտածում էի, թե հերթս եկել է... մյուս աշխարհը գնալու...

(Այս խոսքերը պետք է ասվեն բառերի հոսքով ու կրքոտ):

... Դե, երբ չգիտեի, որ իմ հիվանդությունը քաղցկեղ չէ... պարզապես հաստ աղիքի փայտացում է, քո մասին էի մտածում, որդի՛: Մտածում էի՝ ժառանգությունս ո՞ւմ պիտի թողնեմ, երբ ամեն ինչ գլխիս փուլ գա: Բրիկի՞ն տամ, թե՞ ոչ... Ախր ես ատում եմ Գուփրին ու Մելիին ու գիտեմ, որ նրանք էլ ինձ են ատում: Ես զգվում եմ նաև նրանց հինգ կապիկներից: Դե՛, նրանք էլ փոքրիկ մելիներ ու գուփրներ են... Մըտածում էի՛ տա՛մ, թե՛ չտամ... Չէի կարողանում մի բան որո-

շել: Ես զգվում եմ Գուսրից, նրա հինգ կապիկներից և այդ քաժ Մէշիից: Մտածում էի՝ ինչո՞ւ պետք է իմ քսանութ հազար ակր³⁸ ամենաբերրի հողերը թողնեմ նրանց, ովքեր իմ ժառանգները չեն: Բայց... Բրի՛կ, ճիշտն ասած, մյուս կողմից էլ... մտածում էի՝ ավար իմ ունեցած-չունեցածը, ինչպես կտակեմ մեկին, որի խելքը խմիչքի համար իրենը չի... Չնայած, նրան հավանում եմ կամ նույնիսկ սիրում:

Ինչո՞ւ պետք է այդպես վարվեմ. որ իմ տանը անպրոք դաբերություն ու պոռնկություն՝ ուն սերմանեմ: Մինչև հիմա ես ոչինչ չեմ վճռել: Իսկ հիմա էլ արդեն ստիպված չեմ, որովհետև ճգնաժամն անցել է: Ինձ մնում է սպասել ու տեսնել՝ խելքդ գլուխդ հավաքելո՞ւ ես, թե՞ ոչ:

ԲՐԻԿ.— Ծիշտ ես որոշել, Մե՛ծ Հայրիկ:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Բայց դու այնպես ես խոսում, կարծես, հետդ կատակ ևն անում: Ես չեմ կատակում, լուրջ եմ խոսում:

ԲՐԻԿ.— 'Ին՛, իհարկե, սը՛ր: Ես գիտեմ, որ չեք կատակում:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Բայց իմ ժառանգության հարցը քեզ չի՞ հետաքրքրում:

ԲՐԻԿ (կապալով գնում է դեպի պատշգամբի դուռը).— Ոչ, սը՛ր, բոլորովին չի հետաքրքրում... Ի՛նչ եք կարծում, մի քիչ չնայե եք մեր ծննդատե օրվատե եմբրիոն հրավառությունը... և գետնից վերայ սուր գեփուտը շեշե՛ք: (Նա կանգնում է պատշգամբի դուռն շեմին և այդ պահին գիշերաչին երկինքը լուսավորվում է կանաչ ու ոսկեգույն շոքարձակումներից):

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Բրի՛կ... Սպասիր...

(Նրա ձայնը նվաղում է: Հանկարծ Մեծ Հայրիկի խիստ ու մուսլ էության մեջ քնքշության հասնող ինչ-որ երկչոտություն է նկատվում): Բրի՛կ, որդի՛... այնպես մի արա, որ մեր այս գրույցն էլ մյուսների պես կիսատ մնա... Այն գրույցների պես, երբ ինչ-որ պատճառով հիմար բաների մասին խոսելով, հիմնականը չէինք ասում: Ծիշտն ասած, ինձ միշտ թրվացել է, որ ինչ-որ բան... ինչ-որ բան չենք ուզում իրար ասել: Որովհետև մեզանից ոչ մեկը մյուսի նկատմամբ... այնքան էլ ազնիվ չէ...

ԲՐԻԿ.— Մե՛ծ Հայրիկ, ես ոչ մի անգամ քեզ չեմ խաբել:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Իսկ ե՞ս... խաբե՞լ եմ քեզ:

ԲՐԻԿ.— Ոչ, սը՛ր:

- ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.**— Դե՛... Փա՛ոք Աստծո, մեր տանը գոնե երկու հոգի կան որ իրար չեն խաբել:
- ԲՐԻԿ.**— Բայց մենք ոչ մի անգամ կարգին չենք խոսել իրար հետ:
- ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.**— Հիմա կարող ենք խոսել:
- ԲՐԻԿ.**— Մե՛ծ Հայրիկ, ինձ թվում է... այնքան էլ շատ բան չկա ասելու:
- ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.**— Դու գտնում ես, որ խմելը կեղծիքից փրկվելու միակ միջոցն է, հա՛...:
- ԲՐԻԿ.**— Դու ուզում էիր իմանալ խմելուս պատճառը, ես էլ ասացի:
- ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.**— Բայց... Գրո՛ղր տանի, Բրի՛կ... Խմելուց բացի, ուրիշ միջոց չկա՞ զգվանքը սպանելու: Հը՞...:
- ԲՐԻԿ.**— Առայժմ միայն խմելով... Միայն խմելով, սը՛ր:
- ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.**— Իսկ մի ժամանակ... Հը՛...:
- ԲՐԻԿ.**— Մի ժամանակ, կրք երիտասարդ Լի ու հավատ ունեի, կարծում էի, թե մարդիկ խմում են, որպեսզի մոռանան, որ այլևս երիտասարդ չեն ու հավատ չունեն:
- ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.**— Հավատ չունեն... Ինչի՞՞նչ անտամար...:
- ԲՐԻԿ.**— Հավատի...:
- ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.**— Ինչի՞՞:
- ԲՐԻԿ.**— Հավատի:
- ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.**— Ծիշոն ասած, ես չեմ հասկանում, թե դու ինչի մասին ես խոսում... Երևի ինքդ էլ չգիտես, թե ինչ է հավատը: Բայց եթե դեռ մարդիկ ես, եթե գոնե մի քիչ մարդիկ արյուն կա քո մեջ, նորից կարող ես մեկնաբան դառնալ և...:
- ԲՐԻԿ.**— Ուզում ես նորից նստեմ ապակե արկղի մեջ ու հետևեմ այն խաղերին, որոնց չե՛մ մասնակցում: Այո՞... Մեկնաբանել ֆուտբոլիստների այն հնարները, որ այլևս ի վիճակի չե՛մ կատարելու: Հուզվեմ, գլուխս կորցնեմ, ցույց տամ նրանց վրիպումներն ու սխալները, որոնց ոչնչով չեմ կարող օգնե՛լ: Եվ այդ բոլորին դիմանալու համար, վիսկիին կոկա-կոլա խառնեմ ու խմեմ... Ուշ է, Մե՛ծ Հայրիկ... Ես կշտացել եմ այդ ամենից... Ես ետ եմ ընկել ժամանակից... Այն ինձանից ավելի շուտ է վերջնագծին հասել:
- ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.**— Ես տեսնում եմ, որ դու խոսքը կտուրն ես գրում:

ԲՐԻԿ.— Դու շա՛տ հարբեցողների ես ճանաչում:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ (թեթևակի քմծիծաղ տալով).— Հա, իհարկե: Ծա-
տերի՛ն գիտեմ:

ԲՐԻԿ.— Իսկ նրանցից մեկնումեկը կարո՞ղ է քեզ ասել, թե ինչու
է հարբում:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Այո... դու խոսքը կտուրն ես գցում: Ինչպես քիչ
ստաւշ, երբ ասում էիր, թե խմում ես, որ չզգվես մարդկանց
ասելից: Հիմարություն՛ն... Գրո՞ղը տանի, քո ասածներն ին-
ժբումն տոկոսով կասկածելի են: Եթե շարունակես, մնացած-
ներին էլ չեմ հավատա:

ԲՐԻԿ.— Ի՞նչ է, պարտավոր եմ ինչ-որ պատճառ ցույց տալ, որ
ինձ վիսկի տա՞ս:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Բրի՛կ, որդի՛, դու սկսեցիր խմել այն օրից, երբ
բռնեցի՛ր Սքիփը մեռավ:

(Հինգ վաշիկանի չափ լուրջուն: Հետո Բրիկն անհանգիստ
շարժում է անում և հենակը վերցնում):

ԲՐԻԿ — Կրտսեմ ի նչ ես ուզում ասել:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ — Ինչո՞նչ:

(Բրիկը, հենակը թնկթնկաօցնելով, հապշտապ քարշ է գա-
լիս, խոտափելով մութ ուշադիր, սեևումն հաչացքից):

Ըսող Գալիբե ու Մեգիե . կրտսե կալածիրով քո և Սքիփի
մի ժե . ինչ որ բան է եղել... ինչ-որ հիվանդագին բան...

ԲՐԻԿ (կտեղնելով այնպես, կարծես սեղմել են պատին).— Իմ
ու Սքիփի միջև ի նչ...

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Դե... ճիշտն ասած... քո և Սքիփի մտերմու-
թյան մեջ ինչ-որ աննորմալ բան կար...

ԲՐԻԿ. — Ա՛խ, այո՛... ուրեմն նրա՞նք էլ են այդպես մտածում:
Իսկ ես կարծում էի միայն Մեգգին է...

Բրիկի անտարբերությունն, ի վերջո, տեղի է տալիս: Նրա
սիրտը սկսում է բաբախել, ճակատը քրտնում է, շնչառությունն
ավելի է արագանում, ձայնը խռպոտում է:

Հիմա նրանք երկուսն էլ, ըստ որում Հայրիկը ամաչելով,
տանջահար, իսկ Բրիկն անգուսպ կրքոտությամբ, քննարկում են
անհնարին, անթույլատրելի մի բան՝ որ Սքիփը մեռել է, որպես-
զի Բրիկին ու իրեն զերծ պահի կասկածանքներից ու բամբա-
սանքից: Գուցե այն փաստը, որ եթե նման կասկածի համար հիմք
լիներ, նրանք կժխտեին այդ, որպեսզի «պահպանեն իրենց դեմ-

քը» շրջապատող աշխարհում, ընկած է այն «կեղծիքի» հիմնահիմքում, որի նկատմամբ ունեցած իր զգվանքը Բրիկը ուզում է խեղդել վիսկու մեջ: Հնարավոր է, որ հենց դա է նրա անկման գլխավոր պատճառը: Իսկ գուցե Բրիկի համար դա հենց այն «կեղծիքի» դրսևորումներից միայն մեկն է, ընդ որում, ոչ ամենակարևորը: Պիեսի նպատակը մի մարդու հոգեբանական պրոբլեմի լուծումը չէ:

Ես իմ առջև բոլորովին այլ խնդիր եմ դնում՝ փորձել որսալ, ինչպես ցանցով թռչուն են որսում, մի խումբ մարդկանց փոխհարաբերությունների բնույթը, ընդհանուր ճգնաժամի ամպրոպաբեր ամպերից լիցքավորված մարդկանց ապրումների տազնապալից, սարսռուն, երերուն խաղը: Բացահայտելով պիեսի գործող անձի բնավորությունը, պետք է որոշ բան թուզել չսսված, գաղտնի, որովհետև կյանքում ոչ մի բնավորություն, ոչ մի էություն լիովին չի բացահայտվում:

Այս հանգամանքը դրամատուրգին չի ազատում օրինաչափ հստակությամբ ու մանրագնին դիտելու և ուսումնասիրելու պարտականությունից, բայց նա պետք է խուսափի «արտոնագրված» եզրակացություններից, մակերեսային մեկնաբանություններից, որոնք պիեսը սուսկ պիես են դարձնում և ոչ թե թակարդ, որը կոչված է որսալու մարդկային կյանքի կենդանի ճշմարտությունը:

Հաջորդ պատկերը պետք է խաղացվի մեծ լարվածությամբ և գսպված ուժով, որին պետք է գումարվի այն ամենը, ինչ մընում է չսսված:

Իսկ... ձեզանից բացի ուրիշ էլ ո՞վ է կասկածում: Հը՞... քանի՞ հոգի գիտեն, որ Սքիփրն ու ես եղել ենք...

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ (հանգիստ).— Մի բուպե... մի բուպե սպասիր, որդի՛: Ջահել ժամանակ ես անընդհատ դեսուդեն եմ թափառել... ամբողջ երկրով մեկ...

ԲՐԻԿ.— Բայց դա ի՞նչ կապ ունի...

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Ասացի՛ մի բուպե սպասիր... Ես թափառել եմ, թափառել ամբողջ երկրով մեկ, մինչև դարձա...

ԲՐԻԿ.— Ուրիշ էլ ո՞վ է կասկածում ինձ ու Սքիփրին:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Քնում էի թափառաշրջիկների օթևանատներում, երկաթուղային քանդած տնակներում... որ ժամանակին փրկության բանակինն էին եղել, ամենահետին հյուրանոցների կեղտոտ համարներում, մինչև դարձա...

ՔՐԻԿ.— Դու էլ ես կասկածում, դու էլ... Դրա համար ես ինձ «իմ այլատրված որդի» անվանում: Թերևս, այդ պատճառով էլ ինձ ու Մեգգիին այդ երկու պատավ «քույրիկների»՝ Ջեյ Սթրոուսի ու Փիթր Օչելլոյի սենյակում տեղավորեցիր... այս երկուտուսուց մահճակալին, որի վրա էլ երկուսը մեռան...

ՄԵՆՍ ՀԱՅՐԻԿ.— Դե... նրանց հասցեին բան չասես...

(Հանկարծ պատշգամբի դռների մեջ երևում է Պատվելի Թուկրր, գլուխը աննպատակ ցցած, կդերականներից հատուկ շինծու ժպտը դեմքին՝ որսորդի՝ թռչուններից գայթակղելու սուղոցի պես անկեղծ, բարեպաշտ կեցվածքով, առօրյա կեղծավորությամբ:

Մեճ Հայրիկը դժգոհությամբ հոգոց է հանում, երբ երևում է Թուկրր):

Ի՞նչ ես փնտրում, տերտե՛ր...

ՊԱՏՎԵԼԻ ԹՈՒԿՐ.— Տղամարդկանց զուգարանը: Հի՛-հի՛-հի՛-նի

ՄԵՆՍ ՀԱՅՐԻԿ (շինծու քաղաքավարությամբ).— Նորից գնացեք մին ես պատշգամբի վերջը, Պատվելի՛ Թուկր և մտեք իմ նրն-սասնետակիտ կտրած զուգարանը. Եթե չգտնեք, գրո՛ղը տանի, որևէ մեկիտ մտրցրեք տեղը...

ՊԱՏՎԵԼԻ ԹՈՒԿՐ.— Ա՛ն, ժայռակոտորածան: (Նա դուրս է գր-նում գոնեմակ ժպտալով):

ՄԵՆՍ ՀԱՅՐԻԿ.— Չե՛ս թողնում, որ գտնե իր տանը մարդ ազատ խոսի

ԹՈՒԿՐ.— Ա՛ն բեզ սպա՛նը...

ՄԵՆՍ ՀԱՅՐԻԿ (ընդհատելով Բրիկին, որն ուզում է շարունա-կել).— Մինչև 1910 թիվը գլխովս շատ բաներ անցան: Ծա-տերիտե ճանաչեցի: Հիսուս Քրիստո՛ս, չափից դուրս թափա-տկուց այդ տարի պարտքով վերցրած կոշիկներս բոլորովին մաշվեց էին: Իսկ մի օր, կես մղոն անցնելուց հետո թո՛ւ շուն տեղավոխող դեղին բեռնատարից ու քնեցի բամբակի վագո-տան: Հենց այդ տարին էլ Ջեյ Սթրոուն ու Փիթր Օչելլոն ինձ օթևան տվին: Նրանք ինձ վերակացու նշանակեցին այս ա-զարանում, որը տեսնում ես, թե ինչ է դարձել: Հետո, երբ Ջեյ Սթրոուն մեռավ... ծերուկ Փիթր Օչելլոն սկսեց ծոմ պա-սել... ինչպես շներն են վարվում, երբ նրանց տերը մեռնում է. Խեղճն այնքան ժամանակ հաց չկերավ, մինչև ինքն էլ մեռավ...

ԲՐԻԿ.— Հիսուս Քրիստո՞ւ...

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Ուզում եմ ասել, որ ինձ ծանոթ են այնպիսի...

ԲՐԻԿ (կոպտորեն).— Սքիփըը մեռած է, իսկ ես... ծոմ չե՛մ պահում... Հա՛...

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Չէ՛: Բայց դու նրա մահվանից հետո սկսեցիր խմել:

(Բրիկը պտտվում է հենակի՞ն ու գոռալով բաժակը շարտում է):

ԲՐԻԿ.— Դո՞ւ էլ ես կասկածո՞ւմ...

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Սը՛ւ... (Պատշգամքից ոտնաձայներ են լսվում: Կանացի քրքոց: Մեծ Հայրիկը մոտենում է պատշգամքի դռանը):

Հեռացե՛ք... Պարզապես բաժակը կոտրվեց:

(Բրիկը բոլորովին փոխվել է. այդպես հանդարտ լեռն է փոխվում՝ հանկարծակի կրակե բոցեր արձակելով):

ԲՐԻԿ.— Դո՞ւ էլ ես այդպես կարծում, հա՛... Կարծում ես Սքիփրն ու ես... Սքիփրն ու ես... միասին... արվամուլություն ենք արել...

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Լո՛ի՛ր...

ԲՐԻԿ.— Դրա համա՞ր ես դու...

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Դե մի բույե լո՛ի՛ր...

ԲՐԻԿ.— Կարծում ես Սքիփրի ու իմ միջև կեղտոտ բա՛ն է եղել:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Ինչո՞ւ ես ձայնդ բարձրացնում: Ինչո՞ւ ես...

ԲՐԻԿ.— Դո՞ւ էլ Սքիփրի մասին այդ կարծիքին ես:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— այդպես հուզվում: Ես ոչ մի կարծիք էլ չունեմ:

Պարզապես քեզ ասում ե՛մ, որ...

ԲՐԻԿ.— Կարծում ես, Սքիփրն ու ես էլ այդ երկու կեղտոտ ծերունիների պե՛ս ենք եղել:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Դե՛, դա սրդեն...

ԲՐԻԿ.— Այդ Սթրոտի ու Օչելլոյի պե՛ս: Այդ երկու... արվամուլների՞... Այդ...

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Դե մի բույե լո՛ի՛ր...

ԲՐԻԿ.— Կեղտոտ գույգի պե՛ս: Ուրեմն դո՞ւ էլ...

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Լո՛ի՛ր...

ԲՐԻԿ.— ես այդպես կարծում...

(Բրիկը կորցնում է հավասարակշռությունն ու ընկնում է ծրնկ-)

Անրին՝ ձևացնելով, իբր, ցավ չի զգում: Հենվում է մահճակալին ու բարձրանում տեղից):

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Հիսուս Քրիստո՛ս... Թո՛ւհ... Ձեռքդ տուր... բարձրացիր:

ԲՐԻԿ.— Չէ՛, քո ձեռքն ինձ պետք չէ:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Իսկ քոնն ինձ պետք է: Դե՛, բարձրացիր...

(Մեծ Հայրիկը բարձրացնում է տղային՝ սիրալիք գրկելով նրան): Քրտինքի մեջ կորել ես, որդի՛: Այնպես ծանր ես շընչում, կարծես, վազել ես, որ մեկի առաջը կտրես...

ԲՐԻԿ (պոկվելով հոր գրկից).— Դու վիրավորում ես ինձ, Մե՛ծ Հայրիկ: Դու... դու վիրավորում ես ինձ, այդպես անտարբեր խոսելով մի հարցի մասին, որ... (Հեռանում է հորից):

Մի՛թե չես հասկանում, թե մարդիկ ինչքան վատ են զգում, երբ իրենց հասցեին... Մի՛թե չես հասկանում, թե որքան են վիրավորվում... Երբ Միսսիսիպիի համալսարանում լսեցինք, թե ինչպես մի տղա, որ Սքիփրի հետ ուսանողական եղբայրության անդամ էր, փորձել էր հակաբնական, կեղտոտ բան անել...

Գիտե՛ս ինչ արեցինք նրան: Ստիպեցինք, որ մաքրվի համալսարանից: Նա հեռացավ... Աս ստիպված փախավ...

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Ո՛ր...

ԲՐԻԿ.— Վերջերս լսեցի Հյուսիսային Աֆրիկայում է:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Իսկ ես ավելի հեռվից եմ վերադարձել: Ես քիչ առաջ եմ եկել լուսնի մյուս կողմից... մեռյալների երկրից... դրա համար էլ ինձ դժվար է վախեցնել...

(Նա քայլում է բեմով՝ նայելով հանդիսասրահի կողմը):

Մի խոսքով, իմ շուրջը միշտ էլ այնքան տարածություն է եղել, որ կարող էի սալել իմ շնորհիքով, սուսնց ուրիշների մտքերով վարակվելու: Իմ լայնարձակ պլանտացիաներում կարելի է բամբակից ավելի կարևոր բան անեցնել... Համբերություն՛ն... Իսկ ես անեցրել եմ այդ համբերությունը...

(Շրջվում է Բրիկի կողմը):

ԲՐԻԿ.— Ի՞նչ է, չի կարող... անսովոր մտերմություն լինել երկու տղամարդկանց միջև. իսկական, խոր, խոր բարեկամություն, որ հիմնված է հարգանքի ու ինչ-որ մաքուր, ազնիվ զգացումի վրա, սուսնց որևէ...

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Տե՛ր Աստվա՛ծ... իհարկե կարող է:

ՔՐԻԿ.— ... արվամոլության կասկածի:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Ես Մեյիին ու Գուփրին ասացի, որ...

ՔՐԻԿ.— Մեյին ու Գուփրը կեղտի սառնարաններ են... ուր կեղտոտ ստեր են պահում, որպեսզի չփչանան: Իմ ու Սքիփրի միջև մաքուր ու ճշմարիտ մի բան կար... մեր ընկերությունը միշտ մաքուր է եղել այնքան ժամանակ, քանի դեռ Մեզգիի գլուխը չմտավ այն միտքը... այն կեղտոտ կասկածանքը, որի մասին հիմա խոսում ես: Մեր ընկերությունն այնքան հազվագյուտ էր, որ չէր կարող նորմալ թվալ: Երբ երկու մարդկանց միջև որևէ մաքուր զգացում է լինում, հազվադեպ է պատահում, որ այն նորմալ ընթանա: Ա՛հ, հաճախ նա ձեռքը ուսիս էր դնում, կամ ես էի... Գուցե մեր ընկերությունն անսովոր էր նաև այն պատճառով, որ մրցամարտից հետո, հյուրանոցի սենյակում քնելուց առաջ, ձեռքներս հասցնում էինք իրար ու բարի գիշեր մաղթում: Հա... իսկ մի երկու անգամ մենք...

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Բրի՛կ, բայց ոչ մեկն էլ ձեր ընկերությունը... ոչ մեկն էլ ձեր արածը աննորմալ բան չի համարում:

ՔՐԻԿ.— Ուրեմն սխալվում են... Ես ու Սքիփրը այնքան մաքուր ու ազնիվ ընկերներ էինք, որ նորմալ չի կարելի համարել:

(Երկար ժամանակ երկուսով նայում են ուղիղ իրար աչքերի մեջ: Այդ լարվածությունը թուլանում է ու, կարծես ձանձրանալով, երկուսն էլ գլուխները կախում են):

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Հա, իրոք որ... խոսելը շատ է դժվար...

ՔՐԻԿ.— Իհարկե, սը՛ր: Դրա համար էլ ասում եմ՝ արի վերջացնենք:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Իսկ ինչո՞ւ Սքիփրը շարքից դուրս եկավ: Ինչո՞ւ դու հարբեցող դարձար:

(Բրիկը նորից նայում է հորը: Նա հոգու խորքում ակամա, արդեն վերջնականորեն որոշել էր հորը հայտնել, որ նա մեռնում է քաղցկեղից: Մի բան, որը թեև ամենախիստ վիճաբանության պահին կարող էր անթույլատրելի պատասխան լինել, բայց մյուս կողմից Բրիկը դրանով կկարողանար հաշիվները փակել հոր հետ):

ՔՐԻԿ (չարացած).— Ծատ լավ: Ծատ լավ է Մեծ Հայրիկ, որ դու ես այդ մասին հարցնում: Վերջապես մենք կարող ենք քո ուզած... անկեղծ խոսակցությունն սկսել: Հրաժարվելու հա-

մար արդեն շատ ուշ է, որովհետև ստիպված պետք է յուրաքանչյուր մանրուք բացատրենք:

(Կաղալով, նորից ետ է գնում խմիչքների պահարանի մոտ: Բացում է սառույցի կաղապարը, վերցնում արծաթե ունելին, սքանչանում դրա փայլով):

Մեզգին հայտարարում է, իբր ես ու Սքիփը Միսսիսիպի համալսարանից հետո դարձանք պրոֆեսիոնալ ֆուտբոլիստներ միայն այն պատճառով, որպէսզի միշտ միասին լինենք, որ մենք վախենում էինք չափահաս լինելուց...

(Քայլում է բեմում, ոտքը քարշ տալով ու հենակը թխկթղկկացնելով: Խոսում է Մեզգիի պես՝ երգեցիկ ձայնով: Ընկճված տեսք ունի, ողբերգականորեն հրապուրիչ հայացքը սևեռուն է. նման է այն մարդուն, որը միայն ճշմարտությունն է ասում և դրանով գերում հանդիսատեսին):

Դե, ուզում էինք նորից շարունակել մեր փոխանցումները, այդ երկա՛ր-երկա՛ր, բա՛րձր-բա՛րձր փոխանցումները, որ ոչ մի հակառակորդ չէր կարողանում խափանել... մեր հոշակավոր «օդային» հարձակումները... Հետո... այդ ամառ Մեզգին հարցը կտրուկ դրեց: Ասաց՝ կամ հիմա պետք է ամուսնանանք, կամ՝ երբեք... Եվ ես ամուսնացա...

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Իսկ ինչպե՞ս էր Մեզգին... անկողնում:

ԲՐԻԿ (դժկամորեն).— Հրաշալի էր... Նմանը չէիր գտնի...

(Մեծ Հայրիկը գլխով է անում. կարծես, նախօրոք գիտեր այդ մասին): Այդ աշնան վերջերին Մեզգին «Դիքսի Սթարզ» թիմի հետ մրցումների գնաց: Նա իր զուգընկերոջ հետ հրաշալի շոու³⁹ արեց. աշխարհի լավագույն ֆուտբոլիստների շոուն... Ուղղակի ապշեցուցիչ էր... Մեզգին արջի կաշվից կարած բարձր գլխարկն էր դրել, որը մենք կիվեր՝ զինվորական գրլխարկ ենք անվանում: Հագել էր կզաքիսի մորթուց կարմիր բաճկոնը... Խելքին ինչ փչեր անում էր... Ի նշան մեր հաղթանակի, նախօրոք, հյուրանոցներում պարերեկույթի սրահներ էր վարձել և մտքով իսկ չէր անցնում չեղյալ հայտարարել պատվերը... երբ մեր թիմը պարտվեց... Մեզգի կատուն... Հա՛-հա՛-հա՛...

(Մեծ Հայրիկը գլխով է անում):

Մյուս կողմից էլ Սքիփը... նա ինչ-որ տեղ ուներ, որ բը-

ժիշկները չէին կարողանում ախտորոշել, իսկ ես վնասվածք ստացա... Դե, լուրջ բան չկար: Ռենտգենյան ուրվանկարը բուրսիտ⁴⁰ ցույց տվեց... Մեր խաղը նայեցի հեռուստատեսությամբ, հիվանդանոցի մահճակալին պառկած ու տեսա Մեզգֆին՝ Սքիփրի կողքին. Սքիփրին խաղից հանել էին՝ կանոնները խախտելու և թույլ խաղալու համար... Խանդից վառվում էի, երբ Մեզգֆին սեղմում էր Սքիփրի ձեռքը, սեղմվում էր նրան... Գիտե՞ս, իմ կարծիքով Մեզգֆին մի տեսակ իրեն լըքված է զգացել և երբեք էլ մտերիմ չի եղել ինձ հետ... Դե՛, ճիշտն ասած, մենք բացի անկողնուց, ուրիշ ոչ մի տեղ մտերիմ չենք եղել... Իսկ դա նման է ցանկապատին նստած երկու կատուների մտերմությանը...

Մեզգֆին այս անգամ սկսեց խեղճ Սքիփրին խելքից հանել: Դու լավ գիտես, Սքիփրն ընդամենը միջակ ուսանող էր քոլեջում: Մեզգֆին նրա գլուխն այն կեղտոտ, սուտ միտքը մտցրեց, թե մենք՝ ես ու Սքիփրն էլ այն պատավ արվամուկների՝ Ջեկ Սթրոուի ու Փիթր Օշելլոյի պես ենք իրար հետ... Որ մեր ընկերությունը ուղղակի տենչանքի արդյունք է: Իսկ խեղճ Սքիփրը, որպեսզի ապացուցի, որ դա սուտ բամբասանք է, պառկում է Մեզգֆիի հետ... իսկ երբ այդ պառկելուց բան դուրս չի գալիս, խեղճը կարծում է Մեզգֆիի ասածները ճիշտ են... Այդ օրվանից Սքիփրը իրեն կորցրեց, երկու կտոր եղավ փտած փայտի պես... Երբեք չէի տեսել, որ մարդ այդքան շուտ... հարբեցող դառնար ու արագ մեռներ...

Հիմա գո՞հ ես, Մե՛ծ Հայրիկ:

(Բրիկի խոսելու պահին Մեծ Հայրիկը մտովի առանձնացնում է էականը երկրորդականից: Հիմա նայում է որդուն):

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Իսկ դու գո՞հ ես:

ԲՐԻԿ.— Ինչի՞ց գոհ լինեմ:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Քո կիսատ-պոատ, հիմար պատմությունից:

ԲՐԻԿ.— Ինչո՞ւ էին իմ ասածները հիմարություն... կիսատ-պոատ:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Որովհետև չես ասում այն ամենը, ինչ եղել է, լրիվ չես պատմում: Ի՞նչը բաց թողեցիր... հիշո՞ւմ ես:

(Միջանցքից հեռախոսազանգ է լսվում: Բրիկը, կարծես ինչոր բան հիշելով, նայում է այնտեղ ու ասում):

ԲՐԻԿ.— Հա... Սքիփրը միջքաղաքային հեռախոսով զանգ տվեց

ինձ ու քանի որ հուզված էր, սկսեց խոստովանել... Իսկ ես լսափողը դրեցի: Դա մեր վերջին խոսակցությունը եղավ...

(Հեռախոսագանգը խլանում է, երբ ինչ-որ մեկը պատասխանում է հանգիստ ու պարզորոշ ձայնով):

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Ուրեմն լսափողը դո՞ւ դրեցիր:

ԲՐԻԿ.— Հիսուս Քրիստոսը վկա... ախր...

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Այնուամենայնիվ, մենք պարզեցինք այն կեղծիքը, որից զզվում ես ու հարբում: Մինչև հիմա դու խոսքը կտուրն էիր գցում: Դու ոչ թե կեղծիքից, այլ ինքդ քեզանից ես զզվում: Դու... գերեզման ես փորել ընկերոջդ համար, նրան հրել-գցել ես փոսը... փոխանակ միասին ճշմարտության երեսին նայելու...

ԲՐԻԿ.— Ես պետք է նրա ճշմարտությունն ասեի, ոչ թե իմը:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Ծատ լավ: Թող նրա ճշմարտությունը լինի: Բայց դու ճշմարտության երեսին չես նայել...

ԲՐԻԿ.— Իսկ ո՞վ կարող է դիմանալ ճշմարտության հայացքին:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Դե՛... նորից խոսքդ կտուրը մի գցիր, որդի՛:

ԲՐԻԿ.— Կարո՞ղ ես ասել, թե ինչ են նշանակում այս բոլոր շքանորհավորանքները... Մեծ Հայրի՛կ, քո ծննդյան տարեդարձին նվրիված այս բոլոր մաղթանքները... Բոլորը քեզ քաջատողջություն են մաղթում, երկար տարիների կյանք են ցանկանում, մինչդեռ բոլորը, բացի քեզանից, գիտեն որ դու ոչ մի... որ դա... լինելու բան չէ...

(Ես, ով խոսում է հեռախոսով, բարձր, սուր քրքջում է: Հետո այդ ձայնը դառնում է պարզորոշ ու լսելի: «Ձե, չե, դու սխալ ես հասկացել: Հա... ասում եմ, սկզբից մինչև վերջ սխալ ես հասկացել... Այո, հիմա՞ր ես, ինչ է»:

Բրիկը հանկարծ շնչասպառ է լինում՝ գլխի ընկնելով, որ բացահայտել է վտանգավոր գաղտնիքը: Կաղալով մի քանի քայլ է անում, հետո սահմռկում է ու առանց հոր աչքայված դեմքին նայելու, ասում է):

Դե լավ, արի դուրս գանք ու...

(Մեծ Հայրիկը հանկարծ առաջ է գալիս, ճանկում է տղայի հենակը, կարծես այն զենք լինի, որի համար մաքառում են):

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Ձե՛, չեմ թողնի: Ոչ մեկս էլ դուրս չի գալու: Քիչ առաջ ինչ ասացիր, հը՞...

ԲՐԻԿ.— Ձեմ հիշում:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ. — Հիշեցնեմ: Դու ասացիր, «ինչ են նշանակում քաջատողջության այս մաղթանքները, երբ բոլորը, բացի քեզանից, գիտեն, որ դա լինելու բան չէ»:

ԲՐԻԿ.— Գրո'ղը տանի... Մոռացիր այդ ամենը, Մե'ծ Հայրիկ, մոռացիր դրանք: Արի պատշգամբ դուրս գանք ու նայենք քո ծննդյան տարեդարձին նվիրված հրավառությունը:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Նախ ասելիքդ վերջացրու: Դու ասացիր. «ինչ են նշանակում քառաջողջության այս մաղթանքները, երբ բոլորը, բացի քեզանից, գիտեն, որ դա լինելու բան չէ»: Այդպես չասացի՞ր...

ԲՐԻԿ.— Լսիր, Մե'ծ Հայրիկ: Ես կարող եմ սուսնց այդ հեճակի էլ յուր գնալ... Տարզանի պես կահույքից կախվելով... Բայց եթե հեճակով քայլեմ, կահույքի համար շատ օգտակար կլինի:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Ասա՛ վերջացրու... Քիչ առաջ ի՞նչ ասացիր: (Մեծ Հայրիկի ետևում՝ երկնքի կանաչ ֆոնին, կանաչ հրավառություն):

ԲՐԻԿ (ծծելով բաժակի միջի սառցաբեկերը: Նրա ձայնը խռպտում է).— ... Ասում եմ քո ազարակը Գուփրին ու Մելիին, նրանց հինգ կապիկներին թող: Ես դա էի ուզում ասել:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Դու ասացիր՝ ազարակը թող: Հա՛: Ծի՛շտ լսեցի:

ԲՐԻԿ (աճորոշ).— Քո այդ քսանութ հազար ակր բարեբեր հողերը:

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Իսկ ո՞վ ասաց, որ թողնելու եմ իմ ազարակը... Գուփրին կամ որևէ մեկին: Սա դեռ իմ վաթսուներեց ամյակն է... Ես դեռ տասներեց, քսան տարի էլ պիտի ապրեմ: Ես քեզանից շատ եմ ապրելու, Բրի՛կ... Ես քեզ թաղելու եմ, Բրի՛կ ու ստիպված ահագին փող պիտի ծախսեմ դազաղ առնելու համար...

ԲՐԻԿ.— Իհարկե, սը՛ր: Կեցցես: Դե արի, արի, գնանք քո ծընընդյան տարեդարձին նվիրված հրավառությունը նայենք... Արի՛...

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Ուրեմն նրանք ստում էին, հա՛, ստո՛ւմ էին: Ուրեմն կլինիկայից ստացված լուրը սո՛ւտ էր... Բժիշկները ինչ-որ... ինչ-որ բա՛ն են գտել: Ես քաղցկե՛ղ եմ, հա՛...

ԲՐԻԿ.— Կեղծիքն ու սուտը մի համակարգ է, որի մեջ ապրում

ենք: Դրանից ազատվելու մի ձևը հարբելն է, մյուսը՝ մեռնելը...

(Նա Մեծ Հայրիկի թուլացած մատների միջից վերցնում է ճենակը, կաղալով դուրս է գալիս պատշգամբ՝ դռները բաց թողնելով):

Լսվում է «վերցրու բամբակի պարկը» երգը):

ՄԵՅԻ (երևալով դռան մեջ).— Մե՛ծ Հայրիկ, մշակները ձեր կենացին են երգում...

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ (խռպոտ աղաղակելով).— Բրի՛կ... Բրի՛կ...

ՄԵՅԻ.— Նա էլի խմելով է զբաղված...

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ.— Բրի՛կ...

(Մեյին վախեցած ետ է ընկրկում: Երեխաները, նմանակելով Մեծ Հայրիկին, իրենք էլ են կանչում Բրիկին: Մեծ Հայրիկի դեմքը կնճռոտում է պատի դեղին ծեփի պես, որը՝ ուր որ է պիտի ընկնի ու փշրվի: Երկինքը շառագունում է: Բրիկը կաղալով վերադառնում է, տխուր ու միանգամայն լրջացած նաչում է հորը):

ԲՐԻԿ.— Կներես, Մե՛ծ Հայրիկ: Գլուխս արդեն կարգին չի աշխատում, դրա համար էլ դժվար եմ հասկանում, թե որքան մեծ նշանակություն ունի մարդու համար արդյոք նա ապրե՞լ է, մահացե՞լ է, թե՞ մահանում է, կամ ընդհանրապես ինչ է եղել: Ինձ միայն հետաքրքրում է շժի մեջ դեռ վիսկի մնացե՞լ է, թե՞ ոչ... բնականաբար, ինչ-որ ստել եմ, առանց մըտածելու եմ ստել... Իմ ասածները խմած մարդու... Դե, որ ճիշտը խոսենք, ես մյուսներից լավը չեմ, իսկ որոշ հարցերում նրանցից ավելի վատն եմ, որովհետև մի քիչ... շմամ եմ: Երևի մյուսները կարողանում են ստել... քանի որ աշխույժ են ու ճարպիկ... իսկ ես... անկախ ինձանից ճիշտ բաներ եմ ասում: Ես միայն մի բան հաստատ գիտեմ, ես ու դու, Մե՛ծ Հայրիկ, բոլոր դեպքերում բարեկամներ ենք եղել... Եվ բարեկամներ լինելով է, որ իրար ճշմարտությունն ենք ասում... (Լռություն):

Դու իմ երեսին ճշմարտությունն ասացիր, ես էլ՝ քո...

(Մի երեխա սենյակ է խուժում, ճանկում է հրթիռների ձողերն ու նորից դուրս վազում):

ԵՐԵԽԱ (աղաղակելով).— Բա՛նգ, բա՛նգ, բա՛նգ, բա՛նգ...

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ (կամացուկ ու դյուրագրգիռ).— Հիսուս Քրիստո՛ս... Բոլորը կեղտոտ ստախոսներ են... Բոլորը կեղտոտ

ստախոս, պոռնիկի լակոտներ են...

(Ի վերջո ուղղվում է ու մոտենում ներսի դռանը: Շեմին կանգնելով, շրջվում է, կարծես, ինչ-որ հարց ունի, որ հուսահատությունից բառերով չի կարողանում արտահայտել: Հետո մտասույզ գլխով է անում ու խռպոտ ձայնով ասում):

Հա՛, բոլորը ստախոսներ են: Բոլորը... ստախոսներ են... սրտախոսներ...

(Սա ասվում է շատ դանդաղ, անգուսպ զգվանքով: Դուրս է գնում՝ շարունակելով կրկնել): Ստախոսներ... Կեղտոտ խաբերաններ...

Նրա ձայնը խլանում է: Երեխայի լացի ձայն է լսվում: Նրան ապտակել են ու հիմա լաց է լինում: Երեխան, սուկայի աղաղակելով, ներս է խուժում ու դուրս գալիս միջանցքի դռնից: Բրիկը մնում է անշարժ, երբ լույսերը մարում են և վարագույրն իջնում է:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՐՐՈՐԴ

Ժամանակը նույնն է:

Ներս է մտնում Մեյին՝ Պատվելի Թուկրի հետ:

ՄԵՅԻ.— Որտե՞ղ է Մեժ Հայրիկը... Հայրի՛կ...

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ (Ներս մտնելով).— Այդ հրթիռների ծխահոսից ստամոքսս ցավեց... Իսկ ո՞ր է Մեժ Հայրիկը:

ՄԵՅԻ.— Ես էլ դա եմ հարցնում: Ո՞ր է Մեժ Հայրիկը:

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Երևի գնացել է քնելու... Հոգևած էր...

(Ներս է մտնում Գուփրը):

ԳՈՒՓՐ.— Իսկ որտե՞ղ է Մեժ Հայրիկը:

ՄԵՅԻ.— Մենք էլ չգիտենք, թե ուր է կորել:

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Երևի գնացել է քնելու:

ԳՈՒՓՐ.— Դե, ուրեմն կարող ենք խոսել:

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Ի՞նչ պիտի խոսենք... Էլ ի՞նչ պիտի խոսենք...

(Պատշգամբում երևում է Մարգրեթը, գրուցում է դոկտոր Բոի հետ):

ՄԱՐԳՐԵԹ (մեղեդային ձայնով).— Մեր ընտանիքը ստրուկներից ազատ է արձակել ստրկատիրության վերացումից դեռ տաս տարի առաջ, իսկ պապիս պապը Հյուսիսի և Հարավի

նահանգների միջև պատերազմն⁴¹ սկսվելուց հինգ տարի ա-
նաջ...

ՄԵՅԻ.— Տեր Աստված... Մեզգին նորից իրենց ընտանիքի ծանց
է մագլցում...

ՄԱՐԳՐԵԹ (բարեհամբույր).— Ինչ ասացի՞ր, Մեյի'... Իսկ...
ո՞ր է Մեծ Հայրիկը:

(Պետք է խոսեն շատ արագ, Հարավի աշխույժ առողանու-
թյամբ):

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ (դիմելով բոլորին).— Իմ կարծիքով Մեծ Հայրի-
կը պարզապես հոգնել էր: Նա շատ է սիրում իր ընտանիքը,
նրան դուր է գալիս, որ բոլորը այսպես հավաքվում են իր
շուրջը, բայց, ճիշտն ասած... դա ազդում է նրա նյարդերի
վրա: Մեծ Հայրիկն այսօր ինքն իր նման չէր: Նա բոլորովին
փոխվել էր... նյարդերը շատ էին լարվել...

ՊԱՏՎԵԼԻ ԹՈՒԿՐ.— Իմ կարծիքով նա իրեն իսկական տղա-
մարդու պես պահեց:

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Հա... Ծիշտ որ... Տեսա՞ք ինչպես էր ուտում:
Տեսա՞ք ինչպես էր սեղանի վրա ամեն ինչ իր կողմը քաշում:
Այս նա մարդակերի պես էր խիշտում:

ԳՈՒՓՐ.— Հասավ եմ դրանից հետո նա իրեն վատ չի զգա:

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Տեր Աստված... այդ մարդը մի մեծ կտոր գա-
րեմուց կերավ մորսս: Իրան բաժ... Իսկ շոգեխաշած մի-
սը, լոբով ու բրնձով... երկու պնակ կերավ...

ՄԱՐԳՐԵԹ.— Մեծ Հայրիկը շոգեխաշած խոզի միսը պաշտում է:
Մենք իսկական գյուղական նախաճաշ արեցինք:

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ (Մարգրեթի հետ միաժամանակ).— Այո... նա
պաշտում է շոգեխաշած խոզի միսը: Հապա գետնախնձո՞րը...
Տեր Աստված... այդ մարդը նեգր բատրակից շատ կերավ...

ԳՈՒՓՐ (քմծիծաղով).— Կարծում եմ, նա այդ բոլորի համար
հետո... հետո... ստիպված չի լինի հատուցել...

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ (ջղային).— Գո՛ւսիր, դրանով ի՞նչ ես ուզում ասել:

ՄԵՅԻ.— Ուզում է ասել, Մեծ Հայրիկի ստամոքսը... այդքան ու-
տելուց չի՞ ցավի... այս գիշեր...

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Չայնո, կտրի՛ր... Ի՞նչ ես անընդհատ կրկնում՝
Գուսիրն այս ասաց, Գուսիրն այն ասաց... Չեմ հասկանում,
ինչո՞ւ պետք է Մեծ Հայրիկն իրեն վատ զգա, երբ այդքան
ախորժակով կերավ: Նա շատ առողջ մարդ է... միայն մի

քիչ նշարդերն են... Իմ ամուսինը երկաթի պես պինդ է: Նա այսօր շատ ախորժակով կերավ, որովհետև կլիմիկայից ուրախ լուր ստացավ իր հիվանդության մասին: Նրա հոգիէ թերևսցավ, երբ իմացավ, որ ինքը դատապարտված չի... դատապարտված չի այն բանին... որի մասին այդքան շատ էր մտածում...

ՄԱՐԳՐԵԹ (տխուր, երգեցիկ ձայնով).— Թող Աստված ողորմի նրա ծեր հոգուն...

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ (անտարբեր).— Թող ողորմի... Իսկ ո՞ր է Բրիկը: **ՄԵՅԻ.**— Դրսում է:

ԳՈՒՓՐ.— Նորից խմում է:

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Դե՛, գիտեմ, որ խմում է: Եվ իզուր ես անընդհատ գլուխս տանում՝ «նա խմում է, նա խմում է...»: Ինչ է, չե՛մ տեսնում, որ իմ տղան խմում է...

ՄԱՐԳՐԵԹ.— Կեցցե՛ս, Մե՛ծ Մայրիկ...

(Ծափ է տալիս):

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Ուրիշներն էլ են խմում: Ու պիտի խմեն այնքան ժամանակ, քանի դեռ արտադրում են այդ խմիչքը...

ՄԱՐԳՐԵԹ.— Ինչ որ ճիշտ է, ճիշտ: Ես երբեք չեմ վստահել այն մարդուն, որն ընդհանրապես չի խմում:

ՄԵՅԻ.— Գուցիք երբեք չի խմում: Ուրեմն չե՛ս վստահում նրան:

ՄԱՐԳՐԵԹ.— Իսկապե՛ս, Գո՛ւպիր... Դու չե՛ս խմում: Չգիտեի... թե չէ այդ բանը չէի ասի...

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Բրի՛կ...

ՄԱՐԳՐԵԹ.— ... գոնե քո ներկայությամբ:

(Նա քրքջում է):

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Բրի՛կ...

ՄԱՐԳՐԵԹ.— Նա պատշգամբում է: Գնամ կանչեմ, որ սկսենք մեր խոսակցությունը:

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ (անհանգստացած).— Չեմ հասկանում... ինչի՞ համար է այս գաղտնի ընտանեկան հավաքույթը:

Տհաճ լռություն: **Մեծ Մայրիկը** հերթով նայում է բոլորի դեմքին, թերևակի հայհոյում է ու շշնջում՝ «ներեցեք»: Բացում է զարդանախշերով հովհարը, որ կախված է գեր պարանոցից, զովացնում է կուրծքը, ջղայնորեն փնչացնում է՝ նայելով լարված ու լուռ դեմքերին, երբ Մարգրեթը կանչում է՝ «Բրիկ...»: Իսկ Բրիկը պատշգամբում լուսնին նվիրված ինչ-որ երգ է երգում:

Չեմ հասկանում, ինչո՞ւ եք բոլորդ մոռութեանդ կախել... Ի՞նչ է պատահել: Գո՛ւփր, միջանցքի դուռը բաց արա, թող մի քիչ օդ խաղա... Թե չէ, խեղդվեցինք...

ՄԵՅԻ.— Լավ կլինի խոսենք-վերջացնենք, հետո դուռը բացենք, Մե՛ծ Մայրիկ:

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Պատվելի՛ Թուկր, գուցե դո՞ւք բարեհաճեիք այդ դուռը բացել:

ՊԱՏՎԵԼԻ ԹՈՒԿՐ.— Իհարկե, Մե՛ծ Մայրիկ:

ՄԵՅԻ.— Ես պարզապես չեմ ուզում, որ Մեծ Հայրիկը լսի մեր խոսակցությունը:

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Լսի՛ր... Մեծ Հայրիկի տանը ոչ մի գաղտնիք չպետք է լինի: Նա ամեն ինչ պետք է իմանա: Ես դա թույլ չեմ տա...

ԳՈՒՓՐ.— Մե՛ծ Մայրիկ, բայց դա... Բանն այն է, որ...

(Մեչին խեթկում է ամուսնուն, հասկացնելով, որ լուռ մնա: Գուփրը կատաղած նաչում է նրան, մինչդեռ կինը պտտվում է ամուսնու շուրջը, բալետի պարուհու պես բարալիկ, մերկ թևերը բարձրացնելով ու ապարանջանները զրնգացնելով, բացականչում):

ՄԵՅԻ.— Ջեփյո՛ւո, զեփյո՛ւո փչեց...

ՊԱՏՎԵԼԻ ԹՈՒԿՐ.— Իմ կարծիքով սա Դելտայի ամենագով տունն է: Գիտե՛ք, որ Հելսի Բեկքսի այրին «Ֆրեյզ Փոյնթ»⁴² եկեղեցում և առաջնորդարանում զովացնող սարք է տեղադրել, ի հիշատակ իր ամուսնու՝ Հելսիի:

(Վերսկսվում է խոսակցությունը: Բոլորը շաղակրատում են այնպես, որ բեմը մեծ թռչնանոցի տպավորություն է թողնում):

ԳՈՒՓՐ.— Ծատ վատ է, որ ոչ ոք ձեր եկեղեցուն զովացման սարք չի նվիրում: Երևի այս շոգ կիրակիներին քարոզելիս լավ քրտնում եք ամբիոնում, հը՞... Պատվելի՛ Թուկր...

ՊԱՏՎԵԼԻ ԹՈՒԿՐ.— Հա, փարաջաս քրտինքի մեջ կորում է:

ՄԵՅԻ (միաժամանակ դիմելով դոկտոր Բոին).— Ձեր կարծիքով այդ վիտամին «Բ» 12-ը իսկապես այդքան լա՞վն է, որ ամեն տեղ գրում են:

ԴՈԿՏՈՐ ԲՈ.— Եթե իրոք ուզում եք ծակծկվել, ապա դրանք ոչընչով չեն զիջում մյուս ներարկումներին:

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ (պատշգամքի դռանը).— Մեգգի՛, Մեգգի՛, դե ներս եկեք:

ՄԵՅԻ (հանկարծակի ու բարձրաձայն, լռությունը խախտելով).—

Ես տարօրինակ նախազգացում ունեմ: Ես անսովոր նախազգացում ունեմ...

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ (շրջվելով).— Ի՞նչ նախազգացում:

ՄԵՅԻ.— Որ Բրիկը Մեծ Հայրիկին ինչ-որ բան է ասել, որ չպետք է...

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Իսկ ինչո՞ւ չպետք է ասեր... Դա՞ ինչ բան է: **ԳՈՒՓՐ.—** Մե՞ծ Մայրիկ, մի բան կա, որ...

ՄԵՅԻ.— Դե՛, սպասի՛ր...

(Արագ մոտենում է Մեծ Մայրիկին, գրկում է նրան ու համբուրում: Մեծ Մայրիկը բարկացած հրում է նրան, և այդ պահին լսվում է Պատվելի Թուկրի հանդարտ ձայնը):

ՊԱՏՎԵԼԻ ԹՈՒԿՐ.— Հա, անցյալ կիրակի պատարագի ժամանակ շուրջառիս ոսկեգույնը բոսորագույն դարձավ...

ԳՈՒՓՐ.— Պատվելի՛, երևի անցյալ կիրակի դժոխքի բոսորագույն կրակի մասին եք քարոզել...

(Նա քրքջում է իր այս կուպիտ սրախոսության վրա, բայց Պատվելին չի շփոթվում: Միաժամանակ Մեծ Մայրիկը մոտենում է դոկտոր Բոին և ասում նրան):

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ (նրա ընդհատուն, բայց բարձր ձայնը խլացնում է մյուսների ձայնը).— Մեր ժամանակ հարբեցողներին բուժելու մի միջոց կար, որ կոչվում էր Կիլի բուժում: Հիմա հարբեցողներին ինչ-որ դեղահաբեր են խմեցնում: Բայց... ճիշտն ասած, Բրիկին ոչ մի դեղահատ էլ պետք չէ:

(Պատշգամքի դռների մեջ երևում է Բրիկը, նրա ետևից՝ Մարգրեթը: Մեծ Մայրիկը չի նկատում նրան): ... Իմ տղան պարզապես կոտորվեց իր ընկերոջ՝ Սքիփրի մահվան պատճառով: Իսկ գիտե՞ք, թե ինչից մեռավ այդ խեղճը: Տանը նրան մեծ, շատ մեծ բաժին նատրիումի ամիթալ⁴³ էին տրվել, հետո «շտապ օգնություն» էին կանչել: Հիվանդանոցում նորից ահագին նույն նատրիումի ամիթալից էին խմեցրել, և սիրտը չէր դիմացել, որովհետև ակոհոլը քրքրել էր այն... Ես վախենում եմ ասեղներից... Ես սրսկվելուց ավելի շատ եմ վախենում, քան դանակից: Իմ կարծիքով սրսկումներից ավելի շատ մարդիկ են մեռնում, քան թե...

(Նա հանկարծ լռում է ու շրջվում):

Ահա... Բրիկը... Իմ սիրելի տղա՛ն...

Մոտենում է Բրիկին՝ հասուլիկ, կարճ թևերը պարզած, միաժամանակ արտաբերելով ծղրտոցի նման հեկեկանք, որը և՛ հուզիչ է, և՛ ծիծաղելի: Բրիկը ժպտում է, փոքր-ինչ խոնարհվում ու ասպետորեն ուներանս անում Մեզգիին, երբ նա Բրիկի առջևից սենյակ է մտնում: Բրիկը, հեռակով կաղալով, մոտենում է խըմիչքների պահարանին: Համակ լռություն է տիրում, որի ընթացքում բոլորը նայում են Բրիկին և այդպես շարունակ՝ երբ նա խոսում է, շարժվում. կամ երևում: Հերթով սառցաբեկորներ է գցում՝ բաժակը, հետո հանկարծակի ուսի վրայով նայում է ետ, տարտամ ժպիտով ասում:

ԲՐԻԿ.— Ներեցեք... Ուրիշ խմող չկա՞:

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ (տխար).— Չէ, որդի՛: Երանի դու էլ չխմեիր...

ԲՐԻԿ.— Ես էլ եմ ուզում չխմել, Մե՛ծ Մայրիկ, բայց ինչ արած, կաթկոթոցը դեռ չի լսվում գլխիս մեջ: Մինչև չլսեմ, չեմ կարողանում հանգստանալ:

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Ա՛խ, Բրի՛կ, Բրի՛կ... Դու սպանո՞ւմ ես ինձ...

ՄԱՐԳՐԵԹ (միաժամանակ).— Բրի՛կ, գնա նստիր Մեծ Մայրիկի կողքին...

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Ես էլ չեմ դիհիհիսմանուո՞ւմ... (Հեկեկում է):

ՄԵՅԻ.— Դե, հիմա, քանի որ բոլորս հավաքվել ենք...

ԳՈՒՓՐ.— Կարող եմք խոսել...

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Սիրոս նմվում է:

ՄԱՐԳՐԵԹ.— Բրիկ, նստիր Մեծ Մայրիկի կողքին ու բռնիր նրա ձեռքը:

(Մեծ Մայրիկը երեք անգամ բարձրաձայն խոռացնում է քրթով, ասես երեք անընդմեջ պայթյուն է լսվում սենյակում):

ԲՐԻԿ.— Դու նստիր, Մեզգի՛: Ես անհանգիստ հաշմանդամ եմ: Ինձ համար այսպես ավելի հարմար է: (Բրիկը կաղալով մոտենում է պատշգամբի դռանը, հեռվում է սպասողական դիրքով):

Մեկին նստում է Մեծ Մայրիկի կողքին, իսկ Գուփրը՝ մահճակալի եզրին, մոր դիմաց: Պատվելի Թուկըրը նյարդայնացած գալիս է, կանգնում նրանց միջև: Մյուս կողմում դոկտոր Բոն է կանգնած և անտարբեր սիգար է ծխում: Մարգրեթը դժկամորեն դարձնում է դեմքը:

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Բայց... ինչո՞ւ հանկարծ ինձ այսպես շրջապատեցիր: Ինչո՞ւ եք նայում ինձ և իրար աչքով անում...

(Պատվելի Թուկրը հուզված մի քայլ ետ է գնում):

ՄԵՅԻ.— Հանգստացիր, Մե՛ծ Մայրիկ:

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Ինքդ հանգստացիր, քույրի՛կ Մելի: Ես ինչ-պե՛ս հանգստանամ, երբ բոլորդ մի մարդու պես ինձ եք նա-յում... կարծես մի մեծ կաթիլ արյուն է կախվել դեմքիցս: Ի՞նչ է եղել, հը՞...:

(Գուփրը հագում է ու կանգնում կենտրոնում):

ԳՈՒՓՐ.— Դե, սկսեք, դուկտո՛ր Բո:

ՄԵՅԻ.— Լսում եմք, դուկտո՛ր...

ԲՐԻԿ (հանկարծակի).— Սը՛սս... (Հետո ժպտում է, ծլրացնում ու վշտացած օրորում գլուխը): Չէ... կաթկթոցը չէր:

ԳՈՒՓՐ.— Բրի՛կ, կամ լո՛իր կամ բաժակդ վերցրու գնա պատըշ-գամբ... Մենք լուրջ հարցի մասին եմք խոսելու: Մեծ Մայ-րիկն ուզում է մանրամասն իմանալ «Օչըսնըր» կլինիկայից ստացված այսօրվա տեղեկության մասին:

ՄԵՅԻ (փութեռանդորեն).— Մեծ Հայրիկի հիվանդության մա-սին...

ԳՈՒՓՐ.— Այո... Մեծ Հայրիկի հիվանդության մասին, որ պետք է հայտնենք Մեծ Մայրիկին:

ԴՈԿՏՈՐ ԲՈ.— Հա... ուրեմն...

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ (ահաբեկված ելնում է տեղից).— Ինչ-որ բա՛ն կա... Հա՛... ինչ-որ բա՛ն կա, որ ես... չգիտեմ...

Մեծ Մայրիկն այդ պահին համակ արժանապատվություն է նա գրեթե դադարում է գեր երևալուց:

Այդ մի քանի քառով, այդ մեղմ, բաց տազնապոտ հարցու-մով Մեծ Մայրիկը բացահայտում է քառասունհինգ տարիների իր պաշտամունքը, անմնացորդ նվիրվածությունը, պարզամիտ սերը Մեծ Հայրիկի նկատմամբ, որը, ամենայն հավանականությամբ Բրիկի նման առնականորեն գեղեցիկ է եղել և օժտված է եղել Բրիկի ունակությամբ՝ կրթոտ սեր ներշնչել ամենապարզ միջոցով՝ ուժգին չսիրել, պահպանել հմայող ինքնամփոփվածությունը:

ԴՈԿՏՈՐ ԲՈ (լռությունից հետո, փոքր-ինչ շփոթված).— Այո...

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Ես... ուզում եմ իմանա՛լ...

(Նա իսկույն իր գեր բռունցքը ահով սեղմում է բերանին: Հե-տո, ինչ-որ անհասկանալի պատճառով նա իր կրծքից պոկում է ծաղկեփունջը, նետում հատակին, տրորում իր հաստ, կարճ ոտ-քերով): Ուրեմն ինձ խաբե՛լ եք... Ես ուզում եմ իմանալ...

ՄԵՅԻ.— Նստիր, Մե՛ծ Մայրիկ, նստիր այս բազմոցին:

ՄԱՐԳՐԵԹ (արագ).— Բրի՛կ, նստիր Մեծ Մայրիկի կողքին:

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Ի՞նչ է, ի՞նչ է պատահել... Մեծ Հայրիկին...

ԴՈԿՏՈՐ ԲՈ.— Ես կյանքումս այդպիսի հանգամանալից բժշկա-

կան քննություն չէի տեսել՝ ինչպես «Օչըսնըր» կլինիկայում

Մեծ Հայրիկ Փոլիթինը եղավ:

ԳՈՒՓՐ.— Դա երկրի լավագույն կլինիկաներից մեկն է:

ՄԵՅԻ.— Եթե ոչ ամենալավագույնը:

(**Չգիտես ինչու խեթկում է Գուփրին, երբ անցնում է նրա մոտով: Իսկ վերջինս խփում է կնոջ ձեռքին՝ աչքերը չկտրելով մոթ դեմքից):**)

ԴՈԿՏՈՐ ԲՈ.— Անշուշտ: Դե, նախքան Մեծ Հայրիկին քննելը,

բժիշկները արդեն իննսունհինը տոկոսով համոզված էին, որ...

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Համոզված էին ինչո՞ւմ... համոզված էին ինչո՞ւմ, հր՞...

(**Անհանգիստ հեկեկոցից շնչասպառ է լինում: Մեյին արագ համբուրում է նրան: Մեծ Մայրիկը կատաղորեն հրում է Մեյիին՝ աչքերը բժշկին հառած):**)

ՄԵՅԻ. — Մայրի՛կ, պինդ կաց...

ԲՐԻԿ (դրան շեմին կանգնած: Մեղմորեն երգում է).—

«Արձարթավուն լասնի շողերից,

շողերից...»

ԳՈՒՓՐ. — Վե՛րջ տար, Բրի՛կ...

ԲՐԻԿ.— Ներեցե՛ք... (Կաղալով դուրս է գալիս պատշգամբ):

ԴՈԿՏՈՐ ԲՈ.— Մե՛ծ Մայրիկ, հասկանո՞ւմ եք... Կլինիկայի բը-

ժիշկները անուշի համար մի փոքր կտրել են այդ ուռուցքից...

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Ի՞նչ ուռուցք: Բայց դուք ասացիք, որ Մեծ Հայ-

րիկի մոտ ամեն ինչ կարգին է...

ԴՈԿՏՈՐ ԲՈ.— Համբերեք, կասեմ...

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ (մոլեգնած).— Բայց դուք ինձ ու Մեծ Հայրիկին

ասացիք, որ ամեն ինչ կարգին է, միայն...

ՄԵՅԻ.— Մե՛ծ Մայրիկ, բժիշկները միշտ էլ...

ԳՈՒՓՐ.— Թող դուրս ելն խոսի, վերջացնի՛...

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— ... հաստ աղիքն է փոքր-ինչ փայտացած...

(**Հեկեկայուց շնչասպառ է լինում):**)

ԴՈԿՏՈՐ ԲՈ.— Ծիշտ է: Մենք ստիպված էինք այդպես ասելու

Մեծ Հայրիկին: Բայց այդ ուռուցքից մի կտոր զննել են լաբո-

բատորիայում և... Աերողություն եմ խնդրում՝ արդյունքը բացասական է եղել: Այո... դա... իրոք որ չարորակ...

(Լռություն):

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Քաղցկե՛ղ... Քաղցկե՛ղ...

(Դոկտոր Բոն մռայլ գլխով է անում: Մեծ Մայրիկը երկարաձիգ ճիչ է արձակում):

ՄԵՅԻ և ԳՈՒՓՐ (միասին).— Դե՛, դե՛, Մե՛ծ Մայրիկ: Հանգրտացիր: Մենք պարտավոր էինք քեզ ասել այդ մասին...

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Իսկ ինչո՞ւ բժիշկները չեն վիրահատել, հը՞...

ԴՈԿՏՈՐ ԲՈ.— Որովհետև քաղցկեղը չափից ավելի էր տարածվել... Համարյա բոլոր օրգանները...

ՄԵՅԻ.— Մե՛ծ Մայրիկ, քաղցկեղը տարածվել էր լյարդի ու երիկամների մեջ... Դա վաղուց էր սկսվել: Վիրահատելը...

ԳՈՒՓՐ.— ... մեծ ռիսկի հետ էր կապված:

ՄԵՅԻ.— Ըհը...

(Մեծ Մայրիկը հառաչում է, ինչպես մեռնող մարդը վերջին շնչում):

ՊԱՏՎԵԻ Ի ԹՈՒԿՐ.— Ծը-ծր-ծը...

ԴՈԿՏՈՐ ԲՈ.— Այո, վիրահատելու համար ուշ էր արդեն:

ՄԵՅԻ.— Դրա համար էր նա այդպես դեղնել, Մայրի՛կ:

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Հեռացի՛ր ինձանից, Մեյի՛... Հեռացի՛ր... (Կըտրուկ բարձրանում է տեղից): Ես Բրիկին եմ ուզում... Ո՛ր է Բրիկը...

Ո՛ր է իմ միակ տղան...

ՄԵՅԻ.— Մայրի՛կ... Նա ասաց՝ «իմ միակ տղան»...

ԳՈՒՓՐ.— Իսկ... ես ո՞վ եմ, մայրի՛կ...

ՄԵՅԻ.— Լուրջ, պատվարժան մի մարդ, որ հինգ... ո՛չ, վեց երեխաների հայր է...

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Ես ուզում եմ, որ Բրիկը պատմի Մեծ Հայրիկի հիվանդության մասին: Բրի՛կ... Բրի՛կ...

ՄԱՐԳՐԵԹ (տեղից ելնելով).— Բրիկն իրեն շատ վատ էր զգում ... պատշգամբ դուրս եկավ:

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Բրի՛կ...

ՄԱՐԳՐԵԹ.— Մայրի՛կ, ես կկանչեմ:

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Ո՛չ, ո՛չ, ինձ հանգիստ թող: Դու իմ արյունը չես...

ԳՈՒՓՐ.— Մայրի՛կ, չե՞ որ ես քո որդին եմ... Գոնե ինձ լսիր...

ՄԵՅԻ. — Ախր Գուփրը Ձեր որդին է՝ առաջնեկը...

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Գուփրը երբեք չի սիրել Մեծ Հայրիկին:

ՄԵՅԻ (խիստ վիրավորված).— Դա ճիշտ չէ'...

(Լռություն: Պատվելի Թուկրը հագում է ու տեղից ելնում):

ՊԱՏՎԵԼԻ ԹՈՒԿՐ (դիմելով Մեչիին).— Այս պարագային, ավելի լավ է հեռանալ:

ՄԵՅԻ (սիրալիր ու տխուր).— Այո, Պատվելի՛ Թուկր, գնացեք:

ՊԱՏՎԵԼԻ ԹՈՒԿՐ (պատշաճ քաղաքավարությամբ).— Բարի գիշեր, բարի գիշեր: Թող Աստված ողորմի ձեր բոլորիդ: Եվ... այս տանը...

(Նա դուրս է գնում):

ԳՈՒՏՈՐ ԲՈ.— Լավ մարդ է, բայց մի քիչ վարվեցողություն պետք է սովորի: Շարունակ խոսում է այն մարդկանց մասին, ովքեր, ի հիշատակ հանգուցյալների, եկեղեցուն պատուհաններ են նվիրել: Եթե մեկը մի պատուհան է նվիրել, տասն էլ իր կողմից է ավելացնում: Կամ էլ այն մասին, թե ինչ սարսափելի է, երբ մարդ առանց հաղորդվելու է մեռնում: «Անօրեն թուն Լ» ու առպես շարունակ:

(Մեփն հագում է, մատնացույց անում Մեծ Մայրիկին):

ԳՈՒՏՈՐ ԲՈ — Գե՛ լավ, Մեծ Մայրիկ... (Հոգոց է հանում):

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ — Ձեր բոլոր ասածներն էլ սխալ են: Ես գիտեմ, ուս պարզապես վատ երազ է:

ԳՈՒՏՈՐ ԲՈ. — Մեք բնարավոր ամեն բան կանենք, որ Մեծ Հայրիկը թիս տանջվի:

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Այո, սա պարզապես վատ երազ է, ուրիշ ոչինչ: Ես պարզապես սհավոր երազ է:

ԳՈՒՓՐ.— Իմ խորին համոզմամբ, Մեծ Հայրիկը ինչ-որ ցավեր ունի, բայց չի ուզում ցույց տալ:

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Այո... Սա պարզապես վատ երազ է, վատ երազ:

ԳՈՒՏՈՐ ԲՈ.— Այդպիսի հիվանդներից շատերը հավատացած են, որ եթե թաքցնեն իրենց ցավը, կարող են... խուսափել իրավաթունից:

ԳՈՒՓՐ.— Ճիշտ է, նրանք խորամանկում են... Այդ հարցում նրանք այնպես են խորամանկում, որ...

ՄԵՅԻ — Գուփրն ու ես կարծում ենք...

ԳՈՒՓՐ.— Լոհ'ր, Մեյի'... Մե՛ծ Հայրիկին անհրաժեշտ է մորֆի արակել:

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Ո՛չ... Ոչ ոք իրավունք չունի Մե՛ծ Հայրիկին մորֆի արակելու:

ԴՈԿՏՈՐ ԲՈ.— Բայց... Մե՛՛ծ Մայրիկ, երբ ցավերն սկսում են... Ջարհուրելի ցավ է... Դրա համար Մե՛ծ Հայրիկին... գոնե մի ասեղ... որպեսզի կարողանա դիմանալ:

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Իսկ ես ասում եմ, ոչ ոք իրավունք չունի նրան մորֆի արակելու:

ՄԵՅԻ.— Մե՛՛ծ Մայրիկ, չէ՞ որ դուք չեք ուզում Մե՛ծ Հայրիկի տառապանքը տեսնել, չէ՞... Հասկանում եք... դուք...

(Գուրբը, որ կանգնած է նրա կողքին, կոպտորեն խեղդում է կնոջը):

ԴՈԿՏՈՐ ԲՈ (ինչ-որ փաթեթ դնելով սեղանին).— Ես այս դեղը թողնում եմ այստեղ: Եթե հանկարծ Մե՛ծ Հայրիկի ցավերն սկսեն, դուք ստիպված չեք լինի ժամանակ կորցնել դեղատուն գնալու համար:

ՄԵՅԻ.— Ես կարող եմ արակել...

ԳՈՒՓՐ.— Պատերազմի ժամանակ Մեյին մասնակցել է քույրական դասընթացներին:

ՄԱՐԳՐԵԹ.— Ծիշտն ասած, դժվար թե մե՛ծ Հայրիկը թողնի, որ Մեյին իրեն արակի:

ՄԵՅԻ.— Իսկ կարծում ես քեզ կթողնի՞: **(Դոկտոր Բոն տեղից ելնում է):**

ԳՈՒՓՐ.— Դոկտոր Բոն գնում է:

ԴՈԿՏՈՐ ԲՈ.— Այո, ես պետք է գնամ: Դե լավ, Մե՛՛ծ Մայրիկ, մի՛ հուսահատվիր:

ԳՈՒՓՐ (կատակով).— Իհարկե. իհարկե պետք է գլուխը բարձր պահի, թե չէ կրկնակզակ կարող է ունենալ... Չէ՞, մարի'կ... **(Մե՛ծ Մայրիկը հեկեկում է):**

Դե՛... դե՛... պետք չէ:

ՄԵՅԻ.— Նստիր կողքիս, Մե՛՛ծ Մայրիկ:

ԳՈՒՓՐ (դոկտոր Բոի հետ՝ դռան մոտ).— Դոկտոր'ր, մե՛նք անպայման վարձահատույց կլինենք այն ամենի համար, ինչ դուք արեցիր: Մենք բոլորս ուղղակի պարտական ենք ձեզ այն բանի համար, որ...

(Դոկտոր Բոն նրա խոսելու պահին դուրս է գալիս՝ ուշադրու-

թջուն շղարձելով Գուփրին):

Ճիշտ է, այդ բժիշկը խելոք մարդ է, բայց վատ չէր լինի, եթե փոքր ինչ մարդկայնորեն վարվեր...

(Մեծ Մայրիկը հեկեկում է):

Դե՛, քեզ ամուր պահիր, մայրի՛կ:

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Դա ճիշտ չէ... ես հաստատ գիտեմ, որ այդ ամենը պարզապես սուտ է...

ԳՈՒՓՐ.— Մայրի՛կ, Մեծ Հայրիկի բժշկական քննությունն անթերի է եղել...

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Չեմ հասկանում, դու ինչո՞ւ ես այդքան շահագրգռված, որ հայրդ մեռնի:

ՄԵՅԻ.— Բայց լսեք, Մե՛ծ Մայրիկ...

ՄԱՐԳՐԵԹ (հանդարտ).— Ես հասկանում եմ, թե Մեծ Մայրիկը դրանով ինչ է ուզում ասել:

ՄԵՅԻ (կատաղած).— Դե՛, իհարկե՛...

ՄԱՐԳՐԵԹ (հանգիստ ու շատ տխուր).— Այո, գիտեմ...

ՄԵՅԻ.— Երկու օր անաչ է մտել այս տունը, և տեսե՛ք, ինչ հասկանալի է դարձել...

ՄԱՐԳՐԵԹ.— Ասա ուրիշ հասկանալի անհրաժեշտություն է:

ՄԵՅԻ.— Իմ կարծիքով դու դեռ ավելի ասես ես հասկացող դարձել, Մեղգրի՛կ, Դե, եթե մայրդ մարբեցող է, ուզես-չուզես ես լսեցի պիտի լսեմ: Իսկ երես էլ արի Բրիկի հարբեցողությունը սուր:

ՄԱՐԳՐԵԹ.— Բժիկը հարբեցող չէ. Նա պարզապես շատ է նրվելով Մեծ Հայրիկին: Իսկ նրա հիվանդությունը պարզապես... Ամասի՛նը բուրրովին կորցրել է իրեն:

ՄԵՑ ԵՆՅՐԻԿ.— Մեծ Հայրիկի տղան Բրիկն է: Բայց նա շատ է խնամ, իսկ դա անհասկանալի է և՛ ինձ, և՛ Մեծ Հայրիկին: Դու, Մարգրե՛թ, պետք է մեզ օգնես... պետք է Մեծ Հայրիկին ու ինձ օգնես, որ Բրիկին խելքի բերենք: Որովհետև Մեծ Հայրիկը իրեն շատ վատ կզգա, եթե Բրիկը վերջ չստա խնայում ու տեր չկանգնի...

ՄԵՅԻ.— Տեր չկանգնի ինչի՞ն, Մե՛ծ Մայրիկ:

ՄԵՑ ՄԱՅՐԻԿ.— Ազարակին:

(Մեկին ու Գուփրը փութանցիկ, դժգոհ հաչացքներ են փռալուսակում):

ԳՈՒՓՐ.— Մե՛ծ Մայրիկ, դու տենդի մեջ ես, դրա համար...

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Այո... բոլորս ենք տեղի մեջ, բայց...

ԳՈՒՓՐ.— Եկեք մի քիչ հեռաւտես լինենք:

ՄԵՅԻ.— Մեծ Հայրիկը երբեք, երբեք պնթան հիմար չի լինի, որ...

ԳՈՒՓՐ.— ... այս ագարակը անպատարվասնատու մարդկանց ժառանգությունն թողնի:

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Մեծ Հայրիկը ոչ մեկին էլ ոչինչ չի թողնելու: Նա չի մեռնելու: Լավ կլինի բոլորդ ականջներիդ օղ աճեք, նա չի մեռնելու: Հասկացա՞ք...

ՄԵՅԻ.— Մայրի՛կ, մայրի՛կ... Մենք էլ ձեր պես հուսով ենք ու լավատես, որ Մեծ Հայրիկը կստողջանա... Մենք հավատում ենք ու աղոթում... բաց ի՛նչ արած, կան հախաստի փաստեր, որոնց հետ պետք է հաշվի նստել, թե չէ...

ԳՈՒՓՐ.— Ծիշտ է, պետք է հալանակաւորությունների մասին մըտածել, բաց հիմա ժամանակն է, որ... Մէյի՛, խնդրում եմ, մեր սեղակից պապուսակու բեր:

ՄԵՅԻ.— Հիմա, սիրելի՛ս:

(**Մէյին տեղից ելնում է, դուրս է գալիս սրահի դռնով**):

ԳՈՒՓՐ (կանգնելով Մեծ Մայրիկի կողքին).— Մե՛ծ Մայրիկ: Քիչ առաջվա քո ասածները բոլորովին էլ ճիշտ չէին ու դու գիտես դա: Ես միշտ էլ սիրել եմ Մեծ Հայրիկին... մի տեսակ... համեստորեն: Երբեք չեմ ձևացրել ու գիտեմ, Մեծ Հայրիկն էլ միշտ իմ նկատմամբ է համակրանք տածել... ինձ պես՝ առանց ձևականությունների:

(**Մէյին ներս է մտնում՝ Գուփրի պապուսակը ձեռքին**):

ՄԵՅԻ.— Ահա պապուսակդ, սիրելի՛ս:

ԳՈՒՓՐ (պապուսակը նորից ետ վերադարձնելով նրան).— Ծնորհակալություն: Իհարկե, իմ ու Մեծ Հայրիկի փոխհարաբերությունը տարբերվում են Բրիկի հետ ունեցած նրա հարաբերությունից:

ՄԵՅԻ.— Դու ութ տարով մեծ ես եղբորիցդ, դրա համար միշտ ստիպված ես եղել ավելի մեծ պատասխանատվություն կրել, քան թե նա: Ի՛նչ է արել Բրիկը այս տան համար... բացի ֆուտբոլ խաղալուց ու սողալով վիճկի խմելուց:

ԳՈՒՓՐ. — Մէյի՛, սիրելի՛ս, թոյլ տուր ես խոսեմ...

ՄԵՅԻ.— Լավ, սիրելի՛ս:

ԳՈՒՓՐ.— Դե, հասկանում եք... քսանութ հազար ակր բամբակի պլանտացիան կառավարելը չափազանց ծանր գործ է:

ՄԵՅԻ.— Այն էլ համարյա մեկ-մեկուկ, առանց օգնականի:

(Այս խոսակցության պահին Մարգրեթը դուրս է եկել պատրճաճամբ՝ Բրիկին է կանչում):

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Դու ոչ մի անգամ էլ տեր չես կանգնի այս ազարակին: Հետո, չես հասկանում, ինչի՞ մասին է խոսքը: Մեծ Հայրիկը մեռած է, ի՞նչ է: Էլ մարդ չկա, դո՞ւ պիտի տեր կանգնես այս տունուտեղին: Ի՞նչ ես արել... պարզապես օգնել ես Մեծ Հայրիկին մի քանի գործարքներում, բայց դրա փոխարեն իրավաբանության պրակտիկա ես ձեռք բերել Մեծֆիսում:

ՄԼՅԻ.— Ա՛խ, մայրի՛կ, մայրի՛կ: Մե՛ծ Մայրիկ... Եկեք անկեղծ խոսենք: Ձե՛ որ Գուփրը վերջին հինգ տարիներից հոգով ու սարմուղ ակիրվել է այս ազարակատան բարգավաճմանը... Երբ Մեծ Հայրիկի առողջությունն սկսեց վատանալ: Ամուսինս ապ մա վն չի ուզում խոսել, որովհետև երբեք դա պարտախորտ բուն չի համարել: Պարզապես իր որդիական սրտտրե՛ է կատարել. Իսկ Բրի՛կը .. Նա ի՞նչ է արել այս սառն մտնոր: Նա պարզապես շարունակում է ապրել իր Եփեմիտե մարդկանս վտարով .. Քսանութ տարեկան է ու... բայց մե ե ֆատրոպի՛սս:

ՄԱՐԳՐԵԹ (պատճաճամբից միայնակ վերադառնալով).— Ո՛ւմ մասին ես ապախա խոսում... Բրիկի՞: Նա՛ է ֆուտբոլիստ: Եկար դու լավ գիտես, որ նա մարզական մեկնաբան է... և ամենանախաշվածը ամբողջ երկրում:

ՄԵՅԻ.— Ես խոսում եմ այն մասին, թե նա ինչ է եղել նախկինում:

ՄԱՐԳՐԵԹ.— Ավելի լավ է ամուսնուս ետևից չբամբասես...

ԳՈՒՓՐ.— Ես իրավունք ունեմ իմ եղբոր մասին խոսելու իմ հասարակ ոնտանիքի մյուս անդամների հետ, որոնց հետ դու կապ չունես... Ինչո՞ւ դու էլ պատճաճամբ չես գնում ու Բրիկի հետ իմում:

ՄԱՐԳՐԵԹ — Ես երբեք չեմ տեսել, որ եղբոր նկատմամբ այդպես շարությունը լցված լինեն:

ԳՈՒՓՐ.— Իսկ նա՞... Ախր իմ հարազատ եղբայրը նույնիսկ չի սուզում նույն սենյակում ինձ հետ լինել:

ՄԱՐԳՐԵԹ.— Սա հատուկ կազմակերպված բանբասանք է իմ ու Բրիկի հասցեին՝ նրան վարկաբեկելու դիտավորությամբ: Ու ես գիտեմ, թե դրա պատճառն ինչ է... Ձեր ազահությունն ու աչքածակությունը...

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Ես հիմա կգոռամ: Եթե վերջ չտաք, ես կգոռա՛մ...

(Գուպրը բռունցքները սեղմած մոտենում է Մարգրեթին, կարծես ուզում է հարվածել նրան: Մեյին դեմքը զզվանքով ծամածոում է, Մարգրեթի թիկունքում կանգնած):

ՄԱՐԳՐԵԹ.— Մենք այս տանը մնում ենք միայն Մեծ Մայրիկի ու Մեծ Հայրիկի համար: Եթե դուկտոր Բոի ասածները ճիշտ են... Եթե Մեծ Հայրիկն իրոք... Մենք իսկույն կհեռանանք, ոչ մի բոպե չենք մնա այստեղ...

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ (հեկեկում է).— Մարգրե՛թ, անո՛ւշա... Արի, արի նստիր Մեծ Մայրիկի կողքին:

ՄԱՐԳՐԵԹ.— Սիրելի՛ մայրիկ: Կներեք: Կներեք ինձ... ես...

(Նա իր երկար, գեղեցիկ վիզը խոնարհում է, որպեսզի ճակատը հպի Մեծ Մայրիկի գիրգ ուսին):

ԳՈՒՓՐ.— Օ՛, ինչ գեղեցիկ է ու զգայացունց նվիրվածությամբ այս կեղծ տեսարանը...

ՄԵՅԻ.— Իսկ գիտե՛ք ինչու է Մեզգին չբեր: Որովհետև նրա գեղեցիկ, ջլապիկն մարզիկ-ամուսինը չի ուզում հետը քնել... Ահա թե ինչո՛ւ...

ԳՈՒՓՐ.— Ուրեմն դուք ինձ ծաղրում եք, հա՛... Ձե՛ք ուզում ամեն ինչ մարդավարի լինի: Դե լավ... Ես ու Մեյին հինգ երեխա ունենք և վեցերորդին ենք սպասում: Ինձ բոլորովին չի հետաքրքրում, Մեծ Հայրիկը սիրո՞ւմ է մեզ, թե՞ ոչ... Կամ՝ սիրել է, սիրելու է, թե ընդհանրապես չի սիրելու... Ես պարզապես ամենատարրական արդարություն ու ազնվություն եմ պահանջում: Ես ճշմարտությունն եմ ասում: Մեծ Հայրիկի ստանձնահատուկ համակրանքը Բրիկի նկատմամբ միշտ էլ զարմանք է պատճառել ինձ... դեռ այն ժամանակ, երբ Բրիկը նոր էր ծնվել: Նա ինձ հետ միշտ վարվում էր մի տեսակ... թքած ունենալու պես... Հիմա Մեծ Հայրիկը մեռնում է քաղցկեղից... այն ամբողջովին տարածվել է նրա բոլոր կենսական օրգաններում... նաև երիկամներում: Հիմա նա թունավորման

պրոցեսի մեջ է: Դուք լավ եք հասկանում, թե դա ինչ է նշանակում: Մեզը ներծծվում է արյան մեջ...

ՄԱՐԳՐԵԹ (մեկուսի քայլելով բեմին՝ բարձրաձայն).— Թույնե՛ր, թույնե՛ր... թունոտ մտքեր ու բառեր... Նրանց սրտում ու հոգում միայն թույն է արտադրվում:

ԳՈՒՓՐ (ընդհատելով Մարգրեթին).— Ես պահանջում եմ արդար մոտեցում... Մե՛ծ Հայրիկի ժառանգության հարցում: Եվ ամեն ինչ կանեմ, որ հասնեմ դրան: Բայց եթե ինձ հետ ազնվորեմ չվարվեք, իմ շուրջը կամ ետևում, շարունակյի այս ձեռնածոյությունը, այլևս ինձանից չնեղանաք... Ուրեմն իզո՛ր եմ կորսյույացիսի իրավաբան աշխատում: Դուք կտեսնեք, թե ինչպես եմ բողոքում իմ արդար իրավունքների համար... Օ՛, ուշացած ժամանում...

(Այդ պահին Բրիկը ներս է մտնում՝ խաղաղ, անորոշ ժպտով, դասարկ բաժակը ձեռքին):

ՄԼՅԻ.— Միս և հաղթանակած հերոսի ժամանումը...

ԳՈՒՓՐ.— Ինչե՛նչար Բրիկ Փոլիթի... Հիշո՛ւմ եք նրան: Ի՛նչ ո՞վ կարող է մոռանալ...

ՄԼՅԻ.— Դուս ավելիսի տեղը տե՛ի, կարծես, ֆուտբոլի խաղին վառախո՛ւր է ստացել

ԳՈՒՓՐ.— Առ, Բրիկ — Առ տարի բյուրեղապակյա գավաթի խաղերի՛ն էրի պատեռատտի՛նների նստարանին նստես, հը՛... **(Մեկին բարձր բրբջում է):**

Եվր, դու բուրեղապակյա գավաթի խաղերի՛ն քո այդ հըռչակավոր փոխանցումը կատարեցիր: Այո՞...

ՄԼ.Ի.— Չէ, սիրելի՛ս... պուճի զարդանախշ գավաթի խաղերին:

ԳՈՒՓՐ.— Ա՛հ, ճիշտ որ... ես բոլոր գավաթները խառնեցի...

ՄԱՐԳՐԵԹ.— Ախր... ինչո՞ւ եք նախանձում ու թունավորում խեղճ, հիվանդ տղային:

ՄԼ.Օ ՄԱՅՐԻԿ.— Երկուսդ էլ լեզուներդ ձեզ քաշեք.. լո՛ւմ...

ԳՈՒՓՐ.— Մե՛ծ Մայրիկ, ընտանեկան ճգնաժամը միշտ էլ ի հայտ է բերում յուրաքանչյուրի լավ ու վատ գծերը:

ՄԼՅԻ.— Ինչ որ ճիշտ է, ճիշտ...

ՄԱՐԳՐԵԹ.— Ամե՛ն:

ՄԼ.Օ ՄԱՅՐԻԿ.— Ասացի՛ վերջ տվեք... Ես այլևս թույլ չեմ տա, որ իմ տանը այսպիսի թունոտ բամբասանքներ կրկնվեն:

(Մեկին Գուփրին գլխով ցույց է տալիս պաշտասակը):

**Բրիկն ավելի ուրախ ու անտարբեր է ժպտում: Բաժակը լըց-
նելիս՝ կամացուկ երգում է):**

ԲՐԻԿ.— «Տույց տուր իմ ճամփան...

Ես շատ եմ հոգնել, ուզում եմ քնել,

Մի ժամ առաջ թեթև խնել եմ...»:

ԳՈՒՓՐ (միաժամանակ).— Մե՛ծ Մայրիկ, դու գիտես, որ վաղը
Մեմֆիս եմ գնալու՝ կալվածքի հարցը դատարան ներկայաց-
նելու համար:

**(Մեղինն նստում է մահճակալին և սկսում է դասավորել պա-
յուսակից հանած թղթերը):**

ԲՐԻԿ (շարունակում է երգել).— «Ուր էլ գնամ, ուր էլ մնամ,
Իմ հարազատ տունը կգամ...»:

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Ծի՛շտ ես ասում, Գո՛ւփր, վաղը Մեմֆի՛ս ես
գնալու:

ՄԵՅԻ.— Դե, իհարկե...

ԳՈՒՓՐ.— Դրա համար ջանք եմ թափում, լուծելու մի հարց, որը...

ՄԵՅԻ.— ... որը շատ լուրջ է ու ոչ մի դեպքում չի կարելի հե-
տաձգել:

ԳՈՒՓՐ.— Եթե Բրիկը լուրջ լիներ, ինքն էլ կարող էր մասնակ-
ցել այս գործին:

ՄԱՐԳՐԵԹ.— Բրիկը ներկա է: Մենք պատրաստ ենք:

ԳՈՒՓՐ.— Դե լավ: Սա սնագիր օրինակն է սյն փաստաթղթի, որ
կազմել եմ իմ գործընկերոջ՝ Թոմ Բուլիթի հետ: Սա... ինչպես
բացատրեմ... խնամակալության համաձայնագիր է...

ՄԱՐԳՐԵԹ.— Ա՛յ այդպես... Իսկ դու էլ խնամակալը պիտի լի-
նես, այո՞... ու բաժանես մեր ողորմելի հասույթները, այո՞...

ԳՈՒՓՐ.— Այս ծրագիրը կազմել ենք դեռ այն ժամանակ, երբ
«Օչըսներ» կլինիկայից ստացանք հայրիկի հիվանդության
լուրը: Մենք դա արել ենք... այդ պլանը գծել ենք Մեմֆիսի
«Հարավային պլանտացիաների բանկ և վստահություն» ընկե-
րության տնօրեն Բ. Բ. Բելլուոզի օգնությամբ ու խորհրդով:
Միստր Բելլուոզը տնօրինում է Արևմտյան Թեննեսսիի ու Դել-
տայի բոլոր ճանաչված ընտանիքների կալվածքների գործե-
րը:

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Գո՛ւփր...

ԳՈՒՓՐ (խոնարհվելով Մեծ Մայրիկի առաջ).— Դե սա... վերջ-

նականը չի: Պարզապես նախնական պլանն է, որ հիմք է ծառայելու իրական նախագծի համար:

ՄԱՐԳՐԵԹ.— Այո... այդպես էլ գիտեի:

ՄԵՅԻ.— Դա մի պլան է, որ Դելտայի ամենամեծ հողատարածությունը կապահովագրի անպատասխանատու մարդկանցից: Դա մի պլան է, որ...

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Դե հիմա ինձ լսե՛ք: Դո՛ւք... բոլորդ: Ես թույլ չեմ տա, որ իմ տանը կատվի պես իրար ճանկոեն... Իսկ դու, Գո՛ւփր, այդ թղթերը հեռու տար, քանի ձեռքիցդ չեմ խլել ու պատռել... Ինձ բոլորովին չի հետաքրքրում, թե ինչ սատանա կա դրա մեջ և չեմ էլ ուզում իմանալ: Հիմա ես Մեծ Հայրիկի լեզվով եմ խոսում, որովհետև ես նրա կինն եմ ու ոչ թե այրին... դեռ նրա կինն եմ... Ես խոսում եմ նրա անունից և նրա լեզվով...

ԳՈՒՓՐ.— Մե՛ծ Մայրիկ, ես պարզապես ուզում էի ասել, որ...

ՄԵՅԻ.— Գուփրն ուզում էր բացատրել, որ դա... .

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Ինձ չի հետաքրքրում... Հենց հիմա դրանք նորից իրենց տեղը դրեք... աչքիս չերևան: Հասկացա՞ք... Հի՛մք... Պլա՛ն... Նախնական նախագի՛ծ... Լսե՛ք... գիտե՞ք Մեծ Հայրիկն ինչ է ասում, երբ մի բանից զզվում է:

ԲՐԻԿ (խմիչքների պահարանի մոտից).— Երբ նա զզվում է, ասում է՝ «դա կղկղանք է...»:

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ (տեղից ելնելով).— Ծիշտ է : Կղկղա՛նք... Ես նույնպես Մեծ Հայրիկի պես ասում եմ՝ «դա կղկղա՛նք է...»:

ՄԵՅԻ.— Կարծում եմ, այս հարցում անվայելուչ արտահայտությունները բոլորովին անտեղի են:

ԳՈՒՓՐ.— Ես ներքուստ խորապես վիրավորվում եմ... երբ դու այդպես ես խոսում...

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Ոչ մեկը ոչինչ չի ստանալու... երբ Մեծ Հայրիկը... հեռանա... Գուցե... շատ հավանական է, որ նա գրնա... Ո՛չ... նույնիսկ այն ժամանակ, նույնիսկ այն ժամանակ ոչ մեկը ոչինչ չի ստանալու...

ԲՐԻԿ.— «Դու կարող ես միշտ լսել իմ այս երգը,

Ցույց տուր իմ տան ճամփան...»:

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Իմ տղան, Բրիկը, կարծես, այն փոքրիկ մանչուկը լինի, երբ չարաճճի խաղերից հեռոտ տուն էր գալիս

քրտնած, կարմրած այտերով, քրտինքից փայլփլող շեկ խոպոպներով...

(Մայրը մոտենում է Բրիկին և իր գիրուկ, դողացող մատները խրում տղայի մազերի մեջ: Բրիկը կողմ է քաշվում, ինչպես սովորաբար անում է մարմնական բոլոր շփումների ժամանակ, և շարունակում է թթի տակ երգել, բացելով սառույցի կաղապարը և քառակուսի բեկորները մեկը մյուսի ետևից գցելով գավաթի մեջ այնպես, կարծես ինչ-որ կարևոր քիմիական լուծույթ պիտի ստանա):

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ (շարունակելով).— Ժամանակն այնպես շուտ է անցնում... Ոչ մի բան չի կարող դրան հասնել... Մահն այնպես շուտ է վրա հասնում: Դեռ չես հասցնում կյանքին ընտելանալ, մեկ էլ տեսար... մարդու գլխին այնպիսի փորձանք է գալիս... Դե, հասկանո՞ւմ եք, մեկը պետք է իրար շատ սիրենք. միասին լինենք... բոլորս միասին լինենք ու որքան հնարավոր է՝ մտերիմ... մանավանդ հիմա, երբ սև բախտը եկել ու շրջում է մեր տանը... սուսնց հրավերքի...

(Ծփոթված գրկելով Բրիկին, գլուխը հայում է նրա ուսին: **Գուփրը թղթերն արդեն վերադարձրել է Մեյիին: Վերջինս դրանք տեղավորում է պալուսակի մեջ՝ մռայլ ու դժկամությամբ):**

ԳՈՒՓՐ.— Մեծ Մայրի՛կ... Մե՛ծ Մայրիկ... (Կանգնում է նրա թիկունքում՝ նախանձից լարված):

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ (Գուփրի ձայնին անտարբեր).— Բրի՛կ, մորդ չե՞ս լսում, հը՞...

ՄԱՐԳՐԵԹ.— Մե՛ծ Մայրիկ, Բրիկը լսում է քեզ և հասկանում...

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Ա՛խ, Բրի՛կ... Մեծ Հայրիկի որդի՞... Նա այնքան շատ է սիրում քեզ: Գիտե՞ս, թե ինչ երջանկություն կլինի նրա համար, եթե իր երազանքն իրականանա: Քանի որ Մեծ Հայրիկը հեռանալու է մեզանից... քանի որ նա ստիպված հեռանալու է... մի երեխա պարգևեք նրան: Բրի՛կ, քո տղան... Մեծ Հայրիկի թոռնիկը, եթե իր հոր նման լինի, այնպես, ինչպես դու ես քո հորը նման...

ՄԵՅԻ (չրխկոցով փակում է պալուսակը).— Դե... ճիշտն ասած դա այնպիսի ցանկություն է, որ Մեզգին ու Բրիկը հազիվ թե կարողանան խոստանալ, որ կկատարեն...

ՄԱՐԳՐԵԹ (անսպասելի հանդարտությամբ, բայց ներքին լարու-

մով).— Հիմա բոլորդ ինձ լսեք: (Բռունցքներն ամուր սեղ-
մած, գալիս է սենյակի կենտրոն):

ՄԵՅԻ.— Դու որևէ բա՞ն ես ուզում ասել, Մեզգի՛:

ՄԱՐԳՐԵԹ.— Ես ուզում եմ մի նորություն հայտնել:

ԳՈՒՓՐ.— Հո մարզական նորությունն չի՞, Մեզգի՛:

ՄԱՐԳՐԵԹ.— Ես ու Բրիկը... երեխա եմք ունենալու...

(Մեծ Մայրիկը խոր շունչ է քաշում: Լռություն: Մեծ Մայրիկը տեղից ելնում է):

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Մեզգի՛... Բրի՛կ... Հավատա՞նք լսածներիս...

ՄԵՅԻ.— Ծիշտ է ասում, հավատա՞նք...

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Ա՛խ, իմ, իմ... Դա Մեծ Հայրիկի երազանքն է...

նրա երազը կատարվում է... Հենց հիմա կգնամ նրան կհայտ-
նեմ այդ լուրը՝ նախքան նրա...

ՄԱՐԳՐԵԹ.— Մենք վաղը կասենք: Հիմա կարիք չկա անհան-
գըստացնելու նրան:

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Ես ուզում եմ այդ լուրը հայտնել նրան... քնե-
լուց առաջ: Հենց հիմա Մեծ Հայրիկին պետք է ասեմ, որ նրա
երազն իրականացավ... Իսկ Բրիկը... Երեխան քեզ կստիպի,
որ խելքդ գլուխդ հավաքես ու վերջ տաս խմելուն...

(Բաժակը խլում է նրա ձեռքից): Հայրական պատասխա-
նատվությունը կստիպի...

(Նրա դեմքը ծամածռվում է հուզմունքից. ձեռքը թափ տալով
ու հեկեկալով դուրս է վազում սենյակից, գոչելով՝ «Ես հենց հի-
մա կասեմ Մեծ Հայրիկին...»):

Նրա ձայնը մարում է սրահում: Բրիկը զարմացած ուներն է
թոթվում և սառցաբեկորը ուրիշ բաժակի մեջ է գցում: Մարգրե-
թը արագ մոտենում է նրան, ինչ-որ բան փսփսալով, խմիչք է
լցնում՝ կատաղությամբ նայելով նրա դեմքին):

ԲՐԻԿ (անտարբեր).— Շնորհակալություն, Մեզգի՛: Լավ բաժին
լցրիր: (Մեյին մոտենում է Գուփրին, մոլեգնած խեթկում է
նրան՝ փնջացնելով):

ԳՈՒՓՐ (կողմ հրելով կնոջը).— Բրի՛կ, այդ վիսկիից մի քիչ էլ
ինձ չէի՞ր տա:

ԲՐԻԿ.— Իհարկե, Գո՛ւփր: Ահա, ինչքան ուզում ես, լցրու բա-
ժակդ:

ԳՈՒՓՐ.— Կլցնեմ:

ՄԵՅԻ (նղճաճ ձայնով).— Դե, իհարկե, մենք գիտենք, որ սա...

ԳՈՒՓՐ.— Զայնդ կտրի՛ր, Մեյի՛...
ՄԵՅԻ.— Ո՛չ: Ես համոզված եմ, որ Մեգգին հորինում է այդ պատմությունը...

ԳՈՒՓՐ.— Գրո՛ղը տանի, ասացի ձայնդ կտրի՛ր...

ՄԱՐԳՐԵԹ.— Տե՛ր Աստվա՛ծ... Ես չէի կարծում, որ իմ այս փոքրիկ լուրը այսքան մեծ աղմուկ կբարձրացնի:

ՄԵՅԻ.— Այդ կինը հղի չէ:

ԳՈՒՓՐ.— Իսկ ո՞վ ասաց, որ հղի է:

ՄԵՅԻ.— Ինքը:

ԳՈՒՓՐ.— Դա ի՞նչ նշանակություն ունի: Հո բժիշկ Բոն չի ասել:

ՄԱՐԳՐԵԹ.— Ես բժիշկ Բոն չեմ այցելել:

ԳՈՒՓՐ.— Իսկ ո՞ւմ ես այցելել, Մեգգի՛:

ՄԱՐԳՐԵԹ.— Հարավի ամենալավագույն կանացի բժիշկներից մեկին:

ԳՈՒՓՐ.— Հա՛-հա՛-հա՛-հա՛... Հասկանում եմ...

(Հանում է մատիտն ու ծոցատետրը): Նրա ազգանունը չէի՛ր ասի:

ՄԱՐԳՐԵԹ.— Դե դու միգուցե չճանաչես նրան, պարո՛ն փաստաբան:

ՄԵՅԻ.— Նա ստում է: Այդպիսի կանացի բժիշկ գոյություն չունի...

ՄԱՐԳՐԵԹ.— Ունի՛, ունի՛... Այնպես, ինչպես իմ երեխա՛ն... Բրիկի երեխան...

ՄԵՅԻ.— Դու չես կարող երեխա ծնել: Ախր Բրիկը չի ուզում հետը քնել...

(Բրիկը միացնում է ձայնարկիչը: Զազային երաժշտությունը խլացնում է Մեյի ձայնը):

ԳՈՒՓՐ.— Դու էլ ժամանակ գտար... անջատի՛ր...

ՄԵՅԻ.— Դու ստում ես... Ի՞նչ է, չգիտենք, որ Բրիկը չի ուզում հետը քնել: Մտքովդ չանցնի, թե կարող ես խաբել մեզ, իսկ այս... խեղճ ծերունուն՝ հիմարացնել:

(Ամբողջ տնով մեկ տարածվում է Մեծ Հայրիկի տանջալից աղաղակը: Մարգրեթը իջեցնում է նվագարկիչի ձայնը, որն հագիվ է լսվում: Աղաղակը կրկնվում է):

ՄԵՅԻ (ահաբեկված).— Գո՛ւփր, լսեցի՛ր... Մեծ Հայրիկը...

ԳՈՒՓՐ.— Երևի ցավերը սկսվել են:

ՄԵՅԻ.— Գնանք նրա մոտ, Գո՛ւփր...

ԳՈՒՓՐ.— Այո, գնանք, որպեսզի սիրահար թոշնակները մենակ մնան իրենց բնում ու գեղգեղան:

(Նախ **Գուփրն** է դուրս գալիս, հետո՝ **Մեյին**, որը դռան շեմին հասնելով, շրջվում է ու, դեմքը ծամածռելով, փնչացնում **Մարգրեթի վրա**):

ՄԵՅԻ.— Ստախո՛ւ... (Իր ետևից աղմուկով ծածկում է դուռը:

Մարգրեթը թեթևացած շունչ է առնում ու փոքր-իճչ անվրտահ մոտենում է **Բրիկին**, բռնում նրա ձեռքը):

ՄԱՐԳՐԵԹ.— Ընորհակալություն, որ... լուռ մնացիր...

ԲՐԻԿ.— Չարժե, **Մեգգի՛**:

ՄԱՐԳՐԵԹ.— Դու ասպետություն արեցիր, որ նրանց մոտ ինձ չխայտառակեցիր:

ԲՐԻԿ.— Դեռ չի սկսվել:

ՄԱՐԳՐԵԹ.— Ի՞նչը:

ԲՐԻԿ.— Կաթկթոցը:

ՄԱՐԳՐԵԹ.— Այն, որ լսում ես գլխիդ մեջ ու հանգստանո՛ւմ: Այո՛, սիրելի՛ս:

ԲՐԻԿ.— Ըհը: Բայց դեռ չի սկսվում... Պետք է այնպես անես, որ լսեմ, թե չէ... չեմ կարող քնել:

ՄԱՐԳՐԵԹ.— Ես գիտեմ մտքիդ իճչ է:

ԲՐԻԿ.— **Մեգգի՛**, բազմոցի վրայի բարձր տուր:

ՄԱՐԳՐԵԹ.— Ես այն կդնեմ մեր մահճակալին, սիրելի՛ս:

ԲՐԻԿ.— Ոչ, դիր բազմոցին... Չէ՞ որ ես այնտեղ եմ քնում:

ՄԱՐԳՐԵԹ.— Այս գիշեր բարձր մահճակալին դնեմ, **Բրի՛կ**:

ԲՐԻԿ.— Ասացի բազմոցին դիր: (**Կաղալով մոտենում է խմիչքների պահարանին: Երեք բաժին վիսկի է լցնում ու խմում. կանգնած լուռ սպասում է: Հետո իսկույն շրջվում է, ժպտալով ասում**): Ահա... սկսվեց...

ՄԱՐԳՐԵԹ.— Ի՞նչը:

ԲՐԻԿ.— Կաթկթոցը... (Նա անասանան գոհությամբ, կաղալով դուրս է գալիս պատշգամբ՝ վիսկին ձեռքին: Լսվում է հեճակի թակոցը, երբ **Բրիկը** հեռանում է տեսադաշտից: Հետո պատշգամբում սկսում է կամացուկ երգել):

Մարգրեթը մտամուռ մի քանի վայրկյան պահում է մեծ բարձր, կարծես, դա նրա միակ ընկերն է: Հետո բարձր նետում է անկողնուն: Հապշտապ մոտենում է խմիչքների պահարանին, հավաքում է բոլոր շշերը, վազում է սենյակից դուրս՝ դուռը թողնելով

կիսաբաց: Պատշգամբից լսվում է Բրիկի ձայնը: Նա սենյակ է մտնում, մահճակալին տեսնում է բարձր, թեթև ժպտում է ու վերցնում է այն: Այն պահին, երբ Մարգրեթը սենյակ է վերադառնում, տեսնում է Բրիկին՝ բարձր թևի տակ: Մարգրեթը կամացուկ ծածկում է դուռը, հենվում է դրան ու հրապուրանքով ժպտում Բրիկին: ՄԱՐԳՐԵԹ.— Բրի՛կ... ես միշտ այն կարծիքին եմ եղել, որ դու ինձանից ուժեղ ես և կարող ես ինձ՝ քեզ ենթարկել... Բայց երբ սկսեցիր... խախել... գիտե՛ս ինչ... Գուցե լավ բան չեմ ասում, բայց... ես քեզանից ուժեղ եմ և կարող եմ ավելի լավ սիրել քեզ... Բարձր շտանես: Իզուր է, նորից անկողնուն կդնեմ...

Բրի՛կ...

(Նա մարում է բոլոր լույսերը, միայն մահճակալի վարդագույն լապտերիկն է վառվում):

Ես իրոք եղել եմ բժշկի մոտ ու հիմա գիտեմ, թե ինչ պետք է անել: Հետո, Բրի՛կ... ամսով իմ հղիանալու ժամանակն է...

ԲՐԻԿ.— Հասկանում եմ, Մեգգի՛: Բայց դու ինչպե՛ս կարող ես հղիանալ այն մարդուց, որ ոչ թե քեզ, այլ վիսկի է սիրում...

ՄԱՐԳՐԵԹ.— Ես դատարկել եմ այդ մարդու խմիչքների պահարանը ու թույլ չեմ տա նրան խախել այնքան ժամանակ, քանի դեռ չի գոհացրել իմ ցանկությունը:

ԲՐԻԿ.— Մեգգի՛, երևի դու գժվել ես, հա՛...

ՄԱՐԳՐԵԹ.— Գնա, ինքդ տես, պահարանի բոլորովին դատարկ է:

ԲՐԻԿ.— Դե լավ... անիծյալ լինեմ, եթե...

(Ձեռքը երկարում է, որ հենակը վերցնի, բայց կինը հրում է նրան, հենակը վերցնելով՝ պատշգամբ է դուրս գալիս ու ճաղերի վրայից նետում է փողոց, հետո շնչասպառ վերադառնում սենյակ):

Ոտնաձայներ: Մեծ Մայրիկը ներս է խուժում՝ դեմքը բոլորովին այլաչված ու հևասպառ):

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Ա՛խ, Աստվա՛ծ իմ, Աստվա՛ծ իմ, ուր է այդ... դեղը...

(Մարգրեթը նրան է մեկնում դոկտոր Բոի թողած փաթեթը):

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ.— Ես չեմ կարող դիմանալ: Ա՛հ, Տե՛ր Աստվա՛ծ... Բրի՛կ... Բրի՛կ, որդի՛...

(Մայրը արագորեն մոտենում է որդուն: Բրիկը փորձում է

**խուսափել մոր արցունքոտ համբույրներից: Մարգրեթը զսպասե
ժպիտով հետևում է նրանց):**

Զավա՛կս, Մեծ Հայրիկի սիրելի՛... Փոքրիկ՛ Հայրիկ...

(Հեկեկալով դուրս է վազում սենյակից):

ՄԱՐԳՐԵԹ.— Եվ այսպես, մենք սուտը իրականությունն կդարձ-
նենք այս գիշեր: Իսկ հետո վիսկու շշերը նորից այստեղ
կբերեմ և միասին կխմենք... այս գիշեր... այս տանը, երբ
մահն է այցելել... Ի՞նչ ասացիր...

ԲՐԻԿ.— Ես ոչինչ չասացի: Կարծում եմ, ասելու ոչինչ չկա:

ՄԱՐԳՐԵԹ.— Ա՛խ, թո՛ւյլ մարդիկ, թո՛ւյլ ու գեղեցի՛կ մարդիկ...
ինչ շուտ եք հուսահատվում... Պարզապես պետք է, որ մեկը
(Մարում է մահճակալի վարդագույն լամպը)... գրկի ձեզ:
Քնքշորեն... քնքշորեն ու սիրով... Եվ...

(Վարագույրը սկսում է դանդաղորեն իջնել):

Տե՛ր Աստված... Բրի՛կ, ես իսկապես... սիրում... եմ քեզ...
Ես... ախր ես... քեզ...

ԲՐԻԿ (ժպտում է հրապուրիչ տխրությամբ).— Այ թե հետաքրքիր
կլինի, եթե դա ճշմարիտ լինի, հը՞...

Վ ա ր ա գ ու յ ը

ԺԱՆ ԿՈԿՏՈՐ

ԶԱՅՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ

(պիես մեկ գործող անձի համար)

Հեղինակը սիրում է փորձեր անել: Նա մի սովորույթ գերի է. տեսնելով, որ մի բան է արել, հարցնում է ինքն իրեն, թե ուրիշ ինչ է ուզում անել¹: Այս սովորույթը գուցե այնքան էլ բարդ չէ, ինչպես թվում է առաջին հայացքից:

Մի բանի շարժառիթներ նրան դրդել են գրելու այս պիեսը:

ա) Գաղտնախորհուրդ շարժառիթները, որոնք ստիպում են գրել, հակառակ ամբողջ խորունկ ծուլությանը, որ այդ պահին հրաժարվում է հնազանդվել և, անկասկած, մի անակրնկալ հեռախոսային խոսակցության հուշը, ձայնի երանգի ծանրակշիռ նորօրինակությունը, լռության հավիտենականությունը:

բ) Մեղադրում են, նրա երեսովն են տալիս, թե շատ է օգտվում զանազան հնարքներից, շատ է բարդացնում իր պիեսները՝ մեքենայացնելով բեմը, թե չափից ավելին է ակրնկալում միզանցեմից: Ուստի և հեղինակը գերադասում է դիմել ավելի պարզին. մի գործողություն, մի սենյակ, մի գործող անձ, սեր և ժամանակակից պիեսների մի ծանոթ մասունք՝ հեռախոս:

գ) Ռեալիստական թատրոնը կյանքին այնքան է մոտիկ, որքան Գեղեցիկ Արվեստների սրահի կտավները բնությանը: Պետք է նկատել մի նատաժ կին, ոչ թե մի ստույգ, որոշակի կին². հիմար կամ խելոք, այլ մի անհայտ-անանուն կին: Խուսափել խոսքի փայլից, փոխադարձաբար ճշգրիտ և անթարթ դիպլոմից: Սիրային խոսքերը նույնքան անտանելի կլինեն, որքան մանկական բառերը, մի խոսքով՝ թատրոն խաղալը, որը թունավոր, բերանին փակչելով, ծածկամտաբար փոխարինել է թատրոնին, իսկական թատրոնին, Սոֆոկլեսի³, Ռասինի, Մոլիերի⁴ կենդանի լոգիկային:

Հեղինակը պատկերացնում է, թե ինչպիսի դժվար բան է ձեռնարկում: Ահա թե ինչու, Վիկտոր Հյուգոյի⁵ խորհրդի համաձայն, բարդ ինտրիգի առաջնորդությամբ, ողբերգությունը և դրաման միաձուլել է կատակերգությանը, մի միջոց, որն

ամենանվագ հնարավորությունն է տալիս վայելուչ լուծելու սրտի գործերը:

դ) Եվ վերջապես, քանի որ հեղինակին հաճախ են ասում, թե իր դերակատարներից՝ նրանց ձիրքերի համար կորչատաբեր հնազանդություն է պահանջում և իրեն առաջ է մղում, նա ցանկացավ դժվարընթեռնելի մի պիես գրել, որը խաղապատրվակ կլինի դերասանուհու համար, ճիշտ այնպես, ինչպես իր «ԹՈՄԵՈՆ» կոչված է խաղապատրվակ լինելու բեմադրության համար⁶: Դերասանուհու խաղը ստվերում կանհետանա. մենք նկատի ունենք այն հանգամանքը, որ դրաման առիթ կստեղծի երկու դեր խաղալու, մեկը՝ երբ դերասանուհին խոսում է, մյուսը՝ երբ դերասանուհին լսում է և ուրվագծում անտեսանելի պերսոնաժի բնավորությունը, որը բացահայտվելու է լռություններով:

Հ. Գ. Սխալ կլինի կարծել, թե հեղինակը հոգեբանական խնդիրների վեժն է որոնում: Թատերական խնդիրներ լուծելու մասին է խոսքը: Թատրոնի, քարոզի, տրիբունայի և գրքերի խառնուրդը մի ցավ է, որի դեմ պետք է անպայման պայքարել: Մաքուր թատրոնը մոդայիկ արտահայտություն կդառնար, եթե մաքուր թատրոնը կամ մաքուր պոեզիան չլրացվեին ինչ-որ բանով: Մաքուր պոեզիան նշանակում է պոեզիա, իսկ մաքուր թատրոնը՝ թատրոն: Ուրիշ բան գոյություն ունենալ չի կարող:

Հեղինակն ավելացնում է, որ այս պիեսը տվել է «Կոմեդի Ֆրանսեզին»⁷, որպեսզի վերջ տա նախապաշարումներից վատթարագույնին, այն նախապաշարումին, որը նոր թատրոնն ունի պաշտոնական բեմերի հանդեպ: Քանի որ բուլվարը իր դիրքերը զիջել է կինեմատոգրաֆին և այսպես կոչված ավանգարդիստական բեմերը կամաց-կամաց բուլվարի դիրքերն են գրավել, ապա միայն պաշտոնական շրջանակն է ի վիճակի ներկայացնելու մի գործ, որի նորությունը աչքի չի զարնում:

Նոր բուլվարի հասարակությունը ամեն ինչի սպասում է. նա ծարավ է զգայությունների, ոչնչի հանդեպ ակնաճանք չունի: «Կոմեդի Ֆրանսեզի» հանդիսատեսը առաջժմ ծարավ է զգացմունքների⁸: Հեղինակների ինքնությունը կորչում է հանուն թատրոնի շահերի, մինչդեռ «Կոմեդի Ֆրանսեզի» ներ-

կայացումները ստեղծագործություններին ընդունակ են տալու անհրաժեշտ ծավալը և տարածությունը և փրկում են իրակացության ձևագեղծումից:

ԴԵԿՈՐԸ

Բեմը փոքրացված է, շրջապատված կարմիր նախշավոր վարագույրով. ներկայացնում է տարբեր ոճերով կահավորված կանացի ննջարանի մի անկյունը. սենյակը մույթ է, կապույտ երանգների մեջ, ձախից մի մահճակալ է՝ խառնակ անկողինով, իսկ աջից մի կիսաբաց դուռ է՝ դեպի մի շատ լուսավոր, սպիտակ լողասրահ: Կենտրոնում, պատի վրա, որևէ գլուխգործոցի վերատպություն՝ ստորահակ փակցված կամ, ավելի շուտ, ընտանեկան մի նկար. մի խոսքով, դժնդակ կերպարանքով մի պատկեր:

Հուշարարի դիմաց մի ցածր աթոռ կա և մի փոքր սեղան: Սեղանի վրա՝ հեռախոս, գրքեր և խիստ ու դաժան լույս գցող մի լամպ:

Վարագույրը բացում է սպանության մի սենյակ: Մահճակալի առջև, հաստակին, երկար գիշերանցով մի կին է պառկել, կարծես սպանված լինի: Լռություն: Կինը ելնում է, փոխում դիրքը և նորից մնում անշարժ: Վերջապես վճռում է և վեր կենում: Մի վերարկու է վերցնում մահճակալի վրայից և, մի պահ հեռախոսի մոտ կանգ առնելով, շարժվում է դեպի դուռը: Դռանը դիպչելուն պես լսվում է զանգը: Նա գցում է վերարկուն և նետվում դեպի հեռախոսը: Վերարկուն խանգարում է նրան, ոտքով մի կողմ է հրում: Վերցնում է լսափողը:

Այս պահից սկսած նա կխոսի կանգնած, նստած (մեջքով, կիսադեմ, դիմացից), բազկաթոռի ետևը՝ ծնկաչոք, գրլուխը թիկնակի ետևը կամ թիկնակին հեռած, հեռախոսի թելը ետևից քարշ տալով, կճեմի սենյակում աչքքան, մինչև որ սենյակի ծայրում բերանքսիվաչր կընկնի մահճակալին: Այստեղ նրա գլուխը կկախվի և լսափողը խճաքարի պես ձեռքից կընկնի:

Յուրաքանչյուր դիրք պետք է ծառայի մոնոլոգ-դիալոգի մի փուլին (շան փուլը, սրախոսության փուլը, արճնեմտի

փուլը և այլն): Նյարդայնությունը չպետք է հապճեպությամբ արտահայտվի, այլ դիրքերի հաջորդականությամբ, որոնցից յուրաքանչյուրը հարմարավետության պակասը, ծայրաստիճան անհարմարությունը պիտի շեշտի:

Գիշերանոցը, առաստաղը, դուռը, բազկաթոռը, ծածկոցները, առաստաղից կախված լուսամփոփը ճեփ ճերմակ են:

Հուշարարի խցիկից պետք է այնպիսի մի լույս գցել, որը նստած կնոջ թիկունքում մեծ ստվեր կգցի և կընդգծի լուսամփոփի դժնի լուսավորումը:

Այս պիեսի ոճը բացառում է այն ամենը, որը աշխուժություն, կրակ և փայլ կհիշեցնի: Այն դերասանուհուն, որն այս պիեսը կխաղա առանց սեփական մեկնաբանության, հեղինակը հանձնարարում է վիրավորված կնոջ ոչ մի հեզմանք, ոչ մի դառնություն չդնել: Պերսոնաժը մի միջակ զոհ է, ոտից գլուխ սիրահարված մի կին: Նա լուկ մի հնարք է ուզում բանեցնել, օգնում է տղամարդուն, որպեսզի վերջինս իր սուտը խոստովանի, որպեսզի անշուք հիշատակ չթողնի: Հեղինակն ուզում է, որ դերասանուհին այնպիսի տպավորություն ստեղծի, իբր արյունահոսության մեջ արյուն է կորցնում ինչպես վիրավոր գազան, որ գործողությունը, ասես, արյունով լցված սենյակում վերջացնի:

Անհրաժեշտ է հարգել հեղինակային տեքստը, որտեղ լեզվական սխալները, կրկնությունները, գրական դարձվածքները, տափակությունները արդյունք են ուշադիր և չափավոր ընտրության:

Ալո՛, ալո՛, ալո՛ Ոչ, տիկի՛ն, մի քանի հոգի ընկել են
զծի մեջ, անջատեք Ալո՛ Սա բնակարան է . .
. Օ՛ ալո՛ Բայց, տիկի՛ն, ինքներդ անջա-
տեք Ալո՛: Մադմուազե՛լ, ալո՛ ալո
Հանգիստ թողեք մեզ Ոչ, դուկտոր Ծմիդտը չէ
Զրո ութ, ոչ թե զրո յոթ ալո՛ ծիծաղելի է
Ինձ զանգում են և ես չեմ կարող խոսել (Անջատում է, ձեռքը լսա-
փողի վրա է: Զանգ) Ալո՛ Բայց, Տիկի՛ն, ի՞նչ
եք ուզում, որ անեմ Դուք շատ տհաճ եք Ինչ-

պես թե իմ մեղքով բոլորովին բոլորովին . . .
 Այո՛ այո՛ մաղմուազե՛լ Ինձ զանգում
 են և ես չեմ կարող խոսել: Գծի վրա շատ մարդ կա: Այդ կնոջն
 ասեք մի կողմ քաշվի: **(Անջատում է: Զանգ):** Այո՛, դո՛ւ ես
 դո՛ւ ես Այո Ես շատ վատ եմ լսում
 դու շատ հեռու ես, շա՛տ հեռու Այո՛ սուկալի
 է գծի վրա շատ մարդ կա Նորից զանգիր: Այո՛:
 Նորից զանգիր Ասում եմ, նորից զանգիր ինձ
 Բայց, տիկի՛ն, մի՛ խանգարեք: Ես ձեզ կրկնում եմ, որ դուկտոր
 Շմիդտը չեմ Այո՛ **(Անջատում է: Զանգ):** Ա՛հ,
 վերջապես դու ես այո շատ լավ . . .
 այո՛ այո Իսկական տառապանք էր այս ամ-
 բոխի միջով քեզ լսելը այո այո. ոչ
 բախտդ բերել է Տասը րոպե առաջ եկա
 Դու էլ չե՞ս զանգել Ա՛հ ոչ, ոչ Ես դրո-
 սում ճաշեցի Մարթայի մոտ Տասնմեկն անց
 տասնհինգ պետք է լինի Տա՛նն ես Ուրեմն ճա-
 յիր պատի էլեկտրական ժամացույցին Ես էլ հեկնց այդ
 էի կարծում Այո, այո, սիրելի՛ս Երեկ երեկո-
 լա՛ն: Երեկ երեկոյան ես արևմիջապես պատկեցի և քանի որ չէի
 կարողանում քնել, քնամար խնկեցի ոչ ընդամե-
 իս մեկ հատ ժամը իննիս Գլուխս մի քիչ ցա-
 վուս էր, բայց կարողացա սթապիլել: Մարթան եկավ: Նա ինձ
 հետ նստեց: Գնումներ արեցի: Ժամը իննիս վերադարձա
 տու. Բոլոր նամակները դրեցի դեղին պայուսակի մեջ: Ես
 Ինչպե՛ս Ծատ ուժեղ Երդվում եմ Ես
 շատ, շատ քաջություն ունեմ Հետո՛: Հետո հագնվեցի,
 Մարթան եկավ իմ ետևից, ահա ամբողջը Ես նրա մոտից
 եմ գալիս: Հիանալի էր: Ծատ, շատ լավ Տեսքն այդպի-
 սին է, բայց ինքն այդպես չէ: Դու ճիշտ ես, ինչպես միշտ
 Վարդագույն շրջագետտս, մուշտակի հետ Սև գլխարկս
 Այո, գլխարկս դեռ գլխիս է Ոչ, ոչ, չեմ ծխել:
 Ընդամենը երեք սիգարետ եմ ծխել Այո, ճիշտ է
 Այո, այո դու շատ բարի ես Իսկ դո՛ւ, դու էլ ես
 տր եկե՛լ Մնացել ես տանը Ի՞նչ դատավարու-
 թուն Ա՛խ, հա պետք չէ այդքան հոգնել
 Այո՛, այո՛, մի անջատեք: Այո՛ այո՛, սիրելի՛ս

ալո՛ր Հենց որ անջատեն, անմիջապէս նո՛րից զանգիր
 բնական է Ալո՛ր: Ոչ այստեղ եմ . . .
 Պայուսա՛կը Քո և իմ նամակները: Երբ որ ուզես կարող
 ես վերցնել Մի քիչ դժվար է Հասկանում եմ
 Օ՛հ, սիրելի՛ս, ներողություն մի խնդրիր, դա շատ բնական
 է և տխմարը ես եմ Դու շատ ազնիվ ես Դու շատ
 ազնիվ ես Ես առավել ևս, ես չէի կարծում, թե այդքան
 ուժեղ եմ Կարիք չկա ինձնով հիսուսալու: Ես լուսնոտի
 պես հազիվ եմ շարժվում: Հագնվում եմ, դուրս գալիս, վերադառ-
 նում, մեքենայորեն: Վաղը գուցե ավելի պակաս լինի քաջությու-
 նըս Դո՛ւ Ոչ ոչ, սիրելի՛ս, ես քեզ մե-
 դադրելու մտադրություն չունեմ ես ես
 թող որ Ինչպե՛ս Ծատ բնական է Ընդ-
 հակառակը Մենք մենք որոշել էինք անկեղծ
 լինել, և ես հանցանք կհամարեի, եթե մինչև վերջին րոպեն ա-
 ռանց որևէ բան ասելու թողնեիր ինձ: Հարկածը շատ դաժան կլի-
 ներ, մինչդեռ, ես ժամանակ ունեցա ընտելանալու, հասկանալու
 Ի՛նչ կոմեդիա Ալո՛ր Ո՛վ որ
 ես քո առաջ կոմեդիա խաղա՛մ Դու ինձ ճանաչում ես, ես
 անկարող եմ ինքս ինձ վրա հույս դնել Բոլորովին
 Բոլորովին Ծատ հանգիստ Դու կզգայիր այդ
 Ասում եմ, դու կզգայիր այդ: Ես որևէ բան թաքցնողի
 ձայն ունեմ Ոչ: Ես որոշեցի քաջ լինել և կլինեմ
 Թույլ տուր դա այդ դեպքը չէ Հնարավոր է,
 բայց որքան կուզես նախապատրաստվիր դժբախտությանը, միև-
 նույն է նա գալիս է և տասխալում քեզ Մի չափազանցիր
 այնուամենայնիվ, ես ժամանակ ունեցա ընտելանալու:
 Դու հոգացիր այդ մասին Մեր սերը շատ բաների դեմ
 էր գնում: Պետք էր դիմադրել, հրաժարվել հինգ տարվա երջան-
 կությունից կամ ոխկն ընդունել: Ես երբեք չէի մտածում կյանքս
 դասավորել: Եվ շատ թանկ եմ վճարում անգնահատելի երջան-
 կության համար Ալո՛ր ան-գը-նա-հա-տե-լի և ես
 չեմ արտոսում ես չեմ Ես բնավ չեմ արտոսում,
 բնավ, բնավ Դու դու սխալվում ես
 դու դու դու սխալվում ես: Ես Ալո՛ր
 Ես իմ արժանին եմ ստացել: Ես ուզում էի խենթ լինել և
 խենթի պես երջանիկ սիրելի՛ս լսիր

ասլո՛ սիրելի՛ս թող որ ասլո՛
 թող որ խոսեմ Քեզ մի մեղադրիր: Այդ ամենը իմ մեղ-
 քով է: Այո, այո Հիշում ես կիրակին Վերսալում⁹ և հե-
 տագիրը Ա՛հ Ուրեմն Այդ ես էի, որ
 ուզեցի գալ, այդ ես էի, որ բերանդ փակեցի, այդ ես քեզ ասացի,
 որ ինձ համար ամեն ինչ միևնույն է Ոչ ոչ . . .
 ոչ այդ հարցում դու ճիշտ չես Ես ես
 ստաջիկը զանգեցի ոչ, երեքշաբթի էր երեք-
 շաբթի Ես դրսևում վստահ եմ: Երեքշաբթի, ամսի 27-ին:
 Քո հեռագիրը ես ստացա երկուշաբթի երեկոյան, ամսի 26-ին:
 Դու լավ գիտես, որ այդ թվերը ես անգիր հիշում եմ քո
 մա՛չքը: Ինչո՞ւ Իսկապես որ չարժե Ես դեռ չգի-
 տեմ Այո գուցե Օ՛, ոչ, իհար՛կե, ոչ
 անմիջապես, իսկ դո՞ւ Վա՛ղը Ես չգիտեի, որ
 այդքան արագ Այդ դեպքում, սպասիր դա շատ
 հեշտ է վաղն առավոտյան պայուսակը դռնապանի մոտ
 կլինի: Կմնա միայն, որ Ժողեֆը գա և վերցնի Օ՛, ես,
 գիտես, հնարավոր է, որ մնամ, ինչպես նաև հնարավոր է, որ գը-
 նամ գյուղ, մի քանի օր մնամ Մարթայի մոտ Նա այն-
 սեղ է: Դեռադևն է, նետվում ինչպես հալածյալ հոգի: Երեկ ամ-
 բողջ օրը պսակեկ էր շքամուտքի և սեղեսկի միջև: Նայում էր ինձ:
 Ակա՛նցնեք տնկել էր: Ամենուրեք քեզ էր փնտրում: Այնպիսի տեսք
 ուներ, կարծես մեղադրում էր, որ մնում եմ տանը և չեմ գնում
 քեզ փնտրելու Ես կարծում եմ, ավելի լավ կլինի, որ դու
 նրան վերցնես Եթե այդ կենդանին պիտի դժբախտ լի-
 նի Օ՛, դե ես Դա կնոջ մոտ մնացող շուն չէ:
 Ես նրանով ինչպես հարկն է չեմ կարողանա զբաղվել: Ես չեմ
 կարողանա նրան դուրս տանել: Ավելի լավ կլինի, որ քեզ մոտ
 * մնա Նա ինձ շատ կմոռանա Կտեսնենք
 Կտեսնենք Դա առանձնապես բարդ չէ: Պիտի ասես, որ
 բարեկամիդ շունն է: Նա շատ է սիրում Ժողեֆին: Ժողեֆը կգա
 նրան կտանի Կարմիր վզոցը կկապեմ: Նա համար չու-
 նի Կտեսնենք այո այո, սիրելի՛ս . . .
 եղալ այո, այո, սիրելիս Ի՞նչ ձեռնոցներ
 Մորթե՛ ձեռնոցները, այն ձեռնոցները, որ հագնում էիր մեքենա
 վարելիս Չգիտեմ: Չեմ տեսել: Հնարավոր է: Հիմա նա-
 յեմ Դու սպասիր: Մի անջատիր:

(Լոսամփոփի ետևում գտնվող սեղանի վրայից վերցնում է մորթե ձեռնոցները և դնում կրծքին: Նա խոսում է ձեռնոցները այտին հպած):

Այո՛ այո՛ ոչ ես փնտրեցի պահա-
րանում, բազկաթոռի վրա, նախասենյակում, ամենուր, ոչ մի տեղ
չկան Լսիր ես նորից կնայեմ, բայց ես վստահ
եմ Եթե վաղն առավոտյան հանկարծ գտնեմ, պայուսա-
կի հետ կողարկեմ Ինչպե՛ս, սիրելի՛ս Նամակ-
ները այո նամակները վկայեա Ուզում
եմ մի հիմար բան խնդրել քեզնից Ոչ, ահա թե ինչ կու-
զեի ասել, եթե նամակները վատելու ես, շատ կուզեի, որ մոխիրը
պահես այն խեցեպատ ամանի մեջ, որ նվիրել եմ սիգարետների
համար և, որ դու Այո՛ ոչ ես ապուշ
եմ ներիր ինձ: Ես շատ ուժեղ էի **(Լալիս է)** Լավ,
վերջացրի: Քիթս սրբում եմ: Ի վերջո, ես այդ մոխրով էլ գոհ կլի-
նեմ, վերջ Ի՛նչ լավն ես Ա՛հ **(Չա-
կերտների մեջ եղած տեքստը դերասանուհին կասի իր լավ իմա-
ցած օտար լեզվով):** «Ինչ վերաբերում է քրոջդ փաստաթղթերին,
ես ամբողջը վատեցի խոհանոցի վառարանում: Սկզբում մտածեցի
բացել, որպեսզի վերցնեմ այն նկարը, որի մասին ասել էիր, բայց
բանի որ ուզում էիր, որ ամբողջը վատեմ, ես ամբողջը վատեցի . . .
Ա՛հ լավ լավ այո» Ծիշտ է,
դու խալաթ ես հագել Պատկո՛ւմ ես Պետք չէ
այդքան ուշ աշխատել, եթե վաղը շուտ ես զարթնելու, ուրեմն
պետք է որ պառկես: Այո՛ այո՛ իսկ հի-
մա՛ Բայց ես շատ բարձր եմ խոսում Հիմա դու
ի՞նձ լսո՞ւմ ես Սսում եմ, հիմա ի՞նձ լսո՞ւմ ես
տարօրինակ է, որովհետև քեզ այնպես եմ լսում, կարծես կողքիս●
լինես՝ նույն սենյակում Այո՛ այո՛, այո՛
Է՛հ, հիմա էլ ես եմ քեզ վատ լսում Այո, բայց շատ հեռ-
վից, շատ հեռվից Դու ի՞նձ լսում ես: Հերթով իրար չենք
լսում Ոչ, մի՛ անջատիր Այո՛ Ես խո-
սո՛ւմ եմ, մադամուազե՛լ, ես խոսո՛ւմ եմ Ա՛հ, ես լսում եմ,
ես քեզ շատ լավ եմ լսում: Այո, շատ տհամ էր: Կարծես մեռած
լինես: Դու ուրիշին լսում ես, բայց թո խոսքերը տեղ չեն հաս-
նում Ոչ, շատ-շատ լավ: Նույնիսկ չլաված բան է, որ

մեզ թողնում են այսքան երկար խոսել: Սովորաբար երեք րոպեից
 անցատում են և ուրիշ համար միացնում Այո, այո
 ես հիմա նույնիսկ ավելի լավ եմ լսում, քան քիչ առաջ, բայց քո
 հեռախոսը արձագանքում է: Կարծես քոնը չլինի Ես քեզ
 տեսնում եմ, գիտես (**Փորձում է գուշակել**): Ի՞նչ շարժ
 Կարմիր շարժը Ա՛հ ձախ թերված
 թևքերդ ստոթել ես ձախ ձեռքո՞ւմդ, լսափողն
 է: Աջ ձեռքո՞ւմդ՝ ինքնահոս գրիչն է: Դու նկարում ես կիսադեմք,
 սրտեր, աստղեր: Ծիծաղո՞ւմ ես, ականջներիս տեղն աչքերս են
 (**բնագդային մի շարժումով ծածկում է մարմինը**)
 Օ՛հ, ոչ, սիրելի՛ս, ինձ մի նայիր Վախենո՞ւմ եմ
 Ոչ, չեմ վախենում դա ավելի վատ է Վերջիվեր-
 ջո, ես սովոր չեմ մենակ քնելու Այո այո
 այո այո, այո Ես քեզ խոստանում եմ ես,
 ես ես քեզ խոստանում եմ դու լավն ես
 Չգիտեմ: Ես խուսափում եմ ինձ նայել: Ես այլևս չեմ համարձակ-
 վում իմ հարդարանքի սենյակում լույս վառել: Երեկ ես ինձ տեսա
 մի սլառաված կնոջ դեմ նստած Ո՛չ, ո՛չ, մի սպիտակա-
 ներ, նիհար, պտուտվ կին և բազմաթիվ մանր կնճիռներ
 Դու շատ լավն ես, սիրելիս, բայց հրաշալի արտաքին նկարիչ-
 ներն են ասում Ինձ ավելի դուր էր գալիս, երբ ասում
 էիր՝ նայե՛ք այս անախտան մոռթին Այո, սիրելի՛ պա-
 րոն Ես գլխարձանում էի Դու չարանճի ես
 Բարեբախտաբար դու ձախողակ ես և ինձ սիրում ես: Եթե դու
 ինձ չսիրեիր և ճարպիկ լինեիր, հեռախոսը մի սուկայի զենք կը-
 դառնար: Մի զենք, որը հետք չի թողնում, որը գործում է անաղ-
 մուկ Ես, չա՛ր եմ Այո՛ այո՛, այո՛
 այո՛, սիրելի՛ս ո՞ր ես Այո՛, այո՛, այո՛, մադ-
 մուազել: (**Չանգում է**): Այո՛, մադմուազե՛լ, անջատեցին: (**Լսա-
 փողը դնում է: Լռություն: Վերցնում է**): Այո՛: (**Չանգում է**): Այո՛,
 այո՛: (**Չանգում է**): Այո՛, մադմուազե՛լ: (**Չանգում է: Նրան են
 զանգում**): Այո՛, դո՛ւ ես Դե ոչ, մադմուազե՛լ: Ինձ ան-
 ջատեցին Չգիտեմ այսինքն այո
 սպասեք Օթոյ 04—07: Այո՛ Չբաղվա՞ծ է
 Այո՛, մադմուազե՛լ, ուրեմն ինձ են զանգում Լավ: (**Լսա-
 փողը դնում է: Չանգ**): Այո, այո, 04—07: Ոչ, վեցը չէ, յոթ: Օ՛հ:
 (**Չանգում է**): Այո այո, մադմուազե՛լ: Միավել եք: Չրո

վեցն եք տվել: Ես գրո յոթն եմ ուզում: Օթոյ գրո չորս գրո յոթ: **(Սպասում է):** Ա՛րո: Օթոյ գրո չորս գրո յո՛թ: Ա՛հ, այո: Դո՛ւք եք Ժոզեֆ Սա տիկինն է Ես խոսում էի պարոնի հետ, անջատեցին Այդտե՛ղ չէ այո այո այս երեկո չի վերադառնա ճիշտ է, ես հիմա՛ր եմ: Պարոնը ինձ հետ խոսում էր ռեստորանից, անջատեցին և ես նրա համարով եմ զանգում Ներիք ինձ, Ժոզեֆ Ծնորհակալ եմ շատ շնորհակալ եմ Բարի գիշեր, Ժոզեֆ **(Լսափողը դնում է, իրեն գրեթե վատ է զգում):** Ա՛հ, սիրելիս, դո՛ւ ես Անջատեցին Ոչ: Ոչ: Ես սպասում էի: Զանգեցին, վերցրի, ոչ ոք չկար Անկասկած Իհարկե Քունդ տանում է Դու լավն ես, որ զանգում ես շատ լավն ես **(Լալիս է):** **(Լռություն):** Ոչ, ես լսում եմ Ինչպե՛ս Ներողություն Դա անհերթիք է Ոչինչ, ոչինչ Ինձ ոչինչ չի պատահել Երդվում եմ, ոչինչ Նույնը Ոչ մի բան: Դու սխալվում ես Նույնը, ինչ քիչ առաջ Միայն թե, գիտես, խոսում ես, խոսում և չես մտածում, որ պետք կլինի լռել, լսափողը կախել, ընկնել պարապի մեջ, խավարի մեջ և այդ ժամանակ **(Լալիս է):** Լսիր, ի՛մ սեր, ես քեզ երբեք չեմ խաբել Այո, գիտեմ, գիտեմ, ես քեզ հավատում եմ, ես դրանում համոզված եմ ոչ, դա չէ պատճառը որովհետև քիչ առաջ ես խաբեցի քեզ Հենց նոր աչստեղ հեռախոսով, արդեն տասնհինգ րոպե է ստում եմ: Ես լավ գիտեմ, որ ոչ մի հույս չունեմ, սպասելիք չունեմ, սուտը չի փրկում և հետո ես չեմ սիրում քեզ ստել, ես չեմ կարող, ես չեզ ուզում քեզ խաբել, նույնիսկ քեզ բան անելու համար Օ՛, ոչ մի լուրջ բան չկա, սիրելի՛ս, մի վախեցիր Միայն թե ստում էի, երբ նկարագրում էի իմ շրջագրեստը և ասում, թե Մարթայի մոտ եմ ճաշել Ես չեմ ճաշել, իմ վարդագույն շրջագրեստը չեմ հագել: Ես շապիկի վրայից վերարկու եմ գցել, որովհետև քո զանգին սպասելուց, հեռախոսին նայելուց, նստելուց, վերկենալուց, ետուտառաջ քայլելուց ես խելագարվում էի, խելագարվո՛ւմ: Ուստի և վերարկուն հագա, դուրս պիտի գայի տաքսի վերցնելի և գնայի քո պատուհանների առջև սպասելու Է՛հ, ես ինչ գիտեմ, սպասելու, չգիտեմ, ինչին սպասելու Ծիշտ ես

. Այո Այո, ես քեզ լսում եմ Ես խելոք
 կլիներ Ես քեզ լսում եմ Ես ամեն ինչին կապ-
 առասխաանեմ, երդվում եմ քեզ Այստեղ Ես ոչինչ
 չեմ կերել Ես չէի կարող Ես շատ հիվանդ էի
 Երեկ երեկոյան ես մի դեղահար խմեցի, որ քնեմ. ես
 մտածեցի, եթե շատ խմեմ, ավելի լավ կքնեմ, իսկ եթե ամբողջը
 խմեմ, ես կքնեմ առանց երազ տեսնելու, առանց զարթնելու, ես
 կլիներ մեռած: (Լալիս է): Տասներկու հատ եմ խմել
 գոլ ջրով Քարի պես: Ես երազ տեսա: Տեսա
 այն, ինչ կա, որ դու հեռանում ես: Ես զարթնեցի վեր ցատկելով
 և գոհ էի, որ դա երազ էր, և երբ իմացա, որ դա ճշմարիտ է, որ
 ես մեռալ եմ, որ իմ գլուխը քո ուսին չէ և ոտքերս ոտքերիդ մեջ,
 ես զգացի, որ չեմ կարող, որ չեմ կարող ապրել թեթև,
 թեթև և սառը և ես այլևս իմ սրտի բախցը չէի զգում, իսկ մահը
 հապաղում էր գալ, և քանի որ ես մի սուկալի տազնապ ապրեցի,
 մեկ ժամ հետո զանգեցի Մարթային: Ես քաջություն չունեցա մե-
 ռալ մեռնելու Սիրելի՛ս Սիրելի՛ս Գի-
 շերվա ժամը չորսն էր: Նա եկավ մի բժշկի հետ, որ ապրում է
 Լոս Անջելեսում: Տեղությունս քառասունից բարձր էր: Ինչպես երե-
 վում է, թանախորդիկը շատ դժվար է, դոզան միշտ շփոթում են:
 Բժիշկը մի դեղատոմս գրեց, իսկ Մարթան մինչև այս երեկո մը-
 ռալ ձուռ: Ես նրան սղաշեցի, որ գնա, որովհետև խոստացել
 էիր, որ վերջին անգամ կզանգես, և ես վախենում էի, թե նա
 կխանգարի մեզ խոսել Լավ, շատ լավ Բոլորո-
 վին Այո, դա ճիշտ է Մի քիչ ջերմություն կա
 38,3° Աերվայնացնում է մի անհանգըս-
 տացիք Ի՛նչ անճարակն եմ ես: Ես երդվել էի քեզ ներու-
 թյուն չպատճառել, քեզ հանգիստ թողնել գնալ, ասել ցոտու-
 թյուն, կարծես մյուս օրը պիտի հանդիպեմք Հիմա՛ր ենք
 էլի Այո, հիմար ենք Ամենից ծանրը լսափողը
 կախելն է և խավարի մեջ մտնելը (Լալիս է):
 Այո՛ Ինձ թվաց, թե անջատեցին Դու լավն ես,
 սիրելիս Իմ խեղճ սիրելիս, որին ես ցավ եմ պատճա-
 ռել Այո, խոսիր, խոսիր, ինչ ուզում ես, ասա
 Ես տատապում էի, և բավական եղավ դու խոսես, որպեսզի լավ
 զգամ, որպեսզի հանդարտվեմ: Գիտես, երբ միասին պատկած
 ինք լինում, գլուխս դնում էի կրծքիդ և երբ դու խոսում էիր, ճիշտ

Գույն ձայնն էի լսում, ինչ այս երեկո հեռախոսով Վա՛րտ
 վատը ես եմ: Ես երդվել էի Օրինակ, դո՛ւ, որ
 դո՛ւ դո՛ւ, որ միայն երջանկությունն ես պարզևել
 ինձ Բայց, սիրելի՛ս, կրկնում եմ, դա այդպես չէ: Որով-
 հետև ես գիտեի, **ես գիտեի**, ես սպասում էի այս բոլորը: Մինչ-
 դեռ որքան կանաչք կան, որոնց թվում է, թե սիրած տղամարդը
 ընդմիջտ իրենց կողքին է լինելու, և խզումը, իմանում են առանց
 նախապատրաստվելու: **Ես գիտեի** Անգամ այս մեկը քեզ
 դեռ չեմ պատմել, լսիր. նորաձևության ամսագրերից մեկում ես
 նրա լուսանկարը տեսա Ամսագրի մեջ, ամբողջ էջով
 Դա մարդկային է, ավելի շուտ, կանաչի Որով-
 հետև չէի ուզում փչացնել մեր վերջին շաբաթները ոչ:
 Եստ բնական Մի վերագրիր արժանիքներ, որոնք ես
 չունեմ Այո՛, ես երածշտությունն եմ լսում Ասում
 եմ. երածշտությունն եմ լսում Դե, ուրեմն պետք է պատը
 ձեծես և արգելես հարևաններիդ այս ժամին երածշտությունն միաց-
 նել: Նրանք արդեն վատ սովորություններ են ձեռք բերել, որովհետև
 դու երբեք տանը չես լինում Անօգուտ է: Ի միջի այլոց,
 Մարթայի բժիշկը վաղը կգա Ոչ, սիրելի՛ս: Նա շատ լավ
 բժիշկ է, և կարիք չկա ուրիշ բժիշկ կանչելով նրան վիրավո-
 րել Մի անհանգստացիր Իհարկե Ի-
 հարկե Մարթան քեզ նորություններ կհայտնի
 Հասկանում եմ հասկանում եմ Ոչ, այս անգամ
 ես քաջ կլինեմ, շատ քաջ Ի՞նչ Օ՛, այո, հազար
 անգամ ավելի լավ: Եթե դու չզանգեիր ես մեռած կլինեի
 Ոչ սպասիր սպասիր միջոց գտնենք
 **(Ես ու առաջ է քայլում և տառապելով տներում է):**
 Ներիր ինձ: Ես գիտեմ, որ այս տեսարանը անտանելի է և, որ
 դու շատ համբերություն ունես, բայց հասկացիր ինձ, ես տառա-
 պում եմ, ես տառապում եմ: Այս թելը վերջինն է, որ կապում է
 մեզ Երեկ չէ մյուս օրը երեկոյա՛ն, քնած էի: Հեռախոսը
 դրել էի մոտս Ոչ, ոչ: Իմ անկողնում Այո: Գի-
 տեմ: Ես շատ ծիծաղելի եմ, բայց հեռախոսի հետ մտել էի ան-
 կողին, որովհետև, հակառակ ամեն ինչի, մենք կապված ենք հե-
 ռախոսով: Հեռախոսի թելը գալիս հասնում է քեզ, և հետո դու
 խոստացել էիր ինձ զանգել: Եվ պատկերացրու, ես հազար ու մի
 երազ տեսա: Դու զանգում էիր ինձ և այդ զանգը դառնում էր մի

իսկական հարված, դու խփում էիր ինձ և ես ընկնում էի կամ, ա-
 վելի ճիշտ, ես տեսնում էի մի վիզ, մի վիզ, որ խեղդում են, ալե-
 լի շուտ, ես մի ծովի խորքում էի, որը նման էր Օթոնի բնակարա-
 նին, ես քեզ հետ կապված էի սկաֆանդրի ռետինե խողովակով
 և աղաչում էի քեզ, որ խողովակը չկտրես, մի խոսքով, եթե պատ-
 մեմ հիմար երազներ կատացվեն, միայն թե դրանք քնի մեջ ապ-
 րում էին, իրական էին և սուկայի Որովհետև դու խո-
 սում ես ինձ հետ: Ահա հինգ տարի է, ինչ ապրում եմ քեզնով,
 դու իմ միակ օդն ես, որ շնչում եմ, հինգ տարի, որ իմ ժամանակն
 անցնում է քեզ սպասելով. երբ ուշանում ես, կարծում եմ մեռած
 ես, մահանում եմ, երբ կարծում եմ, թե մեռած ես, իսկ երբ մրտ-
 նում ես և տեսնում եմ, որ վերջապես այստեղ ես, վերածնվում
 եմ, հետո նորից մահանում՝ վախենալով, որ պիտի մեկնես: Այժմ
 ես շնչում եմ, որովհետև խոսում ես ինձ հետ: Իմ երազը այնքան
 էլ հիմար չէր, եթե անջատես, կկտրես այն թելը, որ կապում է
 մեզ Արդեն ասացի, սիրելի՛ս, ես քնած էի: Ես քնել էի,
 որովհետև դա առաջին անգամն էր: Բժիշկը ասաց, թե դա թու-
 նավորում է: Առաջին գիշերը քնում ես: Հետո տատապանքը ցոր-
 վում է և քանի դեռ տատապանքը թարմ է, հանդուրժում ես: Երկ-
 րորդ գիշերն է, որ այլևս չես կարողանում տանել և երրորդը՝ այս
 երեկո, մի քանի րուպեից հետո, երբ հեռախոսը կախես, և կշարու-
 նակվի վաղը, վաղը չև մյուս օրը և օրեր, օրեր, երբ չգիտես, թե
 ինչ անես, աստված իմ Ո՛չ, ո՛չ, ես տենդի մեջ չեմ, ես
 լավ հասկանում եմ, թե ինչ եմ ասում Դա անհնար էր,
 և ավելի լավ կլինեք քաջություն գտնելի քեզ ստեր պատմե-
 լու Բայց Ենթադրենք, թե կքնեմ, բայց քնե-
 լուց հետո երազներ են գալիս, գալիս է արթնացում, և՛ վերկե-
 նալ, և՛ ուտել, և՛ լվացվել, և՛ դուրս գալ, և՛ գնալ, ո՛ր
 Բայց իմ խեղճ սիրելիս, ես երբեք քեզնից բացի ուրիշ անելիք
 չեմ ունեցել Կներես, ես շարունակ զբաղված եմ եղել,
 դա որոշակի է: Զբաղված եմ եղել քեզնով, քեզ համար
 Մարթան իր կազմակերպված կյանքն ունի Դա նույնն
 է, եթե հարցնես, թե ձուկն առանց ջրի ինչպես կդասավորեք իր
 կ՝ ակնքը Ես կրկնում եմ, ես ոչ մեկի կարիքը չունեմ
 Զբաղմունքներ, միտքս ուրիշ կողմ դարձնեմ: Ուզում եմ քեզ մի
 բան ասել, որը գուցե շատ բանաստեղծական չէ, բայց ճշմարիտ
 է. Այն ճշանավոր կիրակնօրյա երեկոյից ի վեր, միտքս ուրիշ

Կողմ եմ դարձրել միայն մեկ անգամ, ատամնաբուծի մոտ, երբ
 նա դիպավ ներվիս Մեճակ Մեճակ
 Արդեն երկու օր է նախասեւեակից դուրս չի գալիս Փոր-
 ձեցի նրան մոտ կանչել, շոյել: Չթողեց, որ իրեն դիպչեմ: Քիչ էր
 մնում կծեր Այո, ինձ, ինձ: Նա ժանիքները բացում է և
 գոմոում: Հավատա, ինձ, լրիվ փոխվել է: Նա ինձ վախեցնում
 է Տանեմ Մարթայի մոտ: Ես քեզ ասում եմ, որ հնարա-
 վոր չէ նրան մոտենալ: Մարթան ինչ հնար ասես բանեցրեց, որ
 դուրս տաներ: Բայց նա չէր թողնում դուռը բացել Այդ-
 պես ավելի անվտանգ կլինի: Երդվում եմ քեզ, ես վախեցնում եմ:
 Նա այլևս չի ուտում, չի շարժվում և երբ նայում է ինձ, ես փշա-
 քաղվում եմ Ինչ իմանամ, երևի կարծում է, թե քեզ
 վատ բան եմ արել Խեղճ կենդանի Ես ոչ մի հիմք չու-
 նեմ նրան մեղադրելու: Ցավոք սրտի, ես նրան շատ լավ եմ հաս-
 կանում: Նա սիրում է քեզ, այլևս քեզ չի տեսնում և կարծում է,
 թե դա իմ մեղքով է Փորձիր ժողեֆին ուղարկել
 Կարծում եմ, որ ժողեֆին կլսի Օ՛, ես Մի քիչ
 ավել, մի քիչ պակաս Նա ինձ երբեք չի պաշտել: Ապա-
 ցույց Հնարավոր է, տեսքն այդպիսին է, բայց հավատա
 ինձ, պետք չէ, որ ես դիպչեմ նրան Եթե չես ուզում ետ
 վերցնել, ես նրան կտամ որնէ պահակի: Կարիք չկա, որ այդ
 շունը հիվանդանա և դառնա կատաղած Եթե քեզ մոտ
 լինի, ոչ մեկին չի կծի: Կսիրի նրան, ում դու ես սիրում
 Մի խոսքով, ուզում եմ ասել, կսիրի այն մարդկանց, որոնց հետ
 տեսնվում ես Այո, սիրելի՛ս: Պարզ է, բայց ճաշ շուն է:
 Չնայած իմ ուշիմությունը, նա չի կարող այդ գուշակել
 Ես չէի նեղվում նրա ներկայությունից: Միայն աստված գիտի,
 թե նա ինչեր տեսավ Ուզում եմ ասել, գուցե նա ինձ այլ-
 ևս չի ճանաչում, գուցե ես նրան վախեցրել եմ Երբեք
 չես իմանա Ընդհակառակը Լսիր, քեզ պատ-
 մեմ այն երեկոյի մասին, երբ մորաքույր ժաննային հայտնեցին,
 որ իր որդին սպանված է: Նա շատ գունատ և փոքրամարմին կին
 է, մի խոսքով, լուրն առնելուն պես, նա ամբողջովին կարմրեց և
 մեծացավ Նա դարձավ մի կարմիր հսկա գլու-
 խը դիպչում էր առաստաղին, ձեռքերն ամենուրեք էին, իսկ սուվե-
 րը լցրել էր սեւեակը և նա ահարկու էր **Նա ահարկու էր**
 Ես ներողություն եմ խնդրում, նույնիսկ նրա շունն էր վա-

խեղճ: Նա թաքնվել էր պահարանի տակ և կարծես գազանի վրա
 էր հաշում Բայց ես չգիտեմ, սիրելի՛ս: Ինչ իմանամ:
 Մարդ կորցնում է իրեն: Ես երևի սուկայի բաներ եմ արել: Պատ-
 կերացրու իմ բոլոր լուսանկարները և լուսանկարների ծրարը ա-
 նանց զգալու, միանգամից պատռել եմ: Նույնիսկ տղամարդու հա-
 մար դա դժվար կլիներ Վարորդական տոմսի լուսանը-
 կարներն էին Ի՞նչ Ոչ, որովհետև այլևս դրա
 կապիքը չունեմ Առանձնապես մեծ կորուստ չէ: Ես սու-
 կայի վիճակում էի Երբե՛ք: Որովհետև բախտ եմ ունեցել
 քեզ հանդիպելու ճանապարհին: Իսկ այժմ ճանապարհորդելիս
 դժբախտություն կլինի քեզ հանդիպելը Մի համառիր . . .
 թ ո՞ւր Ալո՛: Ալո՛: Տիկի՛ն, անջատե՛ք: Մենք իրար հետ
 լուսում ենք: Ալո՛: Ոչ, տիկի՛ն Բայց, տիկի՛ն, մենք չենք
 ձգտում նևտաքրքիր երևալ: Ձեզ մնում է միայն լսափողը կա-
 խել Եթե դուք մեզ ծիծաղելի եք գտնում, ապա ինչո՞ւ
 չ'ըսե՛ք մեզ ստամ և իզուր ժամանակ եք կորցնում Օ՛հ
 Սիրելի՛ս, սիրելի՛ս, մի բարկացիր Ի վերջո ո՛չ,
 ո՛չ Այս անգամ ես եմ: Ես դիպա լսափողին: Նա ան-
 ջատեց: Նա այդ կեղտոտ բանը ասելուց հետո անմիջապես ան-
 ջատեց Ալո՛ Դու կարծես սուշամ լինես
 Ան, դու սուշամ ես ավել խոսքերից, որոնք քիչ սուսջ լսեցիր, ես
 քո ձանձից պզում եմ Դու սուշամ ես Ես
 բաց, սիրելիս, այդ կիևը երևի չարախոսի մեկն էր և նա քեզ չի
 անուշում: Նա կարծում է, թե դու էլ մյուս տղամարդկանց պես
 ես Ոչ, ոչ, սիրելի՛ս: Դա բոլորովին այլ բան է
 Խղճի խա՛նթ Ալո՛ Լավ, թող, այլևս մի մտա-
 ծիր այդ հիմարության մասին: Վե՛րջ Ի՞նչ միամիտն ես
 Ո՛վ: Կարևոր չէ՛ ով: Երեկ չէ նախորդ օրը հանդիպեցի
 մի անձնավորության, որի անունը Ս-ով է սկսվում Սկս-
 ւում է Ս տառով, Բ. Ս., այո, Հանրի Մարտեն փողոցում
 Նա ինձ հարցրեց, թե դու եղբար ունես, թե նրա մասին է, որ
 տեղումության հայտարարություն էին տվել Կարծում ես
 դա ինձ վշտացրե՞ց Ծշմարտությունը Տալակ-
 լիով էր նայում Հավատացնում եմ քեզ, որ երկար բա-
 րույ շխտեցի: Ասացի, որ տանը հյուրեր ունեմ Դա շատ
 պարզ է: Մարդիկ չեն սիրում, երբ կամաց-կամաց լքում են իրենց,
 ի՞նչ ես լքեցի բոլորին Մեր պահերից ոչ մեկը ես չէի՞

ուզում կորցնել Ինձ համար միևնույն է: Ինչ կուզեն թող
 ասեն Պետք է արդար լինել: Մեր վիճակը մարդկանց
 համար անբացատրելի էր Մարդկանց համար
 Մարդկանց համար միայն սեր կա և ստելություն: Խզումը մնում
 է խզում: Նրանք իսկույն կարծիք են կազմում: Դու նրանց երբեք
 չես հասկացնի Դու որոշ բաներ դու նրանց
 երբեք չես հասկացնի Ամենաճիշտը ես եմ անում, որ
 նրանց բանի տեղ չեմ դնում Լիովի՛ն: **(Նա խոսլ ցավի
 մի ճիշ է արձակում):** Օ՛հ Ոչինչ: Ես խոսում եմ, խոսում
 և ինձ թվաց, թե մենք խոսում էինք անցած օրերի պես, բայց
 հանկարծ ճշմարտությունը աչքիս առաջ կանգնեց **(Լա-
 լիս է):** Ինչո՞ւ պատրանքներով ապրել Այո
 այո Ո՛չ: Մարդիկ առաջ նման դեպքերում հան-
 դիպում էին, գլուխը կորցնում, խոստումները մոռանում, փորձում
 էին անկարելիին անել, պաշտած մարդուն համբուրում էին, վզից
 կառչելով հակառակը համոզում: Մի հալացքը կարող էր ամեն
 ինչ փոխել: Իսկ հիմա, այս գործիքով խոսելիս, ոչինչ անել չես
 կարող՝ վերջացածը վերջացած է Հանգիստ եղիր: Երկու
 անգամ ինքնասպան չեն լինում Գուցե մեկ հատ, որ-
 պեսզի կարողանամ քնել Ես չեմ կարող ասորճանակ
 գնել Որտեղի՞ց պիտի ուժ գտնեմ սուտ հորիճելու հա-
 մար, իմ խեղճ պաշտելիս Ոչ մի ուժ Պետք է
 որ ուժ ունենայի: Պահեր կան, երբ սուտը օգտակար է: Օրինակ,
 եթե դու ինձ խաբեիր, որպեսզի անջատումը ինձ համար մի քիչ
 թեթև լիներ Ես չեմ ասում, թե դու ինձ խաբեիր: Ասում
 եմ, որ եթե դու ինձ խաբեիր և ես իմանալի այդ մասին: Օրինակ՝
 եթե տանը չես, բայց ինձ ասես Ո՛չ, ո՛չ, սիրելի՛ս, լը-
 սիր Ես քեզ հավատում եմ Ես չեմ ասում, թե
 քեզ չեմ հավատում Ինչո՞ւ ես բարկանում Ոչ,
 դու զայրացած ձայնով ես խոսում: Ես պարզապես ասում էի, որ
 եթե դու ինձ խաբեիր քո հոգու բարությունից դրդված, և ես նը-
 կատեի, ավելի մեծ գորովանք կտածեի քո հանդեպ
 Այո՛ այո՛ Այո՛ **(Լսափողը դնում է և
 բարձրաձայն ու շատ արագ ասում):** Ասովա՛՛՛՛՛՛՛ իմ, թող նորից
 զանգի: Ասովա՛՛՛՛՛՛՛ իմ, թող նորից զանգի: Ասովա՛՛՛՛՛՛՛ իմ, թող նո-
 ռից զանգի: Ասոված իմ, թող **(Զանգ: Վերցնում է):** Անջատել

Էի՛ն: Ասում էի, որ եթե քո բարությունից դրդված ինձ խաբեիր և
 ես նկատեի, ավելի մեծ գորովանք կտա՞ծեի քո հանդեպ
 Անշուշտ Դու խենթ ես Իմ սեր իմ
 թանկագի՛ն սեր (Հեռախոսի թելը փաթաթում է վզի
 շուրջը): Ես լավ գիտեմ, որ դա պետք է, բայց դա սու-
 կալի է Ես երբեք այդ քաջությունը չեմ ունենա
 Այո: Երբեմն թվում է, թե մեկդ մյուսի հետ դեմ առ դեմ եք, բայց
 հանկարծ պարզվում է, որ մի ամբողջ քաղաք՝ մայթեր, նկուղներ
 են ընկած ձեր միջև Հիշո՞ւմ ես Իվոնին, նա զարմանում
 էր, թե ինչպես է ձայնը անցնում թելի միջով: Հեռախոսի թելը
 հիմա փաթաթել եմ վզիս: Քո ձայնը հիմա վզիս է փաթաթ-
 վել Գո՛նե հեռախոսի կայանը մեզ հանկարծ անջատի
 Օ՛, սիրելի՛ս: Ինչպե՛ս կարող ես պատկերացնել, թե ես
 այդպիսի բան կմտածեմ: Ես շատ լավ գիտեմ, որ այս գործողու-
 թյունը քեզ համար ավելի դժվար կլինի անել, քան ինձ
 ո՛չ ո՛չ, ո՛չ Մարտե՛լ¹⁰ Լսիր, սիրելի՛ս,
 քանի որ վաղը չէ մյուս օրը երեկոյան դուք Մարտելում կլինեք,
 ես կուզեի Վերջապես, ես շատ կցանկանայի
 ես կուզեի, որ դու այն հյուրանոցում չմնաս, որտեղ սովորաբար
 մենք Լինք մնում: Ինչ չե՛ս բարկանում, չէ՛ Որովհետև
 այն բաները, որոնք գոյություն չունեն ինձ համար, կամ ավելի
 ճիշտ գոյություն ունեն մի տեսակ դատարկ տարածության մեջ,
 ինձ քիչ էն ցավ պատճառում դու հավանո՞ւմ ես
 Շնորհակալ եմ շնորհակալ եմ: Դու բարի ես: Ես քեզ
 սիրում եմ: (Ես ելնում է և, հեռախոսը ձեռքին, բայցում դեպի
 մահճակալը): Ուրեմն, այդպես այդպես
 Քիչ էր մնում ասեի՝ առայժմ Կասկածում եմ
 Հայտնի չէ Օ՛հ դա ավելի լավ է: Շատ ավելի
 լավ (Ես պտտեցի է մահճակալին և հեռախոսը ամուր
 գրկում): Սիրելի՛ս իմ շա՛տ սիրելիս Ես քաջ
 եմ: Ծոսապի՛ր: Գևա՛: Անջատի՛ր: Անջատի՛ր շուտ: Անջատի՛ր:
 Ես քեզ սիրում եմ: Ես քեզ սիրում եմ: Ես քեզ սիրում եմ: Ես քեզ
 սիրում եմ: Ես քեզ սիրում եմ (Հաստիդը ընկնում է հա-
 տակին):

Վ ա ռ ա գ ո լ յ ը

ԱՐԹՈՒՐ ԱԴԱՄՈՎ

ՊՐՈՑԵՍՈՐ ՏԱՐԱՆԸ

(պիես մեկ գործողությամբ, երկու պատկերով)

Գ Ո Ր Ծ Ո Ղ Ա Ն Ձ Ի Ն Ք

ՊՐՈՑԵՍՈՐ ՏԱՐԱՆ

ԺԱՆՆԱ

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ

ՍՏՈՐԱԳՐՅԱԼ ՊԱՇՏՈՆՅԱ

ՊԱՌԱՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ՏՆՏԵՍՎԱՐՈՒՂԻ

ԼՐԱԳՐՈՂՈՒՂԻ

ՍՇԽԱՐՀԻԿ ԿԻՆ

ԱՌԱՋԻՆ ՊԱՐՈՆ

ԱՌԱՋԻՆ ՈՍՏԻԿԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՊԱՐՈՆ

ԵՐԿՐՈՐԴ ՈՍՏԻԿԱՆ

ԵՐՐՈՐԴ ՊԱՐՈՆ

ՉՈՐՐՈՐԴ ՊԱՐՈՆ

ՊԱՏԿԵՐ ԱՌԱՋԻՆ

ՈՍՏԻԿԱՆԱՏՈՒՆ

Բեմահարթակի ձախ կողմը, առաջնամասում՝ գրություններով ծածկված սեղանի ետևին՝ Ոստիկանապետը, տարեց աղամարդ, ամբակազմ: Հագին սև բաճկոն է և շերտավոր տարատ: Սեղանի առջև շատ ձիգ կանգնած է պրոֆեսոր Տարանը: Մոտավորապես քառասուն տարեկան է: Նա նույնպես սևազգեստ է:

Նրանցից դեպի աջ՝ մի քիչ խորքում, թխադեմ մի երիտասարդ՝ Ստորադրչակ Պաշտոնյան, նստել է հեծյալի պես՝ կզակը դրած աթոռի թիկնակին:

Չուխ կողմը, խորքում, Պառավ Պաշտոնակատարը, հագին նախշավոր, թեթև շրջազգեստ, ստուգելով կարգավորում է գրությունները, բացում ու փակում է դարակները, քարտարանների միջոցով ճշտումներ է կատարում:

Բեմահարթակի աջ կողմը թափուր է:

ԿԿԿԵԿԵԿԵԿԵ ԶԶԶԶԶԶ (վոքը-ինչ նկատարտ, մի շնչով).— Բայց, ի վերջո, դուք գիտեք իմ անունը: Ես նանրամուշակ եմ, հասարակությանը երբեք չեմ լինում: Կոք աչք պիտի գիտեմատիք, ինչ պես սուս եկար, ես կասեի նույնիսկ մյուսներից էլ սուս: Եվ սուս եկա ինչպես ինչպես: Ինքնեդ ձեզ պետք է նա ի վոք, որ սուս մեղադրանքն անհետեթ է: Իմ ինչի՞ն էր պետք պարսեմ վարվելը: Իմ օրինավոր սպրեյակերպը, որից ես երբեք չեմ շեղվել, արդեն իսկ փաստ է, որ չեմ կարող ինձ թույլ տալ պարսեմի արարք... .. Եվ հետո մի քիչ սպասեմտ կղեթ, պարոններ, ինչորում եմ: Աչք ի՞նչ մարդ պիտի լինի, որ սուս ցրտերին դրսում մերկանա: (Փիծաղելով): Ես հիվանդանալու և շարաթներով անկողին ընկնելու գամկություն չունեմ: Ինչպես բոլոր աշխատասեր մարդիկ, ես իմ ժամանակը շատ բարձր եմ գնահատում... Մեղադրելուց ոտաս մտածեցեթ, թե ինչ եք ասում: Մի՞թե կարելի է վստահել երեխաների վկայություններից: Նրանք ստում են... այն սովորը, ինչ անցնում է իրենց գլխով: Ինչ ասեթ, որ չեն անի, որպեսզի հետաքրքրաշարժ դառնան, որպեսզի ուրիշներն ի-

րեւոյնով գբարդվեալ... Երեխաներին ճանաչել է պետք: Ինչ վերաբերում է ինձ, ես նրանց ճանաչում եմ: Բանն այն չէ, որ երեխաներ են իմ աշակերտները (**Ժանրակշիռ**), ես մասնագիտացված ուսումնական հաստատության պրոֆեսոր եմ... Բայց... (**շրջվելով դեպի Պառապ Պաշտոնակատարը, որը շարունակում է դարսել գրությունները**) իմ քույրը մի դեռատի դատրիկ ունի: Մի դատրիկ, որն ա՛նկն գնով ցանկանում է, որ իրեն լուրջ մարդու տեղ դնեն: Պարտավոր ենք ունկնորել նրան: Ունկնորելը պարտադիր է: Ինչ խոսք, որ ես նրան շատ եմ սիրում: Կարող եմ ասել, որ սիրում եմ քոյրը երեխաներին: Բայց դա դեռ չի նշանակում, որ հավատ պիտի ընծայել նրանց սասձներին... Ես ծովափին հանգիստ գրոսնում էի, հետո, հանկարծ, ես նրանց տեսա: Ադրտեղ էին, շատ մոտիկից ինձ դանդաղ շրջապատում էին... Ու միաժամանակ այդպիսի ուրիշ երեխաներ էին հայտնվում չորս կողմից: Բոլորը գայիս էին դեպի ինձ: Այնժամ ես սկսեցի վազել: Զգիտեմ ինչու՝ ես վազեցի... Պատճառն այն է, անկասկած, որ ինձ համար անակնկալ էր նրանց այդտեղ հայտնվելը: Ես, իրոք, վազել եմ: Նրանք, անշուշտ, հայտնել են, որ ես վազել եմ, բայց միան աչքանը: Ուշադիր նայեցեք ինձ, պարունկե՛ր. մի՞թե ես նման եմ մի մարդու, որն արագորեն վերահագնվել է: Եվ վերահագնվելու ժամանակ ինձ որտեղի՞ց...

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ.— Ցավում եմ: Բայց իմ տրամադրության տակ մի զեկուցագիր ունեմ, որն ամենևին չի համապատասխանում ձեր սասձներին:

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ.— Նրանք վազում էին ու քոյրը միասին գողգողում: (**Յաճրաձայն**): Կարծես խոսքները մեկ էին արել:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ.— Եվ ի՞նչ էին գողգողում:

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ (**ձայնը մանկակալորեն բարակացրած ու մատը թափ տալով**).— «Քեզ ցույց կտա՛մ, քեզ ցույց կտա՛մ»: Բայց ի՞նչ պիտի ցույց տային: Ես ոչ մի վատ բան չեմ արել և այդ կարող եմ ապացուցել:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ.— Մեր ուզածն էլ այն է, որ դուք մեզ համոզեք:

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ.— Ես պրոֆեսոր Տարանն եմ, երևելի անձնավորություն: Բազմաթիվ դաշախոսություններ եմ կարդացել արտասահմանում: Հենց վերջերս, ինձ հրավիրել էին Բելգիա, որտեղ և հասա աննախադեպ հաջողության... Բոլոր

երիտասարդներն իրենց կոտորում էին իմ դասախոսություններին ներկա լինելու համար... գլուխ էին կոտորում իմ ձեռքով գրողված մի թուղթ ձեռք բերելու համար...

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ (վեր է կենում և ձեռքը դնում է պրոֆեսոր Տարանի ուսին).— Ես ձեր հաջողությունների վերաբերյալ ոչ մի կասկած չունեմ: Բայց տվյալ դեպքում դա չէ կարևորը: **(Ձեռքը հեռացնում է: Դադար):** Մենք ձեզ վերաբերող գործը պետք է լուսաբանենք՝ գեկուցագիրն ամբողջականացնելու համար:

Նա մնում է հոտնկաչա:

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ.— Ջեկուցագիրը: Ի՞նչ գեկուցագիր: Բայց գեկուցագիր կազմելու դեպքում, թերևս, դուք ինձ լուրջ վնաս հասցնեք... իմ կարիերան վարկաբեկելով:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ (նորից նստելով).— Դուք առաջինը չեք, որին սպայիսի բաներ են պատահում: **(Դադար):** Մի տուգանքով գրքեր կիսակենք, այդքանը միայն: Եթե դուք վճարեք, այս պատահարը ձեզ համար չի ունենա ոչ մի հետևանք:

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ. — Անշուշտ, ևս կարող եմ վճարել: Փող ունեմ. Ձեր համար սի չեմ կատարագրեմ: Դրանից էլ հեշտ բան (Ձեռքը տանելով գրպանը): Հեկց հիմա, եթե կուզեք...

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ: (Նորից վեր է կենում և հպվում է պրոֆեսոր Տարանի թևին). — Իհ, ոչ ոնեց հիմա: Ես ձեզանից միայն կարստեղծեմ ստորագրել (ցույց տալով սեղանին դրված մի թուղթ) մի գացմունք, բայց որի դուք ընդունում եք, որ մայրամուտին երկխառները ձեզ հանկարծակի տեսել են մերկ վիճակում: **(Նորից նստում է):** Դուք կարող եք ավելացնել, թե չգիտեիր, որ ձեզ նայում էին:

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ.— Ինձ քաջ հաշտնի է, որ ինձ նայում են, սենում, որ բոլորն իրենց հայացքներն ուղղել են ինձ վրա: Ինչո՞ւ են ինձ աղոթեա նայում: Ես ինքս ոչ մեկին չեմ նայում: Գրեթե միշտ հայաօրս խոնարհում եմ: Երբեմն, նույնիսկ, ես համարյա փակում եմ աչքերս **(Դադար):** Իմ աչքերս համարյա փակել էի. երբ եկան բոլորը:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ.— Զանի՛սն էին նրանք:

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ.— Ես չհաշվեցի, ժամանակ չունեցա հաշվելու: **(Դադար):** Ինչո՞ւ եք հարցնում այդ մասին: Ես ձեզ

ասացի, թե ով եմ ես: Այդքանը պետք է բավական լիներ...

Հավատս չի գալիս, որ դուք երբեք չեք լսել իմ մասին:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ (Ծիծաղում է).— Ցավում եմ, որ այդպես է:

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ.— Իրոք, որ շատ ցավալի է: Լավ է, երբ մարդ իմանում է, թե ում հետ գործ ունի: **(Բռնկվելով):** Եվս մի անգամ եմ կրկնում՝ այդ ինչպե՞ս եք ձեզ թույլ տալիս ապավինել երեխաների բարբաջանքներին: Ի՞նչ ապացույց կա, որ այն աղջնակը, որ եկել է այստեղ՝ ձեզ այդ ամենը պատմելու... իրոք ներկա է եղել տեսարանին: Հավանաբար, ուրիշ երեխաներ, խելքներին գոռ տալով, նրան պատմել են, ինքն էլ իր հերթին այդ պատմությունը ձևավորել է, փոփոխել, գուցե, նույնիսկ, առանց մտածելու, որ փոփոխում է իր լսածը: **(Դադար):** Այո՛, հենց այդպես էլ եղել է: Ի վերջո, հեշտ ու հանգիստ դուք կարող եք կանչել տալ այն անձանց, որոնք ինձ ճանաչում են: Ես կարող եմ ձեզ հայտնել նրանց անուններն ու կոչումները: Նրանք կվկայեն իմ բարոյականության... իմ հոշակի վերաբերյալ: **(Դադար):** Այստեղ կանչել տվեք նրանց բոլորին: Կանչել տվեք, ում ուզում եք: Եվ կրտեսներ...

Բեմի աջ կողմից ներս է մտնում Լրագրողուհին՝ շիկահեր, միջին տարիքի, ոչ տգեղ, ոչ գեղեցիկ, մազերը տղայավարի կրտսած: Հագել է ծալքավոր կիսաշրջազգեստ և կարճ թևերով վերնաշապիկ:

ԼՐԱԳՐՈՂՈՒՀԻ.— Դուք չե՞ք տեսել շատ հաղթանդամ ու շատ ուժեղ մի պարոնի: Ակնոցը ձեռքին պահելու սովորություն ունի: Նա ինձ հետ այստեղ է ժամադրվել...

ՍՏՈՐԱԴՐՅԱԼ ՊԱՇՏՈՆՅԱ.— Ոչ մեկը չի եկել, տիկի՛ն, բացի (ցույց տալով պրոֆեսոր Տարանին) պարոն պրոֆեսորից:

Պրոֆեսոր Տարանը ցնցվում է:

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ (Լրագրողուհուն մոտենալով).— Կարծեմ, մի տեղ մենք իրար հանդիպել ենք, տիկի՛ն... Եթե չեմ սխալվում, դուք վերջերս մի դիսերտացիա եք հրատարակել... **(Շքշվելով դեպի Ստորադրյալ Պաշտոնյան)** բավականաչափ հետաքրքիր մի դիսերտացիա:

ԼՐԱԳՐՈՂՈՒՀԻ (քալելով, անբռնազրոսիկ).— Դուք շփոթում եք: Ես լրագրող եմ: **(Ստորադրյալ Պաշտոնյային):** Ինչ շոգ է ձեզ մոտ: Չե՞ք կարող մի քիչ օդափոխել սենյակը:

ԱՏՈՐԱԳՐՅԱԿ, ՊԱԾՏՈՆՅԱ.— Ամենայն սիրով:

Նա վեր է կենում, բայց Պառավ Պաշտոնակատարը կանխում է նրան և խորքի լուսամուտը բացելու շարժում է անում: Ստորադրյալ Պաշտոնյան նորից նստում է իր նախկին դիրքով՝ կզակը դրած աթոռի թիկնակին:

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ (Լրագրողուհուն).— Թույլ տվեք ներկայացնալ...

ԼՐԱԳՐՈՂՈՒՇԻ (մեջքով շրջվում է դեպի պրոֆեսոր Տարանը և շարժվում է դեպի Ոստիկանապետը, որը դեռևս զբաղված է գրելով).— Իրոք որ տղամարդիկ զուրկ են երևակայությունից: Երբ ուզում են մի կնոջ խոսեցնել, ապա անպայման նրան հանդիպած պիտի լինեն ինչ-որ տեղ:

Ոստիկանապետը քմծիծաղ է տալիս՝ չդադարեցնելով գրելը: Լրագրողուհին գնում է դեպի խորքը, լուսամուտի մոտ:

Աջ կողմից ներս են մտնում Առաջին և Երկրորդ պարոնները՝ իրարանցման մեջ ու ձմեռային վերարկուներով: Առաջին Պարոնի ձեռքին՝ կաշվե թղթապանակ: Նրանք շարունակում են դրսում սկսված մի խոսակցություն:

ԱՌԱՋԻՆ ՊԱՐՈՆ (Երկրորդին).— Ես ձեզ ասել էի, որ նրանից զգուշանաք:

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ (մի պահ տատանվելուց հետո մոտենում է երկու պարոններին).— Որքան ուրախ եմ, որ ձեզ հանդիպեցի: Դուք կկարողանաք ինձ մատուցել... մի ծառայություն:

Երկու տղամարդիկ իրար նայում են ապշահար: Նրանք պրոֆեսոր Տարանին խելագարի տեղ են դնում:

ԱՌԱՋԻՆ ՊԱՐՈՆ (սառը).— Ես ձեզ չեմ ճանաչում, պարոն:

Երկրորդ Պարոնը ձեռքով նշան է անում, այսինքն թե՛ ես նույնպես:

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ.— Ինչպե՛ս թե: Բայց ես ձեզ հաճախ եմ տեսել իմ դասախոսությունների ժամանակ...

ԼՐԱԳՐՈՂՈՒՅԻ ՊԱՐՈՆ.— Մենք ոչ մի դասախոսության էլ չենք հաճախում: (Օրծաղելով): Անցել է մեր ուսումնառության ժամանակը: (Առաջին Պարոնին, ծանրակշիռ): Պետք է նրան ստիպենք, որ ձևափոխի իր ծրագիրը:

Առաջին Պարոնը թևանցուկ է անում Երկրորդին: Նրանք գրնում-գալիս են:

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ (շարժվում է նրանց ետևից).— Բայց, պա-

րոններ, չի կարող պատահել, որ դուք ինձ չճանաչեք: Դա անհնարին է: Ես... պրոֆեսոր Տարանն եմ:

ԱՌԱՋԻՆ ՊԱՐՈՆ (դանդաղորեն, ինչպես մեկը, որ հիշելու ջանք է թափում).— Տարա՞ն:

ԵՐԿՐՈՐԴ ՊԱՐՈՆ (ցուցադրաբար մեջքով շրջվում է դեպի պրոֆեսոր Տարանը և թևանցով անում Առաջին Պարունին).— Բոլոր դեպքերում իմ համագործակցությունը ձեզ հետ համարեցեք հավաստի:

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ (քրթմնջալով).— Ես ձեզ խնդրում եմ, պարոններ, ջանք թափեք հիշելու, մի փոքրիկ ջանք: Եվ գուցե... մեկ բույե չանցած՝ բացականշելու եք (զվարթ) ախր սա Տարա՞նն է:

ԵՐԿՐՈՐԴ ՊԱՐՈՆ (ուտերը թոթվելով).— Տեսնում եք, որ մենք զբաղված ենք:

Պրոֆեսոր Տարանը մնում է ապշած:

ԱՌԱՋԻՆ ՊԱՐՈՆ (Երկրորդին թևանցով անելով).— Ժամանակըն է, որ միջոցներ ձեռք ստնենք:

Մի բանի քայլ են անում:

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ (շարժվելով դեպի Ռատիկանապետը, որ շարունակում է նստած մնալ սեղանի ետևում).— Անհասկանալի է: Որովհետև, ի վերջո, եթե չխոսենք իմ կոչումների մասին... իմ դեմքն այնպիսին է, որ չի մոռացվում, եթե գեթ մի անգամ այն տեսած են լինում:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ.— Իհարկե:

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ.— Թեև ճիշտ է, որ վերջերս ես երկար ճամփորդություն եմ կատարել արտասահմանում:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ.— Գիտեմ: Ծամփորդություն, որ ձեզ շատ մեծ հաջողություն բերեց:

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ.— Արտակարգ հաջողություն: Ոստի և շուտով պետք է նորից մեկնեմ այնտեղ: (**Դադար**): Արտասահմանում շատ ավելի լրջորեն են ուսումնասիրում ինձ հետաքրքրող խնդիրները: Եվ այնտեղ դրանք արժանանում են հատուկ ուշադրության: Չէի ասի, որ մեզ մոտ միշտ այդպիսի պատվավոր վերաբերմունք է լինում: Այդ փաստը պետք է խոստովանել:

Ռատիկանապետը չի շարժվում: Պրոֆեսոր Տարանը երկչոտությամբ մոտենում է երկու պարոններին: Ստորադրյալ Պաշ-

տոնչան, որ մնացել է նույն դիրքում, թվում է քնած: Պառավ Պաշտոնակատարը շարունակում է ճշտել գրությունները:

ԼՐԱԳՐՈՂՈՒՂԻ (լուսամուտից հեռանալով՝ գնում է երկու պարոններին ընդառաջ).— Ես էլ ձեզ անմիջապես չճանաչեցի: Իսկապես, ներեցեք, խնդրեմ:

ԵՐԿՐՈՐԴ ՊԱՐՈՆ.— Չարմանալի է՝ ինչքան հաճախ եմք հանդիպում միմյանց:

ՊՐՈՏԵՍՏՈՐ ՏԱՐԱՆ.— Ես հաճախ նկատել եմ...

ԵՐԿՐՈՐԴ ՊԱՐՈՆ (ևս մի անգամ մեջքով շրջվում է դեպի պրոֆեսոր Տարանը: Առաջին Պարոնին).— Ես կարծում եմ, որ էլնելով մեր շահից, մենք պետք է շտապենք:

Նրանք քայլում են:

ԼՐԱԳՐՈՂՈՒՂԻ.— Խոսքը հենց այն գործի՞ն է վերաբերում, որի մասին ինձ պատմեցիք անցյալ օրը:

ԱՌՍՋԻՆ ՊԱՐՈՆ (ծիծաղելով).— Ձեզանից բան թաքցնել չի լինի:

Ներս է մտնում Աշխարհիկ Կինը՝ տարիքն առած, մուգ շքր-ջազգեստով, քողածածկ գլխարկով: Նրան ուղեկցում են Երրորդ և Չորրորդ պարոնները՝ երկու բարձրահասակ տղամարդիկ՝ քունքերն ալեհիշ, հազմված նրբաճաշակ:

ԵՐԿՐՈՐԴ ՊԱՐՈՆ.— Այլ քեզ չան:

Ձեռքսեղմում:

ԼՐԱԳՐՈՂՈՒՂԻ (Երրորդ պարոնին, կենտրոնախ).— Աշխարհը փոքր է:

ԵՐՐՈՐԴ ՊԱՐՈՆ (շրջվելով դեպի Աշխարհիկ Կինը և Չորրորդ Պարոնը, ցածրաձայն).— Նա անխոնջ լրագրող է: (Ծիծաղելով): Նրան ամեն տեղ կարելի է տեսնել, նույնիսկ համալսարանների միջանցքներում:

Ձեռքսեղմում: Պրոֆեսոր Տարանը ցնցվում է և նրանց է մոտենում:

ՉՈՐՐՈՐԴ ՊԱՐՈՆ.— Ես կարդացի ձեր վերջին հոդվածը: Ծնորհավորում եմ:

ԱՇԽԱՐՀԻԿ ԿԻՆ (լրջորեն).— Ինչ վերաբերում է համալսարանին... Անցյալ շաբաթ ես ներկա եղա մի դասախոսության, որն ինձ ստանձնապես հետաքրքրեց: (Հանկարծ նկատելով պրոֆեսոր Տարանին): Սակայն ես հո չեմ երազում, սա... (Պրոֆեսոր Տարանին): Պրոֆեսոր՛ր, ես չեի կարող հուսալ

այսպիսի պատահականություն: Ես հենց հիմա ձեր մասին էի խոսում:

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ (հուզմունքից կակազելով).— Ես ուրախ եմ, տիկի՛ն...

ԱՇԽԱՐՀԻԿ ԿԻՆ.— Ինձ թույլ տվեք, պրոֆեսսոր, որ ձեզ ներկայացնեմ իմ բարեկամներին: (**Ցույց տալով պրոֆեսսոր Տարանին**): Պրոֆեսսոր Մենարը:

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ (ճնշված).— Ես...

Ոստիկանապետը սեղանին է դարսում թղթերը, վեր է կենում, հագնում է վերաբկուն և ձախից դուրս է գալիս: Թվում է, թե ոչ ոք չի նկատում նրա դուրս գալը:

ՉՈՐՐՈՐԴ ՊԱՐՈՆ (համարյա բարձր ձայնով՝ թեքվելով դեպի Աշխարհիկ Կինը).— Ախր չեղավ: Սա պրոֆեսսոր Մենարը չէ: Մի քիչ նման է նրան, բայց պրոֆեսսոր Մենարը շատ ավելի խոշոր է, ավելի հաղթանդամ...

ԵՐՐՈՐԴ ՊԱՐՈՆ.— Ակնոցը ձեռքին պահելու սովորություն ունի... ինչպես նա... (**Ծիծաղելով**): Իսկ մնացյալ ամեն ինչում...

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ (կակազելով).— Ես... պրոֆեսսոր Տարանն եմ... Դուք պիտի որ... անշուշտ ծանոթ լինեք իմ աշխատություններին:

ԱՇԽԱՐՀԻԿ ԿԻՆ.— Տարա՛ն:

Երբորդ և Չորրորդ պարոնները ձեռքի շարժումով հասկացնում են՝ մենք նույնպես չենք ճանաչում այս պարոնին:

Ստորադրյալ Պաշտոնյան տեղից վեր է կենում, իր աթոռը դնում է սեղանի կողքին և ձախից դուրս է գալիս: Թվում է, թե ոչ ոք չի նկատում նրա դուրս գալը:

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ (քրթմնջալով).— Դուք ինձ շատ եք զարմացնում... մանավանդ որ ես շատ լավ եմ ճանաչում... և բացառապես շատ եմ հարգում պրոֆեսսոր Մենարին, և որ... իր կողմից... նա իմ նկատմամբ ունի ամենախորին (**հուսահատորեն ձայնը բարձրացնելով**) հարգարժան վերաբերմունք:

Պրոֆեսսոր Տարանը խոսել է իզուր. ոչ ոք նրան չի ունկընդրել: Աշխարհիկ Կինը թևանցուկ է անում Երբորդ և Չորրորդ պարոններին: Նրանք դանդաղորեն մի քանի քայլ են անում:

Պառավ Պաշտոնակատարը, որն իր աշխատանքը վերջացրել

է, հագնում է վերարկուն և ձախից դուրս է գալիս, մինչդեռ թվում է, թէ ոչ ոք չի նկատում նրա դուրս գալը:

ԼՐԱԳՐՈՂՈՒՂԻ (երգեցիկ).— Ես հիմա պետք է գնամ:

Նա ձեռքը շարժում է՝ հրածեշտ տալով և դուրս է գալիս աջից:

ԵՐԿՐՈՐԴ ՊԱՐՈՆ (ձեռքը դնելով Առաջինի ուսին).— Այս խաբեությունը հիմա շուտով դադարելու է: Ամեն ինչ կարգի կբերենք:

ԱՇԽԱՐՀԻԿ ԿԻՆ (Չորրորդ Պարունին).— Գնո՞ւմ եմք: Անվերջ հո աչատեղ չենք մնալու (հանկարծ շատ լքջորեն) հանցագործների նման...

Աշխարհիկ Կինը, Երրորդ և Չորրորդ պարունները իրենց հերթին դուրս են գալիս աջ կողմից: Պրոֆեսոր Տարանը մի քայլ է անում նրանց կողմը, բայց շատ արագ կանգ է առնում և սայթաքելով հենվում է մի աթոռի, ապա հանկարծ նկատում է Ոստիկանապետի ու պաշտոնյաների բացակայությունը և սկսում է վազել: Նա դուրս է գալիս աջ կողմից:

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆԻ ՋԱՅՆԸ (կուլիսներից).— Ներեցե՛ք ինձ...

Բայց ես ուզում էի ձեզ հարցնել, թե արդյոք տեսե՞լ եք Ոստիկանապետին կամ պաշտոնյաների: մեկին... Անախորժ վիճակ ամեղձվեց՝ ես պետք է ստորագրեի ինձ վերաբերող գեղարվեստի... և... ես սող չսպեցի... (Սարսափած): Սակայն էիս կարող դուրս գալ մեկից ավելու, մեզանից մեկն ու մեկը կամ ց պիտի տեսած լինեք: Ես չեմ հասկանում...

Ձախից ներս է մտնում Տնտեսվարուհին՝ հագին գորշ գույնի աշխատագգեստ: Նա փոքր-ինչ տեղաշարժում է սեղանն ու աթոռները, վերցնում է քարտարանը և բերում բանալիների մի տախտակ, որը կախում է խորքի պատից, բեմահարթակի աջ կողմում:

Տեսարանն այժմ ներկայացնում է հյուրանոցի գրասենյակը:

ՊԱՏԿԵՐ ԵՐԿՐՈՐԴ

ՀՅՈՒՐԱՆՈՑԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԸ

Պրոֆեսոր Տարանը գնում-գալիս է:

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ.— Դարձյալ չես գտնի ոչ մեկին: Ինչքա՞ն

հոգեւորացի է: Տնտեսարուհին գնացել է իր համար ման գալու... սովորականի նման: Այսպիսի դեպքում նա լավ կաներ, եթէ հեռանար աշխատանքից, դա ավելի ազնիվ կլիներ նրա կողմից... **(Դադար):** Կուզենայի, այնուամենայնիվ, իմանալ՝ փոստատարն ինձ համար ինչ բերած կլինի: **(Աջից ներս են մտնում երկու ուստիկան: Նրանց արտաքինը նշանակություն չունի):** Ո՛րքեր եք դուք: Ի՞նչ եք ուզում: Գրասենյակում ոչ ոք չկա:

ԱՌԱՋԻՆ ՈՍՏԻԿԱՆ.— Մեզ հանձնարարված է գտնել մի անձնավորության:

Նա գրպանից հանում է մի թուղթ:

ԵՐԿՐՈՐԴ ՈՍՏԻԿԱՆ.— Տարանին:

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ.— Ուզում եք ասել՝ պրոֆեսոր Տարանին:

ԱՌԱՋԻՆ ՈՍՏԻԿԱՆ.— Մեզ հանձնված գրությունների մեջ մասնագիտությանը վերաբերող կետը բաց է թողնված:

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ.— Անախորժ է այդ բացթողումը: Որովհետև այդ դեպքում ինչո՞վ կհիմնավորեք, որ այդ ինձ եք որոնում: **(Ուստիկանները ծիծաղում են):** Ես պրոֆեսոր Տարանն եմ՝ համալսարանում դասախոսելու իրավունքով... **(Ուստիկանները մոտենում են նրան):** Ի՞նչ է եղել: Ես ոչ ոքի վնաս չեմ հասցրել: **(Ծիծաղելով):** Իմ խիղճը հանգիստ է:

ԱՌԱՋԻՆ ՈՍՏԻԿԱՆ.— Դուք կարգ եք խախտել:

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ.— Բացատրեք, ի՞նչ է պատահել...

ԵՐԿՐՈՐԴ ՈՍՏԻԿԱՆ.— Մեր ուզածն էլ հենց այդ է, բայց դուք մեր խոսքը կտրում եք:

ԱՌԱՋԻՆ ՈՍՏԻԿԱՆ.— Ձեր կատարած օրինազանցությունը հասարակ գոեհկություն է: Մի տուգանքով գործը կփակվի:

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ.— Թեկուզ այդքանը, բայց ես հո պետք է իմանամ, թե ինչի համար եմ վճարում:

ԱՌԱՋԻՆ ՈՍՏԻԿԱՆ.— Հանգի՛ստ: Իր կյանքում ո՞վ չի տուգանվել որ...

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ (կարճատև լռությունից հետո, ասես, խիզախ վճիռ ընդունած լինի).— Ա՛հ, հենց այդ է, որ կա: Դուք տեղյակ չեք: Բայց ես, իրոք, քիչ ատաշ ուստիկանատանն էի: Ստորագրել եմ անհրաժեշտ գրությունները: Վկաներ կային, որոնք երաշխավորեցին իմ օրինավոր կենցաղի վերաբերյալ: Իմ գործը հարթված է: Ի դեպ, ինքներդ կարող եք եզրակաց-

նել, քանի որ ես այստեղ եմ, ազատ, ձեր առաջ և ձեզ բացատրում եմ... Ձեր ծառայողական ցանցը շատ վատ է աշխատում: Ինչ որ ճիշտ է՝ ճիշտ: Որովհետև, ի վերջո, այն, ինչ որ ես տեղեկացնում եմ, ձեզ վաղորոք հայտնի պիտի լիներ: Հենց այդ է միակ եզրակացությունը:

ԵՐԿՐՈՐԴ ՈՍՏԻԿԱՆ.— Դուք սխալվում եք: Մենք կախում չունենք շրջանային բաժանմունքից: Մենք ձեզ պետք է հարգաբնենք մի ուրիշ օրինազանցության կապակցությամբ:

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ.— Եվս մի անգամ բացատրեք, թե ի՞նչ է պետաֆել:

ԱՌԱՋԻՆ ՈՍՏԻԿԱՆ.— Ձեր հասցեին մեղադրանք է հարուցված առ այն, որ թղթեր եք շող տվել... լողափի խցիկներում:

ԵՐԿՐՈՐԴ ՈՍՏԻԿԱՆ.— Կարծում եք, թե ձեզ ամեն ինչ կարելի՞ է. Այստետև, ձեր ականջին օղ կանեք, որ հարկավոր է արահայանել լողափի խցիկների մաքրությունը:

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ (ազդեփված).— Չարաչար սխալվում եք: Բանն էլ հենց այն է... որ ես լողափի խցիկ չեմ զբաղեցրել ո՛չ երեկ... ո՛չ անցյալ օրը, ու վերջերս հենց այդ երկու օրն է, որ բզանք եմ բերումնել: **(Դադար):** Անշուշտ, ես սովորություն ունեմ խցիկ զբաղեցնելու: Ձեմ սիրում հավելել ծովափին, որտեղ ամենքը կարող են ինձ տեսնել: Եվ բոլոր այն զգուշությունները, որ պետք է նկատի տեսնող անպարկեշտ նայվածքներից խուսափելու համար, բոլոր այդ զգուշություններն ինձ հայտնաբերում են ու մանավանդ ինձ կորցնել են տալիս մի թանկ ժամանակ, որը նախընտրում եմ օգտագործել **(ծիծաղելով)** ուրիշ բանի համար... որն ավելի շահավետ է: **(Ձեռքի շարժումով փորձում է հասկացնել):** Մի... երկար պատմություն է տարատն իջեցնելը գոտու վրայից, վերնաշապիկը շատ արագ հանգուցելուց հետո: Պետք է հետևել, որ վերնաշապիկը չընկնի: **(Դադար):** Պիտի ասեք, որ միշտ էլ հնարավոր է ապաստանել խցիկների ետևում, բայց այդտեղ էլ սպազաշերտը երբեք չեն փոխում, և այնպիսի կեղտ է տիրում... Մարդ զգվում է այդտեղ հասնելուց:

ԱՌԱՋԻՆ ՈՍՏԻԿԱՆ (պրոֆեսոր Տարանին մեկնում է այն թուղթը, որ ուներ ձեռքին).— Լսե՛՛վ: Մենք ձեզանից միայն խընդրում ենք, որ կազմեք հետևյալ բացատրագիրը՝ Երդվում եմ, որ սկսած այսինչ... թվականից չեմ զբաղեցրել լողափի խը-

ցիկներից որևէ մեկը, և ձեր ստորագրությունը: Դա դժվար
չէ:

ԵՐԿՐՈՐԴ ՈՍՏԻԿԱՆ.— Դուք կարող եք, եթե դա ճիշտ է, ըստ
ձեր ցանկության, «սկսած այսինչ թվականից» բառերից հե-
տո ավելացնել՝ «Այդպես էր, որովհետև դրամ չունեի»:

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ.— Ծիշտ է, ես դրամ չունեի... իմ գրպան-
ներում: Ամեն մեկի հետ կարող է պատահել, որ դրամը տա-
նը մոռանա: Անշուշտ, կարող է տարօրինակ թվալ, որ այդ-
պիսի փաստը կրկնվում է մի քանի օրվա ընդմիջումով: Բայց
եթե մի լավ խորհեք, կնկատեք, որ դա շատ ակներև է... Դեպ-
քերը միշտ լինում են նմանատիպ ու շարան-շարան: Հետա-
քըքթի է, քայց... փաստն ակնհայտ է: Այո՛, վերջին անգամ,
երբ գնացի լողափ, դրամս դարձյալ մոռացել էի տանը...
Դուք պիտի ասեք, որ կարող էի ետ դառնալ ու վերցնել:
Բայց, պարոններ, ես այդ մեկը չեմ կարող և այդ երբեք չեմ
կարողացել: Անցնել մի նամակապահով ակն համոզմամբ, որ
դարձյալ անցնելու եմ այդտեղից՝ բոլոր մանրամասները նո-
րից տեսնելու անխուսափելիությամբ, այդ իմ ուժերից վեր է:
(Փոխելով խորելակերպը): Եվ հետո, ընդհանուր առմամբ,
ես չեմ սիրում քայլել: Ես քայլելիս չեմ կարողանում աշխա-
տել:

ԵՐԿՐՈՐԴ ՈՍՏԻԿԱՆ (գրպանից մի տետր հանելով).— Սա ձեզ
ծանոթ է:

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ.— Բայց սա իմ տետրն է... Ինչպե՞ս է ձեր
ձեռքն ընկել: Պատասխանեք ինձ: Ես պահանջում եմ, որ
դուք ինձ պատասխանեք. Այդ տետրը միշտ մոտս է լինում:
Ես նրանից երբեք չեմ բաժանվում: Ես մեջը մակագրում եմ
բոլոր այն մտքերը, որոնք գլխովս են անցնում օրվա ընթաց-
քում, մտքեր, որ հետո զարգացնում եմ... Ոչ, դուք այդտեղ չեք
գտնի իմ ոչ մի դասախոսության ամբողջական շարադրանքը:
(Փիծաղելով): Ամբողջ տետրը չէր բավականացնի... Իմ դա-
սախոսությունները երկար են, շատ երկար են: Մի բարեկամ
ինձ մի անգամ հավաստիացրեց, որ ոչ մի համալսարանում
այդքան երկար դասախոսություններ չեն լինում: Անընդմեջ
մի քանի ժամ խոսելու իրավունք ունեմ... Երբեմն ամբիոնն
զբաղեցնում եմ նույնիսկ մութն ընկնելուց հետո... Մինչ ես
խոսում եմ, վառում են լամպերը, և բաց դռներից չի դադա-

րում ներս մտնող ունկնդիրների հոսքը: Բնականաբար, ես այդ չեմ սիրում, աղմուկի պատճառով, դե', պթոններ են տեղաշարժում... Բայց քիչ չեն այն մարդիկ, որոնք օրվա ընթացքում այնպիսի զբաղմունքներ ունեն, որոնցից չեն կարողանում ձեռ քաշել, թեև օձիքները թափ են տալիս, որ մի կերպ ազատվեն... Պետք է մտնել նրանց դրության մեջ: Մանավանդ որ իմ դասավանդումը գերծ է սովորական իրավիճակից: Իմ դասախոսությունները այնպես են տարրաբաժանված, որ հեշտությամբ կարելի է հերթական հատվածն ընկալել, առանց նախորդն իմանալու... Բանն այն չէ, որ ինձ կրկնում եմ, ոչ: Բայց ամեն... մի հատվածի սկզբում ամփոփում եմ այն, ինչ ասել եմ նախորդ անգամ, և այդ ամփոփումը, պարոններ, ոչ միայն անօգուտ չէ, այլ նոր լույսով է մեկնաբանում իմ շոշափած հարցը:

ԱՌԱՋԻՆ ՈՍՏԻԿԱՆ.— Տեսրում բազմաթիվ էջեր կան այնպիսի ձեռագրով, որ ձերը չէ:

ԵՐԿՐՈՐԴ ՈՍՏԻԿԱՆ (տետրը պարզում է պրոֆեսոր Տարանին՝ չտալով նրա ձեռքը).— Ա՛յ, օրինակ, այստեղ:

Երկու ոստիկանները շրջապատում են պրոֆեսոր Տարանին: ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ (խոնարհված դեպի տետրը, որը շարունակում է մնալ Երկրորդ Ոստիկանի ձեռքին).— Ախր չեղավ, ապ ես եմ, ես եմ: Ես իմ ձեռագիրը ճանաչում եմ: Ձեռագիրն իմի նուսն է, այնքան յուրահատուկ:

ԵՐԿՐՈՐԴ ՈՍՏԻԿԱՆ.— Ուրեմն նորից կարդացեք, ինչ որ գրել եք:

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ (ջանալով վերձանել այն էջը, որ ցույց են տալիս իրեն).— Ես ուզ... ազ... ոզ... Իրոք, ես դժվարանում եմ վերձանել: Բայց դա ապացույց չէ ամենևին: Երբ մարդ շատ արագ է գրում, օրինակ, քայլելիս,— իսկ ես հաճախ քայլելիս եմ աշխատում, պատահում է, որ չկարողանա կարդալ իր գրածը:

ԱՌԱՋԻՆ ՈՍՏԻԿԱՆ.— Ծարադրանքի հեղինակը պիտի կարողանա լրացնել այն, ինչ դժվարանում է կարդալ... իր սեփական շարադրանքի մեջ:

ԵՐԿՐՈՐԴ ՈՍՏԻԿԱՆ.— Կարծես թե...

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ (սարսափած).— Ես ցանկացել եմ գրել ուրիշի՞ ձեռագրով, բայց ինչո՞ւ, ի՞նչ շահ ունեմ դրանից:

ԱՌԱՋԻՆ ՈՍՏԻԿԱՆ (ծիծաղելով).— Չգիտեմ: Միօրինակություն-
նից խուսափելու համար:

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ (ձեռքը պարզելով).— Խնդրում եմ, տեսրս
վերադարձրեք:

Երկրորդ Ոստիկանը տեսրը թաքցնում է իր թիկունքում:

ԱՌԱՋԻՆ ՈՍՏԻԿԱՆ.— Մի քիչ համբերություն:

ԵՐԿՐՈՐԴ ՈՍՏԻԿԱՆ.— Եվս մի հարց: Ինչո՞ւ տեսրի առաջին և
վերջին էջերն են միայն գրոտված: Մեջտեղի էջերը, դրանք...

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ.— Մեջտեղի էջե՞րը: Ո՛չ, չի կարող պատա-
հել... Վաղուց է, ինչ է՞լ այս տեսրը լրացրել եմ: Դա... մի
շատ հին տեսր է, որը վերցրի նորից կարդալու, գտնելու
համար մի քանի տեղեկություններ, որոնց կարիքը ունեի: Հի-
շում եմ... ես այն գրոտել եմ ամբողջովին, նույնիսկ լուսանցք-
ներում: Դուք այդ նկատած պիտի լինեք: Ամբողջը գրոտված
է ի՛մ կողմից, ի՛մ կողմից, յսո՞ւմ եք:

ԵՐԿՐՈՐԴ ՈՍՏԻԿԱՆ (տեսրը սալով պրոֆեսոր Տարանին).—
Ինքներդ նայեցեք:

ԱՌԱՋԻՆ ՈՍՏԻԿԱՆ.— Դուք պարզապես բոլոր էջերը դեռ չեք
լցրել, ընդամենը այդքանն է ձեր զանցանքը:

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ.— Այո՛, ճիշտ է... Բացթողում կա: Մեջտե-
ղը՝ մի քացթողում:

ԵՐԿՐՈՐԴ ՈՍՏԻԿԱՆ (ծիծաղելով).— Բա որ արում էինք:

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ.— Ես ձեզ հիմա բացատրեմ... Դա շատ
պարզ է... Երբեմն տեսրերս մի ծայրից եմ վերցնում, երբեմն
մյուս ծայրից... Հասկանո՞ւմ եք... Օ՛հ, ես նախատեսում եմ
ձեր առարկությունները: Դուք ինձ պիտի ասեք. «Այդ դեպ-
քում ինչո՞ւ է շարադրանքը գրված նույն ուղղությամբ: Եթե
այն սկսած լինեիք երկու ծայրերից, ապա հնարավոր չէր լի-
նի այն կարդալ մի շնչով...»: Իսկապես... միայն թե ես ջա-
նում եմ ուշադիր լինել... (Երկու ոստիկանները աջից դուրս
են գալիս: Տարանը չի նկատել նրանց հեռանալը և շարունա-
կում է իր ճառը): Իհարկե, ես պետք է զգուշանայի էջերը
բաց թողնելուց, և... դա չէր պատահի... Բայց ես ցրված եմ,
պարոններ... Բազմաթիվ գիտնականներ, հետազոտողներ
այդպիսին են... Նույնիսկ համարյա բոլորն են այդպիսին,
դա հանրահայտ է: (Ծիծաղելով): Այդ մասին անեկդոտներ
են պատմում...

Հանկարծ նկատելով, որ մենակ է մնացել, արագորեն դուրս է գալիս աջ կողմից:

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆԻ ԶԱՅՆԸ (կոպիսներից).— Սպասեցե՛ք... Ես չեմ ստորագրել ինձ վերաբերող զեկուցագիրը: Դուք ինձ նույնիսկ գրիչ չտվեցիք: Ինքս էլ մոռա չունեմ... Վերևում, ես այն թողել եմ վերևում: Բայց չէի կարող գնալ ու բերել... Չգիտեմ ինչու, դուսնա բանալին կախված չէ տախտակից: Տընտեավարուհին, ինչպես միշտ, դուրս է եկել շենքից: Լսո՛ւմ եք ինձ: (**Գոռում է**): Պարոններ:

Փոքր-ինչ անց նա հայտնվում է աջ կողմից՝ տեսրը դեռևս ձեռքին:

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ (քայլում է).— Ես չեմ հասկանում, թե ինչու հենց այնպես գնացին, առանց որևէ բան ասելու, առանց նույնիսկ իմ ձեռքը սեղմելու... Գալիս են, գնում են... Ծատ բնական են համարում խանգարել մի մարդու, որն աշխատում է, որը մի քիչ հանգստի կարիք ունի իր աշխատանքի մեջ կարգ ու կանոն մտցնելու համար: (**Պրոֆեսոր Տարանը մի քանի քաղ է անում: Զախից ներս է մտնում Տնտեավարուհին՝ թևատակին թղթի հսկա փաթեթ: Պրոֆեսոր Տարանն ուղղվում է դեպի Տնտեավարուհին**): Փոստատարն ինձ համար բան բերե՛լ է:

ՏՆՏԵՍՎԱՐՈՒՂԻ.— Ո՛հ, պարո՛ն պրոֆեսոր, միայն հենց այս, ու խնդրեցի՛ն, որ անհասպաղ հանձնեմ պարոն պրոֆեսորին:

Պարզում է նրան թղթի փաթեթը:

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ (վերցնելով փաթեթը).— Ընդհակառակությամբ: (**Տնտեավարուհին դուրս է գալիս: Պրոֆեսոր Տարանը տեսրը դնում է սեղանին, ծնկի է գալիս և բեմի մեջտեղում քանդում է փաթեթը: Դա մի հսկայական քարտեզ է, սև թանաքով կատարված նախագիծ: Պրոֆեսոր Տարանը, ծնկաչոք, խոնարհված քարտեզի վրա, կակազում է**): Պիտի որ սխալմունք տեղի ունեցած լինի... Իսկապես, ինձ չէ, որ հասցեագրված էր այս քարտեզը... Եվ սակայն այդ ես եմ պրոֆեսոր Տարանը: Իրոք ես եմ, դրանում կասկած չկա: (**Գոռում է**): Տիկի՛ն:

ՏՆՏԵՍՎԱՐՈՒՂԻ (հայտնվելով ձախից).— Դուք ինձ կանչեցի՛ք, պարո՛ն պրոֆեսոր:

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ (վեր կենալով).— Ձեզ ո՞վ տվեց այս քարտեզը:

ՏՆՏԵՍՎԱՐՈՒՀԻ.— Ներս մտնելիս՝ ես այն գտա գրասեղանին: Դրան կցել էին մի թուղթ, որի վրա գրված էր՝ սա անհասարկ հանձնել պրոֆեսոր Տարանին: Այդքանը գիտեմ: (**Դուրս է գալիս ձախ կողմից**):

Պրոֆեսոր Տարանը կրկին ծնկի է գալիս քարտեզի առաջ և այն ուսումնասիրում է: Աջից ներս է մտնում Ժաննան՝ թխահեր, երիտասարդ կին, կանոնավոր դիմագծերով և հանգիստ ձայնով: Նա ոչ մի զարմանք չի արտահայտում և շրջանցում է քարտեզը այն շտրորելու համար: Կանգ է առնում քարտեզի մյուս ծայրին, բեմի ձախ կողմում:

ԺԱՆՆԱ.— Այստեղ հաճելի է:

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ.— Ժաննա՛, ինձ հետ արտասովոր բաներ են պատահում:

ԺԱՆՆԱ.— Արտասովոր՞ր: Վստա՞հ ես, որ այդպես է: Քեզ որ լսենք, ամեն ինչ միշտ էլ արտասովոր է: (**Ծիծաղելով**): Ա՛յ թե ինչ եղբայր ունեմ:

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ.— Ուշադիր լսիր... Քիչ առաջ ինձ ուղարկեցին... այս քարտեզը... Դա ճաշատենյակի նախագիծն է մի նավի, որի վրա ես մի տեղ պիտի ուզեցայի զբաղեցրած լինել: Միայն թե բանն այն է, որ ես այդ նավի վրա տեղ չեմ զբաղեցրել...

ԺԱՆՆԱ (ծնկի է գալիս և խոնարհվում է քարտեզի վրա).— Նախագծից դատելով դա մի գեղեցիկ ու ընդարձակ ճաշատենյակ է:

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ.— Այո՛, ընդարձակ է:

ԺԱՆՆԱ.— Գործակալություններում ես հաճախ հիացել եմ «Պրեզիդենտ-Ուելինգի» լուսանկարներով: Դա անշուշտ ամենարագընթաց և ամենահարմարավետն է բոլոր շոգենավերից:

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ.— Հավանական է: Մնում է այն հանգամանքը, որ ես տեղ չեմ զբաղեցրել այս նավի վրա, ոչ էլ ուրիշ որևէ նավի վրա, ուստի...

ԺԱՆՆԱ (ավելի է խոնարհվում՝ ավիզ հեցելով քարտեզին).— Ինչի՞ց ես գանգատվում: Հարգալից նկատառումներ են ունեցել քո նկատմամբ: (**Քարտեզի վրա մի կետ է մատնացույց ա-**

- նում):** Տեսնո՞ւմ ես այս խաշը: Դա քո տեղն է: Քեզ պատ-
վալոր տեղ են հատկացրել. դեռ ավելին՝ կենտրոնում:
- ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ.**— Այդ ամենը չի բացատրում, թե ինչու ես
ես տեղ զբաղեցրել մի նավի վրա: Ո՞ր գնալու համար: Ինչ-
քան գիտեմ, ծովային ճանապարհով չէ, որ գնում են Բելգիա:
- ՄԱՆՆԱ.**— Քեզ այդքան լավ մի տեղ արժանացրած լինելու փաս-
տը ցույց է տալիս, որ նրանք գիտեն, թե ով ես դու:
- ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ.**— Իհարկե... Պատահական չէ, որ ինձ
սրտովալոր տեղ են հատկացրել ամենատերևելի անձնավո-
րությունների կողքին... Բայց ես մտադրություն չունեմ այդ-
քան հեռու գնալու: Ես այդ անելու ոչ մի պատճառ չունեմ:
Ես ոչինչ չունեմ որոնելու... ոչ էլ վախենալու:
- ՄԱՆՆԱ (վեր է կենում և կանգնում է շատ ուղիղ).**— Գուցե դու
տոմս ես գնել մի օր, երբ հոգնած ես եղել մի շատ ծանր աշ-
խատանքից: Հետո քո հոգնածությունը նվազել է, և դու մո-
ռացել ես, որ տոմս ես գնել:
- ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ (ցրված).**— Թերևս, այդպես է:
- ՄԱՆՆԱ.** — Այո՛, պատահում է, բաներ ենք անում, որ հետո մո-
ռանում ենք: Համախ իմ տակերն եմ փնտրում, մինչ դրանք
մազկերիս են խրված: Տարօրինակ է, այդ պահին մի քիչ սրտ-
նեղում եմ, հետո՝ ծիծաղում... (Միծաղում է, ապա լրջորեն):
Քեզ ես մտք տեսակ տեսեմ.
- ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ (շատ արագ).**— Բելգիայի՞ց:
- ՄԱՆՆԱ.**— Չգիտեմ: Իրոշմանիշի վրա մի արձան կա և արձա-
նագրություն:
- ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ.**— Նամակը մո՞տդ է:
- Ուղղվում է դեպի ժանճան՝ քարտեզը շրջանցելով:**
- ՄԱՆՆԱ (նամակը հանում է գրպանից).**— Արձանի տակ գրված
է (կարդալով). Անկախության տերիտորիա:
- ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ.**— Բայց կրթեք այդպիսի արձանագրություն-
ներ չեն լինում ոչ մի դրոշմանիշի վրա: (Չեռքը պարզելով):
Տոբ ինձ:
- ՄԱՆՆԱ (ծրարը շտալով սիրոֆետր Տարանին՝ մատնացույց է
անում).**— Նայիր կողքին մի ուրիշ դրոշմանիշ կա, վրան՝
աղյուծ:
- ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ.**— Այո՛, Բելգիայի արքայական աղյուծը՛:

ԺԱՆՆԱ.— Ստիպված էի լրացուցիչ գումար մուծել ~~նամակի դիմաց:~~ **(Ծիծաղելով):** Դրամապանակս լրիվ դատարկեցի:

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ.— Հե՛նց այդ էր, որ մտքովս անցավ: Ռեկտորի նամակն է, վերջապես: **(Դադար):** Տո՛ւր տեսնեմ: Ինչո՞ւ չես ուզում տալ:

ԺԱՆՆԱ.— Կուզե՞նայի ինքս կարդալ քեզ համար:

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ.— Ի՛նձ տուր նամակը:

Ուզում է վերցնել նամակը, բայց ժանճան դիմադրում է:

ԺԱՆՆԱ (նամակը պարզելով պրոֆեսոր Տարանին).— Ինչպես կուզես:

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ.— Լավ, դու կարդա:

Ժանճան նստում է սեղանի ծայրին և բացում է ծրարը:

Պրոֆեսոր Տարանը մնում է նրա կողքին կանգնած:

ԺԱՆՆԱ (խոսում է անուարբեր ձայնով, որը և պահպանելու է մինչև պիեսի ավարտը).— «Պարո՛ն, դուք Ձեր վերջին նամակում անհամբերություն եք ցուցաբերում, մի հանգամանք, որ, խոստովանում եմ, ինձ զարմացրեց...»:

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ (վախեցած).— Ես այդ նախազգում էի: Անպատշաճություն եմ թույլ տվել, նրան վիրավորել եմ...

ԺԱՆՆԱ (կարդում է).— «Ես, սակայն, այն կարծիքին էի, որ Ձեր ուշադրությունը հրավիրելով իմ կնոջ առողջական վիճակի վրա, բավարար չափով բացատրել եմ իմ պատասխանն ուշացնելու պատճառը...»:

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ.— Իհարկե, ես նրան հարցրած պիեսի լինելի կնոջ մասին: Բայց նա կարող էր պատկերացնել իմ վիճակը: Ես իմ նամակի մեջ շոշափում էի այնպիսի հարցեր, որոնք իմ սրտիս շատ են մոտ: Մի նյութից մյուսին անցնելն այնքան էլ հեշտ չէ: **(Դադար):** Խոստովանում եմ, մոռացել էի նրա կնոջը:

ԺԱՆՆԱ (կարդում է).— «Այսպիսի պայմաններում, ինչ կերպ էլ որ լինի, ինձ համար անհնարին է միջոցներ ձեռք առնել, որոնք անհրաժեշտ դարձնեին Ձեր երկրորդ ժամանումը մեզ մոտ...»:

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ.— Նա, ուրեմն, իրեն համարում է անփոխարինելի՞... Այդ միջոցները ձեռք առնելու համար ուրիշները նույնքան լիազորված են, որքան ինքը... Ուրիշները շատ ու-

րախ պիտի լինեին ինձ ծառայություն մատուցել, բարեխոսել ինձ համար:

ՎԱՆՆԱ (Կարդում է).— «Հարկ եմ համարում Ձեզ ասել նաև, որ Ձեր վերջին այցելության ժամանակ, ես զարմանքով իմացա, որ Դուք զանց եք առել Ղեկավարությանը տեղյակ պահելու Ձեր դասախոսությունների ճշգրիտ ժամերի մասին, դրանով իսկ նեղություն պատճառելով Ձեր գործընկերներին, որոնք հարկադրված եղան վերջին պահին փոխելու իրենց դասաժամերը...»:

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ.— Բայց իրենց ուզածն էլ հենց այդ էր:

ՎԱՆՆԱ (Կարդում է).— «Ես նույնպես իմացա, որ Ձեր ասուլիսները երկարել էին ավելի, քան այդ թույլատրելի է...»:

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ.— Եթե ես երկարաձգել եմ իմ դասախոսությունները, ապա նյութերի առատությունն էր, որ ինձ հարկադրում էր դրան... և ես այլ կերպ չէի կարող...

ՎԱՆՆԱ (Կարդում է).— «Ինձ ասացին, վերջապես, որ Ձեր ունկընդիրները զգալիորեն ձանձրանում էին, և մի քանիսը մինչև իսկ խոսում էին բարձրաձայն, և ուրիշները հեռանում էին դանդիմից, եսլսքան Ձեր ավարտելը»:

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ.— Այդ ո՞վ է իրեն թույլ տվել այդպիսի պատեր կառուցելու. եվ ինչպե՞ս նա կարող է այդ աստիճանի դուրսեւախառ լինել... Ախր դա անհեթեթություն է: Եթե իմ դասախոսության ժամանակ դանդիմը դատարկվելիս լինեք, ես այդ պիտի նկատեի և դադարեցնեի... Մինչդեռ ես երբեք չեմ դադարեցրել... ընդհակառակը, մի շնչով խոսել եմ և առանց ձայնի ցածրացնելու: **(Դադար):** Ոչ մի անգամ ես ձայն չեմ ցածրացրել: Իրոք, պատահել է, որ ուսանողներ հեռանան դասախոսության ավարտից առաջ: Բայց պատճառն այն է, որ գնացքով պիտի վերադառնային տուն: Եկել էին ուրիշ քաղաքից հատկապես իմ դասախոսությունները լսելու, և միայն այդ մի գնացքն էր նրանց հարմար... Ոչ մի կերպ չի կարելի հանդիմանել այդ ուսանողներին, բացարձակապես ոչ մի կերպ... Իսկ ինչ վերաբերում է մրմուջներին, որոնք մի անգամ բարձրացան դանդիմի խորքից, ես գիտեմ, ովքեր են պատասխանատուները... Ուսանողուհիները լռեցրել են իրենց ետևում նստած մի քանի երիտասարդների, որոնք բացականչել են. «Ինչպիսի՞ պայծառատեսություն,

տրամաբանության ինչպիսի՛ հզորություն...»: Ես նրանցից հաշիվ չեմ պահանջում. այդ ուսանողուհիները բարեխղճորեն նշումներ էին անում: Ծառ բնական է, որ լուռություն պահանջած լինեին:

ԺԱՆՆԱ (կարդում է).— «Այդ ամենը ամենևին նշանակություն չէր ունենա, եթե Ձեր դասախոսությունների բուն իսկ արժեքը նարցակահի տակ չդրվեր: Բանն էլ հենց այդ է: Ձեր վերջին դրույթները, ինձ թվում է, շատ անհավասարաչափ են...»:

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ.— Անհավասարաչափ: Հեշտ է ասել: Կարծես միշտ էլ կարելի է անմիջապես մոտենալ բուն խնդրին: Կարծես հարցեր չկան, որոնք ծամծմվելու ենթակա են ավելի, քան մյուսները, որովհետև դրանք ձեզ վերաբերում են անձնապես, որովհետև դրանք ձեզ հուզում են...

Նա մատը խփում է կրծքին:

ԺԱՆՆԱ (կարդում է).— «Որոշ տեսակետներ ինձ հետաքրքրեցին: Բայց կուզե՞նայի, որ դրանք զարգացրած լինեիք ավելի նշգրտորեն, ես կասեի, ավելի բարեխղճորեն: Ձեր արտահայտած մտքերը մի քիչ ինձ շատ են հիշեցնում պրոֆեսոր Մենարի արդեն իսկ մշակած տեսակետները: Բանն այն չէ, որ ես վերապահորեն եմ ընդունում այդ գաղափարները: Ընդհակառակը, ես դրանք արժանի եմ համարում ամենամեծ ուշադրության: Բայց այդ ինչպե՞ս զանց առաք մատնանշել Ձեր աղբյուրները և որպես սեփական հետազոտության արդյունք ներկայացնել գրագողությունը մի սշխատության, որ մեզ ծանոթ է, և որով մենք հիացած ենք բոլորս...»:

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ (ուժահատ հեճվում է սեղանին, և կակազում է).— Դա ճիշտ չէ... Դա ճիշտ չէ: Ես ու նա նույն մտքերն էնք հղացել նույն պահին: Այդպիսի բաներ պատահում են: Այդ առաջին անգամը չէ...

ԺԱՆՆԱ (կարդում է).— «Գուցե ես Ձեզ տեղյակ չսլամեի իմ տպավորությունների մասին, եթե տարբեր անձանցից ստացած շիճեի նամակներ, որոնք մատնանշում են այն, ինչ պետք է անվանել Ձեր անըրբանկատությունը»:

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ (ցնցվելով ուղղվում է).— Նրան գրել են, բոլորը: Ես գիտեի, որ այդ պիտի անեն: Ես նրանց լավ եմ ուսումնասիրել: Իմ խոսելու ընթացքում, նրանք կաղկանձում էին (սուր ձայնով նշում է). «Նա գողացել է պրոֆեսոր Մե-

նարի ակնոցը: Ամեն ինչ անում է պրոֆեսոր Մենարի նման: Ափսոս, որ նրանից կարճահասակ է»: Եվ էլի, չգիտեմ, ինչ գտնանցանքներ... Եթե գոնե քաջությունն ունենային տեղից վեր կենալու և իմ կրեսիկ ասելու այն քաները, որ ստորաբար շնչում էին, այնժամ ես վեր կկենայի և կասեի (**հռետորի շարժումով, ձայնը բարձրացրած**): Պարոններ...

Վ.Ա.ՆՆԱ (կարդում է).— «Այս ամենի արդյունքն այն է, որ Ձեզ չեմ կարողանա հրավիրել մեր հաջորդ նստաշրջանին: Հավատացած եղեք, պարո՛ն, որ ցավում եմ Ձեր մասին ունեցած իմ նախկին կարծիքը փոխած լինելու համար»:

Ժաննան վեր է կենում, նամակը հանգիստ դնում է սեղանին և դուրս գալու շարժում է անում: Պրոֆեսոր Տարանը կառչում է սեղանից, որպեսզի վայր չընկնի:

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆ.— Ինչո՞ւ այդ մասին ինձ հիմա են ասում՝ այսքան տարիներ հետո: Ինչո՞ւ այդ մասին ինձ ավելի շուտ չեն ասել: Ինչո՞ւ ինձ այդ չասացին բոլորը: Քանի որ դա երևում է: Քանի որ դա առաջին իսկ պահից ակնհայտ է:

Մինչ պրոֆեսոր Տարանը խոսում է, Ժաննան զգուշությամբ շրջանցում է քարտեզը և դանդաղ դուրս է գալիս աջ կողմից:

Իր վերջին խոսքից հետո պրոֆեսոր Տարանը շրջվում է դեպի քարտեզը, որին և երկար նայում է:

Ձախից ներս է մտնում Տնտեսվարուհին: Առանց նայելու պրոֆեսոր Տարանի կողմը, նա հավաքում է այն մի քանի առարկաները, որոնք հանդիսանում են դեկորներ (աթոռները և այլն) ու դրանք տանում է կուլիսները: Բեմը մնում է թափուր: Միայն տետրըն ու նամակը, որ Տնտեսվարուհին գցել է, մնում են հատակին: Պրոֆեսոր Տարանը ոչինչ չի նկատել: Տնտեսվարուհու դուրս գալուց հետո նա վերցնում է քարտեզը, ինքնաքերաբար գնում է դեպի բեմի խորքը և հայացքով հարմար տեղ է փնտրում այն կախելու համար: Նախօրոք դրված է մի հարմարանք: Բարձրանալով ոտնաթաթերի ծայրերին, նա քարտեզը մի կերպ կախում է պարից: Քարտեզը գորշ, միօրինակ, բացարձակապես դատարկ ընդարձակ տարածություն է: Թիկունքը հանդիսատեսին դարձրած պրոֆեսոր Տարանը երկար նայում է քարտեզին, ապա շատ դանդաղ սկսում է հանվել:

ԺԱՆ-ՊՈԼ ՍԱՐՏՐ

ՍԱՏԱՆԱՆ ԵՎ ՏԵՐ ԱՍՏՎԱԾԸ

(պիես երեք գործողությամբ, տասնմեկ պատկերով)

Գ Ո Ր Ծ Ո Ղ Ա Ն Ձ Ի Ն Ք

ԳԵՑ

ՀԱՅՆՐԻԽ

ՆԱՍՏԻ

ԴՐԱՄԱՏԻՐ

ԿԱՏՐԻՆ

ՀԻՂԱ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՍՊԱՍԱՎՈՐ

ԳՆԴԱՊԵՏ ԼԻՆԵՀԱՐՏ

ՀԱՅՆՑ

ՇՄԻԴՏ

ԳԵՌԼԱՆ

ԿԻՆ

ՍԱՐԳՍՐԵ

ՉՔԱՎՈՐՆԵՐ

ՀԱՐՈՒՍՏ ՔԱՂՔԵՆԻՆԵՐ

ԵՊԻՍԿՈՊՈՍ

ՀՍՍԱՐԱԿ ՄԱՐԴ

ՍՊԱՆԵՐ

ՀԻՎԱՆԴԱՊԱՀՆԵՐ

ՀԵՐՄԱՆ

ՖՐԱՆՑ

ԿԱՊԻՏԱՆ ՇԱՅՆ

ԿԱՊԻՏԱՆ ՈՒԼՐԻԽ

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐ

ԿԱՐԼ

ՇՈՒԼՀԱՅՄ

ՆՈՍԱՔ

ՈՒՏՉԵԼ

ՏԵՏՏԵԼ

ԾԵՐՈՒՆԻ

ՔԱՐԿԱՎԱԳՆԵՐ

ՔԱՀԱՆԱ

ՔՈՐՈՏ

ՊԱՌԱՎ

ԴԱՍՏԻԱՐԱԿՉՈՒՀԻ

ՎՀՈՒԿ

ՉԻՆՎՈՐՆԵՐ

ՊԵՏԵՐ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ

ՊԱՏԿԵՐ ԱՌԱՋԻՆ

Չախ կողմը՝ Արքեպիսկոպոսի պալատական սրահներից մեկը, որը թվում է, թե կախված է երկնքի և երկրի միջև: Աջ կողմը՝ Եպիսկոպոսի տունը և քաղաքի պարիսպները: Պատկերի սկզբում լուսավորված է միայն Արքեպիսկոպոսի պալատական սրահը: Բեմի մնացած մասերը սուզված են խավարի մեջ:

ՏԵՍԱՐԱՆ ՄԻԱԿ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ (կանգնած լուսամտի կողքին).— Արդյոք նա գալո՞ւ է: Տե՛ր Աստված, հպատակներս բթամատներով մաշեցի՞ն ոսկերքամների՞ն դրվագված իմ պատկերը, մինչ ձեր ահարկու բթամատը մաշեց իմ երեսը: Ես ի՞նչ արքեպիսկոպոս՝ ստվերս է մնացել: Եթե օրվա վախճանն իր հետ բերի իմ սյարտաթան լուրը, ես արդեն այնքան մաշված կլինեմ, որ թափանցիկ կդառնամ այնց նստվածքների տակ: Եվ ձեր ինչի՞ն է պետք, Տե՛ր իմ, թափանցիկ նախարար:

Ներս է մտնում Սայասավորը:

Գնդապետ Լինենսի՛րտն է:

ՍՊԱՍԱՎՈՐ.— Ո՛չ, դրամատեր Ֆուքսն է եկել: Նա խնդրում է...

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.— Քիչ հետո կընդունեմ: (**Դադար**): Ո՞ր մընաց Լինենսի՛րտը: Նա պետք է ինձ ներկայանար վերջին տեղեկություններով: (**Դադար**): Խոհանոցում խոսո՞ւմ են ճակատամարտի մասին:

ՍՊԱՍԱՎՈՐ.— Հենց միայն այդ մասին են խոսում, սրբազա՛ն:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.— Ի՞նչ են ասում:

ՍՊԱՍԱՎՈՐ.— Որ ցործը ձեռնարկված է վարպետորեն, որ Կոնրադը սեղմված է գետի և լեռան միջև, և որ...

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.— Գիտեմ, գիտեմ: Բայց եթե մարդ կուլի մեջ է մտնում, կարող է և պարտվել:

ՍՊԱՍԱՎՈՐ.— Սրբազա՛ն...

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.— Հեռացի՛ր:

Սայասավորը հեռանում է:

Դու այս ինչո՞ւ թույլ տվիր, Տե՛ր Աստված: Թշնամին Աերխու-
ժեյ է իմ հողերը, և Ուորմսը՝ իմ սիրելի քաղաքը, ապաստան-
բույություն է բարձրացրել: Մինչ ես մարտնչում էի Կոնրադի
դեմ, նա դաշույնի հարված հասցրեց իմ թիկունքին: Ես չգի-
տեի, Տե՛ր իմ, որ ինձ համար նախատեսել էիր այսպիսի ծա-
նրը ճակատագիր: Մի՞թե ինձ պիտի վիճակվի կուրանալ, ու
ձեռքս մի երեխայի ուսին՝ դռնեղուռ պիտի ընկնեմ ողորմու-
թյուն խնդրելու: Իհարկե, ես լիովին գտնվում եմ քո տնօրի-
նության տակ, և եթե դու իրոք պնդում ես, թող քո կամքը ի
կատար ածվի: Բայց խնդրում եմ՝ նկատի ունեցիր, որ վաղուց
է, ինչ դադարել եմ քսան տարեկան լինելուց, և նախատակ-
վելը երբևիցե չի եղել իմ կյանքի կոչումը:

Հեռվից լսվում են աղաղակներ՝ «հաղթանակ», «հաղթանակ»:
Ձայները մոտենում են: Արքեպիսկոպոսն ունկնդրում է և ձեռքը
դնում է սրտին:

ՍՊԱՍԱՎՈՐ (ներս մտնելով).— Հաղթանակ, հաղթանակ: Մենք
հաղթեցինք, սրբազա՛ն: Ահա գալիս է գնդապետ Լինեհարտը:

ԳՆԴԱՊԵՏ (ներս մտնելով).— Հաղթանակ, սրբազա՛ն: Հաղթա-
նակը լիակատար է՝ ըստ ռազմական կանոնադրության: Օրի-
նակելի ճակատամարտ, պատմական իրադարձություն: Թըշ-
նամին վեց հազար մարդ կորցրեց՝ սրախողխող կամ ջրա-
հեղձ: Մնացյալները խուճապահար փախչում են:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.— Փա՛նք քեզ, Աստված: Ի՞նչ Կոնրա՛դը...

ԳՆԴԱՊԵՏ.— Դիակը հայտնաբերել են մահացածների մեջ:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.— Շնորհակալություն, Տե՛ր Աստված: **(Դա-
դար):** Եթե նա մահացել է, ես ներում եմ նրան: **(Լինեհար-
տին):** Քեզ ես օրհնում եմ: Գնա՛, տարածի՛ր ավետիսը:

ԳՆԴԱՊԵՏ (ձգվելով).— Արեգակը նոր էր ծագել, երբ մենք փո-
շու ամպ նկատեցինք...

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ (նրան ընդհատելով).— Ոչ, մանրամասնու-
թյունները պետք չեն: Բացարձակապես ոչ մի մանրամասնու-
թյուն: Երբ հաղթանակի մասին պատմում են մանրամասնու-
րեն, մարդ չգիտի այն ինչպես տարբերի պարտությունից: Իս-
կական հաղթանակ էր, այնպես չէ՞:

ԳՆԴԱՊԵՏ.— Սքանչելի հաղթանակ, ռազմական արվեստի նմուշ:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.— Գնա՛, ես ուզում եմ աղոթել:

Գնդապետը դուրս է գալիս: Արքեպիսկոպոսն սկսում է պարել:

Ես հաղթեցի, ես հաղթեցի: (**Ձեռքը դնում է սրտին**): Վա՛յ:
(**Ծնկի է գալիս իր աղոթարանին**): Աղոթենք:

Լուսավորվում է բեմի աջ հատվածը: Քաղաքի պարիսպների վերնամասը, դիտակալ զինվորների երթուղարձի ուղին: Հայնցը և Շմիդտը թեքվել են հրակնատների վրա:

ՀԱՅՆՑ.— Չի կարող պատահել... չի կարող պատահել. այդ եղել է Աստծո կամքին հակառակ...

ՇՄԻԴՏ.— Սպասի՛ր, հիմա նորից սկսելու են: Նայի՛ր՝ մեկ, երկու, երեք... երեք... և մեկ, երկու, երեք, չորս, հինգ...

ՆԱՍՏԻ (**հայտնվում է պարիսպների վրա**).— Հե՛յ, ի՞նչ կա:

ՇՄԻԴՏ — Նա՛տի՛, շատ վատ լուրեր ունենք:

ՆԱՍՏԻ.— Լուրերը երբեք վատ չեն լինում Աստծո ընտրյալի համար:

ՀԱՅՆՑ.— Մի ժամից ավելի է, ինչ հետևում ենք կրակե ազդանշաններին: Բուպեն մեկ, միշտ նույն ձևով, նորից հայտնվում են: Ահա՛ մեկ, երկու, երեք և հինգ: (**Մատնացույց է անում լեռան ուղղությամբ**): Արքեպիսկոպոսը տարել է ճակատամարտը:

ՆԱՍՏԻ.— Գիտեմ

ՇՄԻԴՏ — Վիճակը հուսամուտակա՞ն է: Սեղմված ենք ուտրմսի ու փրակների սեպ՝ ստանց դաշնակիցների, ստանց պարենասրերքի: Գու՛ սեզ սսսսս է՛իր՝ Գեցը հագնելու է: Նա, ի վերջո, պիտի վերայնի պաշարումը, Կոնրադը պիտի ջախջախի Արքեպիսկոպոսին: Հիմա տեսա՛ր, Կոնրադն է, որ սպանվեց, և Արքեպիսկոպոսի բանակը շոտով կհայտնվի մեր պարիսպների տակ, կսիանա Գեցի բանակին, և մեզ ոչ մի ելք չի մնա, մեռնելուց բացի:

ԼԵՌԱՆԻ (**ներս մտնելով**).— Կոնրադը պարտվել է: Բուրգոմիստրը և խորհրդականները հավաքվել են քաղաքապետարանում, խորհրդակցում են:

ՇՄԻԴՏ.— Գրո՛ղը տանի, անձնատուր լինելու ձևն են որոնում:

ՆԱՍՏԻ.— Եղբայրներ՛ր, դուք հավատացյա՞լ եք:

ԲՈՒՆՐԸ.— Այո, Նաստի՛, այո:

ՆԱՍՏԻ.— Այդ դեպքում ոչ մի երկյուղ թող ձեզ չսասանի: Կոնրադի պարտությունը ազդանշան է:

ՇՄԻԴՏ.— Ազդանշա՞ն:

ՆԱՍՏԻ.— Ինձ տրված՝ Աստծո ազդանշանը: Գնա՛, Գեոլա՛յս,

վազի՛ր քաղաքապետարան և աշխատիր իմանալ խորհրդի որոշումը:

Քաղաքի պարիսպներն անհետանում են խավարի մեջ:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ (ոտքի ելնելով).— Էհե՛յ:

Սպասավորը ներս է մտնում:

Ներս հրավիրիր դրամատիրոջը:

Դրամատերը ներս է մտնում:

Նստիր, դրամատե՛ր: Ոտից գլուխ ցեխտովել ես. որտեղի՞ց ես գալիս:

ԴՐԱՄԱՏԵՐ.— Ծամփորդել եմ երեսունվեց ժամ՝ ձեր մի անմիտ արարքը կանխելու համար:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.— Անմիտ արա՛րք:

ԴՐԱՄԱՏԵՐ.— Դուք ուզում եք մորթել մի հաւլ, որն ամեն տարի ոսկե ձու է ածում ձեզ համար:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.— Ինչի՞ մասին է խոսքը:

ԴՐԱՄԱՏԵՐ.— Ձեր Ոտրմս քաղաքի մասին է. լսել եմ, որ այն պաշարել եք: Եթե ձեր զորքերը քաղաքը թալանեն, դուք կսնանկանաք, ես՝ նմանապես: Կոիվ-կոիվ խաղալը մի՞թե սազական է ձեր տարիքին:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.— Կոնրադին ե՛ս դրդեցի պատերազմելու:

ԴՐԱՄԱՏԵՐ.— Դուք չդրդեցիք, գուցե և այդպես է: Բայց ինչի՞ց իմանանք, որ դուք նրան չդրդեցիք, որպեսզի նա ձեզ դրդի:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.— Նա իմ վասալն էր և պարտավոր էր ինձ հնազանդվել: Բայց Սատանան շնջաց նրա ականջին, որ նա ասպետներին գրգռի և գլխավորի նրանց խռովությունը:

ԴՐԱՄԱՏԵՐ.— Նրա ուզածն ինչո՞ւ չտվիք, քանի դեռ չէր զայրացել:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.— Նա չափից ավելին էր ուզում:

ԴՐԱՄԱՏԵՐ.— Լա՛վ, Կոնրադի համար ես ասելիք չունեմ: Անտարակոյս ինքն էր նախահարձակը. չէ՞ որ պարտվեց: Սակայն ձեր Ոտրմս քաղաքը...

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.— Ոտրմսը՝ իմ գոհարը: Ոտրմսը՝ իմ անգին սերը: Ոտրմսը՝ ասերախտը, իմ դեմ ասպտամբեց հեկց այն օրը, երբ Կոնրադն անցավ սահմանը:

ԴՐԱՄԱՏԵՐ.— Դա, իրոք, մեծ հանցանք է: Սակայն ձեր եկամտուների երեք քառորդը դուք նրանից եք ստանում: Այսուհետև ձեզ ո՞վ պիտի վճարի հարկերը, ո՞վ պիտի մարի իմ

տված պարտքերը, եթե Տիբերիոսի նման օր ծերության կոտորեք ձեր քաղաքացիներին՝:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.— Քահանաներին պատճառել են նյութական վնաս և նրանց ստիպել են բանտարկված մնալ վանքերի մեջ: Լուտանք են թափել իմ Եպիսկոպոսի գլխին և հրամայել են, որ դուրս չգա Եպիսկոպոսարանից:

ԴՐԱՄԱՏԵՐ.— Դրանք երեխայություններ են: Եթե դուք նրանց չստիպեիք, ոչ մի դեպքում չէին կուլի: Բռնությունը ձեռնառու է նրանց, ովքեր ոչինչ չունեն կորցնելու:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.— Ի՞նչ է քո ուզածը:

ԴՐԱՄԱՏԵՐ.— Ներում շնորհեցեք: Մի խոշոր տուրք թող վճարեն, և եղածի մասին՝ էլ ոչ մի խոսք:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.— Ավաղ:

ԴՐԱՄԱՏԵՐ.— Ի՞նչը ավաղ...

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.— Ես Ուորմսը սիրում եմ, դրամատե՛ր: Ի խորոց սրտի ես նրան կներեի, նույնիսկ առանց տուրքի:

ԴՐԱՄԱՏԵՐ.— Էլ ինչո՞ւմն է բանը:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.— Այդ ես չեմ, որ պաշարել եմ քաղաքը:

ԴՐԱՄԱՏԵՐ.— Դուք չե՞ք, հապա ո՞վ է...

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.— Գեցր:

ԴՐԱՄԱՏԵՐ.— Ով է այդ Գեցր, Կոնրադի Լոբա՞նը:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.— Այո՛ և Գերմանիայի լավագույն զորավարը:

ԴՐԱՄԱՏԵՐ.— Ի՞նչ գործ ունի նա ձեր քաղաքի պարիսպների տակ: Չէ՞ որ նա ձեր թշնամին է:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.— Ծիշոն ասած, բոլորովին չեմ հասկանում, թե ով է նա: Սկզբում Կոնրադի դաշնակիցն էր և իմ թշնամին, հետո՛ իմ դաշնակիցը և Կոնրադի թշնամին: Իսկ հիմա... մեղմ ասած, նա փոփոխամիտ մարդ է:

ԴՐԱՄԱՏԵՐ.— Ձեր ինչի՞ն Լր պետք այդքան կասկածելի դաշնակիցը:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.— Ուրիշ ելք չունեի: Կոնրադն ու նա միասին նվաճել էին իմ հողերը: Բարեբախտաբար իմացա, որ անհավերաշխություն է ընկել նրանց միջև: Եվ ես Գեցին խոստացա նրա եղբոր հողերը այն պայմանով, որ ինքն անցներ ձեր կողմը: Պատերազմը վաղուց տանուլ տված կլինեի, եթե ես նրան Կոնրադից չբաժանեի:

ԴՐԱՄԱՏԵՐ.— Ուրեմն, նա իր զինվորներով ձեր կողմն անգամ, հետո՞...

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.— Ես նրան հանձնարարել էի թիկունքի պաշտպանությունը: Հավանաբար ձանձրացել է. կայազորի կենցաղը, երևի, նրան այնքան էլ դուր չի գալիս: Եվ մի գեղեցիկ օր նա իր բանակը քշեց Ռոբմսի պարիսպների տակ և սկսեց պաշարումը, թեև ես այդ չէի խնդրել նրանից:

ԴՐԱՄԱՏԵՐ.— Հրամայեցեք նրան...

Արքեպիսկոպոսը տխուր ժպտում է և սեղմում է ուները:

Նա ձեզ չի՞ ենթարկվում:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.— Որտե՞ղ եք տեսել, որ ռազմադաշտում գործող զորավարը ենթարկվի պետության ղեկավարին:

ԴՐԱՄԱՏԵՐ.— Մի խոսքով, դուք նրա ձեռքում եք:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.— Այո՞:

Պարիսպները լուսավորվում են:

ԳԵՌԼԱԽ (ներս մտնելով).— Խորհուրդը որոշեց պատգամավորներ ուղարկել Գեջի մոտ:

ՀԱՅՆՑ.— Ահա՛ թե ինչ: (**Դադար**): Ստո՛ր վախկոտներ:

ԳԵՌԼԱԽ.— Մեր միակ հույսն այն է, որ Գեջը նրանց առաջարկի անընդունելի պայմաններ: Եթե նրա մասին իմ լսածը ճշմարտություն է, ապա նույնիսկ չի ուզենա, որ մենք անձնատուր լինենք իր ողորմածությանը:

ԴՐԱՄԱՏԵՐ.— Գուցե գույքը խնայի:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.— Վախենամ՝ մարդկանց էլ շխնայի:

ՇՄԻԴՏ (Գեղախից).— Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.— Նա բիճ է, վատթարագույն տեսակից. լըքված է եղել Ըույնիսկ մոր կողմից: Նա հաճույք է զգում միայն չարիք գործելուց:

ԳԵՌԼԱԽ.— Խոզի գլուխ է, բիճ. սիրում է չարիք գործել: Եթե նա մտադիր լինի Ռոբմսը թալանել, ապա քաղաքաբնակներին մնում է միայն պայքարել մինչև արյան վերջին կաթիլը:

ՇՄԻԴՏ.— Եթե մտադիր լինի քաղաքը սրբել երկրի երեսից, ապա ինքն այն միամիտը չէ, որ բացեիքաց հայտնի այդ մասին: Ընդհակառակը, կառաջարկի, որ իրեն ներս թողնեն՝ խոստանալով ոչնչի չդիպչել:

ԴՐԱՄԱՏԵՐ (վրդովված).— Ռոբմսը ինձ պարտք է երեսուն հա-

գար դուկատ³: Պետք է իսկույն վերջ տալ այս ամենին: Ձեր գորքերն ուղարկեցէք Գեցի դէմ:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ (ընկճված).— Վախենամ՝ ջարդի:

Արքեպիսկոպոսի սրահն անհետանում է խավարի մեջ:

ՀԱՅՆՑ (Նաստիին).— Հետո՞... Մենք, ուրեմն, իսկապէ՛ս կորած ենք:

ՆԱՍՏԻ.— Աստված մեզ հետ է, եղբայրներ՛ր, մենք դատապարտված չենք կորստյան: Այս գիշեր ես դուրս կգամ քաղաքից և կփորձեմ անցնել թշնամական ճամբարի միջով՝ Ռուդոլֆ հասնելու համար: Ութ օրը քավական կլինի, որ հավաքեմ տաս հազար գինված գյուղացիներ:

ԸՄԻԴՏ.— Ութ օր ինչպէ՛ս դիմանանք: Հենց այս երեկո հարուստ քաղքենիներն ընդունակ են նրա սոչև բացելու քաղաքի դարպասները:

ՆԱՍՏԻ.— Պետք է, որ նրանք չկարողանան բացել դարպասները:

ՀԱՅՆՑ.— Դու ուզում ես գրավե՛լ իշխանությունը:

ՆԱՍՏԻ.— Ո՛չ, դրությունը շատ է անորոշ:

ՀԱՅՆՑ.— Հապա ի՞նչ:

ՆԱՍՏԻ — Հարուստներին պետք է դնել այնպիսի վիճակի մեջ, որ նրանք վախենան իրենց գյուղացիների համար:

ԸՄԻԴԸ — Ինչպե՛ս:

ՆԱՍՏԻ. — Կոտորելով:

Լուսավորվում է պարիսպների ստորոտը պատկերող բեմա-նարթակը: Դեպի դիտակալ տանող աստիճանների մոտ նստած է Կինը՝ աչքերը հառած մի կետի: Երեսունհինգ տարեկան է, ցնցոտիապատ: Աղոթագիրքը կարդալով՝ անցնում է մի քահանա:

ՆԱՍՏԻ.— Ո՛վ է այս քահանան: Ինչո՞ւ նա կալանավորված չէ, ինչպե՛ս մյուսները:

ՀԱՅՆՑ.— Դու նրան չճանաչեցի՞ր:

ՆԱՍՏԻ.— Ա՛հ, Հայկրիխն է: Ինչքա՛ն փոխվել է: Մինևույն է, նրան ևս պարտավոր էին կալանավորել:

ՀԱՅՆՑ.— Չքավորները սիրում են նրան, որովհետև իրենց նր-ման է ապրում: Մենք վախեցանք գրգռել նրանց դժգոհու-թյունը:

ՆԱՍՏԻ.— Եկեղեցականներից նա է ամենավտանգավորը:

ԿԻՆ (քահանային նկատելով).— Քահանա՛, քահանա՛:

Քահանան փախչում է, Կինը ճչում է:

ԿԻՆ.— Ո՞ր ես վագում այդպես արագ:

ՀԱՅՆՐԻԽ (կանգ առնելով).— Ոչինչ չունեմ, բացարձակապես ոչինչ, ոչինչ: Ամեն ինչ տվել եմ:

ԿԻՆ.— Բա դա փախչելու պատճառն է, երբ քեզ կանչում են:

ՀԱՅՆՐԻԽ (հոգնած վերադառնում է դեպի Կինը).— Քաղցած ես:

ԿԻՆ.— Ո՛չ:

ՀԱՅՆՐԻԽ.— Էլ ի՞նչ ես ուզում:

ԿԻՆ.— Ուզում եմ, որ դու ինձ բացատրես:

ՀԱՅՆՐԻԽ (պոռթկալով).— Ոչինչ չեմ կարող բացատրել:

ԿԻՆ.— Դու նույնիսկ չգիտես՝ ես ինչի մասին եմ խոսելու:

ՀԱՅՆՐԻԽ.— Դե լա՛վ, արագ, միայն արագ: Ի՞նչ պետք է բացատրեմ:

ԿԻՆ.— Երեխան ինչո՞ւ մեռավ:

ՀԱՅՆՐԻԽ.— Ի՞նչ երեխա:

ԿԻՆ (քմծիծաղով).— Իմը, պարզ չէ՞, ա՛յ քահանա: Դու ինքը ես նրան երեկ թաղել: Երեք տարեկան էր, սովից մեռավ:

ՀԱՅՆՐԻԽ.— Ես հոգնած եմ, քո՛ւյր իմ, և ձեզ չճանաչեցի: Բոլորը նույն դեմքն ունեն, նույն աչքերը:

ԿԻՆ.— Ինչո՞ւ մեռավ:

ՀԱՅՆՐԻԽ.— Չգիտեմ:

ԿԻՆ.— Բայց չէ՞ որ դու քահանա ես...

ՀԱՅՆՐԻԽ.— Այո՛, ես քահանա եմ:

ԿԻՆ.— Էլ ո՞վ ինձ բացատրի, եթե դու չես կարողանում: (**Դադար**): Եթե ես հիմա անձնատուր լինեմ մահին, դու կհամարե՞ս, որ դա վատ է:

ՀԱՅՆՐԻԽ (պոռթկալով).— Այո՛, շատ վատ է:

ԿԻՆ.— Ես էլ այդ կարծիքին եմ, ու չնայած դրան՝ ահավոր մեծ ցանկություն ունեմ մեռնելու: Տեսնո՞ւմ ես, անհրաժեշտություն կա, որ դու ինձ բացատրես: (**Դադար**):

ՀԱՅՆՐԻԽ (ձեռքն անցկացնում է ճակատի վրայով ու մեծ ճիգ է գործադրում).— Ոչինչ տեղի չի ունենում առանց Աստծո թույլտվության, և Աստված ինքը բարություն է, ուրեմն, ինչ էլ պատահում է՝ այդ է լավագույնը:

ԿԻՆ. — Ես չեմ հասկանում:

ՀԱՅՆՐԻԽ.— Աստված իմանում է շատ ավելին, քան ես ու դու: Այն, ինչ քեզ չարիք է թվում, նա համարում է բարություն,

որովհետև ի նկատի ունի բոլոր հետևանքների հաշվեկշիռը: ԿԻՆ.— Դու այդ քո ասածը կարողանո՞ւմ ես հասկանալ:

ՀԱՅՆՐԻԽ.— Ո՛չ, ո՛չ, ես էլ չեմ հասկանում: Ես ոչինչ չեմ հասկանում: Չեմ կարող, չեմ ուզում հասկանալ: Պետք է հավատալ, հավատալ, հավատալ:

ԿԻՆ (քմծիծաղով).— Ասում ես, որ պետք է հավատալ, բայց ամենևին չի երևում, թե դու հավատում ես քո ասածին:

ՀԱՅՆՐԻԽ.— Ինչ որ ասում եմ, քո՛ւր իմ, այնքան եմ կրկնել այս երեք ամսվա ընթացքում, որ չգիտեմ արդեն՝ ես ասում եմ ըստ համոզմունքի՞, թե՞ ըստ սովորության: Բայց դու թյուրիմացության մեջ ես: Ես իրոք հավատում եմ: Հավատում եմ ի խորոց սրտի: Աստվա՛ծ իմ, դու վկա ես, որ կասկածը մի վայրկյան իսկ չի դիպել իմ սրտին: (Դադար): Կի՛ն, քո երեխան Երկնքում է, և դու այնտեղ կգտնես նրան: (Հայնրիխը ծնրադրում է):

ԿԻՆ.— Այո՛, քահանա՛, իհարկե: Բայց Երկինքը ուրիշ խնդիր է: Եվ հետո ես այնքան եմ հոգնել, որ մեջս ուժ չեմ գտնի նորից որախանալու: Նույնիսկ այնտեղ՝ վերևում:

ՀԱՅՆՐԻԽ.— Ներիր ինձ, քո՛ւր իմ:

ԿԻՆ.— Փո ի՞նչը ներեմ, բարի՛ քահանա, դու ինձ չարիք չես պատճառել:

ՀԱՅՆՐԻԽ.— Ինձ ներիր, ի դեմս ինձ ներիր բոլոր քահանաներին, և՛ նրանց, ովքեր հարուստ են, և՛ նրանց, ովքեր չքավոր են:

ԿԻՆ (զարմուհած).— Ես քեզ ի սրտե ներում եմ: Դա քեզ հանույք պատճառե՞ց:

ՀԱՅՆՐԻԽ.— Այո՛: Իսկ հիմա, քո՛ւր իմ, մենք միասին կաղոթենք: Աղոթենք Աստծուն, որ նոր հույսով լցնի մեր խեղճ սրտերո:

Վերջին ռեպլիկների ընթացքում Նաստին դանդաղ իջնում է պարիսպների սանդուղքի աստիճաններով:

ԿԻՆ (տեսնում է Նաստին ու զվարթացած ընդհատում է աղոթքը).— Նաստի՛, Նաստի՛:

ՆԱՍՏԻ.— Ի՞նչ ես ուզում ինձանից:

ԿԻՆ.— Հացթո՛ւխ, իմ երեխան մահացավ: Դու պետք է գիտեցնաս, թե ինչո՞ւ, ինչի՞ համար, դու, որ ամեն ինչ գիտես:

ՆԱՍՏԻ.— Այո՛, ես այդ գիտեմ:

- ՀԱՅՆՐԻՒՆ.**— Նաստի՛, աղաչում եմ քեզ, լռի՛ր: Վա՛յ Գրանց, ու-
քեր խոսվությունն են սերմանում հավատացյալների սրտերում:
- ՆԱՍՏԻ.**— Նա մահացավ, որովհետև մեր քաղաքի հարուստ քաղ-
քենիները ապստամբեցին Արքեպիսկոպոսի դեմ՝ իրենց բազ-
մահարուստ տիրակալի դեմ: Երբ հարուստները պատերազ-
մում են իրար դեմ, չքավորներն են մահանում:
- ԿԻՆ.**— Արդյոք Աստված թույլատրե՞լ է, որ Գրանք սխեմն այս
պատերազմը:
- ՆԱՍՏԻ.**— Աստված Գրանց խստիվ արգելել էր:
- ԿԻՆ.**— Իսկ սա ստում է, որ ոչինչ տեղի չի ունենում առանց Գրա
թույլտվության:
- ՆԱՍՏԻ.**— Ոչինչ, բացի չարիքից, որ ծնվում է մարդկանց չարու-
թյունից:
- ՀԱՅՆՐԻՒՆ.**— Հագթո՛ւիս, դու ստում ես: Ժշմարտությունն ու կեղ-
ծիքը այն ձևով ես խառնում, որ հոգիներն ընկնեն մոլորու-
թյան մեջ:
- ՆԱՍՏԻ.**— Դու դեռ պիտի պնդես, որ Աստված հանդուրժո՞ւմ է
այս անօգուտ զոհերն ու տառապանքները. Ես ստում եմ, որ
նա մեղսակից չէ այս ամենին:
- Հայերի՛քը լռում է:**
- ԿԻՆ.**— Ուրեմն Աստված չէր ցանկանում, որ երեխաս մահանա:
- ՆԱՍՏԻ.**— Ինչո՞ւ պիտի ցանկանար Գրա մահը, երբ կամեցավ,
որ նա ծնվի:
- ԿԻՆ (թեթևացած).**— Այսպես նախընտրելի է: **(Քահանային):**
Տեսնո՞ւմ եմ՝ ես այսպես հասկանում եմ: Ուրեմն, Տեր Աստ-
վածը տխրում է, երբ տեսնում է, որ ես տառապում եմ:
- ՆԱՍՏԻ.**— Անսահման է Գրա տխրությունը:
- ԿԻՆ.**— Եվ նա ինձ ոչնչով չի՞ կարող օգնել:
- ՆԱՍՏԻ.**— Իհարկե, կարող է. նա կվերադարձնի քո երեխային:
- ԿԻՆ (հիասթափված).**— Այո՛, գիտեմ, Երկնքում:
- ՆԱՍՏԻ.**— Երկնքում՝ ոչ: Երկրի վրա:
- ԿԻՆ (զարմացած).**— Երկրի վրա՞:
- ՆԱՍՏԻ.**— Միան թե՛ նախ և առաջ պետք է անցնել ասեղի ծա-
կից և յոթ տարի դիմանալ ցավ ու վշտերին: Եվ հետո՛՛ նոր
կսկավի Աստծո թագավորությունը երկրի վրա. կվերադարձ-
վեն մեր հանգուցյալները, բոլորը կսիրեն բոլորին ու ոչ ոք
քաղցած չի լինի:

ԿԻՆ.— Ինչո՞ւ սպասել յոթ տարի:

ՆԱՍՏԻ.— Որովհետև պետք՝ է յոթ տարի պայքարել չար մարդկանցից ազատվելու համար:

ԿԻՆ.— Դե՞ռ ինչե՞ր պիտի հաղթահարենք:

ՆԱՍՏԻ.— Հենց այդ պատճառով էլ Աստված քո օգնության կարիքն է զգում:

ԿԻՆ.— Ամենագոր Աստվածը, ի՞նչ, իմ օգնության կարի՞քն է զգում:

ՆԱՍՏԻ — Այո՛, քո՛ւյր իմ: Դե՞ռ յոթը տարի պիտի տևի չարանե՛զ Աստուհայի թագավորությունը երկրի վրա: Բայց եթե մեռանից տարաքանչյուրը կովի արհաբար, ապա մենք բոլոր էկրկրվենք, և Աստված մեզ հետ է: Դու հավատո՞ւմ ես ինձ

ԿԻՆ (վեր կենալով).— Այո՛, Նաստի՛, ես քեզ հավատում եմ:

ՆԱՍՏԻ. - Կի՛ն, քո որդին Երկնքում չէ. նա քո արգանդի մեջ է: Եվ դու նրան կրելու ես յոթը տարի: Այդ ժամկետի վերջում ես կբալի քո կողքին, ձեռքը կդնի քո ձեռքի մեջ, և դու նրան ծնած կլինես երկրորդ անգամ:

ԿԻՆ — Ես քեզ հավատում եմ, Նաստի՛, ես քեզ հավատում եմ: (Դուրս է գալիս):

ՄԱՆՔԻԺ — Դու սրան կորսողան ես մատնամ:

ՆԱՍՏԻ — Աթե վառան ես, որ իրավացին դու ես, ապա ինչո՞ւ ինձ չընդհատե լիր

Մ ԱՆՔԻԺ — Ո՛ր, երբ վիշտն անկնապտորեն թեթևացել էր:

Նաստին ուսերն է թորվում և դուրս է գալիս:

Տ Ե Ր Ի մ, ես նրան լուեցնելու քաջություն չունեցա. մեղանչեցի: Բայց ես հավատում եմ, Աստվա՛ծ իմ, հավատում եմ քո անկույն գործությանը: Հավատում եմ քո ամենամայր Սուրբ Եկեղեցուն, Հիստի սրբազան մարմնին, որի մի մասնիկն ես ես: Հավատում եմ, որ ամեն ինչ կատարվում է ըստ քո պատգամների, նույնիսկ երեխայի մահը, և որ ամենայն ինչ բարի է: Ես դրան հավատում եմ, որովհետև անհեթեթ է, անկեթեթ, անհեթեթ:

Ամբողջ բեմը լուսավորվում է: Հարուստ քաղթենիներն իրենց կանանց հետ հավաքված են Եպիսկոպոսի պալատի շուրջը և սպասում են:

ՄԱՐԿՈՍ — Նորություններ կա՞ն:

- Ոչ մի նորություն:
- Այստեղ ի՞նչ են անում:
- Սպասում են:
- Ինչի՞ են սպասում:
- Ոչնչի...
- Դուք տեսա՞ք...
- Աջ կողմը:
- Ատ՛:
- Կեղտոտ մոտոթները:
- Երբ ջուրն ավելոծվում է, տիղմի վերև է բարձրանում:
- Փողոց դուրս գալը վտանգավոր է դարձել:
- Պետք է վերջացնել այս պատերազմը, պետք է շուտ վերջացնել, ապա թե ոչ՝ վայ մեր գլխին:
- Ոգում եմ տեսնել Եպիսկոպոսին: Ես ուզում եմ տեսնել Եպիսկոպոսին:
- Նա դուր է չի գա: Ախր շատ է զայրացած...
- Ո՞վ... ո՞վ...
- Եպիսկոպոսը...
- Այն օրվանից, ինչ նրան այդտեղ փակել են, երբեմն երեկվում է լուսամուտին. վարագույրը բարձրացնում ու նայում է:
- Կարծում եմ, որ նա այնքան էլ բարի չէ:
- Ի՞նչ եք ուզում որ ձեզ ասի Եպիսկոպոսը:
- Գուցե նորություններ ունի:

ՉԱՅՆԵՐ ԱՄԲՈՒԻՑ.— Եպիսկոպո՛ս, Եպիսկոպո՛ս, հայտնվի՛ր:

- Մեզ խորհուրդներ տուր:
- Ի՞նչ է լինելու:

ՄԱՐԳԱՐԵԻ ՉԱՅՆԸ.— Աշխարհի վերջն է:

Մի մարդ է դուրս գալիս ամբոխի միջից, նետվում է դեպի եպիսկոպոսարանի ճակատամասը, որին և հենվում է: Հայերի խընքա կողքից հեռանում է, խառնվում է ամբոխին:

ՄԱՐԳԱՐԵ.— Աշխարհը կորած է, կորած է:

- Դիակ, լեշահոտ, ամենուրեք:
- Լե՛շ, լե՛շ, լե՛շ,
- Լսո՛ւմ եք դուք ձայնն Աստծո:
- Ճիշեր: Սկսվում է խուճապը:**

ՀԱՐՈՒՍՏ ՔԱՂՔԵՆԻ.— Հե՛յ, հե՛ւ, հանգստացե՛ք: Եղած-չեղածը մարգարեի մեկն է:

ԱՄԲՈՒՍ.— Եվս մի մարգարե՞: Հերիք եղավ, էլի:

— Չեմք կտրիր:

— Ամեն ծակուծուկից մարգարե է բուսնում: Էլ ինչո՞ւ փակի տակ դրինք մեր քահանաներին:

ՄԱՐԳԱՐԵ.— Երկիրը գարշահոտություն է արձակում:

Արեգակը գանգատվեց Տեր Աստծուն.

«Տե՛ր իմ, ուզում եմ հանգչել:

Բլիս է չոքել այս փտածությունը:

Ինչքան տաքացնում ես երկիրը, այնքան նա փտում է:

Կեղտոտվում են իմ ճառագայթների վերջույթները:

Վաս ի՞նձ,— ասում է Արեգակը,— իմ ոսկի վարսերը

թափախվել են կղկղանքի մեջ»:

ՔՄԷՔԵՆԻ (նրան հարվածելով).— Ռեխդ փակի՛ր:

Մարգարեն, ընկնելով, նստում է գետնին: Աղմուկով բացվում է Եպիսկոպոսարանի լուսամուտը: Պատշգամբում հայտնվում է Եպիսկոպոսն իր շքերթային տարազով:

ԱՄԲՈՒՍ. — Եպիսկոպո՞ս:

ԵՊԻՍԿՈՊՈՍ. — Ոչտե՛ղ եմ Կոնրադի զորքերը: Որտե՞ղ եմ ասպետները: Ոչտե՛ղ եմ նրեշտուկների սրշալախամբերը, որոնք թշնամուտե վախճառի պիտի մտանկին: Մնացել էք միայնակ, ստանց բարեկասի, տանեց հուպի և լնդմիշտ նզովյալ: Դե՛, շրտառվ անկեւեր, մարմնի բազրենիներ: Եթե հաճո է Տիրոջը, որ դուք բանտարկվիք նրա նախարարներին, այնժամ ձեզու ինչո՞ւ ձեզ լքեց:

Մղկացներ ամբոխի միջից:

Դե՛, պատասխանեցն՛ք, տեսնեմ:

ՀԱՅՆՐԻԽ.— Մի՛ ջլատեք նրանց արիությունը:

ԵՊԻՍԿՈՊՈՍ.— Այդ ո՞վ է խոսում:

ՀԱՅՆՐԻԽ.— Ես եմ՝ Հայնրիխը, սուրբ Գիլհաու եկեղեցու քահանան:

ԵՊԻՍԿՈՊՈՍ.— Կույ տուր լեզուդ, ոխտադրուժ քահանա՛: Դեռ համարձակվում ես նայե՛լ քո Եպիսկոպոսի աչքերին:

ՀԱՅՆՐԻԽ.— Եթե նրանք ձեզ անարգել են, սրբազա՛ն, ապա ներեցեք նրանց անարգանքը, ինչպես որ ես ներում եմ ձեր լուտանքները:

ԵՊԻՍԿՈՊՈՍ.— Հո՛ւդա, Հո՛ւդա Իսկարիովտացի⁴, գնա՛ քեզ կախիր:

ՀԱՅՆՐԻՒՍ.— Ես Հուդա չեմ:

ԵՊԻՍԿՈՊՈՍ.— Ուրեմն ինչո՞ւ ես նրանց հետ: Ինչո՞ւ ես նրանց համար դարձել ապավեն: Ինչո՞ւ մեզ նման քեզ էլ չբանտարկեցին:

ՀԱՅՆՐԻՒՍ.— Ինձ ազատ են թողել, որովհետև գիտեմ, որ ես նրանց սիրում եմ: Ինքս կամովին չմիացա բանտարկյալ քահանաներին: Դա կլինի ձեր առարկությունը, ճիշտ է: Բայց այս կորուսյալ քաղաքում չգտնվի՞ գոնե մեկը, որ պատարագ մատուցի և հուղարկավորի ննջեցյալներին: Առանց ինձ՝ Եկեղեցին պիտի լիներ բացակա, Ուրմսը անպաշտպան պիտի ընկներ աղանդավորության մեջ, և սարդիկ պիտի մեռնեին, ինչպես շները... Ո՛վ սրբազան, մի՛ ջլատե՛ք նրանց արիությունը:

ԵՊԻՍԿՈՊՈՍ.— Ո՛վ քեզ սնուցեց, ո՛վ քեզ դաստիարակեց, ո՛վ քեզ սովորեցրեց կարդալ, ո՛վ քեզ գիտելիքներ տվեց, ո՛վ քեզ քահանա կարգեց:

ՀԱՅՆՐԻՒՍ.— Ամենամայր Սրբազնագույն Եկեղեցին:

ԵՊԻՍԿՈՊՈՍ.— Դու ամեն ինչով նրան ես պարտական: Դու նախ և առաջ եկեղեցական ես:

ՀԱՅՆՐԻՒՍ.— Նախ և առաջ եկեղեցական եմ, բայց ես նրանց եղբայրն եմ:

ԵՊԻՍԿՈՊՈՍ.— Նախ՝ եկեղեցական:

ՀԱՅՆՐԻՒՍ.— Այո՛, նախ՝ եկեղեցական, բայց...

ԵՊԻՍԿՈՊՈՍ.— Այս մարդկանց ես պիտի ուղղեմ իմ խոսքը: Եթե նրանք համատեն իրենց մուրրությանց մեջ և շուգեման հրաժարվել ըմբոստությունից, ապա ես քեզ կհրամայեմ միանալ եկեղեցականներին՝ քո իսկական եղբայրներին, և նրանց հետ արգելափակվել մեռնիտների⁵ վանքում կամ սեսինարիայում: Դու հնազանդվելո՞ւ ես քո Եպիսկոպոսին:

ՀԱՍԱՐԱԿ ՄԱՐԴ.— Մեզ մի՛ լքիր, Հայնրի՛խ, դու չբավորների քահանան ես, դու մեզ ես պատկանում:

ՀԱՅՆՐԻՒՍ (ընկճված, բայց հաստատ ձայնով).— Նախ և առաջ՝ ես եկեղեցական եմ, սրբազա՛ն, ես քեզ կհնազանդվեմ:

ԵՊԻՍԿՈՊՈՍ.— Ուրմսի բնակիչներ՛ր, նայեցե՛ք ձեր ճերմակ ու մարդաշատ քաղաքին, նայեցե՛ք մի վերջին անգամ: Սովի, ժանտախտի ախտավարակ բույն է դառնալու ձեր քաղաքը: Ու վերջում՝ հարուստ ու աղքատ միմյանց կոտորելու են: Եվ

երբ ներխուժեն Գեցի զինվորները, իրենց շուրջը տեսնելու են լոկ դիակներ ու ավերակներ: **(Դադար):** Ես ձեզ կարող եմ փրկել, բայց մինչ այդ դուք իմ սիրտը պետք է փափկացնեք:

ԶԱՅՆԵՐ ԱՄԲՈՒՄԻ ՄԻՋԻՑ.— Մեզ փրկիր, սրբազա՛ն:

— Մեզ փրկիր:

Լ. ԳԻՍԱՆՊՈՍ.— Ծնրադրեցե՛ք, գոռո՛գ քաղքենիներ և Աստուծոց խնդրեցեք մեղքերի թողութիւն:

Հարուստ քաղքենիները մեկը էլ չուսի ետևից ծնրադրում են:

Հասարակ մարդիկ մնում են հոռոնկայս:

Հայերի խ, ծնրադրելո՞ւ ես:

Հայերի խը ծնրադրում է:

Տե՛ր Աստված, ներիր մեր անարգանքները և մեղմիր Արքեպիսկոպոսի զայրույթը: **Կրկնեցեք:**

ԵՄՐՈՍ.— Տե՛ր Աստված, ներիր մեր անարգանքները և մեղմիր Արքեպիսկոպոսի զայրույթը:

Ի. ԳԻՍԱՆՊՈՍ. - Անե՛ն: Ուրի կանգնեք: **(Դադար):** Նախ՛ պիտի ազատեք բանտնակներիև ու վանականներիև, հետո պիտի լսեք քաղաքի գաղաթանկները: Պիտի ծնրադրեք տաճարի ապարարներիև և պիտի ազատեք՝ զոչման զգացումով պարտաժամ միև ուր մեզ հանդիսաւորութեամբ կգնանք Գեցի մտա՛ ապաշերտ նրա սպարմածութունը ձեր նկատմամբ:

ԵՄՐՈՍ, ԲՈՒՆԵՆԻ. — Եսկ կռե նա ձեզ լսել էլ չուզենա:

Ի. ԳԻՍԱՆՊՈՍ. — Վեպից վեր կա Արքեպիսկոպոսը: Նա մեր բոլորի հապե է, երա արդարութունը հայրական կլինի:

Մինչ այդ՝ Նաստին հայտնվում է դիտակալ պահականոցի մտա: Նա լուռ ունկնդրում է, հետո պարիսպների սանդուղքով իջնում է. երկու աստիճան:

Ն.ՈՍԻ. — Գեցր չի ծառայում Արքեպիսկոպոսին: Գեցը ծառայում է Աստուծալին: Գաշնոթյան երդում էր տվել Կոնրադին՝ սինեյի եղբայր, բայց դավաճանեց նրան: Եթե այսօր նա խոստանա՛ս ձեր կյանքը խնայել, մի՞թե դուք սցնքան հիմար կլինեք, որ հավատար նրա իտսքին:

Ի. ԳԻՍԱՆՊՈՍ.— Հե՛լ դո՛ւ՛ վերևում: Ով էլ լինես, ես քեզ հրամայում եմ...

Ն.ՈՍԻ. — Ո՛վ ես դու, որ ինձ հրամայես: Եվ դուք ինչի՞ համար եք ունկնդրում նրան: Ոչ ոք իրավունք չունի ձեզ հրամայե-

լու, բացի այն պետերից, որոնց ինքներդ եք ընտրել:

ԵՊԻՍԿՈՊՈՍ.— Եվ այդ ովքե՞ր են քեզ ընտրել, խրտվիլա՛կ:

ՆԱՍՏԻ.— Չքավորները: (**Մյուսներին**): Չի նվորները մեզ հետ են: Ես պահակներ եմ կարգել քաղաքի դարպասների մոտ: Մահապատիժ նրան, ով ծպտուն կհանի դարպասները բացելու մասին:

ԵՊԻՍԿՈՊՈՍ.— Քե՛զ տեսնենք, անօրե՛ն: Առաջնորդի՛ր նրանց դեպի կործանումը: Մեն-միակ մի հույս ունեին փրկվելու, և դու այն խլեցիր նրանցից:

ՆԱՍՏԻ.— Եթե մեր հույսն իսպառ չքացած լիներ, ինքս առաջինը խորհուրդ կտայի հանձնվել: Բայց այդ ո՛վ է պնդում, որ Աստված մեզ լքել է: Ինչ-որ մեկը կամեցավ խախտել ձեր հավատը հրեշտակների նկատմամբ: Հրեշտակներն այստեղ են, եղբայրներ՛: Ո՛չ, մի՛ բարձրացրեք ձեր աչքերը. երկինքը դատարկ է: Հրեշտակները գործում են երկրի երեսին: Նրանք գրոհել են թշնամու ճամբարի վրա:

ՀԱՐՈՒՍՏ ՔԱՂՔԵՆԻ.— Ի՞նչ հրեշտակներ:

ՆԱՍՏԻ.— Խոլերայի հրեշտակը և ժանտախտի հրեշտակը, սովի հրեշտակը և անհամերաշխության հրեշտակը: Ամուր կացե՛ք. քաղաքն անստիկ է, և Աստված՝ մեզ օգնական: Գեցի զինվորները վերացնելու են պաշարումը:

ԵՊԻՍԿՈՊՈՍ.— Ուորմսի բնակիչներ՛, դժոխք նրանց, ովքեր կունկընդրեն այս աղանդավորին: Վկա է Աստված, որն իմ տեղը ապահովվել է Դրախտում:

ՆԱՍՏԻ.— Դրախտում քո տե՛ղը... Վաղուց է, ինչ Աստված այն տվել է շներին:

ԵՊԻՍԿՈՊՈՍ.— Քոնը նա, իհարկե, տաքուկ է պահում՝ սպասելով, որ գնաս զբաղեցնես: Եվ այս պահին նա ուրախանում է՝ լսելով, թե ինչպես ես անարգում նրա քահանային:

ՆԱՍՏԻ.— Քեզ ո՛վ քահանա կարգեց:

ԵՊԻՍԿՈՊՈՍ.— Սուրբ Եկեղեցին:

ՆԱՍՏԻ.— Քո Եկեղեցին պոռնիկ է. նա իր շնորհները ծախում է հարուստներին: Դո՛ւ ինձ պիտի դառնաս խոստովանահայր, դո՛ւ թողություն պիտի տաս իմ մեղքերին: Քո հոգին բորբոսնել է: Այն տեսնելիս՝ Աստված ատամներն է կրճտացնում: Եղբայրներ՛, մենք կարիք չունենք ոչ մի քահանայի. բոլոր մարդիկ կարող են մկրտել, բոլոր մարդիկ կարող են թողու-

թյուն տալ մեղքերին. բոլոր մարդիկ կարող են քարոզել: Ես ձեզ ճշմարիտն եմ ասում. բոլոր մարդիկ մարգարեներ են: Հակասակ դեպքում՝ Աստված գոյություն չունի:

ԵՊԻՍԿՈՊՈՍ.— Թո՛ւ, թո՛ւ, թո՛ւ, ես քեզ բանադրում եմ⁶: (Ողորմություն բաժանելու համար նախատեսված իր քսակը շաղթտում է երեսին):

ՆԱՍՏԻ (մատնացույց անելով ամբողջ դուռը).— Այս դուռը փրտած է. ուսի մի հարվածով տեղից կպոկվի: (Լռություն): Ինչքա՛ն համբերատար եք, եղբայրներ՛ր: (Դադար: Հասարակ մարդկանց): Բոլորը մի սանրի կտալ են՝ Եպիսկոպոսը, Քաղաքային խորհուրդը, հարուստները: Նրանք ուզում են քաղաքը հանձնել, որովհետև ձեզանից վախենում են: Եվ եթե քաղաքը հանձնեն, գիտե՛ք ովքեր են տուրքը վճարելու բռլորի փոխարեն. դո՛ւք: Դարձյալ և միշտ՝ միայն դո՛ւք: Դե՛, ելե՛ք, եղբայրներ՛ր, սպանել է պետք, եթե ուզում եք արժանանալ երկնային թագավորությանը:

Հասարակ մարդիկ աղմկում են:

ՀԱՐՈՒՍ ՔԱՂՔԵՆԻ (կնոջը).— Եկ այստեղից հեռանանք:

ՈՒՐԻՇ ՀԱՐՈՒՍ ՔԱՂՔԵՆԻ (իր որդուն).— Շուտ գնանք, փակենք խուսոսքի վեղկերը և թաքնվենք մեր տանը, պատնեշներ դաս ու պատուման:

ԵՊԻՍԿՈՊՈՍ Աստված իմ, դու վկա ես, որ ես արեցի այն ամենը, ինչ կարող էի անել այս ժողովրդին փրկելու համար: Ի փսոս քեզ՝ ես կսեռնեմ առանց ասիսուսանքի, քանզի այժմ գիտեմ, որ քո զայրույթը թափվելու է Ուորմսի վրա և կործանելու է հիմնահատակ:

ՆԱՍՏԻ.— Այս ծերուկը ձեզ ողջ-ողջ լափում է: Այդ ինչի՞ց է, որ նրա ձայնը հզոր է: Ախր նա խժռում է: Գնացե՛ք բացեք նրա մատանները. դուք այնտեղ սյնքան հաց կգտնեք, որ կճերիքի մի զինվորական գունդ վեց ամիս կուշտ ու կուռ կերակրելու համար:

ԵՊԻՍԿՈՊՈՍ (ձայնը բարձրացնելով).— Ստում ես: Իմ մատանները դատարկ են, և դու այդ գիտես:

ՆԱՍՏԻ.— Ինքների գնացեք տեսեք, եղբայրներ՛ր, ինքների գնացեք տեսեք: Նրա խոսքի՞ն պիտի հավատաք:

Հարուստ քաղթենիները շտապ հեռանում են: Միայն չքավորներն են մնում Նաստիի հետ:

ՀԱՅՆՐԻԽ (մոտենալով Նաստիին).— Նաստի՛:

ՆԱՍՏԻ.— Դո՛ւ ինչ ես ուզում:

ՀԱՅՆՐԻԽ.— Չէ՞ որ հաստատ գիտես, որ դատարկ եմ նրա մանակները: Գիտես, որ նա կիսաքաղց է մնում և իր բաժինը տալիս է չքավորներին:

ՆԱՍՏԻ.— Դու մեզ բարեկամ՝ ես, թե՞ թշնամի:

ՀԱՅՆՐԻԽ.— Ես ձեր բարեկամն եմ, երբ դուք տառապում եք. ձեր թշնամին՝ երբ ուզում եք թափել Եկեղեցու արյունը:

ՆԱՍՏԻ.— Դու մեր բարեկամն ես, երբ մեզ սպանում են, մեր թշնամին՝ երբ հանդգնում ենք պաշտպանվել:

ՀԱՅՆՐԻԽ.— Ես եկեղեցական եմ, Նաստի՛:

ՆԱՍՏԻ.— Դուրը ջարդեք:

Մարդիկ հարձակվում են դռան վրա: Եպիսկոպոսը հոտորնկայս անձայն աղոթում է:

ՀԱՅՆՐԻԽ (նետվում է դռան առջև).— Նախ ինձ կսպանեք...

ՀԱՍԱՐԱԿ ՄԱՐԴ.— Քեզ սպանե՛նք... որ ի՞նչ...

Հարվածում են Հայնրիխին, զցում գետին:

ՀԱՅՆՐԻԽ.— Դուք ինձ հարվածեցիք: Ես ձեզ սիրում էի իմ հոգուց ավելի, և դուք ինձ հարվածեցիք: (Վեր է կենում, շարժում է անում դեպի Նաստիին): Նաստի՛, մի՛ սպանիր Եպիսկոպոսին: Եպիսկոպոսին մի՛ սպանիր: Եթե ուզում ես՝ ինձ, բայց ոչ Եպիսկոպոսին:

ՆԱՍՏԻ.— Ինչո՞ւ ոչ նրան: Նա ժողովրդին սովամահ է անում:

ՀԱՅՆՐԻԽ.— Դու գիտես, որ այդպես չէ: Դու այդ գիտես: Եթե ուզում ես եղբայրներիդ ազատել ստից ու բռնությունից, ապա ինչո՞ւ ես ստելով սկսում քո առաքելությունը:

ՆԱՍՏԻ.— Ես երբեք չեմ ստում:

ՀԱՅՆՐԻԽ.— Դու ստում ես. ցորեն չկա նրա մտանկներում:

ՆԱՍՏԻ.— Դա ի՞նչ նշանակություն ունի: Ոսկի կա, գոհարներ կան նրա եկեղեցիներում: Բոլոր նրանց մասին, ովքեր քաղցից մահացել են նրա մարմարակերտ քրիստոսների և փղուկըրյա աստվածամայրերի ոտքերի առաջ, նրանց բոլորի մասին ես ստում եմ՝ այդ ինքն է նրանց սպանել:

ՀԱՅՆՐԻԽ.— Դա նույնը չէ: Թերևս, դու չես ստում, բայց և չես ստում ճշմարտությունը:

ՆԱՍՏԻ.— Ես քոնը չեմ ստում, մե՛րն եմ ստում: Եթե Աստված

չքաւորներին է սիրում, վերջին դատաստանի օրը նա կոր-
դեգրի մեր ճշմարտությունը որպէս չափանիշ:

ՀԱՅՆՐԻԽ.— Ծատ լավ, ուրեմն թող նա դատի Եպիսկոպոսին:
Բայց դու մի՛ թափիր Եկեղեցու արյունը:

ՆԱՍԻ.— Ես միայն մի եկեղեցի եմ ճանաչում. դա մարդկանց
հասարակությունն է:

ՀԱՅՆՐԻԽ.— Բոլոր մարդկանց, ուրեմն, և բոլոր քրիստոնյանե-
րի, որոնք միմյանց սիրում են: Մինչդէռ դու կոտորածով ես
սկզբնավորում քո հասարակությունը:

ՆԱՍԻ.— Դեռ շատ վաղ է սիրելու համար: Սիրելու իրավունքը
մենք ձեռք կրէրենք արյուն թափելով:

ՀԱՅՆՐԻԽ.— Աստված արգելել է բռնությունը. նա այն արգա-
հատում է:

ՆԱՍԻ.— Իսկ Դժո՞խքը: Կարծում ես բռնություն չե՞ն գործա-
դրում նզովյալների վրա:

ՀԱՅՆՐԻԽ.— Աստված ասել է՝ ով սուր բարձրացնի...

ՆԱՍԻ.— Սրից էլ կզոհվի... Թող այդպէս լինի՝ մենք կզոհվենք
սրից: Բոլորս: Բայց մեր որդիները կտեսնեն Աստծո թագա-
վորությունը երկրի վրա: Դե՛, գնա՛, դու մյուսներից լավը չես:

ՀԱՅՆՐԻԽ.— Նաստի՛, Նաստի՛, դու այդ ինչո՞ւ ինձ չես սիրում:
Ես ձեզ ի՞նչ եմ արել:

ՆԱՍԻ.— Դու դարձել ես քահանա, իսկ քահանան մնում է քա-
հանա, ինչ էլ որ անի:

ՀԱՅՆՐԻԽ.— Ես ձերն եմ: Չքաւոր, չքաւորի որդի:

ՆԱՍԻ.— Նշանակում է՝ դու դժվածան ես ու վերջ:

ՀԱՅՆՐԻԽ (գոռալով).— Նրանք դուռը ջարդեցին:

**Դուռն իրոք ջարդվել է, և մարդիկ ներխուժում են ամրոց:
Հայերի խը թափով ծնրադրում է:**

Աստվա՛ծ իմ, եթե դեռ սիրում ես մարդկանց, եթե գարշան-
քով երես չես թեքել բոլորից, խափանի՛ր այս մարդասպա-
նությունը:

ԵՊԻՍԿՈՊՈՍ.— Ես քո սղոթքների կարիքը չունեմ, Հայերի՛խ:
Չեզ՝ բոլորիդ, որ չգիտեք, թե ինչ եք անում, ձեզ ես ներում
եմ: Բայց քեզ, ովստադրո՛ւժ քահանա, քեզ ես անիծում եմ:

ՀԱՅՆՐԻԽ.— Ա՛հ... (Ընկնում է երեսնիվայր):

ԵՊԻՍԿՈՊՈՍ.— Ալելուիա՛, ալելուիա՛, ալելուիա՛:

Մարդիկ բռունցքներով խփում են նրան: Նա ընկնում է պատըշգամբին:

ՆԱՍՏԻ (Շմիդտին).— Դե', հիմա թող փորձեն քաղաքը հանձնել թշնամուն:

ՀԱՍԱՐԱԿ ՄԱՐԴ (դռան մոտ հայտնվելով).— Մտանում ցորեն չկա:

ՆԱՍՏԻ.— Ուրեմն թաքցրել են մենոնիտների վանքում:

ՀԱՍԱՐԱԿ ՄԱՐԴ (գոռալով).— Դեպի մենոնիտների վաճառքը, դեպի վաճառք:

Մարդիկ վազելով դուրս են գալիս:

ՀԱՍԱՐԱԿ ՄԱՐԴ.— Դեպի վաճառք:

— Դեպի վաճառք:

ՆԱՍՏԻ (Շմիդտին).— Այս գիշեր ես կփորձեմ դուրս գալ պաշարման օղակից:

Նրանք դուրս են գալիս: Հայնրիխն ուղղվում է, նայում է շուրջը: Մնացել են ինքն ու Մարգարեն: Հայնրիխը նկատում է Եպիսկոպոսին, որը լայն բացած աչքերով նայում է նրան: Նա ուզում է ամբողջ մտնել: Եպիսկոպոսը թևը պարզում է նրան ետ մղելու համար:

ՀԱՅՆՐԻԽ.— Ես ներս չեմ մտնի: Իջեցրո՛ւ քո թևը, իջեցրո՛ւ: Եթե դու դեռ բոլորովին չես մահացել, ների՛ր: Ծանր է քինոտությունը, շատ է երկրային: Թող մնա երկրի վրա: Թող քո մահը թեթև լինի:

Եպիսկոպոսը փորձում է խոսել:

Ի՞նչ:

Եպիսկոպոսը ծիծաղում է:

Դավաճա՛ն: Այո', իհարկե: Նրանք ևս, դու լսեցի՛ր, նրանք ևս ինձ դավաճան անվանեցին: Բայց ասա ինձ՝ այդ ինչպե՛ս եմ անում, որ միաժամանակ բոլորին էլ դավաճանում եմ:

Եպիսկոպոսը շարունակում է ծիծաղել:

Ինչո՞ւ ես ծիծաղում, ինչո՞ւ: (**Դադար**): Նրանք ինձ հարվածեցին, իսկ ես նրանց սիրում էի: Աստվա՛ծ իմ, ինչքան էի սիրում: (**Դադար**): Ես նրանց սիրում էի, բայց և նրանց սրտում էի: Ստում էի իմ լուռությամբ: Ես լուռ էի: Լուռ էի: Բերանս՝ կարած, ատամներս՝ սեղմած: Նրանք սատկում էին, ինչպես ճանճերը, և ես լուռ էի: Երբ հաց էին ուզում, ես նրանց պարզում էի սուրբ խաչը: Կարծում ես՝ սուրբ խաչը

փո՞ր է կշտացնում: Ա՛հ, թեղ իջեցրո՛ւ. մենք մեղսակիցներ ենք: Ես ուզեցի ապրել նրանց աղքատությամբ, ուզեցի տառապել նրանց քաղցով ու մրսածությամբ: Այնուամենայնիվ, այդ նրանք էին մեռնում, այդպես չէ՞: Ա՛յ քեզ բան, դավաճանելու մի ձևն էլ հենց այդպես է լինում: Ես նրանց հավատացնում էի, որ Եկեղեցին աղքատ է: Եվ հիմա կատաղությունից բորբոքված՝ սպանում են, սպանում են: Իրենք իրենց դատապարտում են կորստյան: Նրանց, կրևի, վիճակված է միայն Դժոխքը. նախ՝ այս աշխարհում, իսկ վաղը՝ հանդերձալ կյանքում:

Եպիսկոպոսն ասում է մի քանի անհասկանալի բառեր:

Բայց ես ի՞նչ կարող էի անել: Ես ինչպե՞ս առաջն առնեի: **(Գնում է բեմի խորքը, նայում է դեպի փողոցը):** Հրապարակը մարդկանցով լեփլեցուն է: Նստարաններով խփում են վանքի դռանը: Ամուր է, կոհիմանա միևչև առավոտ: Ոչինչ չեմ կարող անել, ոչինչ, ոչինչ: Դե՛, փակի՛ր բերանդ, մեռիք արժանապատվությամբ:

Եպիսկոպոսը ձեռքից բաց է թողնում մի բանալի:

Սա ի՞նչ բանալի է: Ո՞ր դռան բանալին է: Քո ամրոցի դռաներից մեկը: Ո՞չ Տաճարի՞նք. Սեո . Խորանի՞ բանալին է: Ո՞չ . . . Դամբարանի . . . դամբարանի դռուր: Այն դուռը, որ մի աս վանկ էր լինում: Հետո ի՞նչ:

ԵՊԻՍԿՈՊՈՍ — Գետնալի:

ՀԱՅՆՐԻԽ — Որ հասցնում է ուր... Մի՛ ասա: Այ թե մեռնեիր ամպոց առաջ:

ԵՊԻՍԿՈՊՈՍ.— Քաղաքից դուրս:

ՀԱՅՆՐԻԽ.— Բանալին ես չեմ վերցնի: **(Լռություն):** Մի գետնուղի, դամբարանից սկսած, տանում-հասցնում է քաղաքից դուրս: Դու ուզում ես, որ ես գնամ Գեցի մոտ և օգնեմ, որ նա քաղաք մտնի նույն այդ ճանապարհով: Հույս մի՛ դիր ինձ վրա:

ԵՊԻՍԿՈՊՈՍ.— Երկու հարյուր քահանա. նրանց կյանքը՝ քո ձեռքում:

ՀԱՅՆՐԻԽ **(դադար)**.— Ահա թե ինչու էիր ծիծաղում... Լավ կատակ է: Շնորհակալություն, բարի՛ Եպիսկոպոս, շնորհակալություն: Կամ չքավորները կկոտորեն քահանաներին, կամ Գեցը կկոտորի չքավորներին: Երկու հարյուր քահանա կամ

քսան հազար մարդ: Ինձ լավ հնարավորություն ես տալիս ընտրելու: Քսան հազար մարդը, իհարկե, շատ ավելին է, քան երկու հարյուրը: Խնդիրն այն է, որ ես իմանամ, թե մի քահանա քանի մարդ արժե: Այդ ես պիտի որոշեմ: Վերջին հաշվով, ես եկեղեցական եմ: Բայց ես չեմ վերցնի բանալին. այդ քահանաներն ամենակարճ ճանապարհով բարձրանալու են Երկինք:

Եպիսկոպոսը մեռնում է:

Իհարկե, միայն այն դեպքում, եթե նրանք քեզ նման չմեռնեն գազազած սրտով: Դե, դու քոնը վերջացրիր, բարի՛ գիշեր: Ներիր նրան, Աստված իմ, ինչպես որ ես եմ ներում: Բանալին չեմ վերցնի, վերջացավ-գնաց: Ո՛չ, ո՛չ, ո՛չ: **(Վերցնում է բանալին):**

ՄԱՐԳԱՐԵ (որն ուղղվել է).— Տե՛ր, թող քո կամքը ի կատար ածվի:

Աշխարհը կորած է, կորած:

Թող քո կամքը ի կատար ածվի:

ՀԱՅՆՐԻԽ.— Տե՛ր, դու անիծեցիր Կայենին⁷ և Կայենի զավակներին. թող քո կամքը ի կատար ածվի: Դու թույլ տվիր, որ ցավը խոցի մարդկանց սրտերը. թույլ տվիր, որ անպտուղ լինեն նրանց նպատակադրումները. թույլ տվիր, որ նրանց արարումները քայքայվեն ու զարշահոտ արձակեն. թող քո կամքը ի կատար ածվի: Թող քո կամքը ի կատար ածվի: **(Դուրս է գալիս):**

ՄԱՐԳԱՐԵ.— Դիակ, լեշահոտ:

Ամենուրեք՝ լե՛շ, լե՛շ, լե՛շ:

Լսո՛ւմ եք դուք ձայնն Աստծո:

ՊԱՏԿԵՐ ԵՐԿՐՈՐԳ

Գեցի ճամբարի մոտերքում: Գիշեր է: Խորքում՝ քաղաքը: Մի սպա հայտնվում է և նայում է քաղաքի կողմը: Նրանից անմիջապես հետո հայտնվում է մի ուրիշ սպա:

ԵՐԿՐՈՐԴ ՍՊԱ.— Այդ ի՞նչ էս անում:

ԱՌԱՋԻՆ ՍՊԱ.— Նայում եմ քաղաքին: Երբեմն ինձ թվում է, որ մի գեղեցիկ օր պիտի ցնդի, անհետանա:

ԵՐԿՐՈՐԴ ՍՊԱ (առաջինին).— Մեզ այդ բախտը ո՞վ է տվել: Այս քաղաքը չի ցնդելու: (Հանկարծակի շրջվելով): Սա ի՞նչ է.

Անցնում են երկու հիվանդապահներ, որոնք պատգարակի վրա տանում են սավանով ծածկված մի մարդու: Նրանք լռում են: Առաջին սպան մոտենում է պատգարակին, բարձրացնում է սավանը, ապա այն բաց է թողնում:

ԱՌԱՋԻՆ ՍՊԱ.— Գե՛տը գետել, անմիջապե՛ս:

ԵՐԿՐՈՐԴ ՍՊԱ.— Ուրեմն նա...

ԱՌԱՋԻՆ ՍՊԱ.— Սևացել է:

Դադար: Երկու հիվանդապահները շարունակում են իրենց ճանապարհը: Հիվանդը տնքում է:

ԵՐԿՐՈՐԴ ՍՊԱ.— Սպասեցե՛ք:

Նրանք կանգ են առնում:

ԱՌԱՋԻՆ ՍՊԱ.— Ի՞նչ է եղել:

ԵՐԿՐՈՐԴ ՍՊԱ.— Նա դեռ ողջ է:

ԱՌԱՋԻՆ ՍՊԱ.— Չեմ էլ ուզում իմանալ: Գցե՛ք ջուրը:

ԵՐԿՐՈՐԴ ՍՊԱ (հիվանդապահներին).— Ո՞ր գնդից է:

ՀԻՎԱՆԴԱՊԱՀ.— «Կապույտ խաչ» գնդից է:

ԵՐԿՐՈՐԴ ՍՊԱ.— Ա՛հ, իմ գնդից է: Ետ դա՛րձ:

ԱՌԱՋԻՆ ՍՊԱ.— Գժվե՛լ էս: Գցե՛ք ջուրը:

ԵՐԿՐՈՐԴ ՍՊԱ.— Ես չեմ թողնի զինվորներին խեղդեն, ինչպես կատվի ձագերի:

Նրանք նայում են իրար երեսի: Հիվանդապահները հեզնահան հայացք են փոխանակում: Պատգարակը դնում են գետնին և սպասում են:

ԱՌԱՋԻՆ ՍՊԱ.— Կենդանի թե մեռած՝ եթե նրան պահենք, նա խուլերայով կվարակի ամբողջ բանակը:

ԵՐԿՐՈՐԴ ՍՊԱ (ներս մտնելով).— Եթե ոչ խուլերայով, ապա խուճապով անպայման կվարակի: Հայդե՛, գետը գցեք նրան:

ՀԻՎԱՆԴԱՊԱՀ.— Նա տնքում է:

ԱՌԱՋԻՆ ՍՊԱ (մոռալ շրջվում է դեպի հիվանդապահները, կատաղորեն քաշում է դաշույնը և հարվածում է հիվանդին).—

Էլ չի տնքալու: Գնացե՛ք:

Հիվանդապահները դուրս են գալիս:

Երրորդն է: Երեկվանից՝ երրորդը:

ՀԵՐՄԱՆ (Աերս մտնելով).— Չորրորդն է: Քիչ առաջ մեկը հենց ճամբարի մեջ վայր ընկավ:

ԵՐԿՐՈՐԴ ՍՊԱ.— Տեսնող եղա՞վ:

ՀԵՐՄԱՆ.— Քեզ ասում են՝ ընկավ հենց ճամբարի մեջ:

ԵՐՐՈՐԴ ՍՊԱ.— Եթե հրամանատարը ես լինեի, հենց այս գիշեր կվերացնեի պաշարումը:

ՀԵՐՄԱՆ.— Համաձայն եմ: Բայց դու չես հրամանատարը:

ԱՌԱՋԻՆ ՍՊԱ.— Ի՞նչ արած, հետը պետք է խոսել:

ՀԵՐՄԱՆ.— Եվ ո՞վ է խոսելու: (**Դադար: Նայելով նրանց աչքերին**): Դուք կատարելու եք այն ամենը, ինչ ես կամենա:

ԵՐԿՐՈՐԴ ՍՊԱ.— Ուրեմն կորած ենք: Եթե խոլերան մեզ խնայի, հենց իրենք՝ մեր զինվորները, մեզ կապանեն:

ՀԵՐՄԱՆ.— Եթե, իհարկե, նա չտատկի:

ԱՌԱՋԻՆ ՍՊԱ.— Նա՞... խոլերայի՞ց...

ՀԵՐՄԱՆ.— Խոլերայից կամ ուրիշ բանից: (**Դադար**): Ինձ տեղեկացրել են, որ նրա հանկարծակի մահը այնքան չի վրշտացնի Արքեպիսկոպոսին:

Դադար:

ԵՐԿՐՈՐԴ ՍՊԱ.— Ես չեմ կարողանա:

ԱՌԱՋԻՆ ՍՊԱ.— Ես՝ նույնպես: Նրանից այնքան եմ զգվում, որ վրան ձեռք չեմ բարձրացնի:

ՀԵՐՄԱՆ.— Քեզանից ոչինչ չի պահանջվում, բացի այն, որ լուռ մնաս և թույլ տաս գործեն նրանք, ովքեր քիչ են զգվում:

Դադար: Ներս են մտնում **Գեցը և Կատրինը:**

ՏԵՍԱՐԱՆ Բ

ՆՈՒՅՆՔ, ԳԵՑ, ԿԱՏՐԻՆ

ԳԵՑ (Աերս մտնելով).— Դուք ոչինչ չունե՞ք ինձ հաղորդելու: Չե՞ք էլ ուզում զեկուցել, որ զինվորները հացի կարոտ են,

ոչ էլ այն, որ խոլերան պիտի կոտորի մեր բանակը: Դուք ոչինչ չունե՞ք ինձանից խնդրելու: Ոչ էլ այն, որ վերացնեմ պաշարումը աղետից խուսափելու համար: **(Դադար):** Մի՞թե դուք այդքան վախենում եք ինձանից:

Նրանք լռում են:

ԿԱՏՐԻՆ.— Ինչպես էլ աչքերը չոել են վրադ, թանկագի՛նս: Այս մարդիկ քեզ ամենևին չեն սիրում: Եվ ես չեմ գարմանա, եթե մի օր քեզ գտնենք մեջքի վրա փոված ու փորումդ մի խոշոր դանակ խրված:

ԳԵՑ.— Դու ինձ սիրո՞ւմ ես:

ԿԱՏՐԻՆ.— Ո՛չ, գրողը տանի:

ԳԵՑ.— Եվ այնուամենայնիվ, դու ինձ չես սպանել:

ԿԱՏՐԻՆ.— Դա դեռ չի նշանակում, որ ես այդ չեմ ցանկացել:

ԳԵՑ.— Գիտեմ՝ դու ինչեր ես երազում: Բայց ես հանգիստ եմ. հենց մահացա թե չէ՝ քեզ կսկսեն բռնաբարել քսան հազար տղամարդ: Եվ քսան հազարը մի քիչ շատ է, նույնիսկ՝ քեզ համար:

ԿԱՏՐԻՆ.— Նախընտրելի է քսան հազարը, քան թե մեկը, որ զարշելի է:

ԳԵՑ.— Քո մեջ ինձ հատկապես հաճելի է այն գարշանքը, որ ներշնչում եմ քեզ: **(Սպաներին):** Ե՛րբ եք ցանկանում, որ ես սոխարտեմ պաշարումը: Երեքշաբթի, հինգշաբթի՞, կիրակի՞: Դե, իմացեք, բարեկամներս, ոչ երեքշաբթի, ոչ հինգշաբթի, հենց այս գիշեր պիտի գրավեմ քաղաքը:

ԼԵՍԲՈՐԳ ԵՊԱ.— Այս գիշե՞ր:

ԳԵՑ.— Այո՛, շուտով: **(Նայելով քաղաքին):** Տեսնո՞ւմ եք, այնտեղ՝ հեռվում, վառվում է մի թույլ կապույտ լույս: Ամեն երեկո ես այն դիտում եմ, և ամեն երեկո հենց այս բուպեին նա հանգչում է: Ահա տեսնո՞ւմ եք: Ասում էի, չէ՞: Դե՛, իմացեք, սպօր նա հանգչում է հարյուրմեկերորդ ու վերջին անգամ: Ըարի գիշեր: Պեսոք է սպանել սան, ինչ սիրում ես: Ահա և սրիշ... ուրիշ լույսեր, որոնք անհետանում են: Գրողը տանի, մարդիկ Լան, որոնք շուտ են քնում, որ վաղը շուտ արթնանան: Բայց այդ վաղը չի լինելու: Սքանչելի գիշեր է, այնպես չէ՞: Շատ սպա՞ծատ չէ, բայց աստղերը վխտում են: Շուտով լուսինը դուրս կգա: Ծիշտ այսպիսի գիշերին, թվում է, թե ոչինչ չի պատահի: Նրանք ամեն ինչ նախատեսել են,

ամեն ինչի հետ հաշտվել են, նույնիսկ կոտորվելու հեռա-
նկարի հետ, բայց ոչ այս գիշեր: Այս երկինքն այնքան ջինջ
է, որ նրանց ներշնչում է հույս ու հավատ: Այս գիշերը նր-
բանց է պատկանում: **(Հանկարծակի):** Ինչպիսի՞ հզորու-
թյուն, Ատվա՛՛ծ, այս քաղաքը ինձ է, և ես այն քեզ եմ նվի-
րում: Շուտով ես այն հրդեհել կտամ ի փառս քո իշխանու-
թյան: **(Սպաներին):** Ուրմսից փախել է մի քահանա: Նա
հավաստիացնում է, որ մեզ կտանի-կհասցնի քաղաքի/նե-
ր: Նրան հարցաքննում է կապիտան Ուրիխը:

ԵՐՐՈՐԴ ՍՊԱ.— Հը՛մ...

ԳԵՑ.— Ի՞նչ կա:

ԵՐՐՈՐԴ ՍՊԱ.— Ես չեմ վստահում դավաճաններից:

ԳԵՑ.— Իսկապե՛ս... Ես նրանց պաշտում եմ:

Ներս է մտնում մի սպա, հետն էլ մի զինվոր՝ քահանային
առաջը գցած:

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ՆՈՒՅՆՔ, ՀԱՅՆՐԻԽ, ԿԱՊԻՏԱՆ

ՀԱՅՆՐԻԽ (թափով ծնրադրում է Գեցի առջև).— Ինձ չարչարեք,
եղունգներս պոկեք: Ողջ-ողջ մաշկահան արեք:

**ԳԵՑ (պոռթկում է ծիծաղից, թափով ծնրադրում է քահանայի
առջև).**— Աղիքներս թափեք, ոսկորներս տանջանիվով ջար-
դոտեք, անդամահատեցեք: **(Ելնում է ոտքի):** Էհ, սառույցը
ջարդվեց: **(Կապիտանին):** Սա ո՞վ է:

ԿԱՊԻՏԱՆ.— Հայնրիխն է, Ուրմսի քահանան: Այդ նա մեզ պի-
տի հանձներ քաղաքը:

ԳԵՑ.— Եվ ի՞նչ...

ԿԱՊԻՏԱՆ.— Հիմա էլ հրաժարվում է խոսելուց:

ԳԵՑ (մոտենում է Հայնրիխին).— Ինչո՞ւ:

ԿԱՊԻՏԱՆ.— Ասում է, որ պարզապես փոխել է մտադրությունը:

ԵՐՐՈՐԴ ՍՊԱ.— Փոխել է մտադրությունը, գրողը տանի: Ատամ-
ները փշրեք, ողնաշարը ջարդեք:

ՀԱՅՆՐԻԽ.— Ատամներս փշրեք, ողնաշարս ջարդեք:

ԳԵՑ.— Ինչ կատաղածն է: **(Հայնրիխին):** Քաղաքն ինչո՞ւ էիր
ուզում մեզ հանձնել:

ՀԱՅՆՐԻԽ.— Փրկելու համար քահանաներին, որոնց ամբոխն ուզում է կոտորել:

ԳԵՑ.— Իսկ ինչո՞ւ մտադրությունդ փոխեցիր:

ՀԱՅՆՐԻԽ.— Ձեր վարձկանների մոտքները տեսա:

ԳԵՑ.— Եվ ի՞նչ...

ՀԱՅՆՐԻԽ.— Խոսուն մոտքներ են:

ԳԵՑ.— Ի՞նչ են ասում:

ՀԱՅՆՐԻԽ.— Որ կանխելով մի քանի մարդասպանություն՝ պատճառ պիտի դառնամ համընդհանուր կոտորածի:

ԳԵՑ.— Դու նախկինում վարձկաններ տեսել էիր, չէ՞, և գիտեիր, որ քարեհամբույր տեսք չունեն ամենևին:

ՀԱՅՆՐԻԽ.— Սրանք մյուսներից վատն են:

ԳԵՑ.— Պա՛հ, պա՛հ, բոլոր զինվորներն իրար նման են: Կարծում էիր՝ այստեղ ո՞ւմ պիտի հանդիպես. հրեշտակների՞:

ՀԱՅՆՐԻԽ.— Մարդկանց: Եվ այդ մարդկանցից ուզում էի խընդրել, որ նրանք խնայեն ուրիշ մարդկանց կյանքը: Նրանք քաղաք պիտի մտնեին միայն այն դեպքում, եթե ինձ երդվեին, որ չեն կոտորելու բնակիչներին:

ԳԵՑ.— Ուրեմն դու վստահո՞ւմ էիր իմ խոստումին:

ՀԱՅՆՐԻԽ.— Բո՞ խոստումին: (**Նայում է նրա երեսին**): Դու Գե՛ցն ես:

ԳԵՑ.— Այո՛:

ՀԱՅՆՐԻԽ.— Ես... ես կարծում էի, որ կկարողանամ վստահել:

ԳԵՑ (զարմացած).— Ի՞նչ խոստումին: (**Դադար**): Խոստանում եմ; **Հայնրիխը լռում է:**

Եթե դու մեզ քաղաք մտցնես, երդվում եմ խնայել բնակիչների կյանքը:

ՀԱՅՆՐԻԽ.— Եվ դու ուզում ես, որ քեզ հավատա՞մ:

ԳԵՑ.— Բայց չէ՞ որ այդ էր քո մտադրությունը:

ՀԱՅՆՐԻԽ.— Այո՛: Բայց այն ժամանակ ես քեզ չէի տեսել:

ԳԵՑ (ծիծաղում է).— Հը՛մ, այո՛, ես այդ գիտեմ: Ինձ տեսնողները հազվադեպ են վստահում իմ տված խոսքին: Այնքան հիմար չեմ երևում, որ նրանք ենթադրեն, որ խոսքիս տերը պիտի մնամ: Բայց լսիր՝ ինչ եմ ասում: Ինձ խոսքի վրա բռնեցրու. առիթը ներկայացել է, օգտագործիր: Ստուգելու համար: Հենց միայն ստուգելու համար... Վերջիվերջո, ես քրիստոնյա եմ: Կուզե՞ս երդվեմ ավետարանի վրա: Հիմարաբար,

ինձ վատահելու փաստով դու ինձ փորձության ենթարկիր: Զէ՞ որ դո՛ւք՝ քահանաներդ, կոչված եք Բարությանք հրապուրելու շար մարդկանց:

ՀԱՅՆՐԻԽ.— Քե՞զ Բարությանք հրապուրել, քե՞զ: Դրանով ես քեզ մեծ, անշափ մեծ հաճույք կպատճառեի:

ԳԵՑ.— Դու ինձ ճանաչում ես: (**Ժպտալով նայում է նրան**): Հեռացե՛ք բոլորդ:

Սպաները և Կատրիներ հեռանում են:

ՏԵՍԱՐԱՆ Դ

ԳԵՑ, ՀԱՅՆՐԻԽ

ԳԵՑ (մի տեսակ քնքշությամբ).— Քրտնած ես: Այդ ինչքա՞ն ես տատապում:

ՀԱՅՆՐԻԽ.— Ոչ ուրիշների չափ: Այդ ուրիշներն են տատապում, ոչ թե ես: Աստված կամեցել է, որ ինձ հալածի ուրիշների տանջանքը, առանց որևէ խոր վերապրումի: Ինձ ինչո՞ւ ես այդպես նայում:

ԳԵՑ (նույն քնքշությամբ).— Քո երկերեսանի այս մոռուքը մի ժամանակ իմն է եղել: Քեզ եմ նայում, ինձ եմ խղճում: Ես և դու նույն խմորից ենք:

ՀԱՅՆՐԻԽ.— Մխալ է: Դու քո եղբորը մատնել ես, ես չեմ մատնի իմ եղբայրներին:

ԳԵՑ.— Դու նրանց այս գիշեր կմատնես:

ՀԱՅՆՐԻԽ.— Ոչ այս գիշեր, ոչ էլ հետո՝ երբևիցե:

ԳԵՑ (անտարբեր).— Չքավորներն ի՞նչ պիտի անեն քահանաներին: Մասվաճառների կարթերի՞ց պիտի կախեն:

ՀԱՅՆՐԻԽ (ճշալով).— Լոհ՛ր: (**Իրեն տիրապետում է**): Պատերազմի արհավիրքներն են, ես լոկ խոնարհ քահանա եմ՝ անկարող, անուժ, անօգնական:

ԳԵՑ.— Նենգամի՛տ, այս գիշեր քեզ է տրված քսան հազար մարդու կյանքն ու մահը տնօրհնելու իշխանությունը:

ՀԱՅՆՐԻԽ.— Ես չեմ ուզում այդ իշխանությունը. Սատանայի տվածն է:

ԳԵՑ.— Չես ուզում, բայց քո ձեռքումն է այդ իշխանությունը: Հայնրիխը փախուստի է դիմում՝ վազելով:

Հէ՛յ, ի՞նչ ես անում: Եթէ փախչում ես, ուրեմն ընդունել ես որոշումը:

ՀԱՅՆՐԻԽ (վերադառնում է, նայում է նրան և սկսում է ծիծաղել).— Դու իրավացի ես: Փախչեմ, թե ինքնասպան լինեմ՝ միևնույն է. պարզապէս տարբեր են լռելու ձևերը: Ես Աստծո ընտրյալն եմ:

ԳԵՑ.— Ավելի ճիշտ՝ ասա, որ նման ես մկանը:

ՀԱՅՆՐԻԽ.— Դա նույն բանն է, Ընտրյալը այն մարդն է, որին Աստված մատույլ սեղմում է պատին: (**Դադար**): Տե՛ր, ինչո՞ւ ինձ, ոչ թե ուրիշին:

ԳԵՑ (**մեղմորեն**).— Պահն է հոգեվարքի: Կուգե՞նայի թերևացնել քո տառապանքը: Թույլ տուր օգնեմ:

ՀԱՅՆՐԻԽ.— Ինձ օգնես, դո՞ւ, երբ Աստված ինքը լուծում է: (**Դադար**): Էհ, ստեցի: Ես չեմ նրա ընտրյալը: Ես ինձանից ի՞նչ եմ ներկայացնում: Ո՞վ էր ինձ ստիպում դուրս գալ քաղաքից: Ո՞վ ինձ լիազորեց գալ քեզ գտնել: Ծշմարիտն այն է, որ ես եմ ինձ ընտրել: Երբ ես գալիս էի գթասրտություն խնդրելու իմ եղբայրների համար, նախօրոք վստահ էի, որ ապարդյուն պիտի լինի: Ոչ թե ձեր դեմքերը չար էին, և այդ պատճառով ես մտադրությունս փոխեցի. ո՛չ, այդ դեմքերի զգայական, շոշափելի մթնոլորտն է, որ ինձ զգաստացրեց: Չարիք գործելու մղձավանջն ինձ անորոշ անհավատացնում էր, բայց երբ ձեզ տեսա, հասկացա, որ այն գործելու եմ իսկապէս: Դու գիտե՞ս, որ ես ստում եմ չքավորներին:

ԳԵՑ — Այո՛, գիտեմ:

ՀԱՅՆՐԻԽ.— Ինչո՞ւ եմ ինձանից հեռանում, երբ ես նրանց պարզում եմ թեևրս: Ինչո՞ւ եմ նրանք տառապում միշտ էլ շատ ավելի, քան ես երբևիցե կկարողանամ տառապել: Տե՛ր, ինչու է դու թույլ տվեցիր, որ չքավորներ լինեն այս աշխարհում: Եվ կամ ինչո՞ւ ինձ վանակիսն չդարձրիր: Վանքում ես միայն քեզ համար կլինեի: Բայց ինչպե՞ս լինեմ միայն քեզ համար, քանի դեռ կան մարդիկ, որոնք սովից մահանում են: (**Գեցին**): Ես եկել էի բոլորին հանձնելու քո տնօրինությանը և հույս ունեի, որ դու նրանց կոչնչացնես, որպեսզի ես կարողանամ մոռանալ երբևիցե, ընդհանրապէս, նրանք արդյոք գոյություն ունեցե՞լ են, թե՞ ոչ:

ԳԵՑ — Հետո՞...

ՀԱՅՆՐԻԽ.— Հետո մտադրությունս փոխեցի. դու քաղաք չես մտնելու:

ԳԵՑ.— Իսկ եթե Աստծո կամքը լինի այն, որ դու մեզ քաղաք մտցնես: Լսիր ինձ մի քիչ: Եթե դու լռես, քահանաներն այս գիշեր կգոհվեն. դա անվիճելի է: Իսկ չքավորները... Կարծում ես երկա՞ր են ապրելու: Ես պաշարումը չեմ վերացնի. մի ամալա ընթացքում Ուորմսի մեջ բոլորը քաղցից պիտի մեռնեն: Քեզ ոչ թե տրված է նրանց կյանքն ու մահը որոշելու իշխանությունը, ո՛չ, դու նրանց համար կարող ես միայն ընտրել մեռնելու երկու ձևերից մեկը: Դե, ընտրիր ամենաարագը, ապո՛ւշ: Գիտե՞ս դրանից ինչ կշահեն: Եթե նրանք մեռնեն այս գիշեր, դեռ քահանաներին չսպանած, ապա նրանց ձեռքերը կմնան անարատ. բոլորը կբարձրանան Երկինք: Հակառակ դեպքում, այն մի քանի շաբաթվա համար, որ շնորհում ես, դու նրանց արևաթաթախ ուղարկում ես Դրժոխք: Լսի՛ր, քահանա՛, դե՛ն է քեզ հուշում խնայել նրանց երկրային կյանքը, որպեսզի այդ ընթացքում նգովքի արժանանան: (**Պաղար**): Ասա ինձ՝ ինչպե՞ս են մտնում քաղաքը:

ՀԱՅՆՐԻԽ.— Դու գոյություն չունես:

ԳԵՑ.— Ի՞նչ...

ՀԱՅՆՐԻԽ.— Դու գոյություն չունես: Քո խոսքերը մեռնում են դեռ ականջներիս շհասած: Քո դեմքը այն դեմքերից չէ, որոնք հայտնվում են օրը ցերեկով: Գիտեմ այն ամենը, ինչ պիտի ասես, կանխատեսում եմ քո բոլոր շարժումները: Դու իմ արարչագործությունն ես, և ես եմ քեզ հուշում քո մտքերը: Ես երազի մեջ եմ, ամեն ինչ մահացած է, և օղը քնաթաթախ թմրության համ ունի:

ԳԵՑ.— Այդ դեպքում ես ևս երազի մեջ եմ, քանզի քո անելիքն ու ասելիքը կանխատեսում եմ այնքան ճշտորեն, որ դու ինձ արդեն ձանձրացնում ես: Մնում է իմանալ, թե մեր երկուսից ով է հայտնվել մյուսի երազում:

ՀԱՅՆՐԻԽ.— Ես քաղաքից դուրս չեմ եկել: Դուրս չեմ եկել քաղաքից: Մենք խաղում ենք ներկոտված բեմանկարների առջև: Դե՛, ճարտարախո՛ւ, սկսի՛ր կատակերգությունը: Դու քո դերը գիտե՞ս: Իմը «ոչ» ասելն է, ոչ, ոչ, ոչ: Լոո՞ւմ ես: Այս ամենը շատ սովորական գայթակղություն է ու ոչ այնքան ճշմարտանման: Ես ի՞նչ գործ ունեմ Գեցի ճամբարում: (**Մատնա-**

ցուց է անում քաղաքը): Եթե այս լույսերը հանգչել կարողա-
նային... Ինչո՞ւ քաղաքն այնտեղ է, երբ ես գտնվում եմ նրա
ներսում: (**Դադար**): Այո՛, սա գայթակղության տեսիլքն է:
Բայց ես չգիտեմ, թե ինչն է բանը: (**Գեցին**): Ինձ պարզ է
միայն այն, որ ես պիտի տեսնեմ Սատանային: Քանի որ ներ-
կայացումն սկսվում է ուրվատեսիլներով, ապա դրանց ան-
պայման կհաջորդեն նրա ծամածոությունները:

ԳԵՑ.— Դու առաջներում նրան տեսե՞լ ես:

ՀԱՅՆՐԻՒՍ.— Ավելի հաճախ, քան դու քո հարազատ մորը:

ԳԵՑ.— Ես նմա՞ն եմ նրան:

ՀԱՅՆՐԻՒՍ.— Դո՞ւ, խղճո՞ւկ: Դու խեղկատակ ես:

ԳԵՑ.— Ի՞նչ խեղկատակ:

ՀԱՅՆՐԻՒՍ.— Միշտ էլ գոյություն ունի մի խեղկատակ: Նրա դերը
ինձ հակառակելն է: (**Դադար**): Ես շահեցի:

ԳԵՑ.— Ի՞նչ:

ՀԱՅՆՐԻՒՍ.— Ես շահեցի: Վերջին լույսն արդեն մարել է. անհե-
տացավ Ուորմսի սատանայական կրկնապատկերը: Մի րոպե,
հիմա էլ դու քո հերթին պիտի անհետանաս, և այս ծիծաղելի
գայթակղությունը պիտի հանգի իր վախճանին: Գիշեր է, գի-
շեր ամենուրեք. Ինչպիսի՞ անդորր:

ԳԵՑ.— Ծարունակի՛ր, քահանա՛, շարունակի՛ր: Ես հիշում եմ այն
ամենը, ինչ պիտի ստես: Մի տարի առաջ... այո՛, եղբա՛յր
իմ, ես հիշում եմ. ինչպես կուզեմայիր, որ այս ամբողջ գի-
շերը լցվեր գլխիդ մեջ: Ես այդ ինչպե՛ս եմ ցանկացել:

ՀԱՅՆՐԻՒՍ (**մրմնջում է**).— Որտե՞ղ պիտի արթնանամ:

ԳԵՑ (**հանկարծակի ծիծաղում է**).— Դու արթուն ես, խարդա՛խ,
և դու այդ գիտես: Ամեն ինչ իրական է: Նայի՛ր ինձ, շոշա-
փի՛ր. ես մսից ու ոսկորից եմ: Նայի՛ր, լուսինը դուրս է գա-
լիս, և քո սատանայական քաղաքը վերահայտնվում է խա-
վարի միջից: Լա՛վ նայիր, մի՞թե դա պատրանք է: Ահա իրա-
կան ժայռ, իրական պատնեշներ, իրական քաղաք՝ իրական
բնակիչներով: Եվ դու ինքդ՝ իրական դավաճան:

ՀԱՅՆՐԻՒՍ.— Դավաճան է նա, ով դավաճանում է: Եվ ինչ էլ
սե՛ս, ես չեմ դավաճանելու:

ԳԵՑ.— Դավաճանում է նա, ով դավաճան է: Դու դավաճանելու
ես: Լսի՛ր, քահանա՛, դու արդեն դավաճան ես: Երկու հա-
կատակորդներ կովում են իրար դեմ, և դու հավակնում ես

երկուսին էլ պատկանել միաժամանակ: Ուրեմն դու խաղում ես երկակի խաղ, ուրեմն դու մտածում ես երկյեզվանի: Չքավորների տառապանքները Եկեղեցու լատիներենով անվանումք ես փորձություն, իսկ գերմաներեն՝ անհավասարություն: Քո ի՞նչը կվատթարանա, եթե ինձ քաղաք մտցնես: Պարզապես դառնալու ես այն դավաճանը, որպիսին եղել ես: Դավաճանը, որը կատարում է դավաճանություն, ընդամենը դավաճան է, որն ընդունում է իր էությունը:

ՀԱՅՆՐԻԽ.— Դու այդ որտեղի՞ց գիտես, եթե ես չեմ, որ քեզ թելադրում եմ քո խոսքերը:

ԳԵՑ.— Որովհետև ես դավաճան եմ: (**Դադար**): Ես արդեն անցել եմ այն ճանապարհը, որ քեզ մնացել է անցնելու: Եվ սակայն ինձ ի՞նչ է եղել, նայի՛ր: Մի՞թե իմ տեսքը պայծառ չէ՞ ու ծաղկուն:

ՀԱՅՆՐԻԽ.— Քո տեսքը պայծառ է ու ծաղկուն, որովհետև դու հետևել ես քո էությանը: Բոլոր բները դավաճանում են. դա հանրահայտ ճշմարտություն է: Բայց ես, ես բիճ չեմ:

ԳԵՑ (ուզում է խփել, բայց իրեն ափրապետում է).— Սովորաբար ովքեր ինձ բիճ են անվանում, էլ չեն կարողանում կրկնել:

ՀԱՅՆՐԻԽ.— Բի՛ն:

ԳԵՑ.— Քահանա՛, քահանա՛, քեզ լուրջ պահիր: Ինձ մի՛ ստիպիր կտրել ականջներդ: Դա անօգուտ է, քանի որ լեզուդ պիտի խնայես: (**Հանկարծակի գրկում է նրան**): Ողջո՛ւյն. կրտսե՛ր եղբայր, քեզ բճի ողջույն, քանզի դու նույնպես բիճ ես: Քեզ ծնելու համար Կղերականությունը կենակցել է Թշվառության հետ: Ինչպիսի՞ մուսլ վայելչասիրություն: (**Դադար**): Իհարկե, բները դավաճանում են. էլ ի՞նչ է մնում նրանց անելու: Ես ի ծնե երկատված եմ եղել. մայրս տրվել է մի շրջմոլիկի, և ես բաղկացած եմ երկու կեսերից, որոնք իրար չեն կրպչում. մեկը մյուսից գարշում է: Կարծում ես դու ինձանից հաջողա՞լ ես: Կիսաքահանային գումարած կիսաչքավոր՝ դրանից երբեք լիակատար մարդ չի ստացվում: Մենք չկանք և մենք ոչինչ չունենք: Բոլոր օրինական զավակներն աշխարհը վայելում են անվճար: Ոչ՝ դու, ոչ՝ ես: Մանկուց ես աշխարհին նայում էի քանալու անցքից. դա մի սիրուն ձվիկ էր՝ լիքը-լիքը, որի մեջ յուրաքանչյուրն զբաղեցնում է իրեն հատկացված տեղը: Բայց ես քեզ կարող եմ հավաստիացնել, որ

մենք ներսում չենք. վտարված ենք: Երես թեքիր այս աշխարհից, որը քեզ չի ցանկանում: Գործիր Չարիք, և կոտանես, թե ինչպես հոգիդ կթերթևանա:

Մի սպա է ներս մտնում:

Ի՞նչ ես ուզում:

ՍՊԱ.— Արքեպիսկոպոսի պատվիրակն է եկել ձեզ տեսության:

ԳԵՑ.— Թող ներս գա:

ՍՊԱ.— Լուր է բերել. մարտի դաշտում յոթ հազար սպանված թողնելուց հետո, թշնամին խուճապահար նահանջել է:

ԳԵՑ.— Իսկ եղբա՛յրս:

Սպան ուզում է մոտենալ, որպեսզի ականջին ասի:

Մի՛ մոտեցիր և խոսի՛ր բարձրաձայն:

ՍՊԱ.— Կոնրադը մահացել է:

Սկսած այս պահից Հայնրիխն ուշադրությամբ զննում է Գեցին:

ԳԵՑ.— Լա՛վ: Մարմինը գտե՛լ են:

ՍՊԱ.— Այո՛:

ԳԵՑ.— Ի՞նչ վիճակում. պատասխանի՛ր:

ՍՊԱ.— Այլանդակված:

ԳԵՑ.— Սրի հարվածի՞ց:

ՍՊԱ.— Գայլերը:

ԳԵՑ.— Ի՞նչ գայլեր: Այնտեղ գայլե՛ր կան:

ՍՊԱ.— Առնհայմի՞⁸ անտառում...

ԳԵՑ.— Բարի՛: Այս հաշիվը վերջացնեմ, հետո ես ամբողջ բանակը կառաջնորդեմ նրանց դեմ, կոչնչացնեմ Առնհայմի բոլոր գայլերին: Հեռացի՛ր:

Սպան դուրս է գալիս: Գաղար:

Մահացավ առանց մեղքերի թողության: Գայլերը կերել են նրա երեսը, բայց տեսնո՞ւմ ես՝ ես ժպտում եմ:

ՀԱՅՆՐԻԽ (մեղմ).— Դու ինչո՞ւ նրան դավաճանեցիր:

ԳԵՑ.— Որովհետև սիրում եմ ավարտվածությունը: Քահանա՛, ես եմ ինձ կերտել. բիճ եմ եղել ի ծնե, ոչ իմ պատասխանատվությամբ, բայց եղբայրասպանի հնչեղ կոչումը ես ինքս եմ վաստակել: Ես դրա համար պարտական եմ իմ արժանիքներին: (Գաղար): Դա իմն է այժմ, միայն իմը:

ՀԱՅՆՐԻԽ.— Ի՞նչն է, որ քոնն է:

ԳԵՑ.— Հայդենշտամների գերդաստանը: Վերջացան Հայդենշ-

տամները, սպառվեցին: Ես տոհմական ծառի գագաթն եմ և իմ մեջ ամփոփել եմ բոլորի հյութերը՝ հիմնադիր Ալբերիկից մինչև Կոնրադը՝ վերջին արու ժառանգը: Լա՛վ նայիր ինձ, քահանա՛, ես գերդաստանի դամբարան եմ: Ինչո՞ւ ես ծիծաղում:

ՀԱՅՆՐԻԽ.— Կարծում էի այս գիշեր միայն ես պիտի տեսնեմ Սատանային, բայց այժմ համոզված եմ, որ երկուսով պիտի տեսնենք նրան:

ԳԵՑ.— Թքա՛ծ ունենամ Սատանայի վրա: Ես միայն հոգիներն է վերցնում, բայց այդ նա չէ, որ նրանց մատնում է կորստյան: Ես բարեհաճում եմ գործարքի մեջ մտնել միայն Աստծո հետ: Չէ՞ որ ինքն է ճիվաղների և սրբերի սկզբնաղբյուրը: Աստված ինձ տեսնում է, քահանա՛, նա գիտի, որ ես սպանել եմ իմ եղբորը, և նրա սրտից արյուն է կաթում: Հենց այդ է, որ կա, Տե՛ր, ես նրան սպանել եմ: Եվ իմ դեմ դու ի՞նչ կարող ես անել: Ես կատարեցի վատթարագույնը բոլոր ոճիրներից, և սրդարության Աստվածը ի վիճակի չէ ինձ պատժելու: Ավելի քան տասնհինգ տարի է, ինչ նա ինձ նզովել է: Դե՛, սղաքանը բավական է այսօրվա համար. այսօր տոն է: Ես ուզում եմ խմել:

ՀԱՅՆՐԻԽ (մոտենում է նրան).— Վերցրո՛ւ: (Գրպանից հանում է բանալին և պարզում է նրան):

ԳԵՑ.— Սա ի՞նչ է:

ՀԱՅՆՐԻԽ.— Բանալի:

ԳԵՑ.— Ի՞նչ բանալի:

ՀԱՅՆՐԻԽ.— Ուորմս քաղաքի բանալին:

ԳԵՑ.— Քեզ ասում եմ՝ այսօրվա համար բավական է: Եղբայր էր, գրո՛ղը տանի: Մարդ ամեն օր չէ, որ թաղում է իր եղբորը: Ես իրավունք չունե՛մ հանգստանալու մինչև առավոտ:

ՀԱՅՆՐԻԽ (մոտենալով նրան).— Ստո՛ր վախկոտ:

ԳԵՑ (կանգ առնելով).— Եթե այս բանալին վերցնեմ, ապա ես ամեն ինչ հրի ճարակ պիտի դարձնեմ:

ՀԱՅՆՐԻԽ.— Այս հովտի խորքում կա մի ճերմակ ժայռ: Դրա ստորոտում՝ թփերի տակ, քողարկված մի անցք՝ գետնուղու սկիզբը, որով կգնաք և կգտնեք մի դուռ, որ կբացվի սրանով:

ԳԵՑ.— Քեզ ինչքա՞ն պիտի սիրեն քո չքավորները, քեզ ինչքա՞ն պիտի օրհնեն:

ՀԱՅՆՐԻՒՍ.— Դա ինձ չի մտահոգում: Ես ինձ կորստյան եմ դատապարտում: Բայց քեզ եմ վստահում իմ չքավորներին, բի՛ն: Այժմ քեզ է վիճակված ընտրություն կատարելը:

ԳԵՑ.— Քիչ առաջ դու ասում էիր, որ բավական է մոռոթիս նալել, և...

ՀԱՅՆՐԻՒՍ.— Լավ չէի նայել:

ԳԵՑ.— Իսկ այժմ ի՞նչ ես տեսնում:

ՀԱՅՆՐԻՒՍ.— Տեսնում եմ, որ դու գարշում ես ինքդ քեզանից:

ԳԵՑ.— Ծիշտ է: Բայց դու դրան մի՛ ապավինիր: Արդեն տասնհինգ տարի է, ինչ ես գարշում եմ ինքս ինձանից: Եվ ի՞նչ... Արդյոք դու չե՞ս հասկանում, որ Չարիքը իմ գոյության իմաստն է: Տո՛ւր ինձ այդ բանալին: (Վերցնում է): Դե՛, քահանա՛, դու ինքդ քեզ ստեցիր մինչև վերջ: Կարծում էիր, թե գտել ես քո դավաճանությունը սեփական աչքից թաքցնելու հնարը: Բայց ի վերջո, այնուամենայնիվ, դու դավաճանեցիր. դու մատնեցիր Կոնրադին:

ՀԱՅՆՐԻՒՍ.— Կոնրադի՞ն:

ԳԵՑ.— Մի՛ անհանգստացիր. դու ինձ այնքան նման ես, որ քեզ ինձ հետ շփոթեցի: (Դուրս է գալիս):

ՊԱՏԿԵՐ ԵՐՐՈՐԴ

Գեցի վրանը: Բացվածքից՝ լուսնի լույսի տակ, երևում է հեռավոր քաղաքը:

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ՀԵՐՄԱՆ, ԿԱՏՐԻՆ

Հերմանը ներս է մտնում և փորձում է թաքնվել ճամբարային անկողնու ետևը: Նրա մարմինն ու գլուխն անհետանում են: Երեվում է միայն նրա խոշոր հետույքը: Կատրինը ներս է մտնում, մոտենում է նրան ու ուսքով հարվածում: Հերմանը վախվորած

Վեր է թռչում: Կատրինը ետ է ոստնում՝ ծիծաղելով:

ՀԵՐՄԱՆ.— Եթե ճշաա...

ԿԱՏՐԻՆ.— Եթե ճշամ, կբռնենք քեզ, և Գեցը կախել կտա: Ավելի լավ է գրուցենք: Ի՞նչ պիտի անես դու նրան:

ՀԵՐՄԱՆ.— Թե ինչ պիտի անես ես նրան, անտառ՛կ, վաղուց ինքդ արած կլինեիր, եթե արյուն հոսեր քո երակներում: Զրբուցն ավարտվեց, հիմա գնա՛ զբոսնիր և շնորհակալ եղիր Աստծուն, որ քո փոխարեն գործն իր վրա է վերցրել մեկ ուրիշը: Լսո՛ւմ ես:

ԿԱՏՐԻՆ.— Ինձ ի՞նչ բաժին կընկնի, եթե նա մահանա: Ամբողջ ճամբարը վրաս պիտի գետվի:

ՀԵՐՄԱՆ.— Մենք քեզ փախչելու հնարավորություն կտանք:

ԿԱՏՐԻՆ.— Փող էլ կտա՞ք:

ՀԵՐՄԱՆ.— Մի քիչ:

ԿԱՏՐԻՆ.— Վճարեցեք իմ օժիտը, որ ես վաճառ մտնեմ:

ՀԵՐՄԱՆ (ծիծաղելով).— Ի՞նչ վաճառ, դո՛ւ: Եթե ցանկություն ունես համայնքի մեջ ապրելու, ապա քեզ ավելի շուտ խորհուրդ կտամ՝ մտի՛ր պոռնկատուն. դու այնտեղ ոսկի կդիզես քո ազդրերի մեջ եռացող տաղանդի շնորհիվ: Դե՛, շո՛ւտ որոշիր: Ես քեզանից միայն լուրջություն եմ պահանջում:

ԿԱՏՐԻՆ.— Ինչ վերաբերում է իմ լուրջանը, դու ինձ ապավինիր: Այս կամ այն կերպ, ես քեզ չեմ մատնելու: Իսկ թե արդյոք կթողնեմ, որ դու նրան մորթես... ապա դա կախված է...

ՀԵՐՄԱՆ.— Ինչի՞ց է կախված:

ԿԱՏՐԻՆ.— Ես և դու նույն շահերը չունենք, կապիտա՛ն: Տղամարդու պատիվը հատուցվում է դանակի հարվածով: Բայց ինձ նա պոռնիկ դարձրեց, և դա շտկելն ավելի դժվար է: (**Գաղաթ**): Այս գիշեր դուք բաղաքը կգրավեք, պատերազմը կվերջանա, բոլորը կցրվեն: Երբ քիչ հետո նա այստեղ գա, ես նրան պիտի հարցնեմ, թե ինչ է նախատեսել ինձ համար: Եթե նա ինձ պահի...

ՀԵՐՄԱՆ.— Գեցը... քեզ պահի՞... խենթացե՛լ ես: Ինչի՞ համար քեզ պահի...

ԿԱՏՐԻՆ.— Եթե ինձ պահի, ձեռ չես տա նրան:

ՀԵՐՄԱՆ.— Իսկ եթե վտարի:

ԿԱՏՐԻՆ.— Այնժամ նա քոնն է: Եթե բացականչեմ՝ մեղքը վիզդ,

դուրս կգաս թաքստոցից և հեշտ ու հանգիստ հաշիվը կմաք-
րես:

ՀԵՐՄԱՆ.— Այս ամենն ինձ դուր չի գալիս: Չեմ սիրում, երբ իմ
ձեռնարկը կախված է անկողնային տարբերակից:

ԿԱՏՐԻՆ (որն արդեն որոշ ժամանակ է, ինչ դուրս է նայում).—

Այդ դեպքում քեզ մնում է ծնրադրել՝ նրանից գուր ինչու
համար: Ահա գալիս է:

Հերմանն արագ թաքնվում է: Կատրինն սկսում է ծիծաղել:

ՏԵՍԱՐԱՆ Բ

ԳԵՑ, ԿԱՏՐԻՆ, ՀԵՐՄԱՆ՝ թաքստոցում

ԳԵՑ (ներս մտնելով).— Ինչո՞ւ ես ծիծաղում:

ԿԱՏՐԻՆ.— Ծիծաղում էի երազներիս վրա. քեզ տեսել եմ մա-
հացած՝ դաշույնը խրված մեջքիդ: (**Դադար**): Էհ, նա խոսե՞ց:

ԳԵՑ.— Ո՞վ:

ԿԱՏՐԻՆ.— Քահանան:

ԳԵՑ.— Ի՞նչ քահանա: Ա՛հ, այո՛: Այո՛, այո՛, բնականաբար:

ԿԱՏՐԻՆ.— Ուրեմն, այս գիշեր քաղաքը գրավելո՞ւ եք:

ԳԵՑ.— Դա քեզ վերաբերո՞ւմ է: Հանի՛ր սապոգներս:

Կատրինը հանում է նրա սապոգները:

Կոնրադը մահացել է:

ԿԱՏՐԻՆ.— Գիտեմ, ամբողջ ճամբարը գիտի:

ԳԵՑ.— Ինձ գինի տուր: Տոնելու արժանի իրադարձությունն է:

Կատրինը նրան սպասարկում է:

Դու էլ խմիր:

ԿԱՏՐԻՆ.— Ցանկությունն չունեմ:

ԳԵՑ.— Խմի՛ր, գրողը տանի, այսօր տոն է:

ԿԱՏՐԻՆ.— Սքանչելի տոն է, որն սկսվեց սպանությամբ ու վեր-
ջանալու է կոտորածով:

ԳԵՑ.— Իմ կյանքի ամենագեղեցիկ տոնը: Վաղը ես գնում եմ
տեք կանգնելու իմ կալվածքներիս:

ԿԱՏՐԻՆ (հուզված).— Այդքան շո՞ւտ:

ԳԵՑ.— Ի՞նչն է շուտ: Ահա երեսուն տարի է այդ մասին եմ երա-
զում: Մի օր ավել չեմ սպասի:

Ակնհայտ է Կատրինի տագնապը:

Քեզ վա՛տ ես գգում:

ԿԱՏՐԻՆ (իրեն տիրապետելով).— Այդ նրանից է, որ դու խոսեցիր քո կալվածքների մասին, երբ Կոնրադի մարմինը դեռ չի սատել:

ՊԵՑ.— Ահա երեսուն տարի է, որ ես գաղտնաբար իմն եմ համարում այդ հողերը: (**Քարձրացնում է գավաթը**): Խմում եմ իմ հողերի, հմ դղյակի կենացը:

Գալաթի շխկացրո՛ւ գավաթիս:

Կատրինն անձայն բարձրացնում է գավաթը:

ՊԵՑ.— Ասա՛ «Քո հողերի կենացը»:

ԿԱՏՐԻՆ.— Ո՛չ:

ՊԵՑ.— Ինչո՞ւ ոչ, պոռնի՛կ:

ԿԱՏՐԻՆ.— Որովհետև այդ հողերը քոնը չեն: Եղբորդ սպանելով՝ դու դադարո՞ւմ ես քիճ լինելուց:

Պեցը ծիծաղում է և ապտակելու փորձ է անում: Կատրինը խույս է տալիս և ծիծաղելով ընկրկում է:

Հողերը ժառանգաբար են փոխանցվում:

ՊԵՑ.— Դժվար թե ես ժառանգություն ընդունեի: Իմը այն է, ինչ ինքս եմ վերցնում: Դե՛, խմի՛ր, թե չէ կբարկանամ:

ԿԱՏՐԻՆ.— Քո հողերի, քո դղյակի կենացը:

ՊԵՑ.— Ու թող մութ լինի միջանցքներում, թող այնտեղ թափանեն զայրացած ուրվականները:

ԿԱՏՐԻՆ.— Միշտ ես ասում, դերասա՛ն, թե չէ ի՞նչ ես անելու առանց հանդիսատեսների: Խմում եմ ուրվականների կենացը: (**Դադար**): Այդպես է, գողտրի՛կս, քոնը այն է, ինչ դու ես վերցնում:

ՊԵՑ.— Միայն այդ:

ԿԱՏՐԻՆ.— Ուրեմն քո դղյակից ու կալվածքից բացի, դու մի սնգին գանձ ունես, որի մասին կարծես թե չես մտահոգվում:

ՊԵՑ.— Ի՞նչ գանձ:

ԿԱՏՐԻՆ.— Ես, թանկագի՛նս, ես: Դու ինձ բռնի չե՞ս վերցրել: (**Դադար**): Ի՞նչ ես նախատեսել ինձ համար:

ՊԵՑ (նայում է նրան, խորհում է).— Էհ, քեզ հետս կտանես:

ԿԱՏՐԻՆ.— Հետդ կտանե՞ս: (**Քնչում է տարակուսած**): Ինչո՞ւ ես ինձ հետդ տանում. որ մի պոռնիկի՞ տեղավորես պատմական դղյակում:

ԳԵՑ.— Որ մի պոռնիկի պատկեցնեմ մորս անկողնում:

ԿԱՏՐԻՆ (դադար).— Իսկ եթե մերժեմ, եթե չուզեցամ քեզ հետևել:

ԳԵՑ.— Հույս ունեմ, որ չես հրաժարվի ինձ հետ զնայուց:

ԿԱՏՐԻՆ.— Ա՛հ, դու ինձ հարկադրում ես: Դա ինձ մխիթարում է: Ես պիտի ամաչեի քեզ հետևել կամովին: (Գադար): Ինչո՞ւ դու միշտ ուզում ես իլաժ լինել այն, ինչը գուցե քեզ պիտի տազին սիրահոժար:

ԳԵՑ.— Վստահ լինելու համար, որ այն ինձ կտան և դժկամությամբ: (Մոտենում է նրան): Նայի՛ր աչքերիս մեջ, Կատրի՛ն: Դու ի՞նչ ես թաքցնում ինձանից:

ԿԱՏՐԻՆ (արագ).— Ե՛ս, ոչինչ:

ԳԵՑ.— Վերջերս փոխվել ես: Դու ինձ դեռևս բունն ատում ես, այնպես չէ՛:

ԿԱՏՐԻՆ.— Այո՛, իհարկե, ես քեզ բունն ատում եմ:

ԳԵՑ.— Եվ երազում շարունակ տեսնում ես, թե իբր սպանում ես ինձ:

ԿԱՏՐԻՆ.— Գիշերը մի քանի անգամ:

ԳԵՑ.— Գոնե չես մոռանում, չէ՞, որ ես քեզ պղծել, ստորացրել եմ:

ԿԱՏՐԻՆ.— Ինքս ինձ հետևում եմ, որ չմոռանամ:

ԳԵՑ.— Եվ նողկանքով ես ընդունում իմ փաղաքշանքները:

ԿԱՏՐԻՆ.— Նողկանքից արթարթում եմ:

ԳԵՑ.— Սքանչելի է: Եթե իմ գրկում դու երանությունն զգայիր, ես քեզ տեղնուտեղը կվտարեի:

ԿԱՏՐԻՆ.— Բայց...

ԳԵՑ.— Ոչինչ չեմ ընդունում, ոչ իսկ կնոջ հաճույսսիրությունը:

ԿԱՏՐԻՆ.— Ինչո՞ւ:

ԳԵՑ.— Որովհետև ես շատ եմ ստացել ուրիշներից: Քսան տարի շարունակ ամեն ինչ տրվել է ինձ ողորմածությամբ, մինչև իսկ իմ շնչած օդը: Չէ՞ որ քինը պարտավոր է համբուրել իրեն սնուցող ձեռքը: Օ՛հ, ինչպե՛ս եմ հիմա ինքս բաշխելու, բաշխելու եմ ուրիշներին ողորմաժարար ու շոպլորե՛ն:

ՅՐԺԱՆՑ (ներս մտնելով).— Նորին Սրբազնության պատվիրակն այստեղ է:

ԳԵՑ.— Թող ներս մտնի:

ՆՈՒՅՆՔ, ԴՐԱՄԱՏԵՐ

ԴՐԱՄԱՏԵՐ.— Ես Ֆուրսն եմ:

ԳԵՑ.— Ես Գեցն եմ, ահա և Կատրինը:

ԴՐԱՄԱՏԵՐ.— Ես ուրախ եմ, որ ինձ վիճակված է ողջունել այսպիսի մեծ գորավարի:

ԳԵՑ.— Իսկ ես՝ այսպիսի հարուստ դրամատիրոջ:

ԴՐԱՄԱՏԵՐ.— Հետո բերել եմ երեք հիանալի նորություն:

ԳԵՑ.— Արքեպիսկոպոսը հաղթանակել է, իմ եղբայրն սպանված է, նրա կալվածքներն ինձ են պատկանում: Այդպես չէ՞:

ԴՐԱՄԱՏԵՐ.— Ծիշտ այդպես: Ինչևէ, ես...

ԳԵՑ.— Տոնենք այդ ավետիսները: Ուզո՞ւմ եք խմել:

ԴՐԱՄԱՏԵՐ.— Ստամոքսս արդեն ի վիճակի չէ դիմանալու գինու հետևանքների:

ԳԵՑ.— Ուզո՞ւմ եք այս գեղեցիկ աղջկան: Նա ձերն է:

ԴՐԱՄԱՏԵՐ.— Ինչի՞ս է պետք: Ես շատ եմ ծեր:

ԳԵՑ.— Խեղճ Կատրին, նա քեզ չի սիրում: (**Դրամատիրոջը**): Նախընտրում եք երեխաների՞ն: Հենց այս երեկո մեկին կուղարկեմ ձեր վրանը:

ԴՐԱՄԱՏԵՐ.— Ո՛չ, ո՛չ, ո՛չ: Ո՛չ մի երեխա, ո՛չ մի երեխա: Ես...

ԳԵՑ.— Ի՞նչ կասեիք, եթե ձեզ մի լանդսկնեխտի⁹ հետ դասավորեմ: Մեկը կա ինձ մոտ. հասակը՝ վեց ոտնաչափ, երեսները՝ մագոտ: Ոչ սվել, ոչ պակաս՝ մի Պոլիփեմոս¹⁰:

ԴՐԱՄԱՏԵՐ.— Օ՛հ, օ՛հ, միայն ոչ այդ...

ԳԵՑ.— Այդ դեպքում ձեզ փառքով կպատվենք: (**Չաչն է տալիս:**) Ֆրա՛նց:

Ֆրանցը հայտնվում է:

Ֆրա՛նց, դրամատիրոջն ուղեկցելու ես ճամբարի միջով: Նախապատրաստիր, որ զինվորները, գլխարկները օդ նետելով, գոչեն. «Կեցցե՛ր դրամատերը»:

Ֆրանցը դուրս է գալիս:

ԴՐԱՄԱՏԵՐ.— Ես ինձ պարտավորված եմ զգում ձեր նկատմամբ, բայց կուզե՞նայի ձեզ հետ առանձին խոսել:

ԳԵՑ (**զարմացած**).— Իսկ ձեր ներս մտնելուց մինչև հիմա դուք ի՞նչ էիք սնում: (**Մատնացույց է անում Կատրինին**): Ա՛հ, սա՛: Սա ընտանի կենդանի է: Խոսեք առանց կաշկանդվելու:

- ԳՐԱՄԱՏԵՐ.— Նորին Արքազնությունը միշտ էլ եղել է խաղաղասեր, և դուք գիտեք, որ ձեր հանգուցյալ եղբայրն է եղել այս պատերազմի նախաձեռնողը:
- ԳԼՑ.— Եղբայրս: **(Կատաղությամբ)**: Եթե այդ քավթառ էշը դանակը ոսկորին հասցրած չլիներ...
- ԳՐԱՄԱՏԵՐ.— Պարո՛ն...
- ԳԼՑ.— Այո՛: Մոռացե՛ք իմ այս վերջին բառերը: Բայց ես ձեզ շնորհապարտ կլինեի, եթե այս գործում դուք եղբորս անունը չհուլովեիք: Վերջ ի վերջո, ես սգի մեջ եմ՝ ի հարգանս նրա հիշատակի:
- ԳՐԱՄԱՏԵՐ.— Նորին Արքազնությունը, ուրեմն, որոշել է խաղաղության գալուստը նշանավորել ներողամտության բացառիկ սխոցատումներով:
- ԳԼՑ.— Բրավո՛, նա բանտի դռներն է բացելու:
- ԳՐԱՄԱՏԵՐ.— Բանտի դռները... ո՛չ:
- ԳԼՑ.— Նա կուզենար, որ ես ներում շնորհեմ իմ պատժած զինվորներին:
- ԳՐԱՄԱՏԵՐ.— Կուզենար, իհարկե: Բայց նրա պատկերացրած ներման շնորհումը ավելի ընդհանուր բնույթ ունի: Նա ցանկանում է սակ տարածել իր ներմա քաղաքի հպատակների վրա
- ԳԼՑ — Ահ, ուն...
- ԳՐԱՄԱՏԵՐ — Նա որոշել է խառնություն չբանեցնել նրանց ժառանգական մոլորության դիմաց:
- ԳԼՑ.— Ի՞նչ կա որ... Սքանչելի գաղափար է:
- ԳՐԱՄԱՏԵՐ.— Մի՞թե մենք այսքան արագ եկանք ընդհանուր համաձայնության:
- ԳԼՑ — Այո՛, մենք եկանք լիակատար համաձայնության:
- ԳՐԱՄԱՏԵՐ **(շփում է ձեռքերը)**.— Ուրեմն ամեն ինչ գերազանց է. դուք խելամիտ մարդ եք: Ե՞րբ եք վերացնում պաշարումը:
- ԳԼՑ.— Վաղը ամեն ինչ վերջացած կլինի:
- ԳՐԱՄԱՏԵՐ.— Վաղը մի քիչ շուտ է, համենայն դեպս: Նորին Արքազնությունը ցանկանում է բանակցությունների մեջ մըտնել պաշարվածների հետ: Եթե ձեր բանակը մի քանի օր ևս մնա քաղաքի պարիսպների տակ, ապա դա կհեշտացնի բանակցությունների ընթացքը:
- ԳԼՑ.— Հասկացա: Իսկ նրանց հետ ո՞վ պիտի բանակցի:

ԴՐԱՄԱՏԵՐ.— Ես:

ԳԵՑ.— Ե՞րբ:

ԴՐԱՄԱՏԵՐ.— Վաղը:

ԳԵՑ.— Անկարելի է:

ԴՐԱՄԱՏԵՐ.— Ինչո՞ւ:

ԳԵՑ.— Կատրի՛ն, ասե՛նք նրան:

ԿԱՏՐԻՆ.— Իհարկե, թանկագի՛նս:

ԳԵՑ.— Դու ինքդ ասա: Ես չեմ համարձակվում. դա նրան շատ պիտի վշտացնի:

ԿԱՏՐԻՆ.— Վաղը, դրամատե՛ր, բոլոր այդ մարդիկ մեռած պիտի լինեն:

ԴՐԱՄԱՏԵՐ.— Մեռա՞ծ:

ԳԵՑ.— Բոլորը:

ԴՐԱՄԱՏԵՐ.— Բոլորը մեռա ծ:

ԳԵՑ.— Բոլորը մեռած: Այս գիշեր: Տեսնո՞ւմ եք այս բանալին: Քաղաքի բանալին է: Մի ժամից հետո կոտորածը կսկսե՛նք:

ԴՐԱՄԱՏԵՐ.— Բոլորի՞ն, նույնիսկ հարուստների՞ն:

ԳԵՑ.— Նույնիսկ հարուստներին:

ԴՐԱՄԱՏԵՐ.— Բայց դուք հավանություն էիք տալիս Արքեպիսկոպոսի ներողամտությանը:

ԳԵՑ.— Հավանություն հիմա էլ եմ տալիս: Նա կրոնավոր է և անարգված: Ահա ձեզ ներողամիտ լինելու երկու պատճառ: Բայց ես, ե՞ս ինչու ներեմ: Ոտրմսի բնակիչներն ինձ չեն անարգել: Ո՛չ, ո՛չ, ես զինվոր եմ, ուրեմն, սպանում եմ: Ես նրանց սպանելու եմ ըստ իմ կոչումի, իսկ Արքեպիսկոպոսը նրանց ներելու է ըստ իր կոչումի:

Դադար: Ապա՝ Դրամատերն սկսում է ծիծաղել: Կատրինը, հետո Գեցը նույնպես ծիծաղում են:

ԴՐԱՄԱՏԵՐ (ծիծաղելով).— Դուք սիրում եք ծիծաղել:

ԳԵՑ (ծիծաղելով).— Հենց միայն այդ եմ սիրում:

ԿԱՏՐԻՆ.— Նա շատ սրամիտ է, այնպես չէ՞:

ԴՐԱՄԱՏԵՐ.— Ծա՛տ: Եվ իր գործը լավ է առաջ տանում:

ԳԵՑ.— Ի՞նչ գործ:

ԴՐԱՄԱՏԵՐ.— Երեսուն տարի է, ինչ ես առաջնորդվում եմ ըստ մի սկզբունքի. շահն է ղեկավարում աշխարհը: Իմ առջև մարդիկ իրենց վարքն արդարացրել են ամենաազնիվ դրդա-

- պատճառներով: Ես նրանց լսում էի մի ականջով և ինքս ինձ
ասում՝ փնտրի՛ր նրա շահախնդրությունը:
- ԳԵՑ.— Եվ երբ այն գտնում էիք, ի՞նչ էիք անում:
- ԴՐԱՄԱՏԵՐ.— Բացատրվում էինք:
- ԳԵՑ.— Դուք իմ շահախնդրությունը գտե՛լ էք:
- ԴՐԱՄԱՏԵՐ.— Դե՛, անհարմար է:
- ԳԵՑ.— Ինչո՞ւմն է իմ շահախնդրությունը:
- ԴՐԱՄԱՏԵՐ.— Մի՛ շտապեք: Դուք պատկանում եք դժվարա-
մարս մարդկանց մի տեսակի: Ձեզ հետ պետք է առաջ ըն-
թանալ քայլ առ քայլ:
- ԳԵՑ.— Այդ ի՞նչ տեսակ է:
- ԴՐԱՄԱՏԵՐ.— Դուք իդեալիստ եք:
- ԳԵՑ.— Դա ի՞նչ բան է:
- ԴՐԱՄԱՏԵՐ.— Այսպես, ես մարդկանց բաժանում եմ երեք տե-
սակի. նրանք, ովքեր շատ փող ունեն. նրանք, ովքեր բոլո-
րովին չունեն, և նրանք, ովքեր քիչ ունեն: Առաջիններն ու-
զում են պահպանել, ինչ որ ունեն: Նրանց շահը իրավա-
կարգի պահպանումն մեզ է: Երկրորդներն ուզում են ձեռք
բերել, ինչ որ չունեն: Նրանց շահն է ոչնչացնել գոյություն
տեսքող իրախնդարքը և հաստատել մեկ ուրիշը, որը եկա-
մբապես լիով իրենց համար: Եվ առաջինները, և երկրորդ-
ները իրարադրանք են, մարդիկ որոնց հետ կարելի է լեզու
գտնել: Երրորդ տեսակի մարդիկ ուզում են տապալել սոցիա-
լական իրավակարգը ձեռք բերելու համար այն, ինչ որ չու-
նեն ու միաժամանակ ուզում են այն պահպանել, որպեսզի
ուրիշները չխլեն նրանց ունեցվածքը: Ուստի նրանք գործնա-
կանորեն պահպանում են այն, ինչ ոչնչացնում են մտովի:
Կամ էլ գործնականորեն ոչնչացնում են՝ ձևացնելով, թե ու-
զում են պահպանել: Դրանք են իդեալիստները:
- ԳԵՑ.— Խեղճ մարդիկ: Իսկ դրանց ինչպե՞ս կարելի է բուժել:
- ԴՐԱՄԱՏԵՐ.— Նրանց ընդգրկելով մի ուրիշ սոցիալական խմբի
մեջ: Եթե նրանց հարստացնեք, նրանք կպաշտպանեն տիրող
իրավակարգը:
- ԳԵՑ.— Ուրեմն ինձ հարստացրեք: Ի՞նչ եք ինձ նվիրում:
- ԴՐԱՄԱՏԵՐ.— Կոնրադի հողերը:
- ԳԵՑ.— Դրանք արդեն տվել եք:

- ԴՐԱՄԱՏԵՐ.— Այդպէս է, բայց հիշեք, որ դրանց համար դուք պարտական եք Նորին Սրբազնության բարությանը:
- ԳԵՑ.— Հավատացած եղեք, որ ես չեմ մոռանում: Հետո՞...
- ԴՐԱՄԱՏԵՐ.— Ձեր եղբայրը պարտքեր ունէր:
- ԳԵՑ.— Խեղճ տղա: (Խաչակնքում է: Ջղային հեծկտանք):
- ԴՐԱՄԱՏԵՐ.— Ձեզ ի՞նչ պատահեց:
- ԳԵՑ.— Առանձնապէս ոչինչ: Հարազատի կսկիծն է: Ուրեմն նա պարտքեր ունէր:
- ԴՐԱՄԱՏԵՐ.— Ձեր փոխարեւն մենք կվճարենք:
- ԳԵՑ.— Դրանում ես ոչ մի շահ չունեմ, քանի որ մտադիր չէի ընդունել այդ պարտքերը: Ձեր ասածը բխում է նրա պարտատերերի շահերից:
- ԴՐԱՄԱՏԵՐ.— Հազար դուկատ ունե՞տա՞՞ եմ ստաջարկում:
- ԳԵՑ.— Իսկ գինվորնե՞րս: Ի՞նչ կանենք, եթե նրանք հրաժարվեն հեռանալ դատարկաձեռն:
- ԴՐԱՄԱՏԵՐ.— Եվս հազար դուկատ զորքին բաժանելու համար: Բավական է:
- ԳԵՑ.— Շատ է:
- ԴՐԱՄԱՏԵՐ.— Ուրեմն, մենք եկա՞նք ընդհանուր համաձայնության:
- ԳԵՑ.— Ո՛չ:
- ԴՐԱՄԱՏԵՐ.— Երկու հազար դուկատ ունե՞տա, համաձայն չե՞ք: Երեք հազար՝ ավելին չեմ տա:
- ԳԵՑ.— Ո՞վ է խնդրում, որ...
- ԴՐԱՄԱՏԵՐ.— Հասյա ի՞նչ եք ուզում:
- ԳԵՑ.— Քաղաքը գրավել ու ոչնչացնել:
- ԴՐԱՄԱՏԵՐ.— Ես կարող եմ հասկանալ քաղաքը գրավելու ձեռքանկությունը, բայց ինչո՞ւ ոչնչացնել, գրողը տանի:
- ԳԵՑ.— Որովհետև բոլորն ուզում են, որ ես այն խնայեմ:
- ԴՐԱՄԱՏԵՐ (ընկճված).— Երևի՛ սխալվեցի...
- ԳԵՑ.— Ճիշտ այդպէս: Դուք չկարողացաք գտնել, թե ինչումն է իմ շահախնդրությունը: Տեսնենք, որտեղ է, հը՞, այդ անհիճյալը: Դե՛, փնտրի՛ր, փնտրի՛ր, բայց և շտապիր: Մեկ ժամ քեզ ժամանակ գտնելու համար: Եթե այդ ընթացքում դու չհայտնաբերես տիկնիկը խաղացնող թելերը, ես քեզ մանկածեմ փողոցների միջով, և դու կտեսնես, թե ինչպէս են մեկ-մեկ բռնկվում հրդեհի օջախները:

ԳՐԱՄԱՏԵՐ.— Դուք դավաճանում եք Արքեպիսկոպոսին, ոտնա-
հարում եք նրա վատահոյությունը:

ԳԵՅ.— Դավաճանե՛լ, վատահոյո՞ւն: Բոլորդ իրար նման եք,
դուք՝ իրապաշտների: Երբ արդեն չգիտեք ինչ ասեք, փոխ
եք առնում իդեալիստների բառապաշարը:

ԳՐԱՄԱՏԵՐ.— Եթե քաղաքը հիմնահատակ կործանեք, դուք չեք
ստանա Կոնրադի հողերը:

ԳԵՅ.— Ձեզ համար պահեք: Իմ շահախնդրությունը, դրամատե՛ր,
թեկադրում էր, որ ես ձեռք բերեմ այդ հողերը և այնտեղ էլ
ուզեմ: Բայց ես այնքան էլ վատահոյ չեմ, որ մարդը գործում
է լուր իր շահախնդրության: Վերցրե՛ք, թող ձերը լինի, և
Նորին Արքազնությունը թող այդ հողերը մտցնի քամակը: Ես
խմ եպրոսն եմ գոհաբերել Արքեպիսկոպոսին, և հիմա ուզում
եմ, որ ես խնայեմ քսան հազար ստահակների: Ուորմսի բնա-
կիչներին ես մատաղ եմ աճում ի պատիվ Կոնրադի աճյունի:
Թող նրանք խորովածի հոտ արձակեն՝ հանուն իմ եղբոր հի-
շտակի: Ինչ վերաբերում է Հայդենշտամների կալվածքին,
Արքեպիսկոպոս, եթե ուզում է, թող փոխադրվի այնտեղ և
կրեն եպիսկոպոսի գաղափարականությունը: Նա անպարման կու-
եճես դուս կորիքը, բունգի ոչ ոք զիշեր ես մտադիր եմ սնան-
կացնել երեսե (**Գողար**): Ֆրանկ:

Ֆրանկը հաջողվում է:

Վերգրու՛ առ ձերտե՛ր սեպիստին, հետևիր, որ նրան պատ-
վեն լուր սրտաշանի, հետո, երբ իր վրանի տակ կլինի, ամուր
կապկապիք նրա ձեռքերն ու ոտքերը:

ԳՐԱՄԱՏԵՐ.— Ո՛չ, ո՛չ, ո՛չ, ո՛չ:

ԳԵՅ.— Էլ ի՞նչ ունես ասելու:

ԳՐԱՄԱՏԵՐ.— Ես ահավոր ունատիկ ցավեր ունեմ: Ձեր պա-
րաններն ինձ կտպանեն: Ուզո՞ւմ եք ես ազնիվ խոսք տամ
չհետանալ վրանից:

ԳԵՅ.— Քո ազնիվ խո՞սքը: Հիմա քո շահախնդրությունը պահան-
ջում է, որ դու խոստանաս, բայց քիչ հետո քո շահախնդրու-
թյունը կպահանջի, որ դու զանց առնես քո խոստումը: Տա՛ր
նրան, Ֆրանկ և հանգույցները ամուր սեղմիր:

**Ֆրանկը և դրամատերը դուրս են գալիս: Անմիջապես լսվում
են բացականչություններ՝ «Կեցցե՛ դրամատերը»: Աղաղակները
շատ մոտիկից են հնչում, ապա՝ ավելի հեռվում և ավելի թույլ:**

ԳԵՑ, ԿԱՏՐԻՆ, ՀԵՐՄԱՆ՝ թաքստոցում

ԳԵՑ.— Կեցցե՛ր դրամատերը: (**Պոռթկում է ծիծաղից**): Մնա՛ք բարով, հողե՛ր, մնա՛ք բարով, դաշտե՛ր ու գետե՛ր: Մնա՛ս բարով, դղյա՛կ:

ԿԱՏՐԻՆ (**ծիծաղելով**).— Մնա՛ք բարով, հողե՛ր, մնա՛ս բարով, դղյա՛կ: Մնա՛ք բարով, նախնյաց դիմանկարնե՛ր:

ԳԵՑ.— Դու ոչինչ մի՛ ափսոսա. մենք այնտեղ բորբոսնելու չափ պիտի ձանձրանայինք: (**Դադար**): Հիմա՛ր ծերունի: (**Դադար**): Ա՛հ, իզուր նա ինձ ձեռնոց նետեց:

ԿԱՏՐԻՆ.— Դու ցա՛վ ես զգում:

ԳԵՑ.— Քո ի՛նչ գործն է: (**Դադար**): Չարիքը պետք է ցավ պատճառի բոլորին և սուաշին հերթին նրան, ով այն գործում է:

ԿԱՏՐԻՆ (**երկչոտ**).— Իսկ եթե հրաժարվեիր քաղաքը գրավելուց:

ԳԵՑ.— Եթե ես հրաժարվեի, դու պիտի դառնայիր դղյակի տիրուհի:

ԿԱՏՐԻՆ.— Ես այդ հույսը չունեի:

ԳԵՑ.— Իհարկե, չունեիր: Ուրեմն, ուրախացի՛ր, ես կգրավեմ քաղաքը:

ԿԱՏՐԻՆ.— Բայց ինչո՞ւ:

ԳԵՑ.— Որովհետև դրանով իսկ Չարիք կգործեմ:

ԿԱՏՐԻՆ.— Բայց ինչո՞ւ Չարիք:

ԳԵՑ.— Որովհետև Բարությունն արդեն արել են:

ԿԱՏՐԻՆ.— Ո՞վ է արել:

ԳԵՑ.— Հայր Աստվածը: Իսկ այս պարագայում այդ ես եմ արարչագործում, ես՝ ինքս: (**Չայն է տալիս**): Հե՛յ, կապիտան Օելնին, անմիջապես: (**Գեցը մնում է վրանի մուտքի մոտ և դուրս է գալում**):

ԿԱՏՐԻՆ.— Ի՛նչ ես նայում:

ԳԵՑ.— Քաղաքին: (**Դադար**): Ուզում եմ հիշել՝ արդյոք լուսնա՛կ գիշեր էր:

ԿԱՏՐԻՆ.— Ե՛րբ, որտե՞ղ...

ԳԵՑ.— Անցյալ տարի, երբ պատրաստվում էի Հալլեն¹² գրավել: Սրա նման մի գիշեր էր: Կանգնած էի վրանի շեմին և նայում էի դիտակալ աշտարակին, պատնեշներից վերև: Առա-

վոտյան գրոհեցինք: **(Մոտենում է նրան):** Բոլոր դեպքերում
ես այստեղից կչքվեմ, քանի դեռ օդը չի ապականվել գար-
շահոտությունից: Կթոչեմ ձիուն, և մնա՞ք բարով:

ԿԱՏՐԻՆ.— Դո՞ւ... Գնո՞ւմ ես:

ԳԵՑ.— Վաղը, կեսօրից առաջ, առանց որևէ մեկին զգուշացնելու:

ԿԱՏՐԻՆ.— Բա ե՞ս:

ԳԵՑ.— Դո՞ւ: Քիթդ փակիր և աղոթիր, որ քամին այս կողմը
չփչի:

Ներս է մտնում կապիտանը:

Զինքի կոչիր երկու հազար մարդու՝ Ուոլֆմարի և Ուլրիխի
զնդերը: Թող կես ժամից պատրաստ լինեն ինձ հետևելու:
Բանակի մնացած զնդերը պահել պատրաստ վիճակում: Կը-
րակ չվառել և գործել անաղմուկ:

**Կապիտանը դուրս է գալիս: Մինչև գործողության վերջը լըս-
վում են նախապատրաստությունների խլացած աղմուկները:**

Ուրեմն, սիրունի՛կս, դու չես դառնալու դղյակի տիրուհի:

ԿԱՏՐԻՆ.— Ես էլ եմ այդպես կարծում:

ԳԵՑ. - Ծա՛տ ես հիասթափված:

ԿԱՏՐԻՆ. — Ես առեկնկին չի հավատում, որ կստացվի:

ԳԵՑ. — Ինչո՞ւ.

ԿԱՏՐԻՆ. — Որովհետև ես քեզ նամասչում եմ:

ԳԵՑ (պտտեկապով). — Ես, դու ինձ նամասչո՞ւմ ես: **(Լռում, ապա
ծիծաղում է):** Ի վերջո, իմ ատամները ևս կարող են հաշվել:
(Ռադար): Երևի դու մանր-մունր հնարներ ես մշակել, թե ինձ
ինչպե՞ս բռնեցնես. դու ինձ զննում ես, ուսումնասիրում...

ԿԱՏՐԻՆ.— Մի շուն նույնպես կարող է նայել մի եպիսկոպոսի:

ԳԵՑ.— Այո՛, բայց նրան կթվա, որ եպիսկոպոսը շան գլուխ ունի:
Ես ինչի՞ գլուխ ունեմ, շա՞ն, կավատի՞, թե՞ պոռնիկի: **(Նայում
է նրան):** Մտի՛ր անկողին:

ԿԱՏՐԻՆ.— Ո՛չ:

ԳԵՑ.— Ե՛կ, ասում եմ քեզ, ե՛կ: Ուզում եմ քեզ տիրել:

ԿԱՏՐԻՆ.— Քեզ երբեք չեմ տեսել այսքան ցանկասեր:

Գեցը գրկում է նրա ուսերը:

Ոչ էլ այսքան շտապողական: Քեզ ի՞նչ է եղել:

ԳԵՑ — Պոռնիկի գլխով Գեցն ինձ աչքով է անում: Ես ու նա ու-
զում ենք միախառնվել: Եվ հետո՝ տագնապը մարդուն տրա-
մադրում է կենակցել:

ԿԱՏՐԻՆ.— Դու տազնապի մե՞ջ ես:

ԳԵՑ.— Այո՛: (Գնում է վրանի խորքը, նստում է անկողնին՝ մեջքը դեպի թաքնված Հերմանը): Դե՛, ե՛կ:

ԿԱՏՐԻՆ (մոտենում, թափով քաշում է Գեցին: Վերջինս վեր է կենում: Կատրինը նստում է նրա տեղը).— Գալիս եմ, այո՛, ես քոնն եմ, բայց նախ ինձ ասա՛ ի՞նչ ես նախատեսել ինձ համար:

ԳԵՑ.— Ե՛րբ:

ԿԱՏՐԻՆ.— Վաղը:

ԳԵՑ.— Ես ի՞նչ իմանամ: Ինչ ուզում ես, արա:

ԿԱՏՐԻՆ.— Այսինքն՝ պոռնկություն:

ԳԵՑ.— Ինձ թվում է, դա ամենահարմար լուծումն է, այնպես չէ՞:

ԿԱՏՐԻՆ.— Իսկ եթե դա ինձ դուր չի գալի՞ս:

ԳԵՑ.— Գտիր մի հիմարի և հետն ամուսնացիր:

ԿԱՏՐԻՆ.— Դու ի՞նչ ես անելու:

ԳԵՑ.— Պատերազմելու եմ: Ասում են հուսիտներն¹³ անհանգիստ են: Կուղևորվեմ նրանց մոտ:

ԿԱՏՐԻՆ.— Ինձ հետդ վերցրու:

ԳԵՑ.— Ինչի՞ համար:

ԿԱՏՐԻՆ.— Օրեր կլինեն, որ կնոջ կարիք կունենաս. լուսնակ գիշեր կլինի և ինչ-որ քաղաք գրավելու անհրաժեշտություն. դու կլինես տազնապի մեջ և տրամադիր կենակցելու:

ԳԵՑ.— Բոլոր կանայք իրար նման են: Եթե ցանկություն զգամ, զինվորներս տասնյակներով կճարեն ինձ համար:

ԿԱՏՐԻՆ (հանկարծակի).— Ես չեմ ուզում.

ԳԵՑ.— Դու չե՞ս ուզում:

ԿԱՏՐԻՆ.— Ես կարող եմ լինել քսան կին, հարյուր, եթե կուզես. քեզ համար կդառնամ աշխարհի բոլոր կանայք: Ինձ վերցրո՛ւ, դի՛ր ձիուդ գավակին: Ես թեթև եմ: Քո ձին չի զգա իմ ծանրությունը: Ես ուզում եմ դառնալ քո պոռնկատունը: (Սեղմրվում է նրան):

ԳԵՑ.— Քեզ ի՞նչ է եղել: (Դադար: Նայում է նրան: Հանկարծակի): Հեռացի՛ր, ես ամաշում եմ քո փոխարեն:

ԿԱՏՐԻՆ (աղաչական).— Գե՛ց:

ԳԵՑ.— Անտանելի է, երբ դու ինձ նայում ես այդ աչքերով: Այդ ի՞նչ կատաղած պոռնիկն ես, որ ինձ սիրում ես այն ամենից հետո, ինչ քեզ արել եմ:

ԿԱՏՐԻՆ (ճշարով).— Ես քեզ չեմ սիրում, երդվում եմ: Եթե նույնիսկ սիրեի, դու այդ երբեք չէիր իմանա: Եվ հետո քեզ ի՞նչ վնաս, որ սիրեն, երբ չեն էլ ասում այդ մասին:

ԳԵՑ.— Ինչի՞ս է պետք սիրված լինելը: Եթե դու ինձ սիրում ես, բռնը կլինի ամբողջ հաճույքը: Հեռացի՛ր, պոռնի՛կ, ես չեմ ուզում, որ ինձանից օգտվեն:

ԿԱՏՐԻՆ (ճշարով).— Գե՛ց, Գե՛ց, ինձ մի՛ վոնդիր: Աշխարհում ես ոչ ոք չունեմ:

Գեցը փորձում է դուրս գցել նրան վրանից: Կատրինը կառչում է նրա ձեռքերից:

ԳԵՑ.— Պիտի գնա՞ս, թե՞ չէ:

ԿԱՏՐԻՆ.— Մեղքը վիզդ, Գե՛ց, մեղքը վիզդ:

Հերմանը դուրս է գալիս իր թաքստոցից և դանակը բարձրացրած՝ հարձակվում է:

ԿԱՏՐԻՆ.— Ա՛հ, զգուշացի՛ր:

ԳԵՑ (շրջվում ու բռնում է Հերմանի դաստակը).— Ֆրա՛նց:

Ներսեմ մտնում գինվորները: Գեցը ծիծաղում է:

Համեմատյան դեպք, ինձ հաջողվեց մեկին հանել համբերությունից:

ՀԷՐՄԱՆ (Կատրինին). Խաղա՛ն, մատնի՛չ:

ԳԵՑ (Կատրինին). Դու նրա մեղսակի՞ցն էիր: Այդ ինձ համար ես խորհարկի է, շատ ավելի նախընտրելի, քան քո սերը (Շույում է նրա կզակը): Տարե՛ք նրան: Քիչ հետո կորոշեմ նրա նակատագիրը:

Գինվորները դուրս են գալիս՝ Հերմանին տանելով: Գաղար:

ԿԱՏՐԻՆ.— Նրան ի՞նչ ես անելու:

ԳԵՑ.— Ես չեմ կարողանում բարկանալ այն մարդկանց վրա, որոնք ուզում են ինձ սպանել: Նրանց շատ լավ եմ հասկանում: Ես նրան պարզապես բուրդուով ծակել կտամ. ակար ինքն էլ շատ է նման խոշոր տակառի:

ԿԱՏՐԻՆ.— Ի՞նչ ինչ ես անելու:

ԳԵՑ.— Ծիշտ է, ես քեզ պետք է պատժեմ:

ԿԱՏՐԻՆ.— Ոչ ոք քեզ չի պարտադրում:

ԳԵՑ.— Ես պարտավոր եմ: (**Գաղար**): Իմ գինվորներից շատերի թուքը բերանում չորանում է, երբ դու անցնում ես ճամբարի միջով: Ես քեզ նրանց եմ նվիրելու: Հետո, եթե ողջ մնաս,

- քեզ համար կգտնենք միաշքանի ու սիֆիլիտիկ մի զինվոր,
 և Ուորմսի քահանան քեզ կամուսնացնի:
- ԿԱՏՐԻՆ.**— Ես քեզ չեմ հավատում:
- ԳԵՑ.**— Չե՞ս հավատում:
- ԿԱՏՐԻՆ.**— Չէ՛, դու այդպիսին չես... Դու այդ չե՛ս անի: Ես վըստան եմ, վստան եմ:
- ԳԵՑ.**— Չե՞մ անի: (**Չայն է տալիս**): Ֆրա՛նց, Ֆրա՛նց:
Ներս եմ մտնում Ֆրանցը և երկու զինվոր:
 Հարսնացուին տիրություն արա, Ֆրա՛նց:
- ՖՐԱՆՑ.**— Ի՞նչ հարսնացու:
- ԳԵՑ.**— Կատրինը: Նախ՝ ամենայն հանդիսավորությամբ դու նըրան կամուսնացնես բոլորի հետ, հետո...

ՏԵՍԱՐԱՆ Ե

ՆՈՒՅՆՔ, ՆԱՍՏԻ

- Նաստին ներս է մտնում և խփում է նրա ականջին:**
- ԳԵՑ.**— Հե՛յ, դո՛ւ, բո՛հ՛, այդ ի՞նչ ես անում:
- ՆԱՍՏԻ.**— Խփում եմ ականջիդ:
- ԳԵՑ.**— Ես այդ զգացի: (**Բռնում է նրան**): Դու ո՞վ ես:
- ՆԱՍՏԻ.**— Նաստին՝ հացթուխը:
- ԳԵՑ (զինվորներից).**— Սա Նաստի՞ն է:
- ԶԻՆՎՈՐՆԵՐ.**— Այո՛, նա է:
- ԳԵՑ.**— Հաջող ավար է, Աստված վկա:
- ՆԱՍՏԻ.**— Ես քո ավարը չեմ, ինքս եմ հանձնվել:
- ԳԵՑ.**— Ինչպես կուզես. արդյունքը նույնն է: Այսօր Աստված իմ գլխին նվերներ է թափում: (**Նայում է նրան**): Ուրեմն սա է Նաստին՝ Գերմանիայի չքավորների խրոխտ առաջնորդը: Դու այնպիսին ես, ինչպիսին ես պատկերացնում էի. տաղտկալի, ինչպես առաքինությունը:
- ՆԱՍՏԻ.**— Ես առաքինի չեմ. դա կվիճակվի մեր որդիներին, եթե մենք արյուն թափենք այնքան, ինչքան անհրաժեշտ է, որպեսզի նրանք ձեռք բերեն առաքինի լինելու իրավունքը:
- ԳԵՑ.**— Տեսնում եմ դու մարգարե ես:
- ՆԱՍՏԻ.**— Ինչպես բոլորը:
- ԳԵՑ.**— Իսկապե՞ս: Ուրեմն, ե՞ս էլ մարգարե եմ:

ՆԱՍՏԻ.— Ամեն մի խոսք բխում է Աստծո ներշնչանքից: Ամեն մի խոսք ամեն ինչի մասին:

ԳԵՅ.— Գրողը տանի, ես իմ խոսելուն պետք է հետևեմ:

ՆԱՍՏԻ.— Միևնույն է, քեզ չի հաջողվի շատել այն ամենը, ինչ պիտի ասելիք:

ԳԵՅ.— Հա՛վ: Դե՛, հիմա պատասխանի՛ր իմ հարցերին և աշխատիր շատել բոլոր ասելիքների, թե չէ մեր այս խոսակցությունը չի վերջանա: Ուրեմն, դու: Նաստին ես, մարգարե և հացթուխ:

ՆԱՍՏԻ.— Այո՛, ես եմ:

ԳԵՅ.— Ասում էին, թե դու Ուորմսում ես գտնվում:

ՆԱՍՏԻ.— Ես այնտեղից եկա:

ԳԵՅ.— Այս գիշե՞ր:

ՆԱՍՏԻ.— Այո՛:

ԳԵՅ.— Որ ինձ հետ խոսե՞ս:

ՆԱՍՏԻ.— Որ ուժեր հավաքեմ և հարվածեմ քո թիկունքին:

ԳԵՅ.— Սքանչելի մտահղացում: Ինչո՞ւ փոխեցիր քո մտադրությունը:

ՆԱՍՏԻ.— Ճամբարով անցնելիս իմացա, որ մի դավաճան հանձնել է քաղաքը:

ԳԵՅ.— Բե՛լ պատկերացնում եմ այդ ծանր ու կեղտոտ պահին:

ՆԱՍՏԻ.— Այո՛, շատ էլ ծանր ու կեղտոտ:

ԳԵՅ.— Է, նեոս՞:

ՆԱՍՏԻ.— Ն ոտած էի քարին, վրանի ետևը: Տեսա վրանը թերևս լուսավորվեց, և սուվերներ շարժվեցին: Այդ պահին ես պատգամ ստացա ներս մտնել ու հետո խոսել:

ԳԵՅ.— Քեզ ո՞վ տվեց սյդ պատգամը:

ՆԱՍՏԻ.— Ի՞նչ ես կարծում, ո՞վ կլինի:

ԳԵՅ.— Հա՛, իսկապե՛ս, երջանի՛կ մարդ: Պատգամներ ես ստանում և գիտեա քեզ ով է պատգամավորում: Ես ինքս էլ, պատկերացրո՛ւ, ստացել եմ Ուորմսը հրդեհելու պատգամը: Բայց չեմ կարողանում իմանալ, թե ով է ինձ պատգամավորում:

(Դադար): Այդ Աստվա՞ծ քեզ հրամայեց խփել իմ ականջին:

ՆԱՍՏԻ.— Այո՛:

ԳԵՅ.— Ինչո՞ւ:

ՆԱՍՏԻ.— Չգիտեմ: Թերևս, պոկելու համար այն մոմը, որ խցանել է քո լսողությունը:

ԳԵՑ.— Քո գլուխը գնահատված է: Աստված քեզ այդ մասին զգուշացրե՛լ է:

ՆԱՍՏԻ.— Այդ մասին Աստված կարիք չուներ ինձ զգուշացնելու: Ես միշտ էլ իմացել եմ, թե ո՛րն է իմ վերջը:

ԳԵՑ.— Հա՛, ճիշտ է, դու մարգարե ես:

ՆԱՍՏԻ.— Դրա համար մարգարե լինելու կարիքը չկա: Ինձ և իմ նմաններին մեռնելու երկու ձև է տրված: Ովքեր խոնարհվում են, քաղցից են մեռնում: Ովքեր չեն խոնարհվում, բարձրանում են կախաղան: Տասներկու տարեկան հասակում դու արդեն գիտես՝ խոնարհվելո՞ւ ես, թե՞ ոչ:

ԳԵՑ.— Սքանչելի է: Ուրեմն, շո՛ւտ, ծնկի՛ եկ:

ՆԱՍՏԻ.— Ինչո՞ւ:

ԳԵՑ.— Պարզ է, ինձանից գթություն հայցելու համար: Աստված քեզ այդ պատգամը չի՞ տվել:

Ֆրանցը հազցնում է Գեցի սապոգները:

ՆԱՍՏԻ.— Ո՛չ, դու գութ չունես: Աստված նույնպես չունի: Եվ ինչչո՞ւ գթություն հայցեմ, երբ ինքս, օրը որ գա, չեմ խղճա ոչ ոքի:

ԳԵՑ (ոտքի կանգնելով).— Էլ ինչի՞ ես եկել-խցկվել այստեղ:

ՆԱՍՏԻ.— Եկա քո աչքերը բացելու, եղբա՛յր իմ:

ԳԵՑ.— Ինչ հիանալի՞ գիշեր է. ամեն ինչ սասանվում է. ինքը՝ Աստված քայլում է երկրի վրա: Վրանս երկինք է, ուր թափվում են ընկնող աստղերը, և ամա աստղերից ամենապայծառը՝ Նաստին, հացթուխ ու մարգարե, որը եկել է աչքերս բացելու: Ո՞վ կհավատար, որ երկինքն ու երկիրը իրար կխառնրվեն քսանհինգ հազարանոց մի քաղաք փրկելու համար: Եվ իրոք, հացթո՛ւխ, քեզ ո՞վ կհավաստիացնի, թե Սատանան չէ, որ քեզ մոլորության մեջ է գցել:

ՆԱՍՏԻ.— Երբ արեգակն իր փայլը զցում է աչքերին, քեզ ո՞վ է հավաստիացնում, որ գիշերը չբացել է:

ԳԵՑ.— Բայց երբ գիշերը դու երագում ես արեգակի մասին, քեզ ո՞վ կհավաստիացնի, որ օրը ցերեկ է: Եվ ի՞նչ գիտես, թե ես Աստծուն չեմ տեսել, հը՞, և կանգնած է արեգակն ընդդեմ արեգակին: (**Դադար**): Բոլորն իմ ձեռքումն են, բոլորը. և այս կինը, որն ուզում էր ինձ սպանել, և Արքեպիսկոպոսի պատվիրակը, և դու՝ խրոխտ չքավորների թագավոր: Աստծո աջը քանդեց մի դավադրություն ու մերկացրեց հանցավոր-

ներին. Դեռ ավելին, Աստծո նախարարներից մեկը, բարձր-
յալի կամքը կատարելով, բերեց-հանձնեց քաղաքի բանալին:
ՆԱՍՏԻ (այլակերպված, տիրական և կտրուկ).— Աստծո նախա-
րարներից մեկը, այդ ո՞վ է:

ԳԵՑ.— Քեզ համար միևնույնը չէ՞, թե ով է, քանի որ դու մեռ-
նելու ես: Դե՛, ընդունի՛ր, որ Աստված ինձ հետ է:

ՆԱՍՏԻ.— Քե՞զ հետ: Ո՛չ, դու Աստծու ընտրյալը չես. լավագույն
դեպքում դու նրա բռնն ես:

ԳԵՑ.— Դու ինչի՞ց գիտես:

ՆԱՍՏԻ.— Աստծու ընտրյալները ոչնչացնում են կամ կտրուցում.
դու պահպանում ես:

ԳԵՑ.— Ե՞ս:

ՆԱՍՏԻ.— Դու սերմանում ես անկարգություն, իսկ անկարգու-
թյունը տիրող կարգի լավագույն ծառան է: Կոնրադին դավա-
ճանելով՝ դու թուլացրիր ասպետական ամբողջ դասը: Եվ
Ուորմսը ոչնչացնելով՝ թուլացնելու ես քաղքենիության դա-
սաշերտը: Ովքե՛ր են օգտվում. այս աշխարհի հզորները: Դու
ծառայում ես այս աշխարհի հզորներին, Գե՛ց, և նրանց ես
ծառայելու, ինչ էլ որ անես: Ամեն ոչնչացում խառնակչություն
է, թուլացնում է թույլերին, հարստացնում հարուստներին և
ստուգում է հզույթների հզույթաթուկը:

ԳԵՑ.— Որքան, ես խմ ուզածի նախառա՛լյն եմ անում: (**Հեզոնա-
կան**): Ըստերախտարար, Աստված քեզ ուղարկել է ինձ լու-
սավարկու: Ի՞նչ ես ստաջարկում:

ՆԱՍՏԻ.— Մի նոր դաշինք:

ԳԵՑ.— Օ՛հ, այսինքն՝ մի նոր դավաճանություն: Ծատ սիրալիր է
բո կողմից: Ինչ-ինչ, բայց ա՛յ դրան ես ընտելացել եմ: Գոնե
հարազատ կմնամ իմ էությանը: Բայց ո՞ւմ հետ եմ դաշնակ-
ցելու, եթե հրաժարվեմ ա՛ հարուստ քաղքենիներից, ա՛ սա-
պետներից, ա՛ իշխաններից: Ինձ համար պարզ չէ, թե ում
հետ եմ դաշնակցելու:

ՆԱՍՏԻ.— Գրավի՛ր քաղաքը, կոտորի՛ր հարուստներին ու քա-
հանաներին: Հանձնի՛ր քաղաքը չքավորներին, ոտքի՛ հա-
նիր գյուղացիների մի բանակ ու վոնդի՛ր Արքեպիսկոպոսին:
Վաղը ամբողջ երկիրը կշարժվի քո ետևից:

ԳԵՑ (ապշած).— Դու ուզում ես, որ ես միանամ չքավորների՞ն:

ՆԱՍՏԻ.— Այո՛, չքավորներին՝ գյուղի և քաղաքի ներքնախապին:

ԳԵՑ.— Տարօրինակ առաջարկ է:

ՆԱՍՏԻ.— Նրանք են քո բնական դաշնակիցները: Եթե, իրոք, դու ուզում ես ոչնչացնել, եթե դու ուզում ես սրբել երկրի երեսից պալատներն ու Սատանայի կանգնեցրած տաճարները, եթե ուզում ես ջարդել հեթանոսների պիղծ արձանները, այրել այն հազարավոր գրքերը, որոնք տարածում են սատանայական գիտելիքներ, եթե ուզում ես վերացնել ոսկին ու արծաթը,— ե՛կ մեզ մոտ: Մեզանից հեռու դու տեղում կդոփես և չարիք կպատճառես միայն ինքդ քեզ: Մեզ հետ դու կլինես Աստծո արհավիրքը:

ԳԵՑ.— Ի՞նչ եք անելու հարուստ քաղբենիներին:

ՆԱՍՏԻ.— Մենք նրանց ունեցվածքը վերցնելու ենք հազցնելու համար նրանց, ովքեր մերկ են և կերակրելու համար նրանց, ովքեր քաղցած են:

ԳԵՑ.— Իսկ քահանաների՞ն:

ՆԱՍՏԻ.— Նրանց ետ ենք ուղարկելու՝ Հոռմ:

ԳԵՑ.— Բա ազնվականների՞ն:

ՆԱՍՏԻ.— Կտրելու ենք նրանց գլուխները:

ԳԵՑ.— Արքեպիսկոպոսին վտարելուց հետո, ի՞նչ ենք անելու:

ՆԱՍՏԻ.— Կսկսվի Աստծո ոստանը կառուցելու ժամանակը:

ԳԵՑ.— Ի՞նչ հիմքերի վրա:

ՆԱՍՏԻ.— Բոլոր մարդիկ հավասար են և եղբայրներ: Բոլորը Աստծո մեջ են, և Աստված նրանց մեջ է: Սուրբ Հոգին խոսում է բոլորի քերանով: Բոլոր մարդիկ քահանա են ու մարգարե: Յուրաքանչյուրը կարող է մկրտել, ամուսնացնել, օրհնել ու թողություն տալ մեղքերին: Յուրաքանչյուրը երկրի վրա ապրում է բացահայտ՝ բոլորի աչքի առաջ և մեռավոր իր հոգում՝ Աստծո աչքի առաջ:

ԳԵՑ.— Ձեի ասի, թե ձեր ոստանում մարդ ամեն օր ծիծաղելու է:

ՆԱՍՏԻ.— Մի՞թե կարելի է ծիծաղել նրանց վրա, ում սիրում ես:

Սերն է դառնալու համընդհանուր օրենքը:

ԳԵՑ.— Այդ ամենի մեջ ես ի՞նչ եմ լինելու:

ՆԱՍՏԻ.— Բոլորին հավասար:

ԳԵՑ.— Իսկ եթե ինձ հաճելի չէ լինել ձեզ հավասար:

ՆԱՍՏԻ.— Բոլոր մարդկանց հավասար կամ՝ բոլոր իշխաններին ծառա, ընտրի՛ր:

ԳԵՑ.— Քո առաջարկն ազնիվ է, հացթո՛ւխ, միայն թե գիտես

ի՞նչ... չբռնաբերելով ինձ անչափ ձանձրացնում եմ: Նրանք արգանապարտում են ամեն, ինչը ինձ դուր է գալիս:

ՆԱՍՏԻ.— Քեզ ի՞նչն է դուր գալիս:

ԳԵՑ.— Այն ամենը, ինչ ուզում եք ոչնչացնել՝ արձանները, շքեղությունը, պատերազմը:

ՆԱՍՏԻ.— Լուսինը քոնը չէ, խարվա՛ծ միամիտ, դու կուզում ես, որպեսզի այն վայելեն ազնվականները:

ԳԵՑ (խորը և անկեղծ համոզմունքով).— Բայց ես սիրում եմ ազնվականներին:

ՆԱՍՏԻ — Դո՛ւ, դու նրանց սպանում ես:

ԳԵՑ — Պա՛հ, ես նրանց քիչ-միչ, երբեմն-երբեմն սպանում եմ, որովհետև նրանց կանայք բեղմնավոր են և տասն են ծնում իմ մեկ սպանածի դիմաց: Բայց ես չեմ ուզում, որ դուք նրանց բոլորին կախեք: Ձեզ ինչո՞ւ օգնեմ, որ հանգցնեք արեգակն ու բոլոր երկնային ջահերը: Ինչի՞ս է պետք բևեռային գիշերը:

ՆԱՍՏԻ.— Ուրեմն կշարունակես մնալ մի անօգուտ աղմկարար:

ԳԵՑ.— Անօգուտ, այո՛, մարդկանց համար՝ անօգուտ: Բայց մարդիկ ինձ ի՞նչ: Աստված ինձ լսում է, և ես նրա ականջներն եմ գրգռում. դա ինձ բավական է, որովհետև նա է իմ միակ արժանի հակառակորդը: Կա Աստված, ես և ուրվականները: Ես այս գիշեր Աստծուն եմ խաչելու՝ սպանելով քեզ և քան հազար մարդու. և քանի որ նրա տանջանքն անսահման է, նրան տանջողը ևս դառնում է անսահման: Այս քաղաքը հրդեհի ճարակ պիտի դառնա: Աստված այդ գիտի: Այս պահին նա վախենում է. ես այդ զգում եմ: Ես զգում եմ նրա հայացքն իմ ձեռքերին, զգում եմ նրա շունչն իմ մազերին: Արտասովոր եմ նրա հրեշտակները: Նա ինքն իրեն ասում է. «Գուցե Գեցը չհանդգնի»,— ճիշտ ու ճիշտ մահկանացու մարդու նման: Արտասովեցե՛ք, արտասովեցե՛ք, հրեշտակնե՛ր. ես հանդգնելու եմ: Քիչ հետո ես ոտնահարելու եմ նրա վախն ու գայրույթը: Քաղաքը հրդեհի ճարակ է դառնալու: Տիրոջ հոգին հայելաարահ է: Կրակը պիտի արտացոլվի այնտեղ՝ միլիոնավոր հայելիների մեջ: Այնժամ, ես պիտի խորապես զգամ, որ ես ճիվաղ եմ, համարյա գտարյուն: (Ֆրանցիկ): Իմ սուտերը:

ՆԱՍՏԻ (այլափոխված ձայնով).— Խնայի՛ր չքավորներին: Արքե-

1
պիսկոպոսը հարուստ է. գվարճացի՛ր նրան սնանկացնելով:
հայց չքավորները, Գե՛ց, ի՛նչ բավականություն նրանց տան-
ջելուց:

ԳԵՑ.— Օ՛հ, ո՛չ, դա բավականություն չէ:

ՆԱՍՏԻ.— Ուրե՛մն...

ԳԵՑ.— Ես նույնպես պատգամ եմ ստացել:

ՆԱՍՏԻ.— Քեզ աղաչում եմ ծնկաչոք:

ԳԵՑ.— Կարծում էի, թե քեզ արգելված է աղաչելը:

ՆԱՍՏԻ.— Ոչինչ արգելված չէ, երբ խնդիրը վերաբերում է մարդ-
կանց փրկությանը:

ԳԵՑ.— Ինձ թվում է, մարգարե՛, որ Աստված քեզ ծուղակն է գը-
ցել:

Նաստին սեղմում է ուսերը:

Գիտե՛ս քեզ ինչ է վիճակված:

ՆԱՍՏԻ.— Լիկանք և կախաղան, այո՛: Քեզ ասացի, որ ես միշտ
էլ այդ իմացել եմ:

ԳԵՑ.— Լիկանք և կախաղա՛ն... լիկանք և կախաղա՛ն... ինչքա՛ն
միօրինակ է: Չարիքը ձանձրալի է, երբ նրան ընտելանում ես:
Հանճարի շունչ է պետք նորը ստեղծելու համար: Ներշնչումս
այս գիշեր բոլորովին չքացել է:

ԿԱՏՐԻՆ.— Նրան մի խոստովանահայր է պետք:

ԳԵՑ.— Մի...

ԿԱՏՐԻՆ.— Չէ՞ որ դու թույլ չես տա, որ նա մեռնի առանց մեղ-
քերի թողության:

ԳԵՑ.— Նաստի՛, ահա և հանճարի շունչը: Իհարկե, քաջագո՛ւն,
խոստովանահայր դու անպալման կունենաս: Իմ քրիստոնեա-
կան պարտքն է: Եվ հետո՛ ես քեզ համար անակնկալ եմ
պատրաստել: (**Ֆրանցիս**): Գնա՛ կանչիր այն քահանային...
(**Նաստիին**): Ահա մի արարք, ինչպիսիք ես միշտ սիրել եմ՝
երկդիմությունը... լա՛վ է... վա՛տ է... բանականությունը մոլոր-
վում է:

ՆԱՍՏԻ.— Ես թույլ չեմ տա, որ Հոռմի թափփուրն ինձ արատա-
վորի:

ԳԵՑ.— Քեզ լիկանքի պիտի ենթարկեն այնքան ժամանակ, մինչև
դու համաձայնվես խոստովանանքի արարողությանը: Այդ ար-
վում է քո օգուտի համար:

Ներս է մտնում Հայնրիխը:

ՆՈՒՅՆՔ, ՀԱՅՆՐԻՒ

ՀԱՅՆՐԻՒ.— Դու ինձ պատճառել ես չարիքի այն առավելագույնը, որ կարող էիր: Թող ինձ հանգիստ:

ԳԵՑ (Ֆրանցին).— Ի՞նչ էր անում:

ՖՐԱՆՑ.— Խավարի մեջ նստած՝ գլուխն էր օրորում:

ՀԱՅՆՐԻՒ.— Ի՞նչ ես ուզում ինձանից:

ԳԵՑ. Որ դու արհեստդ բանեցնես: Այս կնոջը հարկավոր է անոխոյապես ամուսնացնել: Ինչ վերաբերում է սրան, խոստովանեցրու և տուր նրան մեղքերի թողություն:

ՀԱՅՆՐԻՒ.— Սրա՞ն... (Տեսնում է Նաստիին): Ա՛հ...

ԳԵՑ (ձևացնելով, թե զարմացած է).— Դուք իրար ճանաչո՞ւմ եք:

ՆԱՍՏԻ.— Որեմն սա՞ է Աստծո նախարարը, որ քեզ տվել է այդ բանալին:

ՀԱՅՆՐԻՒ.— Ո՛չ, ո՛չ, ո՛չ:

ԳԵՑ. Քանի՞նա՛, չե՞ս ամաչում, ստում ես:

ՀԱՅՆՐԻՒ. Նաստի՛:

Նաստին նույնիսկ չի նայում նրա երեսին:

Չի կայտոյ թույլ տալ, որ կատրեկն բանականներին:

Նաստին չի պատասխանում: Հայնրիխը մոտենում է նրան:

Էտա, ես կարող էի թույլ տալ, որ նրանց կոտորեն: (Դադար: Երջվում, մոտենում է Գեցին): Այդ ինչո՞ւ է անհրաժեշտ, որ ես դառնամ նրա խոստովանահայրը:

ԳԵՑ.— Նրան կախելու ենք:

ՀԱՅՆՐԻՒ.— Դե՛, շո՛ւտ, ուրեմն, շո՛ւտ: Ծուտ կախեցեք նրան:

Իսկ խոստովանահայր՝ գտեք մեկ ուրիշին:

ԳԵՑ.— Դու ես լինելու կամ ուրիշ ոչ ոք:

ՀԱՅՆՐԻՒ.— Ուրեմն, ոչ ոք: (Ուզում է դուրս գալ):

ԳԵՑ.— Հե՛յ, հե՛յ:

Հայնրիխը կանգ է առնում:

Դու թույլ ես տալիս, որ նա մեռնի առանց մեղքերի թողությունա՞ն:

ՀԱՅՆՐԻՒ (դանդաղ վերադառնում է).— Չե՛ խեղկատա՛կ, չե՛, դու իրավացի ես: Ես այդ չեմ կարող: (Նաստիին): Ծնրադրի՛ր: (Դադար): Չե՛ս ուզում: Իմ հանցանքը, եղբա՛յր իմ,

Եկեղեցու վրա չի տարածվում: Եվ Եկեղեցու անունից է, որ
ես թողություն պիտի տամ քո մեղքերին: Կուզե՞ս բոլորի առ-
ջև հանցանքս խոստովանեմ: (**Բոլորին**): Քինոտությունն ու
նենգությունը ինձ դրդեցին, և ես հանձնեցի իմ հարազատ
քաղաքը՝ բնակիչներին դատապարտելով կոտորածի: Ես ար-
ժանի եմ համընդհանուր քամահրանքի: Թքի՛ր իմ երեսին, և
էլ չխոսենք այդ մասին:

Նաստին տեղից չի շարժվում:

Դո՛ւ թքիր, զինվո՛ր:

ՖՐԱՆՑ (զվարթացած Գեցին).— Թքե՛մ:

ԳԵՑ (բարեհամբույր).— Թքի՛ր, տղա՛ս, զվարճացի՛ր:

Ֆրանցը թքում է:

ՀԱՅՆՐԻԽ.— Ահա և կատարվեց: Հայնրիխը մահացավ ամոթից:
Մնաց քահանան: Մի պատահական քահանա. նրա առջև է,
որ դու պիտի ծնրադրես: (**Մի պահ սպասելուց հետո, հան-
կարծակի խփում է նրան**): Մարդասպա՛ն: Ես, երևի, խելա-
գարվել եմ, որ քո առջև ստորանում եմ, երբ այս ամեն ին-
չում դու ես մեղավորը:

ՆԱՍՏԻ.— Ես՝ մեղավո՛ր:

ՀԱՅՆՐԻԽ.— Այո՛, այո՛, քո մեղքն է: Դու ուզեցիր խաղալ մար-
գարեի դերը, և ահա պարտված ես, գերի, կախադանի մաս-
ցու: Եվ պիտի մեռնեն բոլոր նրանք, ովքեր քեզ վատահեցին:
Բոլորը, բոլորը, հա՛, հա՛: Հավակնություն ունեիր, թե դու
գիտես, ինչպես պետք է սիրել չքավորներին, իսկ ես, իբր,
չգիտեմ: Է՛հ, հիմա տեսնո՞ւմ ես՝ ինձանից ավելի դու նրանց
չարիք պատճառեցիր:

ՆԱՍՏԻ.— Քեզանից ավելի՞, կեղտո՛տ սրիկա:

Հարձակվում է Հայնրիխի վրա: Նրանց բաժանում են:

Ո՛վ դավաճանեց, ե՛ս, թե՛ դու:

ՀԱՅՆՐԻԽ.— Ե՛ս, ե՛ս, ե՛ս: Բայց ես երբեք չեի դավաճանի, եթե
դու չսպանեիր Եպիսկոպոսին:

ՆԱՍՏԻ.— Աստված ինձ հրամայեց խփել նրան, որովհետև ճա-
սովի էր մատնում չքավորներին:

ՀԱՅՆՐԻԽ.— Աստվա՞ծ, իսկապե՛ս: Ա՛յ քեզ պարզ ու հասարակ
պատասխան: Ուրեմն. Աստված ինձ հրամայեց դավաճանել
չքավորներին, որովհետև նրանք ուզում էին կոտորել վանա-
կաններին:

ՆԱՍՏԻ.— Աստված չի կարող հրամայել, որ մեկը դավաճանի քավորներին: Ինքը հրանց հետ է:

ՀԱՅՆՐԻԽ.— Եթե ինքը հրանց հետ է, ապա ինչո՞ւ միշտ էլ ձայնողվում են հրանց խոսվությունները: Եվ ինչի՞ց է, որ այսօր նա թույլ տվեց, որ քո ապստամբությունը խեղդվի հուսահատության մեջ: Դե՛, պատասխանի՛ր, պատասխանի՛ր, պատասխանի՛ր վերջապես: Չե՞ս կարող:

ԳԵՑ.— Ահա, ահա գերագույն պահը: Ահա տագնապն ու արնախառն քրտիկը: Այդպես է, որ կա. բարի է տագնապը: Ինչքա՞ն մեղմ է քո դեմքը: Ես նայում եմ դեմքիդ և զգում եմ, որ քսան հազար մարդ մեռնելու է: Ես քեզ սիրում եմ: (Համբուրում է նրա շրթունքները): Լսի՛ր, եղբա՛յր իմ, խաղը չի ավարտված: Ես որոշել եմ Ուորմսը գրավել, բայց եթե Աստված քեզ հետ է, ինչ-որ բան կարող է պատահել, որ ինձ կասեցնի:

ՆԱՍՏԻ (խուլ ձայնով և համոզվածությամբ).— Մի բան պիտի պատահի:

ՀԱՅՆՐԻԽ (ճշալով).— Ոչի՛նչ: Բացարձակապես ոչի՛նչ: Ոչի՛նչ չի պատահելու: Չէ՞ որ դա անչափ անարդարացի պիտի լիներ: Եթե Աստված հրաշք էր անելու, ապա ինչո՞ւ այն պիտի արած չլիներ, նախքան իմ դավաճանությունը: Ինչո՞ւ նա ինձ կորստյան մատնեց, երբ նա քեզ փրկում է:

Ներս է մտնում մի սպա: Բոլորը ցնցվում են:

ՍՊԱ.— Ամեն ինչ պատրաստ է: Ջինվորները շարքի են կանգնած ձորի բերանին, սայլակառքերի ետևը:

ԳԵՑ.— Արդե՛ն: (Դադար): Գնա՛, հայտնի՛ր կապիտան Ուլրիխին, որ ես գալիս եմ:

Սպան դուրս է գալիս: Գեցն իրեն զգում է մի աթոռի:

ԿԱՏՐԻՆ.— Ահա քո հրաշքը, սիրելի՛ս:

Գեցը ձեռքը սահեցնում է դեմքի վրայով:

Գնա՛ թալանիր և կոտորիր: Բարի՛ գիշեր:

ԳԵՑ (սկզբում հոգնածությամբ, որն աստիճանաբար փոխվելու է շինճու ոգևորության).— Հրաժեշտի պահն է: Երբ վերադառնամ, պիտի լինեմ ոտից գլուխ արնաթաթախ, ու վրանս թափուր է լինելու: Ափսոս, ես ձեզ արդեն ընտելացել էի: (Նստտիին և Հայնրիխին): Գիշերը դուք կանցկացնեք միասին, ինչպես մի զույգ սիրահարներ: (Հայնրիխին): Տես, չմոռա-

նաս, ձեռքը ձեռքումդ պահիր մեղմ ու քնքուշ, երբ նրան լուկեն շիկացած արցաններով: (**Ֆրանցին, մատնացույց անելով Նաստիին**): Եթե համաձայնվի խոստովանանքի արարողությանը, լկանքն անմիջապես կդադարեցնեք: Երբ արդեն ապաշխարած լինի, կախեցե՛ք նրան: (**Կարծես նոր հիշում է Կատրինի գոչությունը**): Ա՛հ, հարսնացուն, Ֆրա՛նց, կգնաս, կգտնես ձիապաններին և տիկնոջը կներկայացնես նրանց: Սպանելուց բացի, թող հետը վարվեն, ինչպես ուզում են:

ԿԱՏՐԻՆ (հանկարծ նետվում է ծնկի).— Գթություն: Գե՛ց: Այդ պետք չէ: Ոչ այդ նողկանքը: Գթություն:

ԳԵՑ (զարմացած ընկրկում է).— Քիչ առաջ այնպե՛ս ամբարտավան էիր... չէիր հավատում:

Կատրինը գրկում է նրա ծնկները:

Ֆրա՛նց, ինձ ազատի՛ր նրանից:

Ֆրանցը նրան վերցնում, շարտում է անկողնու վրա:

Ահա, այդպես, այդպես: Որևէ բան չմոռացա՛... Ո՛չ: Կարծեմ՝ այսքանն էր ընդամենը: (**Դադար**): Հրաշքը չկա ու չկա: Սկըսում եմ հավատալ, որ Աստված ձեռքերս լրիվ արձակել է: Ծնորհակալ եմ, Աստված իմ, շատ շնորհակալ եմ: Ծնորհակալություն բռնաբարված կանանց համար, շնորհակալություն ցցի բարձրացված երեխաների համար: Ծնորհակալություն գրլխատված տղամարդկանց համար: (**Դադար**): Եթե խոսել ուզենայի, ինչե՛ր կասեի, հաչե՛, կեղտո՛տ նենգամիտ: Լսի՛ր, Նաստի՛, ես քեզ ճիշտը կասեմ՝ ես Աստծո կամակատարն եմ: Տեսնում ես, չե՞, այս գիշեր նույնպես: Էհ, ի՞նչ անեմ, որ նա ինձ դրդեց գործելու իր հրեշտակների օգնությամբ:

ՀԱՅՆՐԻԽ.— Իր հրեշտակների օգնությամբ:

ԳԵՑ.— Հենց դուք՝ բոլորդ: Կատրինն, անկասկած, հրեշտակ է: Դու՛ն՝ նույնպես: Դրամատերը՝ նույնպես: (**Շրջվելով Նաստի կողմը**): Իսկ այս բանալի՞ն: Ես այն խնդրե՛լ եմ նրանից: Մտքովս անգամ չէր անցնում դրա գոյությունը: Բայց հարկ եղավ, որ նա հանձնարարի իր քահանաներից մեկին, որ վերջինս իմ ձեռքում դնի այս բանալին: Դու, բնականաբար, գիտես, թե նա ինչ է ուզում. որ ես փրկեմ նրա քահանա-վանականներին ու կույսերին: Ուստի զգուշորեն նա ինձ ենթարկում է գայթակղության, առիթներ է ստեղծում՝ ձևանալով, թե ինքը անշահախնդիր է: Եթե ծուղակն ընկնեմ, նա իրավունք ու-

նի իմ վրա բարդելու պատասխանատվությունը: Վերջ ի վերջո, չէ՞ որ ես կարող էի ձորը նետել այս բանալին:

ՆԱՍՏԻ.— Այո՛, իհարկե, դու կարող էիր: Դու դեռ կարող ես:

ԳԵՑ.— Այդպես չի լինի, հրեշտակ իմ, դու գիտես, դու գիտես, որ ես չեմ կարող:

ՆԱՍՏԻ.— Ինչո՞ւ չէ:

ԳԵՑ.— Որովհետև ես ես եմ, ուրիշը լինել չեմ կարող: Ի՞նչ կա որ... ես մի լավ լոգանք կընդունեմ արյան բաղնիքում՝ իրեն ծառայություն մատուցելու համար: Բայց երբ ավարտված լինի, նա քիթն անգամ պիտի ծածկի և պիտի գոռոռա, որ չէ, ինքը այդ չի կամեցել: Տե՛ր, դու այդ չես կամենում, ճի՛շտ է: Ուրեմն, դեռ ժամանակ ունես, որ ինձ կասեցնես: Ես չեմ պահանջում, որ երկինքը փլվի իմ գլխին. մի հատ թքես՝ բավական է: Ոտս դնեմ վրան, սահեմ, սայթաքեմ, մի տեղս ջարդվի, և այսօրը ավարտված կլինի: Ո՛չ, լա՛վ, լա՛վ, ես չեմ պնդում: Տեսնո՞ւմ ես, ահա, նայի՛ր այս բանալուն. լավ բան է, չէ՞, բանալին. օգտակար է: Եվ ահա ձեռքեր. ինչ հիանալի՞ կերտվածք է: Աստծուն պետք է փառավորենք, որ մեզ ձեռքեր է տվել: Ուրեմն մի բանալի մի ձեռքի մեջ՝ դա ի՞նչ վատ բան է, որ... Աստծուն փառավորենք բոլոր ձեռքերի համար, որոնք բանալի են բռնել այս պահին, աշխարհի բոլոր ծայրերում: Բայց թե ձեռքս բանալիով ինչ կանի՝ Տերը հրաժարվում է ամեն պատասխանատվությունից: Դա նրան չի վերաբերում, խե՛ղճ Աստված: Այո՛, Տե՛ր, դուք մարմնացյալ անմեղություն եք. դուք, որ լիության չափանիշ եք, ինչպե՞ս կարող եք հասկանալ ու գիտակցել Չգոյությունը: Չեր նայվածքը լույս է և ամեն ինչ փոխարկում է լույսի. այդ ինչպե՞ս եք ճանաչելու իմ սրտի աղջամուղջը: Եվ ձեր անսահման իմացությունը ինչպե՞ս կկարողանա մտքերի խորքը թափանցել՝ ցաքուցրիվ չանելով դրանց ընթացքը: Ատելություն ու թուլություն, բռնություն, մահ, նողկանք. մարդն ինքն է միայն այդ ամենի ակունքը: Այդ միայն իմ տիրակալությունն է, և ես մեռնակ եմ այդտեղ: Ինչ էլ պատահի իմ ներսում, ես եմ միակ պատասխանատուն: Դե՛, լա՛վ, լա՛վ, ես ամեն ինչն ինձ վրա եմ վերցնում ու ոչինչ էլ չեմ ասելու վերջին դատաստանի օրը՝ ը՛մ, բերանս կփակեմ: Ես շատ եմ հպարտ: Սուսուփոս թույլ կտամ, որ ինձ դատապարտեք: Բայց մի

քիչ, մի քշիկ էլ անհարմար չե՞ք զգա, որ հավերժական անեծքի եք դատապարտում ձեր կամակատարին: Գնում եմ, գնում եմ. զինվորներն ինձ սպասում են: Հրաշալի բանալին ինձ քշում է այնտեղ, տեսնում է հասնել իր ծննդավայր կողպեքին: **(Դուրս գալու պահին Գեցը շրջվում է):** Ճանաչո՞ւմ եք մեկ ուրիշին, որ ինձ նման լինի: Ես այն մարդն եմ, որն Ամենաբարձրյալին նեղն է գցում: Ի դեմս ինձ, Աստված գարշում է ինքն իրենից: Կա քսան հազար ազնվական, երեսուն արքեպիսկոպոս, տասնհինգ թագավոր: Այս աշխարհի վրա մարդիկ միաժամանակ տեսել են երեք կայսր, մի Հռոմի Պապ, մի հակապապ, բայց հիշատակեցե՛ք, տեսնեմ, մի ուրիշ Գեց: Երբեմն Դժոխքը պատկերացնում եմ որպես մի անապատ, որը միայն ինձ է սպասում: Մնա՛ք բարով:

Ուզում է դուրս գալ: Հայնրիխը պոռթկում է ծիծաղից:

Ի՞նչ կա:

ՀԱՅՆՐԻԽ.— Դժոխքը մրջնակոց է, ապո՛ւշ:

Գեցը կանգ է առնում և նայում է նրան: Հայնրիխը դիմում է մյուսներին:

Ահա ամենատարօրինակ պատրանքը. մարդուն թվում է, թե ինքն է միակ չարագործը: Ամեն գիշեր գերմանական հողը լուսավորվում է կենդանի ջահերով: Այս գիշեր, ինչպես ամեն գիշեր, տասնյակ քաղաքներ են հրդեհվում, և զորավարները թալանում են առանց այսքան երկար-բարակ շաղակրատելու: Աշխատանքային օրերին սպանում են, իսկ կիրակի օրը խոնարհաբար ծնրադրում են հանուն խոստովանանքի: Բայց այս մեկը իրեն անձամբ Սատանայի տեղն է դրել, որովհետև կատարում է իր զինվորական պարտքը: **(Գեցին):** Եթե դու Սատանան ես, խեղկատա՛կ, ապա ե՛ս ուլ եմ, ես, որ հավակնում էի սիրել թշվառներին և նրանց կյանքը դրիքո ոճրագործ ձեռքերի մեջ:

Այս ամբողջ ռեպիկի ընթացքում Գեցը կլանված նայում է նրան: Վերջում ինքն իրեն ցնցում է:

ԳԵՑ.— Դու ի՞նչ ես պահանջում. նզովքի արժանանալու իրավո՞ւնքը: Քեզ այդ իրավունքը տալիս եմ: Դժոխքը բավականաչափ մեծ է, որ ես քեզ այնտեղ չհանդիպեմ:

ՀԱՅՆՐԻԽ.— Իսկ մյուսների՞ն:

ԳԵՑ.— Ի՞նչ մյուսներ:

ՀԱՅՆՐԻՒՄ.— Բոլոր մյուսներին: Բոլորին չէ, որ տրվում է սպանելու հնարավորությունը, բայց չէ՞ որ բոլորն էլ այրվում են այդ ցանկությունից:

ԳԵՑ.— Իմը ուրիշ է: Նրանք Չարիք են գործում հանուն պագշտության կամ շահից դրդված: Ես Չարիքը գործում եմ հանուն Չարիքի:

ՀԱՅՆՐԻՒՄ.— Ի՞նչ կարևոր են պատճառները, երբ սահմանված է, որ մարդը միայն Չարիք կարող է գործել:

ԳԵՑ.— Սահմանված է:

ՀԱՅՆՐԻՒՄ.— Այո՛, խեղկատա՛կ, սահմանված է:

ԳԵՑ.— Այդ ո՞վ է սահմանել:

ՀԱՅՆՐԻՒՄ.— Ինքը՛ Աստված: Աստված կամեցել է, որ Բարությունը երկրի վրա լինի անկարելի:

ԳԵՑ.— Անկարելի՞:

ՀԱՅՆՐԻՒՄ.— Բոլորովին անկարելի. Սերը՛ անկարելի, Արդարությունը՛ անկարելի: Դե՛, փորձի՛ր սիրել քո մերձավորին և կոտանես, թե ինչ կատացվի:

ԳԵՑ.— Եվ ինչո՞ւ չէի սիրի, որ... եթե այդ լիներ իմ քմահաճույքը:

ՀԱՅՆՐԻՒՄ.— Որովհետև բավական է, որ միայն մեկ մարդ ատի մեկ ուրիշին, որ ատելությունը, մեկից մյուսին անցնելով, նրվաճի ողջ մարդկությունը:

ԳԵՑ (իր միտքը շարունակելով).— Բայց չէ՞ որ այս մարդը սիրում էր չքավորներին:

ՀԱՅՆՐԻՒՄ.— Նրանց նա ստում էր հմտորեն, գրգռում էր նրանց ամենաստոր կրքերը և նրանց դրդեց սպանել մի ծերունու: (Դադար): Ես ի՞նչ կարող էի անել, հը՞, ի՞նչ կարող էի անել: Ես անմեղ էի, և ոճիրը գողի նման վրաս նետվեց: Այն ժամանակ այդ ո՞ր էր կորել Բարությունը, քի՛ճ: Որտե՞ղ էր նա: Որտե՞ղ էր նվազագույն չարիքը: (Դադար): Ինքդ քեզ դեսուդեն ես գցում վասն ոչնչի, դու՛ պարծենկոտդ ամենայն մոլորությունների: Եթե ուզում ես արժանանալ Դժոխքին, բավական է, որ դու հանգիստ պառկես քո անկողնում: Աշխարհն անարդար է. դու մեղսակից ես, եթե այն ընդունում ես. դու դահիճ ես, եթե այն փոփոխում ես: (Ծիծաղում է): Հա՛, երկրի գարշահոտությունը հասնում է աստղերին:

ԳԵՑ.— Ուրեմն, բոլորս էլ նզովյա՞լ ենք:

ՀԱՅՆՐԻՒՄ.— Օ՛, ո՛չ: Ոչ բոլորս: (Դադար): Ես հավատացյալ եմ,

Աստված իմ, ես հավատացալ եմ: Չեմ ընկնի հուսահատու-
թյան մեղքի մեջ: Մինչև ողնուծուծս ես ապականված եմ,
բայց գիտեմ՝ ինձ կփրկես, եթե դու այդ որոշել ես: **(Գեցի՛ն):**
Մենք բոլորս հավասարապես մեղավոր ենք, բի՛ն, բոլորս
հավասարապես արժանի ենք Դժոխքին, բայց Աստված նե-
րում է, երբ տրամադրություն ունի ներելու:

ԳԵՑ.— Բայց նա չի կարող ինձ ներել անկախ իմ կամքից:

ՀԱՅՆՐԻԽ.— Թշվառակա՛ն ծղոտ, դու ինչպե՛ս կարող ես մար-
տընչել նրա ողորմածության դեմ: Նրան ինչպե՛ս կհանես
անսահման համբերությունից: Եթե ուզի, նա երկու մատով
քեզ կվերցնի, կբարձրացնի իր Դրախտը: Նա ճկույթի մի
հարվածով կցնդեցնի քո հոռի դիտավորությունները, ուժով
կբացի քո այդ երախը, մեջը լիքը կխցկի իր բարեգթությու-
նը, և դու կզգաս, որ անկախ քո կամքից դարձել ես բարի:
Գնա՛, գնա՛ Ուորմսը հրդեհի՛ր, գնա՛ թալանիր ու մորթի՛ր.
Իզուր կորցնում ես ջանք ու ժամանակ: Օրերից մի օր դու քեզ
կգտնես Քավարանում, ինչպես բոլորը:

ԳԵՑ.— Ուրեմն բոլոր մարդիկ Չարի՛ք են գործում:

ՀԱՅՆՐԻԽ.— Բոլորը:

ԳԵՑ.— Ու ոչ ոք երբևէ Բարություն չի՞ գործել:

ՀԱՅՆՐԻԽ.— Ոչ ոք:

ԳԵՑ.— Սքանչելի է: **(Վերադառնում է վրանի մեջտեղը):** Քեզ
հետ գրազ եմ գալիս, որ ես այն գործելու եմ:

ՀԱՅՆՐԻԽ.— Ի՞նչ ես գործելու:

ԳԵՑ.— Բարություն: Գրազ գալի՛ս ես:

ՀԱՅՆՐԻԽ (ուտերը սեղմելով).— Չէ՛, բի՛ն, ես ոչնչի վրա գրազ
չեմ գալիս:

ԳԵՑ.— Իզուր: Դու ինձ հայտնում ես, որ Բարությունն անկարելի
է, և ես գրազ եմ գալիս, որ գործելու եմ Բարություն: Թերևս
դա միայնակ լինելու լավագույն ձևն է: Ես չարագործ էի.
Ինքս ինձ փոփոխում եմ. բաճկոնս շուր եմ տալիս և գրազ
եմ գալիս, որ սուրբ կդառնամ:

ՀԱՅՆՐԻԽ.— Ո՛վ կվճռի, թե դա քեզ հաջողվել է:

ԳԵՑ.— Դու ինքդ, մի տարի և մի օր հետո: Քեզ մնում է միայն
գրազն ընդունել:

ՀԱՅՆՐԻՍ.— Եթե գրագ ևս գալիս, հենց նախօրոք կորցնում ես, ապո՛ւշ: Դու Բարությունը գործելու ես գրագը շահելու համար:

ԳԵՑ.— Ծիշտ է: Որ այդպես է, ևկեք զառ գցենք: Եթե ես շահեմ, Չարիքն է հաղթանակում... Եթե կորցնեմ... ա՛հ, եթե կորցրեմ, չեմ էլ կասկածում, թե ինչ եմ անելու: Դե՛, ո՞վ է խաղում: Նաուտի՞:

ՆԱՍՏԻ.— Ձէ:

ԳԵՑ.— Ինչո՞ւ չէ:

ՆԱՍՏԻ.— Վատ է:

ԳԵՑ.— Իհարկե, դա վատ է: Իսկ ի՞նչ էիր կարծում: Լսի՛ր, հացթո՛ւլս, ես դեռ չար եմ:

ՆԱՍՏԻ.— Եթե ուզում ես Բարությունը գործել, որոշի՛ր և այն գործի՛ր պարզ ու հասարակ:

ԳԵՑ.— Ես ուզում եմ Տիրոջը դեմ տալ պատիհն: Այս անգամ այո՛ւն է կամ ոչ-ը: Եթե ըստ նրա կամոք ես շահելու եմ, ուրեմն քաղաքը պիտի հրդեհվի, և նա՛ կլիճի հիմնավորապես պատասխանատու: Դե՛, խաղա՛: Եթե Աստված քեզ հետ է, դու չպետք է վախենաս: Ձե՛ս համարձակվում, վախկո՛տ: Դու նախընտրում ես, որ քեզ կախեն: Ո՞վ կհամարձակվի:

ԿԱՏՐԻՆ.— Ես:

ԳԵՑ.— Դո՛ւ, Կատրի՛ն: **(Նայում է նրան):** Ինչո՞ւ չէ: **(Չառերը տալիս է նրան):** Գցիր:

ԿԱՏՐԻՆ **(զգում է զառերը)**.— Երկու և մեկ: **(Ցնցվում է):** Քեզ դժվար կլիճի կորցնելը:

ԳԵՑ.— Ձեզ ո՞վ է ասում, որ ես ցանկանում եմ կորցնել: **(Չառերը դնում է բաժակի մեջ):** Տե՛ր, ես քեզ դեմ եմ տվել պատիհն: Եկել է քո ժամանակը որոշում ընդունելու: **(Չառերը զգում է):**

ԿԱՏՐԻՆ.— Մեկ և մեկ... դու կորցրիր:

ԳԵՑ.— Ուրեմն ես կհնազանդվեմ Աստծո կամքին: Մնա՛ս բարով, Կատրի՛ն:

ԿԱՏՐԻՆ.— Ինձ գրկիր:

Գեցը գրկում է նրան:

Գնա՛ս բարով, Գե՛ց:

ԳԵՑ.— Վերցրու այս քսակը և ուր ուզում ես գնա: **(Ֆրանցին):**
Ֆրա՛նց, գնա՛ կապիտան Ուլրիխին ասա, որ զինվորները
քնեն, հանգստանան: Դու՛ Նաստի՛, վերադարձիր քաղաք.
դեռ ժամանակ ունես խոսվությունը կատեցնելու: Եթե արշա-
լույսին դուք դարպասները բացեք, եթե քահանաները ողջ-
ատողջ դուրս գան քաղաքից և մոտս ապաստանեն, ապա
կեսօրին ես պաշարումը կվերացնեմ: Համաձա՛յն ես:

ՆԱՍՏԻ.— Համաձայն եմ:

ԳԵՑ.— Դու նորից գտա՞ր քո հավատը, մարգարե՛:

ՆԱՍՏԻ.— Ես այն երբեք չէի կորցրել:

ԳԵՑ.— Բախտավո՛ր:

ՀԱՅՆՐԻՒՍ.— Դու նրանց վերադարձնում ես ազատությունը, դու
նրանց վերադարձնում ես կյանքն ու հույսը: Բայց ինձ, շո՛ւն,
ինձ, որին դու հարկադրեցիր դավաճանել, ինձ վերադարձնե-
լո՞ւ ես մաքրությունը:

ԳԵՑ.— Մաքրությունը նորից գտնելը քո անձնական գործն է:
Վերջին հաշվով, որևէ մեծ չարագործություն տեղի չունեցավ:

ՀԱՅՆՐԻՒՍ.— Կարևորն այն չէ, ինչ տեղի ունեցավ: Մտադրու-
թյունս էր կարևորը: Ես քեզ պիտի հետևեմ, կտեսնես, քեզ
պիտի հետևեմ քայլ առ քայլ, օր ու գիշեր: Ի՛նձ դու կարող
ես ապավինել քո արարքների հաշվեկշիռը: Եվ կարող ես
չանհանգստանալ. մի տարի և մի օր հետո, ուր էլ որ գնաս,
ես ներկա կլինեմ ժամադրությանը:

ԳԵՑ.— Բացվում է այգաբացը: Ինչքա՛ն ստոն է: Այգաբացն ու
Բարությունը մտան իմ վրանը: Բայց մենք չդարձանք ավելի
զվարթ: Այս կինը լալիս է: Այս քահանան ինձ ատում է: Կար-
ծես աղետ պատահած լինի: Գուցե Բարությունը հուսահա-
տություն է ներշնչում... Ինձ համար դա արդեն կարևոր չէ:
Ես կոչված եմ Բարություն գործելու և ոչ թե դատողություն-
ներ անելու նրա մասին: Մնա՛ք բարով: **(Դուրս է գալիս):**

ԿԱՏՐԻՆ (արտասովելու չափ ծիծաղելով).— Նա խարդախեց: Ես
տեսա, ես տեսա: Նա խարդախեց, որ կորցնի:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ

ՊԱՏԿԵՐ ԶՈՐՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ Ա

ԿԱՐԼ, ԵՐԿՐԻ ԳՅՈՒՂԱՑԻ

ԱՌԱՋԻՆ ԳՅՈՒՂԱՑԻ.— Տուրուդմփոցի հաշիվ է, հա՞...

ԿԱՐԼ.— Բարոններն են. գիտե՞ս, ինչպես են փրփրել:

ԱՌԱՋԻՆ ԳՅՈՒՂԱՑԻ.— Իսկ որ վախենա և հրաժարվի:

ԿԱՐԼ.— Ոչ մի կասկած չկա. նա էջի պես համառ է: Թաքնվե՛ք.
ահա գալիս է:

ՏԵՍԱՐԱՆ Բ

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐ՝ թաքնված, ԳԵՑ, ԿԱՐԼ

ԳԵՑ.— Եղբա՛յր իմ, կբարեհաճե՞ս մեզ համար գինի բերել: Երեք
բաժակը բավական է. ես չեմ խմում: Դու այդ կատարիր հա-
նուն այն սիրո, որ տաճում ես իմ նկատմամբ:

ԿԱՐԼ.— Ես այդ կկատարեմ հանուն այն սիրո, որ տաճում եմ
քո նկատմամբ, եղբա՛յր իմ:

Գեցը դուրս է գնում: Գյուղացիները թաքստոցից դուրս են
գալիս, ծիծաղում ու խփում են իրենց ազդրերին:

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐ.— Եղբա՛յր իմ, եղբայրի՛կ, ապերի՛կ: Առ հա,
հանուն այն սիրո՞, որ տաճում եմք քո նկատմամբ: (Ծիծա-
ղում ու բաց ափով խփում են միմյանց):

ԿԱՐԼ (բաժակները սկուտեղին շարելով).— Բոլոր ծառաները նը-
րա եղբայրներն են: Նա ասում է, որ սիրում է մեզ: Նա մեզ
շողոքորթում է և երբեմն համբուրում: Երեկ նա հաճույքով
նոտքերս լվաց: Ինչպիսի՞ ազնիվ տեր, ինչպիսի՞ բարի եղ-
բայր, թո՛ւհ: (Թքում է): Այդ բառը բերանս դառնացնում է,
և ես ամեն անգամ էլ թքում եմ՝ արտասանելուց հետո: (Թը-

քում է): Ինձ եղբայր անվանած լինելու համար մի օր նրան պիտի կախեն: Եվ երբ պարանն անցկացնեն նրա վիզը, ես համբուրելու եմ նրա շրթունքները և ասելու եմ. «Բարո՛ւ գնաս էն աշխարհը, ապերի՛կ, մահացի՛ր հանուն այն սիրո, որ տաժում ես իմ նկատմամբ»: **(Դուրս է գնում՝ տանելով սկուտեղն ու բաժակները):**

ԱՌԱՋԻՆ ԳՅՈՒՂԱՑԻ.— Ա՛յ, ինչ եմ ասել. ահա քեզ իսկական տղամարդ: Հեքիաթներով չես խաբի նրան:

ԵՐԿՐՈՐԴ ԳՅՈՒՂԱՑԻ.— Ինձ ասացին, որ նա կարդալ գիտի:

ԱՌԱՋԻՆ ԳՅՈՒՂԱՑԻ.— Յա՛...

ԿԱՐԼ (վերադառնալով).— Ահա ձեզ իմ հրամանները: Շրջեցեք Նոսաքի և Շուլհայմի կալվածքներով: Լուրը հաղորդեք նույնիսկ ամենահամեստ հյուղակներում՝ «Գեցը Հայդենշտամի հողերը բաժանում է գյուղացիներին»: Թող շունչ քաշեն մի քիչ, ապա ավելացրեք. «Եթե այդ անտաակը, եթե այդ բիճը հրաժարվում է իր հողերից, ապա ինչո՞ւ Շուլհայմի վեհագույն տիրակալը չի հետևում նրա օրինակին»: Նրանց մի լավ մշակեցեք, թող գայրույթից գազազեն: Խոսվություն սերմանեք ամենուրեք: Դե՛, գնացե՛ք:

Գյուղացիները դուրս են գալիս:

Գե՛ց, եղբա՛յր իմ սիրելի, հիմա կտեսնես, թե ինչպես եմ խեղաթյուրելու քո բարի գործերը: Բաշխիր քո հողերը, աջ ու ձախ բաժանիր. մի օր պիտի զղջաս, թե ինչու չես մահացել նախքան բաժանելը: **(Միծաղում է):** Սեր ես ուզում: Ամեն օր ես քեզ հագցնում, մերկացնում եմ, տեսնում եմ քո պորտը, քո ոտքերի մատները, քո հետույքը, և ուզում ես, որ ես քեզ սիրեմ: Ես քեզ սիրել ցույց կտամ: Կոնրադը չոր ու կոպիտ էր, բայց նրա հայհոյանքներն ինձ ավելի քիչ էին վիրավորում, քան քո այդ բարությունը:

Նաստին ներս է մտնում:

Դու ի՞նչ ես ուզում:

ՏԵՍԱՐԱՆ Գ

ԿԱՐԼ, ՆԱՍՏԻ

ՆԱՍՏԻ.— Գեցն ինձ կանչել է տվել:

ԿԱՐԼ.— Նաստի՛:

ՆԱՍՏԻ (Արան ճանաչելով).— Այդ դու ես:

ԿԱՐԼ.— Դու Գեցին ճանաչո՞ւմ ես. այ թե լավ ծանոթ ունես, հա՞:

ՆԱՍՏԻ.— Դա քեզ չի վերաբերում: (**Ռադար**): Կա՛րլ, ես գիտեմ, թե դու ինչ ես ծրագրել: Խելոք բան արած կլինես, եթե տեղդ հանգիստ մնաս և սպասես իմ հրամաններին:

ԿԱՐԼ.— Գյուղացու ինչի՞ն եմ պետք քաղաքում ապրողի հրամանները:

ՆԱՍՏԻ.— Այդ օյինը չբանեցնես, թե չէ քեզ կախել կտամ:

ԿԱՐԼ.— Զգուշացիր, որ դու ինքդ չճոճվես կախադանին: Նախ՝ այստեղ ի՞նչ գործ ունես դու: Խտոր հաշիվ կա մեջտեղը: Գեցի հետ բանակցում ես, հետո գալիս ես մեզ խորհուրդ տալու, որ խոսվություն չբարձրացնենք: Ի՞նչ իմանամ, որ դու չես ծախվել:

ՆԱՍՏԻ.— Ե՞ս ինչ իմանամ, որ դու չես ծախվել՝ բարձրացնելով դեռ չհասունացած խոսվությունը, որպեսզի տերերը այն ճրգմել կարողանան:

ԿԱՐԼ.— Ահա և Գեցը:

ՏԵՍԱՐԱՆ Դ

ԳԵՑ, ՆԱՍՏԻ, ԲԱՐՈՆՆԵՐ

Գեցը ներս է մտնում՝ ընկրկելով: Բարոններ Շուլհայմը, Նոսաքը և Ռիտչելը Արան շրջապատում ու գոռգոռում են:

ՆՈՍԱՔ.— Դու թքած ունենաս գյուղացիների վրա: Քո նպատակը մեզ ոչնչացնելն է:

ՇՈՒԼՀԱՅՄ.— Դու ուզում ես մեր արյան մեջ լվանալ մորդ անանակությունները:

ՆՈՍԱՔ.— Եվ դառնալ գերմանական ազնվականության գերեզմանափորը:

ԳԵՑ.— Եղբայրներ՛ր, իմ շատ սիրելի՛ եղբայրներ, ես նույնիսկ չգիտեմ ինչի մասին եք խոսում:

ՌԻՏՉԵԼ.— Դու չգիտե՞ս, որ քո նվիրատվությունը կայծ պիտի լինի վատողի պահեստում: Որ մեր գյուղացիները պիտի գազազեն, եթե տեղնուտեղը Արանց չնվիրենք մեր հողերը, ոսկին, մինչև իսկ մեր շապիկները՝ և մեր օրհնությունը ի հավելումն այդ ամենի:

ՇՈՒԼՀԱՅՄ.— Դու չգիտե՞ս, որ նրանք գալու են պաշարեն մեր դղյակները:

ՌԻՏՉԵԼ.— Որ մեզ վիճակված է սնանկանալ, եթե հոժար լինենք, կամ թե մեռնել, եթե նրանց մերժենք:

ՆՈՍԱՔ.— Դու այդ չգիտե՞ս:

ԳԵՑ.— Իմ շատ սիրելի՛ եղբայրներ...

ՇՈՒԼՀԱՅՄ.— Արի ձեռ քաշիր այդ քաղցր-մեղցր խոսքերից: Դու մեզ ասա՛ հրաժարվո՞ւմ ես քո մտադրությունից: Պատասխանի՛ր՝ այո կամ ոչ:

ԳԵՑ.— Իմ շատ սիրելի՛ եղբայրներ, ներեցե՛ք ինձ... ոչ:

ՇՈՒԼՀԱՅՄ.— Դու մարդասպան ես:

ԳԵՑ.— Այո, եղբա՛յր իմ, ինչպես բոլորը:

ՇՈՒԼՀԱՅՄ.— Բի՛ն:

ԳԵՑ.— Այո, ինչպես ինքը՝ Հիսուս Քրիստոսը:

ՇՈՒԼՀԱՅՄ.— Կղկղանքի տոպրակ, երկրի արտաթորա՛նք: (**Բռնունցքով հարվածում է նրա դեմքին**):

Գեցը սայթաքում է, ապա ուղղվում, հարձակվում է վրան:

Բոլորն ընկրկում են: Հանկարծ Գեցը երեսնիվայր փռվում է գետնին:

ԳԵՑ.— Օգնեցե՛ք, հրեշտակներ, օգնեցե՛ք, որ ինքս ինձ տիրապետեմ: (**Ամբողջ մարմնով դողում է**): Եվ չպիտի խփեմ: Իմ աջ ձեռքը կտրելու եմ, եթե խփել ուզենա: (**Գալարվում է հատակին**):

Շուրհայմը ոտքով հարվածում է նրան:

Վարդե՛ր, վարդերի անձրև, փաղաքջանքներ: Աստված ինձ ինչքա՛ն է սիրում: Ես ամեն ինչ ընդունում եմ: (**Կանգնում է**): Ես շնից ծնված բի՛ն եմ, կղկղանքի տոպրակ, դավաճան. աղոթե՛ք ինձ համար:

ՇՈՒԼՀԱՅՄ (նրան հարվածելով).— Հրաժարվելո՞ւ ես քո մտադրությունից:

ԳԵՑ.— Ինձ մի՛ խփեք. կկեղտոտվեն ձեր ձեռքերը:

ՌԻՏՉԵԼ.— Հրաժարվո՞ւմ ես:

ԳԵՑ.— Տե՛ր, ինձ ազատիր նրա երեսին ծիծաղելու արգահատելի ցանկությունից:

ՇՈՒԼՀԱՅՄ.— Աստված...

ՌԻՏՉԵԼ.— Եկե՛ք գնանք, սրա հետ իզուր ժամանակ ենք կորցրնում:

ԳԵՑ (մտտեցում է Նաստիին: Զվարթ).— Ողջո՛ւյն, Նաստի՛, ողջո՛ւյն, եղբա՛յր իմ: Ուրախ եմ քեզ նորից տեսնելու: Ուորմսի պարիսպների տակ երկու ամիս առաջ դու ինձ առաջարկեցիր չքավորների դաշինքը: Դե՛, իմացի՛ր, ես այն ընդունում եմ: Սպասի՛ր, խոսելու հերթը իմն է. ես քեզ լավ լուրեր ունեմ հաղորդելու: Բարություն գործելուց առաջ, ինքս ինձ աւացի, որ ես պետք է այն ճանաչեմ և երկար խորհեցի: Նաստի՛, ես այն ճանաչում եմ: Սեր, սեր, սեր... ահա թե ինչ է Բարությունը... Լավ: Բայց փաստն այն է, որ մարդիկ իրար չեն սիրում: Ի՞նչն է նրանց խանգարում. տնտեսական վիճակների անհավասարությունը, ստրկությունը և թշվառությունը: Ուրեմն հարկավոր է դրանք իսպառ վերացնել: Մինչև այս կետը մենք իրար հետ համաձայն ենք, այնպես չէ՞: Եվ դա զարմանալի չէ ամենևին. ես օգտվել եմ քո տված դասերից: Այո, Նաստի՛, վերջերս, ես քո մասին շատ երկար եմ մտածել: Միայն թե դու Աստծո Թագավորությունն ուզում ես հետաձգել՝ ապավինելով ապագային: Ես ավելի բանիմաց եմ. գտել եմ, թե այն ինչպես հիմնադրեմ, անմիջապես, գոնե երկրի մի անկյունում, այստեղ: Առաջին փուլում հողերս գյուղացիներին եմ բաժանում: Երկրորդ փուլում նույն այդ հողի վրա կազմակերպում եմ առաջին քրիստոնեական հանրությունը. բոլորը իրար հավասար են: Ա՛հ, Նաստի՛, ես գորավար եմ. միում եմ Բարության ճակատամարտը և հավակնում եմ այն շահել անմիջապես, առանց արյունահեղության: Օգնիր ինձ, ուզո՞ւմ ես: Դու գիտես, ինչպես պիտի խոսել չքավորների հետ: Մենք երկուսով Դրախտը պիտի վերկանուցենք, քանզի Տերն ինձ ընտրել է մարդու նախնական մեղքը վերացնելու համար: Ես, նույնիսկ, ահա, անուն եմ գտել իմ ֆալանստերին. ես այն կանվանեմ Արևի Ոստան⁴: Ի՞նչ պատահեց, հը՞, այծի՛ կոտոշ, բերկրանքի՛ գերեզմանափոր. այդ ի՞նչ ունես ինձ հանդիմանելու:

ՆԱՍՏԻ.— Բե՛զ պահիր քո հողերը:

ԳԵՑ.— Ի՞նձ պահեմ հողերը: Եվ դու, Նաստի՛, դո՞ւ ես այդ

խնդրում ինձանից: Գրո՛ղը տանի, ամեն ինչի սպասում էի, բայց ոչ այդ մեկը:

ՆԱՍՏԻ.— Պահի՛ր, մի՛ բաժանիր: Եթե դու մեզ Բարություն ես ցանկանում, տեղդ հանգիստ մնա և գլխավորը՝ ոչ մի փոփոխություն:

ԳԵՑ.— Ուրեմն դո՛ւ էլ այն կարծիքին ես, որ գյուղացիները խոսվություն կբարձրացնեն:

ՆԱՍՏԻ.— Ոչ թե այդ կարծիքին եմ, այլ հաստատ գիտեմ, որ այդպես կլինի:

ԳԵՑ.— Ես այդ պետք է կուսենի: Պետք է նախատեսել, որ խոսվելու եմ քո նեղմիտ ու քարացած հոգին: Քիչ առաջ՝ այդ խոզերը, հիմա էլ՝ դու: Ես իրոք իրավացի եմ, քանի որ դուք այդքան բարձր գոռոռում եք: Հենց այդ էլ ինձ ոգևորում է: Ես այդ հողերը բաշխելու եմ, այն էլ ինչպես եմ բաշխելու... Բարությունը կատարվելու է ի հեճուկս բոլորին:

ՆԱՍՏԻ.— Քեզ ո՞վ խնդրեց, որ նվիրես քո հողերը:

ԳԵՑ.— Հաստատ գիտեմ, որ ես այդ պետք է անեմ:

ՆԱՍՏԻ.— Բայց քեզ ո՞վ խնդրեց:

ԳԵՑ.— Քեզ ասում եմ, չէ՞, որ ես այդ հաստատ գիտեմ: Ես իմ ուղին տեսնում եմ, ինչպես հիմա քեզ եմ տեսնում: Աստված ինձ շնորհել է իր լույսը:

ՆԱՍՏԻ.— Երբ Աստված լոռում է, ամեն մեկն իր ուզածի պես է մեկնաբանում նրա լուռությունը:

ԳԵՑ.— Օ՛, հրաշալի՛ մարգարե: Երեսուն հազար գյուղացի քաղցից մեռնում են. ես ինձ սնանկացնում եմ նրանց թշվառությունը թեթևացնելու համար, և դու ինձ անվրդով հայտարարում ես, որ Աստված ինձ արգելում է փրկել այդ մարդկանց կյանքը:

ՆԱՍՏԻ.— Դո՛ւ, փրկես չքավորների՞ն: Դու միայն նրանց կարող ես այլասերել:

ԳԵՑ.— Բա ո՞վ է փրկելու:

ՆԱՍՏԻ.— Դու նրանց համար մի՛ անհանգստացիր. իրենք իրենց կփրկեն:

ԳԵՑ.— Իսկ ես ի՞նչ եմ լինելու, եթե զրկվեմ Բարություն անելու միջոցներից:

ՆԱՍՏԻ.— Դու գործ ունես. տնօրինիր և ավելացրու քո հարըստությունը: Ահա քեզ միջոց մի ամբողջ կյանք լցնելու համար:

ԳԵՅ.— Ուրեմն քեզ հաճելի դառնալու համար ես վատ հարո՞ւստ պետք է դառնամ:

ՆԱՍՏԻ.— Վատ ու լավ հարուստներ չկան: Գոյություն ունեն հարուստներ ու վերջ:

ԳԵՅ.— Նաստի՛, ես ձերոնցից եմ:

ՆԱՍՏԻ.— Ո՛չ:

ԳԵՅ.— Մի՞թե ես չքավոր չեմ եղել իմ ամբողջ կյանքում:

ՆԱՍՏԻ.— Երկու տեսակ չքավորներ կան. նրանք, ովքեր չքավոր են միասին, և նրանք, ովքեր այդպիսին են միայնակ: Առաջինները իսկական չքավորներն են: Մյուսները հարուստներ են, որոնց բախտը չի բերել:

ԳԵՅ.— Իսկ այն հարուստները, որոնք իրենց ունեցվածքը բաժանել են ուրիշներին՝ նրանք ևս, երևի, չքավորներ չեն:

ՆԱՍՏԻ.— Ո՛չ, նրանք նախկին հարուստներն են:

ԳԵՅ.— Ուրեմն սկզբից նեթ ես դատապարտված էի կորստյան: Ասո՛ր քեզ, Նաստի՛, դու փակում ես մի անօգնական քրիստոնյայի փրկության ուղին: (Հուզված քայլում է): Թեև հրպարտ են ազնվականները, որոնք ինձ ատում են, բայց դուք հպարտ եք ավելի: Եվ ինձ անհամեմատ հեշտ կլինի մտնել նրանց, քան թե ձեր կաստայի շարքերը: Չէ՛, համբերություն է պետք: Շնորհակալություն՝ն, Տե՛ր, ուրեմն ես նրանց սիրելու եմ անհատույց, անպատասխան: Իմ սերը քանդելու է քո անզիջում հոգու պատնեշը, թևաթափ է անելու չքավորների քինոտությունը: Ես ձեզ սիրում եմ, Նաստի՛, ես ձեզ՝ բոլորիդ, սիրում եմ:

ՆԱՍՏԻ (ավելի մեղմ).— Եթե դու մեզ սիրում ես, հրաժարվիր քո ծրագրից:

ԳԵՅ.— Ո՛չ:

ՆԱՍՏԻ (փոխված ձայնով, ավելի համար).— Լսի՛ր, ինձ հարկավոր է յոթը տարի:

ԳԵՅ.— Ինչի՞ համար:

ՆԱՍՏԻ.— Յոթը տարուց հետո մենք պատրաստ կլինենք սկսելու սրբազան պատերազմը: Բայց ոչ դրանից առաջ: Եթե դու այսօր կովի մեջ քաշես գյուղացիներին, ապա ութ օր չանցած նրանց կկոտորեն: Եվ մի կես դար հարկավոր կլինի վերականգնելու համար այն, ինչ ոչնչացրած կլինես մի շաբաթում:

ԿԼԻԿ — Գյուղացիները եկան, տե՛ր իմ:

ՆԱՍՏԻ.— Ասա թող վերադառնան իրենց տները, Գե'ց:

Գեցը չի պատասխանում:

Լսի՛ր, եթե իրոք ուզում ես մեզ օգնել, դու այդ կարող ես:

ԳԵՑ (Կարլին).— Խնդրիր, որ սպասեն, եղբա՛յր իմ:

Կարլը դուրս է գալիս:

Ի՞նչ ես առաջարկում:

ՆԱՍՏԻ.— Հողերդ պահիր քեզ համար:

ԳԵՑ.— Նայած թե դու ինչ կառաջարկես:

ՆԱՍՏԻ.— Եթե հողերդ պահես, մենք ապաստանելու և համախաբվելու տեղ կունենանք: Ինձ համար մշտական բնակավայր կդառնա քո գյուղերից մեկն ու մեկը: Այնտեղից հրամաններս կճառագայթեն ամբողջ Գերմանիայի վրայով: Այնտեղից, յոթ տարի հետո, կհնչի պատերազմի ազդանշանը: Դու կարող ես մեզ անգնահատելի ծառայություններ մատուցել: Ի՞նչ ես ասում:

ԳԵՑ.— Ո՛չ:

ՆԱՍՏԻ.— Մերժո՞ւմ ես:

ԳԵՑ.— Ես Բարությունը թթու չեմ դնի: Դու, ուրեմն, ինձ լավ չհասկացար, Նաստի՛: Դեռ տարին չավարտված իմ շնորհիվ երջանկությունը, սերն ու առաքինությունը տիրապետելու են տաս հազար ակր հողի վրա: Իմ կալվածքի ներսում ես ուզում եմ կառուցել Արևի Ոստանը, մինչդեռ դու ուզում ես, որ ես այն դարձնեմ որջ մարդասպանների համար:

ՆԱՍՏԻ.— Բարությանը պետք է ծառայել, ինչպես ռազմիկ, Գե'ց: Եվ գոյություն ունի՞ արդյոք ռազմիկ, որ մեկ-մեկակ շահում է պատերազմը: Դու սկսիր համեստ լինելուց:

ԳԵՑ.— Ես համեստ չեմ լինելու: Խոնարհ, ինչքան կուզեք, բայց ոչ համեստ: Համեստությունը թույլերի առաքինությունն է: (Ռադար): Եվ ես ինչո՞ւ քեզ օգնեմ պատերազմի նախապատրաստմանը: Ասոված արգելել է արյուն թափելը, մինչդեռ դու ուզում ես Գերմանիան ողողել արյան մեջ: Ես չեմ դառնա քո մեղսակիցը:

ՆԱՍՏԻ.— Այդ դո՞ւ ես, որ արյուն չես թափելու: Դե՛, նվիրի՛ր քո հողերը, նվիրի՛ր քո դղյակը, և կտեսնես, թե ինչքան արյուն պիտի թափվի գերմանական հողի վրա:

ԳԵՑ.— Արյուն չի թափվելու: Բարությունը չի կարող շարիք ծրել:

ՆԱՍՏԻ — Բարությունը չի ծնում Չարիք, թող այդպես լինի: Բա-
նի որ քո խելագար շոպությունը դառնալու է կոտորածի
պատճառ, ուրեմն դա նշանակում է, որ քո արարքը Բարու-
թյունն անվանել չի կարելի:

ԳԵՑ. — Բարությունը, ուրեմն, չքավորների տառապանքը հավեր-
ժացնելու մե՞ջ է:

ՆԱՍՏԻ. — Ինձ հարկավոր է յոթ տարի:

ԳԵՑ. — Եվ դու թքա՞ծ ունես նրանց վրա, ովքեր մինչ այդ մեռ-
նելու են իրենց կյանքն աստելության ու վախի մեջ անցկաց-
նելուց հետո, ինչպես և նրանց վրա, ովքեր սասկելու են հու-
սույթված:

ՆԱՍՏԻ — Աստված նրանց հոգին լուսավորի:

ԳԵՑ. — Յո՛թը տարի: Եվ յոթ տարուց հետո կգան պատերազմի
յոթ տարիներ, և հետո քավության ևս յոթ տարիներ, որով-
հետև անհրաժեշտ է լինելու վերացնել ավերակներն ու նորը
կառուցել, հետո, ո՞վ գիտե, ինչ է լինելու. գուցե մի նոր
պատերազմ ու մի նոր քավություն, և ուրիշ մարգարեներ,
որոնք յոթ տարվա համբերություն են պահանջելու: Խաբեքա՛,
մինչև վերջին դատաստանի օրը դու համբերություն՞ն ես պա-
հանջելու: Ես ասում եմ, որ Բարությունը հնարավոր է ամեն
օր, ամեն ժամ, նույնիսկ այս պահին: Հայնրիխն ասում էր.
«Բավական է, որ միայն մեկ մարդ ատի մեկ ուրիշին, որ ա-
տելությունը, մեկից մյուսին անցնելով, նվաճի ողջ մարդկու-
թյունը»: Եվ ես, ճշմարիտ եմ ասում, բավական է, որ մեկ
մարդ անխտիր սիրի բոլոր մարդկանց, որ այդ սերը, մեկից
մյուսին անցնելով, տարածվի ամբողջ մարդկության մեջ:

ՆԱՍՏԻ. — Եվ այդ մարդը դո՞ւ ես լինելու:

ԳԵՑ. — Այո՛, ես եմ լինելու, իհարկե, Աստծո օգնությամբ: Գի-
տեմ, որ Բարությունն ավելի դժվար է, քան Չարիքը: Չարի-
քը լոկ ես էի, Բարությունն ամեն ինչ է: Բայց ես չեմ վախե-
նում: Երկիրը պետք է տաքացնել, և ես այն կտաքացնեմ:
Աստված ինձ տվել է շողարձակելու պատգամ, և ես շողար-
ձակելու եմ: Արյունս՝ լույս, ես արևաքամ եմ լինելու: Ես վառ-
վող ածուխ եմ, ինձ շիկացնում է Աստծո շունչը. ես ողջա-
կիզվում եմ: Հացթո՛ւխ, ես Բարությամբ եմ հիվանդացել, և
ուզում եմ, որ այդ հիվանդությունը լինի վարակիչ: Ես լինելու
եմ վկա, նահատակ և գայթակղություն:

ՆԱՍՏԻ.— Ինքնակո՛չ:

ԳԵՑ.— Դու չես կարողանա ինձ շփոթության մեջ գցել: Ես տեսնում եմ, ես գիտեմ՝ պայծառ ցերեկ է: Ես դառնալու եմ մարգարե:

ՆԱՍՏԻ.— Կե՛ղծ մարգարե: Սատանայի կամակատարն է նա, ով ասում է. «Ես անելու եմ այն, ինչը հավատացած եմ, որ լավ է, թեկուզ այդ իսկ պատճառով աշխարհը կործանվի»:

ԳԵՑ.— Կե՛ղծ մարգարե: Սատանայի կամատարն է նա, ով ասում է. «Նախ՝ թող աշխարհը կործանվի, հետո տեսնեմ՝ Բարությունն արդյոք հնարավո՞ր է, թե՞ ոչ»:

ՆԱՍՏԻ.— Գեց, եթե դու ինձ խանգարես, ես քեզ կսպանեմ:

ԳԵՑ.— Դու ինձ կսպանե՞ս, դո՞ւ, Նաստի՛:

ՆԱՍՏԻ.— Այո, եթե ինձ խանգարես:

ԳԵՑ.— Ես սպանել չեմ կարողանա. սերն է իմ կոչումը: Ես նրանց նվիրելու եմ իմ հողերը:

ՊԱՏԿԵՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Գյուղական եկեղեցու շքամուտքի առջև: Կամարի տակ՝ երկու նստարան: Մեկի վրա դրված է թմբուկ, մյուսի վրա՝ սրինգ:

ՏԵՍԱՐԱՆ Ա

ԳԵՑ, ՆԱՍՏԻ, ապա՝ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐ

ԳԵՑ (ներս է մտնում՝ կանչելով).— Հե՛յ, հե՛յ: Երեսուն մղոն ուզածդ ուղղությամբ, ոչ մի շունչ: Մտել են իրենց որջերը: Բարությունն աղետի նման թափվեց նրանց գլխին, հիմարները: (Հանկարծակի շրջվում է դեպի Նաստին): Ինչո՞ւ ես ինձ հետևում:

ՆԱՍՏԻ.— Քո պարտությանը սկանառես լինելու համար:

ԳԵՑ.— Պարտություն չի լինելու: Ես այսօր իմ Ոստանի հիմնաքարն եմ դնում: Կարծեմ, նկողներն են մտել: Համբերություն: Շատ չե՛ թեկուզ միայն յոթ-ութ հոգու բռնեցնեմ, դու կտեսնես, թե նրանց ինչպես եմ համոզելու:

Ճիշեր: Սրինգի նվագ:

Սա ի՞նչ է:

Ներս է մտնում կիսահարբած գյուղացիների մի թափոր, որը պատգարակի վրա տանում է մի սուրբ կնոջ գիպսե արձան:

Ձևը քեֆը տեղն է: Հարրել էք, Լիի, ձեր նախկին տիրոջ հանգի նվերի կապակցությամբ, այդպես չէ՞:

ԳՅՈՒՂԱՑԻ.— Աստված մի՛ արասցե, բարի՛ վանական:

ԳԵՑ.— Ես վանական չեմ: **(Ետ է գցում դեմքը ծածկող կնգուղը):**

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐ.— Գե՛ցը:

Գյուղացիները վախեցած ընկրկում են: Մի քանիսը խաչակնքում են:

ԳԵՑ. Գե՛ցը, այո՛, Գե՛ցը, հրե՛շը, Գե՛ցը՝ Աթիլլան¹⁵, որն իր հողերը նվիրեց հանուն քրիստոնեական ողորմածության: Մի՞թե իմ տեսքը այդքան ահարկու է: Մոտեցեք, ես ուզում եմ ձեզ հետ խոսել: **(Դադար):** Էլ ի՞նչ էք սպասում, մոտեցե՛ք:

Գյուղացիները համառորեն լռում են: Գեցի ձայնի մեջ հրամայական շեշտ կա:

Ո՞վ է ձեր ավագը:

ԾԵՐՈՒՆԻ (դժկամությամբ).— Ես եմ:

ԳԵՑ. Մոտեցի՛ր:

Ծերունին խմբից առանձնանում է, մոտենում է նրան: Գյուղացիները լռությամբ նրանց են նայում:

Դու ինձ բացատրիր. ես հացահատիկի պարկեր տեսա տերունական շտեմարանում: Դուք, ուրեմն, ինձ չե՛ք հասկացել:

Էլ ո՛չ մի հողատուրք, ոչ մի պարհակ:

ԾԵՐՈՒՆԻ.— Միառժամանակ ամեն ինչ թող լինի ստաջվա նրման:

ԳԵՑ.— Ինչո՞ւ:

ԾԵՐՈՒՆԻ.— Որ տեսնենք, ինչ է լինելու:

ԳԵՑ.— Շատ լավ: Հացահատիկը փտելու է: **(Դադար):** Իսկ ի՞նչ կատեք ձեր նոր վիճակի մասին:

ԾԵՐՈՒՆԻ.— Այդ մասին չխոսեմք, տե՛ր իմ:

ԳԵՑ.— Ես այլևս քո տերը չեմ: Ինձ կոչիր՝ եղբայր իմ, լսո՛ւմ ես:

ԾԵՐՈՒՆԻ.— Այո, տե՛ր իմ:

ԳԵՑ.— Ասում եմ՝ եղբայր իմ:

ԾԵՐՈՒՆԻ.— Ո՛չ, այդ մեկը՝ ոչ:

ԳԵՑ.— Ես քեզ հրամ... ես քեզ խնդրում եմ:

ԾԵՐՈՒՆԻ.— Դուք իմ եղբայրը կլինեք այնքան ժամանակ, որ-
քան դա ձեզ հաճելի է: Բայց ես ձեր եղբայրը չեմ լինի: Ամեն
մեկին՝ իր տեղը, տե՛ր իմ:

ԳԵՑ.— Լա՛վ, լա՛վ: Դու դեռ կընտելանաս: (**Մատնացույց անե-
լով թմբուկն ու սրինգը**): Սա ի՞նչ է:

ԾԵՐՈՒՆԻ.— Սրինգ ու թմբուկ:

ԳԵՑ.— Ովքե՞ր են նվագելու:

ԾԵՐՈՒՆԻ.— Վանականները:

ԳԵՑ.— Այստեղ վանականներ՞ր կան:

ԾԵՐՈՒՆԻ.— Եղբայր Տեղեյը երկու սափկավագների հետ եկել
է Ուորմսից՝ մեղքերի թողության ապաշխարագրեր վաճառե-
լու¹⁶ համար:

ԳԵՑ (դառնորեն).— Ահա թե ինչու եք հարբել: (**Կտրուկ**): Գրո՞-
ղը տանի, ես այստեղ թույլ չեմ տա:

Ծերունին լռում է:

Այդ ապաշխարագրերը գրոջ չարժեն: Մի՞թե կարծում ես, որ
Աստված չարչու նման պիտի սակարկի իր ողորմածությունը:
(**Դադար**): Եթե շարունակելի լինել քո տերը և հրամայելի վը-
տարել այդ երեք ստահակներին, դու այդ կանեի՞ր:

ԾԵՐՈՒՆԻ.— Այո՛, կանեի:

ԳԵՑ.— Ուրեմն վերջին անգամ քո տերը քեզ հրամայում է...

ԾԵՐՈՒՆԻ.— Դուք արդեն մեր տերը չեք:

ԳԵՑ.— Հեռացի՛ր. դու շատ ես ծերացել: (**Հրում է նրան, ցատ-
կում սանդուղքի մի աստիճանին և դիմում է բոլորին**): Գոնե
ինքներդ ձեզ հարցրե՛լ եք, թե ինչու նվիրեցի ես իմ հողերը:
(**Մատնացույց անելով մի գյուղացու**): Դո՛ւ պատասխանիր:

ԳՅՈՒՂԱՑԻ.— Ես չգիտեմ:

ԳԵՑ (մի կնոջ).— Իսկ դո՞ւ:

ԿԻՆ (տատանվելով).— Գուցե... դուք ցանկացել եք մեզ երջան-
կացնել:

ԳԵՑ.— Լավ պատասխան է: Այո՛, հե՛նց այդ է եղել իմ ցանկու-
թյունը: Միայն թե իմացեք՝ երջանկությունը լոկ միջոց է: Հե-
տո դրանով ի՞նչ եք անելու:

ԿԻՆ (վախեցած).— Երջանկության միջոցո՞վ: Բայց նախ, պետք
է երջանիկ լինենք, հետո...

ԳԵՑ.— Կլինեք, մի՛ վախեցեք: Հետո ի՞նչ եք անելու:

ԿԵՆ. Այդ մասին մեզի չեմք մտածել: Ախր նույնիսկ չգիտենք, թե ինչ բան է եղանակությունը:

ԳԼՅ. Ես ինքս մտածել եմ ձեր փոխարեն: (**Դադար**): Ձեզ հայտնի է, որ Աստված մեզ պատվիրել է սիրել: Բայց դուք գիտեք, որ մինչև հիմա այդ սերը ելել է անհնարին: Դեռևս երեկ, եղբայրներ՝, դուք անչափ դժբախտ էիք և որևէ մեկի մտքովն անգամ չէր կարող անցնել սեր սկսկալել ձեզանից: Եվ ահա ես ուզեցի, որ դուք չսիրելու պատրվակ չունենաք: Ես ձեզ կրկնեմ գիրուկ ու հարուստ, և դուք սիրելու եք, գրո՛ղը տանի, ևս պահանջելու եմ, որ դուք սիրեք բոլոր մարդկանց: Ես նրաժարվում եմ հրամայել ձեր մարմիններին ձեր հոգիներին ուղեցույց դառնալու համար, քանզի Աստված ինձ լուսավորել է: Բայց ես ճարտարապետն եմ, դուք՝ բանվորները: Ամեն ինչ պատկանում է բոլորին. գործիքներն ու հողերը համայնական են: Ո՛չ հարուստ, ո՛չ չքավոր, ո՛չ մի օրենք, բացի Սիրո օրենքից: Մենք օրինակ պիտի ծառայենք ամբողջ Գերմանիայի համար: Ի՞նչ եք ասում, տղե՛րք, չփորձե՛նք: (**Լռություն**): Ամենևին էլ տհա՛մ չէ, որ սկզբում դուք վախենում եք ինձանից: Փորձառու ու բարի մի սատանայից ավելի հավատ ներշնչող բան չկա այս աշխարհում: Իսկ հրեշտակները, եղբայրներ՝, հրեշտակները՝ կասկածելի են:

Ամբոխը ժպտում է, հառաչում ու հուզվում:

Վերջապե՛ս, վերջապես դուք ինձ ժպտում եք:

ԱՄԲՈՒՄ.— Ահա գալիս եմ, գալի՛ս եմ:

ԳԵՅ (**շրջվելով տեսնում է Տեղեղին: Դժգոհությամբ**).— Գրո՛ղը տանի այդ վանականներին:

ՏԵՍԱՐԱՆ Բ

ՆՈՒՅՆՔ, ՏԵՏՑԵԼ, ԵՐԿՈՒ ՍԱՐԿԱՎԱԳՆԵՐ, ՔԱՀԱՆԱ

Երկու սարկավագները վերցնում են իրենց երաժշտական գործիքները՝ սրինգն ու թմբուկը: Սեղան են բերում և այն տեղավորում են վերևի աստիճաններին: Տեղեղը սեղանի վրա է դնում մագաղաթե փաթեթները:

ՏԵՏՑԵԼ.— Հե՛յ, հոգատա՛ր հայրեր, մոտեցե՛ք, մոտեցե՛ք, ես սխառոր չեմ կերել:

Նրանք ծիծաղում են:

Ինչպե՞ս են ձեր գործերը: Հողը բերրի՞ է:

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐ.— Այնքան էլ վատը չի:

ՏԵՏՑԵԼ.— Իսկ ձեր կնանի՞ք, էլի նույն գլխացավա՞նքն է:

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐ.— Ա՛հ, գրո՛ղը նրանց տանի, ինչպես ամենուրեք:

ՏԵՏՑԵԼ.— Մի՛ դարդոտվեք. նրանք սատանայից յոթ օր շուտ են ծնվել և ձեզ պաշտպանում են նրանից:

Ամբոխը ծիծաղում է:

Դե՛, սիրելի՛ տղերք, կատակը՝ կատակ, սակայն ձեզ հետ ես լուրջ խոսակցություն ունեմ: Երաժշտություն:

Սարկավագները նվագում են թմբուկ ու սրինգ:

Ծարունակ աշխատելը շատ լավ է: Բայց մեկ-մեկ հեռվում ես բահիդ, նայում ես հեռուն և ինքդ քեզ ասում ես. «Տեսնես՝ ինձ ի՞նչ է վիճակվելու մեռնելուց հետո»: Բանն այն չէ միայն, որ դուք ձեզ համար ապահովեք մի սիրուն, ծաղկավետ գերեզման: Չէ՞ որ հոգին այնտեղ չի մնում: Ի՞նչ իմանաս՝ քո հոգին ո՞ր կգնա... Դժո՞խք...

Թմբկահարություն:

Թե՞ Դրախտ:

Սրնգի նվագ:

Բարի՛ մարդիկ, ձեզ համար պարզ է, որ Աստված այդ հարցով մտահոգվել է: Չեզ համար այնքան է մտահոգվում Տեր Աստվածը, որ նրա քունը փախել է: (**Դադար**): Ասենք՝ դու, ի՞նչ է քո անունը:

ԳՅՈՒՂԱՑԻ.— Պետեր:

ՏԵՏՑԵԼ.— Ա՛խ, դո՛ւ, Պետե՛ր, դու, մեկ-մեկ պետք եղածից ավելին ես կոնճում, այնպես չէ՞: Տե՛ս, չստես, հա՛:

ԳՅՈՒՂԱՑԻ.— Էհ, մեկ-մեկ պատահում է:

ՏԵՏՑԵԼ.— Իսկ կնկա՞նդ, ծեծո՞ւմ ես նրան:

ԳՅՈՒՂԱՑԻ.— Երբ հարբած եմ լինում:

ՏԵՏՑԵԼ.— Բայց դու քո Աստծուց վախենում ես, այնպես չէ՞:

ԳՅՈՒՂԱՑԻ.— Ա՛հ, այո, եղբա՛յր իմ:

ՏԵՏՑԵԼ.— Իսկ Աստվածածնի՞ն, դու սիրո՞ւմ ես նրան:

ԳՅՈՒՂԱՑԻ.— Իմ հարազատ մորից ավելի:

ՏԵՏՑԵԼ.— Տեսնո՞ւմ ես, դու Աստծուն զգել ես շփոթության մեջ:

«Այս մարդը,— ասում է նա ինքն իրեն,— այնքան էլ չար

չէ: Եվ ես այնքան էլ ցանկություն չունեմ՝ նրան ցավ պատճառելու: Բայց նա մեղանչել է, և ես նրան ուզեմ-չուզեմ պիտի պատժեմ»:

ԳՅՈՒՂԱՑԻ (ընկնված).— Ափսո՛ս...

ՏԵՏՅԵԼ.— Սպասի՛ր: Բարեբախտաբար, գոյություն ունեն սրբերը: Նրանցից յուրաքանչյուրը Երկնքին արժանացել է հարյուր հազար անգամ, բայց դա նրանց ինչի՞ն է պետք, քանի որ կարող են այնտեղ մտնել միայն մեկ անգամ: Եվ այնժամ, ի՞նչ է ասում Աստված ինքն իրեն: Նա ասում է. «Ինչո՞ւ իզուր կորչեն Դրախտ մտնելու չգործածված փայաբաժինները: Արի ես դրանք բաժանեմ ոչ այնքան էլ արժանի մեղապարտներին: Եվ եթե Պետեր կոչված այդ լավ տղան մեղքերի թողության մի ապաշխարագիր գնի եղբայր Տեոցելից, ապա նա իմ Դրախտը կմտնի սուրբ Մարտիրոսի շօգտագործած մի հրավիրատոմսի շնորհիվ»: Հը՞, ի՞նչ ես ասում. հարցի լուծումը լավ է գտնված, այնպես չէ՞:

Հավանության գոչյուններ:

Քեզ տեսնեմ, Պետե՛ր, հանիր քսակդ: Եղբայրնե՛ր, Աստված նրան առաջարկում է այս անհավատալի գործարքը: Դրախտը՝ երկու արծաթի փոխարեն: Այդ ո՞ր ժլատն է, այդ ո՞ր գծուճն է, որը երկու արծաթ չի տա իր հավերժական կյանքի համար:

Նա վերցնում է Պետերի երկու արծաթը:

Ընորհակալություն՛ն: Դե՛, գնա՛ տուն և այլևս չմեղանչես: Էլ ո՞վ է ուզում: Նայեցեք, ահա մի ուրիշ ձեռնոտի ապրանք, երբ այս ոլորված մագաղաթը ներկայացնեք քահանային, նա ստիպված կլինի թողություն տալ ձեր մի մահացու մեղքին հենց ձեր իսկ ընտրությամբ: Այդպես չէ՞, քահանա՛:

ՔԱՀԱՆԱ.— Ծիշտ է, ես ստիպված կլինեմ:

ՏԵՏՅԵԼ.— Իսկ այս մե՛կը: (**Մի մագաղաթ է թափահարում**):

Ա՛հ, այս մեկը, եղբայրնե՛ր, ոչ ավել, ոչ պակաս՝ զիջողություն է Աստծո կողմից: Այս ապաշխարագրերը, որ տեսնում եք, մշակված են հատկապես այն բարի մարդկանց համար, որոնց հարազատները գտնվում են Քավարանում: Եթե դուք վճարեք անհրաժեշտ գումարը, ապա ձեր բոլոր հարազատները, թևերը տարածած, կթռչեն դեպի Երկինք: Տեղափոխվող ամեն մի անձի դիմաց՝ երկու արծաթ: Տեղափոխություն-

ը կատարվում է անմիջապես: Դե՛, ո՛վ է ուզում, ո՛վ է ուզում: Դու ո՛ւմ ես կորցրել:

ԳՅՈՒՂԱՑԻ.— Մորս:

ՏԵՏՅԵԼ.— Մո՛րդ, ընդամենը: Քո տարիքին միայն մո՛րդ ես կորցրել:

ԳՅՈՒՂԱՑԻ (տատանվելով).— Այնտեղ մի հորեղբայր էլ ունեմ...

ՏԵՏՅԵԼ.— Եվ դու խեղճ հորեղբորը թողնելու ես Քավարանո՛ւմ: Դե՛, շո՛ւտ արա. հաշվի՛ր ու տո՛ւր չորս արծաթ: (**Վերցնում է չորս արծաթը և պահում է սպասքի վերևում**): Ուշադրություն՛ւն, տղե՛րք, երբ արծաթները վայր ընկնեն, հոգիները թռչելու են դեպի վեր: (**Արծաթները բաց է թողնում սպասքի մեջ**):

Սարկավազը սրնգով նվագում է:

Ահա մեկը:

Դարձյալ սրնգի նվագ:

Ահա և մյուսը: Ահա տեսեք, տեսեք՝ թռչում են նրանք ձեր գլխավերևում. երկու ճերմակ ու սիրուն թիթեռնիկներ:

Սրնգի նվագ:

Ցտեսություն՛ւն, ցտեսություն՛ւն. աղոթեցե՛ք մեզ համար, բարևներ՛ր հաղորդեք բոլոր սրբերին: Ձեզ տեսնեմ, տղե՛րք, հրաժեշտի ողջույն երկու սիրունիկների:

Ծափահարություններ:

Հերթը ո՛ւմն է:

Ծառ գյուղացիներ են մոտենում:

Քո կնոջ ու տատիկի համա՛ր: Քրոջդ համա՛ր:

Ամեն մի դեպքում՝ սրնգի նվագ:

Վճարե՛ք, վճարե՛ք:

ԳԵՑ.— Ե՛տ քաշվեք:

Տրտունջներ ամբոխի միջից:

ՏԵՏՅԵԼ (Քահանային).— Սա ո՛վ է:

ՔԱՀԱՆԱ.— Նրանց նախկին տերը: Վախենալու հարկ չկա:

ԳԵՑ.— Ցնորվածներ՛ր, ինչպես էլ հավատում եք, որ Աստծո հետ ձեր հաշիվները կարող եք մաքրել մի ողորմությամբ: Կարծում եք նահատակները թույլ են տվել, որ իրենց ողջ-ողջ այրեն խարույկների վրա, որպեսզի դուք Դրախտ մտնեք հենց այնպե՛ս, կարծես, դա արադաց լինի: Սրբերի արժա-

նիքները գնելով չէ, որ դուք փրկվելու եք: Դուք նրանց առա-
փնությունները պետք է ձեռք բերեք:

ԳՅՈՒՂԱՑԻ.— Որ այդպես է, ավելի լավ է՝ ինձ կախեն և անմի-
ջապես բշեն Դժոխք: Սուրբ կդառնա՞ս, չէ՞ մի, երբ օրական
տասնվեց ժամ ես աշխատում:

ՏԵՏՏԵԼ (Գյուղացուն).— Ձենդ կտրի՛ր, էլի, տավարի՛ գլուխ.
ո՞վ է քեզանից այդքանը պահանջում: Ժամանակ առ ժամա-
նակ դու գնիր մի զույգ ապաշխարագիր, և Աստված քեզ կար-
ժանացնի իր ողորմածությամբ:

ԳԵՑ.— Հենց այդ է, որ կա: Դու գնիր նրա որդնոտած ապրանքը:
Կու քեզ երկու արծաթ վճարել կտա, որ դու իրավունք ունե-
լաս նորից տրվելու քո մոլորություններին: Բայց Աստված
գործարքը չի վավերացնելու: Դու գլորվում ես Դժոխք:

ՏԵՏՏԵԼ.— Վերացրո՛ւ Հույսը, վերացրո՛ւ Հավատը: Դե՛, քեզ տես-
նեմ՝ տեղն ի՞նչ ես դնելու:

ԳԵՑ.— Սերը:

ՏԵՏՏԵԼ.— Դու ի՞նչ գիտես, թե ինչ է Սերը:

ԳԵՑ.— Իսկ դու ինքդ ի՞նչ գիտես, թե ինչ է Սերը: Ինչպե՞ս կա-
րող է սիրել նա, ով նրանց այնքան է արհամարհում, որ Եր-
կիտի իբրև ապրանք է նրանց առաջարկում:

ՏԵՏՏԵԼ (գյուղացիներին).— Ես ձեզ արհամարհո՞ւմ եմ, իմ գառ-
նակներ՝

ԲՈՒՈՐԸ.— Օ՛հ, ո՛չ:

ՏԵՏՏԵԼ.— Ես ձեզ չե՞մ սիրում, իմ ճուտիկներ՝

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐ.— Իհարկե, իհարկե, դու մեզ սիրում ես:

ՏԵՏՏԵԼ.— Ես եկեղեցական եմ, եղբայրներ՝: Եկեղեցու ոլորտնե-
րից դուրս Սերը գոյություն չունի: Եկեղեցին մեր բոլորի մայրն
է: Իր քահանաների ու վանականների միջնորդությամբ նա
նույն մայրական սերն է շնորհում իր բոլոր որդիներին, ինչ-
պես թշվառներին, այնպես էլ բախտավորներին:

**Հնչում են զանգակներ, ճչանակն աղմկում է: Հայտնվում է
Բորոտը: Գյուղացիները խուճապահար հավաքվում են բեմի մյուս
ծայրին:**

Ի՞նչ է եղել:

Քահանան և սարկավագները վազելով մտնում են եկեղեցի:

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐ (մատնացույց անելով Բորոտին).— Տե՛ս, տե՛ս,
զգո՛ւյշ, բորոտը:

ՏԵՏՏԵԼ (սարսափած).— Հիստ՛ւա Քրիստոս:

Դադար: Գեցը մոտենում է Բորոտին:

ԳԵՑ (Տեղեկին՝ մատնացուց անելով Բորոտին).— Համբուրի՛ր նրան:

ՏԵՏՏԵԼ.— Թո՛ւհ, թո՛ւհ:

ԳԵՑ.— Եթե եկեղեցին առանց նողկանքի և առանց խուսափելու սիրում է իր որդիներից ամենաթշվառին, էլ ի՞նչ ես սպասում. համբուրի՛ր նրան:

Տեղեկը բացասաբար գլուխն է շարժում:

Հիսուսը նրան կառնեք իր թևերի մեջ¹⁷: Ես նրան ավելի եմ սիրում, քան դու: (**Դադար: Նա մոտենում է Բորոտին**):

ԲՈՐՈՏ (ատամների արանքից).— Եվս մեկը, որն ինքնազոհաբերման ներկայացումը պիտի խաղա՛ բորոտին համբուրելով:

ԳԵՑ.— Մոտեցի՛ր, եղբա՛յր իմ:

ԲՈՐՈՏ.— Այդպես էլ գիտեի: (**Մոտենում է դժկամությամբ**): Եթե խնդիրը ձեր փրկությանն է վերաբերում, ապա մերժել չեմ կարողանա: Բայց շո՛ւտ արեք: Բոլորն իրար նման են. կարելի է կարծել, որ Աստված ինձ բորոտ է դարձրել հենց միայն նրա համար, որ Երկինք գնալու հնարավորություն տամ ուրիշներին:

Գեցը դեմքը մոտեցնում է, որ համբուրի:

Միայն ոչ՝ շուրթերս:

Համբուր:

Թո՛ւհ: (**Սրբում է երեսը**):

ՏԵՏՏԵԼ (սկսում է ծիծաղել).— Դե՛, հիմա գո՛հ ես: Նայիր, ինչպես է սրբում բերանը: Արդյոք նվազե՛ց նրա բորոտությունը, հը՞: Ասա՛, բորո՛տ, ինչպե՛ս է կյանքը:

ԲՈՐՈՏ.— Հիանալի կլիներ, եթե ավելի քիչ լինեին առողջ մարդիկ, ավելի շատ՝ բորոտները:

ՏԵՏՏԵԼ.— Որտե՞ղ ես ապրում:

ԲՈՐՈՏ.— Անտառում, ուրիշ բորոտների հետ:

ՏԵՏՏԵԼ.— Ի՞նչ եք անում ամբողջ օրը:

ԲՈՐՈՏ.— Բորոտների պատմություններ ենք պատմում իրարու:

ՏԵՏՏԵԼ.— Ինչո՞ւ ես գյուղ եկել:

ԲՈՐՈՏ.— Եկել եմ, տեսնեմ, կարո՞ղ եմ մեղքերի թողության մի ապաշխարագիր պոկել:

ՏԵՏՏԵԼ.— Բարո՛վ եկար:

ԲՈՐՈՏ.— Ծի՛շտ է, որ դուք դրանք վաճառում եք:

ՏԵՏՏԵԼ.— Հասր երկու արծաթ:

ԲՈՐՈՏ.— Մի գրոշ էլ չունեմ:

ՏԵՏՏԵԼ (գյուղացիներին՝ հաղթական).— Նայեցե՛ք: (Բորոտին):

Տեսնո՞ւմ ես այս գեղեցիկ, բացարձակապես նոր ապաշխարագիրը: Ո՞րը կնախընտրես՝ սա՞՝ քեզ տամ, թե՞ շուրթերդ համբուրես:

ԲՈՐՈՏ.— Դու էլ իբր բան ասացիր:

ՏԵՏՏԵԼ.— Ես կանեմ, ինչ որ դու կամենաս, ընտրի՛ր:

ԲՈՐՈՏ.— Գրո՛ւր տանի, տուր ինձ ապաշխարագիրը:

ՏԵՏՏԵԼ.— Ահա վերցրո՛ւ, շնորհակալությունդ հղիք Աստծուն. սա քեզ նվեր է քո Սրբազնամայր Եկեղեցու կողմից: Վերցրո՛ւ:

ԲՈՐՈՏ.— Կեցցե՛ Եկեղեցին:

Տեսցելը նրան նետում է ապաշխարագիրը: Բորոտն այն որսում է օդում:

ՏԵՏՏԵԼ.— Դե՛, հիմա չքվի՛ր այստեղից:

Բորոտը դուրս է գալիս: Զանգակները հնչում են, ճչանակն աղմկում է:

Դե՛, հիմա ասացեք, ո՞վ էր, որն ավելի էր սիրում նրան:

ԱՄԲՈՒՄ.— Դո՛ւ, դո՛ւ, ուրա՛՛ Տեսցելին:

ՏԵՏՏԵԼ.— Ձեզ տեսնեմ, եղբայրնե՛ր, հիմա ո՞ւմ հերթն է: Քո քրոջ համար, որ մահացել է հեռավոր երկրում:

Սրնգի նվագ:

Քո մորաքույրների համար, որոնք քեզ խնամել-մեծացրել են: Հորդ և մորդ համար: Քո ավագ որդու համար: Վճարե՛ք, վճարե՛ք, վճարե՛ք:

ԳԵՅ.— Ծնե՛ր: (Խփում է սեղանին և թմբուկը գլորում, զցում է աստիճաններն ի վար): Քրիստոսը տանարից վոնդեց վաճառականներին¹⁸... (Կանգ է առնում, նայում է թշնամաբար տրամադրված ու սակված գյուղացիներին: Կնգուղը քաշում է երեսին և տնքալով ծնկի է ընկնում եկեղեցու դռան առջև): Օ՛հ, օ՛հ, օ՛հ, ամո՛թ ինձ: Ես նրանց հետ խոսելու ձևը չգիտեմ: Տե՛ր, թույլ տուր գտնեմ նրանց սրտի ճանապարհը:

Գյուղացիները նայում են նրան: Տեսցելը ժպտում է: Գյուղացիները նայում են Տեսցելին: Տեսցելը նրանց աչքով է ամում, մատը դնում է բերանին՝ պահանջելով լռություն, ապա գլխի շար-

ծումով ցույց է տալիս եկեղեցու շքամուտքը: Նա ոտքի ծայրերի վրա մտնում է այնտեղ: Գյուղացիները մտնում են եկեղեցի՝ սուրբ կնոջ արձանը տանելով պատգարակի վրա: Բոլորն անհետանում են: Մի պահ՝ լռություն, հետո եկեղեցու շենքին հայտնվում է Հայնրիխը՝ աշխարհիկ զգեստով:

ՏԵՍԱՐԱՆ Գ

ՀԱՅՆՐԻԽ, ԳԵՑ, ՆԱՍՏԻ

Հայնրիխն իջնում է դեպի Գեցը՝ չնկատելով Նաստիին:

ՀԱՅՆՐԻԽ.— Դու հոգիները բանջարի տեղ ես դրել:

ԳԵՑ.— Այդ ո՞վ է խոսում:

ՀԱՅՆՐԻԽ.— Պարտիզայանը կարող է որոշել, թե ստեպղինին ինչ է հարկավոր, բայց ոչ ոք ուրիշների փոխարեն չի կարող որոշել, թե ինչն է լավը նրանց համար:

ԳԵՑ.— Այդ ո՞վ է խոսում, Հայնրի՞խ:

ՀԱՅՆՐԻԽ.— Այո:

ԳԵՑ (վեր է կենում, կնգուղը ետ է գցում).— Ես վստահ էի, որ դու նորից պիտի հայտնվես՝ հենց իմ առաջին սալթաքումի դեպքում: (Դադար): Ի՞նչ գործ ունես այստեղ: Սնո՞ւնդ ես որոնում քո անելության համար:

ՀԱՅՆՐԻԽ.— «Ով Բարություն է սերմանում, Բարություն է հրնձելու»՝ դու այդ ասել ես, այնպես չէ՞:

ԳԵՑ.— Ասել եմ ու դարձյալ կրկնում եմ, որ այդպես է:

ՀԱՅՆՐԻԽ (դադար).— Ես քո հունձքը բերել եմ:

ԳԵՑ.— Դեռ շատ վաղ է հնձելու համար:

ՀԱՅՆՐԻԽ (դադար).— Կատրիներ մեռնում է. ահա քո առաջին հունձքը:

ԳԵՑ.— Մեռնո՞ւմ է. Աստված հոգին լուսավորի: Ես ի՞նչ կարող եմ անել:

Հայնրիխը ծիծաղում է:

Մի՛ ծիծաղիր, ապո՛ւշ: Տեսնում ես, որ ծիծաղել չես կարողանում:

ՀԱՅՆՐԻԽ (ասես ներողություն խնդրելով).— Նա ինձ համար ծամածոություններ է անում:

ԳԵՅ (կարուկ շրջվում է). Ո՞վ: (Հասկանում է): Ա՛հ: (Շրջվելով դեպի Հայնրիխը): Այ՛ թեզ բան, դու և նա դարձել եք անբաժանի բնակիչներ:

ՀԱՅՆՐԻԽ.— Այո, անբաժանի բնակիչներ:

ԳԵՅ. — Է՛հ, լավ է. չես ձանձրանա:

ՀԱՅՆՐԻԽ (ձեռքը սահեցնում է դեմքի վրայով).— Հոգուս վրա է նստել:

ԳԵՅ (Հայնրիխին մոտենալով).— Հայնրի՛խ... Եթե ես թեզ ցավ եմ պատճառել, դու ինձ ներիր:

ՀԱՅՆՐԻԽ.— Ես թեզ ներեմ, որ դու ամենուրեք պարծենաս, թե ստեղծությունը սեր դարձրիր, ինչպես Քրիստոսը ջուրը գինի էր դարձնում¹⁹:

ԳԵՅ.— Քո ատելությունն ինձ է պատկանում: Ես թեզ կազատեմ և նրանից, և՛ Սատանայից:

ՀԱՅՆՐԻԽ (փոխված ձայնով, կարծես մի ուրիշը խոսելիս լինի նրա բերանով).— Հանուն հոր և որդվո և հոգվույն սրբո: Հայրը ես եմ, Սատանան իմ որդին է, ատելությունը՝ Սուրբ Հոգին: Քեզ համար ավելի հեշտ կլինի մասնատել երկնային երրորդությունը, քան թե մասնատել մեր երեքի միասնությունը:

ԳԵՅ.— Դե՛, գնաս բարով: Ուղևորվիր Ուորմս՝ այնտեղ պատարագելու: Կհանդիպենք ինն ամիս հետո:

ՀԱՅՆՐԻԽ.— Ես երբեք Ուորմս չեմ վերադառնալու, և երբեք չեմ պատարագելու: Ես այլևս եկեղեցական չեմ, խեղկատա՛կ: Ինձ զրկել են ծիսակատարելու և մեղքերին թողություն տալու իրավունքից:

ԳԵՅ.— Ի՞նչ մեղադրանք են հարուցել քո դեմ:

ՀԱՅՆՐԻԽ.— Ասում են, որ կաշառք եմ վերցրել քաղաքը հանձնելու համար:

ԳԵՅ.— Դա կեղտոտ սուտ է:

ՀԱՅՆՐԻԽ.— Այդ սուտը ես եմ հորինել: Ես բարձրացել եմ ամբիոն և բոլորի առջև ամեն ինչ խոստովանել. իմ փողասիրությունը, նախանձը, անհնազանդությունը և մարմնական վայելքների ցանկասիրությունը:

ԳԵՅ.— Դու ստել ես:

ՀԱՅՆՐԻԽ.— Ի՞նչ արած: Ուորմսում ամենուր կրկնում էին, որ Եկեղեցին չքավորներից ատում է, և որ նա է ինձ հրամայել

նրանց մատնել կոտորածի: Անհրաժեշտ եղավ շարժանիթ ստեղծել, որ Եկեղեցին հրաժարվի ինձանից:

ԳԵՑ.— Ուրեմն դու քո մեղքն արդեն քալել ես:

ՀԱՅՆՐԻԽ.— Դու լավ գիտես, որ ոչ ոք երբեք իր մեղքերը չի քալում:

ԳԵՑ.— Ծիշտ է: Ոչ մի բիծ չի մաքրվում: (Դադար: Հանկարծակի մոտենալով Հայնրիխին): Կատրինն ինչի՞ց է տառապում:

ՀԱՅՆՐԻԽ.— Արնախտով է տառապում: Մարմինը խոցերով է պատված: Ահա երեք շաբաթ է, ինչ նա չի քնում և չի ուտում:

ԳԵՑ.— Ինչո՞ւ մոտը չմնացիր:

ՀԱՅՆՐԻԽ.— Ոչ ես եմ պետք նրան, ոչ նա՝ ինձ:

Նաստինն ներս է մտնում և մնում է խորքում:

ԳԵՑ.— Նրան բուժել-խնամել է պետք:

ՀԱՅՆՐԻԽ.— Նա չի կարող բուժվել. պետք է մեռնի:

ԳԵՑ.— Ինչի՞ց է մեռնում:

ՀԱՅՆՐԻԽ.— Ամոթից: Նա գարշում է սեփական մարմնից, որովհետև տղամարդկանց հազարավոր ձեռքեր են քալել նրան: Բայց նա անհամեմատ ավելի մեծ նողկանք է զգում իր սրտի նկատմամբ, որովհետև քո պատկերը մեջն է մնացել: Նրա մահացու հիվանդությունը դու ես:

ԳԵՑ.— Դա անցյալ տարվանն է, քահանա՛, ես չեմ ընդունում անցյալ տարվա մեղքերը: Ես այդ մեղքի համար կհատուցեմ այն աշխարհում՝ հավիտյանս հավիտենից: Բայց այս աշխարհում ես այդ հաշիվը մաքրել եմ: Մի բույե ժամանակ չունեմ կորցնելու:

ՀԱՅՆՐԻԽ.— Ուրեմն գոություն ունեն երկու Գեց:

ԳԵՑ.— Այո, երկուսը: Մեկը, որ ողջ է և Բարություն է անում: Մյուսը, որ մեռած է և Չարիք է գործել:

ՀԱՅՆՐԻԽ.— Եվ մեռածի հետ դու թաղել ես նաև քո մեղքերը:

ԳԵՑ.— Այո:

ՀԱՅՆՐԻԽ.— Հիանալի է: Բայց մեռած Գեցը չէ, որ նրան սպանում է, այլ գեղեցիկ, անարատ Գեցը, որը դարձել է Սիրո մարմնացում:

ԳԵՑ.— Դու ստում ես: Չարագործ Գեցն է, որ կատարել է ոճրագործությունը:

ՀԱՅՆՐԻԽ.— Դա ոճրագործություն չի եղել: Պղծելով՝ նրան տվել ես շատ ավելին, քան ունեցել ես դու ինքդ. սե՛ր: Փաստ է,

որ նա քեզ սիրում էր, չգիտեմ ինչու: Եվ ահա մի գեղեցիկ
օր դու ներշնչվեցիր բարեգործությամբ և ի՞նչ... մի քսակ
դիր Կատրինի ձեռքը և նրա՛ն լինեցիր: Ահա թե նա ինչից
է մեռնում:

ԳԵՑ.— Ես պոռնիկի հետ ապրել չէի կարող:

ՀԱՅՆՐԻԽ.— Իհարկե, չէիր կարող, քանի որ դու ինքդ ես նրան
դարձրել այդպիսին:

ԳԵՑ.— Ես կամ Բարությունից պիտի հրաժարվեի, կամ՝ նրանից:

ՀԱՅՆՐԻԽ.— Եթե պահպանեիր, գուցե փրկեիր նրան, հետո էլ
ինքդ քեզ: Բայց ինչպե՞ս. փրկել մի՞ հոգի, ընդամենը՝ մե՞-
կը: Մի՞թե Գեցն այդ աստիճան կարող էր նվաստանալ: Մե-
ծածավալ էին նրա ծրագրերը:

ԳԵՑ (հանկարծակի).— Որտե՞ղ է նա:

ՀԱՅՆՐԻԽ.— Քո սեփական հողերի վրա:

ԳԵՑ.— Ուրեմն նա ուզում էր ինձ նորից տեսնել:

ՀԱՅՆՐԻԽ.— Այո, բայց ախար նրան տապալեց ճանապարհին:

ԳԵՑ.— Որտե՞ղ:

ՀԱՅՆՐԻԽ.— Չեմ ասի: Ինչքան որ չարիք ես պատճառել խեղճ
աղջկան, այդքանը լիովի բավական է նրա համար:

ԳԵՑ (բռունցքը բարձրացնելով՝ զայրացած).— Ես... (Հանդարտ-
վում է): Լա՛վ, ես ինքս կգտնեմ նրան: Մնա՛ս բարով, Հայն-
րի՛խ: (Սատանայի կողմը խոնարհվելով): Հարգանքներս:
(Շրջվում է դեպի Նաստին): Ե՛կ, Նաստի՛:

ՀԱՅՆՐԻԽ (ապշած).— Նաստի՛:

Նաստին ուզում է հետևել Գեցին: Հայնրիխը կտրում է նրա
ճանապարհը:

ՏԵՍԱՐԱՆ Դ

ՀԱՅՆՐԻԽ, ՆԱՍՏԻ

ՀԱՅՆՐԻԽ (երկշոտ).— Նաստի՛: (Բարձրաձայն): Նաստի՛, ես
քեզ փնտրում էի, կա՛նգ առ: Քեզ հետ խոսելու բան ունեմ:
Արհամարհիր, ինչքան ուզում ես, միայն թե լսիր: Ես եղել
եմ Շուլհայմի կալվածքում. խոսվությունը հասունանում է:

ՆԱՍՏԻ.— Ես այդ գիտեմ: Թող անցնեմ:

ՀԱՅՆՐԻԽ.— Դու այդ խոսվությունը ցանկանում ես, ասա՛, ցանկանում ես, ասա՛, ցանկանում ես:

ՆԱՍՏԻ.— Դա քեզ չի վերաբերում: Թող անցնեմ:

ՀԱՅՆՐԻԽ (թևերը տարածելով).— Ձեռ անցնի, մինչև չպատասխանես:

ՆԱՍՏԻ (լուռ նայում է նրան, ապա վճռում է).— Ցանկանամ թե չցանկանամ՝ միևնույն է, ոչ ոք չի կարող կանխել:

ՀԱՅՆՐԻԽ.— Ես կարող եմ: Երկու օրում ես կարող եմ պատվար կանգնեցնել մակընթացող ծովի դեմ: Իսկ փոխարենը, Նաստի՛, ես կուզեմայի, որ դու ինձ ներես:

ՆԱՍՏԻ.— Դարձյալ ներման խաղարկությունը: **(Դադար):** Այդ խաղն ինձ համար ձանձրալի է. ես դրան չեմ մասնակցում: Ես իրավասու չեմ ոչ դատապարտելու, ոչ էլ ներելու. դա Աստծո գործն է:

ՀԱՅՆՐԻԽ.— Եթե ինձ տրված լինեք վիճարկելու իրավունքը, ես պիտի նախընտրեի քո ներումը, Նաստի՛:

ՆԱՍՏԻ.— Եվ այդ պիտի լինեք սխալ ընտրություն: Դրախտը ձեռքիցդ բաց պիտի թողնեիր մի դատարկ հնչյունի համար:

ՀԱՅՆՐԻԽ.— Ո՛չ, Նաստի՛, Երկնքի ներումից ես կհրաժարվեմ, միայն թե երկիրն ինձ ների:

ՆԱՍՏԻ.— Երկիրը չի ներում:

ՀԱՅՆՐԻԽ.— Դու հոգիս մաշեցիր:

ՆԱՍՏԻ.— Ի՞նչ:

ՀԱՅՆՐԻԽ.— Քեզ չեմ ասում: **(Նաստիին):** Դու իմ գործը դրժվարացնում ես: Ինձ մղում են դեպի ատելությունը, Նաստի՛, ինձ մղում են դեպի ատելությունը, և դու ինձ չես օգնում: **(Երեք անգամ խաշակնքում է):** Լա՛վ, մի բույե հանգիստ շունչ կքաշեմ: Դե՛, հիմա լսի՛ր: Ծտապել է պետք: Գյուղացիները կազմակերպվում են, ուզում են բանակցությունների մեջ մտնել բարոնների հետ: Այդ մեզ հնարավորություն կտա մի քանի օր շահելու:

ՆԱՍՏԻ.— Քո ինչի՞ն է պետք մի քանի օրը:

ՀԱՅՆՐԻԽ (եկեղեցին մատնացույց անելով).— Դու տեսար, չէ՞, գյուղացիներին. նրանք իրենց կյանքը չեն խնայի հանուն Եկեղեցու: Այս գյուղերի հավատացյալներն ավելի մոլեռանդ են, քան մնացած ողջ Գերմանիայի բնակչությունը:

ՆԱՍՏԻ (թափահարում է գլուխը).— Քո քահանաներն անգոր են: Ճիշտ է, նրանց սիրում են, բայց խոսվությունը պարսավելու դեպքում նրանց քարոզը կլինի ձայն բարբառո հանապատի:
ՀԱՅՆՐԻԽ.— Ես հույսս դրել եմ ոչ թե նրանց քարոզների, այլ նրանց լուծության վրա: Պատկերացրո՛ւ գյուղացիները մի առավոտ արթնանում են, և ի՞նչ են տեսնում. բաց են եկեղեցու դռները, և եկեղեցին դատարկ է. թոչնակը թոել է: Ոչ մի քահանա՝ ոչ խորանի առջև, ոչ գերեզմանատանը, ոչ առաջնորդարանում:

ՆԱՍՏԻ.— Դա հնարավոր է իրականացնել:

ՀԱՅՆՐԻԽ.— Ամեն ինչ պատրաստ է: Այստեղ ունե՛ս քո մարդկանցից:

ՆԱՍՏԻ.— Մի քանի հոգի:

ՀԱՅՆՐԻԽ.— Թող երկրով մեկ շրջեն ու գոռգոռան բոլորից բարձր: Եվ թող հատկապես հայհոյեն Աստծուն: Մեզ պետք է, որ նրանք տարածեն խոսվություն ու սարսափ: Հետո՛ եկող կիրակի, Ռիգիում, հենց պատարագի կեսին, թող քահանային բռնեն, քարշ տան անտառ և գյուղ վերադառնան արևոտած սրերով: Դրան հաջորդող գիշերը, շրջանի բոլոր քահանաները գաղտնի կհեռանան իրենց գյուղերից և կապատանեն Մարկշտայնի ամրոցում, որտեղ և նրանց սպասում են: Երկուշաբթի օրվանից Աստված Երկինք կվերադառնա: Երեխաները կմնան առանց կնունքի, ոչ ոք թողություն չի տա մեղքերին, և հիվանդները կվախենան մեռնել՝ առանց խոստովանանքի: Վախը կխեղդի խոսվությունը:

ՆԱՍՏԻ (խորհելով).— Դա հնարավոր է...

Բացվում է եկեղեցու դուռը: Լսվում են երգեհոնի ձայներ: Գյուղացիները դուրս են գալիս՝ արձանը տանելով պատգարակի վրա:

(Նրանց նայելով): Քանի որ հնարավոր է, ուրեմն թող լինի:
ՀԱՅՆՐԻԽ.— Նաստի՛, աղաչում եմ քեզ. ասա, որ դու ինձ ներելու ես, եթե գործը հաջող վերջանա:

ՆԱՍՏԻ.— Ես ի սրտե ուզում եմ: Սակայն ցավն այն է, որ ես գիտեմ, թե դու ով ես:

ՊԱՏԿԵՐ ՎԵՑԵՐՈՐԴ

Տասնհինգ օր հետո: Եկեղեցու ներսը: Բոլոր գյուղացիներն այդտեղ են ապաստանել ու դուրս չեն գալիս: Այդտեղ են ուտում ու քնում: Այս պահին նրանք աղոթում են: Նաստին և Հայնրիխը նայում են, թե նրանք ինչպես են աղոթում: Տղամարդիկ ու կանայք պառկել են հատակին: Հիվանդներին ու հաշմանդամներին տեղափոխել են եկեղեցի: Մի քանիսը տնքում ու շարժվում են բարձրադիր ամբիոնի տակ:

ՏԵՍԱՐԱՆ Ա

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐ՝ աղոթելիս, ՆԱՍՏԻ և ՀԱՅՆՐԻՍ

ՆԱՍՏԻ (ինքն իրեն).— Այլևս ի վիճակի չեմ լսելու նրանց մըրմունջները: Ավա՛ղ, դուք ոչինչ չունեիք, ձեր զայրույթից բացի, և ես փչեցի, այն մարեցի:

ՀԱՅՆՐԻՍ.— Ի՞նչ ես ասում:

ՆԱՍՏԻ.— Ոչինչ:

ՀԱՅՆՐԻՍ.— Դու դժգո՞հ ես:

ՆԱՍՏԻ.— Այո:

ՀԱՅՆՐԻՍ.— Մարդիկ ամենուրեք լցվել են եկեղեցիները: Սարսափը նրանց շղթայել է. ապստամբությունը խեղդվեց հենց արգանդի մեջ: Էլ ի՞նչ ես ուզում:

Նաստին չի պատասխանում:

Ուրեմն ես կուրախանամ նաև քո փոխարեն:

Նաստին հարվածում է նրան:

Քեզ ի՞նչ պատահեց:

ՆԱՍՏԻ.— Կողերդ կջարդեմ, եթե ուրախանաս:

ՀԱՅՆՐԻՍ.— Չե՛ս ուզում, որ ես ուրախանամ մեր հաղթանակով:

ՆԱՍՏԻ.— Չեմ ուզում դու ուրախանաս, որ մարդկանց դարձրել ես չորքոտանի:

ՀԱՅՆՐԻՍ.— Ինչ որ ես արեցի, եղավ քո համաձայնությամբ ու քեզ համար: Տարակուսանքը քեզ շփոթեցրել է, մարգարե՛:

Նաստին ուտերն է թոթվում:

Բայց չէ՞ որ առաջին անգամը չէ, որ դու նրանց ստում ես:

ՆԱՍՏԻ.— Առաջին անգամն է, որ ես նրանց ծնկի եմ բերում և խափանում եմ նրանց ինքնապաշտպանությունը: Առաջին անգամն է, որ ես համամիտ եմ սնահավատությանը: Առաջին անգամն է, որ ես դաշնակցում եմ Սատանայի հետ:

ՀԱՅՆՐԻԽ.— Դու վախենո՞ւմ ես:

ՆԱՍՏԻ.— Սատանան Աստծո արարչագործությունն է. եթե Աստված կամենա, Սատանան ինձ կհնազանդվի: **(Հանկարծակի):** Խեղդվում եմ այս եկեղեցու ներսում. արի դուրս գնանք:

ՏԵՍԱՐԱՆ Բ

ՀԱՅՆՐԻԽ և ՆԱՍՏԻ, շարժվում են դեպի ելքը: **ԳԵՑԸ** հանկարծակի ներս է մտնում և հարձակվում է Հայնրիխի վրա:

ԳԵՑ.— Ծո՛ւն, գրագդ շահելու համար խտրություն չես դնում միջոցների մեջ: Քո պատճառով ես տասնհինգ օր կորցրի: Տասն անգամ կալվածքներս չափչփել եմ մի ծայրից մյուսը Կատրինին գտնելու համար: Եվ նոր իմանում եմ, որ նա այստեղ էր, մինչ ես նրան որտեղ ասես, որ՝ չէի փնտրում: Այստեղ նա հիվանդ պատկած է սալահատակին: Ի՛մ, ի՛մ մեղքով:

Հայնրիխը պոկվում է նրանից և Նաստիի հետ դուրս է գալիս: **Գեցն ինքն իր համար կրկնում է:**

Ի՛մ մեղքով... Ես ոչինչ չեմ զգում, դատարկ եմ այս հնչյունները: Դու ուզում ես ամոթանքի ստորացումը, բայց ես չունեմ: Հպարտությունն է ծորում իմ բոլոր վերքերից. երեսունհինգ տարի է, ինչ ես սաստկում եմ հպարտությունից. այդպիսին է ամոթանքից մեռնելու իմ ձևը: Ես այդ պետք է փոխեմ: **(Հանկարծակի):** Ազատի՛ր ինձ մտածելուց, ազատի՛ր ինձ: Այնպես արա, որ ես ինքս ինձ մոռանամ: Ինձ միջատ դարձրու, ամե՛ն:

Աղոթող գյուղացիների մրմուռն անում, ապա նվազում է: Կատրին՛ն: **(Առաջանում է ամբոխի միջով, նայում է յուրաքանչյուրին և ձայն է տալիս):** Կատրին՛ն, Կատրին՛ն: **(Մոտենում է սալահատակին փռված մի մութ կերպարանքի: Բարձրացնում է ծածկոցը, ապա թեթևացած՝ այն բաց է թողնում: Անհետանում է սյան ետևում: Դեռ լսվում է նրա կանչը):** Կատրին՛ն:

ՏԵՍԱՐԱՆ Գ

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐ մեծակ

- Աշտարակի ժամացույցը խփում է յոթ անգամ:
ՏՂԱՄԱՐԴ (սալահատակին պառկած՝ ցնցվելով արթնանում է:
Քնաթաթախ)։— Ժամը քանի՞սն է: Այսօր ի՞նչ օր է:
ՈՒՐԻԾ ՏՂԱՄԱՐԴ.— Կիրակի առավոտ և ժամը յոթն է: Ո՛չ,
այսօր կիրակի չէ:
ԶԱՅՆԵՐ.— Վերջացան կիրակիները, վերջացան: Էլ չեն լինելու:
Մեր քահանան գնաց, հետը տարավ բոլոր կիրակիները:
— Նա մեզ թողեց միայն աշխատանքային օրերը, աշխա-
տանքի և քաղցի անհիծյալ օրերը:
ՏՂԱՄԱՐԴ (քնաթաթախ)։— Որ այդպես է, գրո՛ղի ծոցը: Ես նո-
րից քնում եմ: Ինձ կարթնացնեք վերջին դատաստանի օրը:
ԿԻՆ.— Եկեք աղոթենք:
Հիլդան ներս է մտնում, հետը բերում է ծղոտի կապոց: Նը-
րան հետևում են երկու գեղջկուհի, որոնք նույնպես ծղոտ են բե-
րում:

ՏԵՍԱՐԱՆ Դ

ՆՈՒՅՆՔ, ՀԻԼԴԱ, ապա ԳԵՑ

- ԱՌԱՋԻՆ ԿԻՆ.— Հիլդան է, Հիլդան:
ԵՐԿՐՈՐԴ ԿԻՆ.— Մեր մտտից հեռանում ես թե չէ, մենք վատ
ենք զգում: Ի՞նչ կա դրսում: Պատմի՛ր:
ՀԻԼԴԱ.— Պատմելու ոչինչ չկա: Լոռայում է ամենուրեք: Միայն
անասունները մերթընդմերթ վախից բառաչում են:
ԶԱՅՆ.— Լա՛վ է եղանակը:
ՀԻԼԴԱ.— Չգիտեմ:
ԶԱՅՆ.— Դու երկնքին չե՞ս նայել:
ՀԻԼԴԱ.— Ո՛չ: (Դադար): Ես ծղոտ եմ հավաքել հիվանդներից
անկողին պատրաստելու համար: (Երկու գեղջկուհիներին):
Օգնե՛ք ինձ:
Նրանք բարձրացնում են մի հիվանդի և նրան տեղավորում
են ծղոտե անկողնու վրա:

Այդպես: Հիմա սրան:

Անում են նույնը:

Այս կնոջը:

Բարձրացնում են մի պառավի, որն սկսում է հեծկլտալ:

Լաց մի՛ եղիր, աղաչում եմ: Նրանց մի՛ զրկիր արիությունից: Դե, տատի՛, վերջացրու, թե չէ՝ բոլորը քեզ հետ կսկսեն հեծկլտալ:

ՊԱՌԱՎ (լացակումած).— Իմ տերողորմյան, այնտեղ... **(Մատնացույց է անում սալահատակը, որի վրա նա պառկած էր քիչ առաջ):**

ՀԻԼԴԱ (սրտնեղած վերցնում է տերողորմյան ու շարտում է նրա ծնկներից).— Վերցրո՛ւ: **(Իրեն տիրապետում է, ավելի մեղմ):**

Աղոթի՛ր, լա՛վ, աղոթի՛ր: Ավելի լավ է աղոթել, քան թե հեծկլտալ: Ավելի քիչ կլինի աղմուկը: Ա՛յ, այդ մեկը չեղավ: Չի կարելի հեծկլտալ և աղոթել միաժամանակ: **(Իր թաշկինակով սրբում է նրա աչքերը):** Դե՛, բավական է: Քիթո՞ մարի՛ր: Լա՛վ, վերջացավ: Լաց մի՛ եղիր, ասում եմ քեզ: Մենք հանցավոր չենք, և Աստված իրավունք չունի մեզ պատժելու:

ՊԱՌԱՎ (լացակումած).— Է՛հ, աղջի՛կս, դու հո գիտես, որ նա ունի բոլոր իրավունքները:

ՀԻԼԴԱ (պոռթկալով).— Եթե նա իրավունք ունենար անմեղներից պատժելու, ես անմիջապես կհանձնվեի Սատանային:

Բոլորը ցնցվում են, նայում են նրան: Նա ուտերն է թոթվում, գնում, հենվում է սյունին: Մի պահ նայվածքն անշարժանում է, կարծես, մի վերհուշ կլանել է նրան: Հետո՝ հանկարծակի, զզվանքով:

Թո՛ւհ:

ԱՌԱՋԻՆ ԿԻՆ.— Հիլդա՛, քեզ ի՞նչ պատահեց:

ՀԻԼԴԱ.— Ոչինչ:

ԿԻՆ.— Դու այնպես լավ էիր մեզ հուսադրում...

ՀԻԼԴԱ.— Հո՞ւյս... ինչի՞ վրա կամ ո՞ւմ վրա:

ԿԻՆ.— Հիլդա՛, եթե դու հուսահատվես, մենք բոլորս էլ քեզ հետ կհուսահատվենք:

ՀԻԼԴԱ.— Լա՛վ, ուշադրություն մի՛ դարձրեք իմ ասածին: **(Ցրնցվում է):** Ցուրտ է: Դուք եք աշխարհի միակ ջերմությունը: Պետք է իրար սեղմվեք և սպասեք:

ՉԱՅՆ.— Սպասե՛՛նք... ինչո՞ւ... մինչև ե՞րբ:

ՀԻԼԴԱ.— Մինչև որ տաքանանք: Մենք քաղցած ենք ու ծարավ:
Մենք ահաբեկված ենք: Մենք վատ ենք զգում: Բայց ամե-
նակարևորը տաքանալն է:

ԿԻՆ.— Որ այդպես է՝ սեղմվիր ինձ, ե՛կ:

Հիլդան տեղից չի շարժվում: Կիևը վեր է կենում ու մոտենում է նրան:

Կատրիկը մեռա՞վ:

ՀԻԼԴԱ.— Այո:

ԿԻՆ.— Աստված հոգին լուսավորի:

ՀԻԼԴԱ.— Աստված: (**Կարճ ծիծաղ**): Աստված երես է թեթել
նրանից:

ԿԻՆ.— Հիլդա՛, ինչպե՞ս ես համարձակվում...

Ամբոխի աղմուկը:

ՀԻԼԴԱ.— Նա Դժոխքը տեսավ մեռնելուց առաջ: Հանկարծակի
ուղղվեց, ասաց, թե ինչ է տեսնում և մեռավ:

ԿԻՆ.— Ոչ մեկը չի՞ աղոթում նրա կողքին:

ՀԻԼԴԱ.— Ո՛չ: Ուզո՞ւմ ես՝ գնա մոտը, աղոթիր նրա համար:

ԿԻՆ.— Ոչ մի դեպքում, թեկուզ ինձ տան աշխարհի բոլոր գան-
ձերը:

ՀԻԼԴԱ.— Լա՛վ, քիչ հետո ես ինքս կգնամ: Թող մի քիչ էլ տա-
քանամ, հետո:

ԿԻՆ (չրջվում է դեպի ամբոխը).— Աղոթե՛նք, եղբայրներ՛ր, նե-
րում հայցենք այդ մեռած կնոջ համար, նա, որ տեսավ Դը-
ժոխքը և գուցե դատապարտված է տանջվելու հավիտյանս
հավիտենից: (**Հիլդայից հեռանում է և ծնրադրում**):

**Աղոթքի միակար մրմունջ: Գեցը հայտնվում է և նայում է Հիլ-
դային, որը դեռևս կանգնած հենվել է սյունին:**

ՀԻԼԴԱ (կիսաձայն).— Հայցել քո ներումը: Մենք քեզ ի՞նչ ենք
արել, որ դու էլ մեզ ներես: Այդ դո՛ւ, դո՛ւ պիտի հայցես մեր
ներումը: Ես չգիտեմ, թե հանդերձյալ կյանքում դու ի՞նչ ես
նախատեսել ինձ համար: Նա ոչ իմ ծանոթն էր, ոչ հարա-
զատը, բայց եթե դու նրան դատապարտես, հարկավոր չէ ինձ
քո Երկինքը: Կարծում ես՝ հազար տարվա կյանքը Դրախ-
տում ինձ մոռացնել կտա՞ նրա աչքերի սարսափը: Ես լոկ
արհամարհանք եմ զգում քո ապուշ ընտրյալների հանդեպ,
որոնք սիրտ ունեն ուրախանալու, երբ նգովյալներ կան Դը-
ժոխքում և աղքատներ՝ երկրի վրա: Ես պատկանում եմ մարդ-

կանց կուսակցությանը և նրանց չեմ լքի: Եթե կուզես, թող
ես մեռնեմ՝ զրկված քահանայի օրհնությունից և ինձ անա-
կընկալի բերելով՝ կանգնեցրու քո դատաստանի առջև. տես-
նենք՝ ո՞վ ում կդատի: (**Ռադար**): Այդ կիևը սիրում էր նրան:
Ամբողջ գիշերը նա կարոտից ոռնում էր շարունակ: Այն բի-
նը նրան ինչո՞վ էր կախարդել: (**Հանկարծակի շրջվում է դե-
պի աղոթողները**): Եթե ուզում եք աղոթել, Աստծուց խնդրեք,
որ Գեցի՛ գլխին թափի Ռիգիում հեղված արյունը:

ՉԱՅՆ.— Գեցի՛:

ՀԻԼՂԱ.— Այդ նա է հանցավորը:

ՉԱՅՆ.— Թող Աստված անպատիժ չթողնի բիճ Գեցին:

ԳԵՑ (կարճատև ծիծաղով).— Այ քեզ բա՛ն: Ինչ էլ անում եմ՝
Չարիք, թե Բարություն, շարունակ իմ անձի դեմ լարում եմ
մարդկանց ատելությունը: (**Մի գյուղացու**): Ո՞վ է նա:

ԳՅՈՒՂԱՑԻ.— Դե՛, դա Հիլդան է:

ԳԵՑ.— Ի՞նչ Հիլդա:

ԳՅՈՒՂԱՑԻ.— Հիլդա Լեմմը: Նրա հայրը գյուղի ամենահարուստ
ջրաղացպանն է:

ԳԵՑ (դառնորեն).— Դուք նրան այնպես եք ունկնդրում, կար-
ծես, մարգարե լինի: Նա ասաց, որ Գեցի դեմ աղոթեք, և
ահա դուք բոլորդ ծնրադրել եք:

ԳՅՈՒՂԱՑԻ.— Ա՛հ, ախր մենք սիրում ենք նրան:

ԳԵՑ.— Դուք նրան սիրո՞ւմ եք: Նա հարուստ է, և դուք սիրո՞ւմ
եք նրան:

ԳՅՈՒՂԱՑԻ.— Նա արդեն հարուստ չէ: Անցյալ տարի ուզում էր
դառնալ միանձնուհի, հետո սովը տիրեց, և նա իր իղձից
հրաժարվեց մեզ հետ ապրելու համար:

ԳԵՑ.— Բայց նա այդ ի՞նչ է անում սիրելի դառնալու համար:

ԳՅՈՒՂԱՑԻ.— Ապրում է բարի միանձնուհու նման: Ամեն ինչից
զրկում է իրեն: Բոլորին օգնում է...

ԳԵՑ.— Այո՛, այո՛, այդ ամենը ես էլ եմ կարողանում: Երևի մի
ուրիշ բան էլ պետք է, որ լինի, հը՞:

ԳՅՈՒՂԱՑԻ.— Ես այդքանը գիտեմ:

ԳԵՑ.— Միայն այդքա՞նը, հը՛մ:

ԳՅՈՒՂԱՑԻ.— Նա... նա սիրելի է:

ԳԵՑ (սկսում է ծիծաղել).— Սիրելի՞: Ընդհակառակություն, բարե-
կա՛մ, դու ինձ լուսավորեցիր: (**Հեռանում է նրանից**): Եթե

ճշմարիտ է, որ նա Բարություն է գործում, ես կուրախանամ,
ես կուրախանամ, ինչպես որ պետք է: Թող միայն հիմնա-
դրվի Քո թագավորությունը, կարևոր չէ՝ իմ, թե նրա շնորհիվ:
(Թշնամաբար նայում է նրան): Ապրում է միանձնուհու նը-
ման: Իսկ ե՞ս, ես չե՞մ ապրում վանականի նման: Նա այդ
ի՞նչ է արել, որ ես չեմ կարողացել: **(Մոտենում է նրան):**
Բարև, դու Կատրինին ճանաչո՞ւմ ես:

ՀԻԼԴԱ (ցնցվելով).— Ինչո՞ւ ես հարցնում: Ո՞վ ես դու:

ԳԵՑ.— Պատասխանի՛ր, դու նրան ճանաչո՞ւմ ես:

ՀԻԼԴԱ.— Այո, այո, ես նրան ճանաչում եմ: **(Հանկարծակի ետ է
զգում Գեցի դեմքը ծածկող կնգուղը):** Քեզ՝ նույնպես: Քեզ
՞ել եմ ճանաչում, թեև երբևիցե չեմ տեսել: Դու Գեցն ես:

ԳԵՑ.— Այո, ես եմ:

ՀԻԼԴԱ.— Վերջապե՞ս:

ԳԵՑ.— Որտե՞ղ է նա:

**ՀԻԼԴԱ (նայում է նրան առանց պատասխանելու: Երթունքներին՝
զայրույթի ժպիտ).**— Դու կտեսնես նրան. շտապելու կարիք
չկա:

ԳԵՑ.— Կարծում ես նա ցանկություն ունի՞ տանջվելու ևս հինգ
րոպե:

ՀԻԼԴԱ.— Կարծում ես, քեզ տեսնելով, նա կդադարի՞ տանջվե-
լուց: **(Նայում է նրան: Դադար):** Երկուսդ էլ սպասելու եք:

ԳԵՑ.— Ինչի՞ն եմք սպասելու:

ՀԻԼԴԱ.— Որ քեզ մի կուշտ նայեմ:

ԳԵՑ.— Խելագա՞ր, ես քեզ չեմ ճանաչում, չեմ էլ ուզում ճանա-
չել:

ՀԻԼԴԱ.— Ես քեզ ճանաչում եմ:

ԳԵՑ.— Ո՞չ:

ՀԻԼԴԱ.— Ո՞չ: Դու քո կրծքին գանգուր մազերի մի փունջ ունես՝
նման սև թավիշի: Քո փոքի ձախ մասում կապույտ երակ ու-
նես, որն ուռչում է կենակցելու պահերին: Քո կոնքից վերև
ելակի չափ մեծ խալ ունես:

ԳԵՑ.— Դու որտեղի՞ց գիտես:

ՀԻԼԴԱ.— Արդեն հինգ օր, հինգ գիշեր է, որ ես անցկացնում եմ
Կատրինի սնարի մոտ: Մենք՝ երեքս, գտնվում էինք այդ
սենյակում: Նա, ես և դու: Եվ մենք երեքով միասին կենակ-
ցեցինք: Ամենուրեք նա քեզ էր տեսնում, և, ի վերջո, ես էլ

սկսեցի քեզ տեսնել: Գիշերը քսան անգամ դուռը բացվում էր, և դու ներս էիր մտնում: Նայում էիր նրան՝ ծույլ ու անփույթ և երկու մատով շոյում էիր նրա ծոծրակը: Ահա այսպես: **(Կոպտաբար բռնում է նրա ձեռքը):** Այդ ի՞նչ կա, ի՞նչ կա այս մատների մեջ: Մի՞նչ է ու վրան՝ մազեր: **(Կատաղի վանում է նրա ձեռքը):**

ԳԵՑ.— Նա ի՞նչ էր ասում:

ՀԻԼԴԱ.— Այն ամենը, ինչ հարկավոր է, որ ես ատկություն զգամ քո նկատմամբ:

ԳԵՑ.— Որ ես չար եմ, կոպիտ, գարշելի:

ՀԻԼԴԱ.— Որ դու գեղեցիկ ես, խելացի, քաջագուն: Որ դու լկտի ես ու դաժան: Որ քեզ տեսնելիս՝ կիներ չի կարող չսիրահարվել:

ԳԵՑ.— Նա քեզ պատմել է ուրիշ Գեցի մասին:

ՀԻԼԴԱ.— Գոչություն ունի միայն մեկը:

ԳԵՑ.— Բայց դու նայիր ինձ քո աչքերով: Որտե՞ղ է դաժանությունը, որտե՞ղ է լկտիությունը: Եվ ավա՞ղ, որտե՞ղ է խելացիությունը: Նախկինում ես տեսնում էի պարզ ու հեռուն, որովհետև Չարիքը պարզ է: Բայց տեսողությունս մթազնեց, և աշխարհը լցվեց անեղծվածներով: Հիլդա՛, խնդրում եմ, մի՛ լինիր ինձ թշնամի:

ՀԻԼԴԱ.— Քեզ համար ի՞նչ տարբերություն, քանի որ միջոցներ չունեն քեզ վնասելու:

ԳԵՑ **(մատնացույց անելով գյուղացիներին)**.— Նրանց մոտ դու ինձ վնասել ես:

ՀԻԼԴԱ.— Նրանք ինձ են պատկանում, և ես նրանց եմ պատկանում: Դու նրանց մի՛ խառնիր քո գործերին:

ԳԵՑ.— Ծի՛շտ է, որ նրանք քեզ սիրում են:

ՀԻԼԴԱ.— Այո, ճիշտ է:

ԳԵՑ.— Ինչո՞ւ:

ՀԻԼԴԱ.— Ես երբեք այդ մասին չեմ մտածել:

ԳԵՑ.— Պա՛հ, սիրում են, որովհետև գեղեցիկ ես:

ՀԻԼԴԱ.— Ո՛չ, գորավա՛ր, դուք՝ մյուսներդ, սիրում եք գեղեցիկ կանանց, որովհետև ուրիշ անելիք չունեք և ուտում եք համեմված կերակուր: Իմ եղբայրներն աշխատում են ամբողջ օրը և քաղցած են: Նրանք աչքեր չունեն կանանց գեղեցկության համար:

ԳԵՑ.— Ուրեմն ինչո՞ւմն է բանը: Ա՛հ, նրանք քո կարիքն են զգում:

ՀԻԼԴԱ.— Ավելի շուտ, ես եմ զգում նրանց կարիքը:

ԳԵՑ.— Ինչո՞ւ:

ՀԻԼԴԱ.— Դու այդ չես կարող հասկանալ:

ԳԵՑ (նրան մոտենալով).— Քեզ սիրեցին միանգամի՞ց:

ՀԻԼԴԱ.— Այո, միանգամից:

ԳԵՑ (ինքն իրեն).— Այդպես էլ գիտեի՝ միանգամից կամ երբեք: Ակզբից կանխորոշված է՝ դու շահելո՞ւ ես, թե՞ ոչ: Ժամանակն ու ջանքերն ավելորդ են: (Հանկարծակի): Աստված այդպես կամենալ չէր կարող: Դա նույնն է, թե կան մարդիկ, որոնք անհիծված են հենց ծնված օրից:

ՀԻԼԴԱ.— Ծիշտ է, օրինակ՝ Կատրինը:

ԳԵՑ (նրան չլսելով).— Դու նրանց ի՞նչ ես արել, վհո՞ւկ: Պիտի որ մի բան արած լինես, թե չէ ինչո՞ւ դու հաջողության հասար այնտեղ, որտեղ ես ձախողվեցի:

ՀԻԼԴԱ.— Իսկ Կատրինին հրապուրելու համար դո՞ւ ինչ արեցիր: Հմայված նայում են միմյանց:

ԳԵՑ (դեռ նրան նայելով).— Դու նրանց սերը գողացար ինձանից: Երբ ես քեզ եմ նայում, նրանց սերն եմ տեսնում:

ՀԻԼԴԱ.— Երբ ես եմ քեզ նայում, Կատրինի սերն եմ տեսնում և գարշում եմ քեզանից:

ԳԵՑ.— Ո՞ր մեղքիս համար ես ինձ ամբաստանում:

ՀԻԼԴԱ.— Ես քեզ ամբաստանում եմ հանուն Կատրինի, որին դու հասցրիր հուսահատության:

ԳԵՑ.— Դա քեզ չի վերաբերում:

ՀԻԼԴԱ.— Ես քեզ ամբաստանում եմ հանուն այն կանանց ու տղաների, որոնց գլխին դու հողերի թափեցիր ու մեզ տակը թողեցիր:

ԳԵՑ.— Կորի՛ր գրողի ծոցը... Այդ էր պակաս՝ ես մի կնոջ առջև արդարանալի:

ՀԻԼԴԱ.— Ես քեզ ամբաստանում եմ հանուն իմ ոտնահարված արժանապատվության, քանի որ դու ինձ հետ կենակցել ես՝ հակառակ իմ կամքին:

ԳԵՑ (ապշած).— Քե՞զ հետ:

ՀԻԼԴԱ.— Հինգ գիշեր շարունակ դու ինձ տիրել ես բռնությամբ ու խորամանկությամբ:

ԳԼԵՑ (Ծիծաղելով).— Անշուշտ, քո երազների մեջ:

ՀԻԼԴԱ.— Երազների մեջ, այո՛, երազների մեջ: Նրա՛ երազների մեջ: Նա ինձ կլանեց ու ներքաշեց այդ երազների մեջ: Ես ուզեցի տառապել նրա ցավերով, ինչպես որ տառապում եմ նրանց ցավերով: Սակայն այս մեկը ծուղակ էր, քանզի հարկ եղավ, որ ես քեզ սիրեմ նրա սիրո կրքոտությամբ: Փա՛ռք Աստծո, ես քեզ տեսնում եմ: Ես քեզ տեսնում եմ օրը ցերեկով և ազատագրվում եմ: Տերեկը դու այն չես, ինչ որ կաս:

ԳԵՑ.— Իհարկե, այդպես է: Դե՛, արթնացի՛ր. այդ ամենը տեղի ունեցավ միայն քո գլխում: Ես քեզ չեմ դիպել. այս առավոտ ես քեզ տեսնում եմ առաջին անգամ: Քեզ ոչինչ չի պատահել:

ՀԻԼԴԱ.— Ոչի՛նչ: Բացարձակապես ոչի՛նչ: Նա ճշում էր իմ թևերի մեջ, բայց դա ի՞նչ կարևոր է: Ինձ ոչինչ չի պատահել, քանի որ դու չես դիպել ոչ իմ ստիճակներին, ոչ իմ շուրթերին: Գրո՛ղը քեզ տանի, չքնա՛ղ զորավար, դու միայնակ ես, ինչպես հարուստը, և տառապել ես միմիայն քեզ հասցված վերքերից: Հենց այդ է քո դժբախտությունը: Ես մարմինս հազիվ եմ զգում. չգիտեմ՝ կյանքս որտեղ է սկսվում, որտեղ է վերջանում: Եվ պատահում է, ես չեմ պատասխանում, երբ ինձ կանչում են, քանի որ երբեմն ինձ այնքան զարմանալի է թվում, որ սեփական անուն ունեմ: Բայց ես տառապում եմ բոլորի մարմիններով, և բոլորի այտերին իջած բռունցքի հարվածներից իմ այտերը ցավում են: Ես մեռնում եմ բոլոր մեռնողների հետ: Իմ մարմնի միջով է, որ դու բռնաբարել ես այն կանանց, որոնց բռնի ես տիրել:

ԳԵՑ (հաղթական).— Վերջապե՛ս:

Հիղան զարմացած նայում է նրան:

Դու կլիներս առաջինը:

ՀԻԼԴԱ.— Ի՞նչ առաջին:

ԳԵՑ.— Առաջինը, որն ինձ պիտի սիրի:

ՀԻԼԴԱ.— Ե՛ս: (**Ծիծաղում է**):

ԳԵՑ.— Դու ինձ արդեն սիրում ես: Հինգ գիշեր ես քեզ պահել եմ իմ գրկում և քո հոգու մեջ հետք եմ թողել: Դու իմ մեջ սիրում ես այն զգացումը, որ Կատրինը տածում էր իմ նկատմամբ: Եվ ես՝ ահա բոլոր այս մարդկանց սերն է, որ սիրում եմ քո մեջ: Դու ինձ սիրելու ես: Եվ եթե նրանք, ինչպես հավակնում

ես պնդել, եթե նրանք քեզ են պատկանում, ապա ինձ էլ պիտի որ սիրենք քո աչքերով:

ՀԻԼԴԱ.— Հենց հիմա ես աչքերս կկուրացնեի, եթե համոզված լինեի, որ օրերից մի օր, նրանք քեզ քնքշությամբ են նայելու:
Գեցը բռնում է նրա թևը: Հիլդան հանկարծակի դադարում է ծիծաղելուց և չարությամբ նայում է նրան:

Կատրինը մահացել է:

ԳԵՑ.— Մահացել է: (Այդ լուրից ապշահար): Ե՛րբ:

ՀԻԼԴԱ.— Քիչ առաջ:

ԳԵՑ.— Նա... տատապե՛ց:

ՀԻԼԴԱ.— Նա տեսավ Դժոխքը:

ԳԵՑ (սալթաքելով).— Մահացել է:

ՀԻԼԴԱ.— Ազատվեց քեզանից, այնպես չէ՞: Դե՛, գնա՛ շույր նրա ծոծրակը:

Լուրջուն: Հետո ճիշեր եկեղեցու խորքում: Գյուղացիներն ուղղվում են ու շրջվում դեպի եկեղեցու մուտքը: Մի պահ սպասում են: Աղմուկը սաստկանում է, որից հետո հայտնվում են Հայնրիխը և Նաստին, որոնք Կատրինին բերում են պատգարակի վրա:

ՏԵՍԱՐԱՆ Ե

ՆՈՒՅՆՔ, ՀԱՅՆՐԻՍ, ՆԱՍՏԻ և ԿԱՏՐԻՆ

ԿԱՏՐԻՆ (այլևս չի ճշում: Կիսով չափ ուղղվելով՝ մրմնջում է).—

Ո՛չ, ո՛չ, ո՛չ, ո՛չ, ո՛չ:

ԳԵՑ (գոռալով).— Կատրի՛ն: (Հիլդային): Դու ստեցիր, ճիճո՛ւ:

ՀԻԼԴԱ.— Ես... ես չստեցի, Գե՛ց, նրա սիրտը դադարել էր բաբախելուց: (Թոնարհվում է Կատրինի վրա):

ՀԱՅՆՐԻՍ.— Ծանապարհին էինք, որ լսեցինք նրա ճիշը: Ասում է, Սատանան դարան է մտել, որ իրեն հափշտակի: Պաղատեց, որ իրեն տեղափոխենք Խաչի տակ:

Ամբոխն սպանոճալի ցցվում է նրանց առջև:

ՋԱՅՆԵՐ.— Ո՛չ, ո՛չ:

— Նա նզովյալ է:

— Դո՛ւրս այստեղից:

— Դո՛ւրս այստեղից:

— Դո՛ւրս այստեղից, անմիջապես:

ԳԵՑ.— Գրո՛ղը ձեզ տանի, շնե՛ր: Ես ձեզ հիմա կսովորեցնեմ քրիստոնեական ողորմածությունը:

ՀԻԼԴԱ.— Դու ընդունակ ես միայն չարիք գործելու: (**Գյուղացի-ներին**): Նա դիակ է. հոգին դեռ կառչում է նրանից, որովհետև դևերով է շրջապատված: Սատանան դարան է մտել ձեզ էլ հափշտակելու համար: Էլ ո՞վ ձեզ կկարեկցի, եթե դուք չկարեկցեք նրան: Էլ ո՞վ կսիրի չքավորներին, եթե չքավորներն իրար չսիրեն:

Ամբոխը լռությամբ ետ է քաշվում:

Քանի որ նա խնդրում է, ուրեմն, տարեք նրան Քրիստոսի ոտքերի մոտ:

Հայնրիխը և Նաստին պատգարակը դնում են Խաչի տակ:

ԿԱՏՐԻՆ.— Նա այստե՛ղ է:

ՀԻԼԴԱ.— Ո՞վ:

ԿԱՏՐԻՆ.— Քահանան:

ՀԻԼԴԱ.— Դեռ չի եկել:

ԿԱՏՐԻՆ.— Գնա՛ գտի՛ր նրան: Ծո՛ւտ: Ես մահվանը կդիմադրեմ, մինչև նա գա:

ԳԵՑ (**նրան մոտենալով**).— Կատրի՛ն:

ԿԱՏՐԻՆ.— Այդ նա՞ է:

ԳԵՑ.— Այդ ես եմ, սիրելի՛ս:

ԿԱՏՐԻՆ.— Դո՛ւ: Ա՛հ, ես էլ կարծեցի, թե քահանան է: (**Սկըսում է ճչալ**): Ես քահանա եմ ուզում: Գնացեք գտե՛ք նրան, շո՛ւտ: Առանց մեղքերի թողության ես չեմ ուզում մեռնել:

ԳԵՑ.— Կատրի՛ն, դու վախենալու ոչ մի պատճառ չունես: Նրանք քեզ չեն տանջի. դու երկրի վրա շատ ես տառապել:

ԿԱՏՐԻՆ.— Քեզ ասում եմ, որ նրանց տեսնում եմ:

ԳԵՑ.— Որտե՛ղ:

ԿԱՏՐԻՆ.— Ամենուրեք: Օրհնյալ ջրով ցողեք, վտարեք նրանց: (**Նորից սկսում է ճչալ**): Փրկի՛ր ինձ, Գե՛ց, ինձ փրկի՛ր: Ամեն ինչում ինքդ ես մեղավոր: Ես մեղավոր չեմ: Փրկի՛ր ինձ, եթե սիրում ես:

Հիլդան փաթաթվում է նրան և փորձում է նորից պառկեցնել պատգարակին: Կատրինը գալարվում է՝ ճչալով:

ԳԵՑ (**աղաչական**).— Հայնրի՛խ:

ՀԱՅՆՐԻՒՍ.— Ես եկեղեցական չեմ:

ԳԵՅ.— Նա այդ չգիտի: Եթե դու ճակատին խաշակնքես, սարսափը նրան կլքի:

ՀԱՅՆՐԻՒՍ.— Ի՞նչ օգուտ, քանի որ հանդերձյալ կյանքում նա նորից ընկնելու է սարսափների մեջ:

ԳԵՅ.— Ընդամենը տեսիլներ են, Հայնրի՛խ:

ՀԱՅՆՐԻՒՍ.— Կարծո՞ւմ ես: (**Ծիծաղում է**):

ԳԵՅ.— Նաստի՛, դու, որ այն համոզմանն ես, որ բոլոր մարդիկ քահանաներ են...

Իր անզորությունից ճնշված՝ Նաստին բարձրացնում է ուտերը:

ԿԱՏՐԻՆ (նրանց շխելով).— Դուք չե՞ք տեսնում, որ ես մեռնում եմ:

Հիլդան ուզում է Կատրինին ստիպել, որ նա պառկի:

Թողե՛ք ինձ, թողե՛ք ինձ:

ԳԵՅ (ինքն իրեն).— Եթե միայն կարողանայի... (**Հանկարծակի նա որոշում է ընդունում և շրջվում է դեպի ամբոխը**): Հանցանքն իմն է, որ այս կինը խորտակվեց, ուստի ես պիտի փրկեմ նրան: Հեռացե՛ք այստեղից:

Նրանք դուրս են գալիս: Նաստին քարշ է տալիս Հայնրիխին: Հիլդան տատանվում է:

Դու, նույնպես, Հիլդա՛:

Հիլդան նայում է նրան և դուրս է գալիս:

ՏԵՍԱՐԱՆ Զ

ԳԵՅ, ԿԱՏՐԻՆ, ավելի ուշ՝ ԱՄԲՈՒԵԸ

ԳԵՅ.— Այժմ դու իմ ձեռքումն ես, Տե՛ր: Ինչքան էլ որ հրաշագործությունների խնայելիս լինես, միևնույն է՝ դու այս անգամ մի հրաշք պիտի անես ինձ համար:

ԿԱՏՐԻՆ.— Ո՞րք են գնում: Ինձ մի՛ թող մեռակ:

ԳԵՅ.— Ո՛չ, Կատրի՛ն, ո՛չ, սիրելի՛ս: Ես քեզ փրկելու եմ:

ԿԱՏՐԻՆ.— Այդ ինչպե՞ս պիտի կարողանաս: Դու քահանա չես:

ԳԵՅ.— Ես Քրիստոսին պիտի խնդրեմ, որ նա իմ վրա բարդի քո մեղքերը: Դու ինձ հասկացա՞ր:

ԿԱՏՐԻՆ.— Այո:

ԳԵՑ.— Քո փոխարեն ես պիտի ընկնեմ այդ մեղքերի տակ: Քո հոգին մաքուր է լինելու, ինչպես այն օրը, երբ դու ծնվեցիր: Ավելի մաքուր, քան եթե քահանայն թողութուն տված լինեիր քո մեղքերին:

ԿԱՏՐԻՆ.— Ես ի՞նչ իմանամ, որ Աստված քո իղձն ընդունեց:

ԳԵՑ.— Ես պիտի աղոթեմ: Եթե մտող վերադառնամ բորոտությունից կամ փտախտից այլանդակված դեմքով, դու ինձ կհավատա՞ս:

ԿԱՏՐԻՆ.— Այո, սիրելի՛ս, ես քեզ կհավատամ:

Գեջը հեռանում է նրանից:

ԳԵՑ.— Նրա մեղքերն իմն են, դու այդ գիտես: Վերադարձրու այն, ինչ ինձ է պատկանում: Դու իրավունք չունես այս կնոջը դատապարտելու, քանի որ ես եմ միակ հանցավորը: Ահա՛, ահավասիկ թևերս, դեմքս և կուրծքս: Կրծի՛ր իմ այտերը: Թող նրա մեղքերը լինեն իմ աչքերի և ականջների թարախը: Ինչպես քիմիական թթվից թող քայքայվեն իմ մեջքը, կոնքերն ու ազդրերը: Տո՛ւր ինձ բորոտություն, խոլերա, ժանտախտ, բայց փրկիր նրան:

ԿԱՏՐԻՆ (թուլացած ձայնով).— Գե՛ց, օգնությո՛ւն:

ԳԵՑ.— Դու ինձ լսո՞ւմ ես, խո՛ւյ Աստված: Դու չես մերժելու իմ առաջարկած գործարքը, քանզի արդարացի է՝ դու այդ գիտես:

ԿԱՏՐԻՆ.— Գե՛ց, Գե՛ց, Գե՛ց:

ԳԵՑ.— Ա՛հ, այս ձայնը լսել չեմ կարողանում: (**Մազլցում է ամբիոնի վրա**): Դու մարդկանց համար ես մահացել, այո՞, թե՞ ոչ: Տեսնում ես, չե՞, մարդիկ տառապում են: Ուրեմն պետք է նորից մահանալ նրանց համար: Տո՛ւր ինձ, տո՛ւր ինձ քո վերքերը: Տո՛ւր ինձ քո կողին բացված վերքը: Տո՛ւր ինձ քո ձեռքերի երկու արնածոր ճեղքերը: Եթե մի Աստված հաճեցավ տանջվել մարդկանց համար, ինչո՞ւ մարդը նույնպես չկարողանա: Դու ինձ նախանձո՞ւմ ես: Տո՛ւր ինձ քո սրբանշանները, տո՛ւր: (**Թևերը խաչակնքում է Քրիստոսի առջև**): Տո՛ւր ինձ, տո՛ւր, տո՛ւր: (**Կրկնում է «տուր ինձ»-ը, ինչպես մի երգ, որ հնարավոր չէ երգել**): Խլացե՛լ ես, օ՛հ, գրո՛ղը տանի: Ինչքա՛ն հիմարն եմ ես. օգնիր ինքդ քեզ, և Աստված քեզ կօգնի: (**Ռաշույնը դուրս է քաշում իր գոտուց: Չախ ձեռքով ծակում է աջ ափը: Եվ աջ ձեռքով ծակում է ձախ ափը:**

**Ապա՝ իր կողմ է վիրավորում: Հետո՝ դաշույնը նետում է խո-
րանի ետևը, խոնարհվում է և արյուն է քսում խաչված Քրիս-
տոսի կրծքին): Եկե՛ք բոլորդ:**

Նրանք ներս են մտնում:

Քրիստոսի արյունը թափվում է:

Ամբոխն աղմկում է: Նա բարձրացնում է ձեռքերը:

**Նայեցե՛ք. նա ողորմածաբար թույլ տվեց, որ ես կրեմ սրբա-
նշանները: Քրիստոսի արյունը, եղբայրներ՛ր, Քրիստոսի ար-
յունը ծորում է իմ ձեռքերից: (Իջնում է ամբիոնի աստիճան-
ներից և մոտենում է Կատրիճին): Այլևս ոչնչից մի՛ վախե-
ցիր, սիրելի՛ս: Մեր Հիսուսի արամբ ես հավում եմ քո ճա-
կատին, քո աչքերին, քո շուրթերին: (Արյունը քսում է նրա
երեսին): Դու դեռ տեսնո՞ւմ ես դեռի՞ն:**

ԿԱՏՐԻՆ.— Ոչ:

ԳԵՑ.— Խաղաղությա՛նք բնօրհի հավերժության մեջ:

**ԿԱՏՐԻՆ.— Քո արյունը, Գե՛ց, դու քո արյունը թափեցիր ինձ
համար:**

ԳԵՑ.— Քրիստոսի արյունը, Կատրի՛ն:

ԿԱՏՐԻՆ.— Քո արյունը... (Մահանում է):

ԳԵՑ.— Ծնրադրեք բոլորդ:

Բոլորը ծնրադրում են:

**Ձեր քահանաները շներ են, բայց դուք մի՛ վախեցեք: Ես մը-
նում եմ ձեզ հետ, միասին: Քանի դեռ Քրիստոսի արյունը
կհոսի այս ձեռքերից, ոչ մի արհավիրք չի թափվելու ձեր
գլխին: Վերադարձե՛ք ձեր տները և ցնծացե՛ք. այսօր տոնա-
խմբություն է մեզ համար: Այսօրվանից սկսվում է Աստծո՛
թագավորությունը երկրի վրա: Մենք կառուցելու ենք Արևի
Ոստանը: (Դադար):**

**Ամբոխն անձայն ու դանդաղ դուրս է հոսում: Մի կին անց-
նում է Գեցի մոտով, բռնում է նրա ձեռքը և արյունը քսում է երե-
սին: Հիլդան մնում է վերջինը: Նա մոտենում է Գեցին, բայց Գե-
ցը չի տեսնում նրան:**

ՀԻԼԴԱ.— Դու նրանց մի՛ տանջիր:

**Գեցը չի պատասխանում: Հիլդան հեռանում է: Գեցը սայ-
թաքում է, հեկվում է սյունին:**

ԳԵՑ.— Այժմ նրանք իմն են, վերջապե՛ս:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՐՐՈՐԴ

ՊԱՏԿԵՐ ՅՈԹԵՐՈՐԴ

Հրապարակ Այտվայեր գյուղում:

ՏԵՍԱՐԱՆ Ա

Գյուղացիները շրջապատել են մի գեղջկուհու, որը նրանց ուսուցանում է: Դաստիարակչուհին երիտասարդ է և բարետես: Նա գավազան է բռնել, որով ցույց է տալիս գետնի վրա գրված տառերը:

Ավելի ուշ՝ ԿԱՐԼ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԻՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿՉՈՒՀԻ.— Սա ի՞նչ տառ է: •

ԳՅՈՒՂԱՑԻ.— Դա «Ս» է:

ԴԱՍՏԻԱՐԱԿՉՈՒՀԻ.— Իսկ սա ի՞նչ է:

ՈՒՐԻԾ ԳՅՈՒՂԱՑԻ.— Դա «Ե» է:

ԴԱՍՏԻԱՐԱԿՉՈՒՀԻ.— Իսկ այս մե՞կը:

ԳՅՈՒՂԱՑԻ.— «Վ»:

ԴԱՍՏԻԱՐԱԿՉՈՒՀԻ.— Ոչ:

ՈՒՐԻԾ ԳՅՈՒՂԱՑԻ.— «Ր»:

ԴԱՍՏԻԱՐԱԿՉՈՒՀԻ.— Իսկ ամբողջ բա՞ռը:

ԳՅՈՒՂԱՑԻ.— Սեր:

ԲՈԼՈՐ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԸ.— Սե՛ր, սե՛ր...

ԴԱՍՏԻԱՐԱԿՉՈՒՀԻ.— Լավ է, եղբայրներ, շուտով կկարողանաք կարդալ: Եվ այն ժամանակ պիտի տարբերեք, թե ինչն է Բարին և ինչն է Չարը, ինչն է ճշմարիտը և ինչն է կեղծիքը: Հիմա, այ դու սխառասխանիր. ինչպիսի՞ն է եղել մեր նախկին էությունը:

ԳԵՂՋԿՈՒՀԻ (պատասխանում է, ասես, աղոթագրքից).— Մեր նախկին էությունը դա այն էությունն է, որ մենք ունեինք Գեղին ճանաչելուց առաջ:

ԴԱՍՏԻԱՐԱԿՉՈՒՀԻ.— Ինչպիսի՞ն էր այդ էությունը:

ԳՅՈՒՂԱՑԻ (նույն ձևով).— Այդ էությունը վատն էր:

ԴԱՍՏԻԱՐԱԿՉՈՒՀԻ.— Ինչպե՞ս պետք է պաշարենք մեր նախկին էությունն դեմ:

ԳՅՈՒՂԱՑԻ.— Ստեղծելով մի երկրորդ էություն:

ԴԱՍՏԻԱՐԱԿՉՈՒՀԻ.— Մեր մեջ ինչպե՞ս ստեղծենք այդ երկրորդ էությունը:

ԳԵՂՋԿՈՒՀԻ.— Սիրո արտահայտչաձևերով:

ԴԱՍՏԻԱՐԱԿՉՈՒՀԻ.— Արդյոք կարելի՞ է սեր համարել սիրո արտահայտչաձևերը:

ԳԵՂՋԿՈՒՀԻ.— Ոչ, սիրո արտահայտչաձևերը չի կարելի...

Հիլդան ներս է մտնում: Գյուղացիները մատնացույց են անում նրան:

ԴԱՍՏԻԱՐԱԿՉՈՒՀԻ.— Ի՞նչ: (**Շրջվում է**): Ա՛հ, Հիլդան է...

(**Դադար**): Քո՛ւյր իմ... դու մեզ խանգարում ես:

ՀԻԼԴԱ.— Ձեզ ինչպե՞ս եմ խանգարում. ես լուր եմ:

ԴԱՍՏԻԱՐԱԿՉՈՒՀԻ.— Դու լուր ես, բայց մեզ ես նայում, և մենք գիտենք, որ հավանություն չես տալիս:

ՀԻԼԴԱ.— Ես ինչ ուզեմ, կմտածեմ, չի՞ կարելի:

ԴԱՍՏԻԱՐԱԿՉՈՒՀԻ.— Չի կարելի, Հիլդա՛. այստեղ բոլորը մրտածում են բացահայտ ու բարձրաձայն: Յուրաքանչյուրի մտքերը պատկանում են բոլորին: Դու ուզո՞ւմ ես մեզ միանալ:

ՀԻԼԴԱ.— Ո՛չ:

ԴԱՍՏԻԱՐԱԿՉՈՒՀԻ.— Ուրեմն դու մեզ չե՞ս սիրում:

ՀԻԼԴԱ.— Սիրում եմ յուրովի:

ԴԱՍՏԻԱՐԱԿՉՈՒՀԻ.— Մեր երջանկությունը քեզ չի՞ ուրախացնում:

ՀԻԼԴԱ.— Ես... ա՛հ, եղբարե՛ր, դուք սղնթա՛ն եք տատապել: Եթե դուք երջանիկ եք, ուրեմն ես էլ պետք է ինձ երջանիկ համարեմ:

Ներս է մտնում Կարլը՝ աչքերը կապած: Նրան առաջնորդում է մի երիտասարդ կին:

ԴԱՍՏԻԱՐԱԿՉՈՒՀԻ.— Դուք ո՞վ եք:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԻՆ.— Մենք որոնում ենք Արևի Ոստանը:

ԳՅՈՒՂԱՑԻ.— Ոստանն այստեղ է:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԻՆ (Կարլին).— Ես այդպես էլ գիտեի: Ափսոս, չես կարող տեսնել նրանց երջանիկ կերպարանքները: Դա քեզ պիտի ուրախացներ:

Գյուղացիները նրանց շրջապատում են:

ԳՅՈՒՂԱՅԻՆԵՐ.— Խեղճ մարդիկ, ծարա՛վ էք, քաղցա՛ծ էք:
Դե՛, նստեցե՛ք:

ԿԱՐԼ (նստելով).— Ա՛հ, ինչքա՛ն բարի էք:

ԳՅՈՒՂԱՅԻ.— Այստեղ բոլորը բարի են, բոլորը՝ երջանիկ:

ՈՒՐԻՇ ԳՅՈՒՂԱՅԻ.— Բայց հիմա խառը ժամանակներ են. մենք
դադարել ենք ճամփորդելուց և բավարարվում ենք միմյանց
սիրելով: Ահա թե ինչու քո գալուստը մեզ լիացնում է ուրա-
խաթյամբ:

ԳԵՂՋԿՈՒՆԻ.— Առանձնապես հաճելի է բախականությունն պատ-
ճասել օտարականներին: Դուք ի՞նչ կցանկանալիք:

ԼՐԻՏՍԱՍԻՐԴ ԿԻՆ.— Մենք ցանկանում ենք տեսնել այն մար-
դուն, որի ձեռքերը արևոտում են:

ԿԱՐԼ.— Ծի՛շտ է, որ նա հրաշքներ է գործում:

ԳԵՂՋԿՈՒՆԻ.— Հենց այդ է նրա զբաղմունքը:

ԿԱՐԼ.— Ծի՛շտ է, որ նրա ձեռքերը արևոտում են:

ԳՅՈՒՂԱՅԻ.— Օր չի անցնում, որ դրանք չարնոտեն:

ԿԱՐԼ.— Ես կուզեմայի, որ նա մի քիչ արյուն քսեր իմ խեղճ աչ-
քերին, որպեսզի տեսողությունս վերականգնվեր:

ԳԵՂՋԿՈՒՆԻ.— Ա՛ն, դա հենց նրա գործն է, որ կա. նա քեզ
կբուժի:

ԿԱՐԼ.— Ինչքա՛ն բախտավոր էք, որ այդպիսի մարդ ունեք ձեզ
մոտ: Եվ դուք այնև չարիք չե՛ք գործում:

ԳՅՈՒՂԱՅԻ.— Ոչ ոք չի խմում, ոչ ոք չի գողանում:

ՈՒՐԻՇ ԳՅՈՒՂԱՅԻ.— Տղամարդկանց արգելված է ծեծել իրենց
կանանց:

ԳՅՈՒՂԱՅԻ.— Ծնողներին արգելված է ծեծել իրենց երեխանե-
րին:

ԿԱՐԼ (տեղավորվելով նստարանին).— Էսով է, բայց դա երկա՛ր
կտևի:

ԳՅՈՒՂԱՅԻ.— Կտևի այնքան, ինչքան Աստված կամենա:

ԿԱՐԼ.— Ավա՛ղ: (Հառաչում է):

ԴԱՍՏԻԱՐԱԿՉՈՒՆԻ.— Ինչո՞ւ ես հառաչում:

ԿԱՐԼ.— Ինձ ողեկցող կինը ամենուրեք տեսել է զինված մարդ-
կանց: Բարոններն ու գյուղացիները կովելու են իրար դեմ:

ԴԱՍՏԻԱՐԱԿՉՈՒՆԻ.— Հայդեշտամների կալվածքներում:

ԿԱՐԼ.— Ոչ այնտեղ, բայց շրջակայքում:

ԴԱՍՏԻԱՐԱԿՉՈՒՀԻ.— Այդ դեպքում դա մեզ չի վերաբերում:
Մենք ոչ ոքի չարիք չենք ցանկանում և ջանում ենք, որ սերը տիրապետի:

ԿԱՐԼ.— Բրավո: Ուրեմն դուք պիտի թողնեք, որ նրանք իրար սպանե՞ն: Ատելությունը, կոտորածը, ուրիշների արյունը անհրաժեշտ սնունդ են ձեր երջանկության համար:

ԳՅՈՒՂԱՑԻ.— Ի՞նչ ես ասում, խելագարվե՞լ ես:

ԿԱՐԼ.— Աստված վկա, ես կրկնում եմ միայն այն, ինչ ասում են ամենուրեք:

ԴԱՍՏԻԱՐԱԿՉՈՒՀԻ.— Ի՞նչ են ասում:

ԿԱՐԼ.— Ասում են, որ ձեր երջանկության հետևանքով նրանց տառապանքները դարձել են անտանելի, և որ հուսահատությունը իրենց հասցրել է ծայրահեղ վճիռների: **(Դադար):** Պա՛հ, դուք իրավացի եք, որ չեք մտահոգվում նրանց մասին: Մի քանի կաթիլ արյուն՝ ձեր երջանկության վրա. հաջող գործարք է, ձեզ վրա թանկ չի նստում:

ԴԱՍՏԻԱՐԱԿՉՈՒՀԻ.— Գեցը մեզ ասել է՝ մեր երջանկությունը սրբազան է, քանզի միայն մեզ համար չէ, որ մենք երջանիկ ենք, այլ բոլորի համար: Մենք վկայում ենք բոլորին և անձնական օրինակով՝ բոլորի առջև, որ երջանկությունը հնարավոր է այս աշխարհում: Այս գյուղը սրբավայր է, և բոլոր գյուղացիներն իրենց հայացքները մեզ պետք է հառեն, ինչպես քրիստոնյաները իրենց հայացքը հառել են դեպի Երուսաղեմ:

ԿԱՐԼ.— Երբ գյուղ վերադառնամ, ես բոլորին կազդարարեմ ավետիսը: Ես ամբողջ ընտանիքներ գիտեմ, որոնք սովից սատկում են, և նրանք կգոհանան՝ իմանալով, որ դուք երջանիկ եք նաև նրանց համար:

Գյուղացիների շփոթված լռություն:•

Եվ ի՞նչ եք անելու, բարի՛ մարդիկ, եթե պատերազմը բռնկվի:

ԳԵՂՋԿՈՒՀԻ.— Մենք աղոթելու ենք:

ԿԱՐԼ.— Ա՛հ, վախենամ՝ հարկադրված լինեք մասնակցելու:

ԴԱՍՏԻԱՐԱԿՉՈՒՀԻ.— Օ՛հ, այդ մեկը՝ ոչ:

ԲՈԼՈՐ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԸ.— Ո՛չ, ո՛չ, ո՛չ:

ԿԱՐԼ.— Արդյոք սրբազան չե՞ այն պատերազմը, որով ստրուկներն ուզում են մարդ դառնալ:

ԴԱՍՏԻԱՐԱԿՉՈՒՀԻ.— Բոլոր պատերազմները սրբապղծությունն

են: Մենք լինելու ենք Սիրո պահապաններ և խաղաղության
նահատակներ:

ԿԱՐԼ.— Ձեր դռների մոտ տերերը կոտորում, բռնաբարում, սպա-
նում են ձեր եղբայրներին, և դուք նրանց չե՞ք ատում:

ԳԵՂՋԿՈՒՀԻ.— Մենք խղճում ենք նրանց, քանի որ չար են:

ԲՈԼՈՐ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԸ.— Մենք նրանց խղճում ենք:

ԿԱՐԼ.— Քանի որ տերերը չար են, մի՞թե արդարացի չէ, որ
ապստամբեն նրանց զոհերը:

ԴԱՍՏԻԱՐԱԿՉՈՒՀԻ.— Բռնությունը անարդարացի է՝ ում կողմից
էլ, որ գործադրվի:

ԿԱՐԼ.— Եթե դուք դատապարտում եք ապստամբող ձեր եղբայր-
ների բռնությունը, ուրեմն դուք հավանություն եք տալիս բա-
րոնների գործադրած բռնությանը:

ԴԱՍՏԻԱՐԱԿՉՈՒՀԻ.— Ո՛չ, իհարկե:

ԿԱՐԼ.— Բայց այդպես է ստացվում, քանի որ դուք չեք ուզում,
որ դադարի նրանց այդ բռնությունը:

ԴԱՍՏԻԱՐԱԿՉՈՒՀԻ.— Մենք ուզում ենք, որ այն դադարի հենց
իրենց՝ բարոնների, կամեցողությամբ:

ԿԱՐԼ.— Իսկ նրանց ո՞վ պիտի ներշնչի այդ կամեցողությունը:

ԴԱՍՏԻԱՐԱԿՉՈՒՀԻ.— Մենք:

ԲՈԼՈՐ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԸ.— Մե՛նք, մե՛նք:

ԿԱՐԼ.— Եվ մինչ այդ ի՛նչ պետք է անեն գյուղացիները:

ԴԱՍՏԻԱՐԱԿՉՈՒՀԻ.— Պիտի հնազանդվեն, սպասեն և աղոթեն:

ԿԱՐԼ.— Դավաճաններ, ես պատռեցի ձեր դիմակը. դուք սեր եք
ուզում միայն ձեզ համար: Բայց զգուշացե՛ք. եթե այս պա-
տերազմը բռնկվի, ձեզանից հաշիվ պիտի պահանջեն ու պի-
տի չներեն, որ դուք մնացել եք չեզոք, երբ սպանում էին ձեր
եղբայրներին: Եթե հաղթանակեն գյուղացիները, գուցե նը-
րանք հրկիզեն Արևի Ոստանը՝ որպես պատիժ ձեր դավա-
ճանության: Իսկ եթե հաղթանակեն տերերը, ապա նրանք չեն
հանդուրժի, որ ճորտերի ձեռքում մնան ազնվատիրական հո-
ղերը: Զինվե՛ք, տղանե՛ր, զինվե՛ք: Եթե չեք ուզում կոպել
հանուն եղբայրության, ապա գոնե կովեք շահից դրդված.
Երջանկությունը պետք է պաշտպանել:

ԳՅՈՒՂԱՑԻ.— Մենք չենք կոպի:

ԿԱՐԼ.— Ուրեմն ձեզ կկոտորեն:

ԴԱՍՏԻԱՐԱԿՉՈՒՀԻ.— Մենք կհամբուրենք մեզ խփող ձեռքը, կմեռնենք՝ աղոթելով նրանց համար, ովքեր մեզ սպանում են: Քանի դեռ ապրում ենք, մենք ենթակա ենք մեռնելու, բայց երբ արդեն մեռած կլինենք, կապաստանենք ձեր հոգիների մեջ, և մեր ձայները կհնչեն ձեր ականջներից:

ԿԱՐԼ.— Գրո՛ղը տանի, ձեր դասը լավ եք սերտել: Ա՛հ, դուք չեք ամենամեղավորը: Ոճրագործը այն կեղծ մարգարեն է, որ քաղցր-մեղցր մոլորությամբ շղարշել է ձեր աչքերը:

ԲՈԼՈՐ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԸ.— Նա մեր Գեցին է անարգում: (**Հարձակվում են Կարլի վրա**):

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԻՆ.— Մի՛թե դուք խփելու եք մի կույր մարդու, դուք, որ հավակնություն ունեք ապրելու հանուն մարդասիրության:

ԳՅՈՒՂԱՑԻ (պոկում է փաթաթանը Կարլի աչքերից).— Կույր է, չէ՛ մի: Նայեցե՛ք, Կարլն է, դրչակի ծառան: Նրա սիրտը փրտել է ատելությունից, և ահա քանի շարաթ է՝ թափառում է անմիաբանություն և ապաստամբություն քարոզելով:

ԲՈԼՈՐ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԸ.— Կախե՛նք նրան:

ՀԻԼԴԱ.— Է՛հ, դո՛ւք, բարի՛ ոչխարներ, կատաղել եք: Կարլը շուն է, քանզի նա ձեզ դրդում է պատերազմելու: Բայց նա ճշմարիտ է, և ես թույլ չեմ տա խփել նրան, ով ասում է ճշմարտությունը, որտեղից էլ որ նա լինի: Ծշմարիտ է, եղբայրներ՛ր, որ ձեր Արևի Ոստանը կառուցված է ուրիշների թշվառության վրա: Որպեսզի այն հանդուրժեն, անհրաժեշտ է, որ մյուս գյուղացիները հաշտվեն իրենց ստրկության հետ: Եղբայրներ՛ր, ես ձեզ չեմ կշտամբում ձեր երջանկության համար: Բայց ես ավելի հանգիստ էի, երբ մենք դժբախտ էինք բոլորս միասին, քանզի մեր դժբախտությունը համամարդկային էր: Այս արնաթաթախ երկրի վրա պիղծ է ամեն ուրախություն, և երջանիկները մեռակ են:

ԳՅՈՒՂԱՑԻ.— Հեռացի՛ր այստեղից: Դու սիրում ես լուկ թշվառությունը, բայց նա՛ Գեցը, ուզում է կառուցել:

ՀԻԼԴԱ.— Ձեր Գեցը խաբեքա է:

Ամբոխն աղմկում է:

Է՛հ, էլ ի՞նչ եք սպասում: Ձեզ տեսնեմ՝ ինձ ծեծեք, կախեք:

Ներս է մտնում Գեցը:

ՏԵՍԱՐԱՆ Բ

ՆՈՒՅՆՔ, ԳԵՑ

ԳԵՑ.— Այս ի՛նչ սպառնալի դեմքեր եմ տեսնում:

ԳՅՈՒՂԱՑԻ.— Գե՛ց, այդ...

ԳԵՑ.— Լռի՛ր: Կիտված հոնքեր չեմ ուզում տեսնել: Նախ՝ ժըպտացեք, հետո խոսեք: Դե՛, դե՛, ժպտացե՛ք:

Գյուղացիները ժպտում են:

ԳՅՈՒՂԱՑԻ (ժպտալով).— Այս մարդը մեզ խոսվություն է քարոզում:

ԳԵՑ.— Ավելի լավ. փորձությունն է: Պետք է կարողանալ հանգիստ ունկնդրել ատելության խոսքը:

ԳԵՂՋԿՈՒՂԻ (ժպտալով).— Նա քեզ անաբգեց, Գե՛ց, և քեզ հորջորջեց կեղծ մարգարե:

ԳԵՑ.— Իմ բարի՛ Կարլ, մի՛թե դու ինձ այդքան շատ ես ստում:

ԿԱՐԼ.— Ծիշտն ասած՝ այո:

ԳԵՑ.— Նշանակում է, ես չեմ կարողացել սիրելի դառնալ քեզ համար: Դու ինձ ներիր: Ողեկցեք մինչև գյուղի վերջը, ուտելիք տվեք ճանապարհի համար և հրաժեշտի պահին համբուրեք նրան խաղաղությամբ:

ԿԱՐԼ.— Այս ամենը կոտորածով սիտի վերջանա, Գե՛ց: Այս մարդկանց արյունը թող թափվի քո գլխին:

ԳԵՑ.— Ամե՛ն:

Կարլը և Երիտասարդ Կինը դուրս են գալիս:

ՏԵՍԱՐԱՆ Գ

ՆՈՒՅՆՔ առանց ԿԱՐԼԻ և ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ԿՆՈՋ

ԳԵՑ.— Աղոթենք նրանց համար:

ԴԱՍՏԻԱՐԱԿՉՈՒՂԻ.— Մի բան կա, որ մեզ մտատանջում է, Գե՛ց:

ԳԵՑ.— Խոսի՛ր:

ԴԱՍՏԻԱՐԱԿՉՈՒՂԻ.— Խոսքս Հիլդայի մասին է: Մենք նրան սիրում ենք, բայց նա մեզ խանգարում է: Նա քեզ հետ համամիտ չէ:

ԳԵՑ.— Ես այդ գիտեմ:

ՀԻԼԴԱ.— Դա ձեզ համար ի՞նչ նշանակություն ունի, քանի որ ես հեռանում եմ:

ԳԵՑ (ապշած).— Հեռանում ես:

ՀԻԼԴԱ.— Այո, քիչ հետո...

ԳԵՑ.— Ինչո՞ւ:

ՀԻԼԴԱ.— Որովհետև նրանք երջանիկ են:

ԳԵՑ.— Հետո ի՞նչ:

ՀԻԼԴԱ.— Երջանիկներն իմ կարիքը չունեն:

ԳԵՑ.— Նրանք քեզ սիրում են:

ՀԻԼԴԱ.— Իհարկե, իհարկե: Բայց նրանք անմխիթար չեն մնա, երբ ես բացակայեմ:

ԳԵՑ.— Նրանք դեռ ունեն քո կարիքը:

ՀԻԼԴԱ.— Կարծո՞ւմ ես: (**Շրջվում է դեպի գյուղացիները**): Դուք դեռ զգո՞ւմ եք իմ կարիքը:

Գյուղացիները կաշկանդված լռում են:

Տեսնում ես, չէ՞: Ես նրանց ինչո՞վ կարող եմ ծառայել, քանի որ դու կաս նրանց համար: Մնաք բարով:

ԳԵՑ (գյուղացիներին).— Լուռ ու մունջ թողնելո՞ւ եք, որ նա հեռանա: Ապերախտնե՛ր, ո՞վ ձեզ փրկեց հուսահատությունից, երբ դուք դժբախտ էիք: Մնա՛, Հիլդա՛, ես խնդրում եմ նրանց անունից: Եվ ձեզ ես հրամայում եմ նրան սիրել առաջվա նման:

ՀԻԼԴԱ (հանկարծակի կատաղությամբ).— Քոնը լինի այդ ամենը: Դու գողացար իմ քսակը, բայց ես չեմ հանդուրժի, որ ինձ ողորմություն տաս իմ իսկ դրամից:

ԴԱՍՏԻԱՐԱԿՉՈՒՀԻ.— Մնա՛, Հիլդա՛, քանի որ նա այդ ուզում է: Հնազանդվելու ենք նրան, երդվում եմ: Եվ մենք քեզ սիրելու ենք, ինչպես մեզ պատվիրում է Սուրբ Մարդը²⁰:

ՀԻԼԴԱ.— Դե՛, լա՛վ, լա՛վ: Դուք ինձ սիրեցիք ձեր սրտերի բնական թելադրանքով. այժմ վերջացած է, չխոսենք այդ մասին: Ինձ մոռացե՛ք, շո՛ւտ մոռացեք: Ինչքան շուտ, այնքան լավ:

ԳԵՑ (գյուղացիներին).— Մեզ մենակ թողեք:

Գյուղացիները դուրս են գալիս:

ԳԵՑ.— Ո՞ր ես գնայու:

ՀԻԼՂԱ.— Որ պատահի: Երկրի վրա թշվառությունն անպակաս է:

ԳԵՑ.— Շարունակ՝ թշվառություն, շարունակ՝ վշտեր: Ուրիշ բան չկա՞ այս աշխարհի երեսին:

ՀԻԼՂԱ.— Ինձ համար չկա. այդ է իմ կյանքը:

ԳԵՑ.— Պետք է շարունակ նրանց ցավերո՞վ տառապել: Հնարավոր չէ՞ ուրախանալ նրանց երջանկությամբ:

ՀԻԼՂԱ (պոռթկալով).— Ես չեմ կարող: Սա ի՞նչ երջանկություն է. նրանք մայում են: (**Հուսահատությամբ**): Օ՛, Գե՛ց, այն օրվանից, ինչ դու մեզ հետ ես, ես դարձել եմ իմ իսկ հոգու թշնամին: Ես ամաչում եմ, երբ լսում եմ, թե նա ինչ է ասում: Ես գիտեմ, որ նրանք այլևս քաղցած չեն, և նրանց աշխատանքը նվազ չարքաշ է, բան առաջ: Եթե նրանք ցանկանում են այս անասնական երջանկությունը, ես էլ պետք է նույնը ցանկանամ նրանց համար: Բայց հասկացի՛ր, չեմ կարողանում: Ես դա ցանկանալ չեմ կարողանում: Երևի ես ճիշտ եմ. ես նրանց ավելի քիչ եմ սիրում այն օրվանից, ինչ նրանք ավելի քիչ են տառապում: Ել սակայն ես ատում եմ տառապանքը: (**Դադար**): Արդյոք ես չա՞ր եմ:

ԳԵՑ.— Դո՞ւ, ո՛չ: Դու նախանձում ես:

ՀԻԼՂԱ.— Նախանձում եմ, այո՛: Պայթելու չափ: (**Դադար**): Տեսնում ես, չէ՞, ես վաղուց պետք է հեռանայի. դու ինձ այլատերել ես: Օ՛հ, որտեղ էլ դու լինես, ինչ էլ դու նախաձեռնես, անխուսափելիորեն չարիք ես բորբոքում մարդկանց սրտերում: Մնա՛ս բարով:

ԳԵՑ.— Գնա՛ս բարով:

Հիլդան չի հեռանում:

Էլ ի՞նչ ես սպասում:

Հիլդան շարժում է անում հեռանալու:

Հիլդա՛, խնդրում եմ, ինձ մի՛ լքիր:

Հիլդան ծիծաղում է:

Քեզ ի՞նչ պատահեց:

ՀԻԼԴԱ (առանց չարության).— Դո՛ւ, դու ինձանից ամեն ինչ խլեցիր, և այդ դո՛ւ ես խնդրում, որ ես քեզ չլքեմ:

ԳԵՑ.— Ինչքան ինձ ավելի եմ սիրում, այնքան ես ինձ ավելի մենակ եմ զգում: Ես նրանց համար տանիք եմ, բայց ես տանիք չունեմ: Ես նրանց երկինքն եմ, բայց ես երկինք չունեմ: Չէ, մեկն ունեմ, այս մեկը, տես՝ ինչքան հեռու է: Ես ուզեցի այուն դառնալ և ինձ վրա կրել երկնակամարը: Հիմարություն՝ն. երկինքը ծակ է: Նույնիսկ ինքս ինձ հարց եմ տալիս, թե Աստված որտե՞ղ է տեղավորվում: **(Դադար):** Ես նրանց բավարար չափով չեմ սիրում, այդ է խնդիրը: Ես կատարեցի սիրո արտահայտչաձևերը, բայց սեր չզգացի: Հավանաբար ես անընդունակ եմ սիրելու: Ինչո՞ւ ես այդպես նայում:

ՀԻԼԴԱ.— Դու նրանց չէիր սիրում: Դու ինձանից գողացել ես վասն ոչնչի:

ԳԵՑ.— Ա՛հ, նրանց սերը չէր, որ ես պիտի վերցնեի քեզանից, այլ քոնը, քո սերը: Ես նրանց պետք է սիրեի քո սրտի միջով: Տես՝ ես քեզ ամեն ինչում նախանձում եմ, նույնիսկ քո նախանձի համար: Դու այստեղ ես, դու նրանց նայում ես, դու նրանց դիպչում ես, դու ջերմություն ես, դու լույս ես, և դու իմ ես-ը չես: Անտանելի է: Ես չեմ հասկանում, թե ինչու ես ու դու երկուս եմք. ես կուզեմայի դու լինել՝ անձնապես նույնը մնալով:

Ներս է մտնում Նաստին:

ՏԵՍԱՐԱՆ Ե

ԳԵՑ, ՀԻԼԴԱ, ՆԱՍՏԻ

ՆԱՍՏԻ (խուլ ձայնով).— Գե՛ց, Գե՛ց, Գե՛ց:

ԳԵՑ (շրջվելով).— Այդ ո՞վ է... Նաստի՛...

ՆԱՍՏԻ.— Մարդիկ խուլ են:

ԳԵՑ.— Խո՞ւլ: Խուլ քո ձայնի՞ համար: Նորություն է:

ՆԱՍՏԻ.— Այո՛, նորություն է:

ԳԵՑ.— Աստված քե՞զ էլ է փորձության ենթարկում, ինչպես մյուսներին: Հիմա տեսնեմք, թե ինչպես պիտի դուրս գաս դրա տակից:

ՆԱՍՏԻ.— Թող Աստված, ինչքան ուզում է, ինձ փորձության ենթարկի, ես չեմ կասկածելու ոչ նրա արդարությանը, ոչ իմ կոչումին: Իսկ եթե նա ինձ է կասկածում, ուրեմն հաստատ խելքը թոցրել է:

ԳԵՑ.— Ասա՛ ինչումն է բանը:

ՆԱՍՏԻ (Հիլդային մատնացույց անելով).— Հեռացրո՛ւ նրան:

ԳԵՑ.— Նա այդ ես եմ: Խոսի՛ր կամ հեռացի՛ր:

ՆԱՍՏԻ.— Լա՛վ: (**Դադար**): Խոսվությունը բռնկվել է:

ԳԵՑ.— Ի՛նչ խոսվություն: (**Կտրուկ**): Այդ ես չեմ: Այդ իմ հանցանքը չէ: Թող իրար կոտորեն: Դա ոչ մի առնչությամբ ինձ չի վերաբերում:

ՆԱՍՏԻ.— Նրանց կաշկանդում էր միայն երկյուղը Եկեղեցուց դու նրանց ապացուցեցիր, որ նրանք քահանայի կարիք չունեն: Հիմա վխտում են մարգարեներք, սակայն նրանք զայրույթի մարգարեներ են, որոնք վրիժառություն են քարոզում:

ԳԵՑ.— Եվ այս ամենը իմ ստեղծագործությունն է:

ՆԱՍՏԻ.— Այո՛:

ԳԵՑ.— Ահա քեզ: (**Հարվածում է նրան**):

ՆԱՍՏԻ.— Խփի՛ր, էլի՛ խփիր:

ԳԵՑ.— Հա՛: (**Ինքն իր շուրջը պտտվում է**): Ինչքան անուշ էր շարիքը: Ինձ թույլատրված էր մարդասպանությունը: (**Քայլում է: Դադար**): Ասա՛, տեսնենք՝ ի՛նչ ես խնդրում ինձանից:

ՆԱՍՏԻ.— Դու կարող ես կանխել վատթարագույնը:

ԳԵՑ.— Ե՛ս: (**Չոր ծիծաղ**): Հոնքը սարքելու փոխարեն ես աչքն եմ հանում, ապո՛ւշ: Եվ դու սի՛րտ ես անում իմ օգնությանը դիմելու:

ՆԱՍՏԻ.— Ծար չկա... Մենք չունենք ո՛չ զենք, ո՛չ փող, ո՛չ սպայակազմ, և մեր գյուղացիները շատ են անկարգապահ, ուստի չենք կարող հույս ունենալ, որ նրանք լավ զինվորներ կլինեն: Մի քանի օրից հետո կսկսվեն մեր պարտությունները, մի քանի ամսից՝ կոտորածները:

ԳԵՑ.— Հետո՞:

ՆԱՍՏԻ.— Մնում է փրկվելու միակ հնարավորությունը. այսօր ես խոսվությունը չեմ կարող կասեցնել, երեք ամսից հետո՛ կկարողանամ: Եթե մենք շահենք մի կանոնավոր ճակատամարտ, մեկը միայն բավական է, և բարոնները մեզ հաշտություն կառաջարկեն:

ԳԵՑ.— Իմ դե՛րը այս գործում:

ՆԱՍՏԻ.— Դու Գերմանիայի լավագույն գորավարն ես:

ԳԵՑ (նայում է նրան, ապա շրջվում է).— Ա՛հ: (Լռություն): Ուղղել: Շարունակ ուղղել ուրիշի փչացրածը: Դուք խլում եք իմ ժամանակը: Բոլորդ հեկնց դրանով եք զբաղված: Աստված իմ, բայց չէ՞ որ ես ուրիշ անելիքներ ունեմ:

ՆԱՍՏԻ.— Եվ դու թողնելու ես արար աշխարհ իրար կոտորեն, ինչ է, թե կարողանաս կառուցել քո այդ կոկիկ-մոկիկ Ոստանը՝ օրինակելի բնակավայրը:

ԳԵՑ.— Այս գյուղը տապան է: Սերն իմ շնորհիվ այստեղ գտել է ապաստան: Ջրհեղեղն ինձ ի՞նչ, քանի որ Սերը փրկվում է:

ՆԱՍՏԻ.— Խելքդ թոցրե՛լ ես: Պատերազմից խուսափել դու չես կարողանա. ինքը կգա, կչոքի քո դռանը:

Գեցը լռում է:

Ասա՛, դու սուաջարկս ընդունո՞ւմ ես:

ԳԵՑ.— Մի՛ շտապիր: (Նորից շրջվում է դեպի Նաստին): Կարգապահությունը բացակայում է: Ես պետք է այն ստեղծեմ: Իսկ դու գիտե՛ս՝ դա ինչ է նշանակում. կախադաններ:

ՆԱՍՏԻ.— Ես այդ գիտեմ:

ԳԵՑ.— Նաստի՛, անհրաժեշտ պիտի լինի կախադան բարձրացնել չքավորներին: Պիտի կախել ում պատահի՛ հեկնց միայն սաստելու համար... և՛ մեղավորներին, և՛ անմեղներին: Այդ ի՞նչ եմ ասում: Նրանք բոլորն էլ անմեղ են: Այսօր ես նրանց եղբայրն եմ և տեսնում եմ նրանց անմեղությունը: Եթե վաղը ես դառնամ նրանց սուաջնորդը, կդադարեմ տեսնել ու հասկանալ: Գոչություն կունենան միայն մեղավորներ. նրանց կախադան կբարձրացնեմ ու վերջ:

ՆԱՍՏԻ.— Թող այդպես լինի. դա անհրաժեշտ է:

ԳԵՑ.— Նույնքան անհրաժեշտ պիտի լինի, որ ես դառնամ մասգործ: Դուք չունեք ո՛չ գեներ, ո՛չ ուազմական գիտելիք: Քանակն է ձեր միակ առավելությունը: Անհրաժեշտ պիտի լինի շռայլել թնդանոթի միսը: Դա լինելու է մի գարշելի պատերազմ:

ՆԱՍՏԻ.— Դու զոհաբերելու ես քսան հազար մարդու՝ փրկելու համար հարյուր հազարին:

ԳԵՑ.— Ա՛խ, եթե գոնե վստահ լինեի, որ այդպես կստացվի: Նաստի՛, դու ինձ կարող ես հավատալ. ես գիտեմ, ինչ բան

Է ճակատամարտը: Եթէ այս մէկն սկսենք, մեր հաղթելու հա-
վանականությունն ընդամենը մէկ տոկոս է:

ՆԱՍՏԻ.— Արի տեր կանգնիր այդ մէկ տոկոսին: Եղիբ համար-
ձա՛կ. ինչպիսին էլ, որ լինի Աստծո նախախնամությունը, մենք
նրա ընտրչալներն ենք: Ես՝ նրա մարգարեն, դու՝ նրա մաա-
գործը: Նահանջելու ժամանակը չէ:

ԳԵՑ (դադար).— Հիլդա՛:

ՀԻԼԴԱ.— Ի՞նչ ես ուզում:

ԳԵՑ.— Օգնիր ինձ: Ի՞նչ կանեիր դու իմ փոխարեն:

ՀԻԼԴԱ.— Ես երբեք չեմ լինի, ոչ էլ ուզում եմ լինել քո փոխարեն:

Դուք առաջնորդներ եք, դուք ուրիշ եք, իսկ ես լոկ կին եմ:

Ձեզ ոչ մի խորհուրդ չունեմ տալու:

ԳԵՑ.— Ես միայն քեզ եմ վստահում:

ՀԻԼԴԱ.— Ի՞նձ:

ԳԵՑ.— Ավելի, քան ինքս ինձ:

ՀԻԼԴԱ.— Ինչո՞ւ ես ուզում ինձ մեղսակից դարձնել քո ոճիրնե-
րին: Ինչո՞ւ ես ինձ հարկադրում վճռել քո փոխարեն: Ինձ
ինչո՞ւ ես տալիս իմ եղբայրների կյանքն ու մահը տնօրհնե-
լու իշխանությունը:

ԳԵՑ.— Որովհետև ես քեզ սիրում եմ:

ՀԻԼԴԱ.— Լո՛հ'ր: (**Դադար**): Ա՛հ, դու շահեցիր. ինձ հարկադրե-
ցիր անցնել բարիկադի այս կողմը: Ես նրանց հետ էի, ովքեր
տատապում էին: Այժմ նրանց հետ եմ, ովքեր վճռում են տա-
ռապանքի լինելիությունը: Օ՛հ, Գե՛ց, այլևս երբեք չեմ կարո-
ղանա անջել: (**Դադար**): Ես քեզ արգելում եմ արյուն թափել:
Հրաժարվիր:

ԳԵՑ.— Մենք այս որոշումը միասի՞ն ենք ընդունում:

ՀԻԼԴԱ.— Այո, միասին:

ԳԵՑ.— Եվ հետևանքները միասի՞ն ենք կրելու:

ՀԻԼԴԱ.— Միասին, ինչ էլ պատահի:

ՆԱՍՏԻ (Հիլդային).— Դու ինչո՞ւ ես խառնվում:

ՀԻԼԴԱ.— Ես խոսում եմ չքավորների անունից:

ՆԱՍՏԻ.— Ինձանից բացի, ոչ ոք իրավունք չունի խոսելու նրանց
անունից:

ՀԻԼԴԱ.— Այդ ինչո՞ւ:

ՆԱՍՏԻ.— Որովհետև ես էլ նրանց նման չքավոր եմ:

ՀԻԼԴԱ.— Դու՛ չքավո՛ր: Վաղուց է, ինչ դադարել ես այդպիսին լինելուց: Դու առաջնորդ ես:

Գեցը խորասուզվել է մտքերի մեջ: Նա չի լսել վերջին ռեպլիկները: Հանկարծակի բարձրացնում է գլուխը:

ԳԵՑ.— Ինչո՞ւ նրանց չասել ճշմարտությունը:

ՆԱՍԻ.— Ի՞նչ ճշմարտություն:

ԳԵՑ.— Որ նրանք կույել չգիտեն և պիտի ջախջախվեն, եթե սկըսեն պատերազմը:

ՆԱՍԻ.— Կապանեմ նրան, ով կասի այդ ճշմարտությունը:

ԳԵՑ.— Իսկ եթե ե՛ս ասեի:

ՆԱՍԻ.— Դո՞ւ:

ԳԵՑ.— Ես շահել եմ նրանց վստահությունը, որովհետև մարգարե եմ և հրաժարվել եմ իմ ունեցվածքից: Էլ ինչի՞ է պետք այդ վստահությունը, եթե ես այն խաղի մեջ պիտի չմտցնեմ:

ՆԱՍԻ.— Հաջողության հնարավորությունը հազարից մեկն է:

ԳԵՑ.— Հազարից մեկը: Ասա՛, դու ունե՞ս իրավունք այդ մեկից հրաժարվելու:

ՆԱՍԻ.— Ո՛չ, ես իրավունք չունեմ: Արի գնանք:

ՀԻԼԴԱ.— Մի՛ գնա:

ԳԵՑ (գրկում է Հիլդայի ուտերը).— Ոչնչից մի՛ վախեցիր. այս անգամ Աստված մեզ հետ է: **(Չայն է տալիս):** Եկեք բոլորդ: **Գյուղացիները վերադառնում են բեմ:**

Ամենուրեք կույում են: Վաղը ամբողջ Գերմանիան բռնկվելու է: Ես իջնում եմ դեպի մարդիկ՝ խաղաղությունը փրկելու:

ԲՈՂՈՐ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԸ.— Գե՛ց, մեզ մի՛ լքիր: Առանց քեզ մենք ի՞նչ պիտի անենք:

ԳԵՑ.— Ես կվերադառնամ, եղբայրնե՛ր. այստեղ է իմ Աստվածը, այստեղ է իմ երջանկությունը, այստեղ է իմ սերը: Ես կվերադառնամ: Ահալասիկ՝ Հիլդան. նա կլինի ձեզ ապավեն: Եթե իմ բացախայության ժամանակ կողմերից որևէ մեկը ուզենա զինվորագրել մյուս կողմի դեմ, դուք հրաժարվեք պատերազմելուց: Եվ եթե ձեր գլխին տեղան սպառնալիքներ, թող սերը լինի ձեր միակ պատասխանը: Հիշեցե՛ք, եղբայրնե՛ր, հիշեցե՛ք. երբ Սերն է գնում ընդառաջ, Պատերազմը նահանջում է:

Գեցը և Նաստին դուրս են գալիս:

ՆՈՒՅՆՔ առանց ԳԵՑԻ և ՆԱՍՏԻԻ

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐ.— Իսկ եթե չվերադառնա՞:

Լռություն:

ՀԻԼԴԱ.— Աղոթենք: (Դադար): Աղոթենք, որ մեր սերը գնա ընդհատաջ, որպեսզի պատերազմը նահանջի:

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐ (ծերադրում են).— Աստվա՛ծ իմ, մեր սերը գնա ընդհատաջ, որպեսզի պատերազմը նահանջի:

ՀԻԼԴԱ (Քոտնկալս).— Իմ սերը գնա ընդհատաջ, որպեսզի պատերազմը նահանջի: Ամե՛ն:

Բեռը թաղվում է խավարի մեջ, և ութերորդ պատկերի առաջին ռեպլիկներն անմիջապես կապակցվում են Հիլդայի վերջին ռեպլիկին:

ՊԱՏԿԵՐՆԵՐ ՈՒԹԵՐՈՐԴ ԵՎ ԻՆՆԵՐՈՐԴ

Գյուղացիների ռազմական ճամբարը: Աղմուկ-աղաղակ գիշերային խավարի մեջ:

ԳԵՑ, ՆԱՍՏԻ, ԿԱՐԼ, ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐ

ԶԱՅՆԵՐ.— Ո՛ր-ո՛ր-ո՛ր:

ԳԵՑԻ ԶԱՅՆԸ (աղմուկը սաստելով).— Պիտի սպանվեք դուք՝ բոլորդ:

ԶԱՅՆԵՐ.— Կախե՛նք նրան, կախե՛նք:

Լույս: Բացատ անտառում: Գիշեր է: Գյուղացիները զինված են եղաններով և գավազաններով: Մի քանիսը սրեր ունեն: Մի քանիսը ջահեր են բռնել: Գեցր և Նաստին կանգնած են ժայռի վրա, ամբոխի վերևում:

Ո՛ր-ո՛ր-ո՛ր:

ԳԵՑ.— Խե՛ղճ մարդիկ, նույնիսկ քաջություն չունեք նայելու ճշմարտության երեսին:

ՁԱՅՆ.— Ծշմարտությունն այն է, որ դու դավաճան ես:

ԳԵՑ.— Ծշմարտությունը, եղբայրներ՛ր, անհերքելի ճշմարտությունն այն է, որ դուք կովել չգիտեք:

Վիթխարահասակ մի գյուղացի առաջ է գալիս:

ՎԻԹԽԱՐԱՀԱՍԱԿ.— Այդ ե՛ս կովել չգիտեմ:

Ամբոխի մեջ աշխուժություն:

Հե՛յ, հե՛յ, տղե՛րք, ասում են, թե ես կովել չգիտեմ: Տո՛, ես ցույի կոտոշներից կբռնեմ ու վիզը կոլորեմ:

Գեցը ցատկում է գետին և մոտենում է նրան:

ԳԵՑ.— Արտաքուստ, մե՛ծ եղբայր, դու ինձանից երեք անգամ ուժեղ կլինես:

ՎԻԹԽԱՐԱՀԱՍԱԿ.— Ե՛ս, ճուտի՛կ: (Հրում է Գեցին, որը հիևզ քայլ ընկրկում է):

ԳԵՑ.— Սքանչելի է: (Գյուղացիներից մեկին): Տո՛ր ինձ այդ գավազանը: (Վիթխարահասակին): Դու այն մեկը վերցրո՛ւ: Զգա՛ստ: Պատրաստվի՛ր մեճամարտի: Մեկ, երկու, երեք, չորս, տեսնո՞ւմ ես: Տեսնո՞ւմ ես: Քո ուժն ինչի՞ է պետք: Օդում ոգիները տնքում են քո հարվածներից, և քամին է արնածորում:

Նրանք կռվում են:

Իսկ հիմա, եղբա՛յր իմ, դու ինձ ներիր. ես քեզ մի քիչ ջարդելու եմ: Հոգ չէ, ընդհանուրի օգտի համար է, հա՛: (Հարվածում է գլխին): Ներիր ինձ, Հիսո՛ւս Քրիստոս:

Գյուղացին ընկնում է:

Հիմա համոզվեցի՞ր: Եվ սա դեռ ամենամուժեղն էր, իսկ ես շատ հեռու եմ ամենաճարպիկը լինելուց:

Դադար: Գյուղացիները զարմացած լռում են: Գեցը մի պահ

հրճվում է իր հաղթանակով, ապա շարունակում է:

Ուզո՞ւմ եք՝ ես ձեզ ասեմ, թե դուք ինչո՞ւ մահից չեք վախենում: Զեզանից յուրաքանչյուրը մտածում է, որ մահը բաժին կընկնի հարևանին: (Դադար): Բայց ահա ես դիմում եմ հայր Աստծուն և ասում եմ նրան. «Աստվա՛ծ իմ, եթե՛ ուզում ես, որ ես օգնեմ այս մարդկանց, ազդանշանով ինձ իմաց տուր, թե ովքեր են սպանվելու պատերազմի ժամանակ»: (Հանկարծակի ձևացնում է, թե վախեցավ): Օ՛, օ՛, օ՛, օ՛, այս ի՞նչ եմ տեսնում: Վա՛յ ձեզ, եղբայրներ՛ր, այդ ի՞նչ փորձանք է գա-

լու ձեր գլխին: Այս ի՞նչ ահռելի տեսիլ է: Ա՛հ, ձեր բանը բուրդ է:

ԳՅՈՒՂԱՅԻ (տազնապած).— Ի՞նչ կա, ի՞նչ ես տեսնում...

ԳԵՑ.— Բանն այն է, որ Աստված կնքամոմի նման հալեցրեց ձեր մկանները. ես միայն ձեր ոսկորներն եմ տեսնում: Սո՛րք Կույս Մարիամ, այսքան շա՛տ կմախքներ:

ԳՅՈՒՂԱՅԻ.— Ի՞նչ ես կարծում, այդ ի՞նչ է նշանակում:

ԳԵՑ.— Աստված խոսվությունը չի ցանկանում և ինձ ցույց է տալիս նրանց, ովքեր զոհվելու են:

ԳՅՈՒՂԱՅԻ.— Ո՞վ, օրինակ:

ԳԵՑ.— Ո՞վ: (Տուցամատը ուղղում է նրան: Սարսափելի ձայնով): Դո՛ւ: (Լռություն): Ե՛վ դու, և՛ դու, և՛ դու: Այ քե՛զ մահվան պարահանդես:

ԳՅՈՒՂԱՅԻ (ցնցված, բայց դեռ կասկածելով).— Ո՞վ մեզ կապացուցի, որ դու մարգարե ես:

ԳԵՑ.— Ո՞վ թերահավատ մարդիկ, եթե ձեզ փաստարկներ են պետք, նայեք այս արյանը: (Բարձրացնում է ձեռքերը: Լռություն: Նաստիին): Ես շահեցի:

ՆԱՍՏԻ (ատամների արանքից).— Դեռ ոչ:

Կարլը առաջ է գալիս:

Սրա հետ զգույշ եղիր: Ամենակատուղածն է:

ԿԱՐԼ.— Ո՞վ իմ դյուրահավատ եղբայրներ, այդ ե՞րբ եք սովորելու չվստահել ամեն պատահած խաբեբայի: Այնքան քաղցր ու քնքուշ եք, որ նույնիսկ ատել չգիտեք: Այսօր՝ նույնպես. բավական էր, որ այս մարդը խոսի Տիրոջ անունից, և դուք խոնարհեցիք ձեր գլուխները: Հետո ի՞նչ, թե մի քիչ արյուն կա նրա ձեռքերի մեջ: Այ քեզ բա՛ն: Եթե պետք է արյուն կորցնել ձեզ համոզելու համար, ես էլ կկորցնեմ:

Նա բարձրացնում է ձեռքերը, որոնցից ծորում են արյան կա-

թիլներ:

ԳԵՑ.— Ո՞վ ես դու:

ԿԱՐԼ.— Քեզ նման մի մարգարե:

ԳԵՑ.— Ատելության մարգարե:

ԿԱՐԼ.— Այդ է միակ ճանապարհը, որ տանում է դեպի սերը:

ԳԵՑ.— Բայց ես քեզ ճանաչում եմ. դու իմ ծառան ես, Կարլը:

ԿԱՐԼ.— Միշտ պատրաստ քեզ ծառայելու:

ԳԵՑ.— Ծառա-մարգարե, ա՛յ քեզ խեղկատակություն:

ԿԱՐԼ.— Ոչ ավելի քան գեներալ-մարգարեն:

ԳԵՑ (իջնում է աստիճաններով).— Տո՛ւյց տուր քո ձեռքերը: (Շուռ է տալիս նրա ասիերը): Գրո՛ղը տանի, այս մարդը թևքերի մեջ արյունով լի փուշիկներ է պահել:

ԿԱՐԼ.— Տո՛ւյց տուր քո ձեռքերը: (Նայում է): Այս մարդը եղունգներով հին վերքեր է քորում մի քանի կաթիլ թարախ դուրս բերելու համար: Դե՛, ձեզ տեսնեմ, եղբայրներ՛ր, մեզ փորձության ենթարկեք ու վճռեք, թե մեր երկուսից որն է մարգարե:

ԱՂՄՈՒԿ.— Այո՛, այո՛...

ԿԱՐԼ.— Այսպես կարողանո՞ւմ ես: (Իր բռնած փայտիկից ծաղիկ է դուրս բերում): Իսկ այսպե՛ս: (Գլխարկից նապաստակ է դուրս բերում): Իսկ այսպե՛ս: (Իրեն ծխով է շրջապատում): Տո՛ւյց տուր մեզ՝ ինչ կարող ես անել:

ԳԵՑ.— Ձեռնածություններ են, որ հարյուր անգամ տեսած կլինեմ հասարակական հրապարակներում: Ես անսխալաբ չեմ:

ԳՅՈՒՂԱՅԻ.— Մարգարեն պիտի կարողանա անել այն, ինչ կարողանում է անպարարը:

ԳԵՑ.— Հրաշագործության տեսակետից ես իմ ծառայի հետ մրցության չեմ մտնի: Եղբայրներ՛ր, ես գեներալ էի մարգարե դառնալուց առաջ: Խոսքը վերաբերում է պատերազմին: Եթե դուք մարգարեին չեք հավատում, գեներալին գոնե հավատացեք:

ԿԱՐԼ.— Գեներալին կհավատանք այն ժամանակ, երբ գեներալը կապացուցի, որ ինքը դավաճան չէ:

ԳԵՑ.— Ապերա՛խտ, քեզ ու քո եղբայրներին սիրելուց է, որ ես հրաժարվեցի իմ ունեցվածքից:

ԿԱՐԼ.— Ինձ սիրելո՞ւց:

ԳԵՑ.— Այո՛, քե՛զ, չնայած դու ինձ ատում ես:

ԿԱՐԼ.— Ուրեմն դու ինձ սիրո՞ւմ ես:

ԳԵՑ.— Այո, եղբա՛յր իմ, ես քեզ սիրում եմ:

ԿԱՐԼ (հաղթական).— Նա իրեն մատնեց, եղբայրներ՛ր, նա մեզ ատում է: Հապա նայեք իմ մոտիճին և ինքներդ ասացեք՝ ինչպե՛ս կարելի է ինձ սիրել: Եվ դուք, տղե՛րք, դուք, ինչպիսին որ կաք, ի՞նչ եք կարծում, սիրելի՞ եք:

ԳԵՑ.— Ապո՛ւշ, եթե ես նրանց չսիրեի, էլ ինչո՞ւ պիտի նվիրեի իմ հողերը:

ԿԱՐԼ.— Եվ իրոք, ինչո՞ւ: Հենց այդ է խնդիրը: (**Հանկարծակի**):
Աստված իմ, Աստված, դու, որ տեսնում ես մեր ընդերքն ու
սրտերը, օգնության հասիր: Ես քեզ եմ տրամադրում և՛ մար-
մինս, և՛ լեզուս: Դու մեզ ասա, ինչո՞ւ Գեցը՝ բիճը, նվիրեց
իր հողերը: (**Սկսում է արձակել ահարկու ճիշեր**):

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐ.— Աստված այստեղ է:

— Աստված խոսելու է:

ԳԵՑ.— Տե՛ր իմ Աստված, միայն այդ էր պակաս:

**ԿԱՐԼ (փակում է աչքերը, խոսում է տարօրինակ ձայնով, կար-
ծես իրենը չլինի).**— Հոլա՛, հո՛, հո՛, Երկի՛ր, ինձ լսո՛ւմ ես:

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐ.— Հոլա՛, հո՛, հոլա՛, հո՛:

ԿԱՐԼ (նույն ձևով).— Խոսում է Աստված, ես ձեզ տեսնում եմ,
մարդի՛կ: Ես ձեզ տեսնում եմ:

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐ.— Տե՛ր, ողորմյա:

ԿԱՐԼ (նույն ձևով).— Գեցն այստե՛ղ է:

ԳՅՈՒՂԱՑԻ.— Այո՛, հա՛յր մեր, քո աջ կողմը, քեզանից մի քիչ
ես:

ԿԱՐԼ (նույն ձևով).— Գե՛ց, Գե՛ց, ինչո՞ւ նվիրեցիր քո հողերը:
Պատասխանի՛ր:

ԳԵՑ.— Ո՛ւմ հետ պատիվ ունեմ խոսելու:

ԿԱՐԼ (նույն տոնով).— Ես նա եմ, որ կամ:

ԳԵՑ.— Է՛հ, լավ է, եթե դու նա ես, որ կաս, ուրեմն պիտի իմա-
նաս, ինչ որ իմանում ես ու նաև պիտի իմանաս, ինչու ես
արեցի այն, ինչ արեցի:

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐ (սպառնալով).— Հո՛ւ, հո՛ւ, պատասխանի՛ր,
պատասխանի՛ր:

ԳԵՑ.— Ձեզ, եղբայրնե՛ր, ես կպատասխանեմ: Ձեզ ու ոչ թե նը-
րան: Ես իմ հողերը նվիրեցի, որ բոլոր մարդիկ լինեն իրար
հավասար:

Կարլը ծիծաղում է:

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐ.— Աստված ծիծաղում է:

— Աստված ծիծաղում է:

Նաստին իջել է աստիճաններից և կանգնել է Գեցի ետևում:

ԿԱՐԼ (նույն տոնով).— Դու ստում ես, Գե՛ց, դու ստում ես քո
Աստծուն: Խսկ դուք, ի՛մ որդիներ, լսեցե՛ք:

Ինչ էլ անի տերը, նա երբեք չի լինի ձեր հավասարը:

Եվ ահա թե ինչու ես պահանջում եմ, որ դուք նրանց բոլորին սպանեք:

Այս մեկը ձեզ նվիրեց իր հողերը:

Բայց դո՛ւք, դուք կարո՞ղ էիք նրան նվիրել ձեր հողերը:

Նա ուներ ընտրելու հնարավորություն՝ նվիրե՞լ, թե՛ պահել:

Բայց դո՛ւք, դուք կարո՞ղ էիք հրաժարվել ձեր շունեցվածքից:

Ով ձեզ համբուրի, նրան համբուրեք:

Ով ձեզ հարվածի, նրան հարվածեք:

Բայց նրան, ով նվիրում է, մինչդեռ դուք հնարավորություն չունեք փոխհատուցելու...

Նրան նվիրեք ձեր սրտի ամբողջ ասելությունը,

քանզի դուք ստրուկ էիք, և նա ձեզ ստրկացրեց,

քանզի դուք նվաստացած էիք, և նա ձեզ ավելի նվաստացրեց:

Վաղորդյան նվերը վիշտ է:

Միջօրեի նվերը հոգս է:

Իրիկամուտի նվերը՝ հուսահատություն:

ԳԵՑ.— Ա՛յ քեզ քարոզ: Այդ ո՞վ ձեզ տվեց կյանքն ու լույսը: Ինքք՝ Աստված: Նվիրելը նրա օրենքն է. ինչ էլ, որ նա անհնարավորություն է: Իսկ դուք նրան ինչո՞վ կարող եք փոխհատուցել, դո՛ւք, որ լոկ փոշի եք: Ոչնչով: Եզրակացություն. դուք Աստծուն պետք է ասեք:

ԳՅՈՒՂԱՑԻ.— Դե՛, Աստված ուրիշ է:

ԳԵՑ.— Այդ դեպքում նա ինչո՞ւ մեզ ստեղծեց ըստ իր պատկերի: Եթե Աստված սեր է և վեհանձնություն, մարդը՝ նրա արարչագործությունը, պետք է լինի սեր և վեհանձնություն: Եղբայրներ՛ր, ես ձեզ կոչ եմ անում՝ ընդունեք իմ նվերներն ու բարեկամությունը: Օ՛, ո՛չ, ես ձեզանից երախտագիտություն չեմ պահանջում: Ես պարզապես կուզենայի, որ դուք իմ սերը չանվանարկեիք իբրև արատ, և ընծաներս չընդունեիք իբրև ոճիր:

ԳՅՈՒՂԱՑԻ.— Խոսիր, ինչքան ուզում ես, բայց ես ողորմություն չեմ սիրում:

ԿԱՐԼ (իր բնական ձայնով: Մատնացույց է անում մուրացիկին).—

Ահա մեկը, որ հասկացավ: Հողերը ձեզ են պատկանում: Ով հավակնում է, որ ձեզ իր հողերն է նվիրում, ի՞նչպե՞ս է, քանզի նվիրում է այն, ինչ իրեն չի պատկանում: Վերցրե՛ք հո-

դերը: Վերցրե՛ք և սպանե՛ք, եթե ուզում եք մարդ դառնալ: Բռնությամբ է, որ մենք մեզ պիտի դաստիարակենք:

ԳԵՑ.— Եղբայրներ՛ր, մի՛թե աշխարհում միայն ատելություն կա: Իմ սերը...

ՎԱՐԼ.— Քո սերը Սատանայի ներշնչածն է: Եվ ապականում է նա այն ամենը, ինչին դիպչում է: Ա՛հ, տղե՛րք, մի տեսնեիք Ալտվայլերի գյուղացիներին. ընդամենը երեք ամսում նա նրանց ներքինի դարձրեց: Նա ձեզ այնքան ուժգնորեն պիտի սիրի, որ տղամարդու շնորհք չմնա ձեր վրա: Մի՛ թողեք նա ձեզ տնօրինի: Դուք անասուններ էիք, և ատելությունը ձեզ մարդ դարձրեց: Եթե ձեզ զրկեն ատելությունից, դուք նորից կդառնաք չորքոտանի և կարժանանաք անասունների համար տառապանքին:

ԳԵՑ.— Օգնի՛ր ինձ, Նաստի՛:

ՆԱՍՏԻ (Կարլին մատնացույց անելով).— Բախտը վճուված է. Աստված նրա հետ է:

ԳԵՑ (ապշած).— Նաստի՛:

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐ.— Հեռացի՛ր, հեռացի՛ր գրողի ծոցը:

ԳԵՑ (կատաղած).— Ես կհեռանամ, մի՛ վախեցեք: Վազե՛ք, վազե՛ք մահվանն ընդատուց: Երբ դուք սատկեք, ես պարելու եմ: Ինչքան տղեղ եք, որդերի և սողունների ամբոխ: Ես շը-նորհակալ եմ Աստծուն, որ նա ինձ ցույց տվեց ձեր հոգիները, քանզի հասկացա, որ ես սխալվել եմ: Արդարացի է, որ հողերը պատկանեն ազնվականներին, քանզի հպարտ է նրանց հոգին: Արդարացի է, որ դուք՝ տակաճրներդ, սողաք չորեքթաթ, քանզի դուք լոկ խոզեր եք:

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐ (ուզում են հարձակվել նրա վրա).— Սպանե՛նք նրան, սպանե՛նք:

ԳԵՑ (մի գյուղացուց խլում է նրա սուրը).— Հապա փորձեք տեսնեմ:

ՆԱՍՏԻ (ձեռքը բարձրացնելով).— Բավական է:

Բացարձակ լռություն:

Այս մարդը վստահել է ձեր տված խոսքին: Սովորեցեք կատարել ձեր տված խոստումը, եթե նույնիսկ թշնամուն եք խոստացել:

Բեմն աստիճանաբար դատարկվում ու խորասուզվում է խա-

վարում: Վերջին ջահը ամրացած է ժայռի գլխին: Նաստին այն վերցնում է և ուզում է հեռանալ:

ՆԱՍՏԻ.— Հեռացի՛ր, Գե՛ց, շո՛ւտ հեռացիր:

ԳԵՑ.— Նաստի՛, Նաստի՛, ինչո՞ւ ինձ լքեցիր:

ՆԱՍՏԻ.— Որովհետև դու ձախողվեցիր:

ԳԵՑ.— Նաստի՛, սրանք գայլեր են. ինչպե՞ս կարող ես մնալ նրանց հետ:

ՆԱՍՏԻ.— Երկրի ամբողջ սերը նրանց մեջ է:

ԳԵՑ.— Նրա՞նց մեջ: Եթե դու կարողացել ես մի շյուղ սեր տեսնել այս գոմաղթի կույտի մեջ, ապա ճշմարիտ եմ ասում՝ ուժեղ է քո տեսողությունը: Ես ոչինչ չտեսա:

ՆԱՍՏԻ.— Այդպես է, Գե՛ց, դու ոչինչ էլ չտեսար:

Նա դուրս է գալիս: Գիշեր է: Հեռացող ձայների աղմուկ: Կնոջ հեռավոր ճիչ: Հետո թույլ լույս է ընկնում Գեցի վրա:

ՏԵՍԱՐԱՆ Բ

ԳԵՑ, միայնակ

ԳԵՑ.— Սատկելու եք, շնե՛ր: Ես ձեզ այնպես եմ վնասելու, որ ինձ երկար պիտի հիշեք: Վերադարձի՛ր ինձ, ի՛մ չարություն, տուր ինձ ուժ ու թեթևություն: **(Դադար):** Ծիծաղելի է: Բարությունը հոգիս ողողել է. մի կաթիլ թույն անգամ չի մնացել: Սքանչելի է. դեպ առա՛ջ, հանուն Բարության, առա՛ջ դեպի Ալտվալլեր: Ինձ մնում է երկուսից մեկը, կամ ինձ պիտի կախեն, կամ՝ Բարություն պիտի սնեն: Ինձ սպասում են իմ պարարտացրած նապաստակները, իմ կրտած ոչխարները, իմ հավանոցի հրեշտակները: Նրանք ինձ պիտի դիմավորեն պատվով ու խնդությամբ: Տե՛ր Աստված, նրանք ինձ շատ են ձանձրացրել: Ես մյուսներին եմ սիրում, գայլերին: **(Սկսում է քայլել):** Քեզ տեսնենք, Տե՛ր Աստված, դու ինձ պիտի առաջնորդես խավար գիշերով: Քանի որ պետք է հարատևել, չնայած ձախողությանը, թող յուրաքանչյուր ձախողում լինի քո ազդանշանը, ամեն մի ցավ՝ բախտավորություն, ամեն շնորհագրկում՝ շնորհատվություն: Տո՛ւր ինձ ձախողումներս խելացի օգտագործելու հնարավորությունը: Տե՛ր, ես հավատում

եմ, ես ուզում եմ հավատալ, որ դու թույլ տվեցիր, որպեսզի
 աշխարհը երես թեքի ինձանից, որպեսզի ես, քո կամոք, քո-
 նը լինեմ ամբողջովին: Եվ ահա, Աստված իմ, մենք նորից
 կանգնել ենք դեմ-դիմաց, ինչպես այն հին, լավ ժամանակ-
 ներում, երբ ես չարիք էի գործում: Ա՛հ, ես մարդկանցով
 ամենևին պիտի չզբաղվեի. նրանք ինձ խանգարում են: Նը-
 րանք մացառներ են, որ պետք է հաղթահարել քեզ հասնելու
 համար: Ես գալիս եմ դեպի քեզ, Տե՛ր, գալիս եմ, քայլում եմ
 քո գիշերի մեջ: Տո՛ւր ինձ քո ձեռքը: Ասա՛ գիշերը դու ես,
 այնպես չէ՞: Խավար գիշերը՝ անձայրածիր, սրտաճմլիկ ու-
 նայնություն, քանզի դու գոյություն ունես տիեզերական ամա-
 յության մեջ: Դու միակ լսելի՛ համապարփակ լուռության մեջ:
 Դու, միակ տեսանելի, երբ ոչինչ չկա տեսանելի: Հնամենի՛
 գիշեր, նախակենդանակա՛ն վիթխարի գիշեր: Գիշե՛ր անի-
 մացության, շնորհագրկման ու դժբախտության գիշե՛ր, սքո-
 դի՛ր ինձ, խժո՛ի՛ր իմ նողկալի մարմինը: Խցկվի՛ր իմ հոգու
 և իմ միջև ու կրժի՛ր ինձ: Ես ուզում եմ արհամարհվածի մեր-
 կությունը, ամոթանքն ու մեկությունը: Քանզի մարդն ստեղծ-
 ված է իր միջի մարդուն ոչնչացնելու և էգի նման սև ու հրս-
 կա, մարմնացյալ գիշերվան տրվելու համար: Քանի դեռ ես
 չեմ ճաշակել ամենայն ինչ, ես ոչինչ չեմ ճաշակել: Քանի դեռ
 ես չեմ տիրացել ամենայն ինչի, ես ոչնչի չեմ տիրացել: Քա-
 նի դեռ ես չեմ դարձել ամեն ինչ, ես ոչինչ եմ ոչնչության
 մեջ: Ես պիտի նվաստանամ բոլորի առջև, և դու, Տե՛ր, ինձ
 քաշելու ես քո ցանցով գիշերային և բարձրացնելու ես բո-
 լորից վեր: **(Ուժգին ու տագնապած ձայնով):** Աստված իմ,
 Աստված իմ, արդյոք դու ա՛յդ ես կամեցել: Ատելությունը
 դեպի մարդը, արհամարհանքը՝ ինքս իմ նկատմամբ: Ես դը-
 րանք արդեն չէի՞ որոնել ու ճաշակել, երբ չարագործ էի:
 Բարության մեկությունը ես ինչպե՛ս տարբերեմ Չարիքի մե-
 կությունից:

Դանդաղ լուսանում է:

Լուսանում է: Ես սնցա քո գիշերվա միջով: Օրհնյալ լինես
 դու, որ ինձ լուսավորեցիր: Ես պիտի տեսնեմ պարզ ու ճշ-
 մարտացի:

Նա շքշվում ու տեսնում է Ալտվայերն ավերված: Հիդան

նստած է բարակույտի և փլվածքի վրա: Գլուխն առել է ափերի մեջ: Գեցը գոռում է:

Հե՛յ:

ՏԵՍԱՐԱՆ Գ

ԳԵՑ, ՀԻԼԴԱ

ՀԻԼԴԱ (բարձրացնում է գլուխը և նայում է նրան).— Վերջապե՛ս:

ԳԵՑ.— Որտե՛ղ եմ մյուսները: Մահացե՛լ եմ: Ինչո՞ւ: Որովհետև հրաժարվո՞ւմ էիս կուլելուց:

ՀԻԼԴԱ.— Այո:

ԳԵՑ.— Ետ տուր ինձ իմ գիշերը: Ես մարդկանց չեմ ուզում տեսնել: (Դադար): Այդ ինչպե՛ս պատահեց:

ՀԻԼԴԱ.— Վաշխայմից գինված գյուղացիներ եկան: Պահանջեցին, որ իրենց միանանք, բայց մենք չուզեցինք:

ԳԵՑ.— Եվ նրանք գյուղը հրկիզեցին. սքանչելի է: (Պոռթկում է ծիծաղից): Դու ինչո՞ւ ողջ մնացիր:

ՀԻԼԴԱ.— Ափսոսո՞ւմ ես, որ ես չեմ մեռել:

ԳԵՑ.— Գոռ՛ողը տանի, վիճակն անհամեմատ ավելի պարզ է, երբ բոլոր ականատեսները մեռած են:

ՀԻԼԴԱ.— Ես նույնպես ափսոսում եմ, որ ողջ մնացի: (Դադար): Մեզ լցրին մի տուն ու հրկիզեցին: Լա՛վ էր:

ԳԵՑ.— Այո՛, լա՛վ էր, շա՛տ լավ էր:

ՀԻԼԴԱ.— Վերջում մի լուսամտտ բացվեց, ևս դուրս ցատկեցի: Ինձ համար միևնույն էր, կմեռնեմ թե՛ ոչ, բայց ես ուզում էի քեզ նորից տեսնել:

ԳԵՑ.— Ինչի՞ համար: Դու Երկնքում ինձ նորից կտեսնեիր:

ՀԻԼԴԱ.— Մենք Երկնքին չենք արժանանա, Գե՛ց, և եթե նույնիսկ ես ու դու Դրախտ բարձրանանք, ապա աչքեր չենք ունենա իրար տեսնելու, ձեռքեր չենք ունենա իրար դիպչելու: Վերեվում բոլորը միայն Աստծով են զբաղված: (Մոտենում, հըպվում է նրան): Դու այստեղ ես. մարմին ես՝ մաշված, կուպիտ, մեղապարտ. մի կյանք, խեղճ ու կրակ մի կյանք: Ես այս մարմինն ու այս կյանքն եմ սիրում: Միայն երկրի վրա կարելի է սիրել ի հեճուկս Աստծո:

- ԳԵՅ.— Ես միայն Աստծուն եմ սիրում և չեմ գտնվում երկրի վրա:
 ՀԻԼՂԱ.— Ուրեմն դու ինձ չե՞ս սիրում:
- ԳԵՅ.— Ո՛չ: Դու ևս, Հիլդա՛, դու ևս ինձ չես սիրում: Այն, ինչ որ
 դու սեր ես կարծում, ասելությունն է:
- ՀԻԼՂԱ.— Ես քեզ ինչո՞ւ ասեմ:
- ԳԵՅ.— Որովհետև այն համոզմանն ես, որ ես եմ սպանել քո յուրայիններին:
- ՀԻԼՂԱ.— Այդ ես եմ նրանց սպանել:
- ԳԵՅ.— Դո՞ւ:
- ՀԻԼՂԱ.— Այդ ես նրանց ասացի՝ ոչ: Նախընտրում էի նրանց տեսնել մեռած, քան թե մարդասպան: Օ՛, Գե՛ց, ես ի՞նչ իրավունքով որոշեցի նրանց փոխարեն:
- ԳԵՅ.— Պա՛հ, հետևի՛ր իմ օրինակին. ձեռքերդ լվա այդ արյունից: Մենք ոչինչ ենք, մենք ոչինչ չենք կարող անել, ոչինչ, բացարձակապես: Մարդուն թվում է, թե ինքն է գործում, բայց Աստված է ուղղություն տալիս նրա քայլերին:
- ՀԻԼՂԱ.— Ո՛չ, Գե՛ց, ո՛չ: Ես չմիջամտեի, նրանք դեռ կապրեին:
- ԳԵՅ.— Լա՛վ, թող այդպես լինի. դու չմիջամտիր, գուցե և նրանք ապրեին: Բայց ի՞նձ ինչ:
- ՀԻԼՂԱ.— Հիշի՛ր, Գե՛ց. «Այդ որոշումը միասին ենք ընդունում, և մեռնակրկները միասին ենք կրելու»: Հիշի՛ր:
- ԳԵՅ.— Մենք միասին չենք: Դու ուզում էիր ինձ տեսնել: Դե, նայիր, ձեռքդ ուսի՛ր ինձ: Լավ: Իսկ հիմա հեռացի՛ր: Իմ կյանքում էլ չեմ նայելու մարդկանց երեսին: Աչքերս տեսնելու են լոկ քարերն ու գետիներ: **(Դադար)**: Ես քեզ հարցում արեցի, Աստված իմ, և դու ինձ պատասխանեցիր: Օրհնյալ լինես դու, քանզի աչքերս բացեցիր մարդկանց չարության վրա: Ես նրանց մեղքերը պիտի քալեմ՝ սեփական մարմինս փորձության ենթարկելով: Ես այս մարմինը խոշտանգելու եմ: Քաղցը, ցուրտը, մտրակը, դանդաղ ու թույլ կրակը դառնալու են իմ հանապազօրյա տանջանքները: Ես ոչնչացնելու եմ իմ միջի մարդուն, քանզի դու մարդուն ստեղծել ես, որ նա ոչընչանա: Իմ ժողովուրդն էր, մի փոքրիկ ժողովուրդ, ընդամենը մի գյուղ, համարյա մի ընտանիք: Իմ հպատակները մահացել են, և ես, որ ողջ եմ մնացել, աշխարհի համար ինձ մեռած եմ համարում: Եվ կյանքիս մնացած մասը պիտի անցկացնեմ՝ խորհրդածելով մահվան մարին: **(Հիլդային)**: Դու

դեռ այստե՛ղ ես: Հեռացի՛ր, գնա՛ ուրիշ տեղ որոնիր թշվա-
ռությունն ու կյանքը:

ՀԻԼԴԱ.— Դու ես ամենաթշվառը. իմ տեղը քո կողքին է: Ես
մնայու եմ այստեղ:

ՊԱՏԿԵՐ ՏԱՍՆԵՐՈՐԴ

Ավերված գյուղ: Վեց ամիս անց:

ՏԵՍԱՐԱՆ Ա

ՀԻԼԴԱ, ապա ՀԱՅՆՐԻԽ

Հիլդան նստած է նույն տեղը, ինչպես նախորդ պատկերի
ժամանակ: Նայում է ճանապարհի կողմը: Երևում է, որ նա հան-
կարծ նկատեց ինչ-որ մեկին, որ գալիս է: Նա կիսով չափ ուղղ-
վում է և սպասում: Հայնրիխը գերս է մտնում: Նրա գլխարկին
ծաղիկներ կան, ձեռքին՝ մի ծաղկեփունջ:

ՀԱՅՆՐԻԽ.— Ահա և մեկը տեղ հասանք: (Երջվում է դեպի ան-
տեսանելի ուղեկիցը): Հանի՛ր գրակո: (Հիլդային): Իմ անու-
նը Հայնրիխ է: Նախկինում ես պատարագում էի: Հիմա ես
ողորմությամբ եմ ապրում: (Սատանային): Ո՞ր ես վազում:
Արի՛ այստեղ: (Հիլդային): Հենց որ մահվան հոտ է առնում,
իսկույն գործի գլուխ է անցնում: Իսկ այնպես՝ մրջյունին ան-
գամ վնաս չի տա:

ՀԻԼԴԱ.— Մի տարի և մի օր է անցել, այնպես չէ՞, մի տարի և
մի օր Ուորմսից հետո:

ՀԱՅՆՐԻԽ.— Քեզ ո՞վ ասաց:

ՀԻԼԴԱ.— Օրերը հաշվել եմ:

ՀԱՅՆՐԻԽ.— Քեզ պատմե՛լ են իմ մասին:

ՀԻԼԴԱ.— Այո, անցյալներում:

ՀԱՅՆՐԻԽ.— Լսվ եղանակ է, այնպես չէ՞: Ես ծաղիկներ քաղեցի
ճանապարհին: Ծաղկեփունջ՝ տարեդարձի առթիվ: (Ծաղիկ-
ները պարզում է նրան):

ՀԻԼԴԱ.— Չեմ ուզում: (Ծաղիկները դնում է կողքին):

ՀԱՅՆՐԻԽ.— Չպետք է վախենալ երջանիկ մարդկանցից:

ՀԻԼԴԱ.— Դու երջանիկ չես:

ՀԱՅՆՐԻԽ.— Ես քեզ ասում եմ՝ այսօր տոն է. այս գիշեր ես հանգիստ քնեցի: Դե՛, քույրի՛կ, ուզում եմ, որ ինձ ժպտաս: Ես սիրում եմ բոլոր մարդկանց, բացառությամբ մի հոգու, և ուզում եմ, որ բոլորը գոհ լինեն: (Հանկարծակի): Գնա՛ այստեղ քեր նրան:

Հիդրան տեղից չի շարժվում:

Դե՛, շո՛ւտ արա: Նրան մի՛ սպասեցրու:

ՀԻԼԴԱ.— Նա քեզ չի սպասում:

ՀԱՅՆՐԻԽ.— Նա՞: Դու ինձ զարմացնում ես: Ես ու նա բարեկամներ ենք, և գրագ կգամ, որ նա զուգվել-զարդարվել է մեր հանդիսման առթիվ:

ՀԻԼԴԱ.— Խնայի՛ր նրան: Վերցրո՛ւ քո ծաղկեփունջը և հեռացի՛ր:

ՀԱՅՆՐԻԽ (Սատանային).— Լսեցի՞ր ինչ ասաց:

ՀԻԼԴԱ.— Հանգիստ թող Սատանային. ես դրան չեմ հավատում:

ՀԱՅՆՐԻԽ.— Ես՛ նույնպես:

ՀԻԼԴԱ.— Բա ի՞նչ է պատահել:

ՀԱՅՆՐԻԽ (Ծիծաղելով).— Հա՛, հա՛, հա՛, հա՛, դու երեխա ես:

ՀԻԼԴԱ.— Այլևս գոյություն չունի նա, ով քեզ ակարգել է: Նա մեռած է աշխարհի համար: Նա քեզ նույնիսկ չի էլ ճանաչելու: Դու ևս, վատահ եմ, դու ևս նրան չես ճանաչելու: Դու փնտրում ես մի մարդու, գտնելու ես մեկ ուրիշին:

ՀԱՅՆՐԻԽ.— Ում էլ գտնեմ, ինձ ձեռնտու է:

ՀԻԼԴԱ.— Խնայի՛ր նրան, աղաչում եմ քեզ: Ինձ ինչո՞ւ ես ցավ պատճառում. ես քեզ ի՞նչ եմ արել:

ՀԱՅՆՐԻԽ.— Ես մտադրություն չունեմ քեզ ցավ պատճառելու. ես քեզ շատ եմ համակրում:

ՀԻԼԴԱ.— Վերքերից, որ նրան հասցնելու ես, իմ արյունն է ծորելու:

ՀԱՅՆՐԻԽ.— Դու նրան սիրո՞ւմ ես:

ՀԻԼԴԱ.— Այո:

ՀԱՅՆՐԻԽ.— Ուրեմն հնարավո՞ր է սիրել նրան: Ծիծաղելի է: (Ծիծաղում է): Ինձ մի քանիսը փորձել են սիրել, բայց ապարդյուն: Նա քեզ սիրո՞ւմ է:

ՀԻԼԴԱ.— Նա ինձ սիրել է այնքան ժամանակ, ինչքան սիրել է ինքն իրեն:

ՀԱՅՆՐԻԽ.— Եթե նա քեզ սիրում է, ես քեզ այնքան էլ չեմ խնայի:

ՀԻԼԴԱ.— Ներիր նրա վիրավորանքները, և Աստված քո վիրավորանքները կների:

ՀԱՅՆՐԻԽ.— Բայց ես ամենևին ցանկություն չունեմ, որ նա ինձ ների: Նզովյալ լինելն իր լավ կողմերն ունի: Խնդիրն ընտելանալու մեջ է: Դժոխք դեռ չեմ իջել, բայց արդեն քիչ-միջ հարմարվել եմ:

ՀԻԼԴԱ.— Խեղճ մարդ:

ՀԱՅՆՐԻԽ (զայրացած).— Ո՛չ, ո՛չ, ո՛չ: Ես ի՞նչ խեղճ մարդ: Ես երջանիկ եմ: Ես երջանիկ եմ՝ ասում եմ քեզ: (Դադար): Դե՛, կանչի՛ր նրան:

Հիլդան լռում է:

Ավելի լավ է, դու կանչես նրան. անակնկալի պիտի գա ինձ տեսնելուց: Չե՛ս ուզում: Ուրեմն ես ինքս կկանչեմ նրան: Գե՛ց, Գե՛ց, Գե՛ց:

ՀԻԼԴԱ.— Նա այստեղ չէ:

ՀԱՅՆՐԻԽ.— Որտե՞ղ է նա:

ՀԻԼԴԱ.— Անտառում: Երբեմն ամբողջ շաբաթներ մնում է այստեղ:

ՀԱՅՆՐԻԽ.— Այստեղից հեռո՞ւ է:

ՀԻԼԴԱ.— Քսանհինգ մղոնի ճանապարհ է:

ՀԱՅՆՐԻԽ (Սատանային).— Դու նրան հավատո՞ւմ ես: (Փակում է աչքերը և ունկնդրում, թե Սատանան իրեն ինչ է հուշում): Այո՛, այո՛, այո՛: (Խորամանկ ժպտում է): Ասա՛ ես ինչպե՞ս գտնեմ նրան:

ՀԻԼԴԱ.— Փնտրի՛ր, բարի՛ քահանա, փնտրի՛ր: Քո ուղեկիցը ցույց կտա ճանապարհը:

ՀԱՅՆՐԻԽ.— Աստված քեզ պահապան, քո՛ւյր իմ: (Սատանային): Դե՛, արի գնանք:

Նա դուրս է գալիս: Հիլդան մնում է մենակ և հայացքով հետևում է նրան:

**Գեցը ներս է մտնում: Աջ ձեռքով մտրակ է բռնել, ձախով՝
Վի կոծ: Հյուծված տեսք ունի:**

ԳԵՑ.— Այդ ո՞վ է ինձ կանչում:

Հիլդան չի պատասխանում:

Մեկը կար, ինձ կանչում էր: Ես լսեցի նրա ձայնը:

ՀԻԼԴԱ.— Երբ ծոմ ես պահում, քեզ միշտ թվում է, թե ձայներ
ես լսում:

ԳԵՑ.— Այս ի՞նչ ծաղիկներ են:

ՀԻԼԴԱ.— Ես եմ քաղել:

ԳԵՑ.— Ըստ հաճախակի չի լինում, ոչ դու ծաղիկներ քաղես:

(Դադար): Այսօր ի՞նչ օր է, տարվա ո՞ր օրն է:

ՀԻԼԴԱ.— Ինչո՞ւ ես հարցնում:

ԳԵՑ.— Այս աշնանը մեկը պիտի գար ինձ տեսնելու:

ՀԻԼԴԱ.— Ո՞վ:

ԳԵՑ.— Չեմ հիշում: **(Դադար):** Ասա՛ ի՞նչ օր է, ո՞ր ամսվա ո՞ր
օրն է:

ՀԻԼԴԱ.— Կարծում ես ես հաշվո՞ւմ եմ օրերը: Գոյություն ունի
միայն մեկ օր, որն անբնդհատ կրկնվում է: Այն մեզ տալիս
են արշալուսին և ապա խլում են, երբ իջնում է գիշերը: Դու
կանգ առած ժամացույց ես, որը շարունակ նույն ժամն է ցույց
տալիս:

ԳԵՑ.— Կանգ առա՞ծ: Ո՛չ, ես շարժվում եմ: **(Ցնցում է կուծը):**
Լսո՞ւմ ես՝ ճողփում է: Ջուրը հրեշտակային ձայն է արձակում:
Իմ կոկորդում Դժոխք է, ականջներիս մեջ՝ արքայական Դը-
րախտ:

ՀԻԼԴԱ.— Ինչքա՞ն ժամանակ է, որ դու ջուր չես խմել:

ԳԵՑ.— Երեք օր: Մինչև վաղը ես պետք է դիմանամ:

ՀԻԼԴԱ.— Ինչո՞ւ մինչև վաղը:

ԳԵՑ (ապուշ-ապուշ ծիծաղում է).— Հա՛, հա՛, պետք է, պետք է:
(Դադար: Նա ցնցում է կուծը): Կլա՛ւ, կլա՛ւ, հը՞: Ես ա-
վելի տհաճ ձայն չեմ պատկերացնում այն մարդու համար, որ
մեռնում է ծարավից:

ՀԻԼԴԱ.— Խաղա քեզ ու քեզ, գրգռիր քո ցանկությունները: Խը-
մել, երբ ծարավել ես, դա կլիներ պարզ ու հասարակ: Վայ

թե ինքդ քեզ մոռանաս, եթե հոգիդ չենթարկես որևէ գայթակղության:

ԳԵՑ.— Ինչպե՞ս կկարողանամ ինքս ինձ հաղթել, եթե ինձ չենթարկեմ գայթակղության:

ՀԻԼԴԱ.— Օ՛ր, Գե՛ց, հնարավո՞ր է արդյոք, որ քեզ թվա, թե սա առաջին օրն է, որ քեզ գցել ես տանջանքների մեջ: Կուժը, ջրի ճողփյունը, քո շուրթերի ճերմակած մաշկը՝ այդ ամենը ես անգիր եմ արել: Մի՞թե դու չգիտես, թե Քեսո ինչ է լինելու:

ԳԵՑ.— Ես կդիմանամ մինչև վաղը առավոտ. ահա և ամենը:

ՀԻԼԴԱ.— Դու մինչև վերջը երբեք չես դիմացել, որովհետև քեզ ենթարկել ես անչափ երկար փորձությունների: Մինչև ընկնելդ դու այդ կուժը պիտի ցնցես: Եվ երբ ընկած կլինես, ես քեզ պիտի խմեցնեմ:

ԳԵՑ.— Դու նորություն՞ն ես ուզում: Ահա քեզ նորություն: **(Թեքում է կուժը):** Ծաղիկները ծարավ են: Խմե՛ք ծաղիկներ, խմե՛ք իմ ջուրը: Թող Դրախտը հյուր գա ձեր ոսկեղեն որկորներին: Տեսնո՞ւմ ես, նրանք վերածնվում են: Հողը և բույսերն ընդունում են իմ ընծաները: Մերժում են միայն մարդիկ: **(Կուժը շուտ է տալիս):** Ահա և չմնաց խմելու ոչ մի կաթիլ: **(Ծիծաղում է ու դառնորեն կրկնում):** Ոչ մի կաթիլ... ոչ մի կաթիլ...

ՀԻԼԴԱ.— Մի՞թե Աստված կամենում է, որ դու դառնաս հոգեկան հիվանդ:

ԳԵՑ.— Իհարկե: Մեր միջի մարդուն պետք է ոչնչացնենք, այնպես չէ՞: **(Կուժը շարտում է):** Դե՛, ասա՛ տեսնեմ՝ դու ինձ ինչպե՞ս պիտի խմեցնես: **(Ընկնում է գետին):**

ՀԻԼԴԱ (սառը նայում է նրան, ապա ծիծաղում է).— Դու լավ գիտես, որ ես միշտ ջուր ունեմ պահած քեզ համար: **(Գնում, մի կուժ ջուր է բերում և բարձրացնում է Գեցի գլուխը):** Դե, խմի՛ր:

ԳԵՑ.— Ոչ ավելի շուտ, քան վաղը:

ՀԻԼԴԱ.— Աստված ցանկանում է, որ դու դառնաս խելառ ու մտամոլ, բայց չի ցանկանում քո մահը: Ուրեմն պետք է խըմել:

ԳԵՑ.— Ամբողջ Գերմանիան դողում էր իմ ոտքերի տակ, և ահա ես պառկել եմ մեջքի վրա, ինչպես ծծկերը ստնոտի ձեռքերին: Գո՞հ ես արդյոք, Տե՛ր, և քեզ հայտնի՞ է ավելի անձ-

նազոհի ապաշխարանք: Հիլդա՛, դու, որ ամեն ինչ կանխատեսում ես, գիտե՛ս ինչ պիտի լինի, երբ արդեն հագեցրած լինեմ իմ ծարավը:

ՀԻԼԴԱ.— Այո, գիտեմ: Սկսվելու է գլխավոր ներկայացումը՝ վայելքի գայթակղությունը. դու պիտի ուզեցես ինձ տիրել:

ԳԵՑ.— Եվ այնուամենայնիվ, դու ուզո՞ւմ ես, որ ես խմեմ:

ՀԻԼԴԱ.— Այո:

ԳԵՑ.— Իսկ եթե քեզ բռնաբարե՛մ:

ՀԻԼԴԱ.— Քո այդ վիճակո՞ւմ: Դե՛, լա՛վ, ամեն ինչ նախօրոք հայտնի է, ինչպես պատարագը. պիտի գոռոռաս հայրնյանքներ ու գոեհկություններ, հետո վերջում ինքդ քեզ պիտի մտրակես: Խմի՛ր:

ԳԵՑ (կուծը վերցնելով).— Եվս մի պարտություն: (Խմում է): Մարմինը շնանոց է: (Խմում է):

ՀԻԼԴԱ.— Մարմինը լավն է: Հոգին է շնանոց:

ԳԵՑ (կուծը գետին դնելով).— Ծարավը չքացավ: Ես ինձ դատարկված եմ զգում: (Դադար): Քունս գալիս է:

ՀԻԼԴԱ.— Քնի՛ր:

ԳԵՑ.— Ո՛չ, քանի որ քունս գալիս է: (Նայում է նրան): Յո՛ւյց տուր ինձ քո ստիճակերը:

Հիլդան մնում է անշարժ:

Դե՛, ցո՛ւյց տուր: Գայթակղության ենթարկիր ինձ: Թող ես սասկեմ ցանկությունից: Ո՛չ: Ա՛հ, պոռնի՛կ, ինչո՞ւ չես ուզում:

ՀԻԼԴԱ.— Որովհետև ես քեզ սիրում եմ:

ԳԵՑ.— Ծիկացրու քո սերը և սուզիր իմ սրտի խորքը: Թող թշտա և գոլորշի արձակի: Եթե ինձ սիրում ես, պետք է որ տանջես:

ՀԻԼԴԱ.— Ես քոնն եմ: Մարմինս ինչո՞ւ դարձնեմ տանջելու գործիք:

ԳԵՑ.— Դու մոռոթս պիտի ճզմեիր, եթե տեսնեիր իմ հոգու հատակը: Իմ գլուխը Սողոմ-Գոմոր²¹ է, և դու ներսում՝ վհուկների ոհմակ:

ՀԻԼԴԱ (ծիծաղելով).— Պարծեցում ես:

ԳԵՑ.— Կուզեի, որ դու անասուն լինեիր, և ես քեզ հեծնեի, ինչպես անասունի:

ՀԻԼԴԱ.— Ինչքա՛ն ես տանջվում, որ մարդ ես մնացել:

ԳԵՑ.— Ես մարդ չեմ, ես ոչնչությունն եմ: Կա միայն Աստված:

Մարդը տեսիլ է, պատրանք: Ես զգվանք եմ պատճառում, այնպես չէ՞:

ՀԻԼԴԱ.— Ոչ, քանի որ ես քեզ սիրում եմ:

ԳԵՑ.— Դու պարզ տեսնում ես, որ ես ուզում եմ քեզ ստորացնել:

ՀԻԼԴԱ.— Այո, որովհետև ես եմ քո ամենաթանկարժեք ունեցվածքը:

ԳԵՑ (զայրացած).— Դու խաղին չես մասնակցում:

ՀԻԼԴԱ.— Չէ, չեմ մասնակցում:

ԳԵՑ.— Քանի դու դեռ մոտս կմնաս, ես ինձ չեմ զգալու կատարելապես նողկալի:

ՀԻԼԴԱ.— Հենց դրա համար էլ ես մնում եմ:

ԳԵՑ (դժվարությամբ վեր է կենում).— Եթե ես քեզ գրկեմ, դու ինձ վանելո՞ւ ես:

ՀԻԼԴԱ.— Ոչ:

ԳԵՑ.— Նույնիսկ եթե ես քեզ մերձեցնամ՝ սիրոս լի աղտեղություններո՞վ:

ՀԻԼԴԱ.— Եթե դու համարձակվում ես ինձ դիպչել, ուրեմն քո սիրտը մաքուր է:

ԳԵՑ.— Հիլդա՛, ինչպե՞ս կարելի է իրար սիրել առանց ամոթի: Ծնությունն ամենավատթարն է բոլոր մեղքերից:

ՀԻԼԴԱ.— Նայի՛ր ինձ, լա՛վ նայիր. իմ աչքերը, իմ շուրթերը, իմ պարանոցը, իմ թևերը. մի՞թե ես մեղանչանք եմ:

ԳԵՑ.— Դու գեղեցիկ ես: Գեղեցկությունը Չարիք է:

ՀԻԼԴԱ.— Դու վստա՞հ ես, որ այդպես է:

ԳԵՑ.— Ես այլևս վստահ չեմ ոչ մի բանում: (Դադար): Եթե հագեցում տամ իմ ցանկություններին, ես կմեղանչեմ, բայց և կազատվեմ դրանցից: Եթե իմ ցանկությունները չհագեցնեմ, նրանք կապականեն իմ ամբողջ հոգին... Գիշերն իջնում է. աղջամուղջին լավ տեսողություն է պետք Տեր Աստծուն Սատանայից տարբերելու համար: (Մոտենում, հպվում է նրան և հանկարծակի ընկրկում է): Քեզ հետ պառկել Աստծո աչքի առա՛ջ: Ո՛չ, ես չեմ սիրում գործել սիրային սանձարձակության մեղքը: (Դադար): Ա՛խ, եթե գիշեր լիներ և այնքան խավար, որ մեզ թաքցներ նրա հայացքից...

ՀԻԼԴԱ.— Սերը հենց այդպիսի գիշեր է: Իրար սիրող մարդկանց Աստված չի տեսնում:

ԳԵՑ (տատանվում է, ապա ընկրկում).— Տվեք ինձ Բեովտիայի²²

լուսանի աչքերը, որ հայացքս այս մաշկից ներս թափանցի: Տույց տվե՛ք ինձ, թե ինչ է թաքնված այս ունագների, այս ականջների մեջ: Ես, որ աղբին ձեռք տալուց զզվում եմ, ինչ-պե՛ս կարող եմ ցանկանալ, որ իմ գրկում լինի արտաթորանքի այս տոպրակը:

ՀԻԼԴԱ (պոռթկալով).— Քո հոգին է, որ լի է արտաթորանքով, ավելի քան իմ մարմինը: Քո հոգու մեջ է մարմնի տգեղությունն ու աղտոտությունը: Ես լուսանի հայացքի կարիքը չունեմ: Ես քեզ խնամել եմ, լողացրել, զգացել եմ քո տենդի շունչը: Արդյոք դադարե՞լ եմ քեզ սիրելուց: Օրըստօրե ավելի ես նմանվում այն դիակին, որ լինելու ես մի օր, և ես դարձյալ քեզ սիրում եմ: Եթե դու մեռնես, ես կպառկեմ քո գրկում և կմնամ մինչև վերջ, առանց ուտելու, առանց խմելու: Դու կփտես իմ թևերի մեջ, և ես կսիրեմ քո փտած մարմինը, քանզի սերը սեր չէ, եթե չես սիրում ամբողջովին:

ԳԵՑ (մտրակը պարզելով նրան).— Ինձ մտրակի՛ր:

Հիլդան ուտերն է թոթվում:

Դե՛, մտրակի՛ր, մտրակի՛ր: Հագեցրու քո վրեժը մեռած Կատրինի համար, քո թառամած երիտասարդության համար և հանուն այն բոլոր մարդկանց, որոնց այրեցին իմ պատճառով:

ՀԻԼԴԱ (ծիծաղից պոռթկալով).— Այո՛, ես քեզ մտրակելու եմ, կեղտո՛տ վանական: Ես քեզ մտրակելու եմ, որովհետև դու մեր սերը կործանեցիր: **(Վերցնում է մտրակը):**

ԳԵՑ.— Խփի՛ր իմ աչքերին, Հիլդա՛, իմ աչքերին:

ՏԵՍԱՐԱՆ Գ

ՆՈՒՅՆՔ, ՀԱՅՆՐԻՒ

ՀԱՅՆՐԻՒ.— Մտրակի՛ր, մտրակի՛ր նրան: Համարեք, որ ես ներկա չեմ: **(Մոտենում է նրանց: Հիլդային):** Ողբկիցն ինձ հուշեց, որ գնամ մի քիչ շրջեմ ու կամացուկ վերադառնամ: Գիտես, էլի, նրան խաբել հնարավոր չէ: **(Գեցին):** Նա ուզում էր խափանել մեր տեսակցությունը: Ծշմարի՛տ է, որ դու ինձ չէիր սպասում:

ԳԵՑ.— Ե՛ս, ես օրերն էի հաշվում:

ՀԻԼԴԱ.— Դու հաշվո՞ւմ էիր: Օ՛, Գե՛ց, դու ինձ ստել ես: **(Նա-**

յում է նրան): Քեզ ի՞նչ պատահեց: Աչքերդ փայլում են. դու ճույնը չես:

ԳԵՑ.— Նրան նորից տեսնելու հաճույքից են փայլում:

ՀԻԼԴԱ.— Տարօրինակ հաճույք. նա ջանք չի խնայելու, որ քեզ ցավ պատճառի, ինչքան որ կարող է:

ԳԵՑ.— Հենց այդ է նրա սիրելու ապացույցը: Դու խանդում ես, հը՞:

Հիդան չի պատասխանում: Գեցը շրջվում է դեպի Հայնրիխը:
Ծաղիկները դո՞ւ ես քաղել:

ՀԱՅՆՐԻԽ.— Այո, քեզ համար:

ԳԵՑ.— Ընորհակալություն: (**Գետնից վերցնում է ծաղկեփունջը**):

ՀԱՅՆՐԻԽ.— Ընորհավորում եմ տարեդարձի առթիվ, Գե՛ց:

ԳԵՑ.— Ընորհավորում եմ տարեդարձի առթիվ, Հայնրի՛խ:

ՀԱՅՆՐԻԽ.— Հավանաբար, դու մեռնես այս գիշեր...

ԳԵՑ.— Իսկապե՞ս, ինչո՞ւ:

ՀԱՅՆՐԻԽ.— Մի քանի գյուղացիներ քեզ են փնտրում, որ սպանեն: Ստիպված եղա վազել՝ նրանցից սուսջ հասնելու համար:

ԳԵՑ.— Ի՞նչ սպանել, գրո՞ղը տանի: Ինչ խոսք՝ դա ինձ պատիվ է բերում: Կարծում էի, որ ես բոլորովին մոռացության եմ մատնված: Եվ ինչո՞ւ են ուզում սպանել:

ՀԱՅՆՐԻԽ.— Անցյալ հինգշաբթի, Գունսբախի հովտում բարոններն իսպառ ջարդեցին Նաստիի բանակը: Քսանհինգ հազար սպանված. դա ջախջախում է: Երկու-երեք ամսից խոռվությունը ճնշված կլինի:

ԳԵՑ (կատաղած).— Քսանհինգ հազար սպանված: Նրանք պետք է խուսափեն այդ ճակատամարտից, ապուշները: Նրանք պետք է... (**Հանդարտվում է**): Գրո՞ղի ծոցը, մենք ծնված ենք մեռնելու համար: (**Դադար**): Ամեն ինչ, իհարկե, իմ վրա են բարդում:

ՀԱՅՆՐԻԽ.— Ասում էին, թե դու կոտորածը կարող էիր կանխել, եթե անցնեիր գործի գլուխը: Ուրախացի՛ր. դու ամենաատելի մարդն ես ամբողջ Գերմանիայում:

ԳԵՑ.— Իսկ Նաստի՞ն: Փախուստի՞ դիմեց, գերի՞ են վերցրել, սպանվա՞ծ է:

ՀԱՅՆՐԻԽ.— Կռահի՛ր:

ԳԵՑ.— Կորի՛ր գրողի ծոցը: (**Խորասուզվում է մտքերի մեջ**):

ՀԻԼԴԱ.— Նրանք գիտե՞ն, որ Գեցն այստեղ է:

ՀԱՅՆՐԻԽ.— Այո:

ՀԻԼԴԱ.— Նրանց ո՞վ տեղեկացրեց:

ՀԱՅՆՐԻԽ (ցույց է տալիս Սատանային).— Ե՞ս, ոչ, նա:

ՀԻԼԴԱ (մեղմ).— Գե՛ց: (Հպվում է նրա թևին): Գե՛ց:

ԳԵՑ (ցնցվելով).— Հը՞, ի՞նչ:

ՀԻԼԴԱ.— Քեզ այստեղ մնալ չի կարելի:

ԳԵՑ.— Ինչի՞ համար չի կարելի: Պետք է հատուցել, այդպես չէ՞:

ՀԻԼԴԱ.— Դու պարտավոր չես հատուցել. դու մեղավոր չես:

ԳԵՑ.— Խառնվիր միայն քեզ վերաբերող գործերին:

ՀԻԼԴԱ.— Սա ինձ է վերաբերում, Գե՛ց: Պետք է գնալ:

ԳԵՑ.— Ո՞ր գնալ:

ՀԻԼԴԱ.— Միևնույն է, թե ուր: Միայն թե լինես ապահովությամբ
մեջ: Դու իրավունք չունես թույլ տալու, որ քեզ սպանեն:

ԳԵՑ.— Ինչո՞ւ չէ:

ՀԻԼԴԱ.— Դա խարդախություն կլինի:

ԳԵՑ.— Ա՛հ, այո՛, խարդախություն... Հետո ի՞նչ: Մի՞թե իմ ամ-
բողջ կյանքում ես շարունակ չեմ խարդախել: (Հայնրիխին):
Դու կարող ես սկսել քո մեղադրականը: Հիմա ճիշտ ժամա-
նակն է. ես պատրաստ եմ:

ՀԱՅՆՐԻԽ (ցույց է տալիս Հիլդային).— Նրան ասա, որ հեռա-
նա:

ՀԻԼԴԱ.— Դու խոսիր իմ ներկայությամբ. ես նրան չեմ լքելու:

ԳԵՑ.— Նա իրավացի է, Հիլդա՛: Այս դատը պետք է լինի դողն-
փակ:

ՀԻԼԴԱ.— Ի՞նչ դատ:

ԳԵՑ.— Իմ դատը:

ՀԻԼԴԱ.— Ինչո՞ւ ես թույլ տալիս, որ նա քեզ դատի: Վոնդի՞ր
այս քահանային և հեռանանք այս գյուղից:

ԳԵՑ.— Հիլդա՛, ես դատվելու պահանջ ունեմ: Ամեն օր, ամեն
ժամ ինքս ինձ դատապարտում եմ, բայց ինձ չեմ կարողա-
նում համոզել, որովհետև ինքս ինձ շատ լավ եմ ճանաչում,
որպեսզի իմ վճռին կարողանամ վստահել: Իմ հոգին տեսնել
ես չեմ կարողանում, որովհետև քթիս տակն է: Պետք է մեկը,
որն ինձ առժամանակ տա իր աչքերը:

ՀԻԼԴԱ.— Իմը վերցրու:

ԳԵՑ.— Դու ևս չես տեսնում. դու ինձ սիրում ես: Հայնրիխն ինձ

ատում է, ուրեմն կարող է ինձ համոզել: Երբ մտքերս դուրս գան նրա բերանից; ես դրանց կհավանամ:

ՀԻԼԴԱ.— Եթե ես բացակայեմ, խոստանո՞ւմ ես, որ քիչ հետո ինձ հետ կփախչես:

ԳԵՑ.— Այո, եթե շահեմ իմ այս դատը:

ՀԻԼԴԱ.— Դու լավ գիտես, որ որոշել ես այն կորցնել: Մնա՛ս բարով, Գե՛ց:

(Մտտեցում է նրան, համբուրում է և հեռանում):

ՏԵՍԱՐԱՆ Գ

ԳԵՑ, ՀԱՅՆՐԻԽ

ԳԵՑ (նետում է ծաղկեփունջը).— Ծո՛ւտ գործի անցիր: Ջանք մի խնայիր, որ ինձ պատճառես այն ամբողջ ցավը, որ կարող ես:

ՀԱՅՆՐԻԽ (նայելով նրան).— Ես քեզ այլ կերպ էի պատկերացնում:

ԳԵՑ.— Համարձակ եղիր, Հայնրի՛խ, ես գործդ հեշտացրել եմ: Ինքս կհսով չափ քո դաշնակիցն եմ ու դատախազ այն կեսի դեմ, որն իրեն պաշտպանում է: Քրքրի՛ր իմ հոգին մինչև էությունը, քանի որ էությունն է խնդիրը:

ՀԱՅՆՐԻԽ.— Ուրեմն ճի՛շտ է, որ դու ուզում ես կորցնել:

ԳԵՑ.— Օ՛, ո՛չ, մի՛ վախեցիր: Բայց բանն այն է, որ ես նախընտրում եմ ոչ թե տարակուսանքը, այլ հուսահատությունը:

ՀԱՅՆՐԻԽ.— Դե՛, լա՛վ... **(Դադար):** Սպասի՛ր, հիշողությանս թելը կտրվել է: Դա ինձ հետ երբեմն պատահում է: Հիմա կհիշեմ: **(Հուզված գնում-գալիս է):** Ես, գիտե՛ս, դրա առաջն առել էի: Առավոտյան ես մտովի կրկնեցի իմ ասելիքը... Դա քո մեղքն է. դու այնպիսին չես, ինչպիսին պիտի լինեիր: Կարծում էի, քեզ կգտնեմ վարդերով պսակված, և հաղթանակի փայլը քո աչքերում: Ես պիտի շարտեի քո պսակը և ոտնահարեի քո հաղթանակը, ու վերջում դու իմ առջև պիտի ծնրադրեիր... Որտե՞ղ է քո հպարտ կեցվածքը, որտե՞ղ է քո լկտիությունը: Դու կհսով չափ մեռած ես. ի՞նչ հաճույք պիտի զգամ քեզ սպանելուց: **(Կատաղությամբ):** Ա՛հ, ես դեռ այնքան չար չեմ, որքան պետք է:

ԳԵՑ (ծիծաղելով).— Ջղաձգվում ես, Հայնրիխ: Հանգստացի՛ր, շտապելու կարիք չկա:

ՀԱՅՆՐԻՒՍ.— Ես մի բոպե չունեմ կորցնելու: Քեզ ասում եմ՝ նրանք կրնակալոխ գալիս էին իմ ետևից: (Սատանային): Հուշի՛ր ինձ, հուշի՛ր: Օգնի՛ր ինձ նրան խորապես ասելու: (Աղիողորմ): Հենց նրա կարիքը զգում եմ, նա բացակայում է:

ԳԵՑ.— Ես ինքս քեզ կհուշեմ: (Դադար): Հողերը:

ՀԱՅՆՐԻՒՍ.— Հողե՛րը:

ԳԵՑ.— Արդյոք սխա՞լ էր իմ այդ նվիրատվությունը:

ՀԱՅՆՐԻՒՍ.— Ա՛հ, հողերը... դու չես նվիրել: Մարդ կարող է նվիրել միայն այն, ինչ ինքը ունի:

ԳԵՑ.— Լավ է ասված: Սեփականությունը բարեկամություն է իրերի և մարդու միջև: Բայց իմ ձեռքում իրերը ոռնում էին: Ես ոչինչ չեմ նվիրել: Ես հանրության առջև ազդարարել եմ մի նվիրատվություն. այդքանը միայն: Բայց, քահանա՛, եթե ճշմարիտ է, որ ես հողերս չեմ նվիրել, ճշմարիտ է նույնպես այն, որ գյուղացիները դրանք ստացել են: Սրան ի՞նչ պատահական գտնենք:

ՀԱՅՆՐԻՒՍ.— Նրանք հողերը չեն ստացել, քանի որ դրանք պահպանել չեն կարողանա: Երբ բարոնները կարվածքը նվաճեն և Հայդելնշտամների ամբոցում նստեցնեն Կոնրադի հեռավոր գարմիկներից մեկին, սաա՛՛ ի՞նչ կմնա քո այդ ցնդաբանական ներկայացումից:

ԳԵՑ.— Իսկապես: Դու ճիշտ ես: Ոչ ես տվել եմ, ոչ նրանք ստացել են: Դա ավելի պարզ է: Մի մարդ երբ ուզում էր ծախսել Սատանայի տված դրամները, դրանք վերածվում էին չորացած տերևների: Այդպիսին է իմ բարեգործությունների ճակատագիրը: Ձեռքով դիպչում են, թե չէ՛ դիակների են վերածվում: Իսկ նպատակադրումը, հը՛, այնուամենայնիվ: Եթե նպատակադրումս իրոք եղել է բարի, ապա ո՛չ: Աստված, ո՛չ Սատանան այդ չեն կարող խլել ինձանից: Հարձակվի՛ր նպատակադրման վրա, կրծի՛ր:

ՀԱՅՆՐԻՒՍ.— Այդ ամեննին էլ դժվար չէ: Այնքանով, որքանով չէիր կարող վայելել այդ ունեցվածքը, դու ցանկացար վեր կանգնել դրանից՝ ձևացնելով, իբրև, թե զրկում ես ինքդ քեզ:

ԳԵՑ.— Օ՛, ձա՛յն, դաժան, անխնա, հրապարակի՛ր մտքիս արգասիքը, հրապարակի՛ր: Արդեն չգիտեմ՝ քե՞զ եմ ունկրնդ-

րում, թե՛ այդ ես եմ խոսում: Այսպես ուրեմն, ամեն ինչ լոկ սուտ էր և կատակերգություն: Ես չգործեցի. գործողության ձևացում էր միայն: Ա՛հ, քահանա՛, դու քորում ես այնտեղ, որտեղ քոր է գալիս: Հետո՞, հետո՞, հետո ի՞նչ արեց այդ խեղկատակը: Է՛հ, չեղավ, շունչդ շուտ է կտրվում:

ՀԱՅՆՐԻՒՍ (Գեցի մոլուցքով բռնկված).— Դու նվիրեցիր ոչընչացնելու համար:

ԳԵՑ.— Հենց այդ է, որ կա: Բավական չէր ժառանգորդին սպանելը, ես ուզեցի...

ՀԱՅՆՐԻՒՍ (նույն կերպ).— Դու ուզեցիր քամուն տալ նրա ժառանգությունը:

ԳԵՑ.— Ես մի ձեռքով բարձրացրի Հայդենշտամների հնամենի կավածքը...

ՀԱՅՆՐԻՒՍ (նույն կերպ).— Եվ այն գետնովը տվիր փշրելու համար:

ԳԵՑ.— Ես ուզեցի, որ իմ բարությունը լինի ավելի կործանարար, քան իմ մոլորություններն էին:

ՀԱՅՆՐԻՒՍ.— Եվ այդ քեզ հաջողվեց. քսանհինգ հազար դիակ: Քո առաքինությունը մի օրում ավելի շատ զոհեր տվեց, քան երեսունհինգ տարիների նենգությունները:

ԳԵՑ.— Ասա նաև, որ այդ զոհերը չքավորներ էին, հենց նրանք, որոնց ես ձևացրի, թե նվիրում եմ Կոնրադի ունեցվածքը:

ՀԱՅՆՐԻՒՍ.— Գրո՛ղը տանի, դու նրանց միշտ էլ ասել ես:

ԳԵՑ (բռունցքը բարձրացնելով).— Ծո՛ւն: (Իրեն զսպում է և սկըսում է ծիծաղել): Ես ուզեցի քեզ խփել. դա նշանակում է, որ դու իրավացի ես: Հա՛, հա՛: Այդ է իմ ցաված տեղը: Ծնշի՛ր: Մեղադրի՛ր, որ ես ասել եմ չքավորներին և ստրկացնելու նպատակով է, որ ես շահագործել եմ նրանց երախտագիտությունը: Առաջ ես լկանքի հնարքներով էի պղծում հոգիները, այժմ ես դրանք պղծում եմ իմ բարության հնարքներով: Ես այդ գյուղը դարձրի թոշնած հոգիների ծաղկեփունջ: Խե՛ղճ մարդիկ, նրանք ինձ կապկում էին, մինչ ես կապկում էի առաքինությունը: Նրանք իզուր նահատակվեցին՝ չիմանալով, թե ինչու: Լսի՛ր, քահանա՛, ես դավաճանել եմ բոլորին և իմ եղբորը նույնպես, բայց դավաճանելու ախորժակս անհազ էր մնացել: Եվ ահա մի գիշեր Ուորմսի պարիսպների տակ ես հայտնաբերեցի Չարիքին դավաճանելու մտահղացում: Ահա

և ամբողջ պատմությունը: Միայն թե Չարիքը թույլ չի տալիս, որ հեշտ ու հսկայապես նրան դավաճանեն: Բախտորոշ զաների վճիռը Բարությունը չէր ամենևին, այլ վատթար մի Չարիք: Եվ դա հիմա ի՞նչ կարևոր է: Լինել ճիշտ՞, թե՞ սուրբ՞ ես այդ հարցի վրա թքած ունենայի: Ես ուզում էի լինել անմարդկային: Ասա՛, Հայերի՛խ, ասա՛, որ ես ամոթից խելագարվել էի և ուզեցի Երկնքին զարմացնել խուսափելու համար մարդկանց քամահրանքից: Քեզ տեսնեմ, էլ ի՞նչ ես սպասում. խոսի՛ր: Ա՛հ, ճիշտ է, դու չես ուզում խոսել. այդ քո ձայնն է հնչում իմ բերանից: **(Կրկնօրինակելով Հայերի-խին):** Դու քո մաշկը չես փոխել: Գե՛ց, դու լեզուդ ես փոխել: Դու սեր անվանեցիր քո ատելությունը մարդկանց նկատմամբ: Եվ վեհանձնությունն անվանեցիր ոչնչացնելու քո մուրացքը: Բայց դու ինքդ քեզ հարազատ մնացիր. նույնը՝ մի բին, ուրիշ ոչինչ: **(Նորից խոսում է իր բնական ձայնով):** Աստված իմ, ես վկայում եմ, որ նա՛ մեղադրյալը, ճիշտ է ասում: Ես ինձ մեղավոր եմ ճանաչում: Ես իմ դատը կորցրի: Հայերի՛խ, հիմա գո՞հ ես դու:

ՀԱՅՆՐԻԽ.— Ոչ:

ԳԵՑ.— Դու դժվարամյան ես:

ՀԱՅՆՐԻԽ.— Աստված իմ, մի թե այս և իմ հաղթանակը. ինչպիսի՞ տխուր հաղթանակ:

ԳԵՑ.— Ի՞նչ ես անելու, երբ ես մեռնեմ: Դու իմ կարիքն զգալու ես:

ՀԱՅՆՐԻԽ (Սատանային մատնացույց անելով).— Քանի դեռ նա կա, իմ գործն անպակաս կլինի: Ժամանակ չեմ ունենա քո մասին մտածելու:

ԳԵՑ.— Գոնե վստահ ես, որ նրանք ուզում են ինձ սպանել:

ՀԱՅՆՐԻԽ.— Վստահ եմ:

ԳԵՑ.— Բարի՛ մարդիկ, ես վիզս կպարզեմ, և ամեն ինչ կվերջանա. բոլորը կազատվեն մի մեծ գլխացավանքից:

ՀԱՅՆՐԻԽ.— Ոչինչ երբեք չի վերջանում:

ԳԵՑ.— Ոչի՞նչ: Ա՛հ, այո՛, կա նաև Դժոխքը: Ի՞նչ արած, ես այնտեղ կփոխվեմ:

ՀԱՅՆՐԻԽ.— Դու չես փոխվի. դու Դժոխքում ես գտնվում: Իմ կուսակիցը (ցույց է տալիս Սատանային) ինձ իմաց տվեց, որ երկիրը լոկ երկութական է. կա Երկինքը և Դժոխքը, և

այդքանը միայն: Մահը աչքակապություն է, որպեսզի մոլորության մեջ գցի սգավորներին: Ննջեցյալի համար ամեն ինչ շարունակվում է:

ԳԵՑ.— Ինձ համա՞ր էլ ամեն ինչ շարունակվելու է:

ՀԱՅՆՐԻԽ.— Ամեն ինչ: Դու ինքդ քեզ պիտի վայելես հավիտյանս-հավիտենից:

ԳԵՑ (դադար).— Ինձ շատ մոտ էր թվում Բարությունը, երբ ես չարագործ էի: Կարծես, բավական էր, որ ես պարզեի իմ թեւերը: Ես թներս պարզեցի, և նա քամու նման փախավ անցավ մատներիս արանքից: Ուրեմն նա պատրա՞նք է, Հայնրի՞խ, Հայնրի՞խ, Բարությունն արդյոք հնարավո՞ր է:

ՀԱՅՆՐԻԽ.— Չվարճալի տարեդարձ: Մի տարի և մի օր առաջ դու ինձ նույն հարցը տվիր: Եվ ես պատասխանեցի՝ ոչ: Գիշեր էր, դու ծիծաղում էիր՝ ինձ նայելով: Եվ ասացիր. «Դու մուկ ես»: Հետո զառ գցելով՝ դուրս եկար նեղ վիճակից: Հիմա տեսնո՞ւմ ես, գիշեր է, դրա նման մի գիշեր: Դե՛, ասա՛, ո՞վ ընկավ թակարդը:

ԳԵՑ (խեղկատակելով).— Ես:

ՀԱՅՆՐԻԽ.— Կարո՞ղ ես դուրս պրծնել:

ԳԵՑ (դադարեցնելով խեղկատակությունը).— Ոչ, ես դուրս չեմ պրծնելու: (**Գնում-գալիս է**): Տե՛ր, եթե դուք մեզ զրկում եք բարին գործելու միջոցներից, ապա ինչո՞ւ մեզ տվիք դրա դառնահամ ցանկությունը: Եթե ձեզ հաճո էր, որ ես բարի չդառնամ, այդ ինչո՞ւ ինձ զրկեցիք շար լինելու ցանկությունից: (**Գնում-գալիս է**): Համենայն դեպս, հետաքրքիրն այն է, որ ելք չկա:

ՀԱՅՆՐԻԽ.— Ինչո՞ւ ես ձևացնում, թե նրա հետ ես խոսում: Դու լավ գիտես, որ նա չի պատասխանելու:

ԳԵՑ.— Եվ ինչի՞ համար է նրա այս լռությունը: Նա, որ հայտնրվեց մարգարեի էգ ավանակին²³, ինչո՞ւ է հրաժարվում ինձ հայտնվելուց:

ՀԱՅՆՐԻԽ.— Որովհետև դու արժեք չունես նրա համար: Լիկես թույլերին, թե նահատակես ինքդ քեզ, համբուրես հոմանուհու թե բորոտի շուրթերը, մեռնես զրկանքներից թե վայելքներից՝ Աստված այդ ամենի վրա թքած ունենա:

ԳԵՑ.— Եվ արդյոք նա ո՞ւմ է գնահատում որպես արժեք:

ՀԱՅՆՐԻԽ.— Ոչ ոքի: Մարդը ոչինչ է: Մի՛ ձևացրու, թե զար-

մանում ես: Դու այդ միշտ էլ իմացել ես: Դու այդ գիտեիր, երբ զառերն էիր գցում, թե չէ՝ էլ ինչո՞ւ պիտի խարդախեցիր: **Գեցն ուզում է խոսել:**

Դու խարդախեցիր. Կատրիկը տեսավ: Դու ինքդ քեզ հարկադրեցիր խոսել ծածկելու համար Աստծո լուռությունը: Դու ձևացնում ես, որ Աստծո հրամաններն ես կատարում, բայց այդ հրամաններն ինքդ ես արձակում քեզ համար:

ԳԵՑ (խորհելով).— Այո, այդպես է:

ՀԱՅՆՐԻԽ (զարմացած).— Ուրեմն, այո, դու ինքդ...

ԳԵՑ (նույն կերպ).— Ես ինքս, մենակ:

ՀԱՅՆՐԻԽ.— Այո, ասում եմ քեզ, այո:

ԳԵՑ (զուխը բարձրացնելով).— Ես ինքս մենակ, քահանա՛, դու իրավացի ես: Ես ինքս՝ մենակ: Ես աղոթում էի, ակնկալում էի մի ազդանշան, Երկինք էի ուղարկում իմ աղերսալի հարցմունքները. ոչ մի պատասխան: Երկինքն իմ անունն անգամ չգիտի: Ամեն բոլոր ինքս ինձ հարցնում էի, թե ով եմ ես Աստծո համար: Այժմ ես գիտեմ պատասխանը. ես ոչինչ եմ: Աստված ինձ չի տեսնում, Աստված ինձ չի լսում, Աստված ինձ չի ճանաչում: Տեսնո՞ւմ ես այս ամայությունը մեր գլխավերևում. այդ է Աստված: Տեսնո՞ւմ ես դուստ անոթը. այդ է Աստված: Տեսնո՞ւմ ես սուս հողատիր. այդ է Աստված: Լուռությունը՝ այդ է Աստված: Բացակայությունը՝ այդ է Աստված: Աստվածը մարդկանց մեկությունն է: Կար միայն իմ եսը: Ես ինքս մենակ որոշեցի գործել Չարիք: Ես ինքս մենակ ստեղծեցի Բարությունը: Այդ ես խարդախեցի, ես ինքս հրաշագործեցի: Այսօր ես եմ ինձ մեղադրում և միայն ես կարող եմ թողություն տալ իմ մեղքերին: Ես՝ մարդը: Եթե Աստված գոյություն ունի, մարդը ոչինչ է: Եթե մարդը գոյություն ունի... Այդ ո՞րք ես փախչում:

ՀԱՅՆՐԻԽ.— Ես գնում եմ. քեզ հետ անելիք չունեն:

ԳԵՑ.— Սպասի՛ր, քահանա՛, ես քեզ ծիծաղեցնելու եմ:

ՀԱՅՆՐԻԽ.— Լռի՛ր:

ԳԵՑ.— Բայց դու դեռ չգիտես, ես ինչ պիտի ասեմ: (**Նայում է նրան և հանկարծակի**): Դու գիտես:

ՀԱՅՆՐԻԽ (գոռալով).— Դու սխալվում ես, ես ոչինչ չգիտեմ, ոչինչ չեմ ուզում իմանալ:

ԳԵՑ.— Հայնրի՛խ, ես հիմա քեզ կհայտնեմ մեծագույն խաբու-

թյունը: Աստված գոչությունն չունի:

Հայնրիխը հարձակվում է նրա վրա և խփում է նրան: Գեղը ծիծաղում է հարվածների տակ և գոռում է:

Նա գոչությունն չունի: Ուրախացի՛ր, լաց լինելու չափ ուրախացի՛ր: Ալելուիա: Խելագա՛ր: Մի՛ խփիր, ես մեզ ազատագրում եմ: Ո՛չ Դրախտ, ո՛չ Դժոխք: Կա միայն երկիրը:

ՀԱՅՆՐԻԽ.— Ա՛հ, նզովյալ լինեմ հարչուր անգամ, հազար անգամ, միայն թե նա գոչությունն ունենա: Գե՛ց, մարդիկ մեզ անվանարկել են բիճ ու դավաճան: Եվ նրանք մեզ դատապարտել են: Եթե Աստված գոչությունն չունի, հնար չի լինի ազատվելու մարդկանցից: Աստվա՛ծ իմ, այս մարդը սրբապղծում է: Ես քեզ հավատում եմ, հաւատում եմ, Հա՛յր մեր, որ յերկինս ես: Լավ է ինձ դատի մի անսահման էակ, քան դատեն ինձ իմ հավասարները:

ԳԵՑ.— Ո՛ւմ հետ ես խոսում: Քիչ առաջ ասում էիր, որ նա խուլ է: **Հայնրիխը լուռ նայում է նրան:**

Հնար չկա ազատվելու մարդկանցից: Մնաք բարով, ճիվաղների, մնաք բարով, սրբե՛ր: Մնաս բարով, հպարտություն: Գոչությունն ունեն միայն մարդիկ:

ՀԱՅՆՐԻԽ.— Մարդիկ, որոնք քո գոչությունը չեն ուզում ընդունել, բի՛ճ:

ԳԵՑ.— Պա՛հ, այդ հարցը ես կհարթեմ: (**Դադար**): Հայնրի՛խ, ես իմ դատը տանուլ չտվեցի: Դատը տեղի չունեցավ, քանզի չկա դատավորը: (**Դադար**): Ես ամեն ինչ վերսկսում եմ:

ՀԱՅՆՐԻԽ (ցնցվելով).— Ի՞նչն ես վերսկսում:

ԳԵՑ.— Կյանքը:

ՀԱՅՆՐԻԽ.— Քեզ անչափ ձեռնտու պիտի լիներ այդ անելը: (**Հարձակվում է նրա վրա**): Դու նորից չես սկսելու. վերջացած է: Հենց այսօր պետք է դրվի վերջակետը:

ԳԵՑ.— Թո՛ղ ինձ, Հայնրի՛խ, թո՛ղ ինձ: Ամեն ինչ փոխվել է. ես ուզում եմ ապրել: (**Նրա ձեռքից դուրս արժնելու փորձեր է անում**):

ՀԱՅՆՐԻԽ (նրան խեղդելով).— Որտե՞ղ է քո ուժը, Գե՛ց, որտե՞ղ է քո ուժը: Ինչ լա՛վ է, որ ուզում ես ապրել. դու սատկելու ես հուսահատության մեջ:

Գեղը, թոպացած, իզուր փորձում է վանել նրան:

Դժոխքի քո բաժինը թող խտացած լինի այս վերջին վայրկյանի մեջ:

ԳԵՑ.— Թո՛ղ ինձ: (**Տապալկվում է**): Գրո՛ղը տանի, եթե մեզանից մեկն ու մեկը պետք է մահանա, ի՛նքդ մահացիր: (**Դաճակով հարվածում է նրան**):

ՀԱՅՆՐԻՒ.— Հա՛: (**Լռություն**): Ես չեմ ուզում, որ դադարի իմ ատելությունը: Ես չեմ ուզում, որ դադարի իմ տառապանքը: (**Ընկնում է**): Չի լինելու ոչի՛նչ, ոչի՛նչ, ոչի՛նչ: Իսկ դու վաղը տեսնելու ես արևի լույսը: (**Մեռնում է**):

ԳԵՑ.— Դու մեռար, և աշխարհը նույնքան լիքն է, ինչքան առաջ: Ոչ ոք չի զգալու քո պակասը: (**Վերցնում է ծաղիկները զցում է դիակի վրա**): Բարության կատակերգությունն ավարտվեց մարդասպանությամբ. այդպես ավելի լավ է. ես այրեցի իմ կամուրջները: (**Չայն է տալիս**): Հիլդա՛, Հիլդա՛:

ՏԵՍԱԲԱՆ Ե

ՀԻԼԴԱ, ԳԵՑ

Մթնել է:

ԳԵՑ.— Աստված մահացել է:

ՀԻԼԴԱ.— Մահացել է, թե ողջ է՝ դա ի՞նչ կարևոր է: Վաղուց է, ինչ ես թքած ունեի նրա վրա: Որտե՞ղ է Հայնրիխը:

ԳԵՑ.— Գնաց:

ՀԻԼԴԱ.— Դու քո դատը շահեցի՞ր:

ԳԵՑ.— Դատը տեղի չունեցավ. ես քեզ ասում եմ՝ Աստված մահացել է: (**Գրկում է նրան**): Ոչ մի ականատես չկա. միայն ես եմ տեսնում քո մազերն ու ճակատը: Այն պահից, ինչ դադարեց նրա գոյությունը, դու դարձել ես ճշմարիտ: Ի՛նձ նայիր: Ոչ մի ակնթարթ քո հայացքը մի՛ հեռացրու ինձանից: Աշխարհը կուրացել է. եթե դու շրջես քո գլուխը, ես կվախեճամ անէանալուց: (**Միծաղում է**): Վերջապես, մենք մեճակ մնացինք:

Լույսեր: Չահերը մոտենում են:

ՀԻԼԴԱ.— Ահա գալիս են. հեռանանք:

ԳԵՑ.— Ես ուզում եմ նրանց սպասել:

ՀԻԼԴԱ.— Նրանք քեզ կսպանեն:

ԳԵՅ.— Պա՛հ, ո՞վ գիտե: (**Դադար**): Արի մնանք. ես մարդկանց տեսնելու պահանջ ունեմ:
Զահերը մոտենում են:

ՊԱՏԿԵՐ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

Գյուղացիների ճամբարը:

ՏԵՍԱՐԱՆ Ա

ԿԱՐԼ ՎՀՈՒԿ, ԵՐԿՐԵ ԳՅՈՒՂԱՑԻՆՆԵՐ, ՏԵՍՈՒ ՆԱՍՏԻ

- Վհուկը ձեռքի ձև ունեցող փայտը քսում է գյուղացիներին:**
ՆԱՍՏԻ (ներս մտնելով).— Այստեղ ի՞նչ ես անում:
ՎՀՈՒԿ.— Անխոցելի եմ դառնում այն մարդիկ, որոնց մարմնին ես քսում եմ այս փայտե ձեռքը: Նրանք կկարողանան հարվածներ հասցնել, բայց ոչ մեկի հարվածը նրանց չի վնասի:
ՆԱՍՏԻ.— Դե՛ն գցիր այդ ձեռքը: (**Հարձակվում է նրա վրա**):
Դե՛ն գցիր, ասում եմ:
Վհուկն ապաստանում է Կարլի թիկունքում:
Կա՛րլ, նա քո համաձայնությամբ է գործում:
ԿԱՐԼ.— Այո, մի՛ խանգարիր նրան:
ՆԱՍՏԻ.— Քանի դեռ ես եմ առաջնորդը, պետերը չեն ստելու իրենց զինվորներին:
ԿԱՐԼ.— Ուրեմն զինվորները սատկելու են իրենց պետերի հետ:
ՆԱՍՏԻ (գյուղացիներին).— Կորե՛ք այստեղից:
Գյուղացիները դուրս են գալիս: Դադար: Կարլը մոտենում է Նաստիին:
ԿԱՐԼ.— Դու տատանվում ես, Նաստի՛. երազների մեջ ես ընկել, մինչ դասալիքները շատանում են: Բանակը կորցնում է իր զինվորներին, ինչպես վիրավորը արյուն է կորցնում: Արյունահոսությունը պետք է կասեցնել: Եվ խորություն չպետք է դնել միջոցների մեջ:
ՆԱՍՏԻ.— Ի՞նչ ես մտադիր անել:
ԿԱՐԼ.— Ուզում եմ հրաման արձակել, որ բոլորը թույլ տան, այս սիրունիկ երեխան իրենց քալի իր փայտե ձեռքով: Նրանք

ԿՏՈՒՄ մեր շարքերում, եթե հավատան, որ դարձել են ան-
խոցելի:

ՆԱՍՏԻ.— Ես նրանց մարդ էի դարձրել, դու վերածում ես անա-
սունի:

ԿԱՐԼ.— Այվելի լավ է նրանք անվախ անասուններ լինեն, քան թե
մարդիկ, որոնք ծլկում են:

ՆԱՍՏԻ.— Մոլորության ու նողկանքի մարգարե:

ԿԱՐԼ.— Այո, ճիշտ ես ասում: Ես կեղծ մարգարե եմ: Իսկ դո՞ւ,
դու ի՞նչ ես:

ՆԱՍՏԻ.— Ես այս պատերազմը չէի ուզում...

ԿԱՐԼ.— Թող այդպես լինի, բայց դու չկարողացար այն կանխել,
որեմն, Աստված հրաժարվել էր քեզ ապավեն լինելուց:

ՆԱՍՏԻ.— Ես կեղծ մարգարե չեմ, այլ մարդ, որին Տերը խաբել
է: Արա, ինչ ուզում ես:

Կարլը Վհուկի հետ դուրս է գալիս:

Այո, Աստված իմ, դուք ինձ խաբել եք, քանզի թույլ տվե-
ցիք՝ ինձ կարծելու, որ ես եմ ձեր ընտրյալը: Բայց ձեզ ինչ-
պե՞ս կշտամբեմ, ես, որ բազում ստերով մոլորության մեջ
էի գցում ձեր իսկ ստեղծած մարդ-արարածներին: Եվ ինչ-
պե՞ս կասկածեմ, դուք ինձ սիրո՞ւմ եք արդյոք, ինձ, որը սի-
րում է իր եղբայրներին, ինչպես սիրում է և ստել է նրանց,
ինչպես որ ստել է:

ՏԵՍԱՐԱՆ Բ

ՆԱՍՏԻ, ԳԵՑ, ՀԻԼԴԱ, երեք զինված ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐ

ՆԱՍՏԻ (առանց զարմանքի).— Դու արդեն այստե՞ղ ես:

ԳՅՈՒՂԱՑԻ (մատնացույց անելով Գեցին).— Նրան էինք փընտ-
րում, որ հաշիվը մաքրենք: Բայց նա արդեն այն մարդը չէ:
Ընդունեց իր սխալները և հայտնեց, որ ուզում է կովել մեր
շարքերում: Մենք էլ նրան բերեցինք քեզ մոտ:

ՆԱՍՏԻ.— Մեզ մենակ թողեք:

Գյուղացիները դուրս են գալիս:

Դու ուզո՞ւմ ես կովել մեր շարքերում.

ԳԵՑ.— Այո:

ՆԱՍՏԻ.— Ինչո՞ւ:

- ԳԵՑ.**— Ես ունեմ ձեր կարիքը: (**Դադար**): Ուզում եմ մարդ լինել մարդկանց շրջապատում:
- ՆԱՍՏԻ.**— Ընդամենը՝ այդքա՞ն:
- ԳԵՑ.**— Ես գիտեմ, որ այդ է ամենադժվարը: Ահա թե ինչու պետք է սկսեմ սկզբից:
- ՆԱՍՏԻ.**— Ի՞նչն էս դու համարում սկիզբը:
- ԳԵՑ.**— Ոճիրը: Այսօրվա մարդիկ ծնվում են ոճրագործ: Ես պետք է ինձ վրա վերցնեմ նրանց ոճիրների իմ բաժինը, եթե ուզում եմ, որ ինձ բաժին հասնի նրանց սիրուց և առաքինությունից: Ես անարատ սեր էի ցանկանում. հիմարություն՝: Իրար սիրել՝ նշանակում է ատել նույն թշնամուն: Ուրեմն ես կմերձեցնամ ատելությանը: Ես Բարություն էի ցանկանում. տխմարություն՝: Այս երկրի վրա, այս ժամանակներում անբաժան են Բարությունն ու Չարիքը: Համաձայն եմ չար լինել բարի դառնալու համար:
- ՆԱՍՏԻ (նրան նայելով).**— Դու փոխվել ես:
- ԳԵՑ.**— Այն էլ ինչպե՞ս: Ես կորցրի մեկին, որը թանկ էր ինձ համար:
- ՆԱՍՏԻ.**— Ո՞ւմ ես կորցրել:
- ԳԵՑ.**— Դու նրան չես ճանաչում: (**Դադար**): Ուզում եմ հասարակ զինվոր դառնալ, խնդրում եմ, քո հրամանատարության տակ:
- ՆԱՍՏԻ.**— Ես քեզ մերժում եմ:
- ԳԵՑ.**— Նաստի՛:
- ՆԱՍՏԻ.**— Ինչի՞ս է պետք մեկ զինվորը, երբ օրական հիսունն են կորցնում:
- ԳԵՑ.**— Երբ ես ձեզ մոտ եկա հպարտ, ինչպես հարուստը, դուք ինձ վտարեցիք: Եվ դա արդարացի էր, քանզի հավակնում էի, որ դուք ունեք իմ կարիքը: Բայց այսօր ասում եմ, որ ես ունեմ ձեր կարիքը, և եթե դուք ինձ վոնդեք, դա կլինի անարդարացի, քանզի անարդարացի են նրանք, ովքեր վտարում են մուրացիկներին:
- ՆԱՍՏԻ.**— Ես քեզ չեմ վոնդում: (**Դադար**): Արդեն մեկ տարի է և մեկ օր, ինչ քո տեղը քեզ սպասում է: Զբաղեցրո՛ւ: Դու կլինես բանակի հրամանատարը:
- ԳԵՑ.**— Ո՛չ: (**Դադար**): Ես ծնված չեմ հրամանատար դառնալու համար: Ուզում եմ հնազանդվել:

ՆԱՍՏԻ.— Հիանալի է: Ուրեմն ես քեզ հրամայում եմ գլխավորել մեր բանակը: Հնազանդվի՛ր:

ԳԵՑ.— Նաստի՛, ես ակամա եմ ընդունում սպանելու անհրաժեշտությունը, և պատրաստ եմ նաև սպանվելու, եթե այդ անհրաժեշտ է: Բայց ես ոչ ոքի չեմ ուղարկի մահվան ընդունաջ: Այժմ ես գիտեմ, թե ինչ է մահը: Այն կողմը ոչինչ չկա, Նաստի՛, ոչի՛նչ: Մերը միայն այս կյանքն է:

ՀԻԼԴԱ (նրան ընդհատելով).— Գե՛ց, լռի՛ր:

ԳԵՑ (Հիլդային).— Այո: (**Նաստիին**): Առաջնորդները միայնակ են: Ես մարդիկ եմ ուզում ամեն, ամեն տեղ, իմ շուրջը և իմ գլխավերևին, և թող նրանք երկինքը ծածկեն ինձանից: Նաստի՛, թույլ տուր լինեմ շատերից մեկը:

ՆԱՍՏԻ.— Դու հեևաց աչքայես պիտի լինես շատերից մեկը: Կարծում ես զորավարն ավելի՞ն է, քան մյուսները: Եթե չես ուզում առաջնորդել, հեռացի՛ր:

ՀԻԼԴԱ (Գեցին).— Համաձայնվի՛ր:

ԳԵՑ.— Ո՛չ, մինչև կոկորդս կշտացել եմ երեսունվեց տարվա մեծակությունից:

ՀԻԼԴԱ.— Ես քեզ հետ կլինեմ:

ԳԵՑ.— Դու՛ այդ ես եմ: Եվ միասին մեծակ ենք լինելու:

ՀԻԼԴԱ (կիսաձայն).— Եթե դու զինվոր լինես զինվորների հետ, նրանց ստելո՞ւ ես, որ Աստված մահացել է:

ԳԵՑ.— Ո՛չ:

ՀԻԼԴԱ.— Տեսնո՞ւմ ես:

ԳԵՑ.— Ի՞նչ:

ՀԻԼԴԱ.— Երբեք դու նրանց նման չես լինելու: Ոչ ավելի լավը, ոչ ավելի վատը: Պարզապես՝ ուրիշը: Եվ եթե դուք համամիտ լինեք իրար հետ, ապա այդ տեղի կունենա միայն թյուրիմացաբար:

ԳԵՑ.— Ես Աստծուն սպանեցի, որովհետև նա ինձ բաժանում էր մարդկանցից: Եվ ահա՛ նրա մահն ինձ հաստատապես ավելի է մեկուսացնում: Ես չեմ հանդուրժի, որ այդ հսկա դիակը ապականի մարդկային իմ կարոտները: Ես նրանց կսսեմ ճշմարտությունը:

ՀԻԼԴԱ.— Դու իրավունք ունե՞ս նրանց զրկելու այդ վեհագույն խաբկանքի ներշնչած արիությունից:

ԳԵՑ.— Ես այդ քիչ-քիչ կանեմ: Մի տարվա համբերությունից հետո...

ՀԻԼԴԱ (ծիծաղելով).— Լավ է, էլի: Մի տարի հետո բոլորս մեռած կլինենք:

ԳԵՑ.— Եթե Աստված գոյություն չունի, ինչո՞ւ եմ ես մեռակ, ես, որ կուզեցայի ապրել բոլորի հետ:

Վհուկին առաջները գցած՝ ներս են մտնում գյուղացիները:

ՎՀՈՒԿ.— Երդվում եմ ձեզ՝ ոչ մի ցավի տեր էլ չեք դառնա: Անխոցելի կլինեք, եթե ձեր մարմինը շփեմ այս փայտե ձեռքով:

ԳՅՈՒՂԱՑԻ.— Մենք քեզ կհավատանք, եթե Նաստին նույնպես համաձայնի, որ այդ փայտե ձեռքով շփես նրա մարմինը:

Վհուկը մոտենում է Նաստին:

ՆԱՍՏԻ.— Կորի՛ր գրողի ծոցը:

ՎՀՈՒԿ (կհասձայն).— Ինձ ուղարկել է Կարլը: Թույլ տուր, թե չէ՝ ամեն ինչ կորած է:

ՆԱՍՏԻ.— Լավ, շո՛ւտ արա:

Վհուկը շփում է նրա մարմինը: Գյուղացիները ծափահարում են:

ԳՅՈՒՂԱՑԻ.— Ծփիր նաև քահանային:

ԳԵՑ.— Այդ էր պակաս:

ՀԻԼԴԱ (մեղմ).— Գե՛ց:

ԳԵՑ.— Ծփի՛ր, գեղեցկուհի՛, ուժե՛ղ շփիր:

Վհուկը շփում է:

ՆԱՍՏԻ (կատաղած).— Կորե՛ք պատեղից:

Նրանք հեռանում են:

ԳԵՑ.— Նաստի՛, այս ի՞նչ օրն ես ընկել:

ՆԱՍՏԻ.— Այո:

ԳԵՑ.— Ուրեմն դու նրանց արհամարհո՞ւմ ես:

ՆԱՍՏԻ.— Ես միայն ինքս ինձ եմ արհամարհում: **(Դաղար):**

Այսքա՛ն էլ տարօրինակ խեղկատակություն: Ես, որ ատում եմ սուտը, ստում եմ իմ եղբայրներից, որ նրանց արիությունները չեմ՝ գոհվելու բովերում այն պատերազմի, որն ինձ համար ատելի է:

ԳԵՑ.— Գրո՞ղը տանի, Հիլդա՛, այս մարդը նույնքան միայնակ է, ինչքան ես:

ՆԱՍՏԻ.— Քեզանից ավելի: Դու միշտ էլ մեռակ ես եղել: Ես եղել եմ հարյուր հազար, և հիմա միայն ես եմ: Գե՛ց, ես չգի-

տեի ո՛չ մեկակություն, ո՛չ պարտություն, ո՛չ տագնապ: Եվ այժմ ես դրանց մեջ մնացել եմ անօգնական:

Մտնում է մի զինվոր:

ԶԻՆՎՈՐ.— Պետերն ուզում են հետդ խոսել:

ՆԱՍՏԻ.— Թող ներս մտնեն: (**Գեղին**): Ինձ ասելու են, որ զինվորների վստահությունը կորել է, և իրենք էլ զրկվել են հեղինակությունից:

ԳԵՑ (ուժգնորեն).— Ո՛չ:

Նաստին նայում է նրան:

Տառապանքը, տագնապը, խղճի խայթերը թող իմը լինեն: Բայց եթե դու, դու տառապես, կմարի վերջին մոմը, կտիրի խափար գիշեր: Ես ստանձնում եմ բանակի հրամանատարությունը:

Ներս են մտնում Պետերը և Կարլը:

ՊԵՏ.— Նաստի՛, այս պատերազմն ավարտելու լավագույն հնարը պետք է գտնել: Իմ զինվորները...

ՆԱՍՏԻ.— Երբ քեզ թույլ տամ, այն ժամանակ էլ կխոսես: (**Դադար**): Ձեզ համար ունեմ մի նորություն, որ հաղթանակ արժե. մենք գեներալ ունենք, և նա Գերմանիայի ամենակշահավոր զորավարն է:

ՊԵՏ.— Այս վանակա՛նր:

ԳԵՑ.— Ամեն ինչ, բայց ոչ վանակա՛ն: (**Սքեմը վրայից դեն է գրցում և հայտնվում է զինվորականի համազգեստով**):

ՊԵՏԵՐԸ.— Գե՛ցը:

ԿԱՐԼ.— Գե՛ցը, գրո՛ղը տանի...

ՊԵՏ.— Եթե Գեցն է, ուրեմն ամեն ինչ փոխվում է:

ՈՒՐԻԾ ՊԵՏ.— Ի՞նչն է փոխվում, հը՞, ի՞նչն է փոխվում: Նա դավանան է: Դեռ կտեսնեք, թե նա մեզ ինչպես է զցելու մի հիշարժան ծուղակի մեջ:

ԳԵՑ.— Մոտեցի՛ր: Նաստին ինձ նշանակել է առաջնորդ և զորավար: Դու ինձ հնազանդվելո՞ւ ես:

ՊԵՏ.— Ես ավելի շուտ կնախընտրեմ սատկել:

ԳԵՑ.— Դե՛, սատկի՛ր, ուրեմն, եղբա՛յր իմ: (**Դաշունահարում Լ նրան**): Իսկ մնացածներդ, լսե՛ք, թե ինչ եմ ասում: Սիրոս կախ է՝ այս հրամանատարությունը ստանձնելիս, բայց ես այն չեմ թողնի: Հավատացե՛ք ինձ. եթե մեկ-մի հնարավորություն կա այս պատերազմը շահելու, ես այն շահելու եմ:

Հենց հիմա բոլորին ազդարարեք, որ կախաղան կբարձրաց-
նենք նրան, ով փորձի դասալքել մեր շարքերը: Հենց այս
երեկո պետք է կարգի բերել զենքը, զորքը և պարենամթեր-
քը: Ձեր գլխով եք պատասխանատու ամեն ինչի համար:
Հաղթանակը հաստատ մերը կլինի, եթե զինվորները ավելի
շատ ինձանից վախենան, ավելի քիչ՝ թշնամուց:

Նրանք ուզում են խոսել:

Ո՛չ, ո՛չ մի խոսք: Գնացե՛ք, վաղը ես ձեզ կհայտնեմ իմ ծրա-
գրերը:

Նրանք դուրս են գալիս: Գեջը ոտքով հրում է դիակը:

Ահա և սկսվում է մարդու տիրապետությունը: Լավ սկիզբ է:
Ի՛նչ արած, Նաստի՛, ես լինելու եմ դահիճ և մսագործ: (Թու-
լացած ընկրկում է, բայց արագորեն տիրապետում է ինքն
իրեն):

ՆԱՍՏԻ (ձեռքը ոսիճ դնելով).— Գե՛ց...

ԳԵՑ.— Մի՛ վախեցիր, ես չեմ տատանվելու: Ես նրանց պիտի
ահաբեկեմ, քանի որ նրանց սիրելու ուրիշ հնար չունեմ: Ես
նրանց պիտի հրամայեմ, քանի որ հնազանդվելու ուրիշ հնար
չունեմ: Այս դատարկ երկինքն իմ գլխավերևին՝ ես պիտի
մնամ միայնակ, քանի որ բոլորի հետ միասին լինելու ուրիշ
հնար չունեմ: Մեզ վիճակված է այս պատերազմը, և ես այն
մղելու եմ:

Վ ա ր ա գ ու յ թ

ԿՈՒՆ ԱԲԵ

ԱՄՐՈՑԸ

(պիես երկու գործողությամբ, տասը պատկերով)

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՏՂԱՄԱՐԴ, 38 տարեկան

ՆՐԱ ԿԻՆԸ, 31 տարեկան

ՆՐԱ ՀԱՅՐԸ, 60 տարեկան

ԾԱՌԱ ՅԱԳԻ, 52 տարեկան

ԱՂՋԻԿ (պարուհի), 23 տարեկան

Թանճր խավարում լսվում է ժամացույցի բարձր տկտկո-
ցը...

Արագորեն բարձրանում է վարագույրը: Խավարից՝ լու-
սարձակի ճառագայթում, անսպասելիորեն հառնում է կա-
խաղան բարձրացված մարդու կերպարանք: Սկսվում է ար-
ձագանքի պես տարածվող երկխոսությունը. Հեռավոր-արե-
վելյան ռազմական ատյանի նիստում դատախազը հարցա-
քննում է մեղադրյալին. վերջինս համառորեն պնդում է իր
անմեղությունը:

ՀԱՐՑ.— Դուք ճիշտ եք համարում ձեր գործողությունները՝ կապ-
ված Մանջուրիայի վերաբերմամբ Ծապոնիայի ակցիաների
հետ¹:

ՊԱՏԱՍԽԱՆ.— Ծիշտ եմ համարում:

ՀԱՐՑ.— Դուք գտնում եք, որ բարոյական և իրավական տեսա-
կետից պատերազմի սանձազերծումը հանցագործություն չէ՞ր:

ՊԱՏԱՍԽԱՆ.— Դա պաշտպանողական պատերազմ էր: Ես գըտ-
նում եմ, որ չկա այնպիսի օրենք, որը թույլ տար պատժել
հայրենասերների:

ՀԱՐՑ.— Դուք կողմնակի՞ց էիք պատերազմին:

ՊԱՏԱՍԽԱՆ.— Առաջին: Ես սիրում եմ խաղաղությունը: Բայց
ավելի ուժգին սիրում եմ հայրենիքը: Երկրորդ: Մենք՝ ճապո-
նացիներս, ըստ ավանդույթի, եթե պետության ճակատագիրը
այդ պահանջում է, ծառայում ենք նրան՝ անկախ նրանից, թե
ինչպիսին են մեր հայացքները:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ

1

Լույսը վառվում է: Ընդարձակ դահլիճ: Ամենուրեք ամա-
ռության կնիքն է: Բայց պատերը ամուր ու խճամքով երես-
պատված են թանկարժեք տախտակադրվագներով: Դահլիճի
խորքում և երկու կողմերում՝ մեծ դռներ: Պատուհանները
ծածկված են թավշյա վարագույրներով:

Ծեր ծառան սրբում է ճամպրուկների փոշին: Երկուսն արդեն սրբել է և այժմ զբաղված է երրորդով:

Աջ կողմի դռնից մտնում է տղամարդը՝ տան տերը: Ջղաչին հայացքով արագորեն նայում է շուրջը:

ՏՂԱՄԱՐԴ.— Դե՛, ավարտեցի՞ր պատրաստությունները:

ԾԱՌԱ.— Ամեն ինչ պատրաստ է:

ՏՂԱՄԱՐԴ.— Աղջիկը (կզակով ցույց է տալիս ձախ դուռը) արդեն այստե՞ղ է:

ԾԱՌԱ.— Կանչե՞մ նրան:

ՏՂԱՄԱՐԴ.— Ոչ, պետք չէ... Դու նրան ինչպես հարկն է բացատրեցի՞ր, թե ինչ պետք է անի...

Ծառան գլխով է անում:

Ուրեմն ամեն ինչ կարգին է: **(Մոտենում է կենտրոնական դռանը, ականջ դնում):**

ԾԱՌԱ.— Անընդհատ քայլում է:

ՏՂԱՄԱՐԴ.— Այո... քայլում է...

ԾԱՌԱ.— Ես մի անգամ մտա սենյակ՝ նրա մոտ, իսկ նա ասում է. «Թո՛ւմ, ի՞նչ հոտ է փչում քեզանից»: **(Ժպտում է):** Իզուր չեն ասում, որ կնոջ հետ շփվող տղամարդու հոտը աշխարհում ամենազզվելի է... Ամենա... ճիշտ է... Ի դեպ, ես...

Հանկարծակի բացվում է ձախ դուռը և ներս է մտնում կինը:

Ի տարբերություն տղամարդու և ծառայի, որոնք տնային հագուստով են, նրա հագին ժամանակակից պերճաշուք զգեստ է, որը խիստ հակադրվում է շրջապատին: Նա ուղղվում է դեպի տղամարդիկ. իսկույն նկատվում է, որ ագրեսիվ է տրամադրված:

ՏՂԱՄԱՐԴ (ընկրկելով).— Ի՞նչ ես ուզում:

ԿԻՆ.— Ո՞վ է այդ կինը... Ինչպե՞ս նա կարող էր համարձակվել...

Անհավատալի է: **(Կմկմալով):** Կարծում եմ, նա պարզապես խելքը գցել է...

ՏՂԱՄԱՐԴ (կիսաձայն).— Մենք ուրիշ ելք չունենք: Չէ՞ որ դու հրաժարվեցիր օգնել...

ԿԻՆ (սառը).— Սպասում եմ մինչև ութն անց կես: **(Կտրուկ շրջվելով՝ հեռանում է):**

Տղամարդն, ասես քարացած, լռում է: Ծառան հանում է կեղծամը, նրանով հովհարում հատուկենտ մազերով ծածկված գլուխը, սրբում քրտինքը և նորից հագնում: Տղամարդը նայում է ժա-

մացուցցին: Բացվում է դուռը և այնտեղից դուրս է ցցվում աղջիկը: ԱՂԶԻԿ (կամացուկ).— Ո՞վ էր:

ԾԱՌԱ (նրան ներս հրելով).— Հանգիստ նստիր ու սպասիր, մինչև քեզ կկանչեն:

ԱՂԶԻԿ (անթարթ նայելով տղամարդուն).— Կատաղա՞ծ, աչքերը չոա՞ծ: (Կզակը ցցելով՝ չարացած հայացքներ է նետում):

ԾԱՌԱ.— Կինն էր... Գնա՛, գնա՛... (Ձեռքով նշան է անում, որ հեռանա):

ԱՂԶԻԿ.— Աա՛, կինը... (Հայացքը չի կտրում տղամարդուց: Նրկատելով, որ նրա համար դա հաճելի չէ և գլուխը կախել է): Իսկ դուք տանտերն եք, այո՞:

ՏՂԱՄԱՐԴ (դժկամությամբ).— Խնդրում եմ սիրել և հարգել:

ԾԱՌԱ (կտրուկ).— Գուցե բավակա՞ն է: Մի գլուխ շաղակրատում ես: Կարծեմ, պայմանավորվել եմք, որ ոչինչ չես հարցնելու:

ԱՂԶԻԿ (աշխույժ).— Ինչպե՞ս, ուրեմն ամեն ինչ կարգի՞ն է: Ծառան ուշադիր նայում է տղամարդուն:

ՏՂԱՄԱՐԴ.— Մանրուքները նշանակություն չունեն: Միայն թե ցանկալի կլիներ, որ քեզ ավելի շիտակ պահեիր:

ԱՂԶԻԿ.— Լուսանկարում այնքան համեստ տեսք ունի...

ԾԱՌԱ.— Այդ ի՞նչ եղունգներ են: Եվ այն էլ կարմիր:

ԱՂԶԻԿ (կծկվելով).— Ծիշտ է, ես բոլորովին մոռացել էի դրանց մասին... (Նայում է կենտրոնական դռանը. կամացուկ): Այնտե՞ղ է, այո՞:

ՏՂԱՄԱՐԴ (ժամացուցցին նայելով).— Յոթն անց է երեսուներկու րոպե:

ԾԱՌԱ (դուրս ուղեկցելով աղջկան).— Լավ, գնա՛, գնա՛: Համարյա ժամանակ չի մնում: (Աղջկա ետևից ծածկելով դուռը՝ քննախույզ նայում է տղամարդուն):

ՏՂԱՄԱՐԴ (գլխահակ).— Մնացած բոլորը պատրա՞ստ է:

ԾԱՌԱ.— Պատրաստ է... Հարմա՞ր է նա (մատով դուռն է ցույց տալիս), թե՞ ոչ... Ես կառավարչին խնդրեցի ընտրել ամենագրավիչին, մինչդեռ նա չափից ավելի շատախոս դուրս եկավ:

ՏՂԱՄԱՐԴ (ընդհատելով).— Չորս րոպեից էլ քիչ է մնում: Չսկըսե՞նք կամաց-կամաց պատրաստվել:

ԾԱՌԱ.— Լսում եմ:

ՏՂԱՄԱՐԴ.— Ես հիմա կգամ:

Ծառան գնում է դեպի աջ: Կենտրոնական դռան ետևում լսվում են ինչ-որ մեկի ոտնաձայները: Տղամարդը կանգնած է գլխահակ: Դանդաղ ծխում է, նայում է ձախակողմյան դռանը: Մի քանի քայլ է անում նրա ուղղությամբ, կանգ է առնում: Հետո նորից է գնում, բայց ուղիղ դռան մոտ անվճռականությամբ կանգնում է: Սրտապնդվելով՝ բացում է դուռը: Նրա առջև աղջիկն է: ԱՂԶԻԿ (Ժպտում է).— Դուք զարմացա՞՞ծ եք: Ես նայում էի... ՏՂԱՄԱՐԴ (շփոթված).— Ժամը յոթն անց երեսունվեց րոպե...

(ցույց տալով առաստաղը) թռչում է երթային ինքնաթիռը:

Աղջիկն անթարթ նրան է նայում:

(Անվճռականությամբ): Իսկ երբ այն թռչում է...

Լսվում է շարժիչների ուժգնացող աղմուկ:

Թռչում է... Գիտե՞ս, թե ինչ պետք է անել:

Աղջիկը շարունակում է անթարթ նրան նայել:

Տղամարդը ցնցվում է, արագորեն ծածկում է դուռը, ոտքի տակ մարում է ծխախոտը, հատում է դահլիճը և հեռանում աջ կողմում: Լսվում է միայն շարժիչների մոտեցող աղմուկը, հետո՝ ոտնաձայներ...

2

Շարժիչների աղմուկը արագորեն մոտենում է:

Դահլիճի լույսը հանկարծակի սկսում է առկայծել և մարում է:

Խավար... Կենտրոնական դուռը բացվում է, և ներս է մտնում հայրը:

Աղմուկը հեռանում է:

ՀԱՅՐ (վրդովված).— Եկան: Ի՞նչ պատահեց լույսին: Որևէ մեկը կա՞ այստեղ: Ի՞նչ պատահեց, որևէ մեկը կա՞ այստեղ:

ԾԱՌԱՅԻ ՉԱՅՆԸ.— Հիմա, մի րոպե... Մոմերը...

ՀԱՅՐ.— Մոմերը հարկավոր է իրենց տեղը դնել:

Մտնում է ծառան՝ ոտքերի առաջ լուսավորելով գրպանի լապտերիկով: Ութ մոմ է տեղադրում սենյակում, յուրաքանչյուր մոմակալի մեջ՝ երկուական և մեկը մյուսի ետևից վառում:

Էլեկտրախցանները այրվեցին:

ԾԱՌԱ.— Ո՛չ, ամբողջ շրջանում անջատել են Էլեկտրականությունը:

ՀԱՅՐ.— Գրո՞ղը տանի: Ենթակայանի այդ տպերը փախել են:

ԾԱՌԱ.— Քաղաքի հին մասում խռովություն է, կարծես, տուժել են ուտիկանական բաժանմունքները:

ՀԱՅՐ (գրգռված).— Ինքնաթիռները հարավ թռան, չէ՞:

ԾԱՌԱ.— Միանգամայն ճիշտ է... (Նայում է վեր):

ՀԱՅՐ.— Դրանք ճապոնական ուղմական ինքնաթիռներ են:

ԾԱՌԱ (ճեղվելով, որ անորոշ պիտի պատասխանի).— Այո, հավանաբար, դուք իրավացի եք...

ՀԱՅՐ.— Ի՛նչ էս հապաղում, զանգահարի՛ր:

ԾԱՌԱ.— Հեռախոսը չի աշխատում...

ՀԱՅՐ (գրգռված).— Որտե՞ղ է Կաձուխիկոն:

ԾԱՌԱ.— Թույլ կտա՞ք կանչել:

ՀԱՅՐ.— Կանչի՛ր:

Ծառան հեռանում է աջ դռնով: Հայրը հերթով փորձում է ճամպրուկների ծանրությունը: Դրանք չափազանց ծանր են նրա համար: Հետո հանկարծ փչում է մոմերի կեսը:

Ներս է մտնում տղամարդը, նրա ետևից՝ ծառան: Տարակուսանքով նայում է հանգած մոմերին:

ՀԱՅՐ.— Պետք չէ իզուր անպետքություններ փոխադրել: Դեռ հայտնի չէ, թե ինչ է սպասում նրանց, ովքեր մնում են: (Տղամարդուն): Դե՛, ի՛նչ, Կաձուխիկո՛, դու արդեն որոշե՛լ էս:

ՏՂԱՄԱՐԴ.— Որոշել եմ, թե՛ ոչ, նշանակություն չունի: Դու իրոք համոզվա՛ծ ես, որ մեր ետևից կգան:

ՀԱՅՐ.— Անշուշտ: Օդանավակազմը դեռ ճապոնական բանակի ձեռքին է:

ՏՂԱՄԱՐԴ.— Բայց ասում են, որ վաղը սովետական տանկերն այստեղ կլինեն: Հզոր, հիսուն տոննալանոց տանկերը: Մի քանիսը՝ տան մեծությամբ:

ՀԱՅՐ — Ես ասում եմ, որ մենք դեռ ժամանակ ունենք: Համե՛նայն դեպս, ինչ էլ որ լինի, դու պետք է որոշես:

ՏՂԱՄԱՐԴ.— Հա՛յր, ինչո՞ւ չես ուզում մեկակ գնալ:

ՀԱՅՐ.— Ես երկու տեղ ունեմ:

ՏՂԱՄԱՐԴ.— Մեկնե՛լ բախտի քմահաճույքին թողնելով քրոջս ու մորս. ես չեմ կարող ինքս ինձ համոզել, որ պետք է այդպես վարվեմ:

ՀԱՅՐ (ջղալի).— Ոչ ոք նրանց բախտի քմահաճույքին չի թողնում:

ՏՂԱՄԱՐԴ.— Թողնում եմք:

ՄԱՅՐ.— Եվ բացի այդ, ո՞վ կերաշխավորի, որ բուն Ճապոնիանում ավելի անվտանգ է, քան այստեղ: Սննդի դժվարությունները, հիմա այնտեղ նույնիսկ արմտիք են ուտում: Այնպես որ, պետք չէ մտածել, թե իբր այնտեղ մեզ միայն հրճվանքներ են սպասում:

ՏՂԱՄԱՐԴ.— Բայց փոխարենը հայրենիքում մեզ շրջապատելու են միայն բարեկամներ՝ ճապոնացիներ:

ՀԱՅՐ.— Այ թե հիմարն ես դու: Այդ բարեկամ-ճապոնացիները բոլորովին անտանելի են... Նրանք հեղափոխություն են նախապատրաստում...

ՏՂԱՄԱՐԴ.— Հեղափոխությունն այստեղ կկատարվի: Դու կասկածո՞ւմ ես: Չէ՞ որ սովետական զորքերը հենց այստեղ կլինեն:

ՀԱՅՐ.— Պատերազմն ավարտված է: Իսկ երբ ավարտվում է պատերազմը, ուժի մեջ են մտնում ժնկյան կոնվենցիաները²:

ՏՂԱՄԱՐԴ.— Ի՞նչ կփոխվի դրանից:

ՀԱՅՐ.— Միջազգային իրավունքի համաձայն քաղաքացիական բնակչությունը ուղարկվում է հայրենիք, ի դեպ, նրա համար երաշխավորվում է լիակատար անձեռնմխելիություն:

ՏՂԱՄԱՐԴ.— Բայց մայրիկը հիվանդ է:

ՀԱՅՐ.— Նշանակում է, նրան բժիշկ կուղեկցի: **(Ծառային)**: Ամեն ինչ պատրաստ է:

ՏՂԱՄԱՐԴ.— Այդ դեպքում իմ փոխարեն քոջս վերցրու:

ՀԱՅՐ.— Ինչ անհասկացողն ես: Ինչի՞ս է պետք այդ թույլ աղջնակը:

ՏՂԱՄԱՐԴ **(չարահեզնորեն)**.— Իսկ ես, ուրեմն, պե՞տք եմ... Հանգիստ խղճով ընտանիքին լքող մարդն ինքն է հույս դնում ուրիշի օգնությանը: Լավ է, չէ՞:

ՀԱՅՐ.— Քեզ ո՞վ ասաց, թե քո օգնությունը պետք է:

ՏՂԱՄԱՐԴ.— Իսկ մի՞թե պետք չէ:

ՀԱՅՐ.— Քո ուժը պետք է ոչ թե ինձ, այլ այս ճամպրուկներին: Նրանցում անշարժ գույքին տիրելու իրավունքի փաստաթղթեր են, Կանադավայի³ մետալուրգիական գործարանների գործունեությանը վերաբերող փաստաթղթեր...

ՏՂԱՄԱՐԴ.— Եվ բացի այդ, քառասուններկու կիլոգրամ ոսկի ձուլակտորներով, տասնչորս կիլոգրամ պլատին... Մենք տանուլ ենք տվել պատերազմը: Կառավարություն չկա: Ո՞վ է

Ռիմա երաշխավորելու այն իրավունքները, որոնց մասին դու խոսում ես: Կո՛ւյր մարդ... Դու մինչև վերջին շունչդ այդպես էլ չես հավատա, որ պարտվել ես:

ՀԱՅՐ.— Բնական է: Քանի դեռ մարդը չի մեռել, կենդանի է:

ՏՂԱՄԱՐԴ.— Իսկ ես ասում եմ, որ մենք արդեն կենդանի չենք:

Մենք վաղուց մեռել ենք:

ՀԱՅՐ.— Տիմա՛ր: Երևում է, դու շատ ես ուզում մեռնել...

ՏՂԱՄԱՐԴ.— Բանն այդ չէ. ուզում ես, թե՛ ոչ, դա փաստ է:

ՀԱՅՐ.— Վե՛րջ տուր... Թող որ մենք տանուլ ենք տվել պատերազմը. պետությունը չի մեռել. միայն հեղափոխությունն է ընդունակ սպանելու պետությունը:

ՏՂԱՄԱՐԴ.— Չե՛մ հավատում: Վերցրու թեկուզև իմ աշակերտակիցներին. միայն նրանցից, որոնց մասին ես գիտեմ, ըստ պանված է ութ մարդ: Եթե պատերազմն այդքան դատարկ բան էր, ինչի՞ համար էր այդքան արյունը: Քո կարծիքով միայն մարդկանց արյունն է թափվել, իսկ պետության արյունը, ինչպես կար, այնպես էլ մնացել է: Մի՞թե դա հնարավոր է:

ՀԱՅՐ.— Եվ այնուամենայնիվ, շնորհիվ այն բանի, որ պատերազմում մեր հակառակորդը Ամերիկան էր, դա այդպես է:

ՏՂԱՄԱՐԴ (չարահեզոտեմ).— Ամերիկացիներն այդքան բարի են, հա՛:

ՀԱՅՐ.— Համենայն դեպս, մեր սիրտը նրանց հետ ընդհանուր է:

ՏՂԱՄԱՐԴ.— Առաջին անգամ եմ այդ լսում...

ՀԱՅՐ.— Նրանք հարգանքով են վերաբերում սոցիալական կարգու կանոնին: Երբ սիրտը կանգ առնի, հեղափոխություն կբռնակվի: Եվ այնժամ ամեն ինչ կորած է:

ՏՂԱՄԱՐԴ.— Իսկ ես, միևնույն է, կապրեմ:

ՀԱՅՐ.— Ի՞նչ:

ՏՂԱՄԱՐԴ.— Այստեղ ո՛չ միապետ կա, ո՛չ ոստիկանություն, ո՛չ բանակ... Եվ այնուամենայնիվ, ես ապրում եմ: Միևնույն է, թե ինչ կպատահի պետությանը: Օդ լինի և ուտելիք:

ՀԱՅՐ (ենեզոտեմ).— Առայժմ, որդի՛, ամեն ինչ կարելի է ասել:

ՏՂԱՄԱՐԴ.— Եվ կասեմ, եթե ուզում ես: Ես հրաժարվում եմ:

ՀԱՅՐ.— Չափավորի՞ր ինքնավստահությունդ: Մի օր կսովածանաս... Եվ այն ժամանակ արդեն, ուզում ես ոռնա, չափազանց ուշ կլինի: Ապա մտածիր, թե ինչ գանձ է այդ երկու տեղը,

որ ինձ հաջողվեց ձեռք գցել: Հյուսաստոսին և քաղաքագրի-
սին տեղ չհասավ: Կարողացան ստանալ միայն Ռեմորան՝
Արևելյան Ասիայի Քիմիայից և Տասիրոն՝ Մանջուրիայի Ծա-
նր արդյունաբերությունից: Գիտե՛ս ինչու: Մեռնող սրտի
վերջին հույսը: Առանց մեզ Ճապոնիան, իսկապես, կմեռնի:
Ինչ էլ որ ասելու լինես, այդպիսին է մեր պարտքը: Մենք
չենք կարող ընդհատել կյանքը: Ռեմորան և Տասիրոն ար-
դեն մեկնել են: Դու պարտավոր ես վերջապես թողնել քո
զառանգանքները:

**Աջ կողմից կամացուկ երգ է լսվում. բառերը չեն հասկաց-
վում:**

ՏՂԱՄԱՐԴ.— Օ՛, մայրիկի օրորոցայինը:

ՀԱՅՐ (դժգոհ).— Առանց քեզ գիտեմ, կարող էիր և չասել:

ՏՂԱՄԱՐԴ.— Պատերազմում զոհված եղբայրս մայրիկի համար
դարձել է փոքրիկ երեխա, ճի՛շտ է:

ՀԱՅՐ.— Դե ինչ, գալի՛ս ես, թե՛ ոչ:

ՏՂԱՄԱՐԴ.— Ինձ հարցնելու փոխարեն ավելի լավ չէ՛ր լինի
հարցնել Տոսիկոյին:

ՀԱՅՐ.— Դրա կարիքը չկա:

ՏՂԱՄԱՐԴ.— Ո՛չ, կա:

ՀԱՅՐ.— Ամեն ինչ հանձնարարում եմ Յագիին:

ՏՂԱՄԱՐԴ.— Նույն բառը, նույն թե ով է այն արտասանում,
կարող է բացարձակապես տարբեր նշանակություններ ունե-
նալ...

ՀԱՅՐ.— Ես ավելի ռեալիստորեն եմ մտածում: Եթե Յագին հա-
մաձայնի մնալ, նա այստեղ տասնապատիկ ավելի օգուտ
կբերի, քան մենք: Ծի՛շտ է, Յագի՛: Մենք կարո՞ղ ենք քեզ
ապավիհել:

ԾԱՌԱ (ինքնավստահ).— Անպայման: Լուրեր են պտտվում, թե
պլանավորվում է ճապոնացիների Միության անհապաղ ըս-
տեղծում՝ առևտրաարդյունաբերական խորհրդի ներկայացու-
ցիչ Ֆուձիմորիի գլխավորությամբ: Ենթադրում եմ, որ որպես
ձեր ներկայացուցիչ, ես, բնականաբար, նրանում համապա-
տասխան տեղ կգրավեմ: Համոզված եմ, որ այդ Միության
օգնությամբ ինձ կհաջողվի ստեղծել անհրաժեշտ բոլոր պայ-
մանները ձեր կնոջ և դստեր համար:

ՏՂԱՄԱՐԴ.— Ի՞նչ պայմանների մասին ես խոսում: Չէ որ սո-

վետական գորքերը այստեղ կգան: Իսկ երբ նրանք գան, անշուշտ, անմիջապես կհայտնվի նաև չինական ութերորդ բանակը, որն այժմ ինչ-որ տեղ թաքնվում է: Հյուսիսում կարծես թե արդեն սկսվել է խռովությունը: «Պայմաններ»... Ի՞նչ էս հիմարություններ դուրս տալիս:

ԾԱՌԱ.— Ես կյանքս կտամ նրանց պաշտպանելու համար:

ՏՂԱՄԱՐԴ.— Մի՞թե դու ինքդ չես հասկանում, թե որքան դատարկ է այդ արտահայտությունը..

ԾԱՌԱ.— Բայց էս...

ՏՂԱՄԱՐԴ.— Որքան մարդիկ էլ, թեկուզ միլիոնավոր, իրենց կյանքը տան, միևնույնն է՝ անգոր են որևէ բան փոխել: Ավելի համեստ եղիր հնարավորությունների գնահատելիս, չէ որ դու ավազահատիկ էս:

ԾԱՌԱ (ինքնավստահ).— Ես խոստանում եմ... Եթե պահանջվի իմ կյանքը...

ՏՂԱՄԱՐԴ (ջղային).— Դու ինչ է, չե՞ս լսում, թե ինչ եմ ասում: Ո՞ւմ է պետք քո խոստումը:

ԾԱՌԱ (մեքենաբար).— Պե՛տք է... Անպայման պե տք է...

ՏՂԱՄԱՐԴ.— Ա՛յ քեզ հիմար: Կյանքը տալը նրա համար միակ միջոցն է այն օգտագործելու...

ՀԱՅՐ (ծաղրանքով).— Այդպես էլ պետք է լինի: Հենց դրա համար էլ էս նրան մարդամեջ հանեցի: Չէ որ նա առաջ հասարակ ուտիկան էր:

ՏՂԱՄԱՐԴ.— Մի՛ խուսանավիր: Որքան էլ վճռական լինի Յագիի անձնագրիության որոշումը, մայրիկի և Տոսիկոյի անվրտանգությունը երաշխավորել նա անգոր է:

ՀԱՅՐ.— Ծայրահեղ դեպքում նրանք դեղ ունեն:

ՏՂԱՄԱՐԴ (կնճռոտվելով).— Դե՞ղ:

ՀԱՅՐ.— Իրենք ուզեցին:

ՏՂԱՄԱՐԴ.— Իսկ ի՞նչ կլինի, եթե մեր ետևից չգան, հա՛յր, և մենք, ինչպես հիմա, ապրենք բոլորս միասին: Քեզ համար, հավանաբար, տհաճ կլինեք, ճի՞շտ է:

ՀԱՅՐ.— Անհեթեթություն: Մեր ետևից կգան:

ՏՂԱՄԱՐԴ.— Բայց նույն հաջողությամբ կարող են և չգա՞լ: Քանի դեռ լույս է, ճապոնական զինվորները հսկում են փողոցները... Բայց մութն ընկնելուն պես սկսվում է իսկական դրժոխքը... Ընդամենը մի քանի օր առաջ փողոցով, ուր տրամ-

վայտերն են գնում, դրոշներով ու երգերով քսան զինված կո-
րևացիներ անցան:

ՀԱՅՐ.— Կգան: Անպայման կգան: Չգան՝ հենց իրենք էլ կհատու-
ցեն:

ՏՂԱՄԱՐԴ (հուսահատված).— Լավ, վերջացնենք: Դու իմ հայրն
ես, և ինձ համար հաճելի չի լինի, եթե քեզ ավելի շատ ա-
տեմ: Բացի այդ...

ՀԱՅՐ.— Ատե՛ս: Դա ինձ բնավ չի հետաքրքրում: Ես արդեն
վարժվել եմ:

ՏՂԱՄԱՐԴ.— Դե՛, ի՛նչ արած, կատեմ: Կատեմ՝ ինչպես միայն
կարող եմ... Հիմա ե՛ս էլ դեղ կստանամ...

ՀԱՅՐ (անպասելիորեն).— Յագի՛, կանչի՛ր Տոսիկոյին:

ՏՂԱՄԱՐԴ.— Ի՛նչ ես պատրաստվում անել:

ՀԱՅՐ.— Դու բավարարված կլինեի՛ր, եթե Տոսիկոն ինքը հաս-
տատեր, որ քո բոլոր ապրումներն անտեղի են: Շուտ կան-
չի՛ր նրան, Յագի՛:

ԾԱՌԱ.— Լսում եմ... (Շտապ-շտապ հեռանում է ձախ կողմում):

ՀԱՅՐ (ջղայնորեն սկսում է քայլել անկյունից-անկյուն).— Մուտ
է... Չափազանց մուտ է... (Վառում է մոմերը, որ մինչ այդ
հանգցրել էր):

ՏՂԱՄԱՐԴ — Հա՛յր, ինչո՞ւ ես ուզում այդքան մեծակ լինել:

ՀԱՅՐ.— Մե՛նա կ'.. Հր՛մ... նույնիսկ չեմ էլ մտածել:

Ձախ կողմից աղջկա հետ միասին վերադառնում է ծառան:

Տղամարդը լարված նայում է մերթ հորը, մերթ աղջկան: Հայ-
րը որոշ ժամանակ տազնապած է, բայց անմիջապես խաղաղ-
վում է:

ԾԱՌԱ.— Բերեցի:

ՀԱՅՐ.— Տոսիկո՛, ես ուզում եմ իմանալ քո կարծիքը, անկեղծո-
րեն պատասխանիր: Կարծեմ, անհրաժեշտություն չկա քեզ
նորից բացատրելու, թե ինչի մասին է խոսքը...

ԱՂԶԻԿ.— Մի՛թե իմ կարծիքը որևէ բան նշանակում է...

ԾԱՌԱ (արագորեն ընդհատում է նրան).— Սը՛ս:

ՀԱՅՐ.— Յուրաքանչյուրը պետք է իր կարծիքն ունենա... Ոչինչ,
խոսիր, մի՛ վախեցիր:

Աղջիկը լռում է:

ՀԱՅՐ.— Ինչո՞ւ ես լռում: Ինչ էլ որ ասելու լինես, ես քեզ չեմ
նախատի: Հայրիկի հետ ո՛վ մեկնի, որպեսզի բոլորի համար

Տղամարդը և ծառան, աղջկա ուսերից և ոտքերից բռնած, տանում են դեպի բազմոցը:

ՀԱՅՐ.— Միգուցե բժիշկ կանչենք:

ՏՂԱՄԱՐԴ.— Ուշ է:

ՀԱՅՐ.— Հը՛մ... Հիմա գղջո՛ւմ ես:

ՏՂԱՄԱՐԴ.— Ձղջո՛ւմ եմ:

ՀԱՅՐ.— Դե՛ այո... Ահա քո քմահաճության հատուցումը:

ՏՂԱՄԱՐԴ (գրեթե գոռում է).— Ուրեմն իմ պատճառո՛վ եղավ:

ՀԱՅՐ.— Թերևս: Չէ որ դու միշտ անվճռական ես...

ՏՂԱՄԱՐԴ.— Հա՛յր, դու լո՛ւրջ ես ասում: Դու պատրաստ ես ինձ ստիպել նույնիսկ Տոսիկոյի կյանքի գնո՛վ...

ՀԱՅՐ (գոռում է).— Կշտացել եմ քո դատողություններից: Տոսիկոն մեռավ, որպեսզի արձակի քո ձեռքերը: Գնա պատրաստվիր: Բավական է հիմարացնես բոլորին:

ՏՂԱՄԱՐԴ.— Տոսիկոն հուսահատությունից մեռավ:

ՀԱՅՐ.— Այդ ես էի հուսահատվում: Յագի՛ (ցույց տալով աղջրկան), արա ինչ որ պետք է:

Հեռվում լսվում են թմբուկի ռիթմիկ հարվածներ: Ամբոխի ճիչեր՝ խառնված կրակոցներից ու պայթյուններից:

(Ջարմացած): Ի՞նչ է պատահել:

ՏՂԱՄԱՐԴ.— Խոռվարարները մոտենում են:

ԾԱՌԱ (վարագույրը ետ տանելով՝ նայում է պատուհանից).— Կրակ եմ տեսնում... Հրդեհ է...

ՀԱՅՐ (ընկճված).— Ինչո՞ւ մեր ետևից չեն գալիս: Յագի՛, նորից փորձիր զանգահարել շտաբ:

Ծառան գնում է:

ՏՂԱՄԱՐԴ (պատուհանից նայում է).— Նրանք արդեն այստեղ են, զբոսայգու մոտ: Իսկական մրջյունների պարս... Ծարժվում են, հրթիռներ բաց թողնում... Իսկ այն տանիքին կանգնած երիտասարդը թափահարում է ձեռքերը. հավանաբար, նրանց պարագլուխն է: (Շրջվում է): Հա՛յր, նայիր՝ դժոխքի պատկերն է:

Հայրը նույնիսկ չի շարժվում:

Այստեղից, ինչպես պարտերից, դու կարող ես տեսնել, թե ինչպես է կործանվում քո սիրած կարգ ու կանոնը: Ահա պայթեց ճայթոուկը... Լսո՛ւմ ես: Բոլորը դես ու դեն են գետվում շմուլագարվածի պես: Իրենց ծնոտներով՝ կողոպուտով ու բռն-

նություններով, նրանք կրծեցին կարգ ու կանոնի ողնաշարը: Նրանք անընդհատ մտտեցում են...

ԾԱՌԱ (վերադառնալով).— Հեռախոսն էլի չի աշխատում:

ՏՂԱՄԱՐԴ.— Ի՞նչ անենք, հա՛յր: Ծառաներին հրամայենք ներքևում պաշտպանություն՝ կազմակերպել, թե՞ պետք է պատրաստվենք փախչել: Մեր տունն աչքի ընկնող է: Ի՞նչ անենք: Հրամայի՛ր անհապաղ: Մի մարդու համար, որին բոլորովին չհուզեց դստեր ինքնասպանությունը, դա միանգամայն դատարկ բան է: Գոտեպնդվիր, հա՛յր: **(Բռնում է հոր ձեռքերից և ուժեղ ցնցում):**

ՀԱՅՐ (անսպասելիորեն).— Կանչեք Տոսիկոյին:

ՏՂԱՄԱՐԴ.— Տոսիկոյի՞ն... Ահա Տոսիկոն: Պատկած է մեռած...

ՀԱՅՐ (գլուխը ետ թեքելով, տնքում է).— Ես Տոսիկոյին եմ կանչում: Ես ուզում եմ, որ Տոսիկոն ինքը հաստատի, որ քո ապրումներն անտեղի են:

ՏՂԱՄԱՐԴ.— Վերջ տուր, հա՛յր: Ժամանակը կանգնեցնել սեփական ցանկությանմբ...

ՀԱՅՐ (զգացվում է, որ ուժերը աստիճանաբար լքում են նրան).—

Կանչեք Տոսիկոյին, արագ... Ոչ մի բույե կորցնել չի կարելի... Ծուտ կանչեք... **(Օրորվում է և սկսում ընկնել):**

Տղամարդը նշան է անում ծառային: Վերջինս գլխով է անում և մտտեցում է, որպեսզի հայրը հեռվի:

ԾԱՌԱ.— Ա՛յ այդպես, գնանք:

ՀԱՅՐ.— Կանչիր Տոսիկոյին... Ծուտ կանչեք Տոսիկոյին...

Իրենց ներկայությամբ ծերացած, ուժասպառված հայրը, ինչոր բան փնթիվնթալով, ծառայի ուսին հեռված հեռանում է կենտրոնական դռնով: Բազմոցին պառկած աղջիկը ոտքի է կանգնում:

ԱՂՋԻԿ.— Դե ի՞նչ, վե՛րջ:

ՏՂԱՄԱՐԴ (ցնցվելով).— Այո, շատ շնորհակալ եմ... **(Հիշելով՝ գոռում է ձախ դռնից):** Լույսը վառե՛ք... **(Բարձրացնում է ձեռքի լապտերիկը, որ ծառան է թողել, և հատելով սենյակը, գնում է դեպի աջակողմյան դուռը. կիսաշշուկով):** Գնամ անցատեմ մագնիտոֆոնը... Դու այստեղ այլևս անելիք չունես... **(Արագորեն հեռանում է աջ կողմում):**

Աղջիկը նայում է նրա ետևից և զարմացած տարուրեքում է գլուխը: Փողոցային աղմուկը լռում է: Լույսը վառվում է: Աղջիկը մեկառմեկ փչում է մոմերը:

Կենսորոնական դռնից, կրունկների վրա ետ-ետ գնալով, ներս է մտնում ծառան: Առանց շրջվելու, կամաց ծածկում է դուռը և փակում:

ԾԱՌԱ.— Ամեն ինչ կարգին է, քնեց: (Շրջվում է և տեսնում, որ տղամարդը չկա): Օ՛, ո՞ր գնաց նա:

ԱՂՋԻԿ.— Գնաց մազնիտոֆոնն անջատելու...

ԾԱՌԱ (գլխով անելով).— Ինչ տոթ է... Նախքան օդորակավորիչը միացնելը, անհրաժեշտ է օդափոխել սենյակը... (Ետ է տանում վարագույրները, բացում է նրբաթաղիքով պատված փեղկերը):

Հեռվից լսվում է ժամանակակից քաղաքի աղմուկ: Երևում է վիթխարի շենքի մի մասը, նեոնային ռեկլամը:

ԱՂՋԻԿ (մոտենալով).— Ինչ հաճելի քամի է:

ԾԱՌԱ.— Եվ ծովն է երևում, ճի՞շտ է:

ԱՂՋԻԿ.— Ինչ լավ է: Հետաքրքիր է, մե՞ծ է այս տեղամասը:

Ծառան հանում է կեղծամը, այն սրբում ներսից, ուղղում նրա մազերը, շրջում և դնում գրպանը: Անմեղ տեսքով գրկում է աղջկան: Վերջինս ճչում է:

ԾԱՌԱ (կատակի տալով).— Իսկ երբ քամին փչում է այն կողմից, որ գործարաններն են, այստեղ այնպիսի հոտ է, որ շունչդ կտրվում է:

ԱՂՋԻԿ.— Ես պետք է ինձ կարգի բերեմ:

ԾԱՌԱ (շրջվելով դեպի պատուհանը և խոր հառաչելով).— Ըհը... Կեցցես, ամեն ինչ արեցիր, ինչպես հարկն էր: (Փակում է պատուհանը):

ԱՂՋԻԿ (հանում է կեղծամը: Կարճ կտրած, շիկակարմիր մազեր ունի: Առանց քաշվելու նստում է բազմոցին, ծոցից հանում է քսուքը և քսում դեմքին).— Ապշեցուցիչ է... Ապշեցուցիչ է... Օ՛խ, ինչ ապշեցուցիչ է...

ԾԱՌԱ (շրջվելով).— Է՛՛, Է՛՛, այդտեղ ոչինչ չկա... Մի քիչ ներքև քսիր, այ այստեղ...

ԱՂՋԻԿ.— Զգվելի է... Այնպիսի աչքերով են քեզ նայում: (Վեր է կենում, ձախակողմյան դռան հետևից վերցնում է պայուսակը և վերադառնում իր նախկին տեղը):

ԾԱՌԱ.— Ո՞վ:

ԱՂՋԻԿ.— Աղախինը և տանտիրուհին: (Սրբում է քուրքը: Ուն-
քերը կհտում է, բերանի ձևը բոլորովին փոխվում է):

ԾԱՌԱ.— Ոչինչ, ուշադրություն մի՛ դարձրու: Ծուտով կվարժվես:
(Ծամարուկներն աջ դռնով տանում է և վերադառնում):

ԱՂՋԻԿ.— Իսկ ես չեմ էլ պատրաստվում վարժվել: Ես միայն
իմ արվեստը վաճառելու համար եմ այստեղ: Իհարկե, այն-
քան էլ մեծ արվեստ չէ: (Պայուսակից հանում է հայելին և
և սկսում զբաղվել կոսմետիկայով):

ԾԱՌԱ (կանգնում է աղջկա թիկունքում և նայում նրա դեմքին).—
Հասկանում ես, այս սեկյակը նախատեսված է հատուկ... ծե-
սի կամ նման ինչ-որ բանի համար: Եվ աղախինն այնպես են
դաստիարակել, որ նա նույնիսկ մաքրելու համար չի համար-
ձակվում այստեղ մտնել:

ԱՂՋԻԿ (ծիծաղելով).— Ջուր եք անհանգստանում: Չէ որ ես չեմ
պատրաստվում ընդմիշտ մնալ այստեղ:

ԾԱՌԱ.— Կարճ ասած, արդեն տաս տարուց ավելի այս սեկյակն
անհաղորդ է արտաքին աշխարհին... Դե լավ, բայց եթե
մենք այստեղից չվերացնենք այս հոտը...

ԱՂՋԻԿ (ուշադրություն չդարձնելով).— Հետաքրքիր է, ծերուկն,
իրոք, աննորմա՞լ է:

ԾԱՌԱ:— Ի՞նչ:

ԱՂՋԻԿ.— Սկզբում նա ինձ չարացած էր նայում, ճի՞շտ է: Ես
նույնիսկ վախեցա: Մինչդեռ կարծես նորմալ մարդու պես է
խոսում՝ ամեն ինչ տեղը-տեղին:

ԾԱՌԱ (անորոշ).— Հասկանում ես, նրա մոտ սովորական խան-
գարում կա, որի հետ հաճախ ենք բախվում... Ծեր պարոնի
հիվանդությունը կրթման անվանում են ժխտման հիվանդու-
թյուն:

ԱՂՋԻԿ (կոսմետիկայով տարված, ցրված).— Ժխտման հիվան-
դություն՞ն:

ԾԱՌԱ.— Այդպես գտան համալսարանի կլինիկայում... Ժամա-
նակը նրա համար կանգ է առել, նա վճռականորեն չի ընդու-
նում ժամանակի ընթացքը:

ԱՂՋԻԿ.— Հը՞մ... Էլ ինչի՞ համար էր այս ամբողջ ներկայացու-
մը:

ԾԱՌԱ (վճռականությամբ).— Հերիք է հարցեր տաս: Չէ որ մենք
պայմանավորվել ենք:

ԱՂՋԻԿ (հայելու մեջ մանրակրկիտ զննում է դեմքը, ոտքի կանգնում).— Ներեցեք, մի բուպեով չէի՞ք շրջվի:

Ծառան հիասթափված է: Նախքան նա կշրջվի, աղջիկը պայուսակից հանում է հագուստը: Ակտում է արձակել մինչև գոտկատեղը հասնող կոճակները: Ծառան արագորեն շրջվում է:

Այնուամենայնիվ, հետաքրքիր է, ինքնաթիռը եկա՞վ նրա ետևից, թե՞ ոչ:

ԾԱՌԱ (անբավարար).— Ամեն դեպքում դա քեզ չի վերաբերում:

ԱՂՋԻԿ.— Ես այսպես եմ գտնում, դերը ճիշտ խաղալու համար անհրաժեշտ է իմանալ բոլոր մանրամասները, այլ կերպ...

ԾԱՌԱ (աչքի տակով ուշադիր հետևելով նրան).— Քեզանից մի բան է պահանջվում՝ ճշմարտանման խաղալ հանգուցյալ դրուտեր դերը:

ԱՂՋԻԿ.— Դուք ամեն ինչ չափից ավելի հեշտ եք համարում...

(Հանում է կարճ վերնագգեստը և սկսում է հագնել սպորտաչիկ տարատը):

ԾԱՌԱ.— Ծիշտ չէ: Քո մահր ամենուլավ տեսարանն էր:

Հանկարծ աջ դուռը բացվում է, և սրբնթաց ներս է մտնում տղամարդը. այժմ պիջակ է հագել: Նկատելով աղջկան՝ անշարժանում է: Աղջիկը անհապաղ կրծքին է սեղմում հագուստը՝ ոչ այնքան շփոթվելով, որքան բավականություն զգալով ստեղծված իրադրությունից:

ՏՂԱՄԱՐԴ (գարնացած).— Ի՞նչ է կատարվում այստեղ:

ԱՂՋԻԿ.— Օ՛, դուք ինձ չճանաչեցիք:

Տղամարդն ընկրկում է: Աղջիկը պչրանքով, աշխուժորեն նայում է տղամարդուն: Ապա, սթափվելով, շրջվում է և արագ հագնվում: Տղամարդն անհանգստացած նայում է ծառային: Ծառան շփոթված է:

ՏՂԱՄԱՐԴ.— Կարծեմ, հանդերձարան կա:

ԱՂՋԻԿ.— Ներքևում բոլորը մի տեսակ չարացած են...

ԾԱՌԱ (արդարանալով).— Ես նրան ամեն ինչ պարզորոշ բացատրեցի... Ինչ սենյակ է սա, ինչի համար...

ԱՂՋԻԿ (ոչ մեկին չդիմելով).— Ներեցեք: Ձեզանից որևէ մեկը կկոճկի՞ մեջքիս կոճակները:

Տղամարդն ու ծառան միմյանց են նայում: Տհաճ դադար: Տղամարդը մոտենում է և կոճկելով կոճակները, շտապ ետ քաշվում:

ԾԱՌԱ (ասես դուրս ուղեկցելով աղջկան).— Դե՛, հիմա վերջացրի՞ր: Արդեն հագնվեցիր...

ԱՂՋԻԿ (անմեղ տեսքով).— Բայց ես դեռ չեմ ստացել այն, ինչ ինձ հասնում է... Իհարկե, կարելի է և հետո...

ՏՂԱՄԱՐԴ (ծառային).— Դրամապանակը բեր:

ԾԱՌԱ.— Հետո ես ինքս...

ՏՂԱՄԱՐԴ.— Ձե՛ որ ես ասացի:

ԾԱՌԱ.— Լսում եմ: (**Անբավարար հեռանում է աջ դռնից**):

ԱՂՋԻԿ.— Դուք ինձ ներեք... Բայց ես բոլորովին փող չունեմ... Իսկ ճանապարհին պետք է որոշ բաներ գնեմ:

ՏՂԱՄԱՐԴ (անկիրթ).— Ի՞նչ ես գնելու:

ԱՂՋԻԿ (ժպտալով).— Տարբեր ծամկալներ, վիտամիններ, եղունգների լվացքալուծույթ, փոխնորդ սպիտակեղեն, տակ⁴, դեմքի համար լոսիոն, սպեղանի... (**Աշխույժ**): Կպչուն սպեղանի: Գիտե՞ք ինչպես եմ այն օգտագործում:

ՏՂԱՄԱՐԴ.— Ո... ոչ...

ԱՂՋԻԿ.— Գուլպաների կապերի փոխարեն: Բավական է, որ ուտինե կապերի հետքերը երևան, այլևս ոչ մի կերպ չեն անցնում:

ՏՂԱՄԱՐԴ.— Ահա թե ինչ... Բայց չէ որ դա շատ տհաճ է:

ԱՂՋԻԿ.— Ինչ արած: Հարկավոր է միայն չընկճվել: Մարմինս իմ ապրանքն է:

ՏՂԱՄԱՐԴ (անվճռական).— Դու հանդես ես գալիս որևէ թատրոնում:

ԱՂՋԻԿ.— Օ՛, մի՞թե դուք չգիտեք:

ՏՂԱՄԱՐԴ.— Ես ամեն ինչ հանձնարարել եմ Ցագիին...

ԱՂՋԻԿ.— Ես պարունի եմ: Ստրիպտիզի պարունի...

ՏՂԱՄԱՐԴ (շփոթված).— Ա՛խ այդպե՛ս...

ԱՂՋԻԿ (շշուկով, ասես աղոթում է).— Անբարոյական, խարդախ, հեշտասեր, շրջագգեստի տակ բոլորովին մերկ կին: Առավոտից մինչև երեկո անկողնու մասին մտածող... կին... Կին, որը ցրում է թախիծը, կին, որին տենչում է յուրաքանչյուրը...

ՏՂԱՄԱՐԴ.— Ո՞վ է այդ յուրաքանչյուրը:

ԱՂՋԻԿ.— Իսկապես, ո՞վ է:

ՏՂԱՄԱՐԴ (շփոթված է).— Ես լավ եմ հասկանում, թե ինչի մասին ես խոսում, բայց և այնպես...

ԱՂՋԻԿ.— «Ինչ լավիկն է»: Այդպես են մտածում այցելուները, տեսնելով թե ինչպես են պարում... Իսկ երբ սկսում են հանել շորերս, կարծես, նրանք էլ հանվում են ինձ հետ, իսկ նրանց շավարներում կարմիր լապտերիկներ են վառվում... Մի՞թե դա հաճելի չէ:

ՏՂԱՄԱՐԴ (խոսոտ).— Այդպես լինում է միշտ, երբ տղամարդն ու կինը...

ԱՂՋԻԿ.— Իհարկե... Բայց տարբերություն էլ կա... օրինակ, եթե հանդիսատեսների առաջ բոլորովին մերկ սկսի կոտրատվել մայրը, քույրը, սիրուհին կամ կինը... Չէ որ մենք միշտ անտարբեր ենք... Ինչո՞ւ: Որովհետև ոչ մեկի չենք պատկանում: Միայն այն պահին, երբ տղամարդն իրեն զուգընկեր է դարձրնում ոչ մեկին չպատկանող կնոջը, նա ևս դադարում է որևէ մեկին պատկանել... (Ավարտում է կոսմետիկան):

ՏՂԱՄԱՐԴ (շփոթված).— Այո, միգուցե և ճիշտ էս...

ԱՂՋԻԿ (անսպասելի).— Լսեք, չե՞ք համբուրի ինձ:

Տղամարդը լռում է:

(Ուրախ): Ոչինչ չի պատահի... Միայն բեմում պարելիս են լապտերիկներ վառում... Իսկ այսպես՝ ես ամուր փակվում եմ ամբողջում: Ամբողջը, ճիշտն ասած, թույլ է՝ թղթե պատերով, բայց և այնպես ամբողջ է... Այնպես որ, մի վախեցեք, իսկապես... Ա՛յ, հավկալատուսկ, ինձ իրոք պետք է...

ՏՂԱՄԱՐԴ.— Ինչ եք ասում, ես ձեր նկատմամբ ոչ մի նախատրամադրվածություն չունեմ...

ԱՂՋԻԿ.— Ուրեմն համբուրեք... Եվ հետո, մի օր համեցեք տեսնելու, թե ինչպես են պարում:

Դռան թակոց: Վախվորած ներս է մտնում ծառան:

ԾԱՌԱ.— Ներեցեք, որ ստիպեցի այդքան երկար սպասել: Արկղը փակ էր:

ՏՂԱՄԱՐԴ.— Ախ այդպես... (Բարկասցած փորփրում է գրպանները):

ԾԱՌԱ.— Ես տիրուհուց վերցրի փողը: (Ծրարը հանձնում է աղջկան): Այստեղ այնքան է, որքան ձեզ հասնում է այսօրվա համար:

ԱՂՋԻԿ (նայելով ծրարի մեջ).— Ստացականը մե՞ջն է:

ԾԱՌԱ (ասես շտապեցնելով աղջկան).— Ոչինչ, դա հետո էլ կարելի է...

ԿԻՆ.— Ի՞նչ է երկարացնում:

ԾԱՌԱ.— Այո-այո, նա հիմա...

ԿԻՆ (բազմոցի վրա կանացի իրեր է տեսնում).— Հիմա՞: Հիմա
ի՞նչ:

ԾԱՌԱ (կմկմալով).— Հիմա, հենց որ ավարտի հետագայի հա-
մար պայմանավորվել...

ԿԻՆ (խորը հառաչելով, դանդաղ).— Հենց որ ավարտի՞: Դա ի՞նչ
է նշանակում: Ձէ որ ամեն ինչ ավարտված է:

ԾԱՌԱ.— Ոչ, ես այդ չէի ուզում...

ԿԻՆ (ծիծաղելով).— Ես չգիտեմ, թե ինչ էիր ուզում ասել, բայց
ձեր բառերը մտածելու տեղիք են տալիս:

ԾԱՌԱ.— Նա միայն նրան առաջարկեց գինի խմել...

ԿԻՆ.— Օ՛, դա հետաքրքիր է:

ԾԱՌԱ.— Համենայն դեպս, երիտասարդ պարոնը զգաստ մարդ
է...

ԿԻՆ (ինքնապարտադրանքով).— Պարոնը շատերից մեկն է, Ա՛
հազիվ թե այնքան շատ տարբերվի մյուսներից:

ԾԱՌԱ.— Այո... գուցե և այդպես է... Համենայն դեպս ես համոզ-
ված եմ, որ հոգու խորքում նա նկոխում է կատարվածի հա-
մար:

ԿԻՆ, (հեղճանքով). — Ա՛խ, որքա՛ն եմ խղճում նրան:

ԾԱՌԱ.— Դա իմ բացթողույթն է... Բայց այն, որ այդ կինը այդ-
քան թեթևամիտ է, անզամ ես...

ԿԻՆ.— Ա՛յ-ա՛յ-ա՛յ, թեթևամիտ կի՞ն է:

ԾԱՌԱ.— Հավանաբար այն պատճառով, որ ստորին խավերից է:

ԿԻՆ (դանդաղ).— Այո, գեղեցիկ բացատրություն է: (Նստում է
բազմոցին): Կասկած չիկե՞լ չի կարող, որովհետև ստորին խա-
վերից է:

ԾԱՌԱ (անհանգստացած).— Դուք ի՞նչը նկատի ունեք:

ԿԻՆ.— Ինձ վկայի ցուցմունքներ են հարկավոր:

ԾԱՌԱ.— Վկայի ցուցմունքներ՞:

ԿԻՆ.— Այսօր ուշ երեկոյան պետք է գա փառասրանը: Նա փառ-
սաթուղթ է պատրաստում ամուսնուս կարողության իրավուն-
քից զրկելու վերաբերյալ: Կարծում եմ, որ նրա վարքը առ
այսօր դրա համար բավականաչափ հիմքեր տալիս է, բայց
եթե գումարվեն նաև ձեր ցուցմունքները, Յագի-սա՛ն⁵, պատ-
կերացնո՞ւմ եք, թե դա ինչ հաղթաթուղթ կլինի իմ ձեռքին:

ԾԱՌԱ (վախեցած).— Ի՞նչ ցուցմունքներ դուք նկատի ունեք:

ԿԻՆ.— Լիովին բավական է, եթե դուք պատմեք ճշմարտությունը: Անտեսելով ավելի քան կարևոր ընդունելությունը, ուր կարող է որոշվել մեր բոլոր գործերի ճակատագիրը, իր սեփականում գիներբուք է սարքում ստրիպտիզով զբաղվող մի աղջկա հետ, որին նույնիսկ դուք, Յագի-սա՛ն, թեթևամիտ եք համարում: Մի՞թե նա կարող է արդարացնել իր վարմունքը:

ԾԱՌԱ (նեղն ընկած).— Հազիվ թե ես կարողանամ այդպիսի...

ԿԻՆ (չարահեզվորեն).— Մի՛ ամաչեք: Ամուսինս ինձ շատ բան է պատմել... Երբ նրա հայրը դեռ խելքը չէր գցել, դուք, Յագի-սա՛ն, հաճախ էիք ծաղրում ամուսնու... Հետևում էիք նրան, բամբասում...

ԾԱՌԱ.— Այդպիսի բան չի եղել:

ԿԻՆ.— Իսկ երբ դա պատահեց հորը, ձեր նվիրվածությունը, Յագի-սա՛ն, կարողության հետ միասին բաժին հասավ ամուսնու... Տան կահույքի նման... Ի դեպ, ես չեմ պատրաստվում կրկին անդրադառնալ դրան:

ԾԱՌԱ.— Ես միայն...

ԿԻՆ.— Թերևս, բնույթով այդպիսին է նվիրվածությունը: Նվիրվածությունը իսկական տիրոջը հոտով գտնելու ընդունակություն է...

ԾԱՌԱ.— Ես միայն հովանավորության երախտագիտությունից...

ԿԻՆ.— Դրա համար էլ ասում եմ. առանց վախենալու ցուցմունք տվեք: Երբ այդ մարդը զրկվի կարողության իրավունքից, այստեղ՝ տանը, ես կդառնամ տերը... Եվ ամուսնուս աթոռի հետ միասին, բնականաբար, կկարողանամ ժառանգել նաև ձեր նվիրվածությունը, ճի՞շտ չէ:

ԾԱՌԱ (շփոթված).— Ես չեմ հասկանում: Ինչո՞ւ այդպիսի տարօրինակ բաներ անել...

ԿԻՆ.— Վատահամբավ ժառանգականությունը ապացուցելու համար ձեր ցուցմունքներն անփոխարինելի կլինեն:

ԾԱՌԱ.— Ծեր պարոնը տատապում է, այսպես կոչված, ժխտման հիվանդությամբ. բայց չէ՞ որ դա ուղեղի սովորական հիվանդություն է...

ԿԻՆ (կտրուկ).— Չլաված հոգեկան հիվանդություն: Ժխտման հիվանդություն... Ծիզոֆրենիայի բոլոր տեսակներից ամենատիպիկը: Եվ այդ կողմից որդին հոր արժանավորը եղավ.

երկար տարիներ կնոջը ստիպեց հանգուցյալ քրոջ դերը խաղալ, իսկ երբ կինը հրաժարվեց, տուն քարշ տվեց ինչ-որ կասկածելի պարուհու...

ԾԱՌԱ (տխուր).— Բայց չէ որ նա այդպես էր վարվում, որովհետև այդ կերպ ավելի հեշտ էր հանգստացնել ձեր պարոնի նոպաները...

Աջ կողմից հանկարծակի հնչում է Բեթհովենի կվարտետի 132-րդ հատվածը: Ժամանակ առ ժամանակ լսվում է աղջկա ծիծաղը, ասես նրան խուտուտ են տալիս: Երաժշտությունն ընդհատվում է:

ԿԻՆ.— Դրա համար հոգեբուժական հիվանդանոցներ կան: Ի դեպ, ես ժամանակ չունեմ խոսելու: Կանչեք նրան, խնդրեմ, միայն թե շո՛ւտ:

ԾԱՌԱ.— Ո՞ւմ կանչեմ, աղջկա՞ն:

ԿԻՆ.— Հիմարություններ դուրս մի՛ տվեք: **(Ինքն իրեն):** Վերջին հնարավորությունը: Վերջին անգամ նրան կստիպեմ ընտրել: Ծառան հապշտապ հեռանում է աջ կողմում: Երբ նա բացում է դուռը, աղջկա ծիծաղը դադարում է:

(Ասես ինչ-որ բան որոշած, բացում է բազմոցին դրված աղջկա պայուսակը, զննում է, փնթփնթում): Կանացի պիտույքներ... Խղճուկ անպետքություններ...

5

Կինը արագորեն փակում է պայուսակը: Աջից մտնում է տղամարդը, նրա ետևից՝ ծառան:

ԿԻՆ (չարահեզոտորեն).— Խնդրում եմ ներեք, որ խանգարեցի հաճելի ժամանցը...

ՏՂԱՄԱՐԴ (սառնությամբ).— Չէ որ ինքդ ասացիր, որ ինձ կըսպասես միայն մինչև ութն անց կես:

ԿԻՆ.— Դու հարբա՞ծ ես:

ՏՂԱՄԱՐԴ.— Եթե քեզ այդպես է թվում, ուրեմն՝ այո:

ԿԻՆ.— Չի թվում:

ՏՂԱՄԱՐԴ.— Ուրեմն հարբած չեմ:

ԿԻՆ.— Այնուամենայնիվ, գուցե կշտապե՞ս: Մեքենան սպասում է:

ՏՂԱՄԱՐԴ.— Տրամադրված չեմ:

ԿԻՆ.— Մի՞թե քեզ հայտնի չէ, թե ով է լինելու այսօրվա ընդունելությանը:

ՏՂԱՄԱՐԴ.— Ցավոք, հայտնի է:

ԿԻՆ.— Հետաքրքիր է, գինի՞ն է այդպես ազդել քեզ վրա, թե՞ աղջիկը:

ՏՂԱՄԱՐԴ.— Անհետթեթ քաներ ես ասում:

ԿԻՆ.— Իսկապես, ինչո՞ւ ես այդքան վախեցնում:

ՏՂԱՄԱՐԴ.— Վախեցնո՞ւմ եմ:

ԿԻՆ.— Ես հո գիտեմ: Թերևս, քեզ դուր չեն գալիս համաձայնության պայմանները, որ առաջարկում է պակիստանյան կողմը: Քեզ վախեցնում են պայմանները, որոնցով զե՞նք ես արտադրելու:

ՏՂԱՄԱՐԴ (սառը ժպտալով).— Դու մեզ գերազնահատում ես: Մահամերձ գործարանները, որ մեզ թողեց հայրս, կյանքի կոչվեցին միայն կորեական պատերազմի⁶ շնորհիվ: Այնպես որ պետք չէ գերազնիվ ձևակալ...

ԿԻՆ.— Դու անպայման պետք է ներկա լինես ընդունելությանը: Ես չեի ցանկանա, որ դու եղբորս մոտ էլ ինձ խայտառակեիր:

ՏՂԱՄԱՐԴ.— Մի՞թե չես հասկանում, որ կարելի է ինչքան ասես բարեկամական զգացմունքներ, տրամադրվածություն ցուցաբերել, բայց միայն դրանով պակիստանյան ընկերության հետ համաձայնության հասնել անհնարին է: Սկզբից մինչև վերջ դա կոնկրետ հաշվով գործարք է: Ով ավելի ձեռնտու պայմաններ առաջարկի, նրա հետ էլ համաձայնագիր կկնքեն: Կարելի է միասին նույնիսկ մի բաժակ ջուր էլ չխմել, բայց կնքել համաձայնագիր, որը պետք է կնքվեր, և ներկա գտնվել թեկուզ միլիոն ընդունելություններում, բայց չկնքել համաձայնագիր, որը չպետք է կնքվի:

ԿԻՆ.— Բայց մի՞թե գոյություն չունի այնպիսի հասկացություն, որպիսին փոխադարձ վստահությունն է: Առանց իմանալու այն մարդու բնավորությունը, որի հետ պատրաստվում ես գործարք կնքել, հնարավոր չէ համաձայնության գալ:

ՏՂԱՄԱՐԴ.— Միայն պատրվակ է:

ԿԻՆ.— Պատրվա՞ն:

ՏՂԱՄԱՐԴ (աստիճանաբար կորցնելով ինքնատիրապետումը).— Մարդու բնավորությունը... Եթե այն իրոք կա, շատ կուզեի, որ ինձ ցույց տային: Կա միայն հաշիվ ու գործարք: Դու կաս-

կածո՞ւմ ես: Եվ ահա այն մարդուն, որ դա հասկանում է, դու մեղադրում ես վախկոտության մեջ: Ի՞նչ երեսպաշտություն: Եթե իրոք կան մարդիկ, որոնցից պետք է վախենալ, այդ դու ես և քո եղբայրը:

ԿԻՆ.— Ինչո՞ւ ես այդպես գրգռված:

ՏՂԱՄԱՐԴ.— Գրգռվա՞ծ: **(Զսպելով իրեն)**: Պարզապես ինձ մոտ նյարդային ջղաձգություն է: Մկանների շարժումն ապահովում է ուղեղի հանգստությունը:

ԿԻՆ.— Ուզում եմ քեզ հարցնել... Եթե հայտնի է, որ պարտնյորդ աննորմալ է, հնարավո՞ր է նրա հետ գործարք կնքել:

ՏՂԱՄԱՐԴ.— Ի՞նչ իմաստով: Դու որոշակի որևէ մեկին նկատի ունե՞ս...

ԿԻՆ.— Այո... Դե՛, լավ... Մի խոսքով, եթե չփոխես դիրքորոշումդ, ես կգործեմ սեփական հայեցողությամբ:

ՏՂԱՄԱՐԴ.— Մի՞թե հենց սկզբից ես այդ չէի խնդրում:

ԿԻՆ.— Յագի-սա՛ն, մեզ մենակ թողեք, խնդրեմ:

ՏՂԱՄԱՐԴ **(նայելով ժամացույցին, կնոջը)**.— Քեզ չէր խանգարի շտապելը: Արդեն իննից քսան է պակաս:

ԿԻՆ **(չարացած)**.— Նյարդերը դավաճանում են...

ՏՂԱՄԱՐԴ.— Ո՞ւմ:

ԿԻՆ.— Մի ձևացրու, թե չես հասկանում: Ամեն անգամ տեսիլախաղից հետո դու այդպես ես:

ՏՂԱՄԱՐԴ.— Չեմ հասկանում, ոչինչ չեմ հասկանում...

ԿԻՆ **(ծառային)**.— Հեռացե՛ք այստեղից, արա՛գ:

ՏՂԱՄԱՐԴ.— Հա, աղջկան ուտելու որևէ բան տվեք գիճու հետ: Ես շուտով կգամ...

ԾԱՌԱ.— Լսում եմ... **(Անհանգիստ շուրջը նայելով, արագորեն հեռանում է աջ կողմում)**:

ԿԻՆ.— Դա շատ կարևոր է:

ՏՂԱՄԱՐԴ.— Ի՞նչը:

ԿԻՆ **(ասես դիմակը հանելով)**.— Դու անլիարժեք ես: Անհուսալիորեն անլիարժեք:

ՏՂԱՄԱՐԴ.— Ոչ մեկի մասին չի կարելի ասել, թե նա լիարժեք մարդ է:

ԿԻՆ.— Մի՛ խորամանկիր: Ամեն անգամ ես դողում եմ, երբ սկզբում է տեսիլախաղը...

ՏՂԱՄԱՐԴ.— Ներիր, խնդրում եմ: Ես չէի էլ կարծում, որ դու այդքան զգայուն ես:

ԿԻՆ.— Միայն ամուսնությունից անմիջապես հետո, և վերջ. այնուհետև դու ինձ այլևս չթողեցիր նույնիսկ քեզ մոտենալ: Կարծես ես կին չեմ... Նախքան այդ տեսիլախաղերն սկսելը, մտածում էի, թե դու պարզապես իմպոտենտ ես... Եվ իսկապես վշտացա... Անընդունակ լինելով երեխա ունենալ, մտածում էի ես, դու ինձ հետ ամուսնացար շահադիտությամբ, քեզ գրավեց եղբորս կապիտալը...

ՏՂԱՄԱՐԴ (շինծու կատակով).— Ինչ կա որ, այդ ոչ պակաս կարևոր գործոնը, թերևս, նույնպես դեր խաղաց...

ԿԻՆ.— Բայց եթե միայն դա լիներ, ես քեզ անհուսալի չէի համարի: Դու անհուսալի էիր դառնում, երբ տեսնում էիր հանգուցյալ քրոջդ լուսանկարը... Նույնիսկ ես էի սկսում կասկածել՝ արդյոք իմ նկարը չէ՞ դա, այնքան որ նման էր ինձ...

ՏՂԱՄԱՐԴ.— Իրականում քույրս ավելի շատ մորս էր նման: Իսկ տղամարդն հակված է սիրահարվել մորը հիշեցնող կնոջը:

ԿԻՆ (կտրուկ).— Վե՛րջ տուր: Հերիք է խեղկատակություն անես:

ՏՂԱՄԱՐԴ.— Խնդրում եմ քեզ, եթե հնարավոր է՝ ավելի կարճ:

ԿԻՆ (կամացուկ, բայց մարտահրավեր նետելով).— Լավ, կընդառաջեմ քո ցանկությանը... Դու ինձ հետ այնպես ես վարվել, ասես, ես պարտավոր էի փոխարիներ թրոջդ...

ՏՂԱՄԱՐԴ.— Միանգամայն ճիշտ է...

ԿԻՆ.— Սուտ է: Բոլորովին հակառակը: Քույրդ փոխարիներ ինձ:

ՏՂԱՄԱՐԴ.— Ինչպե՞ս:

ԿԻՆ.— Անկողնում քո կողքին պառկում էի ոչ թե ես, այլ քույրդ:

ՏՂԱՄԱՐԴ.— Չառանցանքն էլ սահման ունի...

ԿԻՆ.— Իսկ մի՞թե դա զառանցանք է: Դու իմպոտենտ չէիր. ավելի վատ, դու վիժվածք էիր: Առաջ ես այնպես էի երեխա ուզում... երբ երեխա չկա, ոչ մի կարողություն պետք չէ... Բայց եթե ես նույնիսկ ծնեի, դա լինելու էր քրոջդ երեխան. և հենց որ մտածում էի այդ մասին, զզվում էի... Խոնարհաբար շնորհակալություն եմ հայտնում...

ՏՂԱՄԱՐԴ.— Ինչպիսի անհեթեթություն: Դու ինձ խանդում ես քրոջս ուրվականի համա՞ր:

ԿԻՆ.— Եվ վերջապես, երբ ես արդեն սկսեցի մտածել, որ դա

ավարտված է, հայտնվում է այդ աղջիկը... (Հանկարծակի հատակին է նետում բազմոցին դրված աղջկա իրերը):

ՏՂԱՄԱՐԴ.— Դե, գիտես, ես զարմանում եմ: Ես պարզապես չէի պատկերացնում, որ քո նյարդերն այդ վիճակում են...

Միգուցե քեզ պետք է բուժվե՞լ, խորհրդակցե՞լ բժշկի հետ...

ԿԻՆ (կտրուկ).— Բժիշկ: Ինչ կա որ, դա խելքին մոտ է:

Տղամարդը լռում է:

Միայն թե նրա հետ միասին արի հրավիրենք նաև եղբորս փաստաբանին:

ՏՂԱՄԱՐԴ (զարմացած).— Փաստաբանի՞ն:

ԿԻՆ.— Վերջակետ դնելու ժամանակն է:

ՏՂԱՄԱՐԴ.— Դու ուզում ես բաժանվե՞լ:

ԿԻՆ.— Ի՞նչ ես ասում... Մի՞թե մենք իրավունք ունենք այդպիսի բան անել... Եթե մենք բաժանենք իմ և քո անուններով գր-րանցված բաժնետոմսերը, կզրկվենք վերահսկչական ծրա-րից:

ՏՂԱՄԱՐԴ.— Իսկ ի՞նչ ես պատրաստվում անել:

ԿԻՆ (անանակելով).— Ի՞նչ եմ պատրաստվում անել:

Տղամարդը լռում է:

Պատրաստվում եմ քեզ զրկել կարողության իրավունքից: Հրաշալի միտք է, չե՞:

ՏՂԱՄԱՐԴ.— Զրկել կարողության իրավունքից...

ԿԻՆ.— Եղբորս փաստաբանը արդեն քանիցս խորհուրդ է տվել, բայց ես...

ՏՂԱՄԱՐԴ.— Ինչպիսի՞ սրիկա:

ԿԻՆ.— Ինչպես տեսնում ես, ես անմիջապես չհամաձայնեցի դը-րան: Բայց այժմ վե՛րջ... Մինչ ներքևում սպասում էի քեզ, ամեն բան, ինչպես հարկն է, հեռախոսով քննարկեցինք եղ-բորս հետ: Նրա մտքով էլ չէր կարող անցնել, որ տեսիլա-խաղի համար դու այստեղ քարշ կտաս նաև կողմնակի կը-նոջ... Որպեսզի ինձ համար դու էլի ինչ-որ գարշելի բան չկազմակերպես, նա այս երեկո կպատրաստի անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը:

ՏՂԱՄԱՐԴ.— Որքան էլ ջանաք եղբորդ հետ, ոչինչ չի ստաց-վի... Միանգամայն նորմալ մարդուն վերցնել ու...

ԿԻՆ.— Դու դրանում համոզվա՞ծ ես: Պարզվում է, որ հոգեկան հիվանդին կարողության իրավունքից զրկելը միանգամայն

հասարակ բան է, նույնիսկ պետք չէ դատարանին դիմել:

ՏՂԱՄԱՐԴ.— Հոգեկան հիվանդի՞ն:

ԿԻՆ.— Ուզում ես ասել, որ խելքդ գլխի՞դ է:

Տղամարդը լռում է:

Նույնիսկ Յագին, որ շան պես նվիրված է քեզ, խոստացավ որպես վկա հանդես գալ:

ՏՂԱՄԱՐԴ.— Հիմարություններ մի՛ խոսիր:

ԿԻՆ.— Դե, ինչ, գուցե կանչե՞ս և հարցնես իրե՞ն:

ՏՂԱՄԱՐԴ.— Ավելի շուտ խելագար կարելի է անվանել հենց նրան, ով հնարել է այս ամենը: Կինն ամեն ինչին նայում է տղամարդու և կնոջ միջև եղած հարաբերությունների տեսանկյունից:

ԿԻՆ.— Կուզեի, որ ամեն ինչ բացատրեիր այլ հարաբերությունների տեսանկյունից:

ՏՂԱՄԱՐԴ.— Ողջամտությունն ասում է, որ մեր ծեսի գլխավոր գործող անձը քույրս չէ: Դու այդ լավ գիտես: Ամեն մի հնարանք պիտի սահման ունենա:

ԿԻՆ.— Ի՞նչ ես ասում...

ՏՂԱՄԱՐԴ.— Կարծում եմ, չարժեք աղմուկ բարձրացնել այն բանի համար, որ քսան րոպեով աղջիկ էի վարձել հիվանդ հորս նույան թեթևացնելու համար:

ԿԻՆ.— Եվ դու հույս ունես այդպիսի բացատրությամբ խաբե՞լ բժշկին: Համենայն դեպս, ինձ դրանով չես խաբի:

ՏՂԱՄԱՐԴ.— Չէ որ ինքդ հարցրեցիր: Ուրիշ ի՞նչ պատասխան ես ուզում ստանալ:

ԿԻՆ.— Նախ՝ քո տարօրինակ արարքների ավելի համոզիչ բացատրությունը: Եթե իհարկե, ունես:

ՏՂԱՄԱՐԴ.— Այնուամենայնիվ, ես կարող եմ վճռականորեն հայտարարել, որ եթե խոսքը աղջկա մասին է, ապա այն ամենը, ինչ դու նրա մասին ասում ես, բացարձակ հնարանք է:

ԿԻՆ.— Հետո՞:

ՏՂԱՄԱՐԴ.— Ուրիշ բացատրություններ էլ եմ պետք: Գուցե այսօրվա ընդունելության վերաբերյալ:

ԿԻՆ.— Այո, նաև դրա վերաբերյալ:

ՏՂԱՄԱՐԴ.— Եթե խոսքը գործնական բանակցությունների մասին է, ապա դիրեկտորներ կան: Մի՞թե հենց դրա համար չենք պահում այդ մարդկանց:

ԿԻՆ.— Բայց չէ որ ես քեզ ասացի, որ դրանք միայն գործնական բանակցություններ չեն:

ՏՂԱՄԱՐԴ.— Ուրեմն, խոսելու ոչինչ չկա:

ԿԻՆ.— Դա անմտություն է:

ՏՂԱՄԱՐԴ.— Ո՞րն է այստեղ անմտությունը:

ԿԻՆ.— Չե՞ս կարծում, որ բժշկին հազիվ թե բավարարի այդպիսի բացատրությունը:

ՏՂԱՄԱՐԴ.— Քո կարծիքով այդ մանրուքը հիմք է տալիս ինձ խելագա՞ր համարելու:

ԿԻՆ (գլուխն օրորելով).— Բաժանվելուց առաջ ես մի բառ: Ես հիմա քեզ ցույց կտամ, թե ինչ եմ ասելու բժշկին՝ որպես տուժած կողմ... (Ծխում է): Իմ կարծիքով ճիշտ չէր լինի պնդել, թե ամեն ինչ միագծորեն զարգացավ... Նա միշտ սարսափի մեջ է... Թերևս, այն պատճառով, որ ամեն ինչ անում է հակառակ իր կամքի՞:

ՏՂԱՄԱՐԴ.— Վե՞րջ տուր դատարկարանությանը:

ԿԻՆ (անտեսանելի զրուցակցին).— Դժվարին պրորլեմներն անհասանելի են իմ հասկացողությանը: Բայց ամենաընդհանուր գծերով ինձ հաջողվեց սյարգել, թե ինչն է տարսափեցնում իմ ամուսնուն... Ինչպես ձեզ հայտնի է, մեր ընկերության արտադրանքը հիմնականում կիսաֆարրիկատներ են... Միանգամայն ճիշտ է՝ խողովակներ, գլանվածք... Միշտ է, նա այնքան էլ չի մտածում այն մասին, թե ուր է գնում մեր արտադրանքը: Բայց միայն վերջինիս բազմազան կիրառության և վաճառահանման ընդարձակ շուկայի պայմաններում կարելի է բավականաչափ սրությամբ հակազդել ընդհանուր իրավիճակին: Նրա տագնապալից վիճակը բացատրվում է հենց նրանով, որ երբեք իրեն ազատ չի զգում, միշտ կախված է արտաքին ուժերից...

ՏՂԱՄԱՐԴ (ծաղրանքով).— Դու այս խոսակցությունը սարքեցիր, որպեսզի համալրե՞ս թանկարժեք իրերիդ հավաքածուն:

ԿԻՆ (ուշադրություն չդարձնելով).— Բայց դու դեռ բոլորը չէ: Մեր դիրքի տեղ մարդիկ ճակատագիր ունեն, որից փախչել անհնարին է: Եվ ահա թե ինչն է տարօրինակ... Յուրաքանչյուր մարդ, տագնապ ապրելով, ձգտում է ազատվել նրանից... Նույնիսկ վանդակում փակված մուկը կսկսի դեռ ու դեռ նետվել: Իսկ ահա իմ ամուսինը, ընդհակառակը, հա-

մակված է անհաղթահարելի սարսափով ոչ այնքան վտանգից, որքան այն գործողություններից, որ պետք է ձեռնարկել այդ վտանգից խուսափելու համար:

ՏՂԱՄԱՐԴ.— Միանգամայն տրամաբանական է:

ԿԻՆ.— Այո, իհարկե, օգնելու համար միշտ էլ մարդիկ կգտնվեն: Եղբորս նույնպես պատմել եմ... Չեմ կարծում, թե դա անխոհեմությունն է: Որքան ավելի է ընդարձակվում ձեռնարկությունը, բնականաբար, այնքան անհրաժեշտ են դառնում սերտ կապերը կառավարող շրջանների հետ՝ գործարքների ամրությունն ապահովելու համար: Ինչ ուզում եք ասեք, այդ պայմանադիր կողմը արժանի է վստահության: Իսկ երբ խոսքը արտասահմանյան կառավարության մասին է, նրան, անշուշտ, պետք է պարզապես սիրաշահել: Օրինաչափորեն հարց է ծագում՝ մենք պատասխանատվություն պետք է զգա՞նք: Ինչպիսին էլ որ լինի մեր ձեռնարկության գործունեության բովանդակությունը, որքանով որ մենք օրինական պաշտոնական գործարքներ ենք կնքում... պարտավոր ենք ծայրահեղ դեպքում ինքներս մեզ պաշտպանելու իրավունք ունենալ:

ՏՂԱՄԱՐԴ.— Միանգամայն բնական է: Հենց շնորհիվ այն բանի, որ պաշտպանում ենք ինքներս մեզ, մեր ձեռնարկությունը դեռ գոյություն ունի:

ԿԻՆ.— Ո՛չ... Իմ ամուսինը սարսափում է դրանից:

ՏՂԱՄԱՐԴ.— Ինչո՞ւ վախենալ նրանից, ինչից վախենալու անհրաժեշտություն չկա:

ԿԻՆ.— Վախենում ես: Այնպես ես վախենում, որ քեզ մոտ նույնիսկ հոգեկան խանգարում է սկսել:

ՏՂԱՄԱՐԴ (հանկարծակի գոռում է).— Ի՞նչ հիմարությունն էս գլուխդ մտցրել:

ԿԻՆ.— Դե, ինչ, եթե չես վախենում, ուրիշ ի՞նչ բացատրություն կարող ես տալ... Առաջին իսկ հարմար առիթի դեպքում խուսափում ես նրանից, ինչ անհրաժեշտ է անել, և կառչում հնացած, անիմաստ հուշերից...

ՏՂԱՄԱՐԴ.— Իմաստալից, անիմաստ՝ դա կարող է համկանալ միայն նա, ում որ դրանք անմիջաբար վերաբերում են:

ԿԻՆ (չրջվում է դեպի ամուսինը).— Ախտորոշում կկատարվի: Եվ եթե դու այնպես չխոսես, որ քեզ հասկանան նաև ուրիշ-

Աերը, հազիվ թե հաջողվի ցրել այն կասկածը, որ դու, իսկապես, հիվանդ ես:

ՏՂԱՄԱՐԴ.— Մի՞թե անյնիսկ այդքան չնչին հոգատարությունը հիվանդ հոր նկատմամբ քեզ հանում է հավասարակշռությունից:

ԿԻՆ.— Ինչո՞ւ նրան չես տեղավորում կլինիկայում: Չէ որ նրա համար ես այդպես շատ ավելի լավ կլինեմ:

ՏՂԱՄԱՐԴ.— Դու ոչինչ չես հասկանում:

ԿԻՆ.— Եվ բժիշկը, հավանաբար, նույնպես:

ՏՂԱՄԱՐԴ (զայրույթը զսպելով).— Ինչ-որ դատարկ բանի համար դու պատրաստ ես ինձ ներկայացնել որպես աննորմալի:

ԿԻՆ.— Այն, ինչ դու դատարկ բան ես համարում, ինձ համար վիթխարի նշանակություն ունի:

ՏՂԱՄԱՐԴ (հոգոց է հանում).— Ի՞նչ կհրամայես անել: Քրոջս դերի համար ութսունամյա պառա՞վ վարձել:

ԿԻՆ.— Թույլ տուր, ես միանգամայն որոշակի կասեմ պայմանները, որոնց հետ ես կհամաձայնեի:

ՏՂԱՄԱՐԴ (հոգնած).— Ես ոչինչ չեմ կարող հասկանալ: Ես ի՞նչ եմ արել, որ ինձ այդքան ատում ես...

ԿԻՆ, (կարեկցանքով).— Եղբայրս պնդում է, որսլեսզի ոչ մի պայման չիկնի, բայց ես նրա տեսակետին չեմ... Չպետք է մոռանալ համբավի մասին .. Հենց դրա համար էլ խնդրել եմ մինչև բժշկի գալը Լրկու ախպի փաստաթղթեր պատրաստել: Նախ, անշուշտ, կարողության իրավունքից զրկելուն վերաբերող փաստաթուղթը... Մյուսը... Եթե դու այն ստորագրես, առաջինը չեղյալ կհայտարարվի...

ՏՂԱՄԱՐԴ.— Ի՞նչ պետք է ստորագրեմ:

ԿԻՆ.— Փաստաթուղթ, որը վավերացնում է քո համաձայնությունը, քո պարտականությունը:

ՏՂԱՄԱՐԴ.— Պարտականություն՞ն:

ԿԻՆ.— Հորդ տեղավորել կլինիկայում... Դա կլինի ամենաճիշտ բայը, որը կթեթևացնի բոլորիս կյանքը... Եվ ոչ ոք դրա համար քեզ չի դատապարտի... Հիվանդը պետք է հանձնվի բժիշկների խնամքին... Եվ բացի դա, հիմարություն է նվիրվել մի բանի, որից ինքդ էլ, ինչպես հարկն է, գլուխ չես հանում:

ՏՂԱՄԱՐԴ (հանկարծակի նայելով ժամացույցին).— Եղբայրդ,

հավանաբար, ընդունելության է: (Արագորեն գնում է ձախ կողմը):

ՎԻՆ.— Ո՞ր ես գնում:

ՏՂԱՄԱՐԴ (առանց շրջվելու).— Եղբորդ մոտ: Կարծում եմ, դրա իրավունքն ունեմ:

ՎԻՆ (գնում է նրա ետևից).— Իզուր: Այժմ արդեն... ուրիշ ելք չկա... Մի՞թե դու չես հասկանում:

Երկուսով հեռանում են:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ

6

Ջանգում են: Ապա թափում են կենտրոնական դուռը: Կարճատև դադար: Հետո նորից երկար զանգ: Աջ դռնից արագորեն դուրս է գալիս ծառան:

ԾԱՌԱ (շրջվելով դեպի կենտրոնական դուռը).— Հիմա, մի րոպե... (Հանում է բանալիների կապը):

Այդ ժամանակ նորից է բացվում աջ դուռը, այնտեղից ծիկրակում է աղջիկը: Ջախ ձեռքին բաժակ կա, աջին՝ վիսկիի շիշ: Երևում է, որ փոքր-ինչ հարբած է:

(Հապշտապ): Չի կարելի, չի կարելի, հեռացի՛ր:

ԱՂՋԻԿ.— Իսկ ո՞ր եմ կորել բոլորը:

ԾԱՌԱ.— Այստեղ չի կարելի մտնել:

ԱՂՋԻԿ.— Ես միայն նայում եմ:

ԾԱՌԱ.— Ա՛յ թե անհասկացողն ես դու: Խելքից հանեցիր մարդուն, անախորժություններ պատճառեցիր:

ԱՂՋԻԿ.— Ես ոչ մի անախորժություն չեմ պատճառել:

ԾԱՌԱ.— Խնդրում եմ... Չէ որ քեզ այստեղ են բերել ծերուկի համար...

ԱՂՋԻԿ (ծիծաղելով).— Սարսափելի ծերուկ է... (Նայելով իր ուսերին): Մատների հետքերը դեռ մնում են:

Ջանգ:

ԾԱՌԱ (կոպտորեն).— Ծո՛ւտ հեռացիր:

ԱՂՋԻԿ (ծաղրանքով).— Երևակայեցիր... (Թաքնվում է դռան ետևը):

Ծառան, քթի տակ ինչ-որ բան փնթփնթալով, բացում է դու-

որ: Հարգալից կեցվածք է ընդունում ու խոնարհվում: Հազիվհազ ոտքերը քարշ տալով՝ ներս է մտնում մի զառամյալ ծերունի. հայրըն է:

ՀԱՅՐ (ցրված).— Ծաշը դեռ պատրաստ չէ՞... Այդ կարմիր թըղթերը հոգնեցնում են աչքերս...

ԾԱՌԱ (ձեռքը մեկնելով ծերունուն՝ ուղեկցում է նրան).— Այո, այո, ես հիմա կանաչները ձեզ կտամ:

ՀԱՅՐ.— Դրանք երկու կապուկ էին, իսկ ինչո՞ւ մեկը հիմա չկա... (Արձակում է գոտին և սկսում իջեցնել շալվարը):

ԾԱՌԱ (շտապով).— Չի՛ կարելի, չի՛ կարելի, այստեղ զուգարան չէ... (Ծերունու շալվարն է վեր քաշում): Դիմացեք, դիմացեք: Այստեղ դեռ հարկավոր է դիմանալ... (Գրկելով ծերունուն՝ տանում է ձախ):

7

Աջ դռնից անմիջապես ներս է մտնում աղջիկը: Բացի բաժակից ու շից, թևի տակ երկու կնքված ծրար կա: Ոտքով ծածկում է դուռը: Երջվում է ու երկար նայում բանալու անցքից: Ականջ է դնում և արագորեն մտնելու մազմոցին: Նրկատում է, որ իր պայուսակը ընկած է հատակին:

ԱՂԶԻԿ (բարձրացնում և պայուսակը).— Օ՜յ-օ՜յ-օ՜յ, սոսկալի է... Դե լավ, սուսնց վիշտ տրախտություն չի լինում, պետք չէ ողբալ... (Ծրարները դնում է պայուսակի մեջ):

Ձախից՝ ուժգնորեն դուրսելով, մտնում է տղամարդը:

ՏՂԱՄԱՐԴ (շուրջը նայելով).— Որտե՞ղ է Յագին:

ԱՂԶԻԿ (ցույց տալով դուռը).— Նրան զուգարան տարավ:

ՏՂԱՄԱՐԴ (բացում է կենտրոնական դուռը և զննում սենյակը).— Այ թե գարշահոտություն է: (Արագորեն աղմուկով ծածկում է դուռը):

ԱՂԶԻԿ.— Այսօր ներկայացումն ավարտված է, չէ՞:

ՏՂԱՄԱՐԴ.— Յագին որևէ բան ասա՞ց:

ԱՂԶԻԿ (զլխով է անում).— Ասաց, թե հնարավոր է, որ ձեր հորը հիվանդանոց ուղարկեն...

ՏՂԱՄԱՐԴ.— Ծաղակրատ:

ԱՂԶԻԿ.— Ինչ անհաջողակն եմ ես... Նույնիսկ այնպես չեմ ծընվել, ինչպես բոլորը... Մանկաբարձուհուն ստիպել եմ ինը ժամ

սպասել, իսկ երբ նա արդեն պատրաստվել է հեռանալ, միանգամից բռնաբերել է:

ՏՂԱՄԱՐԴ.— Ես քեզ վիրավորել եմ:

ԱՂՋԻԿ (կարեկցանքով).— Եվ ոչ մի հույս այլևս չկա՞:

ՏՂԱՄԱՐԴ.— Ամեն ինչ այնքան բարդ է...

ԱՂՋԻԿ.— Փոխարենը վիսկին համով է... Տեսե՞ք՝ ինչքան եմ խըմել:

ՏՂԱՄԱՐԴ.— Դիմացկուն գլուխ ունես:

ԱՂՋԻԿ.— Ոչ, էլի մի փոքր, և ես բոլորովին կհարբեմ, ճի՞շտ է:

ՏՂԱՄԱՐԴ.— Եթե ուզում ես՝ մնացածը վերցրու քեզ հետ:

ԱՂՋԻԿ.— Պետք չէ... Ավելի լավ է, եկեք խմենք բաժանումից առաջ: **(Կիքը լցնում է բաժակը և մեկնում տղամարդուն):**

ՏՂԱՄԱՐԴ (ջղային).— Չեմ ուզում... Տրամադրություն չունեմ:

ԱՂՋԻԿ.— Ի՞նչ արած... Իսկ ես կխմեմ: **(Բաժակը մոտեցնում է շուրթերին և խմում՝ բարձրաձայն կուլ տալով):**

Տղամարդը մոայլվում է:

Այս ամենը, հավանաբար, ի՞մ պատճառով:

ՏՂԱՄԱՐԴ.— Ի՞նչը:

ԱՂՋԻԿ.— Ձեր կինը զայրանում է...

ՏՂԱՄԱՐԴ (սառը ժպտալով).— Քո ցավակցությունը գործին չի օգնի:

ԱՂՋԻԿ.— Դուք այդքան հարուստ եք, բայց մեկ է, կնոջ առաջ տեղի եք տալիս...

ՏՂԱՄԱՐԴ (դժգոհ).— Այդ ամենն այնքան էլ հեշտ չէ:

ԱՂՋԻԿ.— Իսկ ես կարծում էի, միայն թե փող լինի՝ արա, ինչ ուզում ես...

ՏՂԱՄԱՐԴ.— Անում ես, միայն թե ոչ այն, ինչ ուզում ես:

ԱՂՋԻԿ.— Տարօրինակ է... Իսկ ինձ թվացել է... Երբ ինձ հրավիրեցիք այն սենյակը...

ՏՂԱՄԱՐԴ (կտրուկ ընդհատում է).— Չախողման համար ես կվճարեմ: Որքա՞ն ես ուզում:

ԱՂՋԻԿ (հառաչելով).— Ինչո՞ւ եմ այսքան անհաջողակ: Նույնիսկ զգվելի է: **(Աղմուկով կուլ տալով՝ խմում է բաժակի վիսկին):**

ՏՂԱՄԱՐԴ (նույն ակնթարթին հարվածում և բաժակը ցած է գցում նրա ձեռքից).— Վե՛րջ տուր:

ԱՂՋԻԿ (վախեցած).— Ի՞նչ եք անում:

ՏՂԱՄԱՐԴ (պարզ երևում է, որ ինքն էլ է վախեցած).— Ինչո՞ւ ես այդպես աղմուկով խմում... Նույնիսկ տհաճ է...

ԱՂՋԻԿ (զարմացած).— Ահա թե ինչ... Ուրեմն, ապուրն էլ չի՞ կարելի ֆոթացնելով ուտել:

ՏՂԱՄԱՐԴ (դեռևս շփոթված).— Ինձ համար դու դեռ երեսուն տոկոսով ես քույր: Չէ որ նրանից հետո դեռ մի ժամ էլ չի անցել: Եվ քանի դեռ այստեղ ես, մի՛ մոռացիր այդ մասին: Վարձը, որ ստացել ես, կարծում եմ ներստում է և դա:

Աղջիկը հանկարծակի ձեռքերով ծածկում է դեմքը և հեծկլում:

(Անհանգստացած): Ի՞նչ է պատահել: Վե՛րջ տուր: Պետք չէ արտասպել:

ԱՂՋԻԿ (զլխով է անում և դադարում լաց լինել).— Ուշադրություն մի դարձրեք... Հենց որ խմում եմ, միշտ լալիս եմ... Ինձ նման կանայք, գրեթե բոլորը, հենց որ խմում են, անմիջապես սկսում են լաց լինել... (Վերցնում է պաշուսակը և ուղղվում դեպի դուռը): Չգիտեմ ինչու, գլուխս պտտվում է... Հարբել եմ, երևի...

Տղամարդը լուռ հայացքով ուղեկցում է նրան:

(Շրջվելով): Դուք որևէ բա՞ն ասացիք:

ՏՂԱՄԱՐԴ.— Ոչ, ոչ...

ԱՂՋԻԿ (զլխով անելով).— Ձեր քրոջ երեսուն տոկոսը հարգելով չե՞ի՞ք լսի իմ միակ խնդրանքը:

ՏՂԱՄԱՐԴ.— Ի՞նչ խնդրանք:

ԱՂՋԻԿ.— Ես ուզում եմ շքամուտքից դուրս գալ: Անկեղծ ասած, ներս մտնելիս էլ ուզում էի... (Նվաստացած ժպտում է, նայելով տղամարդուն, որն ամեն ինչ հասկացել է): Ի՞նչ գեղեցիկ է այնտեղի դուռը... Նկարն ուղղակի ապակուց է պատրաստված, այո՞: Ի՞նչ է նկարված:

ՏՂԱՄԱՐԴ.— Ինչ արած, խնդրեմ, դուրս եկ...

ԱՂՋԻԿ.— Օ՛յ, ինչ լավ է... Ուրեմն, հարկավոր է իջնել սանդուղքով և գորգի վրայով գնա՞լ:

ՏՂԱՄԱՐԴ.— Մի՞նչև վերջ և դեպի աջ:

ԱՂՋԻԿ.— Աղախի՛նն, իհարկե, կկանգնեցնի ինձ... «Լսեք, դուք ոչ թե այս, այլ հակառակ կողմը պետք է գնաք...»: «Ո՞ր՛չ, հենց այս կողմը»,— անտարբեր նետում եմ ես, ինչպես լոր-

դուհին կինֆիլմից... (Անսպասելիորեն կտրուկ): Օ՛հ, ինչպես չեմ սիրում, երբ ինձ հաշվի չեն առնում:

ՏՂԱՄԱՐԴ (ընկնված).— Կարելի է, իհարկե, խնդրեմ, շքամուտքով դուրս եկ...

ԱՂՋԻԿ (փնթփնթում է).— Այո, կգնամ... Այդպիսիներին ես միշտ ասում եմ. չարանում ես, իսկ դու փորձիր մերկանալ մարդկանց ներկայությամբ... (Ուղղվում է դեպի դուռը, բայց այդ պահին կրկին ներս է մտնում հայրը՝ ծառային հեկնված):

Ծառան հանկարծակիի եկած ցնցվում է և ծերունու տեսադաշտը փակելով, արագորեն նրան տանում է դեպի կենտրոնական դուռը:

(Նայում է նրանց ետևից): Այո, ամբողջ ամբողջ է, եթե նույնիսկ թղթից է... Չես ուզում տեսնել այն, ինչ քեզ համար զգվելի է, փակվիր նրանում և դուրս մի արի: (Շրջվելով՝ արագորեն հեռանում է ձախ կողմում):

ԾԱՌԱ (հրելով հորը, որի ուշադրությունը գրավել է աղջիկը).— Գնանք, գնանք:

ՀԱՅՐ (ցածրաձայն).— Ո՞վ էր նա:

ԾԱՌԱ.— Ուշադրություն մի դարձրեք: Ես հիմա կանաչ խաղաթղթերը կտամ...

ՀԱՅՐ.— Ատլասե՞:

ԾԱՌԱ.— Այո, իհարկե, ատլասե... Եվ երկու կապուկ, լրիվ... ամեն ինչ լավ կլինի...

Հայրը և ծառան, շրջանցելով տղամարդուն, հեռանում են կենտրոնական դռնով:

ՏՂԱՄԱՐԴ (ասես, ազատվելով կախարդանքից, տազնապած շուրջն է նայում և վերցնում է հատակին ընկած բաժակը: Հոտ է քաշում, սեղանի վրա դրված շից վիսկի է լցնում և մի շնչով խմում. խոժոռված փնթփնթում է).— Բավական է: Եթե դա ուրվական է, ուրեմն, միևնույն է, երբևէ պիտի անհետանա: Այլևս պետք չէ նրա ետևից ընկնել... (Մտասուզված): Բայց ինչո՞ւ... Ինչո՞ւ եմ այդպես համատորեն կառչում նրանից... Եթե հավատամ սրիկաներին, ես էլ եմ խելագար, քանի որ չեմ կարողանում դա բացատրել բառերով, որպեսզի հասկանալի լինի բոլորին... (Լցնում է բաժակը և մի շնչով խմում): Մի՞թե կարելի է հիշողությունից անմիջապես ջնջել ամեն բան, ասես, ոչինչ էլ չի եղել... Բայց եթե ես անգոր եմ

ջնջել, ուրեմն պետք է կարողանամ բացատրել... **(Ափերով ծածկում է դեմքը)**: Եվ այնուհանդերձ, ինչո՞ւ: Ինչո՞ւ եմ այդպես համառորեն կառչում նրանից... Ինքս էլ շատ լավ հասկանում եմ, որ դա ընդամենը ուրվական է, բայց այդ ուրվականը ամուր արմատներ է արձակել իմ սրտում... Ինձ համար նա ավելի քան իրական է... Եվ ուրվականի ծեսում, ինչպես ծաղիկը ջրում, ես վերջապես կարող եմ ազատ տարածել ձեռքերս ու ոտքերս... **(Դադար)**: Այնուամենայնիվ, ինձ ի՞նչ է տալիս այդ ծեսը... Պատասխա՞ն եմ փնտրում... Ինչպես սաստիկ վախեցած երեխա՞ն է փնտրում... Այո, թերևս, այդպես... Ես, իրոք, վախեցած եմ... **(Սկսում է ետ ու առաջ քայլել)**: Բայց պատճառը բոլորովին էլ այն չէ, որի մասին նա խոսում է... Բոլորովին այլ է պատճառը... Միանգամայն այլ... **(Վանգ է առնում, լցնում է բաժակը և անթարթ նայում նրան)**: Այո: **(Անսպասելիորեն գնում է դեպի կենտրոնական դուռը)**:

Այդ ժամանակ դուռը բացվում է և ներս է մտնում ծառան:

Կռանալով՝ բանալին մտցնում է փականի մեջ:

Սպասի՛ր: Տո՛ւր այստեղ բանալին:

ԾԱՌԱ (անվստահությամբ)— Այս բանալի՞ն:

ՏՂԱՄԱՐԴ.— Այո, դա: Ես որոշել եմ հորս տեղափոխել հոգեբուժական հիվանդանոցում... Ուզում եմ նրան հրաժեշտ տալ և մի քանի բառ ասել:

ԾԱՌԱ (վախեցած).— Դուք, իրոք, որոշե՞լ եք:

ՏՂԱՄԱՐԴ.— Դե՛, արա՛գ:

ԾԱՌԱ.— Դուք կհանդիպեք նրան, բայց չէ որ նա չի հասկանա ձեր ասածը...

ՏՂԱՄԱՐԴ (առաջ հրելով բաժակը).— Չեմ կարողանա խոսել, բայց գոնե կխմեմ նրա հետ:

ԾԱՌԱ.— Ալկոհոլ՝ ոչ մի դեպքում: Չէ որ նա շատ լուրջ հիվանդ է, և նրան խստիվ արգելված է խմել:

ՏՂԱՄԱՐԴ.— Մի անհանգստացիր: Միևնույն է, հիվանդանոցում էլ խնամքի համար նրան լավ հասկացող մարդ կպահանջվի:

ԾԱՌԱ.— Ո՛չ, ես ինձ համար չեմ անհանգստանում...

ՏՂԱՄԱՐԴ (կտրուկ).— Լավ, վերջացրի՞նք, ես ժամանակ չունեմ: Ուզում եմ, որ դու նաև ահա թե ինչ ասես: Գնա՛ և շուտ բե՛ր

աղջկան, որ այստեղ էր: Նա, հավանաբար, դեռ չի հասել
ավտոբուսի կանգառ: Եթե շտապես, անպայման կհասնես:

ԾԱՌԱ (շփոթված).— Չեմ հասկանում, ձեր ինչի՞ն է պետք...

ՏՂԱՄԱՐԴ (հանկարծակի գոռում է).— Որքան էլ դա քեզ հա-
մար ցավալի է, տան տերը ես եմ: Ի հատուցումն նրա, որ
դավանանեցի հորս:

ԾԱՌԱ.— Իհարկե, դուք եք տան տերը, դա բնական է: Խնդրում
եմ՝ կամաց... Նա հե՛նց նոր պառկեց...

ՏՂԱՄԱՐԴ (իրեն տիրապետելով).— Տարօրինակ է... Ասա՛, ին-
չի՞ համար կնոջս հետ այդպիսի պայման կապեցիր:

ԾԱՌԱ.— Ի՞նչ պայման:

ՏՂԱՄԱՐԴ.— Ինչպե՞ս թե ինչ: Հանդես գալ որպես վկա՝ կարո-
ղության իրավունքից ինձ զրկելիս:

ԾԱՌԱ (փորձելով դուրս գալ անհարմար վիճակից).— Ինչպես
կարելի է... Դա սուկայի թյուրիմացությունն է...

ՏՂԱՄԱՐԴ (նորից կտրուկ).— Լավ, գնա: Բանալին թո՛ղ: Հետո
կարդարանա:

**Ծառան, նվաստացած, բանալին մտցնում է փականի մեջ և
վախվորած նայելով տղամարդու ձեռքի բաժակին, հեռանում է
ձախ կողմում:**

(Դանդաղ մոտենում է կենտրոնական դռանը և պտտեցնում
բանալին: Բաց է անում դուռը, ուզում է ներս մտնել, բայց
հանկարծ ընկրկում է): Ա՛յ թե գարշահոտությունն է, ասես,
ձուկ է նեխել: Խեղդվել կարելի է... Հա՛յր, մի բռնե՛ք դուրս
արի... Դու դեռ քնած չե՞ս: Ես վիսկի ունեմ... Հատուկ, շոտ-
լանդական... Չե՞ս խմել դրանից... (Ձևացնում է, թե խմում
է): Հը՞, մի-մի բաժակ... Կիսե՞ս, հը՞... Արի այստեղ...

ՀՈՐ ՋԱՅՆԸ.— Որևէ համեղ բան կտա՞ս:

ՏՂԱՄԱՐԴ.— Համեղ բա՞ն: Այն, ինչ տալու եմ, դու ամենից շատ
ես սիրում... Դե, մի-մի բաժակ... Ինչո՞ւ է տեսքդ այդքան
դժբախտ:

ՀՈՐ ՋԱՅՆԸ.— Եթե ես առանց զանգելու դուրս գամ, Յագին
կբարկանա:

ՏՂԱՄԱՐԴ.— Ինչ կա որ, կարող ես զանգել: Միայն արագ: Թո՛ւ,
այ թե գարշահոտությունն է: Ինչ է, ձկան փորոտի՞ք է թափ-
ված քո անկողնում...

ՀՈՐ ՋԱՅՆԸ.— Դու ինձ համեղ բան խոստացար...

ՏՂԱՄԱՐԴ.— Արի, արի... Իհարկե, խոստացա... Քեզ կտամ համեղ... Պաստե՞ղ... Ծոկոլա՞ղ: Խնդրեմ, ինչ-որ սիրում ես...

Հոր փնթփնթոցը՝ ծիծաղ հիշեցնող... Մահճակալի ճոխնչ... Տղամարդն ընկրկում է: Չանգ: Օրորվելով մտնում է հայրը: Տղամարդը ծածկում է դուռը:

ՀԱՅՐ.— Դե տուր համեղ բանը:

ՏՂԱՄԱՐԴ (մեկնում է բաժակը).— Վերցրու, դու շատ ես սիրում... (Ցույց է տալիս բազմոցը): Արի նստենք և խմենք...

ՀԱՅՐ (հոտոտելով բաժակը, ետ է քաշվում).— Ո՛չ, սա...

ՏՂԱՄԱՐԴ (քնքշորեն).— Հա՛յր, մենք բաժանվում ենք... Կինս հաղթեց... Նրան պատկանող բաժնետոմսերն օգտագործելու իրավունքն ապահովող լիազորագրի փոխարեն ես ստիպված էի ստորագրել քեզ հիվանդանոցում տեղավորելու մասին պարտավորագիրը... Դու պարտավոր ես ինձ հասկանալ, հա՛յր. չէ որ հանուն քո ձեռնարկությունների դու հանգիստ խղճով մահվան դատապարտեցիր հարազատ դստերդ... Ահա, բռնիր բաժակը... Լավագույն շոտլանդական վիսկին է... Մի կում խմիր, գոնե շուրթերդ թրջիր... (Այդ ասելով, բաժակը ձեռքին ընդհուպ մոտենում է հորը):

Վերջինս վախեցած ետ է քաշվում: Սկսում է այս ու այն կողմ թեքվել տղամարդու և բազմոցի միջև:

Ինչո՞ւ չես ուզում:

ՀԱՅՐ.— Չեմ սիրում, դրանից չեմ սիրում...

ՏՂԱՄԱՐԴ.— Ինչո՞ւ: Չէ որ առաջ խմում էիր: Ես լավ գիտեմ...

ՀԱՅՐ.— Չեմ սիրում... Չէ որ դու խոստացար համեղ բան տալ...

ՏՂԱՄԱՐԴ.— Գուցե ես սխալվեցի՞... Ո՛չ, չի կարող պատահել...

Այս ամենը Յագիի արածն է... Սրիկա՛... (Խմում է):

ՀԱՅՐ.— Մեջքս քորիր... (Մոտենում է տղամարդուն ու կռանում):

ՏՂԱՄԱՐԴ (թափով ետ է քաշվում).— Մե՞ջքդ:

ՀԱՅՐ.— Այստե՛ղ... (Չեռքով ցույց է տալիս ուսի մոտ և ցրնցվում): Քորիր, արագ... (Մոտենում է տղամարդուն):

ՏՂԱՄԱՐԴ (ետ է քաշվում).— Ինքդ քորիր...

ՀԱՅՐ.— Օ՛յ, քոր է գալիս... (Գթաշարժ հառաչում է և սկսում քավել բազմոցի թիկնակին):

ՏՂԱՄԱՐԴ (շվարած).— Այլասերվա՛ծ... Իսկայան անասուն... (Անսպասելիորեն բարձր): Հա՛յր, կգնա՞ս խելագարների հիվանդանոց:

Հայրը ցրված նայում է տղամարդուն:

(Հառաչում է): Կարծես չի հասկանում... Պետք չէ ցավակցել այն մարդուն, որն անընդունակ է գիտակցելու իր դժբախտությունը... Այսինքն՝ ոչ ոք չի էլ պատրաստվում նրան ցավակցել... Սրան պետք չէ ցավակցանքը... Սա ոչ մի այնպիսի բան չի ապրել, որպեսզի ընդունի մյուսների ցավակցանքը...

(Հանկարծակի գոռում է): Այս անգամ, հա՛յր, չես պրծնի: **(Բաժակը լիքը լցնում է և մոտենում է հորը: Նրան սեղմում է բազմոցին և փորձում վիսկին լցնել բերանը):**

ՀԱՅՐ.— Օգնեցե՛ք:

ՏՂԱՄԱՐԴ.— Լո՛ի՛ր:

Հայրը թքում է տղամարդու երեսին: Վերջինս վեր է կենում ու սրբում դեմքը: Զախ կողմից ծառայի ուղեկցությամբ ներս է մտնում աղջիկը:

ՀԱՅՐ (խռպոտ).— Օգնեցե՛ք...

ԾԱՌԱ (ծանր շնչելով).— Ի՞նչ է պատահել:

ՏՂԱՄԱՐԴ.— Աղմուկ բարձրացնելու կարիք չկա... **(Աղջկան):** Ես ուզում եմ որ դուք մեկ անգամ էլ գործի անցնեք: Չե՞ որ ձեզ համար միևնույն է, թե երբ:

ԱՂՋԻԿ.— Օ, իհարկե: Ուրիշ որտե՞ղ տաս րոպեում հազար իեն՞ կվաստակես...

ԾԱՌԱ (հանդիմանանքով).— Ի՞նչ եք պատրաստվում անել:

ՏՂԱՄԱՐԴ.— Ցավոք, իմ ձեռքից նա չընդունեց: Չնայած ես ասացի, որ դա հրաժեշտի համար է...

ԾԱՌԱ.— Բայց չէ որ դուք նրան ուժով եք հանել անկողնուց: Իսկ նույնից հետո նա իրեն այնքան վատ է զգում...

ՏՂԱՄԱՐԴ.— Իսկ դու ինչպե՞ս ես սովորաբար նրան ստիպում խմել:

ԾԱՌԱ.— Խմե՛լ: Ոչ մի դեպքում: Նա այնքան թույլ է, և հանկարծ ակոհոլ... Եվ բացի այդ, բժիշկը խստիվ արգելել է... Գրգռող ոչինչ, նույնիսկ բրնձի հետ կծու համեմունք չի կարելի... Դե, գնանք, հանգստանալ է պետք...

ՏՂԱՄԱՐԴ.— Հերիք է անմեղ ձևանա...

ԾԱՌԱ.— Անմե՞ղ:

ՏՂԱՄԱՐԴ.— Կարծո՞ւմ ես ես չգիտեմ: Հորս նույնից մի քանի օր առաջ այս դուռն մոտ միշտ օղու հոտ էմ առնում: Ի՞նչ է, ճիշտ չէ՞:

ԾԱՌԱ.— Ինչ եք ասում... Ձեզ թվացել է... Մի՞թե ես դա թույլ կտայի...

ՏՂԱՄԱՐԴ.— Մեկ կամ երկու անգամ, իրոք, կարող էր թվալ... Բայց դու հո գիտես, թե քանի անգամ է դա ինձ «թվացել»... Համարյա երկու ամիսը մեկ անգամ՝ ութ տարվա ընթացքում... քառասունութ անգամ... Դրան ի՞նչ կասես:

Ծառան շփոթված լռում է:

Դե լա՛վ, լա՛վ... Որքան ինձ հայտնի է, դու էլ ես ընկերակցել նրան... Քեզ հանդիմանելու համար արդեն ուշ է: Կարևորն այն է, որ դու չժխտես: Դե ի՞նչ: Գի՞նու օգնությամբ դու դիտավորյալ նոպա՞ էիր հարուցում, այո՞:

ԾԱՌԱ.— Սոսկալի բաներ եք ասում: Իմ ինչի՞ն էր պետք դիտավորյալ նոպա հարուցելը... Ուրիշ բան, եթե դրանից որևէ օգուտ ունենայի. թե չէ՝ մի սե՛ն՝ էլ չէր հասնում...

ՏՂԱՄԱՐԴ.— Ձե որ ես ասացի՝ չեմ պատրաստվում քեզ հանդիմանել: Ուզում եմ իմանալ գաղտնիքը՝ ինչո՞ւ էիր հորս օղի խմեցնում... Ինչ էլ որ պատահի, ես գոնե մեկ անգամ բացե՛ի-բաց պետք է խոսեմ նրա հետ:

Հայրն իրեն շրջապատում է խաղաթղթերի օղակով:

ԾԱՌԱ.— Ես կպատմեմ ճշմարտությունը, հավատացեք ինձ... Դուք ասում եք, թե ես ինչ-որ մտադրություն եմ ունեցել. դա ինձ համար խիստ վիրավորական է... Ամեն ինչ պատահմամբ եղավ... Ծեր պարոնն այն ժամանակ օրեցօր ավելի ու ավելի էր տատապում անքնությամբ: Ոչ մի քնաբեր չէր օգնում... Եվ ի լրումն այդ ամենի, հե՛նց այն օրը, երբ դա պատահեց, ցույց էր: Ներքևում՝ փողոցում, երգում էին ու պարում... Հազիվ էր աչքը փակում՝ նորից ճիշեր... Այնքան խրդճալի տեսք ուներ՝ անհնարին էր առանց կարեկցանքի նրան նայել... Եվ ահա այդ ժամանակ ես նրան տվեցի, շատ քիչ... Պարզապես փորձելու համար, շատ քիչ...

ՀԱՅՐ.— Դե, ո՞ւր է համեղ...

ԾԱՌԱ.— Հիմա, հիմա...

ՏՂԱՄԱՐԴ.— Ես հարցնում եմ՝ ինչպե՞ս խմեցրիր:

ԾԱՌԱ.— Ուրեմն, լսեք ինձ... Երբ ծեր պարոնը փոքր-ինչ խմեց, ինձ թվաց, որ դեմքը պայծառացավ... Սկսեց ինչ-որ բան հիշել... Բայց ի՞նչ: Ես սկսեցի մտածել և այդ պահին լսեցի, որ

ինչ-որ բան է թոշում... շատ ցածր... Հելիպոկոտեր էր... Հա-
վանաբար, ցուցարարներին էր նայում...

ԱՂՋԻԿ.— Հելիպոկոտեր⁹:

ԾԱՌԱ.— Մի՞թե ես այդպես չասացի:

ԱՂՋԻԿ.— Դուք ասացիք «հելիպոկոտեր»:

ԾԱՌԱ.— Տարբերություն չկա: (**Հատ-հատ արտասանելով յուրա-
բանչյուր բառը**): Եվ ահա ծեր պարոնի աչքերը բոլորովին
փոխվեցին... Նա վեր կացավ և հարցրեց. «Մեր ետևից դեռ
չե՞ն եկել: Ո՞ր գնաց Կաճուխիկոն: Որտե՞ղ է Տոսիկոն»:

ՏՂԱՄԱՐԴ.— Բավական է: Մնացած բոլորը ես արդեն այնքան
եմ լսել, որ ականջներս հոգնել են:

ԱՂՋԻԿ.— Բայց ես առաջին անգամ եմ...

ՏՂԱՄԱՐԴ.— Դու կարող ես և չիմանալ: (**Ծառային**): Դե, ինչ-
պե՞ս նրան խմեցրիր:

ԾԱՌԱ.— Դուք, ահա, կասկածեցիք, որ ես այդ ամենը դիտավոր-
յալ...

ՏՂԱՄԱՐԴ (անհամբեր).— Բավական է... Դու բացատրեցիր, թե
նրա մոտ ինչպես սկսվեց առաջին նոպան, բայց մի՞թե հույս
ունենա դրանով արդարացնել երկրորդը և մնացած բոլորը...

ՀԱՅՐ (վախեցած).— Կարելի՞ է՝ ես գնամ:

ԾԱՌԱ.— Այո-այո, հիմա... (**Ձեռք է մեկնում հորը**):

ՏՂԱՄԱՐԴ.— Թո՛ղ նրան... Նախ պատասխանի՛ր իմ հարցին:

**ԾԱՌԱ (խուսափելով աղջկա հայացքից, որն ուշադիր նրան է նա-
յում. տխուր).**— Ես այդ ամենն արեցի, որովհետև ինձ հա-
մար գլխավորը ծեր պարոնին ժխտման հիվանդությունից ա-
զատելն էր:

ՏՂԱՄԱՐԴ.— Ինչո՞ւ հենց սկզբից չէիր ասում այդ մասին:

ԾԱՌԱ.— Կարծում էի ձեզ համար դա հաճելի չի լինի...

ՏՂԱՄԱՐԴ.— Ինչպիսի՞ հուզիչ մտահոգություն:

ԾԱՌԱ.— Այո, ես աշխատում էի անել ամեն բան, ինչ կարող էի
և...

ՏՂԱՄԱՐԴ (չարությամբ).— Չե՞ս կարծում, որ ամեն ինչ չա-
փից ավելի խրթին է ստացվում քեզ մոտ: Այդ գործին մաս-
նակից դարձնել կնոջս, կեղծամներ պատրաստել, ճիշտ այն
ժամանակվա ճամպրուկների նման ճամպրուկներ գտնել,
պատատներ փակցնել, հատուկ մագնիտոֆոնի ժապավեն
պատվիրել, որի վրա ձայնագրված է խոսվության աղմուկը:

Եվ ամեն անգամ դու այդ անում էիր ավելի հմտորեն. այժմ մեր տան մթնոլորտը դարձել է ճիշտ այնպիսին, ինչպես այն ժամանակ էր... Այդ ամենը, անշուշտ, քո ջանքերի շնորհիվ... Բայց քո գործողությունները փոքր-ինչ չե՞ն հակասում ինձ տհաճություն չպատճառելու քո ձգտումին:

ԾԱՌԱ (մերկացված).— Հասկանում եք... Դա... ինչպես ձեզ ասեմ... Ես տեսա, որ այդպիսի հանդիպումները, բացի ձեր պարոնից, ձեզ էլ են բավականություն պատճառում...

ՏՂԱՄԱՐԴ (զարմացած).— Բավականություն՞ն:

ԾԱՌԱ (ուշադիր նայելով տղամարդուն).— Ինչ ուզում եք ասեք, այն ժամանակ ձեր պարոնը իր հզորության բարձունքին էր... Միայն երեք հարյուր ութսուն մեքենա ուներ, որոնք հանքաքար էին տեղափոխում նրա հանքերից... Նրանց բարձրացրած փոշին ծածկում էր հորիզոնը...

ՏՂԱՄԱՐԴ.— Դատարկ բան է: Հենց այդ օրերին ես ու հայրս անընդհատ վիճում էինք իրար հետ: Եվ բացի այդ, քույրս, այլ էլք չգտնելով, թույն խմեց: Իսկ հիվանդ մայրս, չհասկանալով թե շուրջն ինչ է կատարվում, նետված էր բախտի քմահաճույքին... Ի՞նչը կարող էր այստեղ բավականություն պատճառել:

ԾԱՌԱ.— Բայց չե՞ որ դուք ոչ մի անգամ չարգելեցիք այդ անել:

ՏՂԱՄԱՐԴ.— Թող այդ: Դու ամեն ինչ շատ լավ հասկանում ես:

ԾԱՌԱ.— Այո, ես ամեն ինչում մեղավոր եմ...

ՏՂԱՄԱՐԴ (իրեն զսպելով).— Դրանից դու ավելի շատ բավականություն էիր ստանում, քան՝ ես, ի՞նչ կասես... Դու ուզում էիր, հորս ցնորական ուժն օգտագործելով, ճնշել ինձ... Դու շատ էիր ուզում ինձ նորից տեսնել այնպիսին, ինչպիսին այն ժամանակ էի, երբ դողում էի հորս առաջ...

ԾԱՌԱ (հուսահատ).— Դուք իրավացի չեք, դուք բնավ իրավացի չեք...

ՏՂԱՄԱՐԴ.— Մի՞թե չես հիշում... Վաղուցվա դեպք է. դու իմ համադասարանցիներին կաշառեցիր, յուրաքանչյուր էջի համար վճարելով երեք սեն, որպեսզի նրանք գրի առնեին այն ամենը, ինչ ես անում էի... Դա ինձ համար լավ դաս եղավ...

ԾԱՌԱ.— Ծեր պարոնի մտահոգությունը ձեր օգտին էր...

ՏՂԱՄԱՐԴ.— Այո, նա էլ էր միշտ այդպես ասում... Վարձու

մարդկանց հմտորեն օգտագործելու ամենակարևոր գաղտնիքը նրանց մեջ կասկած սերմանելն է...

ԾԱՌԱ.— Քանի դեռ ծնողներիդ խնամքի տակ ես, պետք է հնազանդվես նրանց...

ՀԱՅՐ.— Հոգնեցի ես...

ԾԱՌԱ.— Այո-այո, իհարկե... հիմա, մի բույե...

ՏՂԱՄԱՐԴ.— Թո՛ղ այդ: Հիմա մենք մեկ անգամ ևս կկազմակերպենք ծեսը: Ձէ որ դու հենց նոր ասացիր, որ ցանկացած ժամանակ կարելի է նույա հարուցել. շարժառիթների մասին ես չեմ խոսում: Եթե քեզ, իրոք, անհանգստացնում է հորս ճակատագիրը, ավելի լա՛վ չի լինի, որ բացես գաղտնիքդ:

ԾԱՌԱ.— Այն օրից, ինչ ծեր պարոնը հիվանդացել է, այնքան էլ չի սիրում խմիչքը:

ՏՂԱՄԱՐԴ.— Եվ ի՞նչ:

ԾԱՌԱ (համարձակվելով).— Ուրեմն, այսպես. ես սկսեցի տարբեր փորձեր կատարել... Այն, ինչ մի անգամ հաջողվում էր, միշտ չէ, որ ստացվում էր հաջորդ անգամ...

ՏՂԱՄԱՐԴ.— Ինձ հետաքրքրում է եզրակացությունը:

ԾԱՌԱ.— Միանգամայն իրավացի եք... Լսում եմ... Կարող եք ինձ լիովին հավատալ...

ՏՂԱՄԱՐԴ.— Մի՛ կոտրատվիր:

Հայրը սկսում է հավաքել խաղաթղթերը:

ԾԱՌԱ (կամաց).— Լսում եմ... Ծանր հիվանդներին հատուկ ըմպուցիչով են ջուր տալիս... Քթիկով գավաթ է... Ես նրա մեջ լիքը շաքար էի լցնում և վիսկի ավելացնում, մինչև խյուս էր ստացվում, հետո ներկում էի...

ԱՂՋԻԿ.— Թո՛ւ, ինչ զգվելի է:

ԾԱՌԱ (խեթ-խեթ նրան է նայում).— Երբեմն փոքր-ինչ տաքացնում էի...

ՏՂԱՄԱՐԴ.— Մի՞թե այդ խառնախյուսը կարելի է խմել:

ԾԱՌԱ.— Ոչ, ավելի շուտ՝ ծծել, ոչ թե խմել... Պառկած վիճակում նա հաճույքով ծծում էր այդ խյուսը:

ՏՂԱՄԱՐԴ.— Ջզվելի է:

ԱՂՋԻԿ.— Սատանան գիտե, թե ինչ է: Ես պարզապես զգվում եմ:

ՏՂԱՄԱՐԴ.— Եվ այդ ամենը նրա սենյակո՞ւմ է:

ԾԱՌԱ.— Այո, այնտեղ, ինչպես հարկն է՝ կարգի բերված: Անհրաժեշտ ամեն ինչ նախապատրաստելու և նրան խմեցնելու

համար ժամանակ է պահանջվում. ավելի լավ է ես նրան տանեմ այնտեղ...

ՏՂԱՄԱՐԴ.— Ինչքա՞ն պետք է սպասել, մինչև ներգործի:

ԾԱՌԱ.— Դե... ինչ-որ... Ես կխնդրեի, որ մի քսան-երեսուն րոպե սպասեիր...

ՏՂԱՄԱՐԴ (գլխով է անում).— Խմեցրու... (Նրան է մեկնում վիսկիի շիշը): Թունդ պատրաստիր: Չէ որ վերջին անգամն է:

ԾԱՌԱ.— Լսում եմ... (Հրում է հորը): Դե, գնացինք...

ՀԱՅՐ.— Համե՞ղը:

ԾԱՌԱ.— Համեղը, իհարկե, համեղը... Փափուկ, շագանակագույն, աշխարհի ամենահամեղը...

Հայրը և ծառան դանդաղ հեռանում են կենտրոնական դռնով:

8

Տղամարդը և աղջիկը նայում են միմյանց:

ԱՂՋԻԿ.— Սատանան գլուխ չի հանի... Իսկապես, սատանան գլուխ չի հանի... Արտաքինից այնքան ամբարտավան է, իրեն վեհանձն է պահում, իսկ իրականում որքան խարդախ մարդ է:

ՏՂԱՄԱՐԴ.— Դեռ լավ է, որ երկերեսանի չէ...

ԱՂՋԻԿ.— Նա՞ երկերեսանի չէ: Այն Լ. ինչ երկերեսանի է, ամեն ինչում կեղծ է:

ՏՂԱՄԱՐԴ.— Եթե ամեն ինչում կեղծ է, ուրեմն ընդհանրապես դեմք չունի... Իսկ դու ասում ես «երկերեսանի»:

ԱՂՋԻԿ (քմծիծաղով).— Ես չեմ կատակում... Այնտեղ, ուր ես ապրում եմ, այդպիսի տպեր՝ ինչքան ուզում ես:

ՏՂԱՄԱՐԴ.— Նա քեզ վճարե՞ց:

ԱՂՋԻԿ.— Ինչպե՞ս, ձեր կինը հանդարտվե՞ց:

ՏՂԱՄԱՐԴ.— Նա քեզ համար չի բարկացել... Պարզապես նրան դուր չէր եկել, թե ինչպես ես ներկայացնում քրոջս:

ԱՂՋԻԿ.— Պայմանները բարենպաստ չէին: Առաջին անգամ երեսուն տոկոսով էի, հիմա՝ նորից երեսուն, ուրեմն կդառնամ վաթսուն տոկոսով:

ՏՂԱՄԱՐԴ.— Ի՞նչ:

ԱՂՋԻԿ.— Ձեր քույրը:

ՏՂԱՄԱՐԴ.— Իսկապես որ... (Նորից ուշադիր նայում է աղջրկան):

ԱՂՋԻԿ.— Չափից շատ է, այո՞:

ՏՂԱՄԱՐԴ.— Այո, թերևս, չափից շատ է... (**Հայացքը փախցնում է և սկսում է քայլել**): Համենայն դեպս, քեզ բավական լավ են վճարել: Եթե քո մեջ հարություն առնե՞ր հարյուրտոկոսանոց քույրս, կինս իրավունք չէր ունենա մի բառ ասելու...

ԱՂՋԻԿ.— Դե լավ: Ոչի՞նչ, եթե զգեստներս այստեղ փոխեմ:

ՏՂԱՄԱՐԴ (**մի պահ մտածելով**).— Դե՛, ինչ կա որ...

ԱՂՋԻԿ.— Երբ աշխատում ես չափից ավելի նմանության հասնել, արդյունքը հակառակն է լինում... Թերևս, դեմքից սկըսեմ... (**Նստում է բազմոցին, պաշուսակը դնում ծնկներից և հայելու մեջ նայելով՝ կոսմետիկայով զբաղվում**):

Տղամարդն ուշադիր հետևում է նրան: Հայելու մեջ նայելով՝ աղջիկը ժպտում է նրան:

ՏՂԱՄԱՐԴ.— Կուզեի, որ դեմքիդ գույնը հնարավորին չափ կենսազրկեիր կանաչ երանգով:

ԱՂՋԻԿ.— Ծատ լավ: Ես ևլ ևմ աղայիսիներին սիրում... Տանել չեմ կարող այդ վարդագույն դեմքերը...

ՏՂԱՄԱՐԴ.— Նրա դեմքի գույնը միշտ նման էր կանաչավուն ապակու: Ծատ ժամանակ է անցել, և ես հստակ չեմ հիշում, բայց...

ԱՂՋԻԿ (**աչքի տակից նայելով**).— Այնուամենայնիվ, ես կարգին չեմ հասկանում... Արդյոք պե՛տք է այս ներկայացումը... Ինձ համար, իհարկե, միևնույնն է, բայց...

ՏՂԱՄԱՐԴ.— Միանգամայն ճիշտ է... Ես ինքս էլ կարգին չեմ հասկանում, թե ինչիս է պետք այս ամենը, բացի նրանից, որպեսզի մեկ անգամ ևս խոսեմ հորս հետ, ուշաոհր լսեմ նրան... Որպեսզի հորս հետ զրուցելու առիթ գտնեմ, ես ուզում եմ խոսել նրա հետ. մի խոսքով, անել դրություն է ստացվում:

ԱՂՋԻԿ.— Դուք սասցիք «զրուցել»: Դուք նրա հետ խոսելու եք այնպես, ինչպես առա՞ջ էիք խոսում:

ՏՂԱՄԱՐԴ.— Ոչ... Այժմ խոսակցությունն ավելի որոշակի է լինելու... Չէ որ սա վերջին հնարավորությունն է:

ԱՂՋԻԿ (**ծիծաղելով**).— Կարծես ձեր զրուցակիցը նորմալ մարդ է:

ՏՂԱՄԱՐԴ (**անակնկալի եկած**).— Ինչո՞ւ մի քանի տասնյակ ռուպեների ընթացքում, որոնք ձգվում են նույն ճանապարհով, ինչպես ասեղը փչացած ձայնակավառակի վրա, նա

իրոք առողջ է: Այդ թոպեներին ռեալ իրականությունը երազ է թվում...

ԱՂՋԻԿ.— Այնուամենայնիվ, դուք ձեր հոր որդին եք:

ՏՂԱՄԱՐԴ.— Հիմա դուք ամեն ինչ նորովի՞ եք ուզում մեկնաբանել: Բայց որքան էլ դա ցավալի է, ամեն ինչ այնպես անխոով չէ, ինչպես թվում է: Ամեն բան տարօրինակ է և կասկածելի: Ինչ-որ անբացատրելի զգացում էլեկտրական հոսանքի նման լիցքավորել է մարմինս:

ԱՂՋԻԿ.— Էլեկտրական հոսանքի նման զգացո՞ւմ:

ՏՂԱՄԱՐԴ.— Հենց այդպես... Վայրենի դաժանության զգացում... Նույնիսկ հանգուցյալ քրոջս նկատմամբ եղած կարեկցանքի զգացումը խառնվում է նրա հետ կապված ամեն բան փշրելու ցանկությանը...

ԱՂՋԻԿ.— Եթե խոսքը փխրուն բաժակի մասին է, այն դժվար չէ փշրել:

ՏՂԱՄԱՐԴ.— Գուցե և ես ուզում եմ փշրել այդ ամենը, որովհետև դրանք հեշտ է փշրել:

ԱՂՋԻԿ.— Չափազանց ուժեղ սերը հարշուրապատիկ սարսափելի և ատելությունից:

ՏՂԱՄԱՐԴ.— Այո, թեև, կարելի է այդպես ասել... Հավանաբար, հարս դեմ ելած, բայց չձախաղած ատելությունն իմ մեջ սրտգեղ և քրոջս դեմ:

ԱՂՋԻԿ (ավարտելով կոաճկոթիկան).— Դե, ինչպե՞ս է... Վաթսուն տոկոսանոց քույր... Փոքր-ինչ փոխված նախորդ անգամվա համեմատ, բայց և այնպես...

ՏՂԱՄԱՐԴ (անտարբեր).— Լավ է...

ԱՂՋԻԿ.— Ճիշտն ասած, պատասխանն անտարբեր էր:

ՏՂԱՄԱՐԴ.— Չուր ես այդպես ասում...

ԱՂՋԻԿ (հանդգնորեն).— Ել ռոպես սուպացույց, հետո դուք կօանկանաք փշրել ինձ ինչպես բաժակ:

ՏՂԱՄԱՐԴ.— Եթե բախտն այդպես թեքվի:

ԱՂՋԻԿ (ձեռքերը տարածելով՝ մեջքով շրջվում է նրա կողմը).— Չե՞ք օգնի զգեստներս փոխում:

ՏՂԱՄԱՐԴ.— Թող, խնդրում եմ:

ԱՂՋԻԿ.— Չե՞ք ուզում խմել հարություն ասած ձեր քրոջ կե-
Ըացը:

ՏՂԱՄԱՐԴ.— Ցավոք, շիշը տարան:

ԱՂՋԻԿ.— Ինձ մոտ մեկ ուրիշը կա... (Պայուսակից հանում է շիշը և գողունի նաչում շվարած տղամարդուն): Դուք, իհարկե, կներեք ինձ:

ՏՂԱՄԱՐԴ (շվարած).— Ոչինչ...

ԱՂՋԻԿ.— Ես ուզում էի տուն տանել, բայց ավելի լավ է, եկեք այստեղ խմենք...

ՏՂԱՄԱՐԴ (շփոթված՝ բացելով շիշը).— Չվարճալի բան ես մտածել՝ թաքցնել շիշը...

ԱՂՋԻԿ.— Բարին ու չարը, հավանաբար, իմ մեջ չեն զարգացել: Հաճախ եմ դա ինձ ասում:

ՏՂԱՄԱՐԴ (լցնելով բաժակը).— Առաջինը՝ դու: Հերթով ենք խմելու:

ԱՂՋԻԿ (կեսը խմելով՝ բաժակը վերադարձնում է նրան).— Ես էլի աղմուկով կույ տվեցի:

ՏՂԱՄԱՐԴ.— Ես այն ժամանակ պարզապես գրգռված էի: (Խըմում է):

ԱՂՋԻԿ.— Սարսափելի ոչինչ չկա... Եթե ես լինեի, ավելի շատ կբարկանայի...

ՏՂԱՄԱՐԴ.— Որովհետև չէր հաջողվել տաս րոպեում հազարից ավելի իեն ստանալ, այո՞:

ԱՂՋԻԿ.— Հետաքրքիր է, ինչքա՞ն փող ունեք:

ՏՂԱՄԱՐԴ.— Հասկանում ես...

ԱՂՋԻԿ.— Հարյուր միլիոն՞:

ՏՂԱՄԱՐԴ.— Հասկանում ես...

ԱՂՋԻԿ.— Ուրեմն ինչքա՞ն, տաս անգամ ավելի՞:

ՏՂԱՄԱՐԴ.— Ենթադրե՛նք...

ԱՂՋԻԿ (հառաչելով).— Ինչո՞ւ եմ հարցնում... Դա նույնպիսի հիմարություն է, ինչպես հաշվելը՝ թե ես որքան արժեմ:

ՏՂԱՄԱՐԴ.— Էլի կխմե՞ս:

ԱՂՋԻԿ.— Կխմեմ:

ՏՂԱՄԱՐԴ (անհանգստացած).— Ի՞նչ է Յագին այնտեղ բզբըզում: (Լցնում է բաժակը ու մեկնում աղջկան):

ԱՂՋԻԿ.— Իսկ դուք, պարզվում է, ավելի վախկոտ եք, քան ես կարծում էի:

ՏՂԱՄԱՐԴ.— Վախկո՞տ:

ԱՂՋԻԿ.— Իմ կարծիքով այժմ արդեն անհանգստանալու կարիք չկա:

ՏՂԱՄԱՐԴ.— Իսկ ես չեմ էլ անհանգստանում: Բայց, այնուամենայնիվ, մեր ներկա ձեռնարկման հիմքը հայրս է դրեի... Մենք հիմա աճեցնում ենք այն, ինչ նա ցանել է:

ԱՂԶԻԿ.— Սերմեր ցանելը գործի կեսն է: Եթե չսպարարտեցնես, չքաղհանես, մի խոսքով, ինչպես հարկն է շխնամես այն, ինչ ցանել ես, բերք չես հավաքի:

ՏՂԱՄԱՐԴ.— Այո, ես անգործ չեմ մնացել...

ԱՂԶԻԿ.— Եթե ձեզ նման հարուստ լինեի, ջարդուփշուր կանեի՞ ինչ որ ձեռքս ընկներ: Բայց ձեզ մատով իսկ չէի դիպչի:

ՏՂԱՄԱՐԴ.— Դրանք տարբեր բաներ են:

ԱՂԶԻԿ.— Նույնն են:

Հաշորդ երկխոսությունը իրարից բացարձակորեն մեկուսացած երկու մարդկանց գրույց է: Տղամարդը հույս չունի, թե աղջիկը կհասկանա իր ասածը, իսկ աղջիկը նույնիսկ չի էլ փորձում հասկանալ:

ՏՂԱՄԱՐԴ.— Այժմ լսիր ինձ... Հայրս, իրոք, հարստացավ պատերազմի ժամանակ... Ծիշտ է, օրենքները նա խստագույնապահպանում էր... Նա տղի սկես կպել էր քվանտունյան բանակի¹⁰ պարագլուխներին և դրա շնորհիվ համեստ գործարանատիրոջից աստիճանաբար դարձավ յոթ էլեկտրահայրցային վառարաններով հագեցած ձեռնարկության տեր... Բացի այդ, նրա գործարանը դարձավ հույժ գաղտնի ձեռնարկություն, որը ռազմական արդյունաբերությանը ալյումին, ֆեռոմանգան¹¹ և պայթուցիչ նյութի հումք էր մատակարարում... Հարկ է նաև ավելացնել, որ փշայարերի ետևում, զինված պահակախմբի հսկողության տակ, աշխատում էին հարկադիր աշխատանքի քշված հաշմանդամներ և գերիներ չինական ութերորդ բանակից, որոնք ոչ մի սեն չէին ստանում... Դու, իհարկե, պատկերացնում ես, որ նրանց ստիպում էին արյուն քրտինք մտնել... Բայց դա դեռ ոչինչ... Հայրս տրյուկ արեց. այդ ճանապարհով ձեռք բերած փողերով նա Ծապոնիայում գնում էր հումքի անբավարարության պատճառով մեկը մյուսի ետևից փակվող էլեկտրահայրցային գործարանները և դրանք տեղափոխում լեռնային շրջանները, ուր գրեթե բացառված էր օդային հարձակումների վտանգը... Թվում էր, նա գուշակում է պատերազմի ելքը... Եվ ի՞նչ... Ամեն ինչ ստացվեց այնպես, ինչպես նա ենթա-

դրում էր... Փաստորեն հայրս խժոեց պետությանը... Բայց ոչ ոք ինձ չի մեղադրի մեր կապիտալների համար... Ի՞նչ է պետությունը: Արդյոք խժոված լինելու իր ճակատագրից գոհ ցուլ չէ՞... Իսկ եթե այդպես է, ժողովուրդը ևս, համա՛միտ իր պետությանը, ճիշտ էր համարում այն ամենը, ինչ հայրս անում էր... Բավական է ճապոնացին իրեն ճապոնացի անվանի, և նա արդեն ստիպված է արդարացնել հորս գործողությունները... Մի խոսքով, ամեն ինչ լավ է... Բայց արդյոք շա՛տ չէ լավ: Եվ ո՞վ իր վրա կվերցնի պատասխանատվությունը միլիոնավոր զինվորների թափած արյան համար... Այդ զինվորներից մեկը, որ թափեց իր արյունը, նաև իմ ավագ եղբայրն էր... Գուցե հայրս այդ արյունը պա՛րտք վերցրեց, կամ՝ հակառակը, պա՛րտք տվեց... Եվ եթե այդ գործարքում պետությանը խաղընկեր չհամարենք, ուրեմն պատասխանատվություն, որպես այդպիսին, մեր աշխարհում ընդհանրապես գոյություն չունի... Հետևաբար, միանգամայն բնական է, որ հայրս անխոցելի մնաց... Քանի որ պետությունը պատասխանատվության չի ենթարկում, ապա և՛ պատերազմը, և՛ որդու ու դստեր սպանությունը գնդաստեղի ծակոցից ավելի ցավ չեն պատճառում... Ամեն ինչ հրաշալի է... Իսկ եթե անմեղ է հայրս, ավելի քան անմեղ եմ ես... Գեղեցիկ դատողություն... Բայց ժամանակ առ ժամանակ ինձ համակում է տառապալից տազնապր... Բավական է ճապոնացին իրեն ճապոնացի անվանի, և նա արդեն ստիպված է ներել նաև ինձ. բայց դա ամենաքիչը ծիծաղելի ու դաժան չի՞ հրնչում... Ես անտանելի ամոթ եմ զգում այն բանի համար, որ ճապոնացի եմ:

ԱՂՋԻԿ.— Դատարկ բան է: Ամաշելու այլևս ոչինչ չունեք: Աշխարհում շատ մարդիկ կան, որոնք կուզեին ճապոնացի լինել:

ՏՂԱՄԱՐԴ.— Այդ ամենն այնքան էլ հեշտ չէ... Չէ որ ես հորս պես չեմ տառապում՝ ժխտման հիվանդությամբ... Այն պահին, երբ խոսվությունը մոտեցավ, և պետությունը՝ կորստի մատնրված այդ ցուլը, դարձավ անհուսալի, հայրս թաքնվեց ժխտման հիվանդության ետևում և կանգնեցրեց ժամանակը... Բոլորովին անհավատալի է, որ օդանավակայանից չգալին նրա ետևից... Հետևաբար պետք է անվերջ սպասել, քարա-

նայով այն ակնթարթին... Եվ եթե դեպի ապագան տանող ճանապարհը նրա համար փակ է, ապա լոկ այն պատճառով, որ նա թաքնվել է պողպատե ծածկոցափեղկերով ամրոցում... Բայց այդ ամենը ինձ համար չէ... չէ որ ես նորմալ մարդ եմ... ԱՂՋԻԿ.— Ես նույնպես խելագար չեմ, բայց ես էլ ժխտման հիվանդություն ունեմ... Դրա համար էլ շատ եմ սիրում բարձրանալ վեր... **(Նստում է բազմոցի թիկնակին):**

ՏՂԱՄԱՐԴ.— Իսկ դու չե՞ս վախենում այնտեղից ցած նայել:

ԱՂՋԻԿ.— Ոչ: Դրան կարելի է ընտելանալ: Մեկ ուրիշ բան է սարսափելի. սարսափելի է մտածել, որ վաղ թե ուշ գլորվելու ես ներքև: Իսկ քանի դեռ վերևում ես, դա շատ հաճելի է:

ՏՂԱՄԱՐԴ.— Այդ ամենը ոչ մի կապ չունի իմ ասածի հետ...

ԱՂՋԻԿ.— Իսկ իմ կարծիքով ունի... Հաճելի հուզմունք եմ ապրում, երբ կենդանի դեմքով մարդիկ եմ տեսնում... Բայց հիշելով իմ զգացումը, երբ ցած ես գահավիժում, սարստում եմ՝ գլխի ընկնելով, թե որքան կեղծ է նրանց կենդանության մասին իմ տպավորությունը:

ՏՂԱՄԱՐԴ.— Վտանգավոր մտքեր...

ԱՂՋԻԿ.— Դուք այդ չե՞ք զգում:

ՏՂԱՄԱՐԴ.— Կարող եմ պատկերացնել...

ԱՂՋԻԿ.— Ինձ թվում է, մեկը միայն մի բանով ենք նման... Ես չի կարող իմ մասնագիտությամբ զբաղվել, կթե բոլորին իմ թշնամիները չհամարելի... Առաջին անգամ ես կարողացա ազատ տիրապետել իմ մարմնին այն ժամանակ, երբ ինձ շրջապատողներին իմ թշնամին դարձրի...

ՏՂԱՄԱՐԴ.— Թվում է, ես դեռ ընդունակ չեմ դրան...

Կենտրոնական դռան ետևում աթոռի աղմուկ է լսվում:

Վերջապես սկսվե՞ց:

ԱՂՋԻԿ.— Ձեր փոխաբեն ես ծերուկին դուրս կբերեի իր ամրոցից և բոլորի առաջ կհայտարարեի դրանով:

ՏՂԱՄԱՐԴ.— Քանի անգամ եմ ասել՝ անհնարին է նրան այնտեղից դուրս բերել:

ԱՂՋԻԿ.— Կարծում եմ, որևէ միջոց կգտնվի: **(Գնում է ուղիղ դեպի տղամարդը):**

ՏՂԱՄԱՐԴ **(կողմ քաշվելով)**.— Անհնարին է:

Հաչոնվում է ծառան:

ԾԱՌԱ **(շուտասելուկի պես)**.— Խնդրում եմ նախապատրաստվել:

ՏՂԱՄԱՐԴ.— Ամեն ինչ կարգի՞ն է:

ԾԱՌԱ.— Այո... Հաջորդ երթային ինքնաթիռը ինն անց հիսուն-
ուրթին...

ՏՂԱՄԱՐԴ (նայելով ժամացույցին).— Ընդամենը յոթ-ուրթ րոպե
է մնացել... Ծտապենք: **(Գնում է դեպի աջ):**

ԱՂԶԻԿ.— Գուցե ե՛ս էլ այնտեղ զգեստափոխվեմ:

ՏՂԱՄԱՐԴ (կիսահաստատական).— Դու կարող ես և չշտապել...
Աղջիկը տղամարդու ետևից հեռանում է աջ կողմում:

9

Դռան ետևում հոր կամաց ոտնաձայները:

ԾԱՌԱ.— Կնոջ հոտ է գալիս, կնոջ, կնոջ... **(Ճամպրուկները դը-
նում է կենտրոնում: Գրպանից հանում է կեղծամը և շտկելով՝
հագնում):** Ամեն ինչ զարմանալիորեն փոխվեց... Իզուր այդ
աղջկան քարշ տվեցի այստեղ... Իզուր... Եթե առաջ կինը
մերկանում էր, նրան, ինչպես հարկն է, քթակում էին և
վերջ...

Զախ կողմից հանկարծակի մտնում է կինը:

ԿԻՆ (նայելով ծառայի կեղծամին, ապա՝ ճամպրուկներին).— Սա
ի՞նչ է նշանակում:

ԾԱՌԱ (կմկմալով).— Դե... հասկանում եք, ի նշան հրաժեշտի...

ԿԻՆ.— Հիմարություն հիմարությանց: Անմիջապես տարեք այդ
բոլորը, նայելն անգամ զզվելի է... Դա արդեն չափից ավելի
է, Յագի-սա՛ն. հեկն նոր աղախինն ասաց, որ այդ գարշելի
աղջիկն արդեն գրեթե վերջնականապես հեռացել էր, իսկ
դուք վերադարձրել եք նրան:

ԾԱՌԱ (հանում է կեղծամը և սրբում քրտինքը).— Այո, բայց
ի՞նչ պարոնը հրամայեց...

ԿԻՆ (նայում է աջ կողմը).— Այդ աղջիկն հիմա այնտե՞ղ է:

ԾԱՌԱ.— Հավանաբար: Կարծում եմ, զգեստափոխվում է...

ԿԻՆ.— Զգեստափոխվո՞ւմ է:

ԾԱՌԱ (անվճռականորեն).— Այո, վերջին անգամ հրաժեշտից
ստաջ...

ԿԻՆ.— Ի՞նչը վերջին անգամ:

ԾԱՌԱ.— Դե՛, այդ ծեսը...

ԿԻՆ (դեռևս կասկածանքով).— Տարօրինակ բաներ եք ասում:
Ի՞նչ ծես կարող է լինել առանց գլխավոր գործող անձի:

ԾԱՌԱ.— Ո՛չ, մեր բախտը բերել է. ծեր պարոնի նուպան հիմա կսկսի...

ԿԻՆ վախեցած նայում է կենտրոնական դռանը: **Կամացուկ** ոտնաձայներ են լսվում:

ԿԻՆ.— Իսկապե՞ս:

ԾԱՌԱ.— Եթե ուզում եք, առանց վախենալու կարող եք նայել բանալու անցքից...

ԿԻՆ (թեթևացած).— Այնուամենայնիվ տարօրինակ է... Դուք կարող եք անընդհատ կրկնել, որ դա վերջին անգամ է, բայց չէ՞ որ նա հիվանդ է և ոչինչ չի հասկանում... Իհարկե, դա այն դեպքում, եթե դուք չեք կարող ուզած ժամանակ նույն հարուցել...

ԾԱՌԱ.— Ինչպես կարելի է: Պարզապես պատահական զուգադիպություն է:

ԿԻՆ.— Բայց չէ որ առաջ այդպես անընդմեջ նրա մոտ նուպաներ չէին սկսում, ճի՞շտ է:

ԾԱՌԱ.— Այո... Զարմանալի է: Գուցե նախախնամության կամքն է...

ԿԻՆ.— Ասում ես՝ վերջին անգամ: Լավ: Դրա հետ էլ կհաշտվեմ... Արդեն վաղուց ձեր ներկայացումներն ինձ համբերությունից հանում են... Եթե այստեղ ստեն ինչ հիմնովին վերակառուցվի, միանգամայն հնարավոր է շենքը օգտագործել... Լուսավոր, ընդարձակ դահլիճ...

ԾԱՌԱ (երկչուղով նայում է ժամացույցին).— Ներեցեք, խնդրում եմ, երթային ինքնաթիռի թռիչքին մնում է ընդամենը հինգ րոպե...

ԿԻՆ.— Կարևոր չէ, կանչի՞ր այստեղ այդ աղջկան:

ԾԱՌԱ.— Աղջկա՞ն:

ԿԻՆ.— Երկու րոպեով:

ԾԱՌԱ.— Հիմա կտեսնեն: (**Արագորեն գնում է աջ կողմը**):

ԿԻՆ (մտնենում է պատուհանին, ետ տանում վարագույրը: Զանում է հանգստացնել ինքն իրեն).— Ինչ գեղեցիկ է... Բայց մի քիչ թունավոր է... Նայելը հաճելի է, բայց երբ ուտում ես, փորդ գավում է...

Աջ կողմից ներս է մտնում աղջիկը: **Նրա ետևից՝ ծառան, որը ծածկում է դուռը:**

ԱՂՋԻԿ.— Դուք ինձ կանչե՞լ եք:

ԿԻՆ (անբարյացակամորեն).— Ախ ահա թե որտեղից է էծանագին օծանելիքների և վիսկիի հոտը...

ԾԱՌԱ (հապշտապ հատելով սենյակը).— Ներեցեք, խնդրում եմ, ես պետք է անջատեմ օդորակիչը... **(Հեռանում է):**

ԱՂԶԻԿ (հարմարեցնելով նրա տոնիկն).— Կարելի՞ է մի քիչ արագ: Ժամանակ չկա:

ԿԻՆ.— Բավականին ազատ եք խոսում:

ԱՂԶԻԿ.— Ես ավելի քան վաթսույն տոկոսով տանտիրոջ քույրն եմ... Հետևաբար, դուք իմ հարսն եք...

ԿԻՆ.— Միգուցե կթողնե՞ք ձեր հանդգնությունը:

ԱՂԶԻԿ.— Միգուցե կասե՞ք, թե ինչու եք կանչել:

ԿԻՆ (իրեն զսպելով).— Ամուսինս որքա՞ն է խոստացել ձեզ վճարել:

ԱՂԶԻԿ.— Դրա մասին, նա ստույգ, որ դեռ կպայմանավորվենք...

Բայց ես կարծում եմ, որ նա քսակը կարգին կբացի:

ԿԻՆ.— Իսկ եթե ես ձեզ երկու անգամ ավել վճարեմ, կկատարե՞ք իմ խնդրանքը:

ԱՂԶԻԿ.— Նայած թե ինչպիսին կլինի խնդրանքը...

ԿԻՆ.— Ես ուզում եմ, որ դուք անմիջապես հեռանաք, հենց որ ավարտվի ներկայացումը:

ԱՂԶԻԿ.— Չեմ հասկանում: Ինչու...

ԿԻՆ.— Ծատ լավ հասկանում եք: Հատկապես դո՛ւք, մի մարդ, որ լիտիաբար ներխուժում է օտար տուն և նույնիսկ կոշիկներով...

ԱՂԶԻԿ.— Ավելի լավ է, ասեք ոչ թե «կոշիկներով», այլ «լրիվ մերկ»:

ԿԻՆ.— Լավ, ես ձեզ երեք անգամ ավել կվճարեմ:

ԱՂԶԻԿ.— Իսկ դուք ի վիճակի՞ եք այդքան վճարելու:

ԿԻՆ.— Թողեք ձեր հանդգնությունը:

ԱՂԶԻԿ.— Դուք, հավանաբար, այնքան հարուստ եք, որ ամեն օր մարգարտի փոշիներ եք խմում. չէի՞ք ցանկանա ինձ հետ համեմատվել մերկ վիճակում:

ԿԻՆ.— Այդպես... Ուրեմն երեք անգամ ավելին ձեզ չի բավարարում:

ԱՂԶԻԿ.— Բարին ու չարը իմ մեջ բոլորովին չեն զարգացել...

ԿԻՆ (չնայելով նրան).— Խնդրում եմ ձեզ... Մի քարկոծեք խեղճ,

թրջված շնիկին... Եթե ես փոքր-ի՞նչ անբաղաբավար եղա
ձեր նկատմամբ, ներեցեք...

ԱՂՋԻԿ.— Վե՛րջ տվեք: Ես ինքս չեմ սիրում ներողություն խընդ-
րել և ատում եմ, երբ ինձանից են խնդրում:

ԿԻՆ.— Դուք, փողից բացի, էլի ինչ-որ բա՞ն եք ակնկալում նրա-
նից... Դա չի լինի... Հույսեր մի՛ փայփայեք:

ԱՂՋԻԿ.— Կտեսնենք:

ԿԻՆ (հուսահատ).— Ինչ չարն եք դուք... Այո, չար... Դուք մի-
այն ուրախանում եք, տեսնելով թե ինչպիսի դժվարին կացու-
թյան մեջ ենք մենք... Բայց դա ձեզ մի սենի օգուտ գոնե
կբերի՞... Լավ մտածեք... Մի՞թե չեք հասկանում, որ միակ
արժեքավոր բանը փողն է...

ԱՂՋԻԿ.— Չէ որ ես արդեն ասացի, կտեսնենք:

Կինը լուռ է:

Ձախ կողմից ներս է մտնում ծառան:

ԾԱՌԱ (անհանգստացած).— Արդեն համարյա ժամանակ չի մը-
նում...

ԱՂՋԻԿ.— Գալիս եմ... (Շրջվում է և հեռանում աջ կողմում):

ԾԱՌԱ.— Տիկի՛ն...

ԿԻՆ (վիճելու պատրաստ տրամադրությամբ).— Այս ամենը ան-
մրտությունն է... Մանկական թոթովակն է: Բայց դա ինձ չի
վերաբերում: Եվ եթե թեկուզ մի բան ասեմ, թող պայթեմ օ-
ճառի պղպջակի պես:

ԾԱՌԱ.— Այո, տիկին... (Ետ է տանում վարագույրները և պալը-
զում):

ԿԻՆ (ձայնը ցածրացնելով).— Դե լավ... Ես որոշել եմ չխառնը-
վել... Բայց պետք է ավարտեմ խոսակցությունս այդ աղջկա
հետ: (Գնում է աջ, նրա ետևից՝ ծառան):

10

Բեմում ոչ ոք չկա: Ծարժիչների մոտեցող աղմուկ: Լույսն
առկայծում է ու մարում: Կենտրոնական դռնից ներս է մըտ-
նում հայրը: Աղմուկն հեռանում է: Ներկայացվող պատկերը,
որ երկրորդի կրկնությունն է, պետք է խաղալ առավել չա-
փազանցված ու շինծու:

ՀԱՅՐ (վրդովված).— Ժամանեցին: Ինչ պատահեց լույսին: Որևէ
մեկը կա՞ այստեղ: Ի՞նչ պատահեց:

ԾԱՌԱՅԻ ԶԱՅՆԸ.— Հիմա, մի բոպե:

Աշից, գրպանի լապտերիկը ձեռքին, մտնում է ծառան: Ութը մոմ է տեղադրում սենյակում՝ յուրաքանչյուր մոմակալի մեջ երկուական և մեկը մյուսի ետևից վառում:

ՀԱՅՐ.— Էլեկտրախցանները վառվեցին:

ԾԱՌԱ.— Ո՛չ, ամբողջ շրջանում անջատել են Էլեկտրականությունը:

ՀԱՅՐ.— Ենթակայանի այդ տպերը փախել՞ են:

ԾԱՌԱ.— Քաղաքի հյուսիսային մասում խոռվություն է հարձակվում են ոստիկանական բաժանմունքների վրա...

ՀԱՅՐ.— Հենց նոր ինքնաթիռները թռան հարավ, չէ՞:

ԾԱՌԱ.— Միանգամայն ճիշտ է...

ՀԱՅՐ.— Ճապոնական ուղևորական ինքնաթիռներն են դրանք:

ԾԱՌԱ.— Այո, հավանաբար, դուք իրավացի եք...

ՀԱՅՐ.— Ի՞նչ ես հապաղում, զանգահարիր:

ԾԱՌԱ.— Հեռախոսը չի աշխատում...

ՀԱՅՐ.— Որտե՞ղ է Կաձուխիկոն:

ԾԱՌԱ.— Թույլ կտա՞ք կանչել:

ՀԱՅՐ.— Կանչիր:

Ծառան հեռանում է աջ դռնով:

ՀԱՅՐ (հերթով փորձում է ճամպրուկների ծանրությունը: Հետո հանկարծ փչում է մոմերի կեսը).— Ծռայլություն:

Ներս է մտնում տղամարդը՝ նայելով դռանը. նրա ետևից՝

Ծառան:

ՏՂԱՄԱՐԴ.— Դու ինձ կանչե՞լ ես:

ՀԱՅՐ.— Դե ինչ, արդեն որոշե՞լ ես:

ՏՂԱՄԱՐԴ.— Հա՛յր, ինչո՞ւ չես ուզում մե՛նակ գնալ:

ՀԱՅՐ.— Ես երկու տեղ ունեմ:

ՏՂԱՄԱՐԴ.— Ուրեմն Տոսիկոյին վերցրու քեզ հետ:

ՀԱՅՐ.— Ինչի՞ս է պետք այդ թույլ աղջիկը:

ՏՂԱՄԱՐԴ.— Իսկ ես, ուրեմն, պե՞տք եմ... Տարօրինակ է...

Հանգիստ խղճով ընտանիքին լքող մարդն ինքն է հույս դրնում ուրիշի օգնությանը... Գեղեցիկ է, չէ՞:

ՀԱՅՐ.— Քեզ ո՞վ ասաց, թե քո օգնությունը պետք է:

ՏՂԱՄԱՐԴ.— Չասացի՞ր:

ՀԱՅՐ.— Քո ուժից ուզում է օգտվել այս ճամպրուկների պարունակությունը:

ՏՂԱՄԱՐԴ.— Բայց, հա՛յր, մենք տանուլ ենք տվել պատերազմը:

ՀԱՅՐ.— Հիմարություն: Թող որ մենք տանուլ ենք տվել պատերազմը. պետությունը չի մեռել: Միայն հեղափոխությունն է ընդունակ սպանելու պետությանը:

ՏՂԱՄԱՐԴ.— Վերցրու թեկուզև իմ աշակերտակիցներին. միայն նրանցից, որոնց մասին գիտեմ, սպանված է ութ մարդ: Եթե պատերազմն այդքան դատարկ բան էր, ինչի՞ համար էր այդքան արյունը:

ՀԱՅՐ.— Որովհետև դա պատերազմ է:

ՏՂԱՄԱՐԴ.— Ես տանել չեմ կարող, որ վաղը երեկվա եղածի շարունակությունն է:

ՀԱՅՐ.— Կարող ես տանել, թե՛ ոչ, վաղը կերևա: Համենայն դեպքս, Ամերիկյան թույլ չի տա, որ Ճապոնիայում հեղափոխություն լինի:

Աջ կողմից կամացուկ երգ է լսվում. բառերը չեն հասկացվում:

ՏՂԱՄԱՐԴ.— Օ՛, մայրիկի օրորոցայինը...

ՀԱՅՐ.— Այն ինձ համար այնքան էլ հաճելի չէ:

ՏՂԱՄԱՐԴ.— Պատերազմում զոհված եղբայրս մայրիկի համար դարձել է փոքրիկ երեխա, նի՞շտ է:

ՀԱՅՐ.— Հերիք է շատախոսես: Ես ուզում եմ, որ հենց դու հասուն լինես:

ՏՂԱՄԱՐԴ.— Երեխայի համար տխրելը բոլորովին էլ հիմարություն չէ: Համենայն դեպս, Տոսկոն երբեք թեզ չի ների, հա՛յր:

ՀԱՅՐ.— Ի՛նչ արած... Չի ուզում ներել, թո՛ղ չների... Թո՛ղ առի, դա ինձ չի անհանգստացնում... Դու էլ պետք է դրան վարժվես:

ՏՂԱՄԱՐԴ (այլ տոնով).— Հա՛յր, նորից ասա:

ՀԱՅՐ.— Ինչի՞ մասին:

ՏՂԱՄԱՐԴ.— Ատելություն...

ՀԱՅՐ.— Դա ինձ չի անհանգստացնում...

ՏՂԱՄԱՐԴ.— Բայց ինչո՞ւ ես ուզում այդքան մեճակ լինել:

ՀԱՅՐ.— Վերցրու ցանկացած շինություն. որքան մոտենում ես տանիքին, այնքան բնակելի տարածությունը փոքրանում է:

ՏՂԱՄԱՐԴ.— Ահա թե ես ինչու եմ դատապարտված հավերժական վախի:

ՀԱՅՐ.— Քեզ նման թուլական մարդը ավելի շուտ կկործանվի, քան թե կհասնի նպատակին:

ՏՂԱՄԱՐԴ (ատելությունը).— Քաջություն ունենալ տանելու շրջապատի ատելությունը, բոլորին թշնամի համարել, այնքան մեռակ լինել, որ նույնիսկ ընտանիքը դժվարանա պատկերացնել այդ մեղությունը,— միայն այդպես կարելի է այնպիսի մարդ դառնալ, որին անգոր է խեղել անգամ պատերազմը:

ՀԱՅՐ.— Հերիք է շատախոսես: Այո, դե՛, կանչի՛ր Տոսիկոյին:

ՏՂԱՄԱՐԴ.— Ինչի՞դ է պետք նա:

ՀԱՅՐ.— Ավելի լավ է լսել անմիջականորեն շահագրգռված մարդուն... Թող ինքը հաստատի, որ միանգամայն սուտ է, թե ես այնքան եմ ուզում մեկնել, որ գործում եմ՝ առանց քեզ բանի տեղ դնելու... Յագի՛, շո՛ւտ կանչիր Տոսիկոյին:

ՏՂԱՄԱՐԴ.— Սպասիր... (Կանգնեցնում է ծառային): Հա՛յր, այն ժամանակվանից ես շատ եմ մտածել: Դու ի՞նչ ես եղել ինձ համար, հա՛յր:

ՀԱՅՐ (շփոթված).— Մի՞թե պարզ չէ: Ծնող:

ՏՂԱՄԱՐԴ.— Այդ իմաստով, ճիշտ է, դու իմ ծնողն ես՝ ոչ ավել, ոչ պակաս... Բայց չէ որ ամենայն լրջությամբ ես մինչև այժմ հավատացել եմ քո անխոցելիությանը, հա՛յր...

ՀԱՅՐ.— Անխոցելիություն՞ն:

ՏՂԱՄԱՐԴ.— Բայց մի կին ինձ հուշեց զգուշանալ այդպիսի մոլորությունից... Եթե, անշեղորեն հետևելով քո պատվիրաններին, որոշել եմ բոլորին դարձնել իմ թշնամին,— ինքնին պարզ է, որ նաև ձեզ,— սպա ես էլ կարող եմ քեզ պես ուժեղ լինել, քեզ պես անխոցելի, հա՛յր:

ՀԱՅՐ.— Ի՞նչ կին:

ՏՂԱՄԱՐԴ.— Աղջիկը, որ մերկ պարում է. նա եկել է ապագայից, որը կսկսվի տասնյոթ տարի հետո:

ՀԱՅՐ (փորձելով խուսափել տղամարդու ճնշումից).— Հիմար շատախոսություն է, չեմ ուզում դրա վրա ժամանակ վատնել:

ՏՂԱՄԱՐԴ (ուշադրություն չդարձնելով).— Եվ այդ ժամանակ ես մտածեցի... Եթե ես այդքան ուժեղ եմ, ապա անկասկած կարող եմ հաղթել հորս... Բայց հարցը ահա թե որն է՝ ինչպե՞ս հաղթել... Մի՞թե հնար չկա ժխտման ամբողջից քեզ դուրս բերելու... Չէ որ յուրաքանչյուր ամբոցում էլ, եթե փրկություն, կարելի է շինարարական վրիպակներ գտնել...

ՀԱՅՐ (բարկացած).— Գուցե, այնուամենայնիվ, վե՛րջ կուսա շատախոսությանը: Չէ՞ որ արդեն ժամանակ չի մնում:

ՏՂԱՄԱՐԴ.— Սպասիր, խնդրում եմ... Վերջապես գտա... Ուզում ես, հա՛յր, ընդամենը մեկ բառով կործանեմ քո ամբողջը, որ սյողպատից է թվում... **(Դադար):** Մարդը օդանավակայանից աչն ժամանակ եկավ քո ետևից:

ԾԱՌԱ (գայրույթով).— Ինչպես կարող եք այդպիսի բան ասել:

Տղամարդն ուշադիր նայում է հորը:

ՀԱՅՐ (գրգռված).— Եկա՞վ... Ինչո՞ւ այդ մասին անմիջապես չասացիր... Որտե՞ղ է նա... Ծուտ կանչեք նրան:

ՏՂԱՄԱՐԴ.— Ցավոք, նա արդեն չկա: Ես նրան ետ ուղարկեցի:

ՀԱՅՐ.— Ե՛տ ուղարկեցիր:

ՏՂԱՄԱՐԴ.— Այո, ասացի, որ պլանները փոխվել են, և հայրս որոշել է մնալ...

ՀԱՅՐ.— Հիմա՛ր: **(Հանկարծակի ճշալով հարձակվում է տղամարդու վրա):**

Տղամարդը հրում է հորը. վերջինս օրորվում է, ոտքով դիպչում է ճամպրուկին և վայր ընկնում:

ՏՂԱՄԱՐԴ (ծնկի է գալիս և նայում է նրա դեմքին).— Կարծես թե նրա կյանքին ոչինչ չի տարաւում... **(Ծառային):** Տար բազմոցի վրա:

Ծառան փորձում է բարձրացնել հորը, վերջինս հառաչում է:

ՏՂԱՄԱՐԴ (բացում է աջ դուռը).— Դուք երկուսով ներս չէի՛ք գա:

ԿՆՈՋ ՁԱՅՆԸ.— Երկուսո՞վ:

ՏՂԱՄԱՐԴ.— Այո, երկուսով:

Մտնում է կինը, նրա ետևից՝ աղջիկը, որը հագնվել է Տոսիկոյի նման: Ծառան խոժոռվում է՝ մեղադրանք ու շփոթմունք արտահայտելով:

ԱՂՋԻԿ.— Ի՞նչ է պատահել: Չէ՞ որ քրոջ մուտքն ավելի ուշ էր:

ՏՂԱՄԱՐԴ.— Ես որոշեցի փոխել կարգը:

ԿԻՆ.— Ինչո՞ւ:

ՏՂԱՄԱՐԴ.— Օդանավակայանից եկան, բայց ես ինքնակամ հրաժարվեցի:

ԱՂՋԻԿ (աշխույժ).— Եվ դրանով նրա մոտ խանգարո՞ւմ առաջացրիք:

ՏՂԱՄԱՐԴ.— Կա նետվեց ինձ վրա, և ես նրան թեթև հրեցի,

իսկ նա իսկույն վայր ընկավ և չի ուզում վեր կենալ:

ԱՂԶԻԿ (հաղթանակած).— Հապա նայիր: Իսկ ես ի՞նչ էի ասում:

ՏՂԱՄԱՐԴ.— Այո, ամեն ինչ ըստ քո տեսության ընթացավ:

(Ծառային): Ինչպե՞ս է նա: Օ՛յ, օ՛յ, օ՛յ, ինչպիսի բարկացկոտ հայացք... Հավանաբար, նոպան դեռ չի անցել...

ՀԱՅՐ.— Քոստ՛տ:

ՏՂԱՄԱՐԴ.— Գեղեցիկ արտահայտություն:

ԾԱՌԱ.— Դա արդեն չափազանց է:

ՏՂԱՄԱՐԴ.— Մենք պարզապես դերերս փոխեցինք, ճի՞շտ է, հա՛յր:

ՀԱՅՐ.— Դու խելագարվել ես:

Աղջիկը ծիծաղում է:

ՏՂԱՄԱՐԴ (նույնպես ծիծաղելով).— Պետք չէ ծիծաղել... Յագի՛, մագնիտոֆոնը բեր:

Ծառան հապշտապ հեռանում է աջ կողմում:

ՀԱՅՐ (վերջապես նկատում է կանանց).— Ովքե՛ր են այդտեղ:

ՏՂԱՄԱՐԴ (չարությամբ).— Ըջմարտությունն աստիճանաբար ջրի երես է դուրս գալիս...

ՀԱՅՐ.— Մաշի՛կը և Տոսիկո՛ն: Եվ ինչ-որ տարօրինակ տեսքով...

ՏՂԱՄԱՐԴ.— Ծարունակիր, հա՛յր, դու շատ լավ յուրացնում ես:

ՀԱՅՐ.— Դու, ի՞նչ է, գնորդ կանչո՞ղ ես աշխատում:

ՏՂԱՄԱՐԴ.— Գնորդ կանչողը լավ է... Ի դեպ, դու դեռ ավելի հետաքրքիր բաներ մեզ ցույց կտաս:

ԿԻՆ.— Վերջացրո՛ւ: Դա չափն անցնում է:

Մտնում է ծառան՝ բերելով մագնիտոֆոնը:

ՏՂԱՄԱՐԴ.— Ահա ևս մի ճշմարտություն... Սեղմենք սա, որպեսզի ժապավենը պտտվի:

Թմբուկի ռիթմիկ հնչյուններ: Հետո խոռվության աղմուկ, որն ընդմիջվում է նռնակների պայթյունով և հրացանի կրակոցներով: Հայրը ամբողջովին կծկվում է և կկոցում աչքերը:

(Ավելի ու ավելի դաժանանալով): Դե, ինչպե՞ս է, հա՛յր: Սա հենց այն նույն խոռվությունն է: Պահածոյացրած խոռվություն: Դրա պատրաստումն ինձ վրա քսան հազար իեն նստեց: Խեղկատակային խոռվություն, ուր մի որդ անգամ չսպանվեց:

ՀԱՅՐ.— Դու ինձ չես խաբի:

ՏՂԱՄԱՐԴ.— Այժմ երկրորդ ճշմարտությունը... **(Ետ է տանում**

վարագույրը և մատնացույց է անում լուսավորված փողոցը):
Հիշո՛ւմ ես, այնտեղ կրակ էր երևում... Հրդեհների կրա՞կ...
Սխալվում ես... Տեսողական պատրանք, միրաժ, ուրիշ ոչինչ:
Հայրը նվաղում է, քարանոմ՝ ներքևում փռված նեոնային
լույսերի ծովը տեսնելով:

Յագի՛, լույսը վառի՛ր:

Ծառան զնում է ձախ կողմը:

ՀԱՅՐ (աղաղակում է).— Գրողը տանի, սա երազ է:

ՏՂԱՄԱՐԴ.— Կարծո՛ւմ ես, երազ է: Փորձիր կամթել քեզ:

Հայրը երկյուղով վեր է բարձրացնում շալվարը և կամթում է
իր ոտքը: Խոժոռվում է և անվստահությամբ նայում տղամարդուն:
Հանկարծակի վառվում է լույսը: Հայրը արագորեն փակում է աչ-
քերը:

(Հերթով մոտենում է մոմերին ու փչում): Դու ծանր կացու-
թյան մեջ ընկար... Եթե սա երազ չէ, ապա ինչպե՞ս բացատրել
այս ամենը: Եթե երազ լինե՛ր՝ իրականությանը նման, դեռ ո-
չինչ... Բայց իրականությունը, որ երագի է նման, դժվար է
բացատրել... Մյուս կողմից այդ պատմությունն այն մասին,
որ օդանավակայանից Լկել Լն: Որն է այստեղ ճշմարտու-
թյունը, որը՝ սուտը, գլխի չես բնկնի... Ավելին, գուցե սլար-
տությունը պատերազմում նույնպե՞ս միայն երազ է, հր՞...

Ծառան վերադառնում է:

ՀԱՅՐ.— Սո՛ւտ է... Սո՛ւտ է...

ԿԻՆ.— Ի՞նչ միտք ունի այդ ամենն ասել հիվանդ մարդուն, որին
պատրաստվում են ուղարկել կլինիկա:

ՀԱՅՐ (բացում է աչքերը).— Կլինիկա՞:

ՏՂԱՄԱՐԴ.— Միանգամայն ճիշտ է: Յագի՛, հանի՛ր կեղծամը և
ցույց տուր հորս:

ԿԻՆ.— Վե՛րջ տուր: Դա այլանդակություն է:

ՏՂԱՄԱՐԴ (հրամայելով).— Յագի՛, հանի՛ր:

ԾԱՌԱ.— Լսում եմ...

ԱՂՋԻԿ.— Ես էլ կհանեմ:

Երկուսն էլ հանում են կեղծամները:

ԾԱՌԱ.— Ներեցեք ինձ...

ՀԱՅՐ.— Ես չեմ ուզում այդ տեսնել... Սո՛ւտ է... Ես չեմ ուզում
այդ տեսնել...

ԿԻՆ.— Ինձ այսբանն էլ հերիք է: (Գնում է դեպի ձախ):

ՏՂԱՄԱՐԴ.— Ո՛չ, դու չես գնա: Յագի՛, վերադարձրու նրան:

Ծառան անվճռականությամբ փակում է կնոջ ճանապարհը:

ԿԻՆ.— Մի կողմ քաշվի՛ր:

Ծառան չի շարժվում:

Այդպես... Լավ, միևնույնն է: (**Հրաժարվում է գնալու փորձ անելուց**):

ՏՂԱՄԱՐԴ.— Այո, այստեղ ես եմ հրամայում:

ԿԻՆ.— Եթե դա քեզ համար հաճելի է, խնդրեմ...

Հայրը օրորվելով ոտքի է կանգնում և գնում է դեպի կենտրոնական դուռը:

ՏՂԱՄԱՐԴ (չթողնելով).— Մի՛ գնա:

ՀԱՅՐ.— Թող հանգստանամ...

ՏՂԱՄԱՐԴ (հարձակվելով հոր վրա).— Ո՛չ, ես թույլ չեմ տա, որ դու հանգստանաս: Ես քո դեմ կպայքարեմ այնքան, մինչև իմ դեմ բաց անես ամբողջ դարբասները: Այժմ ես ուրիշ քայլ կանեմ: Հիմա ես հինգ անգամ ավելի Լիելտրահալոցային վառարաններ ունեմ, քան դու ունեիր, հա՛յր: Ամերիկյան մետալուրգիական ընկերության հետ մենք պայմանագիր ենք կնքել Պակիստանում գործարան կառուցելու վերաբերյալ: Ինքնագնաց հրանոթներ ու թեթև տանկեր արտադրող գործարան: Նրանց արտադրության մեջ, անշուշտ, օգտագործվելու է մեր գործարանների արտադրանքը: Ամեն անգամ՝ որևէ կոնֆլիկտի ծագման դեպքում, պատվերի քանակը կտրուկ կաճի: Իսկ կոնֆլիկտներ միշտ կլինեն: Դրամը քաղաքականության մեջ ներդնելը վերջերս շատ շահութաբեր է դարձել:

ՀԱՅՐ.— Վե՛րջ տուր: Ուզո՞ւմ ես ինձ խեղճացնել:

ՏՂԱՄԱՐԴ.— Բոլորովին: Դու իրավացի էիր: Ամեն ինչ եղավ այնպես, ինչպես ասում էիր: Բացի հեղափոխությունից, մեզ, իսկապես, թույլ տվեցին անել այն ամենը, ինչ ուզում էինք: Մենք ուրիշ մահ չենք ուզում, բացի պատերազմում գնդակահարված լինելուց: Մենք բոլորի թշնամին ենք, ու երբևէ մեզ կսպանեն, բայց մինչ այդ կարող ենք ճարպակալել խոզի պես: Վերջապես ես էլ հասկացա, թե որքան գեղեցիկ է կյանքը, երբ շուրջդ բոլորը թշնամիներ են: Հայտնում եմ քեզ, հա՛յր, իմ ամենաջերմ երախտագիտությունը: Հիմա առանց հոր էլ կարող եմ գլուխ հանել. ինձ հաջողվեց դառնալ ճիշտ այնպիսին, ինչպիսին դու ես: Եվ որպես օրինաչափ եզրա-

կացութիւն՝ քո գոյության անհրաժեշտութիւնն իսպառ իմաստագրկլել է: Իմաստագրկլել է նաև քեզ հոգեբուժարանում տեղավորելու մասին կնոջս ցանկութեանը հակառակվելը:

Ամբողջ մենախոսության ընթացքում հայրն անընդհատ կըրկնում է. «Ես չեմ լսում, ես չեմ լսում»:

ՀԱՅՐ (գարնացած).— Հոգեբուժարանում...

ՏՂԱՄԱՐԴ.— Եվ այսպէս, ուզում եմ քեզ ներկայացնել: Իմ կինը, որը պնդում է քեզ հիվանդանոց ուղարկել: **(Մատնացուց է անում կնոջը):**

ՀԱՅՐ.— Վե՛րջ տուր: Ոչինչ չեմ ուզում տեսնել... Ոչինչ չեմ ուզում տեսնել:

ՏՂԱՄԱՐԴ.— Նա խիստ կին է և սպառնում է, որ եթե քեզ չտեղափոխեմ հիվանդանոց, ինձ կզրկի կարողութեան իրավունքից... Եթե ես ու կինս մեր բաժնետոմսերը չմիավորենք, չենք կարող ձեռք բերել վերահսկչական ծրարը... Ահա թե ինչու, որքան էլ դա ծանր է, ես համաձայնեցի քեզ հիվանդանոց ուղարկել... Եվ այդ կերպ ինձ հաջողվեց անժամկետ լիազորագիր ստանալ կնոջիցս... Դա նույնն է, թե անպետք իրեր վաճառել հնավաճառին և կապիտալ դիզել... Կնոջս նրպատակը մեկն է. նա, հալվանաբար, հույս ունի, որ եթե իրեն հաջողվի ինձ ու քեզ բաժանել իրարից, ես կսխալեմ ռեալիստորեն դատել: Ի՞նչ ես կարծում, կի՛ն, ես կարո՞ղ եմ դառնալ այն մարդը, որը քեզ դուր գար:

ԿԻՆ.— Դա ինչ հարց է: Այնպիսի մարդը, ինչպիսին դու ես...

ՏՂԱՄԱՐԴ.— Այո, այլ կերպ չէր լինի: Դե, ահա, հա՛յր, վերջապէս հասանք նաև վերջին ճշմարտութեանը...

ՀԱՅՐ (հոգնած).— Թող ինձ: Ես հանգստանալ եմ ուզում...

ՏՂԱՄԱՐԴ.— Չի՛ կարելի: Ամբողջ այս տասնչորս տարիներին դու հանգստանում էիր: Կես ժամ, առավելագույնը՝ մի ժամ, կդիմանաս:

ՀԱՅՐ (անհանգստացած).— Տասնչորս տարի՞...

ՏՂԱՄԱՐԴ.— Այս աղջիկը... **(Ձեռքը դնում է աղջկա ուսին և հրում առաջ):** Նա ճիշտ որ Տոսկլոն է, այնպէս չէ՞:

Աղջիկը հապշտապ հագնում է կեղծամը և համեստ տեսք ընդունում:

ԿԻՆ.— Խելագար... Իսկական խելագար...

ՏՂԱՄԱՐԴ.— Հա՛յր, չե՞ս ուզում տեսնել, թե նա ինչպէս է պա-

րում: Պարում է բոլորովին մերկ: Մերկ, գալարվելով... Ես
նրան գնել եմ ամրոցի հետ միասին:

ԱՂՋԻԿ (վախեցած).— Իսկապես գնե՞լ է:

ՏՂԱՄԱՐԴ.— Իհարկե, գնել եմ... Ելնելով ստեղծված իրադրու-
թյունից, ես պարտավոր էի քեզ գնել, ճի՞շտ է:

ԱՂՋԻԿ (հաղթական տեսքով շրջվում է դեպի կինը).— Ինձ գը-
նել եմ, դա ստույգ է: Իսկ դուք՝ երեք անգամ: Հետաքրքիր է,
որքա՞ն կվճարի ինձ համար:

Կինը լուռ է:

ՏՂԱՄԱՐԴ.— Ճիշտ է, այս կնոջ ամրոցում գիշերները տարօրի-
նակ տղամարդիկ են հավաքվում, որպեսզի նրան մերկ տես-
նեն: Բայց նա, իմ կարծիքով, բոլորովին էլ չի ստում այդ
գրգռված տղամարդկանց: Դու այդ հաստատո՞ւմ ես:

**ԱՂՋԻԿ (համեստ տեսք է ընդունում, ջանալով մմանվել Տոսիկո-
յին).**— Իհարկե... Չեմ ստում:

ՏՂԱՄԱՐԴ.— Հետաքրքիր՞ր է, հա՛յր: Ինչո՞ւ է նա ստում, որ չի
ստում: Որովհետև ստում է կենդանի մարդկանց: Նա միշտ
ուզում է հասնել ինչ-որ բարձունքի: Եվ շատ է սիրում պատ-
կերացնել վախի այն զգացումը, որը համակում է ցած գա-
հավիժելիս...

ՀԱՅՐ.— Թող ինձ... (Նստում է, նայում, թե որտեղ թաքնվի, որ-
պեսզի ոչ ոք իրեն չտեսնի):

ՏՂԱՄԱՐԴ.— Հայացքդ նորից ցրված է: Մի՞թե նույն վերջա-
ցավ:

ԾԱՌԱ (խղճահարված).— Նա շատ է հոգնել...

ՏՂԱՄԱՐԴ.— Քանի դեռ չի քնել, թող տեսնի, թե նա ինչպես է
պարում: (**Աղջկան**): Երաժշտությո՞ւն:

ԱՂՋԻԿ.— Լավ կլինեք ջազային...

ԿԻՆ.— Դու լո՞ւրջ ես ստում:

ՏՂԱՄԱՐԴ.— Ի՞նչը:

ԿԻՆ (աղջկան).— Ես քեզ եմ դիմում: Դու իրոք պատրաստվո՞ւմ
ես պարել:

ԱՂՋԻԿ (համեստորեն).— Այո, պարելու եմ:

ՏՂԱՄԱՐԴ.— Այս ժապավենը, անշուշտ, հարմար չէ:

ԱՂՋԻԿ.— Իսկ գուցե և հարմար է, հը՞:

ՏՂԱՄԱՐԴ.— Ի դեպ, պայթյունները և մերկ կինը հարազատ եղ-
բայր ու քույր են:

ԿԻՆ.— Դու ամոթ չունես:

ՏՂԱՄԱՐԴ.— Իհարկե, նա ամոթ չունի... Բայց մենք բոլորս էլ՝
ընդհանրապես մարդիկ, զուրկ ենք ամոթից ու հպարտություն-
նից:

ԿԻՆ.— Համենայն դեպս ինձ մոտ դեռ պահպանվել է սեփական
արժանապատվության զգացումը:

ՏՂԱՄԱՐԴ.— Նա չի հերքում իր թերարժեքությունը: Ծի՛շտ է,
հա՛յր:

ՀԱՅՐ (աղերսանքով).— Թողեք գոնե մի փոքր հանգստանամ...

ՏՂԱՄԱՐԴ (վճռականորեն).— Չի կարելի... Ես բոլոր մարդ-
կանց թշնամին եմ... Ինձ համար միևնույնն է, թող ինձ ա-
տեն... (Բղավում է): Տոսիկո՛, պարի՛ր:

Հնչում է մագնիտոֆոնի ձայնը: Հայրը ոտքի է կանգնում և
դժվարությամբ բռնվում բազմոցի թիկնակից:

ԱՂՋԻԿ (տղամարդուն).— Արձակեցեք...

Տղամարդն արձակում է աղջկա զգեստի կոճակները: Աղջիկը
ճարպիկ շարժումով դեն է նետում զգեստը, մնում է մերկ և սկը-
սում է դանդաղ կոտրատվել:

ՏՂԱՄԱՐԴ (բացականչում է).— Հա՛յր, նաչի՛ր: Ամեն ինչ կոր-
ծանվո՛ւմ է... Ամեն ինչ կործանվո՛ւմ է...

Վ ա ր ա գ ո լ յ ր

ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՎ

ԾԱՆՈԹ ԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Ամերիկացի դրամատուրգ Յուջին Գլադսթոն Օ՛Նիլը ծնվել է հոկտեմբերի 16-ին, ռոմանտիկական մելոդրամաների հայտնի դերասան Ջեյմս Օ՛Նիլի ընտանիքում: Հայրը հաճախ էր մեկնում հյուրախաղերի, և ապագա դրամատուրգին դեռ մանկուց վիճակված էր շրջագայել տարրեր քաղաքներում, սովորել զանազան մասնավոր դպրոցներում: Նույնիսկ Փրինսթոնի համալսարանում մի քանի ամիս է սովորել:

1909 թ. ոսկի որսողների մի խմբի հետ Յուջին Օ՛Նիլը մեկնում է Հոնոլուլու, ապա որպես շարքային նավաստի ուղևորվում է Բուենոս-Այրես: Որոշ ժամանակ այստեղ սնալուց, հետո վերադառնում է Նյու Յորք, փորձիկ դերեր կատարում հոր բեմադրություններում, թղթակցում Նյու Լոնդոնի թերթերից մեկին: Թոքախտի սաստկացման պատճառով 1912 թ. շուրջ հինգ ամիս անցկացնում է առողջարանում, որտեղ էլ, ազատ ժամերը նվիրելով ընթերցանությանը, ծանոթանում է Մարքսի ուսմունքին, Ստրինդբերգի և Իբսենի դրամատուրգիային: Վերջիններիս ազդեցությամբ գրում է իր առաջին մեկ գործողությամբ պիեսները: 1914 թ. Հարվարդում հաճախում է դրամատուրգիայի դասընթացներ:

1915 թ. ամռանը Փրովինսթաուն ժամանած մի խումբ ձկնորսական տան ցախանոցում հանպատրաստից ներկայացնում է Յուջին Օ՛Նիլի մեկ գործողությամբ չորս պիեսները, դրանով իսկ նշանավորելով դրամատուրգի և հանդիսատեսի առաջին հանդիպումը: Հաջորդ տարվա ամռանը նույն խմբի մասնակիցները Օ՛Նիլից խնդրում են «Դեպի Արևելք, Կարդիֆ» ռոմանտիկական մելոդրաման, որի ներկայացմամբ նույններ ամսին սկսվում է Նյու Յորքի Փրովինսթաունյան (կամ Մարդուզալ սթրիթի) թատրոնի կենսագրությունը: Հաջողություններն ակնհայտ էին դեռ առաջին թատերաշրջանում, և 1916—1924 թթ. ընթացքում նույն թատրոնում ներկայացվում է Օ՛Նիլի պիեսների մեծ մասը:

Փրովինսթաունյան թատերախումբը որոշակի ծրագիր չուներ, և այս դեպքում արդեն մեծ հնարավորություններ էին ընձեռվում անձնական նախաձեռ-

նության, հետևաբար նաև՝ արվեստագետ-անհատի ստեղծագործական որոնումների համար: Իսկ Յուջին Օ'Նիլը չէր բավարարվում ռոմանտիկ կամ ողբերգական մեղոդրամաներով, անընդհատ որոնում էր՝ հակվելով մերթ դեպի ստրինդբերգյան ճիհիլիզմը, մերթ դեպի ֆրեյդիզմը: Այդուհանդերձ, ստեղծագործական ճանապարհի սկզբին գրված փոքրիկ դրամաները զարգացնում էին տղային արվեստի հիմնական մոտիվներից մեկը՝ կորուսյալ մարդու ողբերգության մոտիվը: Այսպես, «Իեպի Արևելք, Կարդիֆ» պիեսի գլխավոր հերոսը՝ թափառաշրջիկ Յանկը, որը ֆերմերի խաղաղ ու համեստ կյանք է երազում, տեղում է առևտրական նավի վրա, այդպես էլ չհասնելով իր բաղձանքի իրականացմանը: Ծովային Մմիթթին («Լուսինը Կարիբյան ծովի վրա») սեփական տեղը չի գտնում հարբեցողությամբ ու կանանցով տարված մարդկանց մեջ:

Անհատական այս ողբերգություններում բացահայտվում է հասարակության իրական դեմքը, հասարակություն, որն անգոսնում է անհատական յուրաքանչյուր դրսևորում, խեղում մարդկային հոգիները («Ռազմական գործողությունների շրջանում» դրամայի հերոսին կործանում է մարդկանց դաժանությունը. նրան համարում են գերմանական լրտես, խուզարկում, բռնությամբ վերցնում սիրած աղջկա նամակները):

Իրամատուրգի հետագա էվոլյուցիան ուղեկցվում է սոցիալական հարցադրումների խորացմամբ: 20-ականների առաջին կեսին ստեղծված նրա «Ռուկին», «Աննա Քրիստի», «Բրդոտ կապիկը», «Սերը ծիհների տակ» և մյուս պիեսները նշանավորեցին ամերիկյան սոցիալական դրամատուրգիայի ձևավորումը: Այդ առումով, որպես սկիզբ, հատկանշական էր «Աննա Քրիստին» (1921), որը ներկայացնում էր ժողովրդի ծոցից ելած կնոջ կյանքի դրամատիկ պատմությունը: Վաղ գրկվելով մորից և մնալով ազգականների խնամքին, Աննան շատ շուտով կուլ է գնում արդյունաբերական վիթխարի քաղաքին: Սակայն ծովային Մերթ Բերքը սիրահարվում է նրան և, ի վերջո, որոշում ամուսնանալ անբարոյական անցյալով Աննայի հետ:

Յուջին Օ'Նիլը ռեալիստական օբյեկտիվությամբ է պատկերում հերոսուհու մաքառումներով լի, դժվարին կյանքը: Գործող անձանց հետ միասին պիեսում կա նաև խորհրդավոր ու սիմվոլիկ մի կերպար՝ անհեղի ու քմահաճ ծովի կերպարը, որը «Յուջին Օ'Նիլի դրամաներում ավելի հաճախ դառնում է ճակատագրի, Կյանքի, Բնության խորհրդավոր ուժերի սիմվոլ և, որպես այդպիսին, բարդ, խորապես հակասական հարաբերությունների մեջ մտնում մարդու հետ»¹: Ծովային հեռուներից է վերադառնում Աննայի սիրեցյալը՝ վերափոխելով հերոսուհու դառը կյանքը, անդորրելով նրա հոգեկան աշխարհը: Միևնույն ժամանակ ծովի հետ է կապված Աննայի նախկին ողբերգությունը. ծովն է Աննայի հորը՝ Քրիստոֆերսոնին ստիպել դատերը թողնել ուրիշի խնամքին: Սակայն անկախ այն բանից, բարիք է բերել ծովը, թե չարիք, Օ'Նիլի հերոսները ներքուստ կապված են ծովին: «Մեր բոլորիս մեջ թաքնված է ծովի մասնիկը», — նկատում է Աննան:

Ծովի սիմվոլը իր ընդգրկմամբ չի սպառում հեղինակային հարցադրումները: Այն պարզապես միջոց է գաղափարական բովանդակության հիմնահար-

¹ А. Ромм, Американская драматургия первой половины XX века, Ленинград, 1978, стр. 98.

ցերի արտահայտման և հերոսի բարոյ ու հակասական ներաշխարհի բացահայտման համար: Ծովային տարերքը շատ է մեծ հոսարակությանը, որը ոչ միայն ձևավորում է անհատին, այլև որոշում նրա ճակատագիրը: Իսկ վերջինիս խոչընդոտների հաղթահարումը հոգևոր մեծ ուժ ու կամային արժանիքներ է պահանջում:

Դիմումը հոգեբանական փորձարարություններին, որը նպատակ ունի երեվակելու մարդու հոգեկան աշխարհի անտեսանելի շերտերը, հաղորդակցելու այդ աշխարհի ներքին զարթումներին, նախապատրաստվել էր Յուջին Օ'Նիլի նախկին հակումներով: Իսկ դրանք տանում էին դեպի Ֆրեյդի ուսմունքը, գերմանական էքսպրեսիոնիզմը, Էդգար Պոի, Ստրինդբերգի ու Դոստոևսկու ստեղծագործությունը: Թգտագործելով էքսպրեսիոնիզմի որոշ հնարանքներ՝ Օ'Նիլը միաժամանակ մերժում էր էքսպրեսիոնիստական դրամատուրգիայի գեղագիտական շատ սկզբունքներ: Մասնավորապես նշում էր. «էքսպրեսիոնիզմը անհատական բնութագրման արժեքները չի ճանաչում, իսկ ես համոզված եմ, որ գաղափարը կարելի է հասցնել հանդիսատեսին՝ միմիայն այն կերպարներում արտահայտելով»²: Հակառակ այդ ամենին, 20-ականներին ստեղծված «Միապետ Ջոնսը» դրամայում զգալի էր եվրոպական էքսպրեսիոնիզմի ազդեցությունը: Գիեսի գործող անձը մեկն է՝ Ջոնսը, և ամբողջ ստեղծագործությունը հերոսի ներքին մենախոսությունն է, որը բացահայտելով նրա կյանքի պատմությունը, միաժամանակ ներկայացնում է ամերիկյան քաղաքակրթության ուղին: Այդ քաղաքակրթության ձեռքբերումների չափանիշը մարդասպան Ջոնսն է, որի առեղծվածային վախճանը կոչված էր նորովի վերարտադրելու անտիկ դրամատուրգիային խիստ բնորոշ ողբերգական ճակատագրի կոնցեպցիան:

Ժամանակակից իրականությունն ինքն էր պարտադրում դիմել անցյալին, նետադարձ հայացքով ընդգրկել քաղաքակրթության անցած ուղին: Այդ հետազոծում ավելի քան պարզ էին երևում ներկայի արատավոր երևույթների արմատները, մարդու իրավունքների ոտնահարման դրսևորումները: Իսկ բուրժուական Ամերիկայի ողբերգության հիմնական պատճառը Օ'Նիլը տեսնում էր մարդու իրավունքների ոտնահարման, սոցիալական շերտավորման, ծայրաբեվեռների գոյության մեջ: «Բրդոտ կապիկը» պիեսում վիթխարի նավը, որի վերին հարկերում տեղավորվել են ունևորները, իսկ ստորին բաժանմունքներում մրի ու քրտինքի մեջ աշխատում են հնոցապանները, խորհրդանշում է հեճ այդ ծայրաբևեռները: Հնոցում աշխատողներից շատերը գիտակցում են իրենց վիճակի ծանրությունը, յուրովի արտահայտում իրենց բողոքը: Այդ ըմբոստ տրամադրություններով է համակվում նաև պիեսի գլխավոր հերոսը՝ հաղթանդամ Ֆանկը, որը ստեղծագործության սկզբում ներկայանում է քար անտարբերությամբ ու հաշտվողականությամբ: Սոցիալական անարդարությունների գիտակցումը նրա մեջ ատելություն է առաջացնում հասարակության նկատմամբ, որը նրան «բրդոտ կապիկի» դեր էր հատկացրել: Սակայն ոչինչ չի փոխում նաև Ֆանկի ըմբոստացումը: Հրաժարումն իրականությունից և վերադարձը դեպի նախաստեղծ բնությունը ողբերգական ավարտ է ունենում. կենդանարանական այգու վիթխարի գործիլան խեղդում է Յանկին:

² Նույն տեղում, էջ 101:

Ընդհանրապես Օ՛ՆԻԼի ստեղծագործություններին հատուկ են բազմաշերտ հարցադրումները, գաղափարական բազմանշանակ հանգուցալուծումները: Այդ առումով ուշագրավ է «Սերը ծփիների տակ» դրաման (1924), որն իրավամբ համարվում է ամերիկացի դրամատուրգի գլուխգործոցներից մեկը:

Իրամայի գործողությունները կատարվում են 19-րդ դարի Նոր Անգլիայում՝ ամերիկյան պուրիտանիզմի բնօրրանում: Հերոսները հողի աշխատավորներ են, մարդիկ, որոնց հոգում իր կնիքն է թողել ծանր ու դժվարին աշխատանքը: Օ՛ՆԻԼը ռեալիստորեն է ներկայացնում Քեքըթներից. նրանց և՛ արտաքինի նկարագրություններում, և՛ հոգեկերտվածքի դրսևորումներում պարզորոշ երևում են կեցության առանձնահատկությունները: Ազարակի նկարագրությունը արդեն իսկ խորհրդավոր ու տխուր հանգուցալուծում է հուշում. «Պատերին մռայլ գորշություն... Տան երկու կողմերում վիթխարի ծփիներ կան, որոնց ճյուղերը խոնարհվել են տանիքին: Չարագուշակ մայրություն ու նախանձոտ մտահոգություն կա ծփիների կերպարանքում: Նրանք թաքցնում են իրենց մտերմությունը զարհուրելի տանտիրոջ հետ»:

Բնապատկերի նման մռայլ է հերոսների ներաշխարհը: Բախտը չի ժպտացել նրանց, բարդ ու դժվարին կյանքով են ապրել: Էբինն «փրեն զգում է վանդակում»: «Աշխատել ենք ուժասպառ լինելով: Փտել ենք, որ պարարտանյութ դառնանք նրա ցորենի համար»,—բողոքում է Փիթերը: «Իմ ամբողջ կյանքի պատմությունը այդ պատերի վրա կարելի է կարդալ: ...ես ոչնչից, բարերի միջից բերք էի աճեցնում»,—ասում է ընտանիքի հայրը՝ Էֆրաիմ Քեքըթը: «Ես նույնպես շատ եմ տանջվել... չափից ավելի, իսկ իմ տառապանքի դիմաց ոչ մի լավ օր չեմ տեսել»,—հիշում է Աբբին: Վերջինիս կյանքի պատմության մեջ (զրկանքներով լի որբություն, նվաստացուցիչ աշխատանք հարուստների տներում և այլն) որոշակիորեն արտացոլվում է բուրժուական իրականության պատկերը, իրականություն, որը բնավ մտահոգված չէր արբիների ճակատագրով:

Էֆրաիմ Քեքըթի ազարակը այդ իրականության խորհրդանիշն է: Գորշ ու անհրապույր այդ տանը հոգիներ են խեղվում, երազներ խորտակվում, մարդկային ձգտումներն ու զգացմունքները զոհ են գնում սեփականատիրական անասանձ կրքերին: Էֆրաիմի կենսագրության մեջ բավականին ցայտուն են երևում սեփականատիրական «օրենքների» անդրադարձումները: Այդ անհատապաշտը ապրել և ստեղծել է լուկ իր համար, կալվածքների ընդարձակման մեջ տեսնելով կյանքի գերագույն նպատակը: Կուտակման անհագ ծարավը նրա մեջ խեղդել է նույնիսկ ծնողական սերը. հարազատ որդիները եղել են ազարակի բարձրավանձանը ծառայող ստրուկներ: Սեփականությունը դարձել է համընդհանուր չափանիշ, որի առաջ տեղի են տվել և՛ մարդկայինը, և՛ բարոյականը:

Սեփականատիրական շիկացած կրքերի այդպիսի մթնոլորտում, սոցիալական այդ միջավայրում թշնամանում են հայրերն ու որդիները, ոտնահարվում են բարձր զգացմունքները, և անհատական մեծ ողբերգությունները դառնում են անխուսափելի:

20-ականների վերջերին և 30-ականների սկզբին ստեղծած երկերում Յուջին Օ՛ՆԻԼը շեշտը դնում է մարդկային հոգեբանության դրսևորումների արտացոլման, ներաշխարհի բարդ ու հակասական խմորումների երևակման վրա: Իր

նամակներից մեկում նա նշում էր. «Ժամանակակից դրամատուրգը պարտավոր է հասնել այսօրվա հիվանդության արմատներին»³: Իսկ «հիվանդություն» ասածը ժամանակի իրականության հակասություններն էին, սոցիալական կյանքի այն բարդությունները, որոնք, իսկապես, լրջորեն մտահոգում էին դրամատուրգին: Բնականաբար, մարդու հոգեկան աշխարհը պեղելու միտումը չէր բացառում սոցիալ-պատմական պրոբլեմների արծարծումը: Պարզապես այս դեպքում Օ'Նիլն այդ պրոբլեմները դնում էր՝ անդրադառնալով գիտակցության ու հոգեբանության դրսևորումներին:

Նման կողմնորոշմամբ էր գրված «Մեծն աստված Բրաունը» պիեսը: Էքսպրեսիոնիստական այդ դրաման, որի բոլոր գործող անձինք դիմակներ են կրում, դրանք հանելով միայն մենախոսությունների ժամանակ, ստեղծագործ անհատի ողբերգության մասին է: Հեղինակի մտահղացմամբ դիմակները պետք է ցուցադրեն ներաշխարհի շարժումները:

Հետագա տարիներին Յ. Օ'Նիլը հանդես է գալիս «Տարօրինակ միջերգ», «Ինճամո», «Սուզը Էլեկտրայի ճակատագիրն է», «Օ՛, անապատ», «Անավարտ օրեր» տարարժեք ստեղծագործություններով:

«Օ՛, անապատը» թախծոտ կատակերգություն էր պատանեկության մասին, իսկ «Ինճամո» և «Անավարտ օրեր» ստեղծագործությունները ուղղակիորեն առընչվում էին օ'Նիլյան պրոբլեմների կրոնական կողմին:

1928 թ. Օ'Նիլը մեկնում է Եվրոպա, շրջագայում է Ասիայում, ապա շուրջ երկու տարի ապրում Ֆրանսիայում: Այստեղ էլ գրում է «Սուզը Էլեկտրայի ճակատագիրն է» դրամատիկական եռագրությունը: Նախորդ երկերում առկա ողբերգականության մոտիվները այստեղ արդեն դրսևորվում են որպես դրամատուրգիական ավարտուն կոնցեպցիա: Իսկ ողբերգության պատճառը իր դարն ապրած պուրիտանական բարոյականության և հերոսների մեջ արթնացող նոր գիտակցության ու բմբռումների բախումն է: Ստեղծագործության վերնագիրը պատահականորեն չի բնորված. սյուժեն հիշեցնում է Օրեստեսի և Էլեկտրայի վրիժառության մասին պատմող հին հունական լեգենդը: Գլխավոր հերոսը՝ պուրիտանոսի Լավինիան, որի համար պարտքի գիտակցումը բարոյական բոլոր ըմբռումների հիմքն ու չափանիշն է, ոչնչով չի զիջում համառորեն վրեժի կոչող հին հունական Էլեկտրային: Սակայն, ի տարբերություն անտիկ պատմության, վրիժառությամբ հանգույցը չի լուծվում: Անցյալի հետ ունեցած իր անբակտելի կապերի մեջ Լավինիան տեսնում է ճակատագրի վճիռը: Պարտքի գիտակցումը բացառում է դրա հաղթահարումը, և հերոսուհուն մնում է հրաժարվել նոր կյանքից և միայնակ կրել նախնյաց խաչի ծանրությունը:

«Սուզը Էլեկտրայի ճակատագիրն է» պիեսին հաջորդեցին ստեղծագործական ճգնաժամի տարիները: Անկուսային ու հոռետեսական տրամադրությունները, որոնք սկզբից ևեթ զգալի էին Յուզին Օ'Նիլի աշխարհընկալման մեջ, ավելի թանձրացան անձնական կյանքի բարդություններից: Բավական ծանր էր նաև առողջական վիճակը: 1936 թ. դրամատուրգին Նոբելյան մրցանակ շնորհվեց, սակայն սաստկացող հիվանդության պատճառով նա նույնիսկ չկարողացավ Ստոկհոլմ մեկնել:

³ «Литературная история Соединенных Штатов Америки», т III, М, 1979, стр 367.

Երկարատև լռությունից հետո՝ 1989 թ. ստեղծված «Սառցավաճառը տնրջում է» դրաման անհույս մռայլությամբ հանդերձ զերծ չէր սոցիալական սրությունից: Կործանված ճակատագրերի, խորտակված անորջների մեջ երևում էր իրակտնության դաժան դեմքը, սեփականատիրական աշխարհի ներքին փլուզումը:

1940 թ. Օ'Նիլն ավարտում է «Երկաթ ճոնտպարհորդություն գիշերվա մեջ» ինքնակենսագրական դրաման, իսկ «Բախտի խորթ զավակների լուսինը» պիեսը դառնում է դրամատուրգի կարապի երգը: Երկարատև ու ծանր հիվանդությունից հետո նա վախճանվում է նոյեմբերի 27-ին, հոստոնում:

Յուզի Օ'Նիլի ստեղծագործությունը նշանակալից երևույթ էր տմերկյան գրականության պատմության մեջ: Նա իրավամբ համարվում է ազգային դրամատուրգիայի հիմնադիրը:

ՍԵՐԸ ԾՓԻՆԵՐԻ ՏԱԿ

Գրել է 1924 թ.: Նույն թվականին առաջին անգամ բեմադրվել է Նյու Յորքում:

1 Երիֆ—Մեծ Բրիտանիայում, Իռլանդիայում և Միացյալ Նահանգներում պաշտոնատար անձ, որն իր շրջանում որոշակի վարչական ֆունկցիաներ է կատարում (անգլ. sheriff):

2. Նյու Ինգլանդ—կամ Նոր Անգլիա (New England). պատմականորեն ձևավորված շրջան ԱՄՆ-ի հյուսիս-արևելյան մասում, որն ընդգրկում է Մեն, Նյու Հեմփշիր, Վերմոնթ, Մասաչուսեթս, Ռոդ Այլենդ և Բոնեբրոքիթս նահանգները: Նոր Անգլիան ամերիկյան պուրիտանիզմի օրրանն է:

3 Սողոմոն Իմաստուն—Գավթի որդին, Իսրայելա-Հուդայական թագավորության արքա (մ. թ. ա. 965—928 թթ.): Անցկացրել է վարչական ռեֆորմներ, նպաստել կրոնական պաշտամունքի կենտրոնացմանը: Ըստ «Աստվածաշնչի», աչքի է ընկել արտասովոր իմաստնությամբ: Համարվում է նշանավոր «Երգերգոցի» հեղինակը:

4 Սամսոն—«Աստվածաշնչի» հերոսներից, ամուսնի ուժի տեր իսրայելացի, որը ձեռքերով երկու կես է անում առյուծին (տե՛ս «Դատավորաց», գլ. ԺԴ): Այս անունը դարձել է ուժի, քաջության խորհրդանիշ:

5 Ժանտակուզ—կզաքիսների կարգին պատկանող գարշելի հոտով, դեղնավուն-սևախառն մորթի ունեցող փոքր կենդանի:

6 Ծննդյան տոներ—Քրիստոսի ծննդյան օրվան նվիրված ամենամյա կրոնական տոնակատարություն (անգլ. Christmas Day): Նշվում է ԱՄՆ-ի գրեթե բոլոր նահանգներում՝ դեկտեմբերի 25-ին:

7 «Դու Սարոնի իմ ծաղիկ... Աչքերդ աղավնիների աչքեր են, շուրթերդ նման են որդան կարմրի թելերին, ստինքներդ նման են երկու ուլերի, պորտոդ խմիչքով լի կլոր մի գավաթ է, իսկ փորդ ցորյանի շեղջ՝ կարմիր շուշանների տակ...»—Սողոմոնի «Երեգ-երգոցի» տողերն են:

8. «Եվ Աստված ունկնդրեց Ռաբելին, և նա հղիացավ ու մի տղա ծնեց...»—Ռաբելը Հակոբ նահապետի կինն էր, որն աստծո շնորհով ծնեց Հովսեփին (տե՛ս «Գիրք ծննդոց», գլ. Լ): Վերջինս հետագայում դարձավ Եգիպտոսի տիրակալը:



Ծնվել է օգոստոսի 31-ին Կալիֆոռնիայի նահանգի Ֆրեզնո քաղաքում: Արևմտյան Հայաստանից գաղթած ծնողները պատահականորեն չէին ընտրել Ֆրեզնոն. քաղաքի աշխարհագրական դիրքը և կլիման հիշեցնում էին հայրենի Բիթլիսը:

Ընդամենը երեք տարեկան էր ապագա գրողը, երբ մահացավ երիցական քարոզիչ հայրը Արմենակ Սարոյանը, մոր՝ Թագուհի Սարոյանի խնամքին թողնելով չորս զավակներին: Նախքան մայրը աշխատանք կգտներ պահածոների գործարանում, փոքրիկ Ուիլյամը քույրերի ու եղբոր հետ ստիպված էր մի քանի տարի անցկացնել Օբլենո քաղաքի բողոքականների որբանոցում:

Ութ տարեկան էր, երբ սկսեց դպրոց հաճախել: Հետագայում ուսմանը զուգընթաց աշխատեց որպես «Ֆրեզնո Իվնինգ Հերալդի» (բառացի՝ «Ֆրեզնոյի երեկոյան նախագուշակ») թերթավաճառ, այգեգործ, նպարավաճառ, փոստատան պաշտոնյա, Սան-Ֆրանցիսկոյի փոստային-հեռագրական ընկերության վերակացու: Նա, իսկապես, իրավունք ուներ ասելու. «Ուսումնա առի ուղղակի փողոցե՛ն, բայց ես գայն կոկեցի ու ամբողջացուցի այն բոլոր գիրքերով, զորս կարդացի կյանքիս ընթացքին»:

1922 թ. վերջնականապես թողնում է ուսումը, սակայն գիտելիքները հարստացնում է Ֆրեզնոյի հանրային գրադարանում. հափշտակությամբ կարդում է հաճախարհային գրականության դասականներին ու ժամանակակիցներին: Այդ տարիների մասին ուշագրավ հիշատակություն կա Սարոյանի «Հանդուօճ երիտասարդը թռչող մարգամողի վրա» պատմվածքում:

1933 թ. Սիրակ Կորյան ծածկանունով տպագրում է իր անդրանիկ պատմվածքը: 1934 թ. լույս է տեսնում նրա պատմվածքների առաջին ժողովածուն «Հանդուօճ երիտասարդը թռչող մարգամողի վրա» և այլ պատմվածքներ՝ վերնագրով:

Սարոյանի գրական մուտքը համընկավ ճգնաժամային 30-ականներին: Ամե-

րիկյան ժողովրդի համար ծանր հուսախաբության տարիներ էին. մեկը մյուսի ետևից փակվող ձեռնարկությունները փողոց էին գետել միլիոնավոր շարքային ամերիկացիների, որոնք մինչ այդ բոլորովին այլ ակնկալիքներ ունեին: Իրականությունը համակած անկումային ու հոռետեսական տրամադրությունները, բնականաբար, իրենց արտահայտությունը գտան գրականության մեջ: Եվ բոլորովին էլ պատահական չէր, որ Սարոյան-արձակագիրը դիմեց շարքային մարդու կերպավորմանը, որդեգրեց նրա տազնապ-հույզերը, հոգսերն ու հույսերը: Քննադատության ուշադրությունից չվրիպեց երիտասարդ գրողի մուտքը: Առանձնապես շեշտվում էր ստեղծագործությունների կենսական տարողությունը, Սարոյան-արվեստագետի ոճի ինքնատիպությունը և, իհարկե, մեծ մարդասիրությունը:

1935 թ. Սարոյանը մեկնում է Եվրոպա: Այցելում է նաև Սովետական Հայաստան, մոտիկից տեսնում իր ժողովրդի մեծ վերածնունդը: Կհնում է նախնիների բօքրանում՝ Բիթլիսում:

Սարոյանը մշտապես իր արմատ-ակունքների հետ էր, դրանց գիտակցմամբ էր ամբողջական նրա աշխարհընկալումն ու կենսափիլիսոփայությունը. «Երբ մեջս առաջին անգամ գրելու պահանջ զգացի, ուզեցի պարզել, թե ուսկի՞ց կուզամ, ո՞վ եմ, ի՞նչ կուզեմ ըսել: Գեռ այն ատեն հասկըցա. մինչև չիմանամ, թե ով եմ, չեմ կրնար գրել... Ու հասկրնալով որ հայ եմ, Բիթլիսեմ կուզամ, զավակն եմ Արմենակ ու Թագուհի Սարոյաններու, սկսա գրել...»: «Իեռևս 30-ականների ավարտին, երբ աշխարհասփյուռ հայ գաղթականությունը փորձում էր թաքցնել իր ազգային ծագումը, Սարոյանը հպարտությամբ գրեց. «Թեև անգլերեն կգրեմ, ու հակառակ անոր, որ ծնունդով ամերիկացի մըն եմ, ինքզինքս կնկատեմ հայ գրող մը: Գործածած բառերս անգլերեն են: Միջավայրը, որու մասին կգրեմ, ամերիկյան է: Ոգին, որ կատիպե ինձի գրել, սակայն, հայ է: Ուրեմն հայ գրող մըն եմ ես»:

1939 թ. արդեն գրական շրջաններում հայտնի անուն էր, երբ հանդես եկավ «Իմ սիրտը լեռներում է» թատերգությամբ: Պիեսը, որի հիմքում ընկած էր «Մ'արդը, որի սիրտը լեռներում է» պատմվածքը, բեմադրվեց Բրոդվեյում՝ Սարոյան-դրամատուրգի մուտքը նշանավորելով մեծ հաջողությամբ: 1940 թ. լույս տեսած «Ձեր կյանքի ժամանակը» պիեսը արժանացավ Միացյալ Նահանգների գրական ամենաբարձր՝ Գուլդեյնի մրցանակին և երկար ժամանակ չէր իջնում բեմերից:

Սկզբից ևեթ նկատելի էր, որ Սարոյանի պիեսները նոր որակ են բերում: «...30-ական թվականները Սարոյանի բօքրանն էին: Նրա վառ, լուսավոր լավատեսությունը և անզուսպ պտրուխտական պաթոսը՝ միաձուլված «կարմիր դեկադայի» հումանիստական ըմբռնումների խմորումներին, ուժգնացան պատերազմական ժամանակների հերոսական նկրտումներով: Արդյունքն մ ծեղկեցին բոլորովին այլ դրամատիկական ստրուկտուրայով պիեսներ, որոնք, իրավամբ, կարող են կոչվել անտիպիեսներ»¹:

Ասվածից, իհարկե, չի հետևում, թե Սարոյանի պիեսները մերձեցնում են Ս.

¹ А Ромм, Американская драматургия первой половины XX века, Ленинград, 1978, стр 82

Բեքթի, Է. Իոնեսկոյի, Ա. Ադամովի ստեղծագործություններին, որոնցով 40-ական թվականների վերջերին նշանավորվեց ֆրանսիական անտիդրամայի (կամ արտորդ դրամատուրգիայի) ծնունդը: Պարզապես սարոյանական պիեսները հերքում էին «դրամատիկական ժանրի բոլոր կանոնիկ օրենքները»՝ գտնված ինքնատիպ ձևի մեջ խտացնելով մեծ բովանդակություն, հումանիստական մեծ գաղափարներ: Ինքը՝ Սարոյանը, ժամանակաշրջանի ամերիկյան դրամատուրգիայի գլխավոր թերությունը համարում էր «խաղի» պակասը: Բնականաբար, հրաժարվելով ստատիկ վիճակներից, նա իր ստեղծագործությունները հազեցնում էր դրամատիզմով, բացահայտում մարդկային բարդ ու հուզառատ ներաշխարհներ: Ահա թե ինչու, խոսելով 40-ականների ամերիկյան դրամատուրգիայի մասին և անդրադառնալով Թորնթոն Ուայլդերի և Մերի Չեյզի պիեսներին, գրականագետ Ջոզեֆ Վուդ Քրաթչը նկատում է. «...միայն Սարոյանը բավական շատ ու բավական ինքնատիպ գրեց, ուստի նրան, թեկուզև նախնական կարգով, կարելի է ընդգրկել ամերիկյան խոշորագույն դրամատուրգների ցուցակում»²:

Պիեսներում բացահայտվում էին Սարոյանի աշխարհընկալման հիմնական գծերը: Սուր, ընդգծված կոնֆլիկտների բացակայությունը բնավ չէր նշանակում, թե հեղինակն անհաղորդ է ամերիկյան իրականության հակասություններին ու արատներին: Ընդհակառակը, անմիջապես սոցիալական կյանքի խորքային գիտակցումից էին սերում բարոյական այնպիսի ըմբռնումներ, ինչպիսիք էին բարությունն ու մարդասիրությունը: «Ձեր կյանքի ուղին անցեք այնպես, որպեսզի ապրեք, որպեսզի այդ գեղեցիկ ճանապարհին ոչ ձեզ և ոչ էլ ուրիշ որևէ մեկին, որին կհանդիպեք, չդիպի ոչ կեղտը, ոչ մահը: Ամենուրեք փնտրեք բարին...»³,— «Ձեր կյանքի ժամանակը» պիեսի փոքրիկ առաջաբանում գրում էր Սարոյանը: Բարի ապրելը Սարոյանի քաղաքացիական դավանանքն էր, կենսական դիրքորոշման հիմնական սկզբունքը: Եվ բնական ու օրինաչափ էր այն լավատեսությունը, որը բխում էր մարդու նկատմամբ ունեցած մեծ հավատից: Անեղծելի այդ հավատով են տոգորված գրողի բոլոր գործերը, այդ հավատն է այն հիմքը, որի վրա բարձրանում է «Ձեր կյանքի ժամանակը» պիեսի փոքրիկ, բայց «հրաշալի աշխարհը»:

40-ականների սկզբին Սարոյանը հանդես եկավ մի քանի պիեսներով («Սիրո հին, քաղցր երգը», «Գեղեցիկ մարդիկ», «Քաղցածները»), որոնք, սակայն, առանձին ուշադրության չարժանացան:

1942-ին գրված «Է՛յ, ո՞վ կա այդտեղ» պիեսը իր թեմատիկայով նորություն էր Սարոյանի դրամատուրգիայում: Այն բացահայտում էր հեղինակի աշխարհընկալման նոր կողմերը, մե՛յ անգամ ևս հավաստում, որ նա անտարբեր չէ ժամանակաշրջանի ցավոտ հարցերի, մարդու ազատության և իրավունքների ոտնահարումների նկատմամբ: Բարու և մարդասիրության պատգամախոս Սարոյանը խոսեց նոր ձայնով, որի մեջ և՛ ցավ կար, և՛ մտահոգություն, և՛ կրքոտ բողոք: Երազանքի և իրականության բախումը, սրբ նախկինում սովորաբար

² «Литературная история Соединенных Штатов Америки», т. III, М., 1979, стр. 460

³ Уильям Сароян, Путь вашей жизни, М., 1966, стр. 59.

ճնում էր ենթատեքստում, այստեղ ավելի քան ընդգծված է: «Ինձ բանտ դնե՛լ: Կոնսերպարություն՝ն: Այդ նրանք են բոնսերարում այն ամեն լավը, որ ծնվում է աշխարհի վրա»,—իր հերոսի հետ միաձայն բացականշում է Սարոյանը: Մեղադրանքն անհասցե չէր: Բարին է մարդկայինը ոտնահարողներից, երազները պղծողներից ուղղված բարձրագույն մեղադրանք կար դեռևս «Իմ սիրտը լեռներում է» պիեսում. հիշենք Ջոնիի հոր բառերը. «Առա՛ջ, սպանեցեք բուրդին, պատերազմ հայտարարեք մեկը մյուսին: Ապականեցեք կյանքի առասպելը, դուք խելագարներ, քանզի ձեր մեծությունը չափվում է ձեր կատարած ավերմունքի շատությամբ»: «Էյ, ո՛վ կա այդտեղ» պիեսում Սարոյանը որոշակիորեն կոնկրետացնում է իր ասելիքը: Արվեստագետ-քաղաքացու հստակ դիրքորոշմամբ նա չի ընդունում թշվառությունն ու տառապանք սփռող դաժան օրենքները:

Սակայն անգամ ժամանակի իրականության մույթ կողմերի արտացոլմանը դիմելիս Սարոյանը չի կորցնում իր հավատը: Ներկայացնելով բանտարկված տղայի և էմիլիի հարաբերությունները, ընդգծելով նրանց երազների ու ձրգտումների միասնությունը, դրամատուրգն ուզում է ասել, որ ոչ մի բռնությունն ու ճնշում չեն կարող խորտակել բարի ու վսեմ մարդկայինը, կյանքի միակ ճշմարտությունը:

Ետպատերազմյան ամերիկյան իրականությունը ոչ մի լավ բան չէր խոստանում: 40-ականների ավարտը և 50-ականների կեսերը հաճընկնում են մակարտիզմի տխրահռչակ քաղաքականության հետ: Սենատոր Ջոզեֆ Ռեյմոնդ Մակքարտիի ծավալած ծայրահեղ ռեակցիան հետապնդում ու հավածում էր առաջադեմ մտավորականությանն ու դեմոկրատական ասարերին, հակապետական շինծու մեղադրանքով բանտարկվում ու մահվան էին դատապարտվում հազարավոր մարդիկ: Սովորական էին դարձել, այսպես կոչված, «կախարդական դատավարությունները», որոնցում առանց որևէ հիմքի ծանր դատավճիռներ էին արձակվում: Հրապարակավ այրվում էին գրքերը: Սենատորներից մեկը արդարացիորեն Ջ. Մակքարտիին համեմատում էր Հիտլերի, իսկ մակարտիզմը՝ նացիզմի հետ:

Արդեն իսկ 1950 թ. լույս տեսած «Ատորին և այլ պատմվածքներ» ժողովածուում շոշափելի էին ետպատերազմյան իրականությունը համակած մռայլ տրամադրությունների արձագանքները: Հավատն, իհարկե, չէր լրում Սարոյանին, բայց օրինաչափորեն շատ ավելի մեծ տեղ էր թատկացվում կյանքի ողբերգականությունը ստոիկյան համբերատարությամբ կրող հերոսների կենդանի պավորմանը: Այս շրջանում է ստեղծվում «Կոտորածն մանկանց» պիեսը, ուր հստակորեն դրսևորված է Սարոյանի վերաբերմունքը դեպի մակարտիզմը, դեպի այն վարչակարգը, որը ոտնահարում էր նույնիսկ մարդու ապրելու իրավունքը:

Իատարանի վերածված ռեստորանում դատում են ամենատարբեր տարիքի ու զբաղմունքի տեր մարդկանց: Բոլորի դատավճիռը նույնն է՝ գնդկահարություն, իսկ մեղադրանքները՝ անհիմն ու անհեթեթ: Սարոյանը չի թանձրացնում գույները: Իսկապես, ժամանակներն այնպիսին էին, որ ոչ ոք ապահովագրված չէր անարդար դատասանից: Եվ դատապարտյալներից մեկի վերջին ցանկությունը՝ «Ուզում եմ ծնվել», նոր կյանքով ապրելու բաղձանքը այդ դաժան ու մռայլ իրականության հերքումն է:

Բացահայտելով շարքային մարդկանց հոգևոր մեծ արժանիքները, վերստին ընդգծելով նրանց բարությունը (մեղադրյալները հրաժարվում են դատել իրենց դատավորներից), Սարոյանը, այնուամենայնիվ, իր հերոսներին չի թողնում պասսիվ ու հնազանդ հայեցողի վիճակում: Դառնության ու ցավի հետ միասին նրանց մեջ կուտակվում, ահագնանում է բողոքը, և ընդվզումն անգոսնում է համբերության սահմանները, երբ փորձում են հաշվեհարդար տեսնել նաև փոքրիկ տղայի հետ: Կրկին գործում է գրողի մարդասիրության և բարոյական կոնցեպցիան, բայց ակնհայտ է նաև սոցիալ-քաղաքական գիտակցության դրսևորումը:

Սովետական հետազոտողներից մեկը, անդրադառնալով «Կոտորածն մանկանց» ստեղծագործությանը, նկատում է. «Պիեսն, իսկապես, հիշեցնում է Ֆրանց Կաֆկայի ստեղծագործությունները: Նրանում խոսվում է ամենքին և ամեն ինչ դատելու մասին: Կաֆկայի ստեղծագործություններին բնորոշ մշտնուրրտը բնորոշ է նաև այս ստեղծագործությանը»⁴: Չափազանցելով ժամանակակից արտասահմանյան գրականության մեջ Կաֆկայի ազդեցությունը, Սարոյանի պիեսում գրականագետը տեսնում է գերմանացի գրողի «Դատավարություն» վեպի արձագանքները, ավելի կոնկրետ՝ նախնական մեղքի գիտակցման արտահայտությունը, վերջինս բացատրելով ամերիկյան պուրիտանիզմի կրոնական խստիվ հակումներով:

Դժվար չէ գլխի ընկնել, որ հետազոտողն անհաղորդ է ու՛ Սարոյանի ծագմանը, և՛ պիեսի ստեղծման պատմական շարժառիթներին: Ռեքիշ ինչո՞վ բացատրել այն հսկանմանքը, որ վերլուծության մեջ ոչ մի խոսք չկա ժամանակաշրջանի այն առանձնահատկությունների մասին, որոնք էլ հենց նախապատրաստեցին պիեսի ծնունդը:

«Կոտորածն մանկանց» հումանիստական մեծ մտահոգություններով կյանքի կոչված, ամերիկյան վարչակարգի անեռաստվերտ կողմերը անողորբաբար մերկացնող ստեղծագործություն է: Եվ հենց դա է պատճառը, որ այն մինչև օրս ոչ մի անգամ չի ներկայացվել Սիացյալ Նահանգներում:

«Աշխարհն եհ՞նին քարանձավ է: Երբեմն դա բավականին հաճելի զարդարված քարանձավ է, բայց ավելի հաճախ խղճուկ ավերակներ է: Մարդիկ բարեկարգում և զարդարում են իրենց աշխարհը, իրենց քարանձավները հանուն իրենց երեխաների»⁵,—գրում էր Սարոյանը և ապա ավելացնում՝ «իսկ թատրոնը առավել ևս քարանձավ է»: Ասել է, թե աշխարհը, կյանքը նույնպես թատրոն է:

«Քարանձավի բնակիչները» (1957) պիեսի գործողությունները կատարվում են մի էփսավեր թատրոնում, որը, իրոք, նախկինում կոչվել է «Աշխարհ»: Եվ հիմնական գործող անձինք էլ՝ Թագավորն ու Թագուհին, ծեր դերասաններ են: Երջանիկ հուշեր չեն ծնվում քանդման ենթակա հիմնավորք թատրոնում: «Այսքան էլ անիրավություն,—ցավով նկատում է Թագավորը:—Աստված իմ, ինչպես մարդիկ աաում են իրար»: Հերոսներից ոչ մեկը անմասն չէ այդ ցավից:

⁴ Б. А. Смирнов, Театр США XX века, Ленинград, 1976, стр. 223

⁵ Уильям Сароян, Путь вашей жизни, стр. 476—477

Յուրաքանչյուրն իր անցյալն ունի, և այդ անցյալից, ինչպես հայելուց, մտահոգ ու երազուն մի հայացք պատասխան է ակնկալում: Սարոյանն ինքն է պատասխանում այդ հայացքին, պարզաբանելով իր այլաբանությունը: Պայթյունները մոտենում են «Աշխարհ» թատրոնին. «բարանձավի բնակիչները» լքում են իրենց կացարանը, որը քիչ անց հիմնովին կործանվելու է: Կործանվելու է, թերևս, իր հետ տանելով «անիրավությունն» ու «ատելությունը», և կամ, ո՞վ գիտե, իր տեղը զիջելու բարության «բարեկարգ», «զարդարված» թատրոնին: Համեմայն դեպս, Սարոյանի լավատեսությունը հակառակը հուշել չէր կարող:

Մտահոգացմամբ բավական ինքնատիպ այս սիեսը, որի գաղափարական հարցադրումները զերծ չէին ուտոպիական երանգներից, ներկայացնում էր նաև դրամատուրգի դավանանքը, թատրոնի մասին նրա պատկերացումները: Վերջստին բացահայտվում էին սարոյանական թատրոնի յուրօրինակության «գաղտնիքները»:

Ստեղծագործական բեղուն կյանքով ապրեց Սարոյանը՝ հարուստ ու հետաքրքիր ճառագությունն թողնելով գեղարվեստական գրականության ամենատարբեր ժանրերում: Անսահման բարությանը և բարձր հումանիզմով ներծրծված նրա ինքնատիպ ստեղծագործություններից շատերը մնալուն տեղ ունեն XX դարի համաշխարհային գրականության գանձարանում:

Ուիլյամ Սարոյանը մահացավ 1981 թ. մայիսի 18-ին, Ֆրեզնոյում: 1982 թ. մայիսի 27-ին նրա անյունի մի մասը փոխադրվեց Երևան է: մայիսի 29-ին հողին հանձնվեց Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնում:

ԿՈՏՈՐԱԾՆ ՄԱՆԿԱՆՑ

Գրել է 1952 թվականին: Առաջին անգամ բեմադրվել է 1957 թ. փետրվարին, Հաագայում (Նիդերլանդներ): Վերագիրը վերցված է «Աստվածաշնչից» (տե՛ս «Մանկանց կոտորածը Բեթղեհեմում», «Նոր կտակարան», Մատթեոս, գլ. Բ):

1 Քլերկ—անկտրասարդյունաբերական ձեռնարկությունների կամ գրասենյակային ծառայող (անգլ. clerk):

2 Սուրբ Գավաթ—այն գավաթը, որն օգտագործել են Քրիստոսը և իր աշակերտները Վերջին Ընթրիքին: Ավանդության համաձայն, խաչելության ժամանակ այդ գավաթը նաև ցողվել է Քրիստոսի արյամբ:

3 Բլեֆ—թղթախաղում, հատկապես փոկերի ժամանակ, թույլ խաղաթղթեր ունեցողը իր համարձակ քայլերով ձևացնում է, թե հաղթաթղթեր ունի (անգլ. bluff): Այստեղ գործածված է խաբելու, կեղծելու նշանակությամբ:

4 «Պոեզիա»—«Poetry» անսագիրը: Հրատարակվում է 1912 թվականից: Հիմնադրել է Հարրիետ Մոնրոն: Անսագիրը մեծապես նպաստել է ամերիկյան բանաստեղծության զարգացմանը:



Ամերիկացի հռչակավոր դրամատուրգ
Թեննեսի Ռիլյամսը (Թոմաս Լեյնիե

Ռիլյամս) ծնվել է մարտի 26-ին Միսսիսիպիի Գահանգի Կոլումբուս քաղաքում։ Նախքան առաջին համաշխարհային պատերազմի ավարտը Ռիլյամսների ընտանիքը տեղափոխվում է Մենթ-Լուիս, որը ապագա դրամատուրգի հայրը շահույթաբեր պաշտոն է ստանձնում կոշիկի միջապային ընկերությունում։ Գործնական ու հաջողակ հոր համար, որը կյանքը չի պատկերացնում առանց աղմբիկոտ հավարույթների, հանգույզ ու վտանգավոր ձեռնարկումների, խօրթ էին ինքնամոլի որդու հակումները։ Եվ 1932 թ. հոր պահանջով 21-ամյա Թոմասը թողնում է համալսարանը և աշխատանքի անցնում կոշիկի ֆիրմայում։ Սակայն երեք տարի անց ետ եկտանում է ֆիրմայից՝ վերջնականապես կապերը խզելով ընտանիքի հետ, կրթին ընդունվում է համալսարան։

Պիեսներ սկսում է գրել Հ. Իբսենի «Ուրվականների» ներկայացման ազդեցությամբ։ 1935 թ. նրա «Կահիրե՛, Շանհայ՛, Բոմբե՛յ» կատակերգությունը հաջողությամբ բեռադրվում է Մեմֆիսում։ Ռիլյամսը մասնակցում է «Մենթ-լուիսյան կատակերգիչներ» ավանգարդիստական թատերախմբի աշխատանքներին։

1937-ին, կարիքից ստիպված, բողոնում է ուսումը, սակայն մեկ տարի անց նրան արվեստների բաժնարարի կոչում է շնորհվում։ Երիտասարդ մտավորականի համար հաջորդ տարիները նշանավորվում են ծանր գրկանքներով ու դեգերումներով։ Ինչու՞ 1 Չիչազյում, Նյու Օռլեանում, Լոս Անջելոսում, Նյու Յորքում, Կալիֆոռնիայի և Ջորջիայի տարբեր քաղաքներում։

Ժանր կենսապայմանները չեն ընկնում Ռիլյամսին։ Աշխատում է որպես մատուցող, թատրոնի տոմսավաճառ, վերելակավար։ Միաժամանակ մասնակցում է գրական տարբեր մրցույթների, ստեղծագործում տարբեր ժանրերում։ 1937 թ. «Մենթ-լուիսյան կատակերգիչները» ներկայացնում են նրա առաջին մեծ պիեսը՝ «Ճրագներ դեպի արևը», որը պատմում էր Ալաբամայի հանքագործների

մասին: 1989 թ. մեկ գործողությամբ երեք պիեսների համար Ռիլյամսին շնորհվում է Նյու Յորքի «Գլուպի թիէթր» թատերական ընկերության մրցանակը: Նույն տարին դրամատուրգն ավարտում է «Հրեշտակների ճակատամարտը» պիեսը: Բրոդվեյի թատերախմբերից մեկը ձեռնամուխ է լինում ստեղծագործության ճերկայացմանը, սակայն փորձնական բեմադրումից հետո հրաժարվում է:

40-ական թվականներին Թ. Ռիլյամսն արդեն ճանաչված գրող էր, բայց դեռևս ստիպված էր աշխատել տարբեր հյուրանոցներում ու ռեստորաններում: 1948-ին որպես սցենարիստ աշխատանքի է անցնում Հոլիվուդում, բայց շատ շուտով թողնում է այն՝ շիմակերպվելով գաղափարագուրկ ու թեթևամիտ սցենարներ գրելու մտքի հետ: Ընդամենը մեկ տարի անց իր բանաստեղծությունների ժողովածուի առաջաբանում Ռիլյամսը դառնացած պիսի նկատեր, որ երիտասարդ մտավորականի համար «գրեթե անհնարին է ապրել ժամանակակից Ամերիկայում»:

Իրողությունն, իհարկե, չէր հուսալքում արվեստագետին: Նույն 1948-ին Հոլիվուդը մերժում է նրա սցենարներից մեկը. վերջինիս հիման վրա Ռիլյամսն ստեղծում է «Ապակե գազանանոց» պիեսը: Դերասան ու ռեժիսոր Էդդի Կառլիկզը՝ Սարոյանի թատերական «կնքահայրը», ձեռնամուխ է լինում ստեղծագործության բեմադրմանը: «Ապակե գազանանոցը» մեծ հաջողությամբ 1948 թ. ներկայացվում է Նյու Յորքի «Փեյնետօգ» թատրոնում՝ միանգամից գրավելով քննադատների ուշադրությունը: Թատերական ճանաչված քննադատներից մեկը, դրվատանքով խոսելով ստեղծագործության մասին, մասնավորապես նշում էր, որ այն աչքի է ընկնում «բնավորությունների խորքային ըմբռնմամբ», «մարդկային հարաբերությունների ճշգրիտ ցուցադրմամբ» և, հատկապես «ճշմարտության ուժով»: Արվեստագետի իր դավանանքը Թ. Ռիլյամսը շարադրել է պիեսի փոքրիկ առաջաբանում. «Այժմ, թերևս, բոլորն արդեն գիտեն, որ լուսանկարչական մանությունը կարևոր դեր չի խաղում արվեստում, որ ճշմարտությունը, մի խոսքով՝ կյանքը, իրականությունը ներկայացնում են միասնական ամբողջություն, և բանաստեղծական երևակայությունը կարող է ցույց տալ այդ իրականությունը կամ որսալ նրա էական գծերը, ոչ այլ կերպ, քան իրերի սրտաքին տեսքը փոխակերպելով»¹:

Այս կերպ դրամատուրգը ներկայացնում էր «պլաստիկ թատրոնի» իր ըմբռնումները՝ շեշտը դնելով գեղարվեստական ամենատարբեր սիջուցների օգտագործման վրա: Մեծ տեղ էր հատկացվում նաև սիմվոլներին: «Պլաստիկ թատրոնի» սկզբունքներով է ստեղծված բուրժուական իրականության մեջ մուլորված, կործանված ընտանիքի մասին պատմող «Ապակե գազանանոց» պիեսը: Ռիլյամսը բացահայտում է Ռիկոֆիլդների ողբերգության պատճառը, ցույց տալիս քաղբեհիության, հոգևոր սնանկության կործանարար հետևանքները՝ հասնելով մեծ ընդհանրացումների: Ընտանիքի մոր՝ Ամանդա Ռիկոֆիլդի ինքնության դրսևորումներում բավականին լավ է երևում քաղբեհական գիտակցության ողջ սնանկությունը: Չոր հաշվեհատությամբ ապրող այդ կինը իր աշխարհն է ներքաշում նաև Թոմին և Լաուրային: Ուշագրավ է հատկապես վեր-

¹ Теннесси Уильямс, «Стекланный зверинец» и еще девять пьес, М., 1967, стр. 70

ջինիս կերպարը: Նրա անաղարտությունն ու ազնվությունը անհամատեղելի են իրականության դաժան ու անմարդկային բարքերի հետ, և ապակե նուրբ ու փխրուն գազանիկների նման փշրվում է նաև նրա կյանքը:

Ուիլյամսի ստեղծագործական մեթոդը առավելապես հոգեբանական է, և այդ առումով նա իրավամբ Յուջին Օ'Նիլի ժառանգորդն է: Նրա ուշադրության կենտրոնում հոգեկան աշխարհի բարդ տեղաշարժերն են, հակասական տրամադրությունների ու հոգեվիճակների հերթազայությունները: Հոգեկանի այդ դրսևորումներում պարզորոշ երևում է միջավայրի ավդեցությունը, գրեթե շոշափելի են դառնում հասարակական կյանքի ազդակները: Ուիլյամսը իրավացիորեն վճռական դեր է հատկացնում հասարակությանը, այն համարում «սոցիալական ակտիվ ուժ», որը շատ դեպքերում ուղղված է մարդու դեմ: Ներաշխարհի դրսևորումների սոցիալական հիմնավորմամբ ավելի համոզիչ են դառնում հոգեբանական երևանումները:

Իրողությունը հիմնովին հերքում է այն պնդումները, որոնցում փորձ է արվում Թեննեսի Ուիլյամսին ներկայացնել որպես Ջ. Ֆրեյդի հետևորդ, նրա լավագույն երկերի արժանիքները տեսնել ենթագիտակցականի հետ առնչվող երևույթների և կամ «բանականության համար անըմբռնելի նախածին կոնֆլիկտների» բացահայտման մեջ: Իրականում Ուիլյամսը ամերիկյան սոցիալ-հոգեբանական դրամատուրգիայի ճանաչված ներկայացուցիչն է, արվեստագետ, որն իր փորձով գեղարվեստական արտացոլման նոր հնարավորություններ էր նախանշում:

1947 թ. դեկտեմբերին Նյու Յորքի «Էթել Բարիմոր» թատրոնում ռեժիսոր Էլիա Կազանը բեմադրում է Ուիլյամսի «Ցանկություն» տրամվայը» պիեսը: Հեղինակը բացահայտում էր ամերիկյան կյանքի ողբերգական կողմերը, ներկայացնում սեփականատիրական կրքերի ու քաղքենիության ազդեցությամբ հիմնովին վերափոխվող մարդկային հարաբերությունները: Կրքերին գործում է Ուիլյամսի հոգեբանական մեթոդը և, իհարկե, ոչ առանց սոցիալական հիմնավորման: «Դրամատուրգը բալոր պերսոնաժներին ցուցադրում է իրենց «պատառի» համար վճռական պայքարի պահին: Նա տեսնում է, որ այդ պահին իր հերոսները զարմանալի հեշտությամբ են գնում դեպի ոճիրը»² և նույնքան հեշտությամբ «ինքնարդարացում գտնում»:

Պիեսի գլխավոր հերոսուհին՝ Բլանշ Դյուրուան, սարսափով է խոսում այն իրականության մասին, որի դեմքը որոշում են Սթենլի Կովալսկին՝ «քարե դարի կենդանի մասունքը» և նրա նմանները. իրականություն, ուր թույլերին մնում է «առկայծել ու լույս ապլ», «թղթե լապտերիկ» լինել «էլեկտրական լամպի դեմ»: Սակայն Բլանշը ևս զերծ չէ իր բնորոշած «ուժեղներին» հատուկ դաժանությունից. անձնականը հաստատելու համար նա էլ ընդունակ է ոտնահարել ուրիշի՞նը, թեև բարձրաձայն խոսում է առաջադիմության, «նոր լույսի» և «բարձր ըզգացմունքների» մասին:

Իր նախորդի՝ Յուջին Օ'Նիլի նման Ուիլյամսը նույնպես թերահավատությամբ է արտահայտվում բուրժուական քաղաքակրթության մասին: Նրա տե-

² «История зарубежной литературы после Октябрьской революции», часть вторая, 1945—1970, М., 1978, стр. 300—301

սաղաշտից չեն վրիպում զարգացման ու առաջադիմության արտաքին պերճանքի տակ թաքնված անհաղթահարելի հակասությունները, սոցիալական կյանքի բարդությունները, որոնք էլ հենց որոշում են մարդկային հարաբերությունները: Վերջիններիս համար հատկանշական են դառնում շահախնդրությունն ու հաշվեհատությունը, սեփականատիրական անսանձ կրքերի դրսևորումը: Այս պայմաններում պայքարը անխուսափելի է, իսկ միջոցների մեջ խտրություն չի դրվում:

Իր հարցադրումներով, սոցիալական քննադատությամբ «Ցանկություն» տրամվայը՝ ճշանակալից երևույթ էր, և գրական-թատերական շրջաններում ընդունվեց միաձայն դրվատանքով: Պիեսի համար Ռիլյամսին շնորհվեցին Նյու Յորքի թատերական քննադատների և Պոպիտցերյան մրցանակները:

«Մարդու ամենամեծ արժանիքն իրականում այն է, որ նա կարող է անձամբ, սեփական հայեցողությամբ իր համար որոշակի բարոյական արժեքներ սահմանել և ապրել դրանցից չհրաժարվելով»³, — 50-ականների սկզբին գրված պիեսներից մեկի առաջաբանում նկատում էր Թ. Ռիլյամսը: Դրամատուրգի հետագա որոնումները նպատակաուղղված էին անհատի և միջավայրի կոնֆլիկտների բացահայտմանը: Հումանիստական տարերքը, որ նախորդ ստեղծագործություններում, որպես վերացական իրողություն, սովորաբար մնում էր ենթատեքստում, նոր պիեսներում որոշակիորեն արտահայտվում է հերոսի հոգեկերտվածքի դրսևորումներում, բարոյական ըմբռնումներում: Այդ առումով ուշագրավ էր «Կատուն շիկացած տանիքին» դրաման (1955):

Ստեղծագործության կենտրոնական հերոս Բրիկի մարդասիրությունը, անշահախնդիր բարեկամությունը, բարոյական ըմբռնումները օտար են միջավայրին, նույնիսկ ընտանիքի անդամներին: Չոր հաշվեհատությամբ ու անհազ ընչաբաղցությամբ ապրող այդ մարդկանց պատկերացմամբ յուրաքանչյուր հարաբերություն ինքնին հաշիվ է: Ըստ այդմ, բոլորովին այլ կերպ են մեկնաբանում Բրիկի և նրա հանգուցյալ խաղընկերոջ՝ Սքիփրի ազնիվ ու անաղարտ բարեկամությունը, իրենց այլանդակ բարբերից բխող չափանիշներով գնահատում այդ հարաբերությունը: «Ք» և Սքիփրի մտերմության մեջ ինչ-որ աննորմալ բան կար...», — ասում է Բրիկի հայրը:

Բրիկը ծանր դրամա է ապրում: Կեղծիքը, խարեությունը, քաղթեցնիությունն ու սեփականատիրության մոլուցքը, իսկապես, զզվելի են նրան: Հոր այն հարցին, թե ինչու է խմում, նա պատասխանում է՝ «Զզվանքից»:

Սակայն միջավայրի համար անըմբռնելի է այդ բացատրությունը, անընդունելի է հերոսի ողբերգության պատճառը: Հանգամանքն ավելի է խորացնում Բրիկի հոգեկան դրաման, ու թեև պիեսն ավարտվում է նրա հեզնոտ ռեպիկով, հերոսի կործանումը կասկածի տեղիք չի առիս:

Դրամատուրգի նոր հարցադրումները կենսական ակտիվ դիրքորոշման արդյունք էին: 1957 թ. «Աշխարհը, որտեղ ես ապրում եմ» հարցազրույցում Թ. Ռիլյամսը նկատում էր, որ գրողի, ընդհանրապես, արվեստագետի առաքելությունը ճշմարտությունը բացահայտելու ձգտումն է, և «հենց այդ ձգտումն է,

³ Теннесси Уильямс. «Стекло́нный зверинец» и еще девять пьес, стр. 721

որ նրանց աշխատանքը դարձնում է ոչ այնքան մասնագիտություն, որքան ծառայություն, իսկական անձնվիրություն»⁴: Այդ ձգտումն ապահայտ է Ուիլյամսի 50-ականներին ստեղծված գրեթե բոլոր գործերում: Հակառակ իրենց ողբերգական ճակատագրի դրամատուրգի նոր հերոսները՝ այդ միայնակ խոռվարարները, չեն ընդունում իրականությունը, նրա հաստատած բարոյական նեղ ու սնամեջ չափանիշները:

1957 թ. մարտին Նյու Յորքի «Մարտին Քեք» թատրոնում ներկայացվում է Ուիլյամսի «Յոթնուհին իջնում է դժոխք» պիեսը, որը 1940 թ. տապալված «Հրեշտակների ճակատամարտը» ստեղծագործության արմատապես վերափոխված տարբերակն էր: Որպես բնաբան դրամատուրգն ընտրել էր Ա. Ստրինդբերգի ճամակներից մեկի հետևյալ տողերը՝ «Ես նույնպես սկսում եմ զազան դառնալու և նոր աշխարհ ստեղծելու անհաղթահարելի պահանջ զգալ», որոնք նախապես հուշում էին ստեղծագործության գաղափարական ուղղվածությունը:

Թ. Ուիլյամսն անողոք խստությամբ է խոսում ամերիկյան իրականությանն ստվերոտ կողմերի մասին, ցույց տալիս, թե մարդու համար որքան դժվար է ապրել այն հասարակությունում, ուր նրան սպասում են լինչի դատաստանը, ամենօրյա հետապնդումները, ապականված բարքերն ու շրշապատի քար անտարբերությունը: Հեղինակի բնորոշած դժոխքը հենց այդ իրականությունն է, որտեղ, ինչպես գլխավոր հերոս Վել Քսավիեն է նկատում, «մարդկանց գնում և վաճառում են»: 'Իրական հերոսների' Վելի և Լեյդիի անաղարա սերը հակադրվում է չարագործ սեփականատերերի ու քաղքենիների՝ կեղծիքով ու դսժանությամբ կյանքի կոչված աշխարհին, և սկզբից նեթ պարզ է, որ նրանց սերը կործանման է դատապարտված: Կործանվում են նաև իրենք՝ հերոսները, որը, սակայն, չի նսեմացնում պիեսի գաղափարական հնչեղությունը: Մի առիթով Վելը նկատում է, որ գոյություն ունի մարդկանց երեք տեսակ՝ մարդիկ, որոնց վաճառում են, մարդիկ, որոնք գնում են դրանց, և մարդիկ, որոնք վեր են առուծախի այդ նարաբերություններից, զերծ են այդ իրականության «խարանից»: Վերջիններս հեղինակի բնորոշած «անհնազանդներն» են, որոնց կենսագրությունը մահով չի ավարտվում: Նրանց փոխարինում են ուրիշները, գիաակցաբար ընտրում իրենց նախորդների փշոտ, բայց միակ ճիշտ ուղին: Այդ իմաստով խորհրդանշական է պիեսի ավարտը: Քերուլը ուսերին է զցում Վելի բանկոնը և, արհամարհելով շերիֆի սպառնալիքները, հեռանում:

Պիեսը նշանակալից երևույթ էր ոչ միայն երկրի թատերական կյանքում, այլ նաև Ուիլյամսի ստեղծագործության մեջ: Եվ առաջադեմ քննադատներն ըստ արժանվույցի գնահատեցին ստեղծագործությունը: Մասնավորապես շեշտվում էր հարցադրումների արդիականությունը, ընդհանրացումների խորությունը, նոր խոսք էր ասվում դրամատուրգի տաղանդի մասին:

Թեմատիկայով ու գաղափարական հնչեղությամբ «Յոթնուհին իջնում է դժոխք» պիեսին բավական մոտ էր «Իգուանի գիշերը» (1962) ստեղծագործությունը:

Իրամատուրգի հետագա երկերում թանձրանում են անկումային տրամա-

⁴ «Современная художественная литература за рубежом», № 3, 1981, стр. 77.

դրությունները, ստվարանում է միայնակ ու անդառնալիորեն կործանված հերոսների շարքը («Վիշապի երկիր» պիեսների ժողովածուն), որոնք սակայն չեն բացառում հեղինակի հումանիզմը: Ուժի մեջ են մնում նաև «պլանտիկ թատրոնի» հիմնական սկզբունքները:

70-ականների վերջերին և 80-ականների սկզբին Թ. Ուիլյամսը հանդես է գալիս մի քանի պիեսներով («Vieux Carre», «Տունը, որ երկար չի մնա կանգուն» և այլն), որոնցում կրկին անդրադառնում է իրականության ցավոտ հարցերին, կերպավորում խորասկզբ ճակատագրով, անհույս թշվառության դասապարտված հերոսների:

«...Ես շարունակում եմ պնդել, որ ինչ-որ տեղ պետք է լինի ճշմարտություն, որն արժե արտահայտել շփոթմունք ու վախ առաջացնող բառերով...

Դրա համար էլ պատանեկությունից մինչև ծերություն ես իմ մեջ պահպանել եմ և շարունակում եմ պահպանել այդ հավատը...»⁵,—մի առիթով ասել է Թեյնենսի Ուիլյամսը: Դրամատուրգին մշտապես գեղարվեստական արարումի էր մղում այդ մեծ հավատը:

Թ. Ուիլյամսը վախճանվեց 1988 թ., Նյու Յորքում:

ԿԱՏՈՒՆ ԾԻԿԱՑԱԾ ՏԱՆԻՔԻՆ

Գրել է 1955 թ.: Նույն թվականին առաջին անգամ ներկայացվել է Նյու Յորքի «Մորոսքո» թատրոնում՝ ռեժիսոր Էլիա Կազանի ղեկավարությամբ:

1. Միսսիսիպիի Ռեյտա—տարածք Միացյալ Նահանգների հարավում՝ Մեքսիկական ծոցի ափին:

2 Վիկտորիական ոճով—այսինքն՝ XIX դարի անգլիական ոճով: Անգլիական թագուհի Վիկտորիայի (1837—1901) անվամբ պայմանականորեն կոչվում էին դարաշրջանի շատ երևույթներ:

3 Ռոբերտ Լուիս Սթիվենսոն—անգլիացի գրող (1850—1894), արկածային վեպերի հեղինակ: Հայ ընթերցողը ծանոթ է նրա «Գանձերի կղզին» և «Սև նետը» ստեղծագործություններին:

4 Սամոայի կղզիներ—հրաբխային կղզիախումբ Խաղաղ օվկիանոսում:

5 Լուիզիանա և Արկանզաս—ԱՄՆ-ի հարավային նահանգներից:

6 «Գրեյթ Սմոքի»—հանգստի և տուրիզմի վայր Ապալաչյան լեռների անտառախիտ լանջերին՝ Թեյնենսի և Հյուսիսային Քարոլինա նահանգների միջև:

7 «Ռեյնբոու Հիլ»—բառացի՝ «Ծիածանի բարձունք»:

8 «Քլարքսդեյլ Ռեջիսթր»—«Քլարքսդեյլի օրագիր». նահանգային լրագիր:

9 «Ասոշիեյդետ Պրես»—ԱՄՆ-ի խոշորագույն տեղեկատու գործակալություններից («Associated Press»). հիմնվել է 1848 թ.: Ղեկավարությունը կենտրոնացված է Նյու Յորքում:

⁵ Նույն տեղում, էջ 78:

10 «Յունացիքեդ Պրես»—ԱՄՆ-ի խոշորագույն ինֆորմացիոն գործակալություններից («United Press»):

11 Պուրիտան—XVI—XVII դարերում Անգլիայում այդպես էին անվանում կալվինիզմի (բողոքականության հոսանք) հետևորդներին, որոնք ռեֆորմացիայի խորացման կողմնակից էին: Այստեղ «պուրիտան» օգտագործված է՝ ընդգծելու համար Միացյալ Նահանգների հարավի բնակիչների նախապետական խիստ բարքն ու կենցաղը:

12 «Գիտելիքի գրքեր»—խոսքը «Books of Knowledge» հանրագիտարանի մասին է:

13 Մեմֆիս, Նեշվիլ, Ուորդեյմոնթ—քաղաքներ ԱՄՆ-ի հարավում:

14 Ծննդյան տոներ—տե՛ս Յուզին Օ՛նիլի «Սերը ծփիների տակ» պիեսի 6-րդ ծանոթագրությունը:

15 ...բամբակի տոնին նվիրված ֆեստիվալում մի անգամ թագուհի է եղել...—ակնարկվում են բամբակի բերքահավաքին նվիրված ժողովրդական տոնախմբությունները, որոնք ավանդաբար անցկացվում են երկրի հարավային նահանգներում:

16 Սքիփ—սպորտային թիմի ավագը (անգլ. skipper), որն այստեղ հատուկ անվան նշանակությամբ է գործածվում:

17 Կրիկետ—(անգլ. cricket), թիմային խաղ գնդակով և զարկիչով: Հայրենիքը միջնադարյան Անգլիան է: Ներկայումս տարածված է Մեծ Բրիտանիայում, Ավստրալիայում, Կանադայում, Նոր Զելանդիայում, ինչպես նաև ԱՄՆ-ում:

18 «Դիանայի ռազմավար»—սպորտային մրցանակ, որ կոչվում է հոռմեական դիցարանության Լուսնի աստվածուհի Դիանայի անունով:

19 Միսսիսիպիի համալսարան—այստեղ, ամենայն հավանականությամբ, հիշատակվում է Քլիմթոնի քոլեջը (Միսսիսիպիի նահանգ), որն հիմնադրվել է 1826 թ.:

20 Մուն լիճ—արհեստական լճակ Նյու Յորք նահանգում:

21 Ֆունտ—ծանրության միավոր. 1 ֆունտը հավասար է 453,6 գրամի:

22 «Քոմերիքլ Ափելն»—բառացի՝ «Առևտրական տեղեկագիր»:

23 ...Հորի պես աղքատ ու դժբախտ...—Հորը «Աստվածաշնչի» հերոսներից էր, որին վիճակվեց կրել աստծու սահմանած բոլոր փորձություններն ու զրկանքները:

24 «Դիքսի սթարգ»—բառացի՝ «Հարավի աստղեր»:

25 «Գոհության օր»—(անգլ. Thanksgiving Day). Մասաչուսեթսի առաջին գաղութաբնակների հիշատակին նվիրված պաշտոնական տոնակատարություն: Նշվում է գրեթե բոլոր նահանգներում՝ նոյեմբեր ամսի չորրորդ հինգշաբթի:

26 Միչիգան լիճ—Հյուսիսային Ամերիկայի երեք ամենամեծ լճերից մեկը. հարավ-արևմտյան ափին գտնվում է Չիկագո քաղաքը:

27 Գրենադա—պետություն Կարիբյան ծովի հարավ-արևելյան մասում՝ Գրենադա և հարակից կղզիների վրա:

28 «Քու ռիվլըրգ»—բառացի՝ «Երկու գետ»:

29 «Դոկ»—դոկտոր (անգլ. doctor—բժիշկ) բառի կրճատ ձևն է, որը խիստ գործածական է ամերիկյան խոսակցական լեզվում:

30 Քիշմիր—բրդյա, կիսաբրդյա կամ բամբակյա թելթև գործվածք թեք մակաշերտերով: Անվանումը կապված է Ինդոս գետի ավազանում գտնվող Քաշմիրի շրջանի անվան հետ:

31 Հետաքննությունների ֆեդերալ բյուրո—(անգլ. Federal Bureau of Investigation). վարչություն, որն ստեղծվել է 1908 թ.՝ ֆեդերալ օրենքների խախտումները հետաքննելու համար: Միաժամանակ կատարում է քրեական և գաղտնի ոստիկանության ֆունկցիաներ, հետապնդում է առաջադիմական կազմակերպությունների:

32 «Սթորկ» և «Ռիփլը»—բառացի՝ «Արագիլ» և «Հնձվոր». նախանգաշին մարզական ակումբներ են:

33 Բարսելոնա—Կատալոնիայի գլխավոր քաղաքը (Իսպանիա): Գտնվում է Միջերկրական ծովի ափին, հիմնադրվել է մ. թ. ա. III դարում:

34 Մարակեշ—գտնվում է Մարոկկոյի հարավ-արևմուտքում, հիմնադրվել է XI դարում: XI—XIII և XVI—XVII դարերում եղել է երկրի մայրաքաղաքը:

35 Սքիդ Ռոու—բառացի՝ «Որջերի թաղամաս» (անգլ. Skid Row). ժարգոնային ձև է:

36 Ուիքսբերգ—բնակավայր Միչիգանի նախագում, Միչիգան լճից արևելք:

37 Մասոններ—(նաև ֆրանկմասոններ). XVIII դարի Անգլիայում առաջացած կրոնական-էթիկական շարժման հետևորդներ: Մարդկությանը կրոնական եղբայրական միության մեջ միավորելու ուտոպիական նպատակով ձգտում էին ստեղծել համաշխարհային գաղտնի կազմակերպություն:

38 Ակր—մակերեսի չափման միավոր. 1 ակրը հավասար է 4046,86 քառ. մ:

39 Շոու—այստեղ՝ ռեկլամային ելույթներ, հեղինակության մասսայականացմանը նպաստող միջոցառումներ (անգլ. show):

40 Բուրսիտ—մերձհողային լորձապարկերի բորբոքում կրկնվող վնասվածքների դեպքում:

41 ...Հյուսիսի և Հարավի նախագների միջև պատերազմ...—բուրժուական Հյուսիսի և ստրկատիրական Հարավի միջև պայքարը վերածվեց քաղաքացիական պատերազմի (1861—1865), որն ավարտվեց Հյուսիսի հաղթանակով և բուրժուադեմոկրատական հեղափոխությամբ:

42 «Ֆրեյդ Փոլցը»—բառացի՝ «Ճգնավորի հրվանդան»:

43 Նատրիումի ամիթալ—քնաբեր դեղամիջոց:



Ծնվել է հուլիսի 5-ին Մեզոն-Լաֆիթում:
Կրթությունն ստացել է Կոնդորսեի լիցե-

յում: Գրականություն է մտել որպես բանաստեղծ: 1909—1912 թթ. մեկը մյուսի ետևից լույս են տեսնում նրա «Ալադինի լամպը», «Թեթևամիտ արքայազներ» և «Սոֆոկլեսի պարը» բանաստեղծական ժողովածուները:

Ինքնակրթի ֆրանսիական պոեզիայի համար բնորոշ էր հրաժարումը սիմվոլիզմից և բանաստեղծական նոր ձևերի որոնումը: Այս կերպ պոեզիայի մեջ գեղանկարչության օրինակով առաջանում է կուրիստական շարժումը, որի առաջին ներկայացուցիչներն են դառնում Գիյոմ Ապոլիները, Մաքս Ժակոբը և Անդրե Եվամոնը: Կուրիզմը շատ բան ժառանգեց Ալֆրեդ Փարրիից. վերջինս պնդում էր մեկ այլ «բարձրագույն» ռեալության հնարավոր գոյության մասին: Նրա ստեղծած «փիլիսոփայական համակարգը» նպատակ ուներ թափանցելու «այլ աշխարհները» և նույնիսկ բացատրել դրանց օրենքները: Այստեղից էլ աշխարհի ռեալ ընկալումը խարխլող արհեստական համադրումներն ու կուրիստականները, «մետաֆիզիկական կեցության» հաստատումը, որ որդեգրեցին նախ կուրիստները, ապա դադաիստներն ու սյուրռեալիստները:

Կուրիզմի ներկայացուցիչներն ընդգծված հակում ունեին դեպի պատրանքային պատկերների ստեղծումը, որը պայմանավորված էր ընթերցողին զարմացնելու, շվարեցնելու նրանց սկզբունքով: Նման զգացումներ արթնացնելը Գ. Ապոլիները համարում էր արվեստի գլխավոր նպատակներից մեկը:

Առաջին համաշխարհային տարիներին և պատերազմից հետո ստեղծված Ժ. Կոկտոյի երկերում («Ներբող Պյուստյին» ժողովածուն, «Բարեհուստ հրքվանդան» և «Բառարան» պոեմները) զգալի էր կուրիզմի գեղագիտության ազդեցությունը: Կուրիզմիստներից հետևորդներից շատերի նման նա ևս չէր ընդունում անցյալի արվեստի ու գրականության արժեքները, ակնհայտ հեզմանքով էր խոսում «բանգարանների ողջ ոսկու» մասին՝ գերապատվությունը տալով «Պիկասոյի կտավին»:

Ընդհանրապես Կոկտոյի ստեղծագործական ուղին սերտորեն կապված էր մոդեռնիզմի ամենատարբեր դրսևորումների հետ: Սակայն նույնիսկ այդ տարամետ հակումների մեջ արվեստագետը չէր կորցնում իր անհատականությունը, ստեղծում էր միանգամայն ինքնատիպ, զուտ կոկտոյական գործեր: Նրա փորձարարությունները, անկախ իրենց զաղափարական հարցադրումներից, գեղարվեստական արտացոլման նոր, ուշագրավ հնարավորություններ էին բացահայտում:

Բազմազան էին Կոկտոյի հետաքրքրությունները: Բանաստեղծ էր, վիպասան, դրամատուրգ, թատերական քննադատ, նկարիչ և քանդակագործ: Գրում էր կինոսցենարներ, բալետային ներկայացումների լիբրետոներ: 1910 թ. Փարիզում Կոկտոն ծանոթանում է ռուսական բալետների բեմադրող Ս. Դյագիլևի հետ և օգնում նրան անցնելու կուրիզմի և ֆուտուրիզմի դիրքերը: 1917 թ. Ժ. Կոկտոյի լիբրետոյով և Պ. Գիկասոյի դեկորացիաներով Ս. Դյագիլևը բեմադրում է «Շքերթ» բալետը:

Ավելի ուշ Կոկտոն հանդես է գալիս «Ինքնակոչ Տոման» և «Դժվարահան երեխաներ» վեպերով, որոնցում անդրադառնում է երիտասարդ սերնդի պրոբլեմներին:

Արվեստի ու գրականության տարբեր բնագավառներում ստեղծած յուրօրինակ ժառանգության մեջ աչքի են ընկնում հատկապես Ժան Կոկտոյի դրամատուրգիական երկերը:

Ֆրանսիական «Ինտելեկտուալ» դրամատուրգիայի սկզբնավորումը համընկնում է 20-ական թվականների ավարտին: Ուղղությունը, որի հիմնադիրը դարձավ Ժան Ժիրոդուն, միանգամայն նոր երևույթ էր ազգային դրամատուրգիայում: Սկզբից ևեթ ակնհայտ էր, որ իրենց վերացական փիլիսոփայական-բարոյական զաղափարներով հանդերձ «Ինտելեկտուալները» մարտահրավեր են նետում պարզունակ կենցաղային պիեսների հեղինակներին և առաջին հերթին իրենց հումանիզմի դրսևորումներով: Թեև իրականության ու կյանքի հակասությունների գիտակցումից ծնվող այդ հումանիզմն ավելի հաճախ մնում էր էմոցիոնալ մակարդակում և հստակված ու ավարտուն կոնցեպցիա չէր դառնում, այնուհանդերձ դրանում բացահայտվում էր բուրժուական հասարակության նկատմամբ նրանց ունեցած վերաբերմունքը, բարոյական այն ըմբռնումները, որոնք հիմնականում անհամատեղելի էին օրենքի ու ստացած չափանիշների հետ: Կենսական այդ դիրքորոշումը թեկուզև այլաբանորեն, բայց արտահայտվում էր որոշ «Ինտելեկտուալների» երկերում: Օրինակ, Ժ. Ժիրոդուի ամենանշանակալից ստեղծագործությունների գլխավոր թեման մարդու և նրան ճշող արտաքին ուժերի հարաբերությունն է: «Հուդիթ» ողբերգության մեջ այդ ուժերը մարմնավորում է աստված: Հակառակ «Աստվածաշնչի», հերոսուհին՝ Հուդիթը, ոչ թե պարտքի գիտակցումով է տրվում Հողոփեռնեսին, այլ նրան սիրելով: Հուդիթի ախույանը աստվածն է:

«Ինտելեկտուալ» դրամատուրգիայի ինքնատիպ, բայց խայտաբղետ ժառանգության մեջ իր ներդրումն ունի նաև Ժան Կոկտոն: 1928—1934 թթ. նա հանդես է գալիս «Անտիգոնե», «Օրփեոս» և «Դժոխային մեքենա» պիեսներով: «Ինտելեկտուալներից» շատերի նման Կոկտոն էս օգտագործում է անտիկ թեմաները, և պետք է նկատել, որ նա շատ ավելի անկաշկանդ է անտիկ մոտիվ-

Անրիկ Դիմելիս: Իր դիրքորոշումը «Անտիգոնեի» առիթով ժ. Կոկտոն հետևյալ կերպ է բացատրում. «Սա Հունաստանը օդանավից լուսանկարելու մի փորձ է: Այդպիսի բարձրությունից նայելիս փառաբանված շատ գեղեցկություններ տեսադաշտից դուրս են մնում, բայց փոխարենը հայտնաբերվում են այլ գեղեցկություններ...»¹:

«Իժոխայից մեքենա» պիեսում առեղծվածային ճակատագրի գաղափարը այլևս չունի նախկին (անտիկ) նշանակությունը, որովհետև գրեթե բոլորն էլ գիտեն, որ քրմերն են հնարել գուշակի և սֆինքսի մասին պատմությունները՝ նպատակ ունենալով այդ կերպ ազդել պետության ղեկավարման վրա: Հանգուցալուծումը նախապատրաստող այդ նոր մթնոլորտում, բնականաբար, նորովի են ներկայացվում հին հունական դիցաբանությունից կամ Սոֆոկլեսի «Էդիպ արքայից» հայտնի գլխավոր հերոսները: Կոկտոյի ստեղծագործության մեջ վերջիններս առօրյական հոգսերով ու մտահոգություններով ապրող սովորական մարդիկ են. Էդիպը՝ պատվասեր ու բարեհոգի, Իոկաստան՝ ավելի շատ ջղագրգիռ:

Ողբերգության բնաբանը հուշում է, որ աստվածները գոյություն ունեն, և նրանց մարմնավորում է հրեշը: Իսկ մարդկային կյանքի «դժոխայից մեքենան» աշխատում է իշխող շարի արդյունքն է:

«Իժոխայից մեքենան», թերևս, եռագրության ամենահաջողված ստեղծագործությունն է: Ի տարբերություն «Օրփեոսի» և «Անտիգոնեի», սրանում ռեալիստական երանգներն ավելի թանձր են, զգալի է հեղինակի պրոբլեմային նպատակադրումը, իսկ ֆանտաստիկական մոտիվները հիմնականում ծառայում են այդ նպատակադրման բացահայտմանը:

Ամբողջության մեջ եռագրությունը Կոկտո-դրամատուրգի յուրօրինակության ամենախոսուն արտահայտությունն էր, իսկ այդ յուրօրինակությունը առաջին հերթին բեմական իրականացման առանձնահատկությունների մեջ էր: ժ. Կոկտոն, իսկապես, մեծ կարևորություն էր տալիս բեմական ներկայացմանը, թատերական սվանդները «թարմացնելու» բնորոշված միտում ուներ: Դեռևս 1924 թ. ստեղծելով «Ռոմեո և Ջուլիետ» ողբերգությունը, Կոկտոն մտադիր էր «երիտասարդացնել» շեքսպիրյան թատրոնը և հենց այդ հանգամանքը նկատի ունենալով իր երկը համարում էր «խաղապատրվակ բեմադրության համար»: Կոկտոն ոչ միայն ներկայացնում, այլև պարտադրում էր բեմականացման իր սկզբունքները, դերասաններից պահանջում խստորեն հետևել իր ցուցումներին, նույնիսկ նշում էր դիմախաղի և դեկորացիաների մանրամասները:

1980 թ. ժան Կոկտոն Ֆրանսիացի դրամատուրգներից առաջինը գրում է մոնոդրամա՝ «Ջայն մարդկայինը», որի բեմադրումը նշանակալից իրադարձություն էր Ֆրանսիայի թատերական կյանքում: Հեղինակի մտահղացմամբ ստեղծագործությունը «խաղապատրվակ» էր դերասանի համար և առիթ պիտի ստեղծեր «երկու դեր խաղալու, մեկը՝ երբ դերասանուհին խոսում է, մյուսը՝ երբ դերասանուհին լսում է և ուրվագծում անտեսանելի պերսոնաժի բնավորությունը»:

¹ Մեքենայումը կատարվում է **Т. К. Якимович, Драматургия и театр современной Франции, Киев, 1968, գրքից, էջ 161:**

Դրամատուրգը չէր գերազնահատում իր ստեղծագործության նշանակու-
թյունը: Մոնոդրաման, իսկապես, դերասանական կարողությունների լիարժեք
բացահայտման մեծ հնարավորություններ էր ընձեռում, բայց միաժամանակ
բարձր օժտվածություն պահանջում: Եվ առաջին հերթին այն պատճառով, որ
«Ջայն մարդկայինը» խորապես հոգեբանական գործ էր, անհատական ծանր
դրամայի բացահայտում: Իր հերոսուհու մասին Կոկտոն գրում էր. «Պերսոնա-
ժը մի միջակ զոհ է, ոտից-գլուխ սիրահարված մի կին: Նա լուի մի հնարք է
ուզում բանեցնել, օգնում է տղամարդուն, որպեսզի վերջինս իր սուտը խոս-
տովանի, որպեսզի անշուք հիշատակ չթողնի»: Հեղինակային այս պարզ ու ան-
միջական մեկնաբանությամբ, ասես, անտեսվում է ստեղծագործության հոգե-
բանական խորությունը: Իրականում հենց միայն զգացմունքի, երազանքի և
իրական վիճակի անհամատեղելիությունը ինքնին ներքին լարում, հոգեկան
մեծ դրամա էր ենթադրում: Եվ արտաքուստ որքան էլ Կոկտոն պարզեցնում էր
իր միտումը, ստեղծագործության հիմնական նպատակադրումը, ներքուստ լի-
վին գիտակցում էր հերոսի ամբողջ ողբերգականությունը:

Հանգուցալուծման պահը, որում ներկայացվում է կինը, խիստ դրամատիկ
է: Սիրո անդառնալի կորստի և հրաժեշտի անխուսափելիության սթափ գի-
տակցումը նրա մեջ վերջնականապես չեն սպանել հավատը: Այդ «հնարքում»,
որի մասին խոսում է հեղինակը, վայրկյան առ վայրկյան մեռնող հույս կա:
«Մարդիկ առաջ նման դեպքերում հանդիպում էին, գլուխը կտրցնում, խոս-
տումները մոռանում, փորձում էին անկարելի անել, պաշտած մարդուն համ-
բուրում էին, վզից կառչելով հակառակը համոզում: Մի հայացքը կարող էր
ամեն ինչ փոխել: Իսկ հիմա՝ այս գործիքով խոսելիս, ոչինչ անել չես կարող՝
վերջացածը վերջացած է...»,— դառնացած ասում է կինը: Ճակատագրին հաս-
ցեագրված այս բողոքում պարզորոշ երևում է հույսի հոգեվարքը, որը երկար
չի տևում:

Փ. Կոկտոն հետագայում էլի մի քանի մոնոդրամաներ գրեց հայտնի դե-
րասանների համար, որոնք, սակայն, չունեցան «Ջայն մարդկայինի» հաջո-
ղությունն ու ճանաչումը: Դրամատիկական այս ինքնատիպ երկը մշտական
տեղ է ունեցել նշանավոր դերասանուհիների (Էդիթ Պիաֆ, Ինգրիդ Բերգման,
Սիմոնա Սինյորե, Աննա Մանչյանի) խաղացանկում: Պիե-սի հիման վրա կինո-
ֆիլմ է նկարահանվել, օպերա է գրվել:

ՅՕ-ականների վերջերին և 40-ականների սկզբին ժամ Կոկտոն հանդես
է գալիս ժամանակի բուրժուական իրականությունը ներկայացնող «Դժվարա-
հաճ ծնողներ» (1933), «Սրբազան հրեշներ» (1940) և «Գրամեքենա» (1941)
հոգեբանական դրամաներով: Անողորք ճմարտացիությամբ պատկերելով բուր-
ժուական ընտանիքի կենցաղը, Կոկտոն հիմնականում «իր ուշադրությունը
կենտրոնացնում է այդ ընտանիքը քայքայող կոնֆլիկտների հոգեբանական
կողմին, անտեսելով դրանց սոցիալական հիմքը»²: Սակայն նույնիսկ այս
դեպքում բավականին պարզորոշ երևում է հեղինակի վերաբերմունքը, որը
դրսևորվում է բարբերի սուր քննադատության մեջ: Այդ առումով ավելի քան
հաջողված է «Դժվարահաճ ծնողներ» պիեսը:

² «История французской литературы», том 4, М., 1963, с. 242

Կոկտոն իր ստեղծագործությունը համարում էր «ժողովրդական թատրոնի» փորձ, նկատի ունենալով, որ այն հավասարապես կարող է հետաքրքրել բոլորին: Նրա համոզմամբ «լայն հասարակությունը շատ դեպքերում անհաղորդ է բուրժուական բարքերի իսկական էությանը, չնայած հաճախ անգիտակցաբար տրվում է դրանց ազդեցությանը»: Այդուհանդերձ, դրամատուրգն իրեն չէր համարում որոշակի ակնկալիքների արտահայտիչ, այլ, իր իսկ վկայությամբ, ներկայացնում էր միջսերնդային կոնֆլիկտներից և հակասություններից ծրնված մի դրամատիկ իրավիճակ: Այլ կերպ, Ժ. Կոկտոն շարունակում և զարգացնում էր «Գծվարահաճ երեխաներ» վեպի հիմնական հարցադրումները:

Հավատարիճ մնալով իր խստապահանջությանը՝ պիեսի մտահղացման և բեմադրման առաջնահատկությունների մասին Կոկտոն գրում էր. «Հարկավոր էր գրել ժամանակակից և պարզ պիես, դերասաններին և հանդիսատեսին թույլ չտալ շունչ առնել: Ես վերացրի հեռախոսը, նամակները, սպասավորներին սիգարետները, նկարված պատուհանները և նույնիսկ ազգանունը, որը սահմանափակում է պերսոնաժների գործողությունը և միշտ կասկածի տեղիք տալիս»³:

Բարդ ու լարված իրադրություններում, հնի ու նորի բախումներում, որոնք ուղեկցվում են հոգեբանական նուրբ ու դիպուկ երևակումներով, Կոկտոն մերկացնում է կեղծ բարոյականությամբ սքողված քաղքենիությունն ու էգոիզմը, ցույց տալիս իրենց դարձ ապրած բարոյական ըմբռումների ու չափանիշների ողջ սնանկությունը: Հերոսների անզիջում պայքարում, միմյանց տրվող բնութագրերում միանգամայն պարզ երևում է ընտանիքի քայքայումը: Հասարակության հիմքը՝ ընտանիքը, ներկայացվում է իր ակնրև թերատությամբ, և հենց այդ թերատությունն է մատնանշում հերոսներից սեկը՝ Լեոնին, երբ ասում է. «Ընտանիք, ընտանիքի բեկոր, բուրժուազիայի բեկոր, աներեր բարոյականության բեկոր, ուղիղ գծի փշուրներ»⁴:

Որպես դրամատուրգ ևս Կոկտոն միշտ որոնումների մեջ էր, և այդ որոնումները մերթ տանում էին դեպի անտիկ աշխարհ ու միջնադար («Կլոր սեղանի ասպետները»), մերթ բերում ներկան, պակվում գեղարվեստական տարարժեք բացահայտումներով: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո նա գրում է «Երկզխանի արծիվ» (1946) և «Բաքոս» (1952) պիեսները, «Մոսյլ լույս» (1954) բանաստեղծությունների ժողովածուն:

Ժան Կոկտոն, որին արդարացիորեն անվանել են «ավանգարդի կենդանի քանաձև», «Օլիմպոսի Մերկուրի», վախճանվել է 1983 թ. հոկտեմբերի 11-ին:

ԶԱՅՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ

Մոնոդրաման առաջին անգամ ներկայացվել է 1930 թ. փետրվարի 17-ին, Փարիզի «Կոմեդի Ֆրանսեզ» թատրոնում՝ դերասանուհի Բերթ Բովիի մասնակցությամբ:

³ «Пьесы современной Франции», М., 1960, стр 4

⁴ Նույն տեղում, էջ 384:

1 Հեղինակը սիրում է փորձեր անել: Նա մի սովորույթի գերի է. տեսնելով, որ մի բան է արել, հարցնում է ինքն իրեն, թե ուրիշ ինչ է ուզում անել—սա մի շուրթիճակ խոստովանություն է սեփական հակումների ու հետաքրքրությունների բազմազանության մասին: Իսկապես, Ժ. Կոկտոն հարեց իր ժամանակի գրեթե բոլոր ողղություններին ու հոսանքներին, ուժերը փորձեց արվեստի ու գրականության տարբեր բնագավառներում:

2 Պետք է նկարել մի գտած կին, ոչ թե ստույգ, որոշակի կին...—կուրիզմի գեղագիտությանը բնորոշ վերացականության վկայակոչումով Ժ. Կոկտոն հակադրվում էր չոր պատճենահանման կողմնակիցներին, ալիսմա շեշտելով տիպականացման անհրաժեշտությունը:

3 Սոֆոկլես—հին հունական բանաստեղծ, դրամատուրգ (մ. թ. ա. 496—406 թթ.), անտիկ ողբերգության խոշորագույն ներկայացուցիչը («Էդիպ արքա», «Անտիգոնե», «Էլեկտրա» և այլն):

4 Ռասին, Մոլիեր—ֆրանսիական կլասիցիստական դրամատուրգիայի խոշորագույն ներկայացուցիչներ (XVII դար):

5 Վիկտոր Հյուգո—ֆրանսիացի գրող (1802—1885), «Փարիզի աստվածամոր տաճարը», «Թշվառներ», «93 թվական» վեպերի և «Էռնանի», «Կրոմվել», «Լուկրեցիա Բորջա» դրամատիկական երկերի հեղինակը:

6 ...ինչպես իր «Ռոմեոն» կոչված է խաղապատրվակ լինելու բեմադրության համար—շեքսպիրյան թատրոնը «երիտասարդացնելու» նպատակով 1924 թ. Ժ. Կոկտոն գրեց «Ռոմեո և Զուլիետ» ողբերգությունը:

7 «Կոմեդի Ֆրանսեզ»—աշխարհի հնագույն ազգային թատրոնը: Բացվել է 1680 թ., Փարիզում՝ Լյուդովիկոս XIV-ի հրամանով: Հավատարիմ մնալով ազգային դասական ավանդույթներին՝ այսօր էլ հիմնականում ներկայացնում է Մոլիերի, Ռասինի, Կոռնեյլի և Բոմարշեի ստեղծագործությունները:

8 «Կոմեդի Ֆրանսեզի» հանդիսատեսը առայժմ ծարավ է զգացնունքների...—ակնարկվում է թատրոնի խաղացանկի միօրինակությունը: Կլասիցիզմի կանոնիկ օրենքներով ստեղծված երկերը, անշուշտ, չէին կարող բավարարել ամեն ինչում նորարար Ժ. Կոկտոյին:

9 Վերսալ—քաղաք Ֆրանսիայում, Փարիզին մերձակա: 1682—1789 թթ. եղել է ֆրանսիական թագավորների գահանիստը: Հայտնի է կլասիցիստական ոճի ճարտարապետական կառույցներով և պուրակներով:

10 Մարսել—հնագույն քաղաք Ֆրանսիայի հարավում, Միջերկրական ծովի ափին:



Ֆրանսիացի դրամատուրգ Արթուր Ադամովը (Հարություն Ադամյան) ծնվել է օգոստոսի 28-ին Կիսլովոդսկում, շուշեցի նավթարդյունաբերող Սուրեն Ադամովի ընտանիքում: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին Ադամովների ընտանիքը մեկնում է արտասահման շրջագայության: Պատերազմը, իսկ ապա նաև հետագա իրադարձությունները խանգարում են նրանց վերադարձին: Երկար դեգերումներից հետո ընտանիքը, ի վերջո, հաստատվում է Ֆրանսիայում, նախ՝ գավառում, իսկ 1924-ից՝ Փարիզում:

Ա. Ադամովը ընդհատումներով սովորում է Շվեյցարիայում, Գերմանիայում ու Ֆրանսիայում: Ապագա դրամատուրգին վիճակված էր ապրելու տարագրության բոլոր դառնություններն ու զրկանքները, որոնք էլ որոշիչ նշանակություն ունեցան նրա աշխարհայացքի ձևավորման գործում: Եվ սյուրռեալիզմի ոգով զրված առաջին բանաստեղծությունները երիտասարդ մտավորականի հոռետեսական ու անկումային տրամադրությունների արտահայտությունն էին: 20-ականների ավարտին հարելով սյուրռեալիստական ուղղությանը՝ Ա. Ադամովը բարեկամանում է Պոլ Էլյուարի հետ:

30-ական թվականներից Ադամովը մասնակցում է Ֆրանսիայում գլուխ բարձրացրած ֆաշիստական խմբավորումների դեմ մղվող պայքարին: Գերմանական օկուպացիայի տարիներին շուրջ կես տարի անցկացնում է Արժելեի համակենտրոնացման ճամբարում: Հետագայում հրապարակված «Սոսկալի օրագիրը» (1948) և «Խոստովանություն» (1948) ինքնակենսագրական վիպակը կյանքի էին կոչված այդ շրջանի տպավորություններով:

40-ականների ավարտը Ֆրանսիայի թատերական կյանքում նշանավորվեց ավանգարդիստական մի նոր ուղղության՝ արսուրդ թատրոնի ստեղծմամբ: 1958 թ. Փարիզում ներկայացվեց ծագումով իռլանդացի Սեմյուել Բեքեթի «Գոդոյի սպասումներում» պիեսը: Դրամատիկական այդ ստեղծագործության կենտրոնական հերոսները անհյուրընկալ ու թշնամի աշխարհում մոլորված Վլադի-

միրն ու Էստրազոնն են, որոնք սպասում են Գողոյին: Անօթևան, քաղցած ու կործանված այդ մարդկանց համար Գողոն իրական անհրաժեշտություն է, անփոխարինելի սատար, առանց որի նրանք չեն պատկերացնում կյանքը: Եվ ամեն առավոտ նրանք գալիս են հանդիպման նախորոշված վայրը և ուշ երեկոյան վերադառնում՝ համառորեն կառչելով այն մտքից, թե վաղը նա անպայման կգա:

Վլադիմիրն ու Էստրազոնը նույնիսկ վստահ չեն, որ իրենք գտնվում են պայմանավորված տեղում, որ շարքովա այդ օրն է խոստացել գալ Գողոն: Իսկ Գողոն այդպես էլ չի հայտնվում: Թե ով է նա, չեն կարող ասել նաև Վլադիմիրն ու Էստրազոնը: Ահա այս ու նման հանգամանքները նրանց սպասումը դարձնում են անմիտ, արսուրդ:

Գիպուկ է անգլիացի թատերագետ Քեյննթ Թայնենի բնորոշումը՝ «Սեմյունել Բեքթթի «Գողոյի սպասումներում» պիեսը դրամատուրգիական վակուում է»¹:

Մակայն Բեքթթի դրաման չէր ֆրանսիական արսուրդ դրամատուրգիայի նախակարապետը: Պարզապես նրանում ավելի, քան Արթուր Ադամովի «Պարոդիա»-ում (1947) և Էժեն Իոնեսկոյի «Աթոռներ»-ում (1952), ակնհայտ էին այն հիմնական առանձնահատկությունները, որոնք հիմքեր էին տալիս այդ ստեղծագործությունները ընդհանրացնելու արսուրդ դրամատուրգիա կամ անտիդրամա հասկացությամբ:

Իսկ ֆրանսիական անտիդրամայի տեսական ակունքները շատ ավելի հեռվից էին գալիս, հասնում մինչև XIX դար: Անցյալ հարյուրամյակի վերջերին Դյումա-հոր և Վիկտորիեն Սարդուի մելոդրամաներին վաղուց ընտելացած փարիզյան թատերասերները հնարավորություն էին ունեցել դիտելու Ալֆրեդ Ժարրիի «Արքա Յուբիու» պիեսը: Հասարակությունը չցանկացավ ընդունել այդ ներկայացումը, որը ֆրանսիական բեմում իշխող դրամատուրգիական քարացած կանոնները փշրելու մի փորձ էր: Միտումնավոր անտրամաբանությունը և գրոտեսկային իրադրությունները, որոնք պետք է աշխարհի և մարդկային գոյության անհեթեթության տպավորություն ստեղծեին, ընդունելություն չգտան: Պիեսում արսուրդի մոտիվի առկայությունը պայմանավորված էր ոչ միայն Ժարրիի աշխարհընկալմամբ, այլև թատրոնի դերի նրա ըմբռնմամբ: Դրամատուրգը թատրոնի առաջնային խնդիրը համարում էր յուրիմացություն ու զարմանք առաջացնելը և որքան էլ պահանջկոտ ու հետևողական էին ֆրանսիացի թատերասերները, անատաղձ, վայրկենական ու խաբուսիկ բեմական էֆեկտներով թատրոնի կենսագրությունը չավարտվեց: Հետևորդներ գտնվեցին դարասկզբի ֆրանսիական գրականության՝ նախ Գիյոմ Ապուլինների և Մաքս Ժակոբի հիմնադրած կուրիատական շարժման, ապա դադաիզմի և սյուրռեալիզմի գեղագիտության մեջ: Ժարրիի դրամատուրգիական փորձարարությունների յուրօրինակ շարունակությունն էին Ապուլինների մի քանի պեսները, որտեղ գունային և ձայնային էֆեկտները ետին պլան էին մղում գաղափարական բովանդակությունը:

Աշսուրդ դրամատուրգիան քիչ բան չժառանգեց նաև Անտոնեն Արտոյից:

¹ Кеннет Тайнен, На сцене и в кино, М., 1969, стр 62

ՏՕ-ական թվականներից հրապարակված «Դաժանության թատրոն» աշխատության մեջ նա գրում էր. «Հրաժարվելով մարդու հոգեբանությունը, բնավորությունը և վառ ընդգծված զգացմունքները արտահայտելուց՝ թատրոնը կդիմի համապարփակ մարդուն և ոչ թե օրենքներից հնազանդ, կրոններից և պարտադրանքներից խեղված սոցիալական մարդուն»: Այլ կերպ ասած, խոսքը հասարակությունից, բարոյական ու իրավական նորմերից վեր կանգնած վերացական մարդու մասին էր: Ընդամենը քսան տարի հետո գրեթե այդպիսին էլ պիտի լինեիր անտիդրամայի հերոսը: Աբսուրդիստներն ընդմիշտ որդեգրելու էին «դաժան թատրոնի» շատ սկզբունքներ:

Ի վերջո, արսուրդ դրամատուրգիայի տեսական հարցադրումները աղերսվում են նաև էկզիստենցիալիզմի որոշ հիմնադրույթների հետ (գոյության արսուրդը, անհատի դատապարտվածությունը և այլն):

Ավանգարդիստական նոր ուղղության առաջացման սոցիալական արմատները պետք է փնտրել ետպատերազմյան բուրժուական իրականության մեջ: Միջուկային երկու պայթյունով երկրորդ համաշխարհայինի ավարտը խարխլեց վաղվա օրվա հավաքը, տազնապ ծնեց ատոմային արհավիրքի առաջ: Հոռետեսական այդ աշխարհընկալումն էլ պայմանավորեց չափանիշների և արժեքների վերանայումն ու վերագնահատումը: Մարդկային գոյության խնդիրը դարձավ հարցերից ամենահրատապը, որի պատասխաններում էլ դրսևորվեց արվեստագետ անհատի կենսական դիրքորոշումը, հետևաբար և՛ գեղագիտական կողմնորոշումը: Ահա 50-ականների սկզբին ծագումով իռլանդացի Սենյունել Բեքթթի, ռումինացի Էժեն Իոնեսկոյի և Արթուր Ադամովի կողմից արսուրդ դրամատուրգիայի հիմնադրումը նպատակ ունեւր ցույց տալ մարդկային կեցության անմտությունը:

1947 թ. Ա. Ադամովը հանդես է գալիս «Պարոդիա» պիեսով (բեմադրվել է 1952 թ.): Ստեղծագործությունը, որի մտահղացումը ծնվել էր փողոցային մի տեսարանից (աղջիկները ծիծաղում ու ծաղրում էին կույր հաշմանդամին), մարդկանց մշտական մեճության և օտարության մասին էր: Գոյության արսուրդի և մարդկային բանականության անգործության հաստատմանն էր նպատակաուղղված «Ներխուժում» (1949) պիեսը: Դրամատիկական այդ երկի գլխավոր հերոս Պիեռի համար հանգուցյալ բարեկամի ձեռագրերի վերծանումը դառնում է կյանքի հիմնական զբաղմունքը: Սակայն նրան լքում է կինը, համագործակցումից հրաժարվում է երկար տարիների գործընկերը: Մյուս կողմից՝ Պիեռի հետագոտությունը պարզապես անմտություն է, որովհետև նա ոչ մի կերպ չի կարող ապացուցել ստացված արդյունքների ճշմարտագիտությունը: Բացի այդ, նա ինքն էլ համոզված չէ, որ վերծանման իր տարբերակը ճշգրիտ է. ձեռագրերի բովանդակությունը հայտնի է միայն հանգուցյալ հեղինակին: Ահա այս կերպ Ադամովը միանգամայն անմիտ է դարձնում Պիեռի անձնագոհությունը:

Ի տարբերություն Բեքթթի և Իոնեսկոյի, Ադամովը փոքր-ինչ ավ մոտեցում ունի իրականությունն արտացոլելիս: Նա դնում է մարդկային գոյության պրոբլեմը, հասնում այդ գոյության արսուրդի բնորոշմանը՝ անհրաժեշտաբար անդրադառնալով անհատի և հասարակության փոխհարաբերություններին և ոչ թե մեկուսացնելով անհատին: Սակայն այս դեպքում ևս դրամատուրգի դիրքորոշումը կոչված է հաստատելու անհատի դատապարտվածությունն ու մեճությունը:

Այդ առումով հատկանշական էր «Մեծ և փոքր գորախաղեր» (1950) պիե-սը: Անտիդրամայի համար նշանակալից նորություն էր մարտիկի կերպարը, որը, վկայակոչելով մարդկանց սպասումների ու հույսերի ընդհանրությունը և քննադատելով ունևորների իշխանությունը, միասնության կոչ էր անում. «Մի՞թե չեք տեսնում, որ մեր մեկուսացումը ոչ մի լավ բանի չի հասցնի»:

«Քոլորը բոլորի դեմ», այսպես էր կոչվում 1953 թ. բեմադրված դրամա-տիկական ստեղծագործությունը, որը պատմում էր հալածական մարդկանց մասին: «Կաղթականները» (հրեական բնակչություն) հետապնդվում ու հալած-վում են «բնիկների» (ֆաշիստներ) կողմից: Հաղթանակից հետո նույնքան դա-ժան են վարվում «գաղթականները»: Երբ «բնիկներն» իրենք են դառնում իրա-դրության տերը, վերսկսում են իրենց հալածանքները: Այլ կերպ ասած, տեռորը փոխարինվում է տեռորով: Պիեսի այդքան տարօրինակ և միաժամանակ պար-զունակ սյուժեն լոկ միջոց էր, պայմանականություն՝ վերստին ներկայացնելու մարդկանց դատապարտվածությունն ու անզորությունը, գոյության արսուրդը:

50-ականների կեսերը նշանավորվեցին Ա. Ադամովի գեղագիտական կողմ-նորոշման բեկմամբ: Հաղթահարելով էտպատերազմյան տարիների հակասական տրամադրությունները՝ դրամատուրգը լրջորեն մտահոգվում է թատրոնի դերով ու խնդիրներով: «Ես այլևս հրաժարվում եմ «չպայմանավորվածի» թատրոնից, «անմարդաբնակ երկրի» թատրոնից...»,—հայտարարում էր Ադամովը: Ուրիշ խոսքով, դրամատուրգը խզում էր իր կապերը «արսուրդիստների» հետ, միա-ժամանակ հրաժարվելով և էկզիստենցիալիզմի հիմնադրույթներից, և «դաժան թատրոնի» չոր ու սխեմատիկ սկզբունքներից: Անցումային այս շրջանում ըս-տեղծվում են «Պրոֆեսոր Տարանը» փոքրիկ դրաման և «Պինգ-պոնգ» կատա-կերգությունը: Թեև երկու ստեղծագործություններում էլ զգալի էին անտիդրա-մայի առանձնահատկությունները, սակայն դրանք արդեն տեղափոխված էին, այսպես կոչված, արտաքին-ձևական մակարդակ (գործող անձանց լեզուն, կոմ-պոզիցիոն-սյուժետային հնարանքներ): Իսկ պիեսների գաղափարական ուղղ-վածությունը խոսում էր Ադամով-արվեստագետի գեղագիտական նոր կոնցեպ-ցիայի ձևավորման մասին:

Այսպես, անհեթեթ այն վիճակը, որում հայտնվում է պրոֆեսոր Տարանը, ակնհայտ պայմանականությամբ հանդերձ պարզորոշ ներկայացնում է բուր-ժուական իրականության ներքին հակասությունները, միջավայրի քար անտար-բերությունը և վերջինիս կործանարար հետևանքները: «Պինգ-պոնգ» կատա-կերգության հերոսներից շատերը մեռնում են ֆիզիկապես կամ հոգեպես: Նրանց կործանում է անհագ Մեքենան՝ պիեսի գլխավոր գործող անձը, կամ կուտակման տենչը: Կենդանի է մնում միայն բանաստեղծ Արթուրը, որը գրեթե չի էլ մտածում նյութական ապահովվածության մասին:

«Պրոֆեսոր Տարանը» և «Պինգ-պոնգը» հատկանշական էին նաև այլ առումներով: Այս երկերում, թեև ենթատեքստում, բայց արդեն զգալի էր դրա-մատուրգ-քաղաքացու քննադատական ոգին, որը բացորոշ պիտի դրսևորվեր հետագա ստեղծագործություններում:

Հրաժարումը արսուրդ թատրոնից և թատրոնի իսկական դերի ու կոչման գիտակցումը, բնականաբար, նախապատրաստեցին դիմումը համաշխարհային դրամատուրգի մի լավագույն ավանդներից, դրանց ստեղծագործական յուրա-ցումը: Ուսանելի էին հատկապես Չեխովի, Գորկու և Բրևյաթի դասերը: Ահա

«Պրոֆեսոր Տարանը» դրամայում նկատելի է մասնավորապես չեխոսկյան դրամատուրգիայի ազդեցությունը:

1957 թ. Փարիզում և Լիոնում առաջադեմ ռեժիսոր Ռոժե Պլանշոնի ղեկավարությամբ բեմադրվում է Ա. Ադամովի «Պառլո-Պառլի» տրագիֆարսը, որը դրամատուրգի ստեղծագործության մեջ նշանավորում էր մի նոր շրջանի, իսկ Ֆրանսիայի թատերական կյանքում մի նոր ուղղության՝ «դեմոկրատական ավանգարդի»² սկիզբը: Անդրադառնալով Ա. Ադամովի այս շրջանի ստեղծագործությանը, ֆրանսիացի թատերագետ Գի Լեկլերկը նկատում է. «Եռյակից» միայն Ադամովը ճիշտ ուղի ընտրեց: Դրան նախորդեցին երկար վարանումներ: 1956 թ. նա իզուր չէր ասում. «Քաջ գիտե՞նալով, որ առանց պատմական պատճառների սոցիալական կոնֆլիկտ գոյություն չունի, ես, ցավոք, այդ կոնֆլիկտը միշտ տեղափոխում էի բարոյական մակարդակ: Ես միայն հիմա եմ գիտակցում իմ սխալը: Այո, ինձ թվում է, որ եթե բեմում սոցիալական փաստեր ցուցադրելու անհրաժեշտություն ես զգում, ապա հարկ է վերանայել թատրոնում պատմականության հարցը»³:

Տեսական այս հարցադրման գեղարվեստական լուծումը գտնում ենք «Պառլո-Պառլի» պիեսում: Ինչպես Գի Լեկլերկն է նշում, «պիեսի հերոսների պատմությունը հենց Պատմության շարժումն է»⁴: Պատմական այդ ժամանակագրությունը մեզ տեղափոխում է 1900—1914 թվականները, ներկայացնում ֆրանսիական կապիտալիզմի նախապատերազմյան կենսագրությունը՝ միջկուսակցական պայքար, գործադուլային շարժումներ, պատերազմ գաղութային շուկաների համար, առևտրական կապիտալի ընդլայնում, 1905 թ. ռուսական հեղափոխությունը և այլն: Պատմական այս ֆոնի վրա փետուրների սուևտրով զբաղվող Յուլո-Վասիորը և թիթեռներ վաճառող Պառլո-Պառլին ներկայացվում են որպես վիթխարի շահագործող ապարատի ներկայացուցիչներ, որոնց մեքենայություններին զոհ են գնում աշխատավոր մարդիկ: Այս ու այն տեղից փախած տաժանապարտներին Պառլոն օգտագործում է իր շահույթի համար: Նրանք տարբեր երկրներից թիթեռներ են ուղարկում, որոնց վաճառքով թզբաղվում է վերջինս: Վասիորի և Աբբատի համար համաշխարհային պատերազմը եկամտի լրացուցիչ աղբյուր է. զինվորական կոճակների արտադրությունը պատկառելի շահույթ է բերում:

Կուտակման այս մրցավազքում, բնականաբար, բացառվում են անշահախնդիր մարդկային հարաբերությունները: Գործող անձներից մեկը՝ Ստելլան դիպուկ է բնորոշում. «Մեծ բարեկամությունը ծնվում է մանր օգուտներից»⁵:

Ուշագրավ է Ռոբեր Մարպոյի, Աբբատի բառերով ասած՝ «գիտակից ու կազմակերպված աշխատավորի» կերպարը, իրողություն, որը խոսում էր Ադամովի քաղաքական հայացքների էվոլյուցիայի մասին:

«Պառլո-Պառլի» պիեսը վկայում էր, որ երկարատև որոնումներից հետո,

² *Տե՛ս* «История зарубежного театра», ч. 3, М., 1977, стр. 28

³ Դև Լեկլերկ, Судьбы авангардистского театра во Франции, «Театр», 1959, № 9, стр. 187.

⁴ Նույն տեղում:

⁵ «Пьесы современной Франции», М., 1960, стр. 759.

յորացնելով ռեալիստական դրամատուրգիայի լավագույն ավանդույթները, Ադամովը դիմում է հրեխոթի էպիկական թատրոնին: Եվ ընդամենը չորս տարի անց լույս տեսած «71-ի գարունը» աչքի էր ընկնում ճենց էպիկական մեծ ընդգրկումով:

Պիեսի պրեմիերան տեղի ունեցավ 1962 թ. Լոնդոնի «Յունիթի» թատրոնում, տպա բեմադրվեց Բեռլինի Մ. Գորկու անվան թատրոնում, Հունգարիայում, Չեխոսլովակիայում և Հարավսլավիայում: Ֆրանսիայում այն առաջին անգամ ներկայացվեց 1962 թ.՝ Սեն-Դենիի Ժերար Ֆիլիպի անվան մունիցիպալային թատրոնում, բանվորական ազիտացիոն թատրոնի նախկին ռեժիսոր Կլոդ Մարտենի ղեկավարությամբ: Փաստական հարուստ նյութի հիման վրա ստեղծված լայն կտավի դրամատիկական այդ երկը փարիզյան կոմունայի կարճատև, բայց հերոսական կենսագրության գեղարվեստական բացահայտումն էր: «...Ինչու՞ Փարիզի կոմունան,—1968 թ. «Իմ կերպափոխությունը» հարցազրույցում բացատրում էր Ա. Ադամովը:—Դա, իհարկե, քաղաքական ընտրություն էր: Բանվորական առաջին կառավարություն, քաջություն, բանականություն, հերոսականություն, որոնք Փարիզը երեք ամսով դարձրել էին աշխարհի մայրաքաղաքը,—մի՞թե դա թատրոնի համար ամենամեծ թեմաներից չէ»⁶:

Կենսական այս դիրքորոշումը և քաղաքական դավանանքը արտահայտվեցին նաև Ադամովի վերջին ստեղծագործություններում («Մնացուկների քաղաքականությունը», «Սրբազան Եվրոպա», «Չափից դուրս»): Հիշարժան է հատկապես «Սրբազան Եվրոպա» պիեսը, որը ծաղրում էր Արևմուտքի «ազատ աշխարհը», մերկացնում բուրժուական իրականության արատները:

Արթուր Ադամովը թարգմանել է Չեխովի ու Գորկու պիեսները, բեմարկել Գոգոլի «Մեռած հոգիները»: Նա Ֆրանսիայի կոմունիստական կուսակցության անդամ էր:


Մահացել է մարտի 15-ին, Փարիզում:

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԱՐԱՆԸ

Գրել է 1951 թ.: Առաջին անգամ ներկայացվել է 1953 թ. մարտի 18-ին, Լիոնի կոմեդիայի թատրոնում: Բեմադրել է Ռոժե Պլանշոնը:

¹ Բելգիայի արքայական առյուծը—Բելգիայի պետական գերբի վրա պատկերված ոսկեգօծ առյուծը՝ գլխավերևում արքայական թագով:

⁶ «Писатели Франции о литературе», М., 1978, стр. 380.



Ծնվել է հունիսի 25-ին Փարիզում: Ընդամենը երկու տարեկան էր, երբ Հրենդ-

կաշինում արևադարձային տենդից մահացավ հայրը՝ ծովային սպա ժան-Բատիստ Սարտրը: Մանկությունն անցել է մոր ծնողների ընտանիքում, ուր մեծ հեղինակություն ունեւր պապը՝ Ծառլ Եվեյցերը: Վերջինս հուշակապուր բժիշկ ու մեծ հումանիստ Արեքտ Եվեյցերի ազգականն էր և գիտական շրջաններում հայտնի էր գերմաներենի իր մի քանի դասագրքերով:

Սարտրը վաղ է սովորում կարդալ, իսկ հաղորդակցումը գրքերի աշխարհին նախապատրաստում է նաև ստեղծագործական առաջին քայլերը:

1915 թ. ընդունվում է Փարիզի Հենրիխ IV-ի լիցեյի նախապատրաստական դասարանը: Որոշ ընդմիջումներով, այնուամենայնիվ, Սարտրին հաջողվում է ավարտել լիցեյը: 1924 թ. ընդունվում է Փարիզի Բարձրագույն նորմալ դպրոցը, որն ավարտելուց հետո փիլիսոփայություն է ուսումնասիրում Սորբոնի համալսարանում: Այստեղ էլ հանդիպում է Սիմոնա դե Բովուարին, որը դառնում է Սարտրի կյանքի ընկերը և արեխտական էկզիստենցիալիզմի ներկայացուցիչներից մեկը:

1931—33 թթ. Սարտրը փիլիսոփայություն է դասավանդում Հիլբերտի լիցեյներից մեկում, ապա շուրջ երկու տարի Բեռլինի Ֆրանսիական ինստիտուտում ուսումնասիրում է. Հուսեռլի ֆենոմենոլոգիան, ծանոթանում գերմանական էկզիստենցիալիզմի հիմնադիր Մ. Հայդեգերի ուսմունքին: 1936 թ. հրատարակած «Էզոյի տրանսցենդենցիան» աշխատությունը այդ ուսումնասիրությունների արդյունքն էր:

Հուսեռլյան ֆենոմենոլոգիան, որը «առանց սուբյեկտ օբյեկտ չկա» իդեալիստական սկզբունքը հաստատելու համար վկայակոչում էր գիտակցության ինտենցիոնալությանը (ուղղվածությունը դեպի օբյեկտ), Սարտրին ամենից առաջ անհրաժեշտ էր մարդկային կեցությունը բացատրելու համար: Ըստ այդմ, աշխարհի «օտարությունը» և «թշնամությունը» բացատրվում էր նրանով, որ այդ

աշխարհը գոյություն ունի մարդուց դուրս: Նման դիրքորոշմամբ, անշուշտ, անտեսվում էին անհատի օտարման սոցիալական պատճառները, մի հանգամանք, որն ինքնին բացառում էր նաև պատճառների վերացման ուղիների որոնումը:

«Կեցության պատահականությունը» վաղուց էր մտահոգում Սարտրին: Այդ մտահոգությունը արդեն որպես գոյության անմտության (աբսուրդի) կոնցեպցիա արտահայտվում է Ֆրանսիացի փիլիսոփայի «Մրտխառնութ», (1958) վեպում: Ստեղծագործության գլխավոր հերոս Ռոկանտենը, որը գրում է XVIII դարի Ֆրանսիացի արկածախնդիր մարկիզ Ռոլեբոնի կենսագրությունը, սկսում է զգալ, որ իրերը դուրս են իրենից և օտար իրեն: Երջապատի օտարության գիտակցումը նրան տառապանք է պատճառում, և իր օրագրում նա նշում է. «Էականը պատահականությունն է: Ուզում եմ ասել, որ համաձայն սահմանմանը, գոյությունն անհրաժեշտությունն չէ: Գոյություն ունենալը լի են էլ ն է: ...Գոյերը հայտնվում են, հնարավորություն են տալիս իրենց դիմա վո թ ե լ, բայց դրանք երբեք հնարավոր չէ արտածել: ...Ամեն ինչ ինքնակամ է՝ այս այգին, այս քաղաքը և ես ինքս: Երբ պատահում է, որ դրանում իրենց հաշիվ են տալիս, ապա հոգին պղտորվում է և ամեն բան սկսվում է լողալ... Այստեղից էլ սրտխառնութը»:

Կամ՝ մեկ այլ տեղ. «Աբսուրդ բառը ծնվում է իմ գրչի տակ... Ես հասկացա, որ գտել եմ բանալին դեպի Գոյությունը, դեպի իմ Մրտխառնութը, դեպի իմ սեփական կյանքը: Իրոք, այն, ինչ հետո ես կարողացա ըմբռնել, տանում է դեպի այդ ֆունդամենտալ աբսուրդը»:

Վեպի գլխավոր հերոսի այս և նման դատողություններում դրսևորվում են էկզիստենցիալիստական աշխարհընկալման հիմնական գծերը՝ իրականության պատահականությունն ու անմտությունը, գոյությունը որպես այդ անմտության խոր ապրում, գոյության տանջալիությունը:

Էկզիստենցիալիստներն անվերապահորեն ընդունում են անհատ-կուլեկտիվ փոխհարաբերությունը՝ այն արտահայտելով տարբեր հասկացություններով: Սարտրի մոտ այդպիսի հասկացություն է իրադրությունը: Մարդը տվյալ իրադրության մեջ՝ մարդն է իր կյանքի կոնկրետ պայմաններում, շրջապատված իրեն օտար իրերով, ամենօրյա հոգսերից ծանրացած: Մարդկային կեցությունը իրադրության մեջ Սարտրը դիտում է որպես իրադրության գերազանցում՝ տվյալ իրադրության փոփոխում և անցում նորին: Այստեղից էլ սարտրյան դրամատուրգիայի որպես «իրադրությունների թատրոն» բընորոշումը:

Սիմոնա դե Բովուարը մի առիթով նկատել է, որ «էությունների նկարագրությունը ոչինչ չի բացահայտում, բացի հենց բառերից, և միայն վեպն է հնարավորություն տալիս իր լիարժեք, հատկանշական, իրականության իր ժամանակով նշված ցույց տալ գոյության նախածին փոթորկումը»:

Անշուշտ, սխալված կլինեինք, «վեպ» բնորոշումը հասկանալով ժանրային նեղ իմաստով՝ որպես գեղարվեստական արձակի խիստ որոշակի ժանր: Ամենայն հավանականությամբ, Բովուարը նկատի ունի գրականությունը ժանրային իր ողջ

¹ Մեջբերումները կատարվում են В. Н. Кузнецов, Жан-Поль Сартр и экзистенциализм, М. 1969, գրքից, էջ 49—50:

բազմազանությամբ, մանավանդ որ Ֆրանսիական էկզիստենցիալիստների գրական ժառանգությունը զերծ է ժանրային միօրինակությունից: Քերևս, գրականության ընձեռած հնարավորությունների այսպիսի ըմբռնմամբ պետք է բացատրել Ֆրանսիացի էկզիստենցիալիստների (Սարտր, Քամյու, Բոլուար) ընդգծված հակումը դեպի գրական ստեղծագործությունը և այն իրողությունը, որ Ֆրանսիական էկզիստենցիալիզմի սկզբունքային շատ դրույթներ արասնայտվել են գրական-գեղարվեստական երկերում: Այդ առումով հատկանշական են նաև Ժան-Պոլ Սարտրի պիեսները:

Սարտր-դրամատուրգի մուտքը համընկնում է Ֆրանսիայի պատմության ամենամոռյալ ժամանակներին: 1940-ին գերմանական ֆաշիստները զավթում են Ֆրանսիան: Շաաերի հետ համակենտրոնացման ճամբար է ընկնում նաև 85-ամյա Սարտրը: Փշալարերով շրջափակված բարակում էլ ծնվում է առաջին պիեսի մտահղացումը: 1943 թ. օկուպացված Փարիզում բեմադրվում է Սարտրի «Ծանճերը» ողբերգությունը: Ստեղծագործության հիմքում Օրեստեսի մասին հին հունական առասպելն² էր, որին հարյուրամյակներ առաջ դիմել էին Էսքիլեսն ու Սոֆոկլեսը:

Ազատության պրոբլեմը, թերևս, կենտրոնականն է «Ծանճերը» պիեսում: Այդ պրոբլեմի շուրջն է հյուսվում ստեղծագործության գաղափարական բովանդակությունը, հիմնականում այդ պրոբլեմի փիլիսոփայական մեկնաբանությանն է նպատակաուղղված ողբերգության սյուժետային զարգացումը: Գլխավոր հերոսը՝ Օրեստեսը, գիտակցում է իր ազատ լինելը, և այդ ազատությունը պետք է դրսևորվի իրադրության գերազանցման (կամ, որ այդ դեպքում ավելի ճիշտ է, ճաղթահարման) մեջ: Ինչպես հին առասպելում, պիեսում ևս Օրեստեսն սպանում է մորը և Էգիսթոսին: Սակայն, հակառակ սպասվածի, արգոսցիները լքնամամքով ու չարությամբ են ընդունում օրինական գահաժառանգի արարքը: Իրականում է Յուպիտերի (Ջևսի) կանխագուշակումը՝ «Դու նրանց մեհեություն և ամոթ կշնորհես, դու կիլես հագուստները, որոնցով ես ծածկել եմ նրանց մերկությունը, և դու հանկարծային կմերկացնես նրանց գոյությունը, որևէ նպատակից զուրկ, լկտի, անհամ գոյությունը»³:

Իր արարքով Օրեստեսն ավելի է օտարանում Արգոսի բնակիչներին, նրանից երես է թեքում նույնիսկ հարազատ քույրը՝ Էլեկարան, որը մինչ այդ վրեժ ու արյուն էր պահանջում հոր սպանության և սեփական անարգանքի համար:

Նման հանգուցալուծումը գոյության արսուրդի գաղափարական հաստատումն է, այն արսուրդի, որի գիտակցումը ցավազին տանջում էր «Մրտխառնուք» վեպի հերոսին: Դա առեղծվածային-թշնամական ճակատագրի բացահայտումն է, որը նախաէկզիստենցիալիստ Ա. Մառլոյի բնորոշմամբ «ճեղքվածք է մեզանից յուրաքանչյուրի և տիեզերական կյանքի միջև»:

1945 թ. Սարտրը հանդես է գալիս «Փակ դռան էտևում» պիեսով, մի ստեղծագործություն, ուր ավելի քան զգալի էին պատերազմական տարիների անկումային ու հոռետեսական տրամադրությունների արձագանքները:

² Տե՛ս Ն. Ա. Կոն, Հին Հունաստանի լեգենդներն ու առասպելները, Ե., 1956, էջ 578—587:

³ Жан-Поль Сартр, Пьесы, М., 1967, стр 78 (այնուհետև էջերը կտրվեն ստղում):

1946 թ. նոյեմբերի 8-ին Անտուանի փարիզյան թատրոնում բեմադրվում է՛ Սարտրի «Հարգարժան պոռնիկը» և «Անշիրիմ մեռելներ» պիեսները: Եթե առաջինը մերկացնում էր ամերիկյան ռասիզմը, ապա երկրորդը, գոյության փիլիսոփայության մի շարք հարցադրումներով հանդերձ, յուրօրինակ ձոն էր Դիմադրության շարժման մասնակիցներին:

Երկու տարի անց նույն «Անտուանի թատրոնում» բեմադրված «Կեղտոտ ձեռքեր» պիեսը, հակառակ հեղինակի մտահղացման, ընկալվեց որպես հակա-կոմունիստական պասկվիլ: Հիասթափված Սարտրը շտապեց արգելել ստեղծագործության բեմադրումը նախ արտասահմանում, ապա նաև բուն Ֆրանսիայում: Պիեսի տապալմանը, անշուշտ, նպաստեցին ռեակցիոն գրական շրջանները՝ ծայրահեղորեն հակադիր տեսանկյունից մեկնաբանելով այն: Սակայն հարկ է նշել, որ անթերի չէր նաև պիեսը: Սարտրը միայն հեռակա կարգով էր ծանոթ ընտրած թեմային (կոմունիստական կուսակցությունների կյանքը), իրողություն, որը չէր բացառում քաղաքական-գաղափարական վրիպումները՝ դրանով իսկ պարարտ հող ստեղծելով հեղինակային հարցադրումների ու պրոբլեմների խեղաթյուրման ու նեոգափոխման համար:

Դեռևս 1946 թ. «Էկզիստենցիալիզմը հումանիզմ է» դասախոսության մեջ Ժան-Պոլ Սարտրը նշում էր. «Երկու տեսակի էկզիստենցիալիստներ կան: Նրանց մի մասը քրիստոնյաներ են, որոնցից կառանձնացնեի Յասպերսին և Գաբրիել Մարսելին... իսկ մյուս կողմում արթնատական էկզիստենցիալիստներն են, որոնց թվին են ավելացնում եմ Հայդեգերին, իսկ ապա Ֆրանսիական էկզիստենցիալիստներին և ինձ»⁴: Սարտրի կողմից «արթնատական էկզիստենցիալիզմ» տերմինի գործածումը կոչված էր տարբերակելու ինչպես սեփական փիլիսոփայությունը, այնպես էլ նրան մոտ փիլիսոփայական ուսմունքները: Իսկ այդ արթնզմը դրամատուրգի ստեղծագործություններից ոչ մեկում այնքան վառ չի դրսևորվել, որքան «Սատանան և տեր աստվածը» պիեսում: Կրոնական գիտակցության հիմքի վրա ստեղծելով ու ամբողջացնելով գլխավոր հիժոսի՝ Գեցի հոգեկան դրաման, Սարտրն, ի վերջո, հասնում է աստծո գոյության բացարձակ հերքման: «...Հիմա ես քեզ կհայտնեմ մեծագույն խաբեությունը. Աստված գոյություն չունի,—ասում է Գեցը:—Նա գոյություն չունի: Ո՛չ Դրախտ, ո՛չ Դժոխք: Կա միայն Երկիրը»:

1954 թ. կնոջ՝ Սիմոնա դե Բովուարի հետ միասին Սարտրն առաջին անգամ այցելում է Սովետական Միություն: Ծանոթությունը Հոկտեմբերի երկրին մեծապես ազդում է նրա հասարակական-քաղաքական գործունեության վրա: «Միայն ճշմարտություն» («Նեկրասով») պիեսը փիլիսոփա-գրողի քաղաքական հայացքների էվոլյուցիայի խոսուն վկայությունն էր: 50-ականների «սառը պատերազմի մթնոլորտում ստեղծագործությունն անխնա մերկացնում էր հակասովետիզմի ջատագովների, սուր ծաղրի ենթարկում կարծեցյալ սովետական ռազմական սպառնալիքի հիստերիայով համակված շրջաններին:

Տակավին 1945-ին իր իսկ հիմնադրած «Տան մոդեռն» («Նոր ժամանակներ») ամսագրի առաջին համարում զետեղած ծրագրային հայտարարության

⁴ Մեջբերումը կատարվում է «Современная буржуазная философия и религия», М, 1977 գրքից, էջ 199—200:

մեջ Սարտրը նշում էր. «Գրողը զանգվում է ռոնշակի իրադրությունում՝ իր դարաշրջանում. նրա յուրաքանչյուր խոսքը արձագանք է գտնում: Եվ լռությունը նույնպես: Ես Ֆլորենտին ու Գոնկյուրին պատասխանատու եմ համարում Կոմունայի անկումին հաջորդած ռեպրեսիաների համար, որովհետև նրանք ոչ մի տող չգրեցին դրանք կանխելու համար: ...Մեզ պետք է մտահոգի մեր դարաշրջանի ապագան, սահմանափակ ապագան՝ գրեթե անբաժան ներկայից, քանզի յուրաքանչյուր դարաշրջան, ինչպես և մարդը, ամենից առաջ ապագա է»⁵:

Սարտրի հումանիստական աշխարհընկալմանը բնորոշ այդ մտահոգությունն ավելի քան ցայտուն է դրսևորված «Ալտոնայի մենակյացները» պիեսում (1959):

Ստեղծագործությունը հազեցած է անհատական մեծ դրամաներով ու հոգեբանական բարդ վերլուծություններով: Ֆաշիստական համակենտրոնացման ճամբարից փախած մահապարտ հրեային փրկել փորձող Ֆրանցը հետագայում դառնում է արյունարբու մարդասպան, դահիճ: Ինչու՞: Ո՞րն է այդ կտրուկ շրջադարձի պատճառը: Ինքը՝ Ֆրանցը, դա բացատրում է սեփական դասապարտվածությամբ. «...ես երբեք ոչինչ չեմ ընտրել: Ես ընտրյալ եմ: Իմ ծնվելուց ինն ամիս առաջ որոշել էին իմ ապագան, ընտրել իմ անունը, զբաղմունքը, բնավորությունը և ճակատագիրը» (503): Սարտրին չի բավարարում հարցի նման լուծումը: Նա դիմում է էկզիստենցիալիստական պսիխոանալիզին՝ «ներսից» վերակառուցելով հերոսի կենսագրությունը: Ֆաշիստներից մի քանիսը ոլորում են Ֆրանցի թևերը, իսկ մյուսները նրա աչքի առաջ խեղդում են հրեային: Անմարդկային ոճրի առաջ սեփական անգործության գիտակցումը նրան՝ իր եսը հաստատելու համար անհրաժեշտ իշխանության մոլուցքով է համակում: «...Այդ...դեպքից հետո իշխանությունը դարձավ իմ պահանջմունքը» (508),—հոր երեսին նետում է Ֆրանցը: Այստեղից էլ հետևանքները, Ֆրանցը որպես սպա անդամագրվում է նացիստական բանակին, գնդակահարում ու կախաղան բարձրագնում անմեղ մարդկանց:

Սակայն Սարտրը բնավ չիտում չունի արդարացնելու Ֆրանցին: Նույնիսկ «ինքնապաշտպանական ճառի» մագնիտոֆոնային ձայնագրությունը, ուր վկայակոչվում են դարի հակասություններն ու «մեղքերը», բոլորովին էլ կոչված չէ սրբագործելու Ֆրանցին: Գարին հասցեագրված «մեղադրականում» ավելի շատ տազնապ ու մտահոգություն կա վաղվա օրվա համար, ոճրագործ Ֆրանց ֆոն Գերլախներից ժամանակին կանխելու կոչ. «Երեսուներորդ դարը լռում է: Կարող է այնպես պատահել, որ մեզանից հետո այլևս ոչ մի դար չլինի: Գուցե ռումբը կմարի համայն աշխարհի լույսը: Եվ ամբողջ երկիրը մոխրի կվերածվի. և՛ աչքերը, և՛ դատավորները, և՛ ժամանակը: Եվ կիջնի հավերժական գիշերը» (587):

Սարտրի գրական գործունեությունը չէր սահմանափակվում դրամատուրգիայի շրջանակներում: Գրում էր արձակ գործեր, էսսեներ, զբաղվում գրականագիտությամբ: Հեղինակն է «Ազատության ճանապարհները» քառագրության և Գ. Ֆլորենտի մասին եռահատոր մենագրության: 1961 թ. լույս է տես-

⁵ «Писатели Франции о литературе», М., 1978 стр. 266

նում նրա «Բառեր» ինքնակենսագրական վեպը, իսկ 1964-ին Սարտրիճ շնորհվում է Նոբելյան մրցանակ, որից նա հրաժարվում է:

Փ.—Պ. Սարտրը մահացել է 1980 թ. ապրիլի 14-ին:

ՍԱՏԱՆԱՆ ԵՎ ՏԵՐ ԱՍՏՎԱԾԸ

Գրել է 1951 թ., անդրադառնալով 1524—1525 թթ. Գերմանիայում տեղի ունեցած գյուղացիական պատերազմին: Գլխավոր հերոսի նախատիպը գյուղացիական ուժերի հրամանատար, ռազմաշունչ ասպետ Գեց ֆոն Բեռլինհինգենն է, որի չափավոր տակտիկան պարտության հասցրեց գյուղացիներին:

«Սատանան և տեր աստվածը» առաջին անգամ բեմադրվել է 1951 թ. Փարիզի «Անտուանի թատրոնում»:

1 Ուորմս—քաղաք միջնադարյան Գերմանիայում (այժմ՝ Գեռլ-ի տարածքում), Հռենոս գետի ձախ ափին: 1521 թ. Ուորմսի ռայխստագը Մարտին Լյութերից պահանջեց հրաժարվել իր ուսմունքից:

2 ...եթե Տիբերիոսի նման օր ծերության կոտորեք ձեր քաղաքացիներին—նկատի ունի Հռոմի կայսր, Կլավդիոսների դինաստիայի առաջին ներկայացուցիչ Տիբերիոս Կեսար Օգոստոսին (մ. թ. 14—37 թթ.), ծագումով՝ Տիբերիոս Կլավդիոս Ներոն: Վերջինս գահ բարձրացավ 55 տարեկանում: Ներքին քաղաքականության բնագավառում Տիբերիոսի գահակալության տարիները նշանավորվեցին պրինցիպատի «դեմոկրատական» տարրերի լիկվիդացմամբ: Դավաճանության կամ «մեծությանը վիրավորելու» (lesae maiestatis) շինծու մեղադրականով սենատը մահվան ու աքսորի դատապարտեց Հռոմի հազարավոր քաղաքացիների:

3 Դուկատ—արծաթե, հետագայում նաև ոսկե մետաղադրամ (3,4 գ): Առաջին անգամ հատել են Իտալիայի Վենետիկ քաղաքում, 1140 թ.: Ավելի ուշ տարածվել է Արևմտյան Եվրոպայի շատ երկրներում:

4 Հուդա Իսկարիովտացի—Հիսուս Քրիստոսի 12 աշակերտներից մեկը, որը 30 արծաթով դավաճանեց իր ուսուցչին: Ըստ «Աստվածաշնչի» ծնունդով Կարիովտ (Իսկարիովտ) քաղաքից էր:

5 Մենոնիտներ—բողոքականության հոսանքներից, որն առաջացավ անաբապտիզմից՝ Գերմանիայում, 1524—1525 թթ. գյուղացիական պատերազմի ժամանակ: Մենոնիտներ էին կոչվում աղանդի հիմնադիր, հոլանդացի հոգևորական Մենո Սիմոնսի անունով: Քարոզում էին բարոյական ինքնակատարելագործում և չարին չհակադրվող հնազանդություն:

6 ...ես քեզ բանադրում եմ—այսինքն՝ զրկում եմ եկեղեցու հովանավորությունից, նզովում եմ:

7 Կայե՛ն—Ադամի ու Եվայի ավագ որդին, որը նախանձից սպանեց եղբորը՝ Աբելին:

8 Առնհայմ—քաղաք Նիդերլանդներում:

9 Լանդսկենիտ—այդպես էին անվանում գերմանացի վարձկան զինվորներից XV—XVIII դարերում:

10 Պոլիփեմոս—միաշքանի կիկլոպ, Պոսեյդոնի որդին, որին կուրացրեց տրոյական պատերազմի հերոս Ռիսակը (տե՛ս Հոմերոս, Ռիսակամ, երգ IX):

11 Ռեմոս—ձեռնարկատիրական գործունեությունից դուրս պարբերաբար ստացվող եկամուտ՝ որպես վարկ տրված կապիտալի տոկոսների ձևով:

12 Հալլե—քաղաք Գերմանիայում (այժմ՝ Գ.Գ.Լ-ի տարածքում), Ջալլե գետի աջ ափին:

13 Հուսիտներ—XV դարում այդպես էին կոչում չեխ ժողովրդի ազգային հերոս Յան Հուսի (1371—1415) հետևորդներին, որոնք ռեֆորմացիայի խրատացման կողմնակից էին:

14 ...անուն եմ գտել իմ ֆալանգստերին. ես այն կանվաճեմ Արևի Ռատան—Սարտրն ակնհայտ հեզնանքով ակնարկում է Թոմազո Կամպանելայի Արևի Քաղաքը՝ ուշացած բանավիճելով ուտոպիստ-սոցիալիստների հետ:

15 Աթիլա—հունական ռազմաշունչ զորավար (V դար), որի գլխավորությամբ հոներն ավերեցին Արևելյան Հռոմեական կայսրությունը, Հյուսիսային Իտալիան և Գալլիան:

16 ...մեզ մեղքերի թողության ասպաշխարհադեր վաճառելու—միջնադարում, հատկապես XII—XIII դարերում, կաթոլիկ եկեղեցին զբաղվում էր Հռոմի պապի կողմից հաստատված ինդուլգենցիաների՝ մեղքերի թողության արտոնագրերի վաճառքով, որն իրականում հոգևորականության համար հարքստանալու լրացուցիչ աղբյուր էր:

17 Հիսուսը նրան կառներ իր թևերի մեջ—ըստ «Նոր կտակարանի», Քրիստոսը ձեռքի հպումով բուժում է բորոտին (տե՛ս Մատթեոս, գլ. Ը, Մարկոս, գլ. Ա, Ղուկաս, գլ. Ե):

18 Քրիստոսը տաճարից վռնդեց վաճառականներին—«Նոր կտակարանում» հիշատակություն կա այն մասին, որ Քրիստոսը Երուսաղեմի տաճարից վռնդում է առևտուր անողներին և դրամանեճգներին (տե՛ս Մատթեոս, գլ. ԻԱ, Ղուկաս, գլ. ԺԹ):

19 ...Քրիստոսը ջուրը գինի էր դարձնում—Գալիլեայի Կանայ քաղաքում իր աշակերտների հետ միասին Քրիստոսը մասնակցում է մի հարսանիքի, և երբ գինին վերջանում է, քարե վեց կարասների ջուրը գինի է դարձնում (տե՛ս Հովհան, գլ. Բ):

20 Եվ մենք քեզ սիրելու ենք, ինչպես մեզ պատվիրում է Սուրբ Մարդը—ակնարկում է Քրիստոսի (Սուրբ Մարդ) պատվիրաններից մեկը՝ սիրել միմյանց:

21 Սողոմ-Գոմոր—«Աստվածաշնչի» համաձայն երկու քաղաքներ Հորդանան գետի ափին, որոնց բնակիչները ցոփության ու սանձարձակության համար մոխրացվեցին երկնային կրակով: Գործածվում է որպես թևավոր արտահայտություն՝ խառնաշփոթ, քառս նշանակությամբ:

22 Բեովտիա—նահանգ Միջին Հունաստանում, ուր առաջին պետական միավորումներն առաջացել են մ. թ. ա. III—II հազարամյակներում:

23 Նա, որ հայտնվեց մարգարեի էգ ավանակին—ամենայն հավանականությամբ ակնարկվում է «Նոր կտակարանի» այն հիշատակությունը, ըստ որի Քրիստոսը ավանակին նստած է Երուսաղեմ մտնում (տե՛ս Մատթեոս, գլ. ԻԱ, Մարկոս, գլ. ԺԱ, Ղուկաս, գլ. ԺԹ):



Ճապոնացի ճանաչված արձակագիր ու դրամատուրգ Կորո Աբեն (իսկական անունը՝ Կիճիֆուսա) ծնվել է մարտի 7-ին Տոկիոյում: Մանկությունն անցել է Մանջուրիայի Մուկոեն քաղաքում, որի բժշկական ինստիտուտի կլինիկայում աշխատում էր հայրը: 1943 թ. ընդունվում է Տոկիոյի համալսարանի բժշկական ֆակուլտետը, սակայն մեկ տարի անց վերադառնում է Մուկոեն: Հոռ մահր նյութական ծանր կացության մեջ է դնում ապագա գրողի ընտանիքին: 1946 թ. Աբեն ստիպված էր վերադառնալ Տոկիո՝ շարունակելու ուսումը, չնայած բժշկությանը զբաղվելու հեռանկարն արդեն գրեթե չէր հետաքրքրում նրան: Այնուամենայնիվ, 1948 թ. նա ավարտում է համալսարանը՝ վճռական քննությունն ընդունող արոֆեսորին խոստանալով երբեք չզբաղվել բժշկությամբ:

Պատերազմի ողբերգական ավարտն ու էտպատերազմյան Ճապոնիայի իրականությունը երիտասարդ մտավորականի համար հոգեհարազատ են դարձնում Տրանց Կաֆկայի ստեղծագործությունը: Բանաստեղծական առաջին փորձերը, որոնցով վավերացվեց Աբեի գրական մուտքը, շատ շուտով իրենց տեղը գիշում են գեղարվեստական արձակի բնագավառում կատարվող որոնումներին: 1950 թ. տպագրվում է նրա «Կարմիր բժժ» պատմվածքը, իսկ մեկ տարի անց լույս տեսած «Պատը» վիպակը արժանանում է Ճապոնիայի ամենաբարձր՝ Ակուտագավայի անվան գրական մրցանակին: Կաֆկայի ազդեցությամբ գրված վիպակում ակնհայտ էին էկզիստենցիալիզմի մի շարք հիմնադրույթներ (գոյության աքսուրդն ու դաժանությունը, անհատի մենությունը և, հետևաբար, օտարումն ու դատապարտվածությունը), որոնք գեղարվեստական նոր լուծում պետք է ստանային հետագա երկերում: Իսկ ստեղծագործական այդ ճանապարհի սկիզբը նշանավորվեց «Ներխուժում» (1952) պատմվածքով:

Ստեղծագործության մեջ դեռևս նկատելի էին Կաֆկայի, հատկապես նրա «Ինտավարություն» վեպի, ազդեցության հեռավոր արձագանքները: Սակայն դրանով չէր հատկանշական «Ներխուժումը»: Առաջին անգամ Կորո Աբեի ար-

ձակում ամենայն հետեոդականությամբ դրվում էր հասարակության և անհատի փոխհարաբերության հարցը, մի թեմա, որն այնուհետև դառնալու էր կենտրոնականը ճապոնացի գրողի ողջ ստեղծագործության համար:

Ոմն Կ-ի բնակարանն են ներխուժում անծանոթ մարդիկ և ինչ-որ ժողովի որոշումներ վկայակոչելով ոչ միայն զավթում են տունը, այլ նաև ստրկացնում տանտիրոջը: Հերոսը լավ է գիտակցում իրողության էությունը, ակնկալվող հետևանքները. «Եթե նման անօրինականություն թույլատրվի, դա կրախի կհասցնի ողջ հասարակությանը: Դ-ա միայն իմ անձնական գործը չէ: Վաղը ճիշտ այդպիսի բախտի կարող էք արժանանալ և դուք: Միավորվելով, մենք պարտավոր ենք պայքարել այդ ապօրինի մեծամասնության դեմ»: Սակայն ապարդյուն են անցնում ոչ միայն Կ-ի օրինական ու արդարացի պահանջները, այլև հասարակությունից օգնություն և աջակցություն ստանալու փորձերը: Օտարված ու հուսալքված Կ-ն ինքնասպանություն է գործում շենքի տանիքում:

Կորո Արեն անհատի օտարման պրոբլեմը դնում է գլխավորապես բուրժուական հասարակության հակասությունները բացահայտելու համար: Այս պարագայում առանձին ուշադրություն է նվիրվում անհատ-հարաբերությունը բարդ ու միջնորդավորված կապերի արտացոլմանը, որը և քողագեղծում է բուրժուական աշխարհի արատները: Արվեստագետ-քաղաքացու իր պիրբորոշումը ներկայացնելու, սոցիալական հարցադրումները շեշտելու նպատակով Արեն հաճախ անիրական ու ֆանտաստիկ դրություններ է ստեղծում, վարպետորեն օգտագործում գրոտեսկն ու սատիրան: Այդ առումով հատկանշական է «Մտրուկների որս» (1967) պիեսը, որի դրական հերոսները նախընտրում են կենդանակերպ լինել, միայն թե տարբերվեն հարստանալու վայրենի մոլորյքով Յամակված մարդկանցից:

Հարկ է նշել, որ դրամատուրգ Արենի հարցադրումների շրջանն ավելի լայն է: Նրա ողջ ստեղծագործությանը ուղեկցող հիմնական պրոբլեմի հետ ժխտիկ դրամատիկական երկերում զգալի է նաև գրողի հակապատերազմական դիրքորոշումը: Վերջինիս լավագույն արտահայտությունը «Ուրվականները մեր մեջ» (1958) և «Ամրոցը» (1962) պիեսներն են:

«Ուրվականները մեր մեջ» պիեսի հերոսը՝ թափառաշրջիկ Ֆուկազավան, համառորեն պնդում է իրեն ուղեկցող Ուրվականի գոյության մասին: Ինչպես մյուս ստեղծագործություններում, այստեղ ևս ֆանտաստիկ իրադրության օգտագործումը ինքնանպատակ չէ: Քաղաքի իշխանությունները շտապում են օգտվել Ուրվականի ծառայություններից՝ կարևորություն չտալով նրա գոյության իսկությունը պարզելուն: Իսկ այդ ծառայությունները միլիոնների եկամուտ էին ապահովում:

Սակայն պարզվում է, որ Ուրվականն, իսկապես, գոյություն ունի: Ֆուկազավան երկար տարիներ տառապել է, կարծելով թե ընկերը, իրեն փրկելով, զոհվել է պատերազմում: Այս կերպ ընկերոջ ուրվականը, որը սովետական գրականագետներից մեկի բնորոշմամբ «մարդու նյութականացված խիղճն»¹ է,

¹ Абэ Кобо, Впoржение, «Литературная Россия», 5 августа, 1977 г.

² Кобо Абэ, Пьесы, М., 1975, стр. 281.

դարձել է նրա մշտական ուղեկիցը: Ստեղծագործության նման հանգուցալուծումը բացահայտում էր դրամատուրգի քաղաքացիական դիրքորոշումը: Իսկ վերջինս վճռականորեն ասում էր «ոչ» ամեն մի պատերազմի:

Հակամիլիտարիստական հնչեղությունն ունի Արեի «Ամբոցը» պիեսը: Այստեղ առավել բացահայտ ու անողոք է բուրժուական իրականության քննադատությունը: Իսկ «ամբոցը», որի պատերի ներսում մտահղացվում և ապա ի տես աշխարհի իրագործվում են բռնությունն ու ոճիրը, այդ իրականության խորհրդանշան է:

60-ական թվականները շատ ավելի բեղմնավոր եղան Արե-վիպասանի համար: Իրտր հաջորդեցին «Կինը ավազների մեջ» (1962), «Փտար դեմք» (1964) և «Այրված քարտեզ» (1967) վեպերը: Ստեղծագործությունների հաջողությունն ակնհայտ էր: Հատկապես մեծ ուշադրության արժանացավ «Կինը ավազների մեջ» վեպը, որը շատ շուտով թարգմանվեց աշխարհի տասնյակ վեզուներով:

Քննադատներից շատերը հակված են վեպի և ընդհանրապես Կորե Արեի ամբողջ ստեղծագործության հաջողությունը բացատրել նրա «կոսմոպոլիտությանը»: Այսպես, ամերիկացի քննադատի կարծիքով Կորե Արեն «ճապոնական նոր կոսմոպոլիտ-վիպասաններից էր, որոնց հետաքրքրում է ոչ այնքան ճապոնական պրոբլեմատիկան, որքան համամարդկային»³: Ծապոնացի գրականագետ Յամանոտի Խիսաակին նկատում է, որ «և՛ Արե Կորոն, և՛ Օե Կենճարուրոն հեռացան ազգային վիպական ավանդներից ընդհանրապես, և նախապատերազմյան ճապոնական արձակից մասնավորապես»⁴:

Իհարկե, Արեի երկերում չկա ավանդական ազգային բնոգծումը, ինչը լիստ բնորոշ է, սուենք, Կավարատա Յասունարիի կամ Տանիձակի Ջյունիտիրոյի ստեղծագործությանը: Սակայն դա պայմանավորված է ոչ թե հեղինակի կոսմոպոլիտական հակումներով, այլ նոր ձևավորված գիտակցության ու հոգեբանության արտացոլման ձգտումով: Հարկ է նաև նշել, որ ոճի ընտրության հարցում Կորե Արեն ավելի շատ արդիականի կողմնակից էր, իրողություն, որը չէր բացառում օտար ազդեցությունները: Իսկ վերջիններս ճապոնական գրականության բեկումնային շրջաններում միշտ որոշակի դեր են խաղացել: Հիշենք միջնադարյան կլասիկ պոեզիայի կամ Մեյձիից՝ բուրժուական հեղափոխությունից հետո սկզբնավորված նոր գրականության օրինակները:

Հակառակ քննադատության տարակարծությունների, «Կինը ավազների մեջ» վեպը նշանավորում էր մի նոր, ավելի հասուն շրջան ճապոնացի գրողի ստեղծագործության մեջ: Կենտրոնականը վեպում նորից անհատ-հասարակություն հարաբերության պրոբլեմն է: Սակայն, ի տարբերություն նախորդ, ապա նաև հաջորդ գործերի, որոնցում հեղինակային գլխավոր նպատակադրումը անհատի օտարման բացահայտումն է, սրանում Կորե Արեն ասես միտում ունի հաստատելու անհատի և հասարակության համագործակցության հնարավորու-

³ Մեջբերումը կատարվում է К. Рехо, Современный японский роман գրքից, М, 1977, էջ 182:

⁴ Տե՛ս «Современная художественная литература за рубежом», 1981, № 3, стр 111:

թյունը: Եթե «Օտար դեմքի» հերոսը, դեմքի այրվածքները ծածկելու համար դիմակ հագնելով, դառնում է մարդասպան և բնակավայրի օտարամուտ մարդկանց համար, իսկ «Այրված քարտեզի» հերոսը փախչում է իրականությունից, ապա «Կինը ավազների մեջ» վեպի գլխավոր հերոսը՝ Նիթի Ջյունպեյը, հոգաբնակիչ է դառնում ավազների մեջ թաղված գյուղի բնակիչներին:

Արեի գրեթե բոլոր հերոսները դատապարտված են: Որոշ դատապարտվածություն կա նաև Նիթի Ջյունպեյի ճակատագրում: Միանգամայն պատահամամբ հայտնվելով անեղծվածային գյուղում՝ նա քանիցս փորձում է փախչել, բայց ապարդյուն: Սկզբում միայն ակամա հաշտվելով սեփական վիճակի հետ (աչստեղից էլ դատապարտվածությունը), հետագայում հերոսը գիտակցաբար նախընտրում է ավազներում կորած գյուղի կյանքը:

Դատապարտվածության այս մոտիվի և անհատի օտարման պրոբլեմի առկայությունն էլ հենց վեճ է հարուցում Կորո Արեի ստեղծագործական մեթոդի շուրջ: Ռմանթ նրանում տեսնում են հետևողական էկզիստենցիալիստիկ, մյուսները նրան համարում են գեղարվեստական արտացոլման մոր հնարավորություններ բացահայտող ռեալիստ: Իրականում էկզիստենցիալիզմի մոտիվները, որոնք այնքան ակնհայտ են Արեի և՛ արձակում, և՛ դրամատուրգիայում, ոչ թե պասսիվ հայեցողական դիրքորոշման արտահայտություն են (ինչը բնորոշ է, այսպես ասած, «մաքուր» էկզիստենցիալիստներին), այլ կոչված են բացահայտելու կապիտալի աշխարհի ներքին ու արտաքին հակասությունները, անհատի ու հասարակության կոնֆլիկտները:

«Մարդ-արկղը» վեպից հետո, որը լույս տեսավ 1972 թ., Կորո Արեն գրեթե լիովին նվիրվում է դրամատուրգիային: 1978 թ. նա հանդես է գալիս «Սիրո ակնոցի ապակիները գունավոր են» պիեսով: Ստեղծագործության հերոսներն ապրում ու գործում են առանձնահատուկ պայմաններում. պիեսի գործողությունները կատարվում են հոգեբուժական հիվանդանոցում: Յուրաքանչյուր հիվանդ տառապում է առանձին մոլուցքով: Այսպես, Տղամարդուն թվում է, թե ռետինե տիկիների իր կինն է և մեկն գիշեր իր սենյակն է մտնում: Մեկ այլ հիվանդ՝ Առաջին Կինը, պնդում է, որ իր պայուսակում ձու կա, որն ինքն է ածել, և այժմ ուզում է վերագտնել ձու ածելու իր երբեմնի հատկությունը:

Բժիշկները՝ նույն կլինիկայի նախկին հիվանդները, բուժման տարօրինակ միջոցներ են կիրառում՝ սեղանի թեճիս և կարմիր ապակիներով ակնոցներ: Նրանց կարծիքով թեճիսն օգնում է հասարակության հարձակումից պաշտպանվելու համար անհրաժեշտ ձևեր մշակել, իսկ կարմիր ապակիները ոչնչացնում են բնության կարմիրը, այն վերափոխելով ճերմակի՝ անդորրի և մաքրության գույնի: Սակայն ինչպես միշտ, այս անգամ էլ Արեի հերոսներին վիճակված չէ գտնել ցանկալին: Հանկարծակի մարում է լույսը, և ակնոցները, որ այնքան հույսեր էին ներշնչում, դառնում են ավելորդ:

1974 թ. վերջերին «Արե Ստուդիոյում» ներկայացվում է Կորո Արեի «Կանաչ գուլպաներ» պիեսը: Ստեղծագործության սյուժեն այսպիսին է: Ռմն բժիշկ մի տղամարդու վիրահատության միջոցով փորձում է դարձնել «խոտակեր մարդ»: Տղամարդը, որի բնորոշմամբ հասարակությունը «մութ անդունդ» է, իսկ տարօրինակ վիրահատությունը այդ անդունդից փրկվելու միակ հնարավորությունը, տալիս է իր համաձայնությունը: Վիրահատությունը հաջող է անցնում, սա-

կայն առաջին իսկ նախաճառը հիասթափեցնում է բոլորին: «Խոտակեր մարդը» զզվանքով ու ճիգերի գերագույն լարումով է ուտում «ծղոտի բիֆշտեքսը», իսկ հետո փախչում է ու թաքնվում:

Թատերական քննադատությունը բարձր գնահատեց Արեի պիեսը՝ նրանում տեսնելով ժամանակաշրջանի ամենակենսական պրոբլեմների արժարժումը: Իրոք, տնտեսական ճգնաժամի և ինֆլյացիայի պայմաններում, երբ բուրժուական մամուլը մարդկանց ահաբեկում էր «համաշխարհային քաղցի» հեռանկարով, ճապոնացի դրամատուրգի պիեսն ավելի քան ժամանակահունչ էր: Հեղինակի անողոք սատիրան հուշում էր, որ ի վերուստ անհաջողության է դատապարտված մարդկայինի դեմ ամեն մի ոտնձգություն, որ կարելի է մարդուն օտարել, նույնիսկ սպանել, բայց անհնարին է կենդանի դարձնել:

Վերջին տարիներին Կոբո Արեն հիմնականում զբաղվում է թատրոնով: Ղեկավարում է իր իսկ ստեղծած թատերական կոլեկտիվը՝ «Արե Ստուդիոն», ուր հանդես է գալիս ոչ միայն որպես դրամատուրգ, այլ նաև որպես բեմադրող-ռեժիսոր:

ԱՄՐՈՅԸ

Կրել է 1962 թ., ամենայն հավանականությամբ, պատերազմի շրջանում Մանջուրիայում անցկացրած տարիների տպավորությամբ: Այս, ինչպես նաև Արեի մյուս պիեսները (նախքան «Արե Ստուդիոն»-ի հիմնադրումը) բեմադրել է ճանաչված թատերական գործիչ Սենդա Կորեան «Խայյուձա» («Դերասանի թատրոն») թատրոնում: «Խայյուձան» սինգլի («ճոր դրամա») ժանրի առաջատար թատերախմբերից է, որի խաղացանկում մշտական գրանցում ունեն Շեքսպիրի, Մոլիերի, Բոմարշեի, Չեխովի, Բրեխթի ստեղծագործությունները:

1 ...Մանջուրիայի վերաբերմամբ Ճապոնիայի ակցիաների հետ—1931 թ. ճապոնական զորքերը զավթեցին Չինաստանի հյուսիս-արևելյան մասը՝ Մանջուրիան, այնտեղ ստեղծելով Մանջու—Գո մարիոնետային պետությունը: 1945 թ. օգոստոսին սովետական զորքերն ազատագրեցին Մանջուրիան:

2 ...ուժի մեջ են մտնում ժնկյան կոնվենցիաները—խոսքը 1949 թ. ժնկվում ընդունված՝ պատերազմից տուժածների պաշտպանության վերաբերյալ միջազգային չորս կոնվենցիաների մասին է: Մասնավորապես ակնարկվում է չորրորդ կոնվենցիան, որը վերաբերում էր պատերազմի ժամանակ բնակչության պաշտպանությանը:

3 Կանազավա—Ճապոնիայի 46 պրեֆեկտուրաներից մեկը (վարչական կենտրոնը՝ Յոկոհամա) Հոնսյու կղզում: Հայտնի է իր արդյունաբերական խոշոր ձեռնարկություններով:

4 Տալկ—շերտավոր սիլիկատային հանքաքար: Որպես միացուկ կիրառվում է պարֆյումերային-կոսմետիկ, թղթի և ռետինի արդյունաբերության մեջ:

5 Ցազի-սան—ճապոներեն խոսակցական լեզվում «սան» մասնիկն ավելացվում է անվանը՝ ընդգծելով դիմողի քաղաքավարությունը: Առանձին չի գործածվում:

6 Կորեական պատերազմ—ակնարկելում (1950 1953 թթ. պատերազմը, որ օտարերկրյա ինտերվենտների աջակցությամբ Կորեայի մարտնչա Պեկին-կրատական Հանրապետության դեմ սամձաղիծեց Ռաբոտի Կորեական դիմվորականությունը:

7 Իեն—ճապոնական դրամական միավոր. 1 իենը բախտար 1 100 սենի: Հաստատվել է 1871 թվականից:

8 Սեն—դրամական միավոր (տե՛ս ծանոթ. 7):

9 Հելիկոպտեր—ուղղաթիռի Ռնացած անվանումը:

10 Քվանտունյան բանակ—ճապոնական զորամիավորում, որն ազրիսիվ գործողություններ էր կատարում Չինաստանի, ՍՍՀՄ-ի և Մոնղոլական Ժողովրդական Հանրապետության դեմ: Չևավորվել էր 1981 թ. Չինաստանի Ռյուսիս-արևելքում գտնվող Լյաոդունյան թերակղզու Քվանտունյան մարզում:

11 Ֆեռոմանգան—երկաթի Ռանքաքար:

Կազմողի կողմից	5
Յուշին Օ'Նիլ	
Սերը ծփիների տակ (թարգմ. Վանիկ Ավետիսյան) . . .	7
Ուիլյամ Սարոյան	
Կոտորածն մանկանց (թարգմ. Վանիկ Ավետիսյան) . . .	79
Թեոֆանի Ուիլյամս	
Կատուն շիկացած տանիքին (թարգմ. Վանիկ Ավետիսյան)	135
Ժան Կոկտո	
Չայն մարդկային (թարգմ. Ալեքսանդր Թովիչյան) . . .	240
Արթուր Ադամով	
Պրոֆեսոր Տարանը (թարգմ. Վարուժան Նալբանդյան) . .	258
Ժան-Պոլ Սարտր	
Սատանան և տեր աստվածը (թարգմ. Վարուժան Նալբանդյան)	280
Կորո Աբե	
Ամբողջը (թարգմ. Սարգիս Փանոսյան)	437
Մեկնություններ և ծանոթագրություններ	502

**XX ԴԱՐԻ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ
ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻԱ**

Հատոր 1

Հրատարակության Է
Ներկայացրել
Քամալսարանի
արտասահմանյան
գրականության
ամբիոնը

Հրատարակչության
խմբագիր
Լ. Լ. Աղայան

Նկարիչ
Լ. Ա. Սադոյան

Գեղարվեստական
խմբագիր
Ն. Ա. Թովմասյան

Տեխնիկական
խմբագիր
Ֆ. Գ. Տոնոյան

Վերստուգող
սրբագրիչ
Ս. Ս. Ղալթախչյան

ՎՖ 06296: Պատվեր 37: Տպաքանակ 15000:
Հանձնված է շարվածքի 10.01.1988 թ.:
Ստորագրված է տպագրության 05.04.1988 թ.:
Թուղթ № 1, չափեր՝ 60×84¹/₁₆:
Տառատեսակը՝ «Նորք»:
Տպագրության եղանակը՝ «Բարձր»:
Հրատարակչական 25 մամուլ:
Տպագրական 34,5 մամուլ
= 32 պայմանական մամուլի:
Գինը՝ լաթե կազմով 2 ռ. 40 կ.,
թղթե կազմով 2 ռ. 20 կ.:
Երևանի համալսարանի հրատարակչություն,
Երևան, Մոսկվա փ. № 1:
Издательство Ереванского университета,
Ереван, ул. Мравяма № 1.

Երևանի համալսարանի տպարան,
Երևան, Արուսյան փ. № 52:
Типография Ереванского университета,
Ереван, ул. Абовяна № 52.

◆ **«Ուսանողի գրադարան» մատենաշարով
լ ու յ ս ե ն տ ե ս ե լ
հետևյալ գրքերը.**

1. **Մովսես Խորենացի, Հայոց պատմություն**
2. **Խաչատուր Աբովյան, Վերք Հայաստանի**
3. **«Սփյուռքահայ բանաստեղծություն»**
4. **«Հին Արևելքի պոեզիա»**
5. **«Ֆրանսիական կլասիցիզմ»**
6. **Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն**
7. **Շիլլեր, Պատմական դրամաներ**
8. **Դանտե Ալիգիերի, Աստվածային կատակերգություն**

Հ ու յ ա կ տ ե ս Ա ե Ա

1. «20-րդ դարի արտասահմանյան արձակ», հտ. 1
2. Ազաթանգեղոս, Հայոց պատմություն
3. «Վրացական պոեզիա»
4. «Գերմանական նովելներ և պատմվածքներ»
5. Թովմա Արծրունի, Պատմություն տանն Արծրունյաց
6. «Ֆրանսիական քնարերգություն»

1

2